ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1868-1878

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1868-1878

ՄԱՍՆ Գ·

ԳՐԵՑ

Հ· ՄԻՆԱՍ Վ· ՆՈՒՐԻԽԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

1907

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Դեռ երկու օր առաջ Հռովմայ պալատան մը առ-
ջեւէ անցնելու ժամանակ, փողոց Լոմբարդիա, թիւ 45,
նկատեցի ճակատին վրայ քանդակուած. « Historia
magistra vitæ ». (Պատմութիւն վարդապետ կենաց)։
Հետաքրքրութիւն չ'ըրի հարցնելու, որ այդ բնակութիւ-
նը ո՞ւմ կը պատկանէր. արդեօք հոն կը բնակէ՞ր կամ
բնակած էր Պատմութեան սիրող մը, ուսուցիչ մը։ Ինձ
տպաւորութիւն ըրաւ միայն հանդիսապէս հազարերորդ
անգամ մ'ալ հաստատութիւնը՝ որ պատմութիւնն է կե-
նաց Ուսուցիչը. որ ազգք և անհատք ստիպուած են
անկէ քաղելու հասարակաց և առանձնական կենաց շատ
մը վարդապետութիւնք և խրատք. որով և անհրաժեշտ
անոր հոգացումը և զարգացումը։

Այդ նպատակը միշտ մեռացս առջեւ դնեցած եմ,
սոյն ժամանակակից Պատմութեան նախկին երկու մա-
սերը հրատարակած ժամանակս. և նոյն զգացումը ինձ
առաջնորդած է գրելու նաեւ այս Եզրերդը։ Այդ պատ-
ճառաւ մանաւանդ, ջանացած եմ դիւրամատչելի ընել
իր ոճովը ամեն կարգ ընթերցողաց։ Եւ դիպաց սեղմ
յիշատակութենէն աւելի, ընել միանգամայն գիրք մը

ընթերցանութեան։ Արդէն պատմուած դէպքերուն մեր-ձաւորութիւնը, անոնց հետաքրքիր կերպարանքը՝ շատ տեսակէտներով, բռնադատեցին զիս միւս հատորներուն սահմանէն աւելի ընդլայնումն տալ պատմուածներուն։

Գիտեմ կանխապէս որ շատ դիտողութիւններ և դատողութիւններ պիտի ունենամ և պիտի ստանամ աշ-խարհարար գրութեանս տեսակին վրայ։ Ադոնք առա-ջին անգամ պիտի չ'ըլլան։ Շատ անգամ ընդունած եմ արդէն նամակներ։ Բայց դժբաղդաբար թէ բարեբաղդա-բար, չեմ գիտեր, յետին կամ յետիններէն մէկն եմ այն Դիպրոցին որ կ'ուզէր զաշխարհարարը կարելի եղածին չափ մօտեցնել գրաբար հարուստ և գեղեցիկ լեզուին. որով ինքն ալ ճոխանայ և զարդարուի, և ունենայ այն դիւրին ձեւերը, որոնք իրեն կը պակսին։

Դարձեալ որչափ գրաբարի մօտենանք, այնչափ Հայքս մէկզմէկ կը հասկնանք. մինչ կը բաժնէ զմեզ աշ-խարհարարը։ Այս գաղափարական դրօշին և համոզման ներքեւ զինուորեցայ և ի նոյնը ամփոփուած կ'ուզեմ թաղուիլ. և անյոյս չեմ ապագայի մասին։

Այս Հատորը սակայն ունի սեպհական տարբերութիւն մը միւսներէն։ Մինչ նախնապէս, ոչ ըստ իմ համոզմանս, ինչպէս ծանուցած էի Երկրորդ հատորին սկիզբը, բռնա-դատուած էի Վանքիս մէջ առաւելագոյն սովորութիւն եղած տառադարձութիւնը գործածելու. այս անգամ կա-րելի եղաւ թօթափել այդ կանխակալ կարծիքը և բռնել դիւրին և ճշգրտագոյն դրութիւնը, թէ ոչ ճշգրիտը։ Որով թէ յանկարծ պատահին անուններ ըստ հին տառադար-ձութեան և կամ ո՛չ միակերպութիւնք, անոնք աչքէ վրիպած են և հետեւանք շարունակաբար ի վանս

չգտնուելուս տպագրութեան և սրբագրութեան ժամանակ։

Զարմանալի դարձեալ երեւամ թերեւս, որ մինչ Ազգաց ոմանց և մանաւանդ Արեւելեան Ազգաց մասերը կը հասցնեմ մինչեւ ցամն 1878, Եւրոպիոյ մեծ Ազգաց պատմութիւնքը չեն անցնիր 1872էն անդին, և կը պակսին շատ մը փոքր համարուած ազգերու պատմութիւնք, յորս շատ հրահանգիչ դէպքեր և օրէնքներ տեղի ունեցած են. և որք ամենամեծ կարեւորութիւն ունին մայդկային մտաւորական յառաջադիմութեան պատմութեան մէջ։ — Ինձ անկարելի եղաւ զամենն ալ յիշատակել հատորի մը մէջ, որ շատ ստուար պիտի ըլլար։ Որով պահեցի զանոնք Չորրորդ հատորի մը, որուն հրատարակութիւնը կը համարիմ չյապաղի, թէ իմ կամքէս անկախ պատճառք չխափանեն զայն։

Հռովմ 1 Յունիս 1907.

ԳԼՈՒԽ Ա.

ՊՐՈՒՍԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ ՍԱՂՈՎԱՅԻՆ ՎԵՐՋԸ

1. Պրուսիոյ խօսարանը Սաղովայէ վերջը. — 2. Ցաղթական բանակին դարձը ի Բէռլին. — 2. Գերմանիոյ Դաշնակցական Սահմանադրութիւնը. — Բիսմարք՝ Առենապետ Դաշնակցութեան. — 4. Կոմսն Բիսմարք և Նապոլէոն Գ. — Խնդիր Լիւքսէմբուրգի. — 5. Պրուսիա կը հակառակի Լիւքսէմբուրգի Գաղղիոյ միացման. — Զէզոքացումն Լիւքսէմբուրգի. — 6. Գերմանական Դաշնակցութիւն և Նապոլէոն Գ. — Տեսակցութիւն երկու կայսերաց ի Սալցբուրգ. — 7. Մաքսային ընդհանուր Գերմանական Դաշնակցութիւն. — 8. Հարաւային զաւառաց միութեան փափաքներ. — Բատէն։

1. — Գուլիէլմոս թագաւորը Նիքոլսբուրգի Դաշնախօսութենէն վերջը, պատերազմի դաշտէն դարձաւ ի Բէռլին Օգոստոս 4ին, որպէս զի անձամբ բանայ նորընտիր երեսփոխանական խօսարանը։ Պրուսիոյ խօսարանը Սաղովայէ վերջը. 1866։

Մայրաքաղաքը իրեն հոանդուն և շքեղ ընդունելութիւն մը ըրաւ։ Հասաւ ի Բէռլին երեկոյեան ժամը 10ին, կառքին մէջ ունենալով զթագաժառանգ իշխանը և զկոմսն Բիսմարք, զինուորական և քաղաքագիտական երկու յաղթողներով։ Քաղաքը ցորեկուան պէս ամեն կողմ լուսաւորուած էր և ամեն կողմ կը լսուէին հայրենասիրական երգեր։ Ժողովուրդը զանազան անգամ

փորձեց քակելու կառքին ձիերը որպէս զի ինքը տա-
նի իւր թագաւորը։ Ուրախութիւնը ընդհանուր էր ա-
ռանց կրօնական և կուսակցական խտրութեանց։ Օգոս-
տոս 5ի խօսարանի բացման օրը, աստուածային պաշ-
տամունք կատարուեցան թէ նորաղանդից և թէ կաթո-
լիկաց եկեղեցիներու մէջ և կէսօրուընէ քիչ առաջ 350
երեսփոխանք երեք անգամ եռանդագին ծափահարու-
թեամբք ընդունեցան զԳուլիէլմոս թագաւորը Սպիտակ
սրահին մէջ։

Բովանդակ Գերմանիա և բովանդակ Եւրոպա հե-
տաքրքրութեամբ կը սպասէր լսելու Պրուսիոյ խօսքը
իր զինուց շառաչաւոր յաղթութենէն վերջը Աւստրիոյ
դէմ։ Արդէն ընտրութիւնքը պատերազմին յաջող ժամա-
նակ կատարուած ըլլալով, նպաստաւոր եղեր էին վար-
չութեան և չկային ընդդիմակաց ծայրայեղ կուսակցու-
թեանց ազդեցիկ ճարտասաններէն գլխաւորք։ Գուլիէլ-
մոս նախ զոհութիւն մատոյց Աստուծոյ որ օգներ էր,
այսպիսի շքեղ յաղթութեամբք վանելու Պրուսիոյ սահ-
մաններէն սպառնացող թշնամին որով հարթուեր էր
Գերմանիոյ կազմակերպութեան ճանապարհը. յիշեց
քաջ մարտիկները որոնք կեանքերնին զոհեր էին հայ-
րենեաց դատին համար. աւելցուց որ վստահ էր կարե-
ւոր միջոցներ շնորհուելուն ազգային փոխառութեանց
կարգադրութեան համար և ապահով էր որ ներկայ
պարագայք պիտի օգնէին՝ վարչութեան և խօսարանին
մէջ համաձայնութիւն հաստատելու, և «պիտի դադրէին
նախորդ տարաձայնութիւնք դրամական խնդրոց նկատ-
մամբ» որով և կարելի պիտի ըլլար «ընդարձակելով
վարչութեան սահմանքը, կազմակերպել դաշնակցական
բանակ մը ընդ հրամանատարութեամբ Պրուսիոյ. և
այս ծանրաբեռնութեան պիտի մասնակցէին համօրէն
դաշնակիցք»։

Յայտնի է այսպիսի բանախօսութիւն մը ունեցաւ իր
մեծ և ոգեւորիչ տպաւորութիւնը։ Անհամար ծափահա-
րութիւնք ողջունեցին վերջը և թագաւորը մեկնեցաւ ե-
բեսփոխանաց և ամբոխին կեցցէներուն մէջ։ Եբեսփո-

խանական ժողովը հաճութեամբ տեսաւ որ Պրուսիա իր նոր, բարձր դրից մէջ չէր կրնար ասկէ վերջը պարզ աւատական և կամ զինուորական վարչութիւն մը ունենալ. և որպէս զի կարենայ ունենալ իր փափաքած ընդլայնումը, հարկ էր սահմանադրական և դաշնակցական կազմութիւնը բարգաւաճեցնել։ Բայց և պէտք էր մոռնալ անցեալ առտնին տժգոհութիւնները, պէտք էր աչք գոցել նախկին պաշտօնարանին, խօսարանին արձակուրդի ժամանակ, անհրաման բրած փոխառութեանց[1]։ Կրաբով՝ նախկին խօսարանին նախագահը և Բիսմարքի անհաշտ հակառակորդը, իմանալով որ հաշտութեան մը համար ընդ վարչութիւն և ընդ խօսարան, Արքունեաց փափաքն էր որ ինքը ընտրութենէ հրաժարի, ծանոյց որ ինքը չէր ուզեր վերընտրուիլ։ Այս եւս յաջողութիւն մ'էր Բիսմարքի. և յետ կրկին քուէարկութեանց ընտրուեցաւ Ֆորքէնֆէք 170 քուէիւք։

Պսակի ճառին պատասխանին առթիւ, յուզուեցաւ մեծապէս անհրաման փոխառութեանց խնդիրը։ Բիսմարքի ինքնագլուխ և արհամարհոտ դրութեան հակառակող երեսփոխանք, այս առթիւ թափեցին իրենց սրտից մէջ բարդած ընդդիմութիւնը։ Այսու հանդերձ այս նիւթոյն քննութեան համար հաստատուած Յանձնաժողովոյն բանախօսը, հռչակաւոր Վիրխով, ինքը եւս ոչ կուսակից Բիսմարքի, կուսակցութեանց հաշտեցուցիչ ընթացք մը առաջարկեց։ Այսպէս Պսակի ճառին պատասխանը կազմուեցաւ առ թագաւորն, հաւատարմութեան և անցելոյն մոռացութեան բառերով. ունենալով դիմացին գերմանական ամենամեծ խնդիրներ։ Սակայն քիչ վերջը խօսարանը չուզեց տալ Ելեւմտից պաշտօնէին խնդրած 60 միլիոն թալէրը և միայն 30 միլիոն պնդեց տալ. հարկ եղաւ որ Բիսմարք,

---

1. Դ. Նախկին պաշտօնարանը պատերազմին ժամանակ, առանց խօսարանական քուէարկութեան, ինչպէս որինք է Ելեւմտից համար, այլ և այլ անգամներով 11,260,000 թալէրի փոխառութիւն բրած էր։

գրեթէ հիւանդ, դիմէ խոսարան և եւրոպական կնճիռներու և ապագայ վտանգներու վախերով ստանայ խնդրուած վաթսուն միլիոնը։ Այդ ազդեցութեան ներքեւ քուէարկուեցան Ելեւմտից միւս բոլոր յօդուածներն ալ, որովք կրնար Պրուսիա պահել իր ստացած զինուորական բարձրութիւնը և ըստ այնմ խոսիլ և մտիկ ընել տալ։

Բանակին դարձը ի Բէռլին։

2. — Մեպտեմբեր 21ին և 22ին յաղթական բանակը հանդիսաւոր մուտք ըրաւ ի Բէռլին։ Բանակին կը յառաջէր Գուլիէլմոս թագաւորը, շքեղ սպայակուտէ մը շրջապատուած, յետոյ կու գային բազմազան կարգ կարգ զինուորութիւնք, որոց այնքան քաջածներուն և զոհողութեանց վարձք, գրեթէ այն օրուան ժողովրդեան ընդունելութիւնն էր միայն։ Աւելորդ կը համարիմ նկարագրել բազմազգի հանդէսները, գիշերուան լուսավառութիւնները և հասարակաց խնջոյքները։ Նոյն օրը ընդհանուր ներում շնորհուեցաւ բոլոր քաղաքական և տպագրական յանցաւորաց. ծանուցուեցաւ որ Հոկտեմբեր 1ին պիտի սկսէր Պրուսիոյ բարեփոխեալ սահմանադրութիւնը և օրէնքով մը պիտի միացուէին Պրուսիոյ նոր ստացուած գաւառները[1]։ Այսպէս վերջացած կը համարուէր 1866ի պատերազմը, որ իր ամենամեծ արդիւնքներովն հանդերձ արտաքին և ներքին, պատճառեց շատ մը առտնին ցաւեր և աղէտներ։ Այնքան յաղթութիւնք և այնքան փառքեր չէին կրցած և չէին կրնար մոռցնել տալ ժողովրդեան կրող մասին համեմատաբար եղած մեծ զոհողութիւնները, սիրելեաց կորուստները և կսկիծները. և դրամական չնչին նպաստներ չէին կարող այրիացեալ, որբացեալ տան մը մէջ մոցնել ուրախ և անդորր կեանքը։ Ճշմարտութիւնը պէտք չէ ծածկել. պատերազմին աղետալի ծանրութիւնը ընդհարկար կրեց պրուսիացի աղքատ դասակարգը, իրեն համար նշանակութիւն չունէր որ Պրուսիա գերմանական

1. Տես Հատոր Բ. Գլ. ԿԲ։

կազմակերպութեան գլուխ կ'անցնէր։ Միայն կրեց լռելեայն ազնուավայել համակամութեամբ և իրեն բերան եղող ընկերավար տրիբունք և կամ ընկերվարական լրագիրք կռուեցան օրինական հանդարտ ոճով ընդդէմ Բիսմարքի քաղաքականութեան և զինուորականութեան։ Յետինքս որոց գլուխ էին Բիսմարք, Ռուն, Մոլթքէ, Հերուարթ, Շթայնմէց, Ֆոբէլ ֆոն Ֆալբէնշտայն, իրենց գոհութեան գագաթնակէտն հասած էին, որովհետեւ կը տեսնէին զՊրուսիա զինուորական առաջին ազգը. և թէ Բիսմարքի մնար՝ այդ խիստ զինուորականութիւնը կ'ուզէր մտցնել նոյն իսկ պրուսիական աշխարհավարութեան մէջ։

Պրուսիական զինուց այսքան փայլուն արդիւնքը, բնական է իր մեծ տպաւորութիւնը պիտի ունենար բոլոր աշխարհի վրայ և ամեն ազգ յայտնի և գաղտ պիտի սկսէր ուսումնասիրել պրուսիական ռազմագիտութիւնը և նախնական կրթութիւնը։ Ի՛նչ այսմ հարկ չկար երկար տարիներ զինուց ներքեւ անցնել. ամեն քաղաքացի զինուոր էր հարկ եղած ժամանակ, որովհետեւ նախնապէս վարժարանաց մէջ աստիճանաբար ստացեր էր զինուորական կրթութիւնը։ Յառաջ մղուեցան հրազինուց ուսումնասիրութիւնը և նոր պէտքերու համեմատ հնարուեցան նոր գիւտեր, զորս ապարդիւն ընելու համար հարկ եղաւ հակառակ նոր գործիքներ խորհիլ։ Այն ատեն առաջնակարգ սկզբունք մը դարձաւ որ. «Եթէ կ'ուզես խաղաղութիւն, պատերազմի պատրաստուէ՛»։ Պատերազմի ելեւմուտք Եւրոպիոյ ամեն կողմ անհամեմատ կերպով սկսան բարդուիլ Սադովայէ վերջը. և դրուեցան նոր տուրքեր, պահանջուեցան նոր զոհողութիւնք, որով տժգոհացաւ և գրգռուեցաւ արհեստաւոր և աղքատ դասակարգը։ Այն օրուընէ շատցաւ ընկերավարականաց բանակը, և քաղաքական կազմակերպեալ մարմին մը դարձաւ։ Իրեն վարդապետութիւնք տարածուեցան Եւրոպիոյ ամեն կողմ, խառնուած շատ տեղ ատելութեամբ մը ընդդէմ օրէնսդիրներու և իշխողներու։

Գերմանիոյ Դաշնակցական սահմանադրութիւնը։

3. — Պրուսիոյ ներքին կազմակերպութենէն վերջը, կը մնար սկսիլ գործադրել Գերմանական դաշնակցութեան մեծ ծրագիրը, որուն համար արդէն եղած էր Սադովայի պատերազմը։ Գուլիէլմոս իւր Պսակի ճառին մէջ ըսած էր թէ «Արդ մեզմէ, և մեր միութենէն և մեր հայրենասիրութենէն կախումն ունի Միացեալ Գերմանիոյ այնպիսի ապահով ապագայ մը պատրաստել, որ այլ եւս մաս մաս բաժնուելու և տկարանալու վտանգի մէջ չինկնայ»։ Այս ծրագրին համեմատ, Յունիս 16ին (1866) Բիսմարք շրջաբերական մը ղրկած էր, որպէս զի սեռն դաշնակցութեամբ միանան Պրուսիոյ հետ Մէքլէմբուրկ Շվէրին, Սաքս Վայմար, Մէքլէմբուրկ Ստրէլից, Օլդէմբուրկ, Բրունշվիք, Սաքս Մայնինկէն, Սաքս Ալտէմբուրկ, Սաքս Քոպուրկ Կոթա, Ընհալթ, Շարցբուրկ–Սոնդէրհաուզէն, Շարցբուրկ–Ռուտոլշտադ, Վալդէք, Ռէուս՝ երկու ճիւղերն ալ, Շաուէմբուրկ–Լիպպէ, Լիբէք, Բրէմէն և Համբուրկ։ Յիրաւի առանձին փոքրիկ պետութիւնք, բայց միանալովնին, թէ զինուորական և թէ քաղաքական գնահատելի ոյժ մը կը կազմէին Պրուսիոյ համար, ունենալով գրեթէ եօթը միլիոն ժողովուրդ։

Բիսմարքի հրաւիրանաց համեմատ Դեկտեմբերի վերջերը իւրաքանչիւր դաշնակցական պետութիւն լիազօր նուիրակ մը ղրկեց ի Բէռլին, որոնք միաբան կազմեցին Դաշնակցական Սահմանադրութիւնը։ Լիազօրք յետզայն վիճելու և վճռելու ներկայացուցին դաշնակցական ժողովոյն, որուն երեսփոխանք ուղղակի քուէով ընտրուած էին և որոնք հաւաքուեր էին ի Բէռլին, նախագահ ընտրելով զՍիմսոն երեսփոխանը, արդէն երբեմն նախագահ Ֆրանքֆորդի խորհրդարանին։ Ժողովոյն բացումը հանդիսաւոր կերպով ըրաւ թագաւորն Գուլիէլմոս, բարձր գահոյից վրայ նստած, իր առաջն ունենալով գերմանական շատ մը պետութեանց ներկայացուցիչները, յորոց ոմանք նախանձոտք Հոհէնձոլլէրնի տան այնքան բարձրանալուն։ Գուլիէլմոս բացման ճառն սկսաւ նախ յիշելով Նախախնամութեան գործը, պատ-

Գերմանիոյ Դաշնակցական սահմանադրութիւնը։

մեց Գերմանիոյ անկումը անմիաբան ըլլալնուն և ա-նոր բարձրանալը Պետութեանց միասիրտ եղած ժա-մանակ։ Վերջացուց խօսքը ըսելով որ ներկայիս ոչ-միաբան պետութիւնք ամենքն ալ աչքերնին Բէլգինու վրայ յառած են, որով պէտք էր գործել արթնու-թեամբ։

Դումարումները շարունակեցին և Դաշնակցական Սահմանադրութիւնը ընդունելի եղաւ 230 քուէիւք ընդ-դէմ 153ի։ Այդ դաշանց համեմատ Մայն գետին հիւսի-սակողման Պետութիւնք, դաշնակից երկիր մը կը կազմէին և պիտի ունենային նոյն օրէնքներ, նոյն իրաւունք քա-ղաքակցութեան, հաւասար դրամական կանոնք, թղթա-տունք, զինուորական կարգեր նման պրուսիականին և Պրուսիոյ թագաւորն էր անոնց բարձր հրամանատարը։ Ամեն քաղաքացի պարտական էր զինուորութեան։ Դաշ-նակցական գործոց դիւրին ընթանալուն համար, սահ-մանուեցաւ Դաշնակցական ժողովք մը, յորում իւրա-քանչիւր պետութիւն պիտի ունենար իր ներկայացուցի-չը, իր ժողովրդեան բազմութեան և երկրին տարածու-թեան համեմատ։ Այդ ժողովքին պիտի նախագահէր Պրուսիոյ թագաւորէն ընտրուած Դաշնակցութեան Ա-տենադպիր մը, որ պատասխանատու էր Դաշնակցական խօսարանին առջեւ, որուն հետ միաբան պիտի հսկէր Դաշնակցութեան օրինաց գործադրութեանը նկատմամբ։ Հաստատուեցաւ դարձեալ դաշնակցական բարձր և վեր-ջին Ատեան մը ի Լիւբէք, որ պիտի քննէր և վճռէր դաշնակից պետութեանց մէջ եղած խնդիրներ և վէճեր։

Պիտի դրուէր դարձեալ առանձին դաշինք մը որ պիտի սահմանէր հիւսիսային Գերմանական դաշնակցու-թեան յարաբերութիւնքը և կապերը Հարաւային պե-տութեանց հետ, յորոց ոմանք յօժար կը տեսնուէին կապակցութեան մը Գերմանական Դաշնակցութեան հետ։ Բավիէրայի պաշտօնարանին նախագահը ֆոն ֆֆորդտէն փոխուելով, յաջորդեց Հոհէնլոհէ իշխանը, եռանդուն կողմնակից Պրուսիոյ և Գերմանական Դաշնակցութեան հետ միութեան մը. նոյն զգացումն ունէն Վիւրդտէմբէրկ,

Բաղէն, Հէսսէ Դարմշտատ[1]։ Ընդհակառակն Հիւսիսային Շլէզվիկ Հոլշտայն կը բողոքէր և ըստ Պրակայի դաշանց կը պահանջէր իր ազատ կամքը միանալու Դանիմարքայի հետ. բայց չէր կարող Բրուսիոյ սպառնալից դիրքէն և Եւրոպիոյ միւս Պետութեանց անտարբերութենէն և զգուշութենէն. ոչ ոք կ'ուզէր Պրուսիոյ հետ թշնամանալ։

Խօսարանին մէջ Դաշնակցական Ամհամանադրութեան քուէարկուելէն վերջը, Գուլիէլմոս թագաւորը, հանդիսապէս փակեց խօսարանին նիստերը և այն առթիւ ըսաւ. « Մենք ամենիս մասնակցեցանք ազգային գործոյն, թէ դաշնակից պետութիւնք և թէ ազգային ներկայացուցիչք. սիրով զոհեցինք մեր կարծիքները, մեր իղձերը այն պատճառաւ՝ որովհետեւ այս զոհողութիւնք էին ի նպաստ Գերմանիոյ և կարեւորք հայրենեաց միութիւնը ձեռք բերելու համար »։

Բիսմարք Ատենադպիր Դաշնակցութեան։

Մայիսի և Յունիսի մէջ (1868) խօսարանի հաստատած դաշնակցական Ամհամանադրութիւնը ընդունուեցաւ Հիւսիսային Գերմանիոյ բովանդակ Պետութիւններէն, հաստատուեցաւ նաեւ Դաշնակցական խորհուրդը, որուն նախագահ եղաւ կոմսն Բիսմարք, զոր Գուլիէլմոս թագաւորը Ատենադպիր Դաշնակցութեան անուաներ էր։ Իսկ 1815ի հաստատուած Գերմանական Աւազաժողովը իր վերջին գումարումը ըրաւ յԱւգսբուրկ Օգոստոս 24ին և ծանոյց Պետութեանց, Աւազաժողովոյն աննպատակ մնալը յետ Նիքոլսբուրկի դաշանց։

Բիսմարք և Նապոլէոն Գ. Խրնդիր Լիւքսէմբուրկի։

4. — Ի Գերմանիա այս ամէն եղելութիւնք բնական է տագնապ կը պատճառէին Դաղղիական վարչութեան որ ամբողջ պատերազմի ժամանակ չէզոք

---

1. Պրուսիոյ զինուորական մասը, Սադովայի պատերազմին ժամանակ ֆոն Ֆֆորդուէն Պաշտօնարանին բռնած ընթացքէն զայրացած, յաղթութենէն վերջը պահանջած էր փոքրկացնել զՊավիերա ի նպաստ Բաղէնի և ակարացնել։ Բիսմարք, կ'ըսէ իր Յուշերուն մէջ, որ ինքը ընդդիմացաւ. « Տկար, փոքր Բավիէրա մը, հարկ էր որ Աւստրիոյ կամ Գաղղիոյ զիրկը դիմէր »։ Եւ Բիսմարք չէր ուզեր օտար ազդեցութիւն։ Խորհուրդք եւ Յուշք Բիսմարքի. Հատ. Բ. Գլ. Ի. Տպ. 1899։

լռութեամբ սպասեր էր, իր բռնած անտարբերութեան փոխարինութիւն մը ստանալու յուսով. զոր Բիսմարք երբէք պաշտօնապէս մերժած չէր առանց հաստատուն խոստմունք մը տալու։ Նապոլէոն Գ Նիքոլսբուրկի զինադադարման ժամանակ լռելեայն խմացուցած էր Բիսմարքի որ Գաղղիա պիտի ուզէր Հռենոսի պալատինեան մասը և Հռենոսեան Հէսսէն [1]։ Փոխադարձ Բիսմարք հասկցնել տուաւ որ գերմանական հողերէն թիզ մը պահանջելը, պատերազմ կը նշանակէր։ Այն ատեն Նապոլէոն Գ գրեթէ պահանջեց Լիւքսէմբուրկի դքսութիւնը, զոր արդէն գրեթէ խոստացուած կը համարէր Բիսմարքի կողմանէ. պահանջեց որ նոյն խոստումը տրուի նաեւ Բէլճիոյ համար յապագային [2]։ Բիսմարք ժամանակ շահելու և կամ յուսալով որ գրգռեալ ոգիները քիչ քիչ կը հանդարտին, հաւանեցաւ հանգստեամբ նկատողութեան և վիճաբանութեան նիւթ ընել այս երկրորդ առաջարկը, առանց սակայն յայտնապէս խոստանալու [3]։ Լսաւ առ Բէնէդէտտի դեսպանը որ ինքը հա-

---

1. Բիսմարք կը պատմէ իր Յիշատակարանաց մէջ որ կասկածելով Գաղղիոյ ընելիք պահանջը և պատերազմի սպառնալիքը, աճապարեր էր Աւստրիոյ հետ հաշտութիւն ընելու, ընդդէմ զօրավարներուն կարծեաց, որոնք կ'ուզէին յաղթական մանել ի Վիեննա։ Չէր ուզեր Աւստրիոյ մայրաքաղաքը մտնելով և կամ հող պահանջելով վշտացնել զԱւստրիա, որուն չէզոք մնալուն պէտք պիտի ունենար օր մը երբ Գաղղիոյ հետ ունենար պատերազմ մը, զոր ինքը անխուսափելի կը համարէր։ Բայց Գուլիէլմոս ալ չէր ուզեր դադրեցնել պատերազմը։ Բիսմարք ի զուր ջանացեր էր համոզելու թագաւորը, մինչեւ զայրացեր էր։ Այս յանկարծ փոփոխութեան վրայ, «Վենեակս քաշուեցայ, կ'ըսէ Բիսմարք, և կը մտածէի պատուհանս բանալով, չորրորդ յարկէն գիս վար նետել», երբ յանկարծ ներս մտաւ թագաժառանգ իշխանը և ձեռքը ուսիս վրայ դնելով խոստացաւ համոզել իր հայրը։ Բիսմարք. Խորհուրդք եւ Յուշք. Հատոր. Բ. Գլ. Ի։

2. «Ուզած են ոմանք խամրել Նապոլէոն Գ.ի զեղեցիկ քաղաքականութիւնը (ազգայնութեանց նկատմամբ)։ Ամրաստանած են իբր թէ ուզած ըլլայ առնուլ Հռենոսեան գաւառը, գաղղիացի Հելուետիան, Բէլճիա, Սարդենիա, Ջենովա, Մարոք, Տունուզ։ Բոլորն ալ շինծու են... Միայն հիւանդութեամբ մը և մտամոլորութեամբ յամին 1867, Թոզուց որ ուրիշները գործեն Բէլճիոյ նկատմամբ զոր ինքը չլրաւ։ Նապոլէոն մէկ միայն բան մը ուզեց ձեռք բերել, զոր կամեցեր էր նոյն իսկ խաղաղասէրն Լամարտին, այն է Ալպեանց գաղղիական կողմը՝ Նիս և Սաւոյա»։ Լմիլ Օլիվէ, Ազատական կայսրութիւն, Հատ. Գ. Գլ. Եր. տպ. 1898։

3. Ֆոն Սիբել (պաշտօնական պատմիչ Բրուսիոյ արքունեաց) Նապոլէոն Գ. 1873 Յունիս 21. Հանգէս քաղաքական եւ մատենագրական։

կառակ չէր եթէ Դաղղիա ուզէր միացնել զՌէլճիա. միայն թէ ազատ թողուէր Պրուսիա իր գերմանական հպատակաց մէջ և խնդրեց որ Ռէնէդէտտի գրի առած իրեն տայ այս եղած բանակցութիւնք։

Ռէնէդէտտի դառնալով ի Պարիս ծանոյց Նապոլէոն Դ.ի Բիսմարքի հետ բանակցութիւնքը և եզրակացումը[1]։ Բայց Նապոլէոն յետ լուրջ խորհրդոյ, լքեր էր Ռէլճիոյ տիրապետութեան խորհուրդը և կը պնդէր ստանալ միայն զԼիւքսէմբուրկ, իբր վարձք Դաղղիոյ չէզոք կենալուն, և զայս դիւրին կը համարէր, քանի որ Լիւքսէմբուրկի դքսութիւնը Հոլանդայի թագին հետ միացեալ էր առժամանակեայ և անձնականապէս, և կարելի էր Հոլանդայի թագին դրամական փոխարինութիւն մը ընել, որուն կը յուսար դիւրաւ համոզել Հոլանդայի թագաւորը։ Նապոլէոն մինչեւ իսկ գումարը սահմանած էր 90 միլիոն ֆրանք։ Կը մնար այս գաղտ որոշողութիւնը հաղորդել պետութեանց և հաւանութիւնին առնուլ. ապա հարկ էր առաջարկել Պրուսիոյ որ Լիւքսէմբուրկի բերդին մէջ պահած պահանորդքը կոչէ և տեղիք տայ Դաղղիոյ։

Պրուսիակը հակառակի Լիւքսէմբուրկի Դաղղիոյ միացման։

5. — Նապոլէոն Դ իւր խորհուրդքը յայտնեց նախ Անգղիոյ որ ընդդիմութիւն մը չի ցոցուց, ապա կարգաւորիչ Պետութեանց։ Իսկ Դաղղիոյ Արտաքին Գործոց պաշտօնեայն ծանոյց Բիսմարքի իբրեւ արդէն բանակցեալ խնդիր մը։ Բիսմարք զարմանք յայտնեց այսպիսի ժամանակ այսպիսի խնդիր մը յառնելուն. ծանոյց որ բոլոր Գերմանիա պիտի յուզուէր այս լրոյն վրայ և դժուար պիտի ըլլար «հասարակաց մղումը զսպել»։ Ասիկայ պատերազմի մը սպառնալիք էր։ Եւ յիրաւի բովանդակ Գերմանիա յուզուեցաւ զԼիւքսէմբուրկ հիւ-

1. Բիսմարք ժիտած է որ խոստում մը բրած ըլլայ առ Ռէնէդէտտի. մինչ սա պնդած է Բիսմարքի կողմէն ստացած հաստատուն խոստման վրայ։ Բիսմարք Ռէլճիոյ այնքան կարեւորութիւն չէր տար, որքան Լիւքսէմբուրկի. զոր գերմանական հող կը համարէր։

սիսային գերմանական հող մը համարելով։ Լրագրացմէ ոմանք պատերազմ կը պահանջէին եթէ յանկարծ Դաղղիա « յանդգնէր » գործադրել իր խորհուրդը։ Գերմանական խօսարանին մէջ Բէնինգսէն երեսփոխանը հարցումն ուղղեց առ նախագահն պաշտօնարանին և պնդեց որ Լիւքսէմբուրկ մասն կազմելով Գերմանիոյ, Պրուսիա իրաւունք ունի հոն պահանորդք պահելու։ Բիսմարք իւր պատասխանին մէջ առ Բէնինգսէն ծանոյց ճարտարութեամբ մը որ. « իրաւունք չունենալով զ Լիւքսէմբուրկ մտցնել Հիւսիսային դաշնակցութեան մէջ, կարելի էր որ այս խնդրոյն նկատմամբ դիտողութեան առնուէր Դաղղիոյ անձնասիրութիւնքը »։ Բիսմարք կը համարէր որ այսպէս կը հաճէր զԴաղղիա չպնդելով Պրուսիոյ պահանորդ պահելուն վրայ։ Սակայն Դաղղիա չգոհացաւ այդքան բացատրութեամբ և պահանջեց որ Բրուսիոյ վարչութիւնը աւելի պայծառ յայտնէ իր ըսածին իմաստը։ Կայսերական վարչութեան կողմանէ պատերազմի գրգիռ մ'էր այս, բայց չէր գուշակեր որ սպառնալեաց ժամանակը անցեր էր։ Դաղղիա լռեր էր երբ կրնար դիւրաւ փոխարինութիւն մը ձեռք բերել. հիմա կը սպառնար, երբ Պրուսիա կնքեր էր Աւստրիոյ հետ խաղաղութեան դաշինքը և Գերմանական Դաշնակցութիւն մը ձեւացուցեր էր, որուն բանակին պիտի հրամայէր Պրուսիոյ թագաւորը։ Նոյն իսկ Լիւքսէմբուրկի և Հոլանդայի մէջ պատերազմի կուսակիցք և գերմանասէրք ի նպաստ խնդրոյն գինուորագրութիւն մը սկսան։ Սակայն Դաղղիա չէր ուզեր այդ պատճառաւ մինչեւ պատերազմի հանիլ և Պրուսիա ալ նոր կռուէ մը ազատած, երկրորդ մը չէր ուզեր սկսիլ և այն Դաղղիոյ հետ։ Բիսմարք ճարտարութեամբ մը ծանոյց որ ըստ 1839ի Լոնդրայի Դաշանց, Լիւքսէմբուրկի Դքսութիւնը Եւրոպիոյ մեծ Պետութեանց հովանաւորութեան ներքեւ դրուած ըլլալով, անոր պատկանող ամեն խնդիր, հարկ էր որ լուծուէր դիւանագիտական միջոցներով։ Նապոլէոնի վարչութեան վերջին յոյսն Հոլանդայի Թուլիէլմոս թագաւորին վրայ էր, որ անձնականապէս հակառակ

չէր գումար մը ստանալու. բայց և նա պատերազմի մը պատասխանատուութենէ փախչելու համար, դաշինքը չստորագրած խորհուրդ հարցուց Բիսմարքի և իմանալով վաճառման մը հետեւանքները, հրաժարեցաւ դաշինքը ստորագրելէ։ Ինչպէս էր Նապոլէոն Գ.ի ետ առնուլ իր առաջարկը, զոր հասունցուցած կը համարէր և տագնապողական կացութեան մէջ էր երբ Բիսմարք իմացուց Ռուսիոյ, որ Պրուսիա կ'ընդունէր հաշտարար միջամտութիւն մը, որով Ռուսիա, Աւստրիա և Անգլիա բանակցելով ի Լոնդրա, խնդրոյն միջամտեցին և ջանալով գոհացնել նաեւ Գաղղիոյ անձնասիրութիւնը, առաջարկեցին որ Պրուսիա իրաւունք չունենայ պահանորդք պահելու ի Լիւքսէմբուրկ և Գաղղիա հրաժարի Դիքսութիւնը միացնելէ, որ ըլլայ չէզոք երկիր մը՝ ընդերաշխաւորութեամբ Մեծ Պետութեանց։

Չէզոքացումն Լիւքսէմբուրկի

1867 Մայիս 13.

Գաղղիոյ կայսերական բոլոր լրագիրք իբր մեծ յաղթանակ մը հռչակեցին Լիւքսէմբուրկի խնդրոյն վերջաւորութեան եղանակը, որով Դիքսութիւնը, հակառակ ջանից Բիսմարքի, դուրս մնաց գերմանական Դաշնակցութենէն։ Եւ յիրաւի կրնար դիւանագիտական յաղթանակ մը համարուիլ, թէ որ Գաղղիոյ ալ չժխտուէր այնքան պնդութեամբ պահանջածը, որով Գաղղիա բան մը ստացած չէր ըլլար ի փոխարէն իր չէզոքութեան, ուսկից օգտուելով Պրուսիա առանց տագնապի այնքան յաջողութեամբք մղեր էր պատերազմը ընդդէմ Աւստրիոյ[1]։

---

1. «Երբ Բիսմարք հանդիպեցաւ ինձ Պրուսիոյ Թագաւորին Պարիս հասած որբ, իմացուց որ տունս պիտի զար զիս տեսնելու, և իրաւցնէ եկաւ երկու որ վերջը... Խօսքը դարձաւ Լիւքսէմբուրկի վրայ. իր սրամիտ ազատախօսութեամբ նախ յայտնեց իր մեծ զարմանքը Գաղղիոյ վարչութեան բռնած ճամբուն վրայ, ըսաւ՝ որ կը կարծէր գործել քաղաքագէտ մարդկանց հետ, և մեծապէս խարուեր էր»... և ինքը, Բիսմարք, խնդճ դեր մը կատարեր էր, մինչ մեծ ուրախութիւն ունէր որ Գաղղիոյ Լիւքսէմբուրկ ընդունելովը, պիտի կարենար հաճելի ըլլալ զաղղիական վարչութեան, և բժշկել անոր անձնասիրութեան կրած վէրքերը. որ ինքը՝ անկնդծ էր Բենէդէտտիի հետ բանակցած ժամանակ և փաստ կը բերէր որ չէր ծածկած անոր գերմանական ընդհանրութեան կողմանէ հանդիպելիք մեծ դժուարութիւնքը, որ Սադովայով ընդունած ըլլալով 1815ի Դաշինքը, Հոլանդայի Թագաւորը կրնար չընդունիլ զնորը, որով կը տիպուէր Պրուսիացւոց պա-

Գերմանական Դաշնակցութիւն և Նաբոլէոն Գ։

6. — Գերմանացի լրագրութիւնը մեծապէս տրտունջաց Լիւքսէմբուրկի խնդրոյն այս վերջն ունենալուն և կը մեղադրէր Պրուսիոյ վարչութիւնը գերմանացի հողմը չէզոքացնելով բաժնելուն համար։ Բիսմարք ըմբռնած էր որ մեծագոյն ոյժ շահելու համար հարկ էր կատարել այդ զոհողութիւնը, նա մանաւանդ կը դիտէր Դաղղիոյ կողմանէ նոր համակրութիւն մը դէպ ի Աւստրիա։

Նապոլէոն Գ.ի վարչութիւնը բռնադատուած էր նոր ուղղութիւն մը փնտռելու գերմանացի Դաշնակցութեան օրէ օր նոր ոյժ մը առնելուն համար։ Դաշնակցական խօսարանի նիստերուն փակուելէն առաջ (1867 Օգոստ.) բովանդակ գերմանացի հայրենասէրք, առանց կրօնական խտրութեան, յայտնեցին իրենց «անսահման իղձը» ազգային միութեան և մեծութեան գործը յառաջ մղել և իրականացնել այնքան ժամանակէ ի վեր երազածնին։ Բրուսիոյ համօրէն դեսպանք կամ ներկայացուցիչք, անուանեցան նաեւ Ներկայացուցիչք Հիւսիսային Դաշնակցութեան. և նաւային մէկ միայն դրօշակ մը հաստատուեցաւ այդ Պետութեանց համար։ Միանգամայն Բիսմարք կը ջանար համոզել նոյն իսկ Հարաւային գերման պետութիւնքը՝ զինուորական դաշնակցութեամբ միանալ իրենց հետ և զՊրուսիոյ թագաւորը պատերազմի ժամանակ ընդունիլ իբր բարձր հրամանատար։

հանորդը ելլել Լիւքսէմբուրկի բերդէն և տեղը անցնիլ Հոլանդացւոցը. և սոքա կրնային զայն յանձնել Դաղղիոյ առանց գերմանական միջամտութեան, որ ինքը Ֆէնէդէտտիի պատուիրած էր խիստ զգաստիք, վասն զի թէ այս բանակցութիւնք յաջէին ի Գերմանիա, Պրուսացւոց պահանջողը չելած, այն ատեն անկարելի էր, իբեն, Բիսմարքի, հասարակաց կարծեաց հեղեղին դէմն առնուլ։ Ի. նոյն իսկ իր անձին ժողովրդականութիւնը չրկորանցնելու համար, ստիպուած էր Լիւքսէմբուրկի Դաղղիոյ տրուելու լրոյն, ժամկոչիլ արտաքուստ յայտնապէս առ թագաւորն Հոլանդիոյ և բողոքել, ձեւակերպութեան համար, Դաղղիոյ վաճառման դէմ... «Բայց, ասելցուց Պ. Բիսմարք, Պ. Ֆէնէդէտտի կը պատկանի այն դպրոցին՝ որոնք կը շփոթեն ճարտարամտութիւնը խարէութեան հետ. շատ ժամանակէ ի վեր վարժած Արեւելքի փաշաներուն հետ վարպետութիւններ ընելու, կարծեց որ կրնար իմ ձեռքս յափշտակել Լիւքսէմբուրկը, առանց ուրիշ կապակցութեան մը հետ»։... Յիշատակարանք Դրսոյ Փերսիճեի (հուչակաւոր պաշտօնեայ Նարոլէոն Գ.ի) էջ 370. տպ. 1896։

Պրուսիա փոխադարձ պիտի ապահովցնէր այն պետութեանց պաշտպանութիւնը և ամրողջութիւնը, և այսպիսի առաջարկ մը արդէն սկսեր էր ունենալ իր ջատագովները Հարաւային Պետութեանց մէջ։ Այս ամենը չէր կրնար անտարբեր աչքով դիտել Գաղղիա, և արդէն բեմախօսք և լրագիրք բարձր կը քարոզէին ապագայ վտանգը։

Տեսակցութիւն երկու կայսերաց ի Սալցբուրկ։

Այս ամեն պարագաներէ մղեալ Նապոլէոն Գ. ունեցաւ գաղափար մը Գերմանիոյ Հարաւային պետութեանց դաշնակցութիւն մը կազմել Գաղղիոյ և Աւստրիոյ Նախագահութեան ներքեւ. և այս պատճառաւ տեսութեան մը իսկ գնաց ի Սալցբուրկ Փրանկիսկոս Յովսէփ կայսեր։ Թէպէտ Գաղղիոյ և Աւստրիոյ պաշտօնական լրագիրք հրատարակեցին որ Նապոլէոն Գ գնացեր էր ի Սալցբուրկ ցաւակցելու Փրանկիսկոս Յովսէփ կայսեր, իր եղբօր Մաքսիմիլիանոս կայսեր ի Մեքսիքոյ ցաւալի սպանման համար, բայց այդ արտաքին պատրուակին ներքեւ, կար նաեւ քաղաքագիտական նպատակ մ'ալ։

Սակայն Փրանկիսկոս Յովսէփ բնաւ չիրախուսեց Նապոլէոն Գ-ի հակագերման ձգտումները և ցուրտ երեւցաւ անոր առաջարկութեանց, որովհետեւ միտքը դրած էր իր բազմազգեան տարերքներէ կազմուած Կայսրութեան հանգստեան համար, բարեկամական դաշնակցութիւն մը ունենալ իր զօրաւոր դրացւոյն հետ և յայտմ կը տեսնէր Աւստրիոյ օգուտը և ապահովութիւնը։ Ըստ իր խոստման ի Պրակա, կ'ուզէր բոլորովին չմիջամտել գերմանական խնդրոց մէջ, և որպէս զի Սալցբուրկի տեսակցութիւնը կասկած մը չտայ Պրուսիոյ, անմիջապէս իր դեսպանին ձեռքով իմացուց առ Բիսմարք, որ երկուց կայսերաց տեսակցութիւնը չունէր յարաբերութիւն գերմանական խնդրոց հետ, նոյնը

1867 բռնադատուեցաւ ընել և Նապոլէոն Գ. և Բիսմարք Սեպտեմբեր 7ի շրջաբերականով մը իմացուց զայս առ Հարաւային Պետութիւնս իր ներկայացուցիչներուն ձեռքով։ Այս առթիւ կրկնեց որ ինքը ազատ կը թողուր

Հարաւային Պետութիւնքն իրենց ընտրութեան մէջ, շեշտելով միանգամայն որ՝ Հարաւային և Հիւսիսային Գերմանիա մէկ էին շատ մը կապերով, և ուրախ էր որ օտար Պետութիւնք ըմբռնած էին որ ա՛լ չէին կարող միջամտել Գերմանիոյ գործոց մէջ, և Գերմանիա ազատ էր իր ներքին գործերը կարգադրել ինչպէս կ՚ուզէր։

Գերմանական մաքսային Դաշնակցութիւն 1867։

7. — Եւ արդէն Բիսմարք այսպէս խօսած ժամանակ, գերմանական ընդհանուր Դաշնակցութեան մը հիմը դրած էր երկու ամիս առաջ մաքսային ընդհանրական դաշնակցութեամբ։ Յունիսի սկիզբները, Բիսմարք բանակցութեան ժողով մը գումարեց ի Բէռլին, ուր հրաւիրեց նաեւ Հարաւային գերմանական Պետութեանց պաշտօնեաներ, և միաբան վիճաբանութեամբ հաստատուեցան մաքսային դաշանց հիմունքները, որով պիտի վարուէր ընդհանուր գերմանական Դաշնակցութիւնը, յորում կային Հիւսիսային և Հարաւային Պետութիւնք, բաց յԱւստրիոյ։ Այսպէս ամբողջ Գերմանիոյ ազգութիւնը կը կապուէր նմանօրինակ և հաւասար օրէնքներով, վաճառականական և արուեստական ճիւղերու մէջ. և Ավստրիա բոլորովին կը զատուէր։ 1867ի Յունիսի ժողովոյն հաստատուած յօդուածներու վրայ կազմուեցաւ առաջին անգամ ի Բէռլին 1868ի Ապրիլի վերջերը մաքսային ժողովը։ Այս մաքսային դաշինքը ճամբայ մը պիտի ըլլար Հարաւային Պետութեանց քիչ քիչ մտնելու Հիւսիսային Դաշնակցութեան մէջ։ Բիսմարք փափագելով հանդերձ որ մը առաջ այդ միութեան, չէր ուզեր սակայն աճապարել, որպէս զի նոյն իսկ Հիւսիսային Դաշնակցութեան դէմ թշնամիներ չյարուցանէ և չնուազին ձեռք բերուած շահեր։

Հարաւային զաւառաց միութեան փափաքներ։

8. — Սակայն մաքսային Դաշնակցութենէն վերջը Հարաւային պետութիւններէն ոմանք և մանաւանդ Բադէնի Մեծ Դուքսը՝ Փրեդերիկոս Գուլիէլմոս, որ ամուսնացած էր Պրուսիոյ Գուլիէլմոս թագաւորին Լուիզ դստեր հետ, յայտնապէս սկսաւ ցուցընել իր միտումը ընդհանուր Դաշնակցութեան Պրուսիոյ հետ։ Սեպտեմբեր 12ին իր խորհրդարանը բանալով, հռչակեց որ ամեն զոհ պէտք

էր ընել այդ միութեան հասնելու համար, որ կարեւոր էր իր երկրին և ժողովրդեան ապահովութեան և բարութեան համար... և թէ իր վարչութիւնը մեծ պարտք կը համարէր դաշնակցիլ Պրուսիոյ հետ գերմանական հիւսիսային ազգաց նման։ Արդէն Մաքսային Դաշանց հետ Հարաւային Պետութիւնք միաբանած էին « ընդդիմանալու ամենուն բանակներով, արտաքուստ որ և է յարձակման մը ». և հարաւային Պետութեանց կողմանէ բանակցութիւնք տեղի ունեցեր էին ի Շտուտկարտ. և եղած ծրագիրք և եզրակացութիւնք փութով պիտի առաջարկուէին խորհրդարանին։

Բադէնի Մեծ դքսին այս Պսակի ճառը շատ նշանակութիւն ունեցաւ և մեծ տպաւորութիւն բոլոր Եւրոպիոյ և մանաւանդ Գաղղիոյ վրայ։ Նոյն իրձերը և գաղափարները հաստատեց խորհրդարանը Պսակի ճառին պատասխանին մէջ քիչ վերջը։

Հիւսիսային Դաշնակցական խորհրդարանին մէջ ազգային ազատական կուսակցութիւնը առաջարկեց զԲադէն անմիջապէս ընդունիլ Դաշնակցութեան մէջ. բայց Բիսմարք մերժեց խոհեմութեան դէմ համարելով։ Դեռ լիովին վստահ չէր համարձակ գործելու և կը խիթարտակաւին Գաղղիա–Աւստրիական դաշնակցութենէ մը։

ԳԼՈՒԽ Բ.

ԱՒՍՏՐԻԱ ՍԱԴՈՎԱՑԻ ՎԵՐՋԸ

1. Աւստրիա Սադովայէ վերջը. — 2. Պաշտօնեայն ֆոն Բայստ. — 3. Համաձայնութիւն Աւստրիա–Հունգարական. — Երկաւորութիւն. — 4. Պարտնակութիւն Համաձայնութեան. — 5. Աւստրիա ազատական օրէնքներ. — Քաղաքական ամուսնութիւն. — Զինուորական օրէնք. — Դրամական վիճակ. — 6. Աւստրիոյ և Պրուսիոյ բարեկամական առնչութիւնք.—Պրուսիոյ թագաժառանգը ի Բէոլին. — 7. Հունգարիոյ հպատակ ժողովրդոց տժգոհութիւնք. — Սլաւք ընդդէմ Երկաւորութեան. — 8. Բոհեմիերուն ցայտարարութիւնը. — 9. Լեհք, Կալիցիացիք և Ռուսէնք. — 10. Խռուատք, Սերբք. — Ապստամբութիւնն ի Բոսկա դի Կատարօ. — Դաշինք Խրուատաց։

1. — Սադովայէ վերջը Աւստրիական պետութիւնը շատ դժուարին կացութեան մը մէջ կը գտնուէր. բաւական չէր որ կորսնցուցեր էր գերմանական գաւառները և ամենէն աւելի բարոյական ոյժը և ազդեցութիւնը, այլ աւելին՝ զարթուցեր էր բազմաթիւ և զօրաւոր ցեղերու սրտին մէջ խղճմ մը՝ օգտուելու կայսրութեան այս պարտութենէն և ձեռք բերելու թէ ոչ ի սպառ անկախութիւն մը, գոնեայ բազմաթիւ իրաւունքներ։ Արդէն կարճատես լրագիրք և քաղաքագէտք սկսեր էին Աւստրիոյ կայսրութեան լուծումը հռչակել և վիճել իսկ ա-

Աւստրիա Սադովայէ վերջը 1866.

պագայ ձեւանալիք թագաւորութեանց վրայ։ Եւ Պրուսիոյ թագաւորին ցրցուցած համակրութիւնքը պատերազմի միջոց առ մաճառս և առ չէքս, կը համարուէր որ պիտի ունենար իւր հետեւանքները։ Մաճառ զօրավարն Կլապկա առաջարկեր էր առ թագաւորն Գուլիէլմոս հունգարացի գնդով մը օգնութեան հասնելու իրեն, որուն խափան եղած էր միայն Նիկոլսբուրկի զինադադարը [1]։

Չէքերը պատերազմի ժամանակ խնդրեր էին Վենայի վարչութենէն որ զէնք տրուի իրենց, որպէս զի իրենք պաշտպանեն իւրեանց հայրենիքը, բայց Վեննայի վարչութիւնը անվստահ՝ և կասկածելով գաղտ նպատակ մը, մերժեր էր հրամանը։ Պրուսիոյ թագաւորը Բոհեմիոյ համառօտ գրաւման ժամանակ, հրատարակութիւն մը ըրեր էր առ « փառօք լի թագաւորութիւն » Բոհեմիոյ և պանծացուցեր էր նորա անցեալը։ Երբ կայսերական պաշտօնատեարք թողլով իրենց պաշտօնատեղիները քաշուեցան, շատ մը չէքեր սկսան վարել նոյն պաշտօնները և ունեցան ժամանակ մը ինքնավարական ճաշակը։

Աւստրիա պատերազմէն վերջը կրկին իւր իշխանութեան ներքեւ հաւաքելու համար այս իւր զօրաւոր հպատակքը, մեծ ազդեցութեան և զինուորական բարեկարգութեան պէտք ունէր. կրնար կրկին 1848ի յեղափոխութիւն մը ծնանիլ, և Սաղովայէ վերջը այսպիսի

---

1. Պրուսիոյ թագաւորազուն իշխաններէն ոմանք աւստրիական բանակի զունդերու պատուոյ հրամանատարութիւնք ունէին և Փրանկիսկոս Յովսէփ հրովարտակով մը ջնջեց այդ տիտղոսները։ Բրուսիոյ արքունիքը յուզուեցաւ, իշխանազունք կ'ուզէին իրենց նշաններն ետ դրկել, երբ Դիւանագիտական Յուշարարը Սեպտեմբեր 23ի թուով յայտնեց պատճառը. « Կ'իմանանք որ պատերազմի ժամանակ Պեռուիսն մը պատերազմի գերիներէն խոստումն առնու չկռուելու իրեն դէմ, բայց զարմանք կը բերէ եթէ միապետական պետութիւն մը բռնադատէ գերի զինուորները դրժելու իրենց օրինաւոր իշխանին երդման և գանոնք անցնէ յեղափոխական դրօշակին ներքեւ։ Եւ սակայն այսպէս ըրաւ Պրուսիա (Իշխան Ֆրէդէրիք Կարլ) կամենալով և վճարելով Կլապկայի լեգէոնները »։ Պրուսիա ցրուել տուաւ այդ զունդերը։

պարագայ մը, անհրաժեշտ վտանգաւոր էր Հարսբուրգի Տան և քայքայումն էր աւստրիական կայսրութեան։ Կայսրը լաւ ըմբռնած էր որ Բէօնիկսկրացի և Սադովայի աղէտքը առաջ եկեր էին մանաւանդ զինուորական հրամանատարութեան մէջ պակասութիւններէ և ընդհանուր կազմակերպութեան թերութիւններէ։ Յետ պատժելու պակասաւորքը և վարձատրելու քաջացեալները, յորս մանաւանդ Ալբրէխդ արշիդուքսը և Տէկէտոֆ ծովակալը, լուծեց հրովարտակով մը բանակաց կազմակերպութիւնը և ինքնագիր թղթով մը զԱլբրէխդ արշիդուքսը ընդհանուր սպարապետ անուանեց լիովին իշխանութեամբ պէտք եղած բարեկարգութիւնները վճռելու և գործադրելու։ Բանակին ընդհանուր հրամանատարութեան անուանումը իրեն պահեց և Պատերազմի պաշտօնէին թողուց միայն զինուորական մատակարարութեան տեսչութիւնը։ Եթէ ըլլար տարաձայնութիւն մը մէջերնին, կայսրը պիտի վճռէր։ Պահեց միայն Ցովային զօրութեան կազմակերպութիւնը որ լաւ արդիւնք ցրցուցեր էր։ Իր մոռացած նպատակներուն հասնելու համար, ետեւէ եղաւ մեծամեծ խնայութեանց և նախ ինքն հրաժարեցաւ կայսերական ընտանեաց թոշակի կէսէն։ Ֆրանկիսկոս Յովսէփ Սադովայէն վերջը, Աւստրիոյ ամենէն դժուար կացութեան մէջ, ցրցուց նուրբ քաղաքագիտութիւն մը և ընդարձակ միտք մը. վարչական ոճոյն մէջ շատ փոփոխութիւնք մտցուց. ըմբռնեց որ այլեւս անցած էր հին քաղաքագիտութիւնը, լմնցած էր Մէտէոնիքի ժամանակը։ Ան իր ժողովուրդս գրած շնորհակալութեան թուղթը հոկտեմբեր 13ին, պատերազմի ժամանակ իրենց ցրցուցած անձնանուիրութեան համար, և յետոյ պատերազմի տեղերուն այցելութիւն և տառապելոց օգնութիւնքը[1] իրեն գրաւեցին ամենուն սիրտը. գիտցաւ, որ ժողովրդոց ծայրայեղ ազատասիրութիւնքը, օրինա-

---

1. Այս այցելութեանց միջոց դաւաճանութիւն մը փորձուեցաւ իր կենաց դէմ, որ անզգիացի գնդապետի մը արթնութեամբն չյաջողեցաւ։ Ցանցաւորը բռնուեցաւ։

ւոր և պաշտօնական ազատութեամբ միայն կրնար կանոնաւորել և զսպել, և այսպէս զօրացնել աւստրիական կայսրութիւնը։

Պաշտօնեայն ֆոն Բայստ։

2. — Իւր այս խորհրդին գործի չուզեց գործածել աւստրիացի քաղաքագէտ մը որ կրնար չ'ունենալ անկողմնասիրութիւն մը և կրնար ներշնչուած ըլլալ հակակրութիւններէ և համակրութիւններէ։ Ֆրանկիսկոս Յովսէփ քաղաքագիտական զոգցես յանդգնութեամբ մը իրեն խորհրդատու և պաշտօնեայ գերմանական պետութեանց պաշտօնեայ մը և տրեզտացի մը հրաւիրեց՝ զՖոն Բայստ պաշտօնեայ Սաքսոնիոյ, որ Բիսմարքի հետ հակառակութեանց պատճառաւ ստիպուեր էր հրաժարելու Սաքսոնիոյ Յովհաննէս թագաւորին ծառայութենէն։ Նոյեմբեր 4ի կայսերական հրովարտակ մը կ'անուանէր զԲէլկրէդի՝ պաշտօնեայ ներքին գործոց, զզօրավարն Լոհն, երբեմն գլուխ սպայակուտի Ալբրէխտ արշիդքսին. պաշտօնեայ պատերազմի և զԲայստ՝ պաշտօնեայ Արտաքին գործոց։

Պարոն ֆոն Բայստ ծնեալ յամին 1809 ի Դրէզդա, իւր երկրին քաղաքական շատ մը պաշտօններով գտնուած էր ի Պարիս, Բէռլին, Միւնիխ և այլուր իբրեւ քարտուղար և իրը ներկայացուցիչ և 1848ի յեղափոխութեան ժամանակ Սաքսոնիոյ պաշտօնեայ էր ի Բէռլին։ Յամին 1849ի մտաւ Սաքսոնիոյ Հէշտ պաշտօնարանին մէջ իբր պաշտօնեայ Արտաքին գործոց և անկէ վերջը ամէն պաշտօնարանաց մէջ ամենէն ազդեցիկ անձն եղած է, միանգամայն ջանալով ազատութիւնքը պահպանողական վարչութեան հետ համաձայնեցնել։ Իւր ազդեցութեան ներքեւ Սաքսոնիա մեծաքայլ ընթացաւ յառաջադիմական քայլերով։ Պարոն Բայստ ջանացած էր որ կազմուի այն Երեքկին զօրութիւնը որուն մասն պիտի ըլլային Աւստրիա, Պրուսիա և Գերմանական Պետութիւնք միահամուռ. Բայստ մեծ դեր ունեցեր էր Դանիմարքայի պատերազմին ժամանակ և ինքն էր որ գլուխ կենալով գերմանական փոքր պետութիւններուն բողոքեր էր Պրուսիոյ և Աւստրիոյ փա-

ռասիրութեան հակառակ և միանալով Հանովէրի, Բա-
վիէրայի և Վիւրտէմբէրկի հետ, Աւազաժողովով հան-
դերձ ուզեր էր պաշտպանել Աւկուստէնբուրկի իշխա-
նը՝ իբր դուքս Հոլշտայնի։ Բայց Աւստրիա և Պրու-
սիա իրենց զօրութեամբը լռել տուեր էին որ և է իրա-
ւունք և բաժներ էին ըստ իրենց կամաց գերմանական
գաւառքը։ Ի զուր բողոքեր էր Բայստ և ջանացեր էր
գործադրել տալ Գերմանական Աւազաժողովոյն սահմա-
նեալքը։ Երկու մեծ պետութիւնքը, տակաւին համա-
ձայն էին մինչեւ 1866, յորում սկսան տարաձայնու-
թիւնք և թշնամութիւնք, որոնք յանգեցան ի Սադովա։
Պ. Բայստ յայնժամ Սաքսոնիոյ պաշտօնարանին նա-
խագահ՝ չէզոքութիւն հրատարակելով, պատրաստ էր
միշտ պահպանելու դաշնակցութեան իրաւունքները։ Սա-
կայն երբ Աւստրիոյ այնօրինակ պարտութեամբ և Պրու-
սիոյ անհամեմատ բարձրանալով, դաշնակցութիւնը կը
ծեար Պրուսիոյ հպատակ. Պարոն Բայստի ասպարէզը
ի սպառ ամփոփուեցաւ և արդէն Բիսմարք անձնական
հակառակութեամբ մը չէր ուզած ընդունիլ զ Բայստ
խաղաղութեան բանակցութեանց մէջ, որով և Բայստ
հրաժարեցաւ ի պաշտօնէութենէ։ Այն օրուընէ ազատ էր
ինքը և քաշուած հասարակաց կեանքէ, երբ Փրանկիս-
կոս Յովսէփ հրաւիրեց զինքը ի Վիեննա իբր պաշտօ-
նեայ Արտաքին գործոց, և իրեն բացաւ ընդարձակ աս-
պարէզ մը։ Յայտնի է որ Բայստի ներկայութիւնը ի
Վիեննա ոչ միայն ախորժելի չէր Բիսմարքի. այլ նոյն
իսկ իրեն իբր հակառակութիւն մը համարուեցաւ։ Երբ-
կու նշանաւոր գերմանացի քաղաքագէտք կը գտնուէին ի-
րարու հանդէպ որոնք թէ միանային և միացընէին երկուց
Պետութեանց շահերը, մեծամեծ օգուտներ կրնային առաջ
բերել։ Բայստի առաջին խորհուրդն և փոյթն եղաւ զԱ-
ստրիա ներքսապէս նախ զօրացնել։ Եւ որպէս զի կաս-
կածներ չծնանին իր հակառակորդին Բիսմարքի և այ-
լոց գաղափարներուն մէջ, անդէն շրջաբերականով մը
ծանոյց որ ինքը զատուած էր իր անցեալէն այն
օրուընէ, որ կայսրը զինքը կանչեց իր խորհրդին և իր

պարտուց դէմ կը դրժէր, թէ ունենար սրտին մէջ անցեալ ոխեր և համակրութիւններ։ Դրեց Աւստրիոյ յոտարս ամեն ներկայացուցիչներուն որ իր քաղաքագիտութիւնը պիտի հիմնուէր խաղաղութեան վրայ, պաշտպանելով միանգամայն Հայրենեաց պատիւը։

Համաձայնութիւն Աւստրիա—Հունգարական։

3. — Պարոն Բայստ զԱւստրիա ներքսապէս զօրացնելու համար պէտք չունէր ընդերկար ուսումնասիրելու կայսրութեան վերջին ժամանակաց մէջ ունեցած տագնապը և նոցա պատճառը որոնք միշտ կը տեւէին։ Հունգարիա 1848ի և 1849ի զօրաւոր ապստամբութիւններուն ընկճուելէն վերջը, ընդդիմութիւն մը ունեցեր էր առ Աւստրիա, և Պրուսիոյ նոր դրութիւնը գերմանական պետութեանց մէջ, զօրաւորագոյն ապստամբութիւն մը կրնար շնչել Մաճառներուն։ Փրանկիսկոս Յովսէփի մեծագոյն հոգերէն մին եղած էր Սադովայէ վերջը Հունգարիոյ խնդիրը. յանձնած էր նշանաւոր քաղաքագէտներուն զայն ուսումնասիրել։ Հարկ էր համաձայնիլ Հունգարիոյ հետ և միայն Հունգարիոյ հետ նախ՝ և զայն գոհացնել առանց Աւստրիոյ վնասու մը։ Նոյեմբեր 19 ի Բէշտ գումարուած Աւագաժողովը մեծ ուրախութեամբ ընդուներ էր թագաւորական հրովարտակին աւետած շնորհները և Բայստի Նոյեմբեր 2ի շրջաբերականը լաւ տպաւորութիւն ունեցեր էր Մաճառստանի մէջ։ Փութով կազմուեցաւ Յանձնաժողով մը Աւագաժողովոյն 67 նուիրակներէ, որոց գլուխ կեցաւ մեծ հայրենասէրն և մեծ օրէնսգէտն Մաճառստանի՝ Փրանկիսկոս Դէաք, որ թէպէտ չէր մասնակցած երբէք յեղափոխութեանց, բայց ամեն ոք վստահ էր որ նա բնաւ տեղիք չէր տար իւր հայրենեացը իրաւանց նկատմամբ։

Վաթսուն և եօթից յանձնաժողովը խնդրեց Փրանկիսկոս Յովսէփէ որ կայսրը ի Հունգարիա ճանչցուի իբր սեպհական առանձին քաղաքական անձնաւորութիւն մը իւր սեպհական վարչութեամբ և պաշտօնարանով, և ճանչցուին եւս իւր պատմական իրաւունք, որով կայսրը թագաւոր օծուի Հունգարիոյ ինչպէս ըրեր էին իւր նա-

խորդք։ Փրանկիսկոս Յովսէփ անմիջապէս ընդունեցաւ այս երկու կէտերը։ 1867ի Փետրուար 18ի Հունգարիոյ Աւագաժողովոյն մէջ անհամար և ահեղ կէցցէներով կարդացուեցաւ Թագաւորական Թուղթը որ յետ յիշելու իւր մաճառ հպատակաց հաւատարմութիւնը ամեն պարագայից մէջ, կը շնորհէր Հունգարիոյ «Պատասխանատու Պաշտօնարան մը» և իր «սիրելի, հաւատարիմ» Յուլիոս Անդրաշի կոմսին կը յանձնէր անմիջապէս պաշտօնարան մը կազմելու։ Քիչ օր վերջը Պարոն Մայլաթ մինչեւ այն ատեն Հունգարիոյ կայսերական ատենադպիր, Անդրաշի կոմսին յանձնեց Հունգարիոյ Թագաւորութեան վերաբերեալ բոլոր թղթերը։ Փետրուար 20ի հրովարտակ մը եւս կը ծանուցանէր որ Հունգարիոյ Պաշտօնարանի Նախագահին առաջարկութեամբ, Կոմսն Ֆէստէտիչ՝ կ'անուանուէր պաշտօնեայ մաճառ Արքունեաց, պարոն Վէնքխայը՝ պաշտօնեայ Ներքին Գործոց, Մէլքիօր Լոնյէյ՝ պաշտօնեայ Ելեւմտից, պարոն Յովսէփ Էրտվէօս, պաշտօնեայ Հանրային կրթութեան, Բաղտասար Հօրվաթ՝ պաշտօնեայ Արդարութեան Կոմսն Էմէրիկ Միքօ՝ պաշտօնեայ Հանրային Վաստակոց և Ճանապարհներու և Յոսեֆան Կորովէ, պաշտօնեայ Վաճառականութեան, Ճարտարութեանց և Հանրային մատակարարութեան։ Դարձեալ առ ժամս Երկրին Զինուորագրութեան պաշտօնեայ կ'անուանէր զնոյն ինքն Անդրաշի՝ Նախագահ պաշտօնարանին։

Յուլիոս Անդրաշի 1848ի յեղափոխութեան գլխաւորներէն մին էր։ Երբ Հասարակապետութիւնը հրատարակուեցաւ, ինքը կ. Պոլիս ղրկուեցաւ իբր ներկայացուցիչ. իսկ երբ Փոշուի ինկաւ, Անդրաշի անցաւ ի Դաղղիա, ուր սէր գտաւ Նապոլէոն Դ։ 1860ին նեղումն շնորհուելով, դարձաւ ի Հունգարիա, ուր ամենէն հարուստ կալուածատէրներէն մին էր։ Դէաք, զինքը խորհրդարանի փոխան–նախագահ անուանել տուեր էր։ Յետոյ Դէաք եղաւ դարձեալ, որ առ համեստութեան չուզելով ընդունիլ պաշտօնարանի Նախագահութիւնը, զԱնդրաշի առաջարկեց առ կայսրը և նա հաւանեցաւ։

Յունիս 8ին Փրանկիսկոս Յովսէփ Մահառաց եռանդագին ըղձից լրումն տալու համար, յետ երդման հաստատ պահելու Սահմանադրութիւնը մեծ շքեղութեամբ թագաւոր Հունգարիոյ օծուեցաւ. այսպէս գրաւական մը տալով հաշտութեան ընդ Աւստրիա և ընդ Հունգարիա։ Յունիս 28ին ալ կայսրը պաշտօնապէս կը ծանուցանէր Աւստրիա—Հունգարական Համաձայնութիւնը[1] որ 1848ի օրէնքներէն շատը կը բարեփոխէր և դաշանց թուղթ մը կ'ըլլար Աւստրիոյ կայսրութեան համար, այսպէս հաստատելով Երկաւորութիւնը։

Երկաւորութիւն։

Պարունակութիւն Համաձայնութեան։

4. — Նոր համաձայնութեան մէջ թագաւոր կայսրը կ'ըսէր, որ « պարագայից » պատճառաւ չէր կրցած 1849էն ի վեր թագաւոր օծուիլ, ինչպէս իւր նախորդները և կը խոստանար երդմամբ պահելու Հունգարիոյ Սահմանադրութիւնը, անկախութիւնը և ամբողջութիւնը։ Թագաւորը, ըստ սահմանադրական բացատրութեան մը, կը թագաւորէր, չէր կառավարէր։ Հունգարիա պիտի ունենար իւր առանձին պաշտօնարանը և խօսարանը որ պիտի քուէարկէր Յլեմուտքը։ Հունգարիա կը պահէր իւր հպատակ ժողովուրդը, բայց սահմանադրապէս վարուելով նոցա հետ, որով և նոքա պիտի ունենային իրենց խորհրդարանքը և երեսփոխանքը։ Եւ Հունգարիա իւր երկու խորհրդարաններէն պիտի անուանէր Յանձնաժողով մը, որոնք միաբան միւս գաւառաց նուիրակութեանց, պիտի քննէին կարեւորքը։ Այս նուիրակութիւնք պիտի գումարուէին փոփոխակի ի Վենա կամ ի Բէշտ։ Նուիրակութեանց որոշմունքները Մահառաստանի ազգային պաշտօնարանը պիտի հրատարակէր։ Հունգարիա պատասխանատու չէր առանց իւր Խորհրդարանին հաւանութեան եղած պարտքի մը։ Հունգարիոյ Խորհրդարանը իրաւունք ունէր վաճառականական դաշինքներ կռելու կայսրութեան ուրիշ երկիրներու հետ, կը միանար աւստրիական մաքսին հետ։ Օրուան եկա-

1. Ausgleich.

մուտքը պիտի գործածուէին հասարակաց պաշտպանութեան։ Դրամական դրութիւնը նոյն էր ընդ Աւստրիոյ, միայն թէ Հունգարիա կրնար տպել իւր լեզուով։ Հունգարիա կը ստանձնէր անցեալ հասարակաց պարտքերէն երեսուն առ հարիւր։

Այս Համաձայնութեան հրատարակուելէն վերջը, Փրանկիսկոս Յովսէփ ընդհանուր ներում հռչակեց քաղաքական յանցաւորաց, որով ազատուեցան 1848ի Յեղափոխութեան զրեթէ ամէն գլխաւորք և դարձան ի Հունգարիա, բաց ի Քոշութէ, որ չուզեց ընդունիլ այս ներումը։ Փրանկիսկոս Դէպք հեղինակ Համաձայնութեան, Եւրոպիոյ ամէն կողմէն բազմաթիւ խնդակցութիւններ և գովեստներ ընդունեցաւ։ Բայց նա մերժեց ամէն պատիւ, ուզեց մնալ պարզ քաղաքացի մը, և չընդունեցաւ իսկ իրեն առաջարկեալ պաշտօնարան մը[1]։

Այս համաձայնութենէն վերջը կայսրութիւնը երկու գլխաւոր մասի բաժնուեցաւ ըստ իւր գաւառաց Յայսկոյս և Յայնկոյս Լէյթայի[2]։ Կայսրութիւնը ունեցաւ այսպէս երկու տարբեր պաշտօնարանք։ Պաշտօնարան Հունգարիոյ, որ պիտի նստէր ի Բէշտ, ունենալով նախագահ մը Պաշտօնարանին, պաշտօնարան Արքունի, պաշտօնարան Հասարակաց կրթութեան և Կրօնից, պաշտօնարան Ճանապարհաց և Հասարակաց վաստակոց, Ելեւմտից, Արդարութեան, Երկրագործութեան, Ներքին գործոց և Երկրին պաշտպանութեան։ Ուրիշ պաշտօնարան մը Զիզլայթեան, որ պիտի ըլլար ի Վիեննա և որ ունէր նոյն պաշտօնարանքը, բաց յարքունի պաշտօնարանէ։

---

1. Սակայն յետոյ ժամանակաւ քննադատուած է որ Հունգարիա Երկաւորութեան մէջ ինքզինքը միայն մտածեց և ընաւ չունեցաւ այն համակրութիւնը զոր պէտք էր ցուցնել իւր հպատակ ազգաց և զանոնք զրեթէ ջանաց ջարիջարել։ Միայն Խոուատք իրենց նախնական իրաւամբ կրցան ստանալ ինքնավարութիւն մը և առանձին պաշտօնարան մը (1873)։

2. Cisleithonia, Transleithonia։ Լէյթա փոքր գետակ մ'է Դանուբի որ իւր անունը տուաւ այս բաժանման։ Զիսլայթոնիա էր Աւստրիա, Տրանսլայթոնիա Հունգարիա։

Ապա Հասարակաց պաշտօնարանը, կազմեալ պատերազմի, Ելեւմտից և Արտաքին գործոց պաշտօնարաններէ։

ՑԱւստրիա ազատական օրէնքներ։

5. — Յամին 1867 Դեկտեմբեր 30ի կազմուեցաւ ի Վիեննա առաջին Զիզլայթեան պաշտօնարանը, որուն նախագահն էր իշխանն Կարլ Աւէրսբէրկի, յորում էին ութ գերմանացիք և մէկ լեհ մը Պոտոսքի։ Պաշտօնարանը ներշնչեալ ի Բայստէ որ կը Ծնար Ատենադրպիր կայսրութեան, նորա ծրագրած ազատական գաղափարքը հաստատուն քայլով սահմանեց գործադրել։ Մինչեւ այն ատեն Հրեայք չէին կարող քաղաքական հաւասարութիւն վայելել, նոր օրէնք մը կուտար իրենց ամենայն քաղաքական և քաղաքացիական հաւասարութիւն։ Հրէից եղած այս շնորհը որչափ որ տժգոհութիւններ յարոյց, բայց ոչ այնքան ինչպէս Դաւանութեանց օրէնքը, որով եկեղեցական իշխանութեան ձեռքէն առնլով Դպրոցը և Ամուսնութիւնը, զանոնք կ'աշխարհականացնէր. կը հաստատէր քաղաքային ամուսնութիւնը և ամենայն ամուսնական խնդիրք և դատք, կ'ենթարկէր աշխարհական իշխանութեան. այսպէս կ'աղարտէր այն Համաձայնութիւնը որ Փրանկիսկոս Յովսէփ հաստատեր էր Ս. Գահուն հետ 1855ի։ Իշխանն Կարլ Աւէրսբէրկ, նախագահ Պաշտօնարանին, կասկածելով օրէնքին մերժումը, գնաց առ կայսրը և ծանոյց որ թէ օրէնքը չքուէարկուէր, Պաշտօնարանը ամբողջովին պիտի հրաժարէր։ Կայսրը անտարբեր կերպ ունեցաւ և արշիդուքսերը չմասնակցեցան քուէարկութեան։ Ազատամիտ տպագրութիւնը յեղափոխութիւն կը սպառնար թէ չ'ընդունուէին դպրոցական և ամուսնական օրէնքները։ Դաւանութեանց օրէնքին վիճաբանութիւնը սկսաւ Մարտ 19ին (1868) և զայն բացաւ կրոնից պաշտօնեայն Հասնէր, վարչութեան կողմանէ ծանուցանելով որ Աւստրիոյ մէջ Եկեղեցին պէտք է ենթարկուած ըլլայ աշխարհական Պետութեան։ Կոմն Ռիխբէրն և Կոմն Բլոմ եռանդեամբ պաշտպանեցին 1855ի Համաձայնութիւնը. ցոյցուցին որ ի՛նչ վնասակար հետեւանքներ

պիտի ունենար Դպրոցը բաժնելով յԵկեղեցւոյ և Եկեղեցին ի Պետութենէ։ Կարդինալն Ռաւիսէր, արքեպիսկոպոս Վիեննայի, ծնունդ, ըսաւ, զքաղաքական ամուսնութիւնը Դաղղիոյ Յեղափոխութեան և բացատրեց արդիւնքները ընկերութեան վրայ. գեղեցիկ պերճախօսութեամբ հակառակ խօսեցաւ կարդինալն Շվարցէմբէրկ՝ արքեպիսկոպոս Պրակայի, սակայն Պաշտօնարանը տեղիը չտուաւ և Աւէրսբէրկ իշխանին բերնով ծանոյց որ ինքը Եկեղեցւոյ հակառակութեան համար չէր առաջարկեր այդ օրէնքը և վարչութիւնը այժմէն կը բողոքէր «այն ծանր հետեւանքներուն» համար, որոնք յառաջ պիտի գային օրէնքին մերժուելով։

Այս վիճաբանութեանց միջոց բիւրաւոր ամբոխ մը դուրսը կը սպասէր անհնանդարտ և երբ քուէարկութիւնը եղաւ և իմացուեցաւ օրէնքին ընդունուիլը, մոլեգին կեցցէներ լսուեցան դրսէն և պաշտօնեաները և պարոն Բայստ մեծ յաղթանակաւ տարուեցաւ իրենց «կեցցէ՞ Բայստ» աղաղակներու մէջ։ Ատենադպիրը հասնելով իր պալատը, շնորհակալ եղաւ ամբոխին։ Այն գիշերը ի Վիեննա, ուր անթիւ է հրեայ և բողոքական տարրը, շատ կոզմեր լուսաւորութիւնք և ուրախութիւնք կատարուեցան։

Օրէնքին յօդուածներուն վիճաբանութեանց ժամանակ կաթոլիկ նշանաւոր երիսփոխանը, Լեոն Թուն, Միթրովսքի, Ռէխբէրկ, ուսուցիչն Առնտս, իշխանն Վինդիշկրաց և Սանկուցքօ չմասնակցեցան գումարմանց։ Վիճաբանութիւնք և քուէարկութիւնք լմնցան Մայիս 14ին և կայսրը հաստատեց օրէնքը Մայիս 21ին։ Մարտ 30ին ամբողջ կաթոլիկ Եպիսկոպոսութիւնը բողոքեց յարգալիրն թղթով մը առ Աւէրսբէրկ նախագահ պաշտօնարանին։ Բողոքող եպիսկոպոսաց կարգին մէջ էր նաեւ Գրիգոր Միքայէլ Սիմոնովիչ հայ արքեպիսկոպոս Լէմբէրկի։ Այս հակակաթոլիկ օրէնքները բոլորովին վշտացուցին զՀռովմ և ցրտացուցին ի Բայստէ եկեղեցական խումբը և կղերական կուսակցութիւնք։ Ատենադպիրը պատասխանեց շրջաբերականով մը և

դատաստանի մատնեց իբր յանցաւորք ընդդէմ պետութեան օրինաց այն ամեն եպիսկոպոսունք, որոնք հակառակ գրեր էին այս օրէնքին։ Այն օրուընէ որ Փրանկիսկոս Յովսէփ բռնադատուեցաւ ընդունիլ սահմանադրական դրութիւնը, թագաւորելու և ոչ կառավարելու, յԱւստրիա ֆրամասոնութիւնը ահաւոր պատերազմ յարոյց ընդդէմ կաթոլիկ եկեղեցւոյ օգնեալ և պաշտօնէից կողմանէ, որոց մէջ կը գտնուէին ամեն ազատ կարծիքներէ։ Կաթոլիկք առանձին ընկերութիւններ ձեւացուցին, որոնք այս կամ այն քաղաքը կը հաւաքուէին իրենք զիրենք պաշտպանելու և ոգիները արծարծ պահելու։ Նշանաւոր եղած է մանաւանդ 1868ի Կմունդէնի ժողովը ուր գտանուեցան 2000էն աւելի նշանաւոր կաթոլիկ անձնաւորութիւններ, խորհելու ֆրամասոնութեան բռնակալութեան դէմ, որ խրախուսեալ՝ մանաւանդ Կիսքրա և Հէրբստ պաշտօնեաներէ, բուռն հալածանք մը սկսեր էր կրօնաւորաց դէմ[1]։

Դրամական վիճակ։

Ավստրիա Սադովայէ վերջ անհրաժեշտ պէտք ունէր դրամական վիճակի բարւոքման և նոր աղբիւրներու։ Յելեմտից պաշտօնեայն քուէարկել տուաւ օրէնք մը, որով միացումն կ'ըլլար Պետութեան պարտուց և 20 առ 100 կ'առաւելուր բաժնետոմսի տուրքը, նոյն իսկ օտարաց համար։ Այս օրէնքը մեծապէս վրդովեց զրովանդակ Եւրոպա, ամենը կը համարէին որ սնանկութիւն մը պիտի յաջորդէր և աւստրիական վարկը մեծապէս ինկաւ։ Բայց Բայստի շրջաբերական մը առ կոմսն Ապպոնի աւստրիական դեսպան ի Լոնտրա, ուղղեց միտքերը և բարձրացաւ վարկը։

Դրամական վիճակէն վերջը կարեւոր էր Ավստրիոյ զինուորական ոյժը բարձրացնել ներկայ պարագայից

---

1. Ի Կմունտէն պերճախօսութեամբը փայլեցան մանաւանդ Լինցի եպիսկոպոսը, վերապայծառ Թուլիկէր և ուսուցիչն Մանասէն հմուտ իրաւագէտ։ Պաշտօնարանը իրեն դէմ հրատարակութեանց արգելք դնելու համար, հաստատեց Եղրդուեալ դատաւորք դատարանաց մէջ, նոյն իսկ տպագրութեան յանցանաց համար։

համեմատ։ Արդէն Սադովայէ վերջը Փրանկիսկոս Յովսէփ նոր կարգադրութիւններ ըրած էր. դարձեալ 1868ի Նոյեմբերի, յետ լուրջ վիճաբանութեանց յորում մեծ ընդդիմութիւն կրեց պաշտօնարանի առաջարկած օրէնքը, վերջապէս քուէարկուեցաւ որ Աւստրիա ունենայ երկու բանակ, գործոն բանակ և երկրորդը լանդվէր կամ խաղաղութեան բանակ. առաջինը պիտի բաղկանար 800,000 զինուորէ և երկրորդը 255,000 անձանցմէ. ամեն քաղաքացի, բաց ի զինուորական սահմանագլխոց բնակիչներէն ուր կը շարունակուէր հին օրէնքը, պարտական էր կատարել երեք տարի գործունեայ զինուորութիւն, ապա հինգ տարի մնալ պահեստի զինուոր և երկու տարի լանդվէր։

Զինուորական օրէնք։

6. — Պաշտօնարանը զինուորական կազմակերպութեան այսքան խնամք տարած ժամանակ, պարոն Բայսդ հետամուտ էր նաեւ հաստատուն բարեկամութիւնք շահիլ իր հայրենեաց համար և փարատել շատ մը կանխակալ կասկածներ և անցելոյն մոռացութիւն ցրցունել։ Պրակայի դաշինքը նկատմամբ գերմանական հարաւային պետութեանց, շատ խնդրոց և հակառակութեանց նիւթ եղեր էր Վիեննայի և Բէռլինի պաշտօնարանաց համար։ Պրուսիոյ վարչութիւնը ստէպ կ'ամբաստանէր զԱւստրիա որ քիչ քիչ կ'ուզէր առջի վիճակը ստանալ Հարաւային Պետութեանց նկատմամբ. փոխադարձաբար Վիեննա կը տրտնջար ընդդէմ Պրուսիոյ որ կը ջանար Հարաւային Պետութիւնքը միացնել Հիւսիսային Դաշնակցութեան հետ։ 1869ի Օգոստոսի մէջ պարոն Բայսդ անկեղծ դիւանագիտութեամբ մը ուզեց խնդիրը պայծառաբանել և ի Բէռլին աւստրիական դեսպանին ձեռքով ըսել տուաւ որ Աւստրիա 1866է վերջը ամենայնիւ ջանացեր էր խաղաղութեամբ և բարեկամութեամբ ապրիլ, բնաւ չմիջամտելով գերմանական խնդրոց մէջ։ Ի սկզբան այս բացատրութիւնը արդիւնք մը չունեցաւ, բայց ժամանակ անցնելով, յանկարծ Պրուսիոյ դեսպանը ի Վիեննա ծանոյց որ թագաժառանգ իշխանը Եգիպտոս երթալուն Սուէզի ջրանցքին բացման, կը փա-

Աւստրիոյ և Պրուսիոյ բարեկամական առնչութիւնք։

փագէր Վիեննայէ ացնիլ։ Կայսրը կը գտնուէր ի Կէօդէօ-
լէօ Բէշտի մօտ, անմիջապէս հեռագրեց որ մեծ սիրով
պիտի ընդունէր իր պալատան մէջ Նորին բարձրութիւն
Թագաժառանգ իշխանը։ Փրեդերիկոս իշխանը հասաւ ի
Վիեննա Հոկտեմբեր 6ին և կայսրանը ընդ առաջ գնաց
Փրանկիսկոս Յովսէփ կայսրը՝ շրջապատուած զինուորա-
կան և քաղաքական բարձր իշխանութիւններէ և յուզեալ
և սիրալիր ընդունելութենէն վերջը տարաւ իր պալատը։
Իշխանը մնաց ի Վիեննա երեք օր և անկէ անցաւ ի Վենետիկ։
Բաժնուելնին ալ անկեղծ մտերմութեամբ մը եղաւ։ Այն
օրուընէ թէ Պրուսիոյ և թէ Աւստրիոյ դաշնակցութեան
սերմը ցանուած էր սրտերու մէջ[1]։

Պրուսիոյ թագաժառանգը ի Վիեննա։

1869

Փրեդերիկոս իշխանին մեկնելէն վերջը Փրանկիսկոս Յովսէփ ալ որոշեց գնալ ի Մուէզ, լսելով մանաւանդ Եւժէնի կայսրուհւոյն մեկնիլը։ Ամբողջ Աւստրիա փա-
փագեցաւ որ այս ուղեւորութիւնը կատարուի կայսերա-
կան ամենայն շքեղութեամբ, ուղղոյ ծախք քուէարկուե-
ցաւ 300,000 ֆիորին, որուն կէսը սիրով յանձն առաւ
վճարել Հունգարիա, որովհետեւ Համազգային հանդի-
սին մէջ պիտի ներկայանար նաեւ իրը Թագաւոր Հուն-
գարիոյ[2]։

Հունգարիոյ հպատակ ժողովրդոց ուժգնութիւնը։

7. — Եւ սակայն Աւստրիոյ և Հունգարիոյ մէջ ե-
ղած այս միութիւնը որչափ որ կը զոհացնէր գերմա-
նացի ցեղերը, բայց մեծապէս զայրացուցեր էր սլաւնե-
րը որոնք այսօրինակ կեղրոնացման մէջ, իրենց ջախ-
ջախումը կը նկատէին, և Հունգարիոյ իշխանութեան ներ-
քեւ եղող ազգեր պէտք էին առ ժամս հրաժարիլ ինք-
նիշխանութեան ո՛ և է գաղափարէ։ Բոհեմիոյ և Մո-

---

1. Մօտ օրերս (1906 Յուլիս) լուրջ Յիշատակարաններ լայտնեցին որ՝ 1869ի բանակցութիւնք եղած են Փրանկիսկոս Յովսէփի, Նապոլէոն Գ.ի և Վիկտոր Իմանուէլի մէջ Երեքկին Դաշնակցութեան մը համար։ Եւ առ այս, կը հայի Վիկտոր Իմանուէլի ի Բէռլին իր սովորական պարզութեամբ առ Գուլիէլմոս Ա. շատ տարիներ վերջը բսած այս խօսքը, թէ. «Եղաւ ժամանակ, որ քիչ մնաց Գեզի դէմ պատերազմ պիտի ընէի»։ Ինմարքի արքունի քաղաքականութիւնը սակայն զատեց զՓրանկիսկոս Յովսէփ Նապոլէոնէ և Իտալիոյ Թագաւորէն և այնպէս ցրուեց խորհուրդը։

2. Ուղեւորութիւնը տե՛ս դարձեալ Թրքաց մասին մէջ։

բավիոյ չէքերը և Գարնիոլի Սլովէնք իրենց դժգոհութիւնը և բողոքը յայտնեցին նուիրակ չղրկելով, ի վենա գումարուած նոր խօսարանին։ Բոհեմիոյ Աւագաժողովին մէջ նշանաւոր երեսփոխանն Ռիկէր կորովի խօսքերով բացատրեց երկաւոր քաղաքականութեան և գերմանութեան վնասները։ Բովանդակ սլաւ ցեղերը ցնցուեցան և գրգռուեցան։ Աւստրիոյ–Հունգարիոյ նոր դրութիւնը մեծ հարուած մ'էր սլաւականութեան, և ի Մոսկուա կազմուած սլաւական ժողովրդոց Նախագահութիւնը, ցուցահանդէս մը պարտուակ առնելով, հաւաքեց ի Մոսկուա սլաւ ցեղերու նուիրակներ, որոնք բուռն ճառախօսութիւններով յայտնեցին իրենց բողոքները և սլաւ զգացումները։ Ռուս լրագիրք մասնաւոր հատուածներով կը ջանային բարձրացնել սլաւ ցեղերուն « արդարացի բողոքները » և կը քարոզէին սլաւական եղբայրութիւն մը ի Բոհեմիա, որոյ ժողովուրդը միշտ առաւել միտում մը ունեցած է առ Ռուսս քան առ Գերմանս։ Բոհեմիա յայտնապէս կը պահանջէր որ Սուրբ Վինչէսլաւի թագաւորութիւնը հաւասար իրաւունքներ ունենայ Հունգարիոյ Ս. Ստեփանոսի թագին, ունենայ համալսարան մը չէք լեզուով, փոխանակ գերման լեզուին. նոյն պահանջը կ'ընէին նաեւ սլովէնք, կը բողոքէին ընդդէմ գերմանացի և իտալացի լեզուներու, որոնք նոյն իսկ նախնական դպրոցաց մէջ ընդունուած էին։ Ի թէպէտ 1867ի Դեկտեմբեր 21ի Հիմնական Օրէնսդրութեան յօդուածներէն մին կը պատուիրէր որ իւրաքանչիւր ազգի ապահովուի իւր լեզուին պահպանութիւնը և հաւասարութիւն ըլլայ ի կայսրութեան ամեն գործնական լեզուներու, այսու հանդերձ այս յօդուածին գործադրութիւնը շատ դժուար էր բազմալեզու ժողովրդոց մէջ, և բնական է ամենայն անհամաձայնութիւն կը վերջանար կամ կը վճռուէր ի նպաստ գերմանականին։

Սլաւք ընդդէմ Լրկաւորութեան։

8. — Չէքերը ոտնակոխ համարուած իրաւունքնին, սկսան ակումբներով պահանջել. մեծամեծ ժողովականերու մէջ ամէն ճառերու նիւթ իրենց բողոքներն էին։

Բոհեմիոյն Ցայտարարութիւնը։

1868 Երբ Փրանկիսկոս Յովսէփ կայսրը Բրակա եկաւ, ջանաց հանդարտեցնել ազգային կուսակցութեան գլխաւորներն, որոնք էին Պալացքի, Ռիկէր և Կլամ Մարդինից. բայց արդիւնք մը չստացաւ։ Միւս կողմանէ կայսրութեան պաշտօնարանը սկսաւ խստանալ լրագրապետաց դէմ, որոնք գրգռողներն էին և զանոնք բանտարկել կուտար։ Սակայն չէր դատարանները անպարտ կ'արձակէին իրենց քաղաքացիքը։ Պաշտօնարանը սահմանեց որ յանցաւորները գերմանախօս քաղաքներու մէջ դատուին, որոնց դատաւորք սակայն շատ անգամ չէր լեզուն չգիտնալով, չէին կարող յանցաւորաց խօսածներուն իմաստն ըմբռնել։ Երբ գաւառական ատ-
1868 Օգոստ. 22. գաժողովք սկսան գումարուիլ, չէքերը մերժեցին նուիրակ ղրկելու և հրատարակեցին «Յայտարարութիւն» մը, որ իբրեւ հիմն մնացած է իրենց պահանջներուն։

Յայտարարութիւնը ութը յօդուածներէ բաղկացած էր. նախ կը սահմանէր թագաւորին և ժողովրդեան մէջ փոխադարձ յարաբերութիւնք, պարտք և իրաւունք։

Կ'ըսէր որ Աւստրիա միատարր Պետութիւն մը չէ և Բոհեմիոյ թագաւորութիւնը նորա հետ կապուած է միայն յանձին կայսեր. ընաւ նոր կարգադրութիւն մը չէ կարելի առանց Բոհեմիոյ և կայսեր հաւասար գիտակցութեանը։ Բոհեմիացի խորհրդարանէ մը դուրս որ և է իշխանութիւն չկրնար Բոհեմիոյ վրայ տուրք դնել։ Հունգարիա չկրնար խառնուիլ Բոհեմիոյ գործոց, և նոյն իսկ Զիսլայթեան ժողովքը, Բոհեմիոյ հետ վերաբերութիւն մը չունի։ Որ և է առկախ սահմանադրական խնդիրք, պիտի կարգադրուէին ի կայսերէ, միարանութեամբ Բոհեմիոյ երեսփոխանական իշխանութեան, որ պիտի ընտրուէր ըստ արդար ընտրութեան օրինաց։

Փիչ վերջը այսօրինակ Յայտարարութիւն մը հրատարակեց նաեւ Մորավիոյ Աւագաժողովը. ծանուցանելով որ «Երկաւորութիւնը չէ հիմնեալ ոչ պատմական ոչ քաղաքական իրաւանց վրայ», և թէ Մորավիոյ քաղաքական իրաւունքները չեն կրնար յանձն անուլ մնալու օտար երկիրներու երեսփոխանաց ձեռքը։ Որով

թէ չէք և թէ Մորավիոյ երեսփոխանք մերժեցին Բրիւ-
նի աւագժողովոյն մասնակցիլ, զոր չէին նկատեր «օ-
րինաւոր կերպով ընտրուած և բաղկացած»։ Նոյն ժա-
մանակները պատահելով Յովհաննէս Հուսի՝ Ի հարիւր- 1868 Յուլիս։
ամեակը, այն առթով ազգային մեծամեծ ցոյցեր եղան,
և ասոնք այնքան սաստկացան ընդդէմ Աւստրիոյ, որ
վարչութիւնն զՊրակա պաշարման վիճակի մէջ դրաւ.
որ հազիւ վերցուեցաւ 1869ի Ապրիլի։ Վիեննայի պաշ-
տօնարանը ջանաց բանակցութեան մտնել և չէք ու մո-
րաւ երեսփոխանները հրաւիրել ի խօսարան. սակայն
նոքա նորէն մերժեցին՝ ծանուցանելով որ չեն կարող
Երկաւորութեան Սահմանադրութիւնը ընդունիլ և միայն
իրենց Յայտարարութեան հիման վրայ կրնային համա-
ձայնութեան մը գալ։

9. — Ընդհակառակն Գալիցիայիք, Լեհք և Ռու- Լեհք. Գալի-
թէնք որոնք կայսրութեան հետ հնաւանդ կապեր և դա- ցիացիք.—Ռու-
շինքներ չունէին, դիւրաւ հպատակեցան կայսրութեան թէնք։
նոր դրութեանը և չէքերուն ընդդիմութիւն չբրին։
Բայսա զիրենք շահելու համար, իրենց համարիւն
Կոմսն Գոլուխովսքի կուսակալ դրկեր էր Գալիցիոյ։ Գո-
լուխովսքիի նախագահութեամբ Լէմբէրկի Աւագժողո-
վը սահմանեց Վիեննայի խօսարանին դրկուելիք նուիրակ-
ները։ Լեհացւոց մեծամասնութիւնը ինքզինքը օտար ժո-
ղովուրդ մը համարելով կայսրութեան մէջ, բնաւ փոյթ
չունէր գերման կամ սլաւ ցեղին առաջնութեան կամ
մրցման վրայ։ Իրեն համար կը համարէր որ լաւ էր
առ ժամս անտարբերաբար ընդունիլ ամենայն սահմանա-
դրութիւն, մինչեւ գայ յարմար ժամանակ մը կազմելու
ինքնիշխան Լեհաստան մը, որուն կեդրոն պիտի ըլլար
Գալիցիա։ Իսկ փոքրամասն ազատական կուսակցութիւն
մը 1868ի Սեպտեմբերի մէջ հրատարակեց իւր «Որոշո-
ղութիւնքը», որով կը պահանջէր որ՝ Վիեննայի երեսփո-
խանաց ընտրութիւնք ուղղակի չըլլան, այլ Աւագժողով-
ներէն. և թէ ամէն վաճառականական և հասարակաց կըր-
թութեան ու արդարութեան խնդիրք վիճարանուին Ա-
ւագժողովոյն մէջ. Գալիցիա պէտք էր ունենալ վճռա-

ջինջ ատեան մը և առանձին վարչութիւն մը պատասխանատու Աւագաժողովոյն դիմաց և պատասխանատու պաշտօնարան մը։ Այս Որոշողութիւնք 1869ի ներկայացուցեցան Աւստրիոյ խօսարանին և մերժուեցան։ Ուրեմն անգամ հակառակորդք երեւցան Լեհաց պահանջներուն, վախնալով որ Լեհերուն չափազանց ազդեցութենէն չընկճուին, իրենք թուով նուազագոյն ըլլալով։

Խոուատք. Սերբ։

10. — Իսկ կայսրութեան արեւմտեան կողմի Սլովէնք շատ մը հաւաքումներու մէջ սկսան պահանջել Սլովենիոյ կամ Լիւրիկէի թագաւորութեան հաստատութիւնը որ յինքեան պիտի բովանդակէր նաեւ զՏրեստ, Իստրիա, Գորիցիա ,Դրաղիսքա, Կառնիոլա, Հարաւային Կարինթիա և Հարաւային Ստիրիա։ Դալմացիոյ մէջ եւս յուզմունքը տարածուեցաւ ընդ Իտալացիս, որոնք վարչութեան կողմն էին և ընդ Սլաւս և ընդ Սերբ–Խոուատս։ 1869ի վերջերը ի Բոկկա տի Կադդարո ապստամբութիւն մը ծագեցաւ։ Սերբերը որոնք միշտ զէնք կրած էին իրենց լեռները պաշտպանելու, յանձն չառին ընդունելու Լանտվէրի նոր օրէնքը և չուզեցին կայսերական

Ապստամբութիւն ի Բոկկա տի Կադդարո։

գունդերուն մէջ մտնել։ Անմիջապէս ապստամբութեան տեղերը պաշարման վիճակի մէջ դրուեցան և աւստրիացի գունդերը բռնեցին Դալմացիոյ յուզեալ մասերը։ Եղան աննշան կռիւներ առանց արդեանց, հուսկ ուրեմն Բոկկա տի Կադդարոյի ժողովուրդք հնազանդեցան իրենց հայրենակից Ռոտիչ զօրավարին համոզիչ խօսքերէն և կայսրն ալ անմիջապէս ընդհանուր ներումն շնորհեց։

Դաշինք Խոուատներու։

11. — Եթէ Աւստրիոյ ձեռքին տակ եղող գաւառք դժգոհ էին Երկաւորութեան քաղաքականութենէն, որչափ եւս առաւել Հունգարիոյ ներքեւ եղող գաւառք։ Խոուատք, ժողովուրդ քաջ և յանդուգն, ծանուցին որ չէին կարող ընդունիլ նոր սահմանադրութիւն և երեսփոխան չղրկեցին ի Բէշտ, բողոքելով նաեւ Ֆիումէի նաւահանգստին Հունգարիոյ հետ միացուելուն։ Մաճառք երկու անգամ բռնի ցրուեցին Ակրամի Աւագաժողովը. և աքսորել տուին հռչականուն Սդրոշմայր հայ-

բենասէր եպիսկոպոսը որ ոգի էր Ազգային շարժման։ Այն ատեն Հունգարիոյ վարչութիւնը յաջողեցաւ արթուն հնարիմացութեամբ և խոստումներով իրեն կողմակից մեծամասնութիւն մը ընտրել տալ Ակրամի աւագժողովոյն մէջ։ Այս մեծամասնութիւնը բանակցութեան մտաւ Բէշտի վարչութեան հետ և առժամանակեայ դաշինք մը հաստատուեցաւ, որով Խոուատք 31 երեսփոխան պիտի ղրկէին Բէշտի խօսարանին։ Ակրամ բան (կառավարիչ) մը պիտի նստէր, որուն ձեռքը պիտի ըլլար գործադիր իշխանութիւնը, առանց սակայն ունենալու զինուորական և քաղաքացիական իրաւունք։ Դարձեալ Խոուատք իրենց երկրին պիտոյից համար տուրքերէն պիտի պահէին 2,200,000 ֆիորին։

Խոուատք կ'ունենային այսպէս ինքնավարութիւն մը, ուսկից սակայն գոհ չէին կրնար ըլլալ, քանի որ բանը պիտի սահմանուէր Բէշտի պաշտօնարանէն. և Հունգարիոյ վարչութիւնը յետին խստութիւն կը գործածէր ընդդէմ հայրենասէրներուն։ Ակրամ այնչափ մեծ էր գրաքննութեան խստութիւնը, որ ազգային լրագիրները ստիպուած էին հրատարակուիլ ի Վիեննա։ Խոուատք հազիւ 1873ին յետ երկար բողոքներու և բանակցութեանց կրցան լաւագոյն վիճակ մը ունենալ և ի Բէշտ պատասխանատու պաշտօնեայ մը։

Իսկ զՏրանսիլվանիա Բէշտի Աւագժողովը միացուց Հունգարիոյ, այսպէս արմատէն խլելով այն գաւառաց ռումէն ժողովրդոց ինքնավարական յոյսերը։

Տխուր է տեսնել որ ազգ մը, ինչպէս Հունգարիա, յետ երկար տարիներ ինքնավարութեան և ինքնիշխանութեան համար կռուելու, զանոնք գրեթէ ամբողջովին ձեռք բերելէ վերջը ինքը ջանայ բռնութիւն բանեցնել այն ժողովրդոց նկատմամբ, որոնք իրեն նման կը փափագին՝ թէ ոչ ամբողջովին, գոնեայ մասամբ իւիք ինքնավար հայրենիք մը ունենալ։ Եւ սակայն այս է ազգաց անկեղծ պատմութիւնը։

ԳԼՈՒԽ Գ.

ԱՆԳԼԻԱ. ԴԻԶՐԱԷԼԻ ԵՒ ԳԼԱԴՍՏՈՆ

1. Պաշտօնարան Ջոն Ռըսսըլ. Գլադստոն պաշտօնեայ ելեւմտից. — Լորդ Ռոբերտ Սիսիլ (Սոլզբըրի) երեսփոխանը. — 2. Ընտրական նոր օրինաց առաջարկութիւն. — Անկումն պաշտօնարանին. — Երդման օրէնք. — 3. Ֆէնէանք յիւլանդա. յուզմունք և ցրումն. — 4. Պաշտօնարան Դէրբի — Դիզրաէլի պաշտօնեայ ելեւմտից — Նոր ընտրական օրէնք — Դիզրաէլիի յաղթութիւնը. — 5. Դիզրաէլի պաշտօնարան. — 6. Աբիսինիա — Թէոդոր թագաւորը և անգղիացի կալանաւորք. — 7. Անգղիոյ կ. Պօլսոյ Դեսպանը Հայոց Պատրիարքին մէջնորդութեան կը դիմէ. — Հայ նուիրակութիւն յԱբիսինիա. — 8. Պատերազմ Թէոդորի դէմ, Լորդ Նարիէրի յաղթութիւնը — Մահ Թէոդորի. — 9. Գլադստոն կ'առաջարկէ յիւլանդա պաշտօնական եկեղեցւոյն ջնջումը. — 10. Դաւինական քուէարկութիւնք հակառակ պաշտօնարանին — Նոր ընտրութիւնք. — Անկումն Դիզրաէլի պաշտօնարանին. — 11. Գլադստոն պաշտօնարան. վերջնական քուէարկութիւն յիւլանդա պաշտօնական եկեղեցւոյ ջնջուելուն. — Մահ Լորդ Դէրբիի.

Պաշտօնարան Ջոն Ռըսսըլ 1865.

1. — Լորդ Պալմէրստընի մահուընէ վերջը թագուհին նոր պաշտօնարանը կազմելու համար հրաւիրեց զՋոն Ռըսսըլ, արդէն 73 ամեայ, որ այս երրորդ անգամ կ'անցնէր պաշտօնարանի գլուխ, յետ շատ անգամ պաշտօնավարութեան ազատական պաշտօնարանաց մէջ և ամենէն վերջ Լորդ Պալմէրստընի հետ։ Պաշտօնարանին մէջ մտան նաեւ Պ. Ֆորստըր, Պ. Գոշընն և Լորդ Կլարէնդընն՝ պաշտօնեայ Արտաքին Գոր-

ծոց։ Իսկ Ելեւմտից պաշտօնեայ եղաւ Պ. Ուիլիէմս Գլադստոն՝ որ լորդ Պալմէրստրնի մահուրնէ վերջը իրապէս ազատական կուսակցութեան գլուխն էր։ Այսպէս Հասարակութեանց Խորհրդարանին մէջ դիմացէ դիմաց կը գտնուէին երկու հսկայ ճարտասան քաղաքագէտք. Պ. Գլադստոն վարիչ ազատական ազնուապետութեան և Պ. Բենիամին Դիզրաէլի վարիչ հին պահպանողական ազնուապետութեան։ Խորհրդարանը ունէր իր մէջը ուրիշ բազմաթիւ նշանաւոր անձինք, յորս յիշենք մանաւանդ Արկայլի դուքսը, հուժկու հռետոր և բարձր միտք մը. Պ. Ստանսֆէլտ՝ Հէլիֆաքսի երեսփոխան՝ արմատական խմբէն, որ 1861ի ծովային զօրութեան մատակարարութեանց նկատմամբ նշանաւոր դիտողութիւններ ըրած էր և 1863ի լորդ Պալմէրստրն զինքը ծովակալութեան պաշտօնարանի ժողովոյն մէջ ընդուներ էր։ Բայց Մածինիի հետ ունեցած սերտ բարեկամութեան պատճառաւ, մասն ունենալ կարծուեցաւ Նապոլէոնի դէմ եղած դաւոյն։ Հրաժարեցաւ իր պաշտօնէն, սակայն յետոյ կրկին դարձաւ խորհրդարանը։ Ազատական խումբին փայլերէն մին էր նաեւ Բրայդ՝ հզօր պերճախօս։

Գլադստոն պաշտօնեայ ելեմտից։

Իսկ պահպանողական կուսակցութեան մէջ Պ. Դիզրաէլիէ վերջը ամենէն նշանաւոր և որ արդէն մեծ ապագայ մը կը խոստանար, լորդ Ռոբերտ Սիսիլ, յետոյ կոչուած լորդ Կրանբորն և ամենէն վերջ լորդ Սոլզբրի։ Լորդ Ռոբերտ Սիսիլ պահպանողական խմբին ամենէն ճարտար շառաւիղը կրնայ համարուիլ, պայծառ գաղափարներով, պատրաստ վիճաբան և մասնաւոր հանճար մը խայթող և երգիծաբան խօսակցութեամբ[1]։

Լորդ Ռոբերտ Սիսիլ (Սոլզբրի)։

---

1. Մրկ Կարթէյ A History of our own times Գլ. Խ.. «1862ի դումարմանց գիշեր մը խօսելով Գլադստոնի դրամական քաղաքագիտութեան վրայ, զԳլադստոն նմանցուց «Փցուն գործակատարի» մը։ Ամեն կողմանէ մրմունջք լսուեցան այս նուաստ բացատրութեան համար։ Երկրորդ գիշեր երբ վիճաբանութիւնը սկսաւ, լորդ Ռոբերտ ոտք ելաւ և ըսաւ որ առջի երեկոյ այնպիսի բառ մը ըսեր էր որ կրնար նախատինք համարուիլ և կը զգար որ չէր կարող արդարանալ։ Ամեն կողմանէ հաւանութեան ձայներ լսուեցան»։

Անգլիական մեծ ազնուականի մը վերջին զաւակ, ի սկզբան դրամական անձուկ վիճակ մը ունեցաւ և պատուաւոր աղքատութիւն, որովհետեւ ապրեցաւ իր գրչին ծայրով[1]։ Գրեց շատ պրակներու մէջ, յորս կը տեսնուէր ծայրայեղ պահպանողական մը. և ատոնք գրաւեցին իր վրայ Դիզրաէլիի ուշադրութիւնը և Ստամֆորդ աւանը զինքը երեսփոխան ղրկեց Հասարակութեանց խորհրդարանը, ուր իր կողմնակցութեան ամենէն նշանաւոր անձն եղաւ լորդ Դիզրաէլիի մահուընէ վերջը։ Սակայն «լորդ Սիսիլ պահպանողական ըլլալովն հանդերձ, մեծ ծառայութիւն մը չկրցաւ ընել իր կուսակցութեան. երբէք իր կարծիքը իր քմահաճոյքը չզոհեց կողմնակցական շահուն. երբէք, իբրեւ գլուխ մը կուսակցութեան, չկրցաւ Հասարակաց խորհրդարանին մէջ առաջնորդել իր կողմին։ Նոյն իսկ իր կողմնակիցներէն շատերը չէին սիրեր զինքը. շատերը կը վախնային իրմէ, մաս մը կը հիանային, բայց ոչ ոք կ'ըն, դունէր զինքը իբրեւ վստահանալի անձն կուսակցութեան[2]»։ Սակայն այս ամենը արգելք չ'եղան փայլուն ծառայութիւններ մատուցանել իր հայրենեաց, մանաւանդ երբ պակսեցան խորհրդարանէ Դիզրաէլիի և Գլադստոնի պէս հմայիչ պերճախօսներ։

Առաջարկութիւն ընտրական նոր օրէնքի։

2. — 1868ի խորհրդարանին նիստերը, այս առաջին անգամ իր Ամուսին Իշխանին մահուընէ վերջը, բացաւ անձամբ թագուհին նախկին արարողութեամբ Փետրուար 6ին։ Թագուհին խորհրդարանի ապագայ աշխատութիւնքը յիշելով, աւելցուց որ խորհրդարանի մասնաւոր ուշադրութեան նիւթ կ'ընէր Հասարակութեանց խորհրդարանի ընտրութեանց համար նոր բարեկարգութիւն մը, համեմատ անգլիական ազատ սահմանադրական կարգաց։

---

1. 1868ի միայն յաջորդած է իր հօրը ազնուականութեան, եղբօրը մեռնելով։

2. Մակ Կարթէյ Գլ. ԽԸ։

Ճոն Ռըսսըլ որ 1832ի ահաւոր պատերազմ տա-
ւեր էր ընդդէմ պահպանողականաց՝ ընդարձակելու ըն-
տրողաց թիւը և յաջողեր էր միլիոն մը աւելցնելու, ա-
ռանց աւելցնելու երեսփոխանաց թիւը, այս անգամ ա-
ւելի եւս կ'ուզէր ընդարձակել սահմանը և առանց քաղ-
քի կամ աւանի մը ստացեալ իրաւունքները նայելու,
ընտրութեան իրաւունքը կ'ուզէր հաստատել անգղիա-
ցւոյ մը վճարած տուրքին վրայ։ Մինչ կոմսութեանց մէջ
իրաւունք ունենալու համար հարկ էր վճարել տուրք
50 ստէրլին, նա կ'ուզէր իջեցնել 20ի և քաղաքաց մէջ
10ը 6ի։ Այսպէս կ'աւելնային 400,000 քուէք։ Վար-
չութեան այս առաջարկին զօրաւոր պաշտպանն էր
Իրայդ, մինչ Լաու ուրիշ լուրջ ճարտասան մը, կը
պնդէր որ ընտրողաց թիւը աւելցնելէն կարեւորագոյն էր
կանոնաւորել երեսփոխան ընտրելու իրաւունքները ար-
դարապէս. վասնզի դեռ կային փոքր կոմսութիւնք, ո-
րոնք նախնական իրաւամբք, մեծ քաղաքներէն աւելի
երեսփոխան կ'ընտրէին։ Պ. Դրոսվրնոր խօսեցաւ որ
պաշտօնարանին առաջարկը թերի մասեր ունի, անոր
համար նկատողութեան չ'առնուի մինչեւ որ աւելի կա-
տարելագործուի. նա մանաւանդ որ օրէնքին մէջ չէին
նկատուած Ակովդիա և Իռլանդա։ Այն ատեն Գլադըս-
տոն պաշտօնարանին կողմանէ յարտարարեց որ վար-
չութիւնը կը վերապահէ ապագային ուրիշ օրէնքներ ալ
առաջարկել, և զայն պիտի ընդարձակէր նաեւ ի Ակով-
դիա և յԻռլանդա. վրայ բերաւ որ պէտք էր գոհացը-
նել զժողովուրդը ուր իրաւունք ունէր, որպէսզի յետոյ
չպահանջէ խռովութիւններով և աւելցուց որ թէ պաշ-
տօնարանին առաջարկած օրէնքը չ'ընդունուի, պաշտօ-
նարանը պիտի հրաժարի։

Խորհրդարանի մաս մը, ընտրողական իրաւանց ըն-
դարձակուելով, կը վախէր որ շատնայ ռամկին ազդե-
ցութիւնը, նա մանաւանդ որ ժողովուրդը մեծամեծ հա-
ւաքումներ ըրած էր ի նպաստ օրէնքին։ Վերջապէս
խնդիրը քուէարկութեան եկաւ և ունեցաւ տասնեւմէկ
քուէ նուազ։ Ճոն Ռըսսըլ և ընկերները հրաժարական-

Անկումն Պաշտօնարանին։

նին ներկայացուցին թագուհւոյն որ ընդունեցաւ և լորդ Դէրբիի յանձնեց կազմելու նոր պաշտօնարանը։

Նոյն իսկ այս կարճ պաշտօնավարութեան ժամանակ, Ջոն Ռըսսըլ պաշտօնարանը նշանաւոր ազատական նորութիւն մը մտուց։ Մինչեւ այն ատեն ամեն երեսփոխան պարտական էր երդումն տալու որ անգլիական եկեղեցւոյ կազմակերպութեան դէմ պիտի չգործէր, հաւատարիմ պիտի ըլլար թագուհւոյն։ Բնական է այս ձեւ երդում մը հակառակ էր կաթոլիկներու և այլադաւաններու զգացմանց, որով և բռնութիւն մ'էր խղճի։ Նոր օրէնքին համեմատ ամենայն երեսփոխան կ'երդնոյր հնազանդութիւն Անգլիոյ վեհապետին և սահմանադրութեան։ Նոյն օրէնքը հաստատուեցաւ նաեւ լորդերուն խորհրդարանին համար։

Երդման օրէնք։

Յիշենք նաեւ որ 1868ի Յուլիս 27ի երեկոյ ընդծովեայ հեռագիրը կը միացնէր զԵւրոպա Ամերիկայի հետ։ Նախընթաց իրիկունէ լորդ Ստանլի՝ պաշտօնեայ Արտաքին Գործոց, ծանուցեր էր որ հաղորդակցութիւնը կատարելապէս հաւատատուած էր։ Երկրորդ օրը առաջին անգամ խօսեցան Վիկտորիա թագուհին և Նախագահն Միացեալ Նահանգաց, փոփոխակի բարեմաղթութիւնք ընելով։

3. Պաշտօնարանը հրաժարականը չտուած, խիստ միջոցներ ձեռք առած էր յուլանդա խորտակելու ֆէնէաններու ապստամբական յուզումը ընդդէմ Անգլիոյ[1]։ Ֆէնէաններուն բոյնն էր մանաւանդ յԱմերիկա իռլանդական գաղթականութեանց մէջ. հոնկէ անվախ կ'անցնէին յուլանդա և արշաւանքներով կը նեղէին անգլիական փոքր կեղրոններ։ Ճէմս Սթիֆընս, որ մասնակից էր ֆէնէաններու յուզման 1848ի և փախեր էր յԱմերիկա, նորէն դարձաւ Իռլանդա շարժումը բորբո-

Ֆէնէանք յուլանդա։

---

1. Ֆէնէանք ներկայ դարուս մէջ հոմանիշ եղան Իռլանդական ինքնավարութեան համար պատերազմողաց հետ։ Ֆէնէան բառը առաջ եկած է Ֆէնիհուս անունէն որ Իռլանդիոյ երեք ցեղերուն վիպական նախահայրն կը համարուի։

քելու համար. բայց կալանաւորուեցաւ Պ. Հէմս Փիքամի հետ, այն որ գեղեցիկ և գողտր քերթուածիներ գրած է և որ գովուած է իբր յոյժ առաքինի անձ մը։ Սթիֆընս՝ Դրբլինի բանտը դրուեցաւ 1865ի Նոյեմբերի, բայց քիչ օր վերջը գտաւ փախչելու հնարք մը։ Ամերիկայի ֆէնէանները զԱնգղիա տագնապեցնելու համար, խորհեցան յարձակիլ Կանադայի վրայ։

Մայիսի 31ին 1866 ֆէնէաններու փոքր խումբ մը անցնելով Նիակարայի գետը տիրեց Իրայ բերդին։ Միացեալ Նահանգները պահանջեցին յարգել իրենց սահմաններուն չէզոքութիւնը և Կանատայի իշխանութիւնք զինուոր ղրկեցին։ Ֆէնէանները ցրուեցան և խորհեցան անցնել յիւլանդա։ Սակայն Անգղիոյ վարչութիւնը իմացաւ սահմանեալ ծրագիրը, թողուց որ ելլեն յիւլանդա, ժամանակին հասուց զինուոր և ֆէնէանները ապաւինեցան լերանց կիրճերու մէջ։ Իւլանդացի ֆէնէաններու հետ միացան նաեւ անիշխանականներ և աւազակներ, որոնք սարսափ տարածեցին ամեն կողմ։ Մարտի մէջ ֆէնէան մը Օ՛ Ֆարէլ, հասարակաց պարտէզի մէջ ատրճանակի երկու հարուած ուղղեց Թագուհւոյն երկրորդ որդւոյն՝ Էդիմբրրկի դքսին վրայ որ բարեբաղդաբար թեթեւ վէրք միայն առաւ։ Պետութիւնը առ ժամս վերցուց անձնակալութեան օրէնքը[1], ըստ որում մէկը կրնար երաշխաւոր տալով ազատիլ բանտէ։ Ոստիկանութիւնը խուզարկութիւններ ըրաւ և գտաւ քաղաքներու մէջ զէնք և մթերք, հարիւրաւոր իւլանդացիք բանտուեցան։ Իսկ զինեալ գունդերը զարնուեցան բանակին հետ ի Դորք, Բէրրի, Լիմէրիք, Տիփփէրարի. քիչ հոգի մեռան, շատերը գերի բռնուեցան և ֆէնէաններու ապստամբութիւնը Լորդ Դէրբիի պաշտօնէութեան առաջին տարին արդէն առ ժամս մարած կրնար համարուիլ[2]։

Ցուզմունք և ցրումն։

1. Habeas corpus.

2. Ժամանակին անգղիական լուրջ լրագիրներէն ոմանք իսկ կը գովեն ֆէնէաններուն գլխաւորներէն շատերը «որոնք քաջ զինուորներ եղած էին Ամերիկայի Քաղաքական պատերազմին մէջ և պատուով կռուեր էին։ Ի-

Ազատական երեսփոխանը ֆէնէաններու յուզումը, Իռլանդիոյ վրայ դրուած զարտուղի օրէնքներուն արդիւնք մը համարեցան, և անկէ վերջը ազատական կուսակցութեան նպատակն եկաւ զիրենք ազատել և Անգլիոյ հաւասար օրէնքներ տալ։

Պաշտօնարան Լորդ Դէրբի. Դիզրաէլի Պաշտօնեայ Ելեմտից։

4. Լորդ Դէրբի պահպանողական պաշտօնարանը կազմեց Յուլիս 9ին (1866)։ Պ. Դիզրաէլի Ելեմտից, լորդ Ստանլի՝ Արտաքին Գործոց, լորդ Կրանբրրն (երբեմն Ռոբերտ Սիսիլ, յետոյ Սոլզբրի) պաշտօնեայ Հնդկաստանի. լորդ Կարնարվըն՝ Գաղթականութեանց, զօրավարն Պիլ՝ Պատերազմի, Սըր Ստաֆորտ Նորթգոտ՝ Վաճառականութեան, Վոլփոլ՝ Ներքին Գործոց և Սըր Ջոն Պաքինդոն՝ Նրովային զօրութեան։ Նոր պաշտօնարանը գաղափարաց յուզեալ ժամանակ ստանձնեց պաշտօնէութիւնը։ Ժողովուրդը որ կը յուսար ընտրական օրինաց հաստատուիլը, զայրացած էր Ջոն Ռիսսըլ պաշտօնարանին անկման և կազմեր էր բարեկարգութեանց ընկերութիւններ, բողոքներով ձեռք բերելու համար պահանջը։ Լոնդոնի բարեկարգութեանց անդամք իրենց գլուխ ունենալով զԼոմոնդ Բիլլ՝ ժողովրդական տրիբուն մը, սահմանեցին հսկայ ժողովրդական հաւաքում՝ մը կազմել Հայդ Պարքի մէջ։ Ոստիկանութիւնը ծանոյց որ պիտի արգելուր զայն։ Պ. Բիլլ հրատարակեց որ ըստ օրինաց իշխանութիւնք իրաւունք չունէին արգիլելու։ Ընկերութեան անդամք Յուլիս 30ին Լոնդրայի ա-

---

բենց հայրենեաց՝ Իռլանդիոյ համար զինք առած ժամանակ, կը համարէին անկեղծութեամբ սրբազան պարտք մը կատարել »։ « Երբ ժողովրդական կիրքերը հանդարտեցան, կ'ըսէ Մրկ Կարթէյ, անզգիացոց շատերը յայտնեցին իրենց յարգանքը և գմայլումը ֆէնէաններու գլխաւորներէն շատերուն համար։ Գլուխներէն մին էր հազարապետն Բրրք, որ նշանաւոր եղած էր Հարաւային Դաշնակցութեան բանակին մէջ։ Բրրք մահուան դատապարտուեցաւ 1867ի Մայիսի։ Ամեն ջանք Հայմ Հալի մէջ հազարաւոր անձանց գումարումն եղաւ և սահմանեց վարչութենէն խնդրելու որ Բրրքի և ընկերներուն դատավճիռը չգործադրուի։ Միլ երեսփոխանը խօսեցաւ զօրաւոր ձայնով ի նպաստ շնորհին և մեծ տպաւորութիւն ըրաւ պաշտօնական շրջանակաց վրայ։ Բրրքի և ընկերաց դատավճիռը փոխուեցաւ »։

1. Meeting.

մեն կողմէն թափորով դիմեցին դէպ ի Հայդ Պարք. սակայն դռները գոցուած գտան։ Պ. Բիլս և ուրիշ գլխաւորք բողոքեցին և խնդրեցին որ դռները բացուին. ծանուցանելով որ իրենք օրինաւորութեան համբէն չեն ուզեր շեղիլ։ Եւ երբ անլսելի եղան, գնացին դէպ ի Տրաֆալգար Սքուար, հոն ճառախօսութիւնք եղան ի նպաստ ընդարձակութեան քուէարկուաց, շնորհակալութիւնք առ Գլադստոն, Բրայտ և ուրիշ ազատական երեսփոխանք, յետոյ ցրուեցան։

Բայց Հայդ Պարքի դիմաց մնացողները բռնադատեցին զոստիկանութիւնը դռները բանալու, երբ նա չբացաւ, երկաթեայ վանդակները կոտրելով ներսը ողողեցին։ Զինուորները երկաթեայ գաւազաններով ընդդիմացան ամբոխին, որ սկսաւ կռուիլ քարերով և երկաթեայ վանդակին կտորներով, մինչեւ տիրեց պարտիզին եւ անմիջապէս սկսան ճառախօսութիւնք ի նպաստ ընտրութեան ընդարձակուելուն։ Յետոյ որոշուեցաւ վեց անձանցմէ նուիրակութիւն մը ղրկել առ թագուհին, խնդրելու Դէրբի պաշտօնարանին անկումը որ « հակառակ էր ժողովրդեան իրաւանց և չխնայող անոր կեանքին »։

Նմանօրինակ ուրիշ ցոյցեր և յուզմունքներ հանդիպեցին գթագուհին և զպաշտօնարանը անմիջապէս ընտրական բարեկարգութիւն մը պատրաստելու։ Խորհրդարանը բացուեցաւ փետրուար 5ին (1867) և Պսակի ճառը կը հրաւիրէր երեսփոխաններուն ուշադրութիւնը « խորհրդարանի ընտրութեանց վրայ » և կը յուսար որ « խոհեմութեամբ և փութոխակի զգուշութեամբք, կարելի պիտի ըլլար հասնիլ որոշողութեան մը, որ առանց շփոթելու քաղաքագիտական կշիռը, կարենայ ընդարձակել ընտրութեանց իրաւունքները »։ Այս երկմիտ բացատրութեան մէջ ժողովուրդը Պ. Դիզրաէլիի մատը տեսաւ և աւելի յուզուեցաւ համարելով որ բնաւ օրէնք մը չկայ առաջարկուելիք։ Պ. Դիզրաէլի բռնադատուեցաւ փետրուար 11ի խորհրդարանի գումարման մէջ՝ խոստանալու որ կ՝աշխատուէր արդէն գոհացուցիչ

Ընտրական նոր օրէնք։

օրէնք մը առաջարկել։ Եւ սակայն ամբողջ պահպանողական կուսակցութեան համար մեծ հոգերու նիւթ էր այս ընտրութեան օրէնքը։ Լորդ Դէրբի տագնապած էր և զայն կը կոչէր «Մութի մէջ ոստիւն մը[1]»։ Այս ամեն դժուարութիւնք աւելի մղեցին զՊ. Դիզրայէլի գոհացուցիչ օրէնք մը խմբագրելու և փետրուար 25ին կ'ուզէր առաջարկել Յօդուածները երբ անհամաձայնութիւնը ծագեցան պաշտօնէից մէջ և հրաժարեցան Պիլ, Լորդ Կարնարվոն և Լորդ Դրանբուրն։ Յետինս իբրեւ պաշտօնեայ Հնդկաստանի, քիչ ժամանակուան պաշտօնավարութեան մէջ մեծ կարողութիւն ցուցուցեր էր։ Պաշտօնարանին մէջ մտան Ռիչմընտի դուքսը, Մ. Քըրբի և Բըկկինգէմի դուքսը։ Պաշտօնարանը այսպէս կազմուելով, Պ. Դիզրաէլի Մարտ 18ին առաջարկեց անխոնջ տքնութեամբ պատրաստած ճարտարամիտ ընտրական օրէնք մը, որով աւանաց մէջ ընտրողաց թիւը կ'առաւելուր 200.000 և քաղաքներուն մէջ մէկ միլիոն։ Օրէնքը երեք անգամ կարդացուելէն վերջը, առանց կարեւոր ընդդիմութեան մը, ընդունուեցաւ նշանաւոր մեծամասնութեամբ։

Ըստ այսմ օրինաց ընտրող էր գիւղօրէից մէջ ամեն արու որ վճարէ կամ իրեն տեղ տանտէրը վճարէ, տարեկան տուրք ոչ նուազ քան տասն լիրայ ստէրլին և բնակութիւն ունենայ հոն ոչ նուազ քան մէկ տարի։ Քաղաքաց մէջ ընտրողք էին որոնք տարին կալուածական հինգ լիրա ստէրլին տուրք կու տային և կամ ունէին հողեր, որոնք տարեկան կը վճարէին 12 լիրա ստէրլին։ Քանի մը պզտիկ գիւղերէ վերցուեցան կանխապէս ստացուած ընտրութեան իրաւունք, ուրիշները վերածուեցան. նորեր հաստատուեցան։ Մէնչըստրի, Լիվըրպուլի, Բըրմինգէմի և Լիդսի երրորդ երեսփոխանք շնորհուեցան, նոյնպէս Լոնդրայի համալսարանին։ Կը սահմանուէր՝ ուր կային երեք երեսփոխանք,

---

1. «The leap in the dark». Այսպէս կոչուած է այս խնդիրն։

ընտրողք երկուքի միայն պիտի քուէարկէին, և ուր որ չորս, ինչպէս ի Լոնդրա, երեքի կրնային քուէարկել։ Կը վերապահուէր Սկովտիոյ և Իռլանդիոյ նկատմամբ ընտրութեանց օրէնքներու առաջարկը։

Փիչ վերջը Սկովտիոյ տրուեցաւ գրեթէ Անգլիոյ նման ընտրական օրէնք մը. իսկ Իռլանդա այս մասին մէջ ալ չկրցաւ ունենալ հաւասարութիւն և արդարութիւն։

Պաշտօնարան Դիզրայէլի։

5. — Պ. Դիզրաէլիի տարած այս նշանաւոր յաղթութիւնը գինքը մատնանիշ կ'ընէին անցնելու պաշտօնարանին գլուխ. և յիրաւի շատ ամիսներ չ'անցան երբ Լորդ Դէրբի, արդէն շատոնց տկար յօդացաւէ, հրաժարականը տուաւ պաշտօնարանին նախագահութենէ։ Թագուհին զայն ընդունելով 1868ի սկիզբը հրաւիրեց զԴիզրաէլի անցնելու Լորդ Դէրբիի տեղ։ Դիզրաէլի պաշտօնարանական աննշան փոփոխութիւնք միայն բրաւ, վերջացուց ընտրութեանց Յանձնաժողովոյն գործադրելիք ինչ ինչ կէտերը և բոլոր ուշադրութիւնը դարձուց դէպ ի Ափրիկէ, ուր պատերազմի երկիւղ մը կը յառնէր Աբիսինիոյ հետ։

Աբիսինիա կամ Հապէշիստան։

6. — Աբիսինիա (Հապէշիսպան) Նուբիոյ հարաւային կողմը կ'իյնայ, արեւելեան կողմէն ունենալով Կարմիր Ծովը։ Երկիրը ընդարձակ բարձրաւանդակ մ'է չորս միլիոն բնակչօք, որոնք եթովպացի սեւ ցեղէն են մեծաւ մասամբ. լեզունին արաբերէնէ առաջ եկած կը համարուի։ Շատ գետեր ունի, որոնց գլխաւորն է Բահր–էլ–Ազրաք (կապոյտ Նեղոսը)։ Ամբողջ երկիրը երկու մեծ մասի կը բաժնուի, հիւսիսային կողմը Տեգրի, հարաւայինը Ամհարա. և չորս թագաւորութիւնք՝ թագաւորութիւն Կոնդարի, թագաւորութիւն Տեգրիի, թագաւորութիւն Ամհարայ և թագաւորութիւն Շոայի։ Կը յիշուի հին պատմութեան մէջ որ Կամբիւս Պարսից թագաւորը, Կիւրոսի որդին, ուզեց տիրել Հապէշներուն և իր բանակները կորսուեցան աւազներուն մէջ։ Զորրորդ դարուն (373) մէջ Ս. Փրումէնտիոս քարոզեց քրիստոնէութիւնը և իրենց թագաւորք քրիստոնեայ եղան։ Ամբողջ Միջին Դարու մէջ իրենց կրօնքին պատ-

ճառաւ կուիւ ունէին մահմէտական արաբացի զլխաւորներուն հետ, սակայն պահեցին քրիստոնեայ կրօնքնին՝ ստէպ բաժնուած Հռովմայ Գահէն. որուն նուիրակութիւն ղրկեց իրենց թագաւորը Փլորենտիոյ ընդհանուր ժողովքին առթիւ. և կոչուած է թագաւորնին Մեծ Նրկոս, արքայ արքայից։ Վաճառականական շատ յարաբերութիւնք ունեցած են Փորթուգալցւոց հետ։ ԺԶ դարուն մէջ կայլաս կոչուած նոր ժողովուրդ մը արշաւեց Յեթովպիա և շատ տեղեր գրաւեց որով շարունակ էին կուիւները տեղացի իշխանաց մէջ, որոնք կը կոչուին Տէ՛ռաձ կամ Տէտաձմաչ. միայն Ամհարայի իշխանը ունէր նաեւ Ռաս տիտղոսը որ գլուխ կը նշանակէ։

Թագաւորութիւնը։

Ամհարայի Ռաս Ալիի քով մեծցաւ զինուորութեամբ Քասսա անուամբ պատանի մը որ իր քաջութեամբ արժանացաւ փեսայ ըլլալու Ռաս Ալիի։ Յետոյ գժտելով իր աներոջ հետ, կռուեցաւ և զանիկայ փախուց. տիրեց Կոնճամի երկրին, ուրիշ իշխաններ ալ հպատակեցան՝։ Քասսա Եթովպացւոց Ապունա Յէլամի ձեռքէն արքայ արքայից (Նրկոս) օծուեցաւ և անուն ալ փոխեց դրաւ Թէոդորոս, որովհետեւ Հապէշներուն մէջ գուշակութիւն մը կար որ պիտի ունենան թագաւոր մը որ պիտի տիրէ իսկ Երուսաղէմի [1]։ Թէոդորոս օծուելէն վերջը կ՚երթայ կը տիրէ Կալլասի երկիրներուն։ Յետոյ կը դիմէ Շոայի վրայ որուն Մէլէքոթ թագաւորը վախէն յանկարծամահ կ՚ըլլայ. կը տիրէ անոր երկիրներու և գանձերուն և անոր Մէնէլիք զաւակը որդեգիր կ՚ընէ իրեն։

Թէոդորոս թագաւորը։

Թէոդորոս երկիրը խաղաղելէն վերջը, սկսաւ երկրին յառաջադիմութեան ինամք տանիլ։ Յարաբերութիւնք սկսաւ Եւրոպիոյ հետ, սիրով ընդունեցաւ եւրոպացի քարոզիչներ, խրախուսեց անոնց կրթական աշխատութիւնները և ջանաց իր ժողովրդեան զեղծ բարքը շտկել յորդորանօք և պատիժներով։ Իր վրայ խօսողք և զինքը տեսնողք, զինքը կը ներկայացնեն թագաւո-

---

1. Եթովպիոյ թագաւորք իրենք զիրենք սերեալ կը համարէին Սողոմոնէ և Սաբայ թագուհիէն։

բութեան առաջի տարիներուն մէջ՝ իմաստուն, բարի, կրօնասէր թագաւոր մը։ Իր առաջին կիներ մեռնելէն վերջը, չէր ուզեր կրկին ամուսնանալ, որպէս զի աւելի զբաղի ժողովրդեան բարւոյն և հոգեւոր կենաց։

Բայց յաջողութիւնները զինքը փոխեցին ապա։ Իր կամաց հակառակ եղողները կը ջնջէր սրով և կրակով։ Բարեկամացած էր Մասաւայի անգղիացի հիւպատոսին հետ՝ Պ. Պլովտէն, որ սպաննուեցաւ Թէոդորոսի դէմ թշնամութեան մը մէջ։ Թէոդորոս ընճկեց այդ ապստամբութիւնը և գերիներէն հարիւրէն աւելի սպաննեց ի վրէժ անգղիացի բարեկամին։

Անգղիացի կալանուորքը։

Անգղիոյ տէրութիւնը հիւպատոս կը ղրկէր ի Մասաւա, անգղիացի հպատակաց վաճառականութիւնը պաշտպանելու համար ի Մասաւա։ Պլովտէն հիւպատոսը Մասաւայի մէջ գրեթէ իբրեւ գործակատար մը դարձեր էր Թէոդոր թագաւորին, որ աչք ունէր եգիպտական այդ հողին վրայ, որով և բրիտանական վարչութիւնը զանազան անգամ տհաճութիւններ ունեցեր էր. որովհետեւ Մասաւա որ Հապէշիստանի արեւելեան կողմէն ծովուն վրայ կղզի մ՝էր ընդմէջ Արաբիոյ և Եգիպտոսի, մասն էր Թուրքիոյ և Հապէշիստանի արտահանութեանց մեծագոյն դուռը [1]։ Ոչն Ռիսսել երբ Պլովտէնի տեղ ղրկեց հիւպատոս զկամէրոն գնդապետը, պատուիրած էր բնաւ չխառնուիլ Թէոդորոս թագաւորին իրեն մերձաւորաց հետ ունեցած խնդրոց մէջ և «Հապէշիստանի նկատմամբ չունենալ ներկայացուցչի դեր»։ Թէոդոր Անգղիոյ այս ընթացքին մէջ նենգութիւն մը կասկածեցաւ. մանաւանդ որ գրեր էր նամակ մը առ Վիկտորիա թագուհին օգնութիւն խնդրելով ընդդէմ Թուրքիոյ և այս նամակը ինչ ինչ պատճառներու համար անպատասխանի մնացեր էր [2]։

---

1. 1897էն ի վեր Մասաւա իտալացւոցն է, թէպէտ բողոքած է Թուրքիա։

2. Անգղիացի պատմագիրներէն ոմանք, լաւ տեղեակք դիւանի թղթոց, կ՝ըսեն որ՝ նամակին մէջ առ Վիկտորիա թագուհին, կար նաեւ հետը ամուսնանալու առաջարկը, քանի որ այրի էր։

Այս ամեն պարագայից մէջ Թէոդորոս արհամարհութիւն համարեցաւ և իբրեւ վրէժխնդրութիւն կալանաւորել տուաւ անգղիացի հպատակներ և բարոզիչներ, զորս շղթայակապ գերի տարաւ ի Մագդելա, ժայռերուն վրայ շինուած իր բերդաքաղաքը։ Կամէրոն հիւպատոսը Մասաւայէն Հապէշիստան եկաւ իբր բողոքելու։ Բայց Թէոդոր զայրացած էր նաեւ Կամէրոնի որ իւր նամակը առ Թագուհին փոխանակ անձամբ տանելու ինչպէս խոստացած էր, ծառայի ձեռքով ղրկեր էր և արհամարհական ոճով ալ պատասխաներ էր. որով անմիջապէս զայն ալ գերի ղրկեց ի Մագդելա։

Անգղիոյ տէրութիւնը ի սկզբան խիթալով որ պատերազմի ձայն մը կրնար գերիներուն սպանման պատճառ ըլլալ, ջանաց գործը խաղաղութեամբ լմնցնել և դիմեց միջնորդութեանց։

Ի Կ. Պոլիս Անգղիոյ դեսպանը հայ պատրիարքի միջնորդութեան կը դիմէ։

7. — Կ. Պոլսոյ բրիտանական դեսպանը, լորդ Լայընս իմանալով որ Երուսաղէմ բնակող հապէշները Հայոց պատրիարքին իրաւասութեան ներքեւ կը գտնուին, Հայոց պատրիարքէն յանձնարարական թուղթ մը խնդրեց առ Եսայի պատրիարք Երուսաղէմի[1]։ Մարտ ամսոյն վերջերը (1867) Երուսաղէմի անգղիական հիւպատոսը Պ. Ն. Դ. Մուր՝ ներկայանալով ի պաշտօնէ Եսայի պատրիարքին, կը մատուցանէ Կ. Պոլսոյ պատրիարքին յանձնարարական նամակը, որով կը խնդրուէր առ Թէոդորոս Թագաւորը միջնորդութիւն մը վասն ազատութեան անգղիացի բանտարգելոց։ Եսայի պատրիարքը խոստացաւ ձեռքէն եկածն ընելու և Երուսաղեմայ Աթոռոյն կողմանէ ղրկուելիք միջնորդութեան օրհնութեան և թղթերն անվտանգ հասցնելու համար առ Թէոդորոս և աղերսին աւելի կարեւորութիւն տալու համար, որոշուեցաւ որ յատուկ նուիրակութիւն մը ղրկուի,

---

1. Հայոց ազգին այս պատուարեր նուիրակութեան պատմութիւնը մանրամասն գրուած է և տպուած նոյն իսկ երկու սրբազան նուիրակներէն յԵրուսաղէմ 1871ին. Պատմութիւն Երկամեայ պանդխտութեան ի Հապէշիստան տպ. Երուսաղէմ 1871։ Տե՛ս և Լրագիրք Սիոն, Մասիս եւն։

որուն գլուխ սահմանուեցան Սահակ Եպիսկոպոս բաբերդցի և Տ. Տիմոթէոս վ. Սափրիչեան Կ. պոլսեցի։

Երկու նուիրակք սիրով յանձն առին այս դժուարին և վտանգաւոր նուիրակութիւնը և Ապրիլի առաջին օրն համբայ ելան Ս. Երուսաղէմի վերաբերեալ զանազան ընծաներէ զատ Ս. Խաչափայտին մաս մը պարունակող ականակուռ խաչ մ'ալ ընծայ տանելով Թէոդորոս Թագաւորին [1]։ Հասան յԱբիսինիա յետ անպատմելի նեղութեանց շատ ամիսներ վերջը և սկսան նամակով հաղորդակցիլ Թագաւորին հետ։

Հայ նուիրակութիւնը։

Միւս կողմանէ Վիկտորիա Թագուհին նամակով մը զՊ. Ռիսսամ՝ Ադէնի անգղիական կողմնակալը, ուրիշ երկու սպայիւք ղրկեց առ Թէոդորոս խնդրելով գերեաց ազատումը։ Թէոդորոս նախ արձակեց զկամէրոն, բայց ապա յանկարծ փոխուելով, թէ զհիւպատոսը և թէ զՌիսսամ իր ընկերներով գերի ըրաւ։ Այն ատեն լորդ Ստանլի, պաշտօնեայ Արտաքին Գործոց, վերջնագիր մը ղրկեց որ գերիները արձկէ, և եթէ երեք ամսուան մէջ չ'արձկուէին, պատերազմ կը սպառնար։ Այս վերջնագիրն ալ արդիւնք մը չունեցաւ և սըր Ռորրը Նապիէր, Բոմբայի բանակին սպարապետը հրաման ընդունեցաւ անցնելու յԱբիսինիայ Անգղիոյ ղրկած բանակին գլուխ։ Թէոդորոս զայս լսելով, գերիներով ամրացաւ ի Մագդելա։

Պատերազմ Թէոդորոսի դէմ։

8. — Զօրավարն Նապիէր ունեցաւ իր ձեռաց ներքեւ 4000 եւրոպացի և 8000 հնդիկ զինուոր, քառասուն փիղ, ուղտք և 12,000 ջորի։ Բանակը 1868ի առաջին օրերը ցամաքը ելաւ Մուլլահ գիւղը և միայն նպատակ ունէր Մագդելայի և Տէրբա–Դապոր եղած գերիները ազատել։ Անգղիա հրատարակեց առ պետութիւնս որ

---

1. Այս առթիւ յիշենք որ Հայկական Եկեղեցւոյ Եպիսկոպոյ Նուիրապետութեան հետ ունեցած յարաբերութիւնք շատ հին պէտք է ըլլան, վկայ այլեայլ թարգմանութիւնք հայէն յԵթովպացի, յորս նաեւ ի Վատիկան գտնուած Եթովպացերէն պատարագամատոյց մը Ս. Գրիգոր Լուսաւորչի ընծայուած,

բնաւ աշխարհակալութեան նպատակ չ'ունէր, միայն քաղաքակրթութեան համար կը կռուէր։ Թէոդորոս թագաւորն ալ իր կողմանէ հրատարակեց որ մինչեւ վերջը պիտի կռուէր թշնամին իր հողէն դուրս հանելու համար։

Սակայն Անգղիացիք ճարտարամտութեամբ նախ շահեցան երկրին բոլոր իշխանները, որոնք ապստամբեցան Թէոդորոսէն. ապա չուեցին դժուարին ճամբաներէ դէպ ի Անտալօ և Մագդելա։ Ամիս մը լեռներ և գետեր կտրելով, յետ անտանելի նեղութեանց հասան բերդին մօտ [1]։ Թէոդորոս եւս շատ նեղութիւն կրեր էր քաշել տանելու ի Մագդելա քարուտ և տղմուտ ճամբաներէ, ապստամբած իշխաններու երկիրներէն, իր ծանր հրանօթները, որոնք և ոչ իսկ ծառայութիւն մը կրցան ընել իրեն, որովհետեւ չունէին այն հեռաձգութիւնը ինչ որ Անգղիացւոցը։ Ապրիլ 10ին, Աւագ Ուրբաթ օրը, երկու բանակները դիմացէ դիմաց գտնուեցան Մագդելայի ներքեւ և երկու կողմանէ ալ նոյն մոլեգին եռանդով կռիւ մը սկսաւ։ Սակայն Անգղիացւոց հրազէնք անհամեմատ վեր էին։ Հապէշք յետ անխոնջ կռուելու քանի մը ժամ, 500 մեռեալ թողլով պատերազմին տեղը, քաշուեցան ի Մագդելա։ Անգղիացիք միայն իննսուն վիրաւոր ունէին և ոչ մի մեռեալ։

Երկրորդ օրը Թէոդորոս մարդ ղրկեց հաշտութիւն խնդրելու։ Սըր Ռորրը Նապիէր պատասխանեց որ յանձն չէր առնուր խաղաղութիւն մինչեւ չ'արձկէ բոլոր եւրոպացի գերիները, յանձնէ Մագդելա և ինքն անձնատուր ըլլայ։ Թէոդորոս զայրացած գոչեց որ ինքը բնաւ մարդու մը գերի չ'ըլլար և ուզեց ինքզինքը ատրճանակով մը սպաննել, բայց մօտ եղողք չթողուցին։ Միւս օրը, Ապրիլ 12, տօն Ս. Յարութեան, յանկարծ միտքը փոխեց և գերիները ղրկեց առ անգղիացի զօրավա-

---

1. « Թէոդորոսի հեռանալուն լուրը, անգղիական բանակին գոչը երբ լսեցինք մենք, խոր տխրութեան մէջ թաղուած մնացինք... մեր դժբաղդ սպագայն մթութեանց մէջ կը նկատէինք »։ Երկ. Ուղ. ի Հապ. Գլ. Ե։ Որովհետեւ անկէ վերջը իրենց նուիրակութիւնէ ապարդիւն կ'ըլլար։

Թէոդորոսի մահը։

Լորդ Նաբիէր կը տիրէ Մագդելայի։

ըը կրկին հաշտութիւն խնդրելով. սակայն Սըր Ռոբըր Նապիէր կը պահանջէր նաեւ զՄագդելա և սաստկացուց պաշարումը։ Թէոդորոս բոլորովին ներսը ամփոփուած մնաց[1]*։ Կորիւր կրկին սկսաւ. տեսնելով որ Անգղիացիք պիտի մտնէին Մագդելա, ատրճանակի փողը դրաւ բերնին և պայթեցնելով ինկաւ մեռաւ Ապրիլ 13ին։ Քիչ վերջը երբ Անգղիացիք մտան բերդը, դիակներու մէջ գտան իր մարմինն ալ։ Սըր Ռոբըր Նապիէր հրամայեց պատուով թաղելու Մագդելա բերդին եկեղեցւոյն մէջ։ Բարեբաղդաբար ողջ էին նաեւ մնացեալ եւրոպացի գերիները։ Իսկ բերդը կործանեց և Թէոդորոսի զաւակը հետը առաւ, զոր Վիկտորիա թագուհին յետոյ ուզեց կրթել տալ. բայց անվարժ կլիմայից ներքեւ մեռաւ տղայ հասակին մէջ։*

Անգղիոյ վարչութիւնը զՌոբըր Նապիէր բարձրացուց լորդ ատենակալութեան աստիճանի, Բարոն Մագդելայի տիտղոսով. ընդունեցաւ դրամական վարձատրութիւն և երկու խորհրդարաններէն ալ շնորհակալութիւնք եղան Հապէշիստանի հրամանատարին և բանակին որ հասաւ յԱնգղիա Յունիս 21ին։ Եւրոպիոյ պետութիւնք տագնապած էին որ Անգղիա ուզենայ մնալ յԱբիսինիա. բայց նա ըստ իւր խոստմանը չէր ուզած օգտուիլ այս յաղթութենէն, միայն իր պատուոյն դէմ եղած նախատանաց վրէժն ուզած էր առնուլ։ Այս կէտը պերճախօս բեմախօսութեամբ խորհրդարանին մէջ պանծացուց Պ. Դիզրաէլի, յուսալով մանաւանդ որ արտաքին այս տարած յաղթանակը, կարէ յաղթել նաեւ ներքին տագնապներուն և այն կուռոյն, որ իրեն դէմ բացուեր էր ազատականներէն։

Գլադստոն կ'առաջարկէ յիսուանդա ջնջել պաշտօնական Եկեղեցին։

9. — Պաշտօնարանին և մանաւանդ բովանդակ պահպանողական դրութեան դէմ անողոք պատերազմ բա-

---

1. «Բանտարկեալները ազատ թողլէն վերջը, ինքզինքը արբեցութեան կուտայ։ Օր մը այնպէս հարբած ժամանակ լեռնէն (Մագդելայէն) վար իջնելով տափարակ բլուրի մը վրայ, Անգղիացւոց բանակին դիմաց ձի կը խաղցնէ և կ'ելլէ դարձեալ լեռը»։ Ուղ. Ի Հապէշ. Մաս Բ. Գլ. Զ։

ցողն, էր նոյն ինքն Գլադստոն. պատերազմ մը՝ որ վեր ի վայր ըրաւ Անգղիոյ բազմադարեան աւանդութիւնքը, փոխեց եկեղեցական և քաղաքական ուղղութիւնքը և այնպիսի համակրանաց պակով մը զարդարեց հեղինակին գլուխը բոլոր աշխարհի ազատասիրաց առջեւ, որպիսի ոչ ոք քաղաքագէտ կրցած էր ստանալ ցայնժամ։

1868 Մարտ 24ին Գլադստոն Հասարակութեանց խորհրդարանին մէջ հետեւեալ երեք օրէնքներու ընդունելութիւնքը առաջարկեց. 1. «Որ խորհրդարանը յայտարարէ թէ հասած է ժամանակը վերջ տալու յիռլանդա պաշտօնական եկեղեցւոյ գոյութեան, առանձնականաց շահերը և իրաւունքները նկատողութեան առնլով. 2. Որ յառաջ եկած եկամուտները չ'երթան պետութեան գանձուն, և առ ժամս կաին մնան եկեղեցական նուիրակութեանց գործողութիւնք, մինչեւ որ խորհրդարանը սահմանէ. 3. Որ ուղերձ մը ներկայացուի առ թագուհին, որով նորին վեհափառութիւնը հաճի հրամայել խորհրդարանին տրամադրութեան և հովանաւորութեան ներքեւ դնել Իռլանդիոյ արքեպիսկոպոսութեանց, եպիսկոպոսութեանց և ուրիշ եկեղեցական աստիճանաւորաց ժամանակաւոր շահերը»։ Գլադստոն զասոնք առաջարկելէ վերջը խնդրեց որ պաշտօնարանը օր սահմանէ վիճելու և Պ. Դիզրաէլի ընդունեցաւ որ կատարուի Մարտ 30ին։ Նոյն աւուր Պ. Գլադստոնի խորհրդարանի մէջ ատենաբանութիւնը, անգղիական բեմախօսութեան ամենէն նշանաւոր կտորներէն մին համարուած է։ Ակսաւ նախ յայտնել որ յիռլանդա պէտք էր եկեղեցին բաժնուեր ի պետութենէն, որով վերնար պաշտօնական հաստատուած եկեղեցին և ազատութիւն և հաւասարութիւն ըլլար ամեն դաւանանքներու. որ քննուին պաշտօնական եկեղեցւոյ գոյքերը, վճարուի ամենուն փոխարինութիւն մը, իսկ մնացեալքը ամրողջովին պէտք են ծառայել բովանդակ Իռլանդիոյ, առանց դաւանանքի խտրութեան։ Յիշեց որ երբ Պիտ ընդունեցաւ Միութիւնը, իր նպատակն էր արտաքսել նախադասումը և մտցնել հաւասարութիւն, սակայն չկատարուեցաւ նպատակը։ Իռլանդիոյ կաթոլիկ ժողո-

վուրդը « կը հեծէ պատժական բարբարոս և զզուելի օրինաց ներքեւ և սակայն կ'ահի կաթոլիկութիւնը։ Այսպէս յայտնի է որ անգլիական եկեղեցին իր ճնշիչ ոճով չհասաւ իր նպատակին և չկրցաւ նորաղանդ ընել զժողովուրդը»։ Ցրցուց Գլադստոն որ աննպատակ են հաստատուած նուիրապետութիւնք. կան երկու վիճակք յորս կաթոլիկք 5000 հոգի են և նորաղանդք ութը միայն [1]։

Իւ որովհետեւ լորդ Ստանլի, Արտաքին Գործոց պաշտօնեայն կ'ըսէր որ ներկայ խորհրդարանը չէր կարող վիճել այս նիւթին վրայ, և հարկ էր վեց ամիս յետաձգել որպէս զի ընտրութիւնք կատարուին այս ծրագրին վրայ և նոր խորհրդարանի առաջարկել խնդիրը, Գլադստոն պատասխանեց որ՝ պաշտօնարանին այդ հաշիւները սխալ էին և ունայն յոյսեր. գրեթէ բոլոր Անգլիա կողմնակից է ինդրոյն. բողոքեց որ տակաւին յիւլանդա կը շարունակէ անձնակալութեան օրէնքը. որ միշտ քաղաքական պատերազմի մը վախի ներքեւ կ'ապրէին և հարցուց թէ մինչեւ ե՞րբ պաշտօնարանը պիտի պահէր ժողովուրդը գրգռելու և զայրացնելու միջոցները։ Ամենէն վերջը գեղեցիկ վերջաբանով մը ցրցուց Գլադստոն ի պատմութիւնէ որ Անգլիա ինչ զիջում որ ըրած է առ Իւլանդացիս միշտ հետեւանք մ'եղած էր վախի և տագնապի, « մինչ պէտք է համաձայնութեան և հաւասարութեան վրայ բարձրացնել Բրիտանական կայսրութեան ամրողջական շէնքը »։ Երկար ծափահարութիւնք պակեցին իր խօսքը, որ մեծ տպաւորութիւն ունեցաւ թէ խորհրդարանին և թէ երկրին վրայ։ Խորհրդարանը սահմանեց նոյն նիւթին համար վիճաբանութիւնքը շարունակելու Ապրիլ 3ին։

10. — Նոյն օրը պահպանողական մեծ ճարտասանը և միանգամայն պաշտօնարանին գլուխ՝ Պ. Դիզրաէլի, զօրաւոր փաստերով ջանաց ջնջել Գլադստոնի Պաշտօնարանի ինքնաքշումը։

1. Ուրիշ ճառի մը մէջ բսաւ որ կային անգլիական եկեղեցիք որուն ժողովուրդը բաղկացեալ էր հովիւէն, իր ամուսնէն և եկեղեցւոյն աւելածուէն։

խօսքերուն տպաւորութիւնը, յիշեց մանաւանդ այս օ-
րէնքով Հռովմայ Պապին ստանալիք մեծ ոյժը յիոլան-
դա, բացատրեց Եկեղեցւոյ և Պետութեան մէկմէկէ բաժ-
նուելուն անտեղութիւնք և վնասներ, մանաւանդ հայրե-
նի անգղիական եկեղեցւոյն համար և վերջացուց խօսքը
առաջարկելով որ՝ քուէարկուի այս խնդիրը թողուլ ա-
պագային։ Սակայն խորհրդարանը 378 քուէիւք 272
ձայներու դէմ, մերժեց Պաշտօնարանին առաջարկը։
Պաշտօնարանը տագնապեցաւ և խնդրեց ժամանակ տալ
իրեն խորհելու մինչեւ Ապրիլի 20։

Սահմանեալ օրը խորհրդարանին մէջ երբ կը վի-
ճուէր առաջին յօդուածը, Դիզրաէլի և Վոլփուլ բողոքե-
ցին Գլադստոնի առաջարկած օրէնքներէն գալիք վնաս-
ներուն դէմ. և սակայն խորհրդարանը ընդունեցաւ 330
քուէիւք ընդդէմ 26 քուէից։ Վարչութիւնը կը յաղ-
թուէր 15 քուէիւք, որով խնդրեց նիստերուն յետա-
ձգութիւնը մինչեւ Մայիս 4. որովհետեւ պաշտօնարանը
պիտի քննէր իւր սահմանադրական կացութիւնը նկատ-
մամբ խորհրդարանին։

Կալլէսի իշխանը և իշխանուհին յիոլանդա։

Այս միջոցիս Գալլէսի իշխանը և իշխանուհին յիո-
լանդա այցելութեան մեկնած էին։ Դրբլինի ժողովուր-
դը խանդավառ ընդունելութիւն մը ըրաւ իրենց և Ա-
պրիլ 20ին թագաժառանգ իշխանը մեծ շքով ընդունե-
ցաւ Ս. Պատրիկի ասպետութիւնը։ Խնջոյից ժամանակ
խօսեցաւ թագուհւոյն ունեցած սիրոյ վրայ առ Իոլան-
դացիս և Ապրիլ 26ին դարձաւ ի Լոնդրա։

Մայիս 4ի խորհրդարանի գումարման, վիճաբանու-
թիւնը սկսաւ Իոլանդիոյ եկեղեցւոյն վրայ։ Պ. Դիզրաէլի
ոտք ելաւ և նախ ծանոյց, անգղիացի սահմանադրական
անկեղծութեամբ, որ ներկայ խորհրդարանը ընտրուած
ըլլալով ընդդիմակացից յիշխանութեան եղած ժամանակ,
զարմանք չէր հակառակ քուէարկութիւններ ունենալ. և
ըստ ինքեան լորդ Դէրբի պէտք էր զայն լուծած ըլլար
իշխանութեան հասած առենը։ Այսու հանդերձ ինքը
ներկայացուցած էր առ թագուհին իր հրաժարականը և
Նորին Վեհափառութիւնը չէր ընդունած, իրաւունք տա-

լով լուծելու խորհրդարանը, երբ վարչութիւնը կարեւոր դատի։ Այդ հզօր պատճառաբանութեամբ ջանաց ցուցընել եկեղեցին պետութենէն զատելու վնասքը. այսպէս ստեղծելով « իշխանութիւն յիշխանութեան » և այսպէս ազատութիւն տալով շատ մը հերձուածներու և կռիւներու։ Արդ երեսփոխանք իրենց ընտրութեան ծրագրին մէջ չունէին այդ մասը, որով սահմանադրական չէր առաջարկութիւնը և քուէարկութիւնը։ Դարձեալ կանխապէս հարկ էր ընտրութեան բարենորոգումը կարգադրել։ Սակայն Պ. Դիզրաէլիի պատճառաբանութիւնք ազդեցութիւն մը չունեցան մեծամասնութեան վրայ, որ Մայիս 7ի գումարման համաձայն ծափահարութեամբ առանց քուէարկութեան ընդունեցաւ երկրորդ յօդուածը և նաեւ երրորդ յօդուածը, որով կ'առաջարկուէր ուղերձ մը առ թագուհին առ ժամս խորհրդարանի տրամադրութեան ներքեւ դնել Իռլանդայի պաշտօնական եկեղեցւոյն գոյքը։ Պահպանողական երեսփոխան մը առաջարկեց դադրեցնել նաեւ Մէյնութի կաթոլիկ դպրոցին թոշակը, քանի որ կը դադրէին պաշտօնական եկեղեցւոյ թոշակք։ Խորհրդարանը ընդունեցաւ հաւասարութեան համար։

Գլադստոնի օրէնքին յաջող ընթերցումը։

Ըստ երրորդ յօդուածին Ուղերձը փութով գրուեցաւ և ղրկուեցաւ առ թագուհին, որ խղճամիտ սահմանադրական իշխող, յանձնեց խորհրդարանի « իր իմաստութեամբը կանոնադրել, առանց նկատի առնլու թագին իրաւունքները »։ Այն ատեն Անգղիոյ և Իռլանդիոյ բոլոր անգղիական արքեպիսկոպոսունք և եպիսկոպոսունք աղերս մը ուղղեցին առ թագուհին խնդրելով որ ինքը պաշտպան կենայ սպառնացեալ եկեղեցւոյ։ Թագուհին շնորհակալ եղաւ իրենց հաւատարմութեան զգացումներուն, աւելցնելով որ ինքը վստահ էր խորհրդարանին արդարութեան վրայ ի պահպանութիւն ժողովրդեան իրաւանց։ Բարձր կղերը բիւրաւոր անձանց հաւաքումն գումարեց, որուն մասնակցեցան պետութեան անձինք անգամ, բողոքելու Գլադստոնի առաջարկներուն դէմ։ Ազատական կուսակցութիւնք եւս մեծագոյն հաւաքում

մը գումարեցին ի Նպաստ՝ և շատ ճառախօսութիւնք եղան։

Նոր ընտրութիւնք։

Գլադստոնի քուէարկեալ առաջարկութիւնք անմիջապէս ղրկուեցան լորդերուն խորհրդարանը, որ զայն մերժեց 95 քուէից առաւելութեամբ։ Այն ատեն վարչութիւնը իր սահմանադրական իրաւունքով լուծեց խորհրդարանը և նոր ընտրութիւնք եղան Նոյեմբերի մէջ։ Ընտրողք ըմբռնած էին որ պայքարն էր ընդ մէջ պահպանողութեան և ազատականութեան և ստուար մեծամասնութիւն մը քուէն տուաւ ազատականաց։ Պ. Դիզրաէլի իր կողմնակցութեան նուազելուն վրայ, չուզեց ներկայանալ խորհրդարանին իբրեւ գլուխ վարչութեան և տուաւ հրաժարականը։

Դիզրաէլի Պաշտօնարանին անկումը։

11. — Թագուհին անմիջապէս կանչեց զՊ. Գլադստոն նոր վարչութիւնը կազմելու, որուն մէջ մտաւ Պ. Բրայդ՝ իբրեւ պաշտօնեայ Վաճառականութեան, լորդ Գրանվիլ՝ Դաղթականութեան, լորդ Կլարէնդոն Արտաքին Գործոց, Արգայլի դուքսը պաշտօնեայ Հնդկաստանի, Պ. Կարվէլ՝ Պատերազմի, Պ. Լայարդ՝ Հասարակաց Աշխատութեան։ Ելեւմտից պաշտօնէութիւնը առաւ ինքնին Գլադստոն։ Պաշտօնարանը առաջին անգամ ներկայացաւ խորհրդարանին Դեկտեմբեր 10ին՝ նախագահին և դիւանի ընտրութեանց համար։ Իսկ գումարմունք սկսան Փետրուար 16ին։ Թագի ճառը ծանոյց որ կարեւոր եղած էր Իռլանդիոյ համար եկեղեցական օրէնք մը և «Թագուհին վստահ էր խորհրդարանի իմաստութեան և արդարութեան վրայ»։

Գլադստոն Պաշտօնարան։

1869

Շատ երկար կ'ըլլար թէ ուզէինք պատմել Մարտ 1ին խորհրդարանի մէջ վիճաբանութիւնքը Իռլանդիոյ նիւթին նկատմամբ և Պ. Գլադստոնի պատասխանը որ երեք ու կէս ժամ տեւեց և անգլիական խորհրդարանի բեմախօսութեանց գլուխ գործոցներէն մին համարուած է։ Նոյն իսկ Պ. Դիզրաէլի խնդակցեցաւ հետը, առանց սակայն կարծիքը փոխելու։ Պ. Գլադստոն ի պատմութենէ ցոյց ուց Անգլիոյ անիրաւութիւնքը առ Իռլանդա, որուն ժողովուրդը անհամեմատ մեծամասնութեամբ կաթոլիկ է։ Թիւերով մանր բացատրեց պաշտօնական եկե-

ղեցոյն վիճակը։ «Անգլիական եկեղեցին, ըսաւ, յիռ-
լանդա իր 770,000 հետեւողաց համար կ'ընդունի քսան
միլիոն ֆրանք. երիցական եկեղեցին իր 524,000 ան-
ձանց համար կը ստանայ 1,064,075 ֆրանք. իսկ կա-
թոլիկ եկեղեցին զոր կը կազմեն Իռլանդիոյ չորս մի-
լիոն բնակիչք, կ'ընդունի միայն 659,000 ֆրանք, յո-
րոց 600,000 Մէյնութի վարժարանը։ Այսպէս ան-
գլեացի պաշտօնական եկեղեցին իւրաքանչիւր անհատի
համար կ'ընդունի 28 ֆրանք և 57 հարիւրեակ, մինչ
իւրաքանչիւր կաթոլիկի 15 հարիւրեակ չ'ըլլար»։
Գլադստոն լմնցուց իր խօսքը առաջարկելով նախ՝ 1. Ան-
միջապէս ընդունուի օրէնքը, 2. Որ գործադրութիւնը
սկսի 1871ի Յունուար 1էն։ 3. Սահմանուի արդար գոր-
ծածումն պաշտօնական եկեղեցւոյն գոյքերէն եկած եկա-
մուտներուն։ Գլադստոնի խօսքը լմնալուն շառաչալից
ծափահարութիւնք ողջունեցին զայն. իրեն յաջորդեց ի
բեմը Պ. Դիզրաէլի, գովեց իր հակառակորդին պեր-
ճախօսութիւնը, բայց շեշտեց եկեղեցւոյ և պետութեան
բաժանման անտեղութեանց վրայ։ Մարտ 18ի, 19ի և
20ի գումարումներու մէջ խօսեցան երկու կողմանէ մե-
ծամեծ հռետորներ։ Մարտ 22ին Պ. Ռոսունտըլ Պամբը
բացատրեց որ թէ նոյն իսկ քուէարկուէր յիռլանդիա
բաժանումը ընդ եկեղեցի և ընդ պետութիւն, եկեղե-
ցւոյն մինչեւ այն ատեն ունեցած գոյքերը պէտք էին
յարգուիլ իբր սեպհականութիւնք և մնային անգլիական
եկեղեցւոյ և հովիւներուն։ Գլադստոն բացատրեց որ
հակասական էր այդ իրաւունքը այն օրուընէ որ բա-
ժանումը գոյանար։ Սակայն Գլադստոնի ամենէն մեծ
պատերազմը եղաւ Մարտ 23էն 24ի գիշերը, յորում
պահպանողականք Պ. Հարտի բերնով առաջարկեցին
օրէնքին քուէարկութիւնը յետաձգել վեց ամիս։ Կէս գի-
շեր անցեր էր երբ Պ. Հարտի, երբեմն պաշտօնեայ Ար-
տաքին Դործոց Դիզրաէլի պաշտօնարանին, լմնցուց իր
խօսքը և Գլադստոն միշտ անխոնջ դիմեց բեմը և ժամը
առաւօտեան երկու և քառորդ էր երբ իր հմայիչ խօսքը
վերջացուց ցուցընելով խորհրդարանին ժամացոյցը և

մատնանիշ ընելով որ «Նայեցէք, վասնզի Իռլանդիոյ պաշտօնական եկեղեցւոյն վայրկեանները համրուած են»։ Ժամը 2.20ին սկսաւ քուէարկութիւնը, ոչ ոք քուն և յոգնութիւն կը մտածէր, յուզուած էր խորհրդարանը, ամենայն ոք անհամբեր քուէարկութեան ելքին կը սպասէր և ժամը 3ին հրատարակուեցաւ արդիւնքը։ Ի նպաստ կ'ունենար 370 քուէ ընդդէմ 252 քուէից. որով պաշտօնարանը յաղթեր էր 118 քուէիւք։ Գլադստոն անմիջապէս ծանոյց որ կը հրաւիրէր զխորհրդարանը Ապրիլ 15ի, ընդհանուր ցանձնաժողովի մը ձեւացնելու և վիճելու օրէնքին 63 յօդուածներուն վրայ, որոնք պիտի ղրկուէին լորդերու խորհրդարանին։ Ընդդիմակացք քուէարկութիւնքը երկարաձգելու համար, ամեն մասի կը ջանային յաւելուած մը առաջարկել։ Գլադստոն համառօտեց առաջարկելով ամբողջովին քուէարկութիւն և Հասարակութեանց խորհրդարանը ընդունեցաւ 123 քուէից առաւելութեամբ։

Վերջնական քուէարկութիւն Իռլանդա պաշտօնական եկեղեցւոյ ջնջուելուն։

Կը կարծուէր որ օրէնքը մեծ ընդդիմութիւն գտնէ լորդերու խորհրդարանին մէջ և մինչեւ նաւակոծի իսկ, սակայն ունեցաւ 179 քուէ, ընդդէմ 146 քուէից և

1870 Յուլիս 26ին Վիկտորիա թագուհին ստորագրեց «Իռլանդա պաշտօնական եկեղեցւոյն ջնջուիլը»։

Աւելորդ է նկարագրել անգլիական եկեղեցւոյն զայրոյթը և յուզումը այս օրէնքին դէմ։ Մոլեգին ընդդիմախօսութիւնք եղան յԱնգղիա ամեն կողմ թէ ի հրապարակի թէ տաճարաց բեմերէն. Գլադստոնի ամեն նախատինք տրուեցաւ։ Ոմանք կ'ամբաստանէին մինչեւ իսկ զթագուհին որ պէտք էր յանձն առնուլ ամեն վրտանգ, քան թողուլ որ իր աչաց առջեւ ջնջուի Իռլանդա «հայրենական եկեղեցին»։ Իքսիթիր Հալի մէջ հսկայ հաւաքում մը եղաւ, յորում տրուեցան Գլադստոնի «մատնիչ իր թագուհւոյն, հայրենեացը և իր Աստուծոյն» բառերը. պատուելի ազնուական մը նկարագրեց զվարչութիւնը «Պաշտօնարան աւազակաց»։ Իսկայն այս յուզումները հաստատուն ազդեցութիւն մը չունեցան ժողովրդեան մեծամասնութեան վրայ և քիչ

քիչ մոռցուեցան ընդդիմութիւնք նոր օրէնքին դէմ, որ պիտի սկսէր գործադրուիլ 1871ի Յունուար 1ին[1]։

Մահ լորդ Դէրբիի։

12· — Լորդերուն խորհրդարանին մէջ Յուլիս 17ի քուէարկութեան ժամանակ լորդ Դէրբի, որ իբր պահպանողական ընդդիմակաց՝ եռանդեամբ Գլադստոնի օրէնքին դէմ խօսեր էր, լմնցուցեր էր իր ճառը ըսելով. «Ծեր եմ, իմ պաշտօնական կեանքս ամբողջովին փակուած է, քաղաքական կեանքս ալ ահա կը փակուի և ըստ բնութեան օրինաց բնական կեանքս ալ երկար չէ»։ Երեք ամիս վերջը, Հոկտեմբեր 23ին կը մեռնէր 71ամեայ, պահպանողական կուսակցութեան նշանաւոր առաջնորդներէն, և վերջին ժամանակաց վեհանձն և ազնուական դէմքերէն մին, որուն քաղցր պերճախօսութիւնը երկար ժամանակ հիացուցեր էր երկու խորհրդարանքն ալ։ Լորդ Դէրբի վերջինն կը համարուի հին պահպանողութեան. իր յաջորդք ինչ ինչ բաներու մէջ բռնադատուեցան ազատականաց մօտենալ։

---

1. «Գլադստոն, ինչպէս Անգղիոյ ամէն մեծ քաղաքագէտները, դասական բարձր ուսումն ըրած էր։ Ովրատիոս և Վիրգիլիոս հաւասարապէս կ'ընթանան իր հաշիւներուն հետ։ 1858ին Հոմերոսի վրայ լի հմտութեամբ երեք հատոր հրատարակած է, զոր տասը տարի վերջը կրկին տպագրեց Էրիտասարդութիւն յԱխայիի հմայիչ տիաղոսով։ Իր Ահա Աշդ գրուածքը բոլոր Անգղիոյ մէջ շատաչ ունեցաւ և այն առթիւ յօդուած մը գրած է, յորում կը շնչէ ամենէն եռանդուն և սուրբ հաւատքը։ Որով Գլադստոն յիսլանդա Անգղիական եկեղեցին կործանելը անկրօնութեան համար չէր ընէր. այլ համոզուած էր որ ֆէնէանները յաղթանակելու համար աւելի արդարութիւն պէտք էր քան զօրութիւն»։ Ֆրէօրի Պատմ. Անգղիոյ Գլ. Իե. Տպ. 1893։ Նշանաւոր է տարիներ վերջ առ Ս. Կոյսն երգած քերթուածը։

ԳԼՈՒԽ Դ.

ՀՈՎՎՄԱՑ ՎԻՃԱԿ ԵՒ ԳԱՐԻԲԱԼԴԻ

1. Իտալիոյ միութիւնը և հակառակ յուզմունքներ ի Սիկիլիա — Նուաճումն. — 2. Գարիբալդեանց և ազատականաց դիտմունքը Հռովմայ նկատմամբ. — 3. Սիկլոզոի պաշտօնարանին հակառակութիւնը. Խօսարանին լուծումը. Նոր ընտրութիւնք — Խատտացցի պաշտօնարան. — 4. Գարիբալդի կը շրջի յուզելու գիտալիա, ընդդէմ Հռովմայ — Կալանաւորումը. — փախուստը. — 5. Մոնտէռոտոնդոյի գուպարածը. Հռովմայ մէջ փորձ մը. — 6. Գաղղիոյ միջամտութիւնը. — 7. Մենտանայի պատերազմը. Գարիբալդեանց յաղթութիւը — Գարիբալդիի կալանաւորումը. — 8. Գաղղիացի զօրքը ի Զիվիտա Վէկկիա. — 9. Թագաւորազուն իշխանաց ամուսնութիւնքը։

Իտալիոյ միութեան հակառակ յուզմունքներ ի Սիկիլիա։

1. — Իտալիա որչափ որ ալ 1866ի պատերազմէն յաղթական չէր ելած, այսու հանդերձ Պրուսիոյ հետ դաշնակցութիւնը և Նապոլէոն Գ.ի մշտատեւ բարեկամութիւնը շահաւոր արդիւնք մը բերեր էին իրեն և Վենետիկն ալ մտեր էր միութեան մէջ։ Սակայն հիւսիսային կողմը ասոնք պատահած ժամանակ, հարաւային կողմը հակառակ իմաստով ոտք ելեր էր և Վենետկոյ միութիւնը տօնուած ատեն, արդէն Սիկիլիոյ մէջ միութեան դէմ ապստամբութիւն ծագեր էր։ 1866ի Սեպտեմբեր 16ին առաւօտը Պալէրմօ քաղաքը լեցուած էր զինուած ամբոխով մը, որուն թիւը մինչեւ 20000ի կը հասնէր որոնք «կեցցէ Հասարակապետութիւն» և միութեան դէմ գոչելով, նախ տիրեցին ոստիկանու-

թեան պալատին և անկէ դիմեցին բանտը 1400 կալանաւորքը ազատելու։ Քաղաքը 2000 զինուոր միայն ունէր, որոնք Տորէլլի քաղաքապետին և մարգիզն դի Ռուդինի քաղաքագլխին հետ ապաւինեցան թագաւորական պալատը։ Ապստամբք աւարառութիւն սկսան. անոնց հետ միացաւ նաեւ քաղաքացի ամբոխը և քաղաքը մնաց անիշխանութեան մէջ։ Ապստամբացմէ ոմանք զինեալ մտան Լինգուակլոսսա իշխանին պալատը և գծերունի իշխանը բռնի նախագահ անուանեցին Առժամանակեայ վարչութեան մը։ Քաղաքացւոց մաս մը որոնց գլուխ անցաւ դի Ռուդինի քաղաքագլուխը, կրուեցան աւարառութեանց դէմ առնլու, այսու հանդերձ Սեպտեմբեր 19ը և 20ը ահաւոր օրեր եղան Պալէրմոյի համար. ապստամբք այրեցին դի Ռուդինիի անձնական պալատը, աւերեցին զինուորական գրատունը և անոր պահապանքը սպաննեցին, խողխողեցին 28 արքունի զինակիրք և ինչ զինուորի որ հանդիպեցան։

Ֆիրէնցէի վարչութիւնը անմիջապէս Անգոնայէ, Լիվոռնոյէ և Ճենովայէ նաւատորմիղ մը ղրկեց ի Սիկիլիա 20,000 զինուորօք, և զզօրավարն Ռաֆաէլլո Կադորնա արտասովոր թագաւորական գործակատար անուանեց լիովին իշխանութեամբ։ Կադորնայի բանակին յարձակումը սկսաւ 21 Հոկտեմբերին և տեւեց երկու օր։ Ապստամբք ինչպէս եկեր էին այնպէս ալ փախան Կուսակցութիւն։ լեռները։ Զօրավարն Կադորնա զՊալէրմօ պաշարման վիճակի մէջ դրաւ, ցրուեց ազգային պահապանքը որոնք ապստամբաց կողմը բռներ էին։ Քաղաքապետը և ոստիկանութեան գլուխը Ֆիրէնցէ կանչուեցան բացատրութիւն տալու և դի Ռուդինի մարգիզին զինուորական արժանեաց ոսկի միտալ տրուեցաւ և մեծ սպայութիւն Սան Մավրիցիո և Լաձծարո կարգին։ Պետութիւնը չուզեց ըմբռնել որ այս ապստամբութեան պատճառը Սիկիլիոյ յետին աղքատութիւնն էր և տրոց անտանելի առաւելութիւնը։ Ինչպէս այս անգամ ուրիշ անգամներ ալ յանցանքը ձգեց Բուրբոնեանց կուսակիցներու և բարձրաստիճան եկեղեցականաց վրայ, որոնք նոր վարչու-

թեան համակրութիւն ցոյց տուած չէին։ Քաղաքացիներէն հազարէն աւելի անձինք բանտարկուեցան, յորս և եկեղեցականք, բայց մօտ 700 անպարտ արձկուեցան և թագաւորն Վիկտոր Էմանուէլ իր երկրորդ զաւակը, Ամէդէօ իշխանը, ամուսնութենէն վերջը այցելութեան ղրկեց ի Սիկիլիա. այսպէս արտաքին հանդէսներով կարծելով մոռցնել տալ իր հարաւային ժողովրդոց չքաւորութիւնը, որ միշտ գիրենք տժգոհ կացութեան մէջ պահեց նկատմամբ վարչութեան։

Գարիբալ դեանց և ազատականաց դիտմունքը Հռովմայ նկատմամբ։

2. — Սիկիլիոյ ապստամբութեան նուաճուելէն քիչ օր վերջը Նոյեմբեր 7ին Վիկտոր Էմանուէլ իր հանդիսաւոր մուտքը ըրաւ ի Վենետիկ, ժողովրդեան բիւրաւոր խանդավառ և արտասուալից կէցցէներուն մէջ[1]։ Յետոյ այցելելով վենետկեան ուրիշ քաղաքներ, Նոյեմբեր 21ին դարձաւ ի Ֆիրէնցէ և Դեկտեմբեր 15ին բացաւ խօսարանը անմիջապէս գոչելով թագի ճառին սկիզբը. «Վերջապէս հայրենիքը ազատ է ամեն օտար տիրապետութիւններէ։ Ազգը վստահացաւ իմ վրաս և ես վստահացայ նորա վրայ։ Նոյն իսկ Գաղղիոյ վարչութիւնը հաւատարիմ Սեպտեմբերի (1864) դաշանց Հռովմէն յետս կը կոչէ իր զինուորքը» և կը լմնցնէր խօսքը որ՝ «Յարգող իր նախնեաց կրօնից, որ է միանգամայն կրօնք Իտալիոյ մեծամասնութեան, մի և նոյն միջոց Սահմանադրութեան ազատ սկզբանց վրայ վստահ, ապահով էր որ անոր անկեղծ և ընդարձակ գործադրութեամբ պիտի վերնային եկեղեցւոյ և պետութեան մէջ եղած հին տարաձայնութիւնք»։

Վիկտոր Էմանուէլի խօսքէն կը կարծուէր որ Վենետկոյ միութեամբ, կատարուած էր Իտալիոյ միու-

---

1. Վիկտոր Էմանուէլ ուզելով պատուել զՎենետիկ, անոր նշանաւոր զաւակը՝ Պալէոքապա երկրաչափ–ջրաբաշխ և եռանդուն հայրենասէր, թէպէտ կուրացեալ, իրեն արենակից ըրաւ, տալով անոր Անունցիադա արքայական կարգը։ Վենետիկ իրեն սեղանին մասնակցեցան կարդինալն Տրէվիզանատո պատրիարք Վենետկոյ, Ճոն Ռոսսոլ, Իտալիոյ հին բարեկամը և աւստրիացի Մէօրինկ զօրավարը որ Աւստրիոյ կողմանէ պաշտօնապէս յանձներ էր զՎենետիկ։

թիւնը և այլ եւս օտար իշխանութիւն մը չկար յիտալիա, որով թէ Քահանայապետը և թէ իր վարչութիւնը և զայն կազմողք օտարք չէին։ Բայց Կարիբալդեանք և ազատականք այսպէս չէին համարեր. անոնց համար հարկ էր վերցնել Քահանայապետին ժամանակաւոր, և թէ կարելի էր, հոգեւոր իշխանութիւնն ալ, որովհետեւ այս նպատակին յաջողութեան համար չէին միայն իտալացի ազատականք և կաթոլիկութեան կամ կրօնքի հակառակողք, այլ և ամեն ազգի տարբեր կրօնք ունեցողք և կամ անկրօնք այս յուզման մասնակից էին. և ամեն կողմանէ Հռովմ գաղտ նուիրակներ եկած էին զժողովուրդը ապստամբեցնելու Քահանայապետին վարչութեան դէմ։ Նոյն ոգիները կային նաեւ խօսարանին մէջ և ի զուր Ռիկազոլի, նախագահ պաշտօնարանին խոհեմութիւն կը քարոզէր ազատականաց։ Իրեն համամիտ էր նաեւ Վիկտոր Էմանուէլ որ մանաւանդ զանազան եկեղեցական խնդրոց համար մասնաւոր նուիրակ ղրկած էր առ Պիոս Թ և ուղղակի իսկ ըրած էր գրութիւնք, յորս լիովին գոհացումն գտեր էր և ճանչցեր էր Քահանայապետին հայրական սիրտը[1]։ Վիկտոր Էմանուէլ կավուր, Ռիկազոլի, Վիսկոնտի Վենոստա և իտալացի մեծ մտքեր, Հռովմայ խնդիրը համազգային խնդիր նկատած էին որ երբէք չէր կրնար վերջանալ զՀռովմ վշտացնելով. այսպէս բանալով մշտամնաց վէրք Իտալիոյ մարմնոյն, մինչ միաբան համաձայնութիւնը յարգելով եկեղեցւոյ իրաւունքները հսկայապէս պիտի մեծացնէր զիտալիա։

Ռիկազոլի պաշտօնարանին ընդդիմութիւնը։

3. — Յունուար 17ի (1867) խօսարանի մէջ կոմսն Շիալոյա Ելեւմտից պաշտօնեայ և Արդարութեան պաշտօնեայն Բորկարտի՝ օրէնք մը առաջարկեցին Եկեղեցւոյ ազատութեան և եկեղեցական գրաւուած ստացուածոց կարգադրութեան նկատմամբ։ Խորհրդարանի մէջ մե-

1. Վկայած է Վիկտոր Էմանուէլի կենաց պաշտօնական պատմիչը. Մասսարի, նշանաւոր կրիչ և քաղաքագէտ։ Գլ. ԶԸ։

ծամանութիւն մը այս օրէնքը Նապոլէոն Դ.ի դրդմանէն համարեցաւ։ Վիճաբանութեան մէջ ազատական երեսփոխանք բողոքեցին ընդդէմ պաշտօնարանին որովհետեւ արգիլեր էր վենետկեան գաւառաց մէջ այս օրէնքին դէմ գումարուելիք հաւաքում մը և խափաներ էր «Հռովմայ ազատութեան» նկատմամբ ընկերութիւններ։ Պաշտօնարանը հաստատուն մնաց իր առաջարկութեան վրայ և հակառակ քուէ ընդունելով, անմիջապէս հրաժարականը ներկայացուց առ թագաւորը։ Վիկտոր Իմանուէլ չ'ընդունեցաւ հրաժարականը և խօսարանը լուծեց։ Անմիջապէս Գարիբալդի ելաւ պտտելու Իտալիոյ հիւսիսային գաւառներ, ամէն տեղ Հռովմայ դէմ քարոզելով և յորդորելով որ պաշտօնարանի հակառակող երեսփոխաններ ղրկեն ի Ֆիրէնցէ։ Ընտրութիւնք եղան Մարտ 22ին և դուրս եկաւ խօսարան մը առանց յայտնի մեծամասնութեան, որով Շիալոյա և Բորկատի պաշտօնեայք, որոնց օրէնքները ունեցեր էին հակառակ քուէարկութիւնը, հրաժարեցան պաշտօննէն, համարելով այսպէս դիւրընկնել և հաստատուն ընել պաշտօնարանը։ Սակայն Ռիկազոլի չյաջողեցաւ մեծամասնութիւն մը կազմելու և հրաժարականը տուաւ թագաւորին որ նոր պաշտօնարան կազմելու համար կոչեց զՄէնաբրէա զօրավարը և Մէնաբրէա յանձն առաւ պայմանաւ որ իրեն ընկեր ըլլայ Ռատացցի։ Այն օրերը Մէնաբրէայի որդին մեռնելով, իսպառ հրաժարեցաւ պաշտօնարանը կազմելէ և թագաւորը կանչեց զՌատացցի որ կազմեց պաշտօնարանը՝ ինքն ըլլալով նախագահ միանգամայն պաշտօնեայ Ներքին Գործոց. միւս պաշտօնէից մէջ նշանաւորքն էին Կոմսն Թաւն դի Ռէվէլ՝ Պատերազմի, Սերաստիանո Տէքիո վենետոր՝ Կրօնից, Կոպպինո՝ Հասարակաց Կրթութեան, Ֆէրրարա՝ Ելեւմտից, Կոմսն Պոմպէօ Կամբէլլօ՝ մատենագիր և երբեմն պաշտօնեայ Պիոս Թի, Արտաքին Գործոց։ Այս պաշտօնարանին մասնակցելու եթէ Վիկտոր Իմանուէլ և եթէ Ռատացցի ջանացեր էին համոզել զՎիսկոնտի Վենոստա, բայց նա հրաժարեր էր ազնուական նամակով մը, չունենալով պաշտօնարանին մէջ իրեն գաղափարակիցներ։

Նոր ընտրութիւնք։

Ռատացցի պաշտօնարան։

4. — Հազիւ պաշտօնարանը ներկայացեր էր խօսարանին, Ֆէրրարի երեսփոխանը հարցուց թէ ի՞նչ էր պաշտօնարանին միտքը Հռովմայ իսկզբոյն նկատմամբ։ Խատացցի պատասխանեց որ «Մենք ունինք դաշինքներ, զորս պէտք է պահենք անկեղծութեամբ»։ Թէպէտ այս խօսքը ընդունուեցաւ ծափահարութեամբք, բայց խօսարանէն դուրս աւելի գրգիռ մը եղաւ Գարիբալդեանց՝ յայտնապէս բռնի միջոցներու դիմելու, գրգռելու զժողովուրդը և զէնքով մտնելու Հռովմայ սահմանքը, քանի որ վարչութիւնը հակառակ կ'երեւար Հռովմայ վիճակին դպչելու։ Գարիբալդի արդէն գնացեր էր ի Վենետիկ և հոն Ս. Մարկոսի հրապարակին մէջ պանդոկի մը պատուհանէն գոչեր էր խուռներամ ամբոխին առջեւ ընդդէմ Կրօնքի և Քահանայապետին[1]. անկէ անցեր էր վենետկեան ուրիշ քաղաքներ, քարոզելով որ հարկ էր տիրել Հռովմայ։ Յետոյ հրաւիրուեցաւ ի Ճինեվրա ուր Խաղաղութեան դևսպանաժողով գումարուած էր, հոն եւս կրկնեց իր նախատինքները ընդդէմ Պապութեան. անկէ անցաւ Ռէլճիրատէ և հոն Կայրոլիի տան պատուհանէն պոռաց որ «Պէտք էր դիմել ի Հռովմ», յետոյ անցաւ Ֆիրէնցէ, Արէցցо և ուրիշ քաղաքներ, ամեն կողմ քարոզելով կամաւոր զինուորութիւն ընդդէմ Հռովմայ և միանգամայն խօսելով նոր տեսակ կրօնքի մը վրայ, յառաջ եկած բնական օրէնքէն, որուն կ'ուզէր հիմնադիրը համարուիլ։ Բայց կը համարէր որ ամենէն առաջ պէտք էր ջնջել Պապին ժամանակաւոր իշխանութիւնը[2]։

Գարիբալդիի շրջանը յուզելու գիտալիա ընդդէմ Հռովմայ։

---

1. Գարիբալդիի այս խօսակցութիւնը որ մեծ գոհութիւն տուաւ Եւրոպիոյ անկրօնից՝ թէպէտ ականջալուր, անճահ կը համարիմ հոս կրկնել ամբողջ։ Հետաքրքիր բիւրաւոր բազմութիւն բռներ էր Ս. Մարկոսի հրապարակը, սակաւք ոմանք ծափահարողք։

2. Այն աստիճանի հասաւ կաթոլիկութեան դէմ հակառակութիւնը որ՝ ինքնիրեն «հաստատեց մկրտութիւն մը և իբրեւ հիմնադիր նոր կրօնքի մը մկրտեց երեխաներ ալ»։ Ուսուցիչն Ֆէդէլ Սավիо Պատմութիւն Ներկայ ժամանակաց Գլ. ԻԲ։

Գուէրցոնի իր քարտուղարը և կենսագիրը կ'ըսէ որ «Այս ճանապարհորդութեան մէջ խօսքերէն ալ աւելի անտեղի երեւցան իր գործերը։ Ար-

Եւրոպիոյ բովանդակ կաթոլիկ Պետութիւնք զայրացան Գարիբալդիի այս թողուած համարձակութեան վրայ։ Նապոլէոն Գ. իմացուց որ Տուլոնէն զինուոր կը ղրկէր կրկին գրաւելու զՀռովմ և պաշտպանելու ժամանակաւոր իշխանութիւնը։ Տագնապեցաւ և Իտալիոյ պաշտօնարանը. ծանուցագրով մը ապահովցուց Պետութիւնները որ պիտի չթողու ո՛ր և իցէ ձեռնարկ մը ընդդէմ Սեպտեմբերի դաշանց։ Եւ որովհետեւ Գարիբալդի չէր ուզեր հանդարտ կենալ, վարչութիւնը Արէցցոյի մօտ ի Սինալունկա զինքը կալանաւորեց և ղրկեց յԱղեքսանդրիա։ Բայց Գարիբալդի մտաւ հոն իբր յաղթանակաւ և Իտալիոյ ամէն կողմի ծայրայեղ ազատականք և Գարիբալդեանք շփոթներ հանեցին գոչելով «կեցցէ՛ Գարիբալդի, մա՛հ պաշտօնարանին»։ Վարչութիւնը խոստացաւ զինքը արձկելու եթէ հանդարտ քաշուի իր Կապրէրա կղզին։ Բայց Գարիբալդի պահանջեց կամ բանտարգելութիւն կամ ազատութիւն։ Պետութեան նուիրակը՝ Պէշէտտի, վարչութենէն նոր հրահանգներ ուզեր էր, որոց պատասխանը ուշանալով և խիթալով որ ժողովուրդը ապստամբութիւն մը հանէ, ազատ ձգեց զԳարիբալդի որ երկրորդ օրը յաղթանակաւ ձենովայի մէջ պտտելէն վերջը յանձն առաւ տէրութեան նաւով մը Կապրէրա քաշուելու։ Բայց հոն լսելով ազատականաց շարժմունքները դէպ ի Փահանայապետին երկիրներն, Հոկտեմբեր 14ին, ձկնորսի նաւակով մը ինքզինքը Մադդալենա ձգեց և անկէ Սարտենիա, ուսկից ծածուկ հասաւ ի Լիվոռնո և Հոկտեմբեր 20ին ի Ֆիրէնցէ և Ֆոլինիոյէն Գաղղիոյ դէմ հրատարակութիւն մը ընելով առ բոլոր

Կալանաւորամը, 1867 Սեպտ. 23։

դեօք բուռն եռանդն ունեցողներուն նման բռնուած խորհրդազգաց այլայլութենէ, կամ թէ համարելով որ Վատիկանէն ազատելու համար նոր կրոնական յեղափոխութիւն մը կարեւոր էր, և թերեւս մտքէն անցնելով որ այդ յեղափոխութեան սուրը ինքն էր. ինչ որ ըլլայ. ա՛լ չէր կրնար բերանը բանալ քաղաքական խօսք մը ըսելու, առանց իր շինած բնական օրէնքը մէջը խառնելու, քիչ շատ նման Ժան Ժաք Ռուսսոյի ստեղծածին, առանց քահանայի, առանց պաշտամունքի, առանց եկեղեցւոյ, և որ ըստ իրեն պիտի փրկէր ամբողջ մարդկութիւնը, բայց այն պայմանաւ որ այս փրկութիւնը Հռովմայ տիրելէն սկսէր»։ Գարիբալդի. Հտ. Բ. էջ 469։

իտալացիս, Հոկտեմբեր 22ին հասաւ ի Տէոնի ուր արդէն հաւաքուեր էին զինեալ գունդեր մտնելու Քահանայապետին սահմանները։

Մոնտէոտոնոտոցի գուպարածը։

5. — Հոկտեմբեր 17ին առաւօտ ազատական գունդեր որոնք իրենք զիրենք հռովմէական լեգէոնք անուանած էին, ընդ հրամանատարութեամբ Կէրէլլի զօրավարին, որ հրաժարելով կանոնաւոր զինուորութենէ անցեր էր զինեալ խումբերու գլուխ, տիրեցին Օրտէ քաղաքին, և կը յառաջէին Ֆրոսինոնէ գաւառին մէջ։ Այս միջոցիս էր երբ հասաւ Գարիբալտի և յետ խրախուսելու խումբերը իւր մեծարան ճարտարխօսութեամբ և նախատանօք ընդդէմ Քահանայապետաց իշխանութեան, հինգ հազար կամաւորօք տարածուեցաւ Մոնտէ Ռոտոնդոյի կողմերը։ Հոկտեմբեր 26ին և 27ին երկու կողմանք կռիւ սկսան, և Գարիբալդեանք ունեցան փոքր յաղթութիւն մը. Գարիբալդի հոչակեց զայն մասնաւոր հրատարակութեամբ մը։

Մոնտէ Ռոտոնդոյի տիրելէ վերջը գարիբալդեան գունդերը սկսան յառաջել դէպ ի Հռովմ և հասան ի կաշինօ Սան Կոլոմբօ, Հռովմէն վեց մղոն հեռու, ջանալով ոտք հանել ժողովուրդները և ժողովրդախումբ քուէարկութեամբ միանալ Իտալիոյ թագաւորութեան հետ։

Հռովմայ մէջ փորձ մը ապստամբութեան։

Մի և նոյն ժամանակ Հոկտեմբեր 22ին Հռովմայ մէջ գտնուած Գարիբալդեանք որոց գլխաւոր էին Պալլավիչինօ, Կրիսպի, Կայրոլի հրատարակութեամբ մը կը յորդորէին զժողովուրդը ապստամբութեան։ Քաղաքացւոց մաս մը վախէն խնդրեց որ քահանայապետական իշխանութիւնը օգնութեան գոչէ ընդդէմ Գարիբալդեանց Վիկտոր Էմանուէլի կանոնաւոր բանակը։ Ամբոխէն մաս մը գրգռեալ ազատականներէն, սկսաւ կռուիլ զինակրաց հետ Կոլոննա հրապարակին մէջ և ի Պորտա դէլ Պոպոլօ. յետոյ դիմեց Կապիտոլիոնի պահպան զօրաց վրայ, որոնք վանեցին յարձակողները. և թէպէտ մեռան երկու կողմանէ ալ քանի մը հոգի, սակայն ազատականք ցրուեցան։

Ի Հռովմ այս շփոթութիւնք պատահած ժամանակ, 75 երիտասարդ կամաւորք որոց գլուխն էր Ճիովաննի Կայրոլի փորձեցին գիշերանց Վիլլա Գլորիայէն մտնել ի Հռովմ։ Բայց վրայ հասան 300 քահանայապետական զինուորք և յետ մոլեգին կռուոյ մը ետ քաշուեցան թողլով մեռեալ 25 ազատականք յորս նաեւ Լնրիքօ Կայրոլի։ Քահանայապետական զինուորք չհալածեցին մնացեալքը և ետ քաշուեցան իրենց պահպանութեան տեղերը։

Գաղղիոյ միջամտութիւնը։

6. — Երբ Նապոլէոն Սեպտեմբեր 15ի դաշամբ խոստացեր էր Հռովմէն կանչելու գաղղիացի գունդերը, փոխադարձ ապահովութիւն ստացեր էր Վիկտոր Լմանուէլէ և Նոր Իտալիոյ վարչութենէն որ բնաւ Հռովմայ խնդիր չկար և որ և իցէ ազատականաց կողմանէ փորձ մը Հռովմայ վրայ անմիջապէս վարչութենէն պիտի ընկճուէր։ Երբ Հռովմայ դէմ առաջին յուզմունքները լսուեցան, անմիջապէս գաղղիացի հին ազնուական ցեղերէ կազմեալ լեգէոն մը, որոց կը հրամայէին կանոնաւոր բանակէն հրաժարեալ գնդապետներ, համբայ ելան Անտիբէն պատերազմելու ասպետական և կրօնական գաղափարօք Քահանայապետին պաշտպանութեան համար։ Այս լուրը տագնապեցուցեր էր Վիկտոր Լմանուէլի վարչութիւնը, որ ամեն ջանք ի գործ դրեր էր Եւրոպիոյ ցուցնելու, գոնէ արտաքսապէս, որ ինքը ազատականաց ըրածին դէմ էր։ Բայց երբ « կարմիր շապիկները» ինչպէս գաղղիացիք կը կոչէին զգարիբալդեանս, մտան Քահանայապետին հողերը, այն ատեն Նապոլէոն Գ համարեցաւ որ Իտալիա չէր պահեր Սեպտեմբեր 15ի դաշինքը և հրամայեց գաղղիացի ջոկատներուն որոնք, արդէն պատրաստ էին ի Տուլոն, մեկնելու ի Զիվիթավէկկիա Քահանայապետին պաշտպանութեան։ Ռատացցի պաշտօնարանը այսպիսի ծանր պարագայի մէջ հրաժարեցաւ Հոկտեմբեր 2ին. համարելով որ այս լուրը կեցընէ գաղղիացի բանակին մեկնելը և թագաւորը Զիալդինի զօրավարին յանձնեց նոր պաշտօնարանը կազմելու։ Սակայն Զիալդինի դժուարութեանց

հանդիպելով, օրեր անցան և ազատականաց խումբերը աւելի շատնալով սահմանագլխին վրայ, գաղղիացի նաւատորմիղը մեկնեցաւ դէպ ի Չիվիտավէկկիա։ Վիկտոր Իմանուէլ ըմբռնեց որ Իտալիոյ նոր կազմուած միութեան մեծ սպառնալիք մ՝էր գաղղիացի բանակը, կոչեց զՄէնաբրէա զօրավարը անմիջապէս պաշտօնարանը կազմելու, ինչպէս եղաւ իսկ. որուն մէջ պատերազմի պաշտօնեայ եղաւ զօրավարն Բէրտոլէ Վիալէ, և Արտաքին Գործոց Նոյն իսկ նախագահը՝ Մէնաբրէա։ Վիկտոր Իմանուէլ փութով հրատարակեց առ Ազգը որ «կամաւոր գունդեր, խարուած և գրգռուած կուսակցութենէ մը, առանց իմ հրամանիս և առանց վարչութեան հրամանին բռնաբարեր էին պետութեան սահմանները ինծմէ և իմ խորհրդարանէս վճռուած ըլլալով հաւասարապէս առ ամեն քաղաքացիս, յարգելու օրէնքները և համազգային դաշինքները։ Եւրոպա գիտէ որ մեր երկրին մօտ հողի մը վրայ բարձրացած դրօշակը, որուն վրայ գրուած է կաթողիկէ եկեղեցւոյ գլխուն հոգեւոր բարձրագոյն իշխանութեան ջնջումը, իմս չէ այն դրօշակը։ Այս յանդգնութիւնը ամենուս հայրենիքը ծանր վտանգի մէջ կը դնէ, և վրաս մեծ պարտք մը կը դնէ փրկելու մի և նոյն ժամանակ երկրիս պատիւը և չխառնելու միաբան երկու մէկ մէկէ բոլորովին տարբեր դատեր»։ Կը յաւելուր որ «Իտալիոյ կանոնաւոր գունդերը Գաղղիոյ գունդերուն հետ միաբան յարգել պիտի տային հաստատեալ դաշինքները»։ Մի և նոյն միջոց գրուեցաւ ի Պարիս առ դեսպանն Իտալիոյ Կոմսն Կոստանդին Նիգրա ամոքելու զկայսրը. ղրկուեցաւ նաև ի Պարիս զօրավարն Ալֆոնսօ Լամարմորա առ որ մեծ յարգանք ունէր Նապոլէոն Գ։

Պաշտօնարանը իրը կռուոյ մը դիմաց առնելու համար հրամայեր էր Իտալացի բանակին անցնելու սահմանագլուխը և մտնելու Եկեղեցւոյ վիճակը, սակայն այս բանիս դէմ բողոքեցին թէ Նապոլէոն Գ և թէ Քահանայապետին վարչութիւնը։

Մենտանայի պատերազմը։

7. — Գարիբալդի գուշակելով որ անհնար էր Հռովմայ վրայ յարձակում մը, ուզեց գրաւել Ապենինեանց ճամբան ի Նապոլի և Նոյեմբեր 3ին Մոնտէռոտոնդոյէն 5000 կամաւորօք դիմեց ի Մենտանա գիւղը ուր հանդիպեցաւ գաղղիացի և քահանայապետական բանակներուն. գաղղիացի գունդերուն կը հրամայէր զօրավարն դը Ֆայի որ Գարիբալդիի յառաջապահին վրայ ինկաւ։ Գարիբալդի իւր կամաւորաց ընտիր գունդերով ամրացաւ Մենտանայի մէջ, որոյ վրայ յարձակեցան երկու զուաֆ ջոկատներ և որսորդք[1]։ Գարիբալդեանք կը կռուէին մեծ արութեամբ։ Հասան պատերազմի դաշտին վրայ նաեւ Անտիբէն մեկնող գաղղիացի ազնուական լէգէոնները, որոնք նոր ուժով մը բաղխեցին զգարիբալդեանս։ Այն ատեն գարիբալդեանք թողին զՄենտանա և քաշուեցան ի Մոնտէռոտոնդոյ կորսնցնելով ընդ մեռեալ և ընդ վիրաւոր 600 կամաւորք։ Քահանայապետին զինուորներէն, որոնց կը հրամայէին Դէ Կուրտէն և Քանցլէր. մեռած էին 30 անձինք և 113 վիրաւորք. գաղղիացիներէն 12 մեռեալ և 36 վիրաւորք։ Այսքան գարիբալդեանց մահուան պատճառ Գաղղիացւոց զէնքերու անհամեմատ առաւելութիւնն էր և այս առաջին անգամ գաղղիացիք ի գործ կը դնէին շասփոյ հրացանը, և տխուր հռչակ մը առած է Ֆայի զօրավարին տեղեկագրոյն մէջ այն բացատրութիւնը որ «մեր շասփոները հրաշք գործեցին[2]»։

Գարիբալդեանց յաղթութիւնը։

Մենտանայի պարտութենէն վերջը Գարիբալդի Նոյեմ-

---

1. Իտալացի պաշտօնական գրիչք կը պնդեն որ Գարիբալդի միտք չունէր կռուելու և կ'ուզէր քաշուիլ ի Նապոլի, և գաղղիացի բանակը առանց արիւնահեղութեան զինքը կրնար վանած ըլլալ։

2. Վիկտոր Իմանուէլ գոչած է. «Ա՜հ այն շասփոները մահացու ծակեցին իմ՝ հօր մը և թագաւորի մը սիրտը. կարծես գնդակները կը յաշտեն մարմինս... հոս. (և կը ցուցներ կործքը)։ Կեանքիս մէջ ամենէն մեծ ցաւերէն մին եղած է». Մասսարի Գլ. ՀԸ։

Գրել տուած է առ Պէպոլի կոմսն որ ազգական էր Նապոլէոն Գ. կայսեր «վերջին պատահարք թմրեցուցին Իտալիոյ սրտին մէջ երախտագիտութեան զգացումները։ Գաղղիոյ հետ դաշնակցութիւնը, ալ տէրութեան ժեռք չէ. շասփօ հրացանը զայն մահացու վիրաւորեց ի Մենտանա։ Նոյ-

բեր 3ին կոռէզէէն խորհուրդ կու տար իր կամաւորնե-
րուն ցրուելու մինչեւ «գայ ժամանակ որ ազգը ին-
քնին զօրանայ, այդ կենսական խնդիրը վերջացնելու»։
Այդ հրաժարականէն վերջը, մտաւ երկաթուղի Լիվոռ-
նոյ երթալու, ուսկից պիտի մեկնէր, ըսած է, Կապրէ-
րա։ Սակայն պաշտօնարանը ուրիշ յաղգնութիւն մը եւս
խիթալով, համբան զինքը կալանաւորել տուաւ Ֆիլինէ
հասնելուն։ Գարիբալդի բողոքեց. բայց չորս զինակիրք
բռնի վերուցին և կայարանի սրահը տարին, իրեն հետ
կ'ընկերէր իր փեսայն Կանցիս։ Հոնկէ տարուեցաւ ի
Սպէցիա և ապա ի Ջենովա, ուր ժողովուրդը իրեն
խանդավառ ցուցմունքներ ըրաւ և ապա կալանաւոր
տարուեցաւ ի Վարինեան։

Գարիբալդիի կալանաւորումը։

Իսկ ի Մենտանա մնացեալ գարիբալտեանք ստի-
պուեցան պատերազմին երկրորդ օրը անձնատուր ըլլա-
լու, պայմանաւ որ քահանայապետին գերի չհամարուին
այլ սահմանագլուխք տարուին, հոն տրուին իրենց զէն-
քերը և ազատ մեկնին[1]։ Սակայն Ազգային խօսարանը
բացուելուն, մեծ եղաւ ազատականաց կողմանէ ամբաս-
տանութիւնը ընդդէմ պաշտօնարանին։ Խօսեցան զանա-
զան հռետորք պախարակելով զվարչութիւնը իր վախ-
կոտ և դատապարտելով Գարիբալդիի կալանաւորումը.
պաշտօնարանը ինքզինքը պաշտպանեց։ Ամենէն վերջ
Բոնքարինի երեսփոխանը առաջարկեց քուէարկել որ
հաւանելով իսկ պաշտօնարանին գործածին և Իտալիոյ
և Գաղղիոյ մէջ եղած դաշնակցութեան բերուած վնասին
վրայ ցաւելով հանդերձ, կը պնդէր Իտալիոյ ունեցած
իրաւունքը Հռովմայ վրայ։ Այս առաջարկը մերժուեցաւ
երկու քուէով միայն. 201 ընդդէմ 199ի. որով պաշտօ-
նարանը հրաժարեցաւ, բայց կրկին Մէնարրէա զօրա-
վարին յանձնուեցաւ նոր պաշտօնարանը կազմելու, որ
ամենափոքր փոփոխութեամբ ներկայացաւ խօսարանին
1867ի վերջերը։

---

1. Գարիբալդեանք իրենց ամեն տեղեկագիրներու մէջ մեծապէս գո-
ված են գաղղիացի սպայից ազնուական և ասպետական վարմունքը։

8. — Պաշտօնարանը թողուց որ Գարիբալդի ազատ մեկնի ի Կապրէրա և ներուին շնորհուեցաւ յանցաւորաց։ Իսկ գաղղիացի բանակը քիչ քիչ քաշուեցաւ դէպ ի ծովեզը, ուսկից մաս մը մտաւ Նաւերը՝ Գաղղիա երթալու և մաս մը իրրեւ պահանորդք մնաց ի Զիվիտա-վէկկիա և ի Վիտէրբո։ Գաղղիոյ խօսարանին մէջ ծանր բողոքներ եղած էին Իտալիոյ վարչութեան դէմ, որ այսպէս անհոգ եղեր էր Քահանայապետին երկիրներուն վրայ արշաւանքները խափանելու, և Թիէր գոչեր էր որ «Քահանայապետը պէտք է ազատ ըլլայ և թագաւոր», և Իուհէ վերջացուցեր էր իւր ճառախօսութիւնը հռչակելով որ «Իտալիա երբէք պիտի չտիրանայ Հռովմայ, երբէք Գաղղիա պիտի չկրնայ տանիլ որ իւր պատուոյն և կաթոլիկութեան այդ նախատինքը ըլլըցուի»։ Կղերականաց մասը այս առթով կը պահաջէր որ Քահանայապետին միւս առնուած երկիրներն ալ ետ դարձուին, սակայն Նապոլէոն Դ այդօրինակ մտածութիւն մը չունէր. չէր ուզեր մանաւանդ տհաճեցել զ Իտալիա, որուն միութեան համար այնքան աշխատեր էր։ Եւ սակայն Մենտանայի օրէն սկսած է հակակրութիւնը ընդ մէջ Գաղղիոյ և պաշտօնական Իտալիոյ. հակակրութիւն մը որ ունեցաւ յետոյ իր մեծամեծ հետեւանքները Պետութեանց դաշնակցութեանց մէջ։

Գաղղիացի զօրքը ի Զիվիտա վէկկիա։

Ամուսնութիւն թագաւորազուն իշխանք Ումբերտո և Մարկարիդա։

9. — Այս դէպքերէն վերջը պատահեցաւ Վիկտոր Էմանուէլի անդրանիկ որդւոյն Ումբէրտոյի ամուսնութիւնը Մարգարիդա իշխանուհւոյն հետ, որ էր դուստր հանգուցեալ Ֆէրտինանդոս Ճենովայի դքսին, եղբայր Վիկտոր Էմանուէլի։ Ումբէրտոս 24 տարուան էր իշխանուհին 18 տարուան։ Ազգակցութեան պատճառաւ, յետ նախ եկեղեցական հրամանքը ստանալու, ամուսնութիւնը կատարուեցաւ Տօրինոյի Ս. Յովհաննէս եկեղեցւոյն մէջ Գերապայծառ Ռիկկարդի արքեպիսկոպոսէն որ այս առթիւ ստացաւ Աննունցիատայի բարձր կարգը, ի ներկայութեան բովանդակ արքունի ընտանեաց։ Հոն գտնուեցաւ իշխանն Նապոլէոն և իր ամուսինը Կլոտիլդէ իշխանուհին, քոյր Ումբէրտոս իշխանին, նոյնպէս միւս

քոյրը՝ Մարիա Պիա՝ թագուհի Պորտուգալի, Ֆրէդէ-
րիկ Պրուսիոյ թագաժառանգ իշխանը և ուրիշ իշխա-
նական հրաւիրեալք։ Վիկտոր Էմանուէլ այս առթիւ
հաստատեց Իտալիոյ բոլոր ասպետական նոր կարգը։ Թէ
Ամբերտո և թէ Մարգարիտա մեծապէս սիրուած էին
ժողովրդէն, մին իր բարութեանը և արութեանը համար,
միւսը իր բարեպաշտութեան, ողորմածութեան, բարձր
կրթութեան և խոհականութեան համար։

Ամէդէօ իշխան։

Վիկտոր Էմանուէլի երկրորդ որդին Իշխանն Ամէ-
դէօ, դուքս Աօսդայի, տարի մը առաջ պսակաւեր էր
Իտալացի դքսական ցեղէ Պոցցո դէլլա Ջիստէրնա օ-
րիորդի մը հետ, որ 1869ի սկիզբը ունեցաւ արու
զաւակ մը որուն թագաւորը Էմանուէլ Ֆիլիբէրդո անունը
դրաւ. քանի մը ամիս վերջը Մարգարիտա իշխանուհին
եւս արու զաւակ մը ի լոյս տուաւ ի Նապոլի, որ կո-
չուեցաւ Վիկտոր Էմանուէլ Իշխան Նապոլիի։ Այս մի-
ջոցիս թագաւորը ծանր հիւանդ էր և իբր մահուան մը
պատրաստութիւն խոստովանեցաւ և կատարեց կրօնա-
կան գաղտ ամուսնութիւնը Միրաֆիորէ կոմսուհւոյն հետ,
Ադէլայիդէ թագուհին մեռած ըլլալով։ Այս հոգեւոր մխի-
թարութիւնք. այնպիսի «ողջաւէտ տպաւորութիւն մը
ունեցան վրան, որ անցուց ճգնաժամը և քիչ քիչ ա-
ղէկցաւ [1]»։

---

1. Մասսարի. կեանք եւ թագաւորութիւն Վիկտոր Էմանուէլի Գլ. ՀԸ։

ԳԼՈՒԽ Ե.

ՆԱՊՈԼԵՈՆ Գ-Ի ԱԶԱՏԱԿԱՆ ԿԱՑՍՐՈՒԹԻՒՆԸ

1. 1867ի Օրէնսդիր ժողովքը – Գերմանիոյ նկատմամբ խօսք. -- 2. Ցուցահանդէս համաշխարհական – Թագաւորք և իշխանք ի Պարիս. — 3. Դաւ ընդդէմ Աղեքսանդր Բ կայսեր. — 4. Սուլթան Աբդիւլ Ազիզ ի Պարիս. — 5. Ցուցահանդէսի փակումը – Կայսրութեան վիճակը 1868ին. -- 6. Օրէնսդիր՝ ժողովք 1868ի – Հռովմէական և Գերմանական խնդիրք. — 7. Դաստիարակութիւն երկրորդակարգ՝ աղջկանց համար. — 8. Օրէնսդիր ժողովք 1869ի – Նոր ընտրութիւնք երեսփոխանական. — 9. Ազատական կայսրութիւն – Էմիլ Օլիվիէ պաշտօնարան, — 10. Պիէր Բոնապարտի դատը. — 11. Դերակուտի Ատենավճիռը – Ժողովրդախումբ քուէարկութեամբ կայսրութիւն։

Օրէնսդիր ժողովք. – Գերմանիոյ նկատմամբ ճառախօսութիւնք. – 1867։

1. — Փետրուար 14ին Նապոլէոն Գ ինքնին բացաւ 1867ի նիստերը երկար ճառախօսութեամբ մը, յորում յետ սովորական յայտարարութեան որ՝ Գաղղիա հաշտ էր և բարեկամ ամեն Պետութեանց հետ, ջանաց մանաւանդ արդարացնել Գաղղիոյ քաղաքականութիւնը նկատմամբ Աւստրիա – Պրուսիական պատերազմին. «Արդէն, կ՚ըսէր, Նապոլէոն Ա ըսած է ի Ս. Հելինէ, որ յԵւրոպա հաւասարակշռութիւնը միայն մեծ ժողովրդոց դաշնակցութեամբք և կամ միացումներով կարելի էր պահպանել։ Այս գուշակութիւնը հարկ է որ կատարուի. 1866ի պատահարք տակաւին սկզբունք մ՚են։ Եւ սակայն մերձաւոր ազգաց ջանքերը, որպէս զի հաւաքեն իրենց ցրուեալ անդամները, չեն կարող

Գաղղիոյ նման միաձոյլ և անջնջելի ժողովուրդ մը տագնապեցնել»։ Այսու հանդերձ կը յաւելուր, «մասնաւոր օրէնք մը պիտի ներկայացուի, որպէս զի առաւելուն մեր պաշտպանողական զօրութիւնք անվնասելի ըլլալու չափ»։

Կառավարութեան կողմնակից լրագիրք մեծ շառաչով իմացուցեր էին որ կայսրը ի նշան իւր ազատամիտ իղձերու երեսփոխանաց ժողովոյն մէջ կը հաստատէր ճառախօսութեան բեմը, որ 15 տարիէ վերցուեր էր։ Եւ արդարեւ փետրուար 14ի գումարման ամենայն ոք մեծ զարմացմամբ կը տեսնէր զայն։ Կար ուրիշ նորութիւն մ'ալ նիստերուն համար. փոխանակ ուղերձին, երեսփոխանք իրաւունք ունէին հարցաքանեալու և վիճելու։ Այս առթիւ թագաւորականք բողոքեցին որ շատ մը նամակներ կը բացուէին ի պաշտօնատեսից թղթատան, տեսնելու թէ արդեօք կը պարունակէին Շամբորի կոմսին շրջաբերականը։ Բայց նշանաւոր հարցը Թիէրինը եղաւ որ գրաւեց ամբողջ փետրուար 14ի, 15, 16 և 18ի գումարումները։ Թիէր գրաւիչ հմտութեամբ պարզեց թէ Գաղղիա ինչ քաղաքականութեամբ ի՜նչ դարէն ի վեր բռնած էր Եւրոպիոյ հաւասարակշռութիւնը, և թէ մեծամեծ միացմունք կամ դաշնակցութիւնք զԳաղղիա կարող էին երկրորդակարգ և մինչեւ երրորդակարգ պետութիւն մը ընել։ Պէտք էր փութով միանալ Անգղիոյ և Աւստրիոյ հետ, միացընել նաեւ փոքր Պետութիւնք և 120,000 բանակով մը Եւրոպիոյ խաղաղութիւնը կարգադրել։ Ի վերջոյ համբելով կայսրութեան բոլոր վրիպակները, աւելցուց որ «ա՛լ գործելու վրիպակ մը չէր մնար»։ Իրեն յաջորդեց բեմը Գառնիէ Պաժէս, որ պանծացուց գերմանական ժողովրդեան միութիւնը, զոր «Եղբայրական դաշն անուանեց, և որ փութով համակրութեան կապերով պիտի միանար Գաղղիոյ հետ»։ Նոյն իմաստով խօսեցաւ նաեւ Ոլիվիէ, որ դառնալով առ Թիէր շեշտեց. «Դու Պոցտամի նախասենեկաց աղմուկներուն մտիկ կ'ընես, ես ունկն կը դնեմ գերման ժողովրդեան սրտին մրմունջին»։ Ռուհէ ի

պատասխանի Թիէրի, երկայն ներբող մը խօսեցաւ կայսերական քաղաքականութեան վրայ, ուզեց բացատրել որ Գերմանիա երեք անկախ մասերու բաժնուած է, որոնք անհնար է թէ միասին Գաղղիոյ ապահովութեան[1]։ Եւ վերջացուց իւր խօսքը որ վարչութիւնը «Ինաւ վրիպակ մը ըրած չէր»։ Միւլ Ֆաւրը ծանր խօսքերով պատասխանեց Ռուհէի. և Թիէր պնդեց. իր նախկին բանաձեւութեանց վրայ աւելցնելով որ եթէ անհնար է կատարուած դէպքերը ոչնչացնել, գոնեայ հարկ էր դարման տանել նոր դաշնակցութեամբք, մանաւանդ Ռուսիոյ հետ։ Ռուհէ կրկին բեմն ելաւ, խօսեցաւ ընդդէմ ազատականաց, պաշտպանեց կրկին Դեկտեմբեր 2ը, և ճարտարութեամբ ազդարարեց մեծամասնութեան՝ թէ ինչպէս պէտք էր քուէարկել։ Ռուհէ հասաւ իւր նպատակին. Թիէրի խօսքերը նշանակութիւն մը չունեցան և օրակարգը քուէարկուեցաւ 215 քուէիւք ընդդէմ 45 քուէից։

Եւ սակայն այս նիստէն վերջը Վալէսքի խօսարանին նախագահը կը փոխուէր. իրրեւ տկար և իրեն տեղ կը դրուէր Շնայտէ։ Հետեւեալ նիստերաւ մէջ Լիւքսէմբուրկի խնդիրներուն առթիւ Էմիլ Օլիվիէ սաստկապէս խօսեցաւ ընդդէմ Ռուհէի, զոր կոչեց «փոխան կայսր անպատասխանատու». աւելցնելով որ պաշտօնեայք խափան կ'ըլլային կայսեր ազատամիտ գաղափարաց գործադրութեան։ Երկրորդ օրը կայսրը Ռուհէի կը դրկէր Լէժիոն տ'Ոնէօրի ականակուռ մեծ խաչը իբր «նշան բարեկամութեան»։ Օրէնսդիր ժողովը ուրիշ գումարմանց մէջ սահմանեց որ ամեն հասարակութիւն ունեցայ աղջկանց վարժարան մը ստիպողական և վարժուհեաց վարձքերը բարձրացուին, առատացուց նաեւ ձրիավարժից թիւերը։ Կայսրը կը ջանար գոհացնել ամեն

---

1. Բիսմարք այս վիճաբանութեանց երկրորդ օրը հրատարակեց այն գաղտնի դաշինքը, որով արդ երեք մասերը ի հարկին մէկ կը կազմուէին Պրուսիոյ թագաւորին հրամանատարութեան ներքեւ։

կուսակցութիւնք, մանաւանդ որ քիչ ժամանակէն Գաղղիա պիտի հիւրընկալէր իշխանք և թագաւորազունք և հարկ էր ցուցընել կայսերական վարչութեան խաղաղութիւնը տիեզերական ցուցահանդէսին առթիւ։

Ցուցահանդէս տիեզերական. Թագաւորք և թագաւորազունք ի Պարիս։

2. — Եւ արդարեւ որչափ որ կը քարոզուէր ի Գաղղիա կայսերականաց կողմէն, որ ցուցահանդէսն ուրիշ նպատակ չունէր բայց եթէ համօրէն ժողովրդոց ներշնչել եղբայրակցութեան գաղափարը՝ արհեստից և վաստակոց մէջ, բայց կայսեր և կայսրութեան խորհրդոց մէջ ունէր իւր սեպհական և առանձին նպատակը, ի նպաստ կայսրութեան և կայսերական ցեղին. զոր պիտի գային պատուել և ճանչնալ ի մօտոյ ամեն աշխարհաց թագաւորք, իշխանք և ժողովուրդք և զմայլիլ կայսրութեան շքեղազարդած Պարիսու վրայ։ Ցուցահանդէսի տեղ ընտրուած էր Այէնի աջ կողմը, այն բլուրը՝ ուր Ա. Կայսրութիւնը Հռովմայ թագաւորին (Նապոլէոն Բ) պալատը պիտի կառուցանէր, և վերանորոգութիւնը յիշատակարան մը ուզեր էր կանգնել Տրոկադէրոյի առումը անմահացնելու համար։ Այդ բլուրը, Ապրիլ 1ին երբ բացուեցաւ Ցուցահանդէսը, աներեւոյթ եղած էր, և մեծակառոյց պալատ մը ամփոփած էր աշխարհի զարմանալեաց արդիւնքը։ Ապա, շուրջանակի սփռուած էին ամէն աշխարհաց ճարտարապետութեան ճաշակի համեմատ շինութիւնք, տաճարք, մզկիթք, բակոտք, պարտէզք, շքեղ սրճարանք, գինետունք՝ ճաշարանք ամենազգի համադամօք և տարազիւք. միով բանիւ համօրէն ազգաց և սովորութեանց ներկայութիւնք[1]։

Ցուցահանդէսին բացումը կատարեց ինքնին կայսրը միարան ընդ կայսրուհւոյն և կայսերորդւոյն. և անմիջապէս քիչ վերջը Պարիս ողողեցաւ օտարականօք և

---

1. Շատ գեղեցիկ ներկայացուած էր նաեւ Օսմանեան մասը, որուն համար կանխաւ կազմուած ժողովոյ անդամ և միանգամայն ընդհանուր քննիչ էր Յովհաննէս էֆէնտի Թիւյսիւզեան։

իշխանական այցելուներով, յորս էին Բելճիոյ թագաւորը, Ռուսիոյ Զարը, Պրուսիոյ թագաւորը, Օսմանեան Սուլթանը, Գալլէսի իշխանը, Պրուսիոյ թագաժառանգը, Իտալիոյ թագաժառանգը, Օրանժի իշխանը, Եգիպտոսի խտիվը, Ճապոնի կայսեր եղբայրը և գերմանական մեծ դքսեր և ուրիշ երկրի իշխաններ։

Նապոլէոն Գ. մասնաւոր մտադրութիւն մը կը ցուցնէր իշխանաց ընդունելութեան մէջ, բայց ամենէն աւելի Զարին պատրաստած էր շքեղ մուտք մը ի Պարիս։ Արդէն զօրավարն Լորէօֆ ընդ առաջ գացած էր մինչեւ ի Մօրէօժ, և կայսրը (1 Յունիս) անձամբ ընդունելով զՁարը Արեւելեան կայսրանէն, անհամար բազմութեան մէջէն մեծ շքեղութեամբ տարաւ ի Տիւլրրի կայսրուհւոյն այցելելու, ուսկից Զարը անցաւ յԼիլիգէ, իրեն համար պատրաստած սենեկաց մէջ։

Ընդհակառակն շատ անպաճոյճ եղած էր քանի մը օր վերջը, Պրուսիոյ թագաւորին մուտքը ի Պարիս. բաց կառքով մը, որուն մէջ նստած էին զօրավարն Մոլտքէ և կոմսն Բիսմարք՝ լանտվէրի զրահաւորաց բարձրագոյն սպայի նշանագգեստով։ Գուլիէլմոս Ա. շատ դժուարութեամբ հաւաներ էր այս այցելութիւնը կատարելու։ Կրնար գուշակել Սադովայէ վերջը բոլոր Գաղղիոյ քաղաքագիտաց և ժողովրդեան զգացումը, որով հասարակաց կարծեաց և Նապոլէոն Գ.ի դիմաց շուարեալ դիրք մը առած էր։ Նոյն վիճակի մէջ կը գտնուէին ուրիշ գերման իշխանք ի Պարիս, որոնք կը վարանէին ընդ մէջ Գաղղիոյ և Գերմանական դաշնակցութեան գաղափարաց։ Իրենց համար ծանր էր ներկայ գտնուիլ Նապոլէոն Գ.ի ամեն ընդունելութեանց և փառաւոր զօրահանդէսներու, յորոց ամենէն շքեղն այն եղաւ, զոր Նապոլէոն կատարեց ի Բուա դը Բուլոներ, ճիշտ այն տեղը, ուր երեք տարի վերջը Պրուսիոյ թագաւորը, «Կայսր Գերմանացի» հռչակուելով, իւր պահանորդաց զօրահանդէս մը կատարեց։

Դաւ ընդդէմ Ա-ղեքսանդր Բ.ի։

3. — Նոյն օրն էր յորում լեհացի մը սպաննել փորձեց զԱղեքսանդր կայսրը, որ Նապոլէոնի կառքին

մէջ կը գտնուէր իւր որդւոյն, Վլատիմիր մեծ դքսին հետ։ Իւ սակայն ատրճանակին հարուածը անգղիացի սպայի մը բազկացը ցնցումէն խոտորելով, անցեր էր երիվարի մը ոնգունքներէն և գացեր վիրաւորեր էր տիկին մը։ Իսկ ատրճանակին երկրորդ փողը պայթեցաւ մարդասպանին ձեռաց մէջ, վիրաւորելով եւս զինքը. զոր կալանաւորեց անգղիացի սպայն և կայսերական պահանորդք հազիւ ազատեցին զայն ամբոխին բարկութենէն, որ հոն անմիջապէս կ'ուզէր սպաննել։ Երկրորդ օրը Ռուսաց եկեղեցւոյն մէջ գոհաբանական աղօթքներ երգուեցան, ուր Զարին քով ներկայ էին Գաղղիոյ կայսրը և կայսրուհին։ Երրորդ օրը ի Տիւյլերի ի պատիւ իրեն տրուեցաւ այն պարահանդէսը, որուն նմանը երբէք տեսած չէր Պարիս։ 50,000 լուսոյ կտուցք կը վառէին Տիւյլերի պարտիզաց մէջ, ուր տիկնայք շքեղազարդեալ աղամանդներով և ծաղիկներով, ծառոց ներքեւ պտրտեցան և պարեցին մինչեւ արեւուն բարձրանալը։

Զարին դէմ դաւաճանողը խոստովանեցաւ որ լեհացի էր ազգաւ և 18ամեայ, և կը կոչուէր Բէրէզովսքի։ Ոստիկանութեան խուզարկութիւնք ցրցուցին որ ինքը համեստ պատանի մ'էր ալքատ, և մեքենագործի մը քով կ'աշխատէր, որպէս զի օրականը ճարելով գաղղիարէն լեզուի մէջ կատարելագործուի։ Զարին ներկայութիւնը ի Պարիս իրեն գրգիռ մը եղեր էր իւր հայրենեացը կրած վշտաց վրէժն առնելու և անոր վրայ ձգելու Եւրոպիոյ ուշադրութիւնը։ Բէրէզովսքի իւր դաւէն երեք շաբաթ վերջը ներկայացաւ երդուելոց դիմաց։ Իրեն պաշտպանութիւնը ստանձներ էր Լամմանուէլ Արակօ, յամին 1848 դեսպան Գաղղիոյ Հասարակապետութեան ի Բեռլին։ Երդուեալները յուզեալ իւր տղայ հասակէն և վարուց լաւութենէն, իրեն մեղմացուցիչ պարագայք շնորհեցին, որով և փոխանակ գլխապարտութեան, մշտնջենաւոր բանտի դատապարտեցին։ Այս օրինակ վճիռ մը բնական է չէր կարող հաճելի անցնել ռուս հպատակաց, որոնք արդէն զԳաղղիացիս կ'ամբաստանէին իբր գրգռողք զլեհացիս։ Աղեքսանդր եւս ի

բնէ հեզ և սիրող հպատակաց հանգստութեան, մեծապէս վշտացաւ ոչ այնքան իր անձին դաւոյն համար, որքան գաղափարին համար։ Աբդէն իւր ի Պարիս բնակութեան ժամանակ շատ անգամ մահացուցումներ ունեցեր էր։ Պարիսու ժողովուրդը իւր փողոցներէն անցնելու ժամանակ ստէպ կը կոչէր «Կեցցէ՛ Լեհաստան[1]»։ Յուլիս 11ին Զարը մեկնեցաւ Պարիսէն, նոյնը ըրաւ նաեւ Գուլիէլմոս Ա։ Փիչ օր վերջը յանկարծ կայսրուհին թողուց զՊարիս և մեկնեցաւ ի կղզին Ուայթ՝ Վիկտորիա թագուհոյն քով. ուսկից սակայն դարձաւ փութով[2]։ Կայսրը միայնակ ընդունեցաւ Բավիէրայի թագաւորն, Իտալիոյ թագաժառանգը՝ Ումբերտոս իշխանը, և ուրիշները։

Սուլթան Աբդիւլ Ազիզ ի Պարիս։

4. — Զարին և Պրուսիոյ թագաւորին այցելութենէն աւելի, գաղղիացի ժողովրդեան հետաքրքրական էր Սուլթանի այցելութիւնը, որուն այցելութեանը միանգամայն մեծ կարեւորութիւն կը տրուէր. մանաւանդ զի առաջին անգամ էր որ Սուլթան մը կը կոխէր քրիստոնեայ երկիր մը։ Իրեն ուղեկից էին իր եղբօրորդիք՝ Մուրատ Էֆէնտի, Աբդիւլ Համիդ Էֆէնտի և իւր որդին Եուսուֆ Իզզէդդին Էֆէնտի։

Աբդիւլ Ազիզ Յունիս 29ին մտաւ ի Տուլոն, ուր մեծ ընդունելութիւն եղաւ իրեն Նապոլէոն Գ.ի ղրկած նուիրակներէն, և Յունիս 30ին հասաւ Պարիս՝ Լիոնի կայարանը, ուր կը սպասէր իրեն կայսրը բովանդակ արքունիքով. և զինքը տարաւ ի Տիւլերի ուր կայսրուհին կը սպասէր սանդխոց գլուխը շրջապատուած պատուոյ տիկիններէն. յետոյ քաշուեցաւ Շան զ'Էլիզէի պալատը[3]։

---

1. Նշանաւոր մնացած է Ֆլոքէի (որ այն ատեն երիտասարդ փաստաբան մ'էր), առ Զարն շեշտումն, «Պարո՛ն, Կեցցէ՛ Լեհաստան»։

Ֆլոքէ յետոյ պաշտօնարանի գլուխ եղած ժամանակ, գրեթէ ուրացած է այս խօսքը։

2. Կայսրուհւոյն այս մեկնումը առանձին գժտութեանց արդիւնք համարուած է։

3. Տես Թուրքիոյ մասին մէջ։

Ադիւլ Ազիզ նոյն շքով որ եկած էր, մեկնեցաւ Պարիսէն այցելելու Լոնդրայի, և ապա Վիեննայի համբով մտնելու ի Կ. Պոլիս։ Ինչպէս Զարին, Բրուսիոյ թագաւորի և այլոց գալուստը չէր ունեցած որ և է քաղաքական հետեւանք մը, նոյնը եղաւ և նկատմամբ Սուլթանի գալստեան։ Յաջորդեցին ուրիշ իշխանազանց այցելութիւնք ալ, որոնք առաջիններուն կարեւորութիւնները չունեցան։ Պարիս յոգնած էր հանդէսներէ և կը փափագէր իւր ամենօրեայ վիճակին մէջ մտնել։

Ցուցահանդէսին փակումը. Կայսրութիւնը Ցուցահանդէսին ժամանակ։

5. — Ինչպէս որ Նապոլէոն Գ. շքեղութեամբ բացեր էր Ցուցահանդէսը, նոյն փառաւորութեամբ զայն փակեց Նոյեմբեր 4ին։ Սակայն բացման և փակման ժամանակ բոլորովին տարբեր էին մասնակցողաց զգացումները։ Այս ահեղ համաշխարհական տօնավաճառը՝ յուսացեալ շահերը չէր արդիւնաւորած։ Ժողովրդոց եղբայրութիւնը այդ Ցուցահանդէսով ո՛րչափ յառաջ գնաց և թէ ո՛րքան ազդեցութիւն շահեցաւ, աւելորդ է հոս ցուցընել. արդէն պատմութիւնը պիտի բսէ տարի և կէս վերջը Գաղղիա—գերման պատերազմով։ Թերեւս կայսրութիւնը ցրցուց այդ հանդէսով իր արտաքին շքեղութիւնքը և ներքին տկարութիւնքը։ Ամենայն ոք հիացմամբ ապշեցաւ տեսնելով զնորն Պարիս, զոր երկու միլիար ֆրանքով բոլորովին զարդարեր և կերպարանափոխ ըրեր էր Պարոն Հոսման հոյակապ շէնքերով, ընդարձակ և գեղեցիկ ծառուղիներով, ուղղագիծ, անծայր և միակերպ ճամբաներով, որոնք իրենց դիւրութեան հետ, ունէին ձանձրանալի կողմը յաչս ճարտարապետաց և տեսողաց։ Միանգամայն խոնարհ բնակութեանց վերնալովը, աղքատ քաղաքացին վարձքերու բարձրանալովն աքսորուեր էր իւր բնակութենէն զոր ունէր քաղաքին մէջ և ապաւիներ էր քաղաքէն դուրս հեռաւոր տեղեր, մոռնչելով բոլոր այս եղած նորութեանց դէմ ի նպաստ հարստին, որոց ձեռքը կը մնար ամբողջովին մայրաքաղաքը։ Ցուցահանդէսը այցելող մը կրնար Բաստիլի հրապարակէն մինչեւ Շանզ'Էլիզէ երթալ երկու կարգ պալատներու, պանդոկներու, ճաշարաններուն մէջ

ջէն, որոց գիշերային լուսաւորութիւնը կը հիացնէր և կ՚ապշեցնէր զայցելուս, ուր խուռներամ բազմութիւն մը ամեն ազգէ ամեն կարգէ, այն թաղերը զուարճութեան և զբօսանաց վայրեր դարձուցած էր, և ուսկից տարագրուած էր, հարկ է ըսել, ծանրաբարոյութիւնը։ Պարիս զուարճութեան և բերկրութեան թատրոնի մը համբաւը կը ստանար, ուր կը դիմէր ամեն թերամիտ իւր կրկոր և կենացը յագուրդ փնտռելու և զոր կը գտնէր ամենայն դիւրութեամբ։

Անոնք որ տեսած էին զՊարիս Վերանորոգման և կամ Լուի Ֆիլիպի ժամանակ, կը զարմանային Պարիսու կենաց այսքան փութով և այնքան յեղաշրջելուն վրայ։ Լուրջ և դասական մատենագրութեան՝ որ կը կրթէր զմիտս, յաջորդեր էր վիպասանական դարը, և ամեն առաւօտ բանի մը միլիոն ընթերցող անհամբեր կը սպասէր լրագրաց ներքեւ աննշան, անմիտ և կամ անբարոյական վիպասանութիւն մը կարդալու։ Եւ բարձր շրջանակաց մէջ յորս Վերանորոգման և կամ Լուի Ֆիլիպի ժամանակ ազնուական տիկնոջ մը հիւրասիրութեան ներքեւ գիտնական սրահի մէջ կը փայլէին կրօնք, իմաստասիրութիւն, պատմութիւն, մատենագրութիւն և գեղարուեստք, Բ. կայսրութեան ժամանակ անոնք կեղրոն էին ժամանակի վիպաց և թեթեւութեանց։

Բարուց այսքան փոփոխութեանց միջոց դժբաղդաբար կայսերական ընտանիքն անմասն չէր ի յանցանաց։ Նապոլէոն Գ. որ ճարտարամտութեամբ կրցեր էր կայսերական գահը հասնիլ ամենազգի զոհողութեամբը և տառապանօք, փութով տեղիք տուաւ շողոքորթողաց. հեռացան իրմէն ստոյգ հանճարք և մատենագիրք և պաշարեցին զինքը պալատականք, որոց հետ միայն եղաւ իւր ընտանի կենակցութիւնը։

Կար նաեւ խումբ մը լրագիրներու շողոքորթող ամեն օր կայսրուհւոյն ամեն մէկ քայլից և իւր սիրոյն առ տեսլարանս և նորաձեւութիւնս։

Կայսրութեան հիմնադիրք և գործիչք կը տեսնէին այս ամէն բան և լռութեամբ կը հեծէին, կարող չըլ-

լալով դարման մը տանիլ. նա մանաւանդ նոր եկամուտ անձինք փափագելով նախորդաց ձեռքէն յափշտակել իրենց վարած աղդեցութիւնը շողոքորթութեան ճամբաներով, աւելի ինասաբեր կ'ըլլային։

Ցուցահանդէսը ցրցուց յաչս քաղաքագէտ և խորատես Եւրոպիոյ՝ որ կար ի Գաղղիա կայսր մը անուամբ միայն, բայց կայսրութիւնը լմնցած էր և ա՛լ եւս չունէր զօրութիւն։

Օրէնսդիր ժողովք 1868ի. — Հռովմէական և գերմանական խնդիրք։

6. — Նապոլէոն Գ. 1868ի Օրէնսդիր ժողովոյն բացման առթիւ մանաւորապէս շեշտեր էր, որ Հռոմոսէ անդին եղած փոփոխութիւնք բնաւ Գաղղիոյ ինաս մը կարող չէին բերելու և «մենք բնաւ պէտք չենք խառնուիլ այն փոփոխութեանց, որոնք ժողովրդոց իրձերէն առաջ կու գան»։ Արդարացուց Իտալիա զօրաց առաքումը որ «յեղափոխականքը սանձահարելու համար էր»։ Ի սակայն առաջին նիստերուն մէջ վարչութեան քաղաքականութիւնը Իտալիա մեծ բաղխումներ ունեցաւ յազատականաց։ Թիւէր պաշտպանելով Քահանայապետական ժամանակաւոր իշխանութիւնը, ցրցուց որ ինչ վտանգաւոր էր Գաղղիոյ, Իտալիոյ միութիւնը Հռովմ մայրաքաղաքով։ Այն ատեն Ռուհէ հանդիսապէս գոչեց բոլոր ժողովոյն լռութեան մէջ, որ «Ցանուն գաղղիական վարչութեան կը հրատարակենք որ Իտալիա երբէք պիտի չտիրէ Հռովմայ։ Երբէք, երբէք Գաղղիա պիտի չհամբերէ այդպիսի բռնութեան մը ընդդէմ իր պատուոյն և կաթոլիկութեան»։ Այս «երբէք» բառը շառաչալից ծափահարութեամբք կրկնեց գրեթէ բովանդակ ժողովքը[1]։

Գերմանական խնդրոյն նկատմամբ Էմիլ Օլիվիէ պարսաւեց զվարչութիւնը, որ կարող էր խափանել Իտալիոյ և Պրուսիոյ մէջ եղած դաշնադրութիւնը։ Ռուհէ

1. Այս երբէքները (jamais) շատ մեծ արժագանք ունեցած են Իտալիա և Վիկտոր Էմանուէլ բուած է «որ այդ երբէքը ես իրենց կը հասկցնեմ»։ Մասնաւորի. կեանք Վիկտոր Էմանուէլի ՀԸ։

ժխտեց այդ դաշնակցութիւնը, մինչ կար ստուգապէս, բայց գաղտնի։

Օրէնսդիր ժողովքը զրաղեցաւ ապա և հաստատեց Նիէլ մարաջախտին առաջարկած զինուորական օրէնքը, որով զինուորութեան ծառայութիւնը լինն տարուան համար հաստատուած կը մնար, հինգը գործնական և չորսը՝ ի պահեստի։ Կը վերցուէր այն օրէնքը, որով մէկը դրամ տալով՝ կրնար իւր տեղը ուրիշ մը փոխանակել. և սահմանուեցաւ նախ ի նկատի առնուլ շատ մը պարագայք առողջական կամ ընտանեկան, որով երիտասարդ մը կրնայ ազատ համարուիլ զինուորութենէ։ Իսկ կարողք՝ վիճակ պէտք էին քաշել, և պէտքէն աւելի բարձր թիւ քաշողը կրնար ազատ ըլլալ։ Դարձեալ հաստատուեցան ազգային պահապանաց շարժուն գունդեր քաղաքաց պահպանութեան և հսկողութեան համար, որոնք պատերազմի ժամանակ կրնային մեծ օգնութիւն մը ըլլալ բանակին, և ի Գաղղիա ազգային պահապանաց թիւը կրնար ելլել 40,000ի։ Մարաջախտն Նիէլ պատերազմի պաշտօնական հմուտ և անուանի բերդօրէից նկատմամբ ուսումնասիրութեամբք, այս իր առաջարկած օրէնքները հազիւ կրցաւ հաստատել տալ, զի մեռաւ 1869ի Օգոստոս 13ի։

Վարչութիւնը ազատականաց հաճոյ գործ մը ընելու համար խնդրեր և ընդուներ էր ի կայսերէն, որ յայտնեմէ լրագիրք հրատարակուելու համար վարչութեան հաստատութեան պէտք չունենան և պաշտօնական յանդիմանութիւնք չղրկուին լրագրաց, և նոյն իսկ խափանմունք՝ օրինաց հսկող պաշտօնավարութենէն յառաջ գան։ Այս օրէնքը քուէարկուեցաւ 94 քուէիւք ընդդէմ 25ի։ Երկրորդ օրը Գաղղիոյ ամեն կողմը նոր նոր լրագիրներ երեւցան, ամենն ալ վարչութեան հակառակ։ Երիտասարդ գրիչ մը, Ռոշֆոր՝ որ արդէն թատերաց և ուրիշ թուղթիկ գրութեանց մէջ համբաւ մը ստացեր էր, անմիջապէս Լանթերն օրագիրը սկսաւ, որ ամեն օր սուր հանճարեղ և կճող երգիծաբանութիւն մ'էր ընդդէմ կայսրութեան զաւեշտ ոճով մը։ Փութով բազմաթիւ դատա-

պարտութիւնք տեղի ունեցան և Ռոշֆոր անցաւ ի Բէլ-ճիա, հոն Լանքեռնը հրատարակելու, ահաւոր հարուածներ տալով այսպէս կայսրութեան։

Օրէնսդիր ժողովքը միշտ յազատութիւն դիմելով, հրաման կուտար ժողովքներու և գումարմանց, «որոնք չեն զբաղիր քաղաքական կամ կրօնական խնդրովք»։ Միայն կանխապէս հարկ էր ծանուցանել տեղական իշխանութեան։ Բայց Օրէնսդիր ժողովոյն ամենէն յուզեալ նիստերն եղան Յունիսի 29էն մինչեւ Յուլիս 28, յորս վարչութիւնը ջանաց ցուցընել ծաղկեալ ելեւմուտք մը և ընդդիմակացք, մանաւանդ Թիէր, թուաբանական ճշտութեամբ ուզեցին հաւաստել զանձուն տարուէ տարի նուազը։ Բողոքեցին մանաւանդ որ Պատերազմի ծախքը միշտ կ'առաւելուն առանց զինուորական նոր հանդերձանաց, ինչպէս ի Պրուսիա։

7. — Օրէնսդիր ժողովքէն դուրս, Հասարակաց կրթութեան պաշտօնեայն Վիկտոր Դիւրիւի, ծանօթ իւր պատմական բազում գրութեամբք, հրատարակութիւն մը ըրած էր, որով բռնադատիչ կը սահմանէր նախնական կրթութիւնը. բայց իւր այս իղձը վարչութիւնը պաշտօնապէս չհաստատեց։ Վիկտոր Դիւրիւի քիչ վերջը օրէնքով Երկրորդակարգ կրթութիւնը դրաւ Աղջկանց համար, որ չկար մինչեւ այն ատեն։ Վիկտոր Դիւրիւի գործը, յետ սաստիկ ընդդիմութեան, վերջապէս յաջողեցաւ և ինքն հաստատուն։ Յաջողեցաւ նաեւ տիկին Ելիզա Լամոնիէ «Աղջկանց Արհեստական վարժարան» մը հաստատելու, որուն ծախքը պիտի հոգային ստորագրութեամբ՝ բազմաթիւ տիկնայք։ Այս վարժարանաց մէջ աղջկունք թէ՛ մատենագրական և թէ արհեստական ամբողջ կրթութիւն մը պիտի ստանային, ըստ իրենց կոչման։ Կայսրութեան վերջին տարիներու մէջ սկսուեր էր զգացուիլ ժողովրդական կրթութեան պէտքին ընդհանրացումը, և լրագրութեան տրուած ազատութեամբ՝ խորատես մտքեր արդէն սկսեր էին ցուցընել Դաղղիոյ կրթական ստորնութիւնը բաղդատմամբ Գերմանիոյ։

Բարձրագոյն դաստիարակութիւն Աղջկանց։

Օրէնսդիր ժողովք 1869ի — Նոր ընտրութիւնք երեսփոխանական։

8. — 1869ի Յունուար 18ին կայսրը իւր սովորական ոճով բացաւ 1869 ի Օրէնսդիր ժողովքը, պանծացնելով Գաղղիոյ զինուորական վիճակը և գուշակելով որ քիչ վերջը բովանդակ Գաղղիա երեսփոխանական նոր ընտրութեամբը «անգամ մը եւս պիտի հռչակէ, որ բնաւ յեղափոխութիւն չուզեր, և կը փափաքի որ դաշնակցին զօրութիւնն ու ազատութիւն»։

Ապրիլ 28ին փակուեցաւ 1868ի Օրէնսդրութիւնը և նոր ընտրութիւնք սահմանուեցան Մայիս 23ի և 24ի։ Վարչութեան և ընդդիմակայից մէջ մրցումը շատոնց կը պատրաստուէր։ Պաշտօնական լրագիրը կը պանծացնէին և կը բարձրացնէին կայսրութեան մեծամեծ բարիքները, իսկ ընդդիմակայք ամենուրեք կռուեցան ցուցընելով ազատութեան ընկճուիլը և դրամական վատ մատակարարութիւնը։ Վարչութիւնը յայտնապէս պաշտպանելով իր առաջարկած անձինքը, ամենայն դժուարութիւնք, արգելքներ յարոյց ընդդիմակայից թիկնածուներու նկատմամբ։ Եւ սակայն ամբողջական քուէարկութիւններն ցրցուցին որ կայսերական վարչութիւնը կորանցուցեր էր իւր համակրութիւնը, մանաւանդ Պարիսու մէջ։ Էմիլ Օլիվիէ որ վերջերը կայսրութեան հակամիտութիւն մը կը ցուցընէր, ի Պարիս չընտրուեցաւ։ Ժիւլ Ֆէրրի երիտասարդ փաստաբան մը, որ մոլեգին յարձակումներ ըրած էր Հոսմանի մատակարարութեան դէմ՝ ընտրուեցաւ ի Պարիս։ Նոր ընտրուողներուն մէջ էին նաեւ Գամբէտտա և Ռոշֆոր, որուն մեծ ժողովրդականութիւն տուեր էր Լանտէռնի դատապարտութիւնը։ Նոր Օրէնսդիր ժողովքը գումարուեցաւ Յունիս 18ին ընտրութիւնքը վաւերացնելու համար. բայց առաջին նիստէն բազմաթիւ երեսփոխանք կը յայտնէին փափաքնին, որ հարկ էր ընդարձակագոյն սահման մը տալ Օրէնսդիր ժողովոյն և պատասխանատու պաշտօնարան հաստատել։ Նապոլէոն Գ. այսպիսի դրից մէջ հեռաւոր ժամանակի մը ուշացուց Օրէնսդիր ժողովոյն գումարումները, մինչեւ որ ինքը՝ ծերակոյտը կանչէ վճռելու։ Եւ արդարեւ Սեպտեմբեր 8ին ծերակոյտը կայսեր առաջարկութեամբ

իրաւունք կուտար Օրէնսդիր ժողովոյն մասնակցելու կայսեր օրէնսդիր իշխանութեան. կրնար անուանել իւր նախագահը և քարտուղարը. պաշտօնեայք պատասխանատու էին, բայց կախումն ունէին ի կայսերէն. կրնային անդամ ըլլալ միանգամայն Օրէնսդիր ժողովոյն և ծերակուտին։ Ծերակուտի նիստերը բաց էին հասարակաց։ Ծերակոյտը կրնար Օրէնքի մը հրատարակութիւնը խափանել։

Օրէնսդիր ժողովոյն կանոնաւոր նիստերը սկսան Նոյեմբեր 29ին։ Նապոլէոն, յետ սովորական խօսից օտար Պետութեանց նկատմամբ, յետ յայտնելու որ ի Հռովմ եւս ընդհանուր ժողովք մը պիտի գումարէ Պիոս թ. քահանայապետը, յետ համբելու այն ամենայն բարեկարգութիւնք, որ ի Գաղղիա ի գործ պիտի դրուէին, վրայ բերաւ որ «Գաղղիա ազատութիւն կ'ուզէ, բայց բարեկարգ ազատութիւն, կարգաւորութեան համար ես պատասխանատու եմ, Տեսրը, դուք ալ օգնեցէք ինձ ազատութիւնը փրկելու»։

Գումարումները սկսան. բայց Օրէնսդիր ժողովքը նոր կերպարան մը առած էր. Ժիւլ Ֆաւրը երեսփոխանը օրէնք մը առաջարկեց որով Օրէնսդիր ժողովքին պէտք էր տրուիլ ամենայն սահմանադրական իշխանութիւն։ Ասոփայլ պահանջեց որ պաշտօնարանը ամբաստանութեան ներքեւ դրուի։ Դեկտեմբեր 27ին յետ աւարտելու ընտրութեանց վաւերացումը, պաշտօնարանը ամբողջովին տուաւ իւր հրաժարականը. և երկրորդ օրը Պաշտօնական լրագիրը[1] կը հրատարակէր կայսեր նամակը առ Էմիլ Օլիվիէ, որով իրմէ կը խնդրէր ցուցընելու այն անձինք, որոնք իրեն հետ միաբան կրնային պաշտօնարան մը կազմել։

9. — Էմիլ Օլիվիէ երբեմն հասարակապետական, ապա ազատական և մին ի Հնգից, ապա կայ- Ազատական կայսրութիւն։

1. Journal officiel. Մինչեւ այն ատեն պաշտօնական լրագիրը *Moniteur* անունը կը կրէր։

սերական, շատ մեծ դժուարութեամբ կրցաւ կազմել պաշտօնարանը, յորում ինքն նախագահութեան հետ կ'ունենար Արդարութեան պաշտօնարանը։ Տարիւ՝ Արտաքին գործոց. Շրվանտիէ տը Վալտրոմ՝ Ներքին գործոց, Բիւֆֆէ՝ Ելեւմտից, Սրկրի՝ Հասարակաց կրթութեան. Լուվէ՝ Երկրագործութեան և Վաճառականութեան, Տալհուէ՝ Հասարակաց Աշխատութեան, մարաջախտն Լրբէօֆ՝ Պատերազմի, ծովակալն Ռիկո դը Ժընուիլլի, Ծովային զօրութեան։ Պաշտօնարանը ծանուցուեցաւ Յունուար 2ին իբրեւ ազատական պաշտօնարան մը, և սակայն Յունուար 10ի նիստին՝ յորում
1870 Էմիլ Օլիվիէ իւր ծրագիրը ուզեց բացատրել տարտամ խօսքերով, ազատականք բնաւ իրենց փափագած մասերը չգտան և Գամբէտտա յայտնապէս գոչեց, որ «ընդհանրական քուէիւք ընտրեալ վարչութեան և Ձեր ներկայացուցած վարչութեան մէջ, բացարձակ անհամաձայնութիւն կայ։ Բայց այս ըսել չէ որ այս որմոց մէջ գոհութիւն չգտնելով, դուրսը զայն պիտի փնտռեմ բռնութեան միջոցով։ Ո՛չ, այլ կը համարիմ որ այս բեմէն ճառագայթեալ լուսէն, յառաջ պիտի գայ մեծամասնութիւն մը, որ ձեզ յաջորդելով պիտի գիտնայ տրամաբանօրէն նշանակեալ հետեւանքներով գործել, դուք մեզ համար կամուրջ մ'էք, և մենք կ'անցնինք այս կամուրջը»։

Էմիլ Օլիվիէի պաշտօնարանին առաջին գործն եղաւ պաշտօնանկ ընել զՊարոն Հոսման, որուն ազդեցութիւնը չափազանցապէս մեծցած կը համարուէր և Պարիսու ժողովրդեան մեծամասնութեան հակակրելի դարձած էր [1]։

---

1. Պարիսու բարեգարդութեամբ, հաշուած է որ Պ. Հոսման աւելցուց 1,500,000 անձանց բնակութիւն։ Պաշտօնէն քաշուած ժամանակ արդէն ծերակուտի անդամ էր. ինչպէս նաեւ Պ. Պէտրի, Ռասիկանութեան գլուխը։ Դ. Հասարակապետութեան ժամանակ ընտրուած է նաեւ երեսփոխան խօսարանի։

Ոճիր Օրէոլի. — Դատ Ռոշֆորի. Դատաստան ի Տուր։

10. — Օրէնսդիր ժողովոյն բացման օրը եղեռնաւոր պատահար մը ոչ նուազ տագնապ մ'եղաւ պաշտօնարանին։ Իշխանն Պիէր Բոնապարտ՝ Կորսիկայի լրագրի մը մէջ նախատեր էր զՊասքալ Դիրուսէ, որ Յունուար 10ին իբր իրեն վկայք ղրկեց առ իշխանն՝ զՎիկտոր Նուարա խմբագրապետ Մարսէյզ լրագրին. հիմնեալ ի Ռոշֆորէ, և զԼուլրիք Ֆոնվիէլ ուրիշ լրագրապետ մը։ Երկու վկայից խօսքերուն՝ իշխանը նախատանօք պատասխանելէն վերջը, անոնց վրայ ատրճանակի երեք հարուած պարպեր էր և նախ հարուածեր էր զՎիկտոր Նուարա, որ տանը դրան առջեւ դիակնացեալ ինկաւ։ Այս դէպքը Պարիսու և համօրէն Ֆրանսայոյ վրայ տխուր ազդեցութիւն մը ունեցաւ և արդարութեան պաշտօնարանը անապարեց նոյն երեկոյ հրատարակելու, որ իշխանը կալանաւորեալ էր։ Երկրորդ օրը Ռոշֆոր Մարսէյզ լրագրին մէջ խմբագրական զօրաւոր յօդուած մը կը գրէր, որով գոգցես զժողովուրդը ի զէն կը կոչէր։ Վիկտոր Նուարայի յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Յունուար 12ին, և հարիւր հազարէն աւելի քաղաքացիք ներկայ էին, գրեթէ ամենն ալ զինեալ։ Թէպէտ շատերը նոյն օրն իսկ կուզէին յեղափոխութիւն մը փորձել, բայց Ռոշֆոր համոզեց, որ յիմարութիւն էր և վնասակար, այնքան բանակներէ պաշարուած։ Սակայն Յունուար 11ին Պետութեան գործակալը հրաման խնդրած էր Օրէնսդիր ժողովէն Ռոշֆորի դէմ դատ վարելու Մարսէյզի մէջ դրած յօդուածին համար։ Հրամանը տրուեցաւ և դատը երագ կատարուելով Յունուար 22ին վճիռը ելաւ, որով Ռոշֆոր կը դատապարտուէր 6 ամիս բանտի և 3000 ֆրանք տուգանքի։ Եւ որովհետեւ Ռոշֆոր երեսփոխան էր, այն ատեն Պետութիւնը հրաման խնդրեց խօսարանէն կալանաւորելու զՌոշֆոր և ստացաւ։ Փետրուար 7ին Ռոշֆոր երբ հասարակաց ժողովարան մը ճառախօսութեան կ'երթար, կալանաւորեցաւ յետ մեծ յուզմանց, զոր յարուցին իրեն բարեկամք և ժողովրդեան մաս մը, նոյն իսկ «Կեցցէ Հասարակապետութիւն» գոչելով։

Ռոշֆորի դատը եղած ժամանակ, Արդարութեան բարձրագոյն ատեանը ժողուեր էր դատելու զիշխանն Պիէր Բոնապարտ։ Դատը սկսաւ Մարտ 21ին։ Իշխանը ինքզինքը պաշտպանեց ըսելով որ Վիկտոր Նուար զինքը նախատեր էր և սաստկութեամբ զարկեր էր երեսին, և Ֆոնվիլ սպառնացեր էր ատրճանակով։ Իշխանին դատապարտութեան համար 21 քուէ կարեւոր էին. 18 քուէ զինքը դատապարտած էին, որով իշխանը ազատ թողուեցաւ։ Կայսրը պատուիրեց իւր հօրեղբօրորդոյն քիչ մը ատեն Ֆաղզիայէ դուրս ընակելու. այսպէս համարելով գոհացնել հասարակաց կարծիքը։

Ծերակուտի վճիռը. — Փոդովրդախումբ քուէարկութիւն։

11. — Այս ամէն պարագայից մէջ կայսրը անհանգիստ էր, որովհետեւ անհանդարտ և յուզեալ դրութեան մէջ կը տեսնէր թէ՛ ժողովրդեան և թէ երեսփոխանութեան մաս մը. և այդ մասը միշտ կ'աճէր։ Նապոլէոն կ'ըմբռնէր որ հարկ էր բան մը ընել, բայց այդ ընելիքը չէր յաջողած գտնելու։ Ցուսացած էր որ ազատական կայսրութիւն մը սկսելով, ընդհանուր զինաթափութիւն մը տեսնէ ի հակառակորդաց. և սակայն ոչ միայն ընդդիմութիւնը սաստկացած տեսաւ, այլ նկատեց, որ այդ տրուած ազատութիւնը նոր յոյս մը և նոր եռանդ մը ազդեր էին հասարակապետականաց, որ վերջապէս կու գար իրենց համար կայսրութիւնը տապալելու ժամանակն։ Մարտ 21ին Պաշտօնական լրագիրը կայսեր նամակ մը կը հրատարակէր, որով կայսրը կը հրաւիրէր զպաշտօնարանը իրեն ծերակուտի վճիռ մը առաջարկել, որով խափանուին սահմանադրութիւնն փոփոխութեանց անչափ տենչերը, որ տիրացեր են ոմանց վրայ, որոնք «կը խռովեն հասարակաց կարծիքը և անհաստատ վիճակ մը կը ստեղծեն»։ Կայսրը մտածեր էր ծերակուտին այդ վճիռը կամ սահմանադրութիւնը բոլոր ազգէն քուէարկել տալ։ Մարտ 28ին, կ'առաջարկուէր ծերակուտին քուէարկելու Ատենավճիռ մը կամ Սահմանադրութիւն մը 45 յոդուածներէ, որով կայսրը կ'ըլլար «Պատասխանատու ազգին առջեւ, առ որ կրնար դիմել» և սահմանադրութեան փոփոխութիւնը միայն

ազգը կրնար ընել «առաջարկութեամբ կայսեր». այս-պէս յայտնապէս կը հռչակուէր ժողովրդախումբ քուէարկութեամբ կայսրութեան մը սկզբունքը[1]։ Օրէնսդիր ժողովքը եւս կ'ունենար իր շնորհքները. կարող էր յայնմ-հետէ առաջարկներ ընդունիլ և վիճել անոնց վրայ և վրճռել։ Ժողովոյն մէջ Կրէվի և ուրիշ բազմաթիւ երեսփոխանք պահանջեցին որ սահմանադիր իրաւունքը ազգին տուի։ Երկու օր ծանր վիճաբանութիւններէ վերջը, յորում մեծամեծ հարուածներ տուին կայսրութեան, ժողովարանը որոշողութիւնը յանձնեց պաշտոնարանին խոհեմութեան։ Ներակայտը նոր սահմանադրութեան վիճաբանութիւնը լմնցուց Ապրիլ 20ին և Ապրիլ 23ի հրովարտակով մը կայսրը բովանդակ ազգը կը հրաւիրէր Մայիս 8ի, քուէարկել 1870 Ապրիլ 20ի Սահմանադրութեան վրայ։ Նապոլէոն Գ. կը վերջացնէր հրովարտակը որ «Նոր փորձ մը եւս տուէք ինձ Ձեր վստահութեանը այս՝ քուէարկելով. այսպէս յեղափոխութեան սպառնալեաց դէմ առած կ'ըլլաք. ազատութիւնը հաստատուն հիման վրայ դրած և դիւրացուցած կ'ըլլաք յապագային թագին փոխանցումը որդւոյս գլուխը»։ Հրովարտակին վերջին խօսքերը բացորոշ կերպով կը յայտնէին նոր սահմանադրութեան և ժողովրդախումբ քուէարկութեան որոշ նպատակը։ Նապոլէոն, որուն առողջութիւնը սկսեր էր կրել մեծապէս. տագնապ կը զգար յաջորդութեան նկատմամբ։ Քուէարկութիւնը իրեն պիտի ըսէր թէ արդեօք պիտի մնա՞ր կայսր, թէ հարկ էր քաշուիլ։ Այսօրինակ մեծ որոշողութիւն մը յայտնի է ո՛րքան յուզումն պիտի պատճառէր կուսակցութեանց և ի՞նչ ջանքեր պիտի ըլլային ի նպաստ կայսրութեան կամ հակառակ։ Բնական է որ վարչութիւնը իւր ամեն հնարքները և միջոցները գործածեց կայսրութեան հաստատութեանը համար և սահմանադրութիւնը բոլոր Գաղղիոյ ժողովրդախումբ քուէար-

1. Plébiscite. Empire Plébiscitaire.

կութենէն ստացաւ 7,358,786 այր՝, և 1,571.939՝ ոչ։ Շատ մը թագաւորականք, Ոլէանեանք, և խոհեմ հակառակորդք ապագայ անորոշ վիճակի մը նախապաս համարեր էին կայսրութեան ի նպաստ քուէարկել։

Նապոլէոն Գ. համարեցաւ որ կը յաղթանակէր և կ՝ապահովէր իւր զաւկին թագը։ Կրնար արդեօք գուշակել ժողովրդեան մը այնքան անհաստատութիւնը որ քիչ ամիս վերջը բոլորովին հակառակը պիտի քուէարկէր։ Երբ ինքը կը համարէր հաստատապէս հիմնուած իւր ցեղը, արդէն շէնքը խլխլեր էր. և զօրաւոր հով մը բաւական էր զայն տապալելու. և այդ եղաւ գաղղիա — գերման պատերազմը։



ԳԼՈՒԽ Զ.

ԳԱՂԴԻԱ. ԳԵՐՄԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1. Հոհէնձոլլէրն իշխանին Սպանիոյ գահուն Մեկնածութիւնը. — Յուզումն Գաղղիոյ վարչութեան. — Պահանջք Պրուսիոյ. — 2. Բուռն վիճաբանութիւնք Գաղղիոյ Օրէնսդիր ժողովոյն մէջ. — Թիէր և ազատականք հակառակ պատերազմին. — 3. Հրատարակութիւն պատերազմին. — 4. Պրուսիա. — 5. Գերմանական պետութիւնք և պատերազմը. — 6. Եւրոպիոյ պետութեանց բռնած դիրքը. — 7. Թշնամութեանց սկսիլը. — Նապոլէոն ի բանակը. — Սաարբրուքի գաղղիական փոքր յաջողութիւնը. — 8. Պատերազմունք ի Ֆորբախ և Ռայխհոֆէն։

Հոհէնձոլլէրն իշխանին Սպանիոյ գահուն Մեկնածութիւնը։

1. — Սպանիոյ վարչութիւնը ելած էր թագաւոր մը փնտռելու, որ յարմար ըլլայ կառավարելու զՍպանիա ըստ նոր միապետական սահմանադրութեան։ Մարաջախտն Պրիմ, թագապահներէն մին՝ յետ այլ և այլ փորձերու վերջապէս որոշեր էր զթագը ընծայելու Հոհէնձոլլէրնի Լէոպոլդ իշխանին, արեւնակից Պրուսիոյ թագաւորող Տան և միանգամայն Բոնապարտեանց՝ Բոհառնէ գերդաստանին խնամութեամբ. որուն երկրորդ եղբայրը իշխան Անտոն՝ արդէն Ռումէնք քիչ տարի առաջ իրենց իշխան ընտրեր էին։ Լէոպոլդ Հոհէնձոլլէրն կրօնիւք էր կաթողիկէ։ Միանգամայն ըլլալով հայր բազմաթիւ որդւոց, Սպանիոյ գահը անյաջորդ մնալու վտանգէ ազատ կրնար համարուիլ։

Պրուսիոյ թագաւորը համարուելով գլուխ բովանդակ Հոհէնձոլլէրն գերդաստանին, բնական է Լէոպոլդի

հայրը զ խնդիրը պարզապէս ծանուցած էր Գուլիէլմոսի, և ընտանեկան զումարում մը եղած էր, որ ըստ Բիսմարքի, չունէր յարաբերութիւն Պրուսիոյ թագին և վարչութեան հետ[1]։

Հոհէնձոլլէրն իշխանին այս թիկնածութիւնը անկարծելի յուզում պատճառեց ի Պարիս, արդիւնք մը համարուելով այս Պրուսիոյ «անսահման փառասիրութեանը» և մեծնալու փափագին։ Լրագիրք կը բողոքէին որ Հոհէնձոլլէրնի տան խնամութեան կապերով, Պրուսիա կ'ուզէ Եւրոպիոյ ամենէն ազդեցիկ թագաւորութիւնը ըլլալ, ինչպէս Բուրբոնեանց և Հարսբուրկի գերդաստանները և պիտի կաշկանդէր Գաղղիոյ գործելու ազատութիւնը։

Որչափ որ Լէոպոլտ իշխանը ունէր Բոնապարտեանց հետ խնամութեան կապեր, այսու հանդերձ Նապոլէոնի վարչութիւնը մեծապէս զայրացաւ այս թիկնածութեան վրայ[2]։ Ի Բէոլին Գաղղիոյ դեսպանը՝ կոմսն Բէնէդէտտի՝ հրաման ընդունեցաւ, թագաւորին յայտնելու ի Պարիս եղած մեծ տժգոհութիւնը. նոյնը Օլիվիէ և Գրամոն դուքսը՝ Պաշտօնեայ Արտաքին Գործոց, յայտնեցին Պրուսիոյ դեսպանին ի Պարիս, բարոն Վէրթէրի, որ կարեւոր դատեցաւ անմիջապէս մեկնելու յիմա, ուր Գուլիէլմոս կը գտնուէր բաղնիքներու համար, և իմացնելու անոր Պարիսու յուզումը։

Գուլիէլմոս եթէ Բէնէդէտտի կոմսին և եթէ բարոն Վէրթէրի նոյն պատասխանը տուաւ, որ Սպանիոյ գահուն թիկնածութիւնը բնաւ Պրուսիոյ վարչութեան հետ յարաբերութիւն մը չունէր և Պրուսիա չէր իսառնուեր այդ գործոյն մէջ։ Ի Պարիս այս պատասխանը սպառնալիք մը համարուեցաւ և դուքսն Գրամոն յայտարարեց Օրէնսդիր ժողովոյն մէջ, որ Գաղղիա բնաւ յանձն

---

1. Խորհուրդք եւ Ցուցք Բիսմարքի Իշխանին Գ. Իր. Տպ. 1898։

2. Գրամոն, Գաղղիա եւ Պրուսիա պատերազմին առաջ (Պարիս 1872 էջ. 21։

պիտի չառնուր, որ «Կարոլոս Գ.ի գահուն վրայ օտար պետութիւն մը իւր իշխաններէն մին բազմեցնէ, այսպէս խանգարելով եւրոպական հաւասարակշռութիւնը ի վնաս Գաղղիոյ[1]»։ Լրագիրը արդէն սկսեր էին պատերազմ քարոզել, որոց ազդեցութեան ներքեւ կը տեսնուէր վարչական մեծամասնութիւնը։ Նապոլէոն որ տարիքին առաջ երթալովը և հիւանդութեանը զայրանալով, մաղձոտ կեանք մը սկսած էր, բնաւ թշնամութեանց և պատերազմի մը կուսակից չէր. և սակայն վերջին ժամանակաց մէջ բռնած ոճէն ստիպուած էր ազգային անձնասիրութեան գոհութիւն մը տալու։ Կրկին յանձնարարեց Բէնէդէտտիի յիմս երթալ և բռնադատել զՊրուսիոյ թագաւորը, որ արգելու Հոհէնձոլլէրնի իշխանին Սպանիոյ գահին ընդունելութիւնը։

Որչափ որ Գուլիէլմոս առողջութիւն դարմանելու համար կը գտնուէր յիմս և չունէր քովը պաշտօնեայ մը, այսու հանդերձ ազնուութեամբ ընդունեցաւ Գաղղիոյ դեսպանը, ծանոյց որ ինքը չէր կրնար ազատ իշխանի մը գործոց մէջ միջամտել կամ իրեն արգելք մը դնել, այսու հանդերձ մտերմաբար հաղորդեց Բէնէդէտտիի, որ Լէոպոլդ իշխանը տեսնելով որ ինչ մեծ պատասխանատուութիւն մը կը ստանձնէր բովանդակ Եւրոպիոյ դիմաց, ինքնին յօժարակամ հրաժարեր էր Սպանիոյ գահուն թիկնածութենէն և այս եղելութիւնը արդէն իւր հօրմէն հաղորդուած էր Մադրիդի վարչութեան, որ և նա հաղորդած էր ի Պարիս Գաղղիոյ կառավարութեան։ Ի Պարիս իշխանին այս հրաժարականը պէտք էր լիովին գոհացուցիչ համարուիլ, գոնէ այսպէս կը խորհէին ուրիշ պետութիւնք, որք Նապոլէոն Գ.ի հաղորդեցին

---

1. Բիսմարք իր Խորհրդոց մէջ կը պատմէ որ այս թիկնածութիւնը ինքը ըմբռնած էր որ օգտէր պիտի մեծապէս Գաղղիոյ ազդեցութեան ի վնաս Պրուսիոյ. «Լէոպոլդ իշխանը բռնադատուած էր անցնելու Պարիսէն իմանալու Գաղղիոյ կայսերական քաղաքագիտական դիտաւորութիւնքը, ըստ որոց պէտք էր ինքը կառավարեր զՍպանիա։ Մեզի աւելի մտածութեան նիւթ էր Գաղղիոյ և Սպանիոյ թագերուն այսքան սերտ յարաբերութիւնը»։ Գլ. ԻԸ. էջ 75 տպ. 1898։

իրենց խնդակցութիւնը, խնդրոյն այսպէս խաղաղութեամբ և գոհութեամբ լմնալուն վրայ։ Նապոլէոն ալ այս կարծեաց վրայ կը տեսնուէր և սակայն պատերազմի ցանկացող մասը և պատմութիւնը յապագային աւելի պիտի պայծառացնէ թէ արդեօք մասնաւորապէս որո՞նք էին նոցա պարագլուխք[1], ապահով Դաղղիոյ զինուց յաջողութեան և յաղթութեան վրայ, և որոնք կը յուսային պատերազմով մը ներքսապէս բարձրացնել կայսրութեան վարկը և ջաղխել ընդդիմակացքը, պնդեցին առանձին խորհրդեան մէջ, որ անբաւական էր Պրուսիոյ տուած գոհութիւնը. և դուքսն Դրամոն կը ծանուցանէր առ Վէրթէր, որ Հոհէնձոլլէրն իշխանին հրաժարիլը նշանակութիւն մը չունէր Դաղղիոյ համար, որ երբէք պիտի չթողուր անոր Սպանիոյ գահուն վրայ բարձրանալը. բայց կը մնար Պրուսիոյ թագաւորին ըրած արհամարհութիւնը, որ առանց Դաղղիոյ վարչութեան հարցնելու, թողուցեր էր Հոհէնձոլլէրն իշխանին ընդունելու այդ թիկնածութիւնը։ Արդ Դաղղիոյ պատիւ տեղը երթալու համար հարկ էր Դուլիէլմոս նամակ մը գրէր առ Նապոլէոն, յորում ինքզինքը անրասիր ընէր, որ կանխապէս չէր արգիլած Հոհէնձոլլէրն իշխանին ընդունելու Սպանիոյ գահը և խոստանայ որ յապագային որ թէ այդպիսի պարագայ մը ներկայանայ, ընտ չտայ իւր հաւանութիւնը։ Ելիվիէ պաշտօնարանը կը յուսար որ Պրուսիոյ թագաւորին այդ քայլը մեծապէս պիտի ամրապնդէր և համակրելի ընէր զպաշտօնարանը։ Եւ որովհետեւ Վէրթէր յանձն չառաւ անձամբ ինքնին ներկայացնելու իւր թագաւորին Դաղղիոյ վարչութեան

---

1. Հասարակապետականք միշտ ամրաստանած են զկայսերականս որ իրենք ուզեցին պատերազմը։ Իսկ Լամիլ Ելիվիէ՝ Դ կայսրութեան նշանաւոր անձնաւորութիւններէն մին, յանցանքը Թիէրի և հասարակապետականց վրայ կը ձգէ, որոնք իրենց բեմախօսութիւններով սարսուցին Դաղղիայէն օտար պետութեանց վստահութիւնը և պատերազմ զրգռեցին։ Ընդհանուր կարծիքը պատերազմ ուզողներուն պարագլուխ համարած է զԷյժենի կայսրուհին և բռնապարդեան զերդաստանին հաւասարիմ պաշտպանքը։

պահանջը և միայն խոստացաւ գրով հաղորդելու, անոր համար Ռէնէդէտտի կոմսին յանձնուեցաւ կրկին երթալու յէմս և Պրուսիոյ թագաւորէն պահանջել վերոյասացեալ ապահովութիւնը։

Գուլիէլմոս երկու անգամ ընդունեցաւ Գաղղիոյ դեսպանը և ծանոյց որ ինքն ալ հաւան էր Հոհէնձոլլէրն իշխանին հրաժարելուն, բայց իրեն համար նուաստացուցիչ էր գրով որ և է՛ խոստում մը տալ։ Ռէնէդէտտի թագաւորէն երրորդ անգամ ունկնդրութիւն խնդրեց իւր պահանջին աւելի սաստիկ ձեւ մը տալու համար։ Սակայն Գուլիէլմոս զԹածիվիլ իշխանը՝ իւր համհարզը՝ ղրկեց իմացնելու, որ ուրիշ աւելցնելիք մը չունէր։ Ռէնէդէտտի հրաժեշտի ունկնդրութիւն խնդրեց այն առեն, սակայն թագաւորը չընդունեցաւ, իմացնելով որ նոր բսելիք մը չունէր. և երկրորդ առաւօտը կոպլէնց մեկնած պահուն տեսնելով ի կայարանի զՌէնէդէտտի, ողջունեց զինքը և կրկնեց ինչ որ առաջ բսած էր[1]։ Գուլիէլմոսի ունկնդրութեան մերժելու լուրը վեր ի վայր վրդովեց զՊարիս, որ թագաւորին ըրածը ամենամեծ նախատինք մը համարեցաւ Գաղղիոյ և թագաւորին գրով խոստմունք չտալը, նշանակ մը՝ որ յապագային եւս պիտի նորոգուէր Հոհէնձոլլէրնի թիկնածութիւնը ի մեծ փնաս Գաղղիոյ։

Բուռն վիճաբանութիւնք Գաղղիոյ Օրէնսդիր ժողովոյն մէջ։

2. — Ի Գաղղիա ոգիները այս յուզման մէջ էին, երբ Ցուլիս 6ի Օրէնսդիր ժողովքի մէջ դուքսն Գրամոն, պաշտօնեայ Արտաքին Գործոց, բեմբ ելաւ ծանուցանելու ամբողջ Հոհէնձոլլէրնի ինդրոյն համար Պետութեանց հետ բանակցութիւնքը, Պետութեանց Գաղղիոյ բողոքոյն ցրցուցած կարեւորութիւնը և յարգանքը, Պրուսիոյ թագաւորին «անորոշ» պատասխաննեբը։ Բայց խաղաղութեան սիրոյն համար «չուզե-

1. Կոմսն Ռէնէդէտտի իր Ցիշատակարանաց մէջ պատմելով զասոնք, կը վկայէ որ ամենայն յարարերութիւնք թագաւորին հետ երկուստեք լիովին ազնուութեամբ կատարուեր էին։

ցինք, ըսաւ, Գրամոն, բանակցութիւնքը խզել։ Անոր համար մեծապէս ապշեցանք, երբ երէկ իմացանք որ Պրուսիոյ թագաւորը իւր համհարզներէն միոյն միջոցով իմացուցեր էր դեսպանին, որ զինքը չէր կրնար ընդունիլ, և այս մերժման պաշտօնական և անհերկդիմի կնիք մը տալու համար, իւր վարչութիւնը այս եղելութիւնը պաշտօնապէս հաղորդեր էր Եւրոպիոյ Պաշտօնարանաց[1]։ Մի և նոյն միջոց կը լսէինք որ բարոն Վէրթէրի հրամայուած էր արձակուրդ խնդրելու և զինուորական պատրաստութիւնք կ'ըլլային ի Պրուսիա[2]։ Այս պարագայից մէջ դեռ յուսալ խաղաղութիւն մը, մոռնալ էր մեր պատիւը և անխոհեմութիւն։ Բան չմնաց որ չընենք պատերազմի առիթ չտալու համար. հիմայ կը պատրաստուինք դիմացնիս ելածը քաջութեամբ կատարելու, իւրաքանչիւրին թողլով իրեն ինկած պատասխանատուութիւնը »։ Այս խօսքերս ընդունուեցան շառաչալից կեցցէներով առ կայսրը և առ Գաղղիա։

Արդարութեան պաշտօնեայն վրայ բերաւ որ. « Արդէն երէկուընէ ի զէն կոչեցինք մեր պահեստը և ձեր օգնութեամբ անմիջապէս պէտք եղած միջոցները ձեռք պիտի առնունք պաշտպանելու Գաղղիոյ շահերը, ապահովութիւնը և պատիւը »։ Երկար ծափահարութիւններէ

---

1. Այդ նշանաւոր հեռագիրը որ մեծ դեր ունեցած է պատմութեան մէջ, չէր ուղղուած պեսութեանց, այլ կոմն Բիսմարք ուղղած էր Պրուսիոյ ներկայացուցչաց։ Բիսմարք այսպէս կը պատմէ իր Յիշատակարանաց մէջ. որ ձանձրացած թագուհւոյն ազդեցութենէն Գուլիէլմոսի վրայ, որ խորհուրդ կու տար յամենայն դէպս փախչել պատերազմէ, միացք դրեր էր հրաժարիլ իր պաշտօնէն, առ այս կոչեր էր ճաշի զՄոլտքէ և զԹոն։ Ճաշի վրայ հասաւ թագաւորին հեռագիրը որ կը պատմէր Ռէնդէտտիի « իարդաւանօք » այցելութիւնը, և երկրորդ անգամ իր մերժելը։ Հրաման կու տար թէ պատշաճ կը դատէր եղելութիւնը իմացնել Պրուսիոյ ներկայացուցչաց և լրագրաց։ Բիսմարք հարցուց Մոլտքէի թէ կարո՞ղ էր Պրուսիա, թէ հարկ ըլլար, պատերազմելու։ Մոլտքէ բացատրեց որ թէ պատերազմը անհրաժեշտ է՝ պէտք է փութով ընել. զի Գաղղիա իրենց պէս արագ չէր կրնար պատրաստուիլ։ Այն ատեն կոմն Բիսմարք հեռագիրը տուաւ Պրուսիոյ ներկայացուցչաց և լրագրաց ինչ ինչ յապաւելով, որով իմաստը աւելի գրգռիչ եղաւ Գաղղիոյ դէմ։

2. Հաստատուած է որ մինչեւ Յուլիս 14 Պրուսիա ոչ մի զինուորական տրամադրութիւն բրած էր։

վերջը պաշտօնական առաջարկեց պատերազմի համար 50 միլիոնի վարկ մը, զոր խնդրեց քուէարկել փութանակի։ Մեծամասնութիւնը ոտք ելած կը պոռար փութով քուէարկութիւնը, մինչ ձախակողմեանք կ'ուզէին որ նախ վիճուի. և երբ Ժիրօ երեսփոխանը գոչեց որ «Հայրենեաց պատուոյն համար մենք ալ առաջին ենք պատերազմելու, բայց ոչ գերդաստանական և յարձակողական պատերազմի մը համար». անհամար գոչումներ ծածկեցին իւր ձայնը։ Հազիւ Նախագահն Շնայտէ հանդարտութիւն քարոզելով յաջողեցաւ խօսք տալ Թիէրի, որ ամեն կողմանէ նախատինքներու մէջ կրցաւ քանի մը բառ լսել գոչելով որ «Եթէ կայ օր մը, կայ ժամ մը, որուն համար առանց չափազանցութեան ըսուի, որ պատմութիւնը զմեզ կը դիտէ, այս ժամս, այս օրս է. ինձ այնպէս կու գայ, որ ամենայն ոք պէտք է լրջութեամբ մտածէ։ Երբ պատերազմը հոչակուի, ոչ ոք ինծմէ աւելի պիտի աշխատի վարչութեան ընձեռելու յաղթանակի միջոցները։ Հոս ուրեմն հայրենասիրութեան մրցանք չկայ... Ուրեմն ի՞նչ է խնդիրը։ Արդեօք տա՞լ կամ մերժել վարչութեան իր խնդրած միջոցները։ Ոչ, կը բողոքեմ այս մտածութեան դէմ։ Ուրեմն ի՞նչ բանի համար է. պաշտօնարանին այս բեմէն պատերազմի հրատարակելուն վրայ է, և ես սահմանադրականապէս կը խօսիմ և պէտք է որ ճանչցուի։ Լաւ ուրեմն, արդեօք պաշտօնարանը միայնակ կրնա՞յ պատերազմ հրատարակել։ Արդեօք մենք ալ իրաւունք չունի՞նք խօսելու։ Եւ խօսելէն առաջ պէտք չէ՞ վայրկեան մը մտածել»։ Ապա յիշեցուց Թիէր ո՞րքան հազարաւորներու կենաց համար մահուան քուէարկութիւն կ'ըլլար, և ի՞նչ պատճառաւ, քանի որ Պրուսիոյ թագաւորը արդէն գոհացուցեր էր զԻաղղիա ընդունելով անոր գլխաւոր խնդիրը Սպանիոյ գահուն թիկնածութեան նկատմամբ։ Եւ վերջացուց իւր խօսքը մեծամասնութեան հակառակ նախատանաց և աղաղակներու մէջ գոչելով, որ ինքը «խղճիւ կը կատարէր իւր պարտքը անխոհեմ հայրենասիրութեան դէմ ընդդիմանալով». «Քառասուն տարի

քաղաքական յուզմանց և փոփոխութեանց մէջ ապրելով, միշտ խղճի պարտքս կատարելով, ապահով եղէք որ բնաւ իր մը գիս չկասեցնէր դարձեալ կատարելէ, և ոչ իսկ ձեր նախատիքները »։ Թիէր չյոգնեցաւ կրկին և կրկին բեմը դիմեց ճարտասանական ամեն միջոց գործածեց մեծամասնութիւնը համոզելու, որ ետ կենայ հրատարակելու զպատերազմը, զոր « գերազանցապէս անխոհեմ » կը կոչէր։ Մարգիզն դր Պիրէ ցասմամբ գոչեց առ Թիէր որ « դու հայրենեաց աղետից փողն, գնա ի Կոպլէնց »։ Թիէր պատասխանեց. « Արհամարհեցէք զիս, նախատեցէք... պատրաստ եմ ամեն բանի տանելու հայրենակցացս արեան խնայելու համար. զոր դուք այդպէս անխոհեմութեամբ կ'ուզէք թափել. ես ալ կ'ուզեմ ամենէն աւելի 1866ի վրիպակը դարմանելու, բայց այս պարագայն ահաւոր կերպով փնտրեր կը գտնեմ »։

Թիէրէ վերջը Օլիվիէ բեմը ելաւ նորա խօսից ազդեցութիւնը փճացնելու համար. խօսեցաւ որ՝ ոչ ոք կրնայ պարծիլ աւելի սիրելու, աւելի հոգալու հայրենեաց պատուոյն համար. խօսեցաւ որ թէ լինքը և թէ բովանդակ պաշտօնեայք հակառակ են պատերազմի. բայց կը գտնուի ազգը այնպիսի՛ արհամարհանաց և նախատանաց առջեւ, որ եթէ լռէ, պետութիւններէն ամենէն յետին կարգը պէտք է իջնայ։ Ապա պատմեց Հոհէնձոլլէրնի թիկնածութեան պատմութիւնը և Պրուսիոյ թագաւորին բռնած անտարբեր ընթացքը. « Մենք իրմէ ուրիշ բան չինդրեցինք, բայց եթէ որ այդ հրաժարականը վերջնական թո՛ղ ծանուցանէ և մեզի մերժեց այդ հրատարակութիւնը և իր դեսպանք ամենուն կը ծանուցանեն այս մերժումը։ Ֆիլ Ֆավրը և Գամբէտտա պահանջեցին որ հեռագիրները կարդացուին. Օլիվիէ կարդաց Բիսմարքի նշանաւոր և ճարտարամիտ հեռագիրը որ կ'իմացընէր իւր դեսպանաց թագաւորին գԲէնէդէտտի չընդունիլը։ Ապա վերջացուց իւր խօսքը գոչելով. « Այո՛, այսօրուընէ կը սկսի ինձի և պաշտօնակցացս համար մեծ պատասխանատուութիւն մը, մենք զայն կը ստանձնենք խղճերնիս մաքուր »։

ցեռոյ ձախակողմեանց ընդդիմութիւնը ընկճելու համար, կարդաց նաեւ Բէնէդէտտի դեսպանին հեռագիրը, որով կ'իմացնէր թէ՝ երբ «Գուլիէլմոսէ կրկին ունկնդրութիւն խնդրեր էր, նա պատասխանած էր, որ՝ թիկնածութեան նկատմամբ նախնապէս բսածները կը հաստատէր. և այս եղածը Գաղղիոյ պատուոյն նախատինք մ'էր»։ Կրկին անգամ թիէր սաստկապէս պատասխանեց որ «Պրուսիա բնաւ պատերազմելու կամք չէր ցուցրցած և եթէ Պրուսիա սխալեր էր Հոհէնձոլլէրնի իշխանին թիկնածութեանը հաւանելով, հիմա ինքը կը պատժուէր զայն յետս կոչելով, ուրեմն Գաղղիա այլ եւս ի՞նչ կ'ուզէր»։ Հազիւ թիէր իւր խօսքը լմնցուցեր էր երբ բարոն Ռէրոմ Տավիտ ուղղեց առ թիէր որ «պրուսիացի շատ մը գունդեր հազիւ կրնային այն չարիքը հասցունել Գաղղիոյ, ինչ որ դու յանգէտս կու տաս հայրենեաց», որուն պատասխանեց թիէր. «Դիտէ՞ք, որո՞նք են Գաղղիոյ վնաս ընողք, Մեքսիքոյ պատճառողք, Սադովայի հեղինակք, որոնք մոռնալով ըրած չարիքնին, զմեզ վնասակար կ'ամբաստանեն, երբ մենք կը ջանանք արեան խնայելու... կ'ինչնամ այս բեմէն, որովհետեւ այսքան ինձ կը հակառակիք... բայց կը կրկնեմ որ պատերազմը ո՛չ թէ Գաղղիոյ համար է, այլ պաշտօնարանին սխալանաց համար»։

Ապա Ռիւլ Ֆավրը և Գամբէտտա կրկին պնդեցին որ ընթերցուի Բիսմարքի նախատական ըսուած հեռագիրը։ Բայց պաշտօնարանը պատասխանեց որ արդէն ցանձնաժողովը զայն տեսեր էր։ Գամբէտտա բողոքեց որ այդպիսի էական հեռագիր մը հարկ էր որ տեսնէ բոլոր Գաղղիա, բոլոր Եւրոպա, ապա թէ ոչ «այդ պատերազմը դուք էք որ կը փնտռէք և կ'ուզէք»։ Բազմաթիւ աղաղակք խափանեցին ճարտասանին ձայնը և Օրէնսդիր ժողովոյն առաջարկը մեծամասնութեամբ քուէարկուեցաւ[1]։

---

1. Բիսմարք Յուլիս 20ին կ'ըսէր Ռայխստակի մէջ պաշտօնական կարծեցեալ հեռագրին համար. որ «Գաղղիացի պաշտօնեայք զգուշացան

Նոյն երեկոյ ամբոխը պաշարեց Թիէրի տունը՝ Այն ժորժ հրապարակին մէջ պոռալով և նախատելով։ Շատ ուշ պահանորդք եկան ցրուելու զայն։ Երկրորդ օրը 16 Յուլիսի ծերակուտէն բազումք, որոց գլուխ էր Ռուհէ, Տիւյլերի գացին և ներկայացան կայսեր. առ որ խօսեցաւ Ռուհէ թէ. «Դաղղիոյ պատիւը կ'արհամարհուի. Քու վեհափառութիւնդ սուրը կը քաշէ, Հայրենիք Ձեզի հետ է լի զայրացմամբ և վեհանձնութեամբ»...

Դաղղիոյ վարչութեան գլուխք և բանակին հրամանատարք կը համարէին որ Պրուսիա Դաղղիոյ զինուց առջեւ անմիջապէս պիտի ընկճի։ Պատերազմի պաշտօնեայն՝ Մարաջախտն Լրբէօֆ՝ ըսած էր ծերակուտին մէջ, որ «մենք պատրաստ ենք, հինգ անգամ պատրաստք»։ Օրէնսդիր ժողովոյն մէջ ըսեր էր, որ «Երկու տարի պատերազմ կրնանք ընել, առանց պէտք ունենալու բաճկոնի կոճակ մ'անգամ գնելու»։

Հրատարակութիւն պատերազմին։

3. — Յունիս 19ին ի Բէռլին Դաղղիոյ դեսպանատուն մնացած գործակատարը ծանոյց Պրուսիոյ վարչութեան, որ այն օրուընէ Դաղղիա ինքզինքը պատերազմական դրից մէջ կը նկատէր ընդդէմ Պրուսիոյ և նոյնը երկրորդ օրը դուքան Դրամոն՝ հրատարակեց Օրէնսդիր ժողովոյն մէջ։ Ակ յայնմհետէ Պարիս ջղային յուզում մը ստացաւ, ամեն երեկոյ ծառուղեաց վրայ խուռն բազմութիւնք. «Ի Բէռլին, ի Բէռլին» կը գոչէին և կ'երգէին ժողովրդական եղանակաց վրայ յարմարցընելով։ Առաջին անգամ հրաման տրուեցաւ Մարսէյլիզի երգուիլը, որ խստիւ արգիլուած էր կայսրութեան ժամանակ։ Օրէնսդիր ժողովքը քանի մը օրուան մէջ քուէարկեց ամբողջ Ելեւմուտքը, միանգամայն չորս միլիոն սահմանեց այն ընտանիքներուն, որոց զաւակ-

---

զիջանելու սակաւաթիւ ընդդիմակացից աղերսներուն, որոնք միայն պայծառ մտքերնին պահած էին. և չուզեցին մէջ տեղ բերել այդ հեռագիրը՝ Ամբողջ շէնքը և մանաւանդ պատերազմի հրատարակութիւնը պիտի կործանէր, եթէ երեսփոխանք լսէին այդ երեւակայեալ զրուցիները և մանաւանդ նորա ձեւը»։

ները ի զէն պիտի կոչուէին։ Յուլիս 23ին Նիստերը գոցուեցան, թէպէտ ձախակողմեանք բողոքեցին որ հայրենիք վտանգի մէջ եղած ժամանակ, ինչպէս կրնային հեռացուիլ իրենք։ Վարչութիւնը պատերազմին հանդերձանաց հոգովը զբաղեալ, Օրէնսդիր ժողովքին մտածութիւնն ալ չէր ուզեր ունենալ։

4. — Ի Պրուսիա երբ լսուեցաւ որ Գաղղիոյ վարչութիւնը ի զէն կոչէր էր պահեստ գունդերը, Յուլիս 15ին հրամայեցաւ բոլոր Հիւսիսային դաշնակցութեան բանակը կազմ պատրաստել։ Գուլիէլմոս ի դարձին ի Բէռլին ընդունուեցաւ մեծ յաղթանակով և ուրախութեամբ, որով ժողովուրդը կը ցուցընէր իւր պատրաստականութիւնը զոհելու կեանք և ինչք գերմանական միութիւնը ամրապնդելու համար։ Ամէն կողմ ուրիշ բան չէր լսուեր բայց Հռենոսէն ի Պարիս ուղեւորութեան վրայ և ամէն կողմ կ՝երգըցուէին Հռենոսի պահպան ժողովրդական երգը։ Յուլիս 11ին Գաղղիոյ պատերազմ հրատարակած օրը բացուեցաւ նաեւ Հիւսիսային Դաշնակցութեան խորհրդարանը։ Որովհետեւ Գաղղիա Հրատարակութեան մէջ կ՝ըսէր, որ ստիպուած էր պաշտպանելու իր պատիւը և շահերը Հոհէնձոլլէրնի իշխանին թիկնածութեամբ իրեն և բովանդակ Եւրոպիոյ հաւասարակշռութեան եղած սպառնալեաց դէմ։ Գուլիէլմոս խորհրդարանի բացման խօսից մէջ պատասխան տուաւ որ «Գերմանիա վերջին դարերուս մէջ լռութեամբ տարեր էր իր իրաւանց ոտնակոխ ըլլալուն. վասն զի միշտ պատառուած էր և չունէր միութիւն մը Գաղղիոյ միշտ նորանոր բռնութեանց դէմ դնելու համար։ Գաղղիացի և գերմանացի ժողովուրդք երկուքն ալ քրիստոնէական կրթութեան օրհնութեամբ լցուած, աւելի փրկաւէտ քան արիւնալից մրցումներ պէտք էին ունենալ, բայց Գաղղիոյ իշխողք իրենց շահուց և կրից համար ուզեր էին միշտ զեղծանիլ դրացի մեծ ազգի լռութենէն»։ Գուլիէլմոս կը լմնցնէր իւր խօսքը, որ «թէպէտ յոյժ նախադասելի էր խաղաղութեան օրհնութիւնը, սակայն վստահ էր որ թէ՛ Հիւսիսային և թէ

Պրուսիա։

Հարաւային գերման պետութիւնք պատուոյ և անկախութեան պահպանութեան համար ամեն պէտք եղած զոհողութիւնք պիտի ընէին»։ Խորհրդարանը իր պատասխանին մէջ առ թագաւորն յայտնեց հայրենեաց մեծ սէրը և եռանդը առ ամենայն զոհողութիւն։ Եւ փութով ամենայն կարեւոր ծախք քուէարկուեցան։

Յուլիս 19ին Գուլիէլմոս այց ելաւ ի Կարլսրուհէ, բուրգ իւր նախնեաց գերեզմաններուն և հոն առանձնացեալ աղօթեց։ Այսպիսի մեծ որոշողութեան մը առջեւ թագաւորը յուզեալ էր և որչափ որ ամեն կողմէ, ամեն աշխարհէ գերմանացիք հայրենասիրական և խընդութեան հեռագիրք կը յղէին, այսու հանդերձ Գուլիէլմոս, որ գիտէր գերմանական ցեղերու մէջ առ Պրուսիա եղած բնածին հակակրութիւնք և նախանձք, մեծապէս տագնապ կը զգար ներքսապէս. գիտէր որ այս պարագայն կամ պիտի ամրապնդէր աննկուն գերմանական դաշնակցութիւնը անոր գլուխ դնելով զՊրուսիա, և կամ իսպառ պիտի ցրուէր Դաշնակցութիւնը մահացու հարուածելով զՊրուսիա։

Գերմանական պետութիւնք և պատերազմը։

5. - Արդարեւ գերմանական իւրաքանչիւր պետութիւն ունէր Պրուսիոյ դէմ մախալու առիթ մը և Գերմանական խնդրոյ մը մէջ Պրուսիա միշտ իրեն դէմ պիտի գտնէր մեծամասնութիւն մը, բայց երբ խնդիրը Գաղղիոյ դէմ էր, ամենն ալ միասիրտ գտնուեցան[1]։ Նոյն իսկ Բադէն, որ առաջին սահմանակիցն էր Գաղղիոյ, պահապան ափանց Հռենոսի, որուն թէ ոչ օգնութեան, գոնեայ չէզոք մնալուն վրայ մեծ յոյս ունէր Նապոլէոն Գ. Բադէն ամենէն եռանդուններէն մին երեւցաւ և տեսնուեցաւ որ Գաղղիացւոց շատ դժուար պիտի ըլլար Հռենոսը անցնելը։ Նապոլէոնի վարչութիւնը յոյս ունէր զԲաւիէրա, նախանձորդ Պրուսիոյ, բաժնել գերմանական միութենէն կամ գոնէ չէզոք պահել և առ այս գաղտ շատ մը հրապուրիչ քայլեր եղան, սակայն

1. Վէպեր. Պատմութիւն ժամանակակից 293։

երիտասարդ թագաւորը որչափ որ չունէր համակրութիւն մը Պրուսիոյ նկատմամբ, բայց ամենէն առաջ գերմանասէր էր և նոյնը ներշնչեց և իր ժողովրդեան։ Այսու հանդերձ պատերազմի համար ծախքերը մեծ յուզմամբ և վիճաբանութեամբ քուէարկուեցան խորհրդարանին մէջ։ Բավիէրացին զԲավիէրա միայն կը սիրէ և կը պաշտէ և բնական հանդարտութեամբ մը չուզեր օտարներուն զգացմանցը պատճառաւ նետուիլ պատերազմներու և վտանգներու մէջ։ Էլեւմտից յանձնաժողովը առաջարկեց այնքան գումար մը, որ բաւականանայ Գաղղիոյ և Պրուսիոյ մէջ եղած պատերազմին ժամանակ չափաւոր զունդեր պահելու։ Սակայն մեծամասնութիւնը մերժեց այս առաջարկը և լիովին հաւանութիւնը տուաւ վարչութեան առաջարկներուն։ Նոյն իրիկունը Մինիխ մեծ ուրախութեան մէջ էր և Փուլիէլմոս, որ տագնապաւ մը կը սպասէր Բավիէրայի լուրերուն, իւր երախտագէտ շնորհակալութիւնը յայտնեց առ երիտասարդ Լուդուիկ թագաւորը։ Բավիէրայի պաղութիւնը կամ չէզոքութիւնը կրնար հիմն ի վեր տապալել գերմանական պատերազմին ծրագիրը։

Բավիէրայէ վերջը կարգաւ Վիւրտէմբէրկ, Հէսսէ, Դարմշդատ և ամենայն խորհրդարանք քուէարկեցին պատերազմի ծախքերը։ Եւ երբ Պրուսիոյ քաջ և սիրելի թագաժառանգ իշխանը Հարաւային Գերմանիոյ բոլոր բանակաց ընդհանուր սպարապետ անուանեցաւ, համոզէն Գերմանիա նոր եռանդ մը զգաց· զգաց որ արդէն Գերմանիա ձեւացեր էր և զայն ամրացնելու համար կարեւոր էր միաբան պատերազմի դաշտին վրայ արիւնին խառնել։ Ամեն կողմ ընկերութիւններ ձեւացան արանց և կանանց վիրաւորներ հոգալու, հիւանդանոցներու մէջ ծառայելու և զինուորութեան գացող աղքատաց ընտանիքները հոգալու։ Ամենէն փութով Բադէն և Բավիէրական Պալատինեան վիճակը կազմուեցաւ. վասն զի թշնամին նախ իրենց երկրին վրայ պիտի յարձակէր։ Արդէն կը կրկնուէին ամենուն բերանը Առաջին կայսրութեան ըրած աւերները և հիմայ եւս շատ

մը ահաբեկիչ նկարագիրք կ՚ըլլուէին գաղղիական թուր-
քոսներու, զուաֆներու և սպահիներու գունդերու մա-
սին։ Սահմանած էր թագաւորն Գուլիէլմոս, որ Յուլիս
27ին բոլոր զինուորք աղօթեն թշնամւոյն երկիրը չը-
մտած։ Գուլիէլմոս Յուլիսի վերջը թողուց մայրաքա-
ղաքը և գնաց ի բանակը. նախ ներուին հրատարակե-
լով բոլոր քաղաքական յանցաւորաց, և զամենը ի միու-
թիւն յորդորելով հասարակաց թշնամւոյն առջեւ։

Եւրոպիոյ Պե-
տութեանց բրո-
նած դիրքը։

6. — Նապոլէոն եւս թողլով զկայսրուհին Եւժէնի
թագապահ, կայսրորդւոյն հետ մեկներ էր ի բանակն
հրատարակելով պետութեանց, որ «աշխարհակալութեան
մը համար չէր, որ կը պատերազմէր, նա մանաւանդ
պիտի յարգէր միշտ գերմանական պետութեանց ան-
կախութիւնը, այլ Պրուսիոյ անյագ փառասիրութեան
դէմ դնելու համար, որ ամենուն ալ անվստահութիւն
ներշնչեր և բռնադատեր էր ամեն ազգ զինուց մեծ
հանդերձանքներու, որով Եւրոպա պատերազմի դաշտ
դարձեր էր»։ Ինքը ուրիշ բան չէր ուզեր, բայց այն-
պիսի վիճակ մը՝ յորում ամեն պետութիւն ապահով
ըլլայ իւր ապագային, որով և խաղաղութիւնը հաստա-
տուն հիմանց վրայ դրուի. «Մեծ ժողովուրդ մը, կը յա-
ւելուր, որ կը պաշտպանէ արդար դատ մը, աննկուն է»։

Նապոլէոն Գ. և իւր պաշտօնեայք բոլորովին տար-
բեր գաղափար մը շինած էին Եւրոպիոյ ազգաց և վար-
չութեանց նկատմամբ։ Իրենք կը համարէին և կը յու-
սային, որ Գաղղիոյ ձայնը ամենամեծ ազդեցութիւն մը
պիտի ունենար օտար ազգաց վրայ և պաշտօնարանք
պիտի փութային նիզակակցութեան կամ բարոյական
միութեան մը Գաղղիոյ հետ ընդդէմ Պրուսիոյ։ Պաշտօ-
նական Գաղղիա կը համարէր որ հազիւ Գաղղիոյ բա-
նակը երեւնայ, Պրուսիա անմիջապէս եւրոպական դաշ-
նակցութեան մը վախէն պիտի խոնարհի և հաշտութիւն
պիտի խնդրէ։ Սակայն գաղղիացի պաշտօնարանը բնաւ
արձագանք մը չգտաւ իւր ջանից և զգացմանց և ամեն
կողմ չէզոք մնալու որոշողութիւնը գտաւ. նոյն իսկ
Զուիցերի, Բէլճիա, Հոլանդա, և Իտալիա, որոնք

մանաւոր համակրութիւն մը ունէին առ Գաղղիացիս, չուզեցին բնաւ չէզոքութենէն գիծ մը շեղիլ։ Նոյնը ծանուցին Դանիմարքա և Աւստրիա։ Իշան յԱւստրիա ոմանք, որ Գաղղիոյ հետ դաշնակցութեան մը գաղափար յղացան ոտք հանելով և զԼեհացիս, որոց համար այնքան համակրութիւն յայտներ էր Գաղղիա, սակայն լեհական խնդիր մը կրնար տագնապեցնել զՌուսաստան և զանիկայ միացնել Պրուսիոյ հետ ընդդէմ Աւստրիոյ, որով Բայսթ խոհեմութիւն համարեցաւ Գաղղիոյ նկատմամբ խիստ չէզոքութիւն պահել։ Անգղիոյ ժողովուրդը և լրագիրք աւելի հակակրութեամբ էին ընդդէմ Պրուսիոյ, բայց երբ կոմսն Բիսմարք հրատարակեց Նապոլէոնի տեսութիւնքը և իղձերը Բէլճիոյ նկատմամբ, Անգղիացիք փոխուեցան և պաշտօնարանը ծանոյց որ Բէլճիոյ հողոյն ո՛ր և է փոքր գրաւում մը, առիթ պիտի համարուէր պատերազմի[1]։ Այսպէս Եւրոպիոյ Պետութիւնք առ հասարակ սահմանած էին չէզոք ընթացք մը ունենալ, որով և պատերազմը մնաց բովանդակապէս ընդ մէջ Պրուսիոյ և Գաղղիոյ։

Գաղղիական և պրուսիական բանակները. — Թշնամութեանց սկիզբը. — Սարբրուքէն։

7. — Արդէն երկու բանակները սկսած էին իրենց շարժումները դէպ ի Թշնամւոյն սահմանագլուխները։ Գերմանական բանակը, որ Բավիէրայի Պալատինեան հողէն կը չուէր ի Գաղղիա Յուլիսի վերջերը, երեք սինակ բաժնուած էր։ Ամ թեւը բաղկացեալ էր 60,000 զինուորներէ, որոց կը հրամայէր զօրավարն Շտայնմէց, կեդրոնը ունէր 260,000 զինուորք և 534 թնդանօթք և հրամանատարն էր իշխանն Ֆրեդերիկ Կարլ. ձախակողմեան հրամանատարն էր թագաժառանգ իշխանը Ֆրեդերիկ, որ ունէր 180,000 զինուոր և 480 թնդանօթք, իւր սպայակուտին գլուխ էր զօրավարն Բլումենթալ։ Թագաւորը իբր ընդհանուր սպարապետ կը

1. Գաղղիացի գրիչք Բիսմարքի այս գործը մատնութիւն մը համարած են։ Յայտ է որ պատուարեր ուղղութիւն մը չէր, երբեմն բարեկամի դաշնի բանակցութիւնք յերեւան հանել յետոյ Թշնամութեան ժամանակ։

գտնուէր կեդրոնին մէջ, ունենալով հետը ընդհանուր սպայակուտին գլուխը զզօրավարն Մոլտքէ, ուղղիչ և կարգադրիչ այսպիսի հզօր և կրթեալ բանակի մը։ Թագաւորին հետ էին նաեւ Գերմանական Հիւսիսային դաշնակցութեան Ատենադպիրը Կոմսն Բիսմարք և Ֆոն Ռուն պաշտօնեայ պատերազմի։ Ուրիշ շարժուն ջոկատներով զօրավարն Ֆոկէլ ֆոն Ֆոլքէնշտայն հիւսիսային ծովափանց պաշտպանութեան կը հսկէր, ընդդէմ Թշնամւոյն նաւական փորձի մը։ Այս չորս բանակք մէկ մէկու հետ կապուած էին հսկուած ճամբաներով և գերման բանակը ամեն յառաջելուն միշտ կ'ապահովցնէր բանակաց յարաբերութիւնքը. գործ մը՝ որ իրենց յաղթութիւնը պիտի դիւրացնէր, և յորում առաջին օրուընէ պակասաւոր գտնուեցան Գաղղիացիք, որով և տեսնուեցաւ գաղղիական բանակին և սպայակուտին տկար կազմակերպութիւնը և կրթութիւնն բաղդատմամբ գերմանականին։

Գաղղիական բանակը ի սկզբան երեք մեծ մասի բաժնուած էր։ Առաջինը՝ որ կը կոչուէր բանակ Հռենոսեան 200,000 հոգի, Մէցի չորս կողմերն էր ընդ հրամանատարութեամբ Բազէն մարաջախտին և կանգնուէր զօրավարին։ Կայսերական պահապանաց գլուխ էր զօրավարն Բուրբաքի։ Այս հռենոսեան բանակն եկաւ կայսրն Նապոլէոն Գ. իւր որդւոյն և պատերազմի պաշտօնեայ մարաջախտ Լրբէօֆի հետ։ Հռենոսեան բանակին դէպ ի Արեւելք կը գտնուէր Հարաւային բանակը, 100,000 զինուորք, յորս էին Թուրքոսք և Ալճէրիի զուաֆք։ Այս բանակին կը հրամայէր մարաջախտն Մակ–Մահոն, դուքս Մաճէնտայի, ունենալով հրամանատար յառաջապահ գնդին՝ զզօրավարն Դուէյ, որ արդէն բանակած էր յ'Ռիֆէնհայմ։ Մերձ ի Շալոն կը պատրաստուէր երրորդ բանակ մ'ալ, մեծաւ մասամբ շարժուն պահապաններէ։ Դարձեալ զօրաւոր նաւատորմիղ մը ղրկուած էր Հիւսիսային և Բալթիկ ծովերուն մէջ Պրուսիոյ նաւահանգիստներուն ո՛ր և է յարաբերութիւն խափանելու համար։

Այս ծրագիրը որ պատրաստուած էր Նիէլ մարա-

ջախտէն յամենայն դէպս, և ըստ ռազմագիտաց շատ իմաստութեամբ, անդէն պատերազմին սկիզբէն թողուեցաւ[1]։ Բանակը բաժնուեցան։ Առաջնոյն հրամանատարն եղաւ մարաջախտն Մակ–Մահոն ի Սղրազբուրգ. Բ.ին զօրավարն Ֆրոսսար ի Սէն–Ավոլտ. Գ.ին մարաջախտն Բազէն ի Մէց։ Դ.ին զօրավարն Լամիրօ ի Թիոնվիլ. Ե.ին զօրավարն Ֆայյի ի Բիչ և Ֆալսպուրգ. Զ.ին մարաջախտն Կանրոբէր ի Շալոն. Է.ին զօրավարն Դուէյ ի Կոլմար և Բէլֆոր. Պահապանաց հրամանատար զօրավարն Բուրրաքի ի Նանսի։ Զօրավարաց մէկ մէկու նկատմամբ նախանձներուն պատճառաւ, կայսրը ինքնին առաւ ընդհանուր հրամանատարութիւնը, իւրաքանչիւր հրամանատար։ Միայն ի հարկին պէտք էին մարաջախտի մը հրամանատարութեան ներքեւ մտնել։

Օգոստոս 4ին Նապոլէոն Գ, իւր թագաժառանգ իշխանին հետ հասաւ Ֆրոսսար զօրավարին բանակը, որուն ձեռաց ներքեւ պատերազմական հրահանգ ստացած էր կայսրորդին և գունդերուն հրաման տրուեցաւ յառաջել դէպ ի Սաարբրուքէնի բարձունքը և տիրել քաղաքին։ Սաարբրուքէն ճարտարարուեստի անպաշտպան քաղաք մ'էր, յորում կային 1500 պրուսիացի զինուորք ընդ հետեւակ և ընդ հեծեալ ընդ հրամանատարութեամբ Գէստէլ հազարապետին. որ իմանալով գաղղիացւոց այդքան մեծ գունդերով դիմելը, չուզեց փութով թողուլ քաղաքը և իւր զօրքը քաղաքին արեւմտեան կողմը ամփոփեց պաշտպանութեան համար։ Գաղղիացիք իրենց ոյժը տարածեցին և գետին ձախակողմեան բարձանց վրայէն մեծ կրակ մը սկսան պրուսիացի գունդերուն վրայ։ Պրուսիացի հազարապետը ետ քաշուեցաւ հանդարտութեամբ, միայն ետեւէն հեծեալները քիչ մը ժա-

---

1. Մարաջախտն Նիկէլ մեռաւ պատերազմէն քանի մը ամիս առաջ։ Երբ պատերազմը սկսաւ ձախողել, այն ատեն կրկին դարձուեցաւ Նիկէլ մարաջախտի ծրագրին և բանակները ամփոփուեցան, Բազէն և Մակ–Մահոն մարաջախտներուն հրամանատարութեան ներքեւ։

մանակ եւս թողլով, որպէս զի դիտեն թշնամւոյն ընեւիքը։ Գաղղիացիք բարձունքներէն իջան պատերազմի դաշտը և զայն բռնեցին։ Երկու կողմանէ ալ գրեթէ հաւասար կորուստ եղեր էր։ Պրուսիացւոց կողմանէ մեռեր էին 2 սպայք և վիրաւորուեր էին 73 զինուորք. իսկ Գաղղիացւոց կողմէն մեռեր էին 6 զինուորք և 67 վիրաւորք[1]։

Այս փոքր գուպարածը, որ, կերպով մը ի գործ դրուեցաւ, կ'ըսուի, գաղղիական անհամբերութիւնը գոհացնելու համար, իբր սկզբնական մեծ յաղթութիւն մը հռչակուեցաւ, յորում կայսերազուն իշխանը «որ անցեր էր հրոյ մկրտութենէն», ստացաւ զինուորական մեռալը։ Պարիս խնդութեամբ ուրբ ելաւ և լրագիրք մեծ գրերով հռչակեցին «Սաարբրուքէնի յաղթութիւնը։ Սաարբրուքէն նորէն գաղղիացի քաղաք մը եղաւ։ Սաարի փառաւոր հանքածխոյն բովքը, Գաղղիացւոյն է ալ, Սաարբրուքէն առաջին կայարանն է, փութով պիտի հասնինք ի վերջինն՝ որ է Ռէոլին»։ Նապոլէոն Գ. առ կայսրուհին գրած նամակին մէջ կը պատմէ կայսերազուն իշխանին աներկիւղ արութիւնը գնդակաց ներքեւ, և «հրասփիւռ[2] թնդանօթին առաջին զարմանալիքները»։ Կայսրը գոհ Սաարբրուքէնի գուպարածէն և բարոյական արդիւնքէն, դարձաւ ի Մէց։

Պատերազմունք ի Ֆորպախ և ի Իայիհոֆէն. — Յաղթութիւնք Գերմանացւոյ։

8. — Զօրավարն Ֆրոսսար քիչ որ վերջը ըմբռնեց, որ պրուսիացի բանակին մերձենալովը հարկ էր թողուլ զՍաարբրուքէն և քաշուիլ Ֆորպախի և Սպիքէրէնի բարձանց վրայ, ուսկից վար երկիրը մերթ ընդ մերթ ծառաստանք, երբեմն հովիտ և փոս ամենայարմար էր պաշտպանելու և անվտանգ պատերազմելու. միանգամայն հոս հոն հրանօթիք ամրարտակներ կարող էին թշնամւոյն յառաջելը խափանել։

Օգոստոս 6ին հոն հասաւ պրուսիացի յառաջապահը ընդ հրամանատարութեամբ Ֆրասդրով և Քամէքէ զօրա-

---

1. Մեռելոց և վիրաւորելոց թիւր նշանակած ենք իւրաքանչիւր ազգի պաշտօնական ծանուցմանց համեմատ։

2. Միթրալիոզ։

վարաց և փորձեց ի զուր դիմելու դէպ ի բարձունքը, ուր շատ անձինք զոհ եղան։ Հրանօթից որոտման ձայները հասնելով մինչեւ երկրորդ բանակը, հոն ղրկուեցաւ նոր գունդերով զօրավարն Ալվենսլէբէն։ Կրկին ամրողջացան և նորոգուեցան գունդերը և գերմանացի զինուորք յարձակեցան մոլեգնութեամբ թշնամւոյն ամուր դիրքերուն վրայ դէպ ի բարձունքը։ Գաղղիացիք եւս հաւասար մոլեգնութեամբ և ահաւոր կրակով կը մրցէին պաշտպանել իրենց դիրքերը. գերմանացիք չկրցան յաղթել Գաղղիացւոց եռանդին և եղաւ ժամանակ մը որ գերմանք բռնադատուեցան յետս ընկրկիլ հովիտներուն մէջ և Գաղղիացիք յոյս մը ստացան յաղթութեան. բայց թշնամւոյն ետեւէ ետեւ նոր գունդեր հասան, որոց գլուխ կեցաւ զօրավարն Կէօրէն և հրամայուեցաւ ընդհանուր յարձակումն դէպ ի բարձունքը։ Գաղղիացիք ամենայն եռանդեամբ ընդ երկար մրցեցան անտառին բերանը, ուսկից հարկ էր անցնիլ բարձանց վրայ ելլալու համար և ծառերու կոնակը պաշտպանուած շատ ժամեր կասեցուցին թշնամիքը, ահաւոր կրակով մը, և մինչեւ սկսան իսկ յառաջել թշնամւոյն վրայ։ Սակայն քիչ վերջը հասնելով գերմանացի 15րդ բանակին հետեւակը և 5րդ բանակին հրանոթքը, Գաղղիացիք սկսան տկարանալ և բռնադատուեցան թողուլ բարձունքը և քաշուիլ դէպ ի Սպիքէրէն։ Հասաւ գիշերը վրայ և տակաւին պատերազմը կը տեւէր մոլեգնութեամբ, մինչեւ որ Գաղղիացւոց մթերքը եւս պակսելով, գունդերը սկսան քաշուիլ. նամանաւանդ խառն ի խուռն փախչիլ դէպ ի Ֆորրախ և անկէ Սէնդ-Ավոլտ. թողլով ճամբուն վրայ ցանուած զէնք, պաշարք, սայլեր և ամենայն ինչ։ Պրուսիացիք տիրեցին նաեւ Ֆորրախի, ուր անբաւ մթերք գտան ինչպէս նաեւ Ա. և Բ. գունդերուն։ Գերմանք կորսնցուցեր էին 3000 հոգի, ընդ մեռեալ և ընդ վիրաւոր. իսկ Գաղղիացիք 4000 հոգի և որ աւելի տխուր՝ 2000 գերի[1]։

---

1. Գաղղիացի գրիչք կ'ամբաստանեն զմարաշախտն Բազէն որ Երրորդ բանակովը գտնուելով ի Սէնդ-Ավոլտ և ոչ չոկատ մը ղրկած էր օգնութեան։

Ֆորբախի պատերազմին օրը երկու կողմանք ուրիշ հաւասար կռիւ մ'ալ կ'ունենային ի Ռայխսհոֆէն։

Մարաջախտն Մակ–Մահոն Յուլիս 26ին հասնելով ի Ստրազբուրկ, անմիջապէս ստանձներ էր հրամանատարութիւնը, սակայն ստանց հետը Բարիզէն բերելու մասնաւոր պատերազմական ծրագիր մը։ Օգոստոսի առջի օրերը Ա. զօրաբաժնին բանակները դէպ ի Բավիէրայի սահմանագլխոյ վրայ տեղաւորեցան ի Հակրնո, Վիսսէնբուրկ, Ռայխսհոֆֆէն և Ֆրէօշվիլլէր։ Առաջին բանակին որ ի Վէօրթ՝ կը հրամայէր զօրավարն Դիւկրո, Բ.ին ի Հակրնո՝ զօրավարն Դուէյ, Գ.ին և և Դ.ին ի Ստրազբուրկ զօրավարքն Ռաուլ և Լարտիկ։ Մակ Մահոն Դուէյ զօրավարին հրամայած էր Առաջին բանակին Երկրորդ զօրաբաժնով, բռնել զ'Վիսսէնբուրկ, կեդրոն շատ մը ամուր տեղեաց գիծերու և նշանաւոր յամին 1793ի Յեղափոխութեան պատերազմներով։

Պրուսիոյ թագաժառանգ իշխանը գուշակելով շարժումը թողուց Օգոստոս 3ին Ափիտ իւր բանակետը և 4ին զ'Լանդաու, և չուեց ի Լաուդէր, Վիսսէնբուրկի և Լաուդէնբուրկի մէջ. Վիւրտէմբէրկցի և բադէնցի բանակներն ալ նոյն առաւօտ անցան զՀոենոս ի Մաքսաւ՝ Լաուդէնբուրկի մօտ։ Ա.Ջ զօրաբաժինն կազմեալ Բավիէրայի գունդերէ, որոց կը հրամայէին զօրավարքն Թանն, Հարթման և զօրավարն Բոթմէր, շլեզիացիներէ և բոզէնցիներէ, ընդ հրամանատարութեամբ Փիրիպպիս զօրավարին և Հեսսէի և Նասաւի և Թուրինկիոյ գունդերէն, որոց կը հրամայէր զօրավարն Բոզէ, նախ թըշնամւոյն մօտեցան և զօրավարն Բոթմէր հրաման ստացաւ բաղխել ի Վիսսէնպուրկ զգաղղիացի բանակը, մինչ պրուսիացի գունդերը պիտի նպաստէին յարձակման և Բադենցի և Վիւրդէմբուրկցի գունդերը ընդ հրամանատարութեամբ Վէրթէր զօրավարին պիտի կռուէին Լաուդէնբուրկի դէմ։ Զարմանալին այն է, որ այս ընդարձակ շարժումը գաղղիացի բանակը չէր զգացած և մինչ Բ. զօրաբաժնին գինուորք նստեր էին իրենց ճաշը առնլու, յանկարծ Պրուսիացւոց գնդակները անձրեւի

պէս սկսան տեղալ և Դաղղիացիք անապարանոք դիմեցին թնդանոթներուն քով և սկսաւ ահաւոր կռիւ մը։ Զօրավարն Բոթմէր երկու անգամ փորձեց տիրելու բարձունքներուն և երկու անգամ վանուեցաւ. բայց Պրուսիոյ թագաժառանգ իշխանը, որ ժամը 9ին ի վեր Շվայկէնի արեւելեան բարձունքը բռներ էր, կը փութացնէ իւր գունդերէն մին դէպ ի Վիսսէնբուրկ։ Դաղղիացիք ամրացած Գայսբէրկի մէջ, որ Վիսսէնբուրկի դէպ ի հարաւ ունէր բլուր մը և բերդ մը, ահաւոր կրակ կը թափէին թշնամեաց վրայ ընդ հրամանատարութեամբ Արէլ Դուէյ զօրավարին, երբ Պրուսիոյ թագաժառանգին ղրկած գունդը հասաւ և սկսաւ բաղխել ճակատէն հրանոթիւք զԳայսբէրկ։ Դաղղիացի պահանորդք անհնարին եռանդեամբ կը մրցէին. թնդանոթի գնդակ մը արդէն սպաններ էր զզօրավարն Արէլ Դուէյ. ռազմական մթերքնին սկսան պակսիլ և պրուսիացի հրամանատարը մնաւ ի Գայսբէրկ մրցելով փողոցէ փողոց։ Ամրոցին մէջ մնացեր էին միայն 200 զինուորք առանց պաշարի, որոնք անձնատուր եղան։ Բանակին մնացեալ մասը Շաֆուզի կողմէն քաշուեցաւ, թողլով թշնամւոյն ձեռքը գաղղիացի ճամբարը, թնդանոթ մը, շատ մը մթերք, հազար գերի և Դուէյ զօրավարին մարմինը։ Այս առաջին յաղթութիւնն էր որ գերմանացի բանակը կ՚ընէր Դաղղիոյ հողին վրայ, և անհնարին է նկարագրել զինուորաց ուրախութիւնը, եռանդը և գոչիւնները երբ Պրուսիոյ թագաժառանգ իշխանը բանակը եկաւ յայտնելու իւր խնդակցութիւնը[1]։ Այս պատերազմով Գերմանացւոց կը բացուէր Ալզաս և երկաթուղւոյ գիծը Լանդաուի վրայէն դէպ ի Ստրազբուրկ և

1. Դաղղիացի պատմագիրք Վիսսէնբուրկի պատերազմը անակնկալ պատահար մը կը համարին. որով և յաղթութիւնը ոչ այնքան պատուաբեր թշնամւոյն։ Գերմանացի «Ազգայնական հրատարակութիւնքն» կը ստգտանէ զՄակ Մահոն որ Դուէյ զօրավարին բանակը բոլորովին «օգոյ մէջ դրած էր». առանց կռթնելու Ա. Զօրաբաժնին վրայ, և կը ստգտանէ զԳիւկրս, որ Դուէյ զօրավարին հրաման տուած էր ընդունիլ կռիւ։

Բազիլէա, որով և Մէցի գիծը։ Ուրիշ ճիւղով մ'ալ կը բացուէր իրենց Լիւնրվիլի և Նանսիի ճամբան ընդ Վոժ. որով և գերմանական այս առաջին յաջողութիւնը մեծ ազդեցութիւն պիտի ունենար ամբողջ պատերազմին վրայ։

Այնքան արագ եղած էր այս պատերազմը և պարտութիւնը, որ Մակ Մահոն սկիզբը և վերջը միաբան լսեց և զօրավարն Դիւկրո կէս օրին հասնելով ի Լէմբրախ, երբ Պիժէոնիէի բարձունքը ելաւ, տեսաւ որ արդէն գաղղիացի զինուորք ցիրուցան կը փախչէին։ Երկու կողմանէ ալ շատ զոհեր եղան. Գերմանացիք կորսընցուցին 91 սպայք և 1460 զինուորք ընդ մեռեալ և ընդ վիրաւոր։ Քայզէրբէրկ հազարապետը իւր կեանքը տալով, հազիւ կրցաւ իւր գնդին դրօշակը ազատել։ Իսկ Գաղղիացւոց կորուստն եղաւ 800 մեռեալ։ Սակայն Վիսսէնբուրկի պատերազմին պարագայք բոլոր Եւրոպիոյ յայտարար եղան գերմանական բանակին կանոնաւորութեան, քաջութեան և անձնանուիրութեան. նոյն համբաւը աւելի աճեցաւ երկու օր վերջը Վէօրթի պատերազմով։

Մակ Մահոն իր երեք զօրաբաժինները ամփոփեր էր Ռայխսհոֆէնի մօտ, ուր Օգոստոսի 4է 5ի գիշերը լսեց Վիսսէնբուրկի պարտութիւնը։ Այս ձախող դէպքին տպաւորութիւնը բառնալու համար ուրիշ յաղթութեան մը պէտք ունէր կայսրը և Մակ Մահոն կը համարէր որ իւր առջեւը կը գտնուէր միայն այն զօրաբաժինը, որ կռուեր էր Արէլ Դուէյ զօրավարին բանակին դէմ. և միտքը դրաւ Սաւէրբախ գետին վրայ սպասել թշնամուն։ Միանգամայն իմացաւ որ կայսրը իր հրամանատարութեան ներքեւ կը դնէր Լ. և Լ. զօրաբաժինները, որոց կը հրամայէին զօրավարքն դը Ֆայի և Ֆէլիքս Դուէյ՝ եղբայր սպանելոյն. ինչպէս Բազէնի հրամանին ներքեւ կը դրուէին Բ. Դ. և Դ. զօրաբաժինները։ Մակ Մահոն ժողվեց բոլոր իւր բանակները. ձախ թեւին կը հրամայէր զօրավարն Դիւկրո և աջ թեւին զօրավարքն Լարտիկ և Կոնսէյլ Դիւմէնիլ։ Պրու-

սիոյ թագաժառանգ իշխանը Ֆրեդերիկ Գուլիէլմոս, հանդարտաբայլ առաջ կու գար դէպ ի Վիսէնբուրգ և կը բռնէր Վէօրթի բարձունքը մինչեւ ի Կանոդէր, զոր Մակ Մահոն թողուցեր էր։ Իշխանը միշտ յարաբերութեանց մէջ միւս բանակաց հետ, կը յառաջէր պատերազմական արհեստի ամեն գիտութեամբ, շարունակ ընդունելով եւս թարմ օգնութիւններ։ Մակ Մահոն պատերազմը սկսելէն առաջ դր Ֆայի զօրավարին լուր ղրկած էր հասնելու իւր բանակով և նեցուկ ըլլալու պատերազմին. Մակ Մահոն ունէր միայն 41,000 զինուոր։ Պատերազմին առաւօտը՝ զօրավարներէ ոմանք տեղեկանալով թշնամւոյն մեծամասնութեանը և զօրութեանը, խորհուրդ տուին Մակ Մահոնի պատերազմը չսկսիլ կամ չընդունել և նահանջել դէպ ի Վոժ։ Մարաջախտը գրեթէ համոզուած էր և մինչեւ իսկ հրաման տուաւ նահանջելու, բայց շատ ուշ էր և արդէն կռիւը սկսեր էր։

Գաղղիացիք և Գերմանացիք մէկ մէկու դիմաց գտնուեցան Օգոստոս 6ի առաւօտեան ժամը 7ին երկու զանազան կէտերու վրայ ի Վէօրթ և ի Դիւնսդէտ։ Ի Վէօրթ Գերմանացիք յարձակողականը սկսան, իսկ Գաղղիացիք ի Դիւնսդէտ։ Այնքան ահաւոր էր Գաղղիացւոց կրակը, որ Բավիէրացիք չկրնալով դիմանալ, սկսան նահանջել և Մակ Մահոն անոնց քաշուիլը տեսնելով, բոլոր իւր ոյժը սկսաւ հաւաքել ի Վէօրթ, և պատերազմը հոն սաստկացաւ։ Բավիէրացիք որ քաշուեր էին, իրենք ալ դէպ ի Վէօրթ դիմեցին հոն նեցուկ ըլլալու կողմնակի պատերազմող գունդերուն։ Ահագին մարդկային բուռն հեղեղ մ'էր որ կը դիմէր գաղղիացի գունդերուն վրայ, որոնք դիւցազնական քաջութեամբ կը մրցէին. Միդրայլեոգի հարուածները ոչինչ էին գերմանական ճիշտ չափուած և կշռուած հարուածներուն դիմաց, յորոց ոչ մին կը վրիպէր։ Գերմանացւոց ետեւէ ետեւ նոր գունդեր կը հասնէին կռուին տեղը. մինչ Գաղղիացիք արդէն նուազ թուով սկսան տրկարանալ։ Զօրաց խրախոյսը ոգեւորելու համար ձայն

տարածուեցաւ որ Ֆ. բանակը կը հասնէր դը Ֆայիի հետ, մինչ սա կը գտնուէր ի Սարբրկրմին և Բիչ։ Կէս օրուան ժամը մէկին ժամանակ Պրուսիոյ թագաժառանգ իշխանը Վէօրթի բարձանց վրայ ինքը առաւ պատերազմին հրամանատարութիւնը. Վիւրտէմբէրկցիք միացան Պրուսիացւոց, Բավիէրացիք նոր օգնութիւններ ստացան և Ֆ. բանակը փութով տիրեց ընդ մէջ Վէօրթի և Ֆրէշվիլլէրի եղած զագաթան և ԺԱ. բանակն ալ յարձակեցաւ Գաղղիացւոց աջին վրայ, որ սկսաւ քիչ քիչ բաշուիլ ի Նիսէրվալդ։ Լարտիկ և Կոնսէյլ Տիւմէնիլ զօրարաժինը քաջութեամբ դէմ կը դնէին բաղխման, բայց կը տեսնեն որ ահաւոր դիրքի մէջ են և արդէն գուաֆներու և որսորդներուն հրամանատար հազարապետը ինկած են։ Զօրավարն Լարտիկ բոլոր իւր պահեստը գործածեր էր. կը մնար միայն Միշէլ զօրավարին զրահաւորաց ջոկատը և անոր ալ հրամայեց յարձակել։ Այն ատեն պատահեցաւ այն այնքան անսպատակ բայց շքեղ և պանծալի յարձակումը որ մինչեւ գրեթէ վիպասանական համրաւ մը ստացած է։ Հազար հոգիէն աւելի ձիաւորք, չնայելով որ և է արգելքի, ամեն երագութեամբ անցնելով, ցատրելով կտրտած ծառերու փոսերու վրայէն թշնամւոյն տեղատարափ կրակին մէջէն կ'ընթանան ի Մալսպրոն նոր կազմուելիք գունդերուն վրայ։ Գաղղիացի հետեւակ գունդերը ի թիկանց իրենց կրակովը կ'ուզեն օգնել անոնց, բայց ի զուր, զրահաւորք կը սկսին խորտակուիլ թշնամւոյն առջեւ, կրակներուն ներքեւ. և այն շքեղ գնդէն հազիւ 150 հոգի կը մնան որոնք ցիրուցան միւս հեծելոց հետ Սաւէրի մօտ կը հանդիպին պրուսիացի գունդերու, որոց հետ կրկին կը ստիպուին պատերազմիլ։ Ժամը երեք էր Միշէլ զօրավարին զրահաւոր ջոկատը ամբողջովին անհետացեր էր։ Գերմանացի բանակը տիրեց Լլզասահաւզէնի գոր ի զուր կրկին փորձեց ձեռք բերելու գաղղիացի հետեւակը։ Պրուսիացի գունդերը պահուրտած այգիներու մէջ և ամբարտակներու կոնակը՝ անթիւ ջարդ բրին Բոննրման զօրավարի

գունդերուն, որ հրման ստացեր էր նոր յարձակման մը։ Ամբողջ շուարում մը տիրեր էր գաղղիացի գունդերուն վրայ։ Շատ գունդեր փորձեր էին յարձակելու, բայց ամենն ալ մեծ վնասներ ունեցեր էին, և սակայն տակաւին եռանդեամբ կը շարունակէին կռուելու։ Ժամը կէսօրուան չորսին Ֆրէօշվիլլէրի քով ահեղ կռիւ մը սկսաւ. Գերմանացւոց զօրքը միշտ կը փոխուէր, իսկ գաղղիացիք սպառեր էին։ Մակ Մահոն երկու ձի փոխեր էր. զօրավարն Դաուլ՝ վիրաւորեալ դեռ կը շարունակէր կռուելու փողոցներուն մէջ երբ գերի բռնուեցաւ։ Կռիւը շարունակեց մինչև ժամը 5. հուսկ Գաղղիացիք սկսան փախչիլ և Գերմանացիք տիրեցին Ֆրէօշվիլլէրի, յաղթութիւնը հռչակեցին և սկսան փախստականաց ետեւէն ինկնալ։

Պատերազմը 15 ժամ տեւեր էր և հարկ է վկայել երկու կողման ալ ամենամեծ անձնանուիրումը և դիւցազնական քաջութիւնը պատերազմի դաշտին վրայ։ Բավիէրացի և Վիւրտէմբէրկցի բանակները կորսնցուցեր էին 8000 հոգի, յորոց 400ը սպայք։ Իսկ Գաղղիացիք կորսնցուցեր էին 7000 հոգի, 8000 գերի, յորոց կէսը գուաֆք և թուրքոսք, 30 թնթանօթք, 2 արծիւք, բանակին դրամարկղը, ընդհանուր զօրավարին սպասքը, անբաւ պաշար, բայց ամենէն ծանր և ամենէն ցաւալին Գաղղիացւոց համար այն էր որ այս պատերազմով կը կորսնցնէին զԱլզաս որ բաց կը մնար գերմանական բանակին առջև։

Իսկ Մակ Մահոնի և կամ Հենոսեան բանակին մնացորդը, ցիրուցած դիմեցին շատ նեղութեամբ և զոհողութեամբ մինչև Շալոն կտրելով զՆիտրրրոն, և Նանսի. ամեն կողմ տիւր ազդեցութիւն մը թողլով։ Հոն հասան նաեւ Մակ Մահոն և դը Ֆայլի, քիչ վերջը հասաւ նաեւ Դուէյ զօրավարին բանակը, որով ոչ մի զինուոր մնաց Ալզասի մէջ։ Այսպէս թագաժառանգ իշխանին բանակը կրցաւ մի առ մի տիրելու Հենոսի ձախ ափանց վրայ եղած ամեն բերդերու և երկաթուղւոյ գիծերուն, զորս անվնաս թողեր էր Մակ

Մահոն, և հասնելով Ստրազբուրկի դիմաց, հոն թողուց Բաղէնի բանակ մը քաղաքը պաշարելու և դիմեց ի Բէլֆոր։

Պատերազմը դեռ նոր սկսեր էր և Գաղղիա կը կորսնցունէր իր երկու գաւառները և թշնամին իր հողին վրայ էր։ Գաղղիոյ զօրավարք արդէն փորձ մը տուեր էին իրենց աստիճանին համեմատ կարողութիւն չունենալնուն և տարտամ ծրագրին։



ԳԼՈՒԽ Է.

ԿԱՅՍԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ. ՍԼԻՄԱՆ

1. Պատերազմին առաջին արձագանգները ի Պարիս. — 2. Պարիս պաշարման վիճակի մէջ. — 3. Օրէնսդիր ժողովը – Անկումն Լյմիլ Օլիվիէ պաշտօնարանին – Դը Պալիկաս պաշտօնարան. — 4. Գերմանացի բանակը ի Լորէն – Պատերազմունք ի Բէլգիոն, Խազէնվիլ կամ Մարզլաթուր. Գրավելոթ. — 5. Բազէնի բանակը պաշարուած Մէցի մէջ – Պատերազմունք ի Սէն Պրիվա – Ս. Բարբ. — 6. Պատերազմին արձագանգը ի Բէլգիոն եւ ի Գերմանիա. — 7. Մակ Մահոնի բանակը. — 8. Սէդան – Մակ Մահոնի վիրաւորուիլը – Ջորավարն Վիֆէն հրամանատար բանակին. — 9. Ցանդուգն պաշտպանութիւն – Անձնասարութիւն գաղղիական բանակին. — 10. Նապոլէոն Գ.ի գերութիւնը։

Պատերազմին առաջին արձագանգները ի Պարիս։

1. — Նապոլէոն Գ.ի բանակը մեկնելու օրէն Պարիսու ժողովուրդը անհամբեր կը սպասէր յաղթութեանց լուրերուն և բանակին Բէլգիոն հասնելուն Օգոստոս 15ի, կայսերութեան տօնախմբութեան օրը։ Այս էր առհասարակ ամենուն ստոյգ կարծիքը անոր համար մեծ ուրախութեամբ կարդրցուեցաւ վարչութեան Օգոստոս 2ի որմոց վրայ կպուցած ծանուցագիրը, որով կ'իմացնէր ժողովրդեան Սաարբրուքէնի պատերազմը և յաղթութինը, յորում «գունդերը մեծ եռանդեամբ կռուեր էին. կայսրն եւս ներկայ էր կռուոյն և կայսերազուն իշխանը»։ Պարիսու ժողովուրդը այս ծանուցագրին վրայ անմիջապէս մեծ ուրախութեամբք փողոցները և բուլվարները լեցուեցաւ, և եռանդեամբ կը վիճէր բանակին

յաղթական ընթացքին վրայ մինչեւ Պրուսիոյ մայրաքաղաքը։ Սակայն քիչ քիչ գաւառներէն եկած լրագիրք Սաարբրուքէնի յաղթութիւնը իր չափաւոր և սահմանափակ վիճակին մէջ դրին։ Օգոստոս 5ի երեկոյեան դէմ ուրիշ պաշտօնական ծանուցագիր մը կ՝իմացնէր համառօտիւ Վիսսէնբուրկի քով թշնամւոյն յարձակումը, որուն արութեամբ դէմ դրեր էր բանակը և Արէլ Դուէյ զօրավարը մեռեր էր, կը յաւելուր որ՝ «մարաջախտն Մակ Մահոն կը ջանայ տեղւոյն վրայ հաւաքելու իր ձեռքին տակ եղած գունդերը»։ Լուրոպիոյ մայրաքաղաքաց նոյն երեկոյի ամեն լրագիրք մանրամասն կը պատմէին պատերազմին պարագայքը. պաշտօնարանն եւս ստացած էր ստոյգ լուրը, սակայն չէր ուզեր յայտնել ժողովրդեան, խիթալով անակնկալ յուզում մը. և լրագրաց խիստ կերպով լռութիւն պատուիրած էր, խոստանալով որ ինքը շարունակաբար հաղորդէ լուրերն։ Ամբոխը դիմեր էր բուլվարներուն վրայ նոր լուր մը ստանալու նպատակաւ և անթիւ բազմութիւն մը մշտաՏնաց կեցեր էր Արդարութեան և Ղերքին գործոց պաշտօնարաններուն դիմաց, «լո՛ւր» կանչելով, բայց տուող չկար։ Այն միջոցին ձայն տարածուեցաւ որ Դրէհէր և Հիրշ դրամափոխք մեծամեծ գումարներ ղրկեր էին ի Պրուսիա։ Ժողովրդեան մաս մը սպառնալից եղանակաւ գնաց պաշարեց նոցա գրասենեակքը. ուրիշներ սակաբանի դիմաց խռնեցան. այլք պրուսիացւոյ մը տան դիմաց ժողուեցան և փեղկերուն վրայ գրեցին. «Մահ Պրուսիացւոյ»։ Ջինուորք և պահապանք կը դիմէին ամեն ուրեք ամբոխը զսպելու։ Խումբ մը մարդկան սկսաւ քար նետել զինանշանի մը վրայ պրուսիական զայն համարելով. հարկ եղաւ որ ոստիկան մը ելլէ վեր և պատուհանէն գրուած կախէ որ «Յարգեցէք Ռուսիոյ զինանշանը»։ Այն ատեն սպառնալիքները ծափահարութեան փոխուեցան։ Այս ահաւոր ամբոխը մինչեւ գիշեր, հովէն զարնուած ալեաց նման, փողոցներու մէջ տարուբեր գնաց եկաւ։ Ապա քիչ քիչ քաշուեցաւ ամենայն ոք իր տունը։

Պարիս պաշարման վիճակի մէջ կը դրուի։

2. — Օգոստոս 6ին առաւօտ լուր մը տարածուեցաւ որ Մակ Մահոն մեծ յաղթութիւն մը կատարեր է և գերի բռներ է 25,000 գմբմանացի զինուոր, ինչպէս նաեւ զիշխանն Կարլ իր բովանդակ սպայակուտով։ Անմիջապէս լուրը ընթացաւ բոլոր Պարիս, ամենայն ոք տունը և պատուհանը զարդարեց, ամեն կողմ բարձր, կոկորդալիր կը լսուէին «Կեցցէ՛ Գաղղիա, կեցցէ՛ բանակը»։ Լուրը մէկէն միւսն անցնելով իրը պաշտօնական, առեանք և դատաստանարանք քիչ մը ժամանակ կեցան, ամենայն ոք դէպ ի բուլվարները դիմեց, ուրախութենէ շատերը կու լային, կը գրկախառնուէին, Մարսէյեզ կ՚երգէին։ Փողոցէն դիպուածով բաց կառք կ՚անցնէր նշանաւոր երգչուհի մը, ամբոխը կեցուց կառքը և խնդրեց որ հոն երգէ Մարսէյեզը, մեծաւ ծափահարութեամբ, գաղղիական խանդը իր վերջին կէտը հասեր էր։ Սուտ հեռագիրը ընթացաւ նաեւ ի գաւառս, ուր քաղաքապետք անմիջապէս պալատնին զարդարեցին։ Բայց ժամանակը յառաջելով քիչ քիչ սկսան փնտռել յաղթութեան պաշտօնական հաստատութիւնը, որ դեռ չէր երեւար։ Անհամբերութիւնը զայրութի փոխուեցաւ կամաց կամաց և բարկացած ամբոխը դիմեց Արդարութեան պաշտօնարանը դուրս կոչելով զՕլիվիէ։ Պաշտօնեայն չերեւցաւ, և ամբոխը ընդ երկար սպասեց Վանդոմի հրապարակին վրայ։ Օլիվիէ Ամենկլուէն հասաւ և ժողովրդեան շարունակ գոչելէն երեւցաւ ի պատուհան և իմացուց ոք «Մակարանը կպցուած այս աւուր լուրը սուտ է. և հնարողը արդէն կալանաւորուեր է, և վարչութիւնը յապագային ամեն միջոց պիտի գործադրէ, որ այդպիսի բան մը այլ եւս չպատահի»։ Անհնար է նկարագրել ամբոխին յուսախաբութիւնը և վհատութիւնը. ամենայն ոք քիչ քիչ կը սկսի ցրուիլ, մինչ շատ անձինք փոքր կառքով մը կ՚ընթանային փողոցներուն մէջ շարժելով մեծագիր վերտառութիւն մը թէ. «Սուտ լրոյն հեղինակը կալանաւորեցաւ»։ Պաշտօնարանը եւս հրատարակութիւն մը ըրաւ, հրաւիրելով զժողովուրդը հանդարտելու, և իմացնելով որ ան-

կէ վերջը պատերազմի դաշտէ ամեն լուր ստորագրուած պիտի ըլլար Ներքին Գործոց պաշտօնէէն։

Երկրորդ օրը սկսան ծանուցագիրք հրատարակուիլ, որոնք ծածկեալ բառերով կը հասկցնէին բանակին անյաջողութիւնքը և ի վերջոյ թագաւոր կայսրուհին կը յայտնէր որ «Այս ծանր լուրերուն առջեւ իւր պարտքը արդէն յայտնի էր. կը դիմենք ամենուն հայրենասիրութեան և արութեան»։ Վարչութեան կողմանէ երեք հրովարտակք կը հրատարակուէին պաշտօնական լրագրին մէջ, յորոց մին Օգոստոս 11ի ի գումարումն կը կոչէր խորհրդարանքը, երկրորդը զՊարիս պաշարման վիճակի մէջ կը կը դնէր և երրորդը Պարիսու զօրաց հրամանատար կ'անուանէր զմարաջախտն Բարակէ դ'Իլիէ։

Պատերազմի դաշտէն նոր եկած հեռագիրք քաղարկեալ կը պատմէին Ֆորպախի և Ֆրէօշվիլլէրի պարտութիւնքը. և կայսրուհին կը յորդորէր զամենը ի կարգապահութիւն, և պատրաստ կը ցուցնէր ինքզինքը առաջինն ըլլալու դիմելու ի վտանգ, Գաղղիոյ դրօշը պաշտպանելու համար։ «Միակայն այս կնկան ձայնը, որուն կ'ընծայուէր Պրուսիոյ հետ կռիւը և որ չէր վախցած ըսելու. «Այս պատերազմը՝ իմ պատերազմս է». ալ մէկու մը ազդեցութիւն չունէր[1]»։ Կը շարունակէին կիսկտուր հեռագիրք պատերազմին նկատմամբ, Օգոստոս 8ին պաշտօնական լրագիրը կը հրամայէր 30էն մինչեւ 40 տարուան քաղաքացիքը շարժուն ազգային պահանորդք կազմել քաղաքին մէջ. կ'իմացնէր որ ուրիշ օրէնք մ'ալ կը պատրաստուէր 30էը վար քաղաքացւոց նկատմամբ։ Զախակոմեան 18 Երեսփոխանք, յորս կային Կոշլրի, Կրէմիէօ, Ժիւլ Ֆավրը, Ժիւլ Ֆէրրի, Պէլլըտան, Գառնիէ Փաժէս, Փիկար, Ժիւլ Սիմոն, Ժիւլ Դրէվի, Լամանուէլ Ալրակո, ծանուցագիր մը ներկայացուցին իրենց ստորագրութեամբ առ Ներքին Գործոց պաշտօնեայն՝ պահանջելով որ Պարիսու և Գաղ-

1. Դաքսիլ Դիլոր Բ. Կայսրութիւն։ Էջ. Հատոր։

դիոյ ամեն քաղաքացի զէնք առնու. բայց վարչութիւնը յանձն չառաւ և մարաջախտն Բարակէ դ'Իլիէ ըստ պաշարման կանոնի արգիլեց ամբոխին հասարակաց տեղեր խնիլ։ Զինակիրք բռնած էին Պէ փողոցը, Վանդոմի հրապարակը, Մոնմարդրի բուլվարը և ուրիշ տեղեր։ Պարիս այն ատեն մէկ վարկենի մէջ իբրեւ երազէ մը արթնցաւ. հասկցաւ իւր յուսախաբութիւնը և վրէժ սկսաւ խորհիլ զինքը խաբողներէն։

Վարչութիւնն ու կայսրուհին հասարակաց կարծեաց զոհութիւն տալու համար հարկ տեսան պաշտօնընկէց ընել Պատերազմի պաշտօնական զմարաջախտն Լրբէօֆ։ Զօրավարաց մեծամասնութիւնը և գրեթէ ամբողջութիւնը կ'ուզէր որ Նապոլէոն Գ. հեռանայ բանակէն, բայց կայսրը գուշակելով ի Պարիս իրեն պահուած ընդունելութիւնը, մնաց ի բանակը, այսպէս ըստ գաղղիացի քննադատից շատ մը որոշողութեանց իր ներկայութեամբ վնաս բերելով և ծանրացնելով իրաց դժբաղդ վիճակը։

3. Արդէն կայսրուհւոյն դրութիւնն անգամ Պարիսու մէջ սկսեր էր դժուարանալ։ Օրէնսդիր ժողովոյն երեսփոխանք փութով ամեն կողմանէ սկսան հասնիլ և անոնցմէ մաս մը Օգոստոս 7ին հաւաքուելով Պալէ Բուրբոնի սրահից մէջ սահմանեց կայսրուհւոյն ներկայանալ նուիրակութեամբ մը, և խնդրել որ զօրավարն կուզէն Մոնդորան կոմս Պալիքաոյի՝ հրամանատար անուանուի Պարիս պաշտպանող բանակին, և արձակուի Ոլիվիէ պաշտօնարանը և նոր պաշտօնարան մը կազմուի որուն պատերազմի պաշտօնեայն ըլլայ զօրավարն Տրոշիւ։ Յետինս մեծ ժողովրդականութիւն մը ունեցեր էր գրուածքով մը Գաղղիոյ բանակը 1867ի, յորում քննադատած էր զինուորական շատ մը թերութիւնք։ Եւ որովհետեւ պաշտօնական անձինք և մանաւանդ Նապոլէոն Գ, ծիծաղեր էին այդ պրակին վրայ, այս բաւական եղեր էին զինքը Զախակողմեան և ժողովրդեան մեծամասնութեան սիրելի և ժողովրդական ընելու։ Կայսրուհին ընդունեցաւ նուիրակութիւնը, պաշտօնարանի

Օրէնսդիր ժողովքը։

փոփոխութեան մասին բան մը չլսաւ, բայց յայտնեց որ դժուարին էր Տրոշի զօրավարին պատերազմի պաշտօնեայ անուանուիլը, և իմացուց որ արդէն ինքը Լիոնի զինուորական հրամանատարութենէ կոչած էր գկոմսն Պալիքաոյի, պատերազմի պաշտօնեայ անուանելու նպատակաւ։

Օգոստոս 9ին երբ Օրէնսդիր ժողովքը կը գումարուէր, ամբոխը Պալէ Բուրբոնի առջեւ կեցած կը գոչէր «ի սահմանագլուխ»։ Նիստը բացուելուն Լամիլ Օլիվիէ ճարտասանութեամբ մը ջանաց պաշտօնարանին վրայէն, եղած արկածից պատասխանատուութիւնքը թօթուել, յայտնելով որ Օրէնսդիր ժողովքը հարկ էր որ նեցուկ ըլլար պաշտօնարանին։ Խօսեցաւ որ զինուորական կացութիւնը դեռ յուսահատ դրից մը մէջ չէր. պէտք էր զգուշանալ շփոթներէ և խնդրեց ժողովքին վստահութիւնը։ Յետոյ ելաւ Ժիւլ Ֆաւրը և առաջարկեց, նախ՝ զինել բոլոր կարող քաղաքացիքը, կարգադրել ազգային պահապանքը ըստ օրինաց 1831ի. երկրորդ՝ նկատի առնելով ընդհանուր հրամանատարին բացարձակ անկարողութիւնը, մէկ հոգւոյ մը ձեռք կեդրոնացնել բովանդակ զօրութիւնքը, բայց այդ անձը կայսրը չ'ըլլայ. 3. Խորհրդարանը իր ձեռքը առնու ամենայն իշխանութիւն և 15 անդամներէ Յանձնաժողով մը կազմէ թշնամւոյն արշաւանքը վանելու համար։ Այս երրորդ առաջարկը մեծ աղմուկ հանեց, շատերը կը գոչէին որ հակառակ է Սահմանադրութեան և Գրանիէ դը Կասանեաք կայսերական եռանդուն երեսփոխանը գոչեց որ այդ նշան մ'էր յեղափոխութեան. և առաջարկեց որ ձախակողմեանք նոյն իրիկունը պատերազմական առենի մը մատնուին։ Շարունակեցին դարձեալ վիճաբանութիւնք մինչեւ օրակարգի մը քուէարկութեան ժամանակը գալով Կլէման Ֆիւվէրնուա երեսփոխանն առաջարկեց քուէարկել որ «Խորհրդարանը սահմանելով նեցուկ ըլլալու պաշտօնարանի մը միայն որ կարող ըլլայ ազգային պաշտպանութիւնը կազմակերպելու, կ'անցնի օրուան խնդրոյն»։ Լամիլ Օլիվիէ ծանոյց որ թէ՛

ինքը և թէ իր ընկերը չէին ընդուներ այդ օրակարգը։ Կարգը քուէարկութեան եկաւ և Դիւվէռնուա օրակարգը ընդունուեցաւ մեծամասնութեամբ։ Էմիլ Օլիվիէ խնդրեց որ նիստը կէս ժամ մը առ կախ մնայ, մինչեւ որ ինքը Տիւյլերի երթայ և դառնայ։ Խորհրդարանը քուէարկեց միանգամայն Ժիւլ Ֆաւրի առաջարկին Առաջին մասը, սակայն միւսները մերժեց։

Էմիլ Օլիվիէ Պաշտօնարանին անկումը. պաշտօնարան Պալիքաօ։

Այս միջոցին դարձած բլլալով Էմիլ Օլիվիէ, եկաւ բեմը և խնդացուց որ բոլոր պաշտօնարանը իւր հրաժարականը տուած էր թագաւորական կայսրուհւոյն որ ընդուներ էր և Պալիքաոյի կոմսին յանձնած էր նոր պաշտօնարանը կազմելու։ Այս բսելէն վերջը Օլիվիէ լուռ եկաւ նստելու իւր նախկին երեսփոխանութեան բազմոցին վրայ։ Երկրորդ օրուան նստին մէջ Օրէնսդիր ժողովը մեծամասն քուէարկեց որ «Բանակները արդիւնաւորը էին հայրենեաց» և ընդունեցաւ զինուորական շատ մը օրէնքներ, որովը պիտի ամէն պատերազմական նիւթեր։ Այս կոմս Պալիքաոյ ծանոյց նոր պաշտօնարանը այսպէս՝ նախագահ և պաշտօնեայ պատերազմի կոմսն Պալիքաօ. Շրջրօ՝ Ներքին Գործոց, Մանը՝ Էլեւմոնից, Դրլատուր տ՝Օվէրնյը՝ Արտաքին Գործոց. Դրանպէրրէ Արդարութեան և Կրօնից. Ծովակալն Ռիզօ դը ժէնուիլլի՝ Ծովային զօրութեան. բարոն ժէրոմ Տավիտ՝ Հասարակաց վաստակոց. Երկրագործութեան և Վաճառականութեան՝ Կլէման Դիւվէրնուա. Հասարակաց կրթութեան և Գեղարուեստից՝ երեսփոխանն ժիւլ Բրամ։ Նոր պաշտօնեայք, բաց ի վերջինէս, ամենն ալ եռանդուն կայսերականք էին։ Կոմսն Պալիքաոյ՝ քաջ, բայց անխիղճ զինուորականի մը համբաւ ունէր, ինքն էր Պէքինի արշաւանքին գլուխ, որ կայսերաց ձմեռուան պալատը կողոպտել տուեր էր։

Հետեւեալ աւուր գումարմանց մէջ երեսփոխանն կէրադրի առաջարկեց գմարաջախտն Լրբէօֆ դատաստանի կոչել, բայց շատ երեսփոխանք հակառակ կեցան, նոյն իսկ թիէր որ այս առթիւ յիշեցուց 15 օր առաջ իւր խօսքերը ընդդէմ պատերազմին. «Հաստատա-

պէս գիտէի որ մենք պատրաստ չէինք»։ Պատերազմի պաշտօնական այս առթիւ իմացուց որ արդէն ընդհանուր հրամանատարութիւնը Լրբէօֆ մարաջախտէն առնուած էր և յանձնուած էր Բազէն մարաջախտին։ Երեսփոխանք մեծ գոհութեամբ լսեցին այս լուրը. մեծ էր Բազէնի վրայ եղած համարումը։ Բարթէլըմի Ակնտ–Իլէր մինչեւ գոչեց որ «Հայրենիք այս լրոյն վրայ պիտի ապահովանայ»։

Կայսրուհին ըսած էր որ բնաւ պիտի չթողուր զմայրաքաղաքը, անոր համար պաշտօնարանը որ իրը Ազգային պաշտպանութեան պաշտօնարան ընտրուեցաւ, Արտաքին Գործոց և Արդարութեան պաշտօնարանաց ճիւղեր հաստատեց ի Տուր, և նուիրակութիւն մը կեդրոնական վարչութեան. որպէս զի թէ յանկարծ գաւառք կորուած ճնան Պարիսէ, կարենան կառավարուիլ նոյն ուղղութեամբ։ Պրուսիացւոց բանակին յառաջիկը բռնաղատած էր զՊաշտօնարանը այս զգուշութիւնքը հոգալու։

Գերմանացի բանակը ի Լորէն։

4. Բրուսիացի բանակները Ֆորբաիի և Վէօրթի պատերազմերէն վերջը արագութեամբ կը յառաջէին, Մոզէլի, Մէցի և Նանսիի ուղղութեամբ։ Ճամբուն վրայ եղած փոքրիկ քաղաքները՝ Լիխտէնբէրկ, Ֆալսբուրկ անձնատուր եղան և Ֆրէտէրիկ Կարոլոս իշխանը բռնեց Սաարբրկէմինի երկաթուղին դէպ ի Մէց։ Պրուսիոյ թագաժառանգը Օգոստոս 11ին իւր բանակը հաստատեց ի Սաարբրուքէն։ Հեծելազօրը 10ին բռնեց բոլոր Սաար–Իւնիոն գիծը, Գրօ Թոնքէն, Ֆոլքըմոն, Ֆուլինյի, Լէզէտանժ։ Մարսալ Օգոստոս 14ին անձնատուր եղաւ և գերմանացի Գ. զօրարաժինը արդէն Նանսի մոտեցած էր, մինչ ուրիշ գունդեր Թուլի և Ֆրասսարի կողմէն կը ջանային Մէցի երկաթուղին կտրելու։ Բավիէրացի իշխանն Կարոլոս կը բռնէ նաեւ զՊոն Մուսսոն

Օգոստ. 11։

և Ա. և Բ. բանակները կը մոտենան Մէցի։ Երբ թագաժառանգ իշխանը մտաւ ի Նանսի կրնար ըսուիլ որ ամբողջ Լորէն և Ալզաս Գերմանացւոց ձեռքն ընկեր էին ութ օրուան մէջ՝ բաց ի քանի մը փոքր բերդերէ և

Մէջէ՝ որ ամենէն նշանաւոր բերդաքաղաքներէն մին էր, ուր կար զաղղիական բանակին ընտիր մասը, 200,000 զինուոր հեծեալ և հետեւակ, 500 թնդանօթք, 180 մի-բրայլօզք։ Շտայնմէց զօրավարին յանձնուեցաւ Սաարբրուքէնի վրայէն դիմել դէպ ի Մէց։

Գուլիէլմոս թագաւորը, որ բանակին հետ կը չուէր, հրովարտակով մը իմացուց զաղղիացի ժողովրդեան, որ ինքը՝ զինուորաց և ոչ քաղաքացւոց հետ եկած էր կռուելու, որով թէ՛ կենաց և թէ ստացուածոց ամենայն ապահովութիւն և պաշտպանութիւն պիտի ունենային, եթէ թշնամութիւն չընէին ընդդէմ գերմանացի զունդերու։ Թէ՛ Ալզասի և թէ Լորէնի մէջ անմիջապէս գերմանացի իշխանութիւնք դրուեցան։ Այն օրուրնէ հասկցուեցաւ որ Պրուսիա այն գաւառները, որոնք երբեմն Գերմանիոյ կը պատկանէին, կ'ուզէր կրկին Գերմանիոյ հետ միացնել։

Գերմանիոյ յառաջած ժամանակ զաղղիական նոր ընդհանուր հրամանատարը Բազէն՝ իրեն կանչեր էր Ֆրոսսարի բանակը. իսկ Մակ Մահոն Վոժի բանակին Ֆացորդներով կը քաշուէր ի հարաւ դէպ ի Շալոն, միանալու հոն այն բանակին հետ, որ նոր կը կազմուէր և պիտի կոչուէր Բանակ Պարիսու։ Ի Շալոն Մակ Մահոնի քով կային դր Ֆայի, Ֆէլիքս Դուէյ, Դիւկրօ, Լյրբէոն զօրավարք։ Իսկ ի Մէց Բազէնի քով էին զօրավարքն Կանրոբէր, Բուրբաքի, Լամիրօ, Դրկան և հինաւուրց զօրավարն Շանգառնիէ, որ պատերազմի հոչակուելուն, մոռնալով անձնական ոխեր, ինդրած էր Նապոլէոնէ ծառայել իր հայրենեացը և այսպէս աքսորէն դարձեր էր։ Մարաջախտն Բազէն գերմանական ահաւոր զօրութեան և թուոյն դէմ առնելու համար, մտածեց քաշուիլ Մէցէն ի Վէրդէոն, բռնել Մէօզի գիծը և այսպէս միանալ Մակ Մահոնի հետ ի Շալոն։ Իսկ Մէցի մէջ պաշտպանութեան բաւական զունդեր միայն ձգել ընդ հրամանատարութեամբ Կոֆինիէր զօրավարին և ապա Շամպանյի կամ Ալբնի լերկ դաշտերուն մէջ միահամուռ պատերազմ մը տալ։ Մոլտքէ գուշակեց

Բազէնի զգուշաւոր ծրագիրը և ամեն միջոց ձեռք առաւ այդ միացումը խափանել։ Աւ հասարակ ռազմագէտք կը մեղադրեն Բազէնի չափազանց դանդաղութիւնը իւր գաղափարաց միութեան գործադրութեան մէջ, որով իշխանն կարողաց կրցաւ բռնել Մէցի և վէրտէնի մէջ ճամբան, այսպէս անկարելի ընելով երկու մարաջախտներուն միանալը. և յաջողեցաւ Օգոստոս 16ին իւր յառաջապահը այնպիսի գծի մը վրայ դնել, որով այլ եւս անհնար էր Բազէնի Մէցէն դուրս ելլել։ Իրիշ երկու գունդեր ալ Շտայնմէց զօրարաժնէն, որոց կը հրամայէին զօրավարքն Կոլց և Ֆաստրով, Գաղղիացւոց ի Շալոն նահանջը կտրելու համար Մոզէլի աջ ափանց վրայ յարձակեցան գաղղիացի բանակաց վրայ ի Կոլոմբիէ և Բէրնի։ Զօրավարն Լամիրօ որ Մոզէլի ձախ կողմը կը հսկէր բանակին անցքին, գուշակելով Պրուսիացւոց շարժմունքէն յարձակում մը ընդդէմ Դրընիէ զօրավարին, անմիջապէս հրաման ըրաւ երկու զօրաբաժիններուն օգնութեան հասնելու։ Միսէյ զօրավարին զօրաբաժինը ընթացիկ բոյլով հասաւ մինչեւ Դրընիէ զօրաբաժնին քով, միւս զօրաբաժինը դիմեց դէպ ի Մէց անտառը, զոր թշնամին բռներ էր։ Մոլեգին կռիւ մը սկսաւ սուինով, որ տեւեց մինչեւ երեկոյեան ութը և Պրուսիացիք ստիպուեցան կարգով ետ քաշուիլ, որով գաղղիացի բանակը շարունակեց իւր նահանջը։ Բէռնիի պատերազմը յաջողութիւն մ՝էր Գաղղիացւոց համար և կայսրը իր ձեռքը երկնցնելով առ մարաջախտն Բազէն ըսաւ որ «վերջապէս բաղդը դարձուցիր, մարաջախտ[1]»։

Պատերազմանք ի Բէրնի. Ռազնվիլ կամ Մազաքուր, Կրավելոտ։

Սակայն Բազէն փոխանակ օգտուելու այս կռուէն և փութացնելու նահանջը և միանալու Մակ Մահոնի հետ Շալոնի վրայ, ամրողջ Օգոստոս 14ը և 15 գի-

---

1. Բայց ըստ գերմանացի Ռազմագիտական Տեղեկագրոյն Բէռնիի պատերազմը որ մը կրնացնել տուեր էր Գաղղիացւոց. Բազէն պէտք էր պատերազմ տուած ըլլար Մէցի մօտ բովանդակ գունդերով, յենլով Մէցի վրայ։ Ըստ այդ քննադատութեան, Բազէն կամ բովանդակ բաժիններով պէտք էր կռուիլ կամ բնաւ չկռուիլ։

շերը մնաց իւր դրից մէջ Մէցի շրջակայքը։ Օգոստոս 15ին կայսեր տօնին օրը, զոր Գաղղիացիք կը յուսային տօնել ի Բէռլին, սկսան հապճեպով ելլել Մէցէն գունդերը և երկու ճամբով սկսան երթալ ի հարաւ. մաս մը ընդ Ռոզէնվիլ, Վիոնվիլ և Մազլաթուր, մաս մը ընդ Դոնքուր, Ժառնի և Լոդէն դէպ ի Վէրդէոն. բայց դանդաղութեամբ. այնքան բազմութիւն էր սայլից, որ ականատես մը նմանցուցած է Դարեհի բանակին, և չկրցաւ երեկոյեան հասնիլ ի Կրավրլոտ, ինչպէս էր ծրագիրը։ Թշնամւոյն անցքը արգիլելու համար օդը հանել տուաւ Լոնժրվիլի երկաթուղւոյն կամուրջը, բայց թշնամին տ'Ալբսի կամուրջէն անցաւ, զոր մոռցեր էին վերցնելու։ Նապոլէոն որ բանակը կը գտնուէր և գիշերը անցուցեր էր ի Կրավրլոտ, յետ երկար և ծանր ծուռ շրջաններու միշտ վտանգաւ բռնուելու գերմանացի ուլաններէն, վերջապէս ապաւինեցաւ ի Վէրդէոն և անկէ ի Շալոն։ Իրեն հետ ապահովութեան համար առած էր այլ և այլ գունդեր, որոնք յետոյ չկրցան դառնալ ճամբան կտրուած ըլլալով։ Սակայն Բազէնի գունդերը այնքան դանդաղութեամբ կը նահանջէին, որ Ֆրեդերիկ Կարլի զօրարաժնին յառաջապահը հապճեպ քայլով գանազան կէտերէ անցաւ գետը ի Պոն և Միուսէն և երեկոյեան դէմ տեղաւորուեցաւ Մոզէլի շրջակայ լեռանց վրայ, մերձ ի Թիոնվիլ, Մազլաթուր և Վիոնվիլ։ Մոլտքէի ծրագիրն էր զԳաղղիացիս կեցնելու Մէօզի և Մէօզէլի մէջ և բռնադատել հոն վճռական պատերազմի մը. միանգամայն զրաղեցնել զթշնամին մինչեւ որ հասնին ամեն գունդերը։ Բազէն գուշակած էր թշնամւոյն դիտաւորութիւնը և պէտք եղած հրահանգները ղրկած էր Լամիրօ, Բուրբաքի, Կանրոբէր և Լբէօֆ զօրավարաց։ Յետինս հրամանատար անուանուեր էր Դրկան զօրավարին տեղ, որ մահացու վիրաւորուած էր։ Բազէն ըմբռնած էր, որ թշնամին կողմակի պիտի բաղխէր իւր գունդերը. և յիրաւի Ֆոն Բուրտէնբրոք զօրարաժինը, յանկարծ իւր ընթացքէն շեղելով ժամը 10ին միջոցները բռնեց Վիոնվիլ և Ֆլավինյի բար-

ձունքը. Մէկլէմբուրկի դքսին զօրաբաժինը և ուրիշ գունդեր նեցուկ կ՚ըլլային և կը պահպանէին իւր թիկունքը։ Ժամը 10 անցեր էր, երբ սկսաւ երկուստեք ահաւոր կրակ մը և կատաղի կռիւ մը, յորում թէ գաղղիացի և թէ գերմանացի զինուորք անընկճելի մոլեգնութեամբ մը կը մրցէին, և փոփոխակի դիրքերնին կը կորսնցնէին և ձեռք կը բերէին անթիւ կեանքերու զոհողութեամբ։ Միջօրէն անցեր էր երբ գերմանացի նոր գունդերը երթալով կը բազմանային և ահա յանկարծ ձիաւոր պահապանք՝ միարան ձիաւոր զրահաւորաց հետ դիմեցին գաղղիացի հետեւակաց վրայ, որոնք կը պաշտպանէին զՖլավինյի։ Գաղղիացի հեծեալք ուրիշ կողմ կը գտնուէին և Բազէն հրանօթից լուծ մը հասուց այն կէտին վրայ։ Բրուսիացի հիւսարներու երկու ջոկատ յանդգնութեամբ դիմեցին մինչեւ այդ լուծին վրայ։ Մարաջախտն Բազէն որ այն ատեն իւր սպայակոյտով հեծեալքը կը պատրաստէր, տեսաւ պրուսիացի հիւսարներու իւր հրանօթից վրայ դիմելը. սուրը քաշեց և նոյնը բրին իւր բոլոր սպայք և սուրերու ահաւոր կռիւ մը սկսաւ [1]։ Կը հասնին Ռէզոնվիլի գաղղիացի պահեստի գնդերը, որոնք կ՚ելնան հիւսարներու վրայ, ասոնք առիւծարար կռուելով ամենն ալ կելնան Ֆինքէնշդայն հազարապետին հետ։ Այս միջոցիս գաղղիացի ուրիշ հրանօթք Բրիւնվիլի ուղղութեամբ ահաւոր կրակ կը թափէին գերմանացւոց ուրիշ գունդերուն վրայ իրենց նեցուկ ունենալով Ֆորդոն զօրաբաժինը։ Զօրավարն Ֆոն Ալվենսլէբէն որ անպատճառ կարեւոր կը տեսնէր տիրել Ռէզոնվիլի, նոր հասած ուհլան գնդերուն պատուիրեց դիմելու այդ հրանօթից ուղղութեամբ և խափանել զանոնք որոնք արգելք կ՚ըլլային իւր յառաջելուն ի Ռէզոնվիլ։ Գերմանացի ջոկատք եռանդեամբ կը

---

1. Պատերազմին գերմանացի պաշտօնական տեղեկագիրք՝ կը գովեն Բազէնի անձնական ցրցուցած մեծ քաջութիւնը, բայց կը մեղադրեն որ իւր ընդհանուր հրամանատար պէտք չէր խառնուիլին մէջ մտներ, որով չէր կրնար կառավարել պատերազմը։

դիմեն այդ դրից վրայ, կ'առնուն գաղղիացւոց հրանօթից բարձունքը, բայց յանկարծ կը գտնուին Ֆորդոն զօրաբաժնին դիմաց։ Անմիջապէս ձիաւորք կը յարձակին վրանին և բոլորովին կը խորտակեն զիրենք։ Կը հասնի Լրբէօֆ մարաջախտն և զգերմանացի Լեհման ջոկատը մեծ վնասներով կը վանէ մօտ անտառէն։ Այս միջոցին Բազէն կրնար քաշուիլ ի Վէրդէօն, եթէ ուզէր, բայց միտքը դրած ըլլալով Մէցի մէջ ամրանալ, հրաման ղրկեց Լրբէօֆ մարաջախտին, հաստատուն պահել իւր բռնած դիրքը և Մոնդոտոն զօրաբաժինը ղրկել պաշտպանել զԿրավըլոտ թշնամւոյն յանկարծական յարձակման մը դէմ։ Գունդեր կը ղրկէ որ բռնեն նաեւ Արս՝ Լա Մոզէլի կիրճը ուսկից թշնամին արդէն գետը անցեր էր։

Գաղղիացի բանակը ամենն ալ յաջող դիրքի մէջ էին և յաղթութիւնը աւելի իրենց կողմն էր և ահա ժամը 2ին լսուեցան ահագին հրանօթից որոտմունք։ Զօրավարն Ֆոն Ֆրանց մեծազօր բանակաւ կը դիմէր Վիոնվիլի անտառին մէջ գաղղիացի գունդերուն վրայ, և ուրիշ գունդեր ալ կը յարձակէին Ֆրընիէ զօրավարին զօրաբաժնին վրայ։ Բազէն փութով ճեպընթաց հոն կը վազցնէ Միսսէի զօրաբաժինը որ մոլեգնութեամբ կը կռուի թշնամւոյն հետ և կը խորտակէ հետեւակներու ամբողջ գունդ մը և կը յափշտակէ դրօշը[1]։ Ժամը երեք և կէս էր և պատերազմի դաշտը հասաւ իշխանն Ֆրեդերիկ Կարլ նոր գունդերով և ժամը 5ին սկսաւ արշաւանքը դէպ ի Ռէզոնվիլ. արդէն մաս մը կը փորձեր էր Մոզէլի հեղեղատներուն մէջէն գալու յառաջելու բայց Գաղղիացիք ամեն կէտերու վրայ վանեցին թշնամին. գիշերը վրայ հասաւ և երկու բանակք տակաւին կը մրցէին վերջնական յաղթութեան մը համար, որ անորոշ մնաց. երկու կողմն ալ ունենալով յաջողութիւններ և կորուստներ։ Գերմանացիք գովելով իսկ Գաղղիացւոց բանակին

---

1. Ամբողջ պատերազմին մէջ մէկ միայն այս դրօշը կերած են գաղղիացիք։

զորս Վիւրտէմբէրկի իշխանը մղեր էր Սէն Պրիվայի վրայ պատերազմին վճռական դիրք մը տալու համար յետ անթիւ կորստեան ետ նահանջեր էին։ «Դաղղիացիք դէմ կը կենային և կ՚իյնային, Գերմանացիք կը դիմագրաւէին և կը մեռնէին[1]»։ Ժամը 6 էր, օրը լմննալու վրայ էր և սակայն դեռ Դաղղիացւոց դիրքերը մնացեր էին ամրոնաբարելի։ Գերմանացւոց մեծագոյն ոյժը կեդրոնացաւ Սէն Պրիվայի վրայ ընդդէմ Կանրոբէրի զօրաբաժնին որուն հրանօթից մթերքը սկսան պակսիլ. Կանրոբէր այլ և այլ անգամ Բազէնի լուր ղրկեց օգնութիւն խնդրելով։ Հասան օգնութիւնք բայց ուշ մինչ ինքը բռնադատուեր էր սաքսոն նոր գունդերուն ահաւոր բաղխման դիմաց թողուլ զՍէն Պրիվա։ Ժամը 8 անցեր էր և գիշերը կոխեր էր երբ Պրուսիացիք խորտակելով գաղղիացի աջակողմեան բանակը մտան ի Սէն Պրիվա որ արդէն կ՚այրէր։ Դարուս մէջ քիչ յարձակումն այսքան արիւնահեղ եղած է. և պատերազմի դաշտի վրայ անկելոց թիւը նշան էր երկու կողման մոլեգին մրցման։

Գաղղիոյ կորուստն եղաւ 500 սպայք և 11,000 զինուորք. իսկ Գերմանացւոցը 520 սպայք և 13,000 զինուորք։ Դարձեալ Գերմանացիք 6000ի մօտ գերի բռնեցին, որոնք գրեթէ ամենն ալ Սէն Պրիվայի տուներուն մէջ կը կռուէին։ Գաղղիացիք ալ գերեցին 800 զինուորք։ Գուլիէլմոս թագաւորը Ռէզոնվիլի մօտ բարձունքերէն կը դիտէր պատերազմը, ուսկից սակայն զինքը հեռացուց Ֆոն Ռուն պատերազմի պաշտօնեայն, երբ վտանգը շատցաւ։ Սէն Պրիվայի կուոյն մէջ Գաղղիացւոց ցրցուցած անընկճելի դիմադրութիւնը մեծ գովեստներ ընդունեցաւ, նոյն իսկ ի թշնամւոյն, բայց չէր յաղթութիւն մը, ինչպէս զայն հռչակեց կոմսն Պալիկաոյ Օրէնսդիր ժողովքին մէջ։ Գերմանացւոց համար այն մեծ արդինքը ունեցաւ, որ 180,000 զինուորաց

1. Տեղեկագիր գերմանացի զօրավարի մը։

բանակ մը կը կորսնցընէր իւր հաղորդակցութիւնը Պարիսու հետ որով և տխուր տպաւորութիւն մը կը տիրէր գաղղիացի բանակին վրայ, խառն զանազան հոգիներով. զի ամենայն զինուոր կը մտածէր որ այլ եւս չէր կարելի յարաբերութիւն ունենալ հայրենեացը և ընտանեացը հետ։

Բազէնի բանակը պաշարուած Մէցի մէջ։

5. — Օգոստոս 19ի գիշերը գերմանացի բանակը թէպէտ պարտասեալը, սակայն խիթալով յանկարծական յարձակում մը, ամբողջ գիշերը հսկած էին։ Իսկ Բազէն քաշուեր էր Մէցի պարսպաց ներքեւ, որով և առժամս թողուցեր էր պատերազմելու գաղափարը։ Այն ատեն Գերմանացւոց ուրիշ բան չէր մնար, բայց յամենուստ պաշարել այդ բանակը և չթողուլ որ կարենայ միանալ Մակ Մահոնի հետ։ Այս բանիս համար այլ և այլ գունդերէ նոր բանակ մը կազմուեցաւ, որ կոչուեցաւ բանակ պաշարման, և որուն հրամանատարն եղաւ իշխանն Ֆրետերիկ Կարլ։ Ուրիշ բանակ մը եւս կազմուեցաւ բանակ Մէոզի որ պիտի յառաջէր Պարիսու վրայ և որուն հրամանատարն եղաւ Սաքսոնիոյ Ալբրէխտ թագաժառանգ իշխանը։ Պաշարման բանակը որ մինչեւ 150,000 զինուորի հասաւ, զքաղաքը պաշարեց Մոզէլի երկու կողմի ափունքներէն, տեղ տեղ մինչեւ երեք գիծ ձեւացնելով, և հոս հոն ամրոցներ և ամբարտակներ բարձրացնելով պաշտպանուելու քաղքէն նետուած ռումբերէ. և այդ շրջանակէ դուրս անմիջապէս բանակեցան յառաջապահը վեց մղոնէն աւելի երկայնութեամբ. ամեն կողմ դիտարանք, հեռագիրք կը դիւրացնէին յարաբերութիւնք և զգուշութիւնք։ Մէցի նման առաջնակարգ բերդաքաղաք մը ընկճելու համար, այսօրինակ պաշարում մը պէտք էր, վասն զի յարձակմամբ առնուլը անկարելի կ'երեւար։

Քաղքին մերձակայ տեղերու բնակիչք խառն ի խուռն առանց պաշարի և պատրաստութեան դիմէր էին ի Մէց։ Բազէն նախ բռնադատուեցաւ ներքին վիճակը կարգաւորել և ապա պատրաստեց գունդերը Օգոստոս 21ին ընդհանուր յարձակմամբ մը ճամբայ բանալու

համար, բայց այս յարձակումը չգործադրուեցաւ փոթորկի և մեծ անձրեւներու պատճառաւ։ Բազէն՝ Մակ Մահոնի հաղորդած էր իւր դիրքը և ծրագիրը և կը համարէր որ Մակ Մահոն սկսած ըլլայ իւր չուն դէպ ի Մէց, որով և իրեն կը մնար Թիոնվիլի կողմէն կտրելով գերմանացի բանակը, այն ուղղութեան վրայ երթալ միանալ Մակ Մահոնի հետ։ Երբ լսեց մանաւանդ որ պաշարման բանակի գունդերէն ոմանք օգնութեան դիմեր են Սաքսոնիոյ թագաժառանգ իշխանին, սպառնացեալ Մակ Մահոնի բանակէն, այն ատեն հաստատապէս սահմանեց Օգոստոս 31ին ուժով ելք մը փորձել դէպ ի դուրս։ Յարձակումը սկսաւ կէսօրէն վերջը և Գաղղիացիք մեծ թափով մը տիրեցին Նուասվիլի և Սէրվինյէի։ Զօրավարն Մանդէօֆֆէլ որուն յանձնուած էր պաշարման գծին հրամանատարութիւնը, պաշտպանողական դիրք մը առաւ անմիջապէս։ Բազէն ժամը 2ին յառաջեց Սէնտ Բարբի ճամբուն վրայ և հոն հրանօթք տեղաւորեց, ուրիշ հրետանիք եւս հաստատեց զանազան կէտերու վրայ և ժամը 4ին ահաւոր կրակ մը սկսաւ թափել ամեն կողմանէ։ Այս հարուածներուն պաշտպանութեան ներքեւ մարաջախտն Լրբէօֆ գունդերը սկսաւ յառաջ մղել դէպ ի Սէնդ Բարբ, որ Թիոնվիլի գլխաւոր ճամբուն վրայ էր՝ նպատակ պատերազմին։ Մի և նոյն միջոցին կանրոպէր գրաւեց զՇէյլ և վանն, զօրավարն Սիսսէ բուռն կռուով տիրեց Ֆայի ճամբուն, մինչդեռ զօրավարն Լամիրօ թարմ գնդերով պատրաստ կեցած էր ի հարկին դիմելու օգնութեան։ Գաղղիացիք ամեն կէտերու վրայ յաջող գտնուեր էին, կը մնար վերջնական ուժով բաղխում մը ձեռնարկել, խորտակել գերմանացի գունդերը և կտրել անցնիլ։ Այս հրամանին կը սպասէին բոլոր զօրավարք, երբ յանկարծ Բազէն դադրեցուց պատերազմը և երեկոյեան ժամը 9ին մտաւ ի Սէն Ժիւլիէն[1]։

Գուպարածք. — Սէնտ Բարբ։

1. Այս է գաղղիացի զօրավարաց վկայութիւնը դասական խուզարկութեան առնչեւ ի Վէրսայլ։

Այն օրուընէ բոլոր զօրավարաց և զօրաց սրտին մէջ սկսաւ տխուր անվստահութիւն մը, ուսկից ծնաւ կասկած մը ընդդէմ Բազէն մարաջախտին։ Զօրավարք յետոյ ամբաստանեցին որ նոյն իսկ հրամանատարաց և սպայակուտին ծածուկ պահած էր Շալոնի բանակին կազմութիւնը և Մակ Մահոնի չուն դէպ ի Մէց։

Երկրորդ օրը առաւօտեան 5ին դեռ չլուսացած՝ Մանդէսֆֆէլ գլուխ կենալով Բ բանակին և Ֆուսմէր լանդվէրին որոնք միայն 40,000 էին, սկսաւ ահաւոր կրակ մը Ֆաղղիացւոց վրայ։ Հասան նաեւ այն գունդերը որոնք բաժնուած էին Մաքսոնիոյ թագաժառանգ իշխանին օգնութեան երթալու համար և սկսաւ շարունակ կրակ մը, որով Ֆաղղիացիք բռնադատուեցան թողլու իրենց բռնած կէտերը և քաշուիլ ի Մէց կամ Մէցի ամենամօտ շրջակայքը։

Պրուսիացիք անկէ վերջը ամեն օր ջանային աւելի փակել բերդաքաղաքը։ Արդէն վերջին օրերուն յաջողութիւնք նոր եռանդ տուեր էին բանակին և ազգին որ պատրաստ էր մեծագոյն զոհողութիւնք ընելու, պատերազմին յաղթական վերջ մը տալու համար։

Պատերազմին արձագանգը ի Բէլգին և ի Գերմանիա։

6. — Յիրաւի պատերազմը սկսած ժամանակ որչափ որ ալ Պրուսիա և Գերմանիա գրեթէ լիովին վստահութիւն մը կը զգային յաղթական ելլելու մէջէն. այսու հանդերձ ամենուն սրտին մէջ կար միշտ մեծ ժողովրդեան մը հետ գարնուելուն տագնապը։ Երբ Վիսսէնբուրկի կռուէն վերջը գաղղիացի գերիները տարուեցան ի Գերմանիա և բուրքուները իրենց կէս արեւելեան տարազներով անցան քաղաքաց համբաներէն, այն ատեն բովանդակ Գերմանիա զգաց յաջող ելքի մը առաջին գրաւականքը և անսահման վստահութիւն մը թէ թագաւորին և թէ զօրավարաց վրայ։ Այսու հանդերձ թէ Բէլգինու և թէ Գերմանիոյ ամեն քաղաքաց բնակիչք իրենց ուրախութեան մէջ երբէք չվազեցին հրապարակները անիմաստ ցոյցեր ընելու համար, և մասնական ձախողութեանց մէջ չխօսեցան իրենց վարչութեան և առաջնորդողաց հակառակ։ Զօրավարք առանց մեծա-

բանութեան հանդարտ աչքով կը նկատէին յաղթանակ-
քը, որք կարծես արդէն կանխապէս իբր չափաբերա-
կան ցուցմունք մը, լուծուած էին թղթին վրայ, ըս-
պայակուտին խորհրդեան մէջ։ Դիտէր սպայակոյտը որ
պատերազմի մը յաղթութեան համար, ռազմագիտու-
թեան հետ կարեւոր էր նաեւ թիւը, և ժողովուրդը
չզլացաւ չտրտնջաց տալու այդ թիւը։ Լանդվէրի վեր-
ջին դասն անգամ զէնք առեր էր և Տիլպէլի ու Սա-
դովայի վիրաւորեալք փոյթ չ'ընելով իրենց ունեցած
սպիներուն և տկարութեանց համար, յօժարակամ իրն-
դրէր էին պատերազմելու։ Կ'ըմբռնէին որ ներկայ պա-
տերազմը Գաղղիոյ և Գերմանիոյ մէջ եղած դարական
արիւնահեղ պայքարներու վերջինը պիտի ըլլար և վրէժ-
խնդրութիւն անցելոյն մէջ կրած այնքան տառապանք-
ներու և արհամարհութիւններու։ Այս էր առ հասարակ
ամենուն զգացումը։ Եւ ինչպէս խիստ կարգաւորութիւն
կը պահուէր բանակաց մէջ, նոյնը առաւելեօք կը գոր-
ծադրուէր ամեն քաղաքաց և գիւղերէից մէջ և կանո-
նաւորապէս օգնութիւնք կը տրուէին զինուորներուն կա-
նանց, զաւակաց և ընտանեաց։ Մեծատուն տիկնայք ոչ
միայն գերմանական վիրաւորներու, այլ և թշնամւոյն
բանակէն եկածներու և գերիներու ամեն ձեռնտուու-
թիւն ըրին։ Օգոստոս 18ին Մէցի ներքեւ պատերազմը,
նախ իբր պարտութիւն մը լսուեցաւ Բէլիոնու մէջ։
Ժողովուրդը առանց ցոյցի խոհական մեկնութեամբք կը
տարուբերէր հոս և հոն փողոցներուն մէջ. երբ յան-
կարծ հասաւ յաղթութեան մը պաշտօնական լուրը։
Այն ատեն ամբողջ քաղաքը լուսաւորուեցաւ և գերմա-
նական հայրենասիրական երգեր լսուեցան ամեն կողմ։
Երկրորդ օրը թնդանօթք որոտացին, ամենայն ոք տա-
ճարները դիմեց և գոհութեան հանդիսաւոր աղօթքներ
կատարուեցան։ Երբ քիչ օր վերջը հասան գաղղիացի
կալանաւորքը, բնաւ մէկը հակառակ կամ նպաստաւոր
բացագանչութիւն մը չ'երբաւ։ Ընդհակառակն ամենայն
ազնուութիւն ցուցուեցաւ անոնց, նոյն իսկ դրամական
օգնութեամբք։ Ամենայն ոք կը մտածէր որ իր զաւակն

ալ պատերազմի դաշտին վրան էր, նոյն վիճակի մէջ կրնար ինկնալ։ Երբ Օգոստոս 14ին Գաղղիոյ վարչութիւնը հրամայեց որ ամեն գերմանացի, նոյն իսկ շատոնց հաստատուած ի Գաղղիա և պատուաւոր Ազատականութեան առջեւ, ելլէ Գաղղիայէն, ամբողջ Գերմանիա վշտացաւ, բայց բնաւ չմտածեց փոխադարձը կատարելու վրէժխնդրութեամբ։ Գերմանացւոց բռնած ընթացքը ամբողջ պատերազմին ժամանակ, շատ տարբեր էր գաղղիական ժողովրդեան ըրածներէն ի Պարիս։ Գերմանիա հին Սպարտայի կերպարանքն առած էր, զինուորութիւնը ամեն բանէ վեր դրուեցաւ և ամենայն գիտական և արհեստաւոր, արհամարհեց իր համբաւը և շահը հայրենեաց համար զէնք կրելու պատոյն քով։ Այդ պատճառաւ դաղրեցան անձնական և գաւառական համակրութիւնք և հակակրութիւնք։ Ամեն ռազմական գործողութեանց և յաղթանակաց կարգադիրն և գլուխն էր ինքն զօրավարն Մոլտքէ. իսկ ընդհանուր համաձայնութեան կապն իշխողաց և իշխեցելոց մէջ էր Պրուսիոյ թագաւորն Գուլիէլմոս. և Գերմանացի իշխանք որ բանակին մէջ կը գինուորէին, այսպիսի իմաստուն և խոհեմ իշխողի մը առջեւ մոռցան իրենց բնածին հակակրութիւնքը և ատելութիւնքը առ Տունն Պրուսիոյ։ Ըմբռնեցին որ իրենց ներկայ և ապագայ ամեն առանձնական շահ, կապուած էր Պրուսիոյ Տան հետ։ Գուլիէլմոս ալ իր կողմանէ ամենայն ազնուութիւն և ուշադրութիւն կը գործադրէր առ միւս իշխողս։ Օգոստոս 18ի պատերազմէն վերջը, յորում սաքսոն գունդերը այնքան մեծ արութեամբ կռուեր էին, Գուլիէլմոս կը հեռագրէր առ թագաւորն Սաքսոնիոյ որ «Անձամբ տեսայ զօրացդ ունեցած դերը Օգոստոս 18ի պատերազմին մէջ և պէտք եմ ընել խնդակցութիւնքս»։ Այսօրինակ ամեն իշխողաց կ՚իմացնէր իրենց ուրախանալու նիւթերը։ Այդէն բանակաց մէջ վերցուեր էր ամենայն ազգային խտրութիւն, Գերմանացիք կը կոչուէին ընդհանուր անուամբ և մէկ ազգ կը կազմէին պրուսիացին, բաւիէրացին, սաքսոնը, բադէնցին, վիւրտէմբէրկցին

և այլք։ Երբ Գերմանական բանակը մտաւ Լազաս Լո-
րէն, անմիջապէս իրրեւ նախկին Գերմանական երկիր
մը այնպէս կարգի դրուեցան իշխանութիւնք։ Դատաս-
տանարանք սկսան վճիռ տալ յանուն Գուլիէլմոս Թա-
գաւորին։ Բիսմարք՝ Բոհէլն կոմսը Լազասի կառավարիչ
անուանեց. և Լորէնի՝ զզօրավարն Բոնին։ Բէոլինէն շատ
մը պաշտօնեայք ղրկուեցան գերմանական ոճոյ վերածել
մատակարարութեանց ամեն ճիւղերը սակաւ սակաւ ա-
ռանց խրտեցնելու նաեւ զտեղացի ժողովուրդը որ եր-
կու հարիւր տարուան մէջ բնական համակրութիւն մը
ստացեր էր առ գաղղիական ազգը և որուն հետ գրեթէ
նոյնացեր էր։

Մակ Մահոնի բանակը. — Իւր շարժումը։

7. — Գերմանական բանակին հանդարտ և միաշար
ընթացքին հակապատկեր էր գաղղիական բանակին դրու-
թիւնը։ Մակ Մահոն ի Շալոն կրցեր էր 130,000զօրաց
բանակ մը կազմակերպելու։ Հոն հասեր էր, ինչպէս տե-
սանք, նաեւ Նապոլէոն Գ իր որդւոյն և Նապոլէոն իշխա-
նին հետ, Կրավըլոտէն մինչեւ Շալոն փախստականի պէս
ուղեւորելով երրորդի կարգի կառաց մէջ։ Կայսեր հետ հա-
սած էին խառն ի խուռն գրեթէ առանց զինուց 18,000
ազգային պահապանք, որոց հրամանատար էր զօրավարն
Բէրթօ։ Երբ Նապոլէոն Գ շուաւրած էր ինչ ընել զասոնք,
զօրավարն Տրոշիւ որ Պարիսէն նոր հասեր էր, խորհուրդ
տուաւ մայրաքաղաքին պաշտպանութեան ղրկել. և զօ-
րավարն Շմից աւելցուց որ հարկ էր զՏրոշիւ կառավա-
րիչ անուանել Պարիսու. և կայսրն եւս միաբան երթայ
հոն, որովհետեւ բանակին մէջ գահէ անկեալ իշխանի մը
դիրքը առած էր։ Նապոլէոն կ'ըմբռնէր այս բացատրու-
թեան ճշդութիւնը, բայց և իրեն ընդդիմակաց կուսակ-
ցութեան սիրելի զօրավարի մը պաշտպանութեան ներ-
քեւ չէր կրնար յանձն առնուլ մտնել ի Պարիս։ Եւ
սակայն պարագայիցմէ մղեալ զՏրոշիւ անուանեց կա-
ռավարիչ Պարիսու և հրամանատար մայրաքաղաքին
զօրաց։ Կայսրը ի սկզբան խորհեցաւ դառնալու ի Պա-
րիս Օգոստոս 19ին, և կուզէր որ Մակ Մահոն բա-
նակովը ընկերէ իրեն։ Նապոլէոն Գ ամեն ջանք կ'ընէր

որ բանակը կեդրոնանան մայրաքաղաքին մօտ, այսպէս պաշտպանելու զՊարիս և թէ կայսերական ցեղը։ Իսկ ընդհակառակն կայսրուհին փնասակար կը տեսնէր իւր ամուսնոյն ներկայութիւնը ի Պարիս. նոյնպէս կը գրէր նաեւ Պատերազմի պաշտօնեայն վասն զի իւր դարձը «Մէցի բանակը լքանել մը պիտի կարծուի», որով կայսրը փոխեց իւր որոշողութիւնը. Ինչ Շալոնի բանակին մէջ որուն նպատակն էր միանալու Բազէնի հետ, և ապա 300,000 զինուորօք երկուստ փակել թշնամին։ Միանգամայն կայսրը ինքզինքը աւելի ապահով կը զգար Մակ Մահոնի ըով։ Սակայն Մակ Մահոն եւս շուարեալ դրութեան մը մէջ կը գտնուէր, հարկ կը համարէր երթալ Բազէնի օգնութեան, բայց և մայրաքաղաքը առանց բանակի մը թողուլը խոհեմութիւն չէր համարեր։ Բազէնի հաղորդած էր իւր վարանմունքը և հրահանգ ուղած էր, բայց Բազէն հեռաւորութիւննին պատճառելով, զինքը տէր թողուցած էր իւր որոշողութեանց։ Այն առեն մինչ պէտք էր ժամ մը չկորսնցնել, Մակ Մահոն տատամսեալ, Պարիս թղթատար ղրկեց իւր տարակոյսները յայտնելու Պատերազմի պաշտօնէին և խորհուրդ հարցնելու։ Օգոստոս 21ին բանակն եկաւ ծերակուտի նախագահը և պնդեց որ ամենուն փափագն էր Բազէնի օգնութեան հասնելու և անոր հետ միանալու։ Մակ Մահոն որոշեց չուել ի Մոնմէտի և իւր այս որոշողութիւնը հաղորդեց Բազէնի, որպէս զի նա եւս նոյն գծով գայ իրեն հետ միանալու։ Այս վարանմանց և Տիւյլերիի հետ բանակցութեանց պատճառաւ հինգ օր կորսուեր էին։

Մակ Մահոնի բանակը, յորում կային ամեն տեսակ կամաւորք, և որ արդէն 130,000 զինուորի հասեր էր և չորս մասի կը բաժանուէր. որոց կը հրամայէին զօրավարն Դիւկրօ, դը Ֆայլի, Դուէ և Լբրբէոն։ Կային դարձեալ պահեստի հեծելազունդք և զրահաւորք, որոց կը հրամայէին զօրավարքն Բոնրմէն, Դիւյյար, Ֆէնէլոն, Մարկերիթ։ Միարան կային նաեւ 400 թնդանօթք։ Բայց ճամբայ ելլելնէն վերջը տեսնուեցաւ որ

շատ էր պակասը, յորս մանաւանդ պաշարը։ Բաց ասկէ այդ բանակին մէջ կար ամեն տեսակ տարը, վարժած ամեն տեղ գուարճութիւն և զուարթ կեանք փնտռելու. որով և զինուց ներքեւ անգամ, Պարիսու կեանքին կը հառաչէր և ծանր աշխատութիւններէ փախուստ կու տար և շատ դանդաղութեամբ կը յառաջէր. որով Օգոստոս 28ին հազիւ յառաջապահը կը գտնուէր ի Մուզոն։ Միշտ պէտք էր չուել դէպ ի արեւելեան – հիւսիս Պրուսիացւոց չհանդիպելու համար. և իր ծրագիրը որ կրնար յաջողութիւն մը ունենալ ութ օր առաջ, այս պահուն աննպատակ յանդգնութիւն մը երեւցաւ գերման ռազմագիտաց։ Վասն զի արդէն գերմանացի Գ բանակը ընդ հրամանատարութեամբ Պրուսիոյ թագաժառանգ իշխանին, Մարսալ բերդին տիրելէն և Լիւնվիլի մէջ եղած բովանդակ պաշարը ձեռք ձգելէ վերջը, հասեր էր, Բաուլրդիւկի և Վիթրիի վրայէն, մինչեւ ի Շալոն և Յվիրոնէ, որպէս զի չուէ Պարիսու վրայ, իրեն նեցուկ ունենալով Սաքսոնիոյ թագաժառանգ իշխանը որ Վէրտէօնի հարաւէն անցնելով կը յառաջէր նա ալ դէպ յարեւմուտք[1]։ Այդ երկու բանակք միարան կը կազմէին 230,000 զինուորք։ Ուրիշ գունդերու ալ հրամայեցաւ չուել դէպ ի Արեւմուտք։

Օգոստոս 29ին երբ դը Ֆայլի զօրավարին կոզ զօրաբաժինը կը չուէր դէպ ի Բոմոն, հանդիպեցաւ Ֆոն դէր թան զօրավարին Պավիէրացիներուն և ահաւոր խառնուրդ մը եղաւ։ Գաղղիացի գունդերը յետ կոանցնելու իրենց հազարապետը, հարիւրապետ մը, շատ մը զինուորք և հրանօթք, մնացեալքը խառն ի խուռն փախան։ Բանակին միւս զօրաբաժինները կը յառաջէին և

1. Գաղղիացի պատմիչք կ'ըսեն որ Սաքսոնիոց Ալբրէխտ իշխանը մտնելով Շալոնի ճամբարը ուսկից նոր մեկնած էր գաղղիացի բանակը, հոն ձգուած նամակէ մը իմացաւ Մակ Մահոնի դէպ ի Մէց չուելը Բազէնի հետ միանալու համար, և զայս իմացուց սպայակուտին որ թագաւորին հետ կը գտնուէր ի Բարլրդիւկ Օգոստոս 25ին։ Եւ սպայակատը անմիջապէս հրամայեց Պրուսիոյ թագաժառագին և Սաքսոնիոյ իշխանին, դարձուածքով մը ինկնալ Մակ Մահոնի վրայ և արգելուլ Մէցի հետ միանալու ծրագիրը։

Մակ Մահոն հրամայեց ո՛ր և իցէ եղանակաւ անցնիլ Մէօզը և քայլել դէպ ի Մոնմէտի. կը յուսար փութով Ֆրէդէրիկ Կարլի բանակը՝ իր և Բազէնի բանակին մէջ բռնել։ Այսպիսի մերձաւոր յոյս մը եռանդ ազդեր էր գունդերուն որոնք փութով անցան Մէօզը։ Սակայն յանկարծ լսուեցաւ դը Ֆայի զօրարաժնին ի Բոմոն կրած պարտութեան լուրը և վհատութիւն մը ձգեց զինուորաց վրայ։ Մակ Մահոն եւս տարակուսեցաւ իր ծրագրին յաջողութեան վրայ, գուշակեց գերմանացի զօրաց նոր շարժումները, փոխեց իր նախկին դիտաւորութիւնը և հրամայեց չուել դէպ ի Սէդան։ Երկրորդ օրը կայսրը զօրքը խրախուսելու համար հրատարակութիւն մը ըրաւ, որ իւր վերջին կայսերական խօսքն պիտի ըլլար, յորում կը քաջալերէր արի սրտերը և վատերուն պատիժ կը սպառնար։ Նապոլէոն յայնմ հետէ իր անձին իշխանութեան բաղդը այդ բանակին հետ կապած էր։ Եւ յիրաւի կարելի էր իրեն Մէզիէրի վերայէն անձնելով, իր անձը ազատել և գնալ Բէլճիա, սակայն վատութիւն համարեցաւ և իւր ձեռքով չուզեց իր գլխէն վերցնել կայսերական թագը։ Տխուր և լուռ, քաշուած կեանք մը սկսաւ վարել. և երբ զօրավարն Վէնֆէն գրեթէ բոնի ստացաւ տեսակցութիւն մը, Նապոլէոն սեղմեց նորա ձեռքերը և արցունքով հարցուց «Զօրավար, ինչո՞ւ միշտ կը յաղթուինք. ինչու այդ Բոմոնի աղէտը ունեցանք»։

8. — Սակայն Բոմոնի աղէտը ոչինչ էր դեռ պատրաստուած աղետից քով։ Գերմանացի բանակին շարժումները նոր ծրագիր մը կը յայտնէին. անոնցմէ ոմանք Տուզիի մօտ գետը անցնելով, արեւմուտքէն կը մօտենային Սէդանի, նոյն նպատակին կը դիմէին Բավիէրացիք և Վիւրտէմբէրկցիք՝ Ռոկուրի և Ռիմիլլիի կողմէն, մի և նոյն ժամանակ Սաքսոնիոյ թագաժառանգ իշխանը Սէդանի արեւելեան և հարաւային բարձունքը բռնելու կը դիմէր. և Պրուսիոյ թագաժառանգ իշխանը կը տեղաւորուէր իւր սպայակուտով Գասսէլ Դոնշէրիի մօտ լեռնային բարձունքը։ Իսկ Գուլիէլմոս ընդհանուր

Սէդան. — Մակ Մահոնի վիրաւորութիւնը։

սպայակուտով հաստատուեցաւ Ֆրէնուայի մօտ բարձր և ամեն կողմ տիրող բլրոյ մը վրայ։ Գերմանացւոց նպատակն էր ոչ միայն չթողուլ զՄակ Մահոն միանալու Բազէնի հետ, այլ ջախջախել և ցրուել անոր բանակը։

Նախ բավիէրացի գունդերը որոց կը հրամայէր Ֆոն դէր Թան, հրաման ընդունեցաւ կրակը սկսիլ և անցնիլ Բազէյլի կամուրջը և գիւղին տիրել։ Ծովային հետեւակաց ջոկատ մը, որոց կը հրամայէր զօրավարն Մարթէն, անվեհեր արութեամբ դէմ կը դնէ Բավիէրացւոց բուռն յարձակման. օգնութեան կը դիմեն Սաքսոնք և կը բաղխեն Կրանշան և Լագրրտէլ զօրաբաժինները։ Սաքսոնները կը յարձակին նաեւ Դիւկրօ զօրավարին գունդերուն վրայ ի Ցէնյի և Ժիվոնի։ Ամեն կողմանէ ահաւոր կրակ և կռիւ կը սկսի։ Գիտէր Մակ Մահոն որ այս կռիւը պիտի որոշէր ամբողջ պատերազմին բաղդը, նոյնը գիտէին և գերմանացի հրամանատարք։

Մակ Մահոն պատերազմը սկսելուն, դիմեր էր կռուոյն տեղը դիտելու մանրամասն թէ կա՞ր հնարք չուելու ի Մէզիէր կամ Գարինեան. բայց այդ յոյսերը կտրեր էին գերմանացի գունդերուն բռնած դիրքերը, որոնք օդը հաներ էին գաղղիացւոց թողուցած կամուրջները։ Ժամը 6ին մօտ երբ կը դիմէր Լրբրէօն զօրաբաժնին ճակատը, Մոնսէլի բռուած դիրքին մօտ վիրաւորուեցաւ և ձին սպանուեցաւ[1]։ Երբ զինքը պատգարակով պատերազմի դաշտէն կը տանէին Սէդանի շրջակայքը, հանդիպեցաւ Նապոլէոն Գ.ի որ բանակը կ'երթար. և ըսած են ոմանք, որ կը դիմէր կռուելով մեռնելու իբր արի զինուոր։ Բայց փութով ինքն եւս դարձաւ կռուոյն տեղէն։ Մակ Մահոն վիրաւորուելով, հրամանատարութիւնը յանձներ էր Դիւկրօ զօրավարին, որ մտածեց

---

1. Գաղղիացի պատմագրացմէ ոմանք «երջանիկ վիրաւորումն» կը կոչեն, այսպէս ազատելով Սէդանի պարտութեան և անմնացորդութեան բաստրագրելէն։

դէպ ի Մէզիէր ճամբայ մը բանալ և այս պատճառաւ հրամայեց որ բոլոր գունդերը նահանջեն յիլլի։ Սակայն առջի օրը տրուած հրաման մը՝ Դոնշէրիի կամուրջը կործանելու, ի գործ չէր դրուած, որով և Վիրտէմբէրկի գունդերը Մէօզը անցեր էին, և այլ եւս անկարելի էր դէպ ի Մէզիէր քաշուիլ։

Զօրավարն Վէնֆէն ընդհանուր հրամանատար։

9. — Որչափ որ մարաջախտն Մակ Մահոն ընդհանուր հրամանատարութիւնը Դիւկրո զօրավարին յանձներ էր, սակայն զօրավարն Վէնֆէն, առ որ Պարիսու վարչութիւնը կանխաւ ղրկեր էր հրամանատարութիւնը, թէ յանկարծ վտանգ մը հասնէր Մակ Մահոնի, ծանոյց զայս Դիւկրոյի. մի և նոյն միջոց արգիլեց նահանջը զոր վնասակար կը համարէր և պատուիրեց յարձակման պատրաստուիլ։ Ուրիշ տոմսակ մ'ալ ղրկեց առ զօրավարն Լրբրէօն, որուն գունդերը յաջողութեամբ կը պատերազմէին, ծանուցանելով որ նոր օգնութիւն կը ղրկէր և կը խրախուսէր շարունակել կռիւը։ Իր նպատակն էր պատերազմիլ մինչեւ գիշեր և մթոյն օգնութեամբ ճեղքել անցնիլ թշնամւոյն բանակը և ինկնալ ի Դարինեան և Մոնմէտի, քանի որ Մէզիէր քաշուիլը այլ եւս անկարելի էր։ Այսոր համար Դիւկրո զօրավարին ալ հրաման ղրկեց բոլոր թափովը ջանալ ձեռք բերել թողուցած դիրքերը։ Կը յուսար թշնամւոյն աջը, որ բավիէրացի զունդերէ կազմուած էր և արդէն սաստիկ յոգնած, բոլորովին անկարող դիրքի մէջ դնել, և այսպէս ճամբայ բանալ անցնիլ։ Սակայն Դիւկրոյի կանխաւ նահանջի տուած հրամանը մեծ վնաս բերեր էր իր ծրագրին, որուն թողուցած դիրքերը գերմանացիք բռներ էին։ Այսու հանդերձ Դիւկրոյի զունդերը սկսան յառաջել և երբ ինքը կը դիմէր Լրբրէօնի զօրաբաժնին, ճամբան հանդիպեցաւ կայսեր, և իրախոյս իսկ տուաւ թէ «փութով ձեռք պիտի բերենք կորսնցուցածնիս»։ Կայսրը լռութեամբ ցրցուց միայն դաշտին խորը թշնամեաց սեւ գծերը։

Ժամը տասն էր, Վէնֆէն խորհուրդի կանչեց Դիւկրո և Լրբրէօն զօրավարները և անոնց պատուիրեց՝

ինչ ալ ըլլայ կտրել անցնիլ դէպ ի Գարինեան և Մոն-մէտի։ Բայց գերմանացի նոր գունդեր կը սկսէին հասնիլ և ժամը 2ին մօտ Դուէյ զօրավարը լուր ղրկեց որ կը կռուէր միայն «զինուց պատուոյ» համար, առանց ուրիշ յուսոյ մը։ Վէնֆէն հոն դիմեց նոր գունդերով, սակայն Պրուսիացիք ահաւոր կրակ մը կը սկսին որուն դէմ Գաղղիացիք չեն կրնար դիմանալ և կը ստիպուին քաշուիլ դիրքերնին թողլով թշնամւոյն։ Ժամը 2ը անցած դեռ ուրիշ գերմանացի գունդեր կը դիմեն Շապէլի և Ֆլէնյոյի կողմէն, կը միանան ամենը Իլլի տափարակին վրայ, ապա կը շրջապատեն գաղղիացի գունդերը և ահաւոր կրակ մը կը սկսին։ Բայսոնի էր որ պատերազմին ճգնաժամն էր։

Զօրավարն Վէնֆէն կը տեսնէ որ այլ եւս իր ծրագիրը անկարելի էր. յուսահատ խորհուրդ մը կը յղանայ, կը զրէ առ Նապոլէոն, որ փոխանակ գերի բռնուելու ի Սէդան, կտրել անցնիլ զթշնամին ինչ ալ պատահի։ Այս միջոցիս Պրուսիացիք բուռն յարձակում մը սկսած էին Ֆլուանի վրայ ուր մեռան գերմանացի Կէսսորֆ և գաղղիացի Մարկերիթ զօրավարները և գաղղիացի գունդերը մեծապէս վնասուելով սկսան խառն ի խուռն փախչիլ Սէդան։ Պրուսիացիք յառաջեցին իրենց կրակներով և քաղքին մօտակայ բարձունքներուն վրայ թնդանօթ դնելով, սկսան ումբակոծել Սէդանի բերդերը։ Փութով քաղքին զանազան կողմերէ հրդեհը սկսաւ բարձրանալ. որ և իսկ ընդդիմութիւն աննպատակ էր. Նապոլէոն հրաման ղրկեց Վէնֆէն զօրավարին սպիտակ դրօշը բանալու։ Վէնֆէն չուզեց ընդունիլ կայսեր հրամանը. յուսահատած մտաւ քաղաքը և երկու հազար զինուոր հաւաքելով դուրս դիմեց։ Կայսրն Լրբրէօն զօրավարին ալ հրաման ղրկած էր Բալանի դրան վրայ կանգնել սպիտակ դրօշը, բայց նա եւս տեսնելով Վէնֆէնի ըրածը, մէկդի նետեց սպիտակ դրօշը և միացաւ Վէնֆէնի։ Սակայն յուսահատ արութեան և դիւցազնութեան ժամանակն անգամ անցեր էր, և Պրուսիացիք ամեն կէտ բռներ էին։ Վէնֆէն բռնադատուեցաւ

զառնալ քաղաք և իւր հրաժարականը ղրկեց կայսեր որ գովելով անոր քաջութիւնը չ'ընդունեցաւ և հրամայեց անմիջապէս անձնատուր ըլլալու։ Վէնֆէն յետ երկար վարանմանց հնազանդեցաւ զառն հրամանին, ուսկից երջանիկ վէրը մը ազատեր էր զմարաջախտն Մակ Մահոն։

10· — Սէդանի բերդին վրայ սպիտակ դրօշ կանգնուելուն պէս, Արթինուայէ հասաւ Բրոնսար ֆոն Շէլլէնտորֆ հազարապետը և յանուն Պրուսիոյ թագաւորին պահանջեց բանակին և ամրոցներուն յանձնումը։ Յետոյ զարձաւ անմիջապէս գերմանական բանակը, հետը ունենալով գաղղիացի Ռէյլ զօրավարը, որ ներկայացուց Գուլիէլմոսի Նապոլէոնի գիրը, որուն մէջ կրսէր թէ « Զկարենալով մեռնիլ բանակիս մէջ, սուրս կը դնեմ Ձեր վեհափառութեան ձեռքը »։ Թագաւորն Գուլիէլմոս պատասխանեց որ կ'ընդունէր նուէրը, յայտնելով իւր մեծ ցաւակցութիւնը կայսեր և բանակին, որ իր աչացը առջեւ այնքան դիւցազնուկեամբ կռուեր էր։

Նապոլէոնի և գաղղիական բանակին անձնատուր ըլլալը։

Ըստ զինուորական կարգաց, Նապոլէոն միայն իր անձին նկատմամբ կրնար խօսիլ, քանի որ Պարիսու վարչութեան կողմանէ ընդհանուր հրամանատար չէր, որով Վէնֆէն զօրավարը բռնադատուեցաւ երթալ առ թագաւորն Պրուսիոյ։ Ժամ մը վերջը գաղղիացի ընդհանուր հրամանատարը կը գտնուէր Բիսմարք կոմսին և Մոլտքէի դիմաց, որոնց վճռական առաջարկը այս եղաւ՝ « Գաղղիացի բանակը զէնքերը պէտք է յանձնէ և պատերազմի գերի ըլլայ »։ Զօրավարն Վէնֆէն այլայլած այս մահացուցումէն, ամէն ջանք ըրաւ աւելի մեղմ պայմաններ ստանալու. բայց ի զուր։ Մոլտքէ մանրամասն բացատրեց Գաղղիոյ բանակին կացութիւնը և առաջարկեց Վէնֆէնի գինքը շրջեցնելու համար և տեսնելու գերմանացի բանակներ ունլիովին հանդերձանքը, որոնք մէկ ակնարկով մը կրնային անմիջապէս բովանդակ քաղաքը ամրակոծելու։ Աւելցուց եւս որ « Գաղղիա ուզեր և հրատարակեր էր պատերազմը , մինչ Գերմանիա բոլոր սրտով խաղաղութեան կը փափագէր, որով ամէն ջանք պի-

տի ընէ որ Գաղղիա չ'օգտուի այդպիսի կարեւոր բանակէ մը »։

Կոմսն Բիսմարք զայս եւս բսաւ որ. « Թերեւս աւելի մեղմ պայմաններ առաջարկէինք, եթէ Գաղղիա հաստատուն վարչութիւն մը ունենար. բայց այն կառավարութիւնը որ պիտի յաջորդէ ներկայ վարչութեան, կարելի է նոյն իսկ զասոնք չուզէ հաստատել։ Այսու հանդերձ մենք պիտի վստահինք գաղղիացի սպայից խօսքին վրայ. և զինուորաց ալ ամենեւին վշտացուցիչ բան մը չենք ըներ, իրենք անձամբ զէնքերնին կը տանին մեր ցրցուցած շտեմարանը »։ Վէնֆէն ինդրեց ժամանակ, մինչեւ երկրորդ օրը ժամը իններն, որպէս զի անձնատուութեան պայմանը հաղորդէ միւս զօրավարաց։ Բիսմարք հաւանեցաւ մինչդեռ Մոլտքէ կ'ուզէր որ շնորհքը ժամը վեցը չ'անցնի[1]։

Վէնֆէն գաղղիացի բանակը գալով, կայսեր հաղորդեց պայմանը որ խոստացաւ երկրորդ օրը անձամբ երթալ առ Գուլիէլմոս և լաւագոյն պայմաններ ստանալու։ Իսկ Վէնֆէն անմիջապէս խորհրդի հաւաքեց հրամանատարները, հարցնելու թէ տակաւին կարելի՞ է ընդդիմութիւն մը։ Ամենը միաձայն ճանչցան անկարելութիւնը և ստորագրեցին Վէնֆէն, Դիւկրօ, Ֆորժօ, Լբրէօն, Դուէյ և Դրժան զօրավարք։ Երկրորդ օրը Վէնֆէն գնաց գերմանացի բանակը, ուսկից կամաւ հեռացեր էր Մոլտքէ, որպէս զի նորէն չվիճուի պայմանաց վրայ. և ժամը 11ին Ֆրէնուայի Բէլվի դղեկին մէջ ստորագրուեցաւ գաղղիացի բանակին անձնատուու-

---

1. Մոտ ժամանակներս (1906) գերման իշխանն Կլովիս Հուկոս Հոհէնլոհէ, որ եղած է նաեւ ընդհանուր կառավարիչ Ալզասիոյ, հրատարակեց իր Յիշատակարանը, յորում կը պատմէ իւր մէկ տեսակցութիւնը Թիէրի հետ։ Յետինս բսած է առ իշխանն որ կոմսն Բիսմարք շատ մը պարագայից մէջ միշտ աւելի մեղմ երեւցած է նկատմամբ պատերազմի պայմանաց։ Վերջին տարիներուս ուրիշ Յիշատակարանք եւս Բիսմարքի կոմսին անողոք թշնամութիւնը բարեփոխած են և լաւագոյն կերպարանք մը տուած են անոր, քան ինչ որ կը պատմուէր պատերազմի ժամանակ և մինչեւ քանի տարի մը։

թիւնը, որով թշնամւոյն ձեռքը կ'իյնար, բաց ի 25,000 գերիէ որոնք կալանաւորուեր էին պատերազմին ժամանակ, դարձեալ 125,000 զինուորը, յորս կայսրն Նապոլէոն Գ. մարաջախտն Մակ Մահոն, չորս զօրավարք, 250 սպայակուտի սպայք, 2600 զինուորական պաշտօնատարք և հրամանատարութեան սպայք։ Նոյնպէս 350 թնդանօթք, 70 միդրայլիոզք, 150 հրանօթք բերդի, 10,000 ձի, 66,000 հրացանք, երկու դրօշակք և մէկ կայսերական արծիւ։ Բոլոր Եւրոպա, բոլոր աշխարհք հանդիսատես եղաւ և զարմացաւ այսօրինակ անձնատրութեան մը վրայ, որուն նմանը ոչ մի պատերազմի պատմութեան մէջ յիշուած է և որ կը ցուցընէ կայսերական վարչութեան արդէն ներքսապէս քայքայումը, որով այդքան զօրավարը, սպայք և զինուորք չէին զգար եռանդ մը ընդվզելու և հայրենեաց համար կռուելու. և ինքը Նապոլէոն յորդորեր էր յանձնատուութիւն փոխանակ տանելու ի պատերազմ։ Նոյն օրը և երկրորդ օրը զինուորք նշանակեալ տեղ մը տարին ձգելու իրենց զէնքերը, բավիէրացի գունդի մը առջեւ։ Իսկ այն զօրավարաց, որոնք երդուընցան պատիւնուն վրայ ամբողջ պատերազմի ժամանակ չկռուելու գերմանացւոց բանակին դէմ, նկատի առնելով նաեւ իրենց «դիւցազնական ընդդիմութիւնը». շնորհուեցաւ զէնքերնին և ամեն անձնական ունեցածնին։ Մակայն քիչերը խոստացան. մեծամասնութիւնը նախադաս համարեցաւ պատերազմի գերի երթալու[1]։

Նախնական արարողութիւնքը կատարուելէն վերջը, բոլոր զօրավարք, սպայք և զինուորք երկաթուղով փոխադրուեցան ի Գերմանիա, իրենց սահմանեալ զանազան ամրոցաց մէջ։

---

1. Թօսք տուողներուն մէջ էր նաեւ զօրավարն Դիւկրօ որ ապա պատեհ մը գտնելով, փախաւ և անցաւ Պարիսու հրամանատարութեան գլուխ։ «Ի՞նչ Քէպէտ ինքզինքը ուզեց արդարացնել այս հակապետական գործին համար, բայց ոչ երբէք սրբուեցաւ այն ամօթը, կ'ըսէ գերմանացի պատմագիրն Վէյկէր, որ ստացաւ արատաւորելով իր պատուոյն վրայ տուած խոստումը»։

Նապոլէոնի գերի երթալը։

11. — Սեպտեմբեր 2ին առաւօտ տակաւին վէնֆէն զօրավարը անձնատրութիւնը չստորագրած, Նապոլէոն Դ. Ժամը իններին երկաթի կառօք, զօրավարի նշանագգեստներով, շրջապատեալ ձիաւոր սպաներէ, Սէդանի փողոցներէն կ'անցնէր և կ'ուղղուէր դէպ ի Դոնշէրի, Պրուսիոյ թագաւորին գերի ըլլալու։ Փափագելով նախ տեսնելու զԲիսմարք կոմսը, առաջուց անոր ղրկեր էր Ռէյլ զօրավարը և Բիսմարք աճապարեր էր ընդառաջ գալու մինչեւ ի Ֆրէնուա և յարգանօք հարցուցեր էր կայսեր հրամանը։ Նապոլէոն փափագ յայտնեց տեսնելու Գուլիէլմոս թագաւորը, զոր Դոնշէրիի մէջ կը կարծէր, մինչ երկու մղոն հեռու, Վանտրէս կը գտնուէր իր սպայակուտով։ Նապոլէոն հարցուց իրեն համար ի՞նչ տեղ սահմանուած ըլլալը, զոր կ'անգիտանար Բիսմարք և առ ժամս հրամցուց իր բնակութեան սենեակ մը, ուր երկուքը քաշուեցան և ուր կային միայն երկու աթոռք։ Նապոլէոն ուզեց խօսիլ անձնատրութեան պայմանաց վրայ. բայց Բիսմարք ծանոյց որ ինքը չէր կրնար միջամտել զինուորական ինդիրներու, կարող էր միայն խօսիլ խաղաղութեան մը վրայ. Նապոլէոն ալ պատասխանեց որ ինքը գերի ըլլալով, կարող չէր բան մը ընել, վասնզի այդ կը պատկանէր Պարիսու վարչութեան. վրայ հասաւ զօրավարն Մոլտքէ և Նապոլէոն առաջարկեց որ գաղղիացի բանակին շնորհուի Ռէլհիա անցնիլ և հոն զինաթափ ըլլալ. սակայն Մոլտքէ մերժեց։

Նապոլէոն փափագեցաւ տեսութիւն մը ունենալ թագաւորին հետ, բայց ըսուեցաւ որ թագաւորը զինքը կրնար ընդունիլ միայն յետ ստորագրութեան անձնատրութեանը։ Փիչ վերջը կոմսն Բիսմարք ծանոյց որ Գաղղիացւոց կայսեր համար բնակութիւն սահմանուեր էր Ֆրէնուայի մօտ Ռէլվիւ դղեակը և առաջարկեց ընկերելու իրեն. Նապոլէոն սիրով ընդունեցաւ և անցնելով պրուսիացի թագաւորական զրահաւորաց մէջէն, հասաւ իրեն սահմանեալ դղեակը, ուր արդէն հասեր էին իր անտուկները և անձնական ունեցածները, որոց չդպչելու հա-

մար բանակցեր էր զօրավարն Փասդէլնօ և ընդուներ էր շնորհքը։

Այս միջոցիս արդէն Վէնֆէն և Մոլոքէ ստորագրած էին անձնատուութեան պայմանները և եղեր էր գինադադարութիւնը։ Այն ատեն Գուլիէլմոս՝ թագաժառանգ իշխանին հետ այցելութեան գնաց Նապոլէոնի. սա և Գուլիէլմոս քառորդի մը չափ յուզեալ և կցկտուր խօսակցութիւն մը ունեցան, յետոյ բաժնուեցան փոխադարձ յարգանքներով։ Նոյն երեկոյ Գուլիէլմոս կը հեռագրէր թագուհւոյն ի Բեռլին. «Ինչ վայրկեան էր Նապոլէոնի հետ հանդիպիլս, նա ծռած էր մարմնով բայց արժանավայել և համակամեալ կերպարանքով. իրեն համար սահմանեցի Փասսէլի մօտ Վիլհէլմշոյէ դղեակը»։ Երկրորդ օրը Նապոլէոն կայսերական պատուով հետը ունենալով Փասդէլնօ, դը Ռէյլ, դը Վովէս զօրավարները և Նէյ իշխանը, մեկնեցաւ դէպ ի Վիլհէլմշոյէ, ուր հասաւ Սեպտեմբեր 5ին երեկոյ։ Հոն Գուլիէլմոս պատրաստել տուած էր կայսերավայել ընդունելութիւն մը, այսպէս համարելով մեղմացնել իր երբեմն հիւրընկալին ահաւոր կսկիծը։

Սէդանի պատերազմէն վերջը Գուլիէլմոս զօրահանդէս մը կատարեց բանակին և շնորհակալ եղաւ զօրավարաց և զինուորաց։ Անկարելի է բացատրել թագաւորին զտած ընդունելութիւնը և կեցցէները։ Սէդանի պատերազմին հետեւանքը ժամանակակից Պատմութեան ամենէն ազդեցիկներէն մին է։ Գուլիէլմոս այս եղելութիւնը հաղորդեց թագուհւոյն հետեւեալ բառերով որոնք նշանաւոր մնացած են՝ «Աստուծմէ առաջնորդեալ, ինչ ուղղութիւն տուին պատահարք»։ Սէդանով կը կործանուէր Բոնապարտեան կայսրութիւնը, կը տկարանար Գաղղիա, կը կտրուէին իրմէ երկու հարուստ գաւառք և Եւրոպայի գերիշխան կը բարձրանար Նոր Պետութիւն մը Գերմանական Ինքնակալութեան անուամբ, որուն այդ միութեան և բարձրութեան այնքան օգներ էր Նապոլէոն զանազան պարագայից մէջ անգիտակցաբար, և մանաւանդ ի Սադովա։ Սէդան բնական հետեւանք մ՝էր Սադովայի։

ԳԼՈՒԽ Ը.

ԵՐԲՈՐԴ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ

1. Սէդանի պատերազմին լուրը ի Պարիս. — 2. Սեպտեմբեր 4. — 3. Անկումն կայսրութեան. կայսրուհւոյն փախուստը յԱնգղիա. – Գ. Հասարակապետութիւն. — 4. Պարիսի զինուորական պատրաստութիւնք. — 5. Խաղաղութեան փորձեր. Ֆիւլ Ֆավրը. Թիէր. — 6. Պրուսիացիք կը յառաջեն. – Պարիս կը պաշարուի. — 7. Լուսաւի բանակը. – Պրուսիացիք կը տիրեն Օռլէանի. Ուրիշ պատերազմունք. — 8. Ստրազբուրգի անձնատուր ըլլալը. — 9. Գամբէտտա ի Տուր. – Նոր բանակք. – Գարիբալդի ի Գաղղիա. — 10 Մէցի անձնատուր ըլլալը։

Սէդանի պատերազմին լուրը ի Պարիս։

1. — Մակ Մահոնի բանակին շարժումը սկսելուն, կայսրուհին և վարչութիւնը միշտ յոյսերով կը զբաղեցնէին Պարիսու արդէն յուզեալ ժողովուրդը, լուրեր կը տարածէին որ փութով երկու մարաջախտները Մակ Մահոն և Բազէն մէկտեղ միանալով, թշնամին Գաղղիոյ հողէն պիտի հանէին։ Երբ Սեպտեմբեր 3ի կէսօրին, վերջին պարտութեան լուրը հասաւ առ կայսրուհին, սա ահաւոր տագնապի մէջ զՄէրիմէ վիպասանը, իրեն մտերիմ, գաղտ փութով ղրկեց առ Թիէր, խորհուրդ հարցնելու և կերպով մը առաջարկելու նոր պաշտօնարանի մը գլուխ կենալու, զԳաղղիա փրկելու համար։ Թիէր անպատասխանի թողուց թէ զՄէրիմէ և թէ Մէդէոնիք իշխանը, դեսպան Աւստրիոյ, որ նոյնօրինակ դիմում մը ըրեր էր կայսրուհւոյն կողմանէ։ Սէդանի պարտութեան լուրը իր ամեն պարագաներովը քիչ քիչ

տարածուեցաւ պուլվարաց վրայ նախ, և ապա քաղ-
քին ամեն կողմ։

Անկարելի է բացատրել գաղղիացի մեծաբան և մե-
ծայոյս ամբոխին զգացած խորին այլայլութիւնը այս
յուսախաբութեան վրայ։ Փողոցներուն մէջ ամեն կողմ
զանազան խումբեր հոս հոն կը տարուբերէին հար-
ցընելով, քննադատելով, վիճաբանելով։

Կամաց կամաց գլուխները տաքցան և բազմութիւնը
դիմեց նախ ի Լուվրը, ուր կը կենար Տրոշիւ զօրավա-
րը և ապա առ Օրէնսդիր ժողովը «Անկո՛ւմ» գոչե-
լով։ Ի Լուվրը զօրավարն Տրոշիւ ներկայացաւ ամբո-
խին և պատասխանեց որ իր պարտքն էր պաշտպանել
զՊարիս և կը խոստանար զայն կատարել. բայց անկէ
անդին իշխանութիւն մը չունէր։ Իսկ Օրէնսդիր ժողով-
քին առջեւ խօսեցաւ Դամբէտտա զօրեղ ձայնովը յոր-
դորելով զժողովուրդը հանդարտ կենալու այսպիսի ծանր
ժամու մէջ և համոզեց որ ցրուի խաղաղութեամբ։ Ու-
րիշ կողմեր աւելի ծանր յուզումներ եղան. դիմեցին
պահպաններ, կոիւներ ծագեցան և եղան վիրաւորք
և նոյն իսկ մեռնողք։

Սէղանի ձախող լրոյն վրայ թիէր և ձախակողմեան
երեսփոխանք կարեւոր դատեցան որ գումարուի Օրէնս-
դիր ժողովը և իմացնէ ազգին իր կացութիւնը։ Կայ-
սրուհին և վարչութիւնը հակառակ էին այս գումարման,
բայց մեծազոյն հետեւանքէ մը վախնալով, ժողովը կո-
չեցին կէս գիշերուան։ Նիստ սկսելուն՝ պատերազմի
պաշտօնեայն հաստատեց Սէղանի մէջ յաղթուելնին և
կայսեր գերութիւնը. աւելցուց խնդրելով որ գումարումը
յետաձգուի երկրորդ օրուան միջօրէին։ Ամբոխը
ամենը «Այո՛» կը գոչէին. բայց Ժիւլ Ֆաւրը երկու
խօսք մը ըսելու պայմանաւ յանկարծ ըրաւ երեք առա-
ջարկներ. ա. «Լուի Նապոլէոն Բոնապարտ և իւր ցեղը
անկեալ է իշխանութենէ. բ. Օրէնսդիր ժողովը ՅԱՆ-
ՁՆաժողով մը անուանէ. որուն տրուի ամեն իշխանու-
թիւն, և որուն նպատակն ըլլայ թշնամւոյն ընդդիմա-
դրել և որեւիցէ կերպով Գաղղիայէն արտաքսել։ գ. Զօ-

բավարն Տրուշիւ Ֆնայ կառավարիչ Պարիսու »։ Այսօրինակ առաջարկներ ամիս մը առաջ կրնար ոք խորհիլ կամ արտասանել. հիմա ամենայն ոք մտիկ ըրաւ լռութեամբ։ Պաշտօնարանը խնդրեց մանաւանդ որ այսօրինակ վիճաբանութիւնք թողուին երկրորդ օրուան գումարման և ցրուեցաւ։ Ամբողջ նիստը քսան վայրկեան տեւեր էր։

Պարիսու ժողովուրդը ամբողջ գիշերը անքուն անցուց։ Շատերը արդէն կ՚երեւակայէին զթշնամին փութով մայրաքաղաքին դուռը հասած, և մէկ քանի ժամ մոռցան վարչութիւն, պաշտօնարան և ամէն ներքին կռիւ։

Սեպտեմբեր 4. — Անկումն երկրորդ կայսրութեան. կայսրուհւոյն փախուստը յԱնգղիա։

2. — Սակայն առաւօտը բացուելուն գաղափարները եւս սկսան ծնանիլ և բորբոքիլ։ Ոստիկանութեան պաշտօնեայն Պէտրի ամէն միջոց առեր էր Օրէնսդիր ժողովքին պաշտպանութեան համար։ Հազար պահապանք հետի և ձիաւորք Կոնկորդի հրապարակին չորս կողմերը բռներ էին։ Կէսօրուան մօտ լսուեցաւ որ Լիոն քաղաքը Հասարակապետութիւն հրատարակեր էր և ժողովուրդը և բանակը միացեր են։ Հոս հոն փողոցներուն մէջ սկսաւ լսուիլ « Կեցցէ Հասարակապետութիւն »։ Ամեն վայրկեան նոր լուր մը կը տարածուէր թէ քաղքին և թէ Պալէ Բուրբոնի մէջ ուր երեսփոխանք սկսեր էին հաւաքուիլ։ Ժամը 10ին լսուեցաւ որ կայսրուհին հրաժարեր է, բայց Ազգակողմեանք բռնադատեր են Ֆնալու խնամակալութեան մէջ և Պալիքաօ զօրավարին դիկտատորութիւն առաջարկուեր է, բայց նա մերժեր է։

Կէսօրուան մօտ երբ զօրավարը հասաւ ի Պալէ Բուրբոն, Բիւֆֆէ, Դարիւ և Թալհուէ երեսփոխանք բռնադատեցին զինքը երթալ առ կայսրուհին և խնդրել որ՝ Օրէնսդիր ժողովքին յանձնէ ամենայն սահմանադիր իշխանութիւն։ Բիւֆֆէ ինքը անձամբ տարաւ իր առաջարկը առ կայսրուհին, որ թէպէտ չուզեց հրաժարիլ իշխանութենէն, բայց ազատ թողուց զպաշտօնարանը գործելու, ինչպէս բարի կը դատէր։

Կէսօրուան Օրէնսդիր ժողովքը բացուելուն, բաց ի ժիւլ Ֆաւրի երեք առաջարկներէն, ուրիշ երկու առաջ-

արկք ալ եղան, մէկը Պատերազմի պաշտօնէէն, միւսը Թիէրէ։ Պատերազմի պաշտօնեայն կ'առաջարկէր զկոմսն Պալիքաս ընդհանուր տեղապահ անուանել կայսրութեան և հինգ անձանցմէ Ազգային Պաշտպանութեան խորհուրդ մը կազմել, ընտրեալ Օրէնսդիր ժողովքէն, որ պիտի ա-նուանէր պաշտօնարան մը։ Իսկ Թիէրի առաջարկածն այս էր. « Նկատի առնելով պարագայքը, խորհրդարանը կ'անուանէր վարչութիւն մը և Ազգային Պաշտպանու-թեան Յանձնաժողով մը։ Երբ պարագայք ներեն, այն ատեն անմիջապէս պիտի գումարուի Սահմանադիր ժողով-քը »։ Այս երկու առաջարկք, ինչպէս նաեւ Ֆիւլ Ֆա-վրի երեքը, մասնաւոր Յանձնաժողովոյ մը քննութեան յանձնուեցան և նիստը առ ժամս կախ մնաց, մինչեւ որ Յանձնաժողովը իւր տեղեկագիրը բերէ առ խորհուրդ-դարանը։

Այս միջորիս Լա Կոնկորդ հրապարակին մէջ մեծ շփոթութիւն մը սկսեր էր։ Ամբոխը կը ջանար կամուրջը անցնիլ, բայց զինեալ քաղաքական պահապանք չէին թողուր։ Ժամը 2ին միջոցները Ազգային պահապանաց վաշտ մը իւր թմբուկով կու գայ անցնելու և քաղաքա-կան պահապանք ճամբայ կու տան։ Անոնց ետեւէն կը մղուի ամբոխը, կ'անցնի կամուրջը, կը հասնի Պալէ Բուրբոնի վանդակաղրանց, կ'ելլէ անոնց վրան, կ'անց-նի միւս կողմը և կը դիմէ Օրէնսդիր ժողովոյն ունկըն-դրութեան բազմոցներուն վրայ։

Ժամը երկուքուկիսուն Շնայտէ նախագահը նիստը բացուած կը հռչակէ։ Սակայն բազմոցներէն եկած ա-ղաղակը բան մը լսելի չ'ընէր։ Ի զուր Կամբէտտա կը դառնայ կը խօսի որ « զՕրէնսդիր ժողովքը հանդարտ թողուն որպէս զի օրինաւոր ըլլայ ամեն որոշողութիւն». նոր նոր խումբեր մեծագոյն շառաչներով ներս կ'ողո-ղեն գոչելով « Անկո՛ւմն և Հասարակապետութիւն » և կը բռնեն դուրսը մնացած երեսփոխանաց տեղերը։ Նա-խագահը նիստը վերցնելով կը քաշուի. ամբոխը աւելի խրախուսուելով, կը պահանջէ որ անմիջապէս Հասա-րակապետութիւն հրատարակուի։ Բազմութիւնը մինչեւ

սկսաւ ճեմել երեսփոխանաց գրասեղաններուն վրայ. ո-
մանք կը պատուէին թղթեր, կը նետէին, ուրիշները ճառա-
խօսել կը ձեւացնէին. չկար ազդեցութիւն մը որ սանձէր
ամբոխը։ Յանկարծ Դամբէտտա բեմը ելաւ և գոչեց
«Քաղաքացիք, հայրենիք վտանգի մէջ է և մենք ըլ-
լալով ժողովրդեան օրինաւոր ներկայացուցիչք, կը հրա-
տարակենք որ՝ Լուի Նապոլէոն և իր ցեղը դադրած է
Դաղղիոյ վրայ թագաւորելէ»։ Մեծ ծափահարութիւն-
ներով և կեցցէներով կ'ընդունուի այս հրատարակութիւ-
նը և Դամբէտտա կը յորդորէ զժողովուրդը երթալ Օ-
թէլ դը Վիլ, հոն Հասարակապետութիւնը հռչակելու հա-
մար։ Ինքը այսպէս կ'ելլէ սրահէն և բոլոր բազմու-
թիւնը միասին, որով և ազատ կը մնայ ժողովարանին
սրահը։

Այս աղմուկին ժամանակ մօտ երկու հարիւր երես-
փոխանք հաւաքուած սրահի մը մէջ, կը վիճէին Օրլէնաս-
ղիր ժողովոյն մէջ եղած առաջարկութեանց վրայ։ Նոյն
իսկ այն երեսփոխանք որ երկու ամիս առաջ այնքան
նախատեր էին զԹիէր, հիմա կը խնդրէին որ նախա-
գահէ ժողովոյն։ Այս միջոցին Յանձնաժողովոյն տեղե-
կաբերը ծանոյց Թիէրի բանաձեւին ընդունուիլը՝ այս
տարբերութեամբ որ փոխանակ «ի նկատի առնելով
պարագայքը». գրուած է՝ «Նկատի առնելով գահուն պա-
տասխանատուութիւնը»։ Երեսփոխանք դեմեցին ժողովատեղին
բանաձեւը քուէարկելու. բայց ամբոխէն դեռ ողողեալ
գտնելով, դարձան կանխաւ հաւաքուած սրահնին, ուր
հասան փութով Ժիւլ Ֆաւրը և Ժիւլ Սիմոն և խմ-
ցուցին Օթէլ դը Վիլի մէջ Հասարակապետութեան հրա-
տարակուիլը և նոր պաշտօնարանը։ Այն ատեն Թիէր
խօսեցաւ որ ալ ժամանակ չկար վիճելու սկզբանց և
գործոց վրայ. չէր կարելի նաեւ եղածին դէմ կռուիլ.
որովհետեւ այդ անձանց դիտաւորութիւնն էր թշնամին
հայրենիքէն հանել։ «Եթէ դէմ դնենք, հայրենեաց վնա-
սակար գործ մը ըրած կ'ըլլանք։ Աստուած օգնէ մեզի,
ժամանակ չէ ներքին կռիւներու»։ Աւելցուց Թիէր որ՝
«չեմ հաւան այսօրուան եղածին վրայ, բայց կը մտա-

ձեմ որ թշնամւոյն առջեւն ենք և ամենուս ուրիշ բան չմնար բայց եթէ քաշուիլ արժանավայել ծանրութեամբ»։ Յայտնի է որ այս հռետորական խօսքից ներքեւ ծածկուած էր մեծ մասին հաւանութիւնը, քանի որ ուրիշ բան կարելի չէր։ Նոյնը եղաւ ծերակուտին մէջ ալ երբ Ռուհէ նախագահը խմացուց ամբոխին ողողելը Օրէնսդիր սրահին ժողովքին մէջ։ Երկու ժողովքներուն փակուելով, կը վերջանար կայսերական վարչութիւնը. «սակայն առանց օրինաւոր վճռոյ մը կամ ազգային ընդհանուր ձայնի մը[1]»։

Այս անցքերուն միջոց կայսրուհին պալատան պատուհանէն կը դիտէր ամբոխին յուզումը, երթուգարձը. և ամեն վայրկեան լուրերը կ'ընդունէր, սակայն առանց զուշակելու թատերախաղին վերջին լուծումը։ Երբ Ռիֆֆէ պալատը երթալով գրեթէ հրաժարումը ինդրեր էր, կայսրուհին չէր ուզած համոզուիլ և մինչեւ պատճառաբաներ էր, փնասակար համարելով իր քաշուիլը. ըսեր էր եւս որ «Կուզեմ երթալ հիւանդանոցները և դիմել բանակին յառաջապահը»։ Այսոնք խօսած ժամանակ լուր եկաւ որ ամբոխը սկսեր է կոտրել կայսերական արծիւները և Օրէնսդիր ժողովքը ողողուեր է։ Կայսրուհին կոչեց զզօրավարն Մէյլին և հարցուց թէ առանց արիւնահեղութեան կարելի էր պաշտպանել զՏիւլրրի, երբ նա «Ոչ» պատասխանեց. այն ատեն «Ամենայն ինչ լմնցաւ, ըսաւ, չեմ ուզեր այսքան ապիտից վրայ քաղաքական պատերազմը եւս տեւեցնել»։ Հասան փութով ասպետն Նիզրա՝ Դեսպան Իտալիոյ և իշխանն Մէտէնիք՝ դեսպան Աւստրիոյ, որոնք աճապարեցուցին զկայսրուհին փութով մեկնելու։ Կայսրուհին անոնց հետ միարան հետը առնելով եւս իր ընթերցողուհին՝ Տիկին դը Բրըտոն, քոյր Բուրբոնի զօրավարին, մեկնեցաւ հապ-

---

1. Դը լա Գորս. Բ. կայսրութիւն. Գ. Հատ։ Թագաւորական պատմագիրք կը կշտամբեն ընդհանուր քուէարկութեան կողմնակիցքը և ապարինաւոր կը գտնեն Գամբէտտայի այս գործը, հակառակ հասարակական սկզբանց։

ճնպով։ Արգէն կը լսուէր ամբոխին աղաղակը որ կ'ուզէր մտնել կայսերական պալատը. և կայսրուհին ելեւլով այն գոնէն որ կը նայի Սէն ժէրմէն դ'Օքսէրուա հրապարակին վրայ, ապաւինեցաւ իր ատենաբուժին տունը, որ իրեն ընկերացաւ այս փախստեան միջոց մինչև Նորմանտիոյ ծովեզերքը։ Հոն գտաւ Հոն Բրբոնի գրաւավարի որդւոյն գրասենեակը որ կայսրուհւոյն խնդրանաց զիջանելով, անցուց զինքը յԱնգլիա ի Բրայդրն։ Նոյն երեկոյ Եւժէնի հասաւ ի Հասդինկս, ուր էր գտնուէր իւր որդին։

Կայսրուհին հազիւ ելեր էր Ֆիւլբրիէն, երբ ազգային պահապանաց գունդ մը մտաւ և տիրեց անոր, եռանէն ունենալով ամբոխին բազմութիւնը։

Այսպէս վերջացաւ Երկրորդ կայսրութիւնը յետ տեւելու տասնհրեք տարի և ինը ամիս, որուն անկման պատճառաց աւելի նեղքին էին քան արտաքին։ Ազատական մասը չնեղուեց երբէք 2 Դեկտեմբերը (1851)- կայսրութիւնը միշտ բռնակալութիւն մը նկատեց, և տարուեց, գտաւ յարմար ժամանակ տապալելու զանիկայ, այսպէս ասպալելով միանգամայն Գարդիոյ գերտերերուն ազդեցութիւնը տիսնդրական հաստատակամութեան նեմարին մէջ։ Վասնզի Երկրորդ կայսրութիւնը առանց առաջնոյն մեծութիւնը և գիտնականին ոյժը ունենալու, գիտցեր էր ստանալ փառքեր, գիտցեր էր ինքզինքը և իր ազդեցութիւնը բարձր բռնել, ստանալով Ղրիմեանոցանց ազատարարեան սկզբունքով, ամեն փոքր ազգաց հաճակցութիւնը[1]։ Ամեն ընկնելու ազգ իրեն պաշտպան հաճակցեցաւ զՍրբկրոյզ կայսրութիւնը և զՊիեմոնտէն։ Դ- Ազով սիրելի ժողովրդոց և խիստ լի կառավարողներուն։ Իր գինուորական ձեռնարկներն ամենեն ալ նշանաւորութիւն մը չունեցան և սակայն առանց աշխարհակալութեան

1. Հանգիս՝ թէ կայսրութեան անկման պատճառ կը համարի նոյն իսկ այդ Ազգութեանց սկզբունքը, որով ինքը թագաւորեր էր Վերմանիոյ դաշնակցութեան կազմուելը։ — Ա. Հատոր, Ա. Գլ. 1848։

գինուց, նուիրեց Գաղղիոյ, Նիս և Սավուա գեղեցիկ գաւառները։ Այդ միջոց իրեն պիտի մնայ պարծանք ինչպէս միշտ պիտի դատապարտուի Ալզասի և Լորէնի կորուստին համար։ Կայսերականը այս դառն անդամահատութիւնը կը հաստատին հետեւանք մը կայսրութեան անկման։ Սողոգ է որ եթէ Նապոլէոն Գ և կայսրութիւնը ժողովրդէն պաշտպանեալ մնային, կարող էին Գրուսիայէն յաւագոյն պայմաններ առանալ, զոր չէր կարող Մեպոտեմրեր Էն ինքնածին վարչութիւն մը կամ նոյն իսկ Հանրապետութիւն մը, առանալ. որ վրատահութիւն մը չէր ընչէր։ Եթէ կ՚ուզուէր տապալել կայսրութիւնը, այդ պէտք չէր բլլալ գինեալ թշնամւոյ մը բանակներուն առջեւ և այն յեղափոխութեամբ մը, ամբոխի մը բռնութեան ներքեւ, այսպէս աւելի պահանջող բնելով գթշնամին։

Ե. — Գամբէտտա յետ հրաստարակելու Որէնադիր ժողովքին մէջ կայսրութեան անկումը, ինքն իր կողմանէ, ապա ստրոխին հետ գացեր էր Եթէ դը Վիլ, ուր հասան ռազմակոչմեան երեսփոխաններէն ժիւլ Ֆաւրը, ժիւլ Ֆէրրի, Սպիլլէ, Լոիէն Էրաքս, Գէրաղրի և ուրիշներ. և հաւարուեցան Էնի քաղաքապետութեան սենեակը հոն սահմանելու ընել իրենին։ Իր որովհետեւ օրինաւոր չէին համարիր առանց համայն Գաղղիոյ ներկայացուցչաց բոլոր Գաղղիոյ համար վարչութիւն մը դրշեն. անոր համար մտածեցին Պարիսու համար միայն կառավարութիւն մը դնել, Պարիսու ներկայացուցիչ եռանդամներու որոշողութեամբ։ Բնական է այս որոշողութիւնը եւս ունէր իր տկար կողմը. այսու հանդերձ դրշեցին զգօրավարն Տրոշիւ նախագահ վարչութեան և պաշտօնեայք՝ Արտաքին Գործոց՝ ժիւլ Ֆաւրը, Ներքին Գործոց՝ Գամբէտտա, Պատերազմի՝ զօրավարն Լրեռ, ծովային զօրութեան՝ Ադմիրալ Ֆուրիշոն, Արդարութեան՝ Կրէմիէօ, Եկեղեցւոյ՝ Լրնէ Գիկար, Հասարակաց Կրթութեան և Կրօնից՝ ժիւլ Սիմոն, Հանրային Աշխատանաց՝ Գորիան, Երկրագործութեան և Վաճառականութեան՝ Մանեէն։ Պարիսու քաղաքագլուխ անուա-

Երրորդ Հասարակապետութիւն։

նուեցաւ Լուիէն Արակո, իրեն օգնական ունենալով զՇարլ Ֆլոքէ և Հանրի Բրիսոն. Ոստիկանապետ՝ Դը Բէրաղրի։ Նոր վարչութիւնը վերցուց ծերակոյտը և ցրուեց Օրէնսդիր ժողովքը։

Գամբէտտա Թէպէ դը Վիլլի առջեւ հազարաւոր խրոնեալ ամբոխին խմացուց Ազգային Պաշտպանութեան վարչութիւնը, կարդաց պաշտօնէից անունները, աւելցընելով որ այս վարչութիւնը անցողարար էր, մինչեւ որ ազգը ընտրութիւններով վարչութիւն մը սահմանէ։ Իւ թէ նպատակն էր պաշտպանել ազգը օտարին յարձակման դէմ. ապա պիտի հրաժարէր։ Ամբոխը ցրուեցաւ կեցցէներով։ Բայց կար մաս մը, որ պաշտօնէից ուրիշ ցանկ մը պատրաստեր էր, որուն մէջ կային Բլանքի, Ֆէլիքս Պիա, Տրէկլիւզ անունները, դարձեալ շատ մը պահանջներ կալուածոց, տրոց և ազատութեանց նկատմամբ։

Սեպտեմբեր 4ի վարչութիւնը իր ծնած օրէն թշնամի կ՚ունենար Պարիսու Հասարակութեան վարչութիւն մը կազմելու մտածողները։

Ազգային Պաշտպանութիւնը ոչնչացուց ամեն քաղաքական դատապարտութիւն և աքսորեալները ետ կանչեց, փոփոխեց թէ ներքին և թէ արտաքին այն պաշտօնակալք և դեսպանք, որոնք իրեն կասկած մը կրնային շնչել. դիւրնցուց կամաւոր զինուորութիւնը, ազատութիւն շնորհեց տպագրութեան և լրագրութիւնը ազատ ըրաւ նամակաղրոշմէ։ Ի զէն կանչեց ամբողջ ազգը, և ոռնիկ սահմանեց մնայուն ազգային պահապանաց։ Այսոնք ամենը ըրած ժամանակ՝ նաեւ բոլոր Ազգը հրաւիրեց Հոկտեմբեր 16ի ընտրելու իր ներկայացուցիչ երեսփոխանքը Սահմանադիր ժողովոյ մը համար, ուսկից պիտի ծնանէր նոր վարչութիւնը։ Ընտրութիւնք պիտի ըլլային ուղղակի՝ 1849ի օրէնքին համեմատ։ Իւ որովհետեւ վախ կար Պարիսու պաշարման, անոր համար որոշուեցաւ որ վարչութեան փոխանորդութիւն մը նստի ի Տուր. հոն ղրկուեցաւ Արդարութեան պաշտօնեայն Քրէմիէօ, որուն քով պիտի խմբուէին միւս պաշտօնաբանաց ներկայացուցիչը։ Քիչ վերջը ղրկուեցաւ նաեւ

ծովակալն Ֆուրիշոն՝ իբր պաշտօնեայ Ծովային զօրութեան և ներկայացուցիչ պատերազմի։ Սեպտ. 12.

Նոր վարչութիւնը հրատարութեամբ մը իմացուց ամեն քաղաքապետաց, զօրավարաց, Ալճէրիի ընդհանուր կառավարչին և Գաղղիոյ ամեն ունեցած տեղերու՝ հեռագրով որ «Օրէնսդիր ժողովքը հռչակեց կայսրութեան անկումը. Հասարակապետութիւնը հռչակուեցաւ Յ.Օթէլ դը Վիլ և Ազգային Պաշտպանութեան վարչութիւն մը կազմուեցաւ Պարիսու երեսփոխաններէն, զորս հաստատեց ժողովրդեան հաւանութիւնը։ Զօրավարն Տրոշիւ որ Ազգային Պաշտպանութեան զինուորական լիակատար իշխանութիւնը ունի, է՛ միանգամայն Նախագահ վարչութեան»։ Ժիւլ Ֆավրը իբր պաշտօնեայ Արտաքին Գործոց, Գաղղիոյ ամեն դեսպանաց և ներկայացուցչաց իմացուց վարչական փոփոխութիւնքը. «Արութեամբ և մեր անձին նախատանօք իսկ պաշտպանեցինք խաղաղութիւնը. հիմայ աւելի եւս համոզմամբ նոյնը պիտի ընենք։ Արտերնիս կտոր կտոր կ՚ըլլայ տեսնելով մարդկային ահաւոր կոտորածք և արիւնահեղութիւնք, որով կը ջնջուին երկու ազգերուն ալ ծաղիկները։ Պրուսիոյ թագաւորն ըսաւ որ ինքը չէր կռուէր Գաղղիոյ դէմ, այլ ընդդէմ կայսերական ցեղին։ Կայսերական ցեղը գետին ինկաւ, Գաղղիա ազատ վեր կը կանգնի։ Արդեօք Պրուսիոյ թագաւորը պիտի ուզէ՞ շարունակել ամբարիշտ պատերազմ մը, հաւասարապէս վնասակար իրեն ալ մեզ ալ... փափազնիս է տեւողական հաշտութիւն մը և մեր շահը հաւասարապէս է բոլոր Եւրոպայի։ Եթէ միայն ալ մնանք, պիտի չտկարանանք. բնաւ պիտի չտանք բիզ մը մեր հողեն և քար մը մեր բերդերեն»։

4. — Ժիւլ Ֆավրի շրջաբերականէն կը տեսնուէր նոր վարչութեան դէպի հաշտութիւն միտումը և ջանքը. բայց հակառակորդը բոլորովին տարբեր կը մտածէր։ Նա կուզէր զԳաղղիա այլ եւս չկարենալ վնասելու դիրքին մէջ դնել և Պարիսու մէջ վարչական յեղափոխութիւնք կատարուած ժամանակ, նա կը յառա- Պարիսու զինուորական պարտաստութիւնք։

ջէր և Օգոստոս 15ի Նապոլէոն կայսեր տօնին օրը, ամբակոծեր էր մեծ աւերմունքներով Ստրազբուրկ քաղաքը, որ կ'ընդդիմանար արութեամբ։ Պարիսու ժողովուրդը այս դիւցազնական ընդդիմութիւնը պատուելու համար, ամեն օր ծաղկամբք կը ծածկէր Պլաս Կոնկորդի մէջ եղած Ստրազբուրկի արձանը։ Թշնամին կը յառաջէր դէպ ի Պարիս և Պարիսու վարչութիւնը մայրաքաղաքին պաշպանութեան յոյսը Մէցի բանակին վրայ դրած էր։ Պալիքաօ պաշտօնարանը իր վերջին ժամանակներուն մէջ մեծ եռանդեամբ և խորհրդով հսկեր էր բերդերուն գինուելուն։ Այս անձկութեան միջոց, ամեն ամրոցի, Ծովային զօրութեան թնդանօթներ դրուեցան ծովային հրաձիգներով, որոնց գունդերը բերուեցան նաւահանգիստներէն։ Բերդերուն և պարսպաց վրայ հրամանատարք դրուեցան զօրավարք, ծովակալք, տէրութեան նաւապետք. պէտք էր ամեն ոյժ գործածել։ Միանգամայն անբաւ պաշար և կենդանիք փոխադրուեցան և դիզուեցան ի Պարիս և աւելին թերեւս հաւաքուէր, թէ որ թշնամւոյն ընթացքին վրայ աւելի ճշգրիտ տեղեկութիւն ունեցուէր։ Քանի թշնամւոյն մօտենալու լուրը կը լսուէր, շատ մը օտարականք և պարիսցիք քաղքէն կը փախչէին։ Ընդհակառակն մերձաւոր քաղաքներու, աւաններու և գիւղերու բնակիչք կ'ապաւինէին ի Պարիս։ Մտածուեցաւ անօգուտ բերանները հանել մայրաքաղաքէն, բայց ապա չգործադրուեցաւ. վասնզի շատ դժուար պիտի ըլլար պարիսցին հանել իրեն պաշտած քաղաքէն. նա մանաւանդ որ ծերերը զէնք պահանջեցին ինքեանց զինուոր ըլլալու և կանայք, պառաւներ, պատրաստ էին հիւանդներ նայելու և ուրիշ ծառայութեանց։

Պարիսու մէջ կազմուած գունդերը վինուա զօրավարին հրամանատարութեան ներքեւ ղրկուած էին միանալու Մակ Մահոն մարաջախտի բանակին, սակայն Էդանի կռուէն առաջ չհասնելով, բռնադատուեցան Պարիս դառնալու։ Այս գունդերը միայն տրամադրելի էին մայրաքաղաքին պաշտպանութեան համար. կային Էնի շարժուն պահանորդք և Պարիսու մէջ բանակած ինքնա-

կամ հարիւր հազարէն աւելի շարժուն պահապանք, որոնք սակայն զէնք չունէին։ Ժողովուրդը սիրով կը հոգար անոնց նիւթական պէտքերը։ Սակայն ամեն պատրաստութիւն երեք, չորս շաբաթուան համար էին. բնաւ չէր կրնար գուշակուիլ որ Պարիս երկար պաշարուած կրնայ մնալ։ Արդէն պաշտպանողաց արութիւնը որքան ալ մեծ ըլլար, որչափ ալ անսահման ըլլար քաղաքացւոց անձնանուիրումը և զոհողութիւնը, Պարիս ռազմագիտական տեսակէտով շատ յետնեալ մնացեր էր։ Երբ հրանօթից և գնդակաց արձակման գիտութիւնը կը յառաջէր հսկայաքայլ օտար երկիրներու մէջ, զինուորական վարչութիւնը հոգ չէր ըրած հեռացնելու պատուարները և պարսպաց շրջանակները, որպէս զի թշնամւոյ ռումբերը չ'ինկնան քաղքին մէջ։ Պալիքաօ պաշտօնարանը շատ ուշ ընդունեց և ջանաց դարման տանել երկաթուղւոյ բոլորշի գծերով ամրացնելով պարիսպները և անոնց ետեւ ամրարտակներ բարձրացնելով. նոյնը շարունակից դեռ աւելի ուրիշ միջոցներով զօրավարն Տրոշիւ, բայց այս ամենն ալ աճապարանօք եղած բաներ էին։ Ռազմագիտական անհոգութիւնը եղած էր նաեւ նկատմամբ ամեն բերդաքաղաքաց, որով Պրուսիացիք յետ միանգամ սահմանագլուխը անցնելու և մտնելու Վոժի գծին վրայ, անկէ վերջը կրնային ապահով գալ պաշարել զՊարիս. մանաւանդ երբ Մէցի բանակը գործելու անկարող վիճակի մէջ դրուեցաւ։

5. — Վարչութիւնը լիովին ըմբռնած էր իւր դժուարին կացութիւնը. ստիպուած էր խաղաղութեան փափագելու, առ այս կը յուսար նաեւ չէզոք տէրութեանց ազդեցութեանը վրայ։ Հասարակապետական վարչութիւնը հրատարակուելուն, պաշտօնապէս զայն առաջին ճանչցողն եղան Ամերիկայի Միացեալ Նահանգք, ապա Զուիցցերի, Իտալիա, Սպանիա և կարգաւ ուրիշ տէրութիւնք։ Դիւանական յարաբերութիւնք անմիջապէս հաստատուեցան։ Թիէր չէր ուզած վարչութեան մասնակցիլ, որովհետեւ իրեն համար օրինաւոր ծնունդ մը

Խաղաղութեան փորձեր. — Ժիւլ Ֆաւրը և Թիէր։

չէր երեւցած, բայց և չմերժեց իբր ներկայացուցիչ Գաղղիոյ դիմել Եւրոպիոյ իշխողաց, անոնց միջամտութիւնը խնդրել պատուաւոր հաշտութեան մը համար ընդ Գաղղիա և ընդ Պրուսիա։ Սեպտեմբեր 11ին մեկնեցաւ շրջելու օտար արքունիքները։

Ժիւլ Ֆաւրը ևս որոշեց փորձել նոյն նպատակը ուղղակի բանակցելով Բիսմարքի հետ։ Պրուսիացի պաշտօնէին հետ առաջին տեսակցութիւնը եղաւ Հօթ Մէնի դղեկին մէջ։ Բիսմարք սիրով ընդունեցաւ զգաղղիացի պաշտօնեայն որ ջանաց պատճառաբանել պատուաւոր հաշտութեան մը համար, զոր ապա հաստատել պիտի տար գումարուելիք Սահմանադիր ժողովքէն։ Բիսմարք նկատել տուաւ որ համոզուած չէր թէ Գաղղիոյ ժողովուրդը հաշտութեան կը փափագի. աւելցուց եւս որ «Եթէ Պարիս փութով չ'առնուի ի Գերմանացւոց, խաժամուժը զայն պիտի առնու և վեր վար պիտի ընէ»։ Ի զուր ջանաց Ժիւլ Ֆաւրը համոզել զԲիսմարք որ գաղղիացի ժողովուրդը խաղաղութեան կը փափագի. պրուսիացի պաշտօնեայն չէր ալ ուզեր համոզուիլ յետ այսքան յաջողութիւններու։ Ժիւլ Ֆաւրը հարցուց նաեւ թէ ինչ պայմաններով իրենց թոյլ պիտի տրուէր հաւաքելու բոլոր ազգը և հարցնել անոր կամքը։ Բիսմարք պատասխանեց որ անհրաժեշտ իրեն պէտք էին «Ստորին և բարձր Հռենոսի երկու գաւառքը, Մոզէլի մաս մը Մէցով մէկ տեղ, նոյնպէս Շաթօ Սալէն և Սուասսոն»։ Ժիւլ Ֆաւրը այլայլած պատասխանեց որ «Կրնանք ազգութեանց թիւէն ջնջուիլ, բայց ոչ անպատիւ ըլլալ... Պրուսիա յաղթութենէ արբեալ, Գաղղիոյ կործանումը կ'ուզէ. ազգը չ'ընդունիր։ Թողուցէք որ ազգային ժողովք մը գումարենք որուն յանձնենք մեր իշխանութիւնը, և նա որոշէ վերջնական վարչութիւն մը որ խօսի ձեզի հետ պայմանաց վրայ»։ Բիսմարք պատասխանեց որ այդ «Մրագիրնիդ կատարելու համար զինադադարումն կարեւոր է, զոր չեմ կրնար տալ բացարձակապէս»։ Նոյն երեկոյ Ժիւլ Ֆաւրը կրկին տեսակցութիւն մը ունեցաւ և կրցաւ համոզել

զկոմսը ի նպաստ զինադադարման մը։ Բիսմարք խոստացաւ խօսել թագաւորին և հաւանութիւնը հարցնել։ Երկրորդ օրը Բիսմարք Ժիւլ Ֆաւրի իմացուց զինադադարման մը պայմանքը՝ Պրուսիացիք պիտի բռնէին Ստրազբուրկ, Թուլ և Ֆալսբուրկ. և որովհետեւ Ժիւլ Ֆաւրը ըսած էր որ Սահմանադիր ժողովքը թերեւս գումարուի ի Պարիս, այդ պարագային մէջ Պրուսիացւոց պիտի յանձնուէր քաղքին վրայ տիրող բերդ մը, զոր օրինակ Մոն Վալէրիէնի ամրոցը։ Ժիւլ Ֆաւրը վշտացեալ ընդհատեց զԲիսմարք «Լաւ էր զՊարիս ուզէիք, ըսաւ. ի՞նչպէս կ'ուզէք որ գաղղիացի ժողովք մը որոշողութիւն ընէ ձեր թնդանօթներուն ներքեւ»։ Բիսմարք առաջարկեց որ ժողովքը գումարուի ի Տուր, բայց Ստրազբուրկի պահանորդը պատերազմի գերի ըլլայ։

Ժիւլ Ֆաւրը Պարիս դարձաւ և իմացուց վարչութեան իր ունեցած խօսակցութիւնքը Բիսմարքի հետ, նոյնը հաղորդեց նաեւ Գաղղիոյ ամէն դեսպանաց։ Նոյն օրերը Պրուսիոյ վարչութեան տպագիր հրատարակութիւն մը կը ծանուցանէր՝ մինչեւ որ Գաղղիոյ մէջ օրինաւոր վարչութիւն մը հաստատուի, ինքը միայն կայսեր վարչութիւնը կը ճանչնար. և յօժար էր հաշտութեան մը համար բանակցելու կամ Նապոլէոնի, կամ Խնամակալութեան և կամ նոյն իսկ Բազէն մարաջախտի հետ որ կայսրէն ստացած էր իր իշխանութիւնը։ Դիրմանիա չէր կրնար բանակցիլ վարչութեան մը հետ որ Օրէնսդիր ժողովքին ձախակողմեանքը կը ներկայացնէր միայն։ Այս ամենը և բանակցութեան ելքը լսուելով Պարիսու մէջ, ժողովուրդը յուզուեցաւ։ Բազմութիւնը դիմեց Օթէլ տը Վիլ, լուր առնլու և վարչութիւնը անմիջապէս հրատարակել տուաւ որ Ազգային Պաշտպանութեան ծրագիրն էր «Ոչ մի թիզ հողէն, ոչ մի քար բերդերէն»։ Ամբոխը հանդարտած ցրուեցաւ։ 20 Սեպտ.

6. — Այս բանակցութեանց և յուզմանց ժամանակ գերմանացի բանակք միշտ կը յառաջէին։ Սէդանի յաղթութենէն վերջը, գերմանացի չորս բանակներէն երկուքը, Երրորդը որուն կը հրամայէր Պրուսիոյ թա- Պրուսիացիք կը յառաջեն. Պարիս կը պաշարուի։

գաժառանգը և Զորրորդը՝ որուն կը հրամայէր Սաքսոնիոյ թագաժառանգը, չուեցին Պարիսու վրայ և դիմացնին ամենեւին արգելք մը չգտան։ Լան քաղաքը անձնատուր եղաւ, որովհետեւ մէջը պահանորդ չկար դէմ դնելու։ Երբ անձնատրութիւնը կը ստորագրուէր, բերդին վառօդարանը օդը ելաւ սպաննելով սակաւաթիւ
Սեպտ. 9. Դաղղիացիք և Պրուսիացիք, մահացու վիրաւորելով բերդին հրամանատար զօրավարը, որ քիչ վերջը մեռաւ։ Երրորդ բանակը որուն մէջ էր նաեւ թագաւորը և ընդհանուր հրամանատարութիւնը, դէպ ի հարաւ իջնելով և անցնելով Ռէմս, Լպրոնէ, Շալոն սիւր Մարն, Շատօ Թիէրրի, Սեպտեմբեր 15ին հասաւ ի Մօ, ուր հաստատուեցաւ թագաւորին ճամբարը։ Իսկ Զորրորդ բանակը՝ նոյնպէս Սեպտեմբեր 15ին Պարիսու հիւսիսային կողմէն Շոմոնի, Ռէթէլի վրայէն հասաւ ի Սանլի։ Այն ատեն Երրորդ բանակը Վիլնէօֆ Սէն Ժորժի վրայէն անցաւ Սէնը, կամուրջ հաստատելով, յետոյ չուեց դէպ ի հարաւային Արեւմուտք և Սեպտեմբեր 20ին հասաւ ի Վէրսայլ ուր թագաւորը հաստատեց իր բնակութիւնը։ Զորրորդ բանակը դէպ ի հիւսիսային արեւմուտք քալելով, Սէն Դրնիի շրջանը ըրաւ և մօտեցաւ Երրորդին։ Պրուսիացիք բնաւ տեղ մը ընդդիմութիւն չգտան, բացի Շադիյոնէ որ կարեւոր դիրք մ'էր և ուր Պարիսու կառավարութիւնը ղրկեր էր զԴիւկրօ զօրավարը, այն որ փախեր էր Բրուսիացւոց ձեռքէն։ Սակայն Դիւկրոյի զօրաբաժինը մեծաւ մասամբ նոր կազմուած և անվարժ գունդեր էին, մանաւանդ զուաֆներուն ջոկատը. պատերազմը սկսելուն, գունդերը պառակտեցան և ցիրուցան փախան դէպ ի Պարիս ամեն կողմ քարոզելով պարտութիւնին և Պրուսիացւոց ահաւոր զօրութիւնը։ Բայց երբ փախստականք և դասալիքները Պարիսու մօտեցան, զինուորական իշխանութիւնը ազգային պահապանաց գունդեր ղրկեց և զանոնք կալանաւորեց և Պարիսու կառավարիչը հրովարտակով մը զանոնք «վատ» պախարակեց։ Պրուսիացիք միշտ կը յառաջէին և Սեպտեմբեր 19ին Պարիս ամբողջովին

պաշարուած էր և կտրուած Գաղղիոյ միւս մասերու հետ հաղորդակցութենէ։ Անկէ վերջը Պարիսէ դուրս հաստատուած իշխանութեանց կը մնար երկրին ազատութեան համար մտածել և աշխատիլ։

Լուառի բանակը. — Պրուսիացիք կը տիրեն Օռլէանի. — Ուրիշ պատերազմունք։

7. — Սեպտեմբեր 16ի Տուրի մէջ հաստատուած իշխանութեանց նուիրակութիւնը, անմիջապէս սկսեր էր իր չորս կողմը բանակ մը կազմել. վասն զի Գաղղիա բանակ չունէր և ունեցածն ալ Մէցի մէջ պաշարուած էր։ Ափրիկէէն գունդեր բերել տուաւ, հաւաքեց Գաղղիոյ հոս հոն եղած փոքր ջոկատները, զինուոր ըրաւ շարժուն պահանորդներէն մաս մը, և այսպէս սկսաւ ձեւացնել Լուառի բանակը որ քիչ ատենէն 25,000 զինուորի հասաւ և որոց հրամանատար դրուեցաւ զօրավարն Լամոտ–Ռուժ։ Նմանօրինակ գունդեր ալ կազմուեցան Գաղղիոյ արեւելակողմը Կամբրիէլ զօրավարին հրամանատարութեան ներքեւ, որոց պարտքը պիտի ըլլար Վոժի հարաւային անցքերը պահպանել։ Ուրիշ կամաւոր շարժուն գունդեր ալ սկսան ձեւանալ Արեւմտեան կողմը։ Տուրի նուիրակութիւնը Սեպտեմբեր 29ի հրովարտակով մը քաղաքապետաց հրամայեց փութով շարժուն գունդեր պատրաստել 21 տարուընէ մինչեւ 40 տարուան քաղաքացիներէ, որոնք զինուորութեան չէին պատկաներ. փութով հրահանգել զադոնք և անցնել պատերազմի պաշտօնէին տրամադրութեանը։

Լուառի բանակին կազմուելուն արգելք ըլլալու և միանգամայն տիրելու համար Օռլէանի, որ կեդրոն մ'էր Արեւմտեան և Հարաւային Երկաթուղւոյ գծելուն, պրուսիացի հետեւակ և հեծեալ գունդեր, ֆոն դէր Թան զօրավարին և Պրուսիոյ Ալբրէխտ իշխանին հրամանատարութեան ներքեւ յառաջեցին դէպ ի Օռլէան։ Սեպտեմբեր 25ին Օռլէանէն դէպ ի Պարիս ճամբուն վրայ Պրուսիացիք զարնուեցան Լամոտ Ռուժ զօրավարին գունդերուն հետ և յետ բուռն մրցման, ետ նահանջեցին մինչեւ ի Տուր։

Թշնամւոյն յառաջելու լրոյն վրայ Օռլէանի զինուորական հրամանատարը՝ զօրավարն Պոլհէ, անկա-

բելի համարելով պաշտպանել քաղաքը, հրամայեց քաշուիլ անկէ։ Բայց Օռլէանի քաղաքապետը և հասարակութիւնը՝ դէմ կեցան այս պարպուելուն և զօրավարն Պոլհէ կրկին դարձաւ յՕռլէան. բայց քիչ ժամանակուան համար, որովհետեւ Ֆոն դէր Թան զօրավարը հրաման ընդունեցաւ վէրսայլէ յարձկելու Օռլէանի վրայ և 35,000 զինուորք և 82 հրանօթք երեւցան Օռլէանի ճամբուն վրայ Հոկտեմբեր 10ին, իրենց առջեւէն փախցընելով գաղղիացի ջոկատներ։ Նոյն իսկ զօրավարն Լամոտ Ռուժ Հոկտեմբեր 11ին անհնար դատելով այնպիսի զօրաւոր թշնամւոյ մը առաջը առնուլ, անցաւ Լուառի ձախ կողմը։ Իրեն նահանջը պաշտպանելու համար 3500 անձանցմէ կազմեալ բանակ մը թողուց ետեւէն, որոց մէջ կային օտար գունդեր, և որոնք տասը ժամ դիւցազնական արութեամբ ճամբան մրցեցան պրուսիացւոց բանակին։ Օտար գունդերն էին 1490 անձինք, որոց մէջ կային Հռովմայ Քահանայապետին ալ 360 զուաֆք։ Այդ 1490 կռուողներէն 34 միայն հասան ի Բլուա և 16 պապական զուաֆք։ Օտար գունդերուն արութիւնը և անձնանուիրումը զարմացուց զԵւրոպա։ Պրուսիացիք Հոկտեմբեր 12ին տիրեցին Օռլէանի մօտ եղած Մոնժուա լերան և կէսօրուան մօտ սկսան կրակ թափել քաղքին վրայ որ բնաւ պաշտպանութիւն մը չունէր և այրեցին Երկաթուղւոյ կեդրոնական կայարանը։ Յետոյ երաժշտական քայլերգով մտան յՕռլէան և կանչելով անմիջապէս զՊէրէյրա քաղաքապետը հինգ միլիոն ֆրանք տուգանք դրին քաղքին վրայ, յորոց 180,000ը անմիջապէս վճարել պահանջեցին։

Օռլէանի առմամբ Պրուսիացւոց ձեռքը կ՚իյնար Գաղղիոյ կեդրոնի ճամբաները։ Վարչութիւնը զգաց եղած հարուածը, զոր կրնար աստիճան մը խափանել զօրավարն Լամոտ–Ռուժ թէ քաջութեամբ ընդդիմանար, անոր համար իր ձեռքէն առնուեցաւ Ժե բանակին հրամանատարութիւնը և տրուեցաւ տ՚Օրէլ դը Պալատին զօրավարին, արի անձ մը որ պաշտօնը ստանձնած ժամանակ ըսաւ զինուորաց «Միտքս դրած եմ հրացանի

բռնել ամեն զինուոր որ վախնայ թշնամւոյն դիմաց, թէ ես ալ շուարիմ, զիս հրացանի բռնեցէք»։

Ստրազբուրկի անձնատուր ըլլալը։

8. — Քիչ օր առաջ Գերմանացւոց անձնատուր եղեր էր նաեւ Ստրազբուրկ յետ երկու ամիս պաշարման։ Արդէն Օգոստոսի 7էն երբ շրջակայից բնակիչք փախստէիցմէ իմացան վէրթի պարտութիւնը, ամենը դէպ ի Ստրազբուրկ ապաւինեցան, զոր կը պաշտպանէր զօրավարն Իւհրիկ 11,000 զինուորօք։ Գերմանացի բանակը Օգոստոս 10ին նուիրակ մը ղրկեց քաղաքին՝ անձնատուր ըլլալու։ Սակայն եթէ հրամանատարը և եթէ ժողովուրդը պատասխանեցին որ պիտի կռուէին մինչեւ վերջը։ Այն ատեն գերմանացի բանակը պաշարեց զքաղաքը։ Եւ որովհետեւ Ստրազբուրկի բերդօրայք խեղճ դրութեան մէջ էին, փութով Բաղէնի գունդերը ընդ հրամանատարութեամբ Բէյէր զօրավարին, տիրեցին մօտ աւաններուն և քաղաքը բաժնեցին իւր գիւղերէն։ Հասան նաեւ պրուսիացի գունդեր որոց կը հրամայէր զօրավարն Վէրթէր և քաղաքը ամեն կողմանէ պաշարելով, հրաւիրեցին զզօրավարն Իւհրիկ անձնատուր ըլլալու, որ մերժեց։

Օգոստոս 15ի Նապոլէոն կայսեր տօնախմբութեան օրը, գնդակաց ահաւոր կարկուտ մը սկսան թափել քաղաքին վրայ։ Եւ որովհետեւ գաղղիացի զօրավարը մայր եկեղեցւոյն վրայ հաստատեր էր զինուորական դիտարանը, Պրուսիացիք զմայր եկեղեցին ալ գնդակոծման շրջանակին մէջ պարունակեցին։ Վէրթէրի նպատակն էր կործանել զինուորանոցները, զինարանը և պաշարուց շտեմարանքը, այսպէս բռնադատել զժողովուրդը և զբանակը հաշտութիւն խնդրելու։ Օգոստոս 18էն վերջը շարունակ և սաստիկ ռմբակոծումը սկսաւ, որ ա՛լ անկարելի եղաւ մեռեալքն անգամ տանիլ թաղել քաղքէն դուրս. և Բուսաբանութեան պարտէզը գերեզմանոց վերածեցին։ Օգոստոս 24ին կարկտանման թափած գնդակներուն սուլելու ձայներուն մէջէն, յանկարծ լսուեցաւ «կրակ» աղաղակը. և ահա տեսնուեցաւ որ կը բռնկեր մայր եկեղեցւոյն չնաշխարհիկ զան-

գակատունը։ Արդէն հրդեհը երագ կ՝ընթանար մայր եկեղեցւոյն փողոցը և Քլէրէրի հրապարակը. ահաւոր տեսարան մ՝էր. եթէ երկինք և եթէ շէնքերը կարմիր լուսով մը կը ցոլային։ Այրեցան արհեստից ամենաթանկագին առարկայք, քաղաքական գրատունը, ձեռագիրներու հաւաքածոյք, հին նշանաւոր պատկերաց թանգարանը, նոր եկեղեցին, բողոքականաց մեծ տաճարը իր տիեզերահռչակ երգէոնով, բազմաթիւ գեղեցկաշէն պալատք և տունք։ Փողովրդեան մաս մը ապաւինեցաւ գետնափոր բնակութիւններ և խորշեր, անկարելի ըլլալով փողոցներէն անցնիլ։ Ի զուր Ստրազբուրկի եպիսկոպոսը նուիրակութիւն մը ղրկեց գերմանացի հրամանատարին որ խնայուի քաղաքին և քաղաքացւոց, Վէրթէր կը պահանջէր անձնատուութիւն, զոր յանձն չէր առնուր Իւհրիկ, յուսալով որ օգնութիւն մը հասնի և շարունակուեցաւ ռմբակոծումը։ Ստորերկրեայ բնակութիւնք, կերակրոց պակսիլը և օդոյն ապականութիւնը փութով քաղաքին մէջ զանազան հիւանդութիւնք տարածեցին։ Ոստիկանութիւնը բացաւ հասարակաց շէնքերը, բայց շատերը գետնափոր բնակութիւնները աւելի նախադաս և ապահով համարեցան։ Իւհրիկ այրեց Քէհլ բաց քաղաքը, որպէս զի թշնամեաց ձեռքը չ՝իյնար, անոր բնակիչքն ալ լեցուեցան ի Ստրազբուրկ։

Զօրավարն Վէրթէր տեսնելով որ այս ռմբակոծումը բաց ի բոլոր Եւրոպիոյ և քաղաքականացեալ ազգաց քստմունքէն ուրիշ արդիւնք մը չունեցաւ, դադրեցուց կրակը Օգոստոս 28ին և սկսաւ կանոնաւոր պաշարում մը, որով յուսաց միայն ընկճել աննկուն քաղաքը։ Ամբողջ բոլորտիքը զուգահաւասար երկու գիծ գունդեր շարեց, իրենց ամբարտակներով և թնդանօթներով և այդ գիծերը քիչ քիչ մօտեցուց քաղաքին պարսպաց, գոգցես զայն խեղդելով։ Զօրավարն Իւհրիկ տեսնելով որ ամենայն ինչ լմնցած է, փորձեց քաղքէն դուրս յարձակում մը դէպ ի Վախրն և Սարս, որպէս զի խանգարէ թշնամւոյն ամրութիւնքը, սակայն ետ վանուե-

ցաւ։ Ուրիշ յարձակումներ ալ ըրաւ, որոնք ամենն ալ նոյն վերջը ունեցան։ Բովանդակ Եւրոպա յուզուած էր Ստրազբուրկի այս դիւցազնական ընդդիմութեան վրայ, սակայն չէզոքութեան պատճառաւ ոչ ոք կարող էր միջամտել. միայն հելուետիացի նուիրակութիւն մը խընդրեց Սեպտեմբեր 8ին Վէրթէրէ և հրաման ստացաւ որ քաղքէն կարենան դուրս ելլել կանայք, տղայք ծերք և հիւանդք։ Այսպէս հասարակութեան ընտրանօք 2500 անձինք ելան քաղքէն և մեկնեցան ի Զուիցցերի, ուր գտան առատաձեռն և հոգացող ընդունելութիւն։ Այս նուիրակաց միջոցաւ ստրազբուրկցիք իմացան Պարիսու մէջ եղած յեղափոխութիւնը և նոր վարչութիւնը։ Սեպտեմբեր 20ին ալ Ստրազբուրկի նոր անուանուած քաղաքապետը՝ Վալանթէն՝ թշնամեաց գնդակներուն ներքեւ, լողալով անցաւ պարսպաց շուրջը եղած գետակը և մտաւ իւր պաշտօնատեղին։ Վալանթէն խրախուսեց կէս լքեալ ժողովուրդը դէմ կենալու ցյետին կէտ, որով և իւհրիկ մերժեց անձնատրութեան ո՛ր և է պայման։ Բայց թշնամին քայլ առ քայլ կը մօտենար պարսպաց. և զինուորաց ու քաղաքացւոց դիւցազնական ընդդիմութիւնը այլ եւս նպատակ մը չունէր, քաղաքը անպատճառ պէտք էր ա՛լ դռները բանալ կամ մոխրի և աւերակներու կոյտ մը դառնալ խառն բնակչաց դիակներով։ Այն ատեն միայն զօրավարն Իւհրիկ սպիտակ դրօշը պարզեց պարսպաց վրայ[1]։ Անձնատրութեան պայմանք նոյն եղան ինչ որ Սէդանի։ Զօրավարք և սպայք յետ խօսք տալու որ այլ եւս չկռուին ամբողջ պատերազմին ժամանակ, ազատ էին երթալու ո՛ւր որ կուզէին. իսկ զինուորք և շարժուն պահանորդք գերի համարուեցան։ Ամենայն զէնք և մթերք յանձնուեցան Գերմանացւոց։ Սակայն զինուորներէն շատերը կոտրեցին իրենց սուրը և հրացանը զայն թշնամեաց չտալու

Սեպտ. 2.

---

1. Ամբողջ պաշարման միջոց 274 հրանօթք 200000 հարուածք նետած էին քաղքին վրայ, որով ըսել է 4էն 5 հարուած առ վայրկեան։

համար։ Իւհրիկ հրամանատարը յետ շնորհակալ ըլլալու քաղքին պաշտօնէից և քաղաքացւոց իրենց անվեհեր արութեան և օգնականութեան համար, հրաման խնդրեց և ստացաւ Տուր մեկնելու, հոն հաստատեալ Առժամանակեայ վարչութեան եղածին հաշիւ տալու համար և ուր ընդունուեցաւ մեծ պատիւներով։ Վարչութիւնը Պատուոյ Լէգէոնի մեծ խաչը տուաւ իրեն և գաւառաց մէջ ստորագրութիւնք եղան պատուոյ սուր մը իրեն ընծայելու համար։ Վարչութիւնը իրեն բնակութիւն առաջարկեց Պո դղեակը, բայց զօրավարը չ'ընդունեցաւ և նախամեծար ընտրեց երթալ ի Զուեցցերի, հոն մօտանց օգնելու գերի գնացող իրեն մարտակից զինուորներուն[1]։

Գերմանացիք Սեպտեմբեր 29ին մտան ի Ստրազբուրկ այսպէս ձեռք բերելով իրենց պահանջած քաղաքներէն մին և զոր գերմանական հող կը համարէին։ Ընդհանուր տեղապահ — զօրավարն Օլլէք կառավարիչ անուանուեցաւ Ստրազբուրկի և հազարապետն Մարդէնս հրամանատար բերդին։ Բանակները ազատ ըլլալով պաշարմանէ, սկսան յառաջել դէպ ի Արեւմուտք։ Զօրավարն Վէրթէր հրաման ստացաւ Տրուայի և Շատիյոնի ճամբով մօտենալ Սէնի. զօրավարն Շմէլինկ բաղէնցի գունդերով Հոկտեմբեր 3ին կը մտնէր ի Միւլհաւզ. զօրավարն Դէկէնֆէլտ բաղխելով զգաղղիացիս պատերազմով մը ի Բիւրկոնս որ տասը ժամ տեւեց, դիւրացուց Վէրթէրի չուն դէպ ի Դիժոն, ուր գաղղիացի Գամբրիէլ զօրավարը նոր բանակ մը կը ջանար կազմել։ Յետինս Վէրթէրի հետ զարնուիլը անկարելի համարելով, քաշուեցաւ դէպ ի հարաւ՝ Բրզանսոն. այնպէս որ Հոկտեմբեր 10ին հազիւ քանի մը բերդորայք կը մնային Գաղղիացւոց ձեռքը երկրին արեւելեան կողմը։ Փոքր և աննշան գուպարածներ եղան նաեւ արեւ-

---

1. Եղան և լրագիրք որ զինքը «մատնիչ» կոչեցին։ — Ի յիշատակ այս դիւցազնական ընդդիմութեան, ամեն տարի Յուլիս 14ի գաղղիական Ազգային տօնին օրը, Ստրազբուրկի արձանը անհամար ծաղկեայ պսակներով և փունջերով կը զարդարուի։

մտակողմը ուր քանի մը գերմանացի գունդեր յառաջեր էին։ Գերմանացիք ուր որ կը տիրէին ընդդիմութեամբ, ապա այն տեղերէն տուգանք կ'առնուին։

Գամբէտտա ի Տուր. Նոր բանակ. Գարիբալդի ի Գաղղիա։

9. — Գաւառներուն մէջ թշնամւոյն յառաջելու ժամանակ, Պարիսու վարչութիւնը տեսած էր որ Տուրի մէջ հաստատած վարչական նուիրակութիւնը չէր գործեր պէտք եղած համաձայնութեամբ։ Ներովակալն Ֆուրիշոն տժգոհ իր ընկերներէն հրաժարականը տուեր էր և Կրէմիէօ և Դլէ–Բիզուան ծերացեալ մարդիկք էին, ոչ այս պարագաներուն յարմար։ Իրաց այսպէս խեղճ վիճակին մէջ վարչութիւնը առաջարկեց Գամբէտտայի, որ Ներքին գործոց պաշտօնեայ էր, երթալ ի Տուր և վրան առնուլ նաեւ Պատերազմի պաշտօնէութիւնը, կեանք տալ Տուրի նուիրակութեան, ոգեւորել գաւառները և ժողովուրդը խմբովին զինել և ոտք հանել թշնամւոյն դէմ։ Գամբէտտայէ ոչ ոք աւելի յարմար էր այսպիսի գործոյ մը. երիտասարդ, քաջ և գրաւիչ խօսող, եռանդուն հայրենասէր, սիրող իշխանութեան և դիկտատորութեան. իր մէկ աչքին պակասութիւնն անգամ կարծես մասնաւոր ոյժ մը կու տար իր խօսքերուն։ Արդէն իրեն համար դժուարին էր Պարիսու մէջ համաձայնիլ վարչութեան մը, որուն ազդեցիկ անձինք էին զօրավարն Տրոշիւ, ոչ յանդուգն բրիդանիացի զօրավար մը, և Ժիւլ Ֆաւրը, Պարիսու դատարանաց մէջ հինցած, ծեր և ճկուն փաստաբան մը։ Գամբէտտա սիրով յանձն առաւ նոր պաշտօնը, և որովհետեւ Պարիս պաշարուած էր, մեկնեցաւ օդապարիկով և անցաւ թշնամւոյն գծերուն վրայէն որոնք ի զուր փորձեցին գնդակի հարուածներ հասցնել անոր։ Օդապարիկը իջաւ Մոնտիտիէ և Գամբէտտա Ամիէնէն երկաթուղւով հասաւ ի Տուր Հոկտեմբեր 9ին։ Անմիջապէս հրատարակեց Պարիսու վարչութեան հրովարտակը որով կը քաջալերէր զժողովուրդը ամենն ալ զէնք առնլու. «Եթէ միայնակ մնանք, կըսէր. զիտենք փրկել մեր պատիւը, բայց ձեզմով կ'երդնունք փրկել զԳաղղիա»։ Մեծ բազմութիւն մը դիմեր էր ի Տուր լսելու տրիբունէն մայ-

բաքաղաքին վիճակը։ Գամբէտտա ամենուն ալ խօսեցաւ որ կորսնցնելու ժամանակ չկայ, պէտք է թշնամին վանելու աշխատիլ։ Պատերազմի պաշտօնէութեան մատակարարութիւնը յանձնեց Շարլ դը Ֆրէսինէի և ինքը առաւ միայն հայրենեաց պաշտպանութեան խնդիրը լիովին իշխանութեամբ, զոր իբր դիկտատոր վարեց հինգ ամիս, և ինքը եղաւ գաւառաց ընդդիմութեան ոգին։ Գամբէտտայի յանձնուած էր ջանալ 500,000 զօրաց բանակ մը ձեւացնել. և այդ մեծ բանակը կազմելու համար դիմեց պաշտօնէ քաշուած սպայից, Պետութեան երկրաչափներու, երկաթուղեաց պաշտօնեաներու, տեղական վարիչներու և ամեն քաղաքացւոյ։ Եւ որովհետեւ պատերազմին ձախողութեանց պատճառներէն մէկն ալ ռազմագիտական և աշխարհագրութեան տգիտութիւնը եղեր էր, անոր համար դը Ֆրէսինէ գործարան մը հաստատեց որ երեք ամսուան մէջ 15,000էն աւելի աշխարհատախտակը արտադրեց, որոնք զանազան աստիճանաց վերածուելով, տրուեցան ամենուն ձեռքը։ Հարկ էր հոգալ նաեւ զէնք, պաշար և ձի։ Գամբէտտա անգղիական Մորկան դրամատնէն 250 միլիոնի փոխառութիւն մը ըրաւ 5%։ Այդ դրամով կրցաւ հոգալ կարեւորքը։ Հոկտեմբեր 13ի հրովարտակով մը իմացուց որ պաշտամանց և աստիճանաց յառաջադիմութիւնք կարգաւ պիտի չտրուէին, այլ զարտուղի ծառայութեանց համար։ Ուրիշ հրովարտակով մ'ալ կը ծանուցանէր որ դատի պիտի կոչէր ամեն հրամանատար որ չնախատեսէ թշնամւոյն շարժումը։ Զէնքի գոչեց մինչեւ 48 տարուան ամեն քաղաքացի և զանոնք հրահանգելէ վերջը բանակ ղրկեց։ Այսպէս քիչ ատենուան մէջ Գաղղիա չորս մեծ բանակ ունեցաւ, եթէ կարելի է այդ օրինակ հաւաքուողները օրինաւոր բանակ կոչել, յորոց շատերը բռնի և պատիժներով զինուոր եղեր էին։ Հիւսիսային բանակը յանձնուեցաւ Բուրբաքի զօրավարին, իր զօրատեղին էր Լիլ. Արեւմտեան բանակի հրամանատար էր զօրավարն Ֆիրբէք՝ ի Ման. Կեդրոնի բանակը յանձնուեցաւ Պոլհէ զօրավարին՝ ի Բուրժ. Արեւելեան բանակը Բրզան-

սոն էր Կամբրիէլ զօրավարին հրամանատարութեան ներքեւ։ Հոկտեմբեր 22ին Պարիսէն օդապարիկով ի Տուր հասաւ դը Քէրադրի, որուն յանձնուեցաւ զօրաբաժին մը և ղրկուեցաւ ի Բրըտայն։ Իսկ Լուառի բանակին, հրամանատար էր դ'Օրէլ դը Պալատին, 35,000 անձանցմէ կազմեալ, ամենէն կարգապահ բանակը, վասն զի հրամանատարը անմիջապէս հրացանի բռնել կուտար ո՛րեւէ դասալիք մը։ Այս բանակը երկար ժամանակ պատուար մը եղաւ Պրուսիացւոց յառաջելուն։

Կար նաեւ օտարազգի բանակ մը որ ոչ փոքր ծառայութիւններ ըրաւ Գաղղիոյ։ Գարիբալդի զօրավարը ոգեւորուած Գաղղիոյ Հասարակապետութիւն հրատարակուելուն, անմիջապէս գրեց առ նոր վարչութիւնը նուիրելով իւր և իւր ընկերաց ծառայութիւնը և կեանքը։ Գաղղիա անվստահ Իտալացւոց վրայ, շատ դժուարութեամբք ընդունեցաւ առաջարկը, և Գարիբալդի Կարէրայէն Մարսիլիա անցաւ, ուր մեծ ընդունելութիւն գտաւ և անկէ հասաւ ի Տուր, ժողովրդեան եռանդնալից կեցցէներուն մէջէն։ Գամբէտտա զինքը ղրկեց Վոժի (Արեւելեան) բանակը. ուր երբ հասաւ, արդէն զօրավարն Կամբրիէլ մեծ պարտութիւն մը կրեր էր. որով անցաւ ի Բրզանսոն յաղթուած բանակին մնացորդքը հաւաքելու և կազմակերպելու համար։ Փութով Բրզանսոնի քով 10,000ի բանակ մը ձեւացուց, որուն հրամանատարքը եղան՝ իր որդին Մէնոտտի Գարիբալդի, Կանցիո, Գատտոնս, Վիվալտի և այլք։

Տուրի Նուիրակութիւնն յետ այս նոր ոյժերը կազմելու և կարգի դնելու, սկսաւ Պարիս ազատելու ծրագիր մտածել։ Երկու բանակք մէկը Լուառէն միւսը Սոմէն պիտի չուէին Պարիսու վրայ, Տրօշիւ ալ ներսէն յարձակելով, այսպէս պիտի հեռացնէին զթշնամին։ Այս նպատակաւ առ ի փորձ Պարիսէն զանազան ելքեր փորձուեցան և եղան կռիւներ Յիսսի, Վոմրուժ, Կլամար։ Մոն Վալէրիէնի վրայ հաստատուած Թնդանօթք նեցուկ կ'ըլլային այս փորձերուն։ Յարձակողք Լը Բուրժէ գիւղին մէջ, որ էր Պարիսու հիւսի-

Հոկտ. 13, 21 28, 31.

սային — արեւելեան կողմը կրցան մնալ երկու օր, ուսկից ապա Գերմանացիք կրկին զիրենք վանեցին 100 զինուոր կորսնցնելով և երկու հազարապետք։ Գաղղիական վարչութիւնը ունէր ուրիշ ծրագիր մ'ալ. այն էր մղել Լուառի բանակը արեւելք դէպ ի Մէց, ազատել Մէցի բանակը և միաբան քալել Պարիսու վրայ։ Բայց ասոնք հաշիւներ էին որոց ապահովապէս նոր արգելքներ պիտի հանէր գերմանական բանակը։

Այս միջոցիս Թիէր կը դառնար իր դեսպանութենէն և կ'իմացնէր Մէցի եւս անձնատուր ըլլալը։ Թիէր յանձն առած էր գնալ խօսիլ արքունիքներու հետ ի նպաստ իր հայրենեաց։ Սեպտեմբեր 11ին մեկներ էր ի Տուր ուսկից անցեր էր ի Լոնդրա, ապա հոնկէ երկու օր վերջը մեկնեցաւ ի Վիեննա և Պէտէրսբուրգ նաեւ ի Ֆլորանս, որ էր այն ատեն Իտալիոյ մայրաքաղաքը։ Ամեն կողմ պատիւներ գտաւ և համակրութիւն մանաւանդ իր անձնականին, բայց բնաւ տէրութիւն մը չուզեց միջամտել։ Թիէր Հոկտեմբեր 21ին Տուր դարձաւ, և այն ատեն իրեն յանձնուեցաւ ուղղակի բանակցիլ Բիսմարքի հետ. և Հոկտեմբեր 26ին ապահով անցագրով մը, հայրենեացը աւերեալ դաշտերէն և յաղթական թշնամւոյն բանակներէն անցնելով հասաւ ի Վէրսայլ։

Մէցի անձնատուր ըլլալը։

10. — Գամբէտտա նոր անվարժ բանակներ մտածելու և կազմելու ժամանակ, Գաղղիոյ մեծագոյն և կարեւորագոյն բանակը անձնատուր կ'ըլլար Մէցի մէջ։ Բազէն մարաջախտը՝ կայսրութեան հին զօրավար և մտերիմ Նապոլէոն Գի, յայտնի է չէր կրնար համակրութիւն մը ունենալ նոր Հասարակապետութեան և Տուրի վարիչներուն։ Ունէր իր հրամանաց ներքեւ 160,000է կազմեալ բանակ մը և այդ բանակը միշտ անգործ մնաց։ Քաղքին մէջ բանակ և քաղաքիք մէկտեղ կային 260,000 հոգի և պաշարման երկարելովը, ապրուստը կը պակսէր. կամ մանաւանդ չկար ռազմագիտական հսկողութիւն մը եղած պաշարը մատակարարելու։ Հոկտեմբեր 2ի և 7ի գիշերները Բազէն ուզեց փորձել ճամբայ մը բանալ,

անցնելու բանակով ի Լիւքսէմբուրկ, բայց թշնամին արթուն էր. և նորէն մտաւ ի Մէց։ Մարաջախտը կը փախչէր կռուելու առիթներէ։ Ուզեր էր բանակցիլ նաեւ ուղղակի Վէրսայլի հետ ուր էր գերմանացի հրամանատարութիւնը, պահանջած էր որ իր բանակը զինուք և պաշարօք ելլէ Մէցէն և խօսք տայ երեք ամիս զէնք չ'առնլու. Մէց ազատ ըլլայ իւր պաշտպանութիւնը շարունակելու։ Բայց Գերմանացիք մերժեր էին ո՛րեւէ առաջարկ։ Եւ ահա յանկարծ Բազէն յանձնեց ծերունի Շանկառնիէ զօրավարին ստորագրել անձնատրութիւն մը, որով երեք մարաջախտք՝ Բազէն, Կանրոբէր, Լրբէօֆ, 6000 սպայք, 160,000 զինուորք, զինուք, թնդանօթներով և պատերազմական պաշարներով անձնատուր եղան և Շանկառնիէ արտասուելով այս լուրը ծանոյց բանակին։ Երկրորդ օրը Մէցի և ժուի մէջ եղած տափարակին վրայ գաղղիացի զինուորք տխրութեամբ կը թափէին բոլոր իրենց զէնքերը, զորս անգործ պահեր էին։ Հոկտ. 12։

Գուլիէլմոս թագաւորը այս մեծ դէպքը տօնելու համար զԹագաժառանգ իշխանը և Ֆրէտէրիք Կարլ իշխանը ֆէլտմարաջախտ անուանեց և Մոլտքէ զօրավարին կոմսութեան տիտղոսը տուաւ։

Մէցի ժողովուրդը անձնատրութեան լրոյն վրայ ի սկզբան ապշեցաւ, բայց ապա մեծապէս զայրացաւ։ Երբ Պրուսիացիք երեկոյեան դէմ քաղաք մտան երաժշտական քայլերգով, բնակիչք գոցեցին տուներնուն պատուհանները և կրպակներուն լոյսերը մարեցին։ Բազէն մարաջախտը շատ նախատինքներ լսեց երեսն ի վեր և Պրուսիացւոց Մէց մտնելէն քիչ առաջ մեկնեցաւ գոց կառքով դէպ ի Վիլհէլմշոյէ, ամբոխին «մատնիչ» աղաղակներուն մէջէն։

Յայտնի է որ Պատմութիւնը չէ կարող ապահով վճիռ մը տալ Բազէնի անձնատրութեան վրայ։ Բազէնի միակ և մեծագոյն վրիպակն եղաւ, թողուլն զինուորի դերը, որուն չներուիր քաղաքագիտօրէն գործել ապա թէ ոչ կը տկարանայ Ազգի մը ուժը, հնազանդելով

իր խորհրդոց և զգացմանց, կատարեր էր այս անձնատրութիւնը՝ ժամանակէն առաջ։ Գերմանացի պատմագիրք եւս կ'ընդունին որ դեռ ապահով երկու շաբաթ մը կրնար դիմանալ։ Իսկ Գաղղիացիք բոլոր պատերազմին աղէտքը կու տան Բազէնի, ինչպէս սովորութիւն է այս օրինակ դժբաղդութեանց մէջ[1]։

---

1. Բազէն մարաշխտը յետ ուրը ամիս թափառելու ստորութեան մէջ, ապա մտաւ ի Գաղղիա և Պարիս՝ և կանչուեցաւ Ազգային Պաշտպանութեան վարչութեան նկատմամբ հաստատուած Քննութեան Ատեանին առջեւ։ Մարաշխտին ի սկզբան իր աստիճանին յարգանք և պատիւք տրուեցան, մինչեւ որ հասարակաց կարծիքէն և Մէջէն եկած բազմաթիւ ամբաստանութիւններ հասան։ Քաղաքական Ատեանը յետ մանր քննութեանց, պարտաւոր դատեց զինքը և յանձնեց Զինուորական Ատենի, որ հաստատուած էր ի Վէրսայլ՝ Պրոի–Տրիանոնի մէջ։ Ամբողջ հարցաքննութեանց ժամանակ մարաշխտը արգելարան մը փակուեցաւ։ Հակաճառութիւնք սկսան Հոկտեմբեր 6ին։ Զինուորական Ատենին կը նախագահէր Դուքսն դ'Օմալ և անդամքն էին զօրավարքն Լամոտ–Խուժ, Բարոն դը Շասու–Լատուր և չորս հազարապետք։ Բազէն գրեց եւս իր արդարացումը և չ'ուրացաւ որ զինուորական պարտուցմէ վեր դրեր էր քաղաքական պատճառք։ Մինչդամայն «ուզեր էր ամբողջովին պահել իր բանակը, որ դեռ կրնար ծառայել Գաղղիոյ». և համարեր էր որ յեղափոխական վարչութեան մը առջեւ իր խղճմտանքին պէտք էր հարցնել։ Եղաւ վայրկեան մը որ ինքզինքը արդարացնելու համար ըսաւ որ այսպէս գործեր էր, որովհետեւ «Ձկար ոչ Սահմանադրութիւն, ոչ վարչութիւն և բնաւ ոչինչ»։ — Անմիջապէս վրայ բերաւ Դուքսն դ'Օմալ։ — «Եւ սակայն կար Գաղղիա»։ Բոլոր Գաղղիա յուզեալ կը հետեւէր դատին։ Մարաշխտը համաձայնութեամբ քուէից դատապարտուեցաւ մահուան և աստիճանընկէցութեան, որովհետեւ պատերազմի ժամանակ չէր գործադրած պարտքը և անձնատուր եղեր էր, դեռ ամեն միջոց չպառած։

1873 10 Դեկտ.

Վիրէն անմիջապէս վերջը դատաւորք դիմումն ստորագրեցին որ մահուան պատիժը փոխուի. և մարաշխտն Մակ Մահոն՝ Նախագահ այն ատեն Հասարակապետութեան, զայն փոխեց տասը տարուան բերդարգելութեան և ազատ ըրաւ աստիճանընկէցութեան արարողութենէն։ Բազէն Սէնտ Մարգերիտ կղզին տարուեցաւ, ուսկից քիչ ամիսէն փախաւ, անշուշտ զիտութեամբ իշխանութեանց։ Բազէն անցաւ Իտալիա անկէ ի Զուիցերի, ուր Արէնբէրկի դղեկին մէջ մեծ պատուով ընդունեցան զինքը Եւժէնի կայսրուհին և կայսրորդին. յետոյ անցաւ Յանգլիա. անկէ ի Սպանիա, ուր Դոն Կարլոսի առաջարկեց իր ծառայութիւնը։ Մեռաւ Մատրիտի մէջ յամին 1888 Սեպտեմբեր 23ի։

1873 27 Դեկտ.

1874 10 Օգոստ.

ԳԼՈՒԽ Թ.

ՊԱՐԻՍՈՒ ՊԱՇԱՐՈՒՄԸ

1. Պարիս պաշարման ժամանակ. — 2. Հոկտեմբեր 31. — 3. Ժողովրդական քուէարկութիւն. — Հասարակութեան յառաջաբաններ. — 4. Գաղղիական զինուց յաջողութիւնք Օռլէանի դիմաց. — Պատերազմունք ի Կուլմիէ, Շամպինյի. — 5. Գաղղիոյ Արեւմտեան, Հիւսիսային և Արեւելեան բանակք. — Գարիբալդեանց քաջութիւնները. — 6. Լուարի բանակին յաղթութիւնը. — Պրուսիացիք կրկին կ'առնուն զՕռլէան. — 7. Բլուայի առումը. — Տուրի Նուիրակութեան Բորդո փոխադրութիւնը. — 8. Պարիսու վիճակը. — Ցուրտը և անօթութիւն։

Պարիս պաշարման ժամանակ։

1. — Երբ Գաղղիոյ արեւելեան կողմը մեծամեծ պատահարք տեղի կ'ունենային, երբ Մէց ամենէն ամուր բերդաքաղաքը Պրուսիացւոց ձեռքը կ'իյնար և Բազէնի բանակը, վերջին մեծ յոյսը, կ'ոչնչանար, արդէն Պարիս բոլորովին պաշարուած փակուած էր և կտրուած աշխարհի գրեթէ ամեն հաղորդակցութենէ. հազիւ կրնալով իր ներքին լուրերէն մաս մը և դեռ սնուցած յոյսերը, օդապարիկով և ուղեւոր աղաւնիներով իմացնել գաւառաց մէջ եղած Նուիրակութեան։ Փոխադարձաբար ինքն ալ այդ միջոցներով երբեմն կրցաւ լուրեր առնուլ, սակայն ստէպ թղթաբեր աղաւնիք թշնամւոյն ձեռքն ինկնալով, ձախորդ լուրերը աւելցուելով, ապա ազատ կը ձգուէին։ Պարիս դեռ ամբողջովին չպաշարուած, քովի քաղաքաւաններէն անթիւ բազմութիւն մը հոն ապաւիներ էր, որով բնակչաց թիւը երկու միլիոնը անցեր էր։ Գերմանացիք կը համարէին որ այդ լայնածա-

ւալ և զուարճութեան վարժած քաղաքը, չկարենալով համբերել պաշարման մը նեղութիւններու, անմիջապէս անձնատուր պիտի ըլլար։ Եւ սակայն հակառակը պատահեցաւ։ Պարիսու ժողովրդեան ազնուականէն մինչեւ գռեհիկը, մեծէն փոքը, յանկարծ անբացատրելի եռանդ մը զգաց պաշտպանելու իր Պարիսը և չթողուլ որ թշնամին ոտք դնէ այդ իրեն պանծալի մայրաքաղաքին մէջ։ Որով և պաշարման մը ամեն նեղութիւնք և դառնութիւնք անտրտունջ տարուեցան։ Արդէն ուտեստի լաւ միսերը շատոնց լմնցեր էին. ձիուն միսն ալ սկսաւ պակսիլ. կաթը, հաւկիթը կարագը և ձէթը անգիւտ եղան. աղը լմննալու վրայ էր. մահերը նախ սկսան փոքը տղայոց մէջ որոց չկար օրինաւոր սնունդ։ Թատրոններու և զուարճութեանց տեղ նոր զբաղումն եղաւ հայրենասիրաց, վազելու զինուց և հրանօթից արհեստանոցքը, որպէս զի պարսպաց վրայ եղող զինուորաց զէնք և մթերք հասցնեն. և պրուսիացի բանակը, առաջին օրերէն ըմբռնեց որ Գաղղիոյ մայրաքաղաքը փութով յուսահատելու տրամադրութեան մէջ չէ. միանգամայն գիտէր որ չէր կարելի յարձակմամբ առնուլ փութով, քանի որ կային Լուի Ֆիլիպի և Նապոլէոն Գի ժամանակ շինուած կրկին պարիսպները, որոնք միշտ արգելք մ'էին։ Սահմանուեցաւ այն ատեն խիստ պաշարում մը, որպէս զի քաղաքը սովէն բռնադատեալ անձնատուր ըլլայ։ Շինուեցան բերդեր, ամբարտակներ, թումբեր, ստորերկրեայ յարկեր, հաստատուեցան պատնէշներ, հեռագիրներ և դիտարաններ։ Գաղղիացիք Սեպտեմբեր 30ի փորձեցին յարձակմամբ մը դէպ ի Հէ և Շըվրլի աւրել այդ պատսպարութեանց մաս մը, բայց յետ մոլեգին կուոյ մը, որուն մէջ կորսնցուցին նաեւ Կիլհէմ զօրավարը. նահանջեցին նորէն դէպ ի քաղաքը և չկրցան իսկ հետերնին բերել Պրուսիացւոցմէ առած մէկ թնդանօթնին։ Եւ սակայն Պարիսու ժողովուրդը միշտ լաւատես և ինքնիրմով յուսալից, այդ նահանջը իբր յաջողութիւն մը տօնեց և պատրաստուեցաւ նոր յարձակման մը, մանաւանդ պաշար հոգալու համար։

Նոյն երեկոյ լուր տարածուելով որ Տուլ և Ստրազբուրկ անձնատուր եղեր են, ամբոխին մէջ տրտունջը և բողոքը սկսաւ ընդդէմ իշխանութեանց, իբրեւ անկարողք կառավարելու. և քիչ քիչ սկսան երեւան գալ նոր հրամայել ուզողներ։ Հոկտեմբեր 5ին Դիւստավ Ֆլուրէնս, ինքնիրեն «Հրամանատար Բէլվիլի» տիտղոսը առնելով, զինեալ խումբի մը գլուխ անցած, քաղաքավարչութեան պալատը եկաւ և պահանջեց որ անմիջապէս զէնք տրուի ազգային պահապանաց, քաղաքավարչական նոր ընտրութիւնք ըլլան և գունդեր կազմուին թշնամւոյն վրայ յարձակելու համար։ Զօրավարն Տրոշիւ և վարչութեան անձինք համոզեցին զՖլուրէնս հանդարտ իր տեղը քաշուելու, ինչպէս ըրաւ։ Բայց նոյն օրուընէ ծնաւ այն տխուր նախազգացումը որ օր մը ամբոխը զինուք պիտի ուզէր ձեռք առնուլ վարչութիւնը։ Տրոշիւ հրովարտակով մը պախարակեց Հոկտեմբեր 5ի յուզումը թշնամւոյն առջեւ. և ծանոյց որ ընտրութիւնք կարելի չէին, քանի որ հայրենիք պաշարման վիճակի մէջ էր։

2. — Հոկտեմբեր 5ի պատահարաց ժամանակ տակաւին չէր գիտէր Պարիսու ժողովուրդը Մէցի անձնատուր ըլլալը։ 27ին Կոմքա[1] լրագիրը որուն խմբագիրներէն մին էր Ֆէլիքս Պիա, հրատարակեց որ զօրավարն Բազէն իրեն համհարզ սպայից մին Պրուսիոյ թագաժառանգին բանակը ղրկեր էր և Նապոլէոն Դ.ի անուամբ առաջարկած էր Մէցի անձնատրութիւնը և խաղաղութեան պայմաններ։ Կրնայ գուշակուիլ այս լրոյն ընթերցմամբ ժողովրդեան յուզումը և բարկութիւնը որ դիմեց բիւրաւոր՝ քաղաքավարչութեան պալատը։ Վարչութիւնը իմացուց որ այդ լուրը սուտ էր և պաշտօնական տպած ազդ մը կպուց պատերուն վրայ հաստատելով ստութիւնը և հանդարտեցնելով զամբոխը։ Սակայն 31ին ուրիշ՝ ազդով մը կ՚իմացնէր որ «Մէց

Հոկտեմբեր 31ը ի Պարիս։

1. Պատերազմ։

անձնատուր եղեր էր չկարենալով դիմանալ պաշարուց նուազելուն. և մարաջախտն Բազէն իր քաջ բանակով պատերազմի գերի էր»։ Այս ազդին դառնութիւնը մեղմացնելու համար կ'աւելցուէր որ թիւէր յաջողեր էր մեծ Պետութեանց միջնորդութիւնը ստանալ զինադադարման մը համար, որպէսզի Ազգային Սահմանադիր ժողովոյ մը ընտրութիւնք ըլլան։

Հոկտեմբեր 28ին գիշերը գօրավարն Բէլլըմար որ հրամանատար էր Սէն Դրնիի, յառաջեց դէպ ի Բուրժէ գիւղը, զոր բռնած էին Պրուսիացիք և զանոնք անկէ վանեց, տալով նաեւ փնաներ։ Այս լուրը ելեկտրացուց Պարիսու ժողովուրդը։ Ամբողջ 29ին օրը Բուրժէ մնաց Գաղղիացւոց ձեռքը. բայց 30ին Պրուսիացիք 20,000 զինուորօք դարձան նորէն և գրաւեցին յետ մոլեգին կռուոյ մը, որուն մէջ մեռաւ նաեւ գաղղիացի Լրնէ Բարոշ հազարապետը։ Պարիսու վարչութիւնը յանցանքը Բէլլըմար զօրավարին վրայ ձգեց որ յարձակեր էր այնպիսի անկարեւոր դիրքի մը տիրելու համար։ Սակայն ժողովուրդը տարբեր դատեց. տրտնջեց որ Բէլլըմարի օգնութիւն չէր ղրկուած և թէ վարչութիւնը չունէր հոգացող և արի ոգի։ 30ին գիշերը Պարիս շատ յուզուած էր։ Ազդէն վեց շաբաթուան պաշարման կեանքը սկսեր էր իր ազդեցութիւնը, վրայ եկաւ Մէցի անձնատրութեան լուրը, զոր ի սկզբան ուրացեր էր վարչութիւնը. ա՛լ ով կրնար վստահիլ անոր խօսքին վրայ. Բուրժէի յարձակման վանուիլն վերջին կաթիլն եղաւ ամբոխին բարկութեան։

Հոկտեմբեր 31ին առաւօտը անթիւ յուզուած բազմութիւն մը դիմեց Օթէլ դը Վիլ և պահանջեց որ անմիջապէս կատարուին քաղաքավարչական ընտրութիւնք։ Վարչութիւնը ընդունեցաւ այս առաջարկը։ Բայց քիչ վերջը ուրիշ զինեալ ամբոխ մը, որուն գլուխ կեցած էին Ֆլուրէնս, Դրլէքլիւզ, Բլանքի, Ռաուլ Ռիգօ և ապագայ Հասարակութեան ուրիշ գլուխներ, ողողեցին Օտէլ դը Վիլը և ուզեցին իրենք վարչութիւն մը հաստատելու։ Նախ պահանջեցին Ազգային Պաշտպանութեան

վարչութենէն որ անմիջապէս հրաժարի. երբ նա մերժեց, այն ատեն զայն կազմողքը փակեցին պալատան մէջ. ուսկից մի առ մի կրցան փախչիլ Էրնէ Պիքար և Ժիւլ Ֆէրրի և Օտէլ դը Վիլի Վրայ դրկեցին հաւատարիմ զինուորաց գունդեր, որոնք առանց արիւնահեղութեան ցրուեցին ամբոխը և գլխաւորներէն զոմանս կալանաւորեցին։

Տակաւին շփոթութիւնը չհանդարտած, Պարիսու քաղաքագլուխը Լտիէն Ադրաթ, իր ընկերներէն ոմանց հետ խորհրդակցելով, քաղաքական պատերազմի մը վախէն, անմիջապէս պատերուն վրայ ազդ մը կպցընել տուեր էր որ՝ Երկրորդ օրը պիտի կատարուէին քաղաքավարչական ընտրութիւնք։ Բիչ վերջը վարչութեան անդամք ազատելով և խռովարարաց գլխաւորք բռնուելով, երկրորդ օրը Նոյեմբեր 1, վարչութիւնը պատերուն վրայ ուրիշ ազդ մը կպցընել տուաւ, որով յետս կը կոչէր առջի օրուան գրածը, և կը հրաւիրէր Պարիսու ժողովուրդը Այո՛, կամ Ոչ քուէով իմացնել Նոյեմբեր 3ին իր կամքը թէ կ'ուզէ՞ որ անմիջապէս կատարուին թէ քաղաքավարչական և թէ վարչական ընտրութիւնք։ Նոյեմբեր 2ին հրովարտակով մը կ'արգելուր թէ ազգային պահապանաց և թէ անոնց հրամանատարներուն զէնք կրելու իրաւունքը իրենց սովորական ծառայութեանց ժամանակներէն դուրս. և այն գնդապետները որոնք մասնակցած էին 31ին յեղափոխական յուզման, պաշտօնանկ կ'ընէր։

3. — Նոյեմբեր 3ին ուրեմն, բոլոր Պարիսու ժողովուրդը կանչուեցաւ, քուէ տալու թէ «արդեօք կ'ուզէ՞ պահել Ազգային Պաշտպանութեան վարչութիւնը իր իշխանութեան մէջ»։ Քուէները հաւաքուեցան և քննուեցան. 557, 966 անձինք Այո՛ ըսեր էին և 62, 638 Ոչ։ Պարիսու լուրջ մասը մեծագոյն չարիքներու երկիւղէն, նախամեծար համարեր էր պահելու եղած վարչութիւնը, որուն մէջ չկային թէպէտ զինուորական և թէ կառավարական հանճարներ, բայց և չէին գոնեայ Բլանքիի, Ռաուլ Ռիգոյի նմաններ։ Թէպէտ այդ

ժողովրդական քուէարկութիւն։

լուրջ և խոհական մասն ալ փութով պիտի քաշուէր բոլորովին և քիչ քիչ իշխանութեան մէջ պիտի մտնէին 31ի խռովարարներէն ալ, որոնք պիտի պատրաստէին Հասարակութիւնը։ Իրաց այս վիճակին մէջ զօրավարն Տամիզիէ, Ընդհանուր հրամանատար Ազգային Պահապանաց, տուաւ իր հրաժարականը։ Վարչութիւնը անոր տեղ անուանեց զկլէման Թոմա հասարակապետական զօրավարը, որ նոյն պաշտօնը կատարած էր նաեւ 1848ի։

Նոյեմբեր 5ին, վարչութիւնը յանկարծ Ազդով մը կ'իմացնէր որ յուսացեալ զինադադարումը պարապի ելեր էր, թէպէտ և նոյն իսկ մեծ տէրութիւնք ջանացեր էին և թիէր ազատ անցագրով Պարիս մտեր էր զայս իմացնելու։ Ազգային Պաշտպանութեան վարչութիւնը կ'իմացնէր նաեւ պատճառքը. որովհետեւ Պրուսիա յանձն չէր առած պաշար մտցնելու ի Պարիս և կ'ուզէր վերապահել Ալզաս–Լորէնի խնդիրը. որով կը Ֆնար Գաղղիոյ պատերազմը շարունակել։

Զօրավարն Տրոշիւ մայրաքաղաքին մէջ զինուորական նոր կարգադրութիւնք ըրաւ, թէ Ազգային Պահապանաց և թէ զօրաց նկատմամբ։ Երեք նոր բանակներ ձեւացան, որոց մէջ մտան նաեւ նաւաստիք և հեծեալք։ Բայց այս ամենը աւելի զբաղեցնելու նպատակ մը ունէր քան պատերազմելու. զի երթալով կը պակսէր պաշարին հետ մէկտեղ նաեւ կռուելու և յաղթելու վստահութիւնը։

Գաղղիական զինուց յաղողութիւնք Օուլէանի դիմաց. — Պատերազմունք ի Կուլմիէ ի Շամպինյի։

4. — Զինադադարման մը բանակցութեանց ժամանակ արդէն Տուրի վարչութիւնը կ'երագէր զինուորական հանդերձանքը դէպ ի Պարիս չուելու, Ֆրէտերիք Կարլի բանակը Մէցէն չհասած. մանաւանդ որ Ֆոն դէր Թան Օուլէան մտնելով ոյժերը ցրուեր էին։ Նոյեմբեր 7ին դ'Օրէլ դը Պալատին զօրավարը չուեց Օուլէանի վրայ, ուր սկսաւ դիմել նաեւ զօրավարն Մարտէն դէ Պայիէռ՝ Վիէրզոնի կողմէն։ Ֆոն դէր Թան վախնալով որ Օուլէանի մէջ պաշարուի, թողուց քաղաքը, իր վիրաւորները քաղաքավարչութեան վեհանձնութեան յանձնելով։ Բայց Նոյեմ-

Նոյ. 8.

բեր 9ին գտնուեցաւ Գաղղիացւոց առջեւ ի Կուլմիէ։ Գաղղիացիք էին մօտ 70,000 իսկ Գերմանացիք 20,000։ Պատերազմը սկսաւ առաւօտեան ժամը 7ին և տեւեց անընդհատ մոլեգնութեամբ մինչեւ երեկոյեան ժամը 5ը, յորում Գերմանացիք սկսան ետ քաշուիլ և գաղղիացի զօրավարը բռնեց զԳրան Լիւզ՝ Թշնամւոյն ճամբարը։ Գաղղիացիք պատերազմէն դուրս հանեցին ընդ մեռեալ և ընդ վիրաւոր 1500 անձինք և Գերմանացիք 1200, յորս 54 սպայք։ Զօրավարն Մարտէն դէ Պայիէռ չէր հասած կռուոյն, երկրորդ օրը հալածելով թշնամին, ձեռք բերաւ երկու թնդանօթք և շատ մթերք ու պաշար։ Նոյեմբեր 10ին առաւօտը զօրավարն Գատլինօ իր բոլոր կամաւորներով մտաւ Օռլէան։

Ֆոն դէր Թանի այս նահանջը մահացուցման կէտ մը եղաւ Պրուսիացւոց բանակին համար, իսկ Գաղղիացւոց եռանդը և յոյսը յանչափս բարձրացուց։ Կը համարէին որ այս յաղթութենէն վերջը ա՛լ ուրիշ բան չէր մնար, բայց քալել Պարիսու վրայ և զայն ազատել ապահովապէս։ Օռլէանի հռչակաւոր և կրակոտ եպիսկոպոսը՝ Դերապայծառ Դիւպանլու, փառաւորեց ներբողեանով մը դ'Օրէլ դը Պալատին զօրավարին յաղթութիւնը՝ իբրեւ սկիզբն ապագայ յաղթանակաց և Նոյեմբեր 12ին Գամբէտտա Օռլէան եկաւ անձամբ ընելու ուրախակցութիւնքը յաղթական գունդերուն, որոց սպաներէն շատերը ունեցան յառաջադիմութիւնք և նշանք։ Զօրավարն դ'Օրէլ դը Պալատին, ընդհանուր սպարապետ անուանուեցաւ Լուառի բանակին։

Գամբէտտա այս յաղթութիւնը օդապարիկով իմացուց ի Պարիս և աննկարագրելի եղաւ պաշարուած քաղաքին ուրախութիւնը և մանաւանդ ազատելու յոյսը։ Զօրավարն Տրոշիւ որ նախ մտադիր էր յարձակումն փորձել Ռուանի ուղղութեամբ, Կուլմիէի յաղթութենէն վերջը փոխեց ծրագիրը և սկսաւ ջանալ ելք մը պատրաստել հարաւային արեւելեան կողմէն, Ֆոնտէնբլոյի գծով, ուր կը համարէր որ գտնուի Նոյեմբեր 20ին Լուառի բանակը։ Ելքը սահմանուեցաւ կատարել

Նոյեմբեր 26ին։ Այս որոշողութիւնը օդապարիկով ղրկուեցաւ Նոյեմբեր 18ին առ Գամբէտտա, բայց օդապարիկը հովերու մղմամբ Նորվեկիա իջաւ, ուսկից ղրկուելով նամակը, Նոյեմբեր 30ին հասաւ ի Տուր։ Անմիջապէս Դեկտեմբեր 1ին զօրավարն դ'Օրէլ սկսաւ չուել ի Ֆոնտէնբլօ։

Իսկ ի Պարիս զօրավարն Տրոշիւ յետ տեսնելու ամեն հանդերձանք, յանձնեց Դիւկրօ զօրավարին Շամպինիի և Դրէտէյլի մէջէն ճեղքել թշնամւոյն բանակը և ճամբայ բանալ դէպ ի Ֆոնտէնբլօ և այսպէս կտրել զՊարիս շրջապատող ահաւոր բանակը։ Այս գործողութեան համար հարկ էր անցնիլ Մառն գետը սայլակամրջի վրայ։ Դիւկրօ յանձն առաւ այս դժուարին ելքը, հանդիսապէս ըսելով որ կամ մեռեալ կը մնար դաշտին վրայ և կամ յաղթական կը դառնար։ Նոյեմբեր 30ին առաւօտը ահաւոր կրակ մը սկսաւ Ավրոնի, Շարանտոնի և Նոժանի բերդերէն, որոց պաշտպանութեամբ ութը կամուրջ ձգուեցան Մառնի վրայ և ահաւոր կռուով վանեցին իրենց տեղերէն վիւրտէմբէրկցի և սաքսոն գունդերը և բռնեցին Բրի, Շամպինիի և Վիլլիէ. ձեռք բերելով նաեւ երեք թնդանօթք և գերիներ, զորս Պարիս ղրկեցին։ Մառնի միւս կողմն ալ Սիւբիէլ զօրավարը տիրեց Մոնմէլիի, բայց չկրցաւ յառաջել։ Երկրորդ օրը Դեկտեմբեր 1, պատերազմը դադրեցուցին թաղելու մեռելները և վերցնելու վիրաւորքը։ Դեկտեմբեր 2ին առաւօտ պատերազմը սկսաւ և տեւեց մինչեւ երեկոյ։ Գերմանացւոց օգնութեան վազեր էր Ֆրանսէքքի զօրավարը իր գունդերով։ Երկու բանակներն հաւասար կացութեան մէջ կը գտնուէին, սակայն զօրավարն Դիւկրօ վտանգաւոր համարեցաւ Մառնէն անդին բանակելու և զօրաց հրամայեց կրկին Մառնը անցնիլ և նահանջել։ Որով Շամպինիի կռիւը և առժամանակեայ յաջողութիւնը աննպատակ եղաւ Գաղղիացւոց մանաւանդ վնասակար, որովհետեւ մահացու վիրաւորուեր էին զօրավարքն Ռինո և Լատտէ դը լա Շարիէր։ Գերմանացիք կորսնցուցեր էին 4000 զինուոր և Գաղղիացիք 6000։

Գաղղիոյ Ա-բեւմտեան, Հիւսիսային և Արեւելեան բանակք. — Գարիբալդեանց քաջութիւնները։

5. — Մէջի անձնատուր ըլլալէն վերջը զօրավարն Մանտէֆֆէլ ընդհանուր հրամանատար անուանուելով պրուսիական Ա. բանակին, հրաման ստացաւ չուել արեւմուտք դէպ ի Ռուան, տիրելով նաեւ Ամիէնի։ Նոյեմբեր 24ին ալոդէն իր յառաջապահը կը գտնուէր ի Մէզիէր, Ամիէնէն քիչ քիլոմէդր հեռու։ Գաղղիացի զօրավարն Ֆար՝ որ ունէր 25,000 զինուոր, քանի մը անյաջող կռիւներով չկրցաւ Թշնամւոյն արգելք ըլլալ և Նոյեմբեր 27ին պրուսիացի Դէօրէն զօրավարէն Վիլլէ Բրէտէնէի քով մեծապէս ջնասուելով, պարպեց զԱմիէն և 29ին անձնատուր եղաւ։ Մանտէֆֆէլ յետոյ չուեց Ռուանի վրայ. միշտ արթուն դիտելով նաեւ Արեւմտեան բանակը, որուն անպակաս էին օգնութիւնք Անգղիոյ եզերքներէն։ Զօրավարն Դէօրէն ընկղմել տուաւ վեց անգղիացի նաւեր որոնք ածուխ կը բերէին ի Գաղղիա։ Բիսմարք Անգղիոյ հետ խնդիր մը չունենալու համար, խոստացաւ անոնց գինը վճարել։

Գերմանացիք Պարիսէն ուզելով հեռու բռնել գաղղիական հիւսիսային բանակը, որուն հրամանատար դրուեր էր զօրավարն Ֆէդէրբ, զանիկայ կը ջանային մղել դէպ ի Արրա և Դուէ։ Բապոմի քով երկու բանակները զարնուեցան անորոշ յաղթութեամբ։ Յետոյ երբ զօրավարն Մանտէֆֆէլ գնաց դէպ ի արեւելեան բանակը այն ատեն քաջ զօրավարն Ֆէդհէրբ նորէն ուզեց անցք մը փորձել դէպ ի հարաւ։ Բայց Դէօրէն զօրավարը որ իրեն կը հետեւէր, Սէն Քանտէնի քով յանկարծ յարձակեցաւ վրան։ Երկու կողմանէ ալ դիւցազնարար կռուեցան, բայց գաղղիական բանակը ցրուեցաւ և հազարաւորք գերի բռնուեցան. Գերմանացիք տիրեցին Սէն Քանտէնի պատմական բերդին։ Երկրորդ օրը Ֆէդհէրբ հաւաքած գունդերով կրցաւ քաշուիլ յԱրրա։ Գամբէտտա այս անյաջողութենէն չյուսահատեցաւ, կալէի վրայէն անցաւ ի Բորդօ, զմայրաքաղաքը ազատելու նոր միջոցներ մտածելու համար։

Հիւսիսային բանակին այս տագնապներուն ժամանակ Արեւելեան բանակը և մանաւանդ Գարիբալդիի

գունդերը թշնամւոյն ընթացքին մեծ պատուար մը կ'ըլ-
լային։ Գարիբալդի ի սկզբան Բրզանսոն եկած ժամա-
նակ լաւ ընդունելութիւն չէր գտած գաղղիացի ընդհա-
նուր հրամանատար Գամբրիէլ զօրավարէն. հարկ եղեր
էր որ Գամբէտտա անձամբ երթայ ի Բրզանսոն և համոզէ
զհրամանատարը՝ պէտք եղած մթերքը Գարիբալդիի
տալու։

Գամբրիէլի նահանջէն վերջը պրուսիացի Վէրթէր
զօրավարը Օգոստոս 19ին բռնեց զՎրզուլ, յետոյ չուեց
դէպ ի Դիժոն զոր ռմբակոծեց և 31ին մտաւ քաղաքը
յետ ահաւոր և արիւնահեղ կռիւներու Սէն Նիկոլա և
Սէն Պիէր արուարձաններուն մէջ։

Ստրազբուրկի առմանէն վերջը պրուսիացի ուրիշ
գունդեր տիրեցին Շէզոտի, Նոյեմբեր 10ին՝ Նէօֆ
Բրիզաքի և պաշարեցին զԲէլֆոր որ սակայն դիմացաւ
մինչեւ ցՋինադադարումն։ Դրէսքով զօրավարին բանակը
Հոկտեմբեր 31ին տիրեց Միւլհաւզի, Նոյեմբեր 8ին
Մոնտէլիարի և ուրիշ փոքր տեղերու, այսպէս ճամբայ
բացաւ դէպ ի Բէլֆոր։ Գաղղիացիք համարեցան որ
Դրէսքով և Վէրթէր միաբան պիտի յարձակէին Բրզան-
սոնի վրայ, ամբողջ արեւելեան բանակը ջնջելու հա-
մար, այդ պատճառաւ զօրավարն Միշէլ որ յաջորդած
էր Գամբրիէլ զօրավարին, հրաման ընդունեցաւ թողուլ
Բրզանսոնի մէջ 10,000 զինուոր Քրէմէր զօրավարին
հրամանատարութեան ներքեւ և քաշուիլ ի Շանյի. հոն
հաւաքուեցան մօտ 40,000 զինուոր, որոնցմէ 15,000ը
ղրկուեցան ի Ժիան։ Այսպէս Գաղղիոյ արեւելեան կողմը
գրեթէ առանց բանակի մնաց. կային միայն Կրէմէրի և
Գարիբալդիի գունդերը և այս վերջիններս շատ փնաս-
ներ տուին Պրուսիացւոց։ Վէրթէր Դիժոնը բռնելէն ետքը
կը ջանար դուրսերը եւս տարածուիլ. բայց ամեն կողմ
իրեն դիմաց կը գտնէր զԳարիբալդի և կամ իր Ռի-
կոտտի որդին, որոնք միշտ պատրաստ էին կռուելու։
Նոյեմբեր 26ին Գարիբալդի յաղթեց Պրուսիացւոց Բաս-
քի մօտ. բայց երկրորդ օրը երբ բազմագոյն գունդերով
Գերմանացիք ուզեցին շրջապատել Գարիբալդեանքը,

այն ատեն իտալացի հրամանատարը քաշուեցաւ։ Դեկտեմբեր 1ին 6000 Պրուսիացիք հեծելագնդով և 12 լուծ թնդանօթներով ջանացին տիրել Օտէնի, ուր կը գտնուէր Գարիբալդի, բայց ետ մղուեցան, նոյնը պատահեցաւ Լանգրի դիմաց։

Դեկտեմբեր 3ին Կրէմէր զօրավարը Վանտէնի մօտ յաղթեց Փէլլէր բրուսիացի զօրավարին և շատ մը պաշար ձեռք ձգեց։ Վէրթէր զօրավարը Դեկտեմբեր 18ին և 19ին ուզեց յանկարծակի յարձակիլ Կրէմէրի վրայ, բայց իմանալով որ Գարիբալդի օգնութեան կը դիմէ, այն ատեն կրկին քաշուեցաւ ի Դիժոն։

Լուսոի բանակին յաղթութիւն. — Օռլէան կրկին կ'առնուցուի։

6. — Գուլմիէի յաջողութենէն վերջը Գամբէտտա և ռազմագէտ զօրավարք կ'ուզէին որ զօրավարն դ'Օրէլ ընդհանուր յարձակումն ընէ Ֆոն դէր Թանի բանակին վրայ և յաղթութիւնը կատարեալ ընելով, ազատէ Պարիսու գիծը. մանաւանդ որ Մէքլէմբուրկի դքսին բանակը իր շարժմունքներով կը սպառնար Բլուայի, Տուրի և Մանի։ Զօրավարն տ'Օրէլ անկարելի համարեցաւ յարձակումը քանի որ իր գունդերը շատ յոգնած էին։ Այս միջոցիս, մինչ ինքը կը դանդաղէր, նոր օգնութիւնք կուգային Մէքլէմբուրկի դքսին և Ֆրէդէրիկ Կարլ երգութեամբ կը դիմէր դէպ ի Օռլէան։ Եւ որովհետեւ այս գունդերը սիւնակ սիւնակ կը չուէին իրարմէ հեռու, Գամբէտտա հրաման ղրկեց Գրուբա զօրավարին և Բիլլօ հազարապետին որ միաբանելով երթան դէպ ի Պիտիվիէ և խափանեն Ֆրէդէրիկ Կարլի ընթացքը։ Ֆրէդէրիկ Կարլ գաղղիացի գունդերուն գալստեան վրայ, թողուց զՄոնտարժիս և դարձաւ Բոմի վրայ։ Նոյեմբեր 24էն 27 զանազան աննշան գուպարածք եղան յորս Գրուբա և Բիլլօ զօրավարք ըմբռնեցին որ անկարելի էր Ֆրէդէրիկ Կարլի դիմացն առնուլ որ ունէր 60,000 զինուոր և 270 թնդանօղք, և քաշուեցան դէպ ի Օռլէան զայն պաշտպանելու։ Որովհետեւ Ֆրէդէրիկ Կարլի նպատակն էր տիրել Օռլէանի, անկէ անցնիլ Թուր և ցրուել վարչութեան Նուիրակութիւնը։ Ուրիշ բանակ մ'ալ պիտի երթար Բուրժի վրայ։

Այս ժամանակիս էր դ'Օրէլ զօրավարին Դեկտեմբեր 1ի շարժումը. և զօրավարն Շանզի՝ հրամանատար 16դ բանակին ի Վիլլպիոն պատերազմեր էր թշնամւոյն հետ կէսօրէն մինչեւ երեկոյ և յաղթութիւնը իրեն եղեր էր ժորէկիբէրի ծովակալին զօրաբաժնին քաջութեամբ։ Պրուսիացւոց մաս մը քաշուեցաւ ի Լուանյի և ուրիշ մաս մը ի Պիտիվիէ ուր Ֆրէդէրիկ Կարլ հաստատած էր իր ճամբարը։ Երկրորդ օրը Դեկտեմբեր 2, Ֆրէդէրիկ Կարլ յետ բազում ջանքերու և կորուստներու յաջողեցաւ հաստատուիլ Արտընէի մօտ և մէկմէկէ բաժնեց դ'Օրէլ դը Պալատին և Շանզի զօրավարները։

Գերմանական ընդհանուր հրամանատարութիւնը ի Վէրսայլ՝ հրամայեց Մէքլէմբուրկի դքսին միանալու Ֆրէդէրիկ Կարլի բանակին և այսպէս կազմել ամբողջովին Հարաւային բանակ մը։ Դուքսը չուեց դէպ ի Տրուա, Սան, Նըմուր և տուգանքներով պատժեց այն գիւղերը որոնք Գերմանացւոց վնաս մը տուեր էին։ Յետոյ միանալով Բավիէրացւոց գունդերուն Բոմ լա Ռոլանդի քով արիւնահեղ պատերազմով մը արգիլեց դ'Օրէլի զօրավարին Ֆոնտէնբլոյի ճամբով չուել դէպ ի Պարիս։ Գաղղիացի բանակք այն ատեն փորձեցին դէպ ի Արեւմուտք քաշուիլ և հոն ճամբայ բանալ դէպ ի մայրաքաղաքը։ Սակայն Պուպրի քով բռնադատուեցան զարնուիլ Գերմանացւոց հետ և մեծ կորուստներով քաշուեցան իրենց նախկին դիրքերը։ Դեկտեմբերի առջի երեք օրուան պատերազմունք, Լուառի ափունքը դիակով և արիւնով ծածկեր էին։ Դեկտեմբերի 2էն 3ին գիշերը Ֆրէդէրիկ Կարլ որ միացած էր Մէքլէմբուրկի դքսին հետ որով և ունէր 120,000ի բանակ մը, բռնեց Օռլէանի ճամբան և Պարիսու երկաթուղին։ Այն ատեն դ'Օրէլ անկարելի դատեց Պարիսու վրայ քալելու խորհուրդը և Տուրի Նուիրակութենէն հրաման խնդրեց թողլու նաեւ զՕռլէան։ Գամբէտտա Տուրէն վազեց իր ներկայութեամբ գունդերը խրախուսելու. սակայն Գամբէտտայի հասած ժամանակ արդէն դ'Օրէլ դը Պալատին զօրավարը թողուցեր էր զՕռլէան։ Գերմանացիք Օռ-

լէանի դիմաց երեւցան Դեկտեմբեր 4ի երեկոյ և սպառնացան ոմբակոծել քաղաքը եթէ երկրորդ օրը ժամը մինչեւ 11 անձնատուր չ'ըլլայ։ Քաղաքացի իշխանութիւնք ընդունայն համարեցան դէմ դնելը և անձնատուր եղան, որով երկրորդ օրը Մէքլէմբուրկի դուքսը մտաւ Օլէան ուր գերեց Ֆնացեալ պահանորդը, շատ մը մթերք և չորս պատերազմական նաւք Լուառի վրայ, որոց մէջէն քաջութեամբ կռուեր էին Հռովմայ Քահանայապետի զուաֆք։ Դիւպանլու եպիսկոպոսը իր պալատանը մէջ արգիլուեցաւ. իսկ Գամպէտտա հազիւ կրցաւ փախչիլ։ Կոման Մոլտքէ Օլէանի առման լուրը իմացուց Պարիսի վարչութեան, որ պատերուն վրայ կպցնել տուաւ։ Գամբէտտա սպառնացաւ դատ բանալ դ'Օրէլ զօրավարին դէմ որ թողուցեր էր քաղաքը՝ և դ'Օրէլ տուաւ իր հրաժարականը որով Լուառի բանակը երկու բաժնուեցաւ, մէկուն հրամանատար եղաւ զօրավարն Շանզի, միւսոյն զօրավարն Բուրբաքի որ Հիւսիսային բանակին հրամանատարութիւնը թողուց Ֆէդհէրբ զօրավարին։

Ֆրէդէրիկ Կարլի նպատակը եղաւ անկէ վերջը, ոչընչացնելու այս երկու բանակները. նախ քալեց Բուրբաքիի վրայ որ յաջողեցաւ Վէրզոնէ և Շամբորի դղեկին կողմէն ետ ետ քաշուելով ամրանալ Բուրժի մէջ։ Այն ատեն իր զօրութիւնքը դարձուց Շանզիի բանակին դէմ որ Լուառի աջակողմը կեցած կը պաշտպանէր զԲլուա, Տուր և Ման և Մէքլէմբուրկ դքսին հրամայեց տիրելու Տուրի։ Դեկտեմբեր 7ի, 8ի և 9ին Մէքլէմբուրկի դուքսը շատ նեղեց Շանզիի բանակը և մանաւանդ Դեկտեմբեր 10ին Օրինյիի մօտ մոլեգին պատերազմ մը ունեցաւ, յորում Գաղղիացիք պահեցին իրենց բանակատեղին և վանեցին բավիէրացի գունդերուն յարձակմունքները։

Տուրի առումը. — Ղուիրակութիւնը կը փոխադրուի ի Բորդօ։

7. — Մէքլէմբուրկի դքսին այս գործողութեանց ժամանակ Ֆրէդէրիկ Կարլ ղրկեց նաեւ Մանշտայն զօրավարը գետին ձախ կողմէն շրջապատել զՇանզի, տիրել Բլուայի և գաղղիացի զօրավարը երկու կրակի մէջ

փակել։ Այն ատեն Շանզի քաշուեցաւ դէպ ի Վանդոմ և Բլուա ինկաւ Պրուսիացւոց ձեռքը։ Դեռ Տուրի համբան բաց մնալով, Դեկտեմբեր 9ին վարչական Նուիրակութիւնը փոխադրեցաւ ի Բորդո. ուր փոխադրուեցան նաեւ օտար պետութեանց ներկայացուցիչք։ Այս միջոցիս Գամբէտտա դիկտատորական իշխանութիւն մը ձեռք առած էր իւր «կրակէ լեզուով և բոցէ գրչով» ինչպէս ըսած են գաղղիացի հասարակապետականք, ջանալով գրգռել ամեն կողմ հայրենասիրական զգացմունք ընդդէմ օտարին։ Յունուարի ամեն օր կուգային հազարաւոր կամաւորք և մեծ գումարներ։ Դերմանացիք Դեկտեմբեր 14ին և 15ին փորձեցին Շանզիի բռնած դիրքերուն տիրել բայց չյաջողեցան. 16ին Շանզի որուն բանակը ցուրտէն և անօթութենէն արդէն նեղուած վիճակի մէջ էր, քաշուեցաւ Մանի դիմաց յուսալով միանալու Արեւմտեան բանակին հետ որ միշտ կազմուելու վրայ էր։ Դերմանացիք 21ին մտան Տուր, որով և յաջողեցան գաղղիացի բանակները բոլորովին բաժնել Պարիսէն ինչպէս նպատակնին էր։ Ինդեան տուներուն ֆոն դէր Թան իրեն բանակով եկաւ Ոլէան, հոն իր զօրաց հանգիստ տալու համար։

Շանզիի բանակը եկած էին կեղծ անուններով, հայրենեաց համար արիւնին տալու, Ոլէանի ցեղէն՝ դուքսն դ'Ոմալ և Ֆոէնվիլի իշխանը՝ որդիք լուի Ֆիլիպ թագաւորին և թոռը՝ դուքսն Շարտրի։ Գամբէտտա իմանալով, հրաման ղրկեց որ թողուն զԳաղղիա և հեռանան։

Պրուսիացւոց Գաղղիոյ արեւելեան և արեւմտեան կողմերը տարածուելով, միջին գաւառաց ժողովուրդք սկսան փախչիլ դէպ ի հարաւ։ Շատ մը վիրաւորք և հիւանդք թշնամւոյն ձեռքը չմնալու համար, այն եղանակին սոսկալի ցրտով կը գաղթէին դէպ ի Բայոն, Բիարից և Պօ։ Ընդհանուր սարսափ մ'էր ամեն կողմ։ Հազարաւոր անձինք որոնք բնաւ զէնք կրած չէին, որոնք շատ տարիներէ ի վեր կորսնցուցած էին չարքաշ կենաց վարժութիւնը, Գամբէտտայի խիստ հրամանէն

ազատելու համար, փախստեան ամեն ճար կը մտածէին։ Ահաւոր ձմեռն մ'էր. և Գաղղիացւոցմէ աւելի Գերմանացի բանակներուն համար, որոնք օտար երկրի վրայ կը գտնուէին զինուց ներքեւ. 70,000 զինուորք Ֆրէդէրիկ իշխանին և Մէքլէմբուրկի մեծ դքսին հրամանաց ներքեւ շարունակաբար կռուեցան Լուարի և Սարթի եզերքները, յԱգէյ, Շարտրը, Սորիէ, Նոժան Լը Ռոթրու, Լամբրոն և Լազապէլ, իրենցմէ շատերը մեռեալ թողլով ձիւնապատ դաշտերուն վրայ։ Պարծանքնին և միսիթարութիւننին միայն իրենց արութիւնն էր, մինչ Գաղղիացիք ստէպ առանց կռուելու բազմութեամբ գերի կ'երթային թողլով թշնամւոյն ձեռքը զէնք և մթերք։ Ջօրավարն Շանզի ընդհանուր օրակարգով մը պախարակեց զօրաց այս անբացատրելի և ամօթալի սարսափը և տկարութիւնը։ Շանզի յետ կորսնցնելու ամեն յոյս մայրաքաղաքին օգնելու մասին, քաշուեցաւ Լաւալ։

8. — Եւ սակայն Պարիս երկար ժամանակ այդ օգնութեան յուսով քաջալերուեր էր, երկար ժամանակ համբերեր էր, օրէ օր յուսալով տեսնել ազատարար բանակ մը։ Այդ բանակները ոչ միայն չտեսնուեցան, այլ քիչ քիչ անոնց նկատմամբ լուրերէն անգամ զրկուեցաւ։ Վերջին լուրերը ստացաւ Դեկտեմբեր 11ին թղթաբեր աղաւնիներու միջոցով, իմացաւ բանակաց անզօրութիւնը և ըմբռնեց որ ի զուր էր անոնցմէ օգնութիւն յուսալ և Պարիս ինքնին պիտի պաշտպանուէր։

Պարիսու վիճակը. — Ցուրտ և անօթութիւն։

Գերմանացիք ամեն օր կը շարունակէին աւելի սեղմելու պաշարման շրջանակը. կը զարմանային միանգամայն որ Պարիս հաճոյից և անհոգութեան քաղաքը, չորս ամսէ ի վեր կը դիմանար այսօրինակ պաշարման։ Օրուան մէջ ցուրտը զրոյէն հարիւրեկի հինգ աստիճան վար էր, իսկ գիշերը կ'անցընէր տասներորդը։ Ստէպ կը ձիւնէր և կամ սառնորակ մառախուղ մը պատած էր բոլոր քաղաքը։ Այս ահաւոր երկնքին և ցուրտին ներքեւ աղքատք, ծերք, տղայք և մայրեր երախաները գրկերնին ժամերով կը սպասէին ոստիկանութեանց դռները որպէս զի իրենց հացին և մսին բաժինը ստա-

նան։ Բայց քիչ քիչ սննդարար ապրուստը նուազեցաւ. միայն ձիու միսը մնաց և փոխանակ ճերմակ փափուկ գաղղիական հացին, որուն այնքան վարժած է պարիսցին, ամենայն ոք թեփով խառն գորշ հաց մը սկսաւ ուտել[1]։ Թարմ ձիու մսին յաջորդեցին աղած և չոր ապխտեղէնք, յետոյ ճաշարաններու մէջ սկսան կերակուրք պատրաստուիլ կատուի, շան, իշու, մկան և կամ կենդանաբանութեան պարտիզի կենդանեաց միսերով։ Միայն գինին առատ էր. որ փոխանակ օգտի մեծամեծ վնասներ բերաւ[2]։ Պարիս գիշերուան այն հիասքանչ քաղաքը զրկուած էր գիշերները լոյսէ, որովհետեւ չկար նիւթը։ Պակաս էր փայտը և ածուխը. կըտրուեցան փողոցներու և Բուա դը Բուլոնյի և Վէնսէնի ծառերը. բայց փութով սպառեցան։ Այն ահաւոր ցրտէն առաջ եկան տարափոխիկ հիւանդութիւնք, այնպէս որ մինչ ի Պարիս մէկ եօթնեակի մէջ սովորական ժամանակ 1200 մահ կ'ըլլային. պաշարման վերջին շաբթուն մեռնողաց թիւն էր 4670։ Եւ սակայն Պարիս տարաւ ամեն զրկանաց, անօթութեան, ցրտի և հիւանդութեանց, պահելով արժանապէս հայրենասէր ժողովրդեան մը համբաւուած պատիւը, նա մանաւանդ իր այս կրածներով անգամ պարծեցաւ և չլրքաւ։ Եւ նոյն իսկ թշնամւոյն շարունակ ռումբերն զինքը չվհատեցուցին ամեն բանի դիմանալ իր պաշտելի մայրաքաղաքին մէջ պրուսիացի զինուոր մը չտեսնելու համար։

---

1. Ի Պարիս Մուրատեան վարժարանի աշակերտքը յետ զրկուելու մաս մը ի հայրենիս և մաս մը ի Մարսիլիա և անկէ Վենետիկ իրենց տեսչին Հ. Հմայակ Վ. Պապիկեանի հետ, մնացեր էին անդ պահպանութեան համար Հ. Գրիգորիս Վ. Մէրճանեան. Հ. Գարեգին Վ. Զարբհանալեան ուրիշ 15 ազգայիններով։ Վ. Հ. Գարեգին՝ Յիշատակագիր մը գրած է հետաքրքրական յորում կ'ըսէ, չորս օր անգամ մը քիչ մը ձիու միս կուտային, ամեն օր քիչ մը հաց, յորում բաց ալիւրէ կար ամեն բան։ Կը նկարագրէ քաշած ահաւոր սովը։

2. Ազգային Պահապանաց ընդհանուր հրամանատարը զօրավարն Կլէման Թոմա պաշտօնանկ ըրաւ Լըբլուա՝ 200դի գնդապետը, որ զրկուած էր բռնելու Կրետէյլի յառաջատեղիքը և գինով էր ինքը և իր գունդին կէսէն աւելին ըստ Վէնսէնի հրամանատարին տեղեկութեան։ Այդ անձինք, երբ Հասարակութիւնը տիրեց Պարիսու վրէժը առին սպաննելով զզօրավարն Կլէման Թոմա։

ԳԼՈՒԽ Ժ.

ԳԵՐՄԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՇԻՆՔ ՊԱՐԻՍՈՒ

1. Գուլիէլմոս Թագաւորը կայսր կը հռչակուի ի Վէրսայլ. — 2. Պարիսու ոմբակոծուիլը. — Վերջին ելք. — Բիւզէնվալ. Վարչական փոփոխութիւնք. — Զինադադարուն. Դաշինք Պարիսու. — 5. Ծովային պատերազմունք. — 6. Գաղղիոյ Արեւելեան բանակը. Հէրիկուր. — 7. Գաղղիացի բանակը Զուիցցերի կը քաշուի. — 8. Ընտրութիւնք. Տարաձայնութիւնք Պարիսու և Բորդոյի մէջ. — Գամբէտտա կը քաշուի. — 9. Խաղաղութեան Դաշնագրոյն ստորագրուիլը. — 10. Գերմանացւոց մուտքը ի Պարիս. — Գերմանական գերիշխանութիւնը. — 12. Հասարակութիւն. — 13. Վէրսայլի վարչութիւնը. — Հասարակութեան հետ պատերազմները. — 14. Պատանդներուն սպանութիւնը. — Պարիսու հրդեհը. — 15. Հասարակութեան անկումը. — Մակ Մահոն մարաջախտը կը տիրէ Պարիսու։

Գուլիէլմոս Թագաւորը կայսր կը հռչակուի ի Վէրսայլ։

1. — Գերմանական զինուց յաջողութեան հետ կը յառաջէր նաեւ ընդհանուր գերմանական իշխանութեանց միութեան կապ մը և գերմանական կայսրութեան մը գաղափարը և կազմութիւնը։ Հարաւային Գերմանիոյ զինուորը իւր արիւնը թափեր էր դաշտին վրայ խառն հիւսիսային Գերմանիոյ զինուորին հետ։ Այդ արիւնէն ծներ էր գերագոյն միութիւն մը. վերցուեր էին կրօնական խտրութիւնք, մոռցուեր էին ցեղական ատելութիւնք և նախանձներ՝ մանաւանդ ընդդէմ Պրուսիոյ։ Գերմանիոյ մեծ և փոքր պետութիւնք նոյն իսկ Բավիէրա, Պրուսիոյ դէմ միշտ մախացողը, ներկայ պարագայից մէջ անհնար է որ չճանչնար պրուսիական քա-

դաքականութեան և ռազմագիտութեան կատարած ամենամեծ դերը և ազդեցութիւնը։ Եւ երբ ժամանակը հասած համարուեցաւ, նոյն ինքն Բավիէրայի երիտասարդ թագաւորը ամենեւին չընդդիմացաւ և ընդունեցաւ որ ընծայուի Պրուսիոյ թագաւորին կայսերական տիտղոսը և գերմանական բովանդակ Պետութեանց նախագահելու իրաւունքը[1]։ Իշխանաց այս քայլէն վերջը, Հիւսիսային Գերմանիոյ Խորհրդարանը իւր անդամներէն երեսունը, որոց գլուխն էր նախագահն Սիմսոն, ղրկեց ի Վէրսայլ իմացնելու Պրուսիոյ ծեր թագաւորին՝ գերմանական ժողովրդոց եռանդուն իղձը, վասնզի այդ պատիւը պիտի բարձրացնէր գերմանական ազգին համբաւը և ազդեցութիւնը։ Գուլիէլմոս թագաւորը հանդիսաւոր կերպով ընդունեցաւ նուիրակութիւնը և իմացուց որ Յունուար 1էն կ'ընդունէր կայսերական պատիւը. թէպէտ պաշտօնական հանդէսը որով և հրովարտակին ընթերցումը և կեցցէները կատարուեցան Յունուար 18ին։

Ո՛վ կարող էր գուշակել տարի մը առաջ որ Պրուսիոյ թագաւորը, Գաղղիոյ հզօր թագաւորաց, Վէրսայլի շքեղ դղեկին Հայլիներու Սրահին մէջ յետ խոնարհեցնելու զԳաղղիա, ինքզինքը կայսր պիտի հռչակէր։ Այն օրը դղեկին գաւթին մէջ պահպանութեան կեցաւ իր ծակծկած դրօշով, գնդակաձիգ զօրաց այն գունդը որ

---

1. Բիսմարք իր հրատարակած Յիշատակարանաց մէջ կը պատմէ թէ ինչո՞ւ կարեւոր տեսած էր Պրուսիոյ թագաւորին ուրիշ անուն մը ընծայել, զինքը միւս գերման իշխողներէ բարձրացնելու համար։ Կը պատմէ Գուլիէլմոսի և թագաժառանգ իշխանին ընդդիմութիւնը կայսր տիտղոսը ստանձնելու համար, զոր նորելուկ կը համարէին, մանաւանդ Բոնապարտեանց զայն կրելէն վերջը։ Բիսմարք բացատրեց որ չէր կարելի արդէն եղած թագաւորները, դքսերու կարգին իջեցնել, կամ Պրուսիոյ թագաւորին Գերմանիոյ թագաւոր տիտղոսը տալ։ Յետոյ կը պատմէ իր գրութիւնը առ Բավիէրայի Լուտուիկ թագաւորը ճարտար մեկնութիւններով կայսր տիտղոսին նկատմամբ որպէս զի չհակառակի Բավիէրայի թագաւորը։ Բավիէրայի թագաւորին ոչ ընդդիմութիւնը. ամենէն վերջը երկար վէճերնին Գուլիէլմոս թագաւորին հետ որ կը պնդէր կայսրութիւնը ստանձնած ժամանակ կոչուիլ զոնէ կայսր Գերմանիոյ մինչ Բիսմարք բացարձակապէս կ'ուզէր որ ըսուի Գերմանացի կայսր։ Հանդէսին ժամանակ ըսուեցաւ ոչ մին ոչ միւսը, այլ Գուլիէլմու կայսր։ Հտ. Բ. Գլ. ԻԳ. տպ. 1898։

վիսէմբուրկի մօտ առաջին կոխեց Գաղղիոյ հողը։ Ուրիշ պրուսիացի և գերմանացի դրօշակք կը զարդարէին սրահը։ Հանդէսը սկսաւ քարոզով և քարոզիչը նախարան դրաւ 20դ Սաղմոսին հետեւեալ տողերը «Զամանս արարեր զնա յօրհնութիւն քաղցրութեան քոյ, և եղիր ի գլուխ նորա պսակ ի քարէ պատուականէ... Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից. Թագաւոր յուսացաւ ի Տէր, յողորմութենէ Բարձրելոյն նա մի՛ սասանեսցի»։ Քարոզէն վերջը 73ամեայ Թագաւորը ելաւ դրուած բարձրաւանդակի սանդուխներէն վեր և յուզեալ ձայնով ծանոյց որ կ'առնուր կայսերական Թագը։ Ապա հրամայեց կոմս Բիսմարք Ատենադպրին՝ կարդալու առ գերմանացի ժողովուրդն գրած հրատարակութիւնը, յորում կ'իմացնէր որ «Մենք, Գուլիէլմոս, շնորհիւն Աստուծոյ Թագաւոր Պրուսիոյ կ'իմացնենք, որ ըստ ըղձից գերմանացի իշխանաց կը նորոգենք Գերմանական կայսրութիւնը, որով մենք և մեր յաջորդք գերմանական կայսրութեան ամեն գործառնութեանց մէջ պիտի կրենք այս տիտղոսը»։ Յետոյ յիշելով այս դառն պատերազմին մէջ գերմանական ժողովրդոց միաբան զոհողութիւնքը զհայրենիս պաշտպանելու համար, կը յուսար որ ասկէ վերջը Գերմանիա ապահով պիտի ապրէր և պիտի չունենար Գաղղիոյ ստէպ յարձակմունքները։ Կը վերջացնէր խօսքը մաղթելով որ իր յաջորդք աւելի ընդարձակեն գերմանական կայսրութիւնը «ոչ զինուց աշխարհակալութեամբք այլ խաղաղութեամբ. ազգային յաջողութեանց, ազատութեան և բարոյականի ասպարիզին մէջ»։ Հրատարակութեան ընթերցումէն վերջը Բաղէնի մեծ դուքսը գոչեց «կեցցէ՛ Գուէլիէլմոս կայսրը». որուն ձայնակցեցան բոլոր հանդիսականք և յետոյ հնչուեցաւ ազգային երգը[1]։

---

1. Բիսմարք կ'ըսէ իր Յիշատակարանաց մէջ որ հանդէսէն առաջ գրկած էր առ Գուլիէլմոս զԲաղէնի դուքսը՝ համոզելու որ չկոչուի «կեցցէ Գուլիէլմոս կայսր Գերմանիոյ»։

Այսպէս կը սկսէր մեծ կայսրութիւն մը օտար երկրի և օտար սրահներու մէջ, մեծ ցնծութեան և ուրախութեան ձայներով. մինչ մէկ ժամ հեռու տխրութեան և թշուառութեան ձայներով մեծ ազգ մը կը դատապարտէր ուրիշ կայսրութիւն մը։

Պարիսու ռմբակոծուիլը. — Վերջին ելք. — Բիւզէնվալ։

2. — Պարիս չէր կրնար համոզուիլ որ իր վերջը կը մօտենար. չէր կրնար ըմբռնել որ ինքը կրնար առնուիլ։ Կը համարէր որ օր մը գերմանացի բանակը յանկարծ յուսահատած պիտի թողու և քաշուի Հռենոսէն անդին։ Տարբեր կը խորհէին գերմանացի ռազմագէտք։ Զօրավարն Մոլտքէ եղանակին դժուարութեանց յաղթելով, պաշարուած Պարիսու չորս կողմը այնքան հրանօթք և մթերք հասուցեր էր, որպիսի յիշուած չէ պատմութեան մէջ և 450,000 զինուորք պատրաստ էին գործելու։ Դեկտեմբեր 25ին Մոնտ'Ավրոնի չորս կողմը շարուած էին 12 հրալուծք և 76 մեծ թնդանօթք։ Մոնտ'Ավրոն Պարիսու բանալի կոչուած է։ Երկրորդ օրը սկսաւ Պարիսու չորս կողմը եղած բարձունքներուն ռմբակոծուիլը։ Դաղղիացիք բռնադատուեցան պարպելու Մոնտ'Ավրոն, որուն անմիջապէս տիրեցին սաքսոնները և հոնկէ սկսան անդադար կրակ մը Ռոզնի, Նոժան և Նուազի արեւելեան բերդերուն վրայ և գնդակները սկսան անցնիլ Պարիսու պատուարները։ Զօրավարն Տրոշիւ նոյն օրը մայրաքաղաքին պատերուն վրայ կպցնել տուաւ յորդոր մը առ քաղաքացիս «բնաւ պիտի չ'իյնայ զէնքը ձեռքերնէս. արութիւն, վստահութիւն և հայրենասիրութիւն. Պարիսու կառավարիչը անձնատուր չ'ըլլար»։ Եւ սակայն զօրավարին ազդեցութիւնը և համարումը շատ ինկեր էր։ Լրագիրք զինքը և զվարչութիւնը կ'ամբաստանէին իբրեւ անկարող, և մինչեւ մատնիչ։ Օր մը առաջ Պարիսու պատերուն վրայ ամենայն ոք կարդացեր էր «Տեղիք տուէք ժողովրդեան, տեղիք տուէք Հասարակութեան»։ Յունուար 5ին Գերմանացիք սկսան ռմբակոծել հարաւային Իսսի, Վանվրը և Մոնռուժ բերդերը. գնդակները սկսան ինկնալ արուարձաններուն և քաղքին հեռաւոր դիրքերուն վրայ։ Քաղա-

քացւոց տագնապը և յուզումը կ'աճէր. ի սկզբան թէ բնիկք, թէ օտարք չէին կրնար հաւատալ որ Գերմանացիք ռմբակոծեն զՊարիս. բայց երբ գնդակք սկսան ինկնալ Լիւսսամբուրի, Սէն Միւլպիս եկեղեցւոյն և Պանթէոնի վրայ, երբ սպաննեցին անմեղ անցաւորներ և հրդեհ ձգեցին Պաք փողոցին և Սէն Ժէրմէն արուարձանին մէջ, երբ Պիտիէ հիւանդանոցին վրայ պայթուցիկք սկսան թափիլ. այն ատեն Պարիսու ժողովուրդը բարձրաձայն սկսաւ գոչել այս «նոր բարբարոսաց» դէմ որոնք կը յանդգնէին կործանելու «քաղաքակրթութեան մայրաքաղաքը»։ Պարիս մնացող օտար պետութեանց ներկայացուցիչք խնդրեցին Բիսմարք կոմսէն որ օտարաց կալուածները յարգուին, բայց պատասխան տրուեցաւ որ արդէն ժամանակին իրենց ծանուցուած էր և կրնային դուրս ելած ըլլալ։ Ժիւլ Ֆաւրը բողոքեց որ ռմբակոծումը կանխապէս չէր ազդուած, որով և կը փնտռուէին հաւասարապէս հիւանդանոցք և վարժարանք։ Մոլտքէ պատասխանեց որ երբ քաղաքին մօտենան և զանազանեն շէնքերը, այն ատեն այդ տեղերուն պիտի խնայեն։ Ջինը և բուքը արգելք չէր Գերմանացւոց, որոնք անդադար կը շարունակէին ռմբակոծումը։ Ամեն հրետանի հեռագրական թելով հաղորդակցութիւն ունէր ընդհանուր հրամանատարութեան հետ, ուսկից շարունակ կուգային հրամաններ։ Գերմանական բանակը կը գործէր չափաբերական ճշդութեամբ և կարգով, բոլորովին տարբեր մայրաքաղաքին մէջ եղած վարչութիւնէն և հրամանատարութենէն որ կորսնցուցած էր ամեն վստահութիւն։ Միակերպ փողոցի պատերուն վրայ արհամարհութիւնք և նախատինք կը կպցուէին ընդդէմ թշնամւոյն, այսպէս համարելով վառ բռնել ժողովուրդը։ Իսկ ժողովուրդը կը տրտնջար որ անգործ մնացեր էր քաղքին մէջ թշնամւոյն ռումբերուն ներքեւ, փոխանակ ընդհանուր ելք մը փորձելու և միանալու Գամբէտտայի ձեւացուցած բանակներուն հետ։ Բողոքները այնքան բարձրացան որ զօրավարն Տրոշիւ բռնադատուեցաւ զինուորական ժողովք մը գումարել որոշողութիւն մը տալու համար։

Արդէն անօթութիւնը, ցուրտը, ռմբակոծումը և մեծաւոր ներքին քաղաքական կռուի մը վախը կը բռնադատէր զժողովքը գոհացնելու հասարակաց կարծիքը։ Սահմանուեցաւ Յունուար 19ին փորձելու այդ ելքը և մայրաքաղաքին բոլոր պահանորդք ի զէն կանչուեցան։ Ամբողջ Յունուար 18ը պատրաստութեամբ անցաւ և 19ին առաւօտ 100,000 զինեալք յառաջեցին դէպ ի Բիւզէնվալ, Սէն Կլուի մօտ, հոնկէ չուելու դէպ ի Վէրսայլ։ Մինչեւ կը համարէին յանկարծակիի բերել հոն եղած գերմանական գունդերը։ Ալ թեւին կը հրամայէր զօրավարն Դիւկրօ և ձախ թեւին զօրավարն Վինուա։ Իսկ զօրավարն Տրոշիւ դիտարանէն պիտի կառավարէր պատերազմը։

Գաղղիացիք իրենց բնական թափովը, որով շատ պատերազմներու մէջ յաղթող գտնուած են, յաջողութեամբ սկսան յառաջել, յաղթելով ի սկզբան ամեն եղած արգելքներու։ Վինուա զօրավարին գունդը որ դիմած էր գերմանացի Քիրխբաիի զօրավարին 5դ զօրաբաժնին վրայ, յաջողեցաւ տիրելու Մոնդրտարի բարձունքներուն և հոն երկար ժամանակ դիմացաւ։ Պրուսիացիք ետեւէ ետեւ նոր գունդեր կը հասցնէին. իսկ զօրավարն Դիւկրօ քաղքին մէջ դանդաղելով, չկրցաւ օգնութեան հասնիլ Վինուա զօրավարին որ յետ եօթն ժամ մոլեգին կռուոյ և յետ կորսնցնելու ընդ մեռեալ և ընդ վիրաւոր 1000էն աւելի անձինք, բռնադատուեցաւ շահած դիրքերը թողուլ և նահանջել։ Մեռնողներուն մէջ էին եօթանասունամեայ մարգէզն դը Կարիոլիս, որուն հայրենասիրական խանդը յաղթեր էր տարիքին վեհերոտութեանց, Կիւստավ Լամբէր՝ հռչակաւոր ճանապարհորդը Հիւսիսային ծովերու և քսանեւեօթնամեայ արդէն հռչակուած պատկերահանն Ռէնիո։

Երկրորդ օրը զօրավարն Տրոշիւ զինադադար խնդրեց մեռելները թաղելու համար։ Գերմանացիք որ գրեթէ Գաղղիացւոց հաւասար կորուստներ ունեցեր էին, սիրով ընդունեցան զինադադարումը։

Վարչական փոփոխութիւն. Յունուար 22։

3. — Պարիսցիք որ արդէն մեծ յաղթութիւն մը կ'երազէին Դիւկրոյի և Վինուայի բանակներէն, մեծապէս զայրացան եղած նահանջին վրայ։ Կ'ամբաստանէին զինուորական վարչութիւնը որ կամաւ ուզեր էր «դաս մը տալ» ազգային պահապանաց. կը կոչէին զօրավարաց դէմ և մանաւանդ Դիւկրո զօրավարին դէմ, որ երկու ժամ յապաղելովը, կորսնցնել տուեր էր սկզբնական յաջողութիւնքը։ Վարչութիւնը ըմբռնեց որ հարկ էր հասարակաց կարծիքը հանդարտ պահել, քանի որ այլ եւս կառավարելու զօրութիւն չունէր և պէտք էր վարչական փոփոխութիւնք ընել. վասնզի ամբոխը որ երբեմն իրեն կուռք ըրած էր զզօրավարն Տրոշիւ, հիմայ այլ եւս չէր ուզեր տեսնել զայն հրամանատարութեան գլուխ և կ'ամբաստանէր իբրեւ անկարող։

Յունուար 22ին պաշտօնական լրագիրը կը ծանուցանէր որ զօրավարն Վինուա ընդհանուր հրամանատար անուանուեր էր Պարիսու բանակին, որ Պարիսու կառավարչի պաշտօնը վերցուեր էր և զօրավարն Տրոշիւ կը մնար պարզապէս նախագահ վարչութեան։ Եւ սակայն այս փոփոխութիւնք չգոհացուցին զամբոխը որ յուզուած էր յեղափոխական կուսակցութենէն։ Յունուար 22ին առաւօտ ամբոխէն խումբ մը դիմեց Մազասի բանտին վրայ. ազատեց շատ մը կալանաւորներ յորս և զՖլուրէնս և փորձեց տիրելու 20դ շրջանակի թաղապետութեան պալատին։ Զօրավարն Կլէման Թոմա քաղքին պահանորդաց հրաման ղրկեց պատրաստ ըլլալու։ Կէսօրուան դէմ զինեալ խումբ մը Մոնմարտրէն մեկնելով սկսաւ դէպ ի Օթէլ դը Վիլ երթալ գոչելով «Զէնք առէք, կեցցէ՛ Հասարակութիւն»։ Օթէլ դը Վիլ վարչութենէն անձ մը չէր գտնուէր. զինեալ ամբոխը նուիրակութիւն մը ներս ղրկեց, որ դարձաւ առանց գործ մը կատարելու։ Ամբոխը սկսաւ յուզուիլ գլխաւորաց դէմ և այն միջոցին յանկարծ ամբոխէն կրակի հարուած մը մեկնելով, մահացու վիրաւորեց Ոստիկանութեան պալատին շարժուն պահանորդաց սպայն։ Պահանորդք տեսնելով իրենց սպային ինկնալը, հրացաններին պարպե-

ցին ամբոխին վրայ, որ փութով ցրուեցաւ գետնին վրայ թողլով երեսուն հոգի մեռեալ և վիրաւոր։ Նոյն երեկոյ վարչութիւնը խափանեց Ռէվէյլ և Կոմբա յեղափոխական լրագիրները։

Ներքին տագնապող յուզմանց վրայ վէրսայլէն հասաւ նաեւ պրուսիական Լրաբերը, յորում կային Շանզի, Ֆէտհէրբ և Բուրբաքի զօրավարաց կրած վերջին ձախողութիւնքը։ Անկէ վերջը Պարիս կը մնար ինքնիրեն. և որովհետեւ յետին եղած փորձը ցրցուցեր էր որ անկարելի էր հեղքել անցնիլ զթշնամին, այն ատեն մայրաքաղաքին լուրջ մասը սկսաւ զինադադարման և դաշնադրութեան մը նկատմամբ խօսքեր տարածել ամենուն մտաց մէջ։

Զինադադարումն. — Դաշինք Պարիսու։

4. — Վարչութիւնը կրկին զիւլ Ֆաւրը ընտրեց բանակցութեան համար որ յանձն առաւ երթալու մինչեւ գերմանացի յառաջապահ գունդերը և անկէց տարուիլ Վէրսայլ առ Բիսմարք կոմսը։ Ժիւլ Ֆաւրը առաջարկեց վարչութեան կողմէն, որ հրաման տրուի Պարիսու մէջ եղած զինուորաց պատուոնին քաշուիլ թշնամւոյն չտիրած գաւառ մը և հոն սպասել մինչեւ որ Գաղղիա հաւաքուելով, Ազգային ժողովք մը և վարչութիւն մը սահմանէ։ Բիսմարք չ'ընդունեցաւ պայմանքը. կուզէր որ Պարիս ալ անձնատուր ըլլայ ինչպէս Սէդան, ինչպէս Մէց։ Ժիւլ Ֆաւրը այս պայմանքը բերաւ Պարիս որոնք իրենց ամբողջութեամբ ընդունելի չեղան, բայց նորէն դառնալով Վէրսայլ կրցաւ ստանալ որ Յունուար 27էն դադրի ռմբակոծումը և երեք շաբաթ զինադադարումն ըլլայ և այն ժամանակին կոչուի ազգային ժողովքը, որ կարող ըլլայ բանակցիլ հաշտութեան համար։ Երկրորդ օրը պաշտօնական լրագիրը կ'իմացնէր զայս աւելցնելով «Այս զինադադարման ժամանակ գերմանացի բանակը պիտի բռնէր բերդերը, բայց պիտի չմտնէր ի Պարիս, ուր պիտի մնար ազգային պահանորդը և մէկ զօրաբաժին մը»։

Որչափ որ ալ մայրաքաղաքը ահաւոր կացութեան մէջ էր, այսու հանդերձ ժողովուրդը մեծ տխրութեամբ

կարդաց այս զինադադարման լուրը։ Նոյն երեկոյ կոմսն Բիսմարք և Ժիւլ Ֆաւրը դաշինք մը ստորագրեցին ի Վէրսայլ, ըստ որում՝ Զինադադարումը անմիջապէս կը սկսէր Պարիսու համար, իսկ Գաղղիոյ միւս կողմանց համար երեք օր վերջը և պիտի լմնար Փետրուար 19ին։ Զինադադարման գծէն դուրս ձգուած էին Կալվատոս և Մն գաւառները և Գերմանացւոց ձեռքը կը մնային Սարթ, Էնտրը, Լուառ, Լուառ և Շէր, Լուառէ և Իոն գաւառները։ Ապագային պիտի սահմանուէր կոդ տ'Օր, Դուբս և Ժիւրա գաւառաց նկատմամբ մինչեւ Բէլֆոր՝ որ պաշարուած էր։ Այս միջոցիս պիտի ըլլային ազատ ընտրութիւն Ազգային ժողովքի մը որ պիտի սահմանէր խաղաղութիւն և կամ պատերազմի շարունակումը։ Պարիսու բոլոր բերդերը Գերմանացւոց պիտի յանձնուէին, քաղքին պարսպներուն վրայէն պիտի վերցուէին հաղորդակցութեան միջոցներ. ցամաքի և ծովային զինուորք ինչպէս նաեւ ազգային պահապանք՝ պատերազմի գերի պիտի համարուէին բաց ի 12,000է որոնք քաղքին ապահովութեան պիտի հսկէին։ Կամաւորք պիտի ցրուէին։ Պատերազմի գերիները զինաթափ ըլլալով պիտի թողուէին քաղաքին պատուարաց մէջ։

Իսկ Գերմանացիք պիտի դիւրնցնէին անմիջապէս ապրուստի մուտքը։ Պարիսէ ելլելու համար կարեւոր էր թէ գաղղիական և թէ գերմանական իշխանութեանց թոյլտուութիւնը։ Պարիսու Հասարակութիւնը 15 օրուան մէջ պիտի վճարէր իբր պատերազմի տուգանք երկու միլիոն ֆրանք։ Զինադադարման միջոց չէր կարելի հասարակաց արժէքները քաղքէն հեռացնել. երկու կողմանէ գերեաց փոփոխութիւն պիտի ըլլար ըստ թուոց։ Վէրսայլի վարչութիւնը կանոնաւոր թղթատարութիւն մը պիտի հաստատէր Պարիսէն գաւառները ղրկուած բաց նամակներուն համար։

Ազգային պաշտպանութեան վարչութիւնը այս դաշնադրութիւնը հրատարակած ժամանակ, միանգամայն կը ծանուցանէր որ Պարիս եօթը օրէն աւելի ապրուստ չու-

նէր[1]։ Դաշնադրութեան գործադրութիւնը սկսաւ կանոնաւորապէս. Դաղղիացիք ելան բերդերէն որոնք յանձնուեցան Գերմանացւոց։

Նաւային պատերազմները։

5. — Դաղղիա պատերազմ հրատարակած ժամանակ՝ մեծ յոյս ունեցեր էր որ նաւատորմիղը յաղթական ընթացքով մը պաշարելով գերմանական քաղաքները մեծապէս պիտի նեղէր զՊրուսիա։ Սակայն նոյնը եղաւ նաւատորմղին ինչ որ ցամաքային զօրաց։ Կային նաւեր, կար նաւատորմիղ մը պատրաստ ի Շէրբուրկ, որ մինչեւ տեղէն շարժեցաւ ընդ հրամանատարութեամբ կոմս Բոնէ Վիլլոմէ ծովակալին, արդէն Գերմանացիք այլ և այլ յաղթութիւններով մտեր էին ի Դաղղիա. որով և նաւատորմիղը Հիւսիսային ծովը մտած ժամանակ տարտամեալ դիրք մը ունեցաւ. մանաւանդ որ զօրավարն Ֆոկէլ ֆոն Ֆալքէնշդայն հիւսիսային և Բալդիկ ծովերուն գետաբերանները լաւ պաշտպանած էր հրանօթներով և տորբիլներով. որով և գաղղիացի նաւատորմիղը վախցաւ ցամաքին մօտենալու որ շատ դժուար էր, նաեւ ծանծաղուտներուն և աւազուտներուն պատճառաւ. և հետուանց միայն պաշարեց Քիէլի, Լուբէքի, Ստրալսունտի և Շտէտտինի նաւահանգիստները և քանի մը վաճառականական նաւեր գերի բռնեց։

Հիւսիսային ծովուն մէջ կար ուրիշ նաւատորմիղ մը եւս ընդ հրամանատարութեամբ Ֆուրիշոն ծովակալին, որ չկրնալով տեղէ մը ցամաք հանել զօրքը, դարձաւ ի Շէրբուրկ։ Ցիրաւի թէպէտ Դաղղիացիք չկրցան ոչ մի բերդաքաղաք ռմբակոծել կամ ցամաք ելլել. այսուհանդերձ մեծ փնաս բերին գերմանական վաճառականութեան և այս փնասը զգաց ընդ երկար Գերմանիա։

Երբ Պարիսու Զինադադարումը եղաւ, այս նաւատորմիղներն ալ կրկին դարձան ի Դաղղիա։

---

1. Մանրամասն հաշիւներէ տեսնուեցաւ որ 22,000էն աւելի մի մարթուեր էր ուտուելու համար։

Գաղղիոյ Արեւելեան բանակը. – Հէրիկուրի պատերազմը Արեւելեան բանակին յաղթուիլը.

6. — Զինադադարման գիծը պիտի հասնէր մինչեւ ի Բէլֆոր։ Գերմանացիք գրեթէ վստահ որ այս յետին քաղաքս պիտի չկարենար այլ եւս երկար դիմանալ պաշարման, չէին ուզած որ Բէլֆոր Զինադադարման գծին մէջ պարունակուի։ Փոխադարձաբար Ֆիւլ Ֆավրը կրցեր էր ստանալ որ Բուրբաքի զօրավարին բանակը ազատ ըլլայ պատերազմելու։

Զօրավարն Մանդէֆֆէլ հրաման ընդունեցաւ մտնել ի վոժ և օգնել Վէրթէրի բանակին որ այնքան հարուածներ ունեցեր էր Գարիբալդիի գունդերէն։ Երբ գերմանացի բանակը սկսան յառաջել Վոժի մէջ, այն ատեն Գարիբալդի և գաղղիացի զօրավարն Ֆրրմէ ուզեցին աճապարել և հասնիլ փութով ազատելու զԲէլֆոր։ Բորդոյէն նոր եկած հրամանին համեմատ պիտի միանար իրենց հետ նաեւ զօրավարն Բուրբաքի, որով 70,000 զօրաց բանակ մը պիտի կազմուէր միաբան յարձակելու Վէրթէրի վրայ[1]։ Բայց Բուրբաքիի գունդերը այնքան դանդաղութեամբ շարժեցան որ զօրավարն Վէրթէր գուշակելով գաղղիացի զօրավարաց ծրագիրը, թողուց զԴիժոն, ուր անմիջապէս մտաւ Գարիբալդի, և երեք օր հապճեպ ընթացքով դէպ ի Կրէյ, Վրզուլ և Լիւռ, կրցաւ Բուրբաքիէն առաջ անցնիլ և յետ մոլեգին մրցման մը ի Վիլլէրսրսէլ, լաւ դիրք մը ստանալ Բէլֆորի արեւմտեան կողմը և Հէրիկուրի քով կեցընել զԲուրբաքի զօրավարը որ Պրուսիացւոց ձեռքէն առնելով զԱրսէ և Սէն Մարի, հոն հասեր էր։ Եթէ Բուրբաքի երկու օր առաջ հասած ըլլար, Վէրթէր միայն 40,000 զինուոր ունէր, այն ատեն դժուար պիտի ըլլար դիմանալ. բայց գաղղիացի զօրավարին յապաղելովը, Վէրթէր ամուր պաշտպանողական դիրք մը կազմեր էր։ Բուրբաքի զօրավարը Յունուար 15ին զՀէրիկուր ձեռք ձգելու պատրաստութիւնքը լսեցուց. 16ին բուռն բաղխմամբ ցրուեց գերմանացի Տէկէնֆէլտ զօրա-

1. Զօրավարն Բուրբաքի Արեւելքի յոյն ընտանիքէ մը սերեալ էր։

վարին բանակը. բայց անհնար եղաւ Հէրիկուրի տիրել։ Յունուար 17ին բովանդակ գունդերով յարձակեցաւ և մոլեգնաբար մրցեցաւ ձեռք բերելու այդ նոր «Թէրմոպիլէի կիրճը» ինչպէս կոչած են Գերմանացիք. ահաւոր կռուէ մը վերջը Բուրբաքի տեսնելով որ անկարելի էր տիրել, հրամայեց գունդերուն չուել դէպ ի Բըզանսոն։ Հէրիկուրի կուոյն մէջ Գերմանացիք կորսնցուցին 87 սպայ և 1847 զինուոր. Գաղղիացւոց վնասը 3000էն աւելի կը համարուի։ Բայց Հէրիկուրի կռիւը վճռական յաղթութիւն մ'էր Գերմանացւոց համար Գաղղիացւոց բանակին կէս թուովը։ Վէրթէրի անունը ամբողջ Գերմանիոյ մէջ մեծ ժողովրդականութիւն ստացաւ, մինչեւ իրեն տրուեցաւ վանան Գերմանիոյ տիտղոսը։ Գուլիէլմոս թագաւորը երախտագիտութեան նամակով մը, իրեն տուաւ գերմանական ամենէն մեծ շքանշանը. Գերմանիոյ ամեն կողմէն նուէրներ ղրկուեցան իրեն. ամենքը ըմբռնած էին ըրած պաշտպանութեան կարեւորութիւնը և դիւցազնութիւնը։ Զօրավարն Մանդէֆֆէլ Պոմերիանիայի և վեսթֆալեան գնդերով որոց կը հրամայէին զօրավարքն Ֆրանսէքքի և Թասդրով ճամբայ ելած էր Վէրթէրի օգնութեան հասնելու։ Մանդէֆֆէլ Տիժոնի առջեւ, ուր ամրացեր էր Գարիբալդի 25,000 կամաւորներով, թողուց երկու ջոկատք որոց կը հրամայէր զօրավարն Գէթլէր և ինքը յառաջեց դէպ ի Դէւլ, որ երկաթուղեայց միութեան կեդրոնն էր հոն արգիլելու Բուրբաքիի բանակին պաշարը։

Զօրավարն Գէղլէր երեք օր շարունակաբար յարձակեցաւ Գարիբալդիի վրայ որ ամրացեր էր Տալան և Ֆոնթէն, Դիժոնի մօտ բարձունքներուն վրայ, բայց միշտ վանուեցաւ, կորսնցնելով նաեւ դրօշակ մը[1]։

---

1. Այս դրօշակը խառնուրդի ժամանակ ձեռք չէին բերած, այլ յետոյ գտած էին արիւնաթաթախ՝ պոմերանիացի զինուորաց դիականց կոյտերուն ներքեւ։ Ինչպէս Գարիբալդի, ազնուական մտածութեամբ մը, նամակով մը իմացուց առ Գէղլէր դրօշակը ձեռք բերելուն պարագայքը, որ մեծ պատիւ կը բերէր պոմերանիացի գունդին։

Գաղղիացի բանակը Զուիցցերի կը դիմէ։

7. — Ֆրանսէքքի և Ֆասդրով զօրավարաց գունդերը միանալով Վէրթէրի հետ չուեցին դէպ ի Տէզ և պատեցին Բուրբաքի զօրավարին բանակը, որուն ուրիշ ճար չէր մնար, բայց եթէ անձնատուր ըլլալ և կամ անցնիլ չէզոք երկիր մը, ի Զուիցցերի։ Բուրբաքի հեռագրեց Բորդոյի Նուիրակութեան որ Պոնդարլիէի ճամբով կուզէր անցնիլ ի Լիոն Լը Սոլնիէ կամ ի Բուրկ։ Գամբէտտա հեռագրաւ խստիւ արգիլեց այդ ծրագրին գործադրութիւնը։ Գաղղիացի բանակը ահաւոր վիճակի մէջ էր գրոյէն տասն աստիճան վար ցուրտով, առանց ապրուստի առանց մթերքի։ Յունուար 27ին Բուրբաքի զօրավարը երբ հասաւ ի Բրզանսոն անկարելի տեսնելով ուրիշ կերպ գործել քան ինչ որ առաջարկեր էր Բորդոյի Նուիրակութեան և վախնալով որ ամբաստանուի իբր մատնիչ, ատրճանակի հարուած մը պարպելով գլխուն, ուզեց մեռնիլ։ Ի սկզբան որչափ որ մեռեալ կարծուեցաւ, սակայն միայն ծանր վիրաւորուած էր և տարուեցաւ ի Լիոն։

Բանակին հրամանատարութիւնը ստանձնեց զօրավարն Կլէնշան, որ նոյնպէս անմիջապէս հրաման ստացաւ թողուլ Պոնթարլիէի նահանջին ծրագիրը, բայց ա՛լ ժամանակը անցեր էր և սկսեր էր ցաւալի նահանջը. դժուար ճամբաներէ միշտ կողերնին ունենալով զԳերմանացիս, որոնք Յունուար 27ին Սոմբակուր և Շաֆֆուա գիւղերուն քով յարձակելով Գաղղիացւոց վրայ ձեռք բերին տասը թնդանօթք, եօթը միդրայեօզք 4000 գերի, յորս երկու զօրավարք և 46 սպայք։ Գերմանացիք հետեւեալ օրերն շարունակեցին իրենց յարձակումները և գերելոց թիւը հասուցին 15,000ի։ Գաղղիացի բանակին անցած տեղերը ձիւներուն վրայ կը տեսնուէին անօթութենէն և ցրտէն մեռած զինուորաց և ձիերու դիակներ, ասդիս անդին ձգուած կառքեր և սայլեր, նահանջ մը որ չունէր բնաւ օրինաւոր կազմակերպութիւն և ընթացք մը և որ մեծ նախատինք բերած է գաղղիական բանակին։ Զօրավարն Կլէնշան ունենալով իր ձեռաց ներքեւ 80,000էն աւելի զինուոր, բա-

նակցութեան մտեր էր զուիցցերացի Հերձոկ զօրավարին հետ և դաշնադրեր էր որ գաղղիացի գունդերը յանձնեն իրենց զէնքերը և մթերքը և այնպէս անցնին սահմանագլուխը։ Զուիցցերացիք մեծ սիրով հիւրընկալեցին դժբաղդ և յոգնած զինուորները։ Միայն զօրավարն կրըմէ որուն յանձնուած էր յառաջապահը, կրցաւ հեծելոց գունդերուն հետ ամենայն բարեկարգութեամբ ազատել իր գունդերը առանց Զուիցցերի մտնելու։

Այս միջոցիս Գաղղիոյ պատերազմի պաշտօնեայն հրամայած էր Գարիբալդիի, գերմանացի բանակը նեղել, և ստիպել որ ճակատնին փոխեն. միանգամայն Կլէնշանի օգնելու։ Գարիբալդի ունէր 50,000 զինուոր և 90 հրանօթք. իր սովորական երագութեամբ Յունուար 29ի երեկոյ բռնեց զՄոն Ռոլլան՝ Դոլի մօտ։ Պրուսիացիք անմիջապէս պարպեցին զԴոլ։ Գարիբալդի երբ կը պատրաստուէր հալածելու պրուսիացի գունդերը, Բորդոյէն լուր առաւ զինադադարման, որով և իրեն կը պատուիրուէր անմիջապէս թշնամութիւններէ դադրելու։

Սակայն Գարիբալդիի պէս չվարուեցաւ պրուսիացի զօրավարը որ կը համարէր իրաւունք ունենալու դեռ պատերազմը շարունակելու. և ասոր պատճառը՝ դաշանց մէջ յօդուածի մը թիւրիմացութեան պատճառաւ, որ ապա շատ վէճերու նիւթ եղած է երկու ազգաց մէջ իբրեւ պատուոյ խնդիր մը[1]։

Գարիբալդի թշնամութիւնքը դադրեցուցած ժամանակ, պրուսիացի զօրավարը իր գունդերը յառաջ կը

---

1. Զինադադարումը ստորագրուեցաւ Փիւլ Ֆավրի և Ռիսմարքի մէջ։ Փիւլ Ֆավրը անկարող էր վիճանալու գաղղիական բանակներուն կացութիւնը, կը համարէր որ Բուրբաքի և Գարիբալդի միացած ըլլան։ Այդ բան դաշանց Զինադադարման Բուրբաքիի բանակը ազատ էր կոուելու որով և Գարիբալդի եւս։ Գերմանացի զրիչք յանցանքը գաղղիացի քաղաքագիտաց և մանաւանդ Գամբէտտայի կու տան որ հրահանգները որոշ կերպով չհաղորդեց զօրավարաց. և պրուսիացի զօրավարաց Զինադադարման գծէն դուրս պատերազմը շարունակելը, կ'ըսեն, դրժումն չէր դաշանց, ինչպէս հրատարակեցին Գաղղիացիք։

մղէր խափանելու Կլէնշանի անցքը ի Զուիցցերի և պաշարելու զԳարիբալդի։ Այն ատեն Գարիբալդի ալ փետրուար 1ին թողուց զԴիժոն և դիմեց դէպ ի Լոն Լը Սոլնիէ, օգնելու Կլէնշանի. և երբ հասաւ Բուրկ՝ իմացաւ անոր Զուիցցերի մտնելը։

Ընտրութիւնք. — Տարաձայնութիւնք Պարիսու և Բորդոյի մէջ. Գամբէտտա կը քաշուի. — Ազգային ժողովք։

8. — Ըստ երկրորդ Յօդուածի Զինադադարման Ազգային պաշտպանութեան վարչութիւնը Յունուար 29ին քուէարկութեան կոչեց ընտրութեան իրաւունք ունեցողները, որոնք պիտի ընտրէին 750 նուիրակք և ատոնք պիտի սահմանէին պատերազմի շարունակութիւնը և կամ հաշտութեան մը դաշինքները։ Գամբէտտա ընտրելեաց թիւէն կուզէր հանել կայսրութեան ժամանակի բարձր պաշտօն վարող անձինք։ Բիսմարք կոմսն բողոքեց որ այդ բռնութիւն մ'էր հասարակաց կարծեաց և այդ օրինակ ընտրուած Ազգային ժողովք մը, չէր կրնար ազգային երեսփոխանութիւն մը համարուիլ և ազգային կենսական խնդրոց վրայ սահմանել։ Պարիսէն Բորդո մեկնեցան Ժիւլ Ֆաւրը և Լյուիէն Արագօ, որպէս զի համոզեն Բորդոյի Նուիրակութիւնը և ամենայն ինչ ըստ դաշանց գործելու։ Գամբէտտա չուզեց տեղիք տալ և երբ տեսաւ որ Ազգային Պաշտպանութեան վարչութիւնը չէր ուզեր իր կամաց հետեւիլ, նեղացած քաշուեցաւ իշխանութենէ և Լյուիէն Արագօ եղաւ պաշտօնեայ Ներքին գործոց։ Ընտրութիւնք սկսան կատարուիլ փութով ամեն կողմ։ Թիւէր ընտրուեցաւ 27 գաւառաց մէջ, Գամբէտտա ինը տեղ, Ժիւլ Ֆաւրը ութ՝ Գարիբալդի չորս տեղ. Ժոէնվիլի իշխանը երկու տեղ և դ'Օմալ դուքսը մէկ տեղ[1]։

Փետրուար 12ին Ազգային ժողովքին բացումն եղաւ Բորդոյի մեծ թատրոնին սրահին մէջ, ծերագոյն երես-

1. Գարիբալդի ժողովոյն բացման երկրորդ օրը, ուզելով խօսիլ, նախագահը նիստը վերցուց։ Արդէն դիտեր էր նա, յետ այնքան վաստակոց, Գաղղիացւոց մեծամասնութեան առ ինքն ցրտութիւնը և ոմանց մանաւանդ կղերականաց արհամարհանքը։ Անմիջապէս Քողուց ժողովքը, հրաժարեցաւ երեսփոխանութենէ և քաշուեցաւ իր Կարբէրա կղզին։

փոխանին նախագահութեան ներքեւ։ Փետրուար 16ին Ժիւլ Կրէվի 536 քուէարկուաց մէջ, 519 քուէիւք ժողովքին նախագահ ընտրուեցաւ։ Եւ երկրորդ օրը գրեթէ միաձայնութեամբ երեսփոխանաց՝ Թիէր անուանուեցաւ Գլուխ գործադիր իշխանութեան։ Ազգային ժողովքին մէջ երկու մեծ կուսակցութիւնք՝ Միապետականք և Հասարակապետականք, մրցելով իսկ իրենց կուսակցութեան յաղթանակը, և չունենալով իսկ վստահութիւն Թիէրի անկեղծութեան վրայ, որ թէ միապետական երեւցեր էր և թէ հասարակապետական[1], ապագայի յաղթանակի յուսով, երկաքանչիւր կուսակցութիւնն ալ իր քուէն տուեր էր Թիէրի։

Թիէր անմիջապէս ձեւացուց իր պաշտօնարանը և Փետրուար 19ին զայն իմացուց ժողովքին. Դիւֆոր՝ Արդարութեան, Ժիւլ Ֆաւրը՝ Արտաքին Գործոց, Լոնէ Պիկար՝ Ներքին Գործոց, Ժիւլ Սիմոն՝ Հանրային կրթութեան, դը Լարսի՝ Հասարակաց Աշխատութեանց, Լամբրէքդ՝ Երկրագործութեան և Վաճառականութեան, զօրավարն Լրֆլօ՝ Պատերազմի, Ծովակալն Պոտիւօ Ծովային Զօրութեան։ Ապա Թիէր կարդաց իր վարչութեան ծրագիրը, որ կը կայանար «Որչափ կարելի էր փութով օտարին գրաւմանը վերջ մը տալ պատուաւոր հաշտութեամբ։ Վերջը խաղաղել, կազմաւորել, բարձրացնել ազգային վարկը և ոգեւորել աշխատութիւնքը»։ Իւր խօսքը մեծ ծափահարութեամբք ընդունուեցաւ։ Կայսրութեան ժամանակ իր հռետորական և հաշուած խօսքերը եղած սխալմունքներուն դէմ, իր գուշակութեանց կատարումը, հիմայ բնականապէս արտասովոր հեղինակութիւն մը կու տային իրեն. որով սակայն չգեղծաւ ինչպէս կը պատահի այսօրինակ պարագայից մէջ։ Թիէր վարչութեան գլուխ ընտրուած օրը Անգլիոյ,

---

1. «Ծանօթ են Թիէրի առ Գամբէտտա և սորա առ Թիէր տուած յորջորջմունք։ Թիէր զԳամբէտտա «Կատաղի խենթ» կը կոչէր և Գամբէտտա զԹիէր «Աղիտաբեր ծեր»։ Հաճորոյ Թիէր. Գ. Ա.

Աւստրիոյ և Իտալիոյ դեսպանք այցելեցին իրեն, ծանուցանելով իրենց Պետութեանց ճանաչումը։ Նոյնը ըրաւ քիչ օր վերջը Ռուսիա, իսկ Գերմանիա պիտի ընդունէր խաղաղութեան ստորագրուելէն վերջը։ Թիէր անմիջապէս մեծ Պետութեանց քով դեսպանները անուանեց, յորս և մարքիզն Վոկիւէ, որ Կ. Պոլիս ղրկուեցաւ։

Փետրուարի 17ի Ազգային ժողովքի նստին, Ալզասի երեսփոխանն Քէլլէր, յանուն Ալզասի և Լորէնի ամեն երեսփոխանաց ծանոյց՝ որ այդ երկու գաւառները, որք երկու դարերէ ի վեր միացած են Գաղղիոյ և մասնակից եղած են անոր ուրախ և տխուր օրերուն, կը յայտարարեն Գերմանիոյ և բոլոր Եւրոպիոյ որ բնաւ չեն կրնար Գաղղիայէն բաժնուիլ, և ո՛ր և է միջոցով պատրաստ են ամեն ժամ սկսելու պատերազմը, այսօր, վաղը, ե՛րբ ըլլայ։ Կը խնդրէր Թափանձագին, որ ոչինչ համարուի ամեն դաշինք որ իւր հայրենիքէ մաս մը կը կտրէ ի նպաստ օտարին. «Կ՚երդնունք յանուն զմեզ ղրկողաց, յանուն մեր որդւոց և անոնց սերնդոց, որ յաւիտեանս պիտի ջանանք ձեռք բերելու ո՛ր և է միջոցներով յափշտակողներուն դէմ»։ Այս բողոքոյն ընթերցումը մեծապէս յուզեց բովանդակ ժողովքը։ Քէլլէր անմիջական որոշողութիւն մը խնդրեց։ Ազգային ժողովքը յետ չորս ժամ խորհրդակցութեան, քուէարկեց հետեւեալ բանաձեւը «Լսելով համակրանօք Քէլլէրի և իր ընկերաց յայտարարութիւնը, Ազգային ժողովքը բանակցելու համար նուիրակաց իմաստութեան և հայրենասիրութեան կը յանձնէ զայն»։ Այս բանաձեւը մեծամասնութեան կողմանէ ընդունելի եղաւ, որով պաշտօնական Գաղղիա սկսեր էր ըմբռնել ընելիք զոհողութիւնը։

9. — Զինադադարման պայմանաժամը լմննալու մօտ էր և գաղղիացի իշխանութիւնք բռնադատուած էին երկարաձգումն խնդրելու։ Գերմանացիք չէին ուզեր շնորհել զայդ մինչեւ որ իրենց չյանձնուի Բէլֆոր, զոր չորս ամսէ ի վեր պաշարած էին։ Յունուար 26ի գիշերը Գերմանացիք բուռն յարձակում մը ըրած էին քաղքին Բէլֆոր։

վրայ, զոր արութեամբ կրցեր էր վանել հրամանատարն Դանֆէր։ Անկէ վերջը Գերմանացիք կանոնաւոր խիստ պաշարումն սկսան. որով այն ցուրտ եղանակին խեղճութիւնը հիւանդութիւնը և անօթութիւնը տիրեց քաղաքին վրայ։ Ռմբակոծմամբ ժայռերուն վրայ շինուած երկու բերդերը կործանուեցան. Գերմանացիք օրէ օր անձնատրութեան կը սպասէին. սակայն Բէլֆոր այն ահաւոր զոհողութեանց մէջ երդուընցեր էր դիմանալու մինչեւ վերջին կէտը։ Զուիցցերացի նուիրակութիւն մը, մարդասիրական զգացման համար միայն, խնդրեր էր գերմանացի Տրէսքով զօրավարէն հրաման տալ, որ գոնեայ տղաքները և կնիկները Զուիցցերի տարուին։ Գերմանացի զօրավարը մերժեց և կրկնեց անձնատուր ըլլալու պահանջը։ Դանֆէր հրամանատարը պատասխան տուաւ որ Բէլֆոր մահուընէս վերջը կրնայ անձնատուր ըլլալ։ Եւ սակայն երբ եկաւ ժամանակը որ հարկ էր երկարել Զինադադարման միջոցը. այն ատեն կոման Բիսմարք պահանջեց Բէլ ֆորի անձնատուր ըլլալը, ապա թէ ոչ՝ պատերազմը պիտի սկսէր։ Այն ատեն ֆիւլ ֆաւվրը հրաման ղրկեց Դանֆէրի որ քաղաքը յանձնէ Գերմանացւոց։

Գերմանացիք մտան Բէլֆոր, բայց նկատողութեան առնլով պահանորդ զօրքին արի պաշտպանութիւնը, հրաման տրուեցաւ որ պահանորդը մեկնի զինուորական պատուով. և 12,000 զինուորք փետրուար 16ին թողուցին քաղաքը մինչ կը մտնէին գերմանացի գունդերը։ Այսպէս Զինադադարումը երկարաձգեցաւ քիչ օր եւս և պատերազմ սկսուելու տագնապը գրեթէ բոլորովին անհետացաւ։ Թէպէտ կար Գաղղիոյ մէջ մաս մը որ պատերազմի շարունակութիւնը կը պահանջէր, որոց գլուխ էր Գամբէտտա և որուն կը միանային Պարիսու երեսփոխանք և կարմիր կոչուած կուսակցութիւնը։ Նոյն իսկ զօրավարն Շանզի կը համարէր որ Գաղղիա դեռ ունի այնքան բանակք, որոնցմով կարող էր պատերազմը շարունակել։ Սակայն Ազգային ժողովքը և Թիէրի վարչութիւնը բոլորովին տարբեր կը մտածէին. ըմբռնած էին

երկրին և բանակին կացութիւնը և հետամուտ էին պատուաւոր խաղաղութեան մը։

Խաղաղութեան դաշնադրութեան ստորագրուիլը։

10. — Այդ դաշինքը կնքելու համար ի Վէրսայլ ղրկուեցաւ Թիէր իբրեւ գլուխ գործադիր իշխանութեան, յետոյ միացաւ իրեն նաեւ Ժիւլ Ֆաւր՝ իբրեւ Պաշտօնեայ Արտաքին Գործոց, որ արդէն կանխապէս բանակցած էր Բիսմարք կոմսին հետ։ Բայց հաշտութեան մը պարագայք նոյն չէին ինչպէս քանի մը ամիս առաջ, յորում Բիսմարք ետեւէ էր խաղաղութիւնը կնքելու[1]։ Կոմսն Բիսմարք վճռաբար ծանոյց որ ամբողջ Ալզաս և Լորէնի մաս մը որուն մէջ էին Մէց և Դիէդէն Հոֆէն պէտք էին Գերմանիոյ մնալ[2]։ Ի զուր Թիէր, ամեն ջանք ըրաւ ազատելու զՄէց, առաջարկեց բերդերը հողոյ հաւասար հիմնայատակ ընել. ի զուր ջանաց այս խնդիրը եւրոպական իրաւարարութեան մը թողլու, կոմսն Բիսմարք հաստատուն կեցաւ իր պահանջներուն վրայ իբրեւ ապահովութիւն մը, կ'ըսէր, Գաղղիոյ ապագայ սպառնալեաց և իբր վճարք մը ամենածանր պատերազմին։ Անգղիա, քանի մը չէզոք պետութիւնք և նոյն իսկ Գերմանիոյ իշխանութիւններէն ոմանք, ձայն հանեցին այս աշխարհակալութեան դէմ։ Սակայն Բիսմարք տե-

---

1. Հոկտեմբեր ամսէն Բիսմարք կերպով մը իմացուցեր էր Ոլէանու Եպիսկոպոսին որ արդեօք յանձն կ'առնո՞ւր միջնորդ ըլլալ Պրուսիոյ Քաղաւորին և Ազգային Պաշտպանութեան վարչութեան մէջ։ Քահանայն Լարճէ կենսագրութիւն Գերապայծառ Դիւպանլուի (Հտ. Գ. էջ 205)։

2. Բիսմարք ըսած է որ ինքը ընաւ Լորէնը չէր ուզեր և տեղիք տուեր էր սպայակոյտին պնդելուն։ Պատմագիրն Ֆատոքար Լորէնց կը պատմէ երկարօրէն Մոլտքէի և Բիսմարքի տեսութեանց անհամաձայնութիւնքը։ Բիսմարք կը փափագէր կանխապէս դաշնադրել հաշտութիւնը կայսրուհւոյն հետ և ոչ չուեալ Պարիսի վրայ, մինչ հակառակը կը պնդէր Մոլտքէ և յետինս յաղթանակեց։ Կայսրն Գուլիէլմոս եւ ճատատուրիւն կայսրութեան. Լէճա 1902։

Վերջին ժամանակներս (1906) գաղղիական Temps լրագիրը հրատարակեց նամակներ զորս Նապոլէոն Գ գաղտ կը գրէր իր գերութեան ղղեկէն առ կոմսուհին Մէրսի. զոր ղրկեց մինչեւ ի Վէրսայլ համոզելու զկոմսն Բիսմարք հաշտութիւնը կնքելու Նապոլէոն Գի հետ. որ այս էր «պատուաւորը և մարդասիրականը»։ Բիսմարք որ գիտէր գաղղիական ազգին զգացումը և մեծամասնութեան ընդդիմութիւնը կայսրութեան, միանգամայն Նապոլէոն Գ գերի ըլլալով Գերմանիոյ, չուզեց ընդունել զկոմսուհին։

ղիք չտուաւ[1]։ Կը պահանջէր զՄէց, Ռէլֆոր և վեց միլիար։ Այն ատեն Թիէր յուզեալ գոչեց որ «երբէք չենք կրնար տալ զՄէց և զՌէլֆոր միանգամայն. դուք կուզէք կործանել զԳաղղիա դրամական տեսակէտով, կուզէք կործանել իր սահմանագլխով։ Այն ատեն առէք, մատակարարեցէք և տուրքերը ժողուեցէք, և կառավարեցէք Եւրոպիոյ առջեւ, թէ որ ձեզ թողու». Բիսմարք խընդրեց որ երթայ տեսնելու զկայսրը յետոյ նաեւ զՄոլտքէ. և յետ երկար ժամանակի դարձաւ իմացուց որ կը շնորհէր զՌէլֆոր և պատերազմի տուգանքէն կ'իջնար մէկ միլիար. տուգանքին մէկ կէսը պիտի վճարուէր 1871 տարւոյն մէջ և միւս կէսը երեք տարուան միջոցի մէջ 5 առ հարիւր շահով։ Ըսաւ եւս որ ամէն մէկ վճարքի օր գիծերու մէջ պիտի քաշուէին Գերմանացիք։ Դարձեալ կոմսն Բիսմարք պահանջեց որ Մարտ 1ին գերմանացի բանակը մտնէ ի Պարիս արեւմտեան կողմէն մինչեւ դը Լա Կոնկորտ հրապարակը և Ծայ մինչեւ դաշանց վերջնական ստորագրութիւնը։ Կոմսն Բիսմարք այս ալ ծանոյց որ կրնար հրաժարիլ Պարիս մտնելէն, միայն թէ այն ատեն թողուի իրենց Ռէլֆոր։ Թիէր և Ժիւլ Ֆավրը աւելի յանձն առին անցաւոր մահացուցում մը, քան կորսնցնել հայրենի հողոյն ուրիշ մաս մ'ալ։

Ասոնք էին հաստատուն խաղաղութեան նախագծերը։ Զինադադարումը երկարաձգուեցաւ մինչեւ Մարտի 6ը։ Թիէր և Ժիւլ Ֆավրը մեկնեցան երեկոյեան ի Պարիս։ «Վէրսայլէն մինչեւ Պարիս Թիէր միակերպ լա-

---

1. Քսան և հինգ տարիներ անցնելէ վերջը զանազան տպուած Ցիշատակարանք կը յայտնեն մեզ որ Բիսմարք չէր ուզեր պահել զՄէց, ինչպէս կը պնդէր Մոլտքէ և սպայակոյտը։ Բիսմարքի և Մոլտքէի մէջ եղած կծու ընդդիմութիւնքը դադրեցնելու համար հարկ եղաւ կայսեր միջնորդութիւնը։ Բիսմարք «ինչ օգուտ ինծի տանս մէջ գաղղիացի ժողովուրդ ունենալ, կ'ըսէր». կ'ուզէր որ Գաղղիա մէկ միլիար աւելի տայ, որով Գերմանիա հարթայատակ ընելով զՄէց, ուրիշ բերդ մը շինէ Ֆալքենբէրկի և Սաարբրուքի կողմերը։ Բայց վերջապէս տեղիք տուաւ զօրավարաց։ Բիշ. Ցուշք Բիսմարքի մասին (Հտ։ Ա. էջ 322)։

ցաւ և կը սրբէր աչքերը առանց բառ մը արտասանելու[1]»։ Դաշինքը ստորագրուեր էր Փետրուար 26ին և 28ին Թիէր հասաւ ի Բորդո, Ազգային ժողովքին հաւանութեան ենթարկելու համար առաջարկները։ Սակայն երբ հասաւ, սկսաւ յուզեալ ձայնով կարդալ պայմանքը մեռելատիպ լռութեան մը մէջ, արցունքէն չկրցաւ առաջ տանիլ ընթերցումը, զոր շարունակեց Բարթէլըմի տը Մէնդ'իլէր։ Ահաւոր օր մ'էր Գաղղիոյ համար։ Ծայրայեղ մաս մը որոնց գլուխ էին Վիկտոր Հիւգո և Լդգար Քինէ. բողոքեցին Գաղղիոյ այսպէս «անդամահատուելուն» վրայ։ Ստրազբուրկի Բամբէրկէր երեսփոխանը գոչեց որ «Այդպիսի դաշինք՝ միայն Նապոլէոն Գ. մը կրնայ ստորագրել» որուն պատասխանեց Կալլոնի՝ Բոնապարդեան երեսփոխանը որ «Նապոլէոն Գ. երբէք չէր ստորագրեր այդպիսի ամօթալից դաշինք մը»։ Այս խօսքին վրայ ահաւոր աղմուկ մը ելաւ։ Թիէր բռնադատուեցաւ նիստը վերցնել. կրկին գումարուելուն, Ֆարժէ երեսփոխանը առաջարկեց քուէարկել Նապոլէոն Գ.ի ցեղին անկումը յիշխանութենէ և զայն պատասխանատու համարիլ Գաղղիոյ աւերին, արշաւանքին և երկրի կորստեան»։ Թիէր կը յորդորէր առ ժամս թողուլ այդ օրինակ ներքին վէճեր, սակայն ժողովքին մեծամասնութիւնը պնդեց և առանց քուէի ընդունուեցաւ Ֆարժէի առաջարկը։ Յետոյ վեց ժամէ աւելի վիճուեցաւ դաշանց պայմաններուն վրայ։ Թիէր ամեն համոզողական լեզու թափեց հայրենիքը ցնորական ձեռնարկներու մէջ չնետելու, ցաւակցեցաւ սրտին խորէն Ալզաս, Լորէնի երեսփոխանաց, որոնցմէ կը բաժնուէր Գաղղիա և յանձնարարեց ընդհանուր հայրենեաց փրկութիւնը։ Ազգային ժողովքը 546 քուէով ընդդէմ 107 քուէներու ընդունեցաւ Վէրսայլի դաշինքը։ Այն ատեն երեսփոխանն Գրօժան՝ յանուն Ալզաս Լորէնի երեսփոխանաց տուաւ ամենուն հրաժարականը ըսելով որ «Ա-

---

1. Ժիւլ Ֆաւրը (Հա. Գ. էջ 118)։

զաս Լորէնի ձեր եղբարքը այս վարկենիս ա՛լ բաժնուած ձեզմէ և համօրէն գերդաստանէն, իրենց հեռու տներուն մէջ, պիտի պահեն առ Դաղղիա որդիական սէր մը, մինչեւ այն օրը, յորում նորէն դառնայ գրաւելու նա իւր տեղին»։ Ժողովքը չ'ընդունեցաւ հրաժարականները։ Հրաժարականնին տուին նաեւ Ռոշֆոր, Ռան, Մալոն, Ֆէլիքս Պիա և ուրիշներ, որոնք կուզէին պատերազմին շարունակութիւնը ի՛նչ ալ ըլլայ, և կամ մինչեւ որ լաւագոյն պայմաններ ստացուին։ Վերջիններուս մէջ էր նաեւ զօրավարն Շանզի։ Նոյն երեկոյ սրտին ցաւէն մեռաւ ի Բորդօ, Ստրազբուրկի հռչականուն քաղաքագլուխը՝ Ուսուցչապետն Ֆիւս։ Ազգային ժողովքը ցրուելէն առաջ քուէարկեց 427 քուէիւք ընդդէմ 154 քուէից հաւաքուելու ոչ ի Պարիս այլ Վէրսայլ։ Այսպէս աւելի գրգռելով Պարիսու երեսփոխանաց և ժողովրդեան զգացումը։

Խաղաղութեան դաշանց՝ Բորդոյի Ազգային ժողովքէն ընդունուիլը Մարտ 1ին Պարիս հեռագրուեցաւ առ Ժիւլ Ֆաւրը, որ անմիջապէս տարաւ լուրը ի Վէրսայլ պահանջելով որ Պարիս մտնող գերմանացի գունդերը թողուն մայրաքաղաքը։

Գերմանացւոց մուտքը ի Պարիս։

11. — Մարտ 1ին պրուսիացի և բաւիէրացի գունդերը մտէր էին ի Պարիս Արք դը Տրիոնֆի և Շանզ'Էլիզէի կողմէն։ Մտնող գունդերը շարուեցան Լոնշանի մօտ ի Բուա դը Բուլոներ, քաղքին դռներուն առջեւ, ուր Գերմանիոյ նոր կայսրը շքեղ զօրահանդէս մը կատարեց. ապա գունդերը հանդարտաքայլ մտան ի Պարիս և գնացին բռնելու իրենց նշանակեալ կէտերը։ Դաղղիական խրոխտ ինքնապարծութեան ասկէ աւելի ահաւոր հարուած մը չէր կրնար ըլլալ. և սակայն պարիսցին շատ արժանավայել հանդարտութիւն մը ցոյց. տարաւ սիրով այդ անգուշակելի խոնարհութեան՝ միայն անոր համար, որովհետեւ այդ զոհողութեանը վճարք մ'էր Ռէլֆորի։ Բացի ուտելեաց կրպակներէ, ուրիշ ամեն կրպակք, գործատունք, դրամատունք գոցուած էին. ոչ մի լրագիր տպուեցաւ. պատուհան-

ներէն սեւ դրօշներ կախուած էին. կարծես Պարիս ծանր հիւանդ էր և պաշարման օրերէն շատ աւելի տխուր կերպարանք մ'ունէր։ Հետաքրքիրներու խումբ մը կուզէր մօտենալ գերմանացի զօրաց, սակայն գաղղիացի պահանորդաց գիծ մը կ'արգելուր։ Երկրորդ օրը խոնարհեցուցիչ դաշանց ստորագրութեան լուրը, շատերուն ուրախութեան առիթ էր, որովհետեւ պրուսիացիք պիտի թողուին զՊարիս[1]։

Մարտ 3ին առաւօտը պրուսիացի և բավիէրացի գունդերը նոյն հանդիսական հանդարտութեամբ, առանց ուշ դնելու գաղղիացի ամբոխէն ոմանց սուլելուն իբրեւ վրէժխնդրութիւն մը, թողուցին Գաղղիացւոց մայրաքաղաքը և սկսան քաշուիլ Մէնի արեւմտեան և հարաւային կողմերը։ Մարտ 7ին գերմանական ընդհանուր հրամանատարութիւնը թողուց նաեւ Վէրսայլի դղեակը ուր հինգ ամիս մնացեր էր։

Այն օրը կը վերջանար գաղղիա—գերման պատերազմը որ բարոյապէս ջախջախեր էր զԳաղղիա և նիւթականապէս ահաւոր վնասներ տուեր էր Գերմանիոյ, բաց ի 118,000 անձանց մահէն յորս շատ մը գիտնական անձինք։ Գաղղիա եւս կորուսեր էր 250,000էն աւելի անձինք։ Սակայն Գերմանիա իր վնասուց փոխարէն յափշտակեր էր Գաղղիոյ ձեռքէն եւրոպական գերիշխանութիւնը. և քաղաքագիտական պատգամները անկէ վերջը փոխան Պարիսէ պիտի մեկնէին Բէռլինէ։

12. — Գաղղիա արտաքին սպառիչ պատերազմէ հազիւ ազատեր էր, և ահա ինկաւ ներքին քաղաքական վայրենի պատերազմի մը մէջ, որ յայտնի ցրցուց ռամկին բարոյական և հայրենասիրական զգացմանց անկումը. և մայրաքաղաքին ընդհանուր հոգեբանական վիճակը և հակակրութիւնը վարչութեանը դէմ։ Ար- Հասարակութիւն[2]։

---

1. Բիսմարք կառքով եկած էր մինչեւ դր Լա Կոնկորդ հրապարակը։

2. Commune. Հասարակութեան պատմութեան նկատմամբ աչքէ անցուցի հակառակընդդէմ բազմաթիւ գրութիւնք. յորս նաեւ Լիսսակարի ջատագով և պաշտօնական պատմիչ Հասարակութեան։

դէն եօթը ամսուան պաշարում մը անգործ թողուցեր էր բիւրաւոր անձինք, որոնք կ՝ապրէին քաղաքապահութեանէ ոոճիկով մը. ադոր դադրիլը բնական է պիտի ունենար տժգոհութեան ցոյց մը։ Ըսած է Տրոշիւ զօրավարը որ Պրուսիացւոց մուտքը ի Պարիս, մղեց զժողովուրդը ապըստամբութեան. և մանաւանդ այն ժողովուրդը որ արդէն գրուած էր Հանրազգային ընկերութեան որ Պարիսու մէջ մօտ 80,000 անդամ ունէր։ Աւելցնենք ասոր վրայ որ արդէն ժողովուրդը ունէր զէնքեր կռուելու համար։

Գաղղիա—պրուսիական պատերազմին ժամանակ յայտնի տեսնուած էին խումբ մը անձանց ջանքերը հասարակութիւն մը հաստատելու, բայց ձեռքերնին զէնք չունէին. կը պակսէր այդ պարագայն, զոր կրցան ստանալ պատերազմէն վերջը։

Գերմանիոյ հետ դաշնադրուած Զինադադարման համեմատ, դեռ Պրուսիացիք Պարիս չմտած, բոլոր զինուորք զինաթափ պիտի ըլլային և զէնքերը պիտի յանձնուէին Գերմանացւոց։ Այս պայմանէն ազատ էին միայն 10,000 զինուորք որոնք կարեւոր էին ներքին հսկողութեան համար և ազգային պահապանք՝ որոնց չդպչիլը խոհեմութիւն համարուեցաւ։ Ըստ այս դաշանց քաղքէն դուրս բերդերուն թնդանօթները յանձնուեցան Գերմանացւոց և կարգաւ պիտի յանձնուէին նաեւ քաղքին պարսպաց վրայ եղած հրանօթները։ Բայց ադոնց մէջ կային թնդանօթներ, որոնց ազգային պահապանք իրենք զիրենք տէր կը համարէին, որովհետեւ շինել տուեր էին մէջերնին կամ ժողովրդեան ստորագրութեամբ։ Ազգային պահապանք վախցան որ անոնք ալ յանձնուին թշնամւոյն և զանոնք քաշեցին տարին 13դ շրջանակին մէջ տ՝Իտալի և Վոժի հրապարակները, Մարէ, Բէլվիլ, Ամէն Դրնիի հրապարակը և Մոնմարտրի կողերը։ Այդ թնդանօթներուն պահպանութեան համար կամաւոր պահապաններ հաստատեցին։ Արդէն ազգային պահապանք փետրուարի մէջ կեդրոնական ցանձնաժողով մը կազմեր էին կանոններով հանդերձ և սկսեր էին

ինքնագլուխ գործել չհնազանդելով իրենց հրամանատարին՝ զօրավար Կլէման Թոմայի։

Քաղաքացւոց լրջախոհ մաս մը վարչութեան հասկցուց որ վտանգաւոր էր այդ թնդանօթները այսպիսի անձանց ձեռքը ձգել։ Թիէր որ գլուխ էր գործադիր իշխանութեան, հրաման տուաւ Մարտ 17ին գիշերը զանոնք վերցնել։ Նախորդ առաւօտուընէ մայրաքաղաքին պատերուն վրայ հրաման մը կպցնել տուաւ, որուն ներքեւ ստորագրած էին նաեւ բոլոր պաշտօնեայք, որուն մէջ կը ծանուցանէր թէ թնդանօթք պիտի գրաւուէին, և դատաստանի պիտի կանչուէին այն անձինք, որոնք իրենք իրենց գլխուն կը համարէին վարչութիւն մը հաստատել։ Առաւօտեան ժամը 2ին վարչութիւնը Լըկոնդ և Կլէման Թոմա զօրավարաց հրամանատարութեան ներքեւ՝ գունդեր և զինուորական սայլեր ղրկեց Մոնմարտրի թնդանօթները վերցնելու համար։ Սակայն կազմածոց նուազութեան պատճառաւ, ուշացաւ գործադրութիւնը, մինչեւ լուրը տարածուեցաւ թաղական շրջանակին ամեն կողմ. և ազգային պահապանք զինուած տներնէն դուրս ելան և փութով սկսան փողոցներուն մէջ պատնէշներ բարձրացնել։ Երբ կանոնաւոր զինուորք յարձակեցան քակելու Լըպիկ փողոցին պատնէշը, արիւնահեղ կռիւ մը ծագեցաւ, ուր մեռան ձիաւորաց գնդապետ մը և զինակիրներու սպայ մը։ Ազգային պահապանաց և ամբոխին մէջ խառնուեցան շատ մը կանայք և տղայք, որով կանոնաւոր գունդերը չկրցան կրակ թափել և կամ սուինով կռուիլ։ Բռնուեցան նաեւ Լըկոնտ և Կլէման Թոմա զօրավարները, զորս ամբոխը տարաւ մինչեւ Ռոզիէ փողոցը և հոն հրացանի բռնեց։

Ցայտնի էր յեղափոխութիւնը և թնդանօթներով կազմուած յեղափոխութիւն մը. անոր համար վարչութիւնը որ դեռ պաշտպանութեան վիճակի մէջ չ'էր, որոշեց թողուլ զՊարիս բոլոր պաշտօնարաններով. և Թիէր կէսօրուան ժամը երեքին մեկնեցաւ Վէրսայլ շրջապատուած ընդհանուր հրամանատարի մը պէս։ Իրեն հետ մեկնեցան նոյն իսկ Ոստիկանութեան գլուխը՝ զօրավարն

Վալանդէն և Ժիւլ Ֆէրրի քաղաքագլուխ Սէնի, որով Մարտ 18էն 19ին գիշերը կեդրոնական Յանձնաժողովը բռնեց Օթէլ դը Վիլ և անմիջապէս սկսաւ իր կառավարութիւնը։ Ամենէն առաջ սահմանեց հասարակաց քուէարկութեամբ ընտրել Պարիսու քաղաքային վարչութիւն մը և այդ ընտրութիւնք սահմանուեցան և կատարուեցան Մարտ 26ի։ Մարտ 27ին Օթէլ դը Վիլէն հռչակուեցան ընտրելոց անունները, որոնց մէջ կային Ֆէլիքս Պիա, Դըլէկլիւզ, Ասսի, Վէրմորէլ, Կուրպէ և Հասարակութեան երկու ահաւոր արիւնարբուները՝ Թ. Ֆէրրէ և Ռաուլ Ռիգօ։ Վերջինս յետոյ եղաւ նաեւ ընդհանուր դատախազ Հասարակութեան և այդ պաշտօնով ստորագրեց հարիւրաւոր սպանութիւնները։ Դոնուեցան հասարակավարիչներուն մէջ քանի մը միամիտ բարեսէր փառասէրներ ալ, ինչպէս ծերունին Շարը Բէլէ, որ միշտ ջանաց ազատել մահուան դատապարտեալները, դը Վիլ, Ժուրդ և այլք, զորս յետոյ չնեղեց Վէրսայլի վարչութիւնը երբ տիրեց Պարիսու։

Հասարակութիւնը անմիջապէս կազմակերպեց նաեւ բանակ մը, որուն առաջին հրամանատարը եղաւ Շարլ Լիւլիէ, ապա անոր յաջորդեցին Դիւվալ, Բէրժըրէ, Լոզ, որոնք իրենք գիրենք զօրավար անուանեցին և որոնց պաշտամունքը շուտ շուտ լմնցան գործոց յաջող չ'երթալուն համար։ Բանակին զօրավարն էր Դոմպրովսքի լեհ զօրավարը. արդէն բանակը լի էր լեհ, անգլիացի, գերմանացի, իտալացի և սպանիացի փախստականներով։ Հասարակութիւնը իբրեւ հաւասարութիւն, կը բռնադատէր որ ամենն ալ զինուոր ըլլան, սկսաւ կռուիլ կրօնքի և իշխանութեան գաղափարաց դէմ։ Ինքնիրեն բարոյական մը ուզեց հնարել յափշտակելով ուրիշներուն սեպհականութիւնքը և սպաննելով տարբեր կարծիք ունեցողները։ Վճռեց Վանդոմի հրապարակին Նապոլէոնի սեան բարձումը որ էր իրեն համար «Յուշարձան մը բարբարոսութեան անբանական ուժոյ, սուտ փառաց և դրժումն համազգային իրաւանց և եղբայրսիրութեան»։ Սակայն իր ամեն ջանքովն հան-

դերձ չկրցաւ Դաղղիոյ դրամատունը խանգարել, որովհետեւ դրամի պէտք ունէր և որուն գլուխ դրած էր Շարլ Բէլէ ծերունին որ միացաւ օրինաւոր պաշտօնէից և Դրամատունը փրկեց։ Հասարակութիւնը կրթական վճիռներ ալ տուաւ որոնք բանի չ'եկան. որովհետեւ ոչ մէկ պաշտօնեայ կը հնազանդէր բարձրագունին. շատերը կը ջանային յափշտակել և ապրիլ զեղխութեամբ ու անառակութեամբ։ Շարունակ նոր հրովարտակներ կը ստորագրէր։ Եւ եթէ եղեւ ամբողջ Հասարակութեան միջոց նշանաւոր հրաման մը այն եղաւ որ՝ առաջին անգամ հրամայեց Արհեստից վարժարան մը ռամկին տղայոց համար։

Բայց Հասարակութեան ամենէն մեծ կռիւը կրօնքի դէմ եղաւ։ Յրուեցան միաբանութիւնները, փակուեցան կրօնաւորաց և կուսանաց վարժարանները. բանտերուն մէջէն պատարագ և խոստովանանք արգիլուեցան, վերցուեցան խաչք և կրօնական աղօթք դպրոցներէն. և հաստատուեցան Առաջին Յեղափոխութեան Սարսափի օրէնքները։ Եւ որպէս զի վախցընէ Վէրսայլի վարչութիւնը, իբրեւ պատանդ կալանաւորեց Պարիսու դ'Արբուա արքեպիսկոպոսը, Բոնժան նշանաւոր դատաւորը, ուրիշ քահանայք, կրօնաւորներ և անուն ունեցող քաղաքացիք և մինչեւ զինակիրներ, և ամեն մէկ ձախող լուրի վրայ կը սպառնար պատանդները սպաննելու։

Վէրսայլի վարչութիւնը. — Հասարակութեան հետ պատերազմները։

13. — Հասարակութեան փութկոտ մոլեգնութեան համեմատելով, Վէրսայլի վարչութիւնը, ընդերկար անգործ մնաց։ Պատրաստ բանակ մը չ'ըլլալով, վերջապէս յանձնուեցաւ Մակ Մահոն մարաջախտին, որ Սէդան առած վէրքերէն բժշկուեր էր, մնացեալ զինուորներէ և Գերմանիայէ դարձող գերիներէ բանակ մը կազմէ Պարիսու տիրելու համար։ Մակ Մահոն ձեւացուց բանակ մը և զինուորական գործողութիւնք սկսան Ապրիլ 2ին. և Ապրիլ 3ին առաջին քաղաքական պատերազմը եղաւ ի Կուրբբվուա։ Վէրսայլի զօրաց կը հրամայէր զօրավարն Վինուա և Հասարակութեան գունդերուն կը հրամայէին Բէրժերէ և Ֆլուրէնս։ Նոյն օրը Շադիյոնի

տափարակի կուոյն մէջ գերի ինկաւ Հասարակութեան զօրաց ընդհանուր հրամանատարը Դիւվալ՝ և անմիջապէս հրացանի բռնուեցաւ։ Փիչ օր վերջը Նէյլիի մօտ յարձակման մը ժամանակ Ֆլուրէնս՝ տան մը մէջ սրով խողխողուեցաւ զինակրէ մը։ Հասարակութիւնը Ապրիլ 3ին իր զօրաց ընդհանուր սպարապետ, կամ ինչպէս
1871 կրսուէր այն ժամանակ, Նուիրակ Պատերազմական Պաշտօնարանին անուանեց զզօրավարն Գլիւզբրէ, երբեմն հրամանատար որսորդ գնդի, որ և զօրավարութիւն վարած էր յԱմերիկա, Միացեալ Նահանգաց ծառայութեան մէջ։ Կլիւզբրէի սպայակուտի գլուխ տրուեցաւ Ռոսսէլ հազարապետը, որ գաղղիա–գերման պատերազմին մէջ Նրվէրի բանակին հրամանատար եղած էր։ Կլիւզբրէ իր բանակը երկուքի բաժնեց, մին պիտի կենար ի Նէյլի և միւսը Ժանտիյի. առաջնոյն պիտի հրամայէր զօրավարն Դոմբրովսքի, երկրորդին զօրավարն Վրոմբլէսքի, երկուքն ալ լեհացիք։ Ապրիլ 30ին Հասարակութեան գունդերը ձգեցին Իսսիի բերդը, որուն անմիջապէս տիրեցին Վէրսայլի գունդերը։ Կլիւզբրէ կրկին զայն ձեռք բերաւ, բայց ուրիշ անյաջողութիւնք պատճառ եղան, որով Հասարակութիւնը զինքը բանտել տուաւ և տեղը դրաւ զՌոսսէլ հազարապետը[1]։

Մայիս 9ին յետ մոլեգին կուոյ մը որ երկու օր տեւեց, Հասարակութիւնը վերջնականապէս թողուց Իսսիի բերդը։ Ռոսսէլ նեղացաւ և երկրորդ օրը մայրաքաղաքին որմոց վրայ կպցնել տուաւ որ «Երեքշաբթի դրօշը կը ծածանի Իսսիի վրայ, զոր լքեալ թողուց պահանորդը»։ Հասարակութեան պետերը բարկացան այս հրատարակութեան վրայ և հրաման ելաւ կալանաւորելու զՌոսսէլ որ փախաւ պահրտուեցաւ մինչեւ Հասարակութեան անկումը[2]։ Իր տեղը Պատերազմի Նուիրակ

---

1. Գլիւզբրէ բանտը մնաց մինչեւ Մայիսի 21 և յետոյ ազատ արձակուեցաւ։ Գլիւզբրէ գնաց օտար երկիրներ և շատ տարիներ վերջը հրեսփոխան եղած է Գաղղիոյ խորհրդարանին։

2. Հանչցուելով յետոյ Ռոսիկանութենէն, գատաստանի կանչուեցաւ և Թ. Ֆէրրէի հետ Սաղորիի տափարակին վրայ հրացանի բռնուեցաւ։

դրուեցաւ Դրլէքլիւզ որ արտաքսապէս Հասարակութեան շահերը նայելու ատեն, միանգամայն գաղտ Վէրսայլի վարչութեան հետ կը բանակցէր բանալ մայրաքաղաքը եթէ միլիոն մը տրուէր իրեն։ Միջնորդ անձը բռնուեցաւ Հասարակութենէն և առանց դատաստանի հրացանով սպանուեցաւ։ Փիչ վերջը մեռաւ նաեւ Դրլէքլիւզ հարուածէ մը։

Մակ Մահոնի բանակը Մայիս 15էն սկսեալ գիշեր ցորեկ անդադար սկսաւ ռմբակոծել ապստամբ թաղերը։ Մայիս 21ին Հասարակութեան գունդերը թողուցեր էին Մէն Կլու և քաշուեր էին դէպ ի մայրաքաղաքին կեդրոնը։ Վէրսայլի բանակը իմացաւ որ մայրաքաղաքին մէկ դուռը անպահապան թողուեր էր և անմիջապէս հասաւ և մտաւ Պարիս, սակայն արիւնահեղ կռիւը սկսաւ փողոցներուն մէջ իւրաքանչիւր մէկ պատնէշի քով, որով շատ դժուար եղաւ յառաջելը։ Մայիս 23ին Լամիրօ և Կլէնշան զօրավարները տիրեցին Մոնմարտրի և դաշնաւորներէն գերիներ բռնեցին, զորս Փարիզ Մոնսոյի մէջ հրացանի բռնեցին։ Նոյն օրը գնդակէ մը զարնուելով մեռաւ Դոմպրովսքի Հասարակութեան զօրավարը։

Պատանդներուն սպանութիւնը. — Պարիսու հրդեհը։

14. — Թիէր Պարիս թողուցած ատեն, միտքը դրած էր որ Հասարակութիւնը շուտով պիտի խեղդուի, որով երբ լսեց նշանաւոր անձանց իբր պատանդ բանտուիլը, համարեցաւ որ շուտով կ'ազատին անվնաս։ Երբ Բլանքի ծեր յեղափոխականը գերի բռնուեցաւ Վէրսայլցիներէն, ինչպէս կ'ըսէին, Հասարակութիւնը ուզեց բանակցութեան մը մտնել և Բլանքիի ու դեռ քանի մը յեղափոխականներու տեղ առաջարկեց տալ զԱրքեպիսկոպոսը, զԲոնժան նախագահը և միւս քահանայքը։ Բանակցութեան համար մեծապէս աշխատողն էր Միացեալ–Նահանգաց Ռոշբրրն դեսպանը. որ Հասարակութեան ժամանակ շատերուն կեանքը ազատեց։ Դերապայծառ դ'Արբրուա ինքն ալ գրեց Թիէրի, սակայն յետինս միշտ յամառ իր կարծեաց վրայ, մերժեց ամեն փոխանակութիւն և լուր ղրկեց պատանդներուն որ վտանգի մէջ չէին։

Եւ սակայն Թիէր մեծապէս կը սխալէր։ Երբ Իսսիի բերդը առնուեցաւ և Վէրսայլցիք Պարիս սկսան

մտնել, պատանդներուն սպաննութեան վճիռը տրուեցաւ։ Մազաս բանդէն շատ մը նեղութիւններով, ամբոխին ձաղկանքներուն մէջէն տարուեցան գիշեր մը Գրանդ Ռոքէտ, դատապարտելոց զնդանը։ Հոն փակուեցան մութ ծակերու մէջ և երրորդ օրը մէկիկ մէկիկ յանուանէ կանչուելով, տարուեցան բանտին գաւիթը։ Պատանդները ըմբռնեցին գլուխնին գալիքը, ամենն ալ կ'աղօթէին. երբ սանդուխէ մը վար կ'իջնէին Գերապայծառ դ'Արբուա որ առջեւէն կ'երթար, դարձաւ, օրհնեց զամենը և մեղաց արձակման ձեւն արտասանեց։ Հասարակավարիչք հրելով զանոնք մղեցին պատին ներքեւ և կարգաւ հրացանի բռնեցին։ Բոնժան նախագահը հառաչած էր միայն և ըսեր էր «Ով սիրելի ամուսինս, ո՛վ սիրեցեալ զաւակներս»։ Ամենն ալ մեռան քաջութեամբ։ Սպանողները քաշեցին հանեցին արքեպիսկոպոսին մատնին և խաչը և անցուցին վզերնին, և որովհետեւ մեռելներէն ոմանք կը հեծէին, լաւ մը կոխկոտելէն վերջը, յետոյ սուիններով ծակծկեցին մարմինքը։

Ուրիշ կողմ ալ հրացանի կը բռնուէին Արկէ-յլի եօթը Դոմինիկեանք յետ շատ մը տանջանքներու։ Կայ ին ուրիշ դեռ բազմաթիւ քահանայք և գինակիրք որոնք պահուած էին վերջին օրերուն։

Հասարակավարիչք երդուընցած էին որ եթէ յաղթուին աւերակաց կոյտ մը դարձնեն զՊարիս. և Վէրսայլի բանակին յառաջելուն վրայ, կրակ տուին Լէժիոն դ'Ոնէօրի պալատան, Պետութեան հաշուէտան, Տիւլերիի և Օդէլ դը Վիլի և եթէ օրինաւոր բանակը չհասներ, բովանդակ Պարիս հնոց մը պիտի դառնար։ Սակայն արդէն Սիսսէ զօրավարը տիրած էր Լիւսսամբուրի և Պանդէոնի և ուրիշ գունդեր Մայիս 25ին բռներ էին Բիւտ դը-քայը, Աւստէրլիցի կամուրջը և գետին ամբողջ ձախ կողմը։ Աջ կողմը դեռ կռիւը կը շարունակուէր Շաթօ դ'Ոյի մէջ։

Մայիս 26ին Կլէնշան զօրավարը Սիրկ դ'Իվէր բռնեց. Լամիրօ զօրավարը հասաւ Վիլլէտի շտեմա-

բանքը, որոնք սկսեր էին հրդեհիլ և Վինուա զօրավարը գրաւեց Տրօնի և Բաստիյի հրապարակները։ Նոյն օրը Միսսէյ զօրավարը հրացանի բռնեց առանց հարցաքննութեան, Հասարակութեան անդամներէն զՄիլիէր, փոխադարձաբար Հասարակութիւնը Հաքսօ փողոցին մէջ շատ մը տանջելէ վերջը հրացանի բռնել տուաւ 52 պատանդներ, որոնք մեծաւ մասամբ հին զինուորներ էին և քահանայք։

15. — Օրինաւոր բանակը Մայիս 27ին հասաւ Բիւտ Շոմոն և Պէր Լաշէզ և Մայիս 28ին Բէլվիլի մօտ կործանեց Մակ Մահոն՝ վերջին պատնէշը։ Մարաջախտը անմիջապէս մայրաքաղաքին որմոց վրայ կպցնել տուաւ հետեւեալ ծանուցումը. «Բնակիչք Պարիսու, Գաղղիոյ բանակը եկաւ զձեզ փրկելու. Պարիս ազատեցաւ. մեր զինուորները ժամը չորսին տիրեցին ապստամբաց վերջին պատնիշին։ Այսօր կռիւը լմնցաւ. պիտի կենդանանան կարգ, կանոն, աշխատութիւն և ապահովութիւն»։

Հասարակութեան անկումը. Մակ Մահոն մարաջախտը կը տիրէ Պարիսու։

Ապստամբութիւնը նուաճուելէն վերջը սկսան խուզարկութիւնք, որոնք տեւեցին ութ տարի։ Ցանցաւորներէն մաս մը հրացանի բռնուեցան, մաս մը աքսոր ղրկուեցան Նումէա և Նոր Կալէդոնիա. յորոց շատերը յետոյ ներման արժանանալով, դարձան Գաղղիա։ Հասարակութեան կողմնակից պատմագիրք վերջին շարթուան մէջ իրենց կողմանէ Վէրսայլի վարչութենէն սպանեալոց թիւը կը դնեն 30,000։ Եթէ այս թիւը չափազանց ալ երեւայ, սակայն միշտ 10,000էն աւելի կը համարուի։ Մայրաքաղաքին այս կռիւը շատ աւելի ահաւոր և ցաւալի եղած էր՝ քան Գերմանացւոց պաշարումը և ռմբակոծումը։



ԳԼՈՒԽ ԺԱ.

ԻՏԱԼԻՈՅ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ Ի ՀՌՈՎՄ

1. Տիեզերական ժողովք Վատիկանի. — 2. Անսխալութեան վարդապետութիւնը. — 3. Իտալիա՝ Գաղղիա-գերման պատերազմին ժամանակ. – Գաղղիացի պահանորդը կը մեկնի Եկեղեցւոյ Վիճակէն. — 4. Բանակցութեան փորձեր Ս. Գահուն հետ. Իտալացւոց Եկեղեցւոյ Վիճակը մտնելը. — 5. Հռովմայ առումը. — 6. Արքունիք և պաշտօնարանք ի Հռովմ. — 7. Խօսարանական վարչութիւնք 1872էն վերջը. – Մինգէտտի պաշտօնարան. – Մահ Մանզոնիի. — Վիկտոր Էմանուէլ ի Վիեննա, ի Բէռլին. – Փոխադարձ այցելութիւնք կայսերաց. — 9. Ազակոդմեան պաշտօնարանաց անկումը. – Զախակոդմեանք. — 10. Մահ Վիկտոր Էմանուէլի. — 11. Ումբէրտոս Ա. — 12. Մահ Պիոս Թի. — 13. Ընտրութիւն Լեւոն ԺԳի։

Տիեզերական ժողովք Վատիկանի, 1869

1. — Գաղղիա—գերման պատերազմին հետեւանքն տեսնուեցաւ Յիտալիա, Եկեղեցւոյ Վիճակին նկատմամբ, ուսկից Գաղղիա հանեց իր պահանորդը և մտաւ Իտալիոյ տէրութիւնը Յեկեղեցւոյ վիճակը և ի Հռովմ։ Այս դէպքերէն առաջ ի Հռովմ հաւաքուած էին կաթոլիկ Եկեղեցւոյ գրեթէ համօրէն Եպիսկոպոսունք, Տիեզերական ժողովքի մը համար։ Եւ մենք յիշենք այն մասերը որ յարաբերութիւն ունեցան իւիք Քաղաքական պատմութեան հետ։

Պիոս Թ իր մեծ եռանդովը ընդհանուր քրիստոնէական եկեղեցեաց միութեան և բարեկարգութեանց համար, յամին 1869ի ժողովքի հրաւիրեց ի Հռովմ բոլոր աշխարհի կաթոլիկ եպիսկոպոսները։ Նոյն հրաւէրը ղրկեց

նաեւ Արեւելեան, Հռովմայ հետ անմիաբան պատրիարգաց։ Նորաղանդներուն ալ յորդոր ղրկուեցաւ մտնելու ի ծոց կաթոլիկ Եկեղեցւոյ։

Սակայն Հռովմէական Եկեղեցիէն անջատեալ քրիստոնեայ եկեղեցիներէն ոչ մին յանձն առաւ ներկայանալու, պատճառելով որ Հռովմայ Պապը չէին ճանչնար գլուխ Համօրէն Եկեղեցւոյ. և իրենք զիրենք հաւասար կը համարէին իրաւասութեամբ[1]։ Մանաւանդ լսուած էր եւս որ ժողովքին սահմանելիք նիւթերէն մին ալ պիտի ըլլար Հռովմայ Ս. Քահանայապետին ի հաւատոյս և ի բարոյականի անսխալութիւնը, երբ խօսի նա յԱթոռոյ, ըստ կաթոլիկ աստուածաբանից բացատրութեան[2]։

---

1. Այրարատ Էջմիածնայ պաշտօնական թերթը իր Մարտի (1869) թուոյն մէջ կը հրատարակէր Պօլսոյ Պօղոս պատրիարգին առ Գէորգ Կաթողիկոս հետեւեալ նամակը.

« Վեհափառ Տէր.

Հայրապետն Հռովմէական Եկեղեցւոյ Պիոս Թ. մատոյց և մեզ յաւուրս յայսոսիկ (1868. Դեկտ. 14) ի ժեռն հոգեւոր պաշտօնէից Եկեղեցւոյ իւրոյ ի մայրաքաղաքիս տետրակ իմն լատինարարբառ։ Ցեկեղոցս ասի առ մեզ լատին եկեղեցականաց ծանեալք եթէ պարունակութիւն տետրակին այնորիկ հրաւէր է ազգային եկեղեցւոյ մերոյ առ համագումար ժողովն, որոյ գումարումն ասէին լինել ի Հռովմ, յուքերորդի աւուր Դեկտեմբեր ամսոյ 1869 տարւոյ։ Մեք որպէս պարտն էր տուաք պատասխանի թէ «Ի՛ և մեր գերագոյն հայրապետ ի Ս. Էջմիածին, գլուխ Հայաստանեայց Եկեղեցւոյ, որ միայն ունի զիրաւասութիւն ի վերայ Ս. Եկեղեցւոյ մերոյ և ամենայն հոգեւոր հովուաց նորին. վասն որոյ և նմա անկ է քննադատել զհրաւիրագիրն։ Ի վեր է քան զժեռնհասութիւն մեր և որ ընդ մեօք Եպիսկոպոսաց ամենեցուն խօսիլ ինչ յաղագս բանիս այսորիկ »։ Ընդ այս յայտարարութիւն մեր մեկնեցան եկքն և թողին զտետրակն, զորոյ և զհայերէն թարգմանութիւն ահաւասիկ մատուցանեմք Ձերում Վեհափառութեան և յանձն առնեմք իմաստութեան մեծի Հայրապետիդ՝ առնել զոր արժան է։ Լսեմք եւս եթէ և այլոց վիճակաւոր Եպիսկոպոսաց Տաճկաստանի առաքեալ իցէ ի տետրակաց այտի։

Մնամք Վեհափառութեան Ձերում եւն եւն »։

Գէորգ Կաթողիկոս Փետրուար 10ին թուով կը պատասխանէ «Թէ քաջ հասու եղեալ մտաց և իմաստից թղթոյ Ս. Պիոսի Թ. ցաւիմք յոյժ, զի բաղձալին և մեզ մթութիւն զոր կամի և Փրկիչն աշխարհի և ազօթէ առ Հայր թէ «Եղիցին մի, որպէս և մեք մի եմք, անյուսալի երեւի այժմէն իսկ ի ժողովոյ այտի....»։ Ապա կը պատճառաբանէ որ միայն Քրիստոս է գլուխ Եկեղեցւոյ։ Նոյն իմաստով և աւելի քննական է Թերձակեան Արիստակէս Եպիսկոպոսին պատասխանը զոր կը հրատարակէ Մասիս 1869ի Մայիս 12 թուոյն մէջ։

2. ՑԱթոռոյ բառին մեկնութիւն բացատրուած է ժողովքին վճռոյն մէջ զոր կը գնեմք յետոյ.

Եւ որովհետեւ կաթոլիկ Եկեղեցւոյ սկզբունքն է «յերկրայս ազատութիւն», այսպէս ամենայն ոք ազատ է վիճելու վարդապետութեան մը վրայ դեռ չհաստատուած, անսխալութեան նիւթին վրայ ալ սկսան գրել և խօսիլ բովանդակ կաթոլիկ աշխարհի եպիսկոպոսունք ի նպաստ կամ հակառակ. և կարծիքները երեք խումբի բաժնուեցան։

Անհամեմատ մեծամասնութիւն մը կ'ուզէր այդ վարդապետութեան իբր հաւատոց մասն հաստատուիլը, ըլլալով այդ Եկեղեցւոյ դարուց ի դարս անսխալ վարդապետելուն երաշխաւորութիւնը՝ ի հաւատոյս և ի բարոյականի։ Ուրիշ խումբ մը, ոչ այնքան ստուար, անյարմար կը դատէր այսօրինակ յուզեալ և անկրօն ժամանակներու մէջ հռչակել այդ վարդապետութիւնը, որ փոխանակ օգուտներու, կրնար զայրացնել հակառակորդները, անջատեալ եկեղեցիները և նորաղանդ պետութիւնները։ Այս իմաստով էր գերմանացի 19 եպիսկոպոսներու Ֆուլդայէն գրած թուղթը։ Այսպէս կը պնդէին՝ Դերապայծառ Մարէ Եպիսկոպոս Ժիւրայի, Դերապ. Դիւպանլու Եպիսկոպոս Օռլէանու և Դերապ. դ'Արբուա Արքեպիսկոպոս Պարիսու. դարձեալ Կարտինալքն Շվարցէմբէրկ և Ռաուշէր. յետինս Արքեպիսկոպոս Վիեննայի։ Կար երրորդ խումբ մ'ալ ամենէն սակաւը, որ հակառակ էր այդ վարդապետութեան և ասոնց թուոյն մէջ կը համարուէին վճիռէն առաջ, Դերապ. Հէֆէլէ՝ եպիսկոպոս Ռոտտէնբուրկի. Սիրմիոնի հռչականուն կրակոտ եպիսկոպոսը՝ Դերապայծառ Աղրոշմայր։ Մեծ ազդեցութիւն ունէին այս խմբին մէջ նաեւ Մինիիի՝ Դէօլլինկէր աւագերէցը, կանխապէս ծանօթ իբրեւ աստուածաբան և հմուտ եկեղեցական հնախօսութեանց և հայրն Կրաղրի՝ գաղղիացի սրբազան պերճախօսը։

Ընդհանուր ժողովքի մը լրոյն վրայ, ի սկզբան յուզուեցան եւրոպական պետութիւնք. լրագիրք բարձրաձայն գոչեցին որ այդ օրինակ ժողովքէ վնաս կար իշխողաց անկախութեան։ Բավիէրայի պաշտօնական Հոհէնլոհէ իշխանը, Պետութեանց դեսպանաժողով մը առաջ-

արկեց «Հասարակաց շահուց պահպանութեան համար»։ Նոյն տագնապները ունեցան ուրիշ փոքր պետութիւնք։ Սակայն նախ Բայսդ, աւստրիական Պետութեան ատենադպիրը, մերժեց դեսպանաժողովոյն գաղափարը։ Ուրիշ պետութիւնք ալ հանդարտօրէն սկսան նկատել խնդիրը։ Ի Գաղղիա Էմիլ Օլիվիէ խիստ չէզոքութիւն մը սահմանեց, նոյնը ըրաւ Պրուսիա. նոյնը Իտալիա վճռեց. միայն թէ յանկարծ քաղաքական խնդիրք վիճուէին։ Սպանիա Պորտուկալ՝ չէզոքութիւն սահմանեցին. այսպէս Հոհէնլոհէի առաջարկը մերժուելով, ստիպուեցաւ թողուլ պաշտօնարանը և յաջորդեց չէզոքութիւն խորհող պաշտօնարան մը։

Տիեզերական ժողովքի բացումէն առաջ ամենայն կազմակերպութեանց նախագահեր էր Միւնիխի արքեպիսկոպոսը՝ կարդինալն Հայզաք, գերմանացի հմուտ աստուածաբան մը, օգնական ունենալով երկու յիսուսեան աստուածաբանք, Հարքն Պէրրոնէ և Շրատէր։ Ժողովքը բացուեցաւ Դեկտեմբեր 8ի, Անարատ Յղութեան վարդապետութեան հրատարակուելուն տարեդարձին, Ս. Պետրոսի Եկեղեցւոյն աջ թեւին մէջ. և ներկայ էին բաց ի Քահանայապետէն և կարդինալաց 683 եպիսկոպոսունք[1]։ Ժողովքին ընդունուեցան նաեւ Միա-

---

1. Բոլոր աշխարհի կաթոլիկ եպիսկոպոսունք 921 էին թուով. Հայ-կաթոլիկ եպիսկոպոսներէն ներկայ էին բաց ի Լէվրոյոյ հայ Արքեպիսկոպոսէն, Անտոն Պետրոս Հասուն, կաթողիկոս-Պատրիարգ Տանն Կիլիկիոյ, Գէորգ Հիւրմիւզ Արքեպիսկոպոս Սիւնեաց, Աբրահամ Մխիթարեանց Վենետկոյ, Յակոբոս Պողաճեան, Արքեպիս. Կեսարիոյ (Պաղեստինոյ) Աբրահամ Մխիթ. Վենետիկ. Եդուարդ Հիւրմիւզ Արքեպիս. Շիրակայ, Զեռնադրող հայ ծիսի ի Հռովմ. Սուքիաս Գագանճեան Արքեպիս. Անդիոքայ Աբրահամ Անտոնեանց. Մելգոն Նազարեան Արքեպիս. Մարտինի. Գրիգոր Պարիզեան Արքեպիս. Բերիոյ. Իգնատիոս Քալրպճեան Արքեպիս. Ամասիոյ. Պետրոս Աբէլեան Արքեպիս. Գերմանիկոյ. Յակոբ Պահտիարեան Արքեպիս. Տիգրանակերտի. Յովհաննէս Հաճեան Արքեպիս. Կեսարիոյ (Կապադ). Ղեւոնդ Խորխորունի Արքեպիս. Մալաթիոյ. Բարսեղ Գասպարեան Արքեպիս. Կիպրոսի. Արսէն Անճարակեան Արքեպիս. Եւդոկիոյ. Յովսէփ Առաքելեան Եպիս. Գաղատիոյ. Պետրոս Թիւքեան Եպիս. Բրուսայի. Անտոն Հալաճեան Եպիս. Արդվինոյ. Ստեփան Մելքիսեդեկեան Եպիս. Կարնոյ. Յովհաննէս Կիւրեղեան Եպիս. Տրապիզոնի. Ստեփան Խորայէլեան Եպիս. Խարբերդի։

բանութեանց ընդհանուր Աբբաները, յորս Յիսուսեանց նշանաւոր գլուխը՝ Հայրն Բէքս, իր բելճիացի Վիկտոր Բուք աստուածաբանով, բոլանտեան հաւաքածոյին հմուտ շարունակողներէն մին։

Անսխալութեան վարդապետութիւն։ 1870

2. — Պատմութեանս ծրագրէն դուրս է յիշել այն աստուածաբանական պերճախօսութիւնք որոնք տեւեցին մինչեւ Յուլիսի 18ը, յորում քուէարկութեան առաջարկուեցաւ թէ «Կ'ուսուցանենք և կը սահմանենք իբրեւ վարդապետութիւն յաստուածուստ յայտնեալ, որ Հռովմէական Քահանայապետը երբ կը խօսի յԱթոռոյ, այսինքն երբ կը վարէ պաշտօն հովուի և վարդապետի բովանդակ քրիստոնէից, կը սահմանէ առաքելական գերագոյն իշխանութեամբ, զոր Եկեղեցին պէտք է ընդունի իբրեւ վարդապետութիւն հաւատոց և բարոյականի. ունի յայնժամ աստուածային օգնականութեամբ նոյն անսխալութիւնը զոր տուաւ Քրիստոս Եկեղեցւոյ, հաւատոց և բարոյականի վարդապետութիւն մը սահմանելու ժամանակ»։ Այս վճռոյս 533 եպիսկոպոսունք այո՛ պատասխանեցին և երկու անձինք միայն ոչ ըսին։ Ասոնք որ ընդդէմ էին կամ ժամանակը յարմար չէին համարեր, հարիւրէն աւելի, նոյն օրը հեռացան Հռովմէն, քուէարկութեան ներկայ չ'ըլլալու։

Վարդապետութեան ընդունուելովը Պիոս Թ հանդիսապէս հռչակեց զայն Հովի։ յաւիտենական կոնդակով։ Սակայն դժուար էր որ անկէ վերջը ժողովքը շարունակուէր միւս սահմանուելիք բարեկարգութեան նիւթոց վրայ, որովհետեւ արդէն գաղղիա—գերմանական պատերազմը հրատարակուեր էր, և երկու ազգաց եպիսկոպոսունք կ'աճապարէին դառնալ իրենց թեմերը։ Պիոս Թ ընդհատեց ժողովքը և սահմանեց շարունակութիւնը Նոյեմբեր 11ին։

Ընդդիմակաց եպիսկոպոսունք թեմերնին դառնալով, առանձին նամակներով առ սակաւ սակաւ ծանուցին որ կ'ընդունէին Եկեղեցւոյ ընդհանուր ժողովքով սահմանած անսխալութեան վարդապետութիւնը։ Ամենէն ուշ ընդունողն եղաւ Սիրմիոնի մեծ ազգասէր Սդրոշմայր եպիս-

կոպոսը։ Պետութիւնք համոզուեցան որ այդ վարդապետութենէն իրենց վախնալիք բան մը չկար. միայն Դերմանիոյ իշխանութիւններէն ոմանք արգիլեցին վարդապետութեան պաշտօնապէս հռչակումը։ Հակառակող կաթոլիկներէն սակաւք միանալով Դէօլլինկէրի հետ կազմեցին եկեղեցի մը «Հին կաթոլիկք» անուամբ, որ չունեցաւ ոչ տարածումն և ոչ կարեւորութիւն. և ընդհանուր ժողովոյն վճռած վարդապետութիւնը մնաց իր աստուածաբանական սահմանաց մէջ։

Իսկ ժողովքը չշարունակուեցաւ Նոյեմբերի. որովհետեւ Սեպտեմբեր 20ին Իտալական վարչութիւնը մտեր էր ի Հռովմ և Պիոս Թ քաշուեր էր ի Վատիկան։

3. — Մէնաբրէա պաշտօնարանը չէր կրցած ունենալ այն ժողովրդականութիւնը, որ կարեւոր էր նոր ազգ մը կառավարելու համար։ Խորհրդարանի նախագահութեան իր առաջարկած թիկնածուն, փոքրամասնութիւն ունենալով քուէից, Մէնաբրէա հրաժարեցաւ և թագաւորը կոչեց զԼանցա բժշկապետը, նոր պաշտօնարանը կազմելու համար։ Լանցա յետ սահմանադրական շատ մը դժուարութեանց 25 օր վերջը կրցաւ ձեւացնել նոր վարչութիւնը յորում մտան նշանաւոր երեսփոխանք՝ Վիսկոնտի Վենոսդա՝ Արտաքին Գործոց, Լանցա թէ Նախագահ և թէ Ներքին Գործոց, Քուինթինո Սէլլա՝ Եղեւմտեց, Գովոնէ՝ Պատերազմի, Կորրէնդի՝ Հանրային կրթութեան, Ծովակալն Գուլիէլմոս Ակդոն՝ Ծովային զօրութեան։ Հազիւ քանի մը ամիսք անցեր էին պաշտօնարանը բացառիկ դրութեան մը մէջ գտնուեցաւ գաղղիա—գերման պատերազմին պատճառաւ։ Երկու պետութիւնքն ալ ջանացեր էին Իտալիոյ օգնութիւնը ունենալու։ Արքունեաց մէջ միտումները Գաղղիոյ համար էին, նախ Նապոլէոն Իշխանի ազգակցութեան և երկրորդ Նապոլէոն Գի այսքան Իտալիոյ ազատութեան օգնելուն համար։ Սակայն, ինչպէս տեսանք, վերջին ժամանակաց մէջ, Իուհէի պաշտօնարանը զայրացուցեր էր ազատականքը և Մենտանա տխուր վէրք մը թողուցեր էր անոնց սրտին մէջ։ Շատ քաղաքաց մէջ, յորս մա-

Իտալիա գաղղիա—գերման պատերազմին ժամանակ. — Գաղղիացի պահանջողը կը մեկնի Եկեղեցւոյ Վիճակէն։

1869 Դեկտ. 17։

նաւանդ ի Տուրին և Միլան, Դաղղիոյ հակառակ ձայներ լսուեցան և ի Ֆիրէնցէ Արտաքին Գործոց պաշտօնարանին առջեւ ցոյցեր եղան ի նպաստ չէզոքութեան և կէց-ցէներ գոչուեցան Պրուսիոյ։ Պաշտօնարանը ահապարեց ծանուցանելու պաշտօնական լրագրին միջոցաւ որ Իտալիա խիստ չէզոքութիւն մը պիտի պահէր։ Սակայն երբ ետեւէ ետեւ յաջորդեցին Դաղղիոյ պարտութիւնք, երբ կայսրութիւնը ինկաւ Սէդանով և Սեպտեմբեր 4ին յեբեւան եկաւ Հասարակապետութիւնը, Իտալիա ռամ-կապետական շրջանակները յուզուեցան և եռանդնաւո-րեցան։ Գարիբալդի հեռագրեց Սեպտեմբեր 4ի վարչու-թեան որ իր տրամադրութեան ներքեւ էր՝ և տեսանք արդէն Գարիբալդիի լեգէոնին պատերազմական արու-թիւնքը, որոց սակայն չհամապատասխանեց շնորհակա-լութեամբ մը Դաղղիա. և Գարիբալդի ու Գարիբալդեանք վշտացած դարձան Իտալիա ուր իրենց սկսածը Եկե-ղեցւոյ Վիճակաց դէմ, ի գլուխ տարեր էր Թագաւորա-կան վարչութիւնը։

Հազիւ թշնամութիւնք սկսեր էին Դաղղիոյ և Գեր-մանիոյ մէջ, Նապոլէոն Գ. կանչեց Զիվիտավէկկիայէն սակաւաթիւ պահանորդը։ Յուլիս 31ին Դաղղիոյ Արտա-քին Գործոց պաշտօնեայն դուքսն Գրամոն զայս իմա-ցուց պաշտօնապէս առ գաղղիական դեսպանն ի Հռովմ։ Անմիջապէս իտալացի ազատական երեսփոխանք պա-հանջեցին Խօսարանին և Ֆերակուտին մէջ որ իտալացի գունդերը մտնեն ի Հռովմ։ Վարչութիւնը պատասխա-նեց որ այդօրինակ գրաւում մը Իտալիոյ համար ծանր հետեւանքներ կրնար ունենալ։ Բայց երբ կայսրութիւնը ինկաւ ի Դաղղիա և Սեպտեմբեր 4ի հասարակապետա-կան վարչութիւնը հրատարակուեցաւ, որուն մէջ մտան այնպիսի անձինք որոնք բնաւ փոյթ մը չունէին Հռով-մայ նկատմամբ եղած դաշինքներուն. այն ատեն Իտա-լացի պաշտօնարանը որոշեց մտնել ի Հռովմ և պաշ-տօնական լրագիրը ճարտարութեամբ հրատարակեց որ Եկեղեցւոյ Վիճակը պիտի մտցուէր ոչ իբրեւ օտար եր-կիր մը, այլ իբրեւ ազգային հող։

Բանակցութեան փորձեր Ս. Գահուն հետ. Իտալացւոց Հռովմ գրաւելը։

4. — Եւ սակայն վարչութիւնը դեռ Եկեղեցւոյ Վիճակին սահմանքը չ'արշաւած ուզեց բանակցութեան մը մտնել ուղղակի Ս. Քահանայապետին հետ, որովհետեւ առ Ազատքին Գործոց պաշտօնեայն Անտունէլլի կարդինալը դիմունք, արդիւնք չէին ունեցած։ Սեպտեմբեր 9ին Հռովմ ղրկուեցաւ կոմսն Պոնցա դի Սան Մարտինո որ խօսարանին մէջ հակառակ խօսեր էր Հռովմայ գրաւման նկատմամբ, որպէս զի, թէ կարելի էր, համոզէ զՊիոս թ որ իրեն համար լաւ էր Իտալիոյ գունդերուն ի Հռովմ մտնելը։ Վիկտոր Էմանուէլ պաշտօնական նամակ մը գրած էր առ Ս. Պապը «Իբրեւ որդի մը, կաթոլիկ հաւատքով և թագաւորի և իտալացւոյ հոգւով»։ Նամակին մէջ կը վկայէր թէ Քահանայապետը ինչ սէր պիտի գտնէր իտալական ժողովուրդներէն և պիտի պահէր իր ազատ անկախութիւնը Տիբերի ափանց վրայ։ Սան Մարտինո կոմսը Հռովմ հասնելով ներկայացաւ Քահանայապետին և տուաւ թագաւորին պաշտօնական նամակը։ Վիկտոր Էմանուէլ անձնական նամակ մը եւս գրած էր որով կը դիմէր առ «Նորին Սրբութիւնը», բացատրելով յեղափոխական կուսակցութեանց պատրաստութիւնքը ամեն բան խանգարելու Սիկիլիոյ և Եկեղեցւոյ Վիճակին մէջ, որով ինքը՝ թագաւորը՝ անհրաժեշտ կարեւոր կը տեսնէր Իտալիոյ և Ս. Գահուն ապահովութեան համար Իտալացի գունդերուն ի Հռովմ մտնելը և քաղքին կարեւոր կէտերը բռնելը։ Նամակը կը խոստանար «Ս. Գահուն լիովին անկախութիւնը և յարգանքը» և կը վերջացնէր խնդրելով առաքելական օրհնութիւնը։ Քահանայապետը պատասխանեց նամակով մը, յորում յետ յայտնելու իրին անկարելիութիւնը, կ'աւելցնէր «Կ'օրհնեմ զԱստուած որ թողուց Ձեր վեհափառութեան կենացս վերջին օրերը լեցնել դառնութեամբ. և զիս իրեն ձեռաց մէջ կը դնեմ[1]». որով կոմսն Պոնցա դի Սան Մարտինո մեկնեցաւ առանց որ և է յաջողութեան մը։ Այն ատեն Իտալիոյ Արտա-

1. Civiltà cattolica 1871. էջ 101։

քին Գործոց պաշտօնեայն՝ Վիսկոնտի Վենոստա շրջաբերականով մը իմացուց Պետութեանց որ ստիպուած էր Իտալիա՝ գրաւելու զՀռովմ։ Ուրիշ շրջաբերական մ՚ալ ուղղեց Իտալիոյ եպիսկոպոսաց ապահովցնելու զիրենք որ այս ըրածնին չէր իբրեւ հակառակ Եկեղեցւոյ, որուն պաշտօնեայք ազատ էին ամենեւին իրենց հոգեւոր պաշտամանց մէջ։ Կարելի էր որ Վիկտոր Էմանուէլի և Վիսկոնտի Վենոստայի մտքերուն մէջ այս բացատրութիւնք մեկնութիւն մը ունենային. բայց խումբ մը Գաբիրիալտեանք և ազատականք անհամբեր էին Հռովմ մտնելու ինչ ալ ըլլայ և կը կարծէին որ այն օրը պիտի կործանէր կաթոլիկ կրօնքը քահանայապետական ժամանակաւոր իշխանութեան հետ միասին։

Իսկ ինքը Պիոս Թ անխոով ամենայն ինչ յանձներ էր ի ձեռս Նախախնամութեան։ Սեպտեմբեր 10ին մեծ հանդէսով բացաւ ժողովրդեան Սիրեհեւ ջրոց գործածութիւնը, իր մեծագործութեանց վերջինը։ Եւ որպէս զի ազատականք չնեղեն հանդարտ քաղաքացիքը, նա մանաւանդ որ լսուեր էր Իսֆայէլ Կատորնա զօրավարին Եկեղեցւոյ սահմանները անցնիլը, Սեպտեմբեր 12ին պապական զօրաց հրամանատարը զօրավարն Քանցլէր ըզՀռովմ պաշարման վիճակի մէջ դրաւ և Պապը եկեղեցիներու մէջ հասարակաց աղօթքներ յանձնեց։

Իտալացի բանակը հինգ զօրաբաժնէ կազմուած էր. երեքին կը հրամայէր ինքը զօրավարն Իսֆայէլ Կատորնա, երկրորդին Անճէլինի և ուրիշի մը Նինո Բիքզիո։ Դունդերը փութով գրաւեցին Օրտէ, Մոնտէֆիասքոնէ, Վիտէրբո, Զիվիթակաստէլլո և դիմացի սահմանագլխէն Զէպրանո և Վէրոլի, որոց, որպէս զի արիւնհեղութեան չ՚ըլլայ, Քահանայապետը զինուորները կանչել տուեր էր։ Տեղ տեղ ինչպէս Վէլլէդրի, Վէրոլի, Բանքո, Մոնտէ Սան Ճիովաննի, Պիպէռնո, Սոննինո և Պէցցէ ժողովուրդը եռագոյն դրօշը բացաւ «Կեցցէ Իտալիա» գոչելով։ Սեպտեմբեր 15ին իտալացի հրամանատարը Նինո Պիքզիո պահանջեր էր որ Զիվիտավէկկիայի սակաւաթիւ պահանորդը անձնատուր ըլլայ, և Շարէթ՝ քահա-

նայապետական հրամանատարը, գիտեր որ անկարելի էր դէմ դնել այնքան քիչ զօրքով և անձնատուր եղաւ։ Անկէ վերջը զօրավարն Կատորնա պահանջեց Քանցլէր զօրավարէն որ դէմ չկենայ իրեն՝ զինուորականապէս բռնելու զՀռովմ, բայց Քանցլէր չ'ընդունեցաւ. որով իտալացի հրամանա, տարը որոշեց յարձակմամբ և թնդանօթով անցք բանալու։

Հռովմ. — Օրէնք Ապահովաութեան։

5. — Սեպտեմբեր 20ին Կատորնա անձամբ առնլով հրամանատարութիւնը սկսաւ ումբակոծել Պորտա Սալարիայի և Պորտա Պիայի մէջ եղած հին և խարխուլ պատուարները։ Քահանայապետք շատ դարերէ ի վեր նիւթական պարիսպներով և զէնքերով չէին համարած պաշտպանել իրենց հազարաւոր տարիներու իրաւունքը և Հռովմ ապահովապէս անառիկ դիրքի մէջ չէր։ Մի և նոյն Կատորնայի յարձակած ժամանակ, Անճէլինի զօրաբաժինը կը պատերազմէր Պորտա Սան Ճիովաննի և Բիքզիօ զօրաբաժինը ի Պորտա Սան Պանկրացիօ։ Քահանայապետը պատուիրած էր որ փոքր ընդդիմութիւն մը ըլլայ միայն բողոքի համար և ոչ այլ ինչ. որով առաւօտեան ժամը 10ին իտալացի գունդերը, ճեղք մը բանալով Պորտա Պիայի մօտ պարսպէն, մտան ի Հռովմ, մինչ արդէն սպիտակ դրօշը կը ծածանէր Ս. Պետրոսի գմբէթին և բոլոր բերդերուն վրայ։ Պիոս Թ խստիւ պատուիրած էր որ բնաւ արիւնահեղութիւն չ'ըլլայ։ Անմիջապէս Կատորնայի և Քանցլէրի մէջ ի Վիլլա Ալբանի անձնատրութեան պայմանքը ստորագրուեցան նոյն 20 Սեպտեմբերի օրը. 1. «Հռովմ քաղաքը իր բոլոր պաշտպանութիւններով, դրօշակներով վառօդարաններով և պետութեան պատկանածներով կը յանձնուէր Իտալիոյ թագաւորին, բաց ի Լեւոնեան քաղաքէն, զոր կը կազմեն Վատիկան իր բլրով և Սանտ'Անճէլօ, որուն սահման են Սանտօ Սպիրիտոյի պատուարքը։ 2. Քաղքին պահանորդը պատերազմական պատուով, դրօշակով և զէնքով և կահովը պիտի ելլէ բերդերէն յետ ընդունելու զինուորական պատիւը, պիտի թողու դրօշակը և զէնքերը. սպաները պիտի պահեն իրենց սուրը, ձին և ինչ որ

սեպհական ունէին։ 3. Բոլոր օտար գունդերը պիտի լուծուին և անձինքը պիտի ղրկուին երկաթուղւով Իտալիոյ պետութեան ծախքով մինչեւ իրենց հայրենեաց սահմանը։ Վարչութեան կամացը կը ձգուէր նկատողութեան առնելու կամ ո՛չ եթէ դոցա քահանայապետական իշխանութեան մատուցուած ծառայութեանց համար հարկ էր յարգել հանգստեան թոշակի իրաւունքները։ 4. Ցեղացի գունդերը պիտի մնան վարչութեան տրամադրութեան ներքեւ իրենց ներկայ աստիճաններով. և վարչութիւնը իրեն կը վերապահէ անոնց ապագայ վիճակը։

Եւ յիրաւի գունդերը սկսան մեկնիլ դէպ ի Զիվիտավէկկիա և Պիոս Թ պատուհանէն օրհնեց իր հաւատարիմը։ Քիչ օր վերջը Լեւոնեան քաղքին մէջ Գարիբալդեանք խռովութիւն մը, հանելով, կարդինալ Անտոնէլլի վախնալով Քահանայապետին անձին համար, լուր ղրկեց Իտալիոյ գունդերու հրամանատարին որ գան բռնեն Լեւոնեան քաղաքն ալ. իտալական պահանորդք ներս մտան հանդարտեցնելու և ա՛լ եւս դուրս չ՚ելան։ Այսպէս բռնեցին բոլոր Հռովմ, բացի Վատիկանէ ուր մնաց Քահանայապետը իբրեւ կալանաւորեալ։ Կղերականք ծանր քննադատութիւններ ըրած են այս հրամանին համար, նկատմամբ կարդինալ Անտոնէլլիի որ էր Պաշտօնեայ Արտաքին Գործոց[1]։

Իտալիոյ զինուորութիւնը յետ բռնելու զՀռովմ, վարչութիւնը ըստ իր սովորութեանը հրաւիրեց Եկեղեցւոյ Վիճակի ժողովուրդը, քուէարկելու Հոկտեմբեր 2ին թէ «Արդեօք կ՚ուզէ՞ր միանալ Իտալիոյ հետ, ընդ սահմանադրական վարչութեամբ Վիկտոր Էմանուէլի և իրեն ժառանգաց»։ 133,681 քուէք այո՛ պատասխանեցին և 1507 ո՛չ։ Կղերական մասը գրեթէ չմասնակցեցաւ քուէարկութեան։ Այս ելքէն վերջը, Հռովմայ քաղաքագլուխը՝ դուքսն Դոն Միքէլէ Կաէտանի Սէրմոնէտա, կոյր՝ բայց մեծապէս յարգուած իր քաղաքացիներէն, ֆի-

1. Պատմութեան այս կէտը դեռ չէ պայծառացած։

բէնցէ ղրկուեցաւ ուրիշ նուիրակներով առ Վիկտոր Էմանուէլ, յայտնելու Հռովմայեցւոց իղձը։ Թագաւորը ընդունեցաւ զինքը պաշտօնապէս Հոկտեմբեր 9ին Պիտի պալատին մէջ, և յետ լսելու «Ժողովրդեան ձայնը», պատասխանեց որ «Վերջապէս դժուարին աշխատութիւնը լմնցեր էր և հայրենիքը ամբողջովին կազմուեր էր։ Հռովմայ անունը, աշխարհիս ամենէն մեծը, յայսմհետէ կապուած էր Իտալիոյ հետ»։ Եւ լմնցուց խօսքը «Ես իբրեւ թագաւոր, իբրեւ կաթոլիկ, Իտալիոյ միութիւնը հրատարակած ժամանակս, հաստատուն եմ իմ առաջադրութեանս մէջ, ապահովելու Եկեղեցւոյ և Գերագոյն Քահանայապետին ազատութիւնը, և այս յայտնի յայտարարութեամբս կ'ընդունիմ ձեր ձեռքէն Հռովմայ ժողովրդեան իղձը և զայն կը ներկայացնեմ Իտալացւոց»։ Վիկտոր Էմանուէլ Հռովմայ քաղաքագլխին Անհունցիոյի կարգը շնորհեց և յետոյ մեծ ուրախութիւնք կատարուեցան ի Ֆիրէնցէ, Տորինո, Միլան և ուրիշ քաղաքներ։ Տէրութիւնը ընդհանուր ներումն շնորհեց քաղաքական յանցաւորաց, զ'Ամարմորա զօրավարը թագաւորական տեղապահ ղրկեց ի Հռովմ. և Քուիրինալի, պալատը սահմանեց իբր արքունիք։ Պիոս Թ բողոքեց Վատիկանէն Եկեղեցւոյ վիճակին յափշտակուելուն դէմ և գործադրողը բանադրանաց ենթարկեց, ըստ եկեղեցական օրինաց։

Իտալիոյ վարչութիւնը Մայիս 31ին հրատարակեց Ապահովատուութեան[1] օրէնքը, որով կը համարէր ապահովել Քահանայապետին ազատութիւնը։ Օրէնքը երկու մասի բաժնուած էր։ Առաջին մասին մէջ նկարագրուած էին Քահանայապետին իրաւունքները. որ հաւասար էին թագաւորաց և իր անձը էր սրբազան և անրոնաբարելի, ունենալով լիովին ազատութիւն իր հոգեւոր իշխանութեան մէջ։ Ս. Գահուն կը սահմանուէր օժիտ մը 3,225,000 ֆրանքաց[2]։ Իրեն կը թողուէին իբրեւ ազատ

1. Legge di guarantiggia.
2. Քահանայապետք երբէք չ'ուզեցին ընդունիլ այդ օժիտը։

երկիր, Վատիկանու և Լատերանի պալատները և կաստէլ կանտոլֆո՝ Հռովմէն դուրս։ Այս տեղերուն մէջ Քահանայապետը կրնար պահել իր զինուորքը։ Երկրորդ մասին մէջ կը կարգադրուէին եպիսկոպոսական ընտրութիւնք և եկեղեցական բարձր աստիճանաց թոշակը։ Հոգեւոր իշխանութիւնը առանց տէրութեան հաւանութեան ազատ էր որ և է հոգեւոր հրատարակութիւն մը ընել։ Եպիսկոպոսական և եկեղեցական բարձր աստիճանաց ընտրութիւնք, Քահանայապետին կը պատկանէին, պետութիւնը կու տար միայն գործադրուին[1] թոշակաց նկատմամբ. բայց ի Հռովմայ և շրջակայից հոգեւոր իշխանութիւններէն, որոց համար հարկ չկար գործադրուին։

Մայրաքաղաքը ի Հռովմ։

6. — Հռովմ այս մեծ փոփոխութիւնք այն ժամանակ կ'ըլլային, յորում բոլոր Եւրոպա աչքերը յառած էր Գաղղիոյ և Գերմանիոյ պատերազմին վրայ, ուսկից առաջ գալիք հետեւանքները արդէն կը տագնապեցնէին զամենը։ Անոր համար եթէ կաթոլիկ պետութիւնք վշտացան եղածին վրայ, բայց ոչ ոք համարձակեցաւ բողոքելու և պաշտպանելու Քահանայապետին իրաւունքները։

Վիկտոր Էմանուէլ Դեկտեմբեր 5ին բացաւ ի Ֆիրէնցէ իտալական վերջին խօսարանը, յորում ծանոյց Իտալիոյ ի Հռովմ մտնելը, Եկեղեցւոյ տրուած հոգեւորական ազատութիւնը և իր երկրորդ որդւոյն՝ Ամեդայի դքսին, Սպանիոյ թագաւոր ընտրուիլը[2]։

Ի Ֆիրէնցէ խօսարանին վերջին նիստն եղաւ Յունիս 24ին և Յունիս 28ին Վիկտոր Էմանուէլ ժողովրդեան կէցցէներով ելաւ Ֆիրէնցէէն որ դադրած էր այլ եւս մայրաքաղաք ըլլալէ, և արդէն տարւոյն սկիզբէն քուէարկուած էր ի Հռովմ փոխադրութիւնը։ Թագաւորը չ'ուզեց ուղղակի երթալ ի Հռովմ և նախ անցաւ ի

---

1. Exequatur.

2. Վիկտոր Էմանուէլ այս առթիւ ըսած է առ Գուինտինո Սէլլա որ «իրեն ալ բարձրանալու տեղ չկար, բայց եթէ իջնալ»։ Մասարի Վարք Վիկտոր Էմանուէլի. Գլ. Ղ։

Նապոլի։ Իր ամբողջ կենաց մէջ ցրցուց մասնաւոր ըզ-գուշութիւն մը Հռովմ բնակելէ[1]։

Յուլիս 2ին կիրակի օր Վիկտոր Էմանուէլ կատա-րեց իր հանդիսաւոր մուտքը ի Հռովմ։ Ժողովրդեան մե-ծամասնութիւնը եռանդուն ընդունելութիւն մը ըրաւ, մա-նաւանդ որ գաւառներէն դիմեր էին բիւրաւոր անձինք։ Եղան տեղ տեղ շքեղ լուսաւորութիւնք։ Սակայն այս հանդէսներուն մէջ պակաս զտնուեցաւ բարձր ազնուա-կանութեան մեծ մասը, որ ուզեց հաւատարիմ մնալ առ Քահանայապետն ունեցած զգացման[2]։ Վիկտոր Էմա-նուէլ փութով հեռացաւ Հռովմէն, ուր դարձաւ Նոյեմ-բեր 27ին հանդիսապէս բանալու ի Հռովմ առաջին Խօ-սարանը, Մոնտէչիտորիօ պալատան մէջ։ Թագաւորը այս առթիւ իմացուց նաեւ Մոն-Սընի լեռան տակէն բացուած գետնափոր ուղին, երկու ամիս առաջ, ընդ Բարդոնէք-քիա և Մօտան որով կը միանային Գաղղիա և Իտալիա։ Մայրաքաղաքին ի Հռովմ փոխադրուելով, հոն փոխա-դրուեցան նաեւ ամեն Պետութեանց դեսպանք։ Կաթո-լիկ պետութիւնները և ոչ — կաթոլիկներէն ոմանք պա-հեցին իրենց դեսպանութիւնքը Ս. Գահուն քով։ Այս-

---

1. Հազիւ կը լմնային խօսարանի նիստերը, Վիկտոր Էմանուէլ ան-միջապէս կը թողուր Հռովմ և կը դառնար միայն Խօսարանին բացման։

Յունիս 16ին Պիոս Թի գահակալութեան 25դ տարին ըլլալով, բո-լոր Եւրոպիոյ պետութիւնք առանձին դեսպանութիւններ ղրկած էին ի Հռովմ մաղթանքներով և նուէրներով։ Վիկտոր Էմանուէլ ղրկեց իր համ-հարզներէն Բէրտոլէ Վիալէ զօրավարը, յայտնելու Քահանայապետին իր մաղթանքները և խնդակցութիւնքը, և միանգամայն ըսելու որ քաղաքական զժտութիւնք չէին խափան ըլլար իր կրօնքին գլխոյն դիմաց յարգանօք խոնարհելու։ Կարտինալն Անտոնէլլի, պաշտօնեայ Արտաքին Գործոց ըն-դունեցաւ զզօրավարը և իմացուց որ Քահանայապետը յոգնած ըլլալով, չէր կրնար գինքը ընդունիլ, բայց կը թնդրէր տանել իր շնորհակալութիւնքը առ Վիկտոր Էմանուէլ այս ազնիւ զգացմանը համար։ Երկար ժամանակ կղերական լրագիրք զՎիկտոր Էմանուէլ կոչեցին «Թագաւոր Սավոյիոյ»։

2. Քահանայապետին համակրողաց խումբը երթալով ստուարացաւ Հռովմայ քաղաքացւոց մէկ։ Հռովմայեցին մեծապէս կրօնասէր է և մեծ վշտով տեսաւ առ Քահանայապետն եղած նախատինքները անկրօն ազա-տականներէն՝ խօսիք, գրովք և նկարուք։ Դարձեալ Պիոս Թի անձը շատ սիրելի էր ժողովրդեան. անհամար եղեր էին անոր մեծազործութիւնք, հան-գիստ ապրուստ և մղումն տալով արհեստաւորաց։ Քիչ թագաւոր և կամ քահանայապետ ունեցած է Պիոս Թի ժողովրդականութիւնը։

պէս Պեռութիւններէն ոմանք ունեցան երկու դեսպանք ի Հռովմ, մին Բուիրինալի քով և միւսը Ս. Գահուն մօտ. յետինքս բնականաբար կը բանակցէին մասնաւորապէս իրենց Պեռութեանց եկեղեցական խնդրոց նկատմամբ։

Խոսարանական վարչութիւն 1872էն վերջը. — Մինչ կէտտի պաշտօնարան. — Մահ Մանձոնի քերթող-վիպասանին։

7. — Հռովմայ գրաւմանէն վերջը Ազատականք առ ժամս թողոցին Տրէստէի և Տրէնդոյի նկատմամբ ունեցած դիտումին զորոնք ոչ իրկայ Իտալիա կը կոչէին։ Գիտէին որ անկարելի էր կռուել ներկայիս Աւստրիոյ հետ և իրենց ոյժերը դարձուցին խոսարանական պայքարաց և օրէնքներու վրայ, ջանալով անոնց ազատական ձեւ տալ։ 1872էն կը սկսի յիտալիա խոսարանական կռիւ մը Ձախակողմեանց և Աջմատականներու ընդդէմ Աջակողմեանց, որոց ձեռքը եղեր էր միշտ վարչութեան երասանակը։ Ձախակողմեանք ամեն ջանք կ'ընէին տուրքերը նուազեցնել, մինչ Աջակողմեանք չէին ուզեր զայդ՝ Եկեղեցական հաւասարակշռութիւնը չստացած. և երբ խոսարանը քուէարկեց Տարանտոյի նաւարանին համար մեծագոյն գումար մը քան ինչ որ առաջարկեր էր Պաշտօնարանը, Լանցա հրաժարեցաւ։ Վիկտոր Էմանուէլ սահմանադրական մեկնութեամբք, կրկին կոչեց զԼանցա պաշտօնարանը կազմելու։ Փիչ օր վերջը ծագեցաւ նշանաւոր վիճաբանութիւն մը խոսարանին մէջ. յետ կրօնաւորաց բարձման օրինաց, միաբանութիւն մը, իբր բարոյական էութիւն, չէր կարող ունենալ իր անուան կալուած մը։ Արդ Ապահովատուութեան օրէնքը բացառութիւն մը կ'ընէր ընդհանուր արբայարանաց համար ի Հռովմ։ Ազատականք խոսարանին մէջ բողոքեցին այս «ապօրինութեան» դէմ և Ռիքազոլիի միտքը և հռետոր լեզուն միայն կրցաւ բացատրել ազատականաց՝ այդ բացառութեան օրինական իմաստը ի Հռովմ դէմ առ դէմ ազատ Վատիկանի և այսպէս ունենալ նպաստաւոր մեծամասնութիւն մը։ Դոյն երեկոյ Վիկտոր Էմանուէլ գնաց Ռիքազոլիի տունը, անձամբ շնորհակալ ըլլալու իր մատուցած ծառայութեանը համար։

Սակայն 1873ի Յունիսին Եկեղեցական խնդրոյ մը վրայ Պաշտօնարանը չհամաձայնելով խոսարանին, տուաւ

իր հրաժարականը և թագաւորը նոր վարչութիւնը կազմելու համար կանչեց զՄարկո Մինկէտտի, նշանաւոր ելեւմտագէտ և քաջ հռետոր։ Թագաւորը խնդրեց որ Պաշտօնարանին մէջ մնան Վիսկոնտի Վենոստա՝ Արտաքին Գործոց և զօրավարն Ռիկոտտի՝ Պատերազմի։ Ծովային զօրութեան պաշտօնեայ եղաւ Ծովակալն Էնտ Բոն։

Նոր պաշտօնարանին կազմուելէն զրեթէ ամիս մը առաջ մեռեր էր ութսնամեայ Իտալիոյ մեծ բանաստեղծ և ամենէն նշանաւոր վիպասանը՝ Ալէսսանտրո Մանձոնի, ծանօթ բոլոր աշխարհի իր խօսեցկայքով և վսեմ քերթութիւններով, որոնք բղխումն էին իր կրօնասէր ոգւոյն։ Իտալիա մէկ ծայրէն միւս ծայրը յուզուեցաւ. իր հայրենիքը Միլան ամենաշքեղ թաղումն ըրաւ իրեն, որուն ներկայ եղան թագաւորին երկու որդիքը[1] և Լուճէնիո կարինեանոյ արեանառու իշխանը։ Հոն էր բոլոր Իտալիոյ իմացական տարրը, ծերակուտի անդամք, երեսփոխանք, ատենակալք, իշխանք և ազնուականք։ Այնքան սիրելի էր այդ վսեմ կրօնական և հայրենասէր միտքը։

Վիկտոր Էմանուէլ ի Վենա, Բէրլին. — Փոխադարձ այցելութիւնք կայսերաց։

8. — Հռովմ Նոր Իտալիոյ մայրաքաղաք ըլլալէն վերջը ունեցաւ թագաւորական և իշխանական այցելութիւնք, որոնք ամենն ալ զրեթէ բողոքական կամ յունադաւան իշխանութիւններէ։ Կաթոլիկ թագաւորք և իշխանք զգուշացան Հռովմ գալէ, բնական է Քահանայապետին վիշտ չպատճառելու համար։ Իսկ ինքը Վիկտոր Էմանուէլ, ուզեց օգտուիլ Աւստրիոյ Փրանկիսկոս Յովսէփ կայսեր ըրած սիրալիր հրաւէրքէն՝ Վիեննայի 1873ի Յուլիսանդէսին այցելութեան՝ և Սեպտեմբեր 7ին հետը ունենալով զՄինկէտտի և զՎիսկոնտի Վենոստա պաշտօնեայները՝ հասաւ ի Վիեննա։ Կայսրը բոլոր արշիդքսերով կը սպասէր երկաթուղւոյն կայարանը, և երբ

1. Իշխան Ամէդէօ, արդէն հրաժարած ըլլալով Սպանիոյ թագէն, դարձեր էր յիտալիա։ Տե՛ս Սպանիոյ մասին մէջ Գլ. ԺԲ։

Փրանկիսկոս Յովսէփ ներկայացուց ի մէջ այլոց զԱլբրէխտ արշիդուքսը, Կուստոզայի յաղթողը, Վիկտոր Էմանուէլ կրկին և կրկին սեղմեց նորա ձեռքերը։ Իտալիոյ թագաւորին եղած ընդունելութիւնը ընտանեկան կերպարանք մը եւս ունէր, քանի որ իր ամուսինը Ռէնինէրի արշիդքսին դուստրն էր. և ժողովուրդը և իշխանք մոռցան այն վարկենին անցեալ ցաւալի թշնամութեանց օրերը. և այն օրուընէ յայտնի էր ապագայ կրոուելիք բարեկամական և դաշնակցական յարաբերութիւնքը։ Վիկտոր Էմանուէլ հինգ օր մնաց ի Վենետիկ, անկէ անցաւ ի Բէռլին, ուր հաւասարապէս գտաւ սիրալիր և անկեղծ ընդունելութիւն մը Գուլիէլմոս կայսրէն և ժողովրդէն. ամենուն հաճելի էր իր անկեղծ և պարզ խօսակցութիւնը և առանց ձեւակերպութեանց վարմունքը[1]։

Բէռլինէն անմիջապէս դարձաւ ի Հռովմ Նոյեմբեր 15ին, բանալու նոր օրէնսդրական նիստերը։ Թագի ճառին մէջ յիշեց նոր բարեկամութեան կապերը թէ՛ Աւստրիոյ և թէ՛ Գերմանիոյ հետ, և խօսքը վերջացուց ըսելով որ «Պետութեան մը զօրութեան հիմունքն են լաւ Ելեւմուտքը. Իտալացի ժողովուրդը երբեք զլացած չէ այդ նպատակին համար իրմէ խնդրուած զոհողութիւնքը»։

Եւ սակայն Միացեալ–Իտալիոյ ժողովրդոց տուրքերուն նկատմամբ տժգոհութիւնք բարձրագոչ կը լսուէին. իսկ Պաշտօնարանը կը համարէր որ չէր կարող ուրիշ կերպ գործել մինչեւ Ելեւմտից հաւասարակշռութիւնը

---

1. Պաշտօնական հացկերոյթի միջոց ցուցընելով առ Գուլիէլմոս զՄինկէտտի և զՎենոստա, ըսաւ «Թէ որ ատ երկուքը չ'ըլլային քեզի դէմ պիտի պատերազմէի»։ Յետոյ պատմեց Նապոլէոն Գի հետ ունեցած սերտ բարեկամութիւնը։ Այս խօսքերը մեկնուեցան այն երից դաշնակցութեան համար, զոր կը բանակցէին կազմել 1869ի Աւստրիա, Գաղղիա և Իտալիա, և հաւանականօրէն ընդդէմ Պրուսիոյ որ Սադովայով մեծ դիրք մը առած էր։ Վերջին ժամանակներս (1906) այս դաղտ դաշնակցութեան նկատմամբ այլ և այլ զրուցիւնք հրատարակուեցան ծանօթ քաղաքագէտներէ, յորս և Էմիլ Օլիվիէ պաշտօնեայ Նապոլէոն Գի։ Իտալացի հինաւուրց քաղաքագէտք, յորս և Վիկոնտի Վենոստա և Նիգրա, յայտարարեցին որ այդ դաշինք բնաւ չէին ընդդէմ Բրուսիոյ։

ստանալու կէտը։ Մինկէտտի իր պաշտօնը ստանձնած ժամանակ զայդ դրած էր իրեն նպատակ, և կրցաւ հասնիլ իր նպատակին։

Դարձեալ Մինկէտտի պաշտօնարանին արդիւնք համարուեցաւ յիտալիա երկուց կայսերաց այցելութիւնը յամին 1875։ Ազգին մեծամասնութիւնը և վարչութիւնը կը փափագէր որ այդ այցելութիւնք ըլլային ի Հռովմ. սակայն երկու կայսերք ալ, և մանաւանդ Փրանկիսկոս Յովսէփ, չէր կրնար այդ վիշտը պատճառել Պիոս Թի։ Այսու հանդերձ Աւստրիոյ կայսրը ուզելով յայտնել իր բարեկամութեան անկեղծութիւնը առ Իտալիա, որոշեց Վիկտոր Էմանուէլի հանդիպել ի Վենետիկ, որ դեռ քիչ առաջ իր կալուածն էր[1]։ Ապրիլ 5ին Աւստրիոյ կայսրը եկաւ ի Վենետիկ, և ժողովուրդը իրեն ազնուական և սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ։ Զկար տուն մը, հասարակաց շէնք մը, կրպակ մը, նաւակ մը որ չկրէր իտալական և աւստրիական դրօշը միաբան։ Ս. Մարկոսի հրապարակը երեք օր թնդաց կեցցէներով՝ խառն աւստրիական և իտալական պաշտօնական երգերով, և մոռցուեցան 1848ի պաշարման ահաւոր օրերը։ Զարմանալի՛ զուգադիպութիւն. տասնուհինգ օր առաջ Վենետկոյ հրապարակի մը մէջ մեծ հանդիսով կանգնուեր էր Վենետկոյ 1848ի Հասարակապետութեան գլխոյն, Մանինի արձանը, որ Աւստրիոյ դէմ կռուելու ժամանակ ըսած էր թէ «Պիտի գայ օր, որ Իտալիա ազգ ձեւանալով, Աւստրիոյ բարեկամը պիտի ըլլայ»։

Իսկ Գուլիէլմոս Ա կայսրը Հոկտեմբեր 18ին եկաւ ի Միլան, ուր նոյնպէս թագաւոր և ժողովուրդ եռանդուն ընդունելութիւն մը ըրին արդէն բարեկամ կայսեր, որոնք փոխադարձաբար ծառայութիւններ մատուցեր էին մէկմէկու, մին 1866ին, միւսը 1870ին։ Քաղաքագէտք ար-

---

1. Վիկտոր Էմանուէլ ըսած է «Որ ես կարող չէի այդքան բարձր առաքինութիւն մը ունենալ»։ Կը թիթաբ միանգամայն որ Վենետկոյ ժողովուրդը, անցեալոյն մէջ Աւստրիոյ կրածներուն համար, ցուրտ ընդունելութիւն մը ընէ, մինչ հակառակը պատահեցաւ։

դէն սկսան գուշակել Երից Դաշնակցութեան մը կազմուիլը յապագային։

Զախակողմեան պաշտօնարանք. — Դէպրէտիս։

9. — Իտալիոյ խորհրդարանական պատմութեան մէջ ամենէն նշանաւոր թուականներէն մին է 1876 Մարտ 18ը, յորում նորընտիր երեսփոխանք զիրենք ընտրողաց փափագներուն թարգման, ուզեցին վերջ մը տալ խնայութեանց տարիներուն։ Մինկէտտի Մարտ 18ին գումարման մէջ ծանուցանելով խօսարանին որ վերջապէս ըղձացեալ ելեմտական հաւասարակշռութիւնը ձեռք բերեր էր, աւելցուց որ Պաշտօնարանը կ'առաջարկէր օրէնք մը երկաթուղիներուն գնմանը. և այս առաջարկին վրայ վստահութեան քուէ պահանջեց։ Խօսարանը նոր զոհողութեանց և խնայութեանց երկիւղ մը զգաց այս գնման մէջ և հակառակ քուէ տուաւ։ Պաշտօնարանն անմիջապէս հրաժարեցաւ, յետ չորս տարի պաշտօնավարութեան։

Քուէարկութիւնը վարչական մեծ կարեւորութիւն մը ունէր, որովհետեւ որոշ ձախակողմեան կուսակցութիւններն էին որ միաբանած կը յաղթէին Աջակողմեան կուսակցութեան՝ որ կը կառավարէր զԻտալիա տասնուվեց տարիներէ ի վեր, Իտալիոյ Թագաւորութեան կազմուած օրէն. որով և բնականապէս բոլորովին նոր կուսակցութեան մը ձեռք պիտի անցնէր ազգային նաւուն ղեկը։ Վիկտոր Էմանուէլ որչափ որ անձնական զգացումով, ցաւելով կը բաժնուէր իր աջակողմեան բարեկամներէն, որոնց հետ ձեւացուցեր էր զՆոր Իտալիա, այսու հանդերձ, իբր կատարեալ սահմանադրական թագաւոր, պաշտօնարանը կազմելու կոչեց զԱգոստինո Դէպրէտիս, որուն հետեւողք բազմաթիւ էին յաղթող կուսակցութեան մէջ։ Դէպրէտիս, նշանաւոր փաստաբան, այս միջոցիս 65 տարուան էր, և 1850էն ի վեր խորհրդարանի երեսփոխան, նախ ի Պիէմոնտ, միշտ ընդդիմակացից կողմը բազմելով։ Կավուր 1861ին զինքը փոխան–դիկտատորի անուանեց ի Սիկիլիա. և 1862ի և 1866ի մտած էր Ռատացցի և Ռիկազոլի պաշտօնարաններուն մէջ։ Ռատացցիի մահուընէն վերջը նոր կազմակերպուած Զախակող-

մեանց գլուխ եղած էր։ Դէպրէտիս իր կազմած պաշտօնարանին մէջ առաւ Ելեւմտից պաշտօնը, Ներքին Գործոց պաշտօնեայ եղաւ պարոն Նիկոտէրա, Արտաքին Գործոց՝ Մէլէկարի, Հասարակաց Աշխատութեանց՝ Ֆանարդէլլի՝ մեծանուն օրէնագէտը, Արդարութեան՝ Մանչինի, Հանրային կրթութեան՝ Կոպպինո, Պատերազմի՝ զօրավարն Մէծծակապօ, Երկրագործութեան՝ Մայորանա Գալատարիանո և Ծովային զօրութեան՝ նշանաւոր նաւական ճարտարապետն Բէնէդէտտո Բրին։ Տարի ու կէս վերջը պաշտօնարանական փոփոխութեամբք, Դէպրէտիս ստանձնեց Արտաքին Գործոց պաշտօնարանը, տուաւ Մանչինիի Ելեւմուտքը, յորում շատ նշանաւոր եղաւ՝ և Ներքին Գործոց պաշտօնեայ անուանեց զսիկիլիացին Ֆրանչէսքօ Կրիսպի, ծանօթ գարիբալդեանը և ազատականը։ Զախակողմեանք իշխանութեան հասնելուն, սկսան ուսումնասիրել այն ամեն տուրքերուն բարձումը, որոց համար շատ տարի կռուեր էին։ Առաջին վերուցած տուրքերնին եղաւ ջաղացքի տուրքը։ Ազատ նաւահանգիստներ առաջարկուեցան. եկեղեցիէ դուրս թափօրք և կրօնական ցոյցեր արգիլուեցան կամ բարձրագոյն հաւանութեան ենթարկուեցան. նոր տուրքեր աւելցան շաքարի և կամ չոայլութեան համարուած նիւթոց վրայ, որոնք անհրաժեշտ կարեւոր չէին աղքատ դասուն։ Իւ սակայն ձախակողմեան վարչութիւնը փոխանակ բարձրացնելու դրամական վարկը, խախտեց նոյն իսկ Մինկէտտիի առաջ բերած հաւասարակշռութիւնը և ժողովուրդը դեռ ընդերկար շարունակեց հեծել տուրքերու ներքեւ, նախադաս համարելով սակայն ձախակողմեանքը, որոնք մերձաւոր փրկութեան յոյսեր կուտային։

10· — Նոյեմբերի վերջերը Վիկտոր Էմանուէլ դարձաւ ի Հռովմ խօսարանին բացման համար։ Մայրաքաղաքը հասնելուն, իմացեր էր Պիոս Թի տկար ըլլալը և անմիջապէս իր մտերիմներէն մէկը Վատիկան ղրկեր էր հարցնելու Քահանայապետին որպիսութիւնը և յայտնելու «իր մաղթանքները և յարգանքները Եկեղեցւոյ գլխուն»։ Քիշ վերջը Յունուար 4ին լսելով Ալֆոնսо

Մահ Վիկտոր Էմանուէլի։

1878

Լամորմարա զօրավարին մահը, շատ ցաւ զգաց, յիշելով ո՛րքան իրեն ձեռնտու եղեր էր Իտալական խնդրոյն մէջ։ Նոյն երեկոյ զգաց՝ կարմրուցաւ[1] ջերման նախնական նշանները, որ ի սկզբան այնքան ծանր չկարծուեցաւ։ Յունուար 9ին մինչ ինքը բնաւ վտանգ մը չէր կասկածեր, իւր Բրունօ բժիշկը իրեն իմացուց հիւանդութեան յառաջելը, որուն դիմաց այլ եւս չէր կարելի առնուլ։ Վիկտոր Էմանուէլ լսեց անվրդով և անմիջապէս խնդրեց խոստովանիլ և հաղորդուիլ. որ փութով շնորհուեցաւ իրեն մանաւոր հրամանով մը Պիոս Թի։ Վիկտոր Էմանուէլ յետ ջերմեռանդութեամբ ընդունելու Ս. Խորհուրդները, կանչեց իր քովը զաւակները, որոնք կ՚արտասուէին, տուաւ իրենց հրաժեշտի ողջոյնները և կէսօրէն վերջը սաստկանալով ջերմը, վախճանեցաւ համակերպեալ արութեամբ[2]։

Սակաւատեւ հիւանդութեան և մահուան լուրը յուզեց բովանդակ Իտալիա, և ընդհանուր էր ժողովրդեան ցաւը, որուն նման քիչ թագաւորի համար եղած է։ Վիկտոր Էմանուէլ իր ընտանեկան կենաց[3] ամենամեծ

---

1. Miliari.

2. Վիկտոր Էմանուէլ կրօնական մեծ զգացումն և վախ ունէր. առաջին հիւանդութեան ժամանակ մինչեւ լուր ղրկեց առ Ս. Քահանայապետը, որ թէ իրեն արժակմանը համար կարեւոր է հրաժարիլ թագաւորութենէ, ինքը պատրաստ էր։ Ձայս լսած եմ անձէ եւս, որ կարող էր գիտնալ։

3. Վիկտոր Էմանուէլ ամուսնացած էր Մարիա Ադելայդէ աւստրիացի արշիդքսուհւոյն հետ, ամենաընտիր և սրբակենցաղ իշխանուհի մը, որ մեռաւ 32 տարեկան, տալով հինգ զաւակներ, երեքը արու՝ Ումբերտօ, Ամէդէօ և Ոթոն և երկու դստերք Կլոդիլտէ, ուրիշ սրբակենցաղ իշխանուհի մը որ հարանութեան դնաց Նապոլէոն իշխանին, և Մարիա Պիա՝ թագուհի Պորտուկալի։ Ոթոն տկար մարմնով և կուզ, մեռած է պատանի հասակի մէջ։ Նա չէր կարող քալելու և փոքր թեթեւ անուաւոր օթեակով կը պտոյտցնէին պարտէզին մէջ. և իր երկու եղբարք բնաւ չթողուցին որ իրենցմէ դուրս ուրիշ մը կատարէ այդ պաշտօնը։ Արքայորդիք ժամը հնգին պէտք էին ելլել յանկողնոց և նախ պէտք էին պատարագ լսել։

Վիկտոր Էմանուէլ քաղաքացի աղջկանէ մը, զոր ապա անուանեց կոմսուհի Միրաֆիորէ, զաւակներ ունեցեր էր և զոր ապա եկեղեցական գաղտ ամուսնութեամբ առաւ։ Իր մահուընէն վերջը իւր յաջորդը արժանավայել հարստութիւն մը տուաւ այդ զաւակաց, պայմանաւ որ հաստատուն բնակութիւն չունենան ի Հռովմ։

թերութեամբքն հանդերձ, մեծապէս սիրելի եղած էր ժողովրդեան, որ աչք գոցած էր իր անձնական կենաց վրայ։ Իր արտաքին բիրտ կեղեւին ներքեւ ունէր ըզգայուն սիրտ մը և արդարադատ միտք մը. իսկ զինուորական ոգւովը և քաջութեամբ կրնար համեմատուիլ միայն հին պատմական քաջ իշխողաց, որոնք հայրենեաց ծառայութեան մէջ կեանքը ոչինչ կը համարէին և իրենց ներկայութիւնը կ'ոգեւորէր բանակը։ Իրեն մեծ արդիւնքն եղաւ նաեւ գիտնալ գնահատելը իր պաշտօնեայն կավուր. նա մանաւանդ նախադասել քան զինքը անոր անձնաւորութիւնը Իտալիոյ քաղաքականութեան գործոց մէջ։ Առանց կավուրի Վիկտոր Էմանուէլ չէր կարող հասնել այդ բարձրութեան և առանց Գարիբալդիի չէր կարող ունենալ Հարաւային գաւառները։

Վիկտոր Էմանուէլի թաղման կը գտնուէին Իտալիոյ ամեն քաղաքաց նուիրակութիւնք։ Հոգեւոր իշխանութիւնը հրաման տուաւ որ թաղուի Ագրիպպասի շինած Պանթէոնի մէջ, որ եկեղեցի վերածուած էր և որ եղաւ գերեզմանատուն Իտալացի թագաւորաց։ Իտալիոյ մէջ չմնաց քաղաք, աւան կամ գիւղ որ իր յիշատակին չնուիրէ մահարձան մը, կիսարձան մը, ծառուղի մը ճամբայ մը։

11. — Վիկտոր Էմանուէլի մեռած օրը իր անդրանիկ որդին Ումբերտո թագաւոր հռչակուեցաւ Իտալիոյ։ Նոր թագաւորին Կուստոզայի պատերազմին մէջ ցոյցուցած արութիւնը, հեզահամբոյր բնաւորութիւնը, արդէն զինքը սիրելի ըրած էին Ազգին։ Իսկ երբ 1871ի վերջը իւր հայրը Վիկտոր Էմանուէլ, ի բնէ ատեցող արքայական պերճութեանց, պալատական ձեւակերպութեանց և ընդունելութեանց, ուզեց որ իշխանն Ումբերտո և իշխանուհին Մարգարիտա՝ լատին կանացի հանճարոյն և շնորհաց ամենէն ազնուական և բարձր արտայայտութիւններէն մին, բնակին ի Հռովմ, Քուիրինալի պալատը, այն օրուընէ երիտասարդ իշխանին և մանաւանդ իշխանուհւոյն սրահները լեցուեցան Իտալիոյ և Եւրոպիոյ ամենէն նշանաւոր քաղաքագէտք, խառն նշանաւոր քերթողներու, մատենագիրներու, լեզուագէտներու և ար-

Ումբերտո Ա. թագաւոր Իտալիոյ։

հեստագէտներու հետ, զորս իշխանուհին և ապա թագուհին կը խրախուսէր նաեւ նիւթականապէս։ Եւ մինչ Քուիրինալի պալատը, ըստ եկեղեցական օրինաց, արգելման ներքեւ էր, Մարգարիտայի անկեղծ և եռանդուն բարեպաշտութիւնը, Սավոյիոյ Տանը իշխանուհեաց շատերուն շքեղագոյն զարդը, կրցաւ Քահանայապետէն քահանայ ունենալու շնորհն ստանալ։

Ումբէրտո իր առաջին հրատարակութեան մէջ առ Ազգն, կը խոստանար հետեւելու իւր «հօրը մեծ օրինակաց», և հայրենեացը ծառայելու, ազատ սահմանադրութեամբք «որ պարծանք մ'էր իր Ազգատոհմին»։ Նոյն խոստմունք և երդմունք եղան խօսարանաց առջեւ։ Նոր թագաւորը հաստատեց նախկին պաշտօնարանը։ Իտալիոյ ամէն կողմ եռանդագին ուրախութիւնք եղան նոր թագաւորութեան համար, և ազգը մեծապէս յուզուեցաւ, երբ Նոյեմբերի մէջ Ումբէրտո՝ Նապոլիի այցելած ժամանակ, իւր առաջին պաշտօնէին՝ Կայրոլիի հետ, Պասսանանտէ անուամբ գործաւոր մը թագաւորին կառաց վրայ ելաւ դաշոյնով մը, սպաննելու զանիկայ. և թագաւորը միայն իր անվեհեր ուժովը կրցաւ խափանել և հարուածել դաւաճանը, ստանալով միայն թեթեւ վէրք մը։ Իտալիոյ ամեն կողմ, գոհաբանական աղօթքներ կատարուեցան թագաւորին վտանգէն ազատելուն վրայ[1]։

Մահ Պիոս Թի։ 12. — Ումբէրտոյի գահը բարձրանալուն Հռովմայ մէջ, բողոքեց Պիոս Թ քահանայապետը իր Ատենադպիր Կարդինալ Սիմէոնիի հրատարակութեամբ մը, և այս բողոքը մեծանուն Քահանայապետին քաղաքական վերջին գործն եղած է։ Քիչ եօթնեակ վերջը, փետրուար 7, Պիոս Թ իբրեւ ճրագ մը կը շիջանէր ութսունեւութամեայ հասակին մէջ։

---

1. Պասսանանտէ՝ որ Քերամիտ մէկն էր, մահուան դատապարտուեցաւ. սակայն Ումբէրտո պատիժը մշանջենաւոր բանտի փոխեց և այն ուզեց որ ըլլայ դիւրաւոար։

Պիոս Թ 1870ի Սեպտեմբեր 20էն վերջը ապրեցաւ իբրեւ բանտեալ մը ի Վատիկան, զբաղելով միայն հոգեւոր իշխանութեամբ, որ հակառակ անկրօն և հակակաթոլիկ կարծիքներու, ժամանակաւոր իշխանութեան կորուստովն իսկ մնաց նոյնպէս իր գերագոյն զօրութեան և ազդեցութեան մէջ։ Թագաւորք և իշխանք ադիթ փնտռեցին յայտնելու առ Պիոս Թ իրենց մեծ յարգանքը, խնդրելով միշտ վայելելու անոր հայրութիւնը և համակրութիւնը։ Իր կենացը պարագայից զանազան յորելեանք, տօնախմբութիւնք էին բոլոր աշխարհի կաթոլիկներու, քրիստոնեաներու և ոչ քրիստոնեաներու։ Հռովմայեցին գերագոյն կերպով ուզեց որ իր մայրաքաղաքը չկորսնցնէ եկեղեցական և քահանայապետական քաղքի կնիքը[1]։ Պիոս Թի մեծագործութիւնք, որոնք անթիւ են Հռովմայ մէջ, զինքը պաշտելի ըրին նաեւ գեղարուեստ սիրող դասուն և աշխատաւորին։ «Պարզ և բարեսէր, նուրբ և զուարթամիտ, գերագոյն աստիճանի ազնուական յամենայնի իր ամեն մէկ գործ, սիրելի կնիք մը կը կրէ[2]», կ'ըսէ ազատական գրիչ մը, և իր նախասենեկաց մէջ հաւասար կաթոլիկներու կը վիտային բողոքականք ամեն դասերէ, տեսնելու Պիոս Թի պատմական մեծ անձնաւորութիւնը, որ քահանայապետական ամենաբարձր աստիճանի հետ, միացուցած էր աշխարհի կրթութեան ամենաբարձր և ամենանուրբ զգացումները[3]։

---

1. Վիկտոր Էմանուէլ շատ անգամ ըսած է «Հռովմայ մէջ կարծես աւելի ես բանտեալ մ'եմ, քան Պապը»։

2. Անդրէ Դանիէլ. Ամ 1878 Յունուար։ Կը յաւելու «Նոյն իսկ իր նեղանալներն, օծում մը ունէին»։

3. Դանօք է որ Պիոս Թ. երբեմն կոմս Մասդայի Ֆէրրէտտի եղած ժամանակ, փայլուն զինուորական մ'էր և ասպետ. և զինուորականք մեծ հաճութեամբ մը կը յիշէին իր կենաց այդ պարագայն։ Իտալացւոց Հռովմայ տիրելէն վերջը, օր մը Վատիկանու բարձրաստիճան սպաներէն ոմանք ծիծաղելով մը կը խօսէին ցած ձայնով Սավոյիոյ Տան իշխանուհեաց վրայ։ Պիոս Թ որ կը գտնուէր մօտ պատուհան մը՝ դարձաւ և լուրջ շեշտով մը ըսաւ «Պարոն սպայք, մենք երբ սպայ էինք, չէինք կրնար մեզի ներելի համարիլ, այդպէս խօսիլ Տիկնանց վրայ»։ Այս դէպքը հաստատած է ինձ անձ մը որ գիտէր։

Ընտրութիւն Լեւոն ԺԳ.

13. — Պիոս Թ Անտոնէլլի կարդինալին մահուընէն վերջը կանչեր էր ի Վատիկան հռովմէական Եկեղեցւոյ կարդինալաց գահէրէցի պաշտօնով[1] զկարդինալն Յովակիմ Պէչչի, Արքեպիսկոպոս Պէրուճիոյ, որ իր երեսնամեայ հովուութեան պաշտօնին մէջ, ամենամեծ յատկութիւններ ցրցուցած էր։ Կարդինալն Պէչչի Պիոս Թի մահուամբ յիրաւանց Եկեղեցւոյ վարչութեան գլուխ կ'անցնէր մինչեւ ցընտրութիւն նոր քահանայապետին։

Եւ որովհետեւ առաջին անգամն էր որ քահանայապետ մը պիտի ընտրուէր ի Հռովմ, յետ ժամանակաւոր իշխանութեան յափշտակուելուն. շատերը կը համարէին որ կարդինալք փակ ժողովքը[2] պիտի ընեն Հռովմէն դուրս, և պետութիւններէն ոմանք յորս Գաղղիա և Գերմանիա կ'առաջարկէին Կարդինալաց պատրաստական ասպնջականութիւն մը յԱվինիոն կամ ի Ֆուլդա։

Եւ սակայն փակ ժողովքը կատարուեցաւ ի Հռովմ, առանց որ և է շփոթի մը կամ նեղութեան։ Իտալիոյ վարչութիւնը ամեն գաղտ միջոց ձեռք առած էր որ գարիբալդեանք և ֆրամասոնք խռովութիւնն չյարուցանեն։ Վատիկան պաշարուած դիրք մը առած էր, ուր ամենաղժուարին էր մերձենալը։ Երեք կարդինալք աւելի մատնանիշ կ'ըլլուէին իբրեւ ընտրելիք՝ կարդինալն Պէչչի, կարդինալքն Ֆրանքի և Բիլիո։ Յետինքս խնդրեցին իրենց ընտրողքը որ ձայներնին տան կարդինալ Պէչչիի. այսպէս փութով ընտրուեցաւ նա Փետրուար 20ին, և առաջին անգամ իր օրհնութիւնը տուաւ 80,000 ժողովրդեան Ս. Պետրոսի եկեղեցւոյ մէջ նայող պատուհանէն, փոխան տալու հրապարակի վրայ պատուհանէն, ինչպէս եղած էր մինչեւ այն ատեն. և կարդինալն Պէչչի առաւ Լեւոն ԺԳ անունը։

---

1. Camerlengo. բառն կը նշանակէ Գանձապետ։
2. Conclave.

կարդինալն Պէչչի, կոմս Ցովակիմ, ծնեալ էր ի կարբինէտս. և եկեղեցական շատ մը պաշտամանց մէջ մեծապէս փայլեր էր, մանաւանդ ի Բէլճիա դեսպանութեամբ, ուր ցրցուցեր էր բարձր քաղաքագէտ միտք մը և պատրաստեր էր կաթոլիկ կուսակցութեան յաղթութիւնը։ Պէրուճիայի երեսուն և երկու արքեպիսկոպոսութեան ժամանակ գիտցեր էր հովուութեան պաշտօնը միացնել կարդինալութեան պարտուց հետ Պէրուճիայի գաւառը սրբեր էր աւազակներէ և եղաւ ժամանակ մը որ բանտերը պարապ մնացեր էին։ Իր անունը ժողովրդականութիւն մը ստացեր էր որով և հայրենասէր ազատամիտք երբէք չէին կրցած մեղադրել զինքը։ «Ադաքինի քահանայ մը, բարձր ազնուական մը, հեզահոգի, իմաստուն եկեղեցականաց մէջ. արթուն, հմուտ, ներկայ կենաց պարագայից փորձ. ճարտար քաղաքագէտ բայց հաւատացող Պապութեան իրաւանց։ Ոչ խաւարամիտ յետամնաց. ո՛չ։ Ոչ հակառակող մարդկային գիտութեանց, մանաւանդ նպաստող անոնց յառաջադիմութեան. միայն թէ մնան կաթոլիկ վարդապետութեան վահանին ներքեւ. վստահ այդ երկուքին դաշնաւորութեանը և ամենէն աւելի պատերազմող դրական, նիւթական և անաստուած իմաստասիրութեան դէմ[1]»։ Ահա Լեւոն ԺԳի նկարագիր մը՝ զոր կ՚ընէր ազատամիտ գրիչ մը, և նոյնը առաւելեօքը ցրցուց իր քահանայապետութեան ժամանակ։

---

1. Պրոֆ. Կորսի Իտալիա էջ 310։ Աւելին գրած է իտալացի մեծ իմաստասէրն Բոնգի, ընտրութենէն երեք տարի առաջ. առանձին գրուածքի մէջ կոչուած Ֆոնցլավէ։ Լեւոն ԺԳ. էր միանգամայն հմուտ մատենագէտ և մատենագիր և լատին դասական քերթող մը։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ի ՍՊԱՆԻԱ ԱՄԷԴԷՕ Ա. ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱ-ՊԵՏՈՒԹԻՒՆ

1. Իշխանն Ամէդէօ Սավոյիոյ, կ'ընտրուի թագաւոր Սպանիոյ. — 2. Ամէդէօ ի Սպանիա. Սպանումն Պրիմ մարաջախտին. — 3. Խորհրդարանի բացումն. — Կասդէլար. — Նորիլլա պաշտօնարան. — 4. Մալկամպօ պաշտօնարան. — Խորհրդարանը ընդդէմ Հռոգգայիի Ընկերութեան. — 5. Սագասդա պաշտօնարան. — 6. Դոն Կարլոս՝ Դուքս Մադրիդի և Կարլոսեան կռիւները. — 7. Անկումն Սագասդա պաշտօնարանին. — Սէրրանո—Նորիլլա պաշտօնարան. — 8. Դաւ ընդդէմ Ամէդէոյի. Այցելութիւն գաւառաց. — 9. Ամէդէօ կը հրաժարի Սպանիոյ գահէն։

Իշխանն Ամէդէօ Սավոյիոյ, կ'ընտրուի թագաւոր Սպանիոյ։

1. — Սպանիոյ գահը, որուն պատճառաւ ծագեցաւ գաղղիա—գերման պատերազմը և վերիվար եղաւ Եւրոպիոյ աշխարհավարական հաւասարակշռութիւնը, Հոհէնձոլլէրն իշխանին հրաժարելէն իսկ վերջը, անմիջապէս չունեցաւ իր թագաւորը, իր խաղաղութիւնը։ Մադրիդի վարչութիւնը տակաւին երկչոտ ակնածութեամբ մը ի Գաղղիոյ, կը դիտէր պատերազմին պատահարքը, մինչեւ Սէդանի պարտութիւնը և մինչեւ Սեպտեմբեր 4. և երբ ապահովցաւ որ Պարիսէն չկար իրեն հրամայող մը կամ սպառնացող մը, այն ատեն կրկին սկսաւ բանակցութիւնքը Վիկտոր Իմանուէլի հետ, որպէս զի Սպանիոյ թագաւոր շնորհէ իր երկրորդ որդին՝ Ամէդէօ իշխանը, դուքս Աօսդայի։ Մինչ առաջին անգամ թագաւորը մերժած էր, այս անգամ հաւանեցաւ և համոզեց իւր որդին։ Մադրիդի վարչութիւնը փութով պաշտօնապէս

իմացուց նաեւ օտար Պետութեանց, որոնցմէ արգելք չգտաւ և մարաջախտն Պրիմ՝ Նոյեմբեր 3ի, զիշխանն Ամէդէօ Սավոյիոյ, թիկնածու առաջարկեց Սպանիոյ թագին։ 1870

Նոյեմբեր 16ի Ամէդէօ իշխանին թիկնածութեան առաջարկը վիճուեցաւ խորհրդարանին մէջ, որուն նախագահ էր Դոն Մանուէլ Ռուից Մորիլլա։ Հակառակորդք հանդիսացան նախ հասարակապետականք, յետոյ Մոնպանսիէ դքսին կողմնակիցք, որոց յոյսը կ'ոչնչանար. կարլոսեանք՝ որոնք օրինաւոր թագաւոր կը ճանչնային միայն զԴոն Կարլոս բուրբոնեան. և անոնք եւս որոնք չէին ուզեր Սպանիոյ գահուն վրայ տեսնել Հռովմայ տիրողին՝ Վիկտոր Էմանուէլի, որդին։ Երեսփոխանք էին 344 թուով և սահմանուած էր ընտրութեան թիւն 173 քուէ։ Յետ երկար վիճաբանութեանց քուէարկութեան գալով, Ամէդէօ իշխանը ստացաւ 191 քուէ և Մորիլլա նախագահը հանդիսապէս հրատարակեց զիշխանն Ամէդէօ Սավոյիոյ, Դուքս Աօսդայի՝ բազաւոր Սպանիոյ։ Հասարակապետականք և կարլոսեանք միաբան ունեցեր էին 60 քուէ և Մոնպանսիէի դուքսը, որդի Լուի Ֆիլիպի՝ Գաղղիոյ թագաւորին, խնամացեալ Սպանիոյ արքունական տան, 27 քուէ։

Մարաջախտն Պրիմ փութով Գարչիա կաբրէրա հազարապետը նուիրակ ղրկեց ի Ֆիրէնցէ, որպէս զի առնու Վիկտոր Էմանուէլի և ընտրելոյն հաւանութիւնը։ Ապա Նոյեմբեր 24ի Պետութեան մարտանաւով մեկնեցաւ Կարթագինէէն ի Ճենովա և Ֆիրէնցէ, խորհրդարանին նախագահը Մորիլլա՝ հետը ունենալով երկու խորհրդարաններէն բազմաթիւ երեսփոխանք։

Նուիրակութիւնը Դեկտեմբեր 3ին հասաւ ի Ֆիրէնցէ և երկրորդ օրը հանդիսապէս ընդունուեցաւ Պիտտիի պալատան մէջ թագաւորէն, թագաւորազուն իշխաններէն և խորհրդարանաց ներկայացուցիչներէն։ Խօսեցաւ նախ Ռուից Մորիլլա, յայտնելով Սպանիոյ Ազգին իղձը. և թագաւորը պատասխանեց որ իր որդին «Աստուածային նախախնամութեան օգնութեամբ և սպանիացի ազնուա-

կան ազգին վստահութեամբ պիտի կարենար կատարել իր պարտքը ի պայծառութիւն և ի մեծութիւն Սպանիոյ»։

Յետոյ յուզեալ ձայնիւ Ամէդէօ իշխանը յայտնեց իր ընդունիլը. թուղթերը ստորագրեցին թագաւորը, իշխանքն Ումբէրտօ և Եւճէնիօ և պետական բարձր պաշտօնեայք, և իբր վարչական նոտար վաւերացուց գրութիւնքը Վիսկոնդի Վենոստա. և իշխանն Ամէդէօ հռչակուեցաւ թագաւոր Սպանիոյ։

Այս հրատարակման դէմ բողոքեց նախ՝ Իզաբէլլա թագուհին, նաեւ յանուն իւր Ալֆոնսոս որդւոյն, որուն ի նպաստ արդէն հրաժարեր էր գահէն։ Բողոքեց նաեւ Դոն Կարլոս Բուրբոնեան, թագապահանջ օրինաւորական կողման։ Սակայն այս բողոքները առ ժամս կարեւորութիւն մը չունեցան։ Աւելի լուրջ էր Սպանիական ազնուականութեան բողոքը ընդդէմ «Օտար թագաւորի մը». և կը յորդորէր զազնուականս «բնաւ» չներկայանալու յարքունիս։

Ամէդէօ Ա. ի Սպանիա 1870.

2. — Իշխանն Ամէդէօ հրաժարելով իւր հօրմէ և արքունիքէն Դեկտեմբեր 25ի երեկոյ մեկնեցաւ դէպ ի Սպէցիա, հետը ունենալով զզօրավարն Զիալդինի, իբրեւ արտասովոր դեսպան Իտալիոյ։ Հասաւ 26ին ի Սպէցիա, ուր կը սպասէր սպանիական մարտանաւը և հոն յետ արքայական ընդունելութեան, մեկնեցաւ դէպ ի Կարթագինէ առանց թագուհւոյն։

Սպանուին Պրիմ մարաջախտին։

Թագաւորին մեկնելու երկրորդ օրը, երեկոյեան երբ մարաջախտն Պրիմ խորհրդարանէն կը դառնար իւր տունը, ոչ հեռի պալատէն, փողոցէ մը դուրս ելած եօթը անձինք զինեալք, որոնք մօտենալով մարաջախտին կառաց, վրան ատրճանակի հարուածներ պարպեցին և փախան։ Պրիմ՝ որուն հարուածուեր էր ուսը և ձախ ձեռքը, դեռ ինքնին կրցաւ իր տանը սանդուխքը ելլել օգնութեամբ։ Ի սկզբան կարծուեցաւ որ անդամահատութեամբ ազատի և յիրաւի կտրուեցան մատուները. սակայն ներքին արեան կնճիռք յառաջ գալով, չկրցաւ ապրիլ և մեռաւ 28 Դեկտեմբերի, թագաւորին Կարթագինէ հասնելէն քիչ առաջ։ Պրիմի մահուան վրայ ան-

միջապէս պաշտօնէից խորհուրդը հաւաքուեցաւ ընդ նախագահութեամբ Սէրրանո թագապահին և պաշտօնարանին գլուխ ընտրուեցաւ Տոպէտէ ծովակալը, և արտաքին Գործոց պաշտօնեայ Դ՝Այալա։

Ամէդէօ թագաւորը հասաւ ի Մադրիդ Յունուար 2ի միջօրէէն վերջը, և խօսարանը չգացած, ինչպէս որոշուած էր, նախ գնաց Ատոկայ Տիրամօր եկեղեցին, ուր դրուած էր նաեւ Պրիմի մարմինը. յետոյ երթալով ի խորհրդարան երդուընցաւ Սահմանադրութեան վրայ։ Եւ որովհետեւ պաշտօնարանը, ըստ օրինաց, հրաժարեր էր, թագաւորը յետ խորհրդակցելու նշանաւոր պետերու հետ, պաշտօնարանի կազմութիւնը յանձնեց Սէրրանո մարաջախտին՝ դուքս Տորրէի որ ստանձնեց Պատերազմի պաշտօնէութիւնը. Մարտոս եղաւ պաշտօնեայ Արտաքին Գործոց, Մորիլլա Հանրային կրթութեան, Ուլլօա՝ Արդարութեան, Սագասդա՝ Ներքին Գործոց, Մորէր՝ Ելեւմտից, դ՝Այալա՝ Գաղթականութեանց, Բէրանժէ՝ Մովային Ջօրութեան։ Նոր պաշտօնեայք երդուընցան Յունուար 4ին. և առաջին գործերնին եղաւ նամակնին առ Սրբազան Պապն Հռովմայ, զոր ստորագրեց թագաւորը, յորում կ՝իմացնէր իւր Սպանիոյ գահը ելլելը և կը խնդրէր անոր օրհնութիւնը։ Մանոյց թագաւորն Ամէդէօ նաեւ օտար Պետութեանց իր գահը բազմելը և ամեն Պետութիւնք ճանչցան և սկսան յարաբերութիւնք։

Ի Սպանիա բանակին երդման ժամանակ՝ քանի մը զօրավարք, հասարակապետականք, կարլոսեանք և Մոնպանսիէ իշխանին կողմնակիցք, երդումն չտալով, հրաժարեցան պաշտոննէն։

Մարտ 17ին հասաւ ի Սպանիա նաեւ Մարիա Վիկտորիա թագուհին և Ամէդէօ ընդ առաջ գնաց մինչեւ ՅԱիկանտէ։ Ժողովուրդը եռանդուն ընդունելութիւն ըրաւ թագուհւոյն և աննկարագրելի էր ուրախութիւնը, երբ թագաւորը և թագուհին՝ որ գիրկը ունէր զՄանուէլ Ֆիլիբէրդոս իշխանը, (յետոյ Դուքս Աօսդայի) պատշգամբը ներկայացաւ։ Ալիկանտէէն ուղեւորեցան մայրաքաղաքը ընկերակցութեամբ Սէրրանո մարաջախտին և բոլոր պաշ-

տունէից։ Մադրիդ մտան Մարտ 19ին անհամար ժողովրդեան կեցցէներուն մէջէն։ Բայց դիտուեցաւ որ սպանիական բարձր ազնուականութեան տիկնանց մաս մը կը պակսէր. և այդ ցրտութիւնն էր որ օրէ օր աճեցաւ «առ օտարը», ինչպէս կոչուեցաւ արքունական ընտանիքը։

Խորհրդարանի բացումը։ 1871

3. — Թագաւորին գալստեամբ լուծուեր էր խորհրդարանը, և նոր ընտրութիւնք եղեր էին Մարտ 18ին, յորում վարչութիւնը կրցեր էր շահիլ 230 ձայն, 50 կարլոսեանք, 45 հասարակապետականք 15 չափաւորականք և 13 մոնպանսէեանք։ Մերակուտին մէջ վարչականաց մեծամասնութիւնը աւելի զգալի էր։ Սակայն երեսփոխանական ընտրութեանց արդիւնքը կը յայտնէին գաւառաց ոմանց արքունեաց հակառակ զգացումը, զոր գործով և յուզմամբ ալ ցրցուցին ընտրութեանց ժամանակ. և վարչութիւնը բռնադատուեցաւ բանակը գործածել յԱրակոնա ի Սարակոսսա, յԵրիտա և Անդալուսիա գաւառին մէջ խռովութեանց դէմն առնլու համար։ Վարչութեան ի սկզբան ցրցուցած ուժով գործունէութիւնը առ ժամս լռեցուց ընդդիմակացները։

Խորհրդարանը բացաւ Ամէդէօ թագաւորը Ապրիլ 3ին, թագի ճառին մէջ յիշելով Հռովմայ Քահանայապետին հետ յարաբերութեանց հաստատուիլը, յուսացնելով որ փութով պիտի խաղաղէր Կուբա, պիտի կարգադրուէր Ելեմուտքը, սահմանադրութիւնը ճիշդ պիտի պահուէր և Սպանիա պէտք էր վստահիլ թագաւորին, թագուհւոյն և իր որդւոց վրայ։ Այս խօսից գրեթէ պատասխան մ'էր Ապրիլ 20ի նիստին, հասարակապետականաց գլխոյն՝ Կաստէլարի բողոքը, որ «Սահմանադրութեան մէջ խոստացուած ընդհանուր քուէարկութիւնը ստութիւն մ'էր». և գոչեց «Քանի մը ճարտարամիտք, որոց ձեռքն էր բանակը, զԱզգը բռնադատեցին ընդունել զԱմէդէօ Սավոյիոյ». յիշեց ապա Մաքսիմիլիանոսի ձեռնարկը և վախճանը ի Մեքսիքոյ։ Ի զուր խորհրդարանին նախագահը կը գոչէր և կը կրկնէր որ թագաւորին անձին վրայ խօսիլ չէր ըլլար։ Ապրիլ 22ին նիս-

Կաստէլար։

տին Կաստէլար կ'առաջարկէր յայտնապէս Ամէդէօ Թագաւորին «սահմանադրականապէս գահընկէցութիւնը. և կը վիճէր նախագահին հետ որ իր այս առաջարկը օրինաւոր էր Սահմանադրութեան համեմատ»։ Փիչ օր վերջը Պիոս Թ պապին յորելինին առթիւ կաթոլիկ երեսփոխանք և մանաւանդ Կարլոսեանք ուզեցին խօսարանի կողմանէ ուղերձ մը ղրկել ի Հռովմ առ Քահանայապետ։ Ազատականք հակառակը պնդեցին և նոյն իսկ պաշտօնարանի անձանց մէջ գժտութիւն ծագեցաւ և երեսփոխանաց յուզմունքը տարածուեցաւ խօսարանէն դուրս և շատ մը խումբեր պտրտեցան Մադրիդի փողոցները «մահ Կարլոսեանց» գոչելով։ Պաշտօնարանը կորսնցուց իր համաձայնութիւնը նաեւ ելեւմտական խնդրոյ մը մէջ. որով Սէրրանօ բռնադատուեցաւ պաշտօնարանի հրաժարականը ներկայացնել Թագաւորին։ Թագաւորը կրկին Սէրրանոյի յանձնեց կազմելու պաշտօնարան մը. և երբ չյաջողեցաւ այն ատեն յանձնեց Մորիլլայի որ գտաւ իրեն պաշտօնակից՝ զգօրավարն Կորտովա՝ Պատերազմի, միանգամայն առժամանակեայ պաշտօնեայ Արտաքին Գործոց, Բէրանժէ՝ Ծովային գօրութեան, Ելեւմտից՝ Ռուից Կոմէց, Մոնդէրօ Ռիոս՝ Արդարութեան, Մանրածօ՝ Հանրային Աշխատութեանց։

Մորիլլա պաշտօնարան։

Յուլիս 25ին նոր պաշտօնարանը ներկայացաւ խորհրդարանաց արմատական ծրագրով մը, «հիմնեալ ազատութեան և կարգապահութեան վրայ, հաստատուն պահելով 1868ի յեղափոխութեան ձեռք բերած իրաւունքները. պիտի հսկէր Ելեւմտից, և որպէս զի կարենայ Պետութեան ահաւոր պարտքին առջեւն առնուլ», որ ամեն տարի գրեթէ 40 միլիոն կ'աւելնար յաջորդաբար. պաշտօնարանը իբր դարման մը, կը սկսէր պաշտօնը 150 միլիոն պէզէդասի[1] փոխառութեամբ մը։ Պաշտօնարանը այսպէս կրցաւ դիմանալ քանի մը ամիս մինչեւ խորհրդարանի նախագահին ընտրութիւնը, յորում

1. Մէկ պէզէդասը կ'արժէ մէկ ֆրանք։

վարչութեան թիկնածուն էր արմատականաց գլուխը Ռիվէրս և չափաւորական ընդդիմակացիցը՝ Սագասդա։ Մորիլլա և Սագասդա ժամանակաւ միաբան զինուորած էին չափաւոր — յառաջադիմական կուսակցութեան մէջ. և լուրջ սահմանադրականք լաւ չէին տեսներ նոցա գործելը. որով ամեն ջանք ըրին միապետական սահմանադրականք համաձայնութեան մը համար ընդդէմ ծայրայեղ կուսակցութեանց. դիմուեցաւ առ Լապարդէրս, դիմուեցաւ մինչեւ թագաւորին միջնորդութեան, որ խըղճամիտ սահմանադրականութեամբ, չուզեց մտնել կուսակցութեանց խնդրոյն մէջ։ Նախագահի քուէարկութեան օրը՝ Սագասդա տասն քուէ աւելի ունենալով քան պաշտօնական թիկնածուն Ռիվէրա, Մորիլլա պաշտօնարանը հրաժարեցաւ. բայց և յուզեց ամբոխէն մաս մը՝ որ քանի մը օր փողոցներուն մէջ գոչելով պահանջեց թագաւորէն Մորիլլայի և արմատականաց վերահաստատութիւնը։

Մալկամպո պաշտօնարան։

4. — Այսպիսի պարագայի մը մէջ, յորում քուէն յայտնի չէր խօսած ծրագրի մը վրայ, դժուարին էր թագաւորին խորհրդարանական պաշտօնարան մը կազմել, որով և կանչեց զՄալկամպո ծովակալը նոր վարչութիւն մը ձեւացնելու համար, յորում մտան Ֆրանչէսկո դէ Պաօլա Կանդա՝ Ներքին Գործոց, Յովակիմ Բանոլ՝ Պատերազմի, Յակոբ Ակուլո՝ Եկեւմտից, Տէլէսֆորս Մոնտէցս ի Ռոբլէտս՝ Հանրային կրթութեան, Վաստակոց՝ Աթանաս Պէրէզ, Կանտալապիէտտա Արտաքին Գործոց. Դաղթականութեանց Բալակսէր, Եդուարդ Ալոնդս Կոլմէնարէս՝ Արդարութեան և Կրօնից, իսկ Մովային զօրութիւնը առաւ նոյն ինքը նախագահը։ Այս անունները մեծաւ մասամբ քաղաքագիտական գոյնի մը և ծրագրի չէին պատկաներ, որով նախագահը Մալկամպո ծանոյց խորհրդարանին, որ սահմանադրականապէս պարտքն էր շարունակել Մորիլլայի ծրագիրը։

Պաշտօնարանի փոփոխութենէն քիչ առաջ ի Սպանիա եկած էր Իտալիոյ թագաժառանգը՝ Ումբէրտս իշխանը, իր թագաւոր եղբօրը այցելութեան։ Այս առթիւ շքեղ հանդէսներ կատարուեցան։ Ումբէրտս իշխանին

մեկնելէն վերջը Ամէդէօ թագաւորը այցելութեան ելաւ այլեւայլ գաւառներու, մերթ եռանդագին և մերթ ցուրտ ընդունելութիւն գտնելով մանաւանդ ուր բազմաթիւ էին կարլոսեանք և կամ հասարակապետականք[1]։

Խորհրդարանը ընդդէմ Հանրապետական Ընկերութեան։

Հազիւ Պաշտօնարանը կազմուեցաւ, անդէն թէ՛ չափաւորականք և թէ՛ արմատականք սկսան ջանալ զայն տապալելու համար։ Հոկտեմբեր 16ի նիստին մէջ երեսփոխանն Եօվէ ի Հէվիա հարցուց պաշտօնարանին թէ ինչ կարծիք ունէր պաշտօնարանը նկատմամբ Հանրապետական[2], որ սկսեր էր տարածուիլ Սպանիոյ գաւառաց մէջ, «ուրանալով հայրենիք, կրօնք, ընտանիք և սեպհականութեան իրաւունք». և գլխաւորքը ի Սպանիա շարունակ խղթով հաղորդակցութեան մէջ էին Կարլ Մարքսի, Բաքունինի և Լիբնէխտի հետ. և արդէն այդ կարծիքները լրագիրներ ալ ունէին։ Եօվէ ի Հէվիայի պատասխանին մէջ, զոր տուաւ Ներքին Գործոց պաշտօնեայն Կանդաւ, արդար գտաւ եղած դիտողութիւնքը և ծանոյց որ 1869ի Սահմանադրութեան համեմատ կարելի էր խափանել Հանրապետական ընկերութիւնը, իբրեւ հակառակ հասարակաց բարուց. տեղեկացուց որ երեք հարիւրէն աւելի այդ վարդապետութեան, օտար քարոզիչք կը շրջէին Սպանիոյ մէջ, «խաբելու սպանիացի ժողովուրդը», և լմնցուց խօսքը յայտարարելով որ վարչութիւնը այդ ընկերութիւնը՝ հակառակ կը դատի օրինաց, որով և ենթարկելի եղեռնական օրինաց։ Պաշտօնէին պայծառ և անկեղծ յայտարարութիւնը զայրացուց խորհրդարանին անկրօն փոքրամասնութիւն մը։ Երկրորդ օրը Ֆէրնանդօ Կարրիդօ երեսփոխանը նախատանօք ընդդէմ կրօնից և սեպհական հայրենեաց գաղա-

---

1. Կը պատմեն այն օրերուն լրագիրք որ ի Կաստէլլոն դէ Լա Պլանա, Ֆէլիպա երեսփոխանը իր տանը պատուհանէն տախտակ մը կախած էր այսպէս. «Պարտք սպանիական 36 միլիար ոսկի, վճարուելիք շահ մէկ միլիար և 200 միլիոն ոսկի, թագաւորական տարեկան ոռճիկ 20 միլիոն ոսկի»։ Ամէդէօ իսկ տեսաւ այս տախտակը, և զինուորք յետ կռիւներու հազիւ կրցան տախտակը վերցնել պատուհանէն,

2. Internationale.

փարի, ուզեց պաշտպանել զՄարքս և զՀանրապետականը, որուն դէմ խօսեցաւ Տօն Ռամոն Նոչէտալ կարլոսեան նշանաւոր երեսփոխանը, մեղադրելով նաեւ զՀէվիա և զԿանդաւ որ այդ օրինակ նիւթ մը խորհրդարանի առջեւ հանելու արժանի գտեր էին, որովհետեւ «մարդասպանները համար, ըսաւ, օրէնքը կը գործադրուի և չվիճուիր»։ Վէճերը նոյն կրակով տեւեցին մինչեւ Նոյեմբեր 11, յորում 191 քուէով ընդդէմ 38 քուէից, ընդունուեցաւ օրակարգ մը վստահութեան առ Պաշտօնարանը՝ նկատմամբ իր յայտարարութեան և զգուշութեան ընդդէմ Հանրազգային Ընկերութեան։ Քուէարկութիւնը ըլլալով բարոյական և ընկերական խնդրոյ մը վրայ, ի նպաստ պաշտօնարանին քուէարկեցին նաեւ 53 կարլոսեանք, 18 ալֆոնսեանք և 18 մոնպանսէեանք, և Դոն Կարլոս այս վէճերուն առթիւ գրեց իր գոհութիւնքը առ կարլոսեան երեսփոխանս Օռկաս և Նոչէտալ, իրենց զօրաւոր ճառախօսութեանց համար, աւելցնելով որ Սպանիոյ կրօնական և ընկերական փրկութիւնը իրմով էր միայն՝ օրինաւոր յաջորդ Իզաբէլլա կաթոլիկի և Կարոլոս Եի։

Սպասդա պաշտօնարան։

5. — Քիչ օր վերջը կաթոլիկ երեսփոխաններէն մաս մը, «յանուն ազատութեան» պահանջեց թէ արանց թէ կանանց կրօնաւորական ընկերութեանց կազմութեան լիովին ազատութիւն։ Երեսփոխանն Կրուց Օքոա, յանուն իւր կողմնակցաց պաշտպանեց առաջարկը մեծ ճարտասանութեամբ, որուն հակառակ կեցան ազատականք. որովհետեւ այսպէս կը համարէին բացուած Սպանիա Ցիսուսեանց համար, որոնք հանուած էին 1837ի։ Պաշտօնարանը չուզեց վէճի նիւթ ընել այս առաջարկը, սակայն խորհրդարանը 170 քուէիւք ընդդէմ 127 քուէից որոշեց անմիջապէս վիճել։ Այն ատեն Պաշտօնարանին նախագահը Մալկամպո, որ կանխապէս թագաւորին հետ խորհրդակցած էր, կարդաց խորհրդարանի նիստերուն ընդհատման հրովարտակը և երեսփոխանք ցրուեցան։ Պաշտօնարանը եւս ներկայացուց իր հրաժարականը առ թագաւորը որ չ'ընդունեցաւ և հրաւիրեց պաշտօնեայքը վարելու ընթացիկ գործերը մինչեւ կարելի ըլլայ մեծա-

մասնութիւն մը ձեւանալով, կազմել պաշտօնարան մը խօսարանական հիմանց վրայ։ Եւ սակայն Մալկամպօ կրկին Դեկտեմբեր 19ի ներկայացուց հրաժարականը զոր ընդունեցաւ Թագաւորը և կոչեց զՄագաստա կազմելու նոր պաշտօնարանը, և սա հրաւիրեց զՄորիլլա ընտրելու պաշտօնարաններէն զոմանս։ Բայց Մորիլլա հրաժարեցաւ պատասխանելով «կամ ամբողջը կամ ոչ մին». որով Մագասդա կազմեց վարչութիւնը իր կողմնակիցներէն. առնելով իրեն Արտաքին Գործոց պաշտօնարանը. տալով Մալկամպոյի՝ Մովային զօրութիւնը, Կանդաւի՝ Հասարակաց Աշխատութիւնք, Տոպէտէի՝ Դաղթականութիւնք, Կրուազարի՝ Արդարութիւն, Ելեմուտք Անգուլոյի և Պատերազմը Դամինտէի։

Մագաստա Յունուար 7ի շրջաբերականով մը առ 1872
գաւառապետս և քաղաքապետս խստիւ արգիլից Հանրապետական Ընկերութիւնը պատուիրելով ընդհակառակն նպաստել բարոյական ընկերութեանց։ Սակայն Խորհրդարանի նախագահի ընտրութեան մէջ իր թիկնածուն Հէրրէրա չստանալով մեծամասնութիւն մը, ընդդիմակացք պաշտօնարանին անկումը պահանջեցին։ Թագաւորը յետ խորհրդակցելու նշանաւոր քաղաքագիտաց հետ, լուծեց խորհրդարանը և նոր ընտրութիւնք սահմանեց Ապրիլ 2ի։ Մեծ աղմուկ և բողոք ծնան խորհրդարանին մէջ, մինչեւ ոմանք կը գոչէին ելլել փողոցներու մէջ պատնէշներով պաշտպանել սահմանադրական իրաւունքները։ Աբարցուզա երեսփոխանը գոչեց որ «Թագաւորը բաժնուեցաւ խորհրդարանէն, և այսօր կ՚ինկնայ ի Սպանիա Սավոյիոյ ցեղը»։

Այս թշնամի բացատրութիւնք միայն խորհրդարանի մէջ չէին. հասարակապետականք և կարլոսեանք ամեն կողմ կը յուզուէին. և ի Բարչէլոնա հարկ եղեր էր բանակը գործածելու խռովութեան տիրելու համար։ Մագասդա հրաժարեցաւ պաշտօնարանին նախագահութենէն, խորհուրդ տալով Թագաւորին, աւելի ընդարձակ հիմանց վրայ կազմել պաշտօնարան մը, ծայրայեղ կուսակցութիւնքը փոքրկացնելու համար։ Թա-

գաւորը նոյն ինքն Սագասդայի յանձնեց այդ պաշտօնա-
բանին կազմութիւնը, յորում մտաւ դարձեալ Մալկամպ՝
Ծովային զօրութեան, Դէբլաս՝ Արտաքին Գործոց, Գա-
մաքս՝ Լլեւմտից, զօրավարն Ռէյ՝ Պատերազմի. Ռոմէրօ
Ռոբլէդօ՝ Հասարակաց Աշխատութեանց, Մարտին Հէր-
բէրօ՝ Դաղթականութեանց, Կոլմէնարէս՝ Արդարութեան։
Սագասդա ստանձնեց Ներքին Գործոց պաշտօնարանը։

Ազատական ընդդիմակացք իրենց յոյսը նոր ընտրու-
թեանց վրայ դրեր էին, նոցա գաղափարը առ ժամս ոչ
այնչափ տապալել էր Ամէդէոյի գահը, որուն վեհանձն
վարքը, ազնուական և հաւատարիմ խոսքը, պատկառանք
մը կ'ազդէին ամենուն, ինչպէս թագուհւոյն բարեգոր-
ծութիւնքը պարզ, ամփոփ և մայրական կեանքը, սա-
կայն հակառակ էին Սագասդա պաշտօնարանին, զոր
հակառակ կ'ամրաստանէին 1868ի յեղափոխութեամբ
ստացուած ազատութեանց։ Ազատական ընդդիմակացք
կեղրոնական յանձնաժողով մը կազմեցին, որուն գլուխ
եղաւ նոյն ինքն Մանուէլ Ռուից Ծորիլլա, որ գաւա-
ռաց մէջ պիտի կռուէր վարչութեան կողմնակից երես-
փոխանաց ընտրուելուն։ Սակայն Սագասդա իր հռչա-
կեալ ճարտարամտութեամբ կրցաւ իրեն յաջող ընտրու-
թիւնք ունենալ և նոր խորհրդարանը կ'ունենար 245
վարչական երեսփոխանք, 35 հասարակապետականք,
9 ալփոնսեանք, 16 ազատ կարծիքներ, 35 կարլոսեանք։

Դոն Կարլոս Դուքս Մադրիդի և կարլոսեան կռիւնեբը։

6. — Նոր ընտրութեանց մէջ վարչութեան շա-
հելուն վրայ յուզեցան Կարլոսեանք, որոնք կ'ամրաստա-
նէին զպաշտօնարանը իբր ընտրական շատ մը բռնու-
թիւնք գործադրած ըլլալուն։ Դոն Կարլոս՝ Դուքս Մա-
տրիտի, արգիլեց իր հաւատարիմ երեսփոխանաց կոր-
տէսի նիստերուն գտնուելու և նամակաւ մը առ Դոն
Կանդիդօ Նոչէտալ, նախագահ Կարլոսական Կեդրոնական
Յանձնաժողովոյն, յայտնեց իւր կամքը, զինուք պաշտպա-
նելու իր դատը. որովհետեւ «Յեղափոխութենէ ծնած
վարչութիւնը փակեց օրինաւորութեան դռները, Մադրի-
դի դքսին և իր հաւատարիմներուն կը մնայ միայն զի-
նուց ճամբան։ Դուքսն Մադրիդի չի գար երկար քաղաքա-

կան պատերազմ մը բորբոքելու, այլ համառօտ կռուով մը ազատել հայրենիք և ցուցընել ընկերութեան փրկաւէտ ճամբան... Մադրիդի դուքսը բոլոր աշխարհի առջեւ կը խնդրէ հրամանատար ըլլալու կաթոլիկ բանակի մը յառաջապահին, որ բանակ է Աստուծոյ, Գահուն, Եկեղեցականութեան և Ընտանեաց... և կը կոչէ իր ազգակիցքը շրջապատելու այս դրօշը, որուն վրայ կը փայլին՝ Աստուած, հայրենիք, թագաւոր»։ Դոն Կարլոսի այս յայտարարութիւնը, իր ազդեցութիւնը ունեցաւ. և ապրստամբութիւնք սկսան Նավարայի և Բասքերու գաւառաց մէջ։ Սպանիա ամբողջ անհանդարտ վիճակ մը առած էր։

Այսպիսի յուզմանց մէջ բացուեցաւ խորհրդարանը Ապրիլ 24ին։ Թագաւորը յետ սովորական բանաձեւին, աւելցուցեր էր որ՝ ոմանք «օրինաւոր քուէարկութեան մէջ, որ է ազգին ձայնը, յաղթուելով, կը դիմեն զինուց, և զասոնք պիտի պատժէր անողոք կերպով». վերջացուց խօսքը յայտնելով իր մեծ վստահութիւնը բանակին վրայ։ Կարլոսեանց նոր հրամանատարը, զօրավարն Դիազ դէ Ռատա, երբեմն զօրավար Իզաբէլլա թագուհւոյն, հրատարակեց ամեն կողմ որ «Մեր Օգոստափառ թագաւորը և Տէրը (Կարոլոս Է), ինձ կը գրէ որ հնչեց գերագոյն ժամը։ Սպանիացի սիրտ ունեցողք կը կոչեն իրենց թագաւորը. և թագաւորը պատրաստ է անոնց ձայնին, ուրեմն Սպանիոյ ամեն կողմ ոտք ելլեն ամսուս 21ին գոչելով «Անկցի օտարը, կեցցէ Սպանիա»։ Ամեն կողմ Կարլոսեան ջոկատներ ձեւացան 800 կամ աւելի անձինքներէ, որոց թիւը հասաւ մինչեւ 20,000ի և ասոնք բռնեցին լերանց կիրճերը. և Դոն Կարլոս գաղղիական Պիրենեան լերանց մէջ պահըտուած կը խրախուսէր գաղտ իր հաւատարիմքը. և իր եղբայրը Դոն Ալֆոնսոս կ'ուզեւորէր մտնել ի Սպանիա և անցնիլ բանակներուն գլուխը։ 1872

Վարչութիւնը փութով զՍէրրանօ մարաջախտը ղրկեց 20,000 զօրքով որ եկաւ պաշարելու Լադէլլայի մօտ Կարլոսեան դէ Ռատա զօրավարը։ Յետինս առաջին բաղխումներուն, ըմբռնեց որ չէր կարելի դիմանալ մա-

բաջախտին կանոնաւոր գունդերուն առջեւ, անցաւ Դաղ-ղիոյ սահմանքը և խումբերը ցրուեցան։ Դոն Կարլոս այս ձախորդ լրոյն վրայ՝ ինքնին, հեծեալներու վաշտով մը անցաւ սահմանագլուխը և մտաւ Նավարա և Մայիս 3ին հասաւ ի Վէրա. սակայն ինքը եւս պաշարուելու երկիւղէ մը կրկին թողուց հայրենիքը և անցաւ սահ-մանքը, թողլով վարչութեան բանակին ձեռք 40 մե-ռեալը և վիրաւորք։ Սպանիոյ վարչութիւնը իր դեսպա-նին ձեռքով ի Պարիս պահանջեց Դաղղիոյ վարչութե-նէն թագապահանջին արտաքսումը և արգելք կարլո-սեանց։ Նոյնը պահանջեց նաեւ Զուիցցերիի դաշնակցու-թենէն, ուր կը բնակէր Դոն Կարլոսի ամուսինը դքսուհին Մարգարիտա, որ հանուեցաւ Զուիցցերիէ[1]։ Դոն Կարլոս քաշուեցաւ առ ժամս Յիտալիա, բայց իր հաւատարիմը շարունակեցին հիւսիսային Սպանիոյ մէջ բանակին դէմ գուպարածներ. և Կատալոնիոյ մէջ կարլոսեանց գլուխ անցաւ աներկիւղ զօրավարն Ռ. Տրիստանի, կոմս Ավի-նոյի որ հրաւիրեց զժողովուրդը Աստուած, հայրենիք, թագաւոր, դրօշակին շուրջը, «զոր պարզած է Ս. Փեր-տինանտոսի և Ռէկարեդոսի արժանաւոր ժառանգը և որուն օգոստափառ Դոն Ալֆոնսոս եղբայրը կու գայ կանգ-նելու ձեր գաւառաց մէջ»։ Տրիստանի ձայնը հաւաքեց բազմութիւն մը, մանաւանդ որ եկեղեցականք գրեթէ առհասարակ Դոն Կարլոսի կողմն էին. և ընդ հուպ ժո-ղուեցան բազմաթիւ խումբեր, որոց դէմ կը պատրաս-տուէր նոր գունդեր ղրկելու մարաջախտն Սէրրանս, երբ կանչուեցաւ ի Մադրիդ պաշտօնարանական նոր տագ-նապի մը համար։

Հասարակապետականք եւս ի զէն կոչեցին իրենց կողմնակիցքը հրատարակութեամբ մը «կռուելու և մեռ-նելու Հասարակապետութեան դրօշակի ներքեւ»։ Այս հրատարակութիւնը ստորագրած էին Ռոդրիկ Ցանճնա-ժողովոյ մը անդամք՝ Պի ի Մարգալ, Լմիլիո Կաստէլար,

1. Mémoriale diplomatique, Մայիս 31. 1873.

Պէրէզ դէ Կուման և այլք։ Սակայն Կարլոսեանց յուզումն էր որ աւելի տագնապ կու տար վարչութեան, որուն վրայ աւելցաւ նաեւ պաշտօնարանի անկումը։

Անկումն Սագասդա պաշտօնարանին։

7. — Մայիսի մէջ Ելեւմտից պաշտօնեայն Գամաքօ՝ պարզեր էր ծերակուտին առջեւ 1872, 1873ի Ելեւմտից կշիռը, որով կը յայտնուէր 114 միլիոն պէզէտայից նուազում մը, որ այդ ընթացքով մինչեւ երկրորդ տարուոյն Ցունիսը, պիտի հասնէր 538 միլիոնից. և կ'առաջարկէր նոր յաւելումներ երկաթուղոյ գիներուն և ներքին պարտուց արժէթղթերուն վրայ։ Խորհրդարանը տագնապեցաւ և ապա դաղտ գումարի[1] գործածութեան նկատմամբ ծանր ամբաստանութիւնք եղան Սագասդայի դէմ, որ հաւատացեր էր շատ մը դաւերու, որոց մէջ կը գտնուէին մինչեւ Կասդէլարի և Մորիլլայի անունք։ Խորհրդարանին մէջ բուռն բանակռիւք կը գուշակուէին, երբ Սագասդա ծանոյց որ խարուեր էր անանուն նամակներու հաւատք ընծայելով և պաշտօնարանը արդէն հրաժարականը տուեր էր թագաւորին և նա ընդուներ էր։ Խորհրդարանը ցրուեցաւ լռութեամբ, և այս անգամ եւս Ամէդէօ յետ խորհրդակցելու կողմնակցութեանց պետերու հետ, հեռագրաւ Մադրիդ կոչեց զՄէրրանօ՝ պաշտօնարան կազմելու և մարաջախտը յանձնեց իր մտերիմ Տոպետէ ծովակալին, մինչեւ որ դառնայ նախագահելու։ Մայիս 26ի պաշտօնական լրագիրը կը ծանուցանէր պաշտօնարանին ձեւանալը գրեթէ նոյն տարերքներէ, և Մէրրանօ մարաջախտը յետ դաշինք մը դնելու կարլոսեան գլուխներէն ոմանց հետ[2] յԱմօրօ Վիէտա, բանակը թողլով զէրքակուէ զօրավարը, դարձաւ ի Մադրիդ և առաջարկեց թագաւորին դիկտատորութիւն մը և սահմանադրական իրաւանց առ ժամս դադարումն։

Մէրրանօ։

---

1. Ամէն վարչութիւն ունի գաղտ գումար մը. որուն գործածութեան պաշտօնարանը մանրամասն հաշիւ չի տար խորհրդարանի։

2. Ըստ այս Դաշանց, Կարլոսեան գլուխք զէնքերնին վար պիտի դնէին առ ժամս։ Կարլոսեան խումբերէն ոմանք սպանեցին դաշինք ստորագրող պետերէն մէկ քանին, իբրեւ մատնիչներ։

Ամէդէօ թագաւորը չ՚ընդունեցաւ Սէրբանոյի առաջարկը, որ հրաժարեցաւ. և թագաւորը կանչեց պաշտօնաբան կազմելու Արմատականաց պետը՝ զԻուլից Մորիլլա, որ Յուլիս 17ին ներկայացաւ խորհրդարանին իր պաշտօնակիցներով, Մարտոս՝ Արտաքին Գործոց, զօրավարն Կորտովա՝ Պատերազմի. Մոնդէրօ Ռիոս՝ Արդարութեան, Ռուից Կոմէց՝ Նլեւմտից. Բէրանժէ՝ ծովային զօրութեան։ Մորիլլա պահեց իրեն Ներքին Գործոց պաշտօնէութիւնը։ Յետոյ լուծեց խորհրդարանը նոր ընտրութեանց կոչելով Օգոստոս 24ին։

Մորիլլա պաշտօնարան։

Ընտրութիւններէն առաջ թագաւորը այց ելաւ Ատլանդեանի եզերաց գաւառներուն և ամեն կողմն եռանդնալից ընդունելութիւն գտաւ ժողովրդէն։ Դաղղիոյ Հասարակապետութեան նախագահը Պ. Թիէր, մասնաւոր նուիրակութիւն մը ղրկեց ողջունելու զթագաւորը որ փութով դարձաւ ի Մադրիդ, որովհետեւ սկսեր էին ընտրութիւնք։ Դոն Կարլոս իր հաւատարմաց արգիլեր էր մասնակցելու ընտրութեանց, բայց Ամէդէօյի դէմ կը յառնէր ուրիշ թագապահանջ մը եւս։ Մոնպանսիէ իշխանը նամակով մը կը հրաժարէր Սպանիոյ թագին իրաւունքէն և խաղաղութեան միակ ճամբան կը ցուցնէր Ալֆոնսոսի, Իզաբէլլայի որդւոյն, թագաւորութիւնը։ Այս հրաւէրը մեծ ընդունելութիւն գտեր էր բարձր ատենականաց և զօրավարաց կողմէն։ Այսու հանդերձ խորհրդարանին մեծամասնութիւնը արմատականք կը կազմէին, որոնք 230 էին թուով։

8. — Ընտրութիւններէն անմիջապէս վերջը պաշտօնարանը փափագեցաւ որ թագաւորը այց ելլէ նաեւ հարաւային գաւառաց. նախ Սանտանդէրի բաղնիքները երթայ և ապա պտտի Բիսքայա, Արակոնա և Կատալոնիա գաւառները։ Մեկնելէն երկու օր առաջ Յուլիս 18ին, մինչ թագաւորը և թագուհին գիշերանց կը դառնային շրջագայութենէ մը, Արէնալ փողոցը հասնելով, քանի մը զինեալ անձինք յարձակելով կառքին վրայ ատրճանակի հարուածներ պարպեցին։ Ոստիկանութիւնը դաւի մը կասկածէ, թագաւորին անցնելու փողոցները զի-

Դաւ ընդդէմ թագաւորին։

նակիրք դրած էր. սոքա արթնութեամբ դիմեցին աւա-
զակաց վրայ, հարուածները շեղեցան և դաւաճանք բրո-
նուեցան[1]։ Դաւին լուրը տարածուեցաւ մայրաքաղաքին
մէջ, բոլոր ժողովուրդը ոտք կանգնեցաւ և խանդավառ
ցուցմունքներ և լուսաւորութիւնք եղան առ Թագաւորն
և Թագուհին։ Ամեն աշխարհէ խնդակցութեան հեռագիր-
ներ հասան և գոհաբանական աղօթքներ կատարուեցան
եկեղեցեաց մէջ։

Երկրորդ առաւօտ Ամէդէօ Թագաւորը հետիոտն ելաւ
պալատէն միայնակ իր սովորական շրջանն ընելու և
սահմանեալ օրը մեկնեցաւ ի Սանդանտէր և գաւառաց Այցելութիւն գաւառաց։
այցելութեան, ամեն կողմ խնդագին ընդունելութեանց
մէջ զգալով որ իբր օտար մը կը նկատուէր ժողովրդեան
մեծամասնութենէն։

Սեպտեմբեր 12ի բացաւ խորհրդարանը, յիշելով
արտաքին պետութեանց հետ բարեկամական յարաբերու-
թիւնքը, Ս. Դահուն հետ բանակցութիւնքը, կարլոսեանց
ընկճուիլը, Կուբայի ապստամբութիւնը՝ որուն համար
հոգ պիտի տարուէր, Իլեւմոից նկատմամբ ըլլուելիք բա-
րեկարգութիւնք և յառաջադիմական օրէնքներ։ Պաշտօ-
նարանը այս ծրագրին վրայ ունեցաւ նաեւ յաջողու-
թիւն նախագահի և դիւանի ընտրութեանց մէջ և փու-
թով կրցաւ նուաճել հասարակապետականաց ապստամ-
բութիւն մը Ֆէրրօլի նաւարանին մէջ։ Սակայն այդ առ-
թիւ կատարուած մէկ քանի խստութիւնք կամ անգթու-
թիւնք գրգռեցին Մադրիդի ամբոխը և մայրաքաղաքին
զինուորագրեալք կոտրեցին քուէի սափորները և ապըս-
տամբեցան։ Մադրիդի փողոցները քանի մը օր սարսափի
դրութեան մէջ էին. ապստամբք տիրեցին զօրաւոր կէ-
տերու և տեսնելով հեռուանց Ֆորիլլայի կառքը, վրան
հրացան ուղղեցին։ Ինքը մէջը չէր, բայց մեռեալ գլո-
ռեցաւ իր երիտասարդ կառապանը։ Այնքան խռովու-

---

1. Դատը երկար տեւեց, լմնցաւ երբ Ամէդէօ մեկնած էր ի Սպանիոյ։
Դաւաճանք կը պատկանէին Հանրապետական Ընկերութեան։

թիւնը սաստկացաւ մինչեւ պաշտօնարանին հակառակ զօրավարք՝ Սէրրանօ, Տոպետէ, Զէրվինօ, Լոպէց Դոմինկուէց՝ Պատերազմի պաշտօնարանը դիմեցին իրենց անձնանուէր ծառայութիւնը մատուցանելու։ Պաշտօնարանը խոհեմութեամբ առանց արիւնահեղութեան բանակին ձեռքով կրցաւ խաղաղել մայրաքաղաքը։

Ամէդէօ կը հրաժարի Սպանիոյ գահէն։

9. — Այս ամէն պատահարք տխուր ազդեցութիւն մը կ'ընէին Ամէդէյի վրայ։ 1873ի Յունուար 30ի ունեցաւ արու զաւակ մը[1], որուն համար չուզեց խնդակցութեան ընդունելութիւնք. բայց մկրտութեան հանդէսը փետրուար 8ին կատարեց մեծ շքով։ Յետոյ անխռով՝ իբրեւ մարդ մը որ կանխաւ կարգադրած էր ամեն բան, կոչեց զՊորիլլա՝ վարչութեան գլուխը՝ և իմացուց որ անդառնալի կերպով սահմանած էր հրաժարիլ Սպանիոյ Գահէն։

Լուրը փութով տարածուեցաւ Մադրիդի մէջ և փետրուար 10ի պաշտօնարանը իրեն եղած հարցմանց պատասխանեց թագաւորին անյեղլի կամքը։ Խորհրդարանը անմիջապէս առաջարկեց և ընդունեցաւ որ ծերակոյտը միանայ իրեն կազմելու Սահմանադիր ժողովքը, որուն մէջ փետրուար 11ի կարդացուեցաւ թագաւորին պատգամագիրը, յորում Ամէդէօ կը յայտնէր թէ ո՛րչափ փափագած էր կառավարելու Սպանիա սահմանադրականապէս և սիրով, բայց իր փափագը չէր կատարուած և կը շարունակէին կուսակցութեանց կռիւներ, որով լաւագոյն կը համարէր հրաժարելու Սպանիոյ թագէն ինքը և իր որդիքը։

Պատգամագրոյն ընթերցմանէն վերջը, զոր ամենայն ոք մտիկ ըրաւ յարգութեամբ, թագաւորին իղձը քուէարկութեան ենթարկուեցաւ և ընդունուեցաւ միաձայնութեամբ։ Ապա հաստատուեցան երկու Յանձնաժողովք, յորոց մին հրաժարման թղթոյն պիտի պատասխանէր, միւսը արքայական շքով պիտի ընկերէր Ամէդէյի մինչ-

1. Յետոյ կոչուած կոմս Տորինոյի։

չեւ սահմանագլուխ։ Սահմանուեցաւ նաեւ որ Ազգային սահմանադիր ժողովքը անուանէ զվարչութիւնը։

Փետրուար 12ին առաւօտ Ամէղէօ որ կրկին Դուքս Աօսդայի տիտղոսն առաւ, երկաթուղւոյ հապճեպ ընթացքով իւր ամուսնոյն և զաւակաց հետ, միաբան ցանձնաժողովոյ անձանց, մեկնեցաւ ի Լիզբոնա, իւր փեսուն և քրոջ՝ Մարիա Պիայի քով, փափագելով հանգստացնել տղաբերութենէ նոր ելած իշխանուհի ամուսինը։ Անգղիոյ, Իտալիոյ, Պորտուգալի պետութիւնք, հեռագրեցին որ իրեն տրամադրութեան ներքեւ կը դնէին պետական նաւեր, թէ ծովով ուղեւորէր. բայց իշխանը նախադաս համարեցաւ անպաճոյճ անցնիլ ի Լիզբոնա ուր ընդունեցաւ նաեւ իր հրաժարման թղթոյն պատասխանը Ազգային ժողովքէն։ Յետոյ անցաւ Յիտալիա, ուր գտաւ աննկարագրելի եռանդուն ընդունելութիւնք. կրկին մտաւ ծերակուտի մէջ և ընդհանուր հրամանատար անուանուեցաւ հեծելազօրուն[1]։

---

1. Ամէղէօ թագաւորին հրաժարման շտապեցուցիչ պատճառն եղաւ զինուորական խնդիր մը. Հիտալգօ անուամբ Քնդանօթաժիզ զօրաց հրամանատար մը, ամբաստանուած էր որ Սան Ճիլ զինուորական բանտին մէջ սպանել տուած ըլլայ իրեն հակառակորդ եօթ սպայք։ Ինքը Թէպէտ միշտ ուրացած էր, սակայն զինուորականք անպատիւ կը համարէին նորա կենակցութիւնը։ Երբ Ֆորիլլա պաշտօնարանը, արմատական կարծիքներուն համար, զՀիտալգօ զօրավարութեան ատիճանի բարձրացուց, ուրիշ զօրավարներ չուզեցին մէջերնին ընդունիլ. իսկ Ֆորիլլա անուանեց զինքը ընդհանուր հրամանատար Կատալոնիոյ։ Ան ատեն 800է աւելի սպայք սպառնացան հրաժարականին դրկելու, թէ Հիտալգօ Կատալոնիա դրկուի։ Թագաւորը յայտնեց իր վարանմունքը առ Ֆորիլլա, բայց սա բռնադատեց ստորագրելու հրովարտակը և ընդունելու սպայից հրաժարականը թէ տային, որովհետեւ այդ, կըսէր, «զինուորական ապստամբութիւն մ'էր. և խորհրդարանին մէջ արմատական երեւոյթան մը մեծապէս մեղադրելով սպայքը, մեծամասնութիւնը համաձայն գտնուեցաւ այս մեղադրանաց։ Այս ատեն Ֆորիլլա բռնադատեց զԱմէղէօ ընդունելու սպայից հրաժարականը։ Թագաւորը պատասխանեց «Չեմ կրնար մերժել ստորագրութիւնը սահմանադրականապէս, քանի որ պաշտօնարան և խորհրդարան միաբան կը վճռեն, չեմ կրնար լուծել պաշտօնարանն և խորհրդարանը քանի որ համաձայն են. կը մնայ ինձ հրաժարիլ և քաշուիլ»։ Ան ատեն Պատերազմի պաշտօնեայն ընդունեցաւ սպայից հրաժարականները և գիրենք սպասաւան կացութեան մէջ դրաւ։ Հրաժարեալ սպայից տեղ անուանուողներն եւս անմիջապէս հրաժարեցան։ Վարչութիւնը նախկին սպայից դիմեց, սակայն կրկին չ'ընդունեցան քանի որ Հիտալգօ հրամանատար էր։ Այսպէս ընդերկար շփոթութիւն շարունակեց Քնդանօթաժիզ գունդերուն մէջ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԴՈՆ ԿԱՐԼՈՍ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

1. Դաշնակցական Հասարակապետութիւն. — 2. Դոն Կարլոս ի Սպանիա. – Ի Կուէրնիքա Թագաւոր հռչակուիլը. — 3. Ծայրայեղ հասարակապետականք ի Կարթագինէ. – Դոն Կարլոս կը տիրէ Իստէլլայի և Հիւսիսային միջին գաւառաց. — 4. Մաղրիդի վարչութիւնը. Կասդէլար գլուխ՝ Գործադիր իշխանութեան. — 5. Կուբայի ապստամբութիւնը. – Միացեալ Նահանգաց սպառնալիքը. — 6. Կասդէլար պաշտօնարանին անկումը. – Պետական հարուած. – Ալբրանս մարաշախտ գլուխ վարչութեան. – Կարթագինէի առումը. — 7. Բիլբաօյի դիմաց հասարակապետականաց յաջողութիւնը. – Իստէլլայի դիմաց կարլոսեանց յաղթութիւնը. – Քոնքա զօրավարին մահը. — 8. Հասարակապետութիւնը և եւրոպական պետութիւնք. — 9. Ալբրանս բանակը կը մեկնի. — 10. Զինուորական Արտայայտութիւն մը զԴոն Ալֆոնսոս բուրբոնեան Թագաւոր կը հրատարակէ. — 11. Դոն Ալֆոնսոս ի Սպանիա. – Կանոնաւոր դէ Կասդիլլօ պաշտօնարան. – Ալֆոնսոս ԺԲի բանակը, Պետութեանց ընդունիլը. — 12. Դոն Կարլոսի հրատարակութիւնը. – Ցաղթութիւնքը. – Զօրավարաց ոմանց հեռանալը. — 13. Թագաւորական բանակին յաղթութիւնքը. – Ուրճէլի առումը. Ցովէլլար Կուբա կը դրկուի. — 14. Ընտրութիւնք. խորհրդարանի բացումը. – Ալֆոնսոս ԺԲ բանակին գլուխ. – Իստէլլայի անձնատուր ըլլալը. Դոն Կարլոս կ'անցնի ի Գաղղիա։

Հասարակապետութիւն Դաշնակցական։

1. — Ամէդէօ Սավոյացւոյ մեկնելէն վերջը, երկու խորհրդարանք Սահմանադիր ժողովք կազմելով, ընտրեցին վարչութիւնը. Ֆիկուէրաս՝ հասարակապետական, 244 քուէով ընտրուեցաւ նախագահ ժողովոյն, Պի ի Մարգալ՝ Պաշտօնեայ Ներքին գործոց, Կորտովա՝ Պատերազմի, Նիկոլա Սալմէրոն՝ Արդարութեան, Ֆրանչիսկո Սալմէրոն Գաղթականութեանց, Բէրանժէ՝ Ծովային զօրութեան, Կաստէլար՝ Արտաքին Գործոց, Վէչէրա՝ Հանրային Աշխատութեանց, Էքիկարա՝ Ելեւմտից։ Երկրորդ օրը 13

փետրուարի, Ազգային Սահմանադիր ժողովը վարչութեան գլուխ անուանեց զՄարտոս. և Ներքին Գործոց պաշտօնեայն այս ամեն եղելութիւնքը և փոփոխութիւնքը իմացուց գաւառաց քաղաքական և զինուորական իշխանութեանց։

Սակայն հազիւ ձեւացեր էր վարչութիւնը, անմիջապէս սկսան պառակտմունք թէ պետութեան և թէ գաւառաց պաշտօնէից մէջ. իւրաքանչիւր ոք իւր կարծեաց համեմատ ռամկավարական ուղղութիւն մը ուզելով տալ վարչութեան։ Մադրիդ՝ հրատարակեց միաւորական հասարակապետութիւն, Բարչէլլոնա Դաշնակցական հասարակապետութիւն և Մալագա՝ Հասարակութիւն։ Հարաւային գաւառաց մէջ ոտք ելան Հանրազգային ընկերութիւնք, որոնք արիւնահեղ կռիւ մը սկսան ազնուականաց և հարուստներու դէմ։ Անիշխանութիւնը աւելի շատցաւ երբ փետրուար 15ի ներուն տրուեցաւ շատ մը կարգ բանտարկեալներու, և փետրուար 21ի Սահմանադիր ժողովոյն գումարումը ջնջեց մահուան պատիժը։ Ի զուր կաստէլար՝ պաշտօնեայն Արտաքին Գործոց, ուզեց հաւատացնել օտար Պետութեանց՝ Սպանիոյ հանդարտ վիճակը և Հասարակապետութեան օրինաւոր պայմանքը, նոյն իսկ հասարակապետականն Փաղղիա՝ դը Լիէմիւզա պաշտօնէին ձեռքով պատասխանեց, որ կ՚ուզէր պահել միշտ միայն «բարի դրացւոյ մը յարաբերութիւնքը» մինչեւ որ Սպանիա ունենայ «ազատ ընտրութեամբ» հաստատուն վարչութիւն մը։ Անգլիա և ուրիշ Պետութիւնք չուզեցին պաշտօնական յարաբերութիւնք սկսիլ. մանաւանդ ամեն օր կը լսուէին նորանոր յազմունքներ բանակին մէջ, որով վարչութիւնը բռնադատուեր էր ցրուելու զանազան գունդեր, յորոց ոմանք ի խնդիր զինուորական անուան, կ՚երթային ստուարացնելու Դոն Ալֆոնսոսի՝ Դոն Կարլոսի եղբօր բանակը։ Դոն Ալֆոնսոս հասարակապետութիւնը հրատարակուելու լրոյն վրայ, շքեղ ըսպայակուտով մը և բազմաթիւ խումբելով հասաւ Յ()լօթ և ի Վ.ետրա միաբան իր ամուսնոյն որ ամեն վտանգաց մէջ միշտ ընկերեց իշխանին։ Դոն Ալֆոնսոս որ իր զինուո-

բութիւնը կատարած էր յԱւստրիա և ապա անցեր էր ի Հռովմ Պապին զուաքներուն հրամանատարութեան և զոր թողեր էր Իտալացւոց զՀռովմ առնելովը, ի Սպանիա հասած ժամանակ կը բերէր հետը համակրութեան և հակակրութեան խառն համբաւներ, ազնուականութեան և չափազանց խստութեան, որոնք երբեմն ունեցան իրենց վնասքը կարլոսեան դատին և յորոց օգուտ քաղեց հասարակապետութիւնը։

Ազգային ժողովքը նոր քաղաքական պատերազմի մը առջեւ լաւ համարեցաւ Մշտամնաց Յանձնաժողով մը անուանել և ցրուիլ. նոր ընտրութեանց կոչելով զժողովուրդը Մայիսի մէջ, քանի որ ներկայ խորհրդարանք ընտրուած էին թագաւորական վարչութեան ժամանակ։ Բայց չցրուած քուէարկեց Կասդէլարի դրդմամբ՝ Պորտո Ռիկոյի մէջ գերութեան բարձումը։ Վարչութեան նախագահը եւս Մարտոս՝ առողջութիւնը պատճառելով հրաժարեցաւ և իրեն յաջորդեց Ֆրանչիսկո Սալմէրոն։

1873 Մարտ 22.

Սակայն փութով սկսան գժտութիւնք Յանձնաժողովոյն և պաշտօնարանին մէջ. որ կամաւոր զինուորներով պաշարել տուաւ գումարման տեղը և քանի մը օր Մադրիդ մեծ յուզման մէջ էր. վերջապէս Ապրիլ 24ին Ֆիկուէրաս ցրուեց Յանձնաժողովը, որուն անդամք հեռացան բողոքելով այս «բռնակալութեան» դէմ։ Երկու եօթնեակ վերջը կատարուեցան խորհրդարանի ընտրութիւնք և 385 երեսփոխանաց մէջէն 357ը դաշնակցական հասարակապետականք էին, 21 արմատականք և 6 պահպանողականք։ Խորհրդարանին բացումն եղաւ Յունիս 1ի և Կասդէլար իրեն յատուկ պերճախօսութեամբ մը, ինչպէս սովորութիւն է, պանծացուց Սպանիոյ «նոր ապագայն, ազատութեան և յառաջադիմութեան ճամբուն մէջ»։ Ժողովոյն նախագահ ընտրուեցաւ մարգիզն Օրէնսէ՝ հին հասարակապետական մը և փոխան նախագահներ՝ Պալանցա և Դիազ Փուինտէրս։ Երբ յետոյ կարգը եկաւ Պաշտօնարանի մը կազմութեան, երեսփոխաններէն ոմանք առաջարկեցին նախ հռչակել զՍպանիա՝ Դաշնակից ռամկավարական Հասարակապետութիւն, և այս առաջարկը

ընդունուեցաւ երեք անգամ մեծամայն ծափահարութեամբ։ Պաշտօնարանի նախագահ ընտրուեցաւ Պի ի Մարգալի, որ առաւ նաեւ Ներքին Գործոց պաշտօնէութիւնը, Արտաքին գործոց պաշտօնեայ անուանուեցաւ Յոզէ Մուրը, Ելեւմտից՝ Թէոդորօ Լատիքօ, Նիկոլա Լատիվանէց՝ Պատերազմի։ Յետոյ խորհրդարանը զբաղեցաւ կազմելու Դաշնակից վիճակները, որոնք ըստ Կաստէլարի առաջարկութեան պիտի ըլլային 1. Պորտօ Ռիկօ, 2. Կանարեան կղզիք, 3. Փաշէարեան Կղզիք, 4. Կատարոնիա, 5. Արագոնա, 6. Նավարրա և Բիսքայա, 7. Վալենցիա և Մուրցիա, 8. Նոր Կաստիլիա, 9. Հին Կաստիլիա, 10. Կալիցիա, 11. Անտալուսիա, 12. Վերին և Վարին Լոյէմատուրա, 13. Կուբա և Ֆիլիպինեան Կղզիք։

Դոն Կարլոս ի Սպանիա. — Ի Կուէրնիքա թագաւոր հռչակուելը։

2. — Վարչական այս տագնապներու և շփոթից ժամանակ, Դոն Կարլոս Բուրբոնեան, Դուքս Մադրիդի, որ ի Բայոն կեցած կը կառավարէր իրեն հաւատարիմ գունդերը, «այլ եւս թեւերը ծալած չէր կարող դիտելու (ըստ իւր բացատրութեան), իրեն հաւատարիմներուն դիւցազնական վերանորոգիչ պայքարը»։ Յուլիս 16ին առաւօտ յեռ խոստովանելու և հաղորդուելու, անցաւ Սպանիոյ սահմանագլուխքը և մտաւ ի Վէրա։ Իշիանին վեհանձն արքայական կերպարանը, բարձր հասակը, աներկիւղ հրամանատարի մը համբաւը, անկեղծ հաւատարիմ կենակցութիւնը, և որ մեծն է քան զամենայն՝ ճշմարիտ եռանդուն աստուածսիրութիւնը, արդէն զրաւած էին իրեն Հիւսիսային գաւառաց ժողովուրդներուն սիրտը, և Վէրա թագաւորավայել շքեղ ընդունելութիւն մը ըրաւ իրեն։ Հոնկէ հրատարակեց առ բոլոր Սպանիացիս միանալ իրեն հետ և կռուիլ ընդդէմ յեղափոխութեան՝ Աստուած, Հայրենիք և թագաւոր դրօշակին ներքեւ։ Դեռ ինքը ի Սպանիա չմտած, արդէն իր գունդերը սկսեր էին ամեն կողմ յաջողութիւններ ունենալ ընդդէմ հասարակապետականաց։ Դոն Ալֆոնսոս և Սաբալս զօրավարը Ռիբոլէ քիչ հեռու, Ալպէնի քով, նշանաւոր յաղթութիւն մը տարեր էին, ուր մեռեր էր Կաբրինէտոի հասարակապետականաց զօրավարը. յաջորդեր

էր Կուատալայի քով ուրիշ յաղթութիւն մ'ալ[1]։ Այս ամեն յաջողութիւնք իբր կարապետ մը կ'ընթանային իր անուան։

Օգոստոս 2ին Բիսքայա գաւառին Կուէրնիքա աւանը հասաւ։ Ամեն կողմ տօնական կերպարանք մը առած էր և Դոն Կարլոս շրջապատեալ իր շքեղ սպայակուտէն, յետ երդման Բիսքայայի օրինական իշխանութեանց առջեւ, Կուէրնիքայի բազմադարեան ծառին ներքեւ, ըստ աւանդութեան, թագաւոր հռչակուեցաւ Կարոլոս Է. յորջորջմամբ. և հոնկէ հրատարակութիւն մը ըրաւ զոր կը վերջացնէր գոչելով «Կեցցէ՛ Կրօնք, Կեցցէ՛ Սպանիա, Կեցցե՛ն օրինականք՝. Կեցցէ Բիսքայա»։ Եռանդագին ծափահարութիւնք ընդունեցան այս խօսքերը. ապա բոլոր ժողովրդով և քաղաքավարիչներով գնաց մայր եկեղեցին, ուր երգուեցաւ գոհաբանական աղօթքը։

Սակայն եւրոպական ոչ մի պետութիւն ճանչցաւ Կարոլոս Է.ի թագաւորութիւնը. և հասարակապետութեան նկատմամբ անգամ ամեն կողմանէ ցուրտ դիտողութիւն մը կար, նա մանաւանդ որ շփոթից մէջ ծնաւ և շփոթից մէջ կը շարունակէր։

Պայրայեղ հասարակապետականք կ'ամրանան Կարթագինէի մէջ։

3. — Կարլոսեանց յաղթանակներուն վրայ Պի ի Մարգալ խնդրեց իսորհրդարանէն որ առ ժամս խափանուին սահմանադիր իրաւունք. Հարաւային գաւառները պաշարման վիճակի մէջ դրուին։ Ժողովքին մէջ ծայ-

---

1. Գրեցին լրագիրք որ այս կռուոյն մէջ Կարլոսեան գնդապետներէն ոմանք անգթութիւններ գործեցին և կամ խիստ մեկնեցին զինուորական օրէնքը՝ և ի մասնաւորի Մանուէլ Սանտա Կրուզ հրամանատարը։ Դոն Կարլոս իմանալով, իր Տան հազարապետին՝ մարգիզ Վալտէսպինայի ձեռքով պատուիրեց անոր անմիջապէս թողու համանատարութիւնը և հեռանալ Սպանիայէն և բնաւ չդառնալ. ապա թէ ոչ հրացանի կը բռնուի։ Սանտա Կրուզ հպատակեցաւ։

Սակայն ամբողջ Կարլոսեան կռիւներուն մէջ, այսօրինակ ամբաստանութիւնք ստէպ եղած են իրեն զօրավարաց դէմ, որոնք այսպէս անսիրելի ըրին Կարլոսեան խնդիրը։

2. *Fueros*. Բիսքայայի և Նավարրայի գաւառք ունէին զանազան իրաւունքներ ինքնավարութեան. և այս իրաւանց պաշտօնեայքն էին օրինականքը։

բայեղ մասը բողոքեց և դուրս ելաւ սրահէն, Ֆնացեալ երեսփոխանք հաւանեցան պաշտօնարանի առաջարկին։ Մայրայեղք զայրացած թողուցին մայրաքաղաքը և ցրուեցան գաւառները, կռուելու ընդդէմ պաշտօնարանին. ապստամբեցնելով քաղաքները. և ամենէն առաջ բռնեցին կարթագինէ ծովային բերդաքաղաքը, տիրեցին վեց մարտանաւերու և հոն վարչութիւն մը կազմեցին Վիձակ Մուրցիոյ անուամբ, որուն նախագահ եղաւ զօրավարն կոնդրէտաս, որ Մադրիդէն փախեր եկեր էր։ Մայրայեղներու հետ միացան նաեւ Հանրապետականք, և ապստամբութիւնը տարածուեցաւ Վալէնցայի, Կատիչէի և Սէվիլիոյ մէջ։ Խորհրդարանը յանդիմանեց զՊի ի Մարգալ, կոնդրէտաս զօրավարին փախստեան նկատմամբ և Պի ի Մարգալ հրաժարեցաւ նախագահութենէն և միաբան նաեւ ամբողջ պաշտօնարանը. և տեղը ընտրուեցաւ պաշտօնարանի գլուխ Նիկոլա Սալմէրոն. Սալէր՝ Արտաքին Գործոց պաշտօնեայ, Ելեւմտից՝ Կարվայալ. Արդարութեան Ռոտրիկուէց. Պալանցա՝ Դաղթականութեանց և ուրիշ աննշան անուանք։ Նոր պաշտօնարանը իրը ապպատակ հռչակեց Կարթագինէի ապստամբած նաւերը, որով և ամեն օտար նաւ կրնար զանոնք հալածել կամ կալանաւորել։

Սակայն այս սպառնալիքը բնաւ երկիւղ մը չ՚ազդեց։ Սէվիլիա հրատարակեց իր Հասարակութիւնը Պարիսինին նման, որուն մէջ կը մտնէին նաեւ Կատիչէ, Կորտովա և Հուէլվա գաւառք։ Ստացուածք հաւաքական հռչակուեցան. աշխատաւորք շահերնին հաւասար պիտի բաժնէին, հաստատուն բանակ կը վերցուէր, և պիտի գրաւուէին եկեղեցական կալուածք։ Հաստատուեցաւ Հասարակաց փրկութեան յանձնաժողով մը որ անմիջապէս գոցել տուաւ եկեղեցիները, բանտարկեց քահանայքը, հասարակաց կալուածոց ձեռք դրաւ, բացաւ կարմիր դրօշը և կը պատրաստէր ընկերական շատ մը նորութիւններ, երբ Պավիա զօրավարը հասարակապետական գունդերով զՍէվիլիա պաշարեց և յետ ահաւոր կրակի մը Յունիս 29ին, որ տեւեց կէսօրէն մինչեւ գիշեր, առաւ զայն և ապա

չուեց Կատիշէի և ուրիշ քաղաքաց վրայ. որոց կրցաւ տիրել աւելի դիւրութեամբ, որովհետեւ ծայրայեղք և հանրազգայինք արդէն փախեր էին այրելով քարիւղով շատ մը պալատք և դիւանք։ Քիչ օր վերջը Մատինէց Կամպոս տիրեց Վալէնցայի, բայց չկրցաւ առնուլ զԿարթագինէ. միայն բրուսիացի և անգղիացի նաւք կրցան կալանաւորել ապստամբ մարտանաւերէն երկուքը, որոց մէկուն մէջ կը գտնուէր նոյն ինքն Կոնտրէրաս զօրավարը[2]։

Կոնտրէրաս ազատ ձգուեցաւ. որ փութով 2000 զինուոր և հրանօթք ժողուեց և Մադրիդի վրայ չուեց. բայց բռնադատուեցաւ կրկին ապաւինիլ ի Կարթագինէ, թողլով վարչութեան ձեռքը իր հրանօթքը և պաշարքը։

Դոն Կարլոս կը տիրէ Լյատէլլայի և հիսպանային միջին գաւառաց։

Իսկ Կարլոսեանք Օգոստոս 18ի պաշարեցին զԼյատէլլա, ուր հասաւ նաեւ Դոն Կարլոս։ Մադրիդի վարչութիւնը 3000 զինուորաց բանակ մը ղրկեց, որոց կը հրամայէին Վիլլապատիէրնա և Սանտա Պազ զօրավարք, զԴոն Կարլոս երկու կրակի մէջ բռնելու համար։ Թագապահանջը հետը առած 2000 զինուոր, ընդառաջ գնաց եկող բանակին, և ցրուեց զայն։ Յետոյ դարձաւ յարձակմամբ առնելու զԼյատէլլա որ Օգոստոս 24ին անձնատուր եղաւ, և Դոն Կարլոս շնորհեց պահանորդին, որոնք էին 600 անձինք, իրենց պատուոյն վրայ երդու�նալով չկռուելու իրեն դէմ, ազատ մեկնիլ։ Ստացաւ դարձեալ 1200 հրացանք և շատ մթերք։ Սպայից թողուց իրենց սուրերը։

Դոն Կարլոս իր ճամբարը հաստատեց Լյատէլլա ուր թողուց 12,000ի բանակ մը։ Յետոյ իր զօրավարք տարածուեցան Վալէնցա, Մուրցիա, Արագոնա, Տոլէդո, Բուրգոս, Աստուրիա. և 10,000 Կարլոսեանք չուեցին

---

1. Այս նաւերը յետոյ դարձուեցան առ Հասարակապետութիւն և սա արձակեց Դէրֆուռնտ նաւը որ անգղիական դրօշակաւ զէնք և մթերք կը բերէր Կարլոսեանց։

Ամբողջ քաղաքական պատերազմին ժամանակ այլ և այլ անգամ պատահած են իրաց և գերեաց փոփոխութիւնք. զորս չենք յիշեր ամեն անգամ. և այս վայրագ կռիւները, սակայն ունէին նաեւ իրենց ասպետական կողմը, յորս կը ճանչցուէր սպանիական արիւնը։

պաշարելու զԲիլբաո, այսպէս սպառնալով նաեւ Սան Սէբաստիանոյի։

Մադրիդի վարչութիւնը. — Կաստէլար՝ գլուխ Գործադիր իշխանութեան։

4. — Այս պատահարաց առջեւ Մադրիդի վարչութիւնը բոլոր մայրաքաղաքը եղած զօրավարքը ժողովքի կոչեր էր զինուորական որոշողութեան մը համար։ Խորհրդարանին նախագահը՝ մարգիզն Օրէնսէ, որ չափազանց կը դատէր ծայրայեղներուն նկատմամբ եղած թշնամութիւնքը, հրաժարեցաւ պաշտօնէն և իրեն յաջորդեց Նիկոլա Սալմէրոն։ Պաշտօնարանին գլուխ անցաւ Կաստէլար, որ իրեն գրաւիչ ճարտարխօսութեամբ նկարագրեց Կորդէսին՝ Սպանիոյ տագնապալից վիճակը. և առաջարկեց ի զէն կոչելու բովանդակ պահեստը և դրամ քուէարկելու «Ո՞վ ունինք մեզ բարեկամ Եւրոպա, գոչեց. ո՞վ մեզ կը լսէ, ո՞վ զմեզ կը ճանչնայ, կղզիացեալ ենք, բոլորովին միայնակ, չկայ մէկը քովերնիս. մէկ հոգի անգամ զմեզ չճանչնար։ Իսկ մեր թշնամի՞ք. Մեր թշնամիք ունին իրենց բարեկամքը Եւրոպիոյ ամեն մայրաքաղաքաց մէջ։ Մեր բանակը անկարգացած է մեծաւ մասամբ, անոնցը ոգեւորեալ տոկունութեամբ և դիւցազնութեամբ. մենք մէջերնիս պառակտեալ ենք նախանձներով, քէներով, անոնք ամենը մէկ հոգւոյ մը վրայ դրած են վստահութիւننին։ Ժողովք մը ունինք որ ամբողջ եօթնեակ մը կ՝անցնէ անձնական խնդիրներով, փոփոխակի նախատինքներով, ամենայն տգեղ կերպերով, մինչդեռ հրդեհը զմեզ պաշարեր է, մինչդեռ Պատմութեան էջերը կը սպառնան անդառնալի կերպով զմեզ դատապարտելու[1]»։ Խորհրդարանին մեծագոյն մասը որ ի սկզբան ոչ պահեստ և ոչ դրամ տալու մտադիր էր. Կաստէլարի ճարտասանութենէն ձգուած, քուէարկեց Օգոստոս 17ին եթէ դրամ և եթէ զինուոր։ Հինաւուրց զօրավարք որոնք քաշուած էին գործունեայ հրամանատարութենէ, առաջարկեցին բանակը դառնալ, յորս նաեւ Սէրրանո մարաջախտը, որ պատրաստ կը ցուցընէր ինք-

1. Պաշտօնական լրագիր Սպանիոյ։ 1873 Օգոստոս։

զինքը հայրենեացը համար հրամայել «զօրաբաժնի մը, գունդի մը, ջոկատի մը» և իր սուրը կը դնէր ի ծառայութիւն ազատութեան։

1873 Սեպտեմբեր 9ի գումարման կաստէլար յետ նկարագրելու բովանդակ Սպանիոյ մէջ հասարակապետական մասին խառնաշփոթ ընթացքը և յետ յայտարարելու որ «Եւրոպա այն ատեն պիտի ճանչնայ սպանիական հասարակապետութիւնը, երբ սա կարենայ պահել տալ օրէնքները. և կարգ, կանոն թագաւորէ երկրին մէջ», առաջարկեց որ պաշտօնարանին տրուի լիազօր իշխանութիւն և խորհրդարանի գումարմունք ձգուին մինչեւ 2 Յունուար 1874 տարուան։ Խորհրդարանը քուէարկեց. որով և կաստէլար գլուխ անցնելով գործադիր իշխանութեան, առ ժամս դադրեցուց սահմանադրական իրաւունքներ։ Զէրալլոս զօրավարը ղրկուեցաւ Կարթագինէի վրայ որ յետ ամբարտակ բարձրացնելու ի թիկանց քաղաքին, Նոյեմբեր 26ին ահաւոր ռմբակոծում մը սկսաւ, այսպէս մեծապէս աւերելով քաղաքը։ Սակայն ծայրայեղք անձնատուր չ'եղան և վարչութիւնը յետս կոչելով զՁէրալլոս. ղրկեց Դոմինկուէց երիտասարդ զօրավարը։

Իսկ հարաւային բանակներուն ընդհանուր հրամանատար անուանեց զՄորիոնէս զօրավարը որ յաջողեցաւ 8000 զինուորօք մտնելու ի Տոլոսա և հոն ամրանալու։ Տոլոսայի առմանէն վերջը Մորիոնէս չուեց Լստէլլայի վրայ, միաբան Պրիմօ դէ Ռիվէրա զօրավարին։ Նոյեմբեր 7ին գտնուեցաւ կարլոսեան Եօաքուին Էլիօ զօրավարին դիմաց որ 12,000 հոգւով վանեց զՄորիոնէս, հարիւրաւոր անձինք սպաննելով։ Որով պատերազմական երկու գործողութիւնքն ալ նպաստաւոր չ'եղան վարչութեան։

Կուբայի ապստամբութիւնը. — Միացեալ Նահանգաց սպառնալիքը։

5. — Հասարակապետական վարչութեան համար կը շարունակէին դարձեալ Կուբայի ապստամբութեան տագնապները։ Ի Սպանիա ազատականաց իշխանութեան հասնելով, Կուբացիք աւելի պահանջողք եղեր էին և պարզապէս անկախութիւն կ'ուզէին։ Կուբացիք շատ կրած

էին սպանիացի կառավարիչներէն, անիրաւ տուրքերով, հարստահարութիւններով. և իրենց տառապագին ցաւը չէր լսուած մայր հայրենիքէն։ Անկարելի եղեր էր ներկայացուցիչք ունենալ խորհրդարանին մէջ, փակուած էին իրենց համար մատակարարական պաշտամանց դռները, նոյն իսկ ի Կուբա. չունէին ազատ տպագրութիւն մը և հիմա որ մայր հայրենեաց խառնակութիւնը իրենց առիթ մ'էր պահանջնին ձեռք բերելու, չէին ուզեր դիւրաւ հանդարտիլ, մանաւանդ որ յայսմ իրենց գաղտ խրախուսող էին Միացեալ Նահանգք, ոչ այնչափ իրեն միացնելու նպատակաւ, որչափ իր վաճառաշահութեանը պատճառաւ։ Սպանիա դարուս մէջ միշտ զբաղեցաւ Կուբացւոց ապստամբութեամբ. որոց գլուխ կեցած էր ընդհանուր հրամանատարն Զէսպէտէս։ 1869ի փետրուարի մէջ Ֆուէզատա զօրավարը յաջող յաղթութիւններ ունեցաւ և սպանիացի կուսակալն Դուչէ՝ Կուբացւոց նեռումն առաջարկեց և իրենց խնդիրներէն զոմանս ընդունեցաւ, բայց անոնք մերժեցին պահանջելով լիովին ազատութիւն։ Զիրքո Վիլլաս վիճակը ապստամբեցաւ և իրեն գլուխ դնելով Ֆուլով լեհացի զօրավարը, շատ անգամ յարձակումներով նեղեց սպանիական բանակը։ Սպանիա 1869էն մինչեւ 1871 տարին, 300 միլիոն ֆրանք ղրկած էր, որոնք սպառեցան. և 80,000 ղրկուած զինուորներէն միայն 12,000 մնացեր էին. մաս մը պատերազմէ և մաս մ'ալ ժանտաջերմէն սպանուելով։ Կուբացիք 1869ի Ապրիլի 10ին իրենց երեսփոխաններ ղրկեցին Կուռացմար քաղաքը որ Կուբայի կեդրոնն է, և հոն հասարակապետութիւն մը հռչակուեցաւ որուն նախագահ ընտրուեցաւ Զէսպէտէս և Մանուէլ Ֆուէզատա ընդհանուր հրամանատար։ Գնութիւններ հասան Միացեալ Նահանգներէն և Ֆորդան զօրավարը որ յաջորդեր էր Մանուէլ Ֆուէզատայի, յաղթութիւն մը տարաւ Սպանիացւոց վրայ։ Նոր գունդեր հասան Սպանիայէն ընդ ամենը 110,000 զինուոր յորոց 70,000ը կամաւորք. բայց այնքան տիրած էր անկարգութիւնը բանակին մէջ, որ այդքան ստուար գունդեր չկրցան յաղթել 25,000 ապստամբաց՝ նա մանա-

1870 Յունուար 1։

1870 Յունիս. ւանդ բանտարկեցին զԴուչէ կուսակալը և զինքը աքսորեցին։ Բաջորդ կառավարիչք՝ Կարալլէրոն դէ Ռոդաս, Բալմաչէդա, Զէրալլոս, Պիէլտայն՝ բան մը չկարողացան ընել նա մանաւանդ Պիէլտայն հաշտութիւն առաջարկեց Զէսպէտէսի, որ չ՝ընդունեցաւ. և Կուբայի անկախութեան պաշտպանք սահմանեցին որեւէ պայմանովք չ՝ընդունիլ սպանիական հպատակութիւնը. որովհետեւ բնաւ վստահութիւն մը չունէին սպանիական վարչութեան խոստմանց վրայ։

Այս միջոցներուս էր որ Վիրձինիուս նաւը, որ ամերիկեան դրօշ կը կրէր, երևցաւ Սանդիակոյի մօտերը։ Սպանիացի Տորնարդո մարտանաւը կանխապէս գիտնալով որ ապստամբներ և վաճառականներ գութեան մթերք կը պարունակէր, հալածեց զայն և ձգեց մինչեւ անգղիական ջուրերուն մէջ։ Վիրձինիուս ամենայն ինչ ծովուն և կրակին տուեր էր, ածուխը պարպած ըլլալով. և երբ սպանիական մարտանաւը սկսաւ ռմբակոծել, այն ատեն անձնատուր եղաւ։ Նաւուն մէջ կային 165 անձինք յորս Զէսպէտէսի եղբայրը և Ռիան զօրավարը։ Ամենն ալ փոխադրուեցան սպանիական մարտանաւին վրայ և Նոյեմբեր 2ի զինուորական ատեան մը կազմուելով, նախ հինգ անձինք մահուան դատապարտուեցան և անմիջապէս հրացանի բռնուեցան. յետոյ կարգաւ ուրիշներ ալ, յորս կային նաեւ ամերիկեան և անգղիական հպատակներ։ Տեղական օտար հիւպատոսք մեծապէս յուզուեցան. ամեն ջանք ըրին ազատելու իրենց հպատակները, բայց ի զուր։ Այն ատեն հեռագրեցին իրենց պետութիւններուն, միջնորդելու ի Մադրիդ, սակայն լուր մը չեկաւ։ Միացեալ Նահանգաց վարչութիւնը յուզուեցաւ և հրամայեց նաւատորմիղ մը ճամբայ հանել սպանութեանց վրէժն առնելու և պահանջել Վիրձինիուս նաւը որ կը կրէր ամերիկեան դրօշակ։ Սպանիա բողոքեց իր անմեղութեանը համար, պատճառ բերաւ ծովուն ներքեւ հեռագրի թելին խանգարուած ըլլալը և խոստացաւ սպանելոց ընտանիքները լիովին գոհացնել և Վիրձինիուս նաւը դարձնել Միացեալ Նա-

հանգաց։ Այսպէս առ ժամս փարատեցաւ կռուոյ մը տագնապը, առանց սակայն կուրացուց ապստամբութեան վերջանալուն[1]։

Կաստէլար պաշտօնարանին անկումը. — Ալերանս մարշախտը գլուխ վարչութեան. կարթագինէի առումը։ 1874

6. — Յունուար 2ի խորհրդարանը բացուած ժամանակ, Կաստէլար իր լիազօր իշխանութեամբ չէր կըրցած երկիրը լաւագոյն վիճակի մը մէջ դնել և իրեն դիմաց գտաւ զօրաւոր ընդդիմութիւն մը յորս նաեւ Ալմէրոն խորհրդարանի նախագահը, որ կը պահանջէր՝ զրկուին պաշտօն վարելէ եպիսկոպոսներէն ոմանք, որոնք Դոն Կարլոսի կողմը կը բռնէին. կը պահանջէր դարձեալ Պավիա Մորիոնէս և Լոպէզ Դոմինկուէզ զօրավարները և երկու պաշտօնեայք փոփոխուին։ Կաստէլար չ'ընդունեցաւ. պաշտօնարանին ուղղութեան վրայ վիճաբանութիւնք տեւեցին կէսօրուան ժամը 2էն մինչեւ առաւօտեան ժամը 4, և երբ աջակողմեան երեսփոխան մը վստահութեան քուէ առաջարկեց պաշտօնարանին, Կաստէլար ունեցաւ 100 քուէ ընդդէմ 120 քուէից։ Կաստէլար անմիջապէս տուաւ հրաժարականը։ Բայց չկար ուրիշ զօրաւոր կամքով անձ մը վարչութիւն ստանձնելու. և երբ Ալմէրոն բանակցութեանց զբաղած էր նոր պաշտօնարանի մը կազմութեան, ժողովքին սրահը մտաւ սպայ մը Պավիա զօրավարին նամակով մը առ Ալմէրոն, որով Մադրիդի հրամանատարը կը հրամայէր նախագահին ցրուելու ժողովքը։ Ալմէրոն ընդդիմացաւ և մինչեւ աղաչեց զկաստէլար յանուն ազատութեանց, մնալ պաշտօնարանին գլուխ, բայց Կաստէլար յանձն չ'առաւ։ Արդէն Պավիա զօրավարը գրաւել տուեր էր ժողովքին սրահը զօրքերով, ծանուցանելով նոր վարչութեան կազմուիլը։ Նոյն օրը պաշտօնական լրագիրը կը

1. Որոնց վրայ զրկուեցաւ, կարլոսեանց կուսներէն վերջը, Յովէլլար զօրավարը։ 1876 և 1878ի Մարդինէզ Կամպոս զօրավարը որ ներուին շնորհելով, գերութեան բարձմամբ, տուրքերը թեթեւցնելով, կրցաւ առ ժամս կուրացիքը խաղաղել։ 1884ի տրուեցաւ Սպանիական սահմանադրութիւնը։ Բայց կղզեցիք գոհ չէին և ապագայ ժամանակի պահուած էր իրենց ըղձիցը կատարումը։

հրատարակէր հրովարտակ մը ստորագրուած ի Սէրրանոյէ, որով նոյն ինքն Սէրրանո գլուխ կը նշանակուէր սպանիական հասարակապետութեան և պաշտօնարանին. և զայս կը հաղորդէր բոլոր գաւառաց կուսակալներուն և հրամանատարներուն։ Սէրրանո մարաջախտին, Դուքս Տորրէյի՝ մեծ անունը, ամեն կողմ վստահութեամբ ընդունուեցաւ և ուր որ փոքր ընդդիմութիւն մը յայտնուեցաւ, զինուորականք զայն ընկճեցին։ Սէրրանո ոգնականք իրեն ընտրեց Հրդարութեան՝ Քրիստինոս Մարդոս, Պատերազմի՝ Եուվան Բավալա, Նլեմոիոյ՝ Բոզէ Էքէկարէ, Ծովային զօրութեան Եուվան Ջոպէտէ ի Կարբալլօ, Ներքին Գործոց՝ Կարլոս Ռուիզ. Արտաքին Գործոց՝ Սագաստա, վաճառականութեան՝ Թոմաս Մարիա Մոսքուէրա, Գաղթականութեանց՝ Բալագուէր։ Կաստէլար այսօրինակ անսահմանադրական վարչութեան մը դէմ բողոքեց. բայց իր բողոքը արձագանգ մը չունեցաւ։ Յունուար 9ին պաշտօնական լրագիրը կ՝արդարացնէր Պավիա զօրավարին արտայայտութիւնը, հայրենեաց փրկութեան համար և կ՝ապահովցնէր որ 1868ի և 1869ի սահմանադրութիւնք լիովին ի գործ պիտի դրուէին։

Այս պետական հարուածին առթիւ Դոն Ալֆոնսոս Բուրբոն, որդի Իզաբէլլայի Թագուհւոյն, առաջին անգամ կոչ մը ուղղեց առ ազգն, յիշեցնելով իր իրաւունքները Սպանիոյ Թագին. և թէ իրմով միայն, այն է սահմանադրական միապետութեամբ, կարող էր Սպանիա խաղաղիլ։

Նոր վարչութիւնը սաստկացուց Կարթագինէի պաշարումը, նոր գունդեր ղրկեց Կարմոնա զօրավարին հրամանատարութեան ներքեւ և վարչութիւնը Յունուար 10ին տիրեց Ատալայա բերդին, անպատսպար գտնելով զայն[1]։ Ատալայա բերդը կը տիրէր քաղքին վերայ, որով անկէ վերջը անկարելի էր Կարթագինէի ընդ-

1. Ըսուած է որ Սէրրանոյի վարչութիւնը դրամով կրցաւ ստանալ Ատալայա բերդին անպաշտպան թողուիլը։

դիմութիւնը։ Յունուար 12ին ապստամբներուն գլխաւորները մտան Նումանցիա մարտանաւը և աներկիւղ անցնելով հասարակապետական պաշարողաց առջեւէն, ուղղուեցան դէպ ի Վալէրի. և Նումանցիա Յունուար 14ի Օրանի դիմաց խարիսխ ձգեց[1]։

Կարթագինէ աւերեալ և խղճալի դիրքի մէջ մնացեր էր։ Ներքին Դործոց պաշտօնարանը խնդրեց և ստացաւ խորհրդարանէն մեծամեծ գումարներ. և օգնութիւնք ղրկուեցան աւերեալ և արդէն սովը տիրած քաղաքին։

Բիլբաոյի դիմաց հասարակապետական յաղթութիւն։

7. — Ընդհակառակն կարլոսեան բանակը յաջողութեամբ կը յառաջէին Վալէնցիոյ, Կատալոնիայի, Նաւարայի և Բասքի գաւառաց մէջ։ Դոն Կարլոս իր ճամբարը դրած էր Տուրագոյի մօտ, ուր ունէր 30,000 զինուոր և զօրաբաժիններուն կը հրամայէին Դորրէգարէյ և Լիցցարագա զօրավարները։ Տրիստանի զօրավարը 10,000 զինուորօք, փետրուարի սկիզբները տիրեր էր Մանրոտա բերդաքաղաքին, շատ մթերք ձեռք բերելով։ Կարլոսեանք տիրեցին նաեւ Պորտագալէտի, որ պատուար մ'էր Բիլբաոյի. և սաստկացուցին Բիլբաոյի պաշարումը։ Փետրուար 22ին Դոն Կարլոս լուր ղրկեց Կաստիլիոյ հրամանատարին իր 5000 զինուորօք անձնատուր ըլլայ. բայց նա երբ մերժեց, այն ատեն սկսաւ ռմբակոծումը։ Դոն Կարլոս առ ժամս թողուց զԲիլբաօ և դիմեց ի Տոլոսա, ուր մտաւ մեծ հանդէսով Մարտ 5ին. և եպիսկոպոսը զինքը ընդունեցաւ գոհաբանական աղօթքով։ Ապաելաւ այցելութեան վիրաւոր զինուորաց ամենուն մխիթարական խօսք մը ըսելով։ Յետոյ թողուց զՏոլոսա և դիմեց ի Բիլբաօ, ուր հասեր էր նաեւ Մէրրանօ մարաջախտը։

Որովհետեւ թագապահանջին վերջին մեծ յաջողութիւնք մանաւանդ Գրիմօ դէ Ռիվէրայի գունդերուն վր-

---

1. Գաղղիոյ վարչութիւնը ի սկզբան չթողուց որ ապստամբք ցամաք ելլեն Յետոյ բանակցելով Սպանիոյ վարչութեան հետ, շնորհուեցաւ որ ելլեն և գրուին, բայց Սպանիա չդառնալու պայմանաւ։ Իսկ Նումանցիա նաւը ղրկուեցաւ Սպանիոյ վարչութեան։

բայ, մեծ յուզումն պատճառեր էին ի Մադրիդ, Էր-բանոն այս տագնապը առիթ առնելով ինքզինքը գլուխ անուանել տուաւ հասարակապետութեան և իր անձը անբեռնաբարեյի, անպատասխանատու։ Յետոյ պաշտօնարա-նին գլուխ դնելով զՄարալա զօրավարը, մեկնեցաւ զԲիլ-բաօ ազատելու պաշարումէ. որովհետեւ այդ քաղաքին անկումը, մանաւանդ իր ռազմագիտական դրիցը պատ-ճառաւ, մահացու հարուած մը կրնար ըլլալ Հասարա-կապետութեան։

Յետ զինուորական խորհրդոյ մը, Էրբանոն որոշեց յարձակիլ Թշնամւոյն վրայ թէ ծովէն և թէ ցամաքէն և բռնագատել պաշարումը վերցնել։ Մարտ 26ին հա-սարակապետական բանակը շարունակ կրակ մը սկսաւ կարլոսեան գունդերուն վրայ. որ տեւեց նաեւ երկրորդ օրը։ Երկու կողմանէ ալ կը կռուէին մոլեգին եռան-դեամբ, արժանաւոր բարձր նպատակի մը. արիւնահեղ խառնուրդ մը ծագեցաւ, յորում կը մարտնչէր հետի, նոյն իսկ Ֆոպէդէ ծովակալը։ Հասարակապետականաց կող-մանէ ծանր վիրաւորուեցան Լոմա և Պրիմո դէ Ռիվէրա զօրավարք, մեռաւ Ֆուինտանա հազարապետը և կար-լոսեան կողմանէ ինկան Ալլա զօրավարը և բազմաթիւ սպայք։ Գիշերը վրայ հասնելով երկու բանակք քա-շուեցան իրենց ճամբարները։ Դոն Կարլոս հրատարա-կեց իրը յաղթութիւնը իր կողման. և համարեցաւ որ ա՛լ եկաւ ժամանակ վաղչութիւն մը ձեւացնելու և պա-տերազմի պաշտօնեայ անուանեց զէօ զօրավարը, Ներ-քին Գործոց և Ելեւմտից զԿոման Պինաբ և Ընտանեաց գործոց Վիլանէր ծովակալը։

Իսկ Էրբանոն, որուն ներկայութիւնը կարեւոր էր ի Մադրիդ, զօրավարաց խորհրդով ծրագիր մը հաստա-տելով Բիլբաոյի ազատութեան. և հրամանատարութիւնը Մանուէլ Ֆոնքա զօրավարին յանձնելով, մեկնեցաւ ի մայրաքաղաք։

Զօրավարն Ֆոնքա, սպանիական տխուր քաղաքա-կան պատերազմին արի հրամանատարներէն մին, ան-միջապէս խիստ կարգապահութիւն մը հաստատեց բա-

նակին մէջ և յետոյ առ սակաւ սակաւ մօտենալով կարլոսեան գունդերուն, Ապրիլ 28ին բովանդակ թափով, ամեն կողմանէ այնպիսի յարձակում մը սկսաւ, որ Մարտ 1ին կարլոսեան զօրավարք Լիւիս, Տորրէկարէյ, Մէնտիտի, Լարամէնտի, Վէլասգօ և Լիցցարագա, անհնար համարեցան ինչ իրենց դիրքերուն մէջ և Դոն Կարլոս գիշեր ատեն խորհրդի կանչելով հրամանատարները, հրամայուեցաւ պաշարումը վերցնել։ Երկրորդ օրը հասարակապետական գունդերը մեծ յաղթանակաւ մտան ի Բիլբաօ և Սէրրանս զՊոնքա ընդհանուր հրամանատար անուանեց Հիւսիսային բանակին, լիազօր իշխանութեամբ։

Պոնքա Բիլբաոյէն մեկնեցաւ պաշարելու զԼատէլլա կարլոսեանց կեդրոնը, ունէր հետը 30,000 զինուոր։ Մարաջախտն Պոնքա յանկարծական երագ շարժմամբ մը անցաւ զԼգան, հասաւ Լարրագո, յառաջեց դէպ ի Վիլլատուէտս և Յունիս 24ին Լատէլլայի դիմացն էր։ 25ին առաւօտը Մարտինէց Կամպոս և Լքակուէ զօրավարք, տիրեցին շրջակայից այլ և այլ պաշտպանութեանց և 26ին Լքակուէ արդէն կը գտնուէր քաղքին քով։ Այսպէս զօրավարն Պոնքա 26ին կրակ հրամայելով իր 30 թնթանոթից, ընդհանուր յարձակումն հրամայեց, և գունդերուն յառաջելը պիտի պաշտպանէին բարձունքներուն հրանոթքը։ Լատէլլա թէ առնուէր, կարլոսեան խնդիրը ամենածանր հարուած ընդունած պիտի ըլլար և կարլոսեանց այն օրուան քաջութիւնը հասաւ գերագոյն դիւցազնութեան մը։ Կարլոսեանք հրացանի ծայր սուին դրած, ինկան հասարապետական գունդերուն վրայ ահաւոր ջարդ գործելով. և երբ զօրավարն Պոնքա անձամբ դիմեց խառնուրդին մէջ և կը խրախուսէր զինուորքը և հրամաններ կուտար, հրացանի գնդակ մը կողը ծակելով, ելաւ միւս կողմանէ և զինքը մեռեալ գետին տապալեց։ Իր քովը եղող սպայք հազիւ կրցան մարմինը յափշտակել և ձիու վրայ դրած փախցնել բանակը։

Լատէլլայի դիմաց կարլոսեանց յաղթութիւնը։

Պոնքա զօրավարին մահը։

Պոնքա մարաջախտին մեռնելով, հրամանատարութիւնը ստանձնեց հնագոյն զօրավարն Լքակուէ, որ ան-

հնարին տեսնելով յարձակումը շարունակել, հրամայեց նահանջել դէպ ի Լարրագա և Դաֆալլա, թողլով յաղթողին ձեռքը ընդ մեռեալ և ընդ վիրաւոր 1542 անձինք։ Կարլոսեանք իրենց կորուստը յայտարարած են 400 զինուոր։

Յաղթութենէն վերջը Դոն Կարլոս և իւր ամուսինը «թագաւորը և թագուհին» ինչպէս կը գրէին կարլոսեան լրագիրք ի Սպանիա, և օրինաւորական լրագիրք ի Գաղղիա, յաղթանակաւ մտան Էստէլլա և անմիջապէս այց ելան վիրաւորաց, ամենայն խնամք և փոյթ ցուցընելով։ Այս առթիւ հասարակապետական լրագիրք եւս մեծապէս գոված են Դոն Կարլոսի, և իշխանուհոյն մանաւանդ գթոտ սիրտը և բարի անձնաւորութիւնը, որ ջանաց օգնութեան հասնելու նաեւ Էստէլլայի շրջակայ գիւղօրէից աւերներուն և վնասներուն։

Էստէլլայի պարտութիւնը և Քոնքայի մահը մեծապէս յուզեց և վշտացուց զՄադրիդ և զվարչութիւնը։ Սէրրանո անմիջապէս խորհրդի կանչելով պաշտօնարանը, զզօրավարն Ալբալա՝ նախագահ պաշտօնարանին և մտերիմ բարեկամ Քոնքա մարաջախտին, ընդհանուր հրամանատար անուանեց Հիւսիսային բանակին, Սագաստա անցաւ գլուխ պաշտօնարանին և զօրավարն Կոտոնէր պաշտօնեայ պատերազմի։

Քիչ օր վերջը հասաւ ի Մադրիդ Քոնքայի մարմինը, որուն ժողովուրդ և վարչութիւն արքայավայել յուղարկաւորութիւն ըրին։ Ամբողջ քաղաքը, պաշտօնեայք, զօրավարք որոց գլուխ էր ինքնին Սէրրանո, դագաղաց ետեւէն կ՚երթային և թաղուեցաւ Աղոգայի եկեղեցւոյն մէջ։

Պատմութեանս սահմանէն դուրս կ՚ելլէինք թէ ուզէինք մի առ մի համրել և պատմել Էստէլլայի պատերազմէն վերջը եղած հոս հոն բազմաթիւ գուպարածք հասարակապետականաց և կարլոսեանց մէջ փոփոխակի բաղդերով. ի Տէրանէլ կորսնցուցին կարլոսեանք. ի Կուէնցա յաղթեց Դոն Ալֆոնսոս, Մադրիդի դքսին եղբայրը, որով մայրաքաղաքէն 25 մղոն հեռու հասած էր,

կարլոսեանց յաջողութիւնքը ի Կադալոնիա, հասարակապետականաց Էբրոյի ափունքը նահանջը, մերթ գերեաց փոփոխութիւնքը և մերթ փոփոխակի անգութ հրամաններ և աւերմունքներ[1], Ալվարէս զօրավարին Էբրոյի Քուարթիայի տիրելը յաղթութեամբ մը հասարակապետականաց վրայ, որոց կը հրամայէին Մարիոնէս և Ֆաբալա, Լարրագայի և Սէ Ուրճէլի քով հասարակապետականաց պարտութիւնք, Մադրիդի վարչութեան Արտաքին Գործոց պաշտօնէին թուղթը առ Պետութիւնս Եւրոպիոյ ընդդէմ կարլոսեանց «անգթութեան», Դոն Կարլոսի գիրը «առ քրիստոնեայ պետութիւնս» որ «իրաւամբ թագաւոր Սպանիոյ» կը դիմէր առ քրիստոնեայ պետութիւնս, և կը խնդրէր որ «զինքը դատեն իր գործերէն և ոչ թշնամեաց ամբաստանութիւններէն», իր արդարացումը հասարակապետականները տասանորդած ըլլալուն և բրուսիացի Շմիտ սպայն սպանելու նկատմամբ[2]։

8. — Եւրոպա որ մինչեւ այն ատեն անտարբեր աչօք կը դիտէր այս եղբայրասպան կռիւը, քիչ քիչ զզուեցաւ կարդալով ամեն օր երկուստեք եղած արիւնհեղութիւնք և անգթութիւնք. և սկսան դիւանական բանակցութիւնք վերջ մը տալու համար։ Բիսմարք՝ որուն ձեռքն էր այժմ Եւրոպայի կշիռը, չէր կարող համակրիլ Դոն Կարլոսի ծրագրին և գաղափարաց, ինքը՝ որ կա- Հասարակապետութիւնը և եւրոպական պետութիւնք։

1. 1874 Յուլիս 19 Էստեֆտարտէ կարլոսեան լրագիրը կը հրատարակէր հրաման մը. «Որովհետեւ Հասարակապետութիւնը թագաւորին կողմը բռնող զինուորականաց և օգնողաց գոյքը գրաւեր է. կը հրամայենք որ հասարակապետութեան կողմը բռնող զինուորաց և օգնողաց ընտանիք, թողուն թագաւորին գունդերուն բռնած երկիրները և գրաւուին իրենց գոյքերը»։

Այսօրինակ հրամաններ եղած են և սպանմանց նկատմամբ. պատերազմի մէկ սպանուղի մը տեղ, միւս կողմը ուրիշ մը սպանել կու տար։

2. Դոն Կարլոս ինքզինքը արդարացուցած է «տասանորդելու» մասին, որ փոխանակ ամբողջ յանցաւոր գունդը հրացանի բռնելու, գթութեան համար, տասնէն մէկը պատժեր էր։ Իսկ բրուսիացի լրագրին թղթակիցը «բռնուեր էր զէն ի ձեռին, որով իրաւացի էր պատիժը. նոյնը կ'ընեմ թէ վաղը այսպիսի իր մը դարձեալ պատահի»։ Դոն Կարլոս խստիւ արգելած էր, օտարազգի կամաւորք ընդունելու իր գունդերուն մէջ։ «Օտարք պէտք չեն մտնել մեր վէճին մէջ» կ'ըսէր։

թոլիկութեան դէմ պատերազմ մը սկսեր էր ի Գերմանիա չէր կրնար կաթոլիկութեան՝ այն է Դոն Կարլոսի յաղթանակը տեսնել ի Սպանիա և միտեցաւ Հասարակապետութեան կողմը։ Ջանաց որ Անգղիա եւս յայտնապէս իրեն համաձայն երեւայ, սակայն Մեծին Բրիտանիոյ վարչութիւնը, թագուհւոյն խօսքովը յայտարարեց, որ ցաւելովն հանդերձ Սպանիոյ վիճակին վրայ, վնասակարագոյն կը համարէր հեռանալու ոչ միչամտելու քաղաքականութենէն։ Դաղղիա ջանաց գոհացնել զԻսմարք, խոստանալով ամենայն հսկողութիւն զինուց վաճառանենգութեան։ Գերմանիա յայտնապէս ղրկեց երկու մարտանաւք հսկելու իրեն հպատակաց շահերուն և նպաստելու հասարակապետականաց[1]։ Բիսմարք քիչ վերջը քայլ մը եւս յառաջեց և Եւրոպիոյ Պետութեանց դիւաններուն Յայտագիր մը ղրկեց որով կը համարէր «Եւրոպիոյ խաղաղութեան համար հասած է ժամանակը, ճանչնալու Սպանիոյ ներկայ վարչութիւնը»։ Աւստրիա և Դաղղիա անմիջապէս յանձն առին, յետոյ ամեն Եւրոպիոյ տէրութիւնք կարգաւ, բաց ի Ռուսիոյ։ Գերմանիա ու Աւստրիա փութով ղրկեցին իսկ իրենց ներկայացուցիչքը, որոնք պաշտօնական շքով ընդունուեցան Սեպտեմբեր 4ին Սէրրանօ Նախագահէն և ներկայացուցին իրենց թղթերը[2]։ Մարաջախտը մասնաւոր ուշադրութեան նիւթ ըրաւ Գերմանիոյ դեսպանը, նախ զինքը ընդունելով և ջերմ շնորհակալ ըլլալով Բիսմարք իշխանին «ինքնաբերաբար ջանիցը», յորդոր ըլլալով այսպէս միւս Պետութեանց։ Քիչ ժամանակուան մէջ հասան նաեւ Անգղիոյ, Դաղղիոյ, Բէլճիոյ և Պորտուգալի ներկայացուցիչք։ Այս պարագայն զՀասարակապետութիւնը

---

1. Դիւանագիտական Յիշատակարան (Mémorial Diplomatique) թիւ 39 էջ 612։

2. Հոչակեցին լրագիրներէ ոմանք որ կարլոսեանք դաւ պատրաստած էին, ի Մադրիդ դեսպանները բերող շոգեկառքը ճամբէն դուրս հանելու համար։ Կարլոսեանք բացարձակապէս միշտ հերքած են այդ ամբաստանութիւնը։

բարձրացնելով, մահացու հարուած մը կու տար կարլոսեան դատին։

Մարաջախտն Էրրանս քաղաքականապէս կարգադրելով Հասարակապետութեան վիճակը, իր ամբողջ ուշադրութիւնը դարձուց այն միջոցներուն վրայ, որովք կարելի էր ջաղխել կարլոսեանքը և գլխաւորները հանել Սպանիայէն դուրս։ Քաղաքական պատերազմը արհամարհ ըրեր էր իր հայրենիքը բոլոր աշխարհի առջեւ. ժամանակի լրագիրք լի են տխուր արկածներու պատմութեամբք և խիստ հրամաններով, յորս մանաւանդ ամբաստանուած է Դոն Ալֆոնսոս, Դոն Կարլոսի եղբայրը։ Երկու կողմանէ բազմաթիւ գերիները աղքատ և ցաւալի վիճակի մէջ էին. բանակները գրկուած էին շատ մը կարեւորներէ, ինչպէս հոգաչուէին գերիները։ Մարաջախտն Էրրանս առաջարկեց սուրբ Դոն Կարլոս երկու կողման գերիները կուրա դրկել որ հոն կուին ապրստամբութեան դէմ, ի շահ հասարակաց հայրենեաց. սակայն Դոն Կարլոս հակառակ համարեցաւ զինուորաց երդման։ Եղան այլեւայլ անգամ գերեաց փոփոխութիւնք, բայց այս միջոցը քաղաքական պատերազմը արծարծել էր։

Այսու հանդերձ Դոն Կարլոս զօրարաժիններու նոր կարգադրութեան մը առթիւ խոհեմութիւն համարեցաւ իր եղբայրը, Դոն Ալֆոնսոս, հրաժարեցնելու ընդհանուր հրամանատարութենէ և խորհուրդ տալ ելլել Սպանիայէ։ Դոն Ալֆոնսոս, եղբօրը բարւոյն դիտմամբ, թողուց հրամանատարութիւնը, որ տրուեցաւ Տորրէկարէյ զօրավարին, և իր Մարիա դէ լա Նիէվէս ամուսնոյն հետ, որ ամեն վտանգի մէջ ընկերեր էր իրեն, անցաւ Գաղղիա։

Շարունակեցին կարլոսեան և հասարակապետական գունդեր փոփոխակի բաղդով իրենց կռիւնին։ Հասարակապետականաց զօրավարն Լազէոնա պաշարեց զիրուն որ կարլոսեանց ձեռքն էր. բայց ապա յանկարծ թողուց քաշուեցաւ։ Ակէ զայրացած իր գունդերէն 500 հոգի մը որոնք աւարառութեան մը կը սպասէին, տարածուեցան մօտակայ գիւղերը և շատ աւերմունքներ գործեցին։

Լազէոնա զինուորական ատեան մը հաստատեց և յանցաւորներէն բռնուողները խիստ կերպով պատժուեցան։ Ուրիշ զինուորական խորհուրդ մ՝ալ կազմեցին կարլոսեան զօրավարք որ դատի կանչեց Ֆէրալլոս հինաւուրց զօրավարը, որ Լազէոնայի գունդերուն դիմաց քաշուեր էր և անոր տեղ հրամանատար դրուեցաւ Էգանա։

Սէրրանո բանակը կը մեկնի։

9. — Քաղաքական պատերազմին այսպէս երկարելը տաղտկացուցեր էր զՄադրիդ և բոլոր գաւառքը. և յայտնի ինաս մ՝էր Հասարակապետութեան որ անկարող կը դատուէր այսպէս զայն վերջացնելու. և Սէրրանո իմացած էր գաղտ խլրտիւն մը զինուորականաց և ատենակալաց մէջ ի նպաստ սահմանադրական միապետութեան մը, գահը կոչելով զԴոն Ալֆոնսոս՝ Իզաբէլլայի որդին. այսպէս համարելով գոհացնել եթէ ազատութիւն ուզողք և եթէ թագաւոր մը ուզողք։ Արդէն Նոյեմբեր 28ին, Սպանիոյ Ազգը, վարչութենէն գաղտ, փափագնին իմացուցած էին ի Լոնտրա առ Դոն Ալֆոնսոս և իշխանը պատասխանած էր սահմանադրական Միապետութեան մը ծրագրով, վերջացնելով թուղթը որ «ինչ ալ ըլլայ ճակատագիրս, միշտ պիտի ըլլամ լաւ սպանիացի մը, լաւ կաթոլիկ ինչպէս բոլոր իմ նախնիքս, և ազատական՝ ինչպէս ժամանակի անձ մը»։ Սէրրանո գիտէր նոյն իսկ իր բարեկամ, Պրիմօ դէ Ռիվիէրա զօրավարին նպաստաւոր կարծիքը Ալֆոնսոսի նկատմամբ։ Սէրրանո արդեօք զինուորական արտայատութեան մը վախէ, թէ յետին հարուած մը անձամբ փորձելու համար, և այսպէս ցրուելու Դոն Ալֆոնսեան կուսակցութիւնը, վարչութեան հոգերը յանձնեց Սագասդայի. և Դեկտեմբեր 9ին մեկնեցաւ Հիւսիսային բանակը, ամբոխին «կեցցէ՛ Սէրրանո» աղաղակներուն մէջէն։

Մարաջախտը հասաւ ի Մերանտա և անկէ ի Լոգրոնո ուր էր ընդհանուր հրամանատարութիւնը. ապա գնաց ի Վիտտորիա, յետ այցելելու զինուորական հանդերձանաց, կրկին դարձաւ ի Լոգրոնո, ուր պիտի պատրաստուէր Լատէլլայի տիրելու ծրագիրը։ Քանի որ այդ ամուր կեդրոնը կարլոսեանց ձեռքն էր, տակաւին երկար

պիտի տեւէր քաղաքական պատերազմը, անհրաժեշտ հարկ էր տիրել անոր։

Յունուար 6ին՝ Լոմա, Բլանկո և Պորտիլլո հասարակապետական զօրավարք, չուեցին Տոլոսայի վրայ, սակայն Յունուար 7ին Օյածրունի և Ռէնտէրիայի քով զարնուեցան կարլոսեաններէն և ետ դարձան։ Յունուար 8ին աւելի գունդերով Լոմա զօրավարը կարլոսեանց Ուրնիէտա ճամբարին վրայ սկսաւ կրակ թափել. կարլոսեանք որոնց կը հրամայէր Մոգրովէյօ զօրավարը, դիմեցին թշնամւոյն վրայ և սուինով ահաւոր կռիւ մը սկսան և վանեցին զԼոմա որ վիրաւորուեցաւ, ինչպէս նաեւ Մոգրովէյօ. և հասարակապետականք հազիւ կրցան ապահովեալ Սան Սեբաստիանոյի մօտերը։

Այս կռիւներուն և ձախողանաց լուրերը Մադրիդ հասնելուն, արդէն քիչ օր առաջ ընդհանուր տհաճութիւնը պայթելով, վերցուցեր էր հասարակապետական վարչութիւնը, զոր անկարող դատեր էր քաղաքական պատերազմին վերջ մը տալու համար. և հաստատեր էր Յահմանադրական Միապետութիւն մը։

Զինուորական Արտայայտութիւն մը զԴոն Ալֆոնսոս բուրբոնեան թագաւոր կը հրատարակէ։

10. — Դեկտեմբեր 30ին Մարտինէզ Կամպոս և Յովէլլար զօրավարք իրենց գունդերով արտայայտութեամբ մը զԴոն Ալֆոնսոս բուրբոնեան թագաւոր հռչակեր էին Սպանիոյ։ Նոյն օրը անմիջապէս վարչութիւնը կալանաւորել տուաւ զԿանովա դէ Կաստիլլօ, արքունական պաշտօնական գլուխը, և ուրիշ կուսակիցներ։ Պաշտօնական լրագիրը ծանր կերպով պախարակեց այդ «անըմբռնելի արարքը, որ պատճառ պիտի ըլլար քաղաքական նոր պատերազմի մը»։ Բայց պաշտօնարանը չէր կրնար կարծել որ 24 ժամք բաւական պիտի ըլլային փոխել բանակը և ընդհանուր միտքերը. և երբ իրեն հաւատարիմ մնացած սպայից ձեռքով ուզեց իմանալ բանակին կարծիքը, իմացաւ որ գունդերը բացարձակապէս պիտի չկռուէին արտայայտութեան դէմ և պիտի չ'երթային ընդդէմ Մարտինէց Կամպոսի։ Այն ատեն Սագասդա յետ կանոնաւորապէս բողոքելու իր պաշտօնակցաց հետ զինուորական այս արտայայտութեան դէմ, քաշուեցաւ վար-

չութենէն։ Արդէն առանց իր հրաժարելուն ալ Պրիմօ դէ Ռիվէրա զօրավարը բանտէն հանելով զկանովաս դէ Կասդիլլօ, յանձներ էր իրեն անմիջապէս վարչութիւն մը կազմելու յանուն Դոն Ալֆոնսոսի. և Մադրիդի բանակը Դեկտեմբեր 31ին հաւաքուեցաւ և գոչեց «Կեցցէ՛ Ալֆոնսոս Երկոտասաներորդ»։ Նոյնը ըրին Բարչէլլոնա, Սարակոսա, Կատիչէ, Սանտանդէր և ուրիշ բազմաթիւ քաղաքներ, առ որս հեռագիրը ծանուցեր էր Մադրիդի արտայայտութիւնը։

Լուրը փութով հասաւ և ի Լոգրոնո, Հիւսիսային բանակը, ուր զօրավարք և սպայք բնաւ հակառակ տրամադրութիւն մը չցուցին. նա մանաւանդ հայրենեաց խաղաղութեան համար օգտակար համարեցան այս արտայայտութիւնը։ Սէրրանո կոչեց առ ինքն Լազէռնա զօրավարը և հարցուց կարծիքը, որ յայտնապէս խօսեցաւ ի նպաստ Դոն Ալֆոնսոսի թագաւորութեան մը, յուսով հայրենեացը խաղաղութեան։ Այն ատեն Սէրրանո Հիւսիսային բանակին հրամանատարութիւնը զոր ունէր, տալով Լազէռնայի և ծանուցանելով որ կը հրաժարէր վարչութեան նախագահութենէն, մեկնեցաւ անմիջապէս ի Սարակոսա, ուսկից անցաւ ի Գաղղիա, Բիարից և Պարիս[1]։

1875 Յունուար 2։

Դոն Ալֆոնսոս որ արտայայտուելու լրոյն վրայ Լոնտրայէն Պարիս եկած էր իր մօրը Իզաբէլլա թագուհոյն քով Վասիլեւսքի պալատը, հոնկէ Յունուար 6ի նամակով մը առ Կանովաս դէ Կասդիլլօ կը հաստատէր զինքը նոր կազմուած թագապահ պաշտօնարանին գլուխ. և կ՚ընդունէր իրեն ըրած տրամադրութիւնքը։ Արդէն Կանովաս իր կուսակցութեան ներկայացուցիչն էր 1873էն ի վեր։

Դոն Ալֆոնսոս ի Սպանիա. — Կանովաս դէ Կասդիլլօ պաշտօնարան։

11. — Դոն Ալֆոնսոս ԺԲ։ այս միջոցիս 19 տարուան էր և իր ուսումներն սկսած էր Վիեննայի Թերեզիանում, Ազնուականութեան վարժարանին մէջ։ Թագա-

---

1. Սէրրանո մարաջախտը երկար ժամանակ բնակեցաւ ի Գաղղիա, յետոյ դարձաւ ի Սպանիա և բազմեցաւ ծերակուտին մէջ։ Վախճանեցաւ ի Մադրիդ 1885ի Նոյեմբերի, միշտ ամենէն յարգուած.

ւոր հռչակուելուն պէս առաջին գործն եղաւ ի Պարիսէ հեռագրով իմացնել առ Պիոս Թ պապը, որ իւր կնքահայրն եղած էր, և խնդրել անոր օրհնութիւնը. զոր ստացաւ անմիջապէս։ Այցելութեան գնաց Դաղղիոյ Հասարակապետութեան Նախագահին՝ Մակ Մահոնի և Արտաքին Գործոց պաշտօնէին՝ Դրքազ դուքսի, որոնք իրրեւ թագաւոր ընդունեցան զինքը։ Դոն Ալֆոնսոս, կանովա դէ կաստիլլոյի խորհրդին համեմատ, անմիջապէս մեկնեցաւ ի Սպանիա Մարսիլիայի ճամբով, ուր արդէն հասեր էր սպանիական նաւատորմիղ մը զինքը տանելու, պաշտօնարանին և Մադրիդ քաղաքին նուիրակներով։ Յունուար 7ին յետ արքայական ողջոյններու, նաւատորմիղը մեկնեցաւ. և 9ին հասաւ ի Բարչէլլոնա, ուր կը սպասէր իրեն Մարտինէց Կամպոս ուրիշ զինուորականներով և սպիտակ ձիով մը անհամար ամբոխին կեցցէներուն մէջէն ուղղուեցաւ ի մայր եկեղեցին, ուր երգցուեցաւ գոհաբանական աղօթքը։ Յունուար 10ին հասաւ ի Վալէնցա, հոն եւս խանդավառ ընդունելութենէ մը վերջը դիմեցին ամենը մայր եկեղեցին գոհաբանական աղօթքի. ետքը արքեպիսկոպոսը յորդոր մը խօսեցաւ առ սպանիացիս խաղաղութեան համար։ Ի Վալէնցա Դոն Ալֆոնսոս զօրահանդէս մը կատարեց և Յունուար 14ին շքեղ հանդիսաւոր մուտքն ըրաւ ի Մադրիդ։ Պաշտօնարանը պալատը հասնելուն, երկու հրովարտակք ստորագրել տուաւ, առաջնով կ՚ապահովուէին Սպանիոյ պարտամուրհակաց առ օտարս վճարուելիք կտրոնները. և երկրորդը՝ Եկեղեցւոյ գրաւուած բայց տակաւին չգանձուած գոյքերը յետս կը դարձուէին։ Քիչ օր վերջը Ներքին գործոց պաշտօնարանը շրջաբերականով մը չափաւորեց տպագրութեան ազատութիւնը, արգիլելով խօսիլ ընդդէմ վարչութեան և թագաւորին. և իմանալով որ արմատականք կը յուզուէին ընդդէմ Դոն Ալֆոնսոսի թագաւորութեան, իրենց գլուխը զԻուլից Մորիլլա հրաւիրեց աքսոր մեկնելու։ Պաշտօնարանը հաստատեց ասպետական կարգերը զորս վերուցեր էր հասարակապետութիւնը։

Պեսուիթեանց ընդունիլը։

Երիտասարդ թագաւորը որ իր գահը պարտական էր զինուորականաց, Ցունուար 18ին մեկնեցաւ Հիւսիսային բանակը. ուր գտաւ եռանդագին ընդունելութիւն. հոնկէ խօսեցաւ առ ամեն Սպանիացիս «Եթէ կը կռուիք, կ'ըսէր, միապետութեան համար, ես եմ միապետութեան ներկայացուցիչը, եթէ կը կռուիք կաթոլիկ կրօնքին համար, ես եմ ձեր կաթոլիկ թագաւորը. եմ և պիտի ըլլամ սահմանադրական թագաւոր»։ Դոն Ալֆոնսոս իմացուց օտար Պեսուիթեանց եւս իր գահ ելլելը. Աւստրիա, Դաղղիա, Պորտուկալ, Ռուսիա և Բրուսիա անմիջապէս ընդունեցան թագաւորութիւնը և հաստատեցին յարաբերութիւնքը։

Դոն Կարլոսի հրատարակութիւնը. — Ցաղթութիւնքը։

12. — Դոն Ալֆոնսոսի թագաւոր հռչակուելուն, Դոն Կարլոս խորհուրդի կանչեց իրեն զօրավարքը. որոնք վճռեցին՝ որ շարունակուի օրինաւորութեան պատերազմը։ Այն ատեն Դոն Կարլոս հրատարակութիւն մը ըրաւ առ ազգը յայտնելով իր մեծ ցաւը որ իւր արենակիցներէն իշխան մը, գործիք կ'ըլլար Յեղափոխութեան. «իմ պատիւս, իմ բանակիս պատիւը, ինծի ուրիշ բողոք չեն թողուր, բայց ինչ որ կազմակերպուած է թընդանօթներուս անդիմադրելի ճարտարարուեստ բերաններէն։ Սպանիացիք յանուն Աստուծոյ, յանուն մեր Սպանիոյ, կ'երդնում անբիծ պահելու մեր փառօք լի դրօշակը, նշան՝ փրկարար սկզբանց, որ այսօր մեր յոյսն է և վաղը մեր երջանկութիւնը»։ Դոն Կարլոսի այս խօսքերը յուզիչ տպաւորութիւն մը ունեցան իր հաւատարիմներուն վրայ։ Ուրհէլի արքեպիսկոպոսը, զինքը արժանի համարեցաւ, այս խօսից համար, Կարոլոս Մեծ տիտղոսի և զօրավարն Լիցցակարա ընդհանուր հրամանատար կեդրոնական գաւառներուն, պանծացուց առ բանակն «Կարոլոս Եօթներորդ թագաւորին անվկանդ հաստատութիւնը»։ Այս հրատարակութեան յաջորդեցին երկու յաղթութիւնք ի Լակար և ի Լորկա նոյն իսկ Դոն Ալֆոնսոսի ներկայութեամբ։ Փետրուար 11ին Լազէոնա զօրավարը մտեր էր Յոտէյտա քաղաքը ուր հասաւ նաեւ Դոն Ալֆոնսոս թագաւորը և մերձաւոր բլրոյ մը վրայ ելած

կը դիտէր գԼստէլլա և շրջակայ գիւղերը, յորս Լակար և Լորգա. և նոյն գիշերը կ'անցնէր ի Սան Կրիստոբալ։ Երկրորդ առաւօտ կարլոսեանք Կրաւքուի վրայէն յանկարծ հասան և չուեցին դէպ ի Լակար, ալֆոնսեանք յանկարծակիի գալով փախան ի Լորգա և հոն հասնելով կարլոսեանք, արիւնահեղ կռիւ մը ծագեցաւ և թագաւորականք փախան հարիւրաւոր մեռեալներ թողլով դաշտին վրայ և ապաւինեցան իրենց ճամբարը Օտէյտայի մօտ։ Թագաւորը հազիւ ազատեցաւ վտանգէ և հետը խօսող զօրավար մը վէրք մը ընդունեցաւ ուսին։ Այս պատահարին վրայ Լազէոնա հրաժարեցաւ հրամանատարութենէն, նոյնը ըրաւ նաեւ Պրիմօ դէ Ռիվէրա։ Դոն Ալֆոնսոս գնաց ի Պամպէլոնա և յետոյ Յովէլլար զօրավարին հետ հանդիսով մտաւ ի Բուրկոս և Փետրուար 13ին դարձաւ ի Մադրիդ։

Այս ամենը կարլոսեանց վերջին յաջողութիւնք էին սակայն, որովհետեւ ի Մադրիդ միապետական կուսակցութեանց մէջ բանակցութիւնք կ'ըլլային միութեան համար։ Սազասդայի արքունիք յաճախելը, Ալֆոնսոսի հրովարտակը առ ազգն, շատ մը ազատութեանց խոստմամբ, Հռովմայ քահանայապետին զԴերապայծաւ Սիմէոնի հաստատուն նուիրակ ղրկելը ի Մադրիդ, մեծ տպաւորութիւն սկսան ընել կարլոսեան գլխաւորաց վրայ։ Կապրէրա հինաւուրց զօրավարը որ թէպէտ ուղղակի չէր մասնակցած կարլոսեան պատերազմներուն, սակայն միշտ պահեր էր իր հին սէրը և ազդեցութիւնը, յանկնկալս հրատարակեց, որ պէտք էր վերջ տալ այսպէս բզքտուելներու և սկսիլ խաղաղութեան և նոր կազմակերպութեան դար մը։ Առաջարկեց առ Ալֆոնսոս թագաւորը և ընդունեցաւ որ Բասքեան և Նավարրայի գաւառաց ինան իրենց օրինականքը, որ կարլոսեան սպայք և զինուորք, եթէ գան առ Ալֆոնսոս, պահեն իրենց աստիճանները և ընդունին դրամական փոխարինութիւն մը կրած ինասնուն համար։ Ուղղեց նաեւ հրատարակութիւն մը առ կարլոսեանս՝ զինաթափ ըլլալու։ Դոն Կարլոս պատասխանեց՝ զԿաբրէրա մատնիչ հրատարակելով և ար-

Զօրավարաց ոմանց հեռանալը։

1875 Մարտ։

տաքոյ օրինաց։ Այսու հանդերձ կապրէրայի դաշինքը ունեցաւ իր ազդեցութիւնը և կարլոսեան գունդերը սկսան թօթափիլ։ Զգեցին բանակը նաեւ երկու բուրբոնեան իշխանք իրեն արենակիցք, յարգալիր նամակով մը, յորում կը յայտնէին որ իրենք պատերազմ սկսած էին ընդդէմ Յեղափոխութեան և հասարակապետութեան. հիմա որ Սպանիա ունեցաւ միապետութիւն մը և այն բուրբոնեան Տանէն, այլ եւս նպատակ մը չէին տեսներ պատերազմելու, և կը հրաժարէին իրմէ։

Այս պարագայից վրայ աւելցաւ պաշտօնարանին 80,000 պահեստի զինուոր ի զէն կոչելը։ Պրիմօ դէ Ռիվէրա պատերազմի պաշտօնեայ անուանեցաւ, իրեն տեղ Կատալոնիա ղրկուեցաւ Զէրալլոս զօրավարը և Յովէլլար՝ ի Վալէնցա, Տորրէկարէյի գունդերուն դէմ։ Պատերազմը սաստկապէս պիտի մղուէր քանի որ Սպանիա գրեթէ ամբողջովին ճանչցաւ Ալֆոնսոսի թագաւորութիւնը և արտաքին Պետութիւնք զայն ընդունեցան։ Կարլոսեանց ձեռքը Ինացեր էին միայն Բիսքայա, Նավարրա և Կատալոնիա. միանգամայն խստիւ փակուած էր Գաղղիոյ կողմանէ պաշարի և մթերքներու մուտքը։

Թագաւորական բանակին յաղթութիւնքը։

13. — Յունիս 20ին զօրավարն Յովէլլար Լուչէնայէ չուեց դէպ ի Վիսդարէլլա, ուր սպասեց իրեն Տորրէկարէյ և վնասելով Ալֆոնսոսեանց յառաջապահը, քաշուեցաւ ի Կանտավիէյա։ Յովէլլար դիմեց ետեւէն, հոն հասաւ հինգ օր վերջը և Մարտինէց կամպոս և երկու բանակները միանալով չուեցին պաշարելու զԿանտավիէյա և գերելու զՏորրէկարէյ։ Սակայն յետինս զԹրշնամին խաբելու համար, սակաւ վաշտեր հոն թողլով, ինքը քաշուեցաւ յԱրագոնա։ Կանտավիէյա անձնատուր եղաւ և կարլոսեան 160 սպայք և 1600 զինուոր իրենց պատուոյ երդման վրայ, ազատ թողուեցաւ։ Այս յաջողութեան ուրիշներ ալ յաջորդեցին, Բլանկօ զօրավարը Կուիպոցքուայի մէջ վանեց կարլոսեանքը. Վէյլէր, Դրլատոր և Արրոնտօ զօրավարք կրցան դէմ դնել Սաբալս զօրավարին և նահանջել տալ. և Քուէզատտա որ Հիւսիսային բանակին հրամանատար անուանուեր էր,

շարունակարար կը սեղմէր Լսուէլլայի պաշարման շրջանակը։ Քուէզատա մնաւ նաեւ ի Վիտտորիա, սակայն կարլոսեաններէն ինչ սուած, կրկին քաշուեցաւ ի Միրանտա։ Մարտինէց Կամպոս մնաւ ի Կատալոնիա, և դիմեց պաշարեց Ուրճէլ նշանաւոր քաղաքը. Ցովէլլար ամրացաւ Լիրրոյի ափունքը, այսպէս փակելով կարլոսեանց Կատալոնիայի մուտքը։

Մադրիդի վարչութիւնն ալ ձեռք առաւ պատերազմական ամեն խստութիւն կարլոսեանց նկատմամբ, զորս ապստամբ հրատարակեց. հրամայեց գրաւելու անոնց ստացուածքը ամեն կողմ կալանաւորելով միանգամայն նպաստողքը։ Դոն Կարլոս նամակով մը առ Ալֆոնսոս Թագաւոր, բողոքեց այս «անգթութեանց» դէմ։ «Եթէ այս ամենը ստիպուած ես ընելու իբրեւ Թագաւոր մը կուսակցութեան» կը գրէր, «կը կարեկցիմ քեզ անկեղծօրէն։ Ես որ եկայ ըլլալու Թագաւոր բոլոր Սպանիոյ, քու կուսակիցներդ հանգիստ կը Թողում իմ հողիս վրայ»։ Մադրիդի Ներքին գործոց պաշտօնեայն՝ Ռոմէրօ Ռորլէդօ, ղրկեց զՊօլո ծովակալը այրելու և աւերելու Կանտաբրիայի վրայ Դոն Կարլոսի հաւատարիմ մնացած գիւղերը, նոյնը ըրաւ Քուէզատա զօրավարը ի Վիանա, որով հազարաւոր անձինք աքսորուեցան և բիւրաւոր ընտանեաց գոյքեր, որոնց զաւակունք կը զինուորէին կարլոսեան բանակին մէջ, գրաւուեցան։ Կարլոսեանք ոտն առ ոտն սկսան քաշուիլ դէպ ի հիւսիս։

Մարտինէց Կամպոս իր ստուար բանակովը չուեց Ուրճէլի վրայ ուր ամրացեր էր Լիցցարակա զօրավարը և զայն պաշարեց ամեն կողմանէ. կտրեց նաեւ հաղորդակցութիւնը Կաստէլ Ձիուտատէ, ուսկից միայն կ՚առնուին ջրոյ պաշար։ Յետ աննշան կռիւներու, կարլոսեան զօրավարը առանց ջրոյ մնալով, Յուլիս 25ին բացաւ քաղքին վրայ սպիտակ դրօշը և անձնատուր եղաւ։ Մարտինէց Կամպոս հրաման տուաւ պահանջողին ելլելու քաղքէն զինուորական պատուով և իր յարգանքը ցուցընելու համար առ Լիցցարակա, ազատ Թողուց երթալ ի Դաղդիա կամ ի Բարչէլլոնա։ Բայց Ուրճէլի եռան-

Ուրճէլի առումը։

դուն կարլոսեան եպիսկոպոսը, կալանաւոր ղրկեց Ալիկանտէի բերդը, և Յուլիս 28ին յաղթանակաւ մտաւ Յուրճէլ։ Իսկ զօրավարն Լիցցարակա գնաց ի Բարչէլոնա, հոնկէ ի Մադրիդ, ապա բոլորովին ազատ թողուելով, նորէն գնաց առ Դոն Կարլոս. նա մանաւանդ որ յետինս պէտք ունէր զօրավարներու. Տորրէկարէյ ինքնին պահանջած էր զինուորական ատենէ մը դատուելու. Մենտիրի զօրավարը անցաւ ի Գաղղիա, հրատապակելով հոնկէ, որ ա՛լ եւս չէր կռուեր Ալֆոնսոս թագաւորի բանակներու դէմ։ Պէտրալս զօրավարը եւս որ կ՚ապաւինէր ի Գաղղիա, կալանաւորեցաւ սահմանագլխոյն վրայ. 700 զինուորք անցան Գաղղիոյ սահմանագլուխը և զինաթափ եղան, նոյնպէս ուրիշ բազմաթիւ սպաներ։ Այսու հանդերձ կարլոսեանք իրենց դիւցազնական արութեամբ ունեցան յաջողութիւններ և մանաւանդ Հոկտեմբեր 24ին Տրինիտայի բարձանց վրայ՝ Լումբիէրի մօտ, ուր կը հրամայէր նաեւ կոմսն Կազէրտայի, բուրբոնեան Սիկիլիոյ, ազգակից Դոն Կարլոսի և Դոն Ալֆոնսոսի։ Դոն Կարլոս զինքը մարաջախտ անուանեց և քիչ վերջը ըրաւ գլուխ Սպայակուտին։ Կարլոսեանք ունեցան ուրիշ փոքր յաջողութիւններ ալ Կուիպուիցիայի մէջ և ումբակոծեցին զՍան Սէբաստիանո և Հէրնանի, բայց առանց արդիւնքի մը։

Զովէլլար զօրավարը Կուբա կը ղրկուի։

Այս միջոցիս կրկին սաստկացաւ Միացեալ Նահանգաց սպառնալիքը Կուբայի ապստամբութեան նկատմամբ և նախագահն Կրանտ ծանոյց որ թէ Սպանիոյ վարչութիւնը չկարենար վերջացնել, Միացեալ Նահանգք պիտի բռնադատուէին վերջ մը տալ այդ ապստամբութեանց, որոնք մեծապէս վնաս էին իրեն վաճառականութեան։ Բովանդակ Սպանիոյ անձնասիրութիւնը յուզուեցաւ և այս անգամ Դոն Կարլոս զինադադար մը առաջարկեց առ Ալֆոնսոս թագաւոր և զինուորական աջակցութիւն զԿուբա ընկճելու համար. սակայն վարչութիւնը յանձն չ՚առաւ, և զՋովէլլար զօրավարը ղրկեց ի Կուբա փոխանակ Բալմաչէտայի։

վարչութիւնը մերժեց նաեւ Իզաբէլլա թագուհոյն, Ալֆոնսոսի մօտ ի Սպանիա գալու խնդիրը, և անոր բանակցութեան համար ղրկած նուիրակը՝ զՄարֆորի որուն դէմ տժգոհութեանց պատճառաւ ծներ էր 1869ի ցեղափոխութիւնը, կալանաւորեց. ի զուր բողոքեց Իզաբէլլա. առ ժամս իրեն գոհութիւն մը չտրուեցաւ. և ամենայն որոշողութիւն թողուեցաւ խորհրդարանի բացմանէն վերջը։ Արդէն վարչութիւնը հրատարակեր էր որ ընտրութիւնք, այս անգամ միայն ընդհանուր քուէով պիտի ըլլային Յունուար 20ին և խորհրդարանք պիտի բացուէին Փետրուար 15ին։

14. — Ընտրութեանց մէջ պաշտօնարանը յաղթեց և Փետրուար 15 Դոն Ալֆոնսոս ԺԲ, բացաւ խորհրդարանը մեծ շքով։ Թագի խօսքին մէջ յիշեց Սպանիոյ բարեկամական յարաբերութիւնք բովանդակ պետութեանց հետ և նոյն իսկ Միացեալ Նահանգաց հետ համաձայնութիւն մը գոյացեր էր Կուբայի նկատմամբ։ Յետոյ խօսեցաւ Իլեւմտից վերաբերեալ ըլլուելիք բարւոքմանց համար, ինչպէս նաեւ ամեն ճիւղի մատակարարութեանց մէջ և վերջացուց խօսքը որ ամեն ճիգն պիտի թափէր փութով խաղաղելու զՍպանիա։

Ընտրութիւնք և խորհրդարանին բացումը։

Արդէն երկու զօրավարքն Քուէզատա և Մարտինէց Կամպոս, յետ քիչ մը ատեն դադար տալու ընտրութեանց պատճառաւ, այժմ 100,000 զինուորք քիչ քիչ կը շրջապատէին զկարլոսեանս որոց թիւը 35,000 իջեր էր։ Թողուցին կարլոսեանք զԲիլբաօ, Դուրանգօ և Վերգարա. Մարտինէց Կամպոս, Լոմա և Քուէզատա զօրավարք, զանոնք վանեցին մինչեւ Նավարայի հիւսիսային ծայրը, տիրելով ամբողջ Բիսքայայի և Ալվայի։ Ուրիշ կողմանէ Մորիոնէս զօրավարը տիրեց Օյազանի և առաւ զԷլգոյբար։ Կարլոսեանք բռնադատուեցան թողուլ նաեւ զՏոլոսա և քաշուեցան ի Վէրա, ուր Կազէրտայի կոմսը և Պէրուլա զօրավարը յուսահատ ընդդիմութենէ մը վերջը բռնադատուեցաւ ապաւինիլ ի Գաղղիա։ Նոյնը ըրին նաեւ Տորրէկարէյ և Սարալս զօրավարները։ Մանաւանդ որ Պրիմօ դէ Ռիվէրա զօրավարը քայլ առ քայլ տիրե-

Ալֆոնսոս ԺԲ ի բանակը։

լով կարլոսեան ամրութեանց, մօտեցեր էր Լատէլլայի և Փետրուար 18ին փոքր կռուով մը կրցաւ գրաւել Մոնտէյուրա բարձունքը, որոնք կը տիրէին Լատէլլայի։ Անկէ վերջը անօգուտ էր որ և է ընդդիմութիւն և օրուան խընդիր էր Լատէլլայի տիրելը։

Լատէլլայի անձնատուր ըլլալը։

Վարչութիւնը փափագեցաւ որ կարլոսեան վերջին և զօրաւորագոյն ամրութիւնը առնելու պատիւը թագաւորին ընծայուի. և Ալֆոնսոս ՙԻԲ խորհրդարանի բացմանէն վերջը Փետրուար 16ին հասաւ Փուէգատայի բանակը, իբրեւ ընդհանուր հրամանատար. և Լատէլլա Փետրուար 19ին անձնատուր եղաւ. ուր արդէն կարլոսեան սակաւ զունդեր մնացեր էին։ Երկրորդ օրը Ալֆոնսոս յաղթանակաւ մտաւ քաղաքը, յետոյ գնաց նաեւ ի Տոլոսա և շարունակեց դիւրին յաղթական ընթացքը ի Սան Սէբաստիանո և մինչեւ Գաղղիոյ սահմանագլուխը, առանց ընդդիմութեան մը։

Դոն Կարլոս կ'անցնի ի Գաղղիա։

Դոն Կարլոս յետ կորսնցնելու Տոլոսա և Վէրա, յետ անդունդներու մէջ գլորելու իրեն մնացած սակաւ հրանօթքը, իրեն հաւատարիմ մնացած վաշտերով հասաւ Յօլավէ. ուր առ ինքն երդումէ ազաւ ըրաւ բոլոր իրեն սպայքը և զինուորքը, ապա Լիցցարագա զօրավարին և 2000 զինուորօք Իոզիսվարի հովիտէն, Փետրուարի
1876 26ին գիշերը հասաւ Ռանէկուի կամուրջը, մօտ ի Վալկարլոս, Գաղղիոյ սահմանը. և հեռագրով ի Պարիս, իրընդրեց Գաղղիոյ պետութեան ասպնջականութիւնը։ Մակ Մահոնի վարչութիւնը պատուէր ղրկեց իշխանութեանց ամենայն պատուով ընդունիլ զինքը և ծանոյց որ ազատ էր բնակելու Գաղղիոյ հիւսիսային գաւառաց մէջ[1]։ Դոն Կարլոս Մարտ 1ին հասաւ ի Պարիս, ուր գաղղիացի օրինաւորականք իրեն մեծ ընդունելութիւն ըրին իբրեւ «աներկիւղ պաշտպանի իրենց հաւատոց և օգոստափառ

---

1. Յետոյ ժամանակաւ երբ պաշտօնապէս գաղղիացի օրինաւորականաց ալ թագապահանջը հոչակուեցաւ, այն ատեն Գաղղիոյ վարչութիւնը իրեն ալ, ինչպէս ուրիշ թագապահանջներու, արգիլեց Գաղղիոյ մուտքը։

ներկայացուցիչ իրենց քաղաքագիտական յուսոյն»։ Դոն Կարլոս Պարիսէն երկու հրատարակութիւն ըրաւ, մին առ Սպանիացիս, միւսը առ իւր բանակը, որով կ'իմացնէր որ «իւր դրօշակը ծալլած կը պահէր մինչեւ որ Աստուած սահմանէ կաթոլիկ և միապետական Սպանիոյ փրկութեան օրը»։ Պարիսէն անցաւ ի Լոնտրա[1]։

Դոն Կարլոսի Սպանիայէն ելլելովը, թէպէտ կարլոսեան խնդիրը չէր վերջանար և շարունակեց յապագային, բայց կը լմննար քաղաքական պատերազմը։

---

1. Դոն Կարլոս իր եռանդուն կաթոլիկ սկզբանցը համար երբէք համակրութիւն չվայլեց յԱնգլիացւոց։ Անգլիայէն անցաւ յԱմերիկա, ապա դարձաւ յԵւրոպա և շրջեցաւ ամեն կողմ, ամեն կողմի օրինաւորականներէն և կաթոլիկներէ ջերմ ընդունելութիւն գտնելով։ Յետոյ հաստատուեցաւ ի Վենետիկ։ Շամբորի կոմսին մահուընէ վերջը, ժառանգեց իրր մերձաւոր ազգական, Հենրիկոս Ի արքայական բնակութիւնը ի Կորիցիա որ գաղղիացի օրինաւորականաց ստէպ այցելութեան տեղի մ'է և ուր ստէպ հնչած են «Կեցցէ՛ թագաւորը»։ Իտալիա և Աւստրիա միշտ յարգած են այսպիսի արքայական վեհանձն հիւր մը։ Դոն Կարլոս մէկ միայն արու զաւակ ունի Դոն Ճէմ։ Իսկ դստերքը ամուսնացած են կայսերական և արքայական իշխաններու հետ։ Բոլոր զաւակները ունեցած է առջի կնկանէն, իշխանուհին Մարգէրիտա որ վախճանեցաւ յամին 1892։ Դոն Կարլոս երկրորդ անգամ ամուսնացաւ գաղղիացի Ռոհան Տանէ Մարի Բերթի հետ։



ԳԼՈՒԽ ԺԴ.

ԱԲԴԻԻԼ ԱԶԻԶ ԵՒ ԱԱԼԻ ՓԱՇԱ

1. Աբդիւլ Ազիզ. — Ալի փաշա. — 2. Վաքքֆներու ժառանգութիւնը. — Օտարազգեաց կալուած ունենալու իրաւունքը. — 3. Աբդիւլ Ազիզի երթը Պարիսու ցուցահանդիսին. — Ալի փաշա թագաւոր ի Կ. Պոլիս. — 4. Աբդիւլ Ազիզ ի Պարիս. — 5. Աբդիւլ Ազիզ յԱնգղիա և Լոնդրա. — 6. Աբդիւլ Ազիզ ի Վենա և Մաճառստան. — Անցք դանուրեան գաւառներէն. — 7. Դարձը ի Կ. Պոլիս և ուղեւորութենէն յուսացուած արդիւնքներ. — 8. Պետութեան և Արդարութեան Ատեանները. — Կրթական հաստատութիւնք. — Ներքին դաւեր. — 9. Ադաթոն էֆէնտի և իւր մահը. — Ցովհաննէս ամիրա Տատեան. — 10. Եւժէնի կայսրուհին ի Կ. Պոլիս. — ուրիշ թագաւորական այցելութիւնք. — 11. Եգիպտոսի թուրքիոյ հետ յարաբերութեանց վատանալը. — 12. Ալի փաշայի մահը. — Վարչութեան տկարանալը. — Մահմուտ Նէդիմ փաշա. — 13. Աբդիւլ Ազիզ կ'ուզէ փոխել ժառանգութեան կարգը ի նպաստ իւր որդւոյն։

Աբդիւլ Ազիզ և Ալի փաշա։

1. — Որչափ որ լաւ սկզբնաւորութիւն մը ունեցեր էր Աբդիւլ Ազիզի թագաւորութիւնը և Սուլթանը ինքզինքը պատրաստ ցրցուցած էր ամեն եւրոպական բարեկարգութեանց և յառաջադիմութեանց, այսու հանդերձ նախնապէս բացուած դրամական անդունդը չէր գոցուած և ներկայ եղած դրութիւններով անկարելի էր թուրքիոյ ելեւմուտքը զուգակշռել։ Դրամի պակասութիւնը ընդհանուր տագնապ մը ծնաւ և զգալի ըրաւ դեռ ուրիշ շատ մը բարեկարգութեանց պէտքը։ Հարկ էր հոգալ և բարձրացնել նաեւ ժողովրդեան աշխատաւոր և

նեղուած դասը։ Լուրջ հայրենասէրներէն ոմանք համա-
րեցան որ ժամանակը եկած է և հարկ է Թուրքիոյ հին
ոճը և օրէնսդրութիւնը փոխել։ 1867ի Մարտի մէջ
Մուսդաֆա Ֆազլը փաշան, Եգիպտոսի փոխարքային
եղբայրը, որ ի Կ. Պոլիս կը բնակէր և Պալատան մէջ
մեծ պատիւ ունէր, բաց նամակ մը կ՝ուղղէր առ Սուլ-
թանը, նկարագրելով Թուրքիոյ աղքատ դրութիւնը, դաս-
տիարակութեան ընդհանուր պակասութիւնը, տրոց հա-
ւաքման վատ և կեղեքիչ եղանակը, գաւառաց ամենա-
տժգոհ վիճակը, Եղեւմտից անկանոնութիւնը և Գանձուն
նուազութիւնը. որով ամենայն ինչ գէշ կ՝ընթանար և
հաւասարապէս նեղուած և տժգոհ կ՝ընէր թէ Թուրք և
թէ քրիստոնեայ հպատակք. մանաւանդ աւելի զԹուր-
քերը որոնք ընտանիքնին օտար երկիր չկարենալով փո-
խադրել, ստիպուած էին միշտ Թուրքիոյ մէջ ապրիլ։
Մուսդաֆա Ֆազլը փաշա կը լմնցնէր իր բաց նամակը
Թախանձելով զԱբդիւլ Ազիզ՝ Սահմանադրութիւն մը տա-
լու Եւրոպիոյ Թագաւորաց օրինակին հետեւելով, և այս-
պէս փրկելու հայրենիքը աղետալի վիճակէ մը։ Մուս-
դաֆա Ֆազլը փաշա կ՝աւելցնէր որ ինքը և իր բարե-
կամները արդէն Թուրքիոյ յարմար Սահմանադրութեան
մը ծրագիրը պատրաստած են։ Փիչ օր վերջը Մուս-
դաֆա Ֆազլը փաշայի գաղափարքը տպուած տետրա-
կով մը սփռուեցան մայրաքաղաքին մէջ և Պալատան
բարձրաստիճան պաշտօնեայք բողոքեցին այս «յան-
դուգն» խորհրդոյն դէմ։ Կ. Պոլսոյ բոլոր լրագրութիւնը
իր սովորական հնաւանդ շողոքորթութեամբ ձայն բար-
ձրացուց պարսաւելու Մուսթաֆա Ֆազլը փաշայի բո-
ղոքները, յայտարարելով բոլոր «Օսմանեան Պետութեան
հպատակաց հանգիստ և երջանիկ կացութիւնը Սուլթան
Աբդիւլ Ազիզի հովանաւորութեան ներքեւ»։ Իսկ ինքը
Սուլթանը պաշտօնապէս տժգոհութիւն մը չյայտնեց։

Յայտնի էր որ Մուսթաֆա Ֆազլը փաշա բերան մը
կ՝ըլլար նոր կուսակցութեան մը որ քիչ քիչ կը յառ-
նէր Թուրքիոյ մէջ։ Այդ կուսակցութիւնը սկսած էր
ըմբռնել որ այնքան ազգերէ և մրցումներէ կազմուած

երկիր մը, միայն սահմանադրութեամբ մը կրնար միաձեւութիւն մը և Հասարակաց գործոց յառաջադիմութիւն մը ստանալ։ Արդէն կը տեսնուէր ընդհանուր ցեղական բորբոք մը և ազգային բերում մը, Ֆազլը փաշա և իրեն կուսակիցք որոնք յետոյ ժամանակաւ Երիտասարդ թուրք անուամբ կոչուեցան, Ազգաց ինքնիշխանութեան պատուար մը և միանգամայն զոհութիւն կը համարէին զՍահմանադրութիւնը։ Բնական է որ եթէ կ'երեւակայէին անմիջապէս եւրոպական սահմանադրութեանց վրայ կաղապարեալ սահմանադրութիւն մը, մեծապէս կը սխալէին։ Բոլորովին տարբեր էին հանգամանքները։ Զկար տակաւին այնքան կրթեալ տարր մը, կազմելու այդ իսլամական ժողովքը։ Կրթութեամբ միայն կրնան յարգուիլ փոխադարձ ազատութիւնք խօսից և գործոց մէջ, ապա թէ ոչ խօսարանը անպատակ է և նուաստացուցիչ։ Թուրքիա տակաւին պատրաստ չէր իսլամական վարչութեան։ Նախնապէս կրթութիւնը մեծ լայլ մը առած պէտք էր ըլլալ որուն անհոգացուեր էր։ Եւ Ալի փաշա որ դրական մտք մ'էր, չհամոզուեցաւ Սահմանադրութեան մը և առ ժամս ուրիշ բարեկարգութեանց հետամուտ եղաւ։

Վաքըֆներուն ժառանգուիլը. — Օտարազգեաց կալուածներուն իրաւունքը։

2. — Թուրքիոյ մէջ կրօնական կալուածները վաքֆ կը կոչուին, որոնք երկու տեսակ կը բաժնուին քաղաքային և դաշտային։ Այս կալուածները չունէին սեպհական կալուածներու արտունութիւնքը ժառանգութեանց և վաճառմանց նկատմամբ, որովհետեւ կը պատկանէին կրօնական հաստատութեան մը և կամ մզկիթի մը։ Վերջին ժամանակի վէճերները ըմբռնած էին որ վաքըֆի այս դրութիւնը հասարակաց կենաց մէջ անտեղութիւն մ'էր և արգելք շահագործական նպատակներու։ Սուլթան Մէճիտի ժամանակ դաշտային վաքըֆները ստացուածքի արտոնութիւն ստացան, որով և հրաման ծախուելու։ Այս վերածման փոխարէն տուրք մը հաստատուեցաւ ի նպաստ վաքըֆին, որուն կը պատկանէր վաճառեալ երկիրը։ Սակայն դարձեալ, ըստ նախկին օրինաց, թէ կալուածատէրը մեռնէր և չունենար արու զա-

ւակ, կալուածը չէր անցներ մերձաւոր ժառանգաց և կրկին կը դառնար վաքըֆին. որ ըսել է շարժման մէջ եղած դրամագլուխ մը կը վերցուէր վաճառականական հրապարակին վրայէն։

Ալի փաշա վստահ Աբդիւլ Ազիզի ազատական գաղափարաց վրայ, ջանաց, յաղթեց, անցաւ կրօնական կանխակալ կարծիքներու վրայէն և վերջապէս նոր օրէնքով մը կրցաւ աշխարհականացնել վաքըֆները։ Կայսերական նոր հրամանագիր մը Յունիս 17ին կը ծանուցանէր որ «Երկրագործութեան և վաճառականութեան յառաջադիմութեանը համար» կը սահմանէր որ՝ եթէ վաքըֆի տէր մը մեռնի և չունենայ արու կամ էգ զաւակ, այն ատեն կալուածը անցնի իր ամենէն մերձաւոր ժառանգին։ Դարձեալ վաքըֆ կալուած մը կրնար պարտուց տեղ գրաւի ծառայել։ Բայց հրամանագիրը կը ծանուցանէր որ ներկայ օրէնքը միայն Սուլթանէն հաստատուած վաքըֆներուն համար է. և կամ այն վաքըֆներուն համար, որոնց տէրն մեռնելով և ուղղակի ժառանգ չունենալով, կալուածը տէրութեան անցեր է։

Վաքըֆ կալուածներուն եղած շնորհքին փոխարէն, արժէքին համեմատ 15% տուրք մը դրուեցաւ որ բաժնուեցաւ հինգ տարուան վրայ։

Բայց վաքըֆի նկատմամբ եղած օրէնքէն շատ աւելի յառաջադիմական քայլ մը կրնայ համարուիլ այն օրէնքը, որով «Օտարազգի հպատակք կրնային քաղաքային կամ դաշտային կալուածներ ստանալ Թուրքիոյ ամեն գաւառաց մէջ բաց ի Հէճազէ[1]։ Օտար երկրի հպատակք, որոնք կալուած պիտի ստանային, պիտի ենթարկուէին միանգամայն օսմանեան հպատակաց հաւասար ամեն հողային և կալուածական օրէնքներու, և իրենց անանկութիւնը պիտի դատուէր օսմանեան դատարաններէ։

---

1. Արաբիոյ այն գաւառը, ուր կը գտնուին մահմէտական կրօնի սուրբ համարուած տեղերը։

Այս երկու հողային և կալուածական օրէնքները մեծ կարեւորութիւն մը ունէին Թուրքիոյ համար. և ներքին կալուածական օրէնսգիտութեան համար նոր ժամանակ մը կը բանային, ընդհանուր գոհութիւն մը տալով թէ հպատակ և թէ օտարազգի քրիստոնէից և միանգամայն Թուրք յառաջացեալ մասին։ Երկու բարեկարգութիւնք էին ամենակարեւորք, զորս Ալի փաշա ջանացեր էր հրատարակել դեռ Աբդիւլ Ազիզ չմեկնած ի Պարիս Յուցահանդէսին։ Արդէն այս մեկնումը նշանակ էր որ Թուրքիա հանդարտ և անվախ վիճակի մէջ էր, և թէ Ալի փաշա արդէն վարչական մեծ ազդեցութիւն ունէր։

Աբդիւլ Ազիզի երթը ի Պարիս. — Ալի փաշա թագաւորահ ի Կ. Պոլիս։

3. — Նապոլէոն Գ Պարիսու Տիեզերական Յուցահանդէսին հրաւիրած էր բոլոր կայսերք, թագաւորք և իշխանք։ Մայիսի սկիզբները գրած էր իւր դեսպանին ի Կ. Պոլիս, Պ. Բուրէ, մտերմաբար իմանալու որ արդեօք Սուլթանն ալ կ'ընդունէր այսպիսի հրաւէր մը։ Աբդիւլ Ազիզի հաստատական պատասխանին վրայ, քիչ օր վերջը Նապոլէոն Գ ինքնագիր նամակով մը, հրաւիրեց զԱբդիւլ Ազիզ Պարիսու Յուցահանդէսին։ Սակայն այս հրաւէրին ընդունելութեան լուրը մեծ յուզումն պատճառեց Կ. Պոլսոյ կրօնական շրջանակներուն մէջ։ Առաջին անգամ էր որ օսմանեան ինքնակալ մը և խալիֆա մահմէտականութեան, օտար և այն քրիստոնեայ հողի մը վրայ պիտի կոխէր։ Կրօնամոլք այս գործը ոչ միայն ընդդէմ Ղուրանի կը համարէին, այլ և արտաքսապէս նուաստութիւն մը իսլամութեան խալիֆային. շէյխիսլամը մերժեց հաստատական ֆէթվա տալու, ցոյցեր և բողոքներ եղան ընդդէմ Սուլթանին, որոց սակայն կարեւորութիւն չտուաւ Ալի փաշա. և որոնք լռեցան շէյխիսլամի պաշտօնանկութեան և գլխաւոր յուզիչներուն ձերբակալուելով[1]։

---

1. Կրօնամոլ ոամիկը հանդարտեցնելու համար, ճարտարամիտ ձայն մը տարածուեցաւ որ՝ Սուլթանը ուզը ի Գաղղիա կոխած ժամանակ, ի-բրեւ խալիֆա ալէր կ'ելլար երկրին, բայց հոնկէ ելլելու ժամանակ նորէն զայն կը թողուր տեղոյն իշխանութեան։

Աբդիւլ Ազիզ վարչութեան ամեն հոգերը յանձնեց Ալի փաշայի, որուն վրայ լիովին վստահութիւն ունէր. մի առ մի ընդունեցաւ Պետութեան բարձր պաշտօնեայքը և հպատակ ազգապետները և մասնաւոր ուշադրութիւն ունեցաւ Ցունաց և Հայոց պատրիարքներուն, որոնք իրենց ազգակցաց կողմանէ եկեր էին ողջերթ մաղթելու։ Ընդունեցաւ նաեւ ամեն Պետութեանց դեսպանները և Ցունիս 10ին յետ կատարելու կէսօրուան աղօթքը Օրթագիւղի մզկիթը, դարձաւ Դոլմա Բահչէ, ուսկից քիչ վերջը օտարազգի շարուած դեսպանական նաւերուն մէջէն անցնելով կայսերական մակոյկով, ելաւ Սոյրանիէ մարտանաւը որ զինքը պիտի տանէր և որուն պիտի ընկերակցէին Օրխան և Ազիզիէ զրահաւորք և Տաշիս, Իսմայիլ և Պէրքէվի Պիւլէ պետական նաւերը։ Աբդիւլ Ազիզ իրեն ուղեկից առած էր իր եղբօրորդի իշխանները՝ Մուրադ և Աբդիւլ Համիդ էֆէնտիները, իր որդին Եուսուֆ Իզէդդին էֆէնտի, Արտաքին Գործոց պաշտօնեայն՝ Ֆուատ փաշա, կայսերական դիւանին թարգմանը՝ Աարիֆի պէյ և Աբքունի ճարտարապետը Սարգիս պէյ Պալեան։ Կային ուրիշ բազմաթիւ բարձրաստիճան անձինք, բժիշկներ, սպայք, թիկնապահներ և ծառայք։ Միաբան կ'երթար մինչեւ ի Պարիս նաեւ Պ. Բուրէ, Գաղղիոյ դեսպանը, իր դեսպանական նաւով և անգղիական դեսպանատան առաջին քարտուղարը՝ Մուր. Սուլթանը ընդունած ըլլալով նաեւ Անգղիոյ թագուհւոյն հրաւէրը ի Լոնտրա։

Աբդիւլ Ազիզ Ցունիս 26ին հասաւ ի Նապոլի և 29ին մտաւ ի Տուլոն շրջապատուած գաղղիական, անգղիական և իտալական մարտանաւերէ, որոնք ճամբան միացեր էին զՍուլթանը տանող զրահաւոր նաւերուն։ Նապոլէոն Գ մասնաւոր նուիրակութիւն մը ղրկեր էր ի Տուլոն, որ շքեղ ընդունելութիւն մը ըրաւ կայսեր։ Հոն էին նաեւ զինքը պատուելու համար Մուսթաֆա Ֆազլը փաշա և օսմանեան դեսպան՝ Ճէմիլ փաշա։ Աբդիւլ Ազիզ Ցունիս 30ին հասաւ ի Պարիս, Լիոնի կայարանը, ուր կը սպասէր իրեն կայսրը՝ բովանդակ ար-

քունիքով։ Յետ ողջոյններու, կայսերք, ժողովրդեան անհամար կեցցէներուն մէջէն ուղղուեցան ի Տիւյլերի կայսերական տան կառքերով[1]։ Լեժէնի կայսրուհին շրջապատուած իր պատուոյ տիկնանցմէ կը սպասէր Սուլթանին կայսերական պալատան սանդխոց գլուխը, և ըստ կանխաւ յարմարութեանց, նախ Աբդիւլ Ազիզ խօսեցաւ և ներկայացուց իր ուղեկիցքը, յետոյ կայսրուհին։ Այս պաշտօնական այցելութենէն վերջը Սուլթանը տարուեցաւ Շանզ Էլիզէի պալատը։

Աբդիւլ Ազիզ Պարիսու մէջ։

4. — Սուլթանը առաջին օրերը պաշտօնական այցելութիւններով անցուց, որոց մէջ մասնաւոր դիտուեցաւ Նապոլէոն Գի գահաժառանգ որդւոյն այցելութեանը փոխարէն, Եուսուֆ Իզէդդին էֆէնտիի այցելութիւնը, մինչ ըստ օսմանեան օրինաց Մուրատ իշխանն էր թագաժառանգ. և այս այցելութեան մէջ, դիւանագէտք ուզեցին ըմբռնել քիչ տարի վերջը Աբդիւլ Ազիզի ըրած ջանքերը ի նպաստ իւր որդւոյն յաջորդութեան։

Սուլթանը ի Պարիս իշխանազուններ ընդունելէ վերջը, ընդունեցաւ բազմաթիւ Գաղղիոյ նշանաւոր անձինքը գիտնական ու արուեստական համբաւ ունեցող անձինք. օսմանեան հպատակներ և օսմանեան հպատակութիւն ունեցող վարժարանաց տեսուչք[2], ուսուցիչք և աշակերտք. գոհ մեծապէս Գաղղիոյ նման յառաջացեալ երկրի մէջ իր հպատակացը բռնած պատուաւոր դիրքէն։ Իրեն հպատակք իրենց ուղերձներուն և մաղթանքներուն մէջ՝ յայտնապէս կ՝ըսէին յոյսերնին, փութով եւրոպական բարեկարգութիւնքը և յառաջադիմութիւնքը տեսնել նաեւ ի Թուրքիա՝ իրենց հայրենեաց մէջ։

---

1. Ժամանակին լրագիրք կը պատմեն Աբդիւլ Ազիզի շքեղ մուտքը ի Պարիս։ Առաջին կառքին մէջ էին Աբդիւլ Ազիզ Նապոլէոն Գ և դիմացնին Ֆուատ փաշա, որ գաղղիարէն լեզուի վարժ ըլլալով, թարգման էր կայսերաց։ Երկրորդ կառքին մէջ էին Մուրատ, Աբդիւլ Համիտ, Եուսուֆ Իզէդդին իշխաններն և Ժոաշէն Միւրա իշխանը։

2. Յորս և Մուրատեան Վարժարանի Տեսչութիւնը, զոր պատուեց շքանշանովք։

Աբդիւլ Ազիզ գնաց նաեւ ի Վէրսայլ, սքանչացաւ և գաղափար մը ստացաւ Դաղղիոյ վերջին թագաւորաց շքեղ կեանքին վրայ։ Այցելեց Սէն Սիր զինուորական վարժարանին, Անկելանոցին և ուրիշ նշանաւոր զինուորական և արուեստական տեղերու։ Նապոլէոն Դ ի պատիւ իւր կայսերական հիւրին 50,000 զօրաց զօրահանդէս մը կատարեց Լա Կոնկորդ հրապարակին մէջ և քաղաքային վարչութիւնը՝ լուսավառութեամբ զարդարեց Օտէլ դը Վիլը։

Սուլթանին այս իշխանական այցելութեանց միջոց, իր Արտաքին Գործոց պաշտօնեայն, հռչակաւորն Ֆուատ փաշա, զբաղած էր աւելի շահադիտական այցելութեանց և համախմբութեանց։ Դրամական, վաճառականական հաստատութիւնք և մեծ ընկերութիւնք երեկոյթներ և ճաշեր տուին Ֆուատ փաշայի, բնական է ներկայ և ապագայ յոյսերով, որոց մէջ կը ճառախօսուէին Թուրքիոյ քաղելիք օգուտները Սուլթանին այս ուղեւորութենէն։ Ֆուատ փաշա, արթուն և ճարտար խօսող և դատող, ըստ պարագային կը պատասխանէր եռանդուն զոհութեամբ։ Լրագրապետները մեծ կարեւորութիւն տուած էին որ զիրենք ընդունելով ըսած էր «Սուլթանին ուղեւորութիւնը ի Պարիս և ի Լոնդրա Արեւելքի քրիստոնեայ ազգաց բարոյական և նիւթական վիճակին բարւոքման գրաւականն էր[1]»։

Աբդիւլ Ազիզ արեւելեան պերճ ճոխութեամբ գերազանցելով մեծապէս միւս բոլոր կայսերական հիւրերը, Պարիսէ չմեկնած 75,000 ֆրանք յանձնեց Սէնի քաղաքապետին Պարիսու աղքատաց համար, 100,000 ֆրանք Շանզ Էլիզէի պալատան սպասաւորաց, և 75,000 ֆրանք դարձեալ կայսրուհւոյն պաշտպանութեան ներքեւ եղող բարեգործող կուսանաց։ Իսկ Տէրութեան պաշտօնէից և

---

1. Աբդիւլ Ազիզ եկեղեցական իշխանութեանց՝ Պապի Նուիրակին և Պարիսու Դերապայծառ Տ'Արբուա արքեպիսկոպոսին այցելութեան դրկած էր իր Բազմաս ապարը։

բարձրաստիճան անձանց և զինուորական պետերու նշան-ներ բաժնուեցան. փոխադարձաբար նոյնը ըրաւ նաեւ Նապոլէոն Դ։ Աբդիւլ Ազիզ վերջին օրերը մասնաւոր տեսակցութիւնք ունեցաւ կայսեր հետ, ինչպէս Ֆուատ փաշա Ռուհէի հետ։

Աբդիւլ Ազիզ Անգլիա և Լոնդրա։

5. — Յուլիս 11ին այն ամեն շքեղութեամբ որով ընդունուած էր գալստեան ժամանակ Աբդիւլ Ազիզ, նոյն-պէս տարուեցաւ Նապոլէոն Դէ Հիւսիսային կայարանը, և մեկնեցաւ դէպ ի Կալէ իշխանազուններով և իր հե-տեւորդներով, միաբան ունենալով նաեւ անգլիական կ. Պոլսոյ թարգմանը։ Ի Կալէ կը սպասէր իրեն Անգլիոյ Պետութեան նուիրակութիւն մը պետական Օգպրրն մար-տանաւով և օսմանեան դեսպանը Միւզիւրուս փաշա։ Յուլիս 12ին մտաւ ի Դուվր, ուր ընդ առաջ եկած էին իրեն Գալլէսի թագաժառանգ իշխանը և թագուհւոյն հօր-եղբայրը՝ Կէյմպրիճի դուքսը։ Դուվրէն մինչեւ Լոնդրա մինչեւ Բրկկինգամ պալատը, ուր պիտի բնակէր Սուլ-թանը, յաղթական ընթացք մ'էր, անգլիական ժողովուրդ-եան ըրած եռանդուն ընդունելութեան պատճառաւ։

Երկրորդ օրը Աբդիւլ Ազիզ գնաց Ուինսորի պալա-տը, ուր թագուհին կը սպասէր իրեն և Վիկտորիա իր հինգ տարուան սուգը թողլով, այն օրը ամենայն շքե-ղութեամբ ընկերեց Սուլթանին։ Աբդիւլ Ազիզ նոյն երե-կոյ Գալլէսի իշխանին հետ Փովընդ Գարտըն թատրոնը գնաց, ուր անգլիացի ժողովուրդը եռանդնալից ցոյց մը ըրաւ իրեն։ Միւս օրը թագաժառանգ իշխանին հետ այ-ցելեց Վուլվիչի նաւարանին. Յուլիս 17ին Պորթսմութ գնաց և Սրիթհէտի դիմաց թագուհին ի պատիւ իր կայ-սերական հիւրին՝ 49 մարտանաւերէ նաւահանդէս մը տուաւ. և յետոյ ի յիշատակ այն օրուան, նուիրեց անգ-լիական ժարէթիէրի բարձր կարգը։ Լոնդրայի ժողո-վուրդն ալ զՍուլթանը Լոնդրայի քաղաքացի անուանեց։ Շքեղ ընդունելութիւն մը տրուեցաւ Աբդիւլ Ազիզի նաեւ Հնդկաստանի Պաշտօնարանի կողմանէ, արեւելեան դիւ-թիչ ճոխութեամբ և Սուլթանը սիրով ընդունեցաւ Մէն-չըսդրի հայ վաճառականաց յիսուն անձանցմէ կազմեալ

նուիրակութիւնը, որ եռանդուն ուղերձ մը կարդաց առ Սուլթանը. և Աբդիւլ Ազիզ յայտնեց իր մեծ գոհութիւնը, այդպիսի հպատակաց մէջ գտնուելով։ Իր արքայական այցելութիւններէ վերջը, առանձին այցելութեամբ մը պատուեց միայն զՏիկինն Պալմէրստոն, յայտնելով իր մեծ ցաւը որ մեծ պաշտօնէին ողջութեան օրով, չէր կրցած կատարել այդ պարտքը։

Ինչպէս ի Պարիս՝ նաեւ ի Լ.ոնդրա ընդունեցաւ Աբդիւլ Ազիզ գիտական և արուեստական բարձր անձնաւորութիւնները, յորս մասնաւորապէս զԼորտ Ադանլէյ, որուն հետ երկար խօսեցաւ և Պէյճ նշանաւոր ճարտարապետը՝ որուն յայտնեց Թուրքիոյ մէջ Երկաթուղեաց հաստատելու իղձը։ Աբդիւլ Ազիզ Օգոստոս 22ին թողուց զԼ.ոնդրա և Գալլէսի իշխանին ու Կէյմպրիճի դքսին հետ հասաւ ի Դուվր, ուր կը սպասէր իրեն Օզպրիճ արքայական շոգենաւը, որ ուրիշ պետական նաւերու ընկերակցութեամբ, մեկնեցաւ զինքը Կալէ տանելու։

Սուլթանը Լ.ոնդրայէ մեկնած ժամանակ 2500 ստէրլինի գումար մը յանձներ էր քաղաքագլխոյն, մայրաքաղաքին աղքատաց համար. ուրիշ գումարներ ալ բաշխած էր բարեգործական տեղեաց։ Կալէ հասնելուն շնորհակալութեան հեռագիր մը ըրաւ առ թագուհին առ Գալլէսի իշխանը և առ դուքսն Կէյմպրիճի։

Սուլթան Աբդիւլ Ազիզ կանխաւ հրաւէրներ ընդունած էր Բելճիոյ թագաւորներէն, ինչպէս նաեւ Աւստրիոյ Փրանկիսկոս Յովսէփ կայսրէն։ Անոր համար հարկ եղաւ որ անցնի Բելճիայէն և ի Լ.իէժ ճաշէ Լ.էոփոլտ թագաւորին հետ։ Սիրալիր դիմաւորումն և տեսակցութիւն մը ունեցաւ ի Կոպլէնց Պրուսիոյ Գուլիէլմոս թագաւորին հետ և Յուլիս 27ին հասաւ ի Վ.ենա։

6. — Փրանկիսկոս Յովսէփ կայսրը մարաջախտի համազգեստով շրջապատուած բոլոր արշիդուքսերէն, կայարանի մէջ կը սպասէր Օսմանեան ինքնակալին։ Աբդիւլ Ազիզի հասնելուն, կայարանը թնդաց կէցցէներով և յետ ողջոյններու և պաշտօնական ներկայացմանց, երկու ինքնակալք ուղեւորեցան Շէօմպրիւն պալատը և

Աբդիւլ Ազիզ ի Վ.ենա, Բէշդ՝ Անցք Դանուբեան իշխանութիւններէն։

նոյն երեկոյ շքեղ հացկերոյթ մը տուաւ Աւստրիոյ կայսրը առ Աբդիւլ Ազիզ, որուն ներկայ էին բոլոր արշիդուքսերը։ Երկրորդ օրը Սուլթանը ընդունեցաւ օսմանեան հպատակաց պատգամաւորութիւնը, հոս ալ յայտնելով իր գոհութիւնը այդպիսի յառաջադէմ հպատակներ տեսնելով. յետոյ ներկայ գտնուեցաւ կայսեր հետ թնդանօթաձիգ գունդերուն զօրահանդէսին և եռանդնալից կեցցէներ ստացաւ երեկոյեան հանդիսաւոր թատրոնի ժամանակ։

Յուլիս 31ին Աբդիւլ Ազիզ մեկնեցաւ Վիեննայէն Դանուբի ճամբով։ Ֆրանկիսկոս Յովսէփ, բոլոր արշիդուքսերը և Վիեննայի բարձր ազնուականութիւնը ընկերեց Սուլթանին մինչեւ շոգենաւ. և շոգենաւը մեկնելու պահուն անհամար կեցցէներ լսուեցան։ Աւստրիոյ մայրաքաղաքը կարծես չէր հաւատար օսմանեան Սուլթան մը հիւր ունենալուն վրայ։

Մահառք որոց համակրութիւնը Թուրքիոյ նկատմամբ հանրածանօթ է, թերեւս հին արենակցութեան պատճառաւ, խնդրեր էին նուիրակութեամբ մը, նոյն բաղդը, նոյն պատիւը իրենք ալ ունենալու։ Աբդիւլ Ազիզ երեկոյ հասաւ ի Բէշդ, որ ամբողջովին լուսաւորուած էր, մեծ տօնական օրերու նման։ Եւ սակայն գիշերուան պահուն պատճառաւ շոգենաւէն չելաւ և ընդունեցաւ միայն Դանուբեան գաւառաց օսմանեան կուսակալը՝ Միտհատ փաշա, յետոյ այնքան նշանաւոր։ Երկրորդ օրը ելաւ ի Բէշդ և աննկարագրելի եռանդով և կեցցէներով ընդունուեցաւ մահառ ժողովրդէն. այն կէսօրը ճաշեց թագաւորական պալատը։ Երեկոյեան կրկին մտնելով ի շոգենաւ, մեկնեցաւ Բէշդէն անհամար կեցցէներով։

Դանուբի ուղեւորութիւնը Հունգարիոյ մասին մէջ, գեղեցիկ, արգաւանդ և լաւ մշակուած երկիրներ կտրելով, հմայիչ երեւոյթ մը ունէր. որուն կը միանար ամեն կողմ ժողովրդեան ցրցուցած համակրանքը։ Շրջակայ ժողովուրդք խուռն բազմութեամբ կը դիմէին գետափի կայարանները պատուելու զՍուլթանը։ Պէլկրատի դիմացէն անցնելու ժամանակ, բերդերէն 101 թնդանօթի

հարուածք պարպուեցան և բերդօրէից զինուորք ողջոյնի կեցան։ Թէպէտ Միլան իշխանին Բէլկրատ չգտնուիլը ունէր իր իմաստը։ Երբ Սուլթանը Ռուսճուք հասաւ, հոն եկաւ զինքը պատուելու Ռումանիոյ կարոլ իշխանը։ Ի Ռուսճուք իմանալով որ Զարը Ղրիմ կը գտնուէր, ըզ-ֆուատ փաշա ղրկեց իր ողջոյնը տանելու։

Սուլթանին նախկին դիտաւորութիւնն էր ցամաքէն ուղեւորութիւնը շարունակել Ադրիանուպօլսոյ վրայէն. սակայն Ռուսճուք ընդ առաջ եկող թուրք պաշտօնեայք, ծրագիրը փոխել տուին և բռնադատեցին որ ծովէն մտնէ ի Կ. Պոլիս։ Համարուեցաւ որ թուրք պաշտօնեայք չուզեցին որ Սուլթանը աչքով տեսնէ յետ Հունգարիոյ մշակեալ և բարգաւաճ երկիրներուն, Տաճկաստանի խեղճ վիճակը. բայց կային ուրիշ պատճառներ և երկիւղներ ալ թուրք կրօնամոլ խումբէն։

7. — Աբդիւլ Ազիզի վոսփորէն մուտքը Սուլթանիի մարտանաւով, որուն կը հետեւէին ընդ առաջ գացող աւագանւոյն, դեսպանութեանց, ազգապետաց, ժողովրդեան անթիւ շոգենաւք, և մակոյկք արեւելեան ճոխութեամբք, ամեն նկարագիրներէ վեր է։ Ինչպէս նաեւ Պատմութենէ դուրս կը համարինք նկարագրելու երեք գիշեր Վոսփորի եզերք, ի Ստամբոլ և Բերա եղած լուսաւորութիւնք և հրաճգութիւնք, յորս ամենէն ճոխ և դիւթիչ համարուեցաւ Եգիպտոսի փոխարքային ըրածները Լմիրկէնի պալատան առջեւ։

Աբդիւլ Ազիզի դարձը։ Ուղեւորութենէն յուսացուած արդիւնքներ։

Այս միջոցիս միանգամայն արդէն սկսեր էին Դոլմա-Բահճէի պալատան մէջ Սուլթանի կողմանէ ընդունելութիւնք՝ նախարարաց, դեսպաններուն, բարձրաստիճան պաշտօնէից, Պատրիարքներուն և ամեն կրօնքի գլխաւորներուն և ազգապետներուն։ Օրուան մէջ ընդունելութիւնք էին և գիշերները լուսաւորութիւնք և երեկոյթք, յորս արեւելեան ճոխութեամբ, և մաս մ'ալ շողոքորթութեամբ, կը մրցէին մէկ մէկու հետ նախարարներ, հարուստներ և մինչեւ օտարազգիք։ Ցարդ կը յիշեն այն օրերը տեսողք մոգական երեկոյթները և մանաւանդ վէզիրին տուածը իր Բէրէքի պալատան մէջ, որուն նմանը

ոչ ոք կը յիշէր։ Աբդիւլ Ազիզ քանի մը անգամ գիշերները ելաւ պտտելու և տեսնելու լուսաւորութիւնքը և հրաձգութիւնքը. բնական է իր այս մերձաւորութեամբ ժողովրդեան սիրտը գրաւելով։ Այս հանդէսք միայն մայրաքաղաքին մէջ չէին, այլ գաւառներուն գլխաւոր քաղաքներն ալ մրցեցան հանդէսներով և լուսավառութիւններով և քան զամենը գերազանցեցին Զմիւռնիա, Ադրիանուպոլիս և Տրապիզոն։

Բայց այս հանդէսներէն աւելի կը շարունակէր բոլոր ազգաց զարմանքը Սուլթանի մը ուղեւորութեան վրայ յԵւրոպա։ Շատերը նաեւ յետ կատարուելուն, անհաւատալի երազ մը կը համարէին։ Սուլթաննեռուն պատմութիւնը, պալատան խորհրդաւոր կեանքը իւր բիւրազգի գոյներով նկարագրուած, զիրենք բացառիկ անձնաւորութիւն մը կազմած էր, գոգցես անմատչելի և երկիւղալի։ Յանկարծ Աբդիւլ Ազիզի երեւոյթը սովորական իշխանի մը նման, ոչ միայն թագաւորաց այլ նաեւ գիտնականաց և արհեստագիտաց հետ ընտանի վարմունքը կը ցուցնէր բովանդակ աշխարհքի, որ մեծ յեղափոխութիւն մը կատարուեր էր ի Թուրքիա, յայտնի է մանաւորապէս քրիստոնեայ հպատակաց ջանքովը. և նոր Թուրք սերունդը անոնց հետ շփմամբ, տարբեր ոճով կ'ըմբռնէր նոյն իսկ ղուրանի շատ մը վճիռներ. որ Թուրքիա քաղաքականացեալ ճամբու մը մէջ կը մտնէր. եթէ չ'ըլլայ ձեռք մը որ զայն կեցընէ։ Աբդիւլ Ազիզի այս ուղեւորութիւնը արդէն այս մեծ յոյսը ծներ էր իր լուսամիտ հպատակաց միտքին մէջ։ Անոնք, մեծաւ մասամբ քրիստոնեայք, կը սպասէին ի հիմանց նորոգութիւն մը. քայլ առ քայլ մտքովին հետեւեր էին Սուլթանին գացած տեղերը և նշանակեր էին անոր լսածները և ըսածները. կը համարէին որ եկաւ ժամանակը կանոնաւոր հսկողութեան ներքեւ ելեւմուտք մը ունենալու. Արդարութեան ատեանները կաշառքներէ սրբելով, իր արդար վիճակին մէջ դնելու. և գաւառներուն գերի վիճակը բարձրացնելու։ Աբդիւլ Ազիզ ըմբռնած էր իր հպատակաց սպասածը և անհոգ չեղաւ

արհամարհելով, նա մանաւանդ կրէտէի ապստամբութիւնը որ դեռ կը տեւէր կայսրութեան այնքան ինքնաներով. գիտէր որ կուսակալաց կեղեքիչ դրութենէն առաջ եկած էր։ Ի զուր Ալի փաշա երթալով ի Կրետէ իր համոզիչ լեզուով ջանացեր էր ապստամբութիւնը մարել. խոստումներու հաւատացող չկար. իրօք պէտք էր սկսիլ բարեկարգութիւնները, և Ալի փաշա խրախուսեց իր տէրը փութով ձեռնարկելու։

Պետութեան Ատեանի մը հաստատութիւնը. Գալաթա Սարայի Լիկէոնը. — Դաւ Սուլթանին դէմ։

1868

8. — Պետութեան Ատեանի մը հաստատութիւնը, առաջին կարեւորը համարուեցաւ, և դրուեցաւ թէպէտ շատոնց առաջարկած էր Ալի փաշա։ Ինտրութիւնը Սուլթանին և նախարարաց ձեռքն էր։ Անդամոց կէսը քրիստոնեայք եղած և կէսը մահմէտականք։ Աբդիւլ Ազիզ անձամբ բացաւ զայն Ցունիսի մէջ, և այս առթիւ անհամար բազմութեան առջեւ կրկնեց մահմէտականաց մեծամասնութեան համար անախորժ հաստատութիւն մը. որ բոլոր հպատակք հաւասար էին իրեն համար, ինչ ալ ըլլար կրօնքնին։ «Ինծի համար, ըսաւ, բնաւ տարբերութիւն մը չկայ մահմէտականի և քրիստոնէի մէջ։ Մինչեւ այսօր քրիստոնէից կրօնքը և իրաւունքները պաշտպանուած էին. բայց քրիստոնեայք մեծ պաշտօններու չէին կանչուեր. դեռ հին դրութիւնն էր այդ. հիմա ամեն պաշտօնի դուռը, նոյն իսկ մեծ վէզիրութեան, բաց է քրիստոնէից առջեւ։ Վստահացէք ինծի, կ'ուզեմ իմ հպատակացս երջանկութիւնը, առանց խտրութեան կրօնքի և ցեղի»։ Առաջին անգամն էր որ օսմանեան սուլթան մը այս լեզուն կը գործածէր բոլոր ժողովրդեան առջեւ, և որչափ որ ինքն և Ալի փաշա կ'ըմբռնէին ըրած քայլերնուն ծանրութիւնը մոլեռանդն մահմէտականաց աչքին. սակայն հաստատամիտ երկրին բարութեան համար, չվարանեցան հրատարակելու։

Անկէ վերջը նոր ծրագիրք և բարեկարգութիւնք մէկզմէկ յաջորդեցին, որոց ամենուն ոգին մեծ վէզիրն էր Ալի փաշա. սակայն Աբդիւլ Ազիզ լիովին վստահութեամբ իւր պաշտօնէին վրայ, ցրցուց կառավարչական պարտուց ճանաչումը։ Բացուեցաւ Գալաթա Սարայի

կայսերական լիկէոնը, յար և նման գաղղիական լիկէոնաց ծրագրով. եւրոպացի նա մանաւանդ գաղղիացի ուսուցչաց ուղղութեան ներքեւ[1], ուր պիտի կրթուէին միաբան իսլամ և քրիստոնեայ պատանիներ. այսպէս փոխադարձ ճանչնալով մէկզմէկ ի մանկութենէ, ապագային միաքայլ պիտի ծառայէին հայրենեաց։

Լիկէոնի հաստատութեան յաջորդեցին աստղաբաշխական և օդերեւութական դիտարանք, յետոյ դատարանական բարեկարգութիւնք. Ներքին Գործոց պաշտօնարանի կազմութիւնը, չափուց և կշռոց տասանորդական դրութեան վերածումը՝ որ թէպէտ շատ ընդդիմութիւն և դժուարութիւնք կրեց և կը կրէ հաստատուելու համար։ Յետոյ գաւառները մայրաքաղաքին մօտեցնելու, և վաճառականութեան մեծ մղումն տալու համար, Ալի փաշա սկսաւ ընդհանուր Թուրքիոյ Երկաթուղեաց ծրագիրը։ Եւ որպէս զի շինութիւնը բոլորովին չծանրանայ գանձուն, Աբդիւլ Ազիզ նախ մեծ գումար մը ստորագրեց, որուն հետեւեցան նախարարք և հարուստք։ Թուրքիա արդէն շատոնց միացած էր Եւրոպիոյ հետ հեռագրական թելով։ Աւելի երագելու համար այս յարաբերութիւնքը դրուեցաւ նաեւ ծովու ներքեւ թելն ալ։

Կ. Պոլսոյ ներքին կեանքն ալ որ արդէն Սուլթան Աբդիւլ Մէճիտի օրով սկսած էր եւրոպական կերպարանք մը առնուլ, Աբդիւլ Ազիզի օրով և մանաւանդ Եւրոպայէ դարձէն վերջը, Բերա բոլորովին Արեւմտեան մայրաքաղաքաց ձեւն առաւ. յորս թագաւորք և իշխանք կը մասնակցին և կը խրախուսեն թատրոններ և զուարճութիւններ։ Աբդիւլ Ազիզ զանազան անգամ գտնուեցաւ ժողովրդեան հետ Նաումի թատրոնը և ուրիշ զուարճութեանց տեղեր, անվախ և վստահ ամբոխին վրայ[2]։

---

1 Գալաթա Սարայի Լիկէոնը թէ ի սկզբան և թէ շարունակութեան մէջ ունեցած է պատուաբեր հայ ուսուցիչներ։

2. Իններեւտասներորդ դարու երկրորդ կիսուն ապրողները ի Կ. Պոլիս լաւ կը յիշեն Նաումի թատրոնին հաստատութիւնը և հասարակաց կենաց մէջ անոր կատարած և ստացած մեծ դերը։ Նաումը ճարտարամիտ անձ մ'էր Ասորի-

Այս նորութիւնները, որոնք, ըստ սոֆթայից, հակառակ էին զուրանին, մեծապէս յուզեցին կրօնամոլ ոգիները և Սուլթանին կենաց դէմ գաղտնի դաւաճանութիւն մը կազմուեցաւ որ տեղիք պիտի ունենար Նոյեմբերի մէջ. բայց իմացուեցաւ, և դաւաճանք բռնուելով պատժուեցան, մեծաւ մասամբ աքսոր ղրկուելով ի Բէնկազի կամ Արաբիա։ Այս դաւաճանութիւնը որչափ որ տպաւորութիւն մը չ'ըրաւ Աբդիւլ Ազիզի վրայ. սակայն յայտարար մ'էր մահմէտական տարրին մեծապէս յուզուելուն ընդդէմ բարեկարգութեանց, որոնք մանաւանդ քրիստոնեայ Եւրոպայէ կ'առաջարկուէին։

9. — Մատակարարական ասպարիզի բարեկարգութեանց մէջ, Աբդիւլ Ազիզի խոհական և անխոնջ օգնական եղեր էր հայազգին Գրիգոր Աղաթոն էֆէնտի, որ Մայիսի մէջ տակաւին 45 ամեայ կը վախճանէր ի Պարիս. ուր ղրկուած էր Պետութեան կարեւոր գործոց համար և Աբդիւլ Ազիզ ի նշան իւր մեծ գոհութեան դեռ նոր զինքը անուաներ էր Պաշտօնեայ Հասարակաց Աշխատութեանց. այսպէս առաջին անգամ պաշտօնեայ անուանելով հայազգի մը։ Աղաթոն էֆէնտի ի մանկութենէ լուրջ և ուսումնասէր, ստացեր էր ձէզայիրլեան Մկրտիչ աղայի համարումը, որ զինքը Գաղղիոյ Երկրագործութեան կրինեռնի հռչակուած վարժարանը ղրկեց, ուսկից առաջին կարգի վկայականով դառնալով ի Կ. Պոլիս, թէշիտ փաշա զինքը վերատեսուչ դրաւ յԱյիս-

Գ. Աղաթոն էֆէնտիի մահը։

1868

քէն։ Շատ տարիներ Կ. Պոլիս և Եգիպտոս կը մրցէին, թատերական եղանակին ունենալու զնաւում։ Աբդիւլ Ազիզ իր ներկայութեամբ կը խրախուսէր նաւումի թատրոնը որ Կ. Պոլսոյ բարձր ընկերութեան համար այն եղած էր, ինչ որ Օպէրա Գաղղիոյ մայրաքաղաքին համար։ Սուլթանին համակրանաց նշան, յիշենք հետեւեալը, ժամանակին լրագրէ մը առնելով. «Օգոստափառ Սուլթանը անցեալ կիրակի Նաւումի թատրոնը իր ներկայութեամբ պատուելուն առթիւ, Նաւումի 200 լիրա և թատրոնին տնօրէնութեան 800 լիրա շնորհեց։ Օրիորդ Նաւում ալ Նորին Վեհափառութեան թատրոն մտած ժամանակ, փունջ մը ծաղիկ ներկայացուց, որուն համար Նորին Վեհափառութիւնը իրեն 50 լիրա շնորհեց»։ Մասիս 1868 Մարտ 30։ — Բերայի Պ. Մանասի թատրոնի օթեակները, միշտ բռնուած էին փաշաներէ. և ուր կ'երգէին Եւրոպիոյ հռչակաւոր երգչուհիք և երգիչք։

դէֆանս հաստատուած Երկրագործական վարժարանին. որուն փակուելէն վերջը դրամական անձկութեան պատճառաւ, Ճէզայիրլեան Մկրտիչ Աղա, որ այն ատեն ստանձներ էր Ասորւոց գաւառներուն մաքսերը, զԱղաթոն էֆէնտի գանձապահ դրաւ։

Մկրտիչ Աղայի աղէտքներէն և անկմանէն վերջը[1], Պետութիւնը որ արդէն գնահատեր էր Աղաթոն էֆէնտիի հաշուակալական կարողութիւնքը, զինքը անդամ անուանեց Գանձուն Հաշուակալութեան ժողովքին. և ապա վերատեսուչ թղթատարութեանց և Հեռագրոց. և այդ մատակարարութեան մէջ մտցուած եւրոպական շատ մը կարգեր, իրեն արդիւնքն են։ Այս պաշտօնով մասնակցեցաւ ի Պարիս 1865ի Համաշխարհական թղթատարական ժողովքին. և Նապոլէոն Գ. Լէժիոն տ'Ոնէօրի մեծ խաչը նուիրեց իրեն։ Կանչուած էր Սուլթանի վստահութենէն իր պաշտօնեայ Հասարակաց Աշխատութեանց, այդ ճիւղին մէջ ալ բարեկարգութիւնք մտցնելու, երբ մահը վրայ հասաւ. և սակայն իրմով չլմնցաւ իր տուած մղումը։ Աղաթոն էֆէնտի զոյգ Օտեան Գրիգոր էֆէնտիի, սկզբնապատճառք կը համարուին ութ տարի վերջը ի Թուրքիա սահմանադրական յառաջադիմութեանց շատ մը քայլերուն և Միտհատ փաշա իրենց աշակերտ մ'էր[2]։

Մայրաքաղաքը արտասովոր շքեղ յուղարկաւորութիւն մը կատարեց իրեն, սիրելի էր ամենուն իր ընտանի, զուարթ և խոհեմ բնաւորութեամբ։ Դագաղին ետեւէն կ'երթային 30,000է աւելի անձինք, յորս Սուլթանին կողմանէ Ալի պէյ արարողապետը, Գաղղիոյ դեսպանը, եւրոպական ուրիշ դեսպանութիւնք. և գլխաւոր

---

1. Տես Պատ. ժամանակակից Բ. Հտ. Գլ։

2. Աղաթոն էֆէնտի պետական անհամար գրաղումներով հանդերձ, մեծ եռանդեամբ կը գրաղէր Ազգին հասարակաց գործոց. նման իր բարեկամին, Օտեան Գրիգոր էֆէնտիի։ Խասգիւղի Քաղաքական ժողովքին նախ անդամ եղած էր, ապա նախագահ, միշտ հոգ տանելով եկեղեցւոյն և դպրոցին. իր օգնելովը գանազան աղքատ գաւառացի աշակերտք դրկուած են ուսանելու ի Պարիս և ի Կրինեան։

պաշտօնեայք. ինչպէս նաեւ արեւելեան Հասարակութեանց գլխաւորները[1]։ Մայրաքաղաքին եւրոպական լրագիրք որոնք անկեղծօրէն լաւագոյն գիտէին գնահատել նորա կարողութիւնքը, Թուրքիոյ ներկայ վիճակին մէջ իր մահը հասարակաց աղէտք մը կոչեցին։ Ի Պարիս Օսմանեան դեսպանը՝ Ճէմիլ փաշա, ըսած էր պաշտօնապէս ցաւակցողաց «Մահը Թուրքիայէն մեծ քաղաքացի մը, Սուլթանէն անձնուէր ծառայ մը, և մեզմէ ամենասիրելի բարեկամ մը յափշտակեց...»։ Պարոն Վիլլիոմէ, տնտեսագիտաց ժողովքին մէջ ըսեր էր. «Պարոնայք, Աղաթոն էֆէնտիի մահը, զգալի կորուստ մ'է տնտեսագիտութեան համար, անմոռանալի իւր բարեկամաց և անողոք բոլոր մարդկութեան համար»։ Աղաթոն էֆէնտի՝ միայն մէկ մանչ զաւակ մը ունէր։

Յովհաննէս Ամիրա Տատեան։ 1869

Յաջորդ տարին վախճանեցաւ ուրիշ մեծ հայ մը եւս, Յովհաննէս Ամիրայ Տատեան, որ 1832ին կայսերական իրատէով, իւր հօրը Առաքել Ամիրայի յաջորդեր էր օսմանեան Պետութեան վառօդապետութեան մէջ։ Յովհաննէս Ամիրայի մեծ արդիւնքն եղած է յետ այցելելու Եւրոպիոյ գործարանաց, Թուրքիոյ մէջ բանալու նմանօրինակ գործարաններ։ Իր վերակեցութեամբ կանգնուեցաւ Նիկոմիդիոյ չուխայի գործարանը, Հէրէքէի մետաքսեայ կերպասներու գործարանը, Բէյքոզի խաղախորդի գործարանը, Զէյթուն Բուրնուի երկաթի ձուլարանը և ուրիշ մեքենական գործարաններ, որոց համար ստէպ կը ճանապարհորդէր յԵւրոպա։ Սուլթան Մահմուտ և Սուլթան Աբդիւլ Մէճիտ, մեծապէս գնահատելով իր արդիւնքը, իրեն շնորհեցին Իֆթիխարի նշանը և Առաջին Ուլայի աստիճանը։ Բայց այս նշաններէն անհամեմատ վեր ուրախութիւն ունեցաւ, երբ կրցաւ ստանալ Աբդիւլ Մէճիտէ, միս և հաց Ս. Փրկիչի հիւանդանոցին համար։

---

1. Դազաղին ծոպերը բռնած էին Ալի պէյ, Օտեան էֆէնտի, Զամիչ Յովհաննէս էֆէնտի, Համամճեան Պարգիս էֆէնտի և Ֆրանկս էֆէնտի։ Դիմբանականը խօսեցաւ նախ իր մտերիմ խորհրդակիցը Օտեան Գրիգոր էֆէնտի, յետոյ Սարգիս Յովհաննէս էֆէնտի և Սէրվիչէն էֆէնտի։

Յովհաննէս պէյ Տատեան, մեր Ազգին ուրիշ մեծանուն ամիրաներուն պէս յառաջադիմութենէ վեր սիրող էր կրօնից և կրթութեան։ Խրախուսած է Մխիթարեան Միաբանութիւնը տպագրել տալով գիրքեր. և մանաւանդ Աշխարհագրութեան քարտէսները, գտնելով իր եռանդեանը համապատասխանող անխոնջ աշխատող մը, զՀ. Գաբրիէլ Այվազովքսի և ճարտարամիտ տպագրութեան համար զՄորկուճեան Հ. Յովհաննէս։ Ինքը եւս գրած է մեքենական և պատմական նիւթեր, որոնք մեծաւ մասամբ անտիպ կը պահուին ընտանեացը քով[1]։

Եւժէնի կայսրուհին ի Կ. Պոլիս. — Ուրիշ թագաւորազանց այցելութիւնք։

10. — Արդիւլ Ազիզի յԵւրոպա թագաւորազանց այցելութիւնը, բնական է պիտի ունենար իր փոխադարձը։ Ընդերկար խօսուեցաւ որ ժամանակին ամենէն ազդեցիկ իշխողը, Նապոլէոն Գ, Կ. Պոլիս պիտի երթար փոխադարձ այցելութեան պարտքը կատարելու։ Լրագիրք այս լուրը գարնան սկիզբը իբր ստոյգ հոչակեցին և մայրաքաղաքը քանի մը օր մեծ յուզումն և եռանդն զգաց։ Սակայն գաղղիական կայսրութիւնն ալ սկսեր էր իր ճգնաժամերը. և Նապոլէոն Գ, ներքին քաղաքականութեան հոգով զբաղած և կայսրութեան ազատական ձեւ մը տալու ստիպուած, չէր կարող հեռանալ մայրաքաղաքէն. և որոշեց իր տեղը ղրկելու զկայսրուհին, որ Մուլթանի այցելութենէն վերջը, պիտի երթար յԵգիպտոս Սուէզի ջրանցքին բացման ներկայ գտնուելու։

Կայսրուհին Եւժէնի, Վենետկոյ և Ալթէնքի ճամբով Հոկտեմբեր 16ին հասաւ ի Կ. Պոլիս, գաղղիական Լոյր մարտանաւով, շրջապատուած ուրիշ նաւերէ։ Արդէն մինչեւ Զանաքքալէ, կայսերական նուիրակութիւն մը ընդառաջ գացեր էր, ուր արդէն կը սպասէին նաւերով Գաղղիոյ դեսպանը բոլոր իր պաշտօնեաներով. ի Կ. Պոլիս գաղղիական գաղթականութեան նուիրակութիւնք, շատ մը

---

1. «Հիմնած է նաեւ Ազատլրի Ս. Աստուածածին եկեղեցին. Մաքրի գիւղի եկեղեցին, Նարլը Գաբուի վարժարանը. ուրիշ վարժարաններ Իզմիրի գաւառին մէջ»։ Հրանտ Ասատուր։ Գեղուեի։

կաթոլիկ Հասարակութեանց ներկայացուցիչք, յորս նաեւ հայ–կաթոլիկ նուիրապետութիւնը։ Այս ամեն նաւերով շքեղ և փառաւոր մուտք մը ունեցաւ կայսրուհին. դղրդեցաւ բոլոր մայրաքաղաքը և թնդանոթներուն ձայնը կը խափանուէր կեցցէներուն գոչումէն։ Էգրը մարտանաւը խարսխեց Դոլմա Բահճէի դիմաց։ Սուլթանը ընդ առաջ գնաց իր կայսերական հիւրին, եւրոպական ամենայն օրինօք. և ընկերեց անոր մինչեւ ի Բէյլէրբէյ կայսերական օթեւանի մէջ պատրաստուած բնակութիւնը, ուր իջաւ Եւժէնի իր բազմաթիւ հետեւորդով, յորս էր նաեւ ժոաշէն Միւրա իշխանը, ազգակից Նապոլէոնի։ Նոյն երեկոյ անմիջապէս կայսրուհին իր Պատուոյ տիկիններով այցելութեան գնաց ի Դոլմա Բահճէ Մայր թագուհւոյն և Առաջին Տիկնոջ[1]։ Այս ընդունելութեան ներկայ էին միայն Եուսուֆ Իզէդդին կայսրորդին և Սուլթանի երկու փոքր աղջկունքը։ Կայսրուհին այս քիչ օրերուն մէջ յորս մնաց ի Կ. Պոլիս, ներկայ գտնուեցաւ այլ և այլ հանդիսից։ Դիտեց Սէլամլըքի արարողութիւնը Պէշիկթաշի Ճամլըքէօշկեն, շրջեցաւ Կ. Պոլսոյ զբօսանաց տեղերը, Քէհհատղանէէն սկսեալ. ներկայ գտնուեցաւ զօրահանդէսի մը ի Հիւնքեար Իսկէլէսի։ Ընդունեցաւ դեսպաններ, եւրոպական շատ մը պատգամաւորներ. և մասնաւոր խնամք յայտնեց գաղղիական գաղթականութեան և գաղղիական վարժարանաց և բարեգործական տեղեաց։ Եկեղեցական պատգամաւորութեանց մէջ ամենէն աւելի

1. Սուլթանին կողմանէ Եւժէնի կայսրուհւոյ նշանակուած երկու Պատուոյ տիկնանցմէ մին էր՝ Մարիոնքա Տիկին Տիւզեան, Իզզլրքճեան գերդաստանէն, ամուսին Միհրան բէյի, որ իր բարձր կրթութեան հետ, ունէր նաեւ գաղղիարէն լեզուի վարժ գիտութիւն մը, որով և ինքն էր թարգման կայսրուհւոյն առ մայր թագուհին այցելութեան միջոց։ Այցելութենէն վերջը Սուլթանը զկայսրուհին տարաւ ճաշի սենեակը և նստան սեղանի։ Սուլթանին աջ կողմը նստած էր իշխանն ժոաշէն Միւրա և ձախ կողմը մեծ վէզիրը Ալի փաշա։ Իսկ կայսրուհին նստած էր Արդիւլ Ազիզի հանդէպ, երկու Պատուոյ Տիկնանց մէջ։ Գիշերը, սեղանէն վերջը, կայսրուհին Բէյլէրբէյ դարձած ժամանակ, բոլոր Վոսփորի ափունք և ամեն նաւեր լուսաւորուած էին շքեղապէս. և այդ բիւրաւոր լոյսերը ցոլալով ջրոյն մէջ, հմայիչ տեսարան մը կը կազմէին, որուն համար կը հիանար կայսրուհին։

պատիւ ընծայեց հայ–կաթոլիկ նուիրապետութեան, որուն գլուխը Գերապայծառ Անտոն Հասունեան, մասնաւոր յարգանաց և ուշադրութեան նիւթ եղաւ կայսրուհւոյն. նա մանաւանդ կիրակէ օրուան կրօնական պարտքը կատարելով յեկեղեցին Ս. Աստուածածին ի Բերա, մեծ ժողովրդականութիւն ստացաւ հայ–կաթոլիկ հասարակութեան մէջ, այսպէս բարձրացնելով Սուլթանի դիմաց անոնց գլուխը զՀասունեան կաթողիկոս–պատրիարգը և հայ–կաթոլիկ հասարակութիւնը[1]։

Եւժէնի կայսրուհին չմեկնած, հասան ի Կ. Պոլիս յետոյ Սուէզ երթալու համար՝ Աւստրիոյ կայսրը, Բրուսիոյ թագաժառանգը, քիչ վերջը Հոլանդայի թագաւո-

---

1. Հասունեան պատրիարգը, արքուն և քաղաքագէտ միտք, կայսրուհին Պարիսէն չմեկնած, հաշուելով որ մէկ կիւրակէ օր մը պիտի ունենայ ի Կ. Պոլիս. զկայսրուհին այն օրը ժայնաւոր պատարագի հրամցուց ի Ս. Աստուածածին Բերայի, ժեռամը Գուլումճեան Պետրոս Բէյի, պետական և տնտեսագիտական նշանաւոր անձին, և ընդունեցաւ խոստումը։ Երբ կայսրուհին հասաւ ի Կ. Պոլիս, և լատին եպիսկոպոս–նուիրակը և կղերը գնաց զինքը կիւրակի օր հրամցնելու ժայնաւոր պատարագի, տխուր մնաց լսելով որ արդէն Հասունեան պատրիարգը կանխապէս ստացեր էր խոստումը։ Մեծ հանդերձանք եղան յեկեղեցին։ Վալիտէ Սուլթանը զանազան անգամ եկաւ տեսնելու թէ զարդարանքները կ'ըլլային ըստ պատշաճին։ Կիւրակէ օր եկեղեցւոյն դուռը զկայսրուհին իր բոլոր շքեղ հետեւորդներով, ընդունեցաւ Հասունեան պատրիարգը իր բոլոր եպիսկոպոսներով։ Եւ որովհետեւ այն միջոցին հաւաքուած էր կաթոլիկ Ազգային Միւնհոդոսը, ներկայ կը գտնուէին 22 եպիսկոպոսք, յորս և Վենետկոյ, Վենայի Արքայք՝ Արքեպիսկոպոսն Գիւորգ Հիրմիզեան և Արք. Յ. Պողոճեան։ Կայսրուհին խոնարհեցաւ համբուրեց Հասունեանի աջը. ապա իրեն պատրաստուած ազօթարանը գնաց, իր քովը թարգման ունենալով պատրիարգի փոխանորդը զԳերապայծառ Ազարեան, յետոյ յաջորդ Հասունեանի և քան զնախորդն աւելի եւս նուրբ քաղաքագէտ։ Ջայնաւորէն վերջը կայսրուհին ծնրադիր օրհնութիւն խնդրեց իրեն, կայսեր և կայսրորդւոյն համար և կրկին համբուրեց Պատրիարգին աջը։ Հանդէսին ներկայ էր դասին մէջ աթոռով և լատին Եպիսկոպոսը Գերապ. Փլուին։ Կայսրուհւոյ նոյն օրը Ս. Աստուածածին երթալը, Գերապ. Հասունեանի պատրիարգութեան ամենէն փայլուն օրերէն մէկն էր։ Նոյնը ըսին Կ. Պոլսոյ բոլոր քաղաքագէտք։ Կայսրուհին յետոյ ի յիշատակ այն օրուան, դրկած է թանկագին Վերափոխման հիւսուած պատկերը։

Իսկ հայ էջմիածնական հասարակութեան պաշտօնական ներկայացուցիչք և եկեղեցական նուիրապետութիւնք զժտեալ դիրք մը բռնեցին նկատմամբ կայսրուհւոյն. թերեւս, որովհետեւ Գաղղիա յԱրեւելս պաշտպան է կաթոլիկութեան։

Հայ էջմիածնական հասարակութիւնը, մեր ազգին փրկութիւնը շատ ժամանակներ Ռուսէն յուսաց և ըստ այնմ գործեց. և զանազան տիրութեանց մէջ մերժեց Գաղղիոյ ձեռնտուութիւնը, որուն Թուրքիոյ հեր մտեմա-

ին եղբայրը. և ուրիշ ազգերէ եւս իշխանք և բարձրաստիճան անձինք։ Աբդիւլ Ազիզ, ամենուն ալ իր աստիճանին համեմատ արեւելեան շքեղ ընդունելութիւններ ըրաւ, մանաւանդ Փրանկիսկոս Յովսէփ կայսեր, որուն ընդ առաջ ղրկած էր մինչեւ ի Վառնա Սուլթանիւ մարտանաւով զվէզիրը Ալի փաշա, և սէրտարը Էքրէմ Էօմէր փաշա։ Կայսրը կու գար աւստրիական պետական նաւով, որուն կ'ընկերանային Միջերկրականի աւստրիական մարտանաւերէն շատերը։ Մարտանաւը, յորում էր կայսրը Հոկտեմբեր 28ին հասաւ ի Կ. Պոլիս և խարիսխ ձգեց Դոլմա Բահճէի առջեւ. ուր դիմեց Սուլթանը փառաւոր մակուկով մը և զինքը հիւրընկալեց ի Դոլմա Բահճէ։ Փրանկիսկոս Յովսէփ քանի մը օր հիւր եղաւ Աբդիւլ Ազիզի և միաբան այցելեցին նշանաւոր տեղեր։ Ընդունեցաւ նախարարները, դեսպանքը և աւստրիական հպատակները։ Նոյն շքեղ լուսաւորութիւնք եղան Վոսփորի վրայ, ինչ որ Եւժէնի կայսրուհոյն համար. թէպէտ յետնոյս համար ժողովրդեան կողմանէ եղածները անհամեմատ վեր էին։ Գաղղիա և կայսրութիւնը իր մեծութեան գագաթնակէտը կը գտնուէր. մինչ Աւստրիա նոր ելած էր Սադովայէն։ Փրանկիսկոս Յովսէփ եւս մեկնեցաւ ի Սուէզ։

Եգիպտոսի և Թուրքիոյ մէջ յարաբերութեանց վատանալը։

11. — *Մինչ բոլոր Եւրոպա, բոլոր գիտնականք, աշխարհիս ամեն կողմէ կը դիմէին Եգիպտոս աչքովին տեսնելու և հաստատելու այդ մեծ գաղափարին իրականացումը յետ հազարաւոր տարիներու, տեսնելու Միջերկրականի և Կարմիր ծովուն մէկզմէկ գրկելը, և պսակելու Լսէփսի մեծ և յանդուգն հանճարը, Թուրքիա՝ Եգիպտոսի տէրը, որ դեռ երկու տարի առաջ նոր շնորհ-*

կան յարաբերութենէն և ազդեցութենէն օգտուեցան շատ ազգեր. յորս, և Լիբանան եւն եւն։ Եղան անհատներ որոնք չկրցան ծածկել իրենց մեծարանքը առ վեհափառ ներկայացուցիչն Ազգի մը, որուն մատենագրութիւնը ամենէն համակրելին եղած էր հայ ազգին համար, և ուր կրթուած էին հայ շատ մը նշանաւոր անձինք. և վայելեր էին Գլապոլէոն Գ-ի վարչութեան հովանաւորութիւնը։ Այս անձանց մէջէն եղաւ Արքեպիսկոպոսն Նար բէյ, երբեմն Հ. Խորէն Գալֆայեան՝ ի Մխիթարեան Ուխտէն վենետկոյ։

քներ ըրեր էր Մէհմէտ Ալիի յաջորդաց. Խտիվ պատուանունը տուեր էր Իսմայէլ փաշային, և անոր անդրանկան յաջորդութեան իրաւունք. և այսպէս ապագային մէջ. հիմա մինչ օտարք կը դիմէին Եգիպտոս, Թուրք կառավարութիւնը ոչ միայն չէր երթար զլուխ կենալու այդ մեծ հանդիսին, այլ և ծանր կերպով գժտեր էր Եգիպտոսի վարչութեան հետ։ Իսմայէլ փաշա խտիվ անուանուելէն վերջը, ուզեր էր գործել ինքնիշխանաբար իբրեւ անկախ պետ մը։ Առանց հրամանի փոխառութիւն ըրեր էր, պատերազմական նաւեր գներ էր, երեսփոխանական ժողովք մը կազմեր էր ի Գահիրէ. և իր անուամբը հրաւիրեր էր թագաւորները և իշխանները Սուէզի բացման։ Բ. Դուռը բողոքեց խտիվին անկախ գործելուն վրայ, սակայն Իսմայէլ փաշա տեղիք չտուաւ։ Երկար եղան բանակցութիւնք։ Խտիվը՝ իր քարտուղարը Թալաթ փաշա ի Կ. Պոլիս ղրկեց բացատրութիւններ տալու, սակայն Ալի փաշա պարզապէս պահանջեց վերջնագրով մը որ «Եգիպտոս իր նաւատորմիղը յանձնէ Թուրք Պետութեան, ցամաքային զօրաց թիւը նուազեցնէ, ամեն տարի Բ. Դրան ղրկէ Եգիպտոսի Ելեւմտից հաշիւը. և առանց Սուլթանի հաւանութեան ոչ փոխառութիւն մը կատարէ և ոչ ազգի մը հետ դաշնակցութիւն»։ Եգիպտոսի փոխարքայութիւնը չէր ուզած ընդունիլ այս պայմանները և Թուրքիա կը պատրաստուէր իր իրաւունքները նոյն իսկ զօրութեամբ պաշտպանելու, երբ Գաղղիա և Անգղիա, որոց ՀՆասը մեծ պիտի ըլլար թէ Եգիպտոսի դրամական վիճակին պատճառաւ Սուէզի թղթերը ինկնային, միջամտելով համոզեցին զԻսմայէլ փաշա ընդունելու Բ. Դրան պահանջները։

1873 Յետոյ ապագային մէջ երբ մեռաւ Ալի փաշա, երբ տկարացաւ Աբդիւլ Ազիզի կառավարութիւնը, այն ատեն Իսմայէլ փաշա կրցաւ քաղցրութեամբ ետ ստանալ Սուլթանէն այն իրաւունքները։

Բայց Սուէզի պարտաթուղթերուն յԱնգղիա և ի Գաղղիա լիովին ծախուած օրէն, յայտնի էր որ Բ. Դուռը

քիչ քիչ պիտի կորսնցնէր յԵգիպտոս իր տէրութիւնը ի նպաստ այն Պետութեանց, որոնք առաջին գնողքն եղեր էին ջրանցքին պարտաթղթոց. և որոց դրամական մեծ շահը կը ստիպէր զիրենք հսկելու Եգիպտոսի վրայ և զայն դնելու ապահով բարեկարգ ճոխ դրից մէջ, փոխադարձ օգտուելու համար[1]։

12. — *Սուէզի ջրանցքին բացմամբ կը կնքուէր* 1869 *տարին և կը բացուէր* 1870, *որ վերիվայր ըրաւ Եւրոպիոյ քաղաքական հաւասարակշռութիւնը Դաղղիացւոց յաղթուելովը ի Պրուսիոյ, և Նապոլէոն Գի անկմամբը։ Քիչ մը ժամանակ կարծես եւրոպական քաղաքականութիւնը անտէր, անգլուխ մնաց։*

Ալի փաշայի մահը. վարչութեան տկարանալը. — Մահմուտ Նէդիմ փաշա։

Այս պարագաներուն մէջ մեռաւ Լօմէր փաշա, նշանաւոր սպարապետը և հիւանդացաւ Ալի փաշա, աշխատութիւնէ հիւծեալ։ Աբդիւլ Ազիզ և նոյն իսկ եւրոպական Պետութիւնք ամեն ջանք ըրին ազատելու մահուընէ Թուրքիոյ միակ վստահանալի պաշտօնեայն, սակայն կարելի չեղաւ, և Ալի փաշա մեռաւ Սեպտեմբեր 18*ին։ Նոյն օրը մայրաքաղաքը տխուր կերպարանք մը առաւ, ամենայն ոք ապագայն կը մտածէր. Ալի փաշայի մեռնելովը Տաճկաստան կը կորսնցնէր արթուն հրսկող մը։ Այս տպաւորութիւնն էր ամենուն սրտին մէջ և այն պատճառաւ ահ մը տիրեց բարձր և խոնարհ շրջանակաց մէջ. որովհետեւ Սուլթանը պիտի մնար առանց այնպիսի խոհեմ խորհրդակցի մը։*

Ալի փաշայի տեղ վէզիր դրուեցաւ Մահմուտ Նէդիմ փաշա, որ չունէր բնաւ իր նախորդին ո՛չ շրջահայեաց քաղաքագիտութիւնը և ոչ խոհեմութիւնը։ Ինքն բայեղ ռուսասէր, անմիջապէս Պալատան մէջ փոփոխակի ազդեցութեանց կռիւները և նախարարական յաջորդութիւնք սկսան։ Մահմուտ Նէդիմ փաշա պաշտօ-

---

1. *Խմայէլ փաշա ջրանցքի բացման հանդէսներուն շքեղութեանց համար հարիւրաւոր միլիոն ծախսած էր։ Իրր մնաց առանց դրամի և մինչեւ տնանկութեան վտանգ մը կը տեսնուէր, Անգղիա անմիջապէս գնեց իրմէ* 100 *միլիոնի ջրանցքին արժէթղթերէն։*

նանկ եղաւ 1873ի Մարտին. և տեղն անցաւ Միտհատ փաշա։ Սա եւս փութով պաշտօնանկ ըլլալով, կանչուեցաւ Հիւսէյին Ավնի փաշա. յետոյ Լսատ փաշա, մինչեւ ռուսական ազդեցութեամբ նորէն կանչուեցաւ Մահմուտ Նէդիմ փաշա։

Սուլթան Աբդիւլ Ազիզ կ'ուզէ փոխել օսմանեան գահուն յաջորդութեան օրէնքը։

13. — Զօրավարն Իկնաթիէֆ ռուսական դեսպանը ի Կ. Պոլիս, ճանչնալով Աբդիւլ Ազիզի տկար կողմը և մէկ իղձը, նպաստաւոր և խրախուսող եղեր էր անոր, որով և ստացեր էր Սուլթանին համակրութիւնը և վստահութիւնը. մինչեւ Սուլթանը դեսպանաց մէջ զատիկայ միայն բարեկամը կը կոչէր։ Աբդիւլ Ազիզ առանց մեծ դժուարութեան շնորհեր էր Եգիպտոսի Խտիվին ուղղակի յաջորդութեան իրաւունքը. կը յուսար որ մահմէտական ժողովրդեան ընտանենալով այդ գաղափարը, օր մը նոյն օրէնքը կրնայ մտցնել ի Կ. Պոլիս. այսպէս իրեն յաջորդ ընել իր Եուսուֆ Իզէդդին որդին. մինչ բնական ոճով պիտի յաջորդէր իրեն կայսերական ցեղին տարիքով մեծագոյն իշխանը, որ էր Մուրատ էֆէնտին, որդի Սուլթան Աբդիւլ Մէճիտի։ Քանի որ Ալի փաշա ողջ էր, Աբդիւլ Ազիզ զգուշացաւ իր գաղափարը հրատարակելու։ Ալի փաշա գիտէր որ սրբազան օրինաց դէմ այդօրինակ խնդիր մը, պիտի զայրացնէր բոլոր սոֆթաները և նոյն իսկ ժողովրդեան մեծ մասը. և կարող էր Աբդիւլ Ազիզի անձին նկատմամբ ազատալի հետեւանք ունենալ և այսպէս կորսնցնել մինչեւ այն ատեն ձեռք բերուած բարեբաղդութիւնք ալ։ Բաց աստի Մուրադ էֆէնտի անձնականապէս շատ սիրելի էր ժողովրդեան, մանաւանդ քրիստոնէից, իր հեզահամբոյր բնաւորութեամբը, որ կը յիշեցնէր իւր հայրը՝ Աբդիւլ Մէճիտ։ Այս սիրելիութիւնը նախանձ ձգեր էր Աբդիւլ Ազիզի սրտին մէջ և զՄուրադ իշխանը խիստ հսկողութեան մը ներքեւ ենթարկեր էր[1]։ Այս հալածանքը փոխանակ նուազե-

1. Երբ ի Պարիս Մուրադ էֆէնտի Աբդիւլ Ազիզի և իր եղբօր՝ Աբդիւլ Համիտի հետ, ճաշի կը գտնուէր ի Տիւյլերի, յանկարծ կայսրուհին

ցնելու, աւելցուցեր էր ժողովրդեան համակրանքը։ Աբդիւլ Ազիզ ըմբռնեց այդպիսի օրինաց փոփոխութեան անկարելութիւնը, մանաւանդ այսօրինակ հանգամանքներու մէջ։ Որով Աբդիւլ Ազիզի այս փափագը ոչ միայն արդիւնք մը չունեցաւ, այլ աւելի զայրացուց իրեն դէմ կրօնասէր սոֆթաները։

Մայրաքաղաքին այս ներքին շփոթութեանց ժամանակ, կրնայ գուշակուիլ գաւառաց աղէտալի վիճակը և կուսակալաց բռնած ընթացքը. որով այն գաւառները որոնք արդէն ունէին միջոց և պատրաստուած էին, յարմար ժամանակ համարեցան ապստամբութեան դրօշը բանալու, և ջանալ ազատելու օսմանեան իշխանութենէն։

Լիւմնի հարցուց առ Ֆուատ փաշա, պաշտօնեայ Արտաքին Գործոց, որ այս միջոցին երկու կայսերաց մէջ Թարգմանի պաշտօն կը վարէր. Թէ արդեօք կայսերազուն իշխանք զաղղիարէն գիտէին։ Երբ կայսրուհւոյն այս խօսքերը Ֆուատ փաշա կը Թարգմանէր առ Նուլթանը, Մուրադ առանց նախ իր հօրեղբօրէն հրաման առնելու, պատասխանեց փութով. Այո՛, վեհափառ, ես զաղղիարէն կը խօսիմ։ Աբդիւլ Ազիզ մեծապէս զայրացաւ և սեղանէն վերջը մեծ յանդիմանութենէ մը յետոյ, հրամայեց որ անմիջապէս Կ. Պոլիս դառնայ և հետը չտարաւ ի Լոնդրա և Բէլգիոն։ Ինքն ալ մայրաքաղաք դառնալուն, զՄուրադ էֆէնտի ասիական Վոսփորի վրայ պալատի մը մէջ գրեթէ փակեց։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՊԱԼԿԱՆԵԱՆ ԱԶԳԱՅ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ Ի Կ. ՊՕԼԻՍ ՄՈՒՐԱԴ Ե. ԱԲԴԻԼ ՀԱՄԻԴ Բ.

1. Պալկանեան ժողովրդոց տժգոհ վիճակը. — Ինքնիշխանութեան ձգտումը. — 2. Հէրձէգովինայի ապստամբութիւնը. — 3. Բուլղարիոյ չարդերը. — 4. Ցեղափոխութիւն ի Կ. Պօլիս. — 5. Աբդիւլ Ազիզի գահընկէցութիւնը և մահը. — 6. Սուլթան Մուրատ Ե, և գահընկէցութիւնը. — 7. Սուլթան Աբդիւլ Համիդ Բ. — 8. Սերբիացիք կ'ուզեն օգնել Հէրձէգովինայի. — Միլան իշխանին հրատարակութիւնը. — 9. Մոնտէնէկրոյի բանակը. — Նիկոլա իշխանը. — 10. Աբդիւլ Քէրիմ փաշա. իր յաղթութիւնքը Սերբիացւոց դէմ. — Պելգրատ չու�. — 11. Բանակցութիւնք Մեծ պետութեանց. — Ընդհանուր մահմէտական ոգւոյն զարթումը. — 12. Ճիւնիսի յաղթութիւնը. — Ռուսիոյ վերջնագիրը։

Պալկանեան ժողովրդոց տժգոհ վիճակը. — Ինքնիշխանութեան ձգտումը։

1. — Պալկանեան ազգայ և մանաւանդ քրիստոնեայ մեծամասնութեան տրտունջները և կռիւները ընդդէմ Թրքաց շատ հին են. և արդէն կանխապէս տեսանք շատ անգամ ապստամբութիւններ, փոփոխակի յաղթութիւններ և վերջապէս առ ժամանակեայ հանդարտութիւն մը. միշտ Բ. Դրան բարեկարգութեանց սովորական դարձած խոստումներով, որոնք անգործադրելի կը մնային։ Յամին 1856 Պարիսու դաշնաժողովը, Եւրոպիոյ մեծ Պետութեանց հսկողութեան ներքեւ դրած էր վերջին անգամ խոստացուած բարեկարգութեանց գործադրութիւնը.

բայց ինչպէս միշտ, այն անգամ ալ դաշնաժողովոյն ցրուելէն վերջը, միաբան գործելը անկարելի կ'ըլլար և իւրաքանչիւրը վրէժխնդիր կը կենար, որ այս կամ այն պետութիւնը չմիջամտէ Թուրքիոյ ներքին գործոց մէջ, որով բարեկարգութիւնք անգործադրելի կը մնային։ Կ. Պոլսոյ վարչութիւնը կը լսէր զանոնք պատրիարգներէն, կը բողոքէր որ դարման պիտի տանէր, յետոյ կը ջանար եղածը ծածկելու, ոչ առ չարութեան, այլ առ անկարողութեան. որով քրիստոնեայք ստիպուած էին ամեն տառապանք և խայտառակութիւն կրելէ զատ, գլուխ ծռել և խոնարհիլ։ Քանի որ տէրութիւնը անկարող էր գաւառաց մէջ, որ և է բողոքի մը գոհութիւն տալ, աւելի ահաւոր կերպով վրէժխնդրութեան նիւթ ընել էր։ Եւ որովհետեւ 1870էն վերջը լրագրութեան ազատութիւնն ալ սեղմուեցաւ, անոր համար թէ Եւրոպա և թէ ի Կ. Պոլիս չէին գիտեր թէ Պալկաններու, փոքր Ասիոյ ու Հայաստանի մէջ ինչ էր ժողովրդեան կրածը կուսակալներէն, բանակէն, և քիւրտ, լէզկի, չէչէն ինքնագլուխ ցեղերէ և բէյէրէ։ Ժողովրդեան մաս մը փախստեամբ ամեն օր կ'անցնէր օտար երկիրներ և մանաւանդ ի Ռուսաստան. դեռ Ամերիկա այնքան ընտանի չէր, և մաս մը թողլով գաւառները կը կեդրոնանար ի Կ. Պոլիս և ծովեզերեայ քաղաքները, ուր անհամեմատ կերպով վեր էին կենաց հանգամանքները։

Զարմանք չէ որ այսօրինակ կացութեան մէջ գըտնուող ժողովուրդ մը կամ ի յուսոյ կամ ի յուսահատութենէ փնտռէ ազատութեան միջոցները։ Պալկանի ժողովրդոց 1872էն վերջը ամեն պատրաստութիւն այդ նպատակն ունէր։ Ա՛լ չէին ուզեր լսել Թուրք վարչութենէն բարեկարգութեանց խոստումներ, որոնցմով շատ տարիներ օրօրուեր էին, այլ եւս չէին հաւատար Եւրոպիոյ Պետութեանց հսկողութեան, որոնց նպատակն էր իրենց սեպհական վաճառականութեանց շահերը, մըտքերնին դրին կռուիլ մինչեւ վերջը ամբողջական ինքնիշխանութեան համար. միայն յոյս մը ունենալով Ռուսիոյ վրայ իբրեւ կրօնակից և ցեղակից, որ արդէն շատ

առիթներու մէջ ցրցուցեր էր իր համակրանքը և օգնութիւնը։

Հերձէգովինայի ապստամբութիւնը։

2. — Ապստամբութեան առաջին նշան տուողն եղաւ Հերձէգովինա, որ ի զուր աղաչած էր շատ անգամ ոչխարի տուրքին և գլխահարկի նուազումը և տեղացի պահապան զինուորութիւն։ Թուրք վարչութիւնը պատասխանի տեղ, աւելի շատցուց զանոնք։ Հերձեգովինացիք գաղտ Եւրոպայէն բերել տուին հրացանք և պաշարք և 1875ի Օգոստոսի առջի օրերուն մէջ զինեալ խումբեր Մոլայի շրջակայքը, Մոնտէնէգրոյի մօտ, ապըստամբութեան դրօշը կանգնեցին, որ փութով տարածուեցաւ ամբողջ Հերձէգովինայի և Բոսնիոյ մէջ. և խումբ խումբ զինեալ ապստամբներ պատսպարուեցան անմարձենալի լերանց մէջ և չուզեցին այլ ելս հաւատալ և խոնարհիլ։ Երբ Անգլիոյ, Գաղղիոյ, Ռուսիոյ, Գերմանիոյ, Աւստրիոյ և Իտալիոյ հիւպատոսք Մոստար գացին ապստամբութեան գլխաւորներուն հետ բանակցելու և զանոնք համոզելու, յետ ընդերկար թափառելու, հազիւ քանի մը գլխաւորներ տեսնելէ վերջը ապարդիւն դարձան տեղերնին։

Բ. Դուռը խիթալով որ Եւրոպիոյ Մեծ Պետութիւնք ուզեն միջամտել, ինքը կանխեց և Դեկտեմբեր 12ին ֆէրման մը հանեց, որով կը խոստանար ապստամբաց, Գործադիր իշխանութիւնը բաժնել դատականէն։ Այսպէս դատաւորք՝ ընտրութեամբ պիտի ըլլային, տուրքը պիտի նուազէր և հպատակաց հաւասարութիւն պիտի ըլլար, առանց կրօնքի խտրութեան։ Ապստամբք բնաւ չուզեցին լսել, որով սկսան ընդհարմունք և արիւնհեղութիւնք Հերձէգովինայի մէջ։

1875

Բոլոր Ռուսիա ձայն բարձրացուց և վարչութիւնը յետ ընդերկար խորհրդակցելու Աւստրիոյ և Գերմանիոյ հետ, դիւանական ծանուցագիր մը առաջարկեց Բ. Դրան, ըստ որում պիտի տրուէր կրօնական ազատութիւն, պիտի վերցուէր ագարակային տուրքը, ուղղակի տուրքերը[1]

1. Contribution directe.

պիտի գործածուէին Հէրձէգովինայ համար. և միջազգային հսկողութիւն մը պիտի դրուէր բարեկարգութեանց գործադրութեանը համար։ Այս ծանուցագիրը Աւստրիոյ դիւանապետը՝ կոմսն Անդրաշի գրած ըլլալուն համար, Պատմութեան մէջ մնացած է Դրանուցագիր Անդրաշիի անուամբ։ Բ. Դուռը 1876ի փետրուար 2ի ընդունեցաւ Անդրաշիի ծանուցագիրը, սակայն ապստամբները իմացուցին որ չեն ընդունիր զայն, մինչեւ որ թուրք քառասուն վաշտերը չ'ելլեն Հէրձէգովինայէն։ Բ. Դուռը մերժեց այս պահանջը, և ամեն բան դարձաւ իր առջի վիճակին։

Թշնամութիւնք գարնան սկսան սաստկութեամբ։ 1876
Մուխթար փաշա 14,000 զինուորօք եկաւ պաշարեց Նիքսիչ և Պիվա, սակայն ամեն օր Սերբիայէն և Մոնդէնէգրոյէն կամաւորներ կը դիմէին ի Հէրձէգովինա և ապստամբք ոչ միայն դէմ դրին Մուխթար փաշայի բանակին, այլ և ունեցան փոքր յաղթութիւններ։

Այս միջոցիս էր որ Սէլանիկի թուրք ամբոխը յարձակեցաւ Գաղղիոյ և Գերմանիոյ հիւպատոսներուն վրայ 6 Մայիս։
և զանոնք սպաննեց[1]։ Բոլոր Եւրոպա յուզուեցաւ. Ռուսիոյ Աղեքսանդր Բ. կայսրը կորչաքով իշխանին հետ Բէռլին գնաց. հոն հասաւ նաեւ Անդրաշի կոմսը և գրեցին Բէռլինու Ցուշագիրը որով կը պահանջէին Բ. Դռնէն Անդրաշիի ծանուցագրին գործադրութիւնը, վրան աւելցնելով ապստամբաց պահանջներէն շատերը. և մանաւանդ թուրք զինուորաց՝ երկրէն դուրս ելլելը։ Անգղիա չուզեց միանալ երեք Պետութեանց հետ և ահեղ նաւատորմիղ մը քսան մեծ զրահաւորներէ կազմուած, ղրկեց Տարտանէլլիի բերանը ի Պէզիքա. որով և թուրքիա ըմբռնելով եւրոպական Պետութեանց անհամաձայնութիւնը, փոյթ մը չընցուց Բէռլինու Ցուշագիրը ընդունելու։

---

1. Պատճառը՝ հարուստ տաճիկ մը յափշտակած ըլլալով բուլղար աղջիկ մը. սա ծածուկ գրութեամբ մը, կրցաւ փախչիլ։ Թուրք ամբոխը յուզուեցաւ որ աղջիկը կամովին ընդունած էր մահմէտականութիւնը. հաւաքուեցաւ մզկիթի մէջ։ Երկու հիւպատոսք՝ որոնք սելանակցի էին, դուրս ելան ամբոխը հանդարտեցնելու և հոն սպանուեցան։

Բուլղարիոյ ջարդերը.

3. — Սակայն Անգղիոյ անտարբերութիւնը քիչ տեւեց և երբ բոլոր Եւրոպա լսեց Թուրք վարիչներու բուլղար ժողովրդեան տուած ահաւոր տառապանքները և տանջանքները, յուզուեցաւ բոլոր Անգղիա և բրիտանական կառավարութիւնը միացաւ Հիւսիսային Եւրոպիոյ երեք մեծ Պետութեանց, պախարակելու օսմանեան կառավարութեան անհոգութիւնը և պատասխանատուութիւնը։ Զորս Պետութեանց բողոքը, իր համակրալից արձագանքը ունեցաւ ամեն ազգաց մէջ Բուլղարիոյ նկատմամբ, մանաւանդ որ անգթութեանց դէմ բողոքին գլուխ կեցած էր Գլադստոնի նման ազատական և ազնուական, անշահասէր ոգի մը։ Կրնար ըսուիլ որ այն օրուընէ ծնած էր Արեւելեան պատերազմը և պալկանեան ազգաց ազատութիւնը։ Թէպէտ և Բուլղարներուն նեղութիւնքը նոր չէին, որոնք սակայն աւելի սաստկացեր էին 1864էն վերջը, երբ Թուրք կառավարութիւնը հոն ղրկեց բնակելու Կովկասէն գաղթեալ չէրքէզները. որոնք նոյն իսկ Կ. Պոլսոյ մէջ կը գործէին ամեն եղեռն և աւազակութիւն. և Թուրք վարչութիւնը պատժեց երբեմն այն հայ լրագիրները, որոնք ամեն օր բռնադատուած էին բողոքելու գողութեանց և աւազակութեանց դէմ[1]։ Բուլղարիոյ մէջ չէրքէզներուն միացած էր և տեղացի Թուրք ամբոխը որ զայրացած Հէրձէգովինայի քրիստոնէից ապրստամբութեան վրայ, բուլղար քրիստոնեաներէն կ'ուզէր վրէժն առնուլ[2]։

---

1. Այս մասին Մասիսի գրածները և կրածներն ինքնին պատմած է։

2. 1875ի Հոկտեմբերի կը սկսին Բուլղարաց դէմ սառապանքները։ Անգղիոյ հիւպատոսաց հեռագիրք առ իրենց դեսպանը ի Կ. Պոլիս, բազմաթիւ ահաւոր դէպքեր կը պատմեն։ Հոկտեմբերի մէջ Սուլմշի գիւղին Թուրքերը կը յարձակին բուլղար տներուն վրայ, կը բռնաբարեն աղջկունք, կանայք, կը վիրաւորեն կը սպաննեն էրիկ մարդիկ և գտածնին կը տանին։ — Թուրք հարիւրապետ իր մը գնդով, քրիստոնեայ գիւղ մը կը մտնէ, տեղւոյն գլխաւորները շղթայի կը զարնէ և յետ շատ մը տանջելու, անոնց մերկ կուրծքին վրայ բորբոքած սպունգ և տաքցուցած քարեր կը դնէ։ Յետոյ քանի մը ոսկի առնելէ վերջը, ազատ կը ձգէ։ Ուրիշ գինուորականք կրակ կու տան գիւղերու և փախստականները իրենց որս՝ կը սպաննեն հրացանի հարուածով։ Այս օրինակ դէպքեր շատ են։

Բուլղարք կրկին և կրկին աղերսներ գրեցին առ Բ. Դուռը և առ Սուլթանն իսկ, յիշելով թղթի մը մէջ որ «թշուառութիւնը և յուսահատութիւնը յեղափոխութիւն կը ծնանին»։ Սակայն ի Կ. Պոլիս մտիկ ընող չկար. մանաւանդ Ալի փաշայի մահուընէ վերջը Բ. Դուռը փաշաներուն անձնական հակառակութեանց ասպարէզ դարձած էր։ Այն ատեն բուլղարք, որոց մէջ մտեր էին նաեւ սլաւ յեղափոխական յանձնախումբէն, 1876ի Ապրիլի մէջ ապստամբութիւնը հրատարակեցին Յ()թլու քէօյ և ի Սթրիէլիցա՝ որ մօտ է Պազարճիքի։ Ապստամբք, քիչ մը շատ կանուխ, իրենց թագաւոր և թագուհի մը անուանեցին. և իբրեւ նորոգած Բուլղարիոյ հին թագաւորութիւնը, սփոռեցան գիւղերու մէջ, բոլոր ժողովուրդը ոտք հանելու, պատմելով անոնց որ ռուս բանակ մը պատրաստ էր օգնութեան գալու։ Սպաննեցին գիւղերուն մէջ նաեւ հարիւրէն աւելի թուրքեր, զոմանս ահաւոր տանջանքներով խորովելով կրակի վրայ։

Սակայն այս ապստամբութիւնը չունէր բնաւ կազմակերպութիւն մը. և 1000 օրինաւոր զինուորք բաւական էին զայն ընկճելու։ Բայց թուրք կառավարութիւնը մտածեց ահաւոր օրինակ մը տալ ուրիշ քրիստոնեայ հպատակաց. և բուլղարներուն անկախութեան յոյսը բոլորովին խեղդել։ Այդ նպատակաւ ղրկեց ի Բուլղարիա 10,000 բաշիբոզուք, որոնք յարձակելով գաղանաբար, մանաւանդ Պազարճիքի և Ֆիլիպէի սանճաքները, արեան մէջ թաթխեցին բովանդակ Բուլղարիան, առանց խտրութեան սպաննելով անմեղը և յանցաւորը, ծերը և տղան. չմնաց անօրէնութիւն զոր չգործեցին։ Լրագիրք սպաննելոց թիւը 60,000էն աւելի համարած են, բայց երբէք 20,000էն նուազ չէին ջարդուածները[1]։ Օրինաւոր գունդերը որոնց կը հրամայէին

---

1. Անգլիոյ գործակատարը Սըր Բարինկ՝ ընդարձակ տեղեկագիր մը տուած է առ իր վարչութիւնը, ուսկից կ'առնում հետեւեալ երկու քստմնելի դէպքերը։ Բատաք գեղեցիկ և ճարտարարուեստ քաղաք մ'էր 6000 բնակչօք։ Մայիս 9ին Ահմէտ աղա անունով չաւուշ մը կը մտնէ հոն պա-

Շէֆքէթ փաշա, Ֆազլը փաշա, Ռէուֆ փաշա և Նէհիպ փաշա, հրաման ստացած էին նուաճելու Ալիմիա, Դուբնովա և Գապրովա։ Նէհիպ փաշայի կանոնաւոր գունդերը բաշիբոզուքներէն վար չմնացին, Սէլոյ–եէնիքէոյի մէջ 150 հոգի սպաննեցին յորս կային քսան կանայք, տասը տղայք և եօթը հաւատաւոր կուսանք։ Բոյաճը–քէոյի մէջ 146 հոգի սպաննեցին՝ որոց մէջ կային վեց կանայք։ Դրանովայի վանքը ամբողջովին այրեցին իր հարուստ գրատունովը։ Շէֆքէթ փաշա Լամպոլի երթալով, հոն առանց դատի մը, երեք հարիւր էրիկ մարդիկ հրացանի բռնեց։

Այս ջարդերուն լուրերը յուզեցին բոլոր Եւրոպա։ Անգլիոյ մէջ լրագիրք և ժողովրդական գումարումներ վարչութենէն կը պահանջէին դարման մը տանել «այս գազանութեանց»։ Գլադստոնի ահեղ խօսքերը ընդդէմ թուրք վարչութեան, ամեն կողմ ընդունուեցան ծափահարութեամբք. իսկ Ռուսիա և սլաւեան ազգերը արդէն պատրաստ էին դիմելու ի Բուլղարիա ազատելու իրենց եղբարը։

շիրոզուքներով։ Բնակիչք որ երբէք ապստամբած չէին, կը յայտնեն իրենց հպատակութիւնը։ Ահմէտ ագա խոստացաւ մէկու մը մազին չդպչելու տուրք մը պահանջեց։ Բայց նոյն երեկոյ ջարդը սկսաւ անկ տուն։ Ջարդէն վերջը կողապտեցին և կրակի տուին քաղաքը։ Հազար երկու հարիւր անձինք եկեղեցի ապաւիներ էին. Թուրքերը զանոնք հրացանի բռնեցին պատուհաններէն։ Ցետոյ կղմինար, լաթի և փայտի կտորներ քարիւղի մէջ թաթիելով, բռնկցած վրանին կը նետէին։ Մէկ միայն պառաւ մը ազատեցաւ մահուընէ։

Անգղիացի գործակատարը երկու ամիս վերջը այց ելլելով այդ տեղերուն, դեռ դիակները հոն ձգուած գտաւ սոսկալի վիճակի մէջ։ Խոռոչի մը մէջ վաթսունէն աւելի զլուխներ գտեր է, մեծաւ մասամբ կանանց։ Բատաքի սպանելոց թիւր կը համարուի 5000։ Դոյն ահռելի դէպքերը եղան ի Բէրուսդիցա որ 2000 բնակիչ ունէր և 1000էն աւելի սպանուեցան. «Մարդ մը իր ձեռքով սպանեց իւր կինը և երկու աղջկունքը, զանոնք խայտառականքէ ազատելու համար, յետոյ սարճանակը իր զլխուն պարպեց»։ Կռիւը չորս օր տեւեր էր և բնակիչներէն մաս մէ եկեղեցի ապաւիներ էր։ Իշխանութիւնը թնդանօթք դրկեց։ Դերսի եղող թշուառք բանակցութեան մտան և խոստացուեցաւ ազատ ելլելու։ Բայց առաջին դուռս ելլողները անմիջապէս դրան առջեւ հրացանի բռնուեցան և միւս ներսինները ջարդուեցան։ Շատ մը տղայք, աղջկունք ալ դերի տարուեցան վաճառուելու զաղտ ի Կ. Պոլիս և ուրիշ կողմեր։

Ա՛լ միայն Բոսնիա և Հերձէգովինա չէին որ թուրք վարչութեան լուծը վերջապէս կ'ուզէին թօթափել, այլ բոլոր պալկանեան ազգերը, յորս նաեւ Սերբիա և Մոնդենէկրօ։ Երեք Պետութիւնք, դեռ իրենց ոճով, սահմանեցին մէջերնին, բռնադատել զՍուլթանը գործադրելու Բէռլինու Ցուշագիրը. և երբ այդ քայլը պիտի կատարէին Մայիս 30ին, լսուեցաւ յանկարծ որ արդէն առջի օրը, ներքին, պալատան յեղափոխութիւն մը գահընկէց ըրեր էր զՍուլթան Աբդիւլ-Ազիզ, և տեղը դրեր էր զՄուրադ Ե, իր եղբօրորդին։

4. — Երբէք օսմանեան պետութիւնը չէ ունեցած այնպիսի դրամական ահաւոր տագնապ մը ինչպէս Աբդիւլ Ազիզի թագաւորութեան վերջին տարիներն, յորս անհաշիւ ճոխութիւն մը, անանկութեան դիրքի մէջ դրեր էր արդէն աղքատ գանձը։ Տժգոհութիւնը սկսաւ սոֆթաներէն. ասոնք առաջին անգամ իրենց տրտունջը յայտնեցին Մայիս 11ին ցոյցով մը։ Իրենցմէ 600 հոգի սպառնական և միաձայն քայլով անցնելով կեդրոնական փողոցներէն, ներկայացան Պալատան դուռը, և կը գոչէին որ պաշտօնանկ ըլլան Շէյխիսլամը և Մահմուտ Նէդիմ փաշա վէզիրը և տեղը դրուի Մէհմէտ Ռիւշտի փաշա։ Կը պահանջէին որ անմիջապէս վճարուին բանակին յետաձգեալ ռոճիկները և զօրաւոր միջոցներ ձեռք առնուին Հէրձէգովինայի ապստամբութիւնը նուաճելու։ Կար մայրաքաղաքին մէջ ուրիշ տժգոհ խումբ մ'ալ, մեծաւ մասամբ կազմեալ Եւրոպա ուսեալ երիտասարդութենէ, որոնք առաջին անգամ յայտնապէս տուին Սահմանադրութեան մը անունը. ասոնք ալ իրենց գլուխ ունէին զՄիտհատ փաշա։ Աբդիւլ Ազիզ գոհացուց զՍոֆթաները և փոխեց Շէյխիսլամը և վէզիրը, որոց տեղ կանչեց զՀայրուլլահ էֆէնտի և զՄէհմէտ Ռիւշտի փաշա և զՄիտհատ փաշա եւս, պաշտօնեց անուանեց, առանց մասնաւոր պաշտօնարանի մը, ուզելով գոհացնել նաեւ երիտասարդ թուրք կոչուածները։

Յեղափոխութիւն ի Կ. Պոլիս. — Աբդիւլ Ազիզ գահընկէց։

Սակայն ասիկայ միայն՝ դարման մը չէր հրապարակին վրայ եղած դրամական տագնապին, որովհետեւ

գանձը բնաւ դրամ չկար։ Մայիս 22ին պաշտօնեայք խնդրեցին Սուլթանէն որ իր անձնական գանձէն վեց միլիոն ստէրլին փոխ տայ Հասարակաց Գանձուն։ Աբդիւլ Ազիզ մերժեց պաշտօնէից խնդիրը։ Այս մերժումը վճիռ մը եղաւ գործադրելու Աբդիւլ Ազիզի գահընկէցութիւնը զոր մտածեր էին Հիւսէյին Ավնի փաշա՝ պատերազմի պաշտօնեայն, Մէհմէտ Ռիւշտի փաշա մեծ վէզերը և Միտհատ փաշա և գահը նստեցնել զՄուրադ էֆէնտի, Աբդիւլ Մէճիտի անդրանիկը։ Եւ որպէս զի ամենայն ինչ օրինաւոր համարուի ըստ Ղուրանին, նախ Շէյխիսլամէն ֆէթվա մը ստացան ընդդէն Աբդիւլ Ազիզի, իբրեւ կործանիչ օսմանեան տէրութեան և ինքնակար իսլամութեան. յետոյ ծովային զօրութեան պաշտօնեայն Ահմէտ Քայսէրլի փաշա հրաման ընդունեցաւ ծովէն ու ցամաքէն գունդերով պաշարել Դոլմա Բահչէի պալատը։ Յեղափոխութիւնը 30ին գիշերը պիտի գործադրուէր, բայց որովհետեւ Աբդիւլ Ազիզ գունդերուն տեղափոխութենէ կասկած մը ստանալով, ղրկեր էր կանչելու զՀիւսէյին Ավնի փաշա, պատերազմի պաշտօնեայն, որոշուեցաւ անմիջապէս կատարելու յեղափոխութիւնը և մէկէն տուեցան զինուորական հրամանները։ Յետոյ Հիւսէյին Ավնի փաշա գնաց իմացնելու Մուրադ իշխանին, որ զինուորական աղմուկէն ահուդող պահուըտեր էր սենեկի մը անկիւն, անմիջապէս իրեն հետեւելու։ Իշխանը կը դողար, սակայն վախէն հետեւեցաւ։ Հիւսէյին Ավնի փաշա զինքը նաւակ նստեցուց և տարաւ Ամերասքէրի պալատը, ուր հաւաքուած դաւակից զինուորական գլուխք և բարձրաստիճան անձինք «կեցցէ թագաւորնիս» գոչելով զինքը ողջունեցին։

Մայիս 29.

Յանձնուեցաւ Ռէտիֆ փաշայի որ նախագահ էր Պատերազմական խորհուրդին, իմացնելու Աբդիւլ Ազիզի իր գահընկէցութիւնը։ Կէս գիշերէն երկու ժամ վերջը Ռէտիֆ փաշա ներկայացաւ Դոլմա Բահչէի պալատը, արթնցընել տուաւ զԱբդիւլ Ազիզ, իմացուց իր գահընկէցութիւնը և հրաւիրեց թողուլ Դոլմա Բահչէ և մեկնել

Թոփ գափուի պալատը և ի զուր էր ո՛ր և է ընդդիմութիւն մը։

Արդիւլ Ազիզի գահընկեցութիւնը և մահը։

5. — Արդիւլ Ազիզ ի սկզբան բարկութեամբ հակառակեցաւ. նախատեց «մատնիչ» կոչելով զանոնք որ իրեն այս հարուածը կու տային. որոնք աշակերտած էին իրեն հաստատած Ջինուորական վարժարանին, որոց ինքը, կ'ըսէր, բարերարած էր. և չորս կողմը օգնութիւն մը կը փնտռէր։ Բայց երբ ներքինիները դիտել տուին՝ որ բանակը արդէն պաշարած էր զՊալատը. այն ատեն քիչ քիչ հանդարտեցաւ և կրօնական ճակատագրականութեամբ «Աստուծոյ կամք» ըսաւ և համակամեցաւ։ Աբթնցուց մայրը և տղաքը որ մօտ էին, և նաւակ մտնելով անցաւ Թոփ Գափու, հետը գումար մը առած։ Հինգ օր վերջը մեռած գտնուեցաւ սենեկին մէջ, երակները կտրուած, արեան լճի մէջ, քովն ալ փոքր մկրատ մը[1]։ Շքեղ յուղարկաւորութիւն մը ընել տուաւ Մուրադ Ե, իբրեւ գահու վրայ մեռնող Սուլթանի մը, և նոյն օրը ի յիշատակ վախճանելոյն ողորմութիւններ բաշխուեցան։

Սուլթան Մուրադ Ե. և գահընկեցութիւնը։

6. — Յեղափոխութեան երկրորդ օրը մայրաքաղաքը իր սովորական կերպարանքին մէջ էր. բնաւ նորութիւն մը, յուզում մը չէր տեսնուէր։ Մուրադայ գահակալութեան օրը, կէսօրէն վերջը հաւաքուած բոլոր աւագանւոյն առջեւ, Սուլթանին առաջին քարտուղարը Սատուլլահ բէյ, կարդաց առ Մէհմէտ Ռիւշտի մեծ վէզիրը ուղղեալ հարց որով Մուրադ Ե կը հրամայէր որ՝ ազատութիւնը ապահովեալ ըլլայ ամենուն, խիստ հսկողութիւն ըլլայ Եւեւմտից վրայ, բարեկարգուին Արդարութեան, Հասարակաց կրթութեան և միւս պաշտօնարանները. կայսերական ծախուց գումար երեսուն միլիոն ֆրանք նուազի, կայսերական հանքերը ուղղակի Եւեւմտից պաշ-

---

1. Ի սկզբան հոչակուեցաւ իբր անձնասպանութիւն մը. յետոյ եղան ամբաստանութիւնք և դատաստանք որոնք այլօրինակ վճռեցին. և պատժեցին հեղինակքը։

տոնարանէն կախումն ունենան և միով բանիւ ամբողջ կայսրութեան մատակարարութիւնք կառավարուին «ըստ պիտոյից երկրին և ըստ ժամանակիս ազատ գաղափարաց»։ Բնական է այսօրինակ վարչութեան ծրագիր մը ուրախացուց բոլոր հպատակքը, մանաւանդ որ Մուրատ Ե թագաժառանգ եղած ժամանակ ազատամիտ իշխանի մը գաղափար տուած էր։ Դահը բարձրանալուն իրեն խորհրդական առեր էր նշանաւոր Զիա բէյը, նոր թուրքերուն գլուխը, որ 1868էն ի վեր Պարիս և Լոնդրա էր, աշխատակից Մուսթաֆա Ֆազլը փաշային, և որ կանխապէս Աբդիւլ Ազիզի քով ալ վարած էր զանազան պաշտոններ։ Մուրատ Եի թագաւորութեամբ Նոր Թուրքիոյ գահը բարձրացած համարուեցաւ իր ամեն սահմանադրական յոյսերով [1]։

Եւրոպիոյ Պետութիւնք մի առ մի ընդունեցան այս եղած փոփոխութիւնքը. յոյս մը ծնաւ որ նոր բարեկարգութիւնք թերեւս մերձաւոր Բալկանեան ապստամբութեանց դիմացն առնուն։ Ռուսիա, Աւստրիա և Գերմանիա սահմանեցին դիտելու նոր Սուլթանին ընթացքը և անորոշ ժամանակի մը թողուցին Բէոլինու Ցուշագրին ներկայացումը առ Սուլթան։ Բայց Բոսնիոյ և Հէրձէգովինայի ապստամբք չուզեցին մէկէն համոզուիլ իրենց գացած կայսերական նուիրակներուն խոստմունքներուն։ Նա մանաւանդ որ Կ. Պոլիս կորսընցուցեր էր իր հանդարտութիւնը. և վարչութիւնը նոր տագնապի մը մէջ մտեր էր։ Աբդիւլ Ազիզի հաւատարիմ զինուորականաց մէջ կար զնդապետ մը կովկասցի՝ Զէրքէզ Հասան։ Հիւսէյին Ավնի փաշա իմանալով անոր վրէժխնդիր զգացումները, ուզեց Բաղտատ ղրկել։ Զէրքէզ Հասան ճարտարութեամբ կրցաւ խորհրդոյ սենեակը մտնել ատրճանակը ձեռքը և սպաննեց զՀիւսէյին Ավնի

1. Նոյն օրը կաժէթքրա տ'Իտալիա, Իզմիրի իր թղթակցէն նամակ մը կ'ընդունէր այս տարօրինակ տեղեկութեամբ որ «Թուրք մասսան Օրխանճիք լոժը, տոնեց իր Մուրատ էֆէնտի եղբայրակցին գահը ելլելը։ Հաշին ներկայ էին Իտալիոյ և Անգլիոյ լոժերուն ներկայացուցիչք և ուրիշները»։

փաշա և Ռաշիտ փաշա՝ պաշտօնեայ Արտաքին Գործոց. վիրաւորեց Ահմէտ Քայսէրլի փաշա, յետոյ ինքն ալ բռնուեցաւ և երկրորդ օրը կախուեցաւ։ Ռաշիտ փաշայի տեղ Արտաքին Գործոց պաշտօնեայ դրուեցաւ Սաֆվէթ փաշա, արդէն ծանօթ և յարգուած եւրոպական տէրութիւններէ. և Հիւսէյին Աֆնի փաշայի տեղ դրուեցաւ Աբդիւլ Քէրիմ քաջ և խոհեմ համբաւով զօրավարը։

Սակայն Մայիսի յեղափոխութիւնը, Աբդիւլ Ազիզի գահընկէցութիւնը, անոր տխուր մահը, դարձեալ պաշտօնէից սպանուիլը, յեղափոխութեան գիշերը՝ իր ամեն եղերական պարագաներովը, մեծ տպաւորութիւն ունեցած էին Սուլթան Մուրադի արդէն հիւծեալ ուղեղին վրայ. և փութով մտաւորական այլայլութեան նշաններ տուաւ, մինչեւ ինքզինքը սպաննելու մտաբերել։ Հարկ եղաւ խիստ պահպանութիւն մը դնել վրան. և Յունիսոս 31ին, վերջապէս պաշտօնեայք որոշեցին իր գահընկէցութիւնը, թագաւորելէ երեք ամիս վերջը։ Շէյխիսլամը տուաւ ֆէթվա մը որով կը յայտնէր թէ բացառիկ պարագային մէջ, քանի որ խալիֆայն զուրկ է յիմացականութենէ, կարելի էր տեղը օրինաւոր յաջորդ մը դնել։

Սուլթան Աբդիւլ Համիդ Բ։ 1876

7. — Անմիջապէս պաշտօնէից խորհուրդը որոց մէջ ամենէն ազդեցիկն եղեր էր Միդհաթ փաշա, հաւաքուելով գահընկէց հրատարակեց զՄուրադ Ե և Սուլթան հռչակեց անոր Համիդ եղբայրը, 35 տարեկան որ Աբդիւլ-Համիդ Բ անունը առաւ։ Մուրադ իր բոլոր հետեւորդներով Զրաղան կայսերական պալատը ղրկուեցաւ[1]։ Նոր Սուլթանը, բնաւ կայսերական գահուն չերազող, մինչեւ այն ատեն քաշուած կեանք մը ունեցեր էր, թէպէտ ճանչցուած էր իբրեւ սրամիտ, խոհական իշխան մը. և իբրեւ գիտուն իսլամ մը, մեծ ժողովրդականութիւն ստացած էր։ Աբդիւլ Համիդ իշխանութիւնը

1. Մինչեւ իր մահը, որ պատահեցաւ դեռ տարի մը առաջ, եղաւ յոյժ փոքր կուսակցութիւն մը, որ ուզեց ժխտել այդ մտաց այլայլութիւնը. և զանազան անգամ փորձեր ուզեց ընել զինքը ազատելու Զրաղանէն։

ձեռք առած օրէն ցրցուց խիստ կեանք մը և հաստատուն վարչական միտք մը։ Թուրքիոյ ներկայ երկու մեծ վէրքերն էին դրամական տագնապը և Բալկանեան պատերազմը։ Առաջինին դարման տանելու համար նախ սկսաւ անձնական զոհողութիւններով և նոյն իսկ խնայական կեանքով մը։ Իսկ երկրորդին համար եռանդնաւորեց Թուրք ժողովրդեան ոգին, և բիւրաւորք դիմեցին կեանքերնին տալու իրենց Թագաւորին համար։

Սերբիացիք կ'ուզեն օգնել Հէրձէգովինայի. — Միլան իշխանին հրատարակութիւնը։

8. — Աբդիւլ Ազիզի գահընկէցութենէ վերջը, Սուլթան Մուրատ Ե գահը բարձրանալուն ընդհանուր նեղումն հրատարակած էր Բալկանեան ապստամբաց, թէ վեց շարաթուան մէջ զէնքերնին վար դնեն. միանգամայն նախապէս հրատարակուած բարեկարգութիւնք կը շնորհուէին նաեւ Բոսնիոյ և Հէրձէգովինայի։ Սակայն երկու գաւառները խուլ եղան այդ հրաւէրին. մանաւանդ խրախուսուած Սերբիոյ և Մոնտէնէգրոյի գաղտ զինուորական պատրաստութիւններէն ընդդէմ Թուրքիոյ։ Բ. Դուռը կասկածեցաւ այս հանդերձանքներէն. ինքն ալ Նիշի մօտ 40,000 զինուոր հաստատեց և գրով մը բացատրութիւն պահանջեց թէ Միլան և թէ Նիկոլա իշխաններէն իրենց պատրաստութեանց նկատմամբ։ Երկուքն ալ պատասխան տուին որ ստիպուած էին իրենց պաշտպանութեանը հսկել, քանի որ սահմանագլուխներուն մօտ կը շատնային Թուրք գունդեր և ապստամբ խումբեր։ Սերբիա և Մոնտէնէգրո մէջերնին գաղտ յարձակողական և պաշտպանողական դաշինք դրին։ Սերբիոյ մէջ պատրաստութիւնք մեծ եռանդեամբ յառաջ կը մղուէին, որուն մասնակցած էին նոյն իսկ կանայք, իրենց ոսկեղէնքը և զարդարանքը նուիրելով հասարակաց գանձուն, որովք կը գնուէին ձի, թնդանօթ և հրացան։ Բելգրատի մէջ ազգային փոխառութիւն մը կատարուեցաւ. յայտնի էր պատերազմելու նպատակը, որուն ի զուր ջանացին դէմ կենալ մեծ պետութեանց ներկայացուցիչք։ Ամեն օր Օմշատինա լրագիրը կը գրգռէր ոգիները և կը քարոզէր որ հասաւ սերբիական միութիւն մը կազմելու ժամանակը բոլոր Խուկօ-սլաւներեն մէկ

գլխի մը ներքեւ։ Բելգրատի Ակադեմիայի նախագահին խօսքերուն համեմատ «Այլ եւս լեռներ և գետեր չէին բաժներ զՍերբիա, զԽոուադա, Սլովենները և Բուլղարիա»։ Ռիսդիչ՝ յանդուգն պաշտօնեային, սլաւ Դաւուր մը, ինչպէս կ'ըսէին, յայտնի քարոզած էր որ Սերբիա զէնքերը վար չդներ, մինչեւ որ չյաղթէ Թուրքին։ Միլան իշխանը զՋէոնայէֆ ռուս զօրավարը, Թուրքաստանի դիւցազնը, Սերբիա հրաւիրեց իր բանակին գլուխը անցնելու. և թէպէտ Զէոնայէֆ այլ և այլ պատճառներով աղէկ չէր տեսնուած Զարէն, այսու հանդերձ ռուս զօրավարի մը և շատ մը ռուս կամաւորաց ներկայութիւնը Բալկաններու մէջ, ապստամբութեան ուրիշ կերպարանք մը տուաւ. և տեսնուեցաւ արդէն Խուսիոյ ապագայ նպատակ մը։

Օսմանեան Պետութիւնը, որ մինչեւ այն ատեն չէր տուած այն մեծ կարեւորութիւնը Բալկաններու մէջ եղածին, այս նոր պարագաներուն վրայ, անմիջապէս զէնքի կանչեց պահեստները և քիչ օրուան մէջ Բալկաններուն ներքեւ հասան 120,000 զինուորք, ամենն ալ տոկուն, ամենն ալ կրօնական պատերազմի եռանդով վառուած։

Ռունիսի վերջերը Միլան իշխանը վերջնագիր մը ղրկեց առ Բ. Դուռը, յայտարարելով որ երկու արենակից ազգաց ապստամբութիւնը, միշտ յուզման պատճառ էր իր ժողովրդեան և կ'առաջարկէր որ իր բանակը մտնէ Հէրձէգովինա, Բոսնիա և Բուլղարիա, զանոնք խաղաղելու համար։ Նիկոլա իշխանն ալ գրեց առ Բ. Դուռ որ «շարունակ անորոշ և շփոթ վիճակի մէջ չորս կողմանէ, ստիպուած էր վերջնական որոշողութիւն մը ընել»։ Միլան իշխանը բանակով Ալեքսինաց գնաց, և Ռուլիս 1ին հրատարակեց իր ժողովրդեան որ՝ Թուրքիոյ բռնած ընթացքին պատճառաւ կը բռնադատուէր պատերազմ սկսելու. և թէ իրեն հետ էին Բոսնիա, Մոնտէնէգրո, Բուլղարք և յոյն ցեղերը։

Մոնտէնէգրոյի բանակը. — Նիկոլա իշխանին յաղթութիւնը։

9· — Եւ յիրաւի Մոնտէնէգրո զարմանալի երագութեամբ փութով պատրաստեց 20,000 զօրաց բանակ մը և չուեց դէպ ի սահմանագլուխը։ Նիկոլա իշխանը

միտքը դրած էր Թուրք գունդերը վանելով իր ճամբէն, հասնիլ Հէրձէգովինայի մայրաքաղաքը՝ Մոսդար. ոտք հանել բոլոր քաղաքները և աւելի ոյժ մը տալ ապըստամբութեան։ Այս եռանդով Մոնտէնէգրոյի բանակը յաղթեց նախ Մուխթար փաշայի Դրէպիոյի մօտ և Մահմուտ փաշայի Պոտկորիցայի քով. և պաշարեց Մէտուն, Նիքսիչ և Պոտկորիցա, միշտ կռնակէն պաշտպանուելով անառիկ դիրքերով, լերանց մօտ։ Թուրք զօրավարք իրենց առաջին ձախողութեան վրէժն առնելու համար Փուչիի մօտ 28,000 զօրօք յարձակեցան 5000 մոնտէնէգրեցւոց վրայ։ Օսմանեան բանակին մէջ կային 300 զէյկէք և 5000 բաշիբոզուք, որոնք աւելի վնասակար եղան բանակին։ Ահաւոր խառնուրդ մը տեւեց քանի մը ժամ, մոնտէնէգրոցիք կը կռուէին դիւցազնաբար, առանց քաշուելու՝ և կատարեալ յաղթութիւն մը ունեցան սպաննելով Թուրք բանակէն 4700 զինուոր։ Մոնտէնէգրոյի այս յաղթութիւնը բոլոր Եւրոպիոյ մէջ մեծ զմայլումն և գովեստ ստացաւ. այսու հանդերձ Նիկոլա չկրցաւ բանալ Մոսթարի ճամբան, և իր յաղթութիւնը արդիւնք մը չունեցաւ սերբիացի բանակին յաղթուելով։ Ցրցուց միայն Եւրոպիոյ որ Մոնտէնէգրո քաջ բանակ մը ունէր և ի հարկին լաւագոյն պայմաններ պիտի ստանար[1]։

Աբդիւլ Քէրիմ փաշա. Սերբիացւոց վրայ յաղթութիւնը. — Բնլգրադ կը չուէ։

10. — Սերբիոյ բանակը որ հազարապետ Նիգոլիչ, Պատերազմի պաշտօնէին ջանքովը, հասած էր 80,000 զինուորի, Զէռնայէֆի հրամանատարութեան ներքեւ չորս մասի բաժնուած էր։ Առաջին բանակին ի Զայչար՝ կը հրամայէր Լէսժանին, Երկրորդին՝ Ստորին Դրինայի քով, կը հրամայէր Իանքօ Ալէմպիչ, անկա-

---

1. Մի անգամ ևս միշտ ասենք որ եթէ Սերբիոյ և եթէ Մոնտէնէգրոյի բանակներն շատ անզգաստ վարուեցան Թուրք բնակչաց և զինուորաց հետ։ Հովմայ Օֆիցիոնեն լուրջ լրագրին Թղթակիցը կը գրէր։ «Որ կեղրոնական հիւանդանոց բերուած վիրաւոր Թուրք զինուորները, ահռելի կերպով կրճատուած են մոնտէնէգրոցիներէն. բաց ի պատերազմի մէջ ընդունած վէրքերէն, կտրուած են իրեղենուն քիթը, շրթունքը, ականջները»։ Թիւ 256։

բով սպայ մը, որ այդ աստիճանին հասեր էր Օբրէնո-
վիչներուն եռանդուն կուսակից ըլլալուն համար. Եր-
բորդին կը հրամայէր եօթանասնամեայ հազարապետն
Ֆագ՝ Եավորի քով. Չորրորդին հրամանատարն էր
ինքը Զէոնայէֆ, որ բռնած էր Սոֆիայի ճամբան և
հոն պիտի դիմէր Միլան իշխանին հետ։ Ռազմագէտք
կը մեղադրեն Զէոնայէֆի այս ծրագիրը, որ անշուշտ
Միլան իշխանին անձնական փառասիրութիւնը գոհա-
ցնելու համար էր, մտնելու ի Սոֆիա. և թերեւս հոն ալ
իշխան հրատարակուելու։ Պէտք էր, կ'ըսեն, որ Սեր-
բիոյ բանակը դիմեր Բոսնիոյ վրայ, ձեռք տար Մոն-
տէնէգրոյի յաղթող բանակին և ոտք հաներ բոլոր Բոս-
նիա, որ անհամբեր կը սպասէր։ Մինչդեռ Բոսնիա
կտրուած և առանձին մնալովը, իրեն գլուխ անուաներ
էր իշխան Պետեր Քարաճորճէվիչը, հակառակորդ Օբրէ-
նովիչ ցեղին և թիկնածու Սերբիոյ Գահուն։ Այսու
հանդերձ Միլան իշխանին յանդուգն ծրագիրը, եռանդնա-
ւորեց ամեն կողմի սլաւները և սլաւասէրները։ Ամեն
կողմանէ սկսան թափիլ դրամք, օգնութիւնք, կամաւոր
զինուորք։ Բէլգրադի մետրապոլիտը՝ կրցաւ մէկ միլիոն
դուկաղ նուէր հաւաքել։ Սլավոնիայէն, Խոռուադներէ և
Դանուբէն եկած կամաւորք, Բոսնիայի ուրիշ կամաւո-
րաց հետ, տասը գունդերէ բաղկացեալ ջոկատ մը կազ-
մեցին, որոց հրամանատար եղաւ աւստրիացի հին սպայ
մը՝ զօրապետն Պուդնիք։ Սերբիա ունեցաւ բազմաթիւ
բանակ մը, սակայն առանց կանոնաւոր կազմակերպու-
թեան և առանց փորձ հրամանատարներու, և մանաւանդ
գրեթէ բոլորովին զուրկ էր ձիաւոր գունդերէ, որոնք
ներկայ դարուս մէջ, պատերազմի որոշիչ դեր մը կա-
տարած են։ Հազիւ կային քանի մը խումբ կամաւոր
խազախք և չէրքէզք և անգղիացի Մրք-Իվոր սպային
լրտեսող ձիաւորները։ Հետեւակ զինուորաց գունդերն
ալ, Բլասնավաց՝ նախկին Պատերազմի պաշտօնէին ժա-
մանակ, առանց փորձերու թողուած, պատերազմին
յանկարծակի վրայ գալով, չունէին պէտք եղած վար-
ժութիւնը. անոր համար հազարապետն Լէսժանին չկըր-

նալով Օսման փաշայի վարժ գունդերուն դէմն առնուլ, յետ շատ անգամ կռուելու Վէլիքը-Խվորի քով, վերջապէս թողուց զՋայչար։ Ռանքո Ալէմպիչ յաղթուեցաւ Բիէլինայի քով և բոլորովին կ'ոչնչանար բանակը, թէ որ չ'օգնէին Օրէսքովիչ հազարապետին և Պուդնիք զօրապետին գունդերը։ Հարաւային Արեւմտեան կողմը, Եավորի վրայ, Աբդիւլ Քէրիմ բաղխեց Մագ հրամանատարին գունդերը։ Մագ թէպէտ վիրաւորուած, շարունակեց կռուելու. նոյնպէս իրեն տեղապահ Զոլաք Անտիչ հազարապետը։

Պատերազմին ամեն գործողութիւնքը կը դառնային Մորավայի ձորին մէջ, որ Բէլգրադի բանալի կրնար համարուիլ։ Զէռնայէֆ յաջողութեամբ սկսեր էր իր ընթացքը, քաջ յարձակմամբ տիրեր էր Բաբինա-Կլավայի ամուր ճամբարին. և Նիշ թողլով իր յառաջապահքը, մղեր էր Աք-Փալանքայէն դէպ ի Բիրոտ։ Հրամայեց նաեւ Սդրադիմիրովիչ հրամանատարին յարձկիլ Աք-Փալանքայի վրայ, ուր Թուրքերը ամրացած էին։ Բայց Սդրադիմիրովիչ ետ քշուեցաւ. և Զէռնայէֆ բռնադատուեցաւ դառնալու դէպ ի Ալեքսինաց և Տէլիկրատ, և ամրանալու Մորավայի ձորերուն մէջ[1]։

Աբդիւլ Քէրիմ որ սահմաներ էր չուել ի Բէլգրադ պէտք էր որ տիրեր այդ երկու բերդաքաղաքներուն. միանգամայն Լէսժանինի գունդերէն ի թիկանց չնեղուելու համար, պէտք էր որ զանիկայ բոլորովին բաժներ Զէռնայէֆի գունդերուն յարաբերութենէն, Դիմոքի ձորէն, Կնայէվացի ճամբով։ Իրեն համար ամենակարեւոր էր բռնել զԿնայէվաց։ Ամեն օր նոր օգնութիւններ կը հասնէին Թուրք բանակին, նաեւ հեռաւոր մահմէտական

---

1. Սդրադիմիրովիչ որ աւստրիացի սպայ էր և առանց հրամանի եկած էր ի Սերբիա, իր այս պարտութեանը պատճառ համարելով Միլան իշխանին վարչութիւնը, ուզեց տապալել զՄիլան և տեղն անցնել տալ զՔարաճէորճեվիչ իշխանը։ Դաւը իմացուեցաւ և աքսորուեցաւ Սերբիայէն Աւստրիա։ Աւստրիոյ վարչութիւնը զինքը պատժեց անհրաման Սերբիոյ մէջ զինուորութիւն վարած ըլլալուն։

աշխարհներէ։ Մեքքէէն Կ. Պոլիս հասեր էին 12,000 արաբ ձիաւորք. Հնդկաստանի մահմէտականք մեծամեծ գումարներ ղրկեր էին։ Գունդեր ղրկեր էր նաեւ Եգիպտոսի փոխարքայն և ասոնք ամենը ուղղուեցան ի Միթրովիցա և Նովի-Բազար. և բանակին թիւը հասաւ մօտ 200,000ի։ Յուլիս 28էն 29ին գիշերը Ահմէտ Լյուպ փաշա քալեց դէպ ի Սերբիոյ սահմանագլուխը, իրեն օգնական ունենալով զՀաֆըզ փաշա։ Սիւլէյման փաշա անցնելով սահմանագլուխը Պանտիրոլոյէն, յարձակեցաւ Հորվադովիչի վրայ որ 6000 հոգւով ամրացեր էր ի Կրամատա. և յետ եօթը ժամ դիւցազնական կռուոյ մը երկու կողմանէ ալ, տիրեց անոր և միացաւ Ահմէտ Լյուպ փաշայի։ Բանակները երկու օր հանգիստ ընելով, Օգոստոս 3ին յարձակեցան Կնայէվացի վրայ և քանի մը ժամ կռուելէ վերջը մտան Կնայէվաց։ Իսկ Աբդիւլ Քէրիմ փաշա փոխեց, Ալեքսինացի և Տէլիկրատի ճամբաներով, Բէլգրադի վրայ դիմելու ծրագիրը, և սահմանեց Մորավայի ձախ ափունքէն չուել մայրաքաղաքին վրայ. և Ալի Սայիպ փաշա բռնեց ռազմական դիրքերը։ Զէռնայէֆ ուշ գուշակեց Աբդիւլ Քէրիմի նոր ծրագիրը, և չ'իմացաւ թուրք բանակին կեդրոնանալը Մորավայի ձախ ափանց վրայ։ Հարկ էր աճապարել. արդէն Ահմէտ Լյուպ և Ալի Սայիպ փաշաները Մորավան անցեր էին Սուփովացի մօտ Օգոստոս 25էն 30։ Այս ծանր դրութեան մէջ Զէռնայէֆ իր քիչ զինուորօք դիւցազնական յանդգնութեամբ մը ինքն ալ անցաւ գետը և յարձակեցաւ թուրք գունդերուն վրայ. սակայն անոնց ահաւոր կրակը մեծ կոտորած և շփոթութիւն մը ձգեց սերբ բանակին մէջ, որոց վրայ նախկին պարտութիւնները արդէն լքումն և անվստահութիւն բերեր էին։ Ռուս կամաւոր սպաները իրենց օրինակով ջանացին խրախուսել սերբերը, արգիլել փախուստը, բայց ի զուր։ Թուրք գունդերը զօրաւոր բաղխմամբ ջնջեցին իրենց դէմ ամեն արգելք և ազատ ճամբայ բացին դէպ ի Բէլգրադ։ Աբդիւլ Քէրիմ փաշա որոշեր էր անմիջապէս դիմելու մայրաքաղաքին վրայ, երբ Կ. Պոլսէն հրաման եկաւ իրեն դադրե-

ցնելու թշնամութիւնքը. որովհետեւ Մեծ Պետութիւնք միջամտեր էին հաշտութեան մը համար։

Բանակցութիւնք. — Թուրք և մահմէտական ուղղոյն գարմանմը։

11. — Միլան իշխանը պատերազմին ձախորդ և վտանգաւոր ընթացքը տեսնելով. իր կարծածէն և յուսացածէն շատ տարբեր գտնելով թուրք բանակը, վախնալով եւս որ կորսնցնէ իր ամբողջ երկիրը և իշխանութիւնը, Օգոստոս 24ին երբ թշնամին իր հողին վրայ սկսաւ տեսնել, այն ատեն դիմեց հսկող Պետութեանց ներկայացուցիչներուն, որ միջնորդեն հաշտութեան մը, ընդ մէջ Բ. Դրան և Սերբիոյ։ Դեսպանք անմիջապէս իմացուցին Սերբիոյ փափագը առ Բ. Դուռը, բայց սա մէկէն չ՝ընդունեցաւ, սպասելով նորանոր յաղթութեանց լուրերու. և երբ Աքդիւլ Քէրիմ փաշա յաղթական, բռնած էր Բէլգրադի ճամբան, Բ. Դուռը Յուշագրով մը, Պարիսու դաշանց ստորագրող Պետութեանց իմացուց իր պահանջքը՝ — 1. Սերբիոյ իշխանը ընտրուէլէն վերջը կ. Պոլիս պիտի գայ, իր յարգանքը մատուցանելու առ Սուլթանը. 2. Այն չորս բերդերը որոնք իբրեւ ի պահպանութիւն յանձնուած էին Սերբիոյ իշխանին, և որոնց տէրը Սուլթանն էր, նորէն պէտք է անցնին կայսերական բանակին ձեռքը։ 3. Տեղացի զինակրութիւնք ջնջուած են և Սերբիա իր ներքին խաղաղութեան համար 10,000 զինուորէ և երկու լուծ հրանօթէ աւելի չէր կրնար ունենալ։

Այս պահանջները խիստ և ապօրինաւոր երեւցան Պետութեանց, մանաւանդ Ռուսիոյ, և սակայն այդ Պետութիւնք տարբեր չէին վարուած իրենց ձեռքին տակ եղած ազգերուն հետ. և ամենարնական էր որ Բ. Դուռը պահանջէր վերցնելու Սերբիոյ ձեռքէն այն բարոյական և նիւթական ոյժերը, զորս ինքը շնորհեր էր և ուլոնցմով, կը համարէր, թէ նա զեղծեր էր ընդդէմ իրեն շնորհողին։ Այս էր Թուրքաց զգացումը. և ի կ. Պոլիս հասարակաց կարծիքը չէր ըմբռներ, նա մանաւանդ զայրացած էր որ ինչու օտար Պետութիւնք կուզէին միջամտել իրենց հպատակաց հետ կռիւներուն մէջ. և չէին թողուր ընկճելու հպատակ ապստամբները, ու-

բովհետեւ անոնք քրիստոնեայ էին։ Եւ պէտք է զուրցել՝ որ Աբդիւլ Ազիզ գահընկէցութենէ վերջը և մանաւանդ Աբդիւլ-Համիդ Բի թագաւորելով, Թուրքիոյ հայրենասէր մասը, նոր ոյժ մը զգացեր էր, կ'ուզէր իր բարձրութիւնը և ոչ հաւասարութիւնը միւս հպատակ ազգաց նկատմամբ[1], և ընդհանուր համերաշխութիւն մը կամ հումիսյատուրիւն մը սկսած էր մահմէտական բոլոր իշխողներու մէջ, որոնք կ'այցելէին նաեւ Կ. Պօլսոյ. հոն ընդունելու իրենց կրօնապետին հրամանը։ Աբդիւլ Համիդ իր գահակալութեան առաջին օրէն մասնաւոր հոգ մը ունեցեր էր, բանակը բարեկազմելու և անձնական իսկ խնայողութեամբ և նուէրներով օգնել զինուորական հանդերձանքներու. Արդէն կը սկսեր արդիւնքը վայելելու։ Բ. Դրան պահանջներուն, Ռուսիա իբրեւ պատասխան մը՝ առաջարկեց Աւստրիոյ, միաբան բռնել զԲոսնիա և Հերձեգովինա։ Սակայն այս մասին համամիտ չ'եղաւ Անգղիա. որ Արեւելքի այս բոլոր յուզմանց մէջ, Ռուսիոյ գաղտ ծրագիրները կը գուշակէր և ինքն ալ չէր ուզեր անկէ խոնարհ մնալու։ Արեւելեան ամեն խնդրոց խորը թէ թափանցենք. կը գտնենք Ռուսիոյ և Անգղիոյ ազդեցութեանց մրցմունք։ Անգղիա՝ Ռուսիոյ առաջարկին տեղ ինքը Բ. Դրան չորս առաջարկներ ըրաւ. 1. Պահել Սերբիա և Մոնտէնէգրօ իրենց նախկին վիճակին մէջ. 2. Բ. Դուռը վեց մեծ Պետութեանց հետ ստորագրէ

---

1. Նոյն իսկ Վաքքը որ երիտասարդ Թուրքիոյ ձայնը կը համարուէր կը սպառնար յայտնապէս որ «ճգնաժամին մէջոց, չկարծեն մեր Քշնամիք որ իրենց դէմը միայն կայսրութեան իսլամները պիտի գտնեն։ Կովկասի, Կեդրոնական Ասիոյ, Հնդկաստանի, Աֆրիկէի, Ավկիանիոյ կղզիներու մահմէտականք, միով բանիւ բոլոր հաւատացեալք պիտի նետուին խառնուրդին մէջ ոտիներու պէս, և ամբողջ աշխարհս պատերազմի դաշտ պիտի դարձնեն։ Եթէ Բոսնիոյ և Հերձեգովինայի մահմէտականաց հրաման տրուէր կռուելու ապոստամբաց դէմ, շատոնց անոնք անհետացած էին։ Բաւական է որ խալիֆայութիւնը խօսի. պիտի սարսափին կայսրութեան Քշնամիք։ Այն ատեն Անգղիա պիտի կրնայ իր 70,000 զինուորներով սանձել 120 միլիոն Հնդկաստանի մահմէտականները։ Եթէ Եւրոպա կ'ուզէ նորէն խաչակրութիւն սկսիլ, մենք պատրաստ ենք»։

պայմանագրութիւն մը, որով Բոսնիա և Հերձէգովինա տեղական ինքնավարութիւն մը ունենան առանց անկախութեան. 3. Նոյն շնորհքները ըլլուին Բուլղարիոյ. 4. Անմիջապէս զինադադարումն ըլլուի։ Բ. Դուռը յետ ինն օրուան, պատասխան տուաւ որ մայրաքաղաքին մէջ ընտրական խորհրդարան մը պիտի հաստատէր քիչ ատենէն, որուն մէջ պիտի գտնուէին ամեն գաւառաց ներկայացուցիչք, որով աւելորդ էր ինքնավարութիւն մը։ Միւս մասերուն ալ կը պատասխանէր վերի-վերանց բացատրութիւններով։ Սեպտ. 11ի Զարին ծննդեան տարեդարձին, մեծամեծ ուրախութիւններ և հանդէսներ կատարուեցան ի Սերբիա, իբրեւ պաշտպանի Սերբիոյ, մանաւանդ որ Զարը քիչ առաջ կնքահայր եղած էր իր ներկայացուցչի ձեռքով, Միլան իշխանին Աղեքսանդր Նորածին զաւակին. և Սերբիոյ բանակին խնդութիւնը մեծ եղաւ երբ Սեպտեմբեր 16ին Զէոնայէֆ զօրավարը, 50 քահանայից ներկայութեամբ, զՄիլան իշխանը, թագաւոր հռչակեց Սերբիոյ բանակին առջեւ «Կեցցէ՛ արքայ Միլան Ա.» գոչելով։ Բայց Միլան ուրախանալով հանդերձ, հրաժարել ցրցուց այդ տիտղոսէն. մանաւանդ որ Զարը մեծապէս տժգոհացեր էր՝ այդ յանկարծական հրատարակութեան նկատմամբ։ Այս պատահարաց ժամանակ Զարը որ Լիվատիա կը գտնուէր, հեռագրեց իր դեսպաններուն, որ անտարբեր աչքով չէր կրնար տեսնել Բալկաններուն մէջի ա-րիւնհեղութիւնը և թէ կ՝առաջարկէր վեց շաբաթուան Զինադադար մը, խնդիրները վճռապէս որոշելու համար։ Բ. Դուռը պատճառ բերելով որ այդ խնդիրները հաստատուելիք խորհրդարանէն և Ներակուտէն պիտի վիճուէին, որով ժամանակի կարօտ էր, առաջարկեց վեց ամսուան Զինադադար մը։ Ռուսիոյ վարչութիւնը մերժեց այդ վեց ամիսը. բանակցութիւնք Ցացին ապարդիւն և Բ. Դուռը հրաման ղրկեց առ Աբդիւլ Քէրիմ փաշա, թշնամութիւնքը շարունակելու։

Սերբիացիք կը յաղթուին ի Ճինիս. — Ռուսիոյ վերջնական վերջը. — Զինադադարութիւն։

12. — Աբդիւլ Ֆէրիմ փաշա որոշեց վճռական հարուած մը տալ Սերբիական բանակին, որուն զօրաւոր մասին կը հրամայէր Զէռնայէֆ զօրավարը՝ Ճինիսի քով. ձախովը կոթնած Դէլիկրաւսի վրայ և աջովը, որուն կը հրամայէր Հորվաթովիչ, Կրիւյէվացի վրայ։ Հոկտեմբեր 19ին սկսաւ Թուրք բանակին մոլեգին բախումը որ երեք օր տեւեց, յորս Սերբիացիք կորսնցուցին 10,000 հոգի։ Յետոյ Նիշէն կանչելով նոր գունդեր՝ որոնց կը հրամայէր Տէրվիշ փաշա, Հոկտեմբեր 29ին յարձակեցաւ Ճինիսի վրայ. տիրեց նախ Ռումիքի յետոյ Ճիմիշտի. և ահաւոր բաղխմամբ Զէռնայէֆէն բաժնեց զՀորվաթովիչ, որուն գունդերը յաղթուելով, թողուցին զԿրիւյէվայ։ Զէռնայէֆ մնալով առանց իր Ալին, քաշուեցաւ Դէլիկրաւ. բայց վախնալով որ հոն բոլորովին պաշարուի Թուրք բանակէն, հեռացաւ նաեւ անկէ. զինուորաց մաս մը ցիրուցան եղան և Ալեքսինաց անպաշտպան մնալով, անձնատուր եղաւ ինչպէս Դէլիկրաւ բերդաքաղաքը։ Այս պատերազմին մէջ ռուս կամաւորք կուուեցան դիւցազնաբար. իսկ սերբիացի զինուորք թողուցին և փախան։ Ռուսք մինչեւ վերջին կէտը պատերազմեցան, թողլով դաշտին վրայ մեռեալ 120 սպայ և 2500 կամաւոր զինուորք։ Աբդիւլ Ֆէրիմ երբ պատրաստ էր չուելու Բելգրադի վրայ Մորավայի ձորէն, Բ. Դոնէն հրաման մը եկաւ երկու ամսուան զինադադարման մը, որ յետոյ երկարեցաւ մինչեւ Մարտ։

Հոկտեմբեր 30ի գիշերը, իշխանն Գորչաքով, դիւանապետ Ռուսիոյ կայսեր, հեռագրած էր առ զօրավարն Իգնատիէֆ դեսպան ի Կ. Պոլիս, ներկայացնելու Բ. Դրան վերջնագիր մը, որ եթէ ըստ մեծ Պետութեանց որոշողութեան, Սերբիա և Մոնտէնէգրո պիտի պահէին իրենց նախկին վիճակը, աւելորդ էին ուրեմն օսմանեան զինուորական արշաւանքները և արիւնահեղութիւնները։ Անոր համար եթէ Բարձրագոյն Դուռը յետ կրկին 24 ժամերու չուզէ գործնականապէս զինադադար ընելու, այն ատեն դեսպանը անմիջապէս պիտի թողու զԿ.

Պոլիս, բոլոր կայսերական դեսպանատան պաշտօնեաներով։

Այս սպառնալիքին վրայ Բ. Դուռը անգղիացի լորտ Լիվրդ դեսպանին յորդորանաց մտիկ ընելով, ստորագրեց զինադադարումը երկու ամսուան համար. և անմիջապէս նոյնը իմացուց Աբդիւլ Փէրիմի։ Յետոյ ղրկուեցան եւրոպացի զինուորական նուիրակք զինադադարման գծերը որոշելու։



ԳԼՈՒԽ ԺԶ.

Կ. ՊՕԼՍՈՅ ԴԵՍՊԱՆԱԺՈՂՈՎԸ. ԹՈՒՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

1. Կ. Պոլսոյ դեսպանաժողովը. — 2. Դաւ Արդիւլ Համիդի դէմ. – Միդհաթ փաշա մեծ վէզիր. — 3. Թուրք սահմանադրութիւն. — 4. Մաճառք թուր մը կը նուիրեն Արդիւլ Քէրիմի. — 5. Դեսպանաժողովոյն բուռն վիճաբանութիւնք. — 6. Օսմանեան մեծ ժողովքը. – Պետութեանց պահանջներուն մերժումը. – Դեսպանաժողովոյն ցրումը. — 7. Պալատան մէջ Միդհաթ փաշայի դէմ ամբաստանութիւնք. – Միդհաթ փաշայի պաշտօնազրկութիւնը և աքսորը. — 8. Իզէմ փաշա պաշտօնարան. — 9. Սերբիոյ հետ հաշտութեան դաշինք. – Բանակցութիւնք Մոնտէնէգրոյի հետ. — 10. Արդիւլ Համիդ թուրք խորհրդարանը հանդիսաւոր կերպով կը բանայ. — 11. Լոնդրայի Դիւանագիրը. — 12. Բ. Դուռը կը մերժէ դիւանագիրը. Ռուսիոյ և Թուրքիոյ յարաբերութեանց խզումը. — 13. Պատերազմին ձայնը օսմանեան խորհրդարանին մէջ.

Կ. Պոլսոյ Դեսպանաժողովը.

1. Անգղիա որ չէր կարող առանց կասկածանքի մնալու, Ռուսիոյ վարչութեան այսքան պաշտպանող առանձնաշնորհեալ դրութեան, առաջարկեր էր Հոկտեմբերի մէջ, որ ի Կ. Պոլիս դեսպանաժողով մը գումարուի Բալկանեան խնդրոց նկատմամբ։ Ռուսիոյ վարչութիւնը անտարբեր մնացեր էր այս առաջարկին և շարունակեր էր իր զինուորական պատրաստութիւնքը։ Ջարը, Մոսքուայի քաղաքային ժողովոյն առջեւ Նոյեմբեր 12ին, գովեր էր զՄոնտէնէգրո « որ դիւցազն գտնուեր էր ինչպէս միշտ » և եռանդուն բացատրութեամբք խօսեր էր

«կրօնքով և ցեղով եղբարց» նկատմամբ, որոց «ապահովութեան համար ձեռքէն եկած ամեն միջոց պիտի գործադրեր»։ Անգլիա չուզեց Ռուսիոյ թողուլ այս նախաձեռնութիւնը և զ. որդ Սոլզբրի նշանաւոր քաղաքագէտ և պաշտօնեայ Գաղթականութեանց, ղրկեց Գերմանիոյ, Աւստրիոյ և Իտալիոյ արքունիքները շրջելու, և զանոնք համոզելու Դեսպանաժողովի մը կարեւորութեանը նկատմամբ։ Երեք Պետութիւններն ալ յանձն առին առանց մասնաւոր եռանդի մը։ Արդէն Բիսմարք, Եւրոպիոյ քաղաքագիտութեան ղեկավարը, յայտնած էր խորհրդարանի մէջ որ Գերմանիա չէր ուզեր կաթիլ մը արիւն թափել, ուր չկար գերմանական շահ մը։ Դուլիէլմոս Ա. յայտնեց առ Լորդ Սոլզբրի որ իրեն ազգականութեան կապը Զարին հետ, չէր ներեր որ և է տհաճեցուցիչ քայլ մը առնլու Ռուսիոյ նկատմամբ։

Աւստրիա այնքան ազգութիւններէ բաղկացեալ, բրոնաղատուած էր չէզոք դիրք մը ունենալ. նոյնպէս Իտալիա որ բնաւ շահ մը չէր տեսներ միջամտելու Թուրքիոյ և Պալկանեան ազգաց մէջ։ Այսու հանդերձ ամեն Պետութիւնք ալ չ՝ընդդիմացան Դեսպանաժողովի մը, եթէ յանձն առնուին Ռուսիա և Թուրքիա։ Պետրբուրկի վարչութիւնը այն յուսով որ իր պահանջները ընդունելի ընել տայ, ընդունեցաւ դեսպանաժողովի մը գումարումը։ Արդէն Գորչաքոֆ իշխանը Յայտագրով մը կ՝իմացնէր Նոյեմբեր 13ի, որ ռուս բանակը պիտի չուէր դէպ ի Թուրք սահմանագլուխը։ Իսկ Բ. Դուրը կանխաւ խորհած ըլլալով իր ըսելիքը և ընելիքը, չուզեց բոլոր Եւրոպիոյ Պետութեանց կարծիքին դէմ դնելու. և Սավֆէթ փաշա խոհական ծանուցագրով մը ընդունեցաւ դեսպանաժողովը «խաղաղութեամբ կնճիռները լուծելու համար»։ Բարիզու Դաշնաժողովոյն Պետութիւնք անմիջապէս անուանեցին իրենց ներկայացուցիչները, որոցմէ ոմանք արդէն դեսպան էին ի Կ. Պոլիս. միւսներն ալ փութով հասան Թուրքիոյ մայրաքաղաքը։ Գերմանիոյ կողմանէ Պարոն Վէրթէր արդէն դեսպան ի Թուրքիա, Աւստրիա–Հունգարիոյ կողմանէ՝ կոմսն Զիչի և պարոն Գալիչէ, Գաղ-

ղիոյ կողմանէ կոմսն Բուրկուայն՝ դեսպան, և կոմսն դը Շոտորտի. Մեծին Բրիտանիոյ կողմանէ՝ մարգիզն Սոլզբրի և սրը Հէնրի Էլիրդ դեսպանը. Իտալիոյ կողմանէ կոմսն կորտի դեսպանը. Ռուսիոյ կողմանէ զօրավարն Իգնատիէֆ։ Իսկ Թուրքիոյ կողմանէ Արտաքին Գործոց պաշտօնեայն՝ Սավֆէթ փաշա, Բէոլինու օսմանեան դեսպան Իզզէտ փաշա, Փարաթէոտորի փաշա և Համամճեան Սարգիս էֆէնտի՝ ընդհանուր քարտուղար Արտաքին Գործոց Պաշտօնարանին։ Որոշուեցաւ որ նախ մասնական գումարումներ ըլլան, որոց մէջ պատրաստուին ընդհանուր գումարմանց առաջարկուելիք նիւթերը. և այս մասնական ժողովքներու նախագահ ընտրուեցաւ նոյն իսկ Իգնատիէֆի առաջարկելովը, Լորդ Սոլզբրի։ Իսկ ընդհանուր գումարմանց նախագահ ընտրուեցաւ Սավֆէթ փաշա։

Փութով սկսան առանձնական գումարումնք, որոց մէջ Ռուսասսան յայտնեց իր բազմաթիւ պահանջները. բայց Իգնատիէֆ տեսնելով որ նոյն իսկ Եւրոպիոյ Պետութիւնք հակառակ պիտի ըլլային, այն ատեն իր պահանջները նուազեցուց, և առաջարկեց որ Ռուսաստան բանակով մը բռնէ զԲուլղարիա. եւրոպական Յանձնաժողով մը հաստատուի հսկելու բարեկարգութեանց գործադրութեան վրայ. Թուրքերը թողուն Սերբիոյ մէջ բռնած տեղերը և բնաւ չստանան դրամական տուգանք. Մոնտէնէգրոյի քաջութեանց փոխարէն, իրեն երկիրը, ընդարձակուի։ Ժողովքը յետին երկու յօդուածներն և ոչ իսկ ուզեց վիճաբանել, որով մնացին միայն առջի երկու յօդուածները։

2. — Կ. Պոլսոյ մէջ յուզուեցաւ Թուրք ժողովրդեան և նոյն իսկ շատ մը քրիստոնեայ հպատակաց ոգին Ռուսիոյ պահանջին և արհամարհոտ եղանակին դէմ։ Կային հպատակ ազգեր որոնք այո՛ չէին ծածկեր Թուրք վարչութենէն կրածնին, բայց բնաւ համակրութիւն մը չունէին ընկղմելու սլաւական համայնատարողկիանոսին մէջ։ Թուրք ժողովուրդը յետ իր բանակին յաղթութեանց, չէր կրնար տեղիք տալ Ռուսիոյ. գոհա-

Դա՛ Արդիոյ Համիդի դէմ. — Միդհաթ փաշա մեծ վէզիր։

ցնել զՍերբերը, որովհետեւ ապստամբեր էին. և զԲուլ-գարիա, Կ. Պոլսոյ ճամբան, յանձնել ռուս բանակին։ Ինքան զայրացան ոգիները մինչեւ աւազանուոյն մաս մը զվարչութիւն տկար ամբաստանելով, ծածուկ դա-ւով մը յեղափոխութեան կ'ուզէր դիմել։ Իմացուե-ցաւ և դաւաճանք բռնուեցան որոց մէջ կային նաեւ երկու փաշայք։ Դաւաճանութիւն մ'ալ պատրաստուած էր Միդհատ փաշայի դէմ սլաւական ընկերութեան երկու նուիրակներէ։ Սակայն բռնուեցան դաւաճանք. և թէպէտ Ռուսիա պահանջեց որ իրեն հպատակը ի-րեն յանձնուին, այսուհանդերձ թուրք կառավարու-թիւնը ժխտեց։ Ռուսիոյ պահանջներուն և ներքին յուզ-մանց առջեւ, մեծ վէզիրը Մէհմէդ Ռիւշտի փաշա, իր ծերութիւնը պատճառ բերելով, խնդրեց Սուլթանէն ա-զատ ընելու զինքը իր պաշտօնէն։ Դեկտեմբեր 19ին կայսերական հրովարտակ մը մեծ վէզիր կ'անուանէր զՄիդհատ փաշա[1], որուն արդէն Աբդիւլ Համիդ յանձնած էր ի սկզբանէ, Սահմանադրութիւն մը պատրաստելու խնամքը և արդէն պատրաստ էր և կը մնար միայն հրա-տարակելը[2]։

---

1. Միդհատ փաշա ծնած էր 1825ի. և ուսումները կատարած էր ի Կ. Պոլիս. բայց դեռ երիտասարդ ուղեւորելով յԵւրոպա, շատ յարաբերու-թիւնք ունեցած էր քաղաքական անձանց հետ, և ի Կ. Պոլիս մեծ սիրով կը իսուէր, կը վիճէր և կենակցութիւն կ'ունէր քրիստոնեայ յառաջադէմ տարրին հետ, յորս առաջին տեղին բռնած էին Աղաթոն էֆէնտի և Գ. Սեւան։ 1860ին փաշայի ատիճանով կուսակալ դրկուեցաւ Յիւսքիւպ և Պրիզէր։ Հոն մատուցած բարեկարգութիւնքը՝ Ֆուատ փաշայի ուշադրութիւնը և հա-մարմանը նիւթ եղան. որ զինքը Կ. Պոլիս կանչեց և յանձնեց գաւառնե-րուն նկատմամբ արչնադրութիւն մը կազմելու։ Յետոյ հինգ տարի Բուլգա-րիոյ կուսակալ եղաւ, ուր շինեց դպրոցներ, կամուրջներ և ճամբաներ. 1867ի Սուլթանը զինքը Կ. Պոլիս կանչեց և ըրաւ Պաշտօնեայ Հասարակաց շի-նութեանց։ Բայց հին–Թուրք խստերին սիրելի չ'ըլլալով, դրկուեցաւ Իրաք–Արապի. 1871ի կանչուեցաւ ի Կ. Պոլիս և 1872ի Յուլիսի մեծ վէզիր ա-նուանուեցաւ։ Բայց հազիւ 2 ամիս մնաց պաշտաման մէջ։ Իր Բալկանի իշխանութիւնը ապստամբեցան և ժողովուրդը յուզեցաւ Մահմուտ Նէդիմ փաշայի դէմ, Աբդիւլ Ազիզ զՄիտհատ, ժողովրդեան սիրելի, պաշտօնեայ անուանեց առանց տիտղոսի։

2. «Ընթերցողների համար գուցէ հերաքրքրաշարժ լինի լսել թէ միայն հայազգի բարձր պաշտօնատար, Գրիգոր Սիսակ Սեւան էֆէնտի, իմաստուած է գլխաւորապէս այդ սահմանադրութիւնը»։ Մշակ 1877 թիւ. Դ. տարեկ թիւր

3. — Դեսպանաժողովը իր առաջին ընդհանուր գումարումը պիտի ընէր Դեկտեմբեր 23ին։ Բոլոր նուիրակք դիմեր էին մասնաւոր եռանդով մը լսելու Թուրք Պետութեան տրամադրութիւնքը, որ անիսով թողուցեր էր եւրոպական նուիրակաց վիճաբանել, ո՛րչափ կ'ուզեն։ Երբ դեսպանաժողովոյն նախագահը Սավֆէթ փաշա պիտի բանար նիստը, յանկարծ որոտացին թնդանօթներու ձայներ և բոլոր սրահը թնդաց։ Անմիջապէս վեր կանգնեցաւ Սավֆէթ փաշա և ըսաւ մասնաւոր ուրախութեամբ մը « Տեսարք, այս թնդանօթներու ձայնը որ կը լսէք, կ'աւետեն Սահմանադրութեան մը հրատարակումը, որ պիտի փոխէ բոլոր Թուրքիոյ վիճակը »։ Կերպով մը հասկցնել էր որ յայտմհետէ ըստ Սահմանադրութեան ամենայն հաւասարութիւն ըլլալով, Թուրք և քրիստոնեայ հպատակաց մէջ, աւելորդ էր գալ վիճելը ի նպաստ քրիստոնէից։ Այսուհանդերձ դեսպանք Թուրք նուիրակներուն ներկայացուցին այն ամեն կէտերը, յորս համաձայն գտնուեր էին. մանաւանդ Պետութեանց տրուելիք ապահովութեան նկատմամբ։ Թուրք նուիրակները շատ սիրով առին գրութիւնը, յայտնեցին որ պատասխանելու համար ժամանակ պէտք էր, մանաւանդ որ ըստ հրատարակուած Սահմանադրութեան, այդ իրաւունքները պէտք էին վիճուիլ նաեւ Խորհրդարանէն։ Այսպէս լմնցաւ Դեսպանաժողովին առաջին հանդիսական նիստը. և այն օրուընէ դեսպանք կրնային ըմբռնել, գործոյն ընթանալիք ճամբան։ Երբ գումարմանց պալատէն դուրս ելան դեսպանք, բովանդակ Կ. Պոլիս զարդարուած և տօնախմբութեան մէջ գտան։ Քիչ ժամ առաջ Բ. Դրան ծովահայեաց հրապարակին մէջ 101 թնդանօթի որոտումով, հրատարակուեր էր Սահմանադրութիւնը և ամեն կողմ « Կեցցէ՛ Սուլթան » կը լսուէին։

Թուրք Սահմանադրութիւն։

դէպքից։ Զայս ինձ հաստատած է հայազգի մնծանուն քաղաքագէտ մը, տակաւին կենդանի, այն ժամանակին ի Կ. Պոլիս. ուսուցնելով միայն՝ որ կանխապէս գաղափարին յղացման մէջ, կար նաեւ Աղաթոն էֆէնտի։

Երեկոյեան բոլոր քաղաքը լուսաւորուեցաւ։ Սուլթանը ներկայացաւ Ճամրը Քեօշկին վրայ և կեցցէներ թնդացուցին բոլոր արուարձանը։ Ամբոխը, որուն մեծամասնութիւնը երիտասարդութիւն էր և մանաւանդ քրիստոնեայ երիտասարդութիւն, իսառն երիտասարդ թուրքերով, դիմեց նաեւ Միդհատ փաշայի ապարանքը ուր եռանդնալից կեցցէներ գոչեց, որոնք շատ մը նախանձներ ծնան բարձրագոյն շրջանակաց մէջ։

Թուրք սահմանադրութիւնը, նմանութիւն մ'էր եւրոպական այլեւայլ ազգաց սահմանադրութեանց. կը հոչակէր կայսրութիւնը անքաժանելի. Սուլթանն էր խալիֆա մահմէտականաց և իշխող բովանդակ Օսմանցւոց. ունենալով արեւմտեան սահմանադրական Պետութեանց առանձնաշնորհութիւնը. կայսրութեան հպատակք օսմանցիք կը կոչուէին և անրոնաբարելի իրենց ազատութիւնը – Խրամտրիւնն է Պետութեան կրօնքը – հասարակութեանց կրօնական առանձնաշնորհութիւնք ապահովուած էին և ազատութիւն ամեն կրօնքի պաշտամունքներու — ազատութիւն տպագրութեան, ազատութիւն ուսման – նախնական կրթութիւնը ստիպողական, իրաւունք ընկերութեանց, իրաւունքը աղերսի առ Խորհրդարան, օրինաց առջեւ ամենուն հաւասարութիւն, առանց կրօնքի խտրութեան պաշտամանց մէջ ընդունելութիւն, հաւասար բաժանմունք հարկաց և անոնց հաւաքումը մասնաւոր օրէնքով, ապահովութիւն սեպհական ստացուածոց և բնակութեան անրոնաբարելիութիւն։

Ոչ ոք կրնար ազատ բլլալ իր բնական դատաւորներէն։ Ունկնդրութիւնք հասարակաց առջեւ պիտի բլլային. ամենայն ոք իրաւունք ունէր պաշտպանութեան, վճիռները պիտի հրատարակուէին – Պաշտօնարանը բնաւ չէր կրնար միջամտել դատաստանական գործոց մէջ — արգիլուած էր անձնական բռնի աշխատութիւնք և տանջանքներ. — Պաշտօնեաները պատասխանատու կ'ընէր, ամբաստանուած պաշտօնեաները պիտի դատուին բարձր Ատենէն – հասարակաց պաշտօնեայք չեն կրնար պաշտօնանկ բլլալ առանց օրինաւոր պատճառի – պատասխանատու էին և

չէին արդարանար թէ որ իրենցմէ բարձրագոյն պաշտօնեայ մը օրինաց դէմ բան մը պատուիրած ըլլար։

Երկու էին խորհրդարանք, Երեսփոխանաց և Ներքնաւորին. – Սուլթանը խորհրդարաններուն հետ պիտի հաղորդակցէր պատգամագրով – խորհրդարանք ազատ էին քուէի և կարծեաց մէջ – արգիլուած էր հրամայական կամք – օրինաց նախաձեռնութիւնը պաշտօնէից և երեսփոխանաց խորհրդարանին կ'իյնար – խորհրդարանէն վճռած և ծերակուտէն հաստատուած օրէնքները պիտի ստորագրէր Սուլթանը – ծերակոյտը իրաւունք ունէր սահմանադրութեան դէմ օրէնքները մերժելու և ետ դրկելու խորհրդարանին – երեսփոխանք անբռնաբարելի էին – Դատաւորք չէին ըլլար պաշտօնընկէց առանց յանցանաց. կը հաստատուէր Հաշուէտուն մը, որուն անդամք առանց խորհրդարանի գիտութեան չէին փոխուիր – Հաշուէտունը ամեն տարուոյ վերջը պիտի ներկայացնէր խորհրդարանին՝ ամբողջական հշեւմուտքը. Դաւառաց մատակարարութիւնք կուսենային կեդրոնէն բաժնուած դրութիւն մը – գաւառական և քաղաքական ժողովները ընտրութեամբ պիտի ըլլային[1]։ Սահմանադրութիւնը բնաւ փոփոխութիւն մը չէր կրնար կրել, առանց երկու խորհրդարաններուն հաւանութեան և Սուլթանին հաստատութեան։

Այս էր ահա Օսմանեան Սահմանադրութիւնը, զրեթէ ամբողջովին նոյն արեւմտեան ազգաց Սահմանադրութիւններու հետ. այս հիմնական տարբերութեամբ որ 1876ի Թուրքիոյ ժողովրդեան տասանին վեցերորդ մասը ոչ ըմբռնած և ոչ պէտք զգալու կարող էր, սահմանադրութեան մը. փափագողներէն շատերն ալ յորս

---

1. Սահմանադրութիւն մը հաստատուելով և ամեն գաւառ իր ներկայացուցիչն ունենալով ի Կ. Պոլիս, պիտի գրէին Պատրիարգաց իրաւունքները գաւառաց վրայ. և անկէ վերջը որ և է տրուունջ երեսփոխանաց միջոցաւ պիտի հաղորդուէր Բ. Դրան։ Հայ ազգը մեծապէս յուզուեցաւ և գայրացաւ Մխիթար փաշայի դէմ։ Բայց այս բնական հետեւանք մ'էր Սահմանադրութեան. միայն թէ այն գործադրուէր ուղղակի։

նաեւ լուրջ անձինք, թէ Թուրք և թէ քրիստոնեայ, պի-տի տեսնէին փուքով որ գաւառաց մէջ վարչական և մա-տակարարական դրութիւնը, սահմանադրութիւն մը հրա-տարակելով չէր բժշկուէր։ Բոլոր ժողովուրդք պի-տի կեդրոնական գաւառներուն անտանելի կեանքին վրայ։ Եւ այդ կեանքը օրինաւոր դիրքի մէջ դնելը շատ դժուար պիտի ըլլար Թուրքիոյ մէջ, նախ պաշտօնա-տարաց և ապա շատ մը Թափառական, աւարառու բնա-կող ցեղերու պատճառաւ. զորս Բ. Դուռն իսկ ստի-պուած էր շոյել և շահիլ, ուրիշ կերպ կարողութիւն չ'ունենալով խստանալու։ Այս ժամս Սահմանադրութեան Դեկտեմբեր 23ին հրատարակութիւնը, բարձր շրջանա-կաց ձեռքը միջոց մը համարուեցաւ եւրոպական Պետու-թեանց պահանջներուն պատասխան մը տալու. և դեսպանաժողովը անկարող ընելու համար, ցուցընելով որ իրենց պահանջները մաս առ մաս հակառակ էին կայս-րութեան անբաժանելիութեան և ինքնիշխանութեան։

Մանաց թուր մը կը նուիրեն Աբդիւլ Համիտ փաշայի։

4. — Դարձեալ օսմանեան Պետութիւնը յետ իր բանակին տարած յաղթութեանց, բնական էր, բնաւ մի-տումն չունէր խոնարհելու Դեսպանաժողովոյն կամաց. մանաւանդ որ զինադադարումը ցրտութիւն մը բերեր էր օտարազգի սլաւատէրներու սրտին մէջ և դադրեր էին Ռուսատանէ և ուրիշ կողմի սլաւներէ նուիրա-տուութիւնք պատերազմող ազգաց։ Թուրքիա ապստամ-բութիւնը լմնցած կը տեսնէր և չէր վախցած զԱբդիւլ Համիտ փաշա, ընդհանուր հրամանատարը, քիչ ժամա-նակուան համար կ. Պոլիս կանչելու։ Աբդէն Զէքոնայէֆ ալ թոզուցեր էր հրամանատարութիւնը[1]։

Թուրքիոյ զինուց յաջողութեանը վրայ մեծ ուրախու-

---

1. Զէքոնայէֆ ինքզինքը արհամարհուած տեսնելով, թոզուց զՍերբիա իր հայրենիքը դառնալու։ Բայց հոգիս հասեր էր Գիշնէվ, Մեծ դուքնախկալայի բանակը, հրաման հասաւ Պեսարաբիէն թոզուլ Ռուսիայի հողանցաւ ի Բրակա, ուսկից Ռուսիկանութիւնը զինքը անմիջապէս հանեց և հա-զիւ կրցաւ ապաստանիլ յԱնգլիա։ Ի Սերբիա մնացած ուրիշ կամաւորք ալ թոզին զՍերբիա։

թիւն յայտներ էր մահաւոր ժողովուրդը, որուն բարեկամութիւնը իր ցեղակցին հետ, ժամանակակից Պատմութեան մէջ միշտ նկատուած է։ Թէշտի և ուրիշ բազաքաց ուսանողք եռանդնալից ցոյցերով ողջուներ էին թուրքաց ամեն մէկ յաղթութիւնը։ Լսով գոհ չ'եղան. այլ միասին վճռեցին Սերտար Էքրեմ՝ Լրդիւլ Թէրիմ փաշայի շրջեղ թուր մը ընծայելու ակնոնակուն հրատարակով՝։ Ուսանողաց նուիրակութիւն մը մեկնեցաւ Թէշտէն դէպի Կ. Պոլիս բերելու։ Ցրէստ աւտորիական հողին վրայ շատ նեղութիւններ կրեց և Յունուար Չին հասաւ ի Կ. Պոլիս, ուր շքեղ ընդունելութիւն մը իրենց պատրաստուեր էր։ Երբ թուրը կը տանէին առ Լրդիւլ Թէրիմ փաշա, Ուրբաթը ներկայացաւ իր պատուհանը և ողջունեց մահաւոր նուիրակութիւնը, որ փոխադարձ կեցցէներով ողջունեց զինքը, յետոյ թուրը յարգանաց մաղթանքներով նուիրուեցաւ առ Լրդիւլ Թէրիմ փաշա, որ ոչն որը իր փառացը զգաթնակէտը հասած էր։ Մահաւոր նուիրակութեան թէշտ դառնալուն, հոն ալ մեծ հանդէսներ եղան[1]։

Դեսպանատան դիմաց մէջ բուն վիճաբանութիւնք։

5. — Բնական է այս նուիրակութիւնը ունեցաւ իր սխրալի ազդեցութիւնը դեսպանաժողովոյն նուիրակաց վրայ, որոնց նպատակն էր մասնաւորապէս ամրապնդել զԹուրքիա և պահանջածներն ստանալ։ Արդէն որչ որ կը լսուէին Ռուսիոյ զինուորական պատրաստութիւնք, ի Բեսարաբիա թնդանոթներու հանելը, և ասա բանակաց դէպ ի փրութ յառաջելը։ Դեսպանաժողովոյն ստասաս, երեկոյ խաղաղութիւն քարոզելը. ելիչ ելիչ թանգրական խաղ մը սկսաւ երեւնալ թուրք վարչութեան, Ռուսիոյ պետութեան ժամանակ շահեցնելու համար։ Իր նուիրակները որ ի սկզբան ուելի հանդարտ կ'ինքն-

---

1 Պատուական թուրը կ'բաղի որ ստանուց կը պատկանէր Լրդիւլ Համիտ Սուլթանի մը և Մահմատ մեռց բերեր էին պատրաստուելի ժամանակ։

2 Դարի մը վերջը ի փոխարէն այս հանդիսաւորեալ նուիրակութեան և ուրախութեան. Ալդիւլ Համիդ փոխադարձ նուիրակութիւնն մը դրկեց ի Թէշտ, ժամանակաւորապէս Մաքիսա Եղրվիզ, ժամանակ քաջ թարգմանչին, մեկ մեռաղիան։

ւային, այն սրը որ զգացին թէ անհրաժեշտ պիտի ըլ-
լար զէնքի դիմելու, աւելի անլսող եղան եւրոպական
դեսպանաց պահանջած 33 յօդուածներուն, որոց ամե-
նէն մի առ մի հրաժարեցան, պատճառելով կայսրու-
թեան անկախութիւնը և խօսարանին կամքը գիտնալու
պէտքը։

Դեսպանք բռնադատուեցան տեղիք տալու շատ կէ-
տերու վրայ. բուռն խօսակցութիւնք եղան երկու կող-
մանէ։ Երբ խնդիրը եկաւ Բուլղարիոյ յարդերուն վրայ,
և պետութեանց նուիրակք կը յանդիմանէին զԹուրքիա,
Իդհէմ փաշա յիշեցուց ուրիշ ազգաց մէջ եղածները, ի
Հնդկաստան, ի Պարիս։ Դեսպանաժողովը այլ եւս աննպա-
տակ չ՝երկարելու համար, դեսպանք առաջարկեցին որ
Թուրքիա ընդունի գոնեայ հետեւեալ երկու պայմանքը.

1. Որ գաւառներէն ոմանց ընդհանուր կուսակալը
Բ. Դուռը անուանէ հինգ տարուան համար, կանխաւ
ստանալով մեծ Պետութեանց հաւանութիւնը։

2. Որ հաստատուի Հսկողութեան Յանձնաժողով մը.
որուն անդամքն անուանուին Պետութիւններէն. որոնք
պիտի հսկէին Բ. Դրանէն խոստացուած բարեկարգու-
թեանց գործադրութեան վրայ։ Լորդ Սոլզբրի իմացուց
որ եթէ այս երկու յօդուածները չ՝ընդունուէին, ինքը
կը մեկնէր Կ. Պոլսէն, և հետեւանքին ամեն պատաս-
խանատուութիւն կը թողուր Բ. Դրան վրայ։

Ոմանեան ընդհանուր ժողով. Պետութեանց պահանջին մերժումը. — Դեսպանաժողովին ցրումը։ Յունուար 18։

6. — Թուրք նուիրակները չմերժեցին Լորդ Սոլզ-
բրրիի և միւս դեսպանաց այս վերջնագիրը. պատաս-
խանեցին օրինական ձեւով որ այդ երկու յօդուածները
կայսրութեան անկախութեան կը դպչէին և մտածելու
ժամանակ խնդրեցին։ Բ. Դուռը անմիջապէս Պետու-
թեան մեծ ժողովք մը գումարեց, որուն մէջ մտան քա-
ղաքական, զինուորական և կրօնական ամեն գլխաւորք։
Յունաց պատրիարգը, բուլղարաց էկզարքը, բացակայ
գտնուեցան հիւանդութիւն պատճառելով։ Հոն էին Հա-
յոց պատրիարգական փոխանորդ՝ Յովհաննէս քահանայ
Մկրեան, Հրէից Ռաբունապետը և նորաղանդ հասա-
րակութեան գլուխը, ընդ ամենը 240 անձինք յո-

բոց 50ը քրիստոնեայք։ Նախագահ բազմեցաւ մեծ վէզիրը Միդհատ փաշա, որ բացաւ Նիստը նախ պատմելով Բուլղարիոյ ապստամբութիւնը, Սերբիոյ և Մոնտէնէգրոյի հետ պատերազմները և Պետութեանց հետ բանակցութիւնը։ Նկարագրեց Թուրքիոյ ներքին դրամական և զինուորական վիճակը, աւելցնելով որ թէ մերժուէին այն երկու առաջարկները, միայնակ պիտի տանէին ահաւոր պատերազմի մը ծանրութեանը. և ինքը անկեղծօրէն ժողովքին բացատրելով ներկայ դրութիւնը, անոր որոշողութեանը կը սպասէր։

Ժողովքը գրեթէ միաձայն գոչեց որ աւելի յանձն կ'առնուր մահ, քան այդօրինակ անպատուութիւն մը։ Մէկ հայ մը և մէկ Թուրք միայն համարձակեցան ընդդիմանալ. պատերազմը աղետաբեր համարելով Թուրքիոյ համար։ Հայն էր Պ. Յակովբ Մատթէոսեան, բողոքական Հայոց պետը, և Թուրքն էր Վաճառականութեան պաշտօնեայ՝ Հալէթ փաշա։ Իսկ Դեսպանաժողովոյն առաջարկներու անընդունելի լինելու մասին խօսողներուն մէջ նշանաւոր հանդիսացան Յովհաննէս քահանայ Մկրեան և Էնֆիէճեան Գրիգոր վարդապետ։ Յետինս ընտիր թրքախօս և ճարտասան, ոգեւորեց Թուրքերուն եռանդը[1] տեղիք չտալու դեսպանաց։ Բաց ի նախասացեալ երկու անդամներէ չստորագրեց նաեւ Հալիմ փաշա, Եգիպտոսի խտիվին եղբայրը։

Արդարեւ ժողովքին մէջ ամենէն աւելի բարձր լսուեցան, ըստ վկայութեան ականատեսներու, քրիստոնեայ կրօնապետներուն և ռաբունապետին ձայները։ Բայց չկարծուի որ միայն շողոքորթութեան զգացումն էր, որ այսպէս կը թելադրէր իրենց. այլ ռուս սրինաց իր կրսնէն դուրս յայլոց հալածանքը։ Իսկ Հրէից կացութիւնը՝ ի Ռուսիա այտնի էր։ Եւ Թուրքիոյ հպատակ ազգերը, որոնք սրտերնուն մէջ ունին միշտ Թուրքիոյ բարձր հովանաւորութեան հետ կամ զատ թէ ոչ ինքնիշխանութիւն,

---

1. Մշակ 1877 Յիւ 6. Նամակ Թիւրքիայէն։

բայց ազգային կեանք մը, իրենց հայրենի կրօնքով, բնականապէս խորշում մը կը զգային ռուս ճնշող աշխարհակալութենէն. և այս զգացումն էր որ կը մղէր ոչ-քրիստոնեայ ազգերը, բողոքել երկու յոգուածներուն դէմ։ Այս պատճառաբանութիւնը քիչ ամիս վերջը կը կրկնէր Ներսէս վարժապետեան պատրիարգը առ դեսպան Անգղիոյ Սըր Լայարդ[1]։ Խորհուրդի կանչուողք լաւ ըմբռնեցին որ Պետութիւնք քրիստոնեայ ազգաց վիճակը բարւոքելու համար չեն ժողուած ի Կ. Պոլիս, այլ եւրոպական պատերազմի մը առջեւը առնելու համար՝ ընդ մէջ Ռուսիոյ և Անգղիոյ, որ կրնար ամենուն համար ալ ծանր հետեւանքներ ունենալ։

Դեսպանաժողովոյն ցրուումը։

Դեսպանք Յունուար 29ին ժողովուեցան լսելու Բ. Դրան պատասխանը։ Սավֆէթ և Լուֆէմ փաշայք ծանուցին մեծ ժողովքին որոշողութիւնը, հրաւիրելով զԴեսպանաժողովը վիճելու ուրիշ յոդուածոց վրայ, թէ կը հաճի։ Լորդ Սոլզբրի և միւս դեսպանք ըմբռնեցին որ Թուրքիոյ վարչութիւնը տեղիք պիտի չտար. ծանուցին որ իրենք անմիջապէս կը մեկնէին մայրաքաղաքէն, բայց ընթացիկ գործոց համար կը թողուին գործակատարներ. և քիչ օրուան մէջ ալ մեկնեցան։ Թուրք վարչութիւնը անտարբեր ցրցուց ինքզինքը. նա մանաւանդ Միդհատ փաշա յետ ընդունելու Յունուար 24ի մի առ մի դեսպանները, որոնք եկեր էին հրաժեշտի ողջոյնը տալու, անմիջապէս իմացուց գաւառաց կուսակալներուն, որ դեսպանաց մեկնելը բնաւ չէր նշանակեր խզումն յարաբերութեանց, որոնք պիտի շարունակուին գործակատարաց միջոցով, այսպէս իրենք ալ շարունակեն առաջուան պէս հիւպատոսաց հետ յարաբերութիւնք։ Իսկ Արտաքին Գործոց պաշտօնեայն Սավֆէթ փաշա, թղթով մը առ Թուրք դեսպանս այն Պետու-

---

1. Մասիս 1877 Սեպտ. 4. 18. Հոկտեմբեր 13։ Սատրազամ Միդհաղ փաշա, անձամբ գնաց Հայոց պատրիարգարանը, շնորհակալ ըլլալու Հայոց հաւատարիմ զգացմանց։ Երբէք սատրազամ մը գացած չէր պատրիարգարան։

թեանց քով, որոնք Դեսպանաժողովը կազմեր էին, բացատրեց որ անկարելի էր ընդունիլ այն երկու յօդուածները, որոնք կը վիրաւորէին Սուլթանին վեհափառութիւնը և կայսրութեան անկախութիւնը։ Եւ որովհետեւ մօտ էր Զինադադարման վերջը, Միդհատ փաշա գրեց առ իշխանն Սերբիոյ Միլան՝ և առ իշխանն Նիկոլա Մոնտէնէգրոյի, որ ուղղակի բանակցին իրեն հետ հաշտութեան մը համար։ Երկու իշխանք ալ ընդունեցան առաջարկը։

Պալատան մէջ հակառակութիւն Միդհատ փաշայի դէմ. — Պաշտօնդիմէ-ցութիւնը և աքսորը։

7. — Եւ որպէս զի չկարծուի թէ Դեսպանաժողովոյն ցրուելով մոռցուեցան խոստացուած բարեկարգութիւնք, կայսրութեան պաշտօնական լրագիրը, Յունուար 28ին իրատէ մը հրատարակեց որով իրաւունք կը տրուէր քրիստոնեայ զաւակաց, ընդունելի ըլլալ զինուորական դպրոցներու մէջ, մինչ առաջ միայն մահմէտականք կ'ընդունուէին։ Կը ծանուցանէր որ առաջիկայ Մարտին բացումն պիտի ըլլար խորհրդարանաց. և ընտրութեանց համար կը խոստանար ազատութիւն և պաշտպանութիւն։ Միդհատ փաշա խնդրեց Անգղիայէն զՍտիֆրն Փաշ՝ Ելեւմտից կարգաւորութեան համար։ Դարձեալ գոհացնելու համար դեսպանները որոնք պահանջեր էին քրիստոնէից համար ալ բարձր պաշտօններ, զՍաւվա փաշա յոյն՝ Արշիպեղագոսի կուսակալ կ'անուանուէր, հայազգին Կոստան փաշա, վիւսթէր՝ Բոսնիա և Հերծէգ Վիլայէթին. և Վասսա էֆէնտի յոյն՝ վիւսթէշար նոր կազմուած Քոսսովօ կուսակալութեան։ Նոյնպէս Աղաբէկեան Մարկոս էֆէնտի Միւսթէշար անուանուեցաւ Վանայ[2]։ Ահմէտ Վէֆիք փաշա՝ Նախագահ խորհրդարանին։

---

1. Օգնական կուսակալի։

2. Պաշտօնարանին բարի դիտաւորութեանը յայտարար, գնենք հետեւեալը Մասիսի 27 Մարտի թուականէն 1877։ «Ագաբէկեան Մարկոս էֆէնտին, իր պաշտօնատեղին հասնելուն պէս, իսկոյն փութացեր է հարկ եղած անմիջական բարւոքմանց ձեռնարկելու։ Քաղաքին բոլոր տաճիկ ոստիկանաց վրայէն զէնքերն առնուելով, իրենց տեղը ճամբուեր են իրր պարզ քաղաքացի. և ոստիկանութեան՝ ինչպէս նաեւ հասարակաց ապահո-

Միդհատ փաշա արտաքին Պետութիւններու հետ վիճելու ժամանակ, ներքին մեծ հակառակորդներ ունեցեր էր, որոց գլուխ էր Մահմուտ Ցամատ փաշա, Սուլթանին քեռայրը, բարեկամ Իգնատիէֆի, որ ամբաստանեց զՄիդհատ փաշա իբրեւ Անգղիոյ կողմը հակելով, վնասող Պետութեան շահերուն։ Դարձեալ ուրովհետեւ, ըստ նոր Սահմանադրութեան Պաշտօնարանին գլուխն էր պատասխանատու, և Միդհատ փաշա շատ մը ստորին պաշտօնէից փոփոխութիւններ բրեր էր. ամբաստանուեցաւ որ դիկտատորութիւն կը վարէ զեղծանելով իր դիրքէն։

Եւ Միդհատ քիչ օր առաջ նամակաւ մը առ Սուլթանն յայտնած էր որ անցաւ այն ժամանակը, յորում Սուլթանք միապետ կարող էին կառավարել։ Հիմակուան սատրազամը պատասխանատու էր իր խղճին և Ազգին առջեւ. և ինքը ուրիշ կերպով չէր կրնար կառավարել[1]։

Միդհատի գործելու եղանակը ոչ-սահմանադրականք դատուեցան. Փետրուար 5ին Միդհատ փաշա Պալատը կանչուեցաւ. և հոն Սուլթանին քարտուղարը իրեն իմացուց որ պաշտօնանկ եղեր էր և Իզէդդին մարտանաւը արդէն պատրաստ էր զինքը Թուրքիայէն դուրս հանելու, ո՛ւր որ ինքն ուզէ։ Միդհատ փաշա ճակատագրական համոզմամբ գլուխը խոնարհեց. ուզեց ընտանիքը տեսնել, բայց հրաման չտրուեցաւ և բարձրաստիճան զինուորականէ մը տարուեցաւ Իզէդդին մարտա-

---

վութեան պահպանութիւնը և հսկողութիւնը Հայոց յանձնուեր է, ասոնցմէ նոր ոստիկանութիւն մը կազմուելով և զէնք, (սուր, սրվօլվէր)։ տրուելով այս նորակազմ հայ ոստիկանաց։ Գիշերուան պահապաններն ալ որ տաճիկ են եղեր, անոնց տեղ նոյնպէս զինուորեալ հայեր դրուեր են... Հայ ոստիկանաց և գիշերապահներուն ալ կառավարութեան կողմանէ բաց սրոշ արտոնութիւն տրուեր է որ ձերբակալութեան ընդդիմացողը, յետ հրաւէրին, եթէ տաճիկ ալ ըլլայ, անմիջապէս զարնեն զայն»։ Բնական է այս կարգադրութեան վրայ քաղքին տաճիկներէն երեւելիներէն դանգատեր են առ կուսակալը, բայց նա մտիկ չէ ըրած և ճամբեր է բսելով որ «իրենց տէրութեան հրամանը և պատուէրը յարգելէն զատ ուրիշ բան չունին ընելու»։

1. Դամակ Միդհատ փաշայի, հրատարակեալ 23 Յունուարի République française լրագրին մէջ։

նաւը, որ անմիջապէս մեկնեցաւ մայրաքաղաքէն։ Միդ-
հատ փաշա խնդրեց տարուելու ի Շիրա, անկէ անցաւ
ի Բրինդիսի և Նապոլի, միշտ յուսով յանկարծ հեռա-
գրով ետ կանչուելու, ինչպէս շատ անգամ պատահած
է նախորդ վէզիրներու։ Բայց փոխուեր էին ժամա-
նակք[1]։

8. — Միդհադ փաշայի մայրաքաղաքը ձգելէն Լ'դհէմ փաշա պաշտօնարան։
վերջը. բոլոր աւագանւոյն առջեւ կարդացուեցաւ Սուլ-
թանին Հրաբ որ կ'իմացնէր Միդհադ փաշայի պաշտօ-
նանկ ըլլալը, ըստ Սահմանադրութեան, և կայսրութենէն
դուրս հանուիլը ինչ ինչ պատճառներու համար. և կը յա-
ւելուր որ «Սահմանադրութեան ինձ տուած իշխանու-
թեամբ կ'անուանեմ զլ'դհէմ փաշա՝ մեծ վէզիրութեան
պաշտօնին։ Նոյն ֆերմանով կ'անուանուէին Ճէվտէթ
փաշա՝ Պաշտօնեայ Ներքին Գործոց, Գատրի փաշա՝
Նախագահ Պետութեան Ատենին, Յովհաննէս Զամիչ
էֆէնտի՝ Պաշտօնեայ Վաճառականութեան և Երկրագոր-
ծութեան. Ասսիմ փաշա՝ Պաշտօնեայ Արդարութեան,
Գոստաքի էֆէնտի Ատոսիտէս՝ միւսթէշար Ներքին Գոր-
ծոց, Յովհաննէս էֆէնտի Սաքրզ՝ միւսթէշար Հանրա-
յին կրթութեան, Սատրգ փաշա՝ Պարիսու դեսպանը՝
ընդհանուր կուսակալ Դանուբեան գաւառաց։

Լ'դհէմ փաշա անմիջապէս շրջաբերականով մը առ
ընդհանուր կուսակալս և բանակին հրամանատարները,
իմացուց Սուլթանին վստահութենէն վարչութեան գլուխ
կանչուիլը. իմացնելով Սահմանադրութեան իրենց վրայ
դրած պատասխանատուութիւնը, որով ամենայն ար-
թնութեամբ, հաւատարմութեամբ և առանց իտրութեան

---

1. Հարցուցի որ մը հայազգի ամենայարգելի, հինաւուրց և ամենա-
ծանօթ դիւանագէտի մը, որ կարող էր գիտնալ մանրամասն՝ Միդհատ փա-
շայի այսօրինակ անկման և աքսորի ստոյգ պատճառները — «Մարդկային
կենաց ամենարնական պատճառով մը, պատասխանեց. զոր չ'ըմբռնեց Բիս-
մարքի նման մեծ միտք մը և վշտացաւ։ Կենաց կանոն է՝ անոնք որ պատ-
ճառ եղած են մէկումը բարձրանալուն, բնական իրաց բերմամբ, և ոչ
չարութեամբ, պիտի հեռացուին, մշանջենաւոր երախտագիտութեան տարա-
կայ չ'ըլլալու համար»։

օսմանեան հպատակաց մէջ, պիտի հսկէր ամենուն իրաւանց պահպանութեան համար։

Սերբիոյ հետ հաշտութեան դաշինքը. — Մոնտէնէգրոյի հետ բանակցութիւնք.

9. — Իդհէմ փաշա շարունակեց իր նախորդին սկսած հաշտութեան բանակցութիւնքը Սերբիոյ և Մոնտէնէգրոյի հետ։ Արդէն պատերազմը շատ աղքատութեան և թշուառութեանց մէջ ձգեր էր զՍերբիա. և Միլան իշխանը հակամէտ էր խաղաղութեան, որով Ռիստիչ պաշտօնեայն առաջարկեր էր իրրեւ հիմն հաշտութեան նախ՝ Սերբիա պատերազմէն առաջին վիճակին մէջ դրուի. 2. Լիովին և անպայման ներումն. 3. Դաշինքէն տասուերկու օր վերջը թուրք բանակը թողու Սերբիոյ հողը և բռնած բերդերը։ Բ. Դուռը ընդունեցաւ այս պայմանքը. որով երկու նուիրակք եկան ի Կ. Պոլիս վիճելու նաեւ Բ. Դրան աւելցուցած պայմաններուն վրան, որոնք էին. Ա. Արգելք նոր բերդեր շինելու. Բ. Սերբ դրօշակին քով բանալ միշտ օսմանեան դրօշակը և Գ. Հաւասարութիւն իրաւանց Սերբիացւոց և Հրէից. և արգելք զինուած խումբեր ձեւանալու։ Փետրուար 27ին դաշինքները ստորագրուեցան երկու կողմանէ։

Մոնտէնէգրո եւս պատրաստ էր հաշտութեան, բայց ունէր զանազան պահանջներ։ Կուզէր Ադրիականի վրայ Սութորինայի նաւահանգիստը և սահմանաց ընդարձակութիւն մը Ալբանիոյ և Հերձէգի կողմէն, մէջը առնելով նաեւ Նիքսիչ բերդաքաղաքը։ Իդհէմ փաշա տեղիք չտուաւ. չհրաժարեցաւ նաեւ Մոնտէնէգրո իր պահանջները Ռուսիոյ թելադրութեամբ, որ Մոնտէնէգրեան նաւահանգստով մը Ադրիականի վրայ, տարգնապ կ՚ուզէր յարուցանել Աւստրիոյ։ Արդէն ծանր էր իրեն փրութի վրայ հաւաքած 400,000ով բանակը դարձնել Ռուսիա, փոխարէն մը չստացած։ Այսպէս ոչ միայն հաշտութեան դաշինքը չկատարուեցաւ Մոնտէնեգրոյի հետ, այլ նաեւ զինեալ խումբեր երբեմն երբեմն սկսան յարձակիլ Բոսնիոյ և ուրիշ կողմեր թուրք պահանորդաց վրայ։ Միրիտիդներն ալ զէնք առին մահմէտական ալբանիացիներուն դէմ։ Ռուսիոյ սլաւասէր ընկերութիւնը, Մոնտէնէգրոյի մէջ թշուառութեանց օգնելու պատրուակաւ,

շատ մը ալիւր ղրկեց և ուրիշ պաշարներ. ինչպէս նաեւ ընտիր հրացանք և պատերազմական մթերք։ Սավֆէթ փաշա ջանալով որ պատերազմի մը առաջքը առնուի, ընդունեցաւ որ զինադադարը յետաձգուի մինչեւ Ապրիլի 13։

Արդիւ Համիդ հանդիսաւոր կերպով կը բանայ խորհրդարանը։

10. — Այս յուզմանց ժամանակի մէջ կատարուեր էին ամեն կողմ երեսփոխանական ընտրութիւնք, որոնք առաջին անգամն ըլլալով և այն ի թուրքիա, չէին կարող ճշգրիտ արտայայտութիւն մը ըլլալ ժողովրդեան կամայ. և կուսակալք ունեցեր էին իրենց մեծ ազդեցութիւնը։ Այսուհանդերձ ընտրութիւնք կատարուեր էին խաղաղութեամբ և երեսփոխանք թուով 86, արդէն հասեր էին ի Կ. Պոլիս։ Ատոնցմէ 48ը մահմէտականք էին և 38 քրիստոնեայք, յորոց 17ը յոյն, 10ը հայ, 8 սլաւ և երեք արաբ քրիստոնեայք՝ Լիբանանու կողմերէն։ Ընդհանուր դիտողութեան նիւթ եղաւ որ Հայք համեմատաբար աւելի էին և ընդհանրապէս համարձակ խօսողք։ Ադրիանուպոլիս ղրկեր էր զԻուբէն էֆէնտի, Հալէպ զԽարաճեան Մանուկ էֆէնտի, անաչառ հռետոր մը, Այտրն՝ զՍպարթալեան Յակովբ էֆէնտի, Տիարպէքիր՝ զՅովսէփ էֆէնտի Դազազեան. Կարին՝ զԴանիէլ էֆէնտի Խարաճեան և Պալլարեան Համազասպ էֆէնտի, Սեբաստիա զՅակովբ էֆէնտի Շիրինեան, Պրուսա զՆշաւրուեան էֆէնտի, Լտանա՝ զՊզտիկեան էֆէնտի։ Իսկ Պոլսոյ ընտրութեանց մէջ յաղթեր էին Մաքսուտեան Սեպուհ էֆէնտի, Սէրվիչէն էֆէնտի, որ ապա Միհրան պէյ Տիզեանի հետ մտաւ ի ծերակոյտը, և Յովհաննէս էֆէնտի Ալլահվէրտեան, որ Խորհրդարանին միանգամայն դեր նախագահ ընտրուեցաւ։ Պաշտօնարանը, ըստ Սահմանադրութեան, անուանեց նաեւ ծերակոյտը 30 անդամներէ, յորս եօթը էին քրիստոնեայք։ Այսպէս երկու խորհրդարանք պատրաստ ըլլալով, Սուլթանը անձամբ բացաւ օսմանեան առաջին խօսարանը։

Մարտ 19ին, Դոլմա Բահճէի շքեղ սրահին մէջ հաւաքուեր էին պաշտօնեայք, ծերակուտի անդամք, երեսփոխանք, կայսրութեան բարձրաստիճան անձինք, բա-

1876

նակի գլուխները, քաղաքական և կրօնական Թուրք պետեր, քրիստոնեայ ազգապետք և եւրոպական պետութեանց գործակատարք, որոց մէջ կը պակսէին միայն Ռուսիոյ և Գերմանիոյ ներկայացուցիչք։ Սուլթանը իր պալատականներով ներս մտնելուն, խանդավառ ընդունելութիւն մը գտաւ. յետոյ յոտին կեցած, մեծ վէգիրին տուաւ թղթերու գլանիկ մը, որ կը բովանդակէր Թագին ճառը. և նա յանձնեց կայսերական ատենադպրին որ կարդաց զայն բարձր ձայնով։ Սուլթանը այս ճառին մէջ կը պատմէր նախ Թուրք Պետութեան սակաւ առ սակաւ անկումը, ուղիղ սկզբունքներուն մոռցուելով մինչեւ իր պապուն, Սուլթան Մահմուտի, ժամանակ. որ զկայսրութիւնը յառաջադիմութեան ճամբուն մէջ դրաւ։ Նոյն ճամբան շարունակեց իր հայրը Աբդիւլ Մէճիտ, հրատարակելով զԹանզիմատ, բայց Ղրիմու պատերազմը արգելք եղաւ շատ մը բարեկարգութեանց գործադրութեան։ Խաղաղութենէն վերջը, կայսրութեան ամբողջութիւնը բոլոր Պետութիւններէն ապահովուած ըլլալով, շատ յառաջադիմութիւններ կրրնային ըլլալ, բայց շատ մը նենգերու և թշնամութեանց պատճառաւ, վարչութիւնը բռնադատուեցաւ մեծամեծ բանակներ պատրաստ ունենալ, որով եղան և մեծամեծ ծախքեր։ Նաեւ վատթար մատակարարութիւն մ'ալ միանալով ասոնց, առաջ բերին տէրութեան դրամական տագնապը։ Սուլթանը այսպիսի դժուարին ժամանակի մէջ ստանձնելով իշխանութիւնը, նախ ջանաց կայսրութեան անկախութիւնը ապահովելու, ապա բարեկարգութեանց համար հրատարակեց Սահմանադրութիւնը, որով, ինչպէս քաղաքականացեալ Պետութեանց մէջ, գազգը մասնակից կ'ընէր, օրէնքներու հաստատութեան և հասարակաց գործոց մատակարարութեան։ Այսպէս հաստատուեցան խորհրդարան մը և ծերակոյտ մը, որով կ'ապահովուին ազատութիւն, հաւասարութիւն և Արդարութիւն։

Յետոյ Թագի ճառը յիշեց կարգաւ այն օրէնքներր որոնց վրայ պիտի վիճէին խորհրդարանք. ընտրական

օրէնք, գաւառական և հասարակութեանց օրէնքներ, քաղաքական դատավարութիւն, դատաստանարանաց կազմակերպութիւն, պաշտօնէից յառաջադիմութեան կամ հանգստեան թոշակի օրէնք. օրէնք տպագրութեան, օրէնք Եղեւմտից և Հաշուէտան։ Պիտի մտածուէին միջոցք ապահովելու օտարաց առջեւ դրամական վարկը և խնամք պիտի տարուէին հանրային կրթութեան։ Ամենէն վերջը գովեց ժողովրդեան հայրենասիրութիւնը և բանակին անձնանուիրումը. յայտնեց Սերբիոյ հետ հաշտութիւնը, յուսացնելով որ նոյնը փութով պիտի կատարէ և Մոնտէնէգրոյի հետ։ Եւ եթէ Անգղիոյ առաջարկութեամբ ի Կ. Պոլիս եղած դեսպանաժողովը չունեցաւ համաձայն վերջաւորութիւն մը, սակայն այսու ետ չմնացին յանձն առնուած բարեկարգութիւնք։ Լնդ փոյթ իր անկեղծ և լուրջ վարչութիւնը պիտի գրաւէր բոլոր Եւրոպոյ համակրութիւնը և բարեկամութիւնը[1]։

11. — Ռուսիա բնաւ կարեւորութիւն մը չտուաւ Սահմանադրութեան մը հրատարակուելուն. նա շարունակեց զինուոր հասցնել սահմանագլխի մօտ և մանաւանդ Քալաֆաղի դիմաց, ուսկից դիւրին էր անցնել Դանուբը. և ծածուկ դաշինք դրաւ Ռումանիոյ թէ վարչութեան և թէ երկաթուղեաց տեսչութեան հետ։ Այն օրուընէ Ռումանիա տարբեր ընթացք մը սկսաւ թուրք վարչութեան նկատմամբ. տրտնջաց որ Սահմանադրութիւնը զՌումանիա իբրեւ հպատակ տէրութիւն մը կը նկատէր. դարձեալ կը պահանջէր որ սահմանագլուխը նորէն գծուի։ Ռուսիա ղրկեց զԻգնատիէֆ մեծ պետութեանց արքունիքները, իմանալու թէ ինչ կը մտածէին յետ Դեսպանաժողովոյն այնպէս «արհամարհուած» ցրուելուն. առաջարկելու միանգամայն որ բողոքոյ Արձանագիր մը ղրկուի առ թուրք վարչութիւնը։ Իսկ եթէ Ռ. Դուռը չ'ընդունի, այն ատեն Եւրոպա կարող

Լոնդրայի արձանագիրը։

1. Թօսարանին առաջին գումարման համար, յորում պիտի վիճուէր Եղեւմուտքը, իսսող գրուեցան Սեպուհ էֆէնտի Մաքսուտեան, Մանուկ Էֆէնտի Խարաճեան և Իսուրէն էֆէնտի։

էր Ռուսիոյ յանձնել բռնադատիչ միջոցներ ձեռք առ-նելու։ Անգղիա ընդերկար յանձն չ'առաւ այս ա-ռաջարկը, խորհուրդ տալով սպասելու Սահմանա-դրութեան գործադրութիւն։ Իգնատիէֆ Պարիս մնաց մինչեւ որ Ռուսիոյ ի Լոնդրա դեսպանը, կոմսն Շու-վալոֆ, կրցաւ համոզել զԱնգղիա Արձանագրին համար։ Այն ատեն Իգնատիէֆ անցաւ ի Լոնդրա և տեսակցեցաւ Լորդ Տէրբիի և Լորդ Բիկոնսֆիլդի հետ, որոնք միա-բանեցան միւս պետութեանց Արձանագիրը ղրկելու, յուսալով այսպէս թուրք-ռուս պատերազմի մը դիմացն առնուլ։ Մի և նոյն միջոց Անգղիոյ պաշտօնարանը պայման դրաւ որ այդ Արձանագիրը 1. Պատերազմի սպառնական իմաստ մը չ'ունենայ. 2. Ռուսիա անմիջա-պէս ցրուէ Փրութի վրայ ունեցած բանակները։ Ար-ձանագիրը ամենէն վերջը կը յաւելուր որ եթէ ի դերեւ ելլէ յուսացածնին, Պետութիւնք կը վերապահին իրենց, միարան խորհելու Արեւելքի քրիստոնէից վիճա-կը բարւոքելու միջոցները։

Մարտ 31ին Պարիսու դաշանց մասնակցող Պետու-թեանց դեսպանները ստորագրեցին Արձանագիրը. և նոյն Պետութեանց գործակատարք ի կ. Պոլիս ներկա-յացուցին զայն առ Սավֆէթ փաշա, որ ընդունեցաւ ազնուութեամբ և յայտնեց որ պատասխանը կու տայ երբ ստանայ վարչութեան, Պետութեան Ատենին և խորհրդարանաց կարծիքները։

Բ. Ինչպէս կը մերժէ Արձա-նագիրը. — Ռուսիոյ և Թուրքիոյ յարաբե-րութեանց խզումը։

12. — Խօսարանը իր առաջին գումարման Պատ-կի ճառին պատասխանին մէջ միաձայն քուէարկեց որ «Ազգայ իրաւանց կանոններուն վրայ հիմնեալ, կը մերժէ օտար Պետութեանց ո՛ր և է միջամտութիւն Պե-տութեան ներքին վարչութեան մէջ, ինչպէս նաեւ հպա-տակաց և իշխանին մէջ եղած յարաբերութեանց վե-րաբերեալ ո՛ր և է միջամտութիւն մը։ Խորհրդարանի այս քուէարկութեան վրայ Սավֆէթ փաշա Ապրիլ 9ին շրջաբերական մը ուղղեց առ Պետութիւնս, մերժելով Արձանագրին պահանջները[1]։ Այս մերժողական պա-

1. Memorial diplomatique N. 14. Ապրիլ 17. էջ 219։

տասխանին վրայ Գորչաքով իշխանը, Ապրիլ 13ին շրջաբերական մը ուղղեց ռուս դեսպանաց, յորում կ'արդարացնէր Զարին դիտաւորութիւնը զինուք բռնադատելու զԹուրքիա, ընդունելու Դեսպանաժողովոյն և Արձանագրին որոշողութիւնքը. և ապահով էր որ «բոլոր Եւրոպա համաձայն պիտի գտնուէր Նորին վեհափառ կայսեր այս կամքին»։ Գորչաքովի շրջաբերականին իբրեւ պատասխան մը Սավֆէթ փաշա եւս շրջաբերական մը գրեց առ Թուրք դեսպանս, ծանուցանելով որ Թուրք կառավարութիւնը չէր կարող ընդունիլ օտար միջամտութիւն մը իր Ներքին Գործոց մէջ, և Արձանագիրը հերքած ժամանակ, ինքը չէր մերժեր բարեկարգութիւնքը, «որոնք արդէն սկսեր էին գործադրուիլ[1]»։

Բարձրագոյն Դուռը ըմբռնած ըլլալով որ ռուս վարչութիւնը պատերազմ կը խորհէր, արդէն Ապրիլ 13ին իմացուցած էր Մոնտէնէգրոյի Նիկոլա իշխանին, զինադադարման ժամանակին լրանալը. և որովհետեւ հաշտութեան մը բանագնացութիւնք ի դերեւ ելեր էին, զինադադարումը պիտի չնորոգուէր։ Ռուսիոյ վարչութիւնը պահանջած էր միջամտելու Թուրք—Մոնտէնէգրո հաշտութեան մը համար, զոր Բ. Դուռը չէր յանձն առած, հակառակ համարելով իր ներքին իրաւանց։

Այս ամեն եղելութիւնք յուզեր էին անգղիական խոսարանը. և զանազան հարցանողաց՝ Լորդ Դէրբի պատասխաններ էր՝ որ Անգղիոյ վարչութիւնը բնաւ մասնակցած չէ Շուվալոֆի շրջաբերականին և ազատ է իր գիտցածն ընելու։ Անգղիոյ պաշտօնէին այս վերապահական խօսից վրայ, Շուվալոֆ առաջարկեց որ Թուրքիա լիազօր իշխանութեամբ դեսպան մը ղրկէ ի Պետերբուրգ որ երթայ բանակցի երկու կողման զինաթափութեան

---

1. Եւրոպայի դիւանք մեծապէս զոված են Սավֆէթ փաշայի դիւանական շրջաբերականները, յորս կը գանուէին հաւատարապէս կորով և դիւանագիտական հմտութիւն։ Իր աշխատակիցն էր միշտ Սարգիս էֆէնտի Համամճեան։

պայմանաց վրայ։ Թուրքիա գուշակեց որ այսպէս Ռուսիոյ վարչութիւնը օգուտներ պիտի պահանջէր. և նուաստութիւն համարեցաւ, իրրեւ աղաչաւոր, դեսպան ղրկելու ի Պետերբուրգ, և մերժեց առաջարկը։ Այն ատեն Կ. Պոլսոյ ռուս դեսպանատունը և բովանդակ հիւպատոսք հրաման ստացան Պետերբուրգէ, անմիջապէս թողլու օսմանեան հողը։ Արդէն դեսպանը՝ զօրավարն Իգնատիէֆ. կանխաւ մեկնած էր, իրեն տեղ թողլով գկոմսն Նէլիդոֆ. և Ապրիլ 15ին Հերէքլիոյ պետական նաւը հասեր էր ի Կ. Պոլիս տանելու Ռուսիոյ ներկայացուցիչը։ Նէլիդոֆ իր դիւանը փոխադրեց Գերմանիոյ դեսպանատունը։ Ապրիլ 22ին Արկոնուոյ ռուս շոգենաւը բերաւ վերջին հրամանները և Ապրիլ 23ին կոմսն Նէլիդոֆ ղրկեց առ Սավֆէթ փաշա դեսպանատան առաջին թարգմանը՝ գՄնու, ծանուցանելու՝ Որովհետեւ Ռուսիոյ կայսեր ամեն առաջարկքը շարունակաբար մերժուած էին, ուրիշ բան չէր մնար, բայց հրատարակել դիւանական յարաբերութեանց խզումը և Թուրքիայէն կանչել բոլոր ներկայացուցիչքը։ Մանոյց միանգամայն որ ռուս հպատակաց պաշտպանութիւնը կը ստանձնէր Գերմանիա։ Սավֆէթ փաշայի պատասխանը եղաւ անմիջապէս հեռագրել ի Պետերբուրգ օսմանեան դեսպանին, խզել դիւանական ամեն յարաբերութիւնք և դառնալ ի Կ. Պոլիս. նոյնը պատուիրելով ամեն հիւպատոսաց և գործակատարաց։ Այսու հանդերձ Սավֆէթ փաշա, վերջին պահուն, Պարիսու դաշանց ստորագրող պետութեանց միջնորդութեան դիմեր էր. սակայն Փորչաքով պատերազմը հրատարակեալ կը համարէր։

Պատերազմին ձայնը Օսմանեան Խորհրդարանին մէջ։

13. — Ապրիլ 25ին Խոսարանը նախ զրաղեցաւ որպագրական օրէնքի ծրագրով մը։ «Ծրագրին ընթերցումէն վերջը Խարաճեան Մանուկ էֆէնտի բեմն ելաւ և քրիստոնէից պաշտպանութիւն ընելու ռուսական պատրուակը հերքեց, յայտարարելով իւր ազգակցաց և մասնաւորապէս գինքը ընտրող գաւառին (Հալէպի) հայ ժողովրդեան կողմանէ, թէ Ռուսիոյ պաշտպանութեան բնաւ պէտք չունին. այլ գոհ են իրենց ճակատագրէն, և թէ

պատրաստ են ամեն զոհողութիւն ընել՝ իրենց երկիրն և վեհապետը Ռուսիոյ յարձակման դէմ պաշտպանելու։ (բուռն ծափահարութիւն)։

Մաքսուտեան Մեպուհ էֆէնտի հաստատեց Մանուկ էֆէնտիի ըսածը և առաջարկեց որ կառավարութիւնը օրինաց ծրագիր մը շինէ, որպէս զի քրիստոնեայք կարենան աւելի ազդուապէս ծառայել տէրութեան։ (բուռն ծափահարութիւն՝ ժողովականաց և ունկնդրաց կողմէն)։

Նիքոլաքի Նոֆէլ էֆէնտի և Նիքոլաքի Նաքաշ էֆէնտի Ռուրիոյ յոյն և մարոնիտ երեսփոխանք, աւելի եւս ազդութեամբ հաստատեցին Մանուկ և Մեպուհ էֆէնտիներուն յայտարարութիւնը, ի մեծ գոհութիւն իսլամ երեսփոխանաց, որոնցմէ Խոզանի երեսփոխան Հոճա Մուսդաֆա էֆէնտի բեմն ելլելով, շնորհակալութիւն յայտնեց քրիստոնեայ երեսփոխանաց։

Յետոյ Կարնոյ երեսփոխան՝ Համազասպ էֆէնտի Պալլարեան՝ բեմն ելլելով, նախորդ ատենարանից յայտարարութիւններուն ձայնակցելէ ետեւ, աւելցուց թէ ինքը որ հայ է և Կարնոյ գաւառին երեսփոխան, այսքան կ'ըսէ թէ Հայերը իրենց իշխանութիւնը կորսնցնելէ ետեւ, հինգ հարիւր տարիէ ի վեր իրենց կրօնքը, լեզուն և ազգութիւնը պահած են օսմանեան իշխանութեան ներքեւ,..... հետեւաբար կ'աւետէ երեսփոխանական ժողովին թէ՝ Կարնոյ հայերն երկրին պաշտպանութեան համար զէնք առած և իրենց իսլամ եղբարց հետ օգնութիւններ տուած են։ Համազասպ էֆէնտիի այս խօսքերն հաստատեց նոյնպէս Կարնոյ երեսփոխան Դանիէլ էֆէնտի Խարահեան աւելցնելով թէ՝ մինչդեռ երեսփոխանաց շատերը նոր կը զգան երկրին պաշտպանութեան հարկը, կարնեցիք արդէն տարիէ մ'ի վեր զգալով, հայ և իսլամ եղբարք ի միասին զինուորած են։ Ինքն ալ որ Տէրութեան ատիճանաւոր մ'է, իւր ազգակցաց օրինակ և քաջալերութիւն տալու համար՝ հասարակ զինուորաց կարգը մտեր է։

Ղոնիայի, Ռոտոսդոյի և Ճքոտրայի յոյն երեսփոխանք և Ադրիանուպոլսի հայ երեսփոխան Ռուբէն էֆէնտի,

նմանապէս յայտարարեցին թէ իրենց ներկայացուցած հայ և յոյն ժողովուրդք չեն ընդունիր երբէք Իուսիոյ պաշպանութիւնը. և թէ ամենն ալ պատրաստ են Իուսաց յարձակումը վանելու համար ամեն զոհողութիւն ընելու։

Այս յայտարարութեան ի պատասխանի, քանի մ'իսլամ երեսփոխանք հետզհետէ բեմն ելնելով, ջերմ շնորհակալութիւն յայտնեցին քրիստոնեայ երեսփոխանաց, մասնաւորապէս Կարնոյ երեսփոխան Մէհմէդ էֆէնտի, հաւաստեց թէ Կարնոյ գաւառին քրիստոնեայ ժողովուրդներն իսլամաց հետ մի և նոյն հայրենասիրական զգացմամբք վառեալ են։ Հիճազի Աբաբ Իւլէմա երեսփոխանն ալ, Ղուրանէն հատուած մը կարդալով, գովեց և շնորհակալութիւն յայտնեց քրիստոնեայ երեսփոխանաց, «սիրելի եղբարք իմ» կոչելով զանոնք։

Իուրիոյ երեսփոխան Նազաշ էֆէնտի առաջարկեց, որ այս խնդրոյն առթիւ խօսուած ատենաբանութիւնք ամեն լեզուաւ թարգմանուին և հրատարակուին, «որպէս զի աշխարհ ամենայն իմանայ քրիստոնէից կարծիքն և Իուսիոյ պատրուակին արժէքը»։

Այն առաջարկն ընդունուեցաւ։

Հալէպի երեսփոխան Մանուկ էֆէնտի խալաճեան վերստին բեմն ելնելով, յանուն քրիստոնեայ երեսփոխանաց շնորհակալութիւնը յայտնեց իւր իսլամ պաշտօնակցաց յայտնած եղբայրական զգացմանց համար։

Ի վերջոյ Ներքին Գործոց պաշտօնեայ՝ Նշանաւորն Ճէվտէթ փաշա՝ յանուն կայսերական կառավարութեան, գոհութիւն յայտնեց իսլամ և քրիստոնեայ երեսփոխանաց հայրենասիրութեանն ու համաձայնութեան համար։ Երկար և ջերմ ծափահարութեամբք ընդունուեցան նախարարին խօսքերն և ատեանը գոցուեցաւ[1]։

---

1. Մասիս 28 Ապրիլ 1877. Դերսէս Պատրիարգ Վարժապետեան շրջաբերական կոնդակաւ, ի Ս. Գրոց վկայութեամբք, կը յորդորէր հայ ազգը իր գաւառը հպատակ հնազանդութեան. և ազօթելու «առ Աստուած վասն պահպանութեան անգին կենաց մեր Օգոստափառ Թագաւորին Օսմանեանց

Արդէն Ռուսիոյ դեսպանատան թարգմանին յայտարարութենէն քիչ ժամ վերջը, Հերեքլիոյ և Արկանուդ ռուս պետական նաւերը, դեսպանատան բոլոր անձինքներով, ճանապարհաց կը կարէին զՍոսփոր, կը թողուին զԹուրքիա և կը մոնէին Սեւ ծովն։ Անհամար ամբոխ մը կը դիտէր այս սպառնական և միանգամայն չարագուշակ մեկնումը։ Անձանց մեկնելէն վերջը, գոցուեցան դեսպանատան փեղկերը և դռները. և գործաւորք կ'աշխատէին պալատան արծուէնշանը վար առնելու և գոցելու մոմշորով պարտէզին վանդակապրան վրայ եղած ռուսական արծիւը։ Ամբոխը յետ դիտելու ընդերկար, քիչ քիչ ցրուեցաւ, ոմն ուրախ ոմն տխուր. քրիստոնեայք ապագայ տագնապներու վախով և մահմէտականք պատերազմելու խանդով։ Թիշերը վրայ հասաւ, յաջորդեց անորոշ առաւօտ մը, քաղաքը տարտամ երեւոյթ մը ունէր. բայց մինչեւ երեկոյ որոշ էր պատերազմը և արդէն հրատարակուած։

Պուլիան Համիտ Բ.ի և վասն անպրպուելի գրութեան և յաջողութեան Օսմանեան արիագունդ բանակին»։

Յայն պատարիարգը ապաքէ մը շարադրեց, եկեղեցիներուն մէջ կարդացուելու համար. և Ապտիւլ Համիտ Մէ յայն Մէ հայ Պատրիարգները ընդունելով իր ներկայութեան, յայտնեց իր մեծ գոհութիւնը։

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՍԻՈՅ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԻՋ ԵՒ ԵՎՐՈՊԱ, 1866-1878

1. Ռուսաստան և Անգղիա. — 2. Ռուսաստանի աշխարհակալութիւնք Ասիոյ կեդրոնը. — 3. Զէնայէֆ զօրավարը կը տիրէ Թուրքաստանի և Տաշկէնտի. — 4. Ռուսք կը տիրեն Բուխարայի և Խիվայի. — 5. Ռուսաստան և Չինաստան ի Քաշկար. — 6. ԱՂՈՒԱՆԻՍՏԱՆ. Մրցումն Ռուսիոյ և Անգղիոյ. – Գամամաքի Դաշինքը. – Անգղիոյ Գործակատարին սպանումը. — 7. Սըր Ֆրեդերիկ Ռոբրրտս կը տիրէ Քապուլի. կ'ազատէ զԳանտահար. — 8. Աքոբէլէֆ զօրավարը կը տիրէ Կէօք Թէպէի. – Մէրվ անձնատուր կ'ըլլայ. — 9. Ռուսաց դաշինքը Պարսից, Ճաբոնի և Միացեալ Նահանգաց հետ. — 10. Անդրկասպեան երկաթուղւոյն գաղափարը. — 11. Ռուս քաղաքականութիւնը յԵւրոպա Թուրք–ռուս պատերազմէն առաջ. – Իշխանն Գորչաքով. — 12. Գաղղիա–ռուս դաշնակցութեան մը պատճառը։

Ռուսաստան և Անգղիա

1. — Անոնք որ խորատես մտքով մը չէին դատեր Արևելեան խնդրոյն կրած մեծ այլափոխութիւնը գաղղիա–գերման պատերազմով, զարմացան ի սկզբան որ Ռուսաստան առիթ կը փնտռէր Թուրքիոյ հետ աւրուելու և զարմանալի անտարբերութեամբ մը և հապճեպով կը խզէր իր յարաբերութիւնքը Թուրքիոյ հետ։ Նապոլէոն Դի և Գաղղիոյ յաղթուիլը, կը ջնջէր իր մտքէն Ղրիմու պատերազմը իր ամեն հետեւանքներով և ինքզինքը ազատ կը զգար Պարիսու Դաշանց կապերէն։ Փոխադարձաբար Գերմանիոյ բարձրանալը զօրութիւն մ'էր Ռուսիոյ համար, դարական և աւանդական բարե-

կամութեանը համար, որուն վրայ աւելցեր էր նաեւ ազգակցութիւնը, Դուլիէլմոս կայսրը մօրեղբայր ըլլալով Աղեքսանդր ձարին։ Աղեքսանդր Բ գիտէր որ Ռուսաստան յաջող պարագայից մէջ կը գտնուէր և Անգղիա իր ամենայն նախանձաւորութեամբը Ասիոյ մէջ, չէր կարող յայտնի թշնամութիւն մը ցուցընել յԵւրոպա. նա մանաւանդ Կ. Պոլսոյ Դեսպանաժողովոյն մէջ ջանացեր էր յամենայնի համաձայն երեւնալ ռուս դեսպանին պահանջմանց. յորում կար նաեւ գաղտ քաղաքականութիւն մը, զՌուսաստան զբաղեցնել յԵւրոպա. և նոյն իսկ մղել պատերազմի մը մէջ, զինքը տկարացնելու համար. այսպէս յԱսիա անգղիական զօրութիւնը աւելի ապահով ընելու։ Եւ յիրաւի վերջին տարիներուս մէջ Ռուսիոյ յառաջխաղացումը յԱսիա, մեծին Բրիտանիոյ ամենէն աւելի հոգի նիւթ եղեր էր։

Ռուսաստանի աշխարհակալութիւնք Ասիոյ կեդրոնը։

2. — Սիր-Դարիա գետին[1] հիւսիսային-արեւմուտք կը բնակէին Խրրխրզք. Կասպից Ծովուն արեւելեան կողմը սփռուած էին թիւրքմէնք։ Բարձր Սիր-Դարիայի քովն էր Խոքանտի խանութիւնը, որուն Խոքանտ մայրաքաղաքը ուխտատեղի մ'էր և կեդրոն վաճառականութեան, հոն ըլլալով Ահմէդ Եազավիի գերեզմանը՝ որ մահմէտականութիւնը քարոզեր էր ի Թուրքաստան, Տաշքէնտ և Խոճէնտ։ Բարձր Ամու-Դարիայի վրայ էր Բալխի խանութիւնը, Հին Պատմութեան Բակտրիան, որուն մայրաքաղաքն էր Բալխ. դարձեալ Մերվանտի խանութիւնը՝ Թիմուրլէնկի քաղաքը։ Ասոնք երկուքն ալ Բուխարայի խանութեան հպատակ եղեր էին։ Ստորին Ամու Դարիայի վրայ էր Խիվայի խանութիւնը, արգաւանդ ովասիսներով. և Փաչկարի վրայ էր, Փաչկարի խանութիւնը, որուն մէջ էր Եարքէնտ 40,000 բնակչօք, զոր կառուցեր էր յանդուգն և ճարտարն Եազուպ խան. և վանելով Զինացիները զօրաւոր դիրք մը առեր էր։ Ռուսք

1. Սիր Դարիա և Ամու Դարիա գետերը հին աշխարհագրութեան մէջ կը կոչուէին Յաքսարտ և Օքսոս։

չուզելով որ Թիւրքիստանի մօտ գտնուի զօրաւոր մահ-
մէտական իշխան մը, 1868ի Փետրվարի անցքերէն կա-
րեւոր դիրքի մը վրայ, Նատին բերդը շինեցին և զՌուս-
չա խաղաղելու պատրուակաւ ուր կը մրցէին Դանիլան
1870 և Դարանչիտի ցեղերը, մտան հոն և տիրեցին ամբողջ
Իլլիի հովտին որ կը պատկանէր Չինաստանի։ Ռու-
սաստան Սիբերիոյ և ՅԱսիա ունեցած կալուածներուն
ապահովութեան համար, հարկ կը տեսնէր երթալ յե-
նուլ Ամուր Գետոյն վրայ և զայն իրեն պաշտպանու-
թեան հիմն ընել։ Այս երկիրները իրեն կարեւոր էին
միանգամայն իր ապրանքներուն վաճառանոց մը բանա-
լու համար։ Վերջին դաշինքները Չինաց հետ, մէկ
միայն դուռ մը բացեր էր իրեն Չինաստանի համար.
1860ին հազիւ յետ երկար բանակցութեանց շնորհուեր
էր կարաւաններուն, յորս 200էն աւելի անձինք պիտի
չ'ըլլային, մտնել չինական սահմաններէն ներս։ Եւրո-
պա ռուսական ճարտարութեան մեծ պէտք մը չէր զգար,
որով և Ռուսաստան բռնադատուած կը զգար տարա-
ծուելու Ասիոյ կեդրոնը։ Յամին 1844 տիրեր էր խրբ-
խրզներուն։ Ապա յառաջեր էր՝ դէպի Խոքանտի խա-
նութիւնը և նախ Ռիմմէրման հազարապետը 1860ին և
ապա զօրավարն Գոլբաքովսքի նուաճեր էին զայն։

Ռուսիոյ այս տիրապետութիւնք վրդովեցին զԱն-
գլիա և Լրագիրք մեծ շառաչով վարչութիւնը կը հրա-
տիրէին բացատրութիւն ուզել Ռուսիոյ կառավարութե-
նէն։ Գորչաքով, իր ընտիր-ոճ շրջաբերականով մը, ջա-
նայ հանդարտեցնելու Եւրոպիոյ դիւանները, որ աշ-
խարհակալութեան փափագ մը չէր զՌուսիա մղողը, այլ
հաստատուն սահման մը ունենալու համար Սիր-Դարիայի
երկայնութեան վրայ. ուր անապատք և թափառական
ցեղեր միշտ վտանգի մէջ դրած էին իր երկիրները և
«հիմայ որ կը գտնուինք հաստատուն և քաղաքական
ոճով կազմուած միջավայրի մը դիմաց, մեր շահը և
բանականութիւնը մեզ խորհուրդ կու տան այլ եւս չյա-
ռաջելու»։

Զէոնայէֆի զօրավարը կը տիրէ Թուրքաստանի և Տաշքէնտի։

3. Սակայն Եւրոպա շատ հեռու էր Սիր-Դարիայէ և այս շրջաբերականը կարդացուած պահուն և անկէ վերջն ալ Ռուսաստան քայլ առ քայլ կը յառաջէր։ Յամին 1863ի Վէրէժին հազարապետը 1200 հոգւով Օրէնբուրկէն, և հազարապետն Զէոնայէֆ 2000 զինուորով Սիբերիայէն միաբանելով, յարձակեցան և առին զՉիմքէնտ և սակաւ սակաւ տիրեցին Թուրքաստանի մեծ մասին։

Այս աշխարհակալութիւնք շատ անգամ Պետերբուրգի վարչութեան հրամանովն չէին, այլ զօրավարաց եռանդէն՝ նոր երկիրներու տիրելու և միացնելու մայր հայրենեաց հետ. և Պետերբուրգի վարչութիւնը միշտ պատրաստ էր իր զօրավարաց ըրածը հաստատելու։ Թուրքաստան ղրկուած զօրավարք միշտ այս ընթացքը բռնեցին և Զէոնայէֆ այսպէս միացուց Ռուսիոյ հետ 1865ին, Արալ Ծովէն մինչեւ Խսիոքով լճի մէջեւ եղած երկիրները։ Երբ յետոյ Թուրքաստանի ընդհանուր կառավարիչ անուանուեցաւ, ուրիշ բան չմտածեց, բայց ընդարձակել սահմանքը։ Պատրուակաւ մը մտաւ Խոքանդի խանութիւնը, տիրեց Շինազի և Նիազբէքի. և որովհետեւ այսպէս կը կտրէր Տաշքէնտի ջուրն ալ, Տաշքէնտ որ 80,000 բնակիչ ունէր, բռնադատուեցաւ անձնատուր ըլլալու։ Ռուսիոյ օրինակին հետեւելով Բուխարայի խանն ալ դիմեց Խոճէնտի վրայ և զայն առաւ Խոքանտի Խիւտայան խանին ձեռքէն։ Ռուսիա և Բուխարա դիմացէ դիմաց գտնուեցան Խոքանտի մէջ և Ռուսաստան հարկ էր որ պատրուակ մը գտնէր Բուխարայի դէմ. և այս եղաւ վաճառականաց ոմանց գերի բռնուիլը խանէն։ Զէոնայէֆ անցաւ Սիր-Դարիա և մտաւ Ղըզըլ Ղում անապատը, որ զԽոքանտ կը բաժնէ Բուխարայէ, 14 հետեւակ վաշտերով 16 թնդանօթովք և 1300 ուղտովք։ Հասնելով Ճիզաք ամրոցին մօտ բարձունքներուն, Խմիրին բանակը վրան յարձակեցաւ և Զէոնայէֆ ստիպուեցաւ հապճեպով դառնալ ի Թուրքաստան. Պետերբուրգի վարչութիւնը զինքը կանչեց ուր շքեղ ընդունելութիւն գտաւ իբրեւ տիրող Թուրքաստանի, ստա-

1866 Փետրուար։

յաւ զօրավարի աստիճան և Զարը իրեն սուր մը նուիրեց[1]։ Իր յաջորդը՝ Ռոմանովսքի զօրավարը, 2000 հոգւով չուեց Նորէն Բուխարայի Էմիրին վրայ։ Կեդրոնական Ասիոյ բոլոր մահմէտականք յուզուեցան, մոլլաները սրբազան պատերազմ քարոզեցին և մօտ 30,000 զինուոր հաւաքուեցան Էմիրին քով, սակայն Ռոմանովսքի

1866 Մայիս 20։

ճարտար դիրքով մը Իրճարի մօտ մեծ յաղթութիւն մը կատարեց, սպանելով հազարաւոր անձինք և գերելով թշնամւոյն հրանօթքը։ Յետոյ չուելով անապատէն, առաւ Խոճէնտ, Օւրա Դիւբէ և Ձիզաք քաղաքները. այսպէս Խորանտը բաժնեց Բուխարայէն և միացուց Ռուսիոյ. և Բուխարայի Էմիրը յանձն առաւ վճարել պատերազմին ծախքը։

Ռուսք կը տիրեն Բուխարայի և Խիվայի։

4. — *Դորչաքով իր սովորական ոճով զԷւրոպա և մանաւանդ զԱնգղիա հանդարտ կեցնելու համար, Պաշտօնական Լրագրին մէջ կը ծանուցանէր որ մինչ ամենադիւրին էր տիրել Բուխարայի, բայց ռուս վարչութիւնը, որ չունէր աշխարհակալութեան փափագ, թողուցեր էր զայն։ Միանգամայն զԹուրքաստան ռուս կուսակալութիւն մը կը կազմէր, և կը դնէր հոն փոխարքայ մը որ ուղղակի Զարէն կախումն ունէր, առանց պաշտօնականներու միջամտութեան։*

Երբ 1868*ի Բուխարայի Էմիրը չուզեց վճարել պատերազմին տուրքը, այն ատեն փոխարքային Թուրքաստանի՝ զօրավարն Քաւֆման, մտաւ Բուխարայի իշխանութեան մէջ, յաղթեց Զապան Ատիի քով և առաւ զԱմրղանտ։ Ուրիշ պատերազմով մ'ալ Զէրաբուլախի քով ստիպեց զԷմիրը ստորագրել Յունիս 2ի դաշինքը, որով Ռուսաց մշտնջենաւորապէս կը մնայ Ամրղանտ. պատերազմի ծախք պիտի վճարէր երկու միլիոն ռուպլը*

---

1. Զէնայէֆ բիչ վերջը քաշուեցաւ ծառայութենէ և հաստատեց Ռուսքի Միր (ռուսական աշխարհ) լրագիրը 1874ի, որով եռանդնաւորեց զռուս ժողովուրդը օգնելու իրենց եղբարց ի Հերզէկ, Բոսնիա և ի Սերբիա։ Յամին 1876 անձամբ գնաց գլուխ կենալու Սերբիոյ բանակին, ինչպէս տեսանք նախորդ Գլխոյն մէջ։

և վաճառականական ապահովութիւններ կու տար։ Այս-պէս Բուխարա հարկատու երկիր մը կ՚ըլլար, ինչպէս նաեւ Խոքանտ, ուր ռուսք էմիր դրին գիտցայր. կը հպատակէր նաեւ Ջէրաֆշանի ամբողջ հովիտը, որով կազմուեցաւ Ջէրաֆշանի գաւառը։

Ռուս վարչութեան և զօրավարաց աշխարհակալու-թեան փափագները յաջողութեամբ յառաջեր էին՝ դը-ժուարին էր որ կանգ առնուր։ Խիվայի խանը 1868ի և 1870ի գերի վարած էր ռուս վաճառականներ և օգներ էր իրրիրզներու՝ ընդդէմ Ռուսիոյ։ Այս պարա-գաները յարմար առիթ էին. 1872ի Դեկտեմբերի, չորս գունդեր դրկուեցան Խիվայի վրայ։ Առաջինին կը հրա-մայէր հազարապետն Մարկոսով, որ յետ թափառելու անապատներուն մէջ 25 աստիճան զրոյէն վար ցուր-տով, չկրցաւ յառաջել և յետս նահանջեց։ Միւս գուն-դերուն կը հրամայէին զօրավարն Քաուֆման, և զօրա-վարքն Աքոբէլէֆ և Վէրէժքին։ Այս երկու զօրավար-ները հասան Խիվայի դիմաց 1873ի Յունուարին, և ոմրակոծեցին քաղաքը, ուսկից փախեր էր խանը։ Աքո-բէլէֆ և Վէրէժքին մտան ի Խիվա, ուր հասաւ նաեւ զօրավարն Քաուֆման. և Ռուսաց ապահովութեան խոս-տումներուն վրայ դարձաւ նաեւ խանը. և ինքզինքը հարկատու ճանչցաւ Ռուսաստանի։

Խիվայի առման վրայ մեծ ուրախութիւններ եղան ի Պետերբուրգ. Զարը հանդիսով գնաց յեկեղեցի գոհա-բանական աղօթք ընելու և քաղաքը նոյն երեկոյ լու-սաւորուեցաւ։ Խիվայի հարկատու ըլլալով, Ռուսաց աւե-լի տիրաբար կրնային կարգադրել. այսպէս Ռուսիոյ միացուեցան Ամու Դարիայի աջ ափանց վրայ երկիր-ները. ռուս գետային նաւարկութիւն մը հաստատուեցաւ, նաեւ վաճառականական շատ մը առանձնաշնորհութիւնք Ռուսաց համար։ Դարձեալ ռուս դատարան՝ ռուս հպա-տակաց համար. նոյն ռուս դատարանը պիտի քննէր ռուս և տեղացիներու մէջ եղած խնդիրներ։ Խանը պատերազմի տուգանք պիտի վճարէր 20 տարուան մէջ 2,200,000 ռուպլի։ Ի՛ որպէսզի Խիվայի խաներուն

այլ եւս ինքնիշխանութեան փորձութիւն մը չգայ, ռուս վարչութիւնը Խիվայէ կարաւանով երկու օր հեռու Ամու Դարիայի վրայ Շուրախան բերդը կանգնեց։

Ռուսիոյ վարչութիւնը այս աշխարհակալութեանց մէջ ի սկզբան վարուեր էր նման անգլիական քաղաքականութեան ի Հնդկաստան. իր ընդարձակ կայսրութեան չէր միացուցած այդ երկիրները, և թողեր էր իւրաքանչիւրին խանը, հարկատու ընելով զայն. անկարող առանց իրեն հրամանին ո՛ր և է դաշինք մը դնել օտարի մը հետ։ Սակայն իր զօրավարք չկրցան ունենալ այն նուրբ և դժուարին անգլիական քաղաքականութիւնը, որով գոհ մնային այդ խաները և կարելի ըլլար իրենց կառավարութիւն մը հպատակութեամբ հանդերձ։ Այսպէս նոյն իսկ իրենք ընտրեցին հրաժարիլ իրենց երկիրներէն և Ռուսիոյ վարչութիւնն ալ բռնադատուեցաւ զանոնք միացնել իր մեծատարած կայսրութեան։ Յամին 1875 Խոքանտի խանին դէմ ապստամբեցան իր հպատակքը և նոյն իսկ որդիքը։ Խանը բոլոր իր գանձով և հարէմով ապաւինեցաւ Յ)ռէնբուրգ. Ռուսաստան ուզեց վերջնական հարուածով մը վերցնել իր սահմաններուն նկատմամբ ամեն վտանգ։ Զօրավարն Տրոտսքի որուն յանձնուած էր տիրել Քոխանտի և առնուլ զայն ապստամբաց ձեռքէն, յանձնեց Սքոբէլէֆ զօրավարին այդ գործողութիւնը։ Սքոբէլէֆ գիշեր ատեն յարձկեցաւ 150 խազախներով թշնամւոյն բանակին վրայ. և մինչդեռ թշնամիէն ինկան 110 հոգի, իր ձիաւորներէն ոչ վիրաւոր մը կար և ոչ մեռեալ։ Սքոբէլէֆի անունը վիպասանական անուանց կարգը անցաւ։ Ռուս վարչութիւնը իրեն յանձնեց Քոխանտի տիրելու հոգը. և երեք ամիս շարունակ յանկարծական յարձակումներով տիրեց անոր։ Ռուսաստան միացուց զԽոքանտ, Ֆէրկանա գաւառ անուամբ, որուն կուսակալ դրաւ զՍքոբէլէֆ զօրավարը։ Ուսկից ապա կանչուեցաւ Թուրք—ռուս պատերազմին դաշտը։

Խիվայի խանն ալ որ ստէպ կռիւներ ունէր իր հպատակաց հետ. կորսնցուց միանգամայն Թուրքմէններուն հարկը, որոնք 1875ին Ռուսիոյ հպատակ եղան։

Այն ատեն խանը խնդրեց ի Ռուսիոյ որ իր երկիրներն ալ միացուին և ստանայ տարեկան ռոճիկ մը։ Ռուսիոյ կառավարութիւնը հաւանեցաւ, կապեց ռոճիկ մը, և խանին իբր պատուանուն մը ռուս տեղապահ–զօրավար Օրենբուրկի խազախներուն տիտղոսը տուաւ։

Ռուսաստան և Չինաստան ի Քաշկար։

5. Յետ խըրխիզները և թուրքմէնները նուաճուելու, յետ Խոքանտի Ամրգանտի և Խիվայի միանալուն, յետ Բուխարայի հարկատու ըլլալուն, ինքնիշխան կը մնար միայն Քաշկարի Յաղուպ խանը որ 1864ի վոնտեր էր չինացիները և տիրեր էր Քաշկարի և ունէր պաշտպան զԱնգղիա, և կ. Պոլսոյ Սուլթանէն էմիրութեան ատիճան բերել տուած էր։ Յաղուպ խան ունէր 40,000 զինուորաց բանակ մը, կրթուած լեհ և անգղիացի սպաներէ և պատրաստուած էր պաշտպանուելու Ռուսաց դէմ լերանց կիրճերուն մէջ։ Սակայն չինացիք 1876ին պատերազմ սկսան Քաշկարը ձեռք բերելու համար և Յաղուպ խանը 1877ին յետ յաղթուելու չինացիներէ սպանուեցաւ իրենիններէն և Չինաստան առնելով զՔաշկար որ արդէն իրեն կը պատկանէր, պահանջեց բանակով մը նաեւ Իլլիի հովիտը որ նախնապէս իրենն էր և Ռուսաստան տիրեր էր 1870ին։ Ռուսաստան պատրաստ ցրցուց դարձնելու. միայն թէ տրուին իրեն բոլոր ծախքերը։ Երկար տեւեցին բանակցութիւնք ի Պետերբուրգ և Չինաց դեսպանը 1879ին դաշինք մը ստորագրեց որով Քուլճա նահանգին հիւսիսային մասը կը մնար Չինաց և հարաւայինը Ռուսաստանի։ Չինաստան ուրացաւ իր ներկայացուցչին անհրաման ստորագրածը և դեսպանը հազիւ ազատեցաւ գլխապարտութենէ։ Յամին 1880 Պետերբուրգ հասաւ չինացի նշանաւոր քաղաքագէտը՝ մարքիզն Զէնկ և 1881ի փետրուարի դաշինք մը ստորագրուեցաւ որով Ռուսաստան կը ստանար ի փոխարէն իր ծախուց Իլլիի հովիտը. բայց բովանդակ Քաշկարի նահանգը կը թողուր Չինաստանի. Քաշկար դուռն ըլլալով ներքին Չինաստանի։

Ադուանիստան. – Մրցումն Ռուսիոյ և Անգղիոյ։

6. — Ռուսաստանի այս աշխարհակալութիւնք զինքը հասուցեր էին մինչեւ Ադուանիստան և յայտնի էր

որ յայնմհետէ խնդիր ունէր Անգղիոյ հետ որ իրեն Հնդկաստանի երկիրներուն պատուար դրած էր Հիմալայա լեռները և Աղուանիստան։ Այս երկրին նկատմամբ ամեն փոքր խօսք և քայլ իր արձագանգը ունէր ի Լոնդրա, ուր մանրակրկիտ նկատողութեամբ կը քննուէին Գաղթականութեանց պաշտօնարանին մէջ. մանաւանդ հիմա որ Ռուսաստան տիրելով Թուրքաստանի, սահմանակից եղեր էր Աղուանիստանի, որուն մօտ կը պահէր բանակ մը։

Յամին 1878ի Յուլիսի մէջ, Թուրքաստանի ընդհանուր կառավարիչը՝ զՍտոլիէտոֆ զօրավարը ղրկած էր առ Շիր–Ալի Էմիր Աղուանիստանի, բարեկամական յարաբերութիւնք հաստատելու համար. և Էմիրը Փաւշալի մէջ շքեղ ընդունելութիւն մը ըրեր էր ռուս զօրավարին հարիւր տան և հինգ թնդանօթի հարուածներով զինքը ողջունելով, մինչ պէտք էին տասուիրեք միայն։

Անգղիոյ վարչութիւնը ի Հնդկաստան չ՚ախորժեցաւ այս ընդունելութեան և փոխարքային Լորդ Լիտտոն, ինքն ալ նուիրակ ղրկեց զզօրավարն սըր Նիվիլ Չէմբրրլէյն առ Շիր–Ալի, պահանջելով որ ճիշդ այն պատիւներով ընդունուի ինչպէս Ռուսաց նուիրակը։ Էմիրը մերժեց. նա մանաւանդ մարդ ղրկեց ծանուցանելով որ թէ անձնական ճանչուորութիւնը չ՚ըլլար, անկարելի չէր որ հրացանի բռնուեր։ Սըր Չէմբրրլէյն նամակ մը տուաւ առ Էմիրը փոխարքայութեան կողմանէ և պատասխանը պահանջեց. բայց ինչպէս նախորդ նամակներուն, ասոր ալ պատասխան չտրուեցաւ։ Անգղիական կառավարութիւնը Նոյեմբեր 20ը վերջնական օր սահմանեց պատասխան մը ընդունելու, սակայն նոյն օրն
1878 ալ պատասխան չտացաւ։

Այն ատեն երեք անգղիական բանակք յառաջեցին Խացբերի անցքէն, Խորումի հովիտէն և Բոլանի ձորէն՝ Բէլուճիստանի մէջ։ Ռուսք որ ի սկզբան գրգռեր էին զԷմիրը Անգղիոյ հակառակ, տեսնելով որ այժմ խնդիրը Անգղիոյ դէմ պատերազմ մ՚էր, ձեռքերնին քաշեցին։ Էմիրը միայն կարող չէր Անգղիոյ դէմ կռուիլ, թողուց

մայրաքաղաքը և ապաւինեցաւ ի Թուրքաստան ռուս հողին վրայ. ուր սրտին ցաւէն մեռաւ քիչ վերջը, փետրուար 21ին։ Իր որդին Եաղուպ, յետ քիչ ժամանակ ընդդիմանալու Անգղիացւոց, բռնադատուեցաւ դաշինք մը ստորագրել Անգղիացւոց հետ ի Գադամաք Մայիս 26ին, որով Անգղիոյ ձեռքը կը թողուր բոլոր այն անցքերը, որովք Ռուսիոյ կրնար բացուիլ Ինդոսի հովիտը։ Անգղիա պահանջեց նաեւ Աղուանիստանի մուտքերուն հսկողութիւնը ընդդէմ Ռուսիոյ և իրաւունք ստացաւ գործակատար մը պահել Քաբուլի մէջ։ Առաջին գործակատար եղաւ երիտասարդ հազարապետն Գավանիարի որ Գադամաքի դաշանց բանակցողն եղեր էր և արդէն ծանօթ Հնդկաստանի փոխարքայութեան մէջ։ Գավանիարի համարելով որ դեսպանական պատկառելի տիտղոսը գինքը կ՝ապահովէր ամեն վտանգէ, առանց պահանորդի սկսաւ շրջիլ Աղուանիստանի մայրաքաղաքին մէջ, ուր մեծ էր ատելութիւնը Անգղիոյ դէմ։ Որ մը ամբոխը ոտք ելաւ և սպաննեց զԳավանիարի իր 67 ընկերներով։

1879

Գադամաքի դաշինքը։

Անգղիոյ գործակատարին սպանուիլը։

7. — Հնդկաստանի փոխարքայութիւնը վրէժ խնդրելու համար, Աղուանիստանի վրայ ղրկեց զՍըր Ֆրէդերիկ Ռոբըրտս զօրավարը 3000 անգղիացի և 6000 տեղացի չինացիներով։ Սըր Ռոբըրտս յետ արիւնահեղ կռիւներու, Հոկտեմբեր 21ին մտաւ ի Քաբուլ։

Սըր Ֆրէդերիկ Ռոբըրտս կը տիրէ Քաբուլի։

Եաղուպ խան որուն մասնակցութիւնը յայտնի չէր Գավանիարիի սպանութեան մէջ, աքսորի միայն ղրկուեցաւ ի Հնդկաստան և զօրավարը գրաւեց զՔաբուլ։ Սակայն չունենալով ձիաւոր գունդեր, բռնադատուեցաւ անգործ մնալու և պաշարուեցաւ աղուան գունդերէ։ Ամենն աւելի բոլոր Անգղիա և Հնդկաստան տագնապեցաւ Սըր Ռոբըրտսի և ընկերացը կեանքին համար. և մեծ ուրախութեանց նիւթ եղաւ, երբ իմացուեցաւ որ Դեկտեմբեր 25ին անգղիացի բանակ մը մտեր էր ի Քաբուլ։

Սըր Ռոբըրտսի բանակին մէջ քաղաքական կցորդը, Սըր Կրիֆֆոն ծանոյց տեղական իշխանութեանց որ

Անգղիա բացարձակապէս չէր ուզեր Աղուանիստանի միացումը Հնդկաստանի հետ. բայց զայն պիտի բաժնէր քանի մը իշխանութեանց, ինչպէս Շիր Ալիէն առաջ. դարձեալ Քաբուլի և աղուան-թիւրքիստանի էմիրք, հաստատուելէն առաջ պէտք էին իր հաւանութիւնը ստանալ։

Անգղիացւոց քաշուելէն վերջը Աղուանիստան բոլորովին շփոթ կացութիւն մը առաւ. Մոհամմէտ խան՝ Կիւզնիի մէջ կ'ուզէր կառավարել, յանուն դեռ մատաղահասակ Մուսա խանի, անդրանիկ որդի փախչող խանին. Բալքի մէջ սկսաւ իշխել Շիր Ալիի եղբօր անդրանիկ որդին Աբդուրահման խան, որ տասը տարի Ռուսաց քով կեցեր էր ի Տաշքէնտ։ Հէրաթի մէջ կ'իշխէր Էյուբ խան, Շիր Ալիի որդւոց մին։ Անգղիացւոց դժուարութիւնքը շատցան և անպակաս էին թշնամութիւնք։ Հէրաթի խանը՝ Էյուբ խան, որ կը ջանար ստանալ ամբողջ Լաղուպ խանի ժառանգութիւնը, 12,000 զինուորք և 36 թնդանօթներով արշաւեց Անգղիացւոց վրայ և Յուլիս 27ին, Հելմուտ գետին վրայ, արիւնահեղ և մոլեգին կռուով մը յաղթեց անգղիացի Բրբրովս զօրավարին որ 2500 զինուոր միայն ունէր։ Պատերազմը տեւեր էր առաւօտեան ժամը իններէն մինչեւ կէսօրուան ժամը մէկ։ Բրբրովս հազիւ ՃՆացեալ զինուորներով ինքզինքը կրցաւ Գանդահար ձգել, որ հեռու էր 70 մղոն։ Զինուորաց մաս մ'ալ անապատնեռուն մէջ մեռաւ քաղցէն և ծարաւէն։ Թշնամին մօտեցաւ Գանդահարի։

Այս պարտութեան լուրը մեծապէս յուզեց Անգղիոյ ժողովուրդը, որ կը խիթար միանգամայն Գանդահարի անկման, ուր կային 4000 անգղիա-հնդիկ պահանորդք։ Հրամայուեցաւ Սըր Ռոբըրտսի հապճեպով դիմել օգնութեան։ Բայց որովհետեւ յԱնգղիա ինկեր էր Լորդ Բիկոնֆիլդ պաշտօնարանը և յաջորդեր էր Գլադստոն ազատական պաշտօնարանը, որ սահմաներ էր քաշուիլ յԱղուանիստանէ, նա մանաւանդ յԱնգղիա կոչել զլորդ Լիտտոն Հնդկաստանի փոխարքային, պատճառ և փա-

փագող այդ աշխարհակալութեան, և տեղը ղրկել զԼորդ Ռիպպոն, անոր համար Սրբ Ռոբբրտս չուեց ի Գանդահար. միանգամայն հրաւիրեց զԱբդուրահման խանը, բարեկամ Անգղիոյ, գալ Նստիլ ի Քաբուլ։

Սրբ Ռոբբրտս Օգոստոս 8ին մեկնեցաւ, հետը ունենալով 2630 անգղիացի և 7150 անգղիա-հնդիկ զինուորք։ Հրամայեց Ստիւար զօրավարին մտնելու խայբէր կրճէն յԱղուանիստան և ինքն ալ 20 օրուան մէջ 500 մղոն կտրելով, յետ անցնելու Ախիբի անցքը որ բարձր է 2750 մէջը, հասաւ Գանդահար, որուն պաշարումը վերուցեր էր Լյուր խան և քաշուեր էր Արգանդար գետին քով։ Այդ տեղ յարձկեցաւ Թշնամւոյն վրայ Սեպտեմբեր 1ին, և զանիկայ բոլորովին ջախջախեց և ցրուեց։ Յաղթութեանը յաջողութեան մեծ մասն ունեցեր էր Բաքըր զօրավարին յանկարծական դարձուածք մը։ Այս յաղթութեամբ Անգղիացիք ձեռք բերին Բրբրովս զօրավարին պարտութենէն գերուած երկու թնդանօթքը, ուրիշ 34 թնդանօթք եւս։ Կորանցուցին 248 անձինք, յորս հազարապետ մը և գնդապետ մը։ Իսկ թշնամւոյն կորուստը քանի մը հազարի հասնուած է։

Սրբ Ռոբբրտս թողուց զԱղուանիստան՝ Անգղիա դառնալու համար[1], և հոն իշխան անուանեց զԱբդուրահման. միանգամայն քովը դնելով գործակատար մը Հընդկաստանի փոխարքայութեան. որ կառավարող մը պիտի ըլլար խանին, ընդդէմ Ռուսիոյ ազդեցութեան։ Եւ զխանը բոլորովին բաժնելու համար ապագայ ո՛ր և է բարեկամութենէ մը Ռուսիոյ հետ, հաստատուն թոշակ մը սահմանեց անոր։

Սրբ Ռոբբրտս կ'ապատէ զԳանդահար։

1880

---

1. Սրբ Ֆրէդերիկ Ռոբբրտս երբ դարձաւ յԱնգղիա, ամէն կողմ ճանաչեցին շքեղ ընդունելութիւններ դուսաւ։ Լոնդրայի լորդ քաղաքապետը, Կիլտ հալի մէջ իրեն պատուոյ դաշտին մը նուիրեց և Լոնդրայի քաղաքացիութիւն։ Անգղիա ի նշան «ազգային երախտագիտութեան» 312,500 ֆրանքաց վարձատրութիւն մը ըրաւ Լյուր խանի յաղթողին և զԳանդահար ազատողին։

1881 Փետր. 17։

Այս արշաւանքները դէպի Աղուանիստան, որ Անգղիոյ հարիւրաւոր միլիոն ֆրանքներու ծախքի պատճառ եղեր էին, նպատակ ունէին միայն՝ զՀնդկաստան, զոր լորդ Ռիքոնսֆիլդ կայսրութիւն հռչակեր էր 1876ի և զՎիկտորիա թագուհին՝ կայսրուհի Հնդկաց, ազատել Ռուսիոյ ապագայ որ և է սպառնալիքէ մը և Հիմալայա լեռները և Աղուանիստանը միշտ անանցանելի պարիսպներ պահել ընդդէմ Ռուսիոյ փափաքներուն։

Սքոբէլէֆ զօրավարը կը տիրէ Կէօք Թէպէի։

8. — Ռուսք չյաջողելով Աղուանիստանի մէջ առաջին տեղին ունենալ, իրենց աշխարհակալութիւնքը ուրիշ կողմ դարձուցին, ուր Անգղիա նպատակ մը չ'ունէր, և Թիւրքմէն ասպատակները պատժելու պատրուակաւ, ուզեցին տիրել Կէօք – Թէպէի և Մէրվի։ Բայց զօրավարն Լոմաքին որ ղրկուած էր այդ նպատակաւ, Դէնկիլ–Թէպէի քով յաղթուեցաւ և կորսնցնելով 500 անձինք, յետս նահանջեց։

1879 Սեպտ. 9.

Լոմաքին զօրավարին տեղ ղրկուեցաւ զօրավարն Սքոբէլէֆ որ ամեն արթնութիւն ի գործ դրաւ Թիւրքմէններուն յանկարծական յարձակմունքները չունենալու, և առ այս օգնեց իրեն իր մանրամասն ծանօթութիւնը երկրին տեղագրութեան[1], որով կրցաւ պաշտպանուիլ մինչեւ որ Փուրոպատքին հազարապետը նոր գունդեր բերաւ օգնութեան։ Այն ատեն կանոնաւորապէս պաշարեց զԿէօք – Թէպէ և յետ քսան օրուան, 1881ի Յունուար 24ին ընդհանուր յարձակմամբ առաւ զայն արիւնահեղ մոլեգին կռուէ մը վերջը, յորում Թշնամին կորսնցուց, կ'ըսեն, 8000 անձինք[2] և իր հրանօթքը։ Սքոբէլէֆ յաղթանակաւ մտաւ ի Կէօք–Թէպէ։ Յունուար 30ին ալ Փուրոպատքին տիրեց Ասիաբատի։

---

1. Զօրավարն Սքոբէլէֆ 1871ի ծպտեալ, Թիւրքմէնի զգեստով պտտած և ուսումնասիրած էր այդ տեղերը։

2. Այս կռիւներուն մէջ երբէք պաշտօնական Թիւ մը չկայ խանելու կողմանէ սպանուող զինուորաց։ Հաւանական է որ Թիւերը բարդուած ըլլան, և փոխադարձ նուազեցուցած իրենցը։

Ջօրավար Սքոբէլէֆի բովանդակ հոգն եղաւ այդ երկիները խաղաղելու և բարգաւաճ վիճակի մէջ դնելու. լաւ գիտնալով որ այդ է միայն աշխարհակալութեան մը ապահովութիւնը և շարունակութիւնը։ Քրիստոնեայ աշխարհակալութեան մը համբաւէն 16,000էն աւելի Թիւրքմէն ընտանիքներ երկիրը թողուցած և անապատները փախած էին։ Սքոբէլէֆ հանգստութեան խոստմունքներով կրցաւ յաջողիլ զանոնք ետ դարձնել իրենց երկիրները. և Թիւրքմէնք ի նշան գոհութեան, հպատակութեան նուիրակութիւն մը ղրկեցին ի Պետերբուրգ։

Ռուսք կը տիրեն Մէրվի։

Կէօք-Թէպէի առմամբ Ռուսաց բացուած էր Մէրվի համբան։ Մէրվ Ասիոյ պատմութեան ամենէն նշանաւոր քաղաքներէն մին, իր փայլը ստացած կը համարուի Մեծին Աղեքսանդրի ժամանակէն։ Յետոյ անցաւ Պարթեւաց ձեռքը և Կրասոսի 10,000 զինուորքը հոս բերուած կը համարուին։ Նշանաւոր եղաւ նաեւ Սասանեանց և Արաբացւոց ժամանակ և յետինքս զայն Խորասանի մայրաքաղաք ըրին։ Յետոյ կարգաւ անցաւ Մոգոլներու, Պարսիկներու և Խաներու ձեռք. և իր անկումը կը սկսի ԺԸ դարէն։ Երբ Ռուսք դիմեցին տիրելու, հազիւ 10,000 բնակիչ ունէր, յորոց 1500ը Հայք։ Քաղաքը Ռուսաց դէմ դնելու վիճակի մէջ չէր, որով 1884ի Յունուար 31ի անձնատուր եղաւ և Ռուսք ապագային մէջ ջանացին պտղաբեր ընելու անոր արգաւանդ ոսպիները[1]։

Ռուսաց դաշինքը Պարսից հետ։

9. — Ռուսաց սահմանագլուխը ընդարձակուեր և ապահովուեր էր նաեւ Պարսկաստանի կողմէն, մանաւանդ յետ այցելութեան Նասրէտտին Շահին, յամին 1878ի ի Պետերբուրգ, Եւրոպայէ դարձած ժամանակ։ Կայսրը, կայսերական ընտանիքը և բովանդակ ժողո-

---

1. Թայմս լրագիրը 1885, Մայիս 26ի թուով կ'ըսէ որ Մէրվի ամբողջ վաճառականութիւնը Հայոց ձեռքն է և կը համրէ վաճառականութեան նիւթերը։ Բէրթըլօ՝ Հանրագիտական Բառարանին մէջ կ'ըսէ որ «Հայք տարին 4 միլիոն ռուպլի աւելիէ առուտուր ունին ի Մէրվ»։ Հտ. 23։

վուրդը շքեղ ընդունելութիւն ըրին իրեն։ Ռուսք բաց ի Կէօք–թէպէէ և Ալխասապատէ, ունեցան ուրիշ կարեւոր դիրքեր ալ Խորասանի սահմանագլխուն վրայ. և իրենց դէպ ի արեւելք և հիւսիս յառաջելուն արգելք չ'եղան ոչ Բիքոնսֆիլդ և ոչ Դլադստոն պաշտօնարանները։ Ռուսք հասած տեղերնին անմիջապէս կը ջանային հարթել ճամբաները և երկաթուղի հաստատել. այսպէս իրենց ամեն մէկ քայլին, յառաջադիմութիւնը և վաճառականութիւնը միարան կ'ընթանային։

Ցամին 1875ի Ն'ապոնի հետ բանակցութեամբ մը ստացաւ Սախալին կղզւոյն նաեւ Ն'ապոնի մասը, տալով փոխարէն Քուրիլեան կղզիներէն զոմանս և ամբողջ Սախալինը իրեն եղաւ։

Դարձեալ Ամերիկայի մէջ ունեցած գաւառները վաճառեց Միացեալ Նահանգաց։ Ադրէն Պէքինի դաշամբ 1860ին, իրաւունք ստացեր էր գետոյին հուսարկութեան Ամուրի և Ուսսուրիի մէջ, որով իր նաւերը կրնային Ռուսաստանէ ուղղակի երթալ ի Սան Ֆրանչիսքօ։

Միացեալ Նահանգաց հետ։

Անդրկասպեան երկաթուղւոյն գաղափարը։

10. — Այս աշխարհակալութեան բնական հետեւանք մ'էր զանոնք մայր հայրենեաց մօտեցնելու գաղափարը, այսպէս դիւրընցնելով անոնց յառաջադիմութիւնը և պահպանութիւնը. և ահա այն ատեն ծնաւ Անդրկասպեան երկարուղւոյն հսկայական գաղափարը, 30,000 քիլոմէդր երկայնութեամբ։ Առաջին անգամ դորա իրագործումը առաջարկեց Ֆէրտինանդ Լէսէպս, Սուէզի ջրանցքին հոչակաւոր հեղինակը։ Յաջորդեցին այլ և այլ գծերու ծրագիրներ։ Նախ մտածուեցաւ վաճառականական տեսակէտով մը, երկաթուղին կապել և միացնել Հնդկաստանի հետ, անցնելով Սմրղանտէ, Բուխարայէ և Պէշաւէրէ։ Սակայն այս ծրագիրը Անգլիոյ կողմանէ ընդունելութիւն չգտաւ։ Ռուսաստան որ քիչ վերջը սկսեր էր ընդարձակուիլ Սիբերիոյ կողմանէ դէպ ի Մանչուրիա, աւելի մեծագոյն գաղափար մը յղացաւ։ Փափագեցաւ երկաթուղի մը որ զՊետերբուրկ կապէ խաղաղական ովկիանոսի հետ, բանալով իրեն դիմաց ազատ ծով մը։ Այս երկաթուղւոյն իրագործումը կը հա-

մարէր Ռուսիա ոչ միայն սպառնալիք մը Անգղիոյ, իր մշանջենաւոր նախանձորդին յԱսիա, այլ և միակ միջոց իր գերիշխանութեան ներքեւ առնելու զՉինաստան, Ճապոն և Կորէա։ Սակայն ապագայն ցրցուց իր հաշիւնեռուն որքան վրիպակ ըլլալը. և իր աշխատած ժամանակը՝ ունենալու Արեւելից ծայրը այդ գերիշխանութեան մականը, արդէն ուրիշները լռելեայն կ՝աշխատէին յառաջադիմութեան ճամբով զայն իր ձեռքէն մշանջենաւորապէս յափշտակելու։

Ռուսիոյ քաղաքականութիւնը յԵւրոպա Թուրք–ռուս պատերազմէն առաջ։

11. — Որչափ որ Ռուսաստան ամենամեծ կարեւորութիւն մը տուեր էր ասիական խնդրոց և գործունեայ դեր մը ստանձներ էր, զոհելով իսկ մեծամեծ գումարներ և շատ կեանքեր, ընդհակառակն անտարբեր և ամփոփուած դեր մը կատարեց երկար ժամանակ Եւրոպիոյ քաղաքականութեան մէջ։ Յամին 1864, Թողուցեր էր որ Պրուսիա ջախջախէ զԴանիմարքա և առնու Լլբայի Դքսութիւնը։ Յամին 1866 փոյթ չէր ըրած որ Պրուսիա Սադովայի յաղթութեամբ դուրս հանէ զԱւստրիա Գերմանական Դաշնակցութենէ և գահազուրկ ըլլան Հանովրի, Նասաւի և Կասսէլի իշխող Տունները, որոնք քիչ շատ ազգակցութեամբք կապուած էին Ռոմանոֆ Տան հետ. այլ և անտարբեր դիտեց Դարմշտատի, Բադէնի և Վիւրտէմբէրկի խոնարհիները, որոնք կայսրուհիներ տուած էին Ռուսիոյ. և ձեւանայ զօրաւոր Գերմանիա մը որուն զինուորական զօրութիւնը տարածուի Բալտիկի, Վիստուլայի և Դանուբի վրայ, ի փնաս ռուսական շահերու։ Յամին 1870 Ռուսիոյ ձաները և Բրուսիոյ թագաւորը տեսակցեցան յԷմս. և Յուլիս 9ին, Կորչաքով իշխանը, Դիւանապետ Ռուսիոյ, կ՝ըսէր առ դեսպանն Անգղիոյ որ «Ռուսիա բնաւ չէր տագնապեր Բրուսիոյ զօրանալէն»։ Կորչաքով որ իր կերպին, ոգւոյն և շրջաբերականներուն ընտիր ոճոյն մէջ միշտ պահեց հին դասական ոճը, վրան աւելցնելով նորը, Ռուսիոյ այլափոխութեան ժամանակ ամենակարեւոր պաշտօնեայ մ՝էր։ «Հին դիւանապետութեան նախապաշարումներէ ազատած, իր գործոց մէջ մասնաւոր ա-

Իշխանն Կորչաքով դիւանապետ Ռուսիոյ։

տելութիւն մը ունէր առ Աւստրիա. և Բիսմարքի հետ ունեցած սերտ կապը, պատրաստութիւն մ'էր երկու պետութեանց մէջ հաստատուելիք բարեկամութեան. և այս էր իր քաղաքականութեան լիսեռը։ Յայդմ ինքը երկու զօրութիւն կը գտնէր. իր հակակրութեամբ առ Աւստրիա, կը գոհացնէր ռուս ժողովրդեան զգացումը և կը շողոքորթէր նորա ազգային ոգին. իր բարեկամական յարաբերութեամբ Բէռլինու պաշտօնէին հետ, կը համաձայնէր ձարին զգացմանցը առ թագաւորն և ապա առ կայսրն Գուլիէլմոս, մօրեղբայր ձարին։ Այսպէս կրնար պարծենալ սիրելի ըլլալու թէ ազգին և թէ ձարին[1]»։

Երբ յամին 1870 Լմսի տեսակցութենէն քիչ վերջը, Պրուսիա յաղթական, վերիվայր ըրաւ Եւրոպիոյ քաղաքականական հաւասարակշռութիւնը, Ռուսիա իր ազդեցութեամբը կրցաւ բռնել հանդարտ զԱւստրիա և զԴանիմարքա, որոց տակաւին նոր վէրքերը, խորհուրդ կրնային տալ տագնապներ յարուցանելու պատերազմին դեռ անորոշ վայրկեաններուն մէջ՝ և այսպէս վրէժ խնդրել կրածնուն։ Այս երկու ազգերն ալ բռնադատուած էին Ռուսիայէ, բարեհայեաց չէզոքութիւն մը ունենալու։ Երբ Սեպտեմբեր 3ին՝ ձարը լսեց Սէդանի յաղթութիւնը, ուրախութեան բաժակ քամեց իր մօրեղբօրը կենաց և գաւաթն ալ ջաղջախեց։ Երբ 1870ի Սեպտեմբերի վերջերը թիէր Ռուսիոյ մայրաքաղաքը հասաւ, ձարին միջնորդութիւնը խնդրելու, բոլորովին ցուրտ գտաւ զԱղեքսանդր Բ. և այդ ցրտութիւնը բաւական եղաւ նոյնպէս անտարբեր ընելու զԱւստրիա, զԱնգղիա և զիտալիա։ Ռուսիա, այս հակայական պատերազմէն որով այնքան օգտուեցաւ Գերմանիա, մէկ միայն շահ մը պահանջեց՝ վերաքննութիւն մը 1856ի Պարիսու Դաշանց Բ Յօդուածին, որ չափ կը դնէր Սեւ Ծովուն մէջ իր ունենալիք ծովային զօրութեան։ Դեսպանաժողով մը

1. Կասսոն Կրէհանժ. Ռուսաստան ժամանակակից. Գլ. Ը։

հաւաքուեցաւ ի Լոնդրա որ ընդունեցաւ Իուսիոյ պա-
հանջած վերաքննութիւնը, որ էր արդէն հաւանութիւն
մը։ Իուսաստան յամին 1871 Յունուար 24ի ընդու-
նեցաւ գերմանական կայսրութիւնը և նշաններ ղրկեց
յաղթական բանակին զօրավարներուն։ Արդէն Ֆրէդե-
րիկ Թագաժառանգ իշխանը և Ֆրէդերիկ Կարլ իշխանը,
ֆէլտմարշալախտք էին ռուսական բանակին։ Դաղղիոյ
յաղթուելէն վերջը եղաւ՝ որ Իուսիա պատրաստեց ե-
րից կայսերաց ըսուած համաձայնութիւնը. տեսակ մը
վեհագոյն ժողովք՝ յԱրեւելս և յԱրեւմուտս ազգաց
մէջ ծագած խնդիրները լուծելու համար։ Հետեւեալ
տարին Գերմանիոյ կայսրը գնաց ի Պետերբուրգ իւր
այսքան հաճոյականար քեռորդին ողջունելու և շարու-
նակեցին ուրիշ փոփոխակի այցելութիւնք, որոնք յայ-
տարար էին երկու թագաւորաց և թագաւորող Տանց
մէջ փոխադարձ սերտ բարեկամութեան։

12. — Եւ սակայն այս բարեկամական յարաբե-
րութիւնք, բոլորովին անհամեմատ շահեր առաջ բե-
բեր էին երկու ազգերուն։ Իուսաստան, ինչպէս յիշե-
ցինք, կրցեր էր ստանալ Պարիսու Դաշանց Բ յօդուա-
ծին բարձումը, իսկ Գերմանիա օգտուելով այսպիսի
զօրաւոր և այլոց վրայ ազդեցիկ բարեկամութենէ, տի-
բեր էր գաւառներու, ունեցեր էր պատերազմական ա-
մուր նաւահանգիստներ, ահեղ բանակ մը և եւրոպա-
կան գերիշխանութիւնը։ Ի սկզբան Իուսիոյ քաղաքա-
կանութիւնը չնախանձեցաւ, բնաւ խէթ մը չզգաց, մին-
չեւ այն ատեն, երբ տեսաւ որ գերմանացի յաղթական
տարրը, մոռնալով իր բարեկամութենէն քաղած պտուղ-
ները, ձգտումներ կը յայտնէ նաեւ ռուսահպատակ
գերմանացի կամ գերմանախօս ժողովրդոց նկատմամբ,
և որոց փոխադարձ համակրութիւնը, զարմանք մը չէր
և շատ բնական։ Այն օրուընէ զգաց Իուսաստան որ
չափազանց օգներ էր իր բարեկամին ի վնաս իւր իսկ
անձին, և իր լռութեամբը կազմուած գերմանական գե-
րիշխանութեան հարկ էր հակակշիռ զօրութիւն մը
փնտռել, որով և ապահովութիւն մը Իուսաստանի ա-

Դաղղիա—ռուս դաշնակցութեան մը պատճառը։

մեն երկիւղէ՝ Գերմանիոյ կողմանէ։ Այն օրուընէ ծնած էր իր մտքին մէջ Գաղղիոյ հետ դաշնակցութեան մը գաղափարը։

Բիսմարք իր սուր տեսութեամբ գուշակեց և իմացաւ Իուսիոյ քաղաքականութեան առ այդ միտումը և տագնապեցաւ, հարկ տեսաւ առաջքն առնուլ։ Ինքը համարած էր որ Գաղղիա յետ այնպիսի մեծածախ պատերազմի մը, յետ հինգ միլիար վճարման, յետ զինուորականութեան խանգարման և ներքին կուսակցական կռիւներու, երկար ժամանակ պիտի չկրնար Եւրոպիոյ քաղաքականութեան մէջ ազդեցիկ և կարեւոր դիրք մը ունենալ, որով երկիւղի կամ նոյն իսկ հոգեբու նիւթ մը ըլլալ Գերմանիոյ։ Սակայն Գաղղիա փութով յաղթեր անցեր էր ամեն տագնապներէ։ Կուսակցութիւնք չկային բնաւ Ազգային Պաշտպանութեան զգացման առջեւ. և Գաղղիա մի էր, երբ խնդիրը իր էութեան և պատուոյն համար էր։ Այս ամենը ճանչնալու համար աւելի իսորատես գտնուեցաւ Կորչաքով քան զԲիսմարք։ Սա մտածեց միայն երկրորդ անգամ վրճռական հարուած մը տալ Գաղղիոյ, քանի որ դեռ վերականգնած չէր բոլորովին։ Հարկ էր պատրուակներ հնարել, և Գերմանիոյ բիսմարքեան լրագիրք այլ և այլ յօդուածներով, Գաղղիոյ զինուորական գաղտ հանդերձանքները նշմարել տուին իրր վրէժ[1] առնլու համար պարտութեան, և ձեռք բերելու Ալզաս ու Լորէնը. և իսորհուրդ կուտային Եւրոպիոյ խաղաղութեան համար զԳաղղիա անկարող վիճակի մէջ դնել։ Նոյն դիտողութիւնքը և պատճառաբանութիւնքը ըրած էր նաեւ ի Պետերբուրգ Գերմանիոյ դեսպանը Իատովից, առ դեսպանն Գաղղիոյ Պ. Կոնտո Բիրոն։

Աւելորդ է ըսել որ Գաղղիա այս վիճակին մէջ կրնար արդեօք կրկին պատերազմի մը փափագիլ. որով և մեծապէս տագնապեցաւ և իր դեսպանին միջոցաւ

1. Revanche.

դիմեց առ Աղեքսանդր Բ. որ զԴաղղիա ապահովցուց Ռուսիոյ բարեկամութեան վրայ, թէ Գերմանիա սպառնար պատերազմ մը։

Առ ժամս եւրոպական պատերազմի մը երկիւղները փարատուած կը համարուէին, երբ 1875ի Մայիսի մէջ Բիսմարք իշխանը իւր դեսպանը զիշխանն Հոհէնլոհէ ղրկեց առ Դուքսն Դը Կազ, պաշտօնեայ Դաղղիոյ Արտաքին գործոց, որ յետ բանիւք յայտնելու Գերմանիոյ տժգոհութիւնքը, նոյնը ուզեց թղթով ձգել առ Պ. Դը Կազ, որ չ'ընդունեցաւ[1]։ Դաղղիա իր դեսպանին ձեռքով, որ էր զօրավարն Լֆֆլօ, դիմեց դարձեալ առ Աղեքսանդր Բ. սա խոստացաւ երթալու ի Բէրլին և խօսելու իր մօրեղբօր հետ։ Եւ յիրաւի քիչ օր վերջը մեկնեցաւ Բրուսիոյ մայրաքաղաքը և հոն կրցաւ հասկցնել Բիսմարք իշխանին սպառնալեաց անտեղութիւնքը և խաղաղութիւնը պահպանելու պէտքը[2]։

Ռուսիոյ այս համակրութիւնը առ Դաղղիա, ուծացուցին իրմէ զԲիսմարք և գերմանական քաղաքականութիւնը. և Աղեքսանդր Բ և բոլոր Ռուսիա զայն զգայ թրքառուս պատերազմին առթիւ որ կը բացուէր քիչ վերջը, և որով Ռուսիա կը համարէր քաղել այն օգուտները Բալքաններու մէջ և ի Թուրքիա, ինչ որ իր բարեկամութեամբ ստացեր էր Պրուսիա, կեդրոնական Եւրոպիոյ մէջ։

Ռուսիա վստահ իր զօրավարայ վրայ, որոնց համար վարժարան մ'եղած էին ասիական պատերազմները, անվախ նետուեցաւ ի կռիւ։

---

1. Ֆիկարօ 1887 Մայիս 21։

2. Կոմս Շուվալոֆ, Դեսպան Ռուսիոյ ի Բէրլին, ըսած է որ Գուլիէլմոս Ա մեծապէս զարհուրեցաւ, տեսնելով այնքան մօտ պատերազմ մը. մինչ ինքը ընաւ բանի մը տեղեկութիւն չունէր։ «Լսեր կայսրը երբաւ Բիսմարք իշխանին իր լուրջ դիտողութիւնքը, նա ամեն յանցանք զինուորականաց, մանաւանդ Մոլտքէի, վրայ ձգեց»։ Աէֆրեռ Ռուսքոս Պատմութիւն Ռուսիոյ Գլ. Լ.Գ։ — Հանսօմ. Թէէր Ա. Հա. Գլ. Բ. — Իշխանն Բիսմարք և գերման զրիչք կամ կ'ուրանան կամ կը լռեն այս եղելութիւնքը։

ԳԼՈՒԽ ԺԸ.

ՌՈՒՍ ԲԱՆԱԿԸ Կ'ԱՆՑՆԻ ԴԱՆՈՒԲ ԵՒ ԲԱԼԿԱՆՆԵՐԸ

1. Ռուս և Թուրք բանակները. — 2. Պատերազմի հրատարակումը – Եւրոպական Պետութիւնք. — 3. Ռուս–Ռումէն համաձայնութիւնը. — 4. Թուրք բանակին կացութիւնը և Կ. Պոլսոյ վարչութիւնը. — 5. Դանուբի վրայ առաջին կռիւները – Երկու Թուրք մարտանաւք կ'ընկզմին. — 6. Ռումանիա պատերազմ կը հրատարակէ Թուրքիոյ դէմ. — 7. Մոնտէնէկրոյի պատերազմը. — 8. Աղեքսանդր ի Ռումանիա – Ռուսք Դանուբը կ'անցնին. — 9. Սիճիցայի անցքը – Ռուսք ի Բուլղարիա. — 10. Աղեքսանդր Բ. առ Բուլղարս–Բուլղարիոյ վարչական կազմակերպութիւնը. — 11. Ռուսք կը տիրեն Տիրնովայի և Նիգոպոլսոյ. — 12 Զօրավարն Դուրքօ կը տիրէ Խային Քէօյի, Քըզանլըքի և կ'անցնի Զըփքայի կիրճը. — 13. Ի Կ. Պոլիս ազդեցութիւնը – Աբդիւլ Քէրիմ և Ռէդիֆ փաշայք պաշտօնանկ կ'ըլլան. — 14. Մէհէմէտ Ալի ընդհանուր հրամանատար – Սիւլէյման փաշա Զըփքա կը դրկուի։

Ռուս և Թուրք բանակները։

1. — Աղեքսանդր Բ պատերազմը պաշտօնապէս հրատարակելէն վեց ամիս առաջ, գուշակելով իրաց ընթացքը, միանգամայն թերեւս զինուորական խմբին ազդեցութենէն մղուած, որ կը վառէր պատերազմելու փափագէն, հրամայած էր 1876ի Նոյեմբեր 13ի, երկու մեծ բանակներ կազմել՝ Եւրոպական և Ասիական։ Առաջինին կեդրոնը պիտի ըլլար հարաւային–արեւմտեան Ռուսաստանի Քիշնէֆ քաղաքը. և երկրորդին՝ Հայաստանի սահմանագլուխը գտնուող, մօտ Թուրք սահմանագլխոյն, Աղեքսանդրապոլ քաղաքը։

Քիչ ատենուան մէջ 200,000 զինուորք հաւաքուեցան ի Քիշնէֆ, առնուելով Ոտեսսայի, Խարքովի, Քիէվի զօրաբաժիններէն. և ընդհանուր հրամանատար կը նշանակուէր կայսեր եղբայրը՝ մեծ դուքսն Նիկոլա Նիկոլայէվիչ, և սպայակուտին գլուխ զօրավարն Նէբոքոչինսքի։ Ամբողջ բանակը երկու մասի բաժնուած էր՝ Բանակ պատերազմող և Բանակ պահեստի։ Պատերազմող բանակին նշանաւոր հրամանատարքն էին զօրավարքն Ռիմմէրման, Վաննովսքի, Շաքովսքոյ, Քրիւտնէր, Ռատէցքի և Սքոբէլէֆ (հայր և որդի) և Թագաժառանգ իշխանը։

Իսկ ասիական բանակին անուանական ընդհանուր հրամանատարն էր՝ Մեծ դուքսն Միքայէլ Նիկոլայէվիչ, բայց գործող հրամանատարն էր զօրավարն հայազգի՝ Լորիս Մէլիքով, որ կը հրամայէր նաեւ զօրաբաժնի մը։ Ուրիշ երեք զօրաբաժիններու կը հրամայէին զօրավարքն Դէվէլ, Արշակ Տէր Ղուկասով և զօրավարն Օքլոբճօ։

Թուրքաց պատերազմող բանակը յԵւրոպա 150,000 զինուորէ բաղկացեալ կը համարուէր, որուն ընդհանուր հրամանատարն էր Աբդիւլ Քէրիմ փաշա և իրեն հրամանին ներքեւ էին Ահմէտ Էյուբ փաշա՝ հրամանատար Զայչարի, Օսման փաշա՝ հրամանատար Սիլիստրէի, Սէլիմ փաշա՝ Ռուսճուքի. և զօրաբաժնի հրամանատարք Թահիր փաշա, Ֆազլը փաշա, Հալիլ փաշա, Ռաշիտ Հիւսնի փաշա, Իսմայիլ Քիամիլ փաշա և Ազիզ փաշա։ Ասոնք էին Դանուբի բանակին հրամանատարք։ Կար դարձեալ Ներբիոյ բանակը և Ալբանիոյ բանակը 30,000 զինուորք, որոց կը հրամայէր Տէրվիշ փաշա։

Ռուսիոյ թէ հետեւակը և թէ ձիաւորը ինչպէս նաեւ հրանօթք անհամեմատ աւելի էին քան զԹուրքացը. բայց Թուրքաց ալ նաւատորմիղը թէ թուով և թէ զօրութեամբ վեր կը համարուէր քան զռուսացը։ Ինանօթ է ամենուն Ուլքան Աբդիւլ Ազիզի մեծ փափագը, իր թագաւորութեան վերջին տարիներուն մէջ, ընտիր զրահաւորներ ունենալ. որոց համար մեծամեծ գումարներ ծախսեց և որոնք Դոլմա Բահչէի դիմաց միշտ շարուած

կեցան։ Իսկ Ասիոյ Թրքական բանակին հրամանատարն էր Ահմէտ Մուխթար փաշա 100,000 անուանական զինուորով։ Օսմանեան բանակը թէ յԵւրոպա և թէ յԱսիա ունէր նաեւ օգնական անկանոն պաշիպոզուք գունդեր։

Պատերազմի հրատարակումը և Եւրոպական պետութիւնք։

2. — Աղեքսանդր Բ մեկնեցաւ Պետերբուրգէն Ապրիլ 20ին և երեք օր վերջը հասաւ բանակը ի Սիրսուլա. իր հետն ունենալով թագաժառանգ Աղեքսանդր իշխանը, զօրավարն Միլիուտին, պաշտօնեայ պատերազմի և Իգնատիէֆ զօրավարը՝ Թրքառուս պատերազմին գլխաւոր պատրաստողն։ Ապրիլ 24ին կայսրը ընդհանուր զօրահանդէս մը կատարեց ամենայն շքեղութեամբ. հանդէսէն վերջը իջաւ ձիէն, թմբուկները հնչեցին աղօթքի նշանը և ձարը, սպայակոյտը, բոլոր զօրավարք, սպայք և զինուորք գլուխնին բացին, և Քիշնէֆի եպիսկոպոսը իր եպիսկոպոսական զգեստները հագած, կարդաց պատերազմի հրատարակութիւնը, յորում նախ կը պատմէր Բալկանի քրիստոնեայ ժողովրդոց կրածը, կայսեր ջանքը անոնց բարօրութեան համար, առ Բարձրագոյն Դուռը եղած բարեկարգութեանց առաջարկը, անոնց մերժումը և Ռուսիոյ պատերազմի դիմելը « արդարութիւնը պաշտպանելու համար »։ Այս ընթերցման ժամանակ Աղեքսանդր Բ յուզեալ կ'արտասուէր, անշուշտ մտածելով նաեւ ըլլալիք արիւնահեղութիւնքը և պատերազմի աղէտքը։ Հասարակաց աղօթքէն վերջը, ձարը հրամայեց ամենուն ծնրադրել և ընդունիլ եպիսկոպոսին օրհնութիւնը. յետոյ կայսրը կրկին և կրկին գրկեց իւր Նիկոլա եղբայրը որ բանակներուն գլուխն էր։ Ապա կարդրցուեցան ընդհանուր հրամանատար Նիկոլա մեծ դքսին հրամանները՝ սահմանագլխէն անցնելներէն վերջը ժողովրդոց հետ վարուելու մասին. պէտք էին յարգելու անոնց անձինքը և սեպհականութիւնքը։ Կայսրը ողջունեց զօրավարքը, սպայք և զինուորքը և յետոյ քաշուեցաւ դէպ ի Քիշնէֆ, մինչ գունդերէն ոմանք անմիջապէս ուղեւորեցան դէպ ի Ռումանիոյ սահմանները։

ի Կ. Պոլիս եւս հասարակաց աղօթքներ եղան Ս. Սոփիայի մէջ, պատերազմի հրատարակուելուն առթիւ. և Սուլթանը հրատարակութեամբ մը ծանոյց որ պատերազմին աղետից պատասխանատուութիւնը կը ձգէր Ռուսիոյ վրայ։ Արդէն « Կայսերական իշխանութիւնը համոզուած է որ Բոսնիոյ, Հերձէգի և Բուլղարներէն բնակեալ վիլայէթք ապստամբած էին համալսաւ ընկերութեան գրգռմամբ, որոնք կազմակերպուած և վճռուած են Ռուսիայէ ». որ « Սերբիա և Մոնտէնէգրո իրենց տիրոջը դէմ զէնք առին Ռուսիոյ ուղղակի դրդեւովը և երկու տարիէ ի վեր կայսրութեանս ամէն ազգէտք Ռուսիոյ յայտնի և ծածուկ գրգռմունքներէն առաջ եկած են »։ Կը վերջացնէր իր խօսքը որ « Թուրքիա պատրաստ է կռուիլ և մեռնիլ իր անկախութեան համար »։ Կ. Պոլսոյ յոյն և հայ պատրիարգները և ուրիշ կրօնական պետեր, եկեղեցւոյ մէջ և լրագրաց միջոցով յորդորեցին ժողովուրդը հաւատարմութեան և պարտուց կատարման առ Սուլթան[1]։

Եւրոպիոյ Պետութիւնք որոնք չէին կրցած պատերազմին առջեւը առնուլ, ջանացին որ պատերազմը գոնէ սահմանափակ մնայ Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ, անոր համար ամենն ալ հրատարակեցին որ իսկոյն չեզոքութիւն պետի պահէին։ Անգղիա միայն կը վերապահէր միջամտելու եթէ յանկարծ իր շահերը այնպէս պահանջէին. և մանաւանդ չէր կրնար ընդունիլ որ Ռուսիա ո՛ր և իցէ փորձ մը ընէ Սուէզի ջրանցքին վրայ։ Կորչաքով իշխանը նամակով մը առ Կոմսն Շուվալոֆ ի Լոնդրա, իմացուց որ թէպէտ Եգիպտոս մասն կը կազմէր Թուրքիոյ ամբողջութեան և անոր գինուորք Թուրք բանակին մէջ զէնք կը կրէին. այսու հանդերձ Ռուսիոյ վարչութիւնը Սուէզի ջրանցքը համաշխարհական գործ մը կը նկատէր և պիտի չփորձէր ո՛ր և է արգելք մը։ Ցուցեցաւ եւս խնդիր մը թէ արդեօք Դանուբ

---

1. Ներսէս Վարժապետեան պատրիարգինը Մասիս 1877 Ապրիլ 16։

գետը չէր կարելի չէզոք նկատել։ Սակայն վճիռ մը չելած արդէն կռիւը սկսեր էր Դանուբի վրայ։

Ռուս–Ռումէն համաձայնութիւն. – Ռուսք կ'անցնին Պրուիթ.

§3. — Ռուսիոյ եւրոպական բանակը չէր կրնար մտնել ի Թուրքիա առանց կռիւելու նախ Ռումանիոյ հողը. որ թէպէտ 1856ի դաշանց համեմատ ինքնավարութիւն մը ստացած էր սեպհական իշխանով մը, այսու հանդերձ հարկատու էր Թուրքիոյ և անոր ամբողջութեան մաս մը։ Անոր համար հազիւ Ռուսիոյ ներկայացուցիչը մեկներ էր ի Կ. Պոլսոյ, Թուրքիոյ Արտաքին Գործոց պաշտօնեայն Սավֆէթ փաշա, ծանուցագրով մը յանուն Սուլթանին, հրաւիրեց զԿարոլոս իշխանը, ըստ Պարիսու դաշանց 26ի յօդուածին, հոգալ երկրի պաշտպանութիւնը, խորհրդակցելով Աբդիւլ Քէրիմ փաշա ընդհանուր սպարապետին հետ, ընդդէմ ռուսական յարձակման մը սպառնալիքներու։

Արդէն Ռումանիոյ վարչութիւնը գուշակած էր Բ. Դրան ընելիք այս քայլը. ի կշիռ դրած էր Թուրքիոյ և Ռուսիոյ բարեկամութիւնքը, ըմբռնած էր որ չէր կարելի տհաճեցնել զՌուսիա, որ այն ատեն կրնար բռնի մտնել ի Ռումանիա և աշխարհակալուած երկիր մը համարել։ Այս տագնապին մէջ լաւագոյն համարեցաւ գաղտ համաձայնութիւն մը ստորագրել Ռուսիոյ հետ Ապրիլ 16ին, ըստ որում Ռումանիա անցք կը շնորհէր Ռուսիոյ բանակին և Ռուսիա կը խոստանար յարգել Ռումանիոյ ինքնավար կացութիւնը։ Ուրիշ յաւելուած դաշինքով մը Ռումանիա ռուս բանակին տրամադրութեան կը թողուր երկաթուղիքը, գետի նաւարկութիւնք, հեռագրատունք, թղթատունք, և բանակի մը ամեն կարեւորք, բաց ի փոքր վալաքիայէ և Բուքրէշտ մայրաքաղաքին ծառայութիւններէն։ Ռուսիոյ վարչութիւնը ամեն երկու ամիս պիտի վճարէր ոսկի դրամով բովանդակ եղած հաշիւը։

Ռումանիոյ վարչութիւնը կը համարէր որ կրնար արդարացուիլ այսպիսի դաշինք մը իբր ոչ ընդդէմ չէզոքութեան, իբրեւ բռնադատութենէ մը առաջ եկած։ Թուրքիա անգէտ այս գաղտ դաշինքին, արդէն Ապրիլ 23ին բողոքեր էր առ եւրոպական պետութիւնս ռուս

բանակին Ռումանիոյ սահմանքը մտնելը։ Նոյն բողոքը ըրած էր նաեւ Ռումանիոյ վարչութեան, զինուք դէմ կեցած չ'ըլլալուն համար։ Սակայն Պետութիւնք, որ ըստ Պարիսու Դաշանց զՌումանիա մասն կը համարէին Թուրքիոյ, ռուս բանակին մտնելը համարեցան հետեւանք պատերազմի, որով և ոչ իսկ նիւթ մը քննութեան։

Ռուսք Ապրիլ 23ին անցեր էին Պրութը Ունկէնիի մօտ. և նոյն երեկոյ արդէն ռուս ջոկատ մը մտեր էր Եաշ. Ռումանիոյ ամեն քաղաքաց և գիւղօրէից պատերուն վրայ կպցնել տալով Նիկոլա մեծ դքսին բարեկամական հրաւէրը առ Ռումէնս։ Եւ որովհետեւ գետերով բաժնուած երկրի մը մէջ հարկ էր անապարել բռնել կամուրջները, մեծ դուքսը ղրկած էր Սքոբէլէֆ[1] զօրավարը յառաջապահով, որ ճեպընթաց քայլով հասեր և տիրեր էր սահմանեալ ժամանակէն առաջ Սէրէթի վրայ գտնուող կամրջին, զոր թէ թուրք օդ հանէին, ռուս բանակը ամիսով կրնար զբաղիլ նոր կամուրջ ձգելու համար։

Ռումանիոյ վարչութիւնը այս երագութեան վրայ տագնապեցաւ մեծապէս։ Ապրիլ 16ի գաղտ համաձայնութիւնը 29ին պիտի սկսէր գործադրուիլ, յետ խօսարանին ներկայացուելու 26ին։ Վարչութեան նախագահը Պրատիանօ՝ բռնադատուեցաւ գաղտ հրաման ղրկել կուսակալաց և քաղաքագլուխներու, պաշտօնական յարաբերութիւն մը չունենալ ռուսական բանակին հետ և յորդորել ժողովուրդը թշնամութեամբ չվարուելու Ռուսաց հետ։ Միանգամայն առ երեսս բողոք մը ըրաւ առ Պետութիւնս, Ռուսիոյ, Ռումանիոյ հողը մտնելուն համար։ Այսպէս ռուս բանակը առանց դժուարութեան Մայիսի սկիզբը հաւաքուեցաւ ի Ֆոքշանի,

---

1. Բանակին մէջ երկուք էին Սքոբէլէֆք, հայր և որդի։ Հայրը տեղապահ զօրավար էր յառաջապահին, իսկ որդին, Գոխանտի դիւցազնը Լեսիա՝ հօրը զօրաբաժնին մէջ հրամանատար էր գնդի մը։

Պլոյէստի և Ճիուրճէվո։ Մայիս 5ին Նիկոլա մեծ դուքսը եկաւ անձամբ քննեց Բրայլայի, Կալացի և Ռէնի քով պաշտպանութիւնքը և յետոյ դարձաւ ի Փիշնէֆ։ Բայց այս երագ շարժումներուն յաջորդեց երկար անգործութիւն մը անձրեւներուն և ճամբաներուն վտանգաւորելուն պատճառաւ, և Թուրք բանակը այս դանդաղութենէն բնաւ օգուտ մը չքաղեց։

Աբդիւլ Քերիմի կացութիւնը և Կ. Պոլիս։

4. — Եւ յիրաւի Աբդիւլ Քէրիմ սպարապետը իր զօրաց թիւր յոյժ նուազ համարելով մտածած ծրագիրը գործադրելու համար, մնաց անշարժ պաշտպանողական դիրքի մէջ և շարունակ թղթեր հասուց ի Կ. Պոլիս, նոր գունդեր պահանջելու համար։ Սակայն գաւառներէն արդէն առնուած էին զինուորագրեալները և եւրոպացի կամաւոր զինելոց գունդը, որուն կը հրամայէր իսլամացած պրուսիացի Աբթուր բէյը, հազար անձէն անդին չ'անցաւ։ Վայրկեան մը գաղափար ծագեցաւ քրիստոնէից մէջ զինուոր առնուլ։ Յոյն և հայ պատրիարգները, իբրեւ պաշտօնական անձինք, անորոշ լեզու մը ցրցուցին, բայց քրիստոնեայ լրագիրք մեծապէս բողոքեցին որ պատերազմի ժամանակ ասանկ զինուորագրութիւն մը, քրիստոնեայքը ջարդելու տալ ըսել էր, և ինդիրը լռուեցաւ։ Հարկ եղաւ վերցնել մայրաքաղաքին վրայէն զինուոր չտալու առանձնաշնորհութիւնը, և զաբթիէները փողոցներուն մէջ սփռուելով, կրցան հաւաքել 40,000ի մօտ ամեն կարգէ գործաւորք, նաւավարք, որոնք պատերազմի դաշտը պիտի ղրկուէին։ Եւ որովհետեւ նոր բանակներ ձեւացնելու համար դրամ կարեւոր էր, Ելեւմտից միւսթէշարը Զիւհտի բէյ, ղրկուեցաւ ի Պարիս և Լոնդրա, նոր փոխառութիւն մը ընելու, թէ հարկ էր Արշիպեղագոսի կղզի մը եւս գրաւ դնելով Անգղիոյ։

Այս պաշտօնէին, որուն վրայ մատակարարական անհաւատարմութեան ծանր ամբաստանութիւնք կային, փոխառութեան մը համար ղրկուիլը, թուրք խօսարանին մէջ մեծ վիճաբանութիւն յարոյց։ Զմիւռնիոյ համարձակախօս երեսփոխանը, Իէնիշէհերլիզատէ Ահմէտ

էֆէնտի, յանդիմանեց վարչութիւնը և բարձր պաշտօնեայքը, որոնք «միայն պիտի հարստանային այդ փոխառութեամբ»։ «Մենք տուինք մեր վերջին փարան, գոչեց. մեր տղաքը սահմանագլուխն են մեռնելու ձեզի համար, ձերինները ի՞նչ կ'ընեն։ Մինչ գաւառները կը հեծեն ձեր յափշտակութիւններէն, դուք ի՞նչ նուազեցուցիք ձեր շռայլութիւններէն. անզգայ հայրենեաց ցաւերուն, դատարկապորտ կը շրջագայիք ոսկեզօծ կառքերով. և զայն փրկելու համար ոչ դրամ ինչ կուտաք, ոչ արիւն ինչ։ Մենք կը կրենք բոլոր բեռները, դուք վայելքները»։

Ամենէն վերջը դառնալով առ պաշտօնեայս գոչեց «Դոքա ալ թո՛ղ տանին փողերանոց իրենց արծաթեղէնքը։ Մենք պիտի տանք թէ մեաց բան մը, բայց պայմանաւ որ ադոնց պիտի չդպչուին և մենք պիտի հսկենք մեր յետին ունեցածին գործածութեան»։ Շարունակեց խօսքը Զիւհտի էֆէնտիի մը պէս անձ մը փոխառութեան դրկուելուն վրայ, որ եւրոպական լեզուէ բառ մը չէր գիտեր։ Երբ խնդիրը քուէարկութեան եկաւ, գրեթէ համաձայն հակառակ քուէ ընդունեցաւ Ելեւմտից պաշտօնեայն՝ Եուսուֆ փաշա. և միւսթէշարը Եւրոպայէն ետ կանչուեցաւ։ Արդէն Եւրոպիոյ Պետութիւնք միտումն չէին ցուցըներ նոր պարտքեր տալու Թուրքիոյ, քանի որ հիշդ չէր գտնուած իր նախկին պարտքերուն մէջ։ Ելեւմտից պաշտօնեայն խօսարանին մէջ ներքին փոխառութիւն մը առաջարկեց 10% շահով։ Պաշտօնարանը պնդեց այս հնարքին վրայ և Ահմէտ Վէֆիք փաշա բացատրեց որ դրամին շահը կայսրութեան մէջ պիտի մնար։ Քուէարկուեցաւ, բայց ոչ ոք վստահ էր ապահովութեանը վրայ, որով և աւելի վար ինկաւ դրամական վարկը։

Աբդիւլ Քէրիմ վարչական այս տագնապներուն մէջ, աւելի շուարած, չունենալով ոչ զինուոր և ոչ դրամ, չկրցաւ յարձակողական ծրագիր մը գործադրել և պաշտպանողական դիրքը նախադասեց Վիտինի և Շումլայի գծին վրայ մինչեւ Հիրշովա։ Իսկ Դո-

պրուսայի ճախճախուտ և ջերմոտ գիծը, ուր կային Դուլչա, Խաչա և Մաչին, սահմանեց թողուլ. հրաման տալով քաղաքապետներուն՝ այրելու քաղաքները և գիւղերը՝ երբ Ռուսք մօտենային։ Ոտար դեսպանք բողոքեցին այդ հրամանին դէմ, որովհետեւ այդ քաղաքաց մէջ կը գտնուէին իրենց հպատակ վաճառականք. սակայն լսելի չեղան։ Անգղիա և Դաղվիա ղրկեցին ի Կ. Պոլիս իրենց ունեցած դեսպանական մնայուն նաւերն, զանոնք հաւաքելու։ Իսկ տեղացիք, մեծաւ մասամբ բուլղարք, որոց համար էր այս հրամանը, որպէս զի չմիանան Ռուսաց հետ, մեկնելով իրենց տեղերէն, ինկան բաշիպոզուքներուն ձեռքը, որոնք կողոպտեցին զիրենք՝ տանելով գոյքը, եզները. աւերեցին եկեղեցիները և հարիւրաւոր անձինք սպաննեցին։ Ի զուր Դիմիտրաքի ըէյ, Ցուլչայի երեսփոխանը, բողոքեց այս սպանութեանց և աւարառութեանց դէմ խոսարանին մէջ. սահմանուեցաւ միայն որ յանձնաժողով մը ղրկուի տեղւոյն վրայ, և այսպէս մնաց խնդիրը։

Դանուբի վրայ առաջին կռիւները. — Երկու Թուրք նաւեր կ'ընկզմին։

5. — Ռուսաց մինչեւ Դանուբ հասնելով, դադրեցաւ գետային վաճառականութիւնը։ Դանուբեան համազգային Յանձնաժողովը — որ այնքան մեծամեծ գումարներ ծախսած էր գետին պաշտպանութեան ամբարտակաց համար, — ամեն ջանք ըրաւ զանոնք ապահովելու չէզոքացնելով, բայց ի զուր. ոչ Ռուսիա և ոչ Թուրքիա ուզեցին յանձն առնուլ այդօրինակ պատասխանատուութիւն մը. նա մանաւանդ Թուրքիոյ նաւատորմիղը անմիջապէս գրաւեց վաճառականական ցորենաբարձ ոտար նաւեր, պատճառելով որ անոնք Ռուսաց ձեռքը կրնային անցնիլ. և փոխարէն վճարեց թղթադրամ, որոնք ի Թուրքիա անգամ կորուստ ունէին 50 %։ Ոսմանեան նաւատորմիղը Դանուբի վրայ կը բաղկանար քսան մեծ մարտանաւերէ որոց ընդհանուր հրամանատարն էր Հոպարդ փաշա, անգղիական Ծովային զօրութեան նաւապետ, և Ամերիկայի յետին պատերազմին մէջ նշանաւոր իր յանդգնութեամբք. ուակից անցեր էր Թուրքիոյ ծառայութեան, մնալով միանգամայն սպայ ան-

գղիական՝ կէս թոշակով։ Պատերազմին հրատարակուելուն, կը գտնուէր Դանուբի վրայ, և բռնադատուելով սահմանել իր հպատակութիւնը, ընտրեց Թուրքիոյ ծառայութիւնը և աճապարեց եկաւ ի Կ. Պոլիս. ուր վարչութենէն տասը տարուան ծառայութեան համար պահանջեց 200,000 ֆրանք։ Դանձը դրամ չկար. Հոբարդ մնաց ի Կ. Պոլիս երկար ատեն, որով և Դանուբի նաւատորմղաց հրամանատարութիւնը վնասուեցաւ, պակսելով սահմանեալ ծրագիր մը և արթուն գործադրութիւն։ Մայիս 11ին Թուրք Լուրֆի Ազիզ մարտանաւը սկսաւ ռմբակոծել Բրայիլա քաղաքը։ Ռուսք հարուածներուն կը պատասխանէին իրենց մարտկոցներէն, երբ հարուած մը ինկնալով մեքենային և աշտարակաց մէջ ահաւոր պայթումով մը երկփեղկեց նաւը, սպաննելով և վիրաւորելով սպայ և նաւաստի[1]։ Լուրֆի Ազիզի քով եղած միւս նաւերը աճապարեցին փախչիլ, մինչ վիրաւորք կը լողային, տախտակաց բեկորներուն վրայ ի զուր օգնութիւն փնտռելով։ Ռուս շոգենաւակներ հասնելով հազիւ կրցան ազատել սակաւ վիրաւորք. և Դուբասոֆ տեղապահը[2], կրցաւ մարտանաւին կայմին վրայէն առնուլ օսմանեան մեծատարած դրօշակը։

Այսու հանդերձ Ռուսք ըմբռնեցին որ իրենց հարուածները գրեթէ չէին հասներ Թուրք նաւերուն, պէտք էր մօտէն կռուիլ։ Դուբասոֆ տեղապահը, հետը առած Զէստաքոֆ և Պետրով տեղապահքը, գիշերը շոգենաւակով, յետ ինը մղոն լռութեամբ նաւարկելու, մօտեցաւ Թուրք նաւատորմղին և ամենէն մեծ մարտանաւին, Հիվզի Ռահման, կողին նետեց ուժանակ մը։ Մինչ յանդուգն յարձակողք կը հեռանային, ահաւոր պայթումով բացուեցաւ մարտանաւին կողը, որ ջուր առնելով ընկղմեցաւ սպաներով և նաւաստիներով։ Երկրորդ ա-

---

1. Այս հարուածը ուղղած էր Սամոյլոս տեղապահը, որուն յետոյ Բրայլա քաղաքը հարուստ նուէրներ և քաղաքացիութիւն պարգեւեց։

2. Յետոյ ծովակալ։

ռաւօտ Դուբասոֆ դարձաւ առնլու Թուրք մարտանաւին դրօշակը, անհամար դիակներուն մէջէն։ Ի դարձին Բրայլա քաղաքը ջերմ ընդունելութիւն ըրաւ իրեն և մեծ դուքսն Նիկոլա սեղանակից ընելով երկու տեղապահները, իրենց նուիրեց Ս. Դէորգի խաչը. ուրիշ նշաններ ալ իրենց ընկերաց։

Քիչ օր վերջը ուրիշ երկու անվախ տեղապահք, Պուշքին և Լոճէնստվէնսքի, ջանացին նոյն փորձը ընել ուրիշ Թուրք մարտանաւերու վրայ Սուլինայի մօտ։ Սակայն Թուրք նաւերը այս անգամ պատրաստ գտնուելով, յանկարծ սկսան կրակ Թափել շոգենաւակներուն վրայ։ Լոճէնստվէնսքի կրցաւ փախչիլ և ազատիլ, սակայն Թուրքերը հասան Պուշքինի նաւակին, որուն մէջինները նախ ծովը նետուեցան և ապա զերի բռնուեցան։

Մայիս 7։ Այս պատահարներէն քիչ օր առաջ Վիտինի Թուրք ամրոցները սկսեր էին ռմբակոծել զՔալաֆաթ ռումէն քաղաքը, ուր կը համարէին որ ըլլայ Ռուսաց զօրաւոր բանակ մը։ Քալաֆաթի Թնդանօթները անմիջապէս պատասխանեցին Թուրքաց հարուածներուն և այն Թնդանօթներու հարուածք իրապէս կը հոչակէին Թուրքիոյ և Ռումանիոյ մէջ պատերազմը։ Ռուսք Ապրիլ 16ի համաձայնութեան համեմատ բռնեցին գետին ձախ եզերքը մինչեւ Ալութայի գետակը, և շարեցին իրենց հրանօթքը։ Այսպէս ամեն օր շարունակ ռմբակոծում մ'էր ընդ Վիտին և ընդ Քալաֆաթ, ընդ Բէքէթ և Որսովա, ընդ Ա՛իուրճէվօ և Ռուսճուք։

Ռումանիա պատերազմ կը հրատարակէ Թուրքիոյ դէմ։

6. — Պատերազմը իրականապէս սկսելով Թուրք և ռումէն հրանօթից մէջ, ի զուր էր որ ռումէն վարչութիւնը լռէր այլ եւս պաշտօնապէս հրատարակելու իր համաձայնութիւնը։ Արդէն Ապրիլ 26ին ռումէն խօսարանը հաւաքուեր էր կարդալու Կարոլոս իշխանին յայտագիրը, որով կ'իմացնէր նա՝ Ռումանիա պահպանող Պետութեանց կողմանէ իր բաղդին ձգուած ըլլալով, կ'ուզէր գիտնալ խօսարանին կամքը. աւելցնելով որ « պէտք եղած ժամանակ պիտի դիմենք հայրենեաց զաւակներուն բազկացը »։ Երկրորդ օրը սկսան վիճաբանութիւնք խօսարա-

նին մէջ Ապրիլ 16ի դաշանց ընդունելութեան վրայ. սակայն ընդհանուր վարանմունք մը կար, մեծամասնութիւնը կը վախէր պատերազմէ։ Խօսեցաւ Արտաքին Դործոց պաշտօնեայն Քոկալնիցէանս, խօսեցաւ Բրատիանս, Պաշտօնարանին նախագահը՝ որ գոչեց « Ոչ մի Պետութիւն կ'ելլէ պաշտպանելու զԹուրքիա, մե՞նք, կ'ուզէ՛ք որ պաշտպանենք »։ Դաշինքը ընդունուեցաւ 75 քուէիւք ընդդէմ 25 քուէից, սակայն միշտ այն փափագով, որ պատերազմէ խոյս տրուի եթէ կարելի է։ Ռումէնք յետ որոյ գրեթէ իրենց անկախութիւնը գտեր էին Դանուբի միւս կողմը, զբաղած իրենց երկրին յառաջադիմութեան, խաղաղ դրացիութիւն մը սկսեր էին Թրքաց հետ և պէտք մը չէին զգար պատերազմելու, եթէ Բ. Դուռը Ապրիլ 16ի դաշինքը իբր պատերազմի հրատարակութիւն մը ըմբռնած չ'ըլլար և ըստ այնմ չհրատարակէր Մայիս 2ին առ Պետութիւնս, Ռումանիոյ վարչութեան դէմ ծանուցում մը, զայն ապօրինաւոր և ապստամբ կացութեան մէջ հրատարակելով։ Ապա յաջորդեցին Քալաֆաթի և ուրիշ քաղաքաց ռմբակոծումները, որով սակաւ առ սակաւ Ռումանիոյ մէջ պատերազմ փափագող կուսակցութիւն մը ձեւացաւ հայրենեաց պաշտպանութեան համար. և Մայիս 5ին ծերակոյտը առ իշխանն Բայտազրին մէջ կ'ըսէր որ « Մեր երիտասարդ բանակը, հպարտ՝ ունենալով դիւցազներէ սերեալ գլուխ մը, գկարոլոս Ա. Հոհէնձոլլէրն, պիտի գիտնայ կատարել իր պարտքը »։ Նոյն իմաստով պատասխանեց չորս օր վերջը Իշխանը, յայտարարելով առ ծերակոյտն բանակին պատրաստ ըլլալը և արութիւնը « իր նախնեացը օրինակին հետեւելով, որոնք քրիստոնեայ քաղաքակրթութիւնը պաշտպանեցին Արեւելքի դրանց քով »։ Մայիս 10ին, Իշխանը հրովարտակով մը զբանակը երկու կը բաժնէր, իր բարձրագոյն հրամանաց ներքեւ։ Զլանիչէանս հազարապետը գլուխ կ'անուանէր սպայակուտին. զզօրավարն Լուպու՝ հրամանատար Առաջին զօրաբաժնին և զզօրավարն Աղեքսանդր Ռատոնիչ՝ հրամանատար Երկրորդ զօրաբաժնին։ Միան-

գամայն կը հրատարակէր որ օտար Պետութեանց ծառայող ռումէն սպայք իրենց աստիճանով կ'ընդունուէին հայրենեաց բանակին մէջ։ Այսպէս Ռումանիա բաց ի քաղաքաց պահանորդներէն, 50,000ի բանակ մը ունենցաւ հայրենեաց անկախութիւնը ձեռք բերելու համար։ Յետ պատերազմը ընդունուելու խօսարանին մէջ Մայիս 11ին, 58 քուէիւք ընդդէմ 29ի, Մայիս 14ին Արտաքին Գործոց պաշտօնեայն՝ Քոկալնիչէանս, ծանոյց Եւրոպիոյ Պետութեանց որ Ռումանիա Թուրքիոյ բռնած ընթացքէն բռնադատուած, կը մտնէր պատերազմող կացութեան մէջ։ Երթալով տարածուեցաւ պատերազմելու եռանդը և Մայիս 21ի խօսարանը 79 քուէիւք 81 քուէարկուաց մէջէն, հրատարակեց «Թուրքիոյ հետ յարաբերութեանց խզումը և Ռումանիոյ բացարձակ անկախութիւնը, վստահ Պաշտպան Պետութեանց արդարութեան վրայ»։

Երկրորդ օրը Բուգրէշտ մայրաքաղաքը մեծ ուրախութեան մէջ էր. ամեն կողմ կը ծածանէին ռումէնական դրօշակք։ Թնդանօթի 101 հարուածք իմացուցին ժողովրդեան որ Կարոլոս իշխանը անկէ վերջը անկախ իշխող մ'էր։ Ներակուտին և խօսարանին դիւանք պալատը երթալով, ընծայեցին իշխանին ազգին և մայրաքաղաքին մաղթանքները և իղձերը։ Ներակուտին նախագահը Դեմետր Բրատիանս աւելցուց, որ «փութով Եւրոպա պիտի ողջունէ Ձեր Բարձրութիւնը՝ Մեծ թագաւոր Ռումանիոյ»։ Իշխանը յուզուած պատասխանեց որ կը տեսնէր վերջապէս իր ըղձից լրումը և վստահ էր Եւրոպիոյ արդարութեան վրայ։ Հասաւ Պլոյէսթիէն Նիկոլա մեծ դուքսը և միաբան մայր եկեղեցին դիմեցին գոհաբանական աղօթքը կատարելու անթիւ ժողովրդեան հետ, որուն ուրախութիւնը աննկարագրելի էր։

Քիչ օր վերջը Կարոլոս իշխանը գնաց Փոքր–Վալաքիա, ուր Ռուսք մտած չէին, անձամբ տեսնելու պաշտպանութիւնքը. և Թրքաց կարկտանման թափած գնդակներուն ներքեւ խրախուսեց իր զինուորքը։ Ապա

դարձաւ մայրաքաղաքը բանակցելու ռուս սպայակուտին հետ՝ ռումէն բանակին գործադրելիք դերին նկատմամբ։

Մոնտէնէգրոյի պատերազմը։

7. — Թուրք վարչութիւնը չէր կրնար կասկածել, որ Ռումանիա այսպէս փութով հրատարակէր Թշնամոյն կողմն անցնիլը և պատերազմի պատրաստ ըլլալը։ Թուրք բանակը ի Խիկանց Թշնամի չունենալու համար, սահմաններ էր Ռուսիոյ հետ պատերազմ չսկսած, զօրաւոր հարուածով մը ջախջախել նախ մոնտէնէգրոցի բանակը և ապա բանակները միացնել Բալկանի ոտքը։ Միւլէյման փաշա 30,000 բանակով մը հիւսիսէն պիտի յարձակէր Դուկայի կիրճերէն և պիտի ազատէր Նիքսիչ, զոր պաշարեր էին մոնտէնէգրոցիք։ Արեւելքէն Մէհմէտ Ալի 25,000 զօրքով պիտի մտնէր ի Մոնտէնէգրո Մոռաչայի կողմէն և հարաւէն Ալի Սայիպ փաշա 20,000 զինուորօք Պոտկորիցայի վրայէն անցնելով պիտի մտնէր Զէտայի ձորերէն։ Այս երեք բանակը պիտի միանային Զէթինյիի վրայ և ապստամբութիւնը պիտի խեղդէին մայրաքաղաքին մէջ։

Իսկ Նիկոլա իշխանին բանակը 20,000 զինուորէ կազմեալ էր, որոց կը հրամայէին՝ ինքն իշխանը Օսդրոկի վրայ. իր անները Վուքովիչ՝ Կրիստաչի կողմը. և ի հարաւ Ալի Սայիպի դիմաց՝ Բոյո Պետրովիչ, ծերակուտին նախագահը։ Այսքան սակաւաթիւ բանակ մը անհնար էր որ համարձակեր այնքան մեծագումար բանակներու առջեւ ելլել, սակայն Մոնտէնէգրոյի լեռնային դիրքերը և դժուարանցանելի կիրճերը մեծագոյն բազմութեան մը պէտք չունէին պաշտպանուելու համար։ Պատերազմը Յունիս 1ին սկսաւ։ Տահիկք յարձակեցան հիւսիսէն և հարաւէն։ Միւլէյման փաշա չուեց դէպ ի Դուկայի կիրճերէն և յանձկեցաւ Կրիստաչի վրայ։ Պետար Վուքովիչ իր գունդերէն մաս մը ղրկած էր Կորանքոյի կողմը, որով գրեթէ իր կէս բանակով բռնադատուեցաւ կռուիլ Միւլէյման փաշայի հետ։ Մոնտէնէգրոցիք իրենց անհամեմատ նուազ թուովն հանդերձ, արուեստամբ բաղխեցան Թուրք գունդերուն հետ, սակայն

Յունիս 4։ հինգ ժամ մոլեգնաբար կռուելէն վերջը, յետ կորսնցնելու եօթը հարիւր զինուոր, բաց ի վիրաւորներէ, յորս գլխաւորներէն ոմանք, չկրցան Սիւլէյման փաշայի ընթացքը խափանել և քաշուեցան Պրէսսիէքոյի քով։ Յունիս 4ին երեկոյ, թուրք զօրավարը տիրեց Կրիստաչի դիրքերուն, ինքն ալ կորսնցնելով 500 զինուոր և շատ մը վիրաւորք։ Յետոյ Յունիս 9ին Սիւլէյման փաշա չուեց Դուկայի կիրճերը և բաղխեց ուժով։

Նիկոլա իշխանը որ դիմեր էր ոմբակոծելու գնիքսիչ, բռնադատուեցաւ թողուլ զայն և քաշուիլ դէպ ի Օսդրոկ, ուր միացաւ իրեն նաեւ Վուքովիչ։ Սիւլէյման փաշա իր յաղթական ընթացքով Յունիս 17ին հասաւ Օսդրոկի դիմաց և տիրեց անոր, անկէ չուեց դէպ ի Զէտայի ձորը ուր պիտի միանար Ալի Սայիպ փաշային հետ։ Սակայն վեց օր կռուեցաւ լեռներու մէջ, հազիւ երեք մղոն յառաջելով և հազարաւոր զինուոր կորսնցնելով. և երբ հասաւ Զէտայի ձորը, չգտաւ հոն ոչ զՄէհմէտ և ոչ Ալի Սայիպ փաշաները։ Առաջինը Մորաչայի վրայ յաջողութիւն մը չէր ունեցած և երկրորդը Մորէքանիքի քով ահաւոր պարտութիւն մը կրելով Բոյս Պետրովիչէ, թողեր էր դաշտին վրայ՝ հազարէն աւելի մեռեալ, զէնք, դրօշակ և անբաւ պաշար և քաշուեր էր Ութույի մէջ, ուր կրնար պաշտպանուիլ թուրք թնդանօթներով։ Սիւլէյման փաշա Զէտայի ձորին մէջ չհանդիպելով միւս փաշաներուն, ինքն ալ դիմեց Ութույ, ուր հրաման ընդունեցաւ իր գունդերով նաւ մտնել Բալկաններու պաշտպանութեան երթալու համար։ Մէհմէտ Ալի Վիտին պիտի երթար. և Ալի Սայիպ միայն կը մնար յԱռնաւուտլուք, պաշտպանողական կացութեամբ։

Մոնտէնէգրոցիք՝ որոնք մեծ հարուածներ ունեցեր էին Սիւլէյման փաշայէն, ուրախութեամբ լսեցին անոր մեկնիլը, Ռուսաց Դանուբը անցնիլը և դէպ ի Բալկանները չուելը։

Ալեքսանդր Բ. ի Ռումանիա. — Ռուսք կ'անցնին Դանուբը։ 8. — Երբ ռուս բանակները Ռումանիա մտնելով չուեցին դէպ ի Դանուբի եզերքները և ամրացան թնդանօթներով, ձարը մեկնեցաւ Փիշնէֆէն և Յունիս 6ին

հասաւ ի Պլոյէստի, հետը ունենալով թագաժառանգ իշխանը և Վլատիմիր և Սերգիոս որդիքը, Կորչաքոֆ իշխանը, Իգնատիէֆ զօրավարը և բոլոր իր զինուորական տունը։ Հոն եկաւ զինքը ողջունելու Իումանիոյ կարոլոս իշխանը. և ձարը իրեն փոխադարձ այցելութիւնը կատարեց Բուգրէշդ մայրաքաղաքին մէջ, ժողովրդեան անհամար կեցցէներուն և ուրախութեանց մէջ. որ այսպէս առաջին անգամ կը զգար անկախ ազգ մը ըլլալը։ Ալեքսանդր Բ Պլոյէստի դառնալով, ընդունեցաւ նաեւ Սերբիոյ Միլան իշխանին այցելութիւնը, որ եկած էր պարզապէս ողջունելու, պահելով միանգամայն խիստ չէզոքութիւնը, Աւստրիոյ բնաւ կասկածի մը նիւթ չտալու համար։ Այսու հանդերձ այս այցելութիւնը կը ստանար իր նշանակութիւնը թուրք վարչութեան առջեւ։ Ալեքսանդր Բ զՄիլան իշխանը ընդունելով մեծ պատով և սիրով, յիշեց ռուս ազգին Սերբիոյ համար ըրած զոհողութիւնքը և մշտատեւ համակրութիւնը։

Կը համարուէր որ Յունիսի սկիզբը Ռուսք պիտի կրնային անցնիլ Դանուբը. սակայն ջուրերուն բարձրութիւնը անկարելի ըրաւ զայն։ Յունիս 20ին հեծեալներէ և թնթանօթաձիգներէ կազմուած բանակ մը, որուն կը հրամայէր զօրավարն Դիմիտրիսան, հրաման ստացաւ, ինչ ալ ըլլայ, ջանալ անցնիլ գետը։ Արդէն երկաթուղով անթիւ նաւակներ և լաստեր բերուած էին անմիջապէս կամուրջ ձգուելու համար։

Յունիս 21էն 22ի գիշերը գունդերը դիմացի կողմը հսկողութիւն մը չտեսնելով, սկսան անցնիլ նաւակներով և լաստերով և ուղղուիլ դէպ ի Ռուճաքի բլուրները որ քսան քիլոմէդր հեռու էր Մաչինէ. զոր անհրաժեշտ պէտք էր ձեռք բերել կռուելու յենարան մը ունենալու համար։

Կանխապէս տեսանք որ Աբդիլ Քէրիմ Տորրուճայի այս ճախճախուտ ափանց պաշտպանութիւնը ձգեր էր սակաւ գունդերու։ Առաւօտեան դէմ Ռուճաքի բլուրներուն վրայ եղող բաշիպոզուքները տեսան խազախնե-

բուն սիւնակաց յառաջելը. իջան մոլեգնաբար Կրաբինայի ճահիճներուն մէջ և սկսան կռիւ մը ջուրերուն և տիղմերուն մէջ։ Սակայն փութով բռնադատուեցան փախչելու. և կէսօրին ռուս դրօշակը կը ծածանէր Բուճաքի բարձունքներուն վրայ, որոնք կը տիրէին Մաչին քաղաքին։ Արդէն քաղքիս քայմաքամը մէջի մահմէտական բնակիչներով մեկներ էր և կը մնային միայն քրիստոնեայք, որոնք մեծ ընդունելութիւն ըրին ռուս յառաջապահին և որ հասաւ փութով Միմմէրման զօրաբաժինը։ Մաչին քաղքով բաց էր Ռուսաց դիմաց ամբողջ Տոբրուճա նահանգը. և առանց կռուի տիրեցին Իսաչայի, Դուլչայի, Պապատաղի և Հիրսովայի. բռնեցին նաեւ զՔէօստէնճէ՝ Սեւ ծովուն վրայ և Մէճիտիէ–Զէռնովոտայի գիծը Դանուբի վրայ։ Այս ամեն տեղերէն բաշիպոզուքները ելած ժամանակ, թողուցեր էին աւերակաց կոյտեր և քրիստոնէից դիակներ, չինայելով ճամբաներնուն վրայ ո՛չ ծերոց ոչ կանանց և ոչ տղայոց, և գործելով ամենազգի անօրէնութիւն. ի զուր թուրք կանոնաւոր բանակի հրամանատարք ջանացեր էին խափանել։

Սիմիցայի անցքը. — Ռուսք ի Բուլգարիա։

9. — Սակայն Պրայլայի քովէն Դանուբէն անցքը և Տոբրուճայի ճախճախուտ եզերքը, չունէր ռազմագիտական ցանկացեալ օգտակարութիւնը։ Անոր համար մի և նոյն միջոց հինգ բանակք կը պատրաստուէին անցնիլ Սիմիցայի քովէն, ուսկից պիտի յառաջէին ի Սիսդովա և Բուլղարիոյ ներսը. և այս անցքը թուրք մարտանաւք կը պաշտպանէին, զորս հարկ էր նախ անգործ վիճակի մէջ դնել։

Կալացէն և Ճիուրճէվոյէն երկաթուղւոյ միջոցաւ բերուեցան շատ մի տորբիլակիր նաւակներ, որոց հրամանատար դրուեցաւ Նովիքոֆ նաւապետը, և ասոնք ձգուեցան Դանուբի վրայ[1]։ Սպայք և նաւաստիք կարկ-

---

1. Վշէրշակին հռչականուն պատկերահանը, իր արհեստին ապագայ նիւթեր պատրաստելու համար զացած էր կռիւը մօտանց դիտելու և տեսնելու Դանուբի անցքը։ Սքրիտլոֆ՝ տեղապահին հետ շրջենաւակի մը մէջ

տանման գնդակաց հարուածներու ներքեւ կ'աշխատէին ամեն կողմ ջրին վրայ տորբիլներ դնելու, որուն արգելք կը ջանային ըլլալ Թշնամեաց մարտանաւք իրենց հարուածներով։ Այսու հանդերձ Թուրք զրահաւորք բռնադատուեցան քաշուիլ Նիկոպոլսոյ նաւահանգստին մէջ, որով Դանուբի անցքը մեծապէս դիւրացաւ Ռուսաց համար։

Նիկողայոս մեծ դուքսը Թուրք բանակաց և նաւերուն ուշադրութիւնը հեռացնելու համար Սիմնիցայի վրայէն, Յունիս 4ին հրամայեց ռմբակոծել Զիուսճուք։ Քաղաքացիք, 50,000էն աւելի, բնաւ չէին կասկածեր այսպիսի աղետի մը, որով և գնդակներուն յանկարծակի անձրեւը փողոցներուն մէջ, սպաննեց անմեղ ժողովրդեան բազմութիւն մը։ Այս մարդասպան և աննպատակ ռմբակոծումը տեւեց հինգ օր, այրեց կործանեց հիւանդանոց, մզկիթ, տուն, խրճիթ, ինչ որ պատահեցաւ։ Ողջ մնացող արք և կանայք, ուսերնին առած իրենց տղայքը, հիւանդները և վիրաւորները, քաղքէն դուրս բլրոց վրայ ապաւինեցան։ Հոն մնացին առանց պատրաստարանի և առանց հացի։ Ոչ ոք կ'ըմբռնէր այս աղետից նպատակը և պատմութիւնը մեծապէս քննադատած է անակնկալ կերպով ռմբակոծում մը, պատճառ քաղքի մը աւերին և բիւրաւոր անձանց մահուան։

Ռուսք նոյն պատրուակաւ սկսան ռմբակոծում մը նաեւ Նիկոպոլսոյ վրայ որ տեւեց հինգ օր, Թէպէտ չունեցաւ Ռուսճուքի չափ ցաւալի հետեւանք մը։ Երբ Ռուսճուքի և Նիկոպոլսոյ Թուրք հրանօթք լռեցին և անկարող էին պատասխանելու, հասաւ Սիմնիցայի մօտ նաեւ

կը գտնուէր որ մտեցաւ Թուրք մարտանաւի մը և ուժանակ մը նետեց. սակայն չպայթեցաւ. և երբ կը փախչէին Թշնամեաց հրացանի հարուածներուն մէջէն, վիրաւորուեցան Թէ Սթրիտլոֆ և Թէ Վէրշակին։ Սթրիտլոֆ կանխաւ չէր ուզած միարան առնուլ զՎէրշակին, ըսելով որ Թէ «Ես մենիմ, հայրենիք ինձի պէս բիւրաւորներ ունի, բայց քեզի պէս նկարիչ, միայն զքեզ ունի»։ Վէրշակին վիրաց պատճառաւ չկրցաւ ներկայ ըլլալ Դանուբի անցքին։ Ապագայ ահաւոր պատերազմի մը մէջ (ի Ճապոն) նորէն պիտի ըլլար կենակից և մահակից իր բարեկամ ծովակալին։

Յունիս 27. Աղեքսանդր Բ. Հրաման եղաւ Տրակոմիրոֆ զօրավարին գիշերուան մութով նաւակներով և լաստերով անցնիլ գետը։ Սիմնիցայէն քիչ վեր կը գտնուէր Սիստովա քաղաքը և անոր մօտ Վարտէրայի գիւղը, ուր բանակած էր Թուրք վաշտ մը։ Երբ Ռուսաց այլ և այլ գունդեր արդէն անցեր էին մեծ լռութեամբ, այն ատեն միայն պահապանք նշան տուին վտանգին և փութով հասաւ ջոկատ մը որուն կը հրամայէր Ահմէտ փաշա. և մօտակայ նաւերէն սկսան հրացանի հարուածք, որոց յաջորդեցին թնդանօթի գնդակք, որ ընկղմեցին քանի մը լաստակամուրջք, միաբան տանելով զինուորք, ըսպայք և հրանօթք։ Առաւօտը ծագելով Սիստովայի հրանօթք եւս սկսան կրակ թափել. երկու կողմանէ ահաւոր էր կռիւը և Ռուսք վտանգաւոր կացութեան մէջ էին, տաճիկ զօրուն բուռն բաղխման առջեւ։ Տրակոմիրոֆ հրաման ղրկեց որ կամուրջէն միայն հետեւակք անցնին և ետեւն հրանօթք, վասն զի մոլեգին խառնուրդ մը կը սկսէր։ Տրակոմիրոֆ անոնց գլուխ անցած ենանդուն յարձակում մը սկսաւ, և պատերազմը նոր կերպարանք առաւ։ Հասաւ նաեւ շոգենաւ մը լի զինուորօք, որոնք անմիջապէս դուրս ելան կռուելու։ Այն ատեն թուրք գունդերը սկսան նահանջել. ժամը 11էր. լռեցին նաեւ Սիստովայի թնդանօթք։

Այս յաջողութենէն վերջը զօրավարն Տրակոմիրոֆ չուեց Սիստովայի վրայ, զոր թողուցեր էին թուրք գունդերը քաշուելով ի Տիրնովա, միաբան տանելով մահմէտական բնակիչքը։ Բուլղար նուիրակութիւն մը ընդառաջ եկաւ ռուս բանակին, քաղաքը յանձնելու համար. ուր մտան թուրքերը կէսօրէն վերջը, ժողովրդեան անպատմելի ուրախութեան ցոյցերով։ Ապա քրիստոնեայ բուլղարք յարձակեցան մահմէտականաց լքած տուներուն և մզկիթներուն վրայ. կոտրեցին և կողոպտեցին ինչ որ գտան։ Յունիս 27ին շարունակեցին Դանուբը անցնելու ուրիշ զօրաբաժիններ ալ. 28ին անցաւ Աղեքսանդր Բ իր բովանդակ սպայակուտով։ Ռուս բանակին հետ անցաւ նաեւ Բուլղարաց 6000 կամաւորաց լեգէոնը, որ

պատերազմին սկիզբը կազմուեր էր բուլղար հին հայրենասէրներէ, յորս էին Պէտքո Դրակոնով և Զէքո Պէտքով նշանաւոր հայրենասէրները։

Աղեքսանդր Բ. առ Բուլղարս։ Յունիս 28։

10· — Աղեքսանդր Բ Դանուբը անցնելուն՝ անմիջապէս հրատարակութիւն մը ըրաւ առ Բուլղարս, յորում յետ յիշելու դարէ մը ի վեր և աւելի Ռուսիոյ ըրած զոհողութիւնքը ի նպաստ Թրքահպատակ քրիստոնէից, ի նպաստ մասնաւորապէս Ռումանիոյ և Սերբիոյ ազատութեան և անկախութեան, կը խոստանար նոյնը քրիստոնեայ Բուլղարաց «որոց խաղաղութեանը համար ղրկուեր էր ի Դախախանամութենէ»։ Կը յորդորէր նաեւ մահմէտական Բուլղարները հանդարտ աշխատելու հասարակաց հայրենեաց համար։ Ռուսիոյ բանակը պիտի ներէր մինչեւ այն ատեն եղած ատելութեանց և անգթութեանց, և սրբազան պիտի համարէր իրեն համար անոնց ընտանիքները։ Կ'խմացնէր որ սակաւ առ սակաւ թուրք իշխանութեան տեղ, Ռուսաց Բուլղարիոյ մէջ յառաջելուն, կանոնաւոր նոր վարչական կազմակերպութիւն մը պիտի հաստատուէր, որուն տեղացի բնակիչք ալ փութով պիտի մասնակցէին և բուլղար լեզէոնը իրրեւ տեղացի բանակ մը, պիտի հսկէր երկրին կարգաց և ապահովութեան։

Եւ խօսքերէն գործի անցնելով, իշխանն Զէրքասքի, ծանօթ հայրենասէրը, Բուլղարիոյ կառավարիչ անուանեց որ անմիջապէս հաստատուեցաւ ի Սիստովա։ Նոր կառավարիչը Սիստովայի քաղաքապետ անուանեց զՊարոն Կէտոֆ և փոխան–քաղաքապետի՝ բուլղար ծանօթ հայրենասէրն Դրական–Ղանքոֆ, որ սրդիւնաւոր եղած էր բուլղար դպրոցներու մասին։ Նոր վարչութեան սահմանը ամեն օր նոր տիրուած երկիրներով ընդարձակուեցաւ։ Եւրոպիոյ ամեն կողմէ բուլղարուսանողք դիմեցին, յօժարակամ մտնելու հայրենեաց ծառայութեան մէջ, յորում բուլղար լեզուն սահմանուեցաւ իրրեւ պաշտօնական լեզու և նոր կարգեր հաստատուեցան՝ տրոց հաւաքման, զինուորագրութեան և քաղաքական կազմակերպութեան։

Ռուսք կը տիրեն Տիրնովայի և Նիկոպոլսոյ։

11. — Ռուսաց անարգել յառաջելուն ժամանակ, Ապրիլ Քէրիմ յամառեալ մնացեր էր իր պաշտպանողական ծրագրին վրայ Ռուսճուք, Սիլիստրի, Վառնա և Շումլա քառակողմանիին վրայ։ Ռուսաց յառաջապահը Սիստովայի տիրելէն վերջը հասաւ ի Բիէլա, ուր Լանդրայի վրայ ձգուած էր ընդարձակ կամուրջ մը, և ռուս հեծելոց ջոկատ մը բռնեց կամուրջը։ Նիկոդայոս մեծ դուքսը հոն փոխադրեց ճամբարը. և Յուլիս 3ին զզօրավարն Կուրքօ ղրկեց Տիրնովայի վրայ, որ Բուլղարաց հին մայրաքաղաքն էր և ուր կային սակաւ Թուրք զունդեր պաշտպանութեան համար։ Կուրքօ զօրավարը Բուլղարներէն կազմուած զունդով մը, որուն նեցուկ էր Կովկասու խազախ ջոկատ մը, Յուլիս 7ին բռնեց Մուրատ Բէյ և դիտեց որ Թուրք զօրքը կը Թողուր քաղաքը և կ՝ուղղուէր դէպ ի Օսման Բազար։ Յուլիս 9ին Զէրէլէթէֆ իշխանը յառաջեց դէպի քաղաքը, զոր գտաւ անպաշտպան և ուր Բուլղարք ինչպէս ի Սիստովա, աւրեր կողոպտեր էին Թրքաց բնակութիւնքը։ Հասաւ նաեւ Կուրքօ զօրավարը իր զունդերով և խանդավառ ընդունելութիւն գտաւ Բուլղարներէն։ Յուլիս 12ին ալ հասնելով Նիկոլա մեծ դուքսը, ի Տիրնովա եւս քաղաքական կազմակերպութիւն մը հաստատուեցաւ և փոխան—քաղաքապետ դրուեցաւ Պ. Բալաբանոֆ։

Վեց օր վերջը Թուրքերը տիրեցին նաեւ Նիկոպոլսոյ, զոր արդէն 20 օրէ ի վեր պաշարեր էին և Թուրնու—Մակրրէլի բերդերէն կը ռմբակոծէին։ Քաղաքը գրեթէ ամբողջ այրեր էր, սակայն միջնարերդը դեռ կը պաշտպանուէր 6000 զինուորօք և 60 թնդանօթիւք։ Քաղաքապետն էր Հասան փաշա և զինուորական հրամանատար՝ Ահմէտ փաշա, որոնք որոշեր էին կռուիլ մինչեւ որ լմննայ ամեն միջոց։ Կային նաւահանգստին մէջ նաեւ երկու նաւք, զորս Նովիքոֆ տորբիլներով ներսը փակեր էր։ Յուլիս 15ին առաւօտ Քրուտնէր զօրավարը իր զունդերով յարձակեցաւ քաղքին վրայ, տիրելու Սամովիցայի բարձունքներուն։ Թուրքերը արութեամբ

պաշտպանեցին զայն մինչեւ երեկոյեան ժամը 10ը. երկու կողմանէ հազարաւոր անձինք ինկան։ Սակայն Ռուսք յաջողեցան տիրել քաղաքը շրջապատող բարձունքներուն և Քրիւտնէր հոն հանեց թնդանօթքը։ Երկրորդ օրը երբ հրանօթք կրակ սկսան Սամովիցայէ, Թուրնու Մակըրէլէ և Իսլացէ. անօգուտ էր ընդդիմութիւնը և երկու փաշայք սպիտակ դրօշ բանալով, անձնատուր եղան 6000 զինուորօք։ Ռուսք երաժշտութեամբ մտան աւերակ դարձած քաղաքը և տիրեցին թնդանօթներուն. զինուորական մթերքին և պաշարներուն։ Ռուս բանակը տակաւին կը շարունակէր յաղթական ընթացքը ամեն կողմ։

12. — Տիրնովայի առմանէն վերջը զօրավարն Գուրքօ[1] շարունակեց իր երագ ընթացքը, որպէս զի թշնամին չզգացած, հասնի իր նպատակին և անցնի Բալկանները։ Տեղեկացած էր որ Թուրք ընդհանուր հրամանատարութիւնը գրեթէ բոլոր կիրճերը անպատրաստ թողուցեր էր. կային քանի մը պահանորդք ի Խային Քէօյ կամ Խային Պօղազը և սակաւ գունդեր ի Զըպքա։ Իշխանն Մէրէտէլի, որ պատերազմը սկսելուն խնդրեր էր թողուլ Պարիսու դեսպանատան ատենադպրութիւնը, բանակը զէնք կրելու համար, լաւ տեղեակ բուլղար լեզուի, մտերմացաւ լեռնականաց հետ, անոնց տարազը վրան առնելով. սորուեցաւ թէ ինչ ճամբով պէտք էր հասնիլ ի Խային Քէօյ, ուսկից կը մտցուէր Ցունճայի հովիտները։ Գուրքօ նախ ղրկեց զզօրավարն Ռաւխ՝ իր ռահվիրայ գնդով, ճամբան ընդարձակելու, հրանօթներուն անցանելի ընելու համար, ապա ինքը Յուլիս 12ին մտաւ կիրճը բոլոր գունդերովը և հրանօթներով. 14ին առաւօտն ալ անցեր էր Բալկանները՝ Թուրքիոյ պատուարները. և իրեն դիմացը կը բացուէր Ցունճայի արգաւանդ հովիտը, կոչուած նաեւ Հովիտ Վարդերու, իր բերքերէն ազնուագունին անունէն։

Զօրավարն Գուրքօ կը տիրէ Խային Քէօյի, Քըզանլըքի. — Կ'անցնի Զըպքայի կիրճը։

---

1. Պատերազմի ժամանակ կարծիք մ'էր Հայոց մէջ որ «զօրավարն Գուրքօ հայ էր և բուն անունն է Գուրգէն»։ 1877 Մշակ թիւ 87։

Բնական է այս բովանդակ չուերու միջոց մեծապէս օգներ էր իրեն բուլղար ժողովուրդը և զինակրութիւնը. յորոց ոչ ոք լուր տուաւ և կամ մատնեց թշնամւոյն, ռուս գունդերուն շարժումը որով կարելի էր և արգելուլ. որովհետեւ Թուրքաց հոն թողուցած 3000 զինուորք բաւական էին ընդդիմանալ Ռուսաց անցքին. այնքան դժուարին էր կիրճը։ Այս սակաւաթիւ զինուորք տեսնելով զՌուսս արդէն անցած, տագնապաւ փախան դէպ ի Ալիվնօ, թողլով եկաւորաց ձեռքը իրենց ունեցած պաշարը և պատերազմի մթերքը։ Սակայն ճամբուն վրայ և մանաւանդ Եէնի Զաղրայի մէջ, չէրքէզները վրէժինդրութեան համար գտած Բուլղանին սպաննեցին։ Բուլղարք Ռուսաց մուտքին վրայ ամեն կողմ ապրստամբեցան և գեղերու մէջ շատ ընդհարումներ եղան, սպաննուելով երկու կողմանէ ալ։

Զօրավարն Գուրքօ, չէր կրնար գոհանալ խային Բողազի անցքով, որ նահանջի մը պարագայի մէջ, չունէր ընդարձակութիւն և դիւրութիւն. ըստ հրամանի Նիկոլա մեծ դքսին, հարկ էր փութով տիրել և Զըպգայի կիրճին։ Յուլիս 16ին չուեց դէպ ի Քրզանլըք գեղեցկանիստ քաղաքը, և 17ին հասաւ մօտ, ուր Թուրք գունդերը նոր հասեր էին Զըպգայէն. սակայն տեսնելով Ռուսաց բազմութիւնը, յետս նահանջեր էին, թողլով Ռուսաց ձեռքը երեք թնդանօթք և հարիւրէն աւելի գերի։ Գուրքօ մտնելով Քրզանլըք որ 12,000 բնակիչ ունէր, յորոց գրեթէ 8000ը քրիստոնեայք, հրամայեց զինաթափ ընել մահմէտականքը և անոնց զէնքերը բաժնեց Բուլղարներուն, անոնց յանձնելով նաեւ քաղքին պաշտպանութիւնը։ Բայց այդ զէնքերը ամենն ալ միայն քաղքին պաշտպանութեան չգործածուեցան։ Անուրանալի է որ Բուլղարաց կողմէն ալ ահաւոր անգթութիւնք եղան ընդդէմ մահմէտականաց[1]։

---

1. Ի Բուլղարիա եղան գիւղեր յորս քրիստոնեայ և մահմէտական բնակիչք համերաշխաբար միաբանեցան, որ եթէ ռուս բանակը ներս մտնէ, այն ատեն քրիստոնեայք պաշտպանեն զմահմէտականս և փոխադարձաբար թէ Թուրք բանակը մտնէ։

Գուրքօ զօրավարը Փրզանլըքի վրայ չուելու ժամանակ, ուրիշ կողմանէ Յուլիս 16ին իշխանն Ալիատորոլք Միրսքի, հետեւակաց Իններորդ զօրաբաժնով հասեր էր ի Գաբրովա, և հրամայեր էր յարձակիլ դէպ ի Զըպգայի անցքը։ Այդ անցքին, որ ծովէն 1200 մէդր բարձրութիւն ունի, կը տիրէ Ս. Նիկոլա լեռը, որուն վրայ շինուած էին ամենահայեաց և ամուր բերդեր, և շրջապատուած գետնափոր պատսպարաններէ։ Ռուսաց գունդերը յառաջեցին չորս սիւնակ. հոն հասեր էր նաեւ մեծ դուքսն Նիկոլա Նիկոլայեվիչ։ Ռուսք ահաւոր ընդդիմութիւն գտան զառիվայրներուն վրայ, և յետ ահաւոր սուինով կռուոյ մը, յորում երկու կողմանէ ալ ինկան հարիւրաւոր անձինք, իշխանն Միրսքի բռնադատուեցաւ նշան տալ նահանջի և սպասել Գուրքօ զօրավարին գալստեան։

Յուլիս 17ի կէսօրէն վերջը զօրավարն Գուրքօ իր հեծեալը ղրկեց նախ ի Զըպգա, Ուշաքով զօրավարին հրամանատարութեան ներքեւ, որ քան զչափն անկասկած յառաջելով, յանկարծ պաշարուեցաւ բաշիբոզուքներէ. որոնք անդադար կրակ թափելով Ռուսաց վրայ, վիրաւորեցին և զՈւշաքով զօրավարը որ հազիւ կրցաւ փախչիլ մօտաւոր անտառ մը և ազատիլ մահուընէ, թողլով ուրիշ վիրաւորներ։ Սակայն Թուրք գունդերն ալ այս կռուոյն վրայ քաշուեցան Զըպգայի ներսը։

Զօրավարն Գուրքօ Յուլիս 18ին հասնելով տեղւոյն վրայ, նախ առաջարկեց առ Թուրք հրամանատարը անձնատուր ըլլալու. և երբ պատասխան մը չ'ընդունեցաւ, այն ատեն հրամայեց ընդհանուր յարձակումը. զոր շատ տեղ զինուորք կը կատարէին գրեթէ մագլցելով հասնելու Զըպգա գիւղը, որ 800 մէդր բարձրութեան վրայ շինուած էր։ Թուրք զինուորք վերէն կարկտանման հարուածք կը տեղային. բայց ռուս զինուորք առանց նայելու քովերնին ինկնողները, կը յառաջէին միօրինակ քաջութեամբ, և նոյնպիսի թափով երբ գրեթէ 700 մէդր բարձրացած էին, Թուրքաց կողմանէ տեսնուեցաւ սպիտակ դրօշ մը և ռուս բանակը դադրեցաւ յարձակումէ։

Սակայն յանկարծակի կրկին սկսան հարուածք, որոնք երկար չտեւեցին։ Այս յարձակման միջոց ինկան Ռուսաց կողմանէ երկու հազարապետք[1]։

Յուլիս 19ին առաւօտ, Թուրք սպայ մը եկաւ Գուրքոյի բանակը փաշային նամակով մը, բանակցելու անձնատրութեան վրայ. և երթալէն վերջը պատասխան մը բերելու համար, երբ այլ եւս չդարձաւ, Ռուսք ջոկատ մը ղրկեցին և իմացան որ արդէն պահանորդը փախեր էր դէպ ի Ֆիլիպպէ, թողլով պաշարը և պատերազմի մթերքը։ Զօրավարն Գուրքո բռնեց անմիջապէս Զըպգայի բարձունքը և անցքը ամրողջովին. արդէն ուրիշ համբով մ'ալ հասեր էր զօրավարն Սքոբէլէֆ. և ամրացուցին քառակ թնդանօթներով և պահանորդներով[2]։

Տագնապ ի Կ. Պոլիս. – Աբդիւլ Քէրիմ և Ռէտիֆ փաշա պաշտօնանկ կ'ըլլան։

13. — Այս ամեն պատահարք յայտնի է որքան մեծ յուզումն և տագնապ կը պատճառէին օսմանեան մայրաքաղաքին, մինչ անտարբեր աչքով մը կը դիտէր ընդհանուր հրամանատարութիւնը։ Ութսնամեայ ընդհանուր սպարապետն Աբդիւլ Քէրիմ. արդեօք տարիքին հետեւանք թուլութեամբ մը, թէ անիմաստ ծրագրէ և կամ ճակատագրական սկզբունքէ։ Ի սկզբանէ ի վեր ամեն ջանք պէտք էր ըրած ըլլալ չթողուլ զՌուսս անցնելու Դանուբը, մինչ անգործ և անզգայ մնացեր էր իր վրանին մէջ։ Զօրաց անվճար մնալով, ատէպ էին փախչողները և կամ ձեւացեալ հիւանդները։ Իր սպայակոյտն ալ հրամանատարին նման պարզ դիտող մ'էր։ Իրեն հարցնողներուն կ'ըսէր որ ունէր ծրագիր մը. և զինքը պաշտպանողք կը պնդէին որ անկա-

---

1. Գուրքո հարցուց յետոյ, սպիտակ դրօշէ վերջը կրկին հարուածներուն պատճառը։ Հաշտութեան համար եկող սպայն պատասխանեց, որ զինուորք այնքան մօտ տեսնելով զՌուս, անհրաման պարպեր էին հրացանին։

2. Երբ Ռուսք մտան Թուրքաց թողուցած բանակատեղը, հոն հնագրի մը սեան տակ գտան 23 զլուխք ռուս սպայից և զինուորաց. և ուրիշ կողմ մարմիններն քստմնելի կերպով կրճատուածք։ Այս օրինակ ամենատխուր պատահարք, որոնք ատէպ են, գանց կ'ընենք ամեն անգամ յիշելէ։

բելի էր այսպիսի նշանաւոր հրամանատար մը չունենայ իր խորհուրդները։ Առ Աբդիւլ Համիդ սուլթան որ մեծապէս տագնապեր էր Ռուսաց Միստովայի անցքին ժամանակ և կշտամբեր էր զինքը, ինքը խոնարհութեամբ պատասխան տուած էր « չտագնապելու. բնաւ կարեւորութիւն մը չունէր Ռուսաց անցնիլը. ես ունիմ ծրագիր մը որով Դանուբը անցնողք, այլ եւս չեն դառնար իրենց հայրենիքը. կը խնդրեմ ըսել Կ. Պոլսոյ էֆէնտիներուն որ հանդարտ թողուն զիս և արգելք չ'ըլլան ծրագրիս »։ Սուլթանը պահանջեց գիտնալ իր ծրագիրը. և Աբդիւլ Քէրիմ պատասխանեց որ եթէ վրաս ունիք վստահութիւն, թողուցէ՛ք ինձ. իսկ թէ ոչ՝ փոխեցէք զիս »։ Այն ատեն Սուլթանը նեղացած, զԻէտիֆ փաշա՝ պաշտօնեայ պատերազմի, միաբան Նամըք փաշա մարաջախտին, Շումլա ղրկեց քննութիւն մը բանալու. և Պատերազմի պաշտօնէութիւնը առ ժամանակեայ կերպով ստանձնեց Մահմուտ Դամատ փաշա, քեռայր Սուլթանին, որուն ազդեցութիւնը մեծ էր Պալատան մէջ։ Մի և նոյն ժամանակ ծովային զօրութեան պաշտօնեայն Իէուֆ փաշա, կտրիճ չէրքէզ մը, բայց ոչ ռազմագէտ, Ադրիանուպոլիս ղրկուեցաւ հրամայելու նոր կազմուած բանակի մը ամեն տեսակ տարրերէ. որուն նպատակը պիտի ըլլար ամրացնելու զԶըպգա և չթողուլ Ռուսաց ո՛ր և է անցք մը։ Այնոր համար մայրաքաղաքին զայրոյթը և յուզումը մեծ եղաւ, երբ լսուեցաւ Խային Ռոզազի և Զըպգայի առումները. և ամենայն ոք տագնապէն զթշնամին կ'երեւակայէր արդէն Կ. Պոլսոյ դուռը հասած։ Հարկ եղաւ որ վարչութիւնը պատուիրէ լրագրաց նախ սուտ հանելու, և ապա մեղմացնելու այս պատահարքը։

Այսու հանդերձ անկարելի էր ծածկել եղելութիւնը և գիտցաւ ամենայն ոք որ Ռուսաց բանակը կ'ըսպառնար նաեւ Լէչնի Ջաղրայի և Լոկի Ջաղրայի։ Ամեն տեսակ ամբաստանական ձայներ տարածուեցան ընդհանուր սպարապետին և պատերազմի պաշտօնէին նկատմամբ. որոնք պաշտօնանկ ըլլալով, աքսորի սահմա-

նուեցան։ Յուլիս 23ի պաշտօնական լրագիրը ծանոյց որ վարչութիւնը դատի ներքեւ կը դնէր զԱբդիւլ Քէրիմ և Ռէտիֆ փաշաները։ Պատերազմական ատեան մը կազմուեցաւ, որուն նախագահ անուանուեցաւ մարաջախտն Նամըք փաշա, որ այս պատճառաւ կանչուեցաւ Շումլայէ։ Դատաւորներէն մին էր նաեւ մարաջախտն Հալիմ փաշա անդամ ծերակուտի և հօրեղբայր Եգիպտոսի խտիվին։ Եւ որովհետեւ Արտաքին Գործոց պաշտօնեայն Սաֆվֆէդ փաշա, խորհրդոյ մէջ տխուր նկարագրեր էր Թուրքիոյ զինուորական կացութիւնը, պաշտօնանկ եղաւ և տեղը դրուեցաւ Ռիֆի փաշա, որուն յետոյ յաջորդեց Սէրվէր փաշա։

Նոյն Ատեանը պիտի դատէր նաեւ զԷշրէֆ փաշա, հրամանատար Ռուսճուքի. ուրիշ առնուած քաղաքներու փաշաներ, յորս նաեւ Արտահանի Հիւսէյին Սաբրի փաշայն, որուն վրայ կաշառակերութեան ամբաստանութիւն կար[1]։

Մէհէմէտ Ալի փաշա ընդհանուր հրամանատար կ'անուանուի։

14. — Բանակին ընդհանուր հրամանատար անուանուեցաւ զօրավարն Մէհէմէտ Ալի փաշա, երբեմն Յուլիուս Դէտրուա, ծնեալ ի Համբուրկ. որ տակաւին 16ամեայ, նաւու մը ծառայելով փախեր էր ի Կ. Պոլիս. և հոն ընդունելով մահմէտականութիւնը, փաշայի մը պաշտպանութեամբ կրցեր էր մտնել Պանկալտիի Զինուորական վարժարանը. և ապա նշանաւոր եղեր էր 1867ի և 1869ի ի Կրետէ, յետոյ ի Թեսալիա, Սերբիա և Մոնտէնէգրո. և ներկայիս հրամանատար էր Վիտինի։

Մէհէմէտ Ալի փաշա յինամեայ էր և գործունեայ. բանակը հասնելով, նախ հոգ տարաւ կարգապահութեան, և քովը կոչեց օսմանեան ծառայութեան մէջ եղող եւրոպացի զօրավարներէն զԻաքըր փաշա, զՔլապկա, Բլում և Ստրէքէր զօրավարները, որոնք մէկդի թողուած էին

---

1. Դատը շատ ամիսներ տեւեց, և երբ երկիւղ կար որ յայտնուին պալատական շատ մը գաղտնագործ հնարագիտութիւններ, մանաւանդ նկատմամբ Մահմուտ Դամատ փաշայի, այն ատեն ամբաստանեալքը աքսորուեցան ի Լեմնոս։

իբրեւ օտարք. և անմիջապէս տեսնուեցաւ եռանդ մը և գործունէութիւն, որոնք ազդեցին պատահարաց վրայ։

Միւլէյման փաշա դէպ ի Զրպզա։

Վարչութիւնը կոչեր էր Մոնտէնէգրոյէն Բալկաններու ոտքը և զՄիւլէյման փաշա, որ յաջող ռազմագիտութիւն ցոյցուցեր էր Մոնտէնէգրոյի պատերազմաց մէջ և Ալէքսինացի առմամբ։ Միւլէյման փաշա հասնելով եբագաբար Դէդէ Աղաճի ճամբով, անմիջապէս բռնեց Քարաբունարի դիրքը, որ Եէնի Զաղրայի և Լակի Զաղրայի հետ եռանկիւն մը կը կազմէ. և յարաբերութիւնը հաստատեց Ռէուֆ փաշայի բանակին հետ։

Մէհէմէտ Ալի և Միւլէյման փաշաներուն հրամանատարութիւնքը սկսած ժամանակ, Ռուսք ունեցեր էին ուրիշ յաջողութիւնք ալ Ասիական կողմը։



ԳԼՈՒԽ ԺԹ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋ ԹՈՒՐՔ-ՌՈՒՍ ՊԱՏԵՐԱԶՄ

---

1. Ասիական ռուս բանակը. – զօրավարն Լորիս Մէլիքով — 2. Թուրք բանակը. — Ահմէտ Մուխթար փաշա. — 3. Տէր Ղուկասով զօրավարը. – Տէր Ղուկասով կը տիրէ Բայազիտի, Իւշքիլիսէի և Ալաշկերտի. — 4. Աղեքսանդրուպօլի բանակը. – Հայոց սիրալիր ընդունելութիւնը. — 5. Խլեխայի բանակը. – կը դիմէ դէպ յԱրտահան. — 6. Արտահանի առումը. — 7. Արտահանի առման լուրը ի Կ. Պօլիս. — 8. Ռուսք կը չուեն Կարսի վրայ. – Մուխթար փաշա կը թողու զԿարս. Բէյնքլի Ահմէտի կռիւը. — 9. Ռիոնի բանակը. — 10. Ռուսք կը տիրեն Աչքուայի եզերքներուն. — 11. Ռուսք դէպ ի Բաթում. — 12. Թուրքաց արշաւանքը ի Սոխում Քալէ. – Թուրքիոյ յաջողութիւնքը և յաղթութիւնքը. — Շէյկոֆիկով հազարապետը կը վանէ Թուրքերը. – Թուրքերը կը մեկնին Սոխում Քալէէն. — 15. Հայաստանի թուրք բանակին կացութիւնը. – Կը յաղթուի ի Տրում Տաղ. — 16. Թոփ Տաղրի յաղթութիւնը. – Ցաղթութիւն ի Միւլի Տիւզ. — 17. Տէր Ղուկասովի նահանջը դէպի Երեւան. – Քիւրտերու անօրէնութիւնք. — 18. Բայազիտի պաշարումը ի Թուրքաց. – Տէր Ղուկասով կ'ազատէ բայց կը թողու։

Ասիական ռուս բանակը. – զօրավարն Լորիս Մէլիքով։

1. — Ռուս կառավարութիւնը Թուրքիոյ եւրոպական գաւառաց վրայ պատերազմած ժամանակ, իր աւանդական դրութեամբ արշաւանք մը սահմաներ էր նաեւ ասիական գաւառաց, և մանաւանդ ճիշդ Հայաստանի վրայ, որուն ժողովրդեան համակրութեանը վրայ լիովին վստահ էր. և որ միշտ օգներ էր իրեն, մանաւանդ ճամբայ բացեր էր ռուս աշխարհակալութեան, թէ ի Կովկաս և թէ ի Հայաստան։

Ասիոյ բանակը կը կազմուէր 180,000 զինուորներէ, որոց ընդհանուր հրամանատարն էր անուամբ և պատուով մեծ դուքսն Միքայէլ. այնքան սիրելի կովկասի ժողովրդոց իր փոխարքայութեամբը հոն։ Բայց իրական ընդհանուր հրամանատարն էր հայազգի զօրավարն Լորիս Մէլիքով։ Բանակը չորս զօրաբաժնի վերածուած էր. առաջինն էր Ռիոնի բանակը 30,000 հոգւով, որուն հրամանատարն էր զօրավարն Օքլոբճօ, երկրորդն էր Ախլցխայի բանակը 35,000 զինուոր, հրամանատար զօրավարն Դէվէլ. երրորդն Երեւանայ բանակը 40,000 զինուորօք, որուն հրամանատարն էր հայազգի, հայասիրտ զօրավարն Արշակ Տէր Ղուկասով. չորրորդ բանակին, որ կազմուած էր 60,000 զինուորներէ կը հրամայէր զօրավարն Լորիս Մէլիքով։

Լորիս Մէլիքով այս միջոցիս յիսուն և երեք տարուան էր։ Արդէն նշանաւոր 1854ի Շամիլի դէմ կռիւներուն մէջ։ 1855ի Կարսի պաշարման ժամանակ հազարապետի աստիճան ընդուներ էր և լաւ կը ճանչնար այդ երկիրները։ Ռուս վարչութիւնը հայազգի զօրավար մը ընդհանուր հրամանատար անուանած ժամանակ, լաւ գիտէր որ ինչ քաղաքագէտ և հաճելով գործ մը կը կատարէր նկատմամբ այն Թրքահայ երկիրներուն, որոց մէջ պիտի մտնէր իր բանակը։ Լորիս Մէլիքով հրամանատարի ռազմագէտ և քաջ յատկութեանց հետ, ունէր միանգամայն քաղաքագիտական թափանցող սրամտութիւն մը և արեւելեան գրաւիչ վարմունք մը և լեզու։ Ինքը հայ և իշխանական ցեղէ սերեալ, արդէն ծանօթ և յոյժ համակրելի էր Թրքահայոց, մանաւանդ ի Կ. Պոլիս, ուր Զարին կողմանէ երբեմն նուիրակ գացած էր, զՄատթէոս կաթողիկոսը ռուս պետական նաւով բերելու ի Ռուսաստան։ Այդ առթիւ Թրքահայ ազգասիրաց խանդը հաւուցեր էր իր գերագոյն աստիճանին. որոնք յետ այնքան գերութեանց դարերու, կ'ողջունէին հայ զօրավար մը, ըլլայ թէեւ ռուսի ծառայութեան մէջ։ Բայց որ ուրախալին էր՝ Կ. Պոլսոյ այն ժամանակին վարչութիւնը հաճութեամբ դիտեր էր ի պատիւ

հայ զօրավարին հայ ազգէն արտայայտեալ տոհմային և ընտանեկան ուրախութիւնքը։ Մայրաքաղաքին մէջ լսուած գովեստք և համակրութիւնք լրագիրները տարածեր էին գաւառաց մէջ. և ի Հայաստան իբրեւ հրամանատար մտած ժամանակ, սրդէն ծանօթ և սիրելի տիպար մ'էր իր ազգայնոց։ Զօրավարն Լորիս Մէլիքով ուրիշ ռուս զօրավարաց բաղդատմամբ այս առաւելութիւնն ալ ունէր որ կը խօսէր արշաւելիք երկիրներուն լեզուները. այս միայն յատկութիւնը շատ մը թուրք և քիւրտ ցեղապետներ շահեցաւ ռուսաց կողմը. զորս աւելի հաստատուն պահելու համար, վարչութիւնը կուրծքերնին զարդարեց շքանշաններով։ Եթէ ռուս բանակը իր ընթացքին մէջ միշտ գրեթէ բարեկամներու հանդիպեցաւ, այդ արդիւնք էր հայ սպարապետին և հայ զօրավարաց ներկայութեան։ Լորիս Մէլիքովի ի սկզբանէ նշանաւոր քաղաքագիտական գործն եղաւ, պատերազմէն առաջ իր սպայակուտով Էջմիածին երթալն և հոն կաթուղիկոսէն իր սուրը օրհնել տալն։ Աւելորդ է բացատրել այս լրոյն ամենամեծ ազդեցութիւնը բոլոր հայ ազգին վրայ թէ ի Ռուսաստան և թէ ի Թուրքիա։ Զօրավարն Լորիս Մէլիքով՝ ժողովրդեան ազատարարի կերպարանք մը կը ստանար. և ամեն հայ որ սիրող էր հայ եկեղեցւոյն և իր աւանդութեանց, պէտք էր իր դուռը բանար անոր առջեւ։

Ապրիլ 24ին Մեծ Դուքսն Միքայէլ յանուն Աղեքսանդր կայսեր, պաշտօնապէս հռչակեց պատերազմը և «Ցանուն Աստուծոյ, Հայրենեաց և Զարին, յառա՛ջ» կարդաց բանակին։ Այն օրուընէ չորս բանակները շարժեցան դէպ ի սահմանագլուխ։ Եւ որովհետեւ հայ, վրացի, պարսիկ և թուրք ժողովուրդը զինուորաց բանակ մը միշտ Աստուծոյ պատիժ համարած է, որ մարախներու կոյտի նման, իջած երկիրը կը չորցնէ, կը լմնցնէ. հայ սպարապետը կայսերական հովանաւորութիւն խոստացաւ ամեն ժողովրդոց, որ անմիջապէս հպատակին. և զինուորաց պատուիրեց՝ առածնին անմիջապէս վճարել հաստատուն գիներով,

զոր գլխաւորք պիտի սահմանէին։ Գիւղացին մեծապէս ուրախացաւ այս պատրաստ վճարման վրայ. և ամենուն ցանկալի դարձաւ օր մը առաջ ռուս զօրաց գալուստը։

Թուրքիոյ բանակը. — Ահմէտ Մուխթար փաշա։

2. — Այսպիսի բաղդաւոր և յաջող պարագայից մէջ գտնուող բանակի մը դիմացն առնելու համար, Թուրք վարչութիւնը ունէր Հայաստանի մէջ մօտ 100,000 զինուոր, բայց ցրուած Բաթումի, Արտահանի, Կարսի, Բայազիտի և Կարնոյ ամրութեանց մէջ։ Ընդհանուր հրամանատարն էր Ահմէտ Մուխթար փաշա մարաջախտը. ուսեալ զօրավար մը, և Թուրք երիտասարդ զօրավարաց մէջ հազուագիւտ ռազմագէտներէն մին։ Մուխթար փաշա ծնած էր ի Բրուսա յամին 1837 և ուսման փայլուն ընթացք մը կատարած էր Կ. Պոլսոյ Զինուորական Դպրոցին մէջ զոր շարունակած էր միշտ առանձին[1]։ Յամին 1854 տեղապահի աստիճանով մասնակցած էր Ղրիմու պատերազմին, բայց իր անունը համբաւ ստացեր էր 1860ի Սէրտար Էքրէմ Լոմէր փաշայի Դարատաղցւոց դէմ պատերազմի ատեն, զՔշնամին ջախջախելով Իւսդրուքի կիրճերուն մէջ։ Անմիջապէս գնդապետ անուանուեցաւ. և պատերազմէն վերջը ուսուցիչ Բերդերու զինուորական դպրոցին մէջ։ Աբդիւլ Ազիզ զինքը իր Յուսուֆ Իզէդդին որդւոյն դաստիարակ դրաւ և միաբան այցելեցին Իտալիա, Գաղղիա, Անգղիա, Գերմանիա, Աւստրիա. ամեն կողմ

---

1. Յամին 1882 ի Կ. Պոլիս գտնուած ժամանակս, հետաքրքրութեամբ ժամանակակից դէպքերու և դէմքերու դիտած էի որ գրեթէ ամեն առաւօտ նեղ՝ բայց մաքուր զգեստներու մէջ սեղմուած սպայ մը, Քաղկեդոնէն դէպ ի Կամուրջ գացող շոգենաւին սենեկի անկիւն մը քաշուած, աչքը բնաւ թղթակազմ պրակներէ վեր չէր հաներ. շատ հազուագիւտ կամ անգիւտ յատկութիւն մը թուրք զինուորականի համար, և այն այդ ժամանակներուս։ Կերպարանքէն կասկածեցաւն որ ըլլայ Մուխթար փաշա և հարցնելով իմացայ սխալած չ'ըլլալս։ Անկէ վերջը իմ ամենամեծ հետաքրքրութիւնս էր առանց մատնուելու, ընթերցած գրքոյկները ի՞նչ նիւթի վրայ ըլլալը սուր աչքով մը կարենալ տեսնալ։ Իւ գայ որ գրեթէ միշտ էին ուսումնասիրութիւնք հրազինուց կամ հեծելաց գործածութեան մասին, գաղղերէն լեզուաւ։ Այս բաւական է յայտնել իր զինուորական արժէքը։

պատիւներ ստանալով և ամեն կողմ դիտելով և սորուելով։ Յամին 1870 Եէմէնի պատերազմին ժամանակ լիվայութեան աստիճանը առաւ և պատերազմին յաջող վերջանալովը, մարաջախտ անուանուեցաւ։ Մերժեց միշտ պաշտօնարանի մը գլուխ ըլլալը, ընտրեց հրամանատարութիւններ ի Կրէտէ, Շումլա, Կարին, Հէրձէկովինա։ 1876ի զինադադարէն վերջը, նորէն Կրետէ ղրկուեցաւ, և երբ 1877ի սկիզբները պատերազմի մը հաւանականութիւնը ծագեցաւ, իրեն հրաման եղաւ անմիջապէս Կարին երթալ և Չորրորդ բանակին գլուխ ըլլալ։

Սակայն Մուխթար փաշայի յատկութեան չէր համապատասխաներ բանակը։ Կը պակսէր դրամ. կը պակսէր դարձեալ ձիաւոր զօրքը, նա մանաւանդ որ ընտրելագոյն գունդերը ղրկուած էին եւրոպական կողմը և ի զուր կը բողոքէր Մուխթար փաշա շատցնելու բանակը։ Իր բանակատեղին հաստատած էր ի Կարին, որ գրեթէ միշտ ռուս յարձակմանց աւանդական նպատակն եղած է։

Ռուս բանակները դէպ ի Կարս. — Տէր Ղուկասով զօրավարը կը տիրէ Բայազիտի, Իւչ Քիլիսէի և Աւաշկերտի։

3. — Երեւանայ, Ախլցխայի և Աղեքսանդրոպոլի ռուս բանակները յետ նուաճելու ճամբաներնուն վրայ քիւրտ և քարաբաբաք ցեղերը, յետ ճամբաները բռնելու, պիտի միանային Կարսի ներքեւ. և յետ զայն ընկճելու պիտի չուէին դէպ ի Կարին։ Երեւանայ բանակը որուն կը հրամայէր զօրավարն Տէր Ղուկասով, պատերազմին հրատարակութենէն երեք օր վերջը սկսաւ յառաջել դէպ ի Բայազիտ, որ իբր բերդաքաղաք, չունէր յիրաւի նախկին կարեւորութիւնը, սակայն պէտք էր ձեռք բերել իր մէջէն անցնող Դավրէժ–Կարին–Տրապիզոն ճամբուն տիրելու համար. և յետոյ մօտենալ Աղեքսանդրոպոլի բանակին դէպ՝ ի Կարս։ Բայազիտի բնակիչք մեծաւ մասամբ Թուրք էին, քիւրտ և սակաւաթիւ հայեր։ Ապրիլ 27ին երեկոյ Զինկիլլի լերանց մէջ գիշերեց. Երկրորդ օրը բանակը երկու սիւնակ կազմուելով, յառաջեց դէպ ի սահմանագլուխը, աջը Քուշաքի ճամբով և ձախը Օրկայէն։ Ապրիլ 29ին բանակը մտաւ Մուրատ Սուի ձորերուն մէջ։ Այնքան աւրուած էին ճամ-

բաները, որ օրը հազիւ 15 քիլոմէդր կրնային չուել. և զինուորք գրեթէ միշտ իրենք ստիպուած էին քաշելու թնդանօթները, որոց օգնելու կը վազէին սիրով տեղացիք՝ մանաւանդ Հայերը։

Մուխթար փաշա իր պաշտպանութեան գիծը չ'ընդարձակելու համար, պատուիրած էր Բայազիտի պահանորդին՝ քաղաքը թողուլ եթէ Ռուսք մօտենային։ Քաղքին Ալի Քիամիլ կուսակալը այս հրահանգին վրայ 2000 պահանորդներով և իր կանանոցով թողուցեր էր քաղաքը, քաշուելով դէպ ի Կարին և Տրապիզոն։ Ապրիլ 30ին Ֆիլիպպով հազարապետը, գլուխ Երեւանայ բանակի սպայակուտին, մօտեցաւ Ջանգիզօրի, որ Բայազիտէ երեք մղոն հեռու է. և քննելով և լրտեսելով որ թուրք զունդերը կը քաշուին, յառաջեց և բռնեց Ջանգիզօր։ Հասաւ նաեւ Տէր Ղուկասով զօրավարը, որուն դիմաւորեցին Բայազիտի քրիստոնեայ և մահմէտական հոգեւորականները. և տուին իրեն Ալի Քիամիլի մէկ նամակը՝ որով քաղքին բնակիչքը և զինուորական հիւանդները կը յանձնէր նորա վեհանձնութեան։ Տէր Ղուկասով յետ խոստանալու իր պաշտպանութիւնը այն ամեն անձի որ զինուք չ'ընդդիմանար, մտաւ Բայազիտ. իմացաւ և խստիւ պատժեց որոնք որ կուսակալին մեկնելէն վերջը աւարառութիւն ըրած էին. Քովալէսքի հազարապետը Բայէզիտի հրամանատար անուանեց. իսկ քաղաքին շահապ դրաւ տեղացի մահմէտականներէն Զավուշօղլու Շէրիֆ էֆէնտի։

Բայազիտի առումը, թէպէտ առանց պատերազմի, ունեցաւ իր ազդեցութիւնը մերձակայ քիւրտ ցեղերու վրայ, որոց գլխաւորքը ուկան իրենց ծառայութիւնքը և հպատակութիւնը ընծայել Տէր Ղուկասովի։ Քանի մը օր մնաց ի Բայազիտ, երկրին մատակարարութիւնը տեղացիներով կարգաւորելու համար, որոց մէջ անուանեց մահմէտականներ ալ։ Յետոյ թողուց քաղքին պաշտպանութեան համար 2000 զինուոր և չուեց Տիատինի վրայ, որուն վիճակին մէջ կը բնակէին մօտ 15,000 քիւրտեր։ Տիատին ինքնին չունէր կարեւորութիւն մը,

բայց անոր տիրելով, ձեռք բերած կ'ըլլար Վանայ ճամբան և հայտէրանլի քիւրտերուն վրայ ազդեցութիւն մը։ Տիատինի մօտերը քանի մը հազար պարսիկ զուք հաւաքուեր էին. որոնք երբ հեռուանց տեսան իշխան Ամիլոքվարիի գունդերը, զորս ղրկեր էր կանխաւ զօրավարն Տէր Ղուկասով, անմիջապէս ցրուեցան. և Տէր Ղուկասով տիրելով Տիատինի, հոն ալ թողուց պահանորդք Վանայ ճամբան պահելու համար։ Յետոյ ամրողջ բանակով մտաւ Մուրատ Սուի ձորը, հասաւ Ս. Յովհաննէս վանքի մօտ (Իւշ Քիլիսէ). ուր բոլոր հայ զինուորականք ուխտերնին կատարեցին։ Թուրքերը Իւշ Քիլիսէի մէջ շատ ցորեն հաւաքեր էին յափշտակութեամբ, հայազգի զօրավարը տէրերուն դարձուց և աղքատաց սերմ բաշխեց։ Հոն իմացաւ Տէր Ղուկասով զօրավարը որ Թշնամի գունդեր բանակած էին Քարաքիլիսէ, Ալաշկերտ և Աչխանէ. անոր համար տասուերկու օր մնաց ի Ս. Յովհաննէս, իր բանակը կազմելու և պատրաստուելու յանկարծական յարձակման մը։ Սակայն այդ թուրք գունդերը, Իուսաց մօտենալովը՝ հեռացան. և Յունիս 4ին Տէր Ղուկասով Քարաքիլիսէ մտաւ առանց պատերազմի։ Քարաքիլիսէի աջ կողմէն կ'անցնի Շահեօլու ճամբան, որ Կաղզմանի վրայով Կարս կ'երթայ. և որովհետեւ Լորիս Մէլիքովի բանակը արդէն տիրեր էր Կաղզմանի և կը պատրաստուէր Կարս չուելու, զօրավարն Տէր Ղուկասով իր ծրագիրը կատարած կը համարէր Աղեքսանդրոպոլի բանակին մօտեցած ըլլալովը. և բնակեցաւ Մուրատ Սուի արգաւանդ և ջրոտ ձորերուն մէջ. միանգամայն տիրելով Ալաշկերտի և Զէյտիկեանի։

Աղեքսանդրոպոլի բանակին յառաջելը. — Տեղացոց սիրալիր ընդունելութիւնը։

4. — Երեւանայ բանակին այս շարժմանց ժամանակ Աղեքսանդրուպոլի բանակն ալ կատարեր էր իր ծրագիրը։ Մեկնած առաջին օրը, շատ նեղութեամբ հրանօթքը անցուցեր էր Արփաչայէն. և այն՝ օգնութեամբ տեղացի Հայոց. որոնք սիրով դիմեր էին հայրենասիրական մեծ յոյսերով։ Երբ զօրավարն Լորիս Մէլիքով մօտեցաւ սահմանագլխին, սկսան այլ և այլ

ցեղերու բէյեր ընդ առաջ գալ, խոստանալով հպատակութիւն և օգնութիւն։ Այլ և այլ դիմող կամաւորներէ գունդ մը ձեւացուց որոնց հրամանատար դրաւ Քիշմիշէֆ զօրավարը։

Աղեքսանդրոպոլի բանակին առաջին հանգիստը եղաւ ի Մոլլա Մուսա, սահմանագլխին մօտ։ Երկրորդ օրը զօրավարն Լորիս Մէլիքով հրաւիրեց բոլոր տեղացի հայերը իր վրանին առջեւ և մեծաձայն կարդաց Մեծ դուքս Միքայէլի հրատարակութիւնը առ հայ ազգը. որով Ասիոյ պատերազմը հայ ժողովրդեան ապագայ երջանկութեան նպատակի մը համար կարծես ձեռնարկուած կ'երեւար։ Այդ հրատարակութիւնը որ կ'ապահովցնէր հայ ազգին ամէն պաշտպանութիւն, ընդունելի եղաւ ուրախալից կեցցէներով։ Ապրիլ 26ին բանակը անցաւ Կարսչայը, որ Արփաչայի առուակ մ'է. ջուրը ցած ըլլալով թէ զօրքը և թէ հրանօթք անցան դիւրութեամբ։ Գետէն անդին հայ գիւղերու բնակիչք, սիրով ընդունեցան ռուս սպայքը և զինուորները, որոց մէջ ունէին ծանօթներ և ազգակիցք։ Լորիս Մէլիքով սէր կը ցուցնէր հպատակողներուն և խստութիւն հակառակ երեւցողներուն։ Շաւնատար գիւղին բնակիչքը փախած ըլլալնուն համար, զօրավարն Լորիս Մէլիքով ի խրատ ուրիշ գիւղերու, կործանել տուաւ Շալնատարը։ Ընդհակառակն Զիւրիւք Տէրէի բնակիչք՝ հայ, յոյն, մահմէտական, իրենց հոգեւորականներով ընդ առաջ եկան Լորիս Մէլիքովի, նուիրելով աղ և հաց։ Հայ զօրավարը սիրով ընդունեցաւ զամենը և ծանոյց որ « Ոգոստափառ Ցարը կը թողուր ամենուն իրենց կրօնքը, լեզուն և սովորութիւնքը. տեսէք զիս, կ'ըսէր, գիտէք որ ռուս չեմ ծնած, կը պատկանիմ հայ եկեղեցւոյ և իմ մայրենի լեզուս հայերէնն է, և սակայն այսօր հրամանատար եմ ռուս գունդերու. վասն զի Ոգոստափառ կայսրը միայն արդեանց կը նայի. և չնայիր որ մէկը կրօնքով հայ է կամ յունադաւան կամ մահմէտական։ Բանակիս մէջ կան թուրք, չէրքէզ և թաթար զօրավարներ »։

Զօրավարն Լորիս Մէլիքով տեղեկանալով որ Հաճի Վէլիի մօտ կը գտնուէր Թուրք բանակ մը, հոն ղրկեց իր բոլոր հեծելազունդը։ Բայց Թուրք գունդերը հրաման չունենալով կռուելու, քաշուեցան Կարսի վրայ։ Երկրորդ օրը ռուս բանակը բռնեց Հաճի Վէլիի, որ Շորակէլի գլխաւոր տեղն է։ Ապրիլ 28ին բանակը հասաւ Զայիմ, Կարսէն քսան քիլոմէդր հեռու, հիւսիսային արեւմտեան կողմը. և հոն բանակեցաւ. հաստատելով Աղեքսանդրոպոլի հետ հաղորդակցութիւնը. և Զավչավածէ իշխանը ղրկեց հեծեալ գունդով մը Կարսի չորս կողմը լրտեսելու։ Մուխթար փաշա Թողուցեր էր Կարսը և քաշուեր դէպ ի Կարին։ Զավչավածէ իշխանը նախ մտաւ Քանիքէոյ, անկէ անցաւ Լիճակերտ և Զալիճա, աւրեց Կարսէն Կարին գացող հեռագիրը և մօտեցաւ Կարսի մինչեւ Վիզինքէոյ։ Այս տեղն էր որ փոքր գուպարած մը ունեցաւ Կարսէն ելած Թուրք գունդերու հետ և յաջողութիւնը Թուրքաց կողմն էր, երբ յանկարծ ասոնք Կարս քաշուեցան և Զավչավածէ բռնեց զՎիզինքէոյ և հոն հաստատուեցաւ. աւելորդ գունդերը ղրկելով առ Լորիս Մէլիքով, որ Մայիս 6ին մտնելով ի Կաղզման, Երեւանայ բանակին հետ հաղորդակցութիւնը հաստատեր էր։

Ախլցխայի բանակը դէպ ի Արտահան։

5. — Երրորդ կամ Ախլցխայի բանակը որուն կը հրամայէր զօրավարն Դէվէլ, Ապրիլ 28ին անցեր էր սահմանագլուխը, ուղղուելով դէպ ի Արտահան, Հայաստանի հին քաղաքներէն մին. անուանի շրջակայից բարեբերութեամբ կուր գետին պատճառաւ և բարեխառն կլիմայով։ Արտահան լաւ ճամբաներով կապուած էր Ախլցխայի, Բաթումի և Կարսի հետ. նշանաւոր կեդրոն մ'էր և նշանաւոր բերդաքաղաք, որուն հրամանատարն էր Հիւսէյին Սաբրի փաշա։ Զօրավարն Լորիս Մէլիքով զՇէրէմէթէֆ զօրավարը ղրկած էր լրտեսելու Կարսի հիւսիսակողմը։ Մուխթար փաշա բանակած էր Պարտէզի մօտ։ Շէրէմէթէֆի զինուորները Բերդիկ Զայի քով հանդիպեցան Թուրք գունդերու որոնց հետ կռիւ մը ծագեցաւ։ Ռուսերէն շատերը ինկան և մնացեալք փախան Զայիմ։

Նոյն օրը զօրավարն Լորիս Մէլիքով բռներ էր Թուրք զինուորական Թղթատարը[1], որուն մէջ կար նաեւ նամակ մը Արտահանի հրամանատարէն առ Կարսի հրամանատարը՝ իր մեծը. յորում մանրամասն կը նկարագրէր ամրութեանց վիճակը, տկար կողմերը և ձեռք առած միջոցները։ Լորիս Մէլիքով մտածեց որ հարկ էր փութով յարձակիլ Արտահանի վրայ, ո՛ր և է նոր փոփոխութիւն մը չ՚եղած, և լուր ղրկեց Դէվէլ զօրավարին՝ չուել Արտահանի վրայ. ինքն ալ 15,000 զօրքով կը խոստանար օգնելու։ Զօրավարն Դէվէլ թողուց զԲաքիրէ խաթուն և յառաջեց Լօլչէքէ և Ցաղստանէ դէպ ի Արտահան. ուր հասաւ նաեւ Լորիս Մէլիքով. և սահմանուեցաւ Կիւլիավէրտի ամրոցին կողմանէ, — որ տկար համարուած էր, — յարձակումը տալ։ Հրամայեց նաեւ Հայման զօրավարին՝ իր գունդերով Արտահանի հարաւակողմը՝ Կուրճիբէկ երթալ. հոն գիշերը կազմել հրանոթքը և առաւօտը կրակ թափել Կիւլլիավէրտի ամրոցին և Արտահան քաղաքին միջնաբերդին վրայ։

Արտահանի ամրումը։

6. — Հոս պէտք է յիշենք որ Սէվաստապօլի պատերազմէն վերջը, Թուրք վարչութիւնը մեծ հոգ տարած էր Արտահանի բերդերուն. ասոր չորս կողմը նոր և բազմաթիւ ամրոցներ շինուեր էին անգղիացի երկրաչափներու առաջնորդութեամբ. մասնաւորապէս Իքալի Թապիա, Սինկէր Թապիա, Խար Թապիա, Քայապաշը, Ճուխուն, Ռամազան Թապիա և Կիւլիավէրտի, որոց վրայ կային 35 կրուպ թնդանօթք։ Իսկ պահանորդն էր 10,000 զինուոր, որոց կը հրամայէր Հիւսէյին Սաբրի փաշա, Հիւսէյին Ռէշի փաշայի աներ ձագը. որ տեղապահութենէ, յանկարծ հազարապետ անուանուեր էր և յետոյ հրամանատար ղրկուեր էր յԱրտահան։ Մայիս 14ին նաեւ Ախլցխայի բանակին մեծագոյն մասը տեղաւորուեցաւ Կիւլիավէրտի բարձունքներուն դի-

1. Թէպէտ կասկած ալ եղած է մատնութեան մը։ Այսօրինակ դէպք՝ միայն այս չէ։

մաց։ Երկրորդ առաւօտը կանուխ Լորիս Մէլիքով ան-
ձամբ այց ելաւ ամեն դիրքերուն և ժամը ութին յար-
ձակման նշանը տուաւ։ Անմիջապէս քառասուն թնդանօթ
ահաւոր կրակ մը սկսան թափել Արտահանի բերդերուն
վրայ, որոնց՝ թուրքերը քաջութեամբ կը պատասխա-
նէին։ Բերդերուն շարունակ կրակին ներքեւ Ամիրա-
ճիպոֆ հազարապետին գունդը սկսաւ քայլ առ քայլ և
երբեմն մագլցելով ելլել Եիւլիավէրտիի բարձունքը. ո-
րոց հասնելու համար, հարկ էր կարգ կարգ պարիսպները
անցնիլ. ամեն պատի տակ կռիւը կը նորոգուէր և ամեն
պատ իրեւ բերդ մը կ՚առնուէր։ Ժամը 10ին Եղիսա-
բէթուպոլսոյ գունդը անձրեւի նման գնդակներուն ներ-
քեւ, գիւցազնութեամբ մրցելով, վերջապէս հասաւ կա-
տարը և վանեց հոնկէ թուրք պահանորդը դէպ ի միջնա-
բերդը և Արտահան։ Բայց անկարելի եղաւ հոն թնդանօթ-
ներ հասատուել, թրքաց անդադար ռումբերուն պատաս-
խանելու. և Եղիսաբէթուպոլսոյ գունդը՝ որուն միացեր
էր նաեւ Քուպանի գունդը, քաշուելու վրայ էին, երբ
Լորիս Մէլիքով տեղեկանալով Դէվէլ զօրավարին կա-
ցութեան վրայ, փութով վազցուց Հայման զօրավարը
իր սիւնակով։ Անմիջապէս պատերազմին կերպարանքը
փոխուեցաւ։ Ամիրաճիպոֆ հազարապետին գունդերը ե-
ռանգեամբ դիմեցին բերդին վրայ հիւսիսային կողմանէ,
մինչ Հայման զօրավարը Բազուի և Երեւանի վաշտե-
րով, երկու վերոգ ճամբայ կտրելով, թշնամւոյ կրակին
ներքեւ, հարաւային կողմանէ սկսաւ ելլել դէպ ի բեր-
դը։ Թուրք պահանորդը որ դիմացեր էր մօտաւոր բար-
ձունքներէն թափուած կրակին, քանի որ բերդը իրեն
պատապարան ունէր, տեսնելով որ թշնամին անվրէպ
պիտի տիրէր անոր. յանկարծ զադրեցուց կրակը և
սկսաւ փախչիլ դէպ ի Արտահան։ Քանի մը ծեր զի-
նուորներ չուզեցին թողուլ բերդը. և հոն կռուելով
քաջարար ինկան։ Սարբի փաշա խմանալով պահա-
նորդին փախուստը, ելաւ Արտահանէն զանոնք նորէն
դէպ ի բերդը մղելու, բայց փախչողներուն հետեւին
հետ մէկտեղ, ինքն ալ նոքէն Արտահան մտաւ։ Թուրք

տիրեցին Կիւլիավէրտի բերդին, ուր հասաւ փութով նաեւ զօրավարն Լորիս Մէլիքով, ընդունուելով զինուորացմէ մեծաձայն կեցցէներով։ Անմիջապէս, յանուն Միքայէլ մեծ դքսին նշաններ բաշխեց յարձակման մէջ քաջացողներուն։

Կիւլիավէրտիի կռիւը երկու կողմանէ ալ ծանրագնի եղած էր, և երկու բանակք ալ հարիւրաւոր մեռեալներ ունէին։ Բերդին մէջ մնացեր էին տասը թնդանօթք, շատ մը պատերազմական մթերք. բայց ամենէն աւելի՝ Ռուսք կը տիրէին բերդի մը, որ կ'իշխէր քաղքին վրայ։ Հայման զօրավարը անմիջապէս թնդանօթքը զիտեղելու զբաղեցաւ. և մէկ գիշերուան մէջ բարձրացուց անոնց պատսպարան ամբարտակները։

Երկրորդ օրը զօրավարն Լորիս Մէլիքով նուիրակ մը ղրկեց առ Սաբրի փաշա, որպէս զի անձնատուր ըլլայ, սակայն թուրք հրամանատարը մերժեց առաջարկը։ Լորիս Մէլիքով Մայիս 17ին կէսօրուան ժամը 3ին ահաւոր ռմբակոծում մը սկսաւ Արտահանի պարսպաց դէմ։ Ժամը 4 1/2ին դիտեց պարիսպներէն մէկ մասի մը փնասուիլը և թուրքաց այն կողման հրանօթներուն լռելը։ Այն ատեն հրաման ղրկեց Հայման զօրավարին, այդ մասէն յարձակիլ քաղքին վրայ։ Անմիջապէս Երեւանայ և Բագուի գունդերէն մաս մը, որոց գլուխ կեցաւ ինքնին զօրավարն Հայման, իջաւ հեղեղատը և դիմեց դէպ ի Սինկէր թապիա։ Թուրքերը տեսնելով որ անկարելի էր դիմանալ այդ յարձակման, սկսան իջնել դէպ ի Կուր գետը, իրենց հալածող ունենալով Երեւանայ գունդը։ Այս միջոցիս զօրավարն Դուխովսքի յառաջեր էր դէպ ի քաղաքը և փախստէից հետ մտեր էր արուարձաններուն մէջ, ուր սկսեր էր քայլ առ քայլ մրցում մը։ Սակայն կարելի չէր տիրել քաղաքին, մինչեւ Ռուսք չբռնէին Կուրի կամուրջը, անցնէին աջ կողմը, և տիրանային միջնաբերդին։ Այն ատեն Հայման զօրավարը առաւ հետը երկու հարիւր զինուոր, նետուեցաւ անոնց հետ կամրջին վրայ և արիւնահեղ մրցումէ մը վերջ, անցաւ Կուրի միւս կողմը և ճամբայ բացաւ

ռուս բանակին դէպ ի քաղաքը։ Այս վարկենէն պա-տերազմին ելքը յայտնի էր։ Թուրքերը ի սկզբան խառն ի խուռն սկսան նահանջել և յետոյ քաղքին միւս կողմէն փախչիլ, փախստէից մէջ էր նաեւ Սաբրի փաշա, որ դիմեց դէպ ի Կարին։ Իր սպայակուտին հրամանատա-ր Ահմէտ աղա քաջաբար կռուելով, ինկեր մեռեր էր։ Լռեցին թնդանօթները և Ռուսք կեցցէներով մտան Ար-տահան. Լորիս Մէլիքով հոն թողուց Երեւանայ գունդը իբր պահանորդ, անոնց հրամանատար դնելով Տոլստոյ հազարապետը. և զՄիչէնքօ հազարապետը Արտահանի զինուորական հրամանատար դրաւ։ Երկրորդ օրը ռուս հեծելազօրը փախստէից ետեւէն ինկաւ. որոց մաս մը խումբ խումբ Արտանուչէն և Ղորոխի ճամբով կրցաւ Բաթում հասաքուիլ։ Քիւրտ և աճարացի բէյերը իրենց մարդիկներով իրենց տները դարձան։

Լորիս Մէլիքով Արտահանի առման պաշտօնական տեղեկագրին մէջ զՀայման զօրավարը «Օրուան դիւ-ցազնը» կոչած է։ Ռուսաց կորուստը 2000 մարդէն աւելի կը համարուի, նոյնչափ մ'ալ մեռան Թուրքաց կողմանէ[1]. ասոնցմէ բռնուեցան նաեւ շատ գերիներ։ Ար-տահանի առմամբ կը բացուէր Ռուսաց առջեւ Կարսի ճամբան. և Կարսը կը բաժնուէր Բաթումէն և Կարինէն. միանգամայն կը ստիպէր զՄուխթար փաշա Թողլու Սողանլուի գիծը։

Արտահանի առման լուրը ի Կ. Պոլիս։

7. — Այս նիւթական հետեւանքներէն զատ Արտա-հանայ առումը բարոյական տխուր տպաւորութիւն մը ունեցաւ Թուրք մայրաքաղաքին վրայ. ուր Արտահան անառիկ կը համարուէր իր դրից և պահանորդին քա-ջութեան պատճառաւ։ Ասիոյ բանակին ընդհանուր հրա-մանատարը Մուխթար փաշա, հեռագրով պահանջեց որ Սաբրի փաշա զինուորական ատեանով դատուի։ Նոյնը կը պահանջէր մայրաքաղաքին ժողովուրդը։ Արտահանի

---

1. Թուրք գրիչք իրենց կորուստը կը դնեն 1850 անձինք և Ռուսացը 3000ի մօտ։

անկման լուրը ցնցեց ամեն թուրք դասակարգ, սուլթանէն սկսեալ ցյետին քաղաքացին։ Երկրորդ օրը Մայիս 11, օսմանեան Նորածին խօսարանին մէջ կարնոյ հայ երեսփոխանը, Համազասպ էֆէնտի, նոյնը պահանջեց պաշտօնարանէն. և ժողովքը հրաւիրեց որ երկրորդ օրը պաշտօնէից մին բացատրութիւն մը տայ Արտահանի առման վրայ, որուն բերդերուն համար այնքան մեծագումար ծախքեր եղեր էին [1]։

Երկրորդ օրուան նիստը շատ յուզեալ եղաւ։ Քանի մը հարիւր սոֆթայք՝ երեսփոխանական խօսարանին երկաթի վանդակաղրան առջև գումարուեցան. և իրենցմէ նուիրակութիւն մը ներկայացաւ խօսարանին, Արտահանի առման նկատմամբ բացատրութիւնը խնդրելով։ Խօսարանին նախագահը Ահմէտ Վէֆիք փաշա՝ պատասխանեց, որ արդէն ժողովքը այդ խնդրով կը զբաղէր և թէ քանի որ ժողովուրդը երեսփոխանական ժողովք մը ունի, ա՛լ պէտք չէ ուղղակի միջամտէ. և յորդորեց Սոֆթաները ցրուելու՝ «կեցցէ Սուլթան» գոչելով. ինքն ալ անմիջապէս նիստը վերցուց։

Հետևեալ օրը Պալատան մէջ նախարարք ժողովքի գումարուեցան. և Կ. Պոլիս ու շրջակայքը պաշարման վիճակի մէջ դրուեցան. խստութիւն մը տիրեց լրագրաց և այն անձանց վրայ, որոնք կը պահանջէին Միտհատ փաշայի դարձը։ Երեք օրուան մէջ 300 հոգի աքսոր ղրկուեցան. որոնց մէջ էին Երիտասարդ թուրք կոչուածներուն գլխաւորք՝ Ա՛ռեահ էֆէնտի, Իսմայէլ, Ռէմալ, Քիւչիւք Իմին, Մահիր բէյերը։ Կ. Պոլսոյ ամեն կողմը լրտեսներ տարածուեցան դիտելու թէ ինչ կը խօսուի։ Խափանուեցան այն լրագիրք՝ որոնք Ռէտիֆ փաշայի դէմ խօսեր էին. և խիստ հսկողութիւն դրուեցաւ Մուրատ Եի բանտուած պալատան չորս կողմը։ Միանգա-

---

1. Համազասպ էֆէնտի ի մէջ այլոց խօսից բաւ. «Կ՚ըսեմ պատերազմին ժամանակ, Արտահան այժմու գօրութիւնը չունենալով, երկու տարի դիմացաւ. իսկ հիմա աւելի ամուր և հզօր վիճակի մէջ դրուած ըլլալով, չկրնայ դիմանալը խելքի դէմ է»։ Մասիս լրագիր 1877։

մայն լուր մը տարածուեցաւ, որ «Արտահանի առումը ստոյգ չ'երևար». և Թուրք ամբոխը հաւատաց և հաստատեց. որով քիչ մը հանդարտեցաւ։

Թուրք կը չուեն դէպ ի Կարս։

8. — Զօրավարն Լորիս Մէլիքով Արտահանի առման վրայ բանակին երեք օր հանգիստ տալէն վերջը, յետ քաղաքապետ դնելու մեծ դքսին կողմանէ զՊոպով զօրավարը և հրամանատար կոմարոֆ հազարապետը, չուեց դէպ ի Կարս։ Ախլցխայի բանակին մէկ մասը գնաց, բռնեց նաև Օլթի, զոր Թուրքերը առանց պահանորդի Թողուցեր էին։ Բայց երբ Շահին փաշա նոր գունդերով յառաջեց դէպ ի Օլթի, այն ատեն ռուս գունդը Թողուց զայն և քաշուեցաւ Պէննէքի վրայ։ Իսկ Մուխթար փաշա Արտահանի առմանէն վերջը, խոհեմութիւն համարեցաւ Թողուլ զԿարս և քաշուիլ Ռվին. մանաւանդ որ Մայիս 16ի կոմարոֆ զօրավարի գունդերէն ջոկատ մը, որուն կը հրամայէր Զոլայէֆ զօրավարը, մինչեւ Կարսի ներքեւը երեւցեր էր և վաներ էր Թուրք պահանորդը մինչեւ քաղաքը[1]։ Արդէն Լորիս Մէլիքով սահմաներ էր կանոնաւորապէս պաշարել զԿարս և անոր մօտեցնել բանակները, որոց պիտի հրամայէին ինքն զօրավարն Լորիս Մէլիքով և զօրավարքն Հայման և Դէվէլ. իրենց բանակատեղիքն պիտի ըլլային Մէզրէ, Կարսի արեւելեան–հիւսիսային կողմը, Արտահան՝ ի հիւսիս, և Արտոսդ՝ հարաւային–արեւմտեան կողմը։

Մուխթար փաշա Կարսի հետ հաղորդակցութեան գիծը պահելու համար, զՄուսա փաշա 1000 չէրքէզ հեծեալներով ղրկեց դէպ ի Կարս։ Մուսա փաշա Սողանլու Տաղը անցնելով, երեկոյեան եկաւ բնակեցաւ Բէնկլի Ահմէտ, ուր Կարսէն Կարին գացող ճամբան երկու կը բաժնուի։ Լորիս Մէլիքով որ Արտոսդ կը

---

1. Զոլայէֆ զօրավարը յայթութենէ վերջը, երբ կը խնդակցէր իր տաղտանցի գունդին հետ, թշնամեաց զնդակ մը զինքը վիրաւորեց։ Տարուեցաւ Զայիմ բանակատեղը և հոն մեռաւ։

չուէր, լսելով Մուսա փաշայի ներկայութիւնը, յանձնեց Զավչավածէ իշխանին, յարձակելու Թուրք հեծելոց վրայ։ Իշխանը հետը առնելով ձիաւորաց վաշտ մը և 16 հրանօթք, Մայիս 10ի գիշերը հասաւ Բէնկլի Ահմէտ, և գիւղը պաշարեց։ Մուսա փաշա իր չէքէզներով մոլեգնաբար կռուեցաւ գիւղէն ելլելու համար, և մօտ 600 անձինք սպանուեցան։ Մնացեալքը, 400ի մօտ, փախան ի Թրվին, ուր էր Մուխթար փաշայի բանակը։ Ազատողաց մէջ էր նաեւ Մուսա փաշա։ Բէնկլի Ահմէտի կռիւը Մուխթար փաշայի շատ վնասակար եղաւ, արդէն սակաւաթիւ հեծելազօրը բոլորովին նուազեցնելով։ Մուխթար փաշա Կարսի հետ հաղորդակցութիւնը պահելու մտածութենէն յուսահատեցաւ և բերդաքաղաքը ինքնիրեն մնաց։

Լորիս Մէլիքով որ արդէն հասեր էր Կարսի մօտ, ամեն կողմանէ 45 քիլոմէդր հեռաւորութեամբ պաշարման գիծ մը դրաւ։ Յունիսի սկիզբը մեծ դուքսն Միքայէլ, անձամբ եկաւ ի Մէզրէ, պաշարման վիճակը քննելու. և Յունիս 5ին առաջին ռումբ մը նետուեցաւ Կարսի բերդերուն վրայ։ Անկէ վերջը մինչեւ Յունիսի կէսը, ամեն օր, ռմբակոծումը տեւեց Թահմազ բերդին վրայ։ Յունիս 14ին Թուրքերը փորձեցին քաղքէն ելլելով աւրել Ռուսաց պատնէշները. բայց զօրավարն Հայման վանեց զիրենք։ Յունիս 17էն մինչեւ 23 Ռուսք միակերպ հարուածեցին Բարատաղ, Ալրաբ և Միւխլիս բերդերը. 23ին յարձակում մը եւս ըրին բայց ետ մղուեցան մեծ կորուստներով. և Յունիս 25ին թողուցին Կարս և դիմեցին ի Սողանլու. ուր բանակած էր Մուխթար փաշա։

Ռիոնի բանակը. — Օքլարճօ զօրավարը. — Հասան Թահսին փաշա. — Զուրուքսույի Ալի փաշա։

9. — Ապրիլ 24ին Ռիոնի բանակը հրաման ըստացեր էր սահմանագլուխը անցնելու։ Իր նպատակը պիտի ըլլար Բաթում քաղաքը և Ճորոխի հովիտը. ուսկից կրնար վերը ելլել դէպ.ի Բաբերդ, Կարին և կամ Կարս, երկու ճամբով. մին Ճորոխով Արդուին և Բաբերդ, միւսը հին Օֆ կամ Օֆիս աւանէն՝ բարձրանալով դէպի Սպեր և մօտենալով Կարնոյ ճամբուն։ Դարձեալ պիտի ջանար

ծովուն կողմանէ արգելուլ ո՛ր և իցէ օգնութիւն մը թրքաց։

Սակայն Ռուսաց համար շատ դժուար էր փութով Բաթում հասնիլը. հեղեղատներով, կիրճերով և բարձունքներով լի էր Կովկասի այդ մասը, և թշնամի լազ ցեղեր շատ էին. որոնք Ռուսաց վրայ կրկին թշնամութիւն կը տեսնէին՝ քաղաքական և կրօնական։ Ռիոնի բանակին արշաւելիք երկիրը փոքր էր, բայց դժուարութիւնը մեծ։ Մինչեւ Բաթում 45 քիլոմէդր երկրին մէջ 11 հեղեղատք կային անցնուելիք. որոնք Ապրիլի վերջը լի էին ջրով և թուրքերը այդ հեղեղատաց մօտ բլուրներուն վրայ՝ թնդանօթներով ամրացեր էին։ Ռուսք երեք ճամբով կրնային մտնել թուրք հողը. այս երեք ճամբաները կը միանային Մուխասթէտի քով. անկէ վերջը կար միայն մէկ ճամբայ, որ կ՝երթար մինչեւ Ջիխէ Ծիրի ծովուն մօտ. և ծովեզերքէն կը շարունակուէր մինչեւ Բաթում։

Ռիոնի բանակը իր դիմացն ունէր թուրք 20,000ով բանակ մը, որոց ութ հազարը լազ պաշիպօզուք էր, հմուտ երկրին ամեն դարձուածքներուն. ամենն ալ մոլեռանդն մահմէտականք, որոնք վազեր էին իբրեւ սըրբազան պատերազմի մը։ Ընդհանուր սպարապետն էր Հասան թահսին փաշա, քաջ զինուորական մը։ Մուխասթէտի քով բանակած էր լազ պետ մը՝ Զուրուք սուլի Ալի փաշա. հինգ հազար հետեւակօք և երեք գունդ ձիաւորներով։ Ռիոնի բանակը երեք մասի բաժնուած, յառաջեց դէպի օսմանեան սահմանագլուխը։ Ձախ թեւը, որուն կը հրամայէր Դէնիբէկօֆ զօրավարը, յառաջեց Զոլուխէն, աջ թեւը Շէֆքէթիլէն և միջինը Ուզուրկէթէն։ Այս երեք գունդերը հազիւ երեք օրուան մէջ կրցան միանալ Լիլի քով, Շէլէմէթիէֆ զօրավարին հրամանատարութեան ներքեւ։ Պէտք է այս ալ ըսենք, որ Ռիոնի բանակին գործողութիւնք, միշտ դանդաղութեամբ կատարուեցան։ Շէլէմէթիէֆ զօրավարի գունդերը յառաջեցին դէպ ի Մուխասթէտ, ուր էր Զուրուքսուլի Ալի փաշա. ձախ թեւը փոքրիկ ընդդիմութենէ մը վերջը՝ բռնեց Լէկվա գիւղը և իջնալով

Օքչամուրի, մեծ թափով մը բաղխեց Ալի փաշայի դիրքը։ Պատերազմը տեւեց տասնումէկ ժամ. առաւօտեան ժամը եօթէն մինչեւ երեկոյեան վեց. և ռուս գրիչք անգամ մեծապէս գոված են Ալի փաշայի անվեհեր ընդդիմութիւնը, որ այն օրը մինչեւ դիւցազնութեան կէտին հասաւ. որով և այնքան բարձրացուց իր անունը ի Կ. Պոլիս։ Նոյն օրը երկու կողմանէ ալ հարիւրաւոր անձինք ինկան։ Բայց երկրորդ օրը Շէլէմէթիֆի կրկին յարձակման վրայ, Թողուց զՄուխասթէտ և քաշուեցաւ դէպ ի Զուրուքսու, որով Ռուսք բռնեցին Օքչամուրի ճամբաները։

Սակայն Թուրք բանակին նոր օգնութիւններ կուգային Բաթումէն, որոնք կ'ամրացնէին Զուրուքսուի գիծը և Խուցուպանի բարձունքը։ Մայիս 11ին Օքլոբճա զօրավարը, ընդհանուր հրամանատար, հրամայեց Դէնիբէկով զօրավարին բռնել Խուցուպանի գիւղը. մինչ Շէլէմէթիֆ զօրավարը պիտի տիրէր Մուխասթէտէն դէպի ծով ճամբան։ Առաւօտեան ժամը երեքին՝ զօրավարները սկսան իրենց սահմանեալ շարժումը։ Զօրավարն Դէնիբէկոֆ կվարս և Խուցուպանի գիւղերուն հասնելու համար, պէտք էր կտրեր անտառներ և մացառուտներ։ Արդ հազիւ Դէնիբէկոֆ անտառին մէջ մտած էր, անընդհատ կրակ մը սկսաւ մօտակայ Աչքուայի բարձունքներէն, և շատ անձինք ինկան կամ վիրաւորուեցան. որոց մէջ էր նաեւ Լվտոքիմոֆ գնդապետը։ Այն ատեն Օքլոբճա զօրավարը հրամայեց որ գունդերը նահանջեն, ուժերը ամփոփելու և յետոյ դիմելու Աչքուայի գծերուն վրայ։

10. — Հասան թահսին փաշա որ լաւ ըմբռնած էր Աչքուայի գծին կարեւորութիւնը, հոն ղրկած էր 6000 զինուորք, որոնք ծառերուն ետեւ պահուրտած երագաձիգ հրացաններով անընհատ կրակ կը թափէին Ռուսաց վրայ։ Առաւօտեան ժամը ութին միջոցները Օքլոբճա զօրավարը հրամայեց Սեվաստապոլի զօրաբաժնէն ջոկատի մը, Բարանովսքիի հրամանատարութեան ներքեւ՝ յառաջել դէպ ի Թշնամւոյն կեդրոնը, չնայելով

Ռուսք կը սիրին Աչքուայի գագաթներուն։

թշնամւոյն կրակին։ Երկու կողմանէ հարուածներու մրցում էր, երբ Օքլոբճօ զօրավարը պատուիրեց Դէնի-բէկոֆի, սուիններով յարձակել թշնամւոյն վրայ։ Ռուս գունդերը այս հրամանին վրայ ահեղաձայն կեցցէներով դիմեցին Թրքաց դիրքերուն վրայ, որոնք սկսան ետ նահանջել և Թողին Ռուսաց ձեռքը Աչքուայի վրայ եղած բարձունքը։ Միեւնոյն միջոց Շէլէմէթիէֆ զօրավարը կը փորձէր Աչքուայի ուրիշ գծով մը՝ տիրելով Խուցուպանի, մօտենալ Փինթրիսք ջրանցքին։ Առաւօտեան ժամը 4ին Լայստէլ գնդապետին զօրքը մօտեցաւ Աչքուայի և մտաւ մացառուտի մը մէջ, ուր պահուրտած թշնամին, անդադար կրակ մը սկսաւ ռուս գունդին վրայ և վիրաւորուեցաւ նոյն իսկ Լայստէլ գնդապետը, որ չուզեց հրամանատարութիւնը թողուլ և շարունակեց հրամանները տալու։ Գունդերը իրեց հրամանատարին արութենէն վառուած՝ սուինով յարձակեցան Թրքաց վրայ, որոնք անցան Աչքուայի միւս կողմը։ Ռուսք ետեւէն անցան, զիրենք ձախ թեւէն ալ վանելու. սակայն այդ անցնիլը իրենց դարան մը եղաւ. և Թուրքերը ահաւոր կրակ մը սկսան թափել՝ գետը անցնող զինուորաց վրայ, որոնք սկսան ցրուիլ ապաւէն փնտռելու մացառուտներուն մէջ, և շատերը մեռան։ Շէլէմէթիէֆ հրամայեց որ դառնան դէպ ի աջ կողմը։ Այս միջոցիս Հասան Թահսին փաշա 2000 հետեւակօք և 600 ձիաւորօք անցաւ Աչքուան Ռուսացւոյ երեք քիլոմէդր վեր, և յանկարծ ինկաւ Փութայիսի գնդին վրայ։ Եթէ Հասան փաշա աւելի թուով գունդեր բերած ըլլար, նոյն օրը բոլորովին պիտի ջարդուէին Շէլէմէթիէֆի գունդերը. սակայն երբ իր գունդերը յոգնած էին, օգնութիւններ հասան ռուս զօրապետին, որ արդէն գետը անցած, ընդհանուր յարձակումն պատուիրեց և բռնեց բարձունքներէն զոմանս։ Այս անգամ նահանջի կարգը Թուրքաց էր, որոնք վախնալով թշնամիէն շրջապատուելու, գահավիժարար սկսան քաշուիլ ի Կարուլէտ և Զիխէ Ղրիրի։ Կէսօրուան մօտ կրակը դադրած էր և Աչքուայի ափունքները Ռուսաց ձեռքն էին։ Ռուսաց անձանց կորուստը 1000էն աւելի կը համարուի, Թուրքացը աւելի նուազ։

11. — Թուրքերը Աչքուայի գիծը կորսնցնելով, ամփոփուեցան Քինդրիսքի մօտ, որուն ձախակողմեան ափանց մօտ կային Սամէբայի բարձունքը, որոնց վրայ Թնդանօթներ զետեղուած էին և կը տիրէին հիւսիսէն եկող ճամբաներու։ Սամէբայի կռնակը, ծովուն եզերքն էր Զիխէ Միրի ճամբան, որ Բաթումի բանալի համարուած էր և ուր Թուրքերը զօրաւոր բերդեր հաստատած էին. և տեղացի մահմէտական ժողովուրդը ամենայն եռանդով պատրաստուած էին Թուրք զօրաց հետ միաբան արիւն թափելու, ոչ–մահմէտական պետութեան մը լծոյն ներքեւ չ'ինկնալու համար։ Իրենց անկարելի կ'երևար որ կարենան ապրիլ ռուս պետութեան իշխանութեան ներքեւ. և պիտի վիճակէր իրենց Թողուլ տներնին, հայրենիքնին և գաղթել Թուրք գաւառներ։ Օքլոբճօ զօրավարը ըմբռնեց որ հարկ էր անկարող ընելու տեղացի ժողովուրդը, և անոնց վրայ հսկող դիրք մը ունենալ։ Այս պաշտօնը յանձնուեցաւ հայ Մէլիքով գնդապետին, որ քայլ առ քայլ վանելով տեղացի անկանոն զինակիրները, մօտեցաւ Խուցուպանի և բռնեց այնպիսի դիրք մը որ կը հսկէր Կաբուլէտի վրայ. և Լազերը չէին կարող շարժում մը ընել։ Ուրիշ գունդեր ալ բռնեցին զՍամէբա և վանեցին Թուրքերը Զիխէ Միրիի վրայ։ Յետոյ մինչ ամենայն ոք կը կարծէր որ Ռիոնի բանակը պիտի իյնայ Բաթումի վրայ և պիտի տիրէ անոր, յանկարծ կանգ առաւ իր ընթացքէն մէջ. թերեւս համարելով որ խաղաղական ուրիշ հնարքներով կարենայ տիրել անոր։

Խուսք դէպ ի Բաթում։

12. — Օսմանեան Պետութիւնը ռուս բանակներուն տագնապ մը տալու համար, մտածեց յանկարծ փոխելու պատերազմին դաշտը. սահմանեց ռմբակոծել Սեւ ծովու վրայ զՍոխումքալէ, տիրել անոր, ապստամբեցնել չէրքէզ, ապղազ և չէչէն մահմէտական ժողովուրդները և անոնց հետ մէկտեղ Վլադիկաւկասի ճամբով ինկնալ Տփղիսի վրայ։ Այս գաղափարը նոր չէր. նոյնը մտածեր էր յամին 1855ի Ղրիմու պատերազմին ժամանակ Լոմէր փաշա. սակայն չէր կրցած յաջողիլ. դիմացը ունենալով

Թուրքաց Սոխումքալէի արշաւանքը։

զօրաւոր բանակ մը և բազմաթիւ մահմէտական մէկմէկու նախանձոտ ցեղեր, որոնք միութեան մը տարերք չէին կրնար ըլլալ։

1876 Թուրք և ռուս պատերազմին հրատարակուելուն Կ. Պոլսոյ և Տաճկաստանի մէջ չէրքէզ, ապրազ ցեղերու պանդխտած կամ փախած ազդեցիկ անձինք, անմիջապէս Կ. Պոլսոյ մէջ Յանձնաժողով մը կազմեցին, որուն նպատակը պիտի ըլլար յարաբերութեան մտնել իրենց հայրենիքներուն հետ, զանոնք ծածուկ պատրաստել ապստամբութեան, և Կ. Պոլսոյ վարչութիւնը համոզել, երթալ ազատել մահմէտական ժողովուրդները։ Ապրազիստանէ եկած լուրերը յոյս տուին Թուրք վարչութեան, որ յանձնեց Փոքր Ասիոյ և Կովկասի ծովափանցը նաւատորմղի հրամանատարին, Հասան փաշայի, որ կտրիճ նաւազն մ'էր ուսեալ յԱնգղիա, արշաւել Ապրազիստան և փորձել ապստամբեցնել մահմէտականները ընդդէմ Ռուսիոյ։

Հասան փաշա Բաթումի նաւահանգստէն մեկնեցաւ Մայիս 10ին. և 12ին արդէն Կտավուտայի դիմացը կը գտնուէր. որ Սոխումէն 74 քիլոմէդր է դէպ ի հարաւ։ Հոն անմիջապէս ռումբեր արձկելով, վանեց պահապան խազախները. և հազար չէրքէզ ցամաք հանեց։ Երկրորդ օրը նաւատորմիղը ռմբակոծեց նաեւ Օչէմչիրի, և 14ին հասաւ Սոխումքալէի դիմաց, որ արշաւանքին նպատակն էր։ Սոխումի մէջ հազիւ 1000 տուն բնակիչ կար. բայց բարեբեր երկիր մը՝ շրջապատուած լաւ մշակուած պարտէզներով, յարմար էր բանակի մը կեդրոնատեղին ըլլալու։ Հասան փաշա երկուքուկէս ժամ ռմբակոծելով քաղաքը, հրդեհով և աւերով, փլատակաց կոյտ մը դարձուց զայն. յետոյ Սոխումի հարաւային կողմը զօրք հանելով, բռնեց ռուս քաղաքը և կանգնեց օսմանեան դրօշակը։ Սոխումքալէի հրամանատար Կրավչէնքօ զօրավարը հաւաքելով ռուս պահանորդը, Փոտոր գետին միւս կողմը քաշուեցաւ։

Այս փոքրիկ տիրապետութիւնը, ունեցաւ Կ. Պոլսոյ մէջ իր մեծ շառաչը։ Մզկիթներուն մէջ գոհութեան

աղօթքներ կարդացուեցան։ Կ. Պոլիս գիշերը լուսավառուեցաւ, Շէյխ իւլ իսլամը զՍուլթան Աբդիւլ Համիդ Ղազի (Յաղթող) հռչակեց և զպատերազմը Ղէգա (սուրբ պատերազմ)։ Մեծամեծ յոյսեր ծնան ձեռք բերելու ամբողջ Ապղազիստան և թերեւս Վրաստանն ալ։ Հարկ էր մոռցնել ժողովրդեան Արտահանի պարտութիւնը։ Փութով չորս զրահաւոր նաւեր, չորս բեռնարձակ և մէկ ընթացիկ մարտանաւ 10,000 զինուորներով պատրաստուեցան մէկնելու, դէպի Սեւ Ծով։ Արշաւանքին ընդհանուր հրամանատար դրուեցաւ հազարապետ Ֆազլը փաշա։ Մայիս 24ին Սայիտ փաշա, Սուլթանի զինուորական Տանը պետը՝ գնաց մեկնելիք նաւերը. և Սուլթանին կողմանէ կարդաց օրհնութիւններ և քաջալերութիւններ։ Մայիս 25ին նաւատորմիղը ճամբայ ելաւ և Դոլմա Բահճէի դիմացէն անցնելու ժամանակ, անհամար եռանդնալից «կեցցէներ» գոչուեցան Սուլթանին։

13. — Այս միջոցիս Սոխումքալէի քով կը շարունակուէին փոքր կռիւներ և տիրապետութիւններ, որոնց մէջ մասնաւոր պէտք է յիշել Զիլ կամ Զիհիլ ամրոցին առումը Շաքիր փաշայէն 5000 զինուորօք։ Կռուոյն մէջ սպանուեցան երկու կողմանէ 200 զինուորէ աւելի և Թրքաց ձեռքը ինկան 10 թնդանօթք, որոնք յետոյ օսմանեան նաւով մը Կ. Պոլիս ղրկուեցան և Թոփհանէի հրապարակը դրուեցան։ Թէ Սուլթանը և թէ ժողովուրդը գնացին տեսնելու պատերազմական այս աւարները, որոնցմէ ոմանց վրայ կային Սուլթան Աբդիւլ Մէճիտի թուղթեր. և հաւանականաբար Ռուսք գերեր էին զանոնք 1855ի Կարսի պատերազմին մէջ։ Մայիս 23ին 3000 չէրքէզք բռնեցին նաեւ Ատլէր, որով Շէյկովսկիով հայ հազարապետին հրամանատարութեան ներքեւ եկած ռուս գունդերը Սոչիի գետին ետեւը ամրացան։

Թուրքաց ուրիշ յաջողութիւնք. Զիլի կռիւը։

Զիլի ամրոցին առմանէն վերջը երբ հասաւ Կ. Պոլսէն նաեւ Ֆազլը փաշա, Տաճիկք սահմանեցին գործադրել իրենց մեծ ծրագիրը։ Բոլոր ապստամբ ապա-

զաներէ և չէրքէզներէ գունդեր կազմեցին, իրենց օգնական ունենալով Ահմէտ Կումպուլատ տեղացի բէյը. և պատրաստուեցան չուել դէպ ի Փութայիս և Վրաստանի կեդրոնը։ Բայց այս միջոցիս Ինկուրի բանակը կազմուեր էր Ալիազոֆ զօրավարին հրամանատարութեան ներքեւ[1]. և Տաճիկք երկրին ներսը թափանցելու համար հարկ էր որ յարեւմուտս կոուէին Փուրանի խազախներուն հետ, ի հիւսիս Շէլկովնիկովի և ի հարաւ Կրավչէնքօ զօրավարին ջոկատներուն հետ. միայն ծովը բաց ունենալով իրենց թիկանց, և այն ջերմ ամիսներուն ժամանակ, մնացին ճահիճներուն մէջ. որով մահառիթ հիւանդութիւնները և տենդերը տարածուելով զինուորաց մէջ, պաղեցուցին պատերազմելու եռանդը։ Ֆազը փաշա ուզեց ցամաքէն անցնիլ Փոթի և միանալ Բաթումի բանակին հետ. այս պատճառաւ Մանմուտիէ և Շանդէր զրահաւորները սկսան կրակ թափել հարաւային ռուս գունդերուն վրայ. բայց անոնց ներս քաշուելովը, գնդակները չհասան և թրքաց փորձը մնաց ապարդիւն։

Շէլկովնիկով հազարապետը կը վանէ Թուրքերը. — Թուրքերը կը մեկնին Սոխումքալէն։

14. — Անկէ վերջը Թուրք բանակը միշտ կորուստներով ստիպուեցաւ քաշուիլ ծովեզերքը և դէպի նաւերը։ Օգոստոս 5ին Շէլկովնիկով հազարապետը Սոչիէն անցաւ Սանտրիպշ անկէ Գադրիպի և Գադրայի անցքը։ Օգոստոս 8ին բռնեց Կոլդախվարեան անցքը և Բգիրիի քով յաղթութիւն մը կատարեց թրքաց վրայ և զանոնք վանեց։ Երկրորդ օրը Ապազներուն գլխաւորները ներկայացան հնազանդելու համար։ Օգոստոս 9ին Շէլկովնիկով յարձակեցաւ Պիցոնդայի մէջ թուրք պաշիպոզուքներուն վրայ, որոնք միարան կանոնաւոր զինուորներուն, դէպ ի նաւերը փախան։ Օգոստոս 11ին ալ Շէլկովնիկով տիրեց Կտաւուտա ամրոցին. որով թրքաց ապաւէն կը մնար միայն Սոխումքալէ, զոր արդէն իրենք աւերակ դարձուցեր էին։ Կ. Պոլսոյ վարչութիւնը ըմբռնեց որ ալ նպատակ չկար հոն զինուոր

1. Զօրավարն Ալիազոֆ հայ էր ազգաւ։

պահելու. և Հորայրդ փաշա ծովակալին յանձնեց 20 նաւերով երթալ և բերել զինուորները։ Արդէն չէր կարելի ուշանալ, քանի որ Օգոստոսի վերջերը Ալիսգոֆ և Բարիչ զօրավարները և Շէյկոմիկով հազարապետը մուտեցեր էին Սուխումի։

Թուրք զօրաց հետ մեկնեցան հազարաւոր ապստամբ և չէրքէզք, որոնք զէնք առեր էին Ռուսաց դէմ։ Թուրք վարչութիւնը փոքր Ասիոյ մէջ տեղաւորեց զանոնք, որոնք ամեն գացած տեղերնին վախ սփռեցին սպանութեամբ և աւարառութեամբ.

15. — Սակայն այս ձախողութիւնք և մանաւանդ կանխաւ Արտահանի առումը և ի Կ. Պոլիս սոֆթաներուն շառաչալից ցոյցը, ունեցեր էին իրենց բարեբեր հետեւանքները Մուխթար փաշայի բանակին համար։ Վարչութիւնը պահեստէն մաս մը ի զէն կոչեց փոքր Ասիոյ մէջ, որոնք դրամի հետ միաբան ղրկուեցան Ասիոյ բանակին[1]։ Մուխթար փաշա ինքը եւս դրամով Լազիստանէն նոր գունդեր հաւաքեց։ Հարիւրէն աւելի կրուպ թնդանօթք երկար ժամանակէ ի վեր ձգուած էին Տրապիզոնի ծովեզերքը և Կիւմիւր մէյտան հրապարակը։ Մուխթար փաշա անոնց փոխադրութեան պարտքը բաժնեց իւրաքանչիւր տեղւոյ վրայ. հարիւր անձինք պարտական էին գրաստ մը ղրկելու։ Կենդանի մատակարարել չկրցողք՝ իրենք քաշեցին զանոնք. այսպէս քիչ ատենուան մէջ թնդանօթք իրենց սահմանեալ տեղերը զետեղեցան։ Ասիոյ մէջ քիչ բանակ այնքան կանոնաւորութիւն և կարգապահութիւն ունեցած է թէ ճամբարի և թէ պատերազմի մէջ ինչպէս Մուխթար փաշայի բանակը. և թէպէտ արդեանց մեծագոյն մասը կ'ընծայուի սպայա-

Հայաստանի Թուրք բանակին կացութիւնը։

---

1. Մեծ գումարներ՝ ղրկեցին պատերազմի ծախուց համար նաեւ Հնդկաստանի մահմէտականք։

Բ. Դուստ որոշեց որ տէրութեան պաշտօնեայք և բարձրաստիճան պաշտօնակալք իրեց ձիերը բանակին նուիրեն։ Հրամանագրին ընթերցմանէն վերջը Պարապետին Դուստ, ուր հաւաքուած էին պաշտօնեայք և պաշտօնակալք, ամենն ալ ինքնաբերաբար նուիրեցին իրենց կառքերուն ձիերը և հետի դարձան։

կուտի գլխուն Ֆէյզի փաշայի, երբեմն բարոն Քահլմանն՝ ազգաւ մահառ, այսու հանդերձ պէտք է վկայել որ մեծ էր Մուխթար փաշայի ազդեցութիւնը՝ եթէ ուսեալ և եթէ զայլս յարգող բնաւորութեամբ։

Մուխթար փաշա օգնութեանց սպասելով, Ռվին քաշուած էր այնպիսի դիրքի մը վրայ, որ ունէր երկու ճամբայ դէպ ի կարս։ Իր աջ թեւը բանակած էր Հինձք գիւղը, հազիւ մղոն մը հեռու Կարնէն. կը հսկէր Օլթիի ճամբուն վրայ, հաղորդակցութիւն ունենալով միանգամայն Հասանղալէի և Քէօփրիքէոյի հետ։ Իսկ ձախ թեւը որուն կը հրամայէր Մէհէմէտ փաշա թաթլրճը-զատէ, կը գրտնուէր ի Դէլիբաբա, Բայազիտէն անցնող Խորասանի ճամբու վրայ. և բռնած էր այն ճամբաները, յորոց թշնամին Բասենի դաշտերէն կրնար չուել Իրզրումի վրայ։

Թուրքերը կը յաղթուին ի Դրոմտաղ։

Զօրավարն Ցէր Ղուկասով հրամանատար Երեւանի բանակին, որ Բայազիտ առնելէն վերջը չուեր էր դէպ ի Կարս և Կարին, միանալու միւս բանակաց հետ, սահմանեց բաղխելու Մէհէմէտ փաշայի բանակը. և Յունիս 14ին Դրոմտաղի բարձունքներուն վրայ տեղաւորեց իր հրանօթքը. և 16ին առաւօտ հրամայեց գունդերուն, հրանօթներուն կրակին պաշտպանութեան ներքեւ, յառաջելու թուրք գունդերուն վրայ։ Թուրք բանակը Ռուսաց յառաջելը տեսնելով, ինքը եւս սկսաւ կրակը. և պատերազմը մոլեգին կերպարանք մը առաւ, մանաւանդ երբ ռուս գունդերը յարձակեցան թուրք պատնէշներուն վրայ։ Թուրք գունդերը կը կռուէին ամենայն արութեամբ սակայն Դրոմտաղի բարձունքներուն թնդանօթները ջախջախեցին ջոկատները և նոյն իսկ հրամանատարը՝ Մէհէմէտ փաշա, սուրը ձեռքը ինկաւ հարուածէ մը։ Այն ատեն թուրքերը սկսան հապճեպով նահանջել, հետերնին տանելով սակայն ամեն պաշար և մթերք. այնպէս որ երբ Ռուսք տիրեցին բանակին, չգտան բնաւ իր մը։ Մէհէմէտ փաշայի յաջորդը Մուսդաֆա փաշա, 12 մղոն հեռու քաշուեցաւ նոր պատնէշներու ետեւ. և հոն հաւաքեց ցրուած զինուորները։

Մուխթար փաշա չ'այլայլեցաւ Դրոմտաղի պարտութեան վրայ. բայց և ամենն ջանք պէտք էր ընել որ Երեւանայ բանակը չմիանայ Աղեքսանդրոպօլի բանակին, որ կը չուէր Թվինի վրայ. անոր համար հաստատեց՝ նախ երթալ բաղխել զՏէր Ղուկասով և ապա դառնալ պաշտպանել զԹվին՝ Լորիս Մէլիքովի հանդէպ։ Տէր Ղուկասով որ լսեր էր վանայ վալիէն քիւրտերու խմբով զԲայազիտ պաշարելը, վախելով որ յետուստ չ'ունենայ թշնամի բանակ մը, թողուց 19ին զԴրոմտաղ և գնաց բանակեցաւ ի Դաքար։ Հոն եկաւ զինքը փնտռելու Մուխթար փաշա, թողլով ի Թվին՝ Ֆէյզի և Քիւրտ Իսմայէլ փաշաները։

16. — Մուխթար փաշա բանակը երեքի բաժնեց. միոյն կը հրամայէր Մուսդաֆա փաշա, միւսոյն Շահին փաշա և երրորդին Հակքի բէյ, որ հրաման ստացաւ նախ յարձակիլ։ Մուխթար փաշայի Դաքարի կուսոյն որոշումը և բաղխման երագութիւնը, մեծ գովեստներ ընդունած է ռազմագէտներէ։ Հակքի բէյ քիչ ատենուան մէջ կրցեր էր զԻուսս վանել բարձունքներէն և զանոնք բռնել. մինչ Շահին փաշա իր հրանօթները քաշել տուած էր բլրոյ մը գլուխ, որ Պատմութեան մէջ Ցաց Թոփտաղ անուամբ, և սկսաւ յանկնկալս ահաւոր կրակ մը թափել Ռուսաց վրայ։ Տէր Ղուկասով ըմբռնեց որ անհրաժեշտ էր տիրել այդ բլրան. և մինչ երագ դարձուածքով մը կը ջանար զայն պաշարել, թուրք հեծելազօրը որոց կը հրամայէր Մուսդաֆա փաշա, դիմեց խափանելու այդ շարժումը. և մոլեգին խառնուրդ մը ծագեցաւ երկու կողման հեծելոց մէջ, յորում ի սկզբան փոփոխակի եղաւ յաջողութիւնը երկու կողմանէ, բայց ամենէն վերջը ռուս հեծեալը սկսաւ նահանջել։ Տէր Ղուկասով այն ատեն հետեւակ գունդերը ղրկեց, որոնք մեծ արութեամբ հասան թրքաց ամբարտակներուն. և յաղթութիւնը իրենց կողմը կը կարծէին, երբ Մուխթար փաշա հրամայեց պահեստին՝ սուինով յարձակիլ թշնամւոյն վրայ։ Թուրքերը ձեռք բերին իրենց կորսնցուցած դիրքերը, որոց նորէն տիրե-

Ցաղթութիւն ի Թոփ Տաղր։

Ցունիս 24։

ցին Ռուսք. այսպէս երկու անգամ. մինչեւ գիշերը վրայ հասնելով, իւրաքանչիւր բանակ քաշուեցաւ իր համբարը։ Ռուսաց կողմանէ ինկեր էին 500էն աւելի և Թրքաց կողմանէ 300 հոգի, բայց շատ էին վիրաւորք երկու կողմանէ ալ։

Երկրորդ օրը մինչ Մուխթար փաշա կը պատրաստուէր պատերազմը սկսելու, դիմացը քանի մը վաշտք տեսաւ միայն. որոնք մնացած էին Տէր Ղուկասովի բանակին նահանջը պաշտպանելու, որոնց միացան յետոյ նաեւ այն գունդերը, զորս ղրկեր էր Լորիս Մէլիքով, լսելով լրաբերէ Երեւանայ բանակին ոչ յաջող կռիւը ի Թոփտաղը։ Մուխթար փաշա զՏէր Ղուկասով հարուածելէն վերջը, փութով մեկնեցաւ դէպ ի Ծվին, ուր կը դիմէր նաեւ Լորիս Մէլիքով։

Ցաղխանին Մելի-Տիւզի։

Աղեքսանդրոպոլի բանակը Կարսի դիմացէն հեռացեր էր Յունիս 21ին. և 22ին երեկոյ հասեր էր ի Սարըղամըշ, Հայաստանի ծառալից և գեղեցկադիտակ տեղերէն մին, զոր շատ ուղեւորք զմայլմամբ նկարագրած են, համեմատելով Հելուետիոյ և Տիրոլի ամենէն գեղեցիկ դիրքերուն։ Սողանլուի լերանց շղթան հիւսիսէն հարաւ կ'երթայ. և երկու ճամբայ կան գինքը կտրելու. մին հիւսիսէն՝ Պարտէզ գիւղի մօտ, միւսը հարաւէն՝ Միլլիտիւզէն և Մժնկերտէ։ Լորիս Մէլիքովի ծրագիրն էր հարաւի ճամբէն մտնել, կեղծելով զԹշնամին բաղխելու Խորասանի ճամբուն վրայ. և յանկարծ բոլորակով մը ինկնալ Ծվինի վրայ։ Աննկարագրելի դժուարութեամբ տարուեցան հրանօթքը Միլլիտիւզի բարձր տափարակին վրայ. ուսկից կը տեսնուէր Թուրք բանակին ծուխը, և բանակեցան Մժնկերտի քով։ Յունիս 25ին առաւօտ գունդերը հրաման ընդունեցան չուելու դէպ ի Ծվին. և Կէտիքլէրի մօտ հովտին մէջ ռահմանուեցաւ յարձակիլ Թշնամւոյն վրայ, քանի որ դեռ Մուխթար փաշա Ծվին չէր դարձած։ Կէսօրուան ժամը մէկին պատերազմին հրամանը տրուեցաւ։ Յարձակումը պիտի սկսէր կեդրոնի զօրարաժինը ուր Տփղիսի գունդերուն հրամանատարն էր զօրավարն Կոմարոֆ, որ պիտի անցնէր Խանիչայը

և պիտի բաղխէր զԹշնամին. իրեն ի Թիկանց նեցուկ ունենալով Զավչավածէ իշխանին հեծելագունդը։ Կեդրոնի գունդելուն յառաջացած ժամանակ, արդէն ձախին ալ հետեւեր էր, և յաջողութեամբ կրցեր էին տիրել Թուրքերուն առաջին պատնէշներուն, նա մանաւանդ Թուրք գունդեր նահանջել կը սկսէին, երբ պատերազմին տեղը հասաւ Ֆէյզի փաշա. խրախուսեց գունդերը, տուաւ հրամաններ և հաստատաքայլ դիմեց Ռուսաց ընդառաջ, իրեն նեցուկ ունենալով Իսմայէլ փաշայի հեծելագունդը, մինչ Ռուսաց ձիաւորք դեռ չէին հասած պատերազմին կեդրոնը։ Ռուսաց գունդերը զուրկ յենարանէ մը, սկսան բացուիլ։ Ֆէյզի փաշա ետեւէ ետեւ նոր գունդեր յառաջ կը բերէր և Լորիս Մէլիքով տեսնելով որ անհնար էր Թուրքաց դիրքերուն տիրել, հրամայեց նահանջել և բռնել առաւօտեան դիրքերնին։ Այսպէս յաղթութիւնը կը մնար Թուրքաց, որոնք կորսընցուցին 500ի չափ անձինք, մինչ Ռուսաց կորուստը անցաւ 800ը, յորս շատ մը սպայք, որոց անձնանուիրումը[1] մեծ եղեր էր։

17. — Երկրորդ առաւօտը Լորիս Մէլիքով իմացաւ Մուխթար փաշայի դարձը ուրիշ 22 ջոկատներով. և խոհեմութիւն չհամարելով հոն մնալը, յետ մեռեալները թաղելու և վիրաւորները սայլերու վրայ տեղաւորելու, հրամայեց դառնալ Միլլիտիւզի տափարակը. ուսկից իջնալով Սողանլուի բարձունքը, չուեց դէպ ի Կարս, և Յուլիս 3ին հասաւ ի Մէզրէ, ուր էր ընդհանուր ճամբարը։

Տէր Ղուկասովի նահանջը դէպ ի Երեւան։

---

1. Գաղղիացի Temps (Ժամանակ) լրագրին Թղթակիցը կը պատմէ, որ Լորիս Մէլիքով, նկատելով Թրքաց բազմութիւնը, վարանած էր պատերազմելու հրաման տալ. բայց ապա բռնադատուեցաւ, Տէր Ղուկասովի բանակը՝ այսպէս փրկելու համար վտանգաւոր կացութենէ։

Լսած եմ տեղեակ ոուսահայ անձերէ որ Լորիս Մէլիքով պատերազմին սկիզբէն ի վեր, շատ դիտողութիւնք ըրած էր ասիական բանակին սակաւաւորութեան համար. և մինչեւ այդ պատճառաւ չէր ուզած հրամանատարութիւնը առնուլ, եթէ Բարձրագոյն Տեղէ իրեն բռնադատութիւն չ'ըլլար։

Երեւանայ և Աղեքսանդրապօլի բանակներուն պարտութիւնքը և նահանջը, ամենատխուր տպաւորութիւն մը ունեցան տեղացի հայ և քրիստոնեայ ժողովրդոց վրայ. որոնք վստահ ռուս բանակին անպարտելութեանը, ըստ այնմ համակրանօք ընդուներ էին զՏէր Ղուկասով, Լորիս Մէլիքով և ուրիշ համարիւն զօրավարները. օգնելով յամենայնի նիւթապէս և բարոյապէս, և յոխորտանօք իսկ ընդդէմ մահմէտական տարրին։ Հիմայ թուրք բանակին և տիրապետութեան կրկին դարձը, իր ներշնչած վրէժինդրութեան երկիւղով, բռնադատեց 3000էն աւելի հայ ընտանիքներ թողուլ տներնին տեղերնին, և հետեւիլ Տէր Ղուկասովի բանակին. ուրով Երեւանայ բանակը ստիպուած՝ դանդաղութեամբ և խոհեմութեամբ կը յառաջէր։ Եթէ թշնամին երբեք հալածէր Տէր Ղուկասովի բանակը, կարող էր մեծ փնասներ տալ և ի սպառ ոչնչացնել. բայց ետեւէն ղրկուած չէրքէզ և քիւրտ ձիաւորք, թշնամին հալածելէն աւելի, զբաղեցան գիւղերը մտնել, աւազակութիւն և ամեն անօրէնութիւն ընել։ Միայն ի Ղարաքիլիսէ կրցան հասնիլ վերջապահին. և բաղխելով յափշտակել պաշարէն մաս մը։ Յետոյ այլ եւս չ'նրեւցան, որով Տէր Ղուկասով կրցաւ հանգիստ հասնիլ ի Ս. Յովհաննէս։ Միտքը դրած էր, Քայազիտը ազատելու չգացած, ապահով տեղ մը դնել իրեն հիւանդները, վիրաւորքը և Ռուսաց ապաւինող հազարաւոր հայ ընտանիքները որոնք հասան յիգդիր՝ Յուլիս 3ին Երեւանայ նահանգին մէջ. այսպէս հանգստացան ամեն ռուս հողի վրայ։ Եւ իր այս փայլուն և մարդասիրական նահանջին համար, անձամբ բանակը եկաւ իրեն խնդակցելու մեծ դուքսն Միքայէլ Նիկոլայէվիչ[1]։

---

1. Այս գաղթեալ հայ ընտանիքներուն համար անմիջապէս օգնութիւններ ղրկուեցան Տփղիսու և Կովկասու հայերէ, Յանձնաժողովէ մը, որուն նախագահն էր Աղեքսանդր Անանով և քարտուղար Գրիգոր Աղբունի։ Մեծ շանքեր և նպաստներ ըրին ՊՊ. Ադ. Մանտաշեանցը, Խատիսեան, Դոլուխանեան, Սուրգունով և այլք։

Իսկ Լորիս Մելիքով որ չուեր էր դէպ ի Կարս, իմանալով որ Յուլիս 4ին Մուխթար փաշա հասեր է ի Քրքբունար, Կարսէն քանի մը ժամ հեռու, այսքան սակաւաթիւ գունդերով անխոհեմութիւն համարեցաւ շարունակելու Կարսի պաշարումը և յանկարծ բռնուիլ երկու կրակներու մէջ. Յուլիս 6ին հրամայեց պաշարող բանակին ետ քաշուիլ և բանակը տարաւ ի Քուրուդէրէ, Աղեքսանդրոպոլի ճամբուն վրայ, որով և ռուսական սահմանագլխէն ոչ հեռու։

Մուխթար փաշա Յուլիս 7ին հասաւ ի Զիֆթլիք. Կարսէն քանի մը ժամ հեռու՝ հաստատեց հաղորդակցութիւնն Կարսի բանակին հետ և յաղթանակաւ մտաւ քաղաքը. ուր հասաւ նաեւ անգղիացի Քէմպալ զօրավարը իբրեւ բանակին հետեւող կցորդ։ Մեծ եղաւ ներքին պահանորդաց և պաշարուող բնակչաց ուրախութիւնը պաշարումէն ազատելնուն համար. նոյն իսկ հայազգի բնակչաց, որոնք պաշարման ժամանակին, միշտ կասկածով մը իբրեւ լրտեսք նկատուած էին. և յորոց մի քանին, իբրեւ մատնիչք պարիսպներէն ողջ գահավէժ ձգուեր էին Կարս Զայի հեղեղատներուն մէջ, ըստ պատմելոյ օրագրութեանց[1]։

Երբ Լորիս Մելիքով քաշուեցաւ իր հին բանակատեղին ի Զայմ և անկէ յԵնիքէյ՝ Աղեքսանդրոպոլի մօտ խոտաւէտ դաշտերը, և յառաջապահ գունդերը բրոնեցին զԽալիբ օղլու և Սուրադան, այն ատեն Մուխթար փաշա չուեց մինչեւ ի Վիզին քէյ և Հաճի Վէլի։ Ու յառաջելով միշտ դէպ ի ձախ, հասաւ ռուս սահմանագլուխը յԱնի և բռնեց Կարսէն մինչեւ Անիի գիծը։

Տէր Ղուկասով Իգդիրէն մեկնեցաւ Յուլիս 8ին, երթալ ազատելու զԲայազիտ, զոր Թուրք և քիւրտ խումբեր պաշարեր էին։ Տէր Ղուկասով դէպ ի Աղեքսանդրոպոլի բանակը մեկնած ժամանակ, թողուցած էր Բայազիտի մէջ 1600 զինուորաց պահանորդ մը։ Իր մեկ-

Քիւրտերու անորէնութիւնք։

1. Յայտ է թէ եղան անհրեւութացած անձինք։

նեւէն վերջը Վանի կուսակալը Ֆայրզ փաշա, Վանէն Բիթլիսէն և Մուշէն բաշիբոզուքներ հաւաքեց Բայազիտի վրայ յարձակելու համար. և որովհետեւ ադոնք բաւական չէին, խնդրեց հայտարանը քիւրտերուն Ա՛էլալէտտին շէյխէն, իրեն կամաւորներ ղրկելու. և փութով աւարի յուսով, հաւաքուեցան գիշակեր թռչուններու պէս, 15,000էն աւելի վայրագ բարբարոսներ, որոնք դեռ բանակը չեկած, ճամբան 24 գիւղեր այրեցին, կողոպտեցին։ Դիմեցին նաեւ Ս. Բարթող վանքը, ուր ապաւիներ էին փախստեայ բնակիչքը արք և կանայք, մանկունք և աղջկունք։ Հոն չմնաց անօրէնութիւն որ չգործեցին. և ապա հետերնին տարին անոնցմէ մաս մը[1]։ Մաս մ'ալ փախստեամբ ազատեցան ի Պարսկաստան և ի Սալմաստ։ Այս քիւրտ գունդերը գացին միացան Ֆայրզ փաշայի հաւաքած մարդկանց, և դիմեցին Բայազիտի վրայ, զոր պաշարեցին Յունիս 17ի։ Ռուս հազարապետն Փովալեւսքի անկարելի համարելով պաշտպանել քաղաքը, մարդ ղրկեց առ Ֆայրզ փաշա, և առաջարկեց պատուաւոր անձնատրութիւն մը։ Փաշան ընդունեցաւ. պայմանաւ որ զինուորականք քաղքէն անզէն մեկնին։ Երբ պահանորդէն մաս մը առանց զէնքի ելաւ քաղքին դռնէն. այն ատեն քիւրտերը յարձակեցան վրանին և սպանեցին զանոնք։ Մնացեալ պահանորդք տեսնելով զայս, քաղքին դռները գոցեցին և ներսը պատսպարուեցան։ Բայց չունենալով բաւական պաշար և ջուր, մանաւանդ թիւ, բան մը չկրցան ընել. և սկսաւ իրենց համար ահաւոր պաշարում մը, թշնամեաց գնդակներուն ներքեւ որ տեւեց 23 օր[2]։

Բայազիտի պաշարումը ի թրքաց։

Մուխթար փաշա իմանալով պահանորդին դէմ եղած անպատիւ մատնութիւնը, մեծապէս զայրացաւ. և

---

1. Ո՛վ կարդացած չէ Բաֆֆիի «Ջալալէդդինն» և չէ ասկացած. և սակայն դեռ փոքր պատկեր մ'է բաղդատմամբ իրականութեան, զոր լսած ենք ականջով։

2. Այս պաշարումը լի դիւցազնական դէպքերով, նկարագրած է Բաֆֆիի գրել «Խենդ» պատմական վէպը։

հրաման ղրկեց կախելու յանցաւորները և ճամբելու քիւրտերը[1]. որով Ֆայրզ փաշա բռնադատուեցաւ 8000էն աւելի քիւրտեր վարձատրելով ղրկել տեղերնին. որոնք Ֆայրզ փաշայի դէմ ոժգոհութեան ոխը հանեցին հայ գիւղերէ, ամենայն անօրէնութիւն գործեցին հայ ժողովրդեան և քրիստոնէից վրայ և նոյն իսկ թուրք ժողովրդեան դէմ. զի այդ ժողովուրդը մահմէտականութենէ աւելի յարեալ է յափշտակութեան և ամենազգի անօրէնութեան[2]։

Բայազիտի մէջ պաշարուածները յետ 23 օրուան, յանկարծ լսեցին հեռուանց Տէր Ղուկասովի թնդանօթներուն ձայնը, որ «Իրենց համար այնքան քաղցր հնչեց ինչպէս օտար հեռաւոր աշխարհի մէջ մայրենի լեզուն», ըստ բացատրութեան պաշարուողներէն մէկուն։

---

1. Այդ յանցաւորներէն 21 անձինք ալ Տէր Ղուկասով կախել տուաւ Բայազիտ մտնելէն վերջը։

2. Քիւրտերուն բրած ահեղի անօրէնութիւնքը յուզեց բոլոր Արեւելքի քրիստոնեայ ազգերը և նոյն իսկ Թուրքերը. և բարձր պաշտօնական շրջանակներէ կանխաւ սպառնալիքներ լսուեցին արդարասէր, բարոյասէր և հայրենասէր երեսփոխաններու լեզուն, յայտնապէս բողոքելու Թուրք խստարարին մէջ։ Դնենք հոս ըստ թարգմանութեամբ Մասիսի խմբագրութեան։

«Սուլիտան էֆէնտի խօսք առնելով երկար ատենաբանութեամբ մը բացատրեց Ասիոյ մէջ Քրտաց երեսէն Հայոց կրած անթիւ ազէտքները ու չարիքը. ըսելով թէ ինչ զեղծումներ որ գործուեցան Բուռմէլիի և Բուլղարիոյ մէջ, նոյնը գործուելու վրայ է երկար ատենէ ի վեր Քրտաց ձեռք Հայաստանի մէջ։ Սակայն Յունարն և Բուլղարը Եւրոպոյ մէջ տեսրակներ հրատարակելով և բոլորոյ ձայներ բարձրացնելով, Եւրոպոյ ուշադրութիւնը իրենց կրած տառապանաց վրայ հրաւիրեցին, մինչդեռ Հայերը զուրկ ըլլալով այդ միջոցէն՝ լռութեամբ տարին և հանդուրժեցին իրենց կրած դատն տառապանաց։ Բայց միթէ արդարութիւն է որ Հայը՝ Տէրութեան ամենէն աւելի հնազանդ և հպատակ ազգն՝ այսպէս չարչարուի և կեղեքուի, նոյն իսկ մեր ազգութեան դէմ ապստամբող Քրտաց ձեռք։ Ուստի և վաղնջվոյթ այս անտանելի վիճակին վախճան մը տրուիլը կ'առաջարկէ»։

Սուլիտան Էֆէնտիէն ետեւ կարնոյ երեսփոխան Պաշարեան Համազասպ էֆէնտի խօսք առնելով, ընդարձակ բացատրութիւն մը տուաւ Շահ Հիսէյնի սրդոյն՝ Հիսէյնի պէյի, Մշոյ Ճիպարացի Քիւրդերուն, Վանայ Հայտարանցի Ալիի և խել մը ուրիշ վրանարնակ Քրդաց և Ազիրէթներու գործած չարեաց վրայ։ «Ասոնց զէխաւորներն, երբեմն կը բռնուին և կը բանտարկուին, բայց շատ չ'անցած թող տրուելով, աւելի կատաղութեամբ իրենք առջի անպիտանութիւնները ձեռք կ'առնուին։ Վալիներէն և միւթէսարիֆներէն շատեր ալ կան՝ որ այդ Քրդաց գործակից և համախոհ գտնուած են, որոնց անունը հարկ չեմ տեսներ այժմ յայտնապէս յիշատակելու։ Իսկ

Ֆայրգ փաշա գիտէր որ իր հաւաքած գունդերը քաջ էին յարձակելու և յափշտակելու, բայց ոչ պատերազմելու. որով անմիջապէս աներեւութացան։

Տէր Ղուկասով կ'ազատէ գիւ-յազիտ և կը թողու։

Երկրորդ օրը Տէր Ղուկասով մտաւ ի Բայազիտ, զոր գտաւ աւերակ դիրքի մէջ և ուր շատ դժուարին էր պահանորդի մը մնալը և պաշտպանուիլը. որով հետը առնելով հայ և քրիստոնեայ ընտանիքներ, որոնք կ'ուզէին գաղթիլ, դարձաւ նորէն յիւզիր։ Այսպէս ռուսական արշաւանքէն Հայաստանի մէջ, կը մնար Թուաց ձեռքը միայն Աստուած։

Բոլոր Եւրոպա զարմացաւ ռուսական բանակին այսպէս ապարդիւն արշաւանքին վրայ, ունենալով մանաւանդ համակիր ժողովուրդ մը, օգնող իր աշխարհակալութեան. ինչպէս եղած էր երկու դարէ ի վեր՝ ռուսամեն արշաւանքներու ի Պարսկաստան, ի Կովկաս, ի

շատ ապէկ գիտեմ որ այդ Քիւրտերուն ապատ Քոդ սրուիլն ամեն անգամ 10,000 ոսկիի կ'ըլլար իրենց։ Որը կը հարցնէի կուսակալներուն, Թէ ինչո՞ւ Քիւրտերը չեն պատժուիր, որոց համար երկու վաշտ զօրք բաւական է, և այսպէս անպատիժ Քոյլ կը սրուի որ շարունակեն իրենց չարագործութիւնները. կը պատասխանէին ինձ՝ Թէ այս գործոյն մէջ հիքմեթի հիւքիմեթ (պետական վերապահեալ գաղտնիք) կայ։ Վերջէն խելամուտ եղայ, Թէ ի՞նչ է եղեր այդ պետական գաղտնիք բսածնին. այդ հիքմեթը սա է. եղեր Թէ՝ կառավարութիւնը անոր համար այդ վիճակին մէջ կը պահէ եղեր Քիւրտերը, որ եթէ Հայերը Հայաստանի մէջ ապատամբական շարժում մը ընեն, Քիւրտերը զանոնք ջարդեն. և մէկ մ'ալ որ Թէ պատերազմ բացուի Թուսիոյ դէմ, Քիւրտերը Օսմանեան բանակին կամաւոր զօրք՝ օգնութիւն պիտի ընեն եղեր։

Ահա հիմայ յայտնապէս տեսնուեցաւ Թէ այդ Քիւրտերն՝ ո՞ր տէրութեան պիտի օգնէին, որոց զօրքերն են եղեր. այն Քիւրտերն որք խաղաղութեան ժամանակ անպատիժ կերպով և ոնխղճօրէն Հայերը չարչարեցին և կեղեքեցին, հիմայ ալ պատերազմի ժամանակ տէրութեան մատնութիւն և դաւաճանութիւն կ'ընեն։ Ասոնք իրենց ո՞ր օգտին և ո՞ր յատկութեանցը համար արդեոք այսքան պաշտպանութիւն զտած էին, մինչեւ Հայաստանի բնակչաց արիւնը ծծելու չափ... ուրեմն ասոնց չարեաց և աղետիցն վախճան տալու համար, անմիջական միջոցներ ձեռք առնուլ հարկ անհրաժեշտ է»։

Վ. ապիլաջի բեյ խօսք առնելով, նախորդ երկու առեներաններուն բասծը հաստատեց. միանգամայն և առաջարկեց՝ որ այս խնդիրն անմիջապէս Բ. Դուռը դրկուելով, անմիջական գործադրութիւնը խնդրուի։ Բոլոր իսլամ երեսփոխանք ալ համամիտ և ժայնակից եղան Թէ՝ սոյնա ռաջարկութեան և Թէ վերոյիշեալ առենախօսներուն յայտնած կարծեացը, հետեւաբար որոշուեցաւ գրել առ Բ. Դուռն՝ որպէս զի անմիջական ազգաս միջոցներ ձեռք առնուին։ Գուռմարուամ 14 Յունիսի 1877։

Հայաստան։ Անյաջողութեան պակասութիւնը պէտք էր փնտռել նոյն իսկ ռուս բարձրագոյն զինուորական կազմակերպութեան հրամանատարութեան մէջ և ոչ ուրիշ տեղ։ Այլ և այլ փոքր թերութիւններ միարան գալով, այնպէս ըրին, որ Լորիս Մէլիքովի նման փորձ և արի զօրավար մը, ստորին գտնուեցաւ Ֆէյզի փաշայի և Մուխթար փաշայի դիմաց։ Լրագիրք մինչեւ երկինք բարձրացուցին յետնոց ռազմագիտութիւնը և արթուն մատակարարութիւնը, ամեն կողմ պախարակելով ռուս բարձրագոյն մատակարարութեան կարեւորութիւն մը չտալը իր հրամանատարին բողոքներուն և խորհուրդներուն։ Թուրքաց ասիական բանակը ամեն օր կը ստուարանար նոր գունդերով Անկիւրիայէն, Ղոնիայէն, Խարբերդէն, Տիարպէքիրէն և Պաղտատէն։ Մուխթար փաշայի ազդեցութեամբ՝ Կարսի նոր վալի ղրկուեցաւ Մուստաֆա փաշա և Կարնոյ համար Հասան փաշա, երկուքն ալ բանակին օգնելու եռանդով լցուած, երկուքն ալ նոր պահեստներ պատրաստելու հրահանգներով։ Դէրվիշ փաշայի նոր օգնութիւնք ղրկուած էին. և Ռուսք տակաւին շատ հեռու էին Բաթումի տիրելէն զոր դիւրին կարծեր էին։ Ռուսք պատերազմին սկիզբը ունենալով երագ յաջողութիւնք և յաղթութիւնք յԵւրոպա և յԱսիա, ռուս լրագրութիւնը մեծապէս բարձրացուց իր բանակը և զօրավարքը, և ոչնչացուց թուրք զինուորքը և հրամանատարքը։ Ընդհանուր կարծիք մը ձեւացաւ որ հարիւր ռուս զինուոր կարող էր կռուիլ 500 թուրքի դէմ. և ինամք չտարուեցաւ ջոկատները և վաշտերը իրենց օրինաւոր թուին հասցնել։ Ռուս սպայակոյտը և բանակը կը կարծէր դիմացը միշտ ունենալ Սաբրի փաշա մը կամ Աբդիւլ Քէրիմ մը։ Մեծապէս տագնապեցնող ձախողութիւնք յԱսիա և յԵւրոպա, փոխել տուին իրենց կարծիքները, փոխել տուին և միջոցները. կարեւորութիւն տրուեցաւ հրամանատարութեան և թուոյ։ Այն օրուընէ պատերազմին բաղդը կրկին դարձաւ Ռուսաց կողմը։

ԳԼՈՒԽ Ի.

ՊԼԷՊՆԱՅԻ ԵՒ ԶԸՊԳԱՅԻ ՇՈՒՐՋԸ

1. Անգլիոյ նաւատորմը Կ. Պոլսոյ մօտ. — 2. Օսման փաշա և իր բանակը ի Պլէվնա. – Պլէվնայի առաջին պատերազմը. — 3. Ռումէն–Ռուս Դաշնակցութիւն. – Պլէվնայի երկրորդ պատերազմը և հետեւանքները. — 4. Գուրգո զօրավարը. – Լոքի Զապրայի կոտորածը. Թուրք և քրիստոնեայ զգաքականութիւնք. — 5. Մոնտէնէգրոյի Նիկոլա իշխանին յաջողութիւնք. — 6. Սիւլէյման փաշա ի Զբպգա. Ցարձակումը–Նահանջը. — 7. Երկու կողման բանակաց կացութիւնը Պլէվնայի դիմաց. — 8. Պլէվնայի երրորդ պատերազմը. — 9. Պլէվնայի պաշարումը. — 10. Մէհէմէտ Ալի ի Շումլա. – Քարահատանի յաղթութիւնը. – 11 Քոլաէլիէվայի պարտութիւնը. – Մէհէմէտ Ալի կը կոնչուի ի Կ. Պոլիս. — 12 Սիւլէյման փաշա ընդհանուր հրամանատար. – Զբպգայի վրայ յարձակումը և անյաջողութիւնը։

Անգլիոյ նաւատորմիղը Կ. Պոլսոյ մօտ։

1. — Պատերազմի հրատարակուելէն քիչ վերջը, ռուս բանակին Դանուբը անցնիլը, ինչպէս տագնապեցուցեր էր զկ. Պոլիս, ոչ նուազ քաղաքական յուզումն պատճառեր էր և ի Լոնտրա. ուր չէր կարծուեր որ այսպէս փութով և առանց յամառ ընդդիմութեան մը, ռուս բանակը անցնի զԴանուբ։ Հրաման ղրկուեցաւ աւելցնելու նաւական զօրութիւնքը ի Մալտա և ի Ղիբրալտար։ Իսկ երբ Գուրքօ զօրավարը կրցաւ անցնիլ կայծակնօրէն Բալկանները և բռնեց զՓրզանլրք և Զբպգա. երբ բանակը մօտեցաւ Ֆիլիպպէի և Ադրիանուպոլսոյ և տարածուեցաւ Բուլղարիոյ ամեն կողմ, վտանգաւոր կացութիւն մը սպառնալով նոյն իսկ Թուրք

մայրաքաղաքին, որով և Միջերկրականի, այն ատեն հրաման ղրկուեցաւ որ անգղիական նաւատորմիղն Մալտայէն և Ճիբրալտարէն փութայ ի Բէսիքա՝ Դարտանէլլի կրճին մօտ նաւահանգիստը, պատրաստ ո՛ր և է անակնկալ դէպքի մը։ Անգղիա միանգամայն մտերմական ոճով առաջարկեց առ Թուրք կառավարութիւնը, որ ուրիշ նաւատորմիղ մ՚ալ հասցնէ Կէլիպոլուի դիմաց, իբրեւ պատուար մը ռուսական ո՛ր և է փորձի մը։ Սակայն Թուրք կառավարութիւնը շնորհակալ եղաւ, ծանուցանելով որ այդ նաւերը կ՚ընդունէր, «թէ գային իբրեւ դաշնակցի. ապա թէ ոչ օսմանեան բանակը իր երկիրը և իր պատիւը պահելու համար, պիտի թափէր արեան յետին կաթիլը»։

Աբդիւլ Համիդի վարչութիւնը աւելէ համարձակութեամբ կրնար տալ այս պատասխանը, երբ մանաւանդ Ռուսաց առջի յաղթանակներուն յաջորդեցին ցանազան պարտութիւնք թէ յԵւրոպա և թէ յԱսիա։

2. — Գուրքօ զօրավարին երաց յաղթութիւնք յորդորեցին զմեծ դուքսն Նիկոլա, ընդհանուր սպարապետ բանակին, յանդուգն ծրագրի մը գործադրութեան. որով պիտի բաժնէր մէկմէկէ Թուրք բանակները, ոսք պիտի հանէր ամեն կողմի բուլղարները, պիտի տիրէր Ադրիանուպօլսոյ, և Կ. Պոլսոյ տիրելու սպառնալիքով մը, պիտի ստիպէր զԹուրք վարչութիւնը հաճոյակատար հաշտութեան մը։ Այս ծրագրով պատուիրեց Թագաժառանգ իշխանին սաստկացնել Ռուսճուքի պաշարումը և զայն բաժնել Շումլայի բանակէն։ Ինքն ալ ամբողջ բանակովը փոխադրուեցաւ ի Տիրնովա. յանձնեց Ֆրիւդնէր զօրավարին պահելու Օսէմ գետին գիծը և տիրելու Լովացի և Պլէվնայի մանաւանդ, ուր 40,000 զօրքով, հասեր էր Օսման փաշա Վիտի գիծը պաշտպանելու համար[1]։ Ֆրիւդնէր Պլէվնայի տիրելու հոգը

Օսման փաշա և իր բանակը ի Պլէվնա։

1. Օսման փաշա ուրիշներէն զատուելու համար Թոգաքլը կոչուած էր, յԵւդոկիա ծնած ըլլալուն պատճառաւ։ Իր ուսումը ըրած էր ի Կ. Պոլիս

յանձնեց Շիլդէր Շուլդնէր զօրավարին։ Ուստ զօրավարք գրեթէ վարժուած Աբդիւլ Փէրիմի անգործ դրութեան, ապահով էին յարձակմամբ մը անպատրաստ գտնել Թուրքերը և տիրել Պլէվնայի, որ փոքրիկ քաղաք մ'էր բլուրներու մէջ թաղուած 12,000 բնակչօք, մաս մը Թուրք և մնացեալքը՝ բուլղար։ Պլէվնա ներկայ պատերազմէն առաջ գրեթէ անծանօթ էր ամենուն և բնաւ ռազմագիտական կարեւորութիւն մը չէր կարծուեր ունենալ, ըլլալով հանդերձ կեդրոն շատ մը ճամբաներու։ Ունէր խճուղի մը դէպ ի Նիկոպոլիս, որ հեռու էր միայն 36 քիլոմէդր, ճամբայ մը դէպ ի Ռուսճուք՝ Ռիէլայի վրայէն 180 քիլոմէդր, դէպի Սոֆիա խճուղի մը 170 քիլոմէդր, Օրխանիէի վրայէն. ուրիշ խճուղի մ'ալ դէպ ի Ֆիլիպպոպոլիս 159 քիլոմէդր՝ Լովացի Տրայանի և Քարլովայի վրայէն։ Ուստ սպայակոյտը ուշ ըմբռնեց որ մեծ վրիպակ ըրած էր Նիկոպոլսոյ տիրելէն վերջը, անմիջապէս զՊլէվնա բռնած չ'ըլլալնուն դեռ Օսման փաշա չհասած։

Պլէվնայի առաջին պատերազմը։ 1877

Յուլիս 20ին առաւօտը զօրավարն Շիլդէր Շուլդնէր իր գունդերը 6000 զինուորքը երկու սիւնակ բաժնելով, հրամայեց յարձակիլ Պլէվնայի վրայ։ Օսման փաշա պատուիրեց պահանորդին Թոյլ տալ Ռուսաց յառաջելու և տկար ընդդիմութիւն մը կեղծել։ Առաջին սիւնակը կեցցէներու գոչիւնով, թափով անցաւ երկու բանակաց մէջի հեղեղատը. և որովհետեւ թշնամին միշտ կը նահանջէր, հալածելով զայն մտաւ մինչեւ քաղաքը։ Այն ատեն հրաման եղաւ Թուրք զինուորաց. և ահաւոր կրակ մը սկսաւ տանց պատուհաններէն և տանիքներէն, զորոնք բռներ էին զինուորք. և հազարէն աւելի անձինք ինկան, յորս նաեւ զօրավարն Նորինկ և հազարապետն Ռոզէնբաուտ։ Հազիւ զօրավարն Պոխիդոնոֆ

և բանակը մտեր էր 1853ին։ Միշտ նշանաւոր գտնուելով, յեղմէն և ի Սերբիա, պատերազմին սկիզբը Մուլիրի ատենն ատացեր էր և զրկուեր էր զՆիկոպոլիս պաշտպանելու. 1896ի ահաւոր դէպքերուն մէջ, կ'ըսեն, որ Օսման փաշա յիշեց զՔով մը, իր հայ քաղաքացիքը փրկելու։

չորս ժամուան մէջ կրցաւ ողջ Մնացեալքը հաւաքելով նահանջել առաւօտեան դիրքերուն մէջ։ Երկրորդ սիւնակը, որուն կը հրամայէր հազարապետն Փլայնհաւս, չուելով Պլէվնայի վրայ Կրէվիցայի կողմէն, յարձակմամբ տիրեր էր երկու կարգ պատնէշներու. բայց երբ մօտեցաւ երրորդին, ահաւոր կրակ մը սկսան թափել թուրք հրացանք, ուսկից մեռան նաեւ շատ մը գնդապետք և սպայք. սպանուեցաւ նոյն իսկ Փլայնհաւս հազարապետը։ Իրեն յաջորդող Բաթաշէվ հրամանատարը, ընդերկար կռուեցաւ արութեամբ ստացած գծերը չկորսնցնելու համար. բայց թուրք նորանոր գունդերու հասնելով, ստիպուեցաւ նահանջ հրամայել. և խազախ ձիաւորաց պաշտպանութեան ներքև կրցաւ քաշուիլ մինչեւ ի Բուլղարէնի. որով թուրք գունդերը կրկին տիրեցին պատնէշներուն։ Պլէվնայի այս առաջին պատերազմը ցրցուց Ռուսիոյ և բոլոր Եւրոպիոյ թուրք զինուորին քաջութիւնը՝ լաւ հրամանատարէ առաջնորդուած ժամանակ։ Նոյն օրուան Ռուսաց կորուստը եղեր էր, ըստ պաշտօնական իրենց ծանուցագրին, 2771 զինուորք և 64 սպայք։ Թուրքացը հազար մը կը համարուի։ Ռուս սպայից երեքին երկուքը, աննման արութեամբ կռուելով ինկեր էր դաշտին վրայ. և ցաւալի եղաւ մեծապէս ամեն ազգի, որ այսպիսի անձնանուէր ազնուական դիւցազուններու մարմինքը չյարգուեցան վայրագ բաշիբոզուքներէ, որոնք անդամահատեցին ահռելի կերպերով։

Յուլիս 17ին զօրավարն Սուրադոֆ տիրեր էր Լովացի (կամ Լոֆշայի) որ 35 քիլոմէդր հեռու էր Պլէվնայէն և որ ունէր 12,000 բնակիչ, երեք եկեղեցի քրիստոնէից, տասնէն աւելի մզկիթք, երկսեռ վարժարանք քրիստոնէից, և հարուստ վաճառատունք։ Պլէվնայի պարտութենէն վերջը Յուլիս 27ին, երբ թուրք գունդեր երեւցան քաղքին դիմաց, Ռուսք ձգեցին զայն և Թրքաց բռնելէն վերջը, բաշիբոզուք գունդեր ահաւոր ջարդ մը ըրին քրիստոնէից, ամեն անօրէնութիւններով. և փողոցները անանցանելի էին դիականց բազ-

մութենէն, յորս մեծաւ մասամբ անմեղ տղայք, մարդ գրկերէն յափշտակուած[1]։

Խումբն և Խուս պաշնակցութիւն։

3. — Երբ Յուլիս 20ի պարտութեան լուրը հասաւ Տիրնովա՝ Նիկոլա մեծ դքսին, ըմբռնեց անմիջապէս որ Օսման փաշայի բանակին պատճառաւ ի Պլէվնա, ինչ վտանգաւոր կացութեան մէջ կը գտնուէր ռուս բանակը։ Կարող էր Թուրք զօրավարը Վիտի եզերքէն չուելով, առնուլ կրկին զՆիկոպօլիս և կտրել ռուս բանակին Դանուբի նահանջը. և ինքը չունէր այնքան զինուոր, Թուրք բանակին այդ շարժումը խափանելու։

Այս երկիւղը մոռցնել տուաւ իրեն ամեն փափկանկատողութիւն նկատմամբ Աւստրիոյ. մէկդի դնել տուաւ ռուսական խրոխտ զգացումը, որով մինչեւ Պլէվնայի առաջին պատերազմը, չէր ուզած ընդունել պաշտօնապէս ռումանիացի բանակի մը աջակցութիւնը։ Պլէվնայի կռուէն վերջը, պէտք ունենալով անմիջապէս գունդերու, Միստովայի ճամբան պահպանելու համար, մտածեց հանել Նիկոպօլսէն ռուս պահանորդը և դնել հոն ռումանիացի գունդեր. որոնք երկար ժամանակէ ի վեր

---

1. Բոլոր Եւրոպա յուզուեցաւ բաշիբոզուք զօրաց այս անլուր անգթութեանց վրայ և բողոքեց սա Բ. Դուռը՝ որ ներելի չէր այսօրինակ զինուորութիւն գործածել։ Բ. Դուռն ալ իր կողմանէ բողոքեց ընդդէմ Ռուսաց, որոց պաշտպանութեան ներքեւ Բուլղար ապստամբք ամեն վայրենութիւններ բրեր էին Թուրք գեղերու. զոր օրինակ.

Ի Բատաք Թուրք գեղ մը, Միստովայի մօտ, 100 տուն, 200 մարդ, 300 կանայք. միայն եօթը հոգի մնացեր էին։

Ի Բալովան Թուրք գիւղ, Տիրնովայի մօտ, 250 տուն, 700 մարդ, 1200 կանայք։ Մէկ մարդ մը միայն ազատած կը կարծուի ջարդէն։

Ի Քարաբունար 100 տունք, 200 մարդ, 300 կանայք։ Երկու հոգի միայն ողջ մնացեր են։

Այսպէս կը շարեն դեռ ուրիշ գիւղեր, զորս աւելորդ կը համարիմ յիշատակել։ Զիվիլիա կաստուլիքա՝ կրօնական պրակը մանր կը յիշէ իր 1 Սեպտեմբեր 1878ի թուոյն մէջ ուրիշ յաւելուածներով իրեն թղթակցէն։

Խուս և ռուսաստէր լրագիրք և պրակք կ'բռնեն որ այս ապստամբ Բուլղարք, այն Բուլղարներն էին զորս զօրավարն Դուրգօ ապստամբեցուց և որոց վէնք բաժնեց պաշտպանելու տեղերնին ընդդէմ Թուրք զօրաց և ինակչաց։ Անոնք այդ զէնքերը առած յարձակեցան Թուրք վիւղերու վրայ և ջարդեցին անմեղ մարդիկ։ Այդ քրիստոնեայ բաշիբոզուքներէն հարիւրաւորք և հազարաւորք կ'երթային Խուսաց բանակին եռեւէն և շատ անօրէնութիւններ գործեցին։

անհամբեր կը սպասէին յիսլաց, մեծ դքսին ակնարկի մը։ Զարին և կարոլ իշխանին մէջ այս համաձայնութիւնը մեծ ուրախութեամբ լսեց ռումանիացի բանակը. և զօրավարն Մանու 25էն 26ի գիշերը, երաժշտութեան և խնդութեան գոչիւններով անցուց իր գունդերը բուլղար հողին վրայ դէպ ի Նիկոպոլիս։ Իսկ այս քաղքիս ռուս գունդերը մեկնեցան դէպ ի Սիստովա պատերազմին դաշտը։ Երկու բանակք մէկմէկու հանդիպելով, հրամանատարք մէկմէկու ձեռք սեղմեցին, բանակները կեցցէ՛ գոչեցին, երկու դրօշակք մէկզմէկ ողջունեցին և Նիկոպոլսոյ բերդին վրայէն հանուելով ռուս դրօշակը, կանգնուեցաւ ռումանիացի դրօշը։

Մեծ դուքսն Նիկոլա ըմբռնեց որ պատերազմին ելից վրայ մեծ նշանակութիւն պիտի ունենար Պլէվնայի թուրք բանակ մը Օսման փաշա զօրավարով. և հարկ էր հոն կեդրոնացնել ամեն տրամադրելի գունդեր և փութով տալ յարձակումը։ Հրաման ղրկուեցաւ Շախովսքոյ իշխանին որ իր բանակով կը դիմէր Օսման Բազարի վրայ, թողուլ հոն քիչ մը զօրք և գալ ի Պլէվնա. նոյնօրինակ հրաման տրուեցան ուրիշ բանակներու ալ, գունդեր և վաշտեր ղրկելու։ Իսուք այս շարժումները կատարեցին դիւրութեամբ, որովհետեւ Օսման փաշա զիրենք նեղելէն կամ հալածելէն աւելի կարեւոր դատեր էր այս միջոցին իր զօրքը գործածել Պլէվնայի պաշտպանութիւնը ընդարձակելու և ամրացնելու Բուքովա գիւղէն մինչեւ ի Կրէվիցա, և ասկէց դէպ ի Իսադիսիէվօ գիւղը և Պլէվնա, կարգ կարգ փոսերով և պատնէշներով։ Թուրք հարտարապետք ամենէն աւելի հիւսիսակողմը ամրացուցին եռակարգ հողակոյտ տափարակներով, մէջ ընդ մէջ կրուպ թնդանօթներով, որոց եսեւը պատսպարուած էր հետեւակ զօրքը։ Օսման փաշա նոր հասած օգնութիւններով կրցեր էր կազմել 60,000ի բանակ մը։

Պլէվնայի երկրորդ պատերազմը և հետեւանքները։

Իսկ ռուս բանակին թիւը Շախովսքոյ իշխանին հասնելովը 32,000ի կը բարձրանար։ Շախովսքոյ բանակեցաւ ի Քարանտաղաճ, Պլէվնայէ քսան քիլոմէդր հեռու և մտաւ հաղորդակցութեան Քրիւտրնէրի հետ, այսպէս ա-

ռանձին երկու սիւնակով պիտի ռմբակոծէին և պիտի յարձակէին Պլէվնայի վրայ, մինչ զօրավարն Աքոբէլէֆ իւազախներու վաշտով մը, պիտի հսկէր Լովացի ճամբուն վրայ, ուսկից թուրք գունդեր յարձակելով, կրնային Ռուսաց հաղորդակցութիւնը կտրել։

Մեծ դուքսն Նիկոլա հրաման ղրկեց Յուլիս 30ին կատարել յարձակումը և ռուս գունդերը շարժեցան։ Երբ առաւօտեան մառախուղը քիչ մը փարատեցաւ և ռուս բանակին Ազը որուն կը հրամայէր Քրիւտնէր, ժամը եօթին տեսնուեցաւ թուրք բերդերէն, այն ատեն սկսաւ կրակը, որուն պատասխանեցին Ռուսք։ Զօրավարն Քրիւտնէր ի բնէ զգոյշ և հանդարտ, չուզեց անմիջապէս սկսիլ յարձակումը Կրէվիցայի վրայ, որուն պէտք էր տիրել յառաջելու համար. իսկ իշխանն Շախովսքոյ յետ հանելու թնդանօթներ բլուրներու վրայ, սկսաւ ռմբակոծել Ռատիսիէվո գիւղը, որուն նախ հարկ էր տիրել Պլէվնայի վրայ յարձակելու համար։ Բայց հազիւ Ռուսք սկսեր էին կրակը, թրքաց հրանօթք շարունակ կարկտանման հարուածովք լռեցուցին Ռուսաց հրանօթքը։ Այն ատեն Շախովսքոյ հրամայեց տիրել պատնէշներուն։ թուրք հետեւակը սպասեց հանդարտութեամբ մինչեւ որ մօտեցան ռուսք և ապա սկսաւ սուինով մոլեգին կռիւ մը։ Այսու հանդերձ Ռուսք անհամար կորուստներով տիրեցին երկու գիծ պատնէշներու և թուրք կը նահանջէին դէպի Պլէվնա, երբ Օսման փաշա հանեց քաղքէն բազմաթիւ թարմ գունդեր, որոնք քաղքին շրջապատ հողաբլուրներէն ահաւոր կրակ մը սկսան Ռուսաց վրայ. որուն յաջորդեց աղաղակաւ և թափով հեղեղօրէն յարձակում մը և անիննայ կոտորած մը։ Շախովսքոյ՝ Ռատիսիէվոյի բլուրի մը վրայէն դիտեց տեսարանը և սոսկաց. մութը սկսաւ կոխել և կռիւը կը շարունակուէր։ Անկարելի էր այսպիսի յոգնած, սպառած գունդերով կռիւը շարունակել. և Շախովսքոյ հրամայեց նահանջելու։ Սակայն աւելի արիւնահեղ պիտի ըլլար նահանջը, եթէ Աքոբէլէֆի ձիաւորք չհասնէին պաշտպանելու զայն, որով գունդերը

ցիրուցան ամեն կողմ Թողլով մեռեալ և հիւանդ հասան ի Բոգոդ և ի Պէլիսքոդ։

Իսկ զօրավարն Քրիւղնէր, յետ ընդերկար վարանելու յարձակողական բախում մը սկսելու, երբ տեսաւ կէսօրէն վերջը Շախովսքոյի գունդերուն դիմումը, այն ատեն ինքն ալ հրամայեց Վէլիամինոֆ զօրավարին, բաղխելու Կրէվիցայի բերդը։ Զինուորք մեծ եռանդով յարձկեցան. մտքերնին դրած էին Ցուլիս 30ի պարտութեան վրէժն առնուլ՝ և եղաւ ժամանակ մը յորում յետ մեծ կորուստներու, տիրեցին երկու գիծ պատնէշներու։ Բայց Թրքաց կրակը շարունակ կը հնձէր հարիւրաւորներ։ Հազարապետն Յոտեփանով, որ սուրը բացած յառաջ կը մղէր գունդերը, ինկաւ գնդակէ մը և բանակէն դուրս տարուած ժամանակ մեռաւ։ Կռուոյն տեղը հասաւ և Վէլիամինոֆ զօրավարը. արեւը խոնարհելու վրայ էր, Քրիւղնէր հրամայեց յարձակման վերջին փորձ մ'ալ, սակայն գունդերը զարնուեցան Թրքաց բանակներուն, — որոց կը հրամայէր Օսման փաշայի օգնականներէն մին Լ.մին բէյ, — իբրեւ ժայռի մը, և մեծ կորուստներով ետ վանուեցան։ Այն ատեն բարոն Քրիւղնէր հրամայեց նահանջել դէպ ի Բուլղարէնի։ Այն գիշերը և երկրորդ օրը բաշիբոզուքները դիմեցին Թշնամւոյն վիրաւորաց վրայ. զանոնք սպաննեցին դառնապէս, յետոյ կողոպտեցին և մերկացուցին մարմինները։ Թուրք յաղթութեանց ստէպ յաջորդեցին այս քստմնելի տեսարանք։ Կանոնաւոր Թուրք զինուորութիւնն իսկ բերնով և գրով բողոքեց առ իրենց հրամանատարս. բայց այդ բաշիբոզուք զինուորք, արդէն այդ նպատակաւ եկեր էին մասնակցելու պատերազմին և յանցանքը Թուրք բարձր զինուորական ուղղութեան վրայ կ'իյնար։

Պլէվնայի այս երկրորդ պատերազմը շատ արիւնահեղ պայքար մը եղած է։ Լիուս պաշտօնական տեղեկութիւնք, նոյն աւուր իրենց մեռեալքը և վիրաւորքը կը հանեն 169 սպայ և 7136 զինուոր։ Օսման փաշա թէպէտ միշտ ճշգրիտ իր տեղեկութեանց մէջ, իր նոյն

օրուան կորուստը կը դնէ 100 մեռեալ և 300 վիրաւոր։

Պատերազմին բուռն ժամանակ, երբ ռուս բանակին պահեստքն անգամ լմնցան, այն ատեն մեծ դուքսն Նիկոլա հրաման ղրկեց առ ռումանիացի զօրավարն Մանու ի Նիկոպոլիս, իր գունդերովը դիմել պատերազմի դաշտը. բայց նա, գիտակ որ ռուս վարչութիւնը դեռ կը վարանէր զՌումանիա դաշնակից հռչակելու, և միանգամայն վշտացած որ ռուս սպայք և զօրավարք արհամարհանաց նիւթ մը ըրած էին ռումանիացի սպայքը և հրամանատարքը, պատասխանեց որ առ ինքը հրաման մը պէտք էր գալ իր Կարոլ իշխանէն։ Մեծ դուքսն Նիկոլա զայրացաւ Մանու զօրավարին դէմ, Կարոլ իշխանը զմեծ դուքսը հաճելու համար Մանուի տեղ՝ ղրկեց Անկէլէսքա հազարապետը։ Բայց և այս պարագայն պատճառ եղաւ, որով Ռուսաստան դիմեց Ռումանիոյ պաշտօնական դաշնակցութեան. և Կարոլ իշխանը իբրեւ դաշնակից, իրեն ազատ բանակովը պիտի անցնէր ի Բուլղարիա կռուելու Թրքաց դէմ դաշնակից խորհրդակցութեամբ։

Պլէվնայի դիմաց Ռուսաց այս պարտութիւնը անբացատրելի երկիւղ մը ձգեց բոլոր շրջակայ քաղաքաց Բուլղարներուն սրտին մէջ, որոնք անյաղթելի կը կարծէին զՌուսս. և ամեն կողմ ձայն տարածուեցաւ՝ որ Թուրք չէրքէզներ գիւղերը պիտի սկսէին այրել և սպաննել։ Ամեն կողմանէ սկսան փախչիլ դէպ ի Ռումանիոյ սահմանքը, հետերնին կրելով անկողնով հիւանդներն անգամ։ Միստովայի ժողովուրդը այնքան խառնիխուռն դիմեց Դանուբը անցնելու, որ խառնաղանձին մղուելէն եղան գետը ինկնողներ և մեռնողներ. շատերը շունչերնին ի Բուքրէշտ առին։ Իսկ Թրքաց վստահութիւնը և արութիւնը անհամեմատ բարձրացաւ ամեն կողմ Օսման փաշայի յաղթութեամբ։ Ի Կ. Պոլիս ուրախութիւնք եղան և լուսավառութիւնք. Սուլթանը պալատ բերել տուաւ Օսման փաշայի զաւակունքը և նուէրներով պատուեց։ Իսկ Օսման փաշայի, Օսմանիէ նշանին առաջին

կարգը ղրկեց՝ ականակուռ. միանգամայն իրեն իշխանութիւն տուաւ նշաններ բաշխելու քաջացողներուն և արդիւնաւորներուն։

Ռուսաստան մեծապէս ցնցուեցաւ Պլէվնայի երկրորդ պարտութեան վրայ. համարուեցաւ որ բանակին նուազութիւնն էր պարտութեան պատճառը և կայսերական հրովարտակ մը ի զէն կոչեց 180,000 պահեստներ։ Միանգամայն հրաման ղրկուեցաւ որ Ռուսաստանի ամեն մէկ բանակ զօրաբաժին մը ղրկէ ի Բուլղարիա և կայսերական պահապանք Պետերբուրկէն անմիջապէս հասան ի Բուլղարիա։ Կայսրը, որ հասեր էր Նիկոլա մեծ դքսին քով ի Բիէլա, ուր առ ժամս հաստատուեր էր հրամանատարութիւնը, վշտացեալ էր մեծապէս և չէր կրնար յանձն առնուլ, որ իր բանակը թողու զբուլղար ժողովուրդը, որ զինքը այնքան հանդէսներով ընդուներ էր իբրեւ ազատարար մը։ Հրամայուեցաւ որ Թագաժառանգ մեծ դքսին գունդերը որոնք Լոմը անցնելով մօտեցեր էին Ռուսճուքի, դառնան Լանտրայի գիծը։ Թողուեցան միայն Թիմմէրմանի գունդերը Տորրուչայի ճահճալից տափարակաց վրայ, ուր տենդը կը հնձէր պատերազմի հաւասար, որովհետև երկիւղ կար որ խրտիվի որդին Հասան փաշա, իր եգիպտական գունդերովը յարձակի Վառնայի ճամբով Քիւստէնճէի վրայ։ Սակայն այս եգիպտական գունդերը, որոնք մեծ յոյսերով և տօնախմբութիւններով ընդունուեցան ի Կ. Պոլիս, ամբողջ պատերազմին միջոց աւելի տագնապ մը եղան Թուրք զօրավարաց քան նպաստ։

Ռուսիոյ ձախողութիւնք յանկարծական այլայլութիւն մը բերին նաեւ եւրոպական ընդհանուր քաղաքականութեան վրայ։ Ռուսիոյ հակառակ նշանաւոր լրագիրք սկսան համարձակ խօսիլ «կաւէ ոտքերով հսկայ արձանին վրայ» որուն մօտ կը տեսնային «անկումը»։ Անգղիա կ'ուզէր ազդել Աւստրիոյ վրայ և բաժնել զայն ի Ռուսաստանէ, Աւստրիոյ միջոցով կ'ուզէր ցրտացնել և զԳերմանիա։ Աղեքսանդր Բ ունեցաւ ծանր վայրկեաններ, բայց յաղթանակեցին իր ուղղութիւնը

և ազգակցութիւնը, որոց զոյգ կ'ընթանար և կորչաքովի դիւանական հարտարմտութիւնը, որով Աւստրիոյ և Գերմանիոյ կայսերք տեսակցութեամբ մը յիսխբլ Օգոստոս 8ին, հաստատեցին չբաժնուիլ իրենց երրորդ դաշնակից կայսրէն, ինչ ալ ըլլայ զինուց բաղդը։ Եւ այն ժամանակէն, ի փոխարէն, գաղտնապէս սահմանեալ համարուեցաւ Բոսնիայի և Հերծէգի առ Աւստրիա անցնիլը, որով Աւստրիա չէր կրնար Թուրք բանակին յաղթութիւնը տեսնել անտարբերութեամբ։ Ընդհակառակն իր ժողովուրդներէն Մահառք՝ կ'ուզէին որ վերնայ չէզոքութիւնը. և իրենք կարենան դիմել յօգնութիւն Թրքաց։ Արդէն ամեն մէկ Թուրք յաջողութիւն, մեծ ուրախութեամբ կ'ընդունուէր ի Մահառստան։

1877

Գուրգո զօրավարը. — Իշակի Զաղրայի կոտորածը։

4. — Այս պատահմանց ժամանակ զօրավարն Գուրգո, յետ իր առաջին յաջողութեանց, հրաման ստացեր էր խափանել Օսման փաշայի, Սիւլէյման փաշայի և Բէուֆ փաշայի բանակներուն միացումը։ Բէուֆ փաշա բանակած էր Ցունչայի հովիտը Եէնի Զաղրայի և Էաքի Զաղրայի մօտ։ Զօրավարն Գուրգո իր բանակը երկուքի բաժնեց և յետ 17 ժամ շարունակ չուելու, Յուլիս 29ին հասաւ Եէնի Զաղրայի դիմաց, զոր Թուրք գունդերը Թողուցեր էին. և ապա չուեց Յէաքի Զաղրա։ Յուլիս 31ին Հուկանլիքի մօտ փոքր գուպարածով մը կրցաւ ցրուել Թուրք զինուորական վաշտեր. և երբ կը համարէր մտնել Յէաքի Զաղրա և բազմացնել պահանորդը, իմացաւ լրարերէ, որ Սիւլէյման փաշա պաշարեր է զայն 3000 զինուորօք։ Այն առեն անկարելի համարելով կռուիլ, Թողուց պահանորդը իր բաղդին և հեռացաւ քաղքէն, որուն տանց հրդեհի ծուխերը արդէն մինչեւ երկինք կը բարձրանային։ Ուստ պահանորդը՝ Բուլղարք, ընդ ամենը 496 անձինք, կռուեր էին դիւցազնարար. և մօտ երեք հարիւր անձինք, մեռեալ ինկեր էին. մնացեալքը բռնադատուեր էին փախչիլ, և Թուրք գունդերը մտեր էին քաղաքը, բայց կորսնցնելով 848 զինուոր և 18 սպայք։ Յետոյ մտան քաղաքը ալբանիացի բաշիբոզուքներ, որոնք վայրենի կոտորած

մ'ըրին մնացած քրիստոնեայ քաղաքացւոց, չխնայելով ոչ հիւանդին, ոչ ծերուն, ոչ կանանց և ոչ տղայոց։ Շատերը ողջ ողջ նետեցին այրած տուներուն կրակներուն մէջ[1]։

Պլէվնայի պարտութենէն վերջը, մեծ դուքսն Նիկոլա հրաման ղրկեց առ Թուրքս, լոյսը բանակովը նահանջել Բալկաններուն միւս կողմը։ Թուրքս ետ դարձաւ Խային-պոդգալի ճամբով. և Լէոխտէմբէրկի իշխանը որ ի Քրզանլրը էր չուեց ամրանալու ի Զրպպա, իր բանակին հետէն ունենալով հազարաւոր բուլղար ընտանիքներ, որոնք կը փախչէին Թրքաց վրէժխնդրութենէն և բաշիբոզուքներուն անօրէնութիւններէն։ Իւ սակայն չէր կարելի որ ամբողջ բուլղար ժողովուրդը կարենար գաղթել։ Ինչ իշխանութիւնք մասնաւոր կազմակերպութիւն մը չէին կարգադրած ազգնք պաշտպանելու կամ գաղթել տալու քրիստոնեայ մերձաւոր երկիր մը, զոր օրինակ ի Ռումէնիա։ Այն Բուլղարները որ մեծ ուրախութեամբ ընդուներ էին զԹուրքս և որոնք չկըրցան գաղթել, բոլորն ալ գրեթէ, արք և կանայք, տըղայք և չափահասք, ահաւոր տանջանքներով սպաննուեցան բաշիբոզուքներէն. և ծառերը, քստմնելի է ըսել, լի էին կախուածներով։ Բոլոր Եւրոպայի լրագրութիւնը ոտք ելաւ և յետ ամբաստանելու Թուրք վարչութիւնը,

---

1. Անգլիական վերմանացի Աւկսբուրգի լրագրին Քպքակիցը, բարեկամ Թրքաց, յետ «կատաղի սատանաներ» կոչելու այդ բաշիբոզուքները կը յարէ «Երկու տարի առաջ Մայիս ամսուն մէջ Քրզանլրքէն Լոքի Զաղրայի ճամբրդութիւնը ըրեր էի։ Ամբողջ վարդերու արտեր՝ իրենց հոտը սփռեր էին օդուն մէջ։ Հազարաւոր սոխակներ կ'երգէին այդ թուփերուն վրայ։ Աշխատաւէր բուլղար աղջկունք, մաքուր հագուած, դէպ ի Քրզանլրք կը վարէին իշուկներ, վրանին կողոմներ՝ վարդով լեցուած։ Ամեն կողմ ուրախութիւն էր։ Մարդ ինքզինքը երկրային դրախտի մէջ կը կարծէր։ Իւ հիմայ ի՛նչ տարբերութիւն, ո՛վ Աստուած իմ։ Վարդաստանները կարուած բանակին կրակ վառելու համար. կարմիր վարդերու տեղ հոս հոն կարմիր արեան լիճեր մարդերուն վրայ, վարդերու բուրումին տեղ, հազարաւոր մարդկանց և կենդանիներու դիականց գարշելի հոտը, սոխակներու տեղ՝ գիշակեր թռչունք երամովին թափեր էին դիներնուն վրայ. և այն գեղանի աղջկանց տեղ, որոնք կ'աշխատէին երգելով, հիմայ ահռելի բաշիբոզուքներ լեցուեր էին»։

ծանր կերպով մեղադրեց նաեւ ռուս քաղաքականութիւնը և ռուս զինուորականութիւնը, որ յետ գրգռելու և ոտք հանելու այդ դժբաղդ ժողովուրդները, հիմա անտարբեր կերպով կը բաշուէր, մատնելով զանոնք դահճին ձեռքը։

Շատ աւելի բանաւոր և մարդասէր գտնուեցաւ Թուրք կառավարութիւնը նկատմամբ ռուսի ձեռաց ներքեւ եղող մահմէտականաց, զՈխումքալէ Թողլու ժամանակ։ Հազարաւոր չէրքէզ և ապղազ ընտանիքներ գաղթեցին տէրութեան ծախիւք ի Փոքր Ասիա և ի Կ. Պոլիս. որոնք սակայն իրենց աւարառութիւններով անարժան գտնուեցան յետոյ հիւրասիրութեան։ Աբդիւլ Համիդ՝ Զրաղանի, Բէյլէրբէյի և Քեաղատհանէի իր պալատներուն յարակից շէնքերը պանդխտելոց յատկացուց։ Թուրք Իւլէմայէն բարձրաստիճան անձինք իրենց պալատները տուին Թուրք և քրիստոնեայ փախստէից և Հնդկաստանէն եկած անվերջ գումարներէն հոգացուեցան իրենց հացը, փայտը և կարեւորքը։ Մեծ նպաստներ հասուց վիրաւորելոց նաեւ Կարմիր Մահիկի ընկերութիւնը, յար և նման Կարմիր Խաչի հաստատութեան, որուն նախագահ դրեր էր Սուլթանը զԱրիֆ բէյ[1]։

Ջարդերը և աւազակութիւնները ոչ միայն պատերազմի դաշտին վրայ կատարեր էին Թուրքերը, այլ նաեւ հանդարտ քաղաքաց մէջ, ինչպէս յԱդրիանուպոլիս[2]։ Անգղիոյ դեսպանը, որը Լայարտ բողոքեց սաստկապէս. և Սուլթանը Եւրոպայի կարծեաց գոհութիւն տալու համար, զկուսակալը Իբրահիմ փաշա պաշտո-

---

1. Նշմարի գուքար, որպի Լաւի Ֆիլիպ Թագաւորին, նախագահ Գաղղիոյ կարմիր Խաչին, գրկեց. 20,000 ֆր.։

2. Վնհանձն և հարուստ տիկինն Լէյլի Սարէնֆարա, բուլղարաց մեծ բարերարուհին, շատ մը պաշարներով դիմեց օգնելու արկածեալներուն. և գոնէ զանոնս փրկել մահուրնէ։ Հասնելով յԱդրիանուպոլիս, իջաւ Ամերիկա պանդոկը, Թուրքերը իմացան իրեն հոն գտնուիլը, անմիջապէս վազեցին ի բանտ և չորս բուլղար, մահուան սահմանեալներէն, բերին և կախեցին իր պատուհանին հանդէպ։ Հրատարակութիւն Աշխարհագրական ընկերութեան։

նանկ ըլլաւ և տեղը ղրկեց զԱհմէտ Վէֆիք փաշա ևրեմն նախագահ Թուրք խօսարանին[1]։ Սակայն ջարդերը շարունակեցին անջնջելի արատ մը բերելով Թուրք բարձրաստիճան հրամայողներուն։

Մոնտէնէգրոյի Նիկոլա իշխանին յաջողութիւնքը։

5. — Թուրք բանակին Բուլղարիոյ ամեն կողմանէ ամիսուելէն օգուտ քաղեց Մոնտէնէգրոյի Նիկոլա իշխանը որ Սիւլէյման փաշայի մեկնելէն վերջը, Յուլիս 21ին դիմեց Նիքսիչի վրայ և նախ տիրեց շրջակայ փոքր աւաններուն։ Սեպտեմբեր 8ին յարձակեցաւ ամեն կողմանէ Նիքսիչի վրայ։ Թուրք պահնորդը որ կը կազմուէր 1200 զինուորէ, ո՛ր և է օգնութեան յոյս մը չունենալով, անձնատուր եղաւ պատուաւոր պայմաններով, և իշխանն Նիկոլա թողուց որ Թուրք գունդերը մեկնին իրենց զէնքերով ի Դուցկո։ Մոնտէնէգրացիք մտան ի Նիքսիչ, ուր գտան 19 թնդանօթք և շատ մը պատերազմական մթերք։ Նիկոլա իշխանը այս յաջողութիւնքը հեռագրեց առ Աղեքսանդր Բ որ կոչած է զՆիկոլա իր «ամենամտերիմ բարեկամը»։ Յետոյ իշխանը հանդարտաքայլ առանց դժուարութեան տիրեց Պրոյէսք և Բիլէք բերդերուն և Թուրք վարչութիւնը զբաղած Իուսիոյ դէմ, բան մը չկրցաւ ընել ընդդէմ Դարատաշցւոց։

Սիւլէյման փաշա ի Զրպգա. — Յարձակումը. — Նահանջը։

6. — Սակայն Թրքաց համար աղետալին եղաւ երկու մեծ հրամանատարներուն Մէհէմէտ Ալիի և Սիւլէյման փաշաներուն անհամաձայնութիւնը. որով չ'օգտուե-

---

1. Ահմէտ Վէֆիք փաշա եգական տիպար մը եղած է ներկայ ժամանակներուս. Թուրքիոյ մէջ իր վարքը զարմանալեաց կարգը անցած է, խստապահանջ կանոնաւորութեամբ և պարզութեամբ։ Նրազմամբ յոյն էր, բայց ապա մահմէտական եղած։ Ընտիր ուսումն և կրթութիւն առած էր ի Պարիս. որով և ի Կ. Պոլիս կը հիւրընկալէր իր պալատը նշանաւոր գիտնականներ. իր կինն ալ յոյն էր ազգաւ։ Գիւսեմ զՊրոֆ. Սախաւ նշանաւոր հայագէտը, որ ի Կ. Պոլիս, իւր տունը հիւր եղած է ուսած Թրքերէնը։ Ի Պարիս դեսպան եղած ժամանակ, վայ էր այն պաշտօնատարին որ ժամը ինն էն քանի մը վայրկեան վերջը մնէր. ինքը անձամբ դուռը հակոզութիւն կ'ընէր։ Սուլթան Համիդ զինքը Խօսարանին նախագահ դրած էր, որովհետեւ լաւ գիտէր լսեցնել երկարախօսները կամ հակառակողները, բայց հեռի էին իրմէ ազատական և սահմանադրական գաղափարք։ ՅԱդրիանուպոլիս դողացուց բոլոր բէյերը և զինուորականները։

ցան մէկմէկու բանակէ և յապաղելովին չկրցան օգնել Օսման փաշայի։ Մէհէմէտ Ալի փաշա՝ ծննդեամբ գերման և քրիստոնեայ, ապա տաճկացած, միշտ ատելի էր Թուրք հնաւանդ կուսակցութեան, որ բոլոր իր համակրութիւնը նուիրած էր առ Սիւլէյման փաշա, հմուտ Թրքերէնի և քաջ զինուորական մը։ Այս Թուրք մոլեռանդն կուսակցութեան և մանաւանդ պալատական գաղտ նենգաւորութեանց գլուխ համարուած էր Մահմուտ Դամատ փաշա, Սուլթանին քեռայրը. որով վստահ Սիւլէյման փաշա անպատիժ մնալու, փոյթ չ'ըրաւ հնազանդելու Մէհէմէտ Ալիի հրամաններուն, իրեն հետ գալու միանալու՝ և փառասէր խորհրդով մը միտքը դրաւ Լուսաց ձեռքէն կրկին առնուլ Զրպգայի անցքը, որուն կորուստը այնքան վիշտ պատճառեր էր ի Կ. Պոլիս։

Սիւլէյման փաշա Օգոստոս 16ին չուեց դէպ ի Զրպգա. գիտէր որ ռուս պահանորդը հազիւ 4000ի կը հասնէր, մինչ ինքը ի հարկին կարող էր հաւաքել 40,000ի բանակ մը։ Իր ծրագիրն ամենապարզ էր. յառաջել միշտ առանց ուշ դնելու կորուստներուն։ Լուսք զՁրպգա ամրացուցեր էին նոր բերդերով և հրանոթներով. հրամանատարն էր զօրավարն Լոռլէտով և իրեն օգնական զօրավարն Դէրոյինքի։ Ս. Նիկոլա դժուարին դիրքին կը հրամայէր հազարապետ կոմսն Տոլստոյ, համհարզ կայսեր. երկու կողերուն հրամանատարքն էին հազարապետք Դէրբլաղովիչ և Լիպինքի։ Օգոստոս 20ի առաւօտը Սիւլէյման փաշա յառաջ մղեց իր գունդերը դէպ ի բարձունքը, որոց վրայէն անեբեւոյթ դիրքերէ շարունակ կրակ մը հարիւրաւոր կեանքեր կը փոէր գետին, մինչեւ խափանել վերելքին անցքը դիւականց բազմութենէն։ Սիւլէյման փաշա շարունակ թարմ գունդեր կը հասցնէր, որոնք մագլցելով կը ջանային դէպ ի վեր բարձրանալ. սակայն հազիւ փոքրիկ տափարակի մը վրայ կ'ելլէին, անմիջապէս թնդանոթի հարուած մը զիրենք կ'աներեւութացնէր։ Նոյն աւուր Թրքաց կորուստը անցաւ 3000ը, մինչ Լուսք 200 անձինք միայն կորսնցուցին։ Երբ գիշերը հասաւ, Թուր-

քերը կրցեր էին բռնել Այքրրրճէրէլ դիրքը և վրան երկու թնդանօթք դնել։

Միւլէյման փաշա համարելով որ Ռուսք յոգնած, կարող չեն այլ եւս դիմանալու, ժամը գիշերուան ութին, թարմ գունդերով նոր յարձակում մը սկսաւ՝ լուսնի լուսով։ Ռուսք հրացանի մը նշանէն, ամենը պատրաստ կանգնեցան և մութին մէջ երկուստեք սկսան տեղատարափ գրնդակներ։ Որը լուսացաւ և Միւլէյման փաշա շարունակեց յարձակումը։ Իսկ Ռուսաց մթերքը նուազելով, դանդաղութեամբ կը կռուէին և ստէպ լուր կը ղրկէին առ զօրավարն Ռատէցքի, հասնիլ օգնութեան՝ Դաբրովայի ճամբով։ Միւլէյման փաշա երկրորդ գիշերն ալ շարունակեց կռիւը և մօտակայ տեղերէ զինուոր հաւաքած ըլլալով, երրորդ օրը իր այնքան կորուստներով հանդերձ, ունէր ձեռացը ներքև 50,000 զինուոր. և առաւօտը չծագած, բուռն ումրակոծում մը սկսաւ Բէյտէք և Այքրրճէրէլ դիրքերէն, որոց վրայ 18 հրանօթ գետեղեր էր. միանգամայն գունդեր ղրկեց որ կտրել ջանան Դաբրովայի հետ հաղորդակցութիւնը։ Ռուսաց կողմանէ բուլղար յառաջապահ գնդին ցրցուցած անձնանուիրումը և քաջութիւնը մեծ եղաւ այն օրերուն մէջ, չորսին երեքը ինկաւ հայրենի հողուն վրայ։ Թուրք գունդեր յանկարծ դիմեցին Բէդէքխոյ լերան վրայ և ահաւոր մրցում մը սկսաւ ռուս Շվաբ հրամանատարին սակաւաթիւ զօրաց հետ։ Շվաբ՝ որուն այն աւուր արութիւնը դիւցազնութեան հասաւ, կեցաւ հաստատուն իր տեղը. հինգ անգամ նոր օգնութիւնք ուղեց Ստոլէտով զօրավարէն և չորս անգամ ստացաւ սակաւաթիւ խումբեր. իսկ հինգերորդին պատասխանեց զօրավարն Ստոլէտով, որ այլ եւս մարդ չունէր՝ ամենը մեռած էին կամ վիրաւոր, ինքն ալ իր մարդիկներով թող կռուի մինչեւ արեան վերջին կաթիլը, մինչեւ հասնին թերեւս Ռատէցքիի գունդերը։ Իւ Ռատէցքիի գունդերը յիրաւի հապճեպ ընթացքով հասան երեկոյեան ժամը 6ին, և յետ զինուորական խորհրդակցութեան մը, Ռուսք թարմ գունդերով և առատ մթեր-

քով սկսան սարսափելի կրակ մը։ Դիշերը վրայ հասաւ և Միւլէյման փաշա հրամայեց ռմբակոծումը դադրեցնելու, հանգչելու յետ երեք օր երեք գիշեր շարունակ կռուելու. յորս կորսնցուցեր էր 7000 զինուոր։ Ռուսք ևս կորսնցուցեր էին 2000 հոգի։

Նոյն գիշերը նոր օգնութիւնք հասան Ռատէցքի զօրավարին. երկրորդ օրը հասաւ նաեւ զօրավարն Դրակոմիրոֆ ուրիշ գունդերով և հրամայուեցաւ շարունակ կրակով մը Թուրքերը վանել Բէտէքխոյի բարձունքէն, որով կը սպառնային Ֆաբրովայ ճամբուն։ Երբ Ռատէցքի և Դրակոմիրոֆ միաբան կուսային հրամանքը, թշնամւոյն կողմանէ գնդակ մը, ծանր կերպով վիրաւորեց Դրակոմիրոֆ զօրավարին ծունկը, որ նուաղեալ պատերազմէն դուրս տարուեցաւ։ Յարձակման գլուխ կեցաւ նոյն ինքը զօրավարն Ռատէցքի. և Եիդոմիրի գունդը իր զօրավարին վիրացը վրէժը առնելու համար, այնքան թափով կռուեցաւ, որ Թուրքերը տեղի տուին և Ռուսք սուինի արիւնահեղ կռուով մը տիրեցին Բէդէքխոյի։ Անկէ վերջը Ռատէցքի ինքը սկսաւ յարձակումը, զՄիւլէյման փաշա Զրպգայէն հեռացնելու համար. բայց ինքն ալ չկրցաւ վանել մօտակայ անտառախիտ բլրէ մը Թուրք գունդեր, որոց կը հրամայէր Վէյսէլ փաշա։ Սա թողուց որ Ռուսք յառաջեն և տիրեն նոյն իսկ երկու կարգ պատնէշներու. ապա յանկարծ կարկուտի նման հրացանի հարուածներ Թափեց վրանին, որով բռնադատուեցան Ռուսք նահանջել մեծ կորուստներով, և ամրացան իրենց նախկին դիրքերուն մէջ։ Իսկ Միւլէյման փաշա Յուլիս 27ին, վերջին բուռն ռմբակոծում մը սկսաւ ռուս դիրքերուն և տեսնելով որ ա՛լ անհնարին էր զանոնք խախտել, դադրեցուց յարձակումը, պատուիրեց ճարտարապետներու ամրացնել Բէդէք և Այքերը՝ճէբէլ, ձեռք բերած դիրքերը. և հոն, յետ բազմաթիւ պահանոյներ դնելու, ինքը սկսաւ քաշուիլ, անիմաստ յարձակմամբ զոհելով 20,000է աւելի կեանքեր, բաց ի վիրաւորներէն որոց թիւը կ'անցնէր 15,000ը և որոնցմով լեցուեցան Քըզանլըքի, Ադրիանուպօլսոյ և կ. Պոլսոյ հիւանդանոցները։

Բարեբաղդաբար Միւլէյման փաշայի զօրաւոր բաբեկամք պաշտպանեցին զինքը Կ. Պոլսոյ մէջ, որով փոխանակ պաշտօնընկէցութեան, քիչ վերջը ունեցաւ նաեւ յառաջադիմութիւն։

Երկու կողման բանակաց կացութիւնը Պլէվնայի դիմաց։

7. — Եւ սակայն հարկ էր լեցնել այս կոտրուող զինուորաց տեղ։ Սուլթանի հրովարտակ մը ի զէն կոչեց անոնք 1. որ դրամով ուրիշներ ղրկեր էին իրենց տեղ. 2. անոնք՝ որոց թիւը չէր ելած. 3. առաջին և երկրորդ կարգի պահեստք. 4. որոնք որ թէպէտ քսան տարեկան չկային բայց ունէին ոյժ զինուորելու. 5. անոնք՝ որ 40 տարին անցուցեր էին, բայց կարող էին զէնք գործածելու։ Փութով հազարաւորք հաւաքուեցան դրօշակի ներքեւ և ղրկուեցան պատերազմին դաշտը յԵւրոպա։

Արդէն Նիկոլա մեծ դուքսն ալ Պլէվնայի քով հաւաքեր էր 80,000 զինուորք, որոց եկան միանալու 30,000 ռումէնք ալ ընդ հրամանատարութեամբ Կարոլ իշխանին։ Երբ Օգոստոս 28ին ռումէն գունդերը պիտի անցնէին Դանուբը, շքեղ սպայակոյտով մը հասաւ նաեւ իշխանը, և իր կողմանէ Բրատիանո խօսեցաւառ զինուորս յիշեցնելով իրենց նախնեաց քաջութիւնը. արդէն Ռումանիա խզեր էր իր կապը Թուրքիոյ հետ և հրատարակեր էր ինքնիշխանութիւնը, հիմա կը մնար յայտնել պատերազմի դաշտին վրայ արժանաւորութիւնն։ պանծացուց երիտասարդ իշխանը որ «կ՚առաջնորդէր իրենց փառաց ճամբուն մէջ». և վերջացուց խօսքը կեցցէով մը, որուն պատասխանեց բովանդակ բանակը։ Այս գունդերը մտան Թուրք հողը և ուղղուեցան դէպ ի Պլէվնա, միանալու ռուս Արեւմտեան Բանակին՝ որ կազմուեր էր ի Պորադիմ, Պլէվնայի մօտ՝ Յուլիս 31ի պարտութենէն վերջը, և որուն հրամանատար անուանուեր էր զօրավարն Ցոտոֆ, կայսերական պալատան հազարապետ մը։ Քիչ հեռու ի Սէլվի, բանակած էր զօրավարն Սվիատոպոլք Միրսքի. այս երկու բանակներուն հաղորդակցութիւնը կը պահպանէր խազախներու ջոկատով մը զօրավարն Աքորէլէֆ, Քոխանտի դիւցազնը։

Ռուս և Թուրք բանակներն երկու ամիս անտանելի տաքերուն պատճառաւ զգուշացան կռուէ. և իրարանչիւրը պաշտպանութեան փոսեր և պատնէշներ պատրաստեց։ Օգոստոս 31ը, որ Ռամազանի առաջին օրն էր և միանգամայն տարեդարձ Սուլթանին գահակալութեան, Օսման փաշա յաղթութեամբ մը տօնելու համար, 25,000 զօրքով և ընտիր հեծելազնդով մը դուրս ելաւ Պլէվնայէն դէպ ի Ներկալէվից և Պէլիշատ, ուր հաւաքուած էին 30,000 ռուս զինուորք։ Օսման փաշա բաղխեց այդ դիրքերը. առաւ երկու գիծ պատնէշքը մեծ կորուստներով. բայց նոր գունդեր չհասանելով, ստիպուեցաւ նահանջել Ռուսաց շարունակ հասած թարմ գունդերուն դիմաց, և քաշուիլ ի Պլէվնա. տանելով հետը ընդ մեռեալ և ընդ վիրաւոր 2000էն աւելի անձինք։ Ռուսք եւս կորսնցուցին 1000 անձինք. որով այս կռիւը բնաւ օգուտ մը չունեցաւ Օսման փաշայի, նա մանաւանդ մեղադրուած է այսպիսի աննպատակ կռուի մը համար։

Նոյն օրը Նիկոլա մեծ դուքսը հրամայեց Սրոբլէֆ զօրավարին բռնել Պլէվնայէ Լովայի ճամբան, և իմէրէտինսքի իշխանին յանձնեց յարձակմամբ տիրել Լովայի։ Իմէրէտինսքի երեք սիւն բաժնեց իր գունդերը և Սեպտեմբեր 3ին, յետ նախ ռմբակոծելու քաղքին ամրոցները, կէսօրէն վերջը ժամը 2½ին հրաման տուաւ ընդհանուր յարձակման մը։ Քաղաքը մտնելէն առաջ անհրաժեշտ կարեւոր էր տիրել Կարմիր լերան, զոր արիւնահեղ և մոլեգին մրցմամբ բռնեց Սքոբէլէֆ զօրավարին Տէրիաքին ջոկատը։ Անկէ վերջը քաղաքը իրենց ձեռքը կրնար համարուիլ։ Թուրք պահանորդը որ 3000 զինուորէ կը կազմուէր և կը կռուէր քաղքին պարսպաց ներքեւ, բռնադատուեցաւ խառն ի խուռն քաղաքը դիմել. և Ռուսք անցան Օսէմը և եռեւնէն մտան ի Լովայ. որուն փողոցներուն մէջ ծագեցաւ սուինով վայրենի կռիւ մը, յորում սպանուեցաւ գրեթէ բովանդակ Թուրք պահանորդը. և ըստ վկայելոյ ականատեսից, ռուս զինուորք կատարեցին բաշիբոզուք-

ներուն դերը. որուն համար բողոքեց բոլոր Եւրոպա։ Օսման փաշա Լովացի կողմէն թնդանօթներուն ձայնէն, բանակով մը դիմեց օգնութեան, բայց ճամբուն վրայ իրեն պատուար գտաւ Աքորէլէֆի խազախներուն գունդը. և մինչ կը պատրաստուէր բաղխելու, իմացաւ բաղքին առնուիլը և ետ դարձաւ։

Եր իսասարդ զօրավարն Իմէրէտինսքի, որուն անունը այս կռուով Դուրգօ և Աքորէլէֆ զօրավարաց անուան հաւասար սիրելի և ժողովրդական եղաւ ռուս զինուորին, պահանորդ թողլով Լովացի մէջ, աճապարեց հասնիլ Պլէվնայի դիմաց։ Սահմանուած էր Սեպտեմբեր 11ին Զարին տօնախմբութեան օրը ընդհանուր յարձակումն տալ Պլէվնայի վրայ։ Որչափ որ պատերազմին պիտի հրամայէր իշխանն Կարոլ, այսու հանդերձ մեծ դուքսն Նիկոլա իր բնածին եռանդովը և անհամբերութեամբ, ինքը եւս եկաւ անձամբ տեսնելու և տալու վերջին հրամանքը։

Պլէվնայի երրորդ պատերազմը։

8. — Օսման փաշա Պլէվնայի մէջ ունէր 50,000էն աւելի զինուոր. նուազ քան ինչ որ ունէր Յուլիս 31ին. բայց իր պաշտպանողական եզական հանճարովը, այս քառասուն աւուրց մէջ կրկնապատկեր էր ամրութիւնքը, որոց գլուխ դրած էր Ծերունի զօրավարն Ադիլ փաշա, Գյիլմու պատերազմին մէջ քաջացող սպաներէն մին, զոր զինուորք իր բարութեանը համար Պապա կը կոչէին։ Օսման փաշա ամեն հոգ թափած էր այդ պաշտպանութեանց համար և կ'ըսէր իր համհարզ զօրավարաց, որ Պլէվնա դաշտն մ'է Ռուսաց կողին, և ցորքան դիմանար, Ռուսք չէին կարող յառաջել։

Սեպտեմբեր 6ին 100,000 ռուս և ռումէն զինուորք պատրաստ էին յարձակելու Պլէվնայի վրայ. և որովհետեւ Յուլիս 31ի պարտութեանը պատճառ համարուեր էր ամրակոծման տկարութիւնը, որոշուեցաւ յարձակմանէ չորս օր առաջ սկսիլ ամրակոծել և աւերել բերդերը, մանաւանդ գկրէվիցա. որուն տիրելով կը համարէին տիրել Պլէվնայի։ Ռուս ապայակուտին մէջ կար նաեւ այս համոզումը որ Օսման փաշա տեսնելով թշնամւոյն ահեղ

բանակը, անմիջապէս պարպէ զՊլէվնա և փախչի դէպ ի Սոֆիա, որով և գունդեր ղրկուեցան բռնելու այդ ճամբան։

Սեպտեմբեր 7ին առաւօտ միահամուռ հրանօթից որոտումը, իմացուց Պլէվնայի ռմբակոծման սկսիլը. և նոյն երեկոյ բանակը հասան Աղեքսանդր կայսրը, մեծ դուքսն Նիկոլա և իշխանն Կարոլ։ Գիշերը դադրեցաւ ռմբակոծումը և ամբողջ գիշերը ծեր Ադիլ փաշա աշխատեցաւ բերդերուն կրած վնասը դարմանելու։ Երկրորդ առաւօտը կրկին սկսաւ ռմբակոծումը։ Ռումէնք իրենց հարուածները կ'ուղղէին Կրէվիցա կամ Գէրիմ Թաբիայի վրայ. և իրենց նոր եռանդովը փորձեցին յարձակումներ եւս. և փոքրիկ գուպարածներու մէջ ունեցան յաջողութիւններ։ Այն ատեն Աքորէլէֆ զօրավարը և Իմէրէտինսքի իշխանը յառաջեցին հեծելազօրով, հրանօթները լաւագոյն դիրքերու վրայ զետեղելու. և զօրավարն Աքորէլէֆ առաջին թափով յաջողեցաւ բռնել Պլէվնայէ կէս քիլոմէտր հեռու բլուր մը։ Սեպտեմբեր 8ին և 9ին շարունակեց ռմբակոծումը և Սեպտեմբեր 9ին զօրավարն Մոտոֆ տիրեց Ռադիսէվոյի բերդին յառաջատեղեաց։ Սեպտեմբեր 10ին ամբողջ օրը և գիշերը շարունակեց անդադար ռմբակոծումը. և զօրավարն Աքորէլէֆ հեղեղանման անձրեւի մը ներքեւ չուելով, տիրեց բլրոյ մը որ կը նայէր Պլէվնայի վրայ և հոն ամրացաւ։ Ամբողջ գիշերը անձրեւեց և տիղմը ամեն կողմ երկու թիզ բարձրութեան հասած էր։ Սեպտեմբեր 11ին առաւօտը անձրեւը տկարացաւ. բայց թանձր մառախուղ մը պատեր էր զՊլէվնա և շրջակայ բարձունքը։ Ժամը 9ին նշան տրուեցաւ պատերազմին և սկսան թնդանօթք իրենց ռմբակոծումը մշուշին մէջ. և զօրավարն Աքորէլէֆ յառաջեց դէպ ի թշնամւոյն դիրքերը։ Մի և նոյն ժամանակ զօրավարն Դոբրովսքի իր որսորդաց գունդերովը յառաջեց Պլէվնայի ձախ կողմը գտնուած բերդի մը վրայ։ Սակայն մառախուղը սկսեր էր քիչ մը փարատիլ և թուրքաց կրակը մեծ ջարդերով ցրուեց ռուս գունդերը և մահա-

ցու վիրաւորեց Դոբրովսքի զօրավարը, որ մեռաւ պատերազմէն դուրս հանուելու ժամանակ[1]։ Զօրավարն Սքորէլէֆ տեսնելով Դոբրովսքիի գունդերուն տկարանալը, նոր զօրքով հոն դիմեց և հրամայեց շարունակել յարձակումը։ Իր գունդերը հրացանը ձեռուընին թանձր մշուշի մէջէն հասան բերդին մօտ. և ահա Թուրքերը սկսան գնդակները թափել վրանին կարկտի պէս։ Սքորէլէֆ սուրը ձեռքը ամեն կողմ կը հասնէր, ամեն կողմ հրամաններ կուտար և կը տեսնէր իր շուրջը հարիւրաւորաց փռուիլը։ Իր զինուորները լքանելու վրայ էին՝ երբ հաւաքեց մնացեալ զօրականը, անցաւ անոնց գլուխ, առանց գլխարկի՝ որովհետեւ գնդակ մը առեր տարեր էր զայն, երեսը վառոդէն սեւցած, զգեստները ծակծկած և պատռտած, յարձակեցաւ բերդին վրայ մեծաձայն կեցցեներով առ Զարն։ Անխնայ և մոլեգին կռիւ մը սկսաւ. Ռուսք առանց մեռեալքը նայելու, հասան բերդը և մտան հոն. ուր շարունակեցին արիւնահեղ սուինի կռիւը. Թուրք պահանորդը գրեթէ ամբողջովին ինկաւ. և Սքորէլէֆ տիրեց բերդին 4500 կեանք զոհելով։

Այս յարձակման միջոց զօրավարն Փրիլով հրաման ստացեր էր տիրելու Ռատիսէվոյի ամենէն մօտ բերդին։ Թուրքերը թողուցին որ Փրիլովի գունդերը յառաջեն. և երբ մօտեցան իրենց, այն ատեն զարհուրելի կրակ մը սկսան վրանին և այն դժբաղդ զինուորներէն հազիւ քանի մը հոգի ազատեցան։ Փրիլով նոր փորձ մը ըրաւ ուրիշ գունդերով, բայց անոնք ալ նահանջեցին մեծ վնասներով։

Ձախ թեւը, զոր կը կազմէր ռումանիացի բանակը, եւ որուն կը հրամայէր զօրավարն Զեռնատ, Ռումանիոյ պատերազմի պաշտօնեայն, հրաման ստացաւ տիրելու

---

1. Երբ բանակէն դուրս կը տարուէր, հանգիպեցաւ Սերգէյ Վէրիա-չի կինը և ինդրեց որ իր կողմանէ պատասի մեծ դուքս Նիկոլայի, որ Ս. Գէորգայ նշանով վարձատրէ այն ութը որսորդ զինուորք, որ իրենց կենաց գոհութեամբ զինքը խաղաղութեան հաներ էին։ Մեծ դուքսը յետոյ կատարեց ապերսը։

Կրէվիցայի բերդին, որ կը տիրէր Պլէվնայի վրայ։ Ե-բիտասարդ գունդերը, համբաւոյ մը եռանդէն ոգեւորուած, մեծ թափով մը իջան բերդին ներքեւ եղած փոսը. և անթիւ կեանքերու կորուստով երկու անգամ մեծ թափով յարձակեցան բերդին վրայ և երկու անգամ ալ վանուեցան. բայց երրորդ անգամ նուազ էին թուրք զինուորները. և երբ Ռումէնք մոլեգին մրցելով հասան բլրոյն ծայրը և կը համարէին տիրած ըլլալ բերդին, տեսան որ բլուրը կոնակը ունէր տափարակ հովիտ մը և բուն բերդը անդր էր քան զհովիտը։ Ռուսաց յուսահատելու յարձակեցան միւս բերդին վրայ, բայց թուրքերը զարհուրելի կրակով մը, այնպէս սկսան ձգել այն գեղեցիկ ե-բիտասարդութիւնը, ինչպէս խոշոր կարկուտ մը կը ձգէ ծառոց պտուղը։ Կայսրը որ կը դիտէր բարձունքէն այս սրտաճմլիկ տեսարանը, չկրցաւ բռնել արցունքը։ Ռումէնք վանուեցան կորսնցնելով 1200 զինուոր և 40 սպայք։ Հասաւ երեկոյ և սակայն Ռուսք չյուսահատելով, ուզեցին բերդին տիրելու վերջին փորձ մ'ալ ընել։ Ռուս և ռումէն պահեստներ շարունակարար առանց ուշ դնելու կրակին և գետին փոսողներուն, մղուեցան յառաջ բերդին ներքեւ և հոն, մօտ երկու ժամ սուրով և սուինով մոլեգին կուռ մը, վերջապէս Ռումէնք մտան ի Կրէվիցա. բայց ներսը ուրիշ բան չգտան բայց եթէ դիականց կոյտեր և վիրաւորք, որոնք դառնագոչ կը հեծէին։ Թշնամին զբերդը թողլէն առաջ խանգարեր էր բոլոր ամրութիւնքը։

Ռուս սպայակոյտը կը համարէր, որ Կրէվիցա բերդը Պլէվնայի վրայ տիրելուն, նոյն գիշեր Օսման փաշա պիտի պարպէր քաղաքը. և մեծ եղաւ զարմանքնին երբ առաւօտը լուսանալով, տեսան որ Օսման փաշա նախահոգութեամբ արդէն ուրիշ բերդ մ'ալ շիներ էր Կրէվիցայէ 250 մեդր հեռու դէպ ի Պլէվնա, առաջնոյն հաւասար զօրաւոր և ընդարձակ, որով այնքան գոհոգութեամբք ստացուած դիրքը կը կորսնցնէր իր կարեւորութիւնը։

Ընդհակառակն թուրք բերդերը առաւօտը կանուխ

սկսան ամրակոծել Աքորէլէֆ զօրավարին բռնած երկու դիրքերը, որոնք կը փակէին իրենց Սոֆիայի ճամբան։ Աքորէլէֆի հրանօթք, որոց կը հրամայէր զօրավարն Փուրոպատկին, ամենայն եռանդեամբ կը պատասխանէին։ Զօրավարն Աքորէլէֆ երկու անգամ ապայ մը ղրկեց առ զօրավարն Լէվիցքի, փութով օգնութիւն ղրկելու. սակայն ուստ ապայակոյտը այնքան կարեւորութիւն տուած էր Կրէվիցայի ամրոցին, որ չուզեց ուրիշ կողմ գունդեր ցրուել և Աքորէլէֆ, որուն զինուորքը շարունակ կը հնձուէին, մնալով առանց նոր օգնութեան, քաշուեցաւ երկու բերդերէն. որոց անմիջապէս տիրեցին Թուրքերը[1]։

Աեպտեմբերի վեց օրուան կռիւներուն մէջ Ռուսք կորանցուցեր էին մօտ 15,000 զինուոր ընդ մեռեալ և ընդ վիրաւոր. իսկ Թուրքացը կը համարուի քանի մը հազար միայն։ Ռուս հրամանատարը զինադադար մը խնդրեց այնքան մեռելները թաղելու համար։ Ոսման փաշա տեղագրական գննութեան մը կասկածէ, քանի մը օր վարանեցաւ ընդունելու. այսպէս դիակունք և վիրաւորք ինն օր մնացին դաշտին վրայ՝ անթաղ և անօգնական. և բոլոր Եւրոպա քատմեցաւ իմանալով յետոյ շատ մը մանրամասնութիւնք, մանաւանդ վիրաւորաց նկատմամբ։

Ռումանիացի բանակը զինուորական եռանդով մը՝ ուզեց փորձել, տիրելու Կրէվիցայի երկրորդ բերդին և ամրակոծեց զայն Աեպտեմբերի 15ի, 16ի և 17ին։ Ապա 18ին, գունդերը յառաջեցին մինչեւ փոսերը, ուր սուինով կռուեցան Թուրք պահանորդաց հետ։ Մեռաւ հոն Նիկոլա Լոհան հազարապետը. ծանրապէս վիրաւորուեցան գնդապետն Հանդոքա, Կալինէսքո Դիմիտր և ուրիշ ապայք։ Իշխանն Կարոլ յետ կորանցնելու քանի մը հարիւր զինուոր, հրամայեց նահանջել։

---

1. Աքորէլէֆ յետոյ ծանր կերպով ամրաստանած է Լէվիցքի, իբրեւ թէ յետին. լեհացի՝ նախանձեր էր ուստ զօրավարին համբաւուն։

Պլէֆնայի պաշարումը։

9. — Պլէֆնայի ներքեւ երրորդ պատերազմը, Խուսաց կողմանէ այնքան մեծ պատրաստութեամբը և յոյսերով սկսուած, յայտնի ցոյց ու տուաւ որ անկարելի էր Օսման փաշայի ռազմագիտութեան և քաջ բանակին յաղթել յարձակմունքներով. որով ոուս սպայակոյտը բանադատուեցաւ պաշարման ծրագրի մը դիմել, մեծապէս վշտացեալ. որովհետեւ Պլէֆնայի այդպէս մնալը, ոչ միայն կը նուազեցնէր իրեն համբաւը, այլ նաեւ վերխվայը կ՚ընէր իրենց երեւակայած արագընթաց գաղափարը յԱդրիանուպոլիս և ի մայրաքաղաքը։

Օսման փաշա թշնամւոյն շարժումներէն գուշակեց որ կանոնաւոր պաշարում մը պիտի սկսէր. պաշարում մը՝ որ կրնար երկար տեւել, քանի որ իր կողմանէ սահմանած էր դիմանալու մինչեւ վերջին միջոցը. և կ. Պոլսէն խնդրեց թէ զինուոր և թէ առատ մթերք և պաշար։ Մինչդամայն շեշտեց առ Պատերազմի պաշտօնարանը՝ ամէն հնարք ձեռք առնուլ ապահովելու Պլէֆնայի հաղորդակցութիւնը Սոֆիայի հետ Օրխանիէի ճամբով։ Ի կ. Պոլիս Պատերազմի պաշտօնական ըմբռնեց Օսման փաշայի խնդրոյն կարեւորութիւնը և փութով դրկուեցաւ Շէվքէթ փաշա կանոնաւոր և պահեստի գունդերով պահպանելու Օրխանիէի ճամբան։ Շէֆքէթ փաշա Բուլկարներու ջարդերու մասին ամբաստանուած ըլլալովը, համակրելի անուն մը չունէր, և Խուսք զին դրած էին իր գլխոյն, այսու հանդերձ աներկիւղ զինուորական մ՚էր. մեծ աշխուժով հոգաց Օրխանիէի ամրութիւնքը։ Դարձեալ հազարէն աւելի արջաս հաւաքեց. և 10,000 կտրիճ զինուորներ հեր առնելով, յետ այլ և այլ գուպարածներու Խուսաց դրկած ջոկատներու դէմ, յաջողութեամբ և խոհեմութեամբ զանոնք մղեց ի Պլէֆնա Սեպտեմբեր 23ին։ Օսման փաշա քանի որ Սոֆիայի ճամբան բաց էր, աճապարեց Պլէֆնայէն հանելու բոլոր աւելորդ բերանները։ Քրիստոնեայ բուլղար բնակիչները դրաւ փոսեր փորելու և զինեց թուրք բազաքացիներու։ Ինքը անձամբ կը շրջէր ամէն օր ամրութիւնքը տեսնելու և

կարեւորքը հրամայելու. որով արդէն պատսպարուած Պլէվնան քիչ ատենուան մէջ առաջնակարգ բերդաքաղաքի կացութեան մէջ դրաւ։ Բոյս ունէր որ իր այսպէս արուեստամբ դիմացած ժամանակ, օր մը միարան գործելով Մէհէմէտ Ալիի և Սիւլէյման փաշայի բանակներուն հետ, ամբողջ գօրաւոր պատուար մը պիտի բլլային ռուսական արշաւանքին։

10. — Սակայն միւս բանակներուն գլուխները չունեցան Օսման փաշայի անիմոնջ և արթուն ոգեմագիտութիւնը։ Մէհէմէտ Ալի երբ հասաւ Շումլա, Լոմի բանակը, ինչպէս կը կոչուէր Արեւելեան բանակը, լքեալ և անգործ կացութեան մէջ կը գտնուէր և կորանցուցեր էր շատ մը գօրաւոր պատերազմական դիրքեր և շատ բաղաքներ ալ անպատսպար թողուցեր էր. և եթէ Զարէվիչի երկչոտ ընթացքը չ'ըլլար, արդէն այդ կէտերը գրաւուած կ'ըլլային ի Ռուսաց։ Ադեքսանդր Զարէվիչ, որ Ռուսճուքի բանակին հրամանատար անուանուեր էր, 50,000 գօրաց բանակ մը դրկեր էր Լոմի գծին վրայ. Օգոստոս 14ին Ռուսք շարունակ ոմրակոծեր էին գԻռուսճուք, որուն կը հրամայէր ութանամեայ Փայգէրլի Ահմէտ փաշա. այն որ ի Կ. Պոլիս ազատեր էր Զէրքէզ Հասանի կոտորածէն։ Ռուսճուքի ոմրակոծման երկրորդ օրը Ահմէտ փաշա ինքն ալ ոմրակոծեր էր գԱիուրճէվո։ Այսու հանդերձ թուրքաց բանակին մէջ տիրած էր անհոգութիւն մը. յայտնի է որ Ռուսճուքի ռուս բանակին մէջ ալ չկար Գուրգոյի կամ Սքոբէլէֆի նմանեան ոգին։

Երբ Մէհէմէտ Ալի փաշա հասաւ ի Շումլա իբրեւ ընդհանուր հրամանատար, առաջին գործն եղաւ ամրացնելու գԻազկրատ և Լաքիճուսմ. գՖուատ փաշա իր հեծելազօրով կանչեց ի Ռազկրատ. և այս գունդերուն շարժումը պաշտպանելու համար, գԱգիզ փաշա հետեւակ գունդերով դրկեց բռնելու գԼաէրճի։ Ֆուատ փաշա կատարեր էր իր ուզածն վտանգաւոր մասերը, երբ Ագիզ փաշա լսեց Ռուսաց Լաէրճիի վրայ չուելը։ Ագիզ փաշա ընդառաջ գնաց անոնց, որոնք թուով շատ

Մէհէմէտ Ալի ընդհանուր հրամանատար ի Շումլա։

աւելի էին իրմէ. մոլեգին բաղխում մը եղաւ, յորում գնդակէ մը մեռաւ Ակիզ փաշա և հեծելազօրուն հրամանատարը, Ֆէյզիլա փաշա, եօթը հարուած ընդունեցաւ. բայց այս կոիւը հետեւանք մը չունեցաւ։ Մէհէմէտ Ալի հոգ տարաւ զինուորաց մէջ բարեկարգութիւն մտցնելու, նա մանաւանդ որ, Ասիայէն ալ շարունակ նոր զինուորք և գէյրէքներ կը հասնէին, յորս նաեւ հայեր ալ[1]։ Ուստ Յուլիս 30ին Պլէֆնայի պարտութեան հոգով կրաղած, զինքը հանդարտ թողուցին, և Զարէվիչ միշտ զգուշաւոր, յանակնկալս չրոնուելու որոգայթի մը մէջ, նոր գունդերով և թնդանօթներով կ'ամրացնէր Լոմի և Լանտրայի իրեն բռնած անցքերը։

Քարահասանի պատերազմը։

Իսկ Մէհէմէտ Ալի իր գունդերը կազմելէ և կանոնաւորելէ վերջը, հաստատեց իր ծրագիրը՝ կորել Զարէվիչի բանակը որ կը տարածուէր Ուստահուքէն Ցիրնովա երկայն գծով մը, բռնած ըլլալով գԱուլիանքէոյ, Պոպրէոյ և Քարահասանքէոյ, որ հանգոյց մ'էր շատ ճամբաներու. և ապա բաղխել և վանել զայն դէպ ի Ռիէլա, դէպ ի Դանուր։ Թուրք գունդերը իրենց տեղափոխութեանց միջոց, ունեցան այլ և այլ գուպարաններ Ուստաց հետ՝ յԱգայլար, ի Սատինա, ի Սպահիլար, ի Վիտինա և Քատիքէոյ, փոփոխակի բաղդերով. բայց իրենց նպատակը պիտի ըլլար բաղխել Քարահասանքէոյ կարեւոր դիրքը, ուր Ուստաք 3000 զօրաց և 500 հեծելոց պահանոյդ մը ունէին, որոց կը հրամայէր զօրավարն Լէոնոֆ։ Թուրք բանակը որ պիտի բաղխէր զՔարահասան, 20,000 զինուորէ կազմուած էր, որոց կը հրամայէին Ասաֆ փաշա, Նէճիբ փաշա և Սարիա փաշա։ Սեպտեմբեր 4ի առաւօտեան ժամը ութին, Նէճիբ փաշա բաղխեց զՔարահասան՝ ճակատէն. ոգնութեան հասաւ իրեն փութով նաեւ Սարիա փաշա.

---

1. Ճշմարտութեան համար պէտք է բանալ, որ գժբաղդաբար այդ անկանոն կազմակերպ գունդերուն մէջ կային հայեր ալ, յորս խմբապետ մը իսկ՝ Աւետիս Լիֆնոի անուամբ։ Ժամանակին Եւրոպայի լրագիրներէն ամենք գէյրէքները ամբողջովին հայերէն համարեցան, որ անտեղի է. ամենք ալ կը գրեն թէ թուրք բանակին մէջ ընդ ամենը 70,000էն աւելի հայք կային, որ սուտ է բոլորովին։

և որովհետեւ շատ մոտ էին մէկմէկու, թողուցին թնդանոթքը և սուինով արիւնահեղ պայքար մը սկսան։ Մէհէմէտ Ալի բերէ մը կը դիտէր կռիւը. եղաւ վայրկեան մը որ տարակուսեցաւ յաղթութեան վրայ. և փութացուց կուռն տեղը գնաքրը փաշա վեց ջոկատով, որ արգիլեց ռուս զօրաբաժիններուն, օգնութեան հասնելու պահանորդին։ Ամբողջ օրը տեւեց բաղխումը և Խուսք բաշուեցան։ Երեկոյեան ժամը 7ին Նէֆիբ Սաբիտ և Ասաֆ փաշաներուն գունդերը, որոց հետ էին նաեւ երկու եգիպտացի գունդեր, մտան ի Քարահասանքէոյ, ուր գտան 2000 հրացան, պաշար և զգեստեղէնք։ Երկու կողմանէ ալ ինկեր էին մոտ 500 անձինք։ Երկրորդ օրը Զարէվիչը հրամայեց 35դ զօրաբաժնին որ բանակած էր ի Հայտէրքէոյ, նահանջելու ի Պալամորցա։

Քոլդէլիէվացի դիմաց պարտութիւնը։

11. — Իսկ Մէհէմէտ Ալի իր ծրագիրը շարունակելով, երկրորդ օրը յարձակեցաւ Քոլդէլիէվացի վրայ, զոր կը պաշտպանէր զօրավարն Արնոլդի։ Ռուս պահանորդը թշնամւոյն բազմութեան առջեւ նահանջեց յԱբլովա, որուն վրայ յարձակեցաւ Իբրահիմ փաշա և տիրեց։

Թուրք Ալ թեւին այս գործողութեանցը ժամանակ, Ջաֆ թեւը որ կազմուած էր եգիպտացի գնդերէ և որոց կը հրամայէր Խտիվի որդին Հասան փաշա, հրաման ստացաւ երթալ ի Պոպքէոյ, ուսկից կային երկու ճամբայ ի Տիրնովա և ի Բիէլա զորս պիտի բռնէր, ռուս բանակին նահանջը կտրելու համար։ Բայց եգիպտացի ենիտասարդ իշխանը, նախ իր ուզած կերպով սկսաւ կատարել շարժումները և երբ հարկ էր օգնել Սալիհ փաշայի որ կը վանէր գԻուսս, դադրեցաւ պատերազմել, որով Խուսք հանգստեամբ նահանջեցին ի Բիէլա։ Ասաֆ և Սաբիդ փաշայք վանելով գԻուսս, տիրեցին անոնց թողուցած տեղերուն, մինչեւ ի Սինանքէոյ[1]։ Յե-

---

1 Ամբողջ պատերազմին ժամանակ եգիպտացի իշխանը և իր գունդերը շատ մեղադրանաց նիւթ եղան. բայց զօրավարք չէին կարող յայտնապէս յանդիմանել, իշխանը ամենաբարձր պաշտպանութիւն ունենալով։

տոյ թուրք բանակը չուեց դէպ ի Զայիրքէոյ և մօտեցաւ Զէրքովնայի, ուր փոսերով և պատնէշներով ամրացած էր ռուս բանակը և որուն հրամանատարն էր զօրավարն Տատիշէֆ։ Մէհէմէտ Ալի կեղծ յարձակումով մը ուզեց իմանալ թշնամւոյն տկար թեւը, յետոյ բոլոր ուժով զայն բաղխելու համար։ Տատիշէֆ գուշակեց թշնամւոյն խորհուրդը և այն ատեն գունդերուն հրամայեց պատերազմելու, երբ յայտնի տեսաւ թշնամւոյն բաղխումը։ Եուրուքլէրի դիմաց երկու բանակք քաջապէս վարուեցան. յաղթութիւնը Մէհէմէտ Ալիի կողմն էր ի սկզբան. բայց երբ պէտք ունեցաւ պահեստի գունդերուն, անոնք չէին հասներ և Հասան փաշայի գունդերը դեռ չէին կատարած իրենց սահմանեալ շարժումները։ Տատիշէֆ երագապէս՝ ամեն կողմ կը հասցնէր գունդեր և վաշտեր. զօրավարն կոչքով դիւցազնաբար յառաջ կը մղէր զանոնք և պատուաւոր մը կ՚ընէր թուրքաց առջեւ. որոնք յետ կորսնցնելու 800 անձինք՝ բռնադատուեցան նահանջելու և բռնելու առաւօտեան պատերազմէն առաջ դիրքերնին։ Երկրորդ օրը Մէհէմէտ Ալի գինադադար խնդրեց մեռելները թաղելու։ Այսպէս երկու բանակք երկու օր դիմայէ դիմաց կեցան մէկզմէկ դիտելով. բայց երրորդ օրը Մէհէմէտ Ալի իմանալով Տատիշէֆի հասած օգնութիւնքը և ինքը անվստահ 20,000 Եգիպտացիներուն վրայ, որոնք 30,000 բանակին մեծագոյն մասը կը կազմէին, Սեպտեմբեր 25ին հրամայեց նահանջելու դէպի յԱյազլար և բռնելու Սեպտեմբեր 4ի պատերազմէն առաջ, Լոմի վրայ ունեցած դիրքերը։

Ի Կ. Պոլիս կանչուիլը։

Այս իր անյաջողութիւնը յարմար առիթ եղաւ իր նախանձորդաց, ի Կ. Պոլիս զինքը անկարող ամբաստանելու։ Հոկտեմբեր 2ին Մէհէմէտ Ալի հրաման մը ընդունեցաւ Պատերազմի պաշտօնարանէն, որ զինքը ի Կ. Պոլիս կը կոչէր և իրեն տեղ ընդհանուր հրամանատար կ՚անուանէր զՍիւլէյման փաշա։ Բայց ի Կ. Պոլիս, Մէհէմէտ Ալի բերանացի կրցաւ արդարացնել ինքզինքը. որով կրկին սպարապետ ղրկուեցաւ ի Հերձէկովինա.

ուր սակայն չհասած հրամայուեցաւ դառնալ ի Բուլ-
գարիա և Միւլէյման փաշայի հետ զՊլէվնա ազատել
պաշարումէն։

Միւլէյման փաշա ընդհանուր հրամանատար։

12. — Միւլէյման փաշա որ ընդհանուր հրամա-
նատար կ'անուանուէր եւրոպական բանակին, ազգատ
ծնողաց զաւակ էր, ծնեալ յամին 1838, որ իր ուսման
եռանդով և յաջողակութեամբը մինչեւ իսկ Մատենագրու-
թեան ուսուցիչ եղած էր Կ. Պոլսոյ Պանկալդիի Զինուո-
րական վարժարանին մէջ։ Հոն զգայ զինուորական կո-
չում մը։ Յամին 1860 մտաւ Դէրվիշ փաշայի բանակին
մէջ ընդդէմ Մոնտէնէգրոյի, ուր անձնական քաջութեան
պատճառաւ գնդապետի աստիճանը ստացաւ։ Յետոյ
մտաւ Աբդիւլ Ազիզի թիկնապահաց մէջ։ Ապա ղրկուե-
ցաւ ի Կրետէ. և այն կռիւներուն մէջ այնքան նշանա-
ւոր եղաւ, որ Աբդիւլ Ազիզ ի նշան գոհութեան զինքը
անուանեց Տեսուչ Պանկալդիի Զինուորական վարժա-
րանին. զոր բարձրացուց մեծապէս և զայն դրաւ Եւրո-
պոյ զինուորական վարժարանաց աստիճանին մէջ[1]։
Յետոյ Միւլէյման փաշա ղրկուեցաւ իբրեւ հրամանատար
յԵէմէն և ի Սերբիա, Աբդիւլ Թէրիմ փաշայի օգնական։
Մոնտէնէգրոյի պատերազմաց մէջ յաջողութիւնքը արդէն
տեսանք. իսկ Զրպգայի անցքին վրայ փորձած արիւ-
նահեղ յարձակումը, բաղդ ունեցաւ չքննադատուելու ի
Կ. Պոլիս։

Զրպգայի վրայ յարձակումը. — Անյաջողութիւնը։

Միւլէյման փաշա միշտ սեւեռեալ Զրպգայի տիրե-
լու խորհրդով, զոր ամենակարեւոր կը համարէր Թրշ-
նամին Բալկաններէն անդին ձգելու համար, Սեպտեմ-
բեր 17ին 3000 կամաւորաց գունդ մը կազմեց, որոց
հրամայեց մագլցելով ելլել մինչեւ Ս. Նիկոլա բերդը։
Ասոնց յարձակման նեցուկ պիտի ըլլային Սալիհ փաշա,
Վէյսէլ փաշա և Ռէֆիք փաշա։ 3000 կամաւորքը լուս-

---

1. Այս միջոցիս Միւլէյման փաշա գրեց շատ մը մատենագրական, իմաստասիրական և զինուորական գրութիւններ։ Իր Եւրոպոյ Պատու-թեանց Պատմութիւնը, ընդարկար գասագիրք ծառայած է վարժարանաց մէջ։

նի լուսով գիշերուան ժամը 11ին երեք խումբ բաժ-
նուած ճամբայ ելան. մէկ խումբին գլուխ էր սրբ Կէմ-
բրել անգղիացի գնդապետը, այն առեն Թուրքիոյ ծառա-
յութեան մէջ։ Կամաւորք մագլցելով կը բարձրանային
ժայռէ ժայռ հրացանը կռնակնին։ Յանկարծ լսեց ռուս
պահանորդը. Նշան տրուեցաւ և հրացանի գնդակները
սկսան կարկուտի պէս տեղալ։ Կամաւորք կը յառաջէին
առանց ուշ դնելու իրենցմէ անդունդներու մէջ մեռեալ
գլորուողներուն։ Իրը այպը սկսաւ ծագիլ, արդէն շատ
ճամբայ ըրած էին և իրենք զիրենք գտան Ս. Նիկոլա
բերդին քով, և հոն սկսաւ սուրերով կռիւ մը։ Շատ
Թուրքեր մղուելով գլորեցան անդունդներու մէջ, որոնցմէ
ոմանք, բռնութեամբ միարան քարշելով՝ տարին ռուս գի-
նուորներ։ Աննման եղաւ այս կամաւորաց քաջութիւնը,
որոց հազարապետն ալ Համտի բէյ ինկաւ գնդակէ մը
հարուածեալ. իրենք վերջապէս յաջողեցան ելլել լերան
գագաթը և կանգնել կարմիր մահիկի դրօշակ մը, լուր
ղրկելով առ Միւլէյման փաշա Զրզգայի տիրած ըլլալ-
նին և փութացնելով օգնութիւնը։ Մալիհ և Վէյսէլ փա-
շաները երբ զկամաւորս տեսան Ս. Նիկոլա լերան վրայ,
սկսան իրենց սահմանեալ յարձակողական դերը, բայց
Ռէճիբ փաշայի յամելը և Խատէյքի զօրավարին ղրկած
երկու գունդերը Տիայէլնիքս հազարապետին առաջնոր-
դութեամբ, կերպարանափոխ ըրին կամաւորաց յաջողու-
թիւնը, որոնք արդէն սակաւաթիւ մնացեր էին։ Խուսք
յարձկեցան կամաւորաց վրայ որոնք կը կռուէին դիւ-
ցազնաբար. մաս մը ինկաւ մեռեալ և մաս մ՚ալ մղուե-
լով գլորեցաւ դէպ ի անդունդները և ամբողջ լեռը ծած-
կուեցաւ մեռեալներով և վիրաւորներով։ Այսպէս Միւ-
լէյման փաշայի երկրորդ յարձակումը ուրիշ արդիւնք
չունեցաւ, բայց եթէ նորէն քանի մը հազար երիտասարդ
կեանքերու կորուստ։ Եւ մեղադրուեցաւ Միւլէյման փա-
շա որ մինչ կամաւորք կը կռուէին առիւծաբար, ինքը
վրանին մէջ, լուրերու կը սպասէր և չէր վազած ան-
ձամբ կառավարելու յարձակումը ինչպէս ուրիշ անգամ։
Մեղադրուեցան նաեւ երեք փաշաները և առաւել Ռէ-

ճիր փաշա. որոց հասանիլը թէ չ՝ոգնէր. իսկ տիրելու Ս. Նիկոլայի, բայց յամէլնին պատերազմական յանդանք մ՝էր։

Այս պատերազմէն հինգ օր վերջը Միւլէյման փաշա կ՝անուանուէր ընդհանուր հրամանատար Մէհէմէտ Ալի փաշայի տեղ։ Միւլէյման փաշայի տեղ Բալկանի բանակին հրամանատար անուանուեցաւ Ռէուֆ փաշա որ հրամանատար էր ի Շումլա զօրաբաժնի մը՝ և իրեն տեղ ղրկուեցաւ Թահիր փաշա։

Ռուսք եւս անկէ վերջը մեծամեծ փոփոխութիւնք մուցին իրենց պատերազմական խորհրդի անձանց և ծրագիրներու մէջ, որոնք փութով ունեցան իրենց յաղթող արդիւնքը յԷւրոպա, ինչպէս սկսեր էին ունենալ և ի Հայաստան։ Ամբոնուեցաւ թուրք զինուորաց քաջութիւնը և բատ այնմ բազմապատկուեցաւ իրենց ալ զինուորաց թիւր և բանակը կանչուեցան զինուորական ծանօթ կարողութիւնք, որոնք՝ ի սկզբան։ արհամարհուած թողուեր էին



ԳԼՈՒԽ ԻԱ.

ԿԱՐՍԻ ԱՌՈՒՄԸ Ի ՌՈՒՍԱՑ

1 Տէր Ղուկասով գօրավարը և Իսմայիլ Հակքի փաշա Իգդիրի դիմաց. — 2. Լորիս Մելիքով և Մուխթար փաշա Ախուրեանի եղբարները. — Մուխթար փաշա կը տիրէ Գրգրլ Թէփէի — 3. Խուսք կը սկսին յարձակումը Լաշնիլէրի վրայ. — 4. Լազարէվ գօրավարը և Ռաճա Տագի պատերազմը. — Թուրք բանակը անձնատուր կ'ըլլայ. — 5. Տէվէ Բոյնուի պատերազմը. — Խուսաց յաղթութիւնը. 6. Կարնոյ վիճակը. 7. Թուրք կը յաղթեն ի Թոփ Տագը. — 8. Լազարէվ հրամանատար կարսի բռնակին. — Պաշարումն. — 9. Կարսի ընդհանուր յարձակումը. 10. Կարսի առումը ի Խուսաց. — 11. Հանձնարար մահմէտական ցեղերու վրայ. — 12. Մուխթար փաշա ի Կարսին. կը կռուի ի Կ. Պոլիս. — 13 Դէրվիշ փաշայի բանակը ի Բաթում։

Տէր Ղուկասով գօրավարը և Իսմայիլ Հակքի փաշա Իգդիրի դիմաց։

1. — Զօրավարն Տէր Ղուկասով յետ ազատելու Բայազիտի պահանջոյը, նահանջէր էր ռուս հողի վրայ, դէպ ի Իգդիր։ Իսմայիլ Հակքի փաշա իր կանոնաւոր և անկանոն զինուորներով զինքը հալածելու նպատակաւ, հասաւ մինչեւ Մուսունի կիրճին մուտքը Օգոստոս 1ին. և հոն ձայն տուաւ քիւրտ ցեղերու, որոնք թափեցան իր բանակը և անոնցմով միասան ձեւացնելով 34,000ի բանակ մը, Օգոստոս 5ին երեք համբով՝ Զօրի, Քէրվանսարայի և Որկովի անցքերէն մտաւ ռուս հողը և յառաջեց մինչեւ յԱլիքոչաք, ամեն կողմ աւերելով։ Յարձակեցաւ նաեւ Գալֆալուի վրայ, որ Իգդիրէն վեց քիլոմէդր հեռու է, բայց չկրցաւ առնուլ. և մինչեւ Օգոստոսի 7ը մնաց իր բռնած դիրքերուն մէջ։

1877

Զօրավարն Տէր Ղուկասով որ հետը հազիւ 8000 զինուոր ունէր, ստէպ օգնութիւն խնդրեր էր Աղերսանդրապոլէն, որոնք հասան առ սակաւ սակաւ Օգոստոսի մէջ։ Եկաւ նաեւ Յովհաննէս Լազարէվ հայ քաջ զօրավարը, որ զՇամիլ կալանաւորեր էր իր լեռներուն մէջ և իր աներկիւղ քաջաքականութեամբ ռուս պետութեան թագին վրայ աւելցուցեր էր Դաղստանի ընդարձակ նահանգները։ Սակայն զինուորական բարձր շրջանակներու նախանձուն միշտ զոհ, պատերազմին սկիզբը մէկդի թողուեր էր, և հիմայ դժուարին՝ զարգացանելու մէջ, բռնադատուած դիմեր էին իր քաջ և աներկիւղ առաջնորդութեան[1]։

Նոր եկած օգնութիւնք Տէր Ղուկասովի բանակը հասուցին 20,000 անձանց. և այն ատեն սահմանեց ռուս հողէն վանելու Իսմայիլ Հակքի փաշային բանակը։ Օգոստոս 18ին թողլով յիշեալ զօրավարն Սամոյլոֆ պահպանութեան գունդերով, ինքը առաւ հետը երեք սիւնակք, որոց կը հրամայէին զօրավարքն Լազարէվ, Միդովիչ և Ամիլախվարի, և յառաջեց դէպ ի Մոլլա-Ղամիր, ուր դրաւ բանակը. որովհետեւ այդ դիրքով կրնար կտրել Իսմայիլ փաշայի հաղորդակցութիւնը Մուխթար փաշայէն։ Բռնեց նաեւ գիրքը՝ Եշասխի վրայ։

Իսմայէլ փաշա փորձեց դիմել Իգդիրի վրայ, բայց չկրցաւ մօտենալ. իր անկանոն ասպատակ գունդերը ինկան հայ գիւղերու մէջ և գործեցին աւարառութիւնք, սպանութիւնք և անլուր անօրէնութիւնք։ Տէր Ղուկասով ազնուական նամակով մը առ Իսմայիլ Հակքի փաշա բողոքեց իր խումբերուն գործած աւարառութեանց և

---

1. «Յովհաննէս Դաւթեան Լազարէվ ծնվել է Շուշում 1828 թուակա-նին։ Ստանալով տարրական կրթութիւն տեղային զաւառական դպրոցում, Լազարէվը սկսաւ զերծակութիւն սովորել. բայց առանձին սէր ունենալով դէպ ի զինուորական ծառայութիւնը, թողեց ասեղ ու թելը ու գնաց Դաղստան. ու մտաւ Խուռաց զօրքերի շարքը. իրրեւ հառարակ զինուոր»։ Մշակ 1902 թիւ 245։ Ի Դաղստան կարգաւ ուսացաւ սպայութեան ատիճանքը։ Իսկ Շամիլը բռնելով, համբաւը ժողովրդական եղաւ բոլոր Խուսատան և Եւրոպա։ Այս մասին նկատմամբ ժամանակակից Պատմ. Ա. Հատ. Գլ. Ի։

անարդենութեանց դէմ։ Այդէն նոյն օրինակ ծանր ազդարարութիւն մը ընդուներ էր և Մուխթար փաշայէն։ Բայց Իսմայիլ փաշա չէր կարող արգիլելու. պէտք էր այդ վայրենի խումբերը տուներնին դրկել, զոր չէր ուզեր Իսմայիլ փաշա, որովհետեւ քիչ կանոնաւոր զինուոր ունէր[1]։

Իսմայիլ Հակքի փաշա իջաւ բարձունքներէն ուր ձիւնը սկսեր էր երեւնալ. եկաւ բնակեցաւ Դալֆալու աւանին դիմաց Իգդիրի մօտ, և հողակոյտներ բարձրացուց զայն ամրակոծելու նպատակաւ։ Սեպտեմբեր 11ին ի թիկանց յիգդիր հասաւ՝ զօրավարն Տէր Ղուկասով, ինքնին պաշտպանութեան գլուխ կենալու. հասան նաեւ քիչ որ վերջը զօրավարն Պաւլով, Կովկասու բանակին սպայակուտին գլուխը և զօրավարն Դէվէլ։ Սեպտեմբեր 18ին Թուրքերը սկսան ամրակոծել զԴալֆալու. երկրորդ օրը նոյնպէս շարունակեցին և կէսօրէն վերջը յարձակեցան աւանին վրայ. բայց վանեցան ռուս գունդերէն։ Իսմայիլ Հակքի փաշա մինչեւ Սեպտեմբեր 27 չշարժեցաւ։ Նոյն օրը ամպամած մութ երկնքի ներքեւ յառաջեց դէպ ի Իգդիր և բաղխեցաւ Դէվէլ զօրավարին գունդերուն հետ։ Թուրքերը ահաւոր թափով մը յետ կատաղի մրցման, տիրեցին Քարահասար տափարակին. ուր վիրաւորուեցան Քարէնին հազարապետը և Դէվէլ զօրավարը։ Բայց երբ հասան Ամիլախվարի զօրավարին օգնութիւնը և Կովկասի դրակոնը, այն ատեն Իսմայիլ Հակքի փաշա հրամայեց նահանջը։ Ռուս գուն-

---

1 Մուխթար փաշա պատերազմէն առաջ խօսք մը ուղղեր էր առ իր բանակը որ կը սկսի «Ցանուն Ամենակալին Աստուծոյ». յորում խոստի կ'արդելուր սպանութիւն. որ «պատերազմէ դուրս սարսափելի սէր մ'է ընդդէմ օրինաց, սպանանել մարդ մը, Աստուծոյ ամենէն սքանչելի ստեղծագործութիւնը»։ Կը զգուշացնէր յափշտակութենէ «և ո՛ր և է կրեց գործէ»։ Կը պատուիրէր յարգելու ամենուն կրօնքը «Ամեն մարդ ինչ կրօնք ալ ունենայ. Աստուծոյ ազնիւ արարածն է»։ Կը յորդորէր «խոնարհ Քրիստոսի վիրաւորքը, Քաղել յարգանօք մեռեալներու յետ պատերազմին, և սիրով վարուիլ գերիներուն հետ»։ Մուխթար այս դեղեցիկ պատուէրներէն առաջ, պէտք էր համոզեր Պատերազմի պաշտօնարանը չ'ընդունիլ բանակին մէջ քիւրտ, չէրքէզ, ապագա բաշիբոզուք վայրենի ասարը։

դերը վիրենք հայածեցին մինչեւ ութը մղոն, ապա եւ դարձան, բան հրամանի Տէր Ղուկասովի, որովհետեւ Զարուխանի մտերը, ջուրը բաւական չէր այնքան գինուոր յագեցնելու համար։

Երկու բանակները 15 օր մը անգործ մնացին, գրաված Մուխթար փաշայի և Լորիս Մելիքովի բանակաց մեծ կռուոյ մը պատրաստութեան յուսերով. որոց ղրկեցին իրենց գունդերէն ալ։ Իսմայիլ Հակի փաշա Հոկտեմբեր 16ին ուզեց կրկին փորձ մը ընել Գալֆայի վրայ. բայց եւ վանեցաւ. և երկրորդ օրը յուր առնելով Մուխթար փաշայի պատուիրեան յԱյանա Տաղ, և իմանալով որ սուս սինակ մը Կապգմանի ճամբով հասեր է Այաշկերտի դաշտը, այն ատեն իր նահանջը պարակելու համար, գունդ մը թողով յԱիքոչար, յսեյեան անհետացաւ իր գունդերովն դէպ ի Կարին, ուր սկսեր էր քաշուիլ նաեւ Մուխթար փաշա։

Լորիս Մելիքով և Մուխթար փաշա Ախուրեանի և գերքները.

2. — Ռուսին պատերազմէն վերջը, Լորիս Մելիքով թոյլտուեր էր գնալու և քաշուեր էր դէպ ի Աղեքսանդրոպոլ՝ Պալտիվանի և Ախուրեանի[1] մէջ. ընդհանուր հրամանատարութիւնը դնելով ի Բէրիւք Տէրէ և յառաջապահքը յԻշխէֆէ, Անիի և Բրգրլ Թէֆէի բարձունքներուն վրայ։ Յետինս տափարակի վրայ առանձին բարձրացած լեռ մ'է։ Աղեքսանդրոպոլ խճուղով կապուած էր Կարսի և Անուոյ հետ. և այս երեք կէտերը միացուելով եռանկիւն մը կը կազմեն որուն յարակից է միշտ Ախուրեանը։ Ի այս եռանկեան մէջ կռուեցան թուրք և ռուս բանակները երեք ամիս։ Մուխթար փաշայի Զախիր, կարսէն 16 գիլոմէդր հեռու, Փոքր և Մեծ Լեհնիլէր կոչուած բարձունքներուն վրայ տարածուած էր. կեդրոնը՝ Այանա Տաղին բարձրութեանց վրայ գէմ յանդիման Բրգրլ Թէֆէի. իսկ Աջը կ'երկննար Անիէն անդին լեռներու վրայ։ Մեծ Դուքան Միքայէլ, Աղեք-

[1] Ախուրեան կամ Ակուրայ։

սանդրոպոլի բանակը եկած էր, անձամբ գլուխ կենալու զինուորական գործողութեանց. հոն կանչուեր էր Օրրուչէվ զօրավարը և եկեր էին նաեւ Ալխազով և Բեհրուտեան Շէլկովնիկով հայ հազարապետները, որոնք գթուրքս վաներ էին Սոխումքալէէն և խաղաղեր էին Սեւ Ծովուն արեւելեան երկիրներու։

Երկու բանակներու ամբողջ Յունիս ամիսը կեցան դիմացէ դիմաց և փոփոխակի մէկզմէկ լրտեսելու և դիտելու առթովը, պատահեցան զանազան գուպարածներ. որոց մէկուն ժամանակ թուրք 1200 հեծեալը, որոց կը հրամայէր Մուսթաֆա փաշա, անցնելով Ախուրեանը Իջան մինչեւ Բայրնտուր, Աղեքսանդրոպոլի մօտ, առանց ընդդիմութեան մը. անկէ անցան ՅԱստախան. յետոյ Իջան Ախուրեանի աջ ափունքը մինչեւ Արագոզլու։ Լորիս Մէլիքով իմանալով զայս, գունդեր ղրկեց Աստախանի քով կորելու թուրք հեծելազօրուն նահանջը։ Այն առեն Մուխթար փաշա հետը առած 3000 հեծեալ և հրանոթք, դիմեց Ռուսաց հանդէպ. յայտնի էր պատերազմի մը սպառնալիքը. բայց երբ Մուխթար փաշա լսեց որ Մուսթաֆա փաշա արդէն անցեր է վտանգաւոր կէտը, այն առեն ինքն ալ նահանջեց իր դիրքերուն մէջ։

Օգոստոսի մինչեւ 15ը երկու բանակք անշարժ կեցան տեղերնին. բայց 16ին, Անիի աւերակներէն վեր բնակող ռուս գունդերը շարժեցան դէպ ի Փրգրլ թէփէ, միանալու կեդրոնին. ուրիշ գունդեր ալ դիգուեցան Սուպաթանի եռեւ, ուր զօրաւոր էր թուրքաց կայութիւնը. և Փոմարով հազարապետը իր չէրքէզներով յառաջեց դէպ ի Մեծ Լիսնի։ Փութով Հիւսէյին Համիտ փաշա, երբեմն զկարս պաշտպանողը, վազցուց իր հեծեալը. երկու կողման ձիաւորաց մէջ իսանուրդ մը սկսաւ և երկու կողմանէ հարիւրէն աւելի անձինք մնկան. հասան երկու կողման հետեւակք ալ, բայց յանկարծ Ռուսք քաշուեցան իրենց դիրքերը և չշարունակեցին կռիւը։ Մուխթար փաշա լաւ իմրոնեց, որ Փրգրլ թէփէ միշտ սպառնալիք մ՝էր իր բանակին, և հարկ էր հոնկէ խախտել Ռուսերը։

Մուխթար փաշա կը տիրէ Քրզրլ Թէփէի։

Օգոստոս 25ի երեկոյ արեւը մտնելէն վերջը բազմաթիւ գնդեր լռելեայն ճամբայ ելան դէպ ի Քրզրլ Թէփէ. ժամը 2ին հասան կղզիացեալ լերան մօտ, մինչ ամէն կողմ լռութիւն էր և հողակոյտներ բարձրացնելով զետեղեցին հրանօթքը և յանկարծ սկսան կրակ թափել Քրզրլ Թէփէի վրայ։ Ռուս պահանորդը յետ քիչ ժամանակ պատասխանելու, քաշուեցաւ լերան ստորոտը հեղեղատին մէջ և թուրք գունդերը տիրեցին լերան և անմիջապէս հրանօթներ փոխադրեցին հոն։ Առաւօտեան դէմ ժամը 4ին, Ռուսք յետ ոմրակոծելու լեռը, յարձակեցան կրկին զայն առնելու, բայց թուրքերը իրենք ալ կրակ թափելով շարունակ ամրողջ օրը, կրցան պահել դիրքերնին. և Ռուսք երեկոյեան քաշուեցան իրենց բանակը, յետ կորանցնելու ընդ մեռեալ և ընդ վիրաւոր 3000 զինուոր։ Վիրաւորելոց մէջ էին իշխանն Զաւիչաւածէ և Փոմարով հազարապետը։ Թուրքաց կողմանէ մեռեր էին 500 անձինք և 1200 վիրաւորք։ Սակայն Մուխթար փաշայի այս յանկարծական հարուածը և յաղթութիւնը մեծ համբաւ ստացաւ Եւրոպայի մէջ և Սուլթանը ինքնագիր գովասանական նամակով մը իրեն շնորհեց Գ. ոգի (Յաղթող) անուանակոչումը[1]։

Քրզրլ Թէփէի ատմանէն վերջը Լորիս Մէլիքով բանակին ընդհանուր հրամանատարութիւնը փոխադրեց ի Քարայալ և բանակը կեդրոնացուց Բաշ Քատրըլարի և Պալտիվանի մէջ. միայն քանի մը դիտարանք թողուց Անիի և Իւչ Թէփէի բարձունքներուն վրայ։ Իսկ

1. Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքը այս առթիւ ինդակցութեան թուղթ մը գրեց առ Մուխթար փաշա, յանձնարարելով միանգամայն պաշտպանել այն կղզի հայ ժողովուրդը։ Մուխթար փաշա իր ազնուամիտ պատասխանին մէջ, յետ շնորհակալութեան պատրիարքին ազնիւ զգացմանց, յետ ապահովցնելու որ միշտ ջանացած է պաշտպանելու հայ ազգը, կը յաւելու. «Արդէնաւ պատերազմի ժամանակ ամէն կողմերէ և զանազան ցեղերէ գոյք կը հաւաքուի, ասոնց մէջ գտնուած անկիրթ մարդիկ ամէն հարստահարութիւնք կ'ընեն ոչ միայն Հայոց այլ և մահմէտական ժողովրդոց վրայ։ Բայց կառավարութիւնը միշտ եռեռէ է այդպիսիները պատժելու»։

Օսման փաշա իջաւ լեռներէն և բանակին հրամանատարութիւնը հաստատեց Կերքանայի մօտ, դէմ յանդիման Քրզլլ Թէփէի վրայ բռնած դիրքերուն։ Սեպտեմբեր ամիսը անցաւ առանց պատերազմի մը։ Ռուսաց կողմանէ մեծ էր պատրաստութիւնը. և շարունակ հասած օգնութիւնք բանակը 70,000ի հասուցեր էին 200 թնդանօթով. մինչ Թուրքաց բանակի թիւն իջեր էր 40,000ի, 70 թնդանօթով։ Թուրքաց բանակը նուազեր էր երկու պատճառաւ. նախ՝ շատ մը քիւրտ, չէրքէզ, ասորի և այլազգի խումբեր, տեսնելով որ կ՝արգիլուէր իրենց աւարառութիւն և սպանութիւն, նա մանաւանդ կը պատժուէր կախաղանով, թողուցին Թուրք բանակը և փախան։ Երկրորդ՝ յանկարծ Կ. Պոլսոյ Պատերազմի պաշտօնարանը կարեւոր դատեց այժ տալ աւելի Եւրոպայի բանակին, և Ասիոյ բանակէն գունդեր կանչեց Պլէվնայի մօտ. այսպէս՝ մինչդեռ մինչեւ այն ժամանակ Թուոց առաւելութիւնը օսմանեան բանակին կողմն էր, հիմա բազմութիւնը Ռուսացն էր։ Մուխթար փաշա ունէր ուրիշ տագնապներ ալ, որոնք ոչ նուազ քան զառաջինս գինքը կը տկարացնէին. չկար դրամ, վճարմունք կը յապաղէին. ապրուստի նուազութիւն կար. ագանելիք յետին խեղճութեան մէջ էին։ Ի զուր Մուխթար փաշա կը գրէր ի Կ. Պոլիս և կը բողոքէր. մայրաքաղաքին մէջ յանկարծ փոխուեր էր քաղաքականութիւնը և նախկին կարեւորութիւնը չէր տրուեր Կարսի, և Ասիոյ կողման պատերազմին։

Ռուսք կը սկսին յարձակումը Էշտիլէրի վրայ։

3. — Ռուս ընդհանուր հրամանատարութիւնը տեղեակ էր ամեն բանի լրտեսներու ձեռօք, որոնք առատ էին, արդիւնք տեղացի ժողովրդեան կացութեանը. քրիստոնեայք ընդհանրապէս համակրելով ռուս բանակին և Թուրքերը օսմանեան զօրաց։ Մեծ դուքսն Միքայէլ, զօրավարները խորհրդի հաւաքեց. զՄուխթար փաշա կարսէն կտրելու եղանակի մը համար. և մինչ զօրավարն Երրուչէվ կը պնդէր որ այդ կարելի էր միայն Ենիի ետեւէն շրջանով մը ի Թիկանց զՊշնամին բաղխելով, մեծամասնութիւնը սահմանեց՝ բաղխել

ճակատէն Եահնի լեռները, զՄուխթար փաշա բաժնել կարսէն, մղել զինքը յԱլաճա Տաղ և հոն փճացնել իր բանակը։ Յարձակումը սահմանուեցաւ Հոկտեմբեր 2ին։ 1877
Ալ թեւին 20,000 զինուորաց, պիտի հրամայէր զօրավարն Լորիս Մէլիքով. որ երեք սիւնակով պիտի յառաջէր, յորոց մին պիտի բաղխէր զՓոքրն Եահնի. ուրիշ սիւն մը, որուն պիտի հրամայէր զօրավարն Շէրէմէթիէվ, պիտի յարձակէր Մեծ Եահնիի վրայ. և երրորդ սիւն մը պիտի պաշտպանէր այդ շարժումները։ Կեդրոնի բանակը, որուն հրամանատարն էր զօրավարն Հայման, պիտի չթողուր որ Սուպաթանի և Քըզըլ Թէփէի թուրք գունդերը շարժին։ Իսկ Զախը, որուն կը հրամայէր զօրավարն Լազարէվ, կեղծ բաղխմամբ մը Քըզըլ Թէփէի, հոն պիտի քարշէր Մուխթար փաշայի մեծագոյն զօրութիւնը։ Ուրիշ ազատ գունդ մ'ալ Շէլկովնիկով զօրավարին հրամանատարութեան ներքեւ պիտի անցնէր Ախուրեանը ի Գոմք, և պիտի կեղծէր յարձակում մը Թրքաց Ալ թեւին ծայրը։

Երկրորդ առաւօտ երբ արեւուն ճառագայթները կարմրցուցին Մասեաց գագաթը, Մուխթար փաշա, որ արդէն գիտէր Ռուսաց բաղխումը և բաժներ էր իր գունդերը ըստ ռազմական օրինի, վարանեցաւ Ռուսաց նոր ծրագրին վրայ, որուն կեղծ ըլլալը չգուշակեց ի սկզբան, և իր հրամանատարաց նոր հրամաններուն ժամանակ, արդէն Շէրէմէթիէվ արիւնահեղ կռուով մը տիրեր էր Մեծ Եահնիի, սպաննելով 450 պահանորդքը. և աւելի մեծագոյն յաջողութեամբ զօրավարն Ռէհրուդ Շէլկովնիկով կրցեր էր բռնել Ալաճա Տաղին արեւելեան սեպերը, յորս մագլցելով ելեր էին իր զինուորքը և տիրեր Թուրք պատնէշներուն. հոն կը սպասէր օգնութեան, յաղթութիւնը ամրողջացնելու համար։ Սակայն ընդհանուր հրամանատարութիւնը իրեն նպատակ դրած ըլլալով անհրաժեշտ տիրել Փոքր Եահնիի, ուր Ռէշիտ փաշա և Քիազիմ փաշա անխոնջ կերպով կ'ընդդիմանային և Վիզին գեղէն օգնութեան հասեր էր նաեւ Ֆազլը փաշա, չկրցաւ և չմտածեց օգնութիւն ղրկել Շէլկովնիկովի, որ տեղիք տուաւ

Հիւսէյին, Շէվքէթ և Իբրահիմ փաշաներուն բաղիման-ցը և կրկին անցաւ Ախուրեանը, Լազարէվի գուն-դերուն պաշտպանութեան ներքեւ։ Ռուսք տակաւին ընդ-երկար կռուեցան Փոքր Եահնիի դէմ, բայց չկրցան յաղթել Թրքաց արթուն ընդդիմութեան. և գիշերը վրայ հասնելով դադրեցան կռուելէ, կորսնցնելով ընդ մեռեալ և ընդ վիրաւոր 3000 անձինք։ Նոյնքան մ'ալ կը համարուի Թրքաց փնասը։

Երկրորդ օրը Թուրք բանակը սկսաւ ումբակոծել զՄեծ Եահնի և տկար պատասխան գտնելով, փոր-ձեց յարձակում մը, զոր վանեց Հայման զօրավարը։ Բայց Ռուսք ջրոյ նուազութիւն պատճառելով, Թողին Մեծ Եահնին և քաշուեցան իրենց նախկին դիրքերուն մէջ։ Մուխթար փաշա աճապարեց բռնելու զՄեծ Եա-հնի։ Սակայն իր զինուորաց սակաւութեան պատճառաւ Թողուց զՓրզրը Թէփէ, Սուպաթան, Կերքանա, զոր անմիջապէս բռնեցին Ռուսք։ Մուխթար փաշա յուսա-հատած կ. Պոլսէ նոր օգնութիւն ընդունելէ, դիմեց առ Իսմայիլ Հակքի փաշա. ուսկից քիչ վերջը ունեցաւ 5000 զինուոր։

Լազարէվ զօ-րավարը և Ա-լամա Տաղի պատերազմը։

4. — Ռուս ընդհանուր հրամանատարութիւնը, լրտեսներէն գիտնալով Մուխթար փաշայի գունդերուն սակաւութիւնը, յարմար ժամանակ դատեց բազմաթիւ զօրաբաժիններով, ըստ Օրբուչէվի ծրագրին, բաղխելու Մուխթար փաշայի դիրքերը, յետուստ գունդեր հաս-ցնելով. և Մեծ Դուքսն Միքայէլ յանձնեց Լազարէվ զօրավարին, 23 ջոկատովք, 28 վաշտերով և 78 թըն-դանօթիւք Ենիի ետեւէն շրջելով, բաղխել զթշնամին կոնակէն, մինչ ուրիշ զօրաբաժիններ պիտի բաղխէին ճակատէն։ Լազարէվ Հոկտեմբեր 9ին մեկնեցաւ Օղուզ-լուէն, անցաւ Ախուրեանը Կրխաչի քով և Թուրք հողը մտնելու համար կրկին զայն անցաւ ի Փրզրը Փիլիսէ, և Հոկտեմբեր 13ին արդէն կը գտնուէր ի Տիկոռ և յԱգրակ. հասած տեղէն զինուորական հեռագրով միշտ հաղորդակցութիւնը պահելով ընդհանուր հրամանատա-րութեան հետ. և այս ճարտարութիւնը պատճառ եղաւ

յաղթութեան։ Ճամբան միացաւ իրեն հետ նաեւ Տէր Ղուկասով իր 8000 զինուորք։

Յետ որոյ չէրքէզ, ապազա և քիւրտ ասպատակք հեռացեր էին Թուրք բանակէն, որոնք աւարառութեանց ժամանակ կը լրտեսէին նաեւ Թշնամւոյն բանակը, Մուխթար փաշա շատ անգամ անտեղեակ մնաց Թշնամւոյն շարժումէն։ Հոկտեմբեր 14ին Լազարէվ դիտեց որ Թրքաց գունդերը աւելի ի Բազարճըք կը գտնուին, զանոնք քովընտի Թողլու համար տիրեց Շատրրօղլուի բարձունքներուն. բայաւ իրեն Վիզին գեղի ճամբան և յանկարծ Թուրք բանակին կոնակէն սկսաւ ահաւոր ռմբակոծում մը։ Մուխթար փաշա այս անհաւատալի ի Թիկանց ռմբակոծման վրայ զարհուրեցաւ. և ինքնին վազեց դատելու զինուորական կացութիւնը և վտանգը։ Ռազմագէտք ըսած են որ իր զօրաց կրկին Թուով բանակին դիմաց անիմաստ էր Մուխթարի կռուիլը և իր զօրքը ազատելու համար անմիջապէս պէտք էր նահանջել յարեւմուտք դէպ ի Կարս. սակայն նա իր սովորական անշփոթ բնաւորութեամբ այնքան յուսահատ չդատեց կացութիւնը։ Փութով երեք գունդ բերել տուաւ Բազարճըքէն. զորս միացնելով Իսմայիլ փաշայի ղրկած գունդերուն, մղեց Ռուսաց վրայ։ Լազարէվ այդ բանակին դէմ ղրկեց իր հեծելագունդը Մալամա հազարապետին հրամանատարութեան ներքեւ. որոնք ելլելով մինչեւ բարձունքը, ահաւոր կրակով մը վանեցին Թուրք գունդերը և տիրեցին Շատրրօղլուի։ Սակայն Վիզին գեղի և Բազարճըքի տիրելու համար, հարկ էր նախ տիրել ուրիշ բլուրներու ալ, զորս Մուխթար փաշա կանխաւ ամրացուցեր էր, և ադոնց բաղխումը յանձնուեցաւ Շէլկովնիկով զօրավարին. որուն զինուորաց եռանդուն յարձակման չկրցան դիմանալ Թուրքերը. մանաւանդ երբ հասան և Մալամա հազարապետին հեծեալքը, և փախան խառն ի խուռն։ Այսպէս Հոկտեմբեր 14ին Լազարէվի յանձնուած գունդերը կը գտնուէին Մուխթար փաշայի բանակի կոնակը, և Թուրք զօրավարին կը մնային Կարսի հետ հաղորդակցութեան համար երկու

լեռնային ճամբաներ՝ Զիֆթ Թէփէսի և Սիվրի Թէփէսի։ Իւ սակայն Մուխթար չուզեց ապաւինիլ ի Կարս և փութով հրանոթք զետեղեց Զիֆթ Թէփէսիի վրայ, երկրորդ օրը Լազարէվի բանակը ռմբակոծելու համար։

Մեծ Դուքսն Միքայէլ որ Լազարէվի հաստատած հեռագիրներուն միջոցաւ շարունակաբար տեղեկացեր էր ռուս գունդերուն յաջողութեան, յետ խորհրդակցելու Լորիս Մէլիքովի հետ, յանձնեց Հայման զօրավարին 34 ջոկատով, ձիաւոր վաշտերով և 104 հրանոթիւք, երկրորդ օրը, Ավլիար լերան վրայի թշնամեաց բանակը ճակատէն ռմբակոծելու։ Ուրիշ գունդեր ալ Ռոր զօրավարին հրամանատարութեան ներքեւ պիտի օգնէին Հայմանի։ Հոկտեմբեր 15ի առաւօտեան ժամը 5ին, հրաման եղաւ Հայման զօրավարին չուելու Ավլիարի վրայ. մինչ Փուցմինսքի զօրավարը, Ռորի զօրաբաժնէն՝ պիտի խախտէր Թուրքերը Ալաճայէն և պիտի վանէր դէպ ի Բարձր Ալաճա։ Ուրիշ գունդեր ալ երկու յարձակող գունդերուն հաղորդակցութիւնը պահելու պիտի հակէին։ Մի և նոյն միջոց պիտի յառաջէր զօրավարն Լազարէվ, իր շարժումները կարգադրելով ճակատին յարձակմանց համեմատ։

Մուխթար փաշա Ավլիարի ապառաժներուն վրայ զօրաւոր ամրոցներ բարձրացուցեր էր. բայց չկար զինուոր պաշտպանելու. Մուխթար փաշա հազիւ 2000 զինուորք թողուցեր էր հոն, երեք թնդանօթովք։ Զօրավարն Հայման ժամը 9ին սկսաւ ռմբակոծել զԱվլիարթուրք պահանորդը դիւցազնաբար կռուեցաւ և Մուխթար փաշայի ղրկած սակաւ օգնութիւնք՝ չէին կարող զինքը փրկել Ռուսաց ե·ռեւէ ետեւ հասած գունդերէն և հրանօթներէն։ Իրբ կէսօրը Հայման զօրավարը հրամայեց ընդհանուր յարձակումը, ռուս գունդերը որոտաձայն կեցցէներու աղաղակաւ հասան մինչեւ լերան ծայրը և կանգնեցին իրենց յաղթական դրօշը։ Մուխթար փաշա որ դեռ կրնար ազատել բանակը ի Կարս, Զիֆթ Թէփէսիի ճամբով, չուզեց փախուստ մը յանձն առնուլ։ Յանձնելով Խոմէր փաշայի, իր երկրորդին, շա-

բունակել պատերազմը Հայմանի գունդերուն դէմ, ինքը՝ գնդապետ սըր Առնոլտ Քէմբալի հետ, որ Անգղիոյ Տէրութեան պատերազմին համար զինուորական կցորդն էր, քաշուեցաւ Կարսի և Վիզին գեղի մէջ տեղ լերան մը վրայ, պատերազմին վիճակը քննելու[1]։

Ավլիարը առնուած ժամանակ ուրիշ կեցցէներու գոչում մ'ալ իմացուց որ Լազարէվի գունդերէն յառաջապահը որոց կը հրամայէր Շէլկովնիկով զօրավարը, տիրեր էր Վիզին գեղի արեւմտեան բարձունքներուն և Լազարէվի ու Հայմանի գունդերը, մէկմէկու ձեռք կու տային։ Այն ատեն սկսաւ Թրքաց տագնապալից խառն ի խուռն փախուստը Զիֆթ Թէփէի ճամբով դէպ ի Կարս։ Երկու ռուս զօրաբաժիններու միացման տեղը հասաւ նաեւ Մեծ Դուքն Միքայէլ և հրաման ըրաւ Հայման զօրավարին, բռնելու Վիզին Փէօյի և Զիֆթ Թէփէսի մէջ եղած դիրքերը, մինչ զօրավարն Լազարէվ զթշնամին կը վանէր դէպ ի Կարս։ Անհամար բազմութիւն մը խռնեցաւ Կարսի դրան դիմաց։ Քաղքին հրամանատարը Հիւսէյին փաշա, ջոկատ մը դուրս հանեց, սուինը հրացանի ծայրը, և սպառնացաւ փախըստական զինուորաց, որպէս զի դառնան իրենց դիրքերը, բայց ի զուր. սարսափը տիրեր էր ամենուն սիրտը. շատերը փախան դէպ ի Կարին։ Նոյն գիշերը հասաւ ի Կարս նաեւ Մուխթար փաշա և մինչ կը տրամադրէր միջոցներ Աջ Թեւը փրկել և Կարս քաշել, իմացաւ որ անձնատուր եղեր էր այն։ Լոմէր փաշա լսելով Ավլիարի առումը, ինքզինքը բոլոր ռուս բանակէն շրջապատուելու երկիւղէն հրամայեց նահանջելու.

---

1. Սըր Առնոլտ Քէմբալ, միշտ, ներկայ գտնուեցաւ Մուխթար փաշայի պատերազմաց. բայց ռուս սպայակոյտը այլ և այլ անգամ բողոքեց որ «էզոքութեան սահմանները չէր յարգեր»։ Սըր Քէմբալ, կաստոն Լըմկ գաղիացին Բիւէ Պիւրիքի Թղթակիցը և Դէյլի Նիուզի յօդուած գրկող Սըր Ի՝ Ֆոնովան, ընտրելագոյն պատմիչներն են պատերազմիս, յորոց շատ տեղ օգտուած եմ։ Առանց հաւատար են և առ Teorps լրագիրը Թղթակցութիւնք։

բայց Լազարէվի և Ամիրահիրոֆի հեծեալքը այնպէս պաշարեցին, որ անկարելի էր նահանջել և Լոմէր փաշա իր բանակովը անձնատուր եղաւ Լորիս Մէլիքով զօրավարին. որ նկատի առնելով Թուրք բանակին քաջ կռիւը և ընդդիմութիւնը, բոլոր զօրավարաց և սպայից շնորհեց իրենց զէնքերը, ձիերը և անձնական ունեցածները։ Իսկ զինուորք զէնքերնին պիտի յանձնէին Ռուսաց։ Այսպէս անձնատուր կ'ըլլային 7000 զինուորք և 250 սպայք, յորս Լոմէր փաշա, կիրթ անձնաւորութիւն մը, հրամանատար զօրաբաժնի. Հաճի Ռէշիտ փաշա, աներձագ Մուխթար փաշայի. Հասան փաշա՝ գլուխ սպայակուտին. Շէֆքէթ փաշա, Մուսդաֆա փաշա, Ահմէտ փաշա, Լոմէր Թահիր փաշա և ուրիշ բարձրաստիճան սպայք։

Թուրք բանակը անձնատուր կ'ըլլայ։

Երկրորդ օրը, բոլոր այս գերիները տարուեցան Վիզին գեղ. ուր այցելեց իրենց Մեծ Դուքսն Միքայէլ, խնդակցելով իրենց քաջ դիմադրութեան վրայ. ապա զինուորք և սպայք ղրկուեցան ի Քէօրիւք Դէրէ և փաշաները ի Տփղիս, ուր քանի մը օր ժողովրդեան հետաքրքրութեան նիւթ եղան և անկէ ի Պետերբուրկ։ Բանակին անձնատուր ըլլալէն առաջ փախեր էին չէրքէզ Մուսա փաշա և զօրաբաժնի զօրավար՝ Շամիլ Ղազի Մէհէմէտ փաշա՝ որդի հռչականուն Շամիլի։ Ասոնց գլուխները ռուս տէրութիւնը գնոջ դրած էր. պատերազմի ժամանակ, ոչ ըստ պատերազմական օրինաց կռուելնուն համար։

Աղեքսանդր Բ կայսրը որ կը գտնուէր ի Դորնի Շդուտէն, նամակով մը յայտնեց իր մեծ ուրախութիւնը և գոհութիւնը Աստուած Տաղի յաղթութեան համար առ մեծ դուքսն Միքայէլ, շնորհելով միանգամայն Ս. Դէորգի Առաջին աստիճանի խաչը, զոր ոչ ոք ունէր ռուս մեծ դուքսերէն։ Լորիս Մէլիքովի տուաւ նոյն կարգին Երկրորդ աստիճանի խաչը, զոր տուեր էր նաեւ Նիկոլա Մեծ դքսին, Դանուբը անցնելուն առթիւ։ Զօրավարքն Լազարէվ, Կուբսքի և Շելկովնիկով, ստացան Երրորդ կարգի խաչը. զօրավարն

Ռոր և Իշխանն Զավչավածէ, աւելի ստորին նշաններ, ինչպէս նաեւ զօրավարքն Բարանով, հրամանատարքն Քիշմիշէվ և Երիսդով և երկու մահմէտական հազարապետք Ճավա խան Շիրվանզատէ և Աղա խան Շիրվանզատէ։ Ալաճա Տաղի կռիւը կը փճացնէր արդէն Թրքաց սակաւաթիւ բանակին նշանաւոր մաս մը. որով և մեծ ազդեցութիւն կ'ունենար պատերազմին հետեւանքին վրայ։

Տէվէ Բոյնուի պատերազմը։

5. — Մուխթար փաշա Հոկտեմբեր 17ին զբաղեցաւ հաւաքելու փոխած և նահանջած գունդերը և կազմեց 16,000ի բանակ մը, յորոց մեծ մասը թողուց ի Կարս պահանորդը զօրացնելու համար և հետը առաւ 2800 զինուոր և 10 թնդանօթք, որոցմով որոշեց քաշուիլ Կարնոյ մօտ և սկսիլ նորէն բանակ մը կազմել թշնամւոյն ընդդիմանալու համար։ Երկրորդ օրը մեկնեցաւ Կարսէն. և Պարտէզի ճամբով Հոկտեմբեր 20ին հասաւ ի Քէօփրիւքէոյ, ուր կը միանան Կարսի և Բայազիտի ճամբաները. և ուր եկաւ իրեն հետ միանալու Իսմայէլ Հակքի փաշա, որ Ալաշկերտի և Զէյտէկեանի ճամբով ութ օրուան մէջ 190 քիլոմէդր կատարած էր թնդանօթներով միասին, և ի թիկանց հալածող ունենալով զՏէր Ղուկասով. որ ի զուր ջանաց անոր նահանջը կտրելու. և ապարդիւն բաղխում մ'ալ ըրաւ Տէլիպապայի անցքին դիմաց։ Իսմայէլ փաշա անվտանգ միացաւ Մուխթար փաշայի հետ. սակայն իր բանակին քիւրտ, չէրքէզ, արաբ բաշիբոզուքները, Ռուսաց յաղթութենէն վերջը փախեր էին, ուստի իր քովը հազիւ 8000 հոգի մնացեր էին. որով Մուխթար ընդ ամենը գրեթէ 12,000 զօրաց բանակ մը կ'ունենար։

Հայման զօրավարը Սոդանլուի բանակ կոչուած գունդերով որոնք 15,000 անձինք էին և որոց վրայ աւելցան Տէր Ղուկասովի 8000 զինուորքը, դիմեց պաշարելու զաղոնք։ Ռուսք յառաջեցին նախ Հասանքալէ, զոր թողուցեր էր Մուխթար փաշա և քաշուեր էր Տէվէ Բոյնուի նեղ կիրճերուն մէջ, զորս ամրացուցեր էր Ֆէյզի փաշա։ Բայց Հասանքալէ պարպելու ժա-

մանակ իր վերջապահին կրցան հասնիլ Հայմանի հեծելքը Հոկտեմբեր 29ի գիշերը, և արիւնահեղ կռուով մը գիշերուան մութին մէջ, շատ զինուոր սպաննեցին. յետոյ Ռուսք բռնեցին զՀասանքալէ, և հեծելազօրը յառաջեց Նոյեմբեր 3ին մինչեւ Դուրուճուք, կարնէն 10 քիլոմէդր հեռու։ Զօրավարն Հայման իր բանակը երկուքի բաժնեց, որոց միոյն պիտի հրամայէր զօրավարն Տէր Ղուկասով, միւսոյն զօրավարն Դէվէլ։ Տէր Ղուկասով իր գունդերէն երկու սիւնակ կազմեց, մին՝ իշխան Ամիրաճիրոֆի առաջնորդութեան ներքեւ, որ պիտի գործէր Զիֆթլիքի դիմաց, միւսին կը հրամայէր զօրավարն Բրոնէվսքի։ Այս երկու սիւնակք ունէին 30 թնդանօթ։ Նոյնպէս զօրավարն Դէվէլ երկու սիւնակ բաժնեց իր զօրքը, միոյն կը հրամայէր զօրավարն Ալինոֆ, որ հաղորդակցութիւնը պիտի պահէր Բրոնէվսքիի սիւնակին հետ, միւսոյն կը հրամայէր զօրավարն Շաք՝ Հանճուղազ և Քիւլլի գեղերուն մէջ։ Այս երկու սիւներն ալ ունէին 40 թնդանօթք։ Այս զօրքերէ զատ, կարնոյ ճամբան բռնած էին երկու հեծելոց սիւնակք. միոյն կը հրամայէր զօրավարն Ամիլախվարի, միւսոյն Քալբոլա խան։ Մուխթար փաշա, Ուզուն Ահմէտ տափարակին պաշտպանութիւնը յանձնեց Մէհէմէտ փաշա հազարապետին, որ այնքան քաջացեր էր ի Քըզըլթէփէ. Ալը յանձնեց Իսմայէլ Հակքի փաշային, որուն պիտի օգնէր Ֆէյզի փաշա[1]. և կեդրոնը իրեն պահեց, որպէս զի ինքնին հսկէ Տէվէ Բոյնուի կարեւոր անցքին։

Առաւօտեան ժամը 9ին, նախ թուրք հրանօթք սկսան բաղխել ռուս բանակը, որուն պատասխանեցին ռուս հարիւրաւոր թնդանօթք շարունակ կրակով, որուն յաջորդեց Շաք զօրավարին գունդերուն յարձակումը. ասոնք կէսօրուան դէմ կրցան Քիւլլիի մօտ տեղաւորուիլ։ Մուխթար փաշա կարնէն նոր օգնութիւններ

1. Ֆէյզիամբ հունգարացի. և իր նախկին անունն էր Քոհլման։

ղրկեց Իսմայէլ փաշայի, զՌուսս վանելու Թիւլլիի մօտ եղած դիրքերէն, բայց անկարելի եղաւ. թէպէտ Իսմայէլ փաշա քանի մը անգամ փորձեց աներկիւղ թափով մը։ Թէյզի փաշայի բազուկը գնդակ մը ծակեր անցեր էր, բայց նա կը շարունակէր հրամայելու իր գունդերուն։ Թուրքերը կը կռուէին մեծ անձնանուիրմամբ իրենցմէ կրկինէն աւելի բանակի մը դէմ։ Ամիրաճիրոֆ իշխանին գունդերը երեք անգամ յարձակեր էին Ուզուն Ահմէտ տափարակին տիրելու, և երեք անգամն ալ վանուեր էին։ Մուխթար փաշա այդ դիրքին կարեւորութեան համար, նոր վաշտեր օգնութեան հասուցեր էր. որոնք ոչինչ էին Ռուսաց բազմութեան և հրանօթներուն բաղդատմամբ։ Թուրք բանակը եօթն թնդանօթ միայն ունէր Զոպան տաղի վրայ, որոնք մերթ ընդ մերթ ռումբեր կ'արձակէին Ամիրաճիրոֆի սիւնակին վրայ։ Երեկոյեան ժամը չորսն էր երբ ռուս զօրավարը հրամայեց ընդհանուր յարձակում մը մեծ թափով, և զինուորք բլրէ բլուր, փոսէ փոս ցատքելով, յետ արիւնահեղ մրցման տիրեցին Ուզուն Ահմէտի և Տէվէ Բոյնուի կիրճին հիւսիսակողման բարձունքներուն. ուսկից թուրք զինուորները խառն ի խուռն սկսան փախչիլ։ Այն ատեն զօրավարն Հայման հրամայեց Փալբոլա խանին, ձիաւորներով անցնիլ կիրճը, բռնել Կարնոյ ճամբան և կտրել Թրքաց փախուստը։ Ռուս ձիաւորաց այս շարժումը աւելի շփոթեց թուրք զինուորները, որոնք իրենց նահանջը կտրուած կը տեսնէին և անկարելի ընդդիմութիւն մը այն նեղ կիրճերուն մէջ սակաւ հրանօթով. և բազմութիւնը սկսաւ փախչիլ։ Ի զուր Թէյզի փաշա ջանաց դէմ դնել փախստէից. նոյն իսկ Իսմայիլ փաշա, խիթալով որ Կարնոյ ճամբան բռնուի, ինքն ալ նշան տուաւ նահանջի և աճապարեց դէպ ի Կարին։ Այս նահանջը կամ փախուստը Տէվէ Բոյնուի կիրճերէն, մութ ատեն, ի հեռուստ ունենալով նաեւ Ռուսաց ռմբակոծումը, շատ աղիտաբեր եղաւ թուրք բանակին։

Ռուսաց յաղթութիւնը։

Երբ փախստականք հասան Կարնոյ դուռը, ներս մտնելու համար մոլեգին կռիւներ ծագեցան. որովհետեւ

կուսակալը Հասան փաշա, հրամայեր էր վանել՝ բաղաքը մտնել ուզող զինուորքը։

Զօրավարն Հայման, Իսմայիլ փաշայի գունդերուն նահանջը կտրելու համար բաց ի Քալբոլա խանէն, վազցուցեր էր նաեւ Ամիլախվարիի հեծեալքը և Մոզ. տոքի խազախները, սակայն Իսմայիլ փաշա յառաջեր էր և գիտցաւ անոնցմէ ազատիլ։ Իսկ Մէհէմէտ փաշա՝ յետ թափառելու մութին մէջ իր գունդերով Տէվէ տաղ և մինչեւ Հաֆրզ փաշա բունար, հասաւ անվտանգ ի Կարին։ Արդէն գիշերուան ժամը 11ին հոն ապաւիներ էր նաեւ Ֆէյզի փաշա։ Մուխթար փաշա գիշերը յԱ. զիզիէ անցուց բերդը և երկրորդ առաւօտ մտաւ ի Կա. րին։ Ռուս գունդերը գիշերեցին իրենց բռնած դիրքե. րուն մէջ, և զօրավարն Հայման, ննջեց Մուխթար փա. շայի վրանին ներքեւ։ Թրքաց կորուստը ընդ մեռեալ և ընդ վիրաւոր կ՝անցնէր 2500ը. թնդանօթներէն մեծ մասը և շատ մը մթերք և պաշար ծնացեր էին թշնա. մւոյն ձեռքը։ Ռուսաց վիրաւորքն էին 680 և մեռեալ. քը 200։

Կարնոյ վի. ճակը։

6. — Կարին՝ Հայաստանի մայրաքաղաքը, ուր ապաւիներ էին թուրք հրամանատարք, ունենալով իսկ բերդեր, չէր կրնար ամուր քաղաք մը համարուիլ։ Կարին, որ 70,000 բնակիչ ունէր, աւելի նշանաւոր էր իր վաճառականութեան դիրքով թէ Հայաստանի, թէ Միջագետաց և մանաւանդ Պարսկաստանի նկատմամբ։ Ունէր բերդ մը և պաշտպանութեան երեք ամրոցք, յորս կարեւորագոյնն էր Թոփ Տաղը, որ մինչեւ 700 մէղր ընդարձակութիւն ունէր, պարունակելով իր մէջը Ազի. զիէ բերդին երեք բարձրացած ամրութիւնքը։ Կար նաեւ պաշտպանութիւն մը՝ Մէձիտիէ. և ամրոց մը ի Ս. Նշան։ Ունէր իր մէջը 140 կտոր հրանօթք և 6000ի մօտ զինուորք։ Նոյեմբեր 5ին Տրապիզոնէն ուրիշ 4000 զինուորք հասնելով, Մուխթար փաշա զասոնք ընդ հրամանատարութեամբ Մէհէմէտ փաշայի ղրկեց ի Թոփ Տաղ։ Հոն հաստատեց նաեւ իր բանակատեղին Ռու. սաց շարժումը դիտելու համար։

Կարնոյ բնակչաց մեծամասնութիւնը՝ հայ, յոյն, հրեայ, պարսիկ, մեծ հայրենասիրութիւն մը չէր զգար զքաղաքը պաշտպանելու Ռուսաց դէմ, կենաց վտանգաւ և նուիրակութիւն մը ղրկեց առ Մուխթար փաշա, խնդրելով որ զքաղաքը ռմբակոծուելու վտանգի մէջ չդնէ։ Մուխթար փաշա պատասխանեց որ պիտի հարցնէր ի Կ. Պոլիս։ Ռուս բանակէն պատգամաւոր մը եկաւ պահանջելով որ անձնատուր ըլլայ. նոյն պատասխանը տուաւ, խնդրելով երեք օր ժամանակ։ Այս միջոցիս բովանդակ ռուս բանակը եկեր բռներ էր Տէվէ Բոյնուի և Կարնոյ մէջի ճամբան և թոփ Տաղի դիմաց ամրոց մը կը բարձրացնէր ռմբակոծելու թէ զբերդը և թէ զքաղաքը։ Մուխթար փաշա ժողովքի կանչեց քաղքին զինուորական և քաղաքական իշխանութիւնքը, թուրք խօսարանին երեսփոխանքը, յոյս Պալլարեան և խաչաճեան էֆէնտիք, կրօնական գլուխները և նշանաւոր քաղաքացիներ. և սահմանուեցաւ անձնատուր չ'ըլլալու[1]։

Մուխթար փաշայի օրինակը, որ այսպիսի ծանր և իրմէ անկախ դրութեան մէջ կը ջանար մինչեւ վերջը կատարել իր պարտքը, ամօթ շնչեց շատերուն և շատերն ալ խրախուսեց։

---

1. «Կարնոյ կուսակալէն առ Մեծ. Լպարքոսն եկած հեռագիր մը գոհութեամբ կը ծանուցանէ թէ Կարնոյ առաջնորդ Գեր. Յարութիւն Արքեպիսկոպոսն իրեն ներկայանալով, յայտներ է թէ Կարնոյ հայ ժողովուրդը պատրաստ է ձեռքէն եկած ամեն ծառայութիւն մատուցանել և մինչեւ իսկ իր արեան վերջին կաթիլը նուիրել՝ ի պաշտպանութիւն իրաւանց Օսմանեան պետութեան, որոյ բաղդին հետ կապուած կը ճանաչէ Հայոց ազգին բաղդը։ Այն Յայտարարութեան համեմատ, վերջին պատերազմին մէջ Կարնոյ Հայերն անձնանուիրաբար ամեն նպաստ և օգնութիւն մատուցեր են տէրութեան զօրաց։ Բարձր. Մեծ Լպարքոսը սոյն հեռագիրը կիրակի Ս. Պատրիարքին ղրկեց, իւր յատուկ գոհութիւնն և շնորհակալութիւնն ալ աւելցնելով։ Ս. Պատրիարք հայրն ալ փութացաւ երէկ գրել թագրիր մը առ Նորին Բարձրութիւն՝ ծանուցանելով թէ Կարնոյ առաջնորդէն զատ, Տրապիզոնի, Մշոյ, Վանայ և Կարսի առաջնորդներն ու ժողովուրդներն ալ անձնանուէր ծառայութիւններ մատուցած են և հանապազ կը մատուցանեն տէրութեան, հետեւաբար կը խնդրէ որ այս հինգ առաջնորդաց վարձարութիւն մ'ըլլայ յատուկ շքանշաններով»։ Մասիս 1877. Հոկտ. 6։

Աւելորդ է գիտել տալ, որ տպագրութեան ազատութիւն չեղող երկրի մը մէջ լրագրի գրութիւնք են։ Չեմ գիտեր կարծ հայ մը «պատրաստ իր ա-

Թուրք կը յաղթեն ի Թոփ Տաղը։

7. — Հայման զօրավարը համարեցաւ որ յանկարծական հարուածով մը կարենայ տիրել Կարնոյ։ Թոփ Տաղը Կարնոյ բանալին էր. թէ տիրէր անոր, քաղաքը պէտք էր անձնատուր ըլլալ։ Սահմանեց գիշեր ատեն երկու սիւնակով աջէն և ձախէն յարձակիլ վրան և առնուլ կռուելով։ Նոյեմբեր 8էն 9ի գիշերը սկսաւ յարձակումը։ Ի սկզբան յանկարծակիի բերելով, յաջողեցան մտնել Մէճիտիէ ամրոցը և պահանորդը կալանաւորեցին. բայց երբ կը համարէին յառաջել դէպ ի Ազիզիէ, Մէհէմէտ փաշա ելաւ գունդով մը բերդէն, և թափով մը մթոյ մէջ ինկաւ Ռուսաց վրայ և մոլեգին կռուով, զանոնք վանեց նոյն իսկ Մէճիտիէ բերդէն։ Ռուս հրամանատարութիւնը նոր գունդեր ղրկեց, որոնք նորէն յարձակեցան Թոփ Տաղի վրայ. բայց թուրք ամրոցներուն թնդանօթք և միանգամայն խաւարը զիրենք մեծապէս շփոթեց։ Պատերազմը շարունակեց երկրորդ առաւօտը և մինչեւ կէսօր։ Ռուսք տեսնելով որ անկարելի էր տիրել Թոփ Տաղի, քաշուեցան իրենց դիրքերու մէջ, յետ կորսնցնելու հարիւրաւոր անձինք։ Ալաճա Տաղի և Տէվէ Բոյնուի պարտութիւններէն վերջը այս յաղթութիւնը եռանդնաւորեց թուրք սպայից և զինուորաց սիրտը, յորս մարեր էր ամեն յոյս։ Այսու հանդերձ Մուխթար փաշա խոհեմութիւն համարեցաւ ղրկելու յերզնկա, Պետութեան դիւանը և ռազմական մթերքը. և բնակչաց պատուիրեց, ունենալ ութ ամսուան պաշար կամ գաղթել Կարնէն, քանի որ դեռ

բեան վերջին կաթիլը տալու»։ Ի կ. Պոլիս Սուլթանը յանկարծ փափագ յայտներ էր որ զանազան ազգերէ կազմուի պալատան պահանորդը, յորս ըլլան նաեւ 300 Հայք։ Պատրիարքարանը և ազգին մեծերը այնքան ցրտութեամբ ընդունեցան այս փափագը, որ Սուլթանը ինքնին իր արքունեամբը ըմբոստեց և լռեց։ Ապա մայրաքաղաքին զինուորները պատերազմի դաշտ ղրկելու համար, մտածուեցաւ քրիստոնեաներէ քաղաքապահ գունդեր կազմել։ Յոյնք և Հայք մեծապէս վրդովեցան և բողոքեցին, մինչ չկար ուրիշ թափելու խնդիր մը։

Այս պատճառի ըսեմ որ թէ թրքահայ և եթէ ռուսահայ ինքնագիր յօդուածք այս պատերազմին նկատմամբ, լաւատես են ի նպաստ իրենց վրայ տիրապետող պետութեան, որով և անվստահելիք։

բաց էր Տրապիզոնի համբան։ Ռուսք ըմբռնեցին որ առ ժամս անկարելի էր առնուլ զկարին, և նախ հարկ էր տիրել Կարսի։

8. — Մեծ Դուքսն Միքայէլ զՄուխթար փաշա դէպ ի Կարին վանելէն վերջը, երկու բանակք կազմեր էր, մին՝ բանակ Սողանլուի, ուրիշ մը բանակ Կարսի, 25,000 զինուորներէ 140 թնդանօթիւք, որուն նպատակը պիտի ըլլար պաշարմամբ առնուլ զկարս. և այս բանակին հրամանատար կարգուեցաւ զօրավարն Լազարէվ [1]։

Լազարէվ հրամանատար Կարսի բանակին։

Բանակը տարածուեցաւ Մէզրէէն՝ Մէլիք գեղ, Զոլկաւուտ, Յարատան, Տիւզ Վէրան, Արավարդան, Վօզկալի, Դամբա, Ազատ գեղ, Մուղարաճբք և Վիզին գեղ. իսկ հրամանատարութիւնը հաստատուեցաւ ի Տիքմէ։ Զօրավարաց խորհրդեան մէջ զօրավարն Լազարէվ պնդած էր որ զկարս պաշարմամբ չէր կարելի նուաճել, քանի որ շատ պաշար ունէր և ձմեռը որ վրայ կը հասնէր և սաստիկ էր Հայաստանի այդ գաւառներուն մէջ, մեծապէս աղետալի պիտի ըլլար ռուս բանակին. և հարկ էր փութալ յարձակմամբ տիրել Կարսի։ Լազարէվ նախադաս համարեցաւ գիշերային յարձակումներ։

Լորիս Մէլիքով նախ ուզեց խաղաղ միջոցներով փորձել տիրել քաղաքին և պատգամաւոր ղրկեց Կարսի հրամանատար Հիւսէյին փաշայի՝ անձնատուր ըլլալու։

Հոկտ. 25։

Թուրք հրամանատարը որ ունէր 15,000 զինուոր և շատ ամուսան պաշար, առաջարկեց որ զինուորք և սպայք ելլեն դուրս իրենց զէնքերով, մթերքներով և պաշարներով։ Լորիս Մէլիքով յանձն չ'առաւ. որով

---

1. Մյակ լրագիրը 1902ի 245, 246, 247, 248 թիւերուն մէջ հրատարակեց Կարսի առման պատմութիւնը, առնելով զօրավար Լազարէվի կենսագրութենէն, զոր գրած է ռուս զինուորական ծանօթ պատմագիրն՝ զօրավարն Պոտտո, թարգմանութեամբ Պ. Լէօյի։ Աւելցուցած է ինչ ինչ և Քիշմիշէվ զօրավարի թրքահայատեաց պատերազմէն։ Ինքնանպէս այդ գրութիւնը մեծապէս յարգի է. և տեղ տեղ օգտուեցայ ինչպէս պիտի տեսնուի։

պէտք էր տիրել քաղաքին յարձակմամբ։ Նոր գունդեր բերուեցան Արտահանէն և պաշարման թնդանօթք Աղեքսանդրուպոլէն, որոնք մասնաւորապէս ուղղուեցան Կարս Զայի աջ կողմը. Հաֆըզ փաշա, Ֆանլր և Ռուվարի բերդերուն վրայ, ինչպէս նաեւ դէպ ի քաղաքը։ Նոյեմբեր 9ին Ռուսք միաբերան ռմբակոծում մը սկսան քաղքին և բերդերուն վրայ, որ տեւեց գիշեր ու ցորեկ. և զարհուրելի կերպով վնասեցին Բայրամ փաշա թաղին, որուն բնակիչք փոխադրուեցան հեռաւոր կողմեր։ Կը յուսային այսպէս վհատեցնել պահանորդը և բռնադատել անձնատրութեան։

Սակայն ընդհակառակն գտան մոլեգին ընդդիմութիւն մը և տեսնուեցաւ որ եռանդեամբ կ'աշխատէին նոր ամրութիւնք բարձրացնելու։ Այն ատեն Լորիս Մէլիքով ալ որոշեց փութով յարձակում մը, այն կողմերէն մանաւանդ, որոց տկարութիւնքը իրեն յայտնի էին։ Նոյեմբեր 11ին զօրավարն Լազարէվ 48 թընդանօթք տեղաւորեց Հաֆըզ բերդին հողակոյտներուն դիմաց, զայն ռմբակոծելու համար. 12ին թուրք յառաջապահք գուշակելով թշնամւոյն միտքը, դուրս ելան քաղքէն, յարձակեցան Քարաճէօրէնի վրայ և կը յուսային որ Ռուսք վերցնեն Հաֆըզ բերդին դէմ տեղաւորած թնդանօթները, բայց չյաջողեցան։ Զօրավարն Ալխազով որուն յանձներ էր Լազարէվ Հաֆըզի վրայ յարձակումը, կէսօրէն վերջը յառաջ մղեց Քութայիսի գունդը, որուն կը հրամայէր Ֆադէիէվ հազարապետը։ Ֆադէիէվի գունդը անիսոնջ արութեամբ կռուեցաւ մինչեւ գիշեր և ամենէն վերջը եռանդուն թափով մը փախչողաց հետ յաջողեցաւ մտնելու բերդը և վանել մնացեալ սակաւ պահանորդքը։ Ֆադէիէվ իր ջոկատով մնաց հոն մինչեւ առաւօտ, բայց հրաման մը չ'ընդունելով, թողուց զՀաֆրզ և թուրք վաշտեր անմիջապէս տիրեցին։

Կարսի վրայ ընդհանուր յարձակումն։

9. — Հաֆրզ բերդին այսպէս դիւրաւ տեղիք տալը, աւելի հաստատեց ընդհանուր հրամանատարութիւնը՝ յամենուստ յարձակում մը տալու, և այն, գիշեր ա-

տեն։ Զօրավարն Լազարէվ ընդհանուր հրամանատար կարսի պաշարման բանակին, հինգ սիւնակք ձեւացուց. առաջնոյն կը հրամայէր զօրավարն Քոմարոֆ, որ Թաթլրճայի վրայէն շրջանով մը պիտի բաղխէր Թահմասի բարձունքը և Զիմ բերդը. Երկրորդին կը հրամայէր փոխան հազարապետի Վահան Մէլիքով, ազգակից ընդհանուր հրամանատարին, որ Զիֆթլիք գեղէն պիտի բաղխէր զԶիմ. Երրորդին կը հրամայէր զօրավար Կոման Դրաբբէ՝ որ Դարաճէօրէնի կողմէն պիտի յարձակէր Քանլր բերդին վրայ և այս սիւնակին հետ միաբան պիտի գործէր. Չորրորդ սիւնակն ալ որուն կը հրամայէր Վոժտաքին հազարապետը։ Հինգերորդին կը հրամայէր Ալխազով զօրավարը որ Քութայիսեան երեք գնդերով և Վլատիկաւկասի երկու ջոկատներով, պիտի յարձակէր Հաֆրզ բերդին վրայ։ Կազմուեցան վեցերորդ և եօթներորդ սիւնակներ ալ. առաջինը Զէրէմիսսինոֆ հազարապետին հրամանատարութեան ներքեւ որ Գոմք և Ճարա գիւղերէն պիտի ոմբակոծէր Լազ-Թէփէսի և Միւիլիս բերդերը և երկրորդը Շատինով զօրավարին հրամանին ներքեւ, Ռիտցէվսլի զօրավարին հետ պիտի բաղխէր Ալրաբ և Քարատաղ բերդերը։ Ուրիշ գունդեր ալ Շէրէմէթիֆ զօրավարին և Զէրբատոֆ իշխանին հրամանատարութեան ներքեւ պիտի հսկէին Կարնոյ ճամբուն Սալուտէն, Դմբէթէն և Զիֆթլիք գեղէն. պահեստի գունդերը Լազարէվ իրեն հետ առաւ Կարս Զայի աջ կողմը. ոստ պիտոյից ղրկելու համար[1]։ Իսկ պատերազմին ամբողջական ուղղութեան պիտի հսկէր ընդհանուր գործոն հրամանատարը՝ զօրավարն Լորիս Մէլիքով, որ բանակած էր ի Գոմաձոր։ Սահմանուած էր Նոյեմբեր 13ի գիշերը կատարել ընդհանուր յարձակումը, բայց նոյն

---

1. «Կուսոյն ամբողջ ծրագիրը ինքը Լազարէվի ուշադրութիւնը դարձրին այն բանի վրայ, որ նրա կազմած ծրագրի մէջ չկայ ցուցմունք, թէ ինչ կարգաւ պէտք է նահանջել, նա վճռականապէս ասաց. «Նահանջում չկայ»։ Պ. Լ. Մշակ 1902 թիւ 243։

աւուր ցուրտը, Ղիւնը արգելեցին. և յետաձգուեցաւ Նոյեմբեր 17ի, լուսնի լոյսն ալ օգնական ունենալու համար։ Հարձակումէն երկու օր առաջ զօրավարն Լազարէվ, Բարձրագոյն արտօնութեամբ խաչեր և նշաններ բաժնեց առջի պատերազմներուն մէջ քաջացողներուն, այսպէս զամենը խրախուսելով առաջիկայ կռիւներուն համար. և Նոյեմբեր 17ին գիշերը ժամը ութ և կիսուն երբ զինուորք զրոյէն 10 աստիճան վար ցրտով մը և պայծառ լուսնի լուսով պատրաստ էին ճամբայ ելլելու, Լազարէվ ընթացաւ բոլոր գունդերուն ճակատը՝ ամենուն շնորհաւորեց յաղթութիւն և ի վերջոյ վերցուց գլխարկը, խորին ակնածութեամբ խաչակնքեց զօրքերը և աւելցուց «Այժմ գնացէ՛ք, Աստուած Ձեզ հետ[1]»։ Զինուորք ճամբայ ելան լռութեամբ. ամեն գունդ հետը ունենալով մէկ հայ ուղղեցոյց[2]. չկար հրաման խօսելու անգամ, թշնամին չ'արթնցնելու համար։ Սակայն ժամը 9ին թուրքերու կողմանէ հրացանի քանի մի հարուածք, նշան էր որ թշնամւոյ շարժումը զգացուեր էր և ի զէն կը կոչէր բանակը։ Ռուսք տակաւին կը յառաջէին լռութեամբ, սակայն թուրքերը սկսան ամեն կողմանէ հրացանի գնդակք թափել կարկտանման ռուս զօրաց վրայ և յանկարծ կեցցէներու որոտընդոստ աղաղակ մը տարածուեցաւ լռութեան մէջ, և իմացուեցաւ որ Մէլիքով հազարապետի սիւնակը մոլեգնաբար կռուելով մտեր էր Սուվարի բերդը. և սուինով պատերազմէ մը վերջը լուսնի լուսով տիրացեր էր ամրոցին։ Վահան Մէլիքով այս յաջողութեամբ կուզէր դիմել և բաղխել զՁիմ, բայց ըստ հրամանատարութեան ծրագրին, կրսպասէր անհամբեր Ֆոմարոֆի սիւնակին նշանի մը, որ ուրիշ կողմանէ պիտի բաղխէր զՁիմ։ Այս միջոցին կատաղի կռիւ մը ծագեր էր Ֆանլը բերդին դիմաց։ Ռուսք և թուրք երեք ժամ կռուեցան արութեամբ և ինկաւ

1. Անդ. շարունակութիւն։
2. Անդ։

մեռեալ զօրավար կոմսն Գրաբբէ և հազարապետն Բէ-
լիսքի։

Լազարէվ ղրկեց զԲիւլմէրինկ հազարապետը մեռնող
հրամանատարին տեղ, տալով միարան Զավչավածէ իշ-
խանը իր հեծեալներով. Թուրք նոր օգնութիւնք հա-
սուցին. կէս գիշերը անցեր էր և դեռ պատերազմին
ելքը տարակուսական էր։ Բիւլմէրինկ մարդ ղրկեց օգ-
նութիւն խնդրելու. Լազարէվ դեռ պահեստը չէր ուզեր
գործածել. ինքը անձամբ դիմեց խրախուսելու կռուող-
ները. գնդակները չորս կողմէն կը թռչէին. չորս կողմը
կը փռուէին անկինդան մարդ, ձի և ինքը անվախ ան-
սասան կեցած էր անոնց մէջ[1]։ Լորիս Մէլիքով լուր
ղրկեց Լազարէվի որ Թուրքերը կրկին տիրեր էին Սու-
վարիի՝ Զիմի յարձակումը չէր յաջողած և Հաֆրզ ու
Քանլը բերդերուն կռիւը կը շարունակէր անորոշ. խոր-
հուրդ կու տար մտածել նահանջի եղանակը։ Լազարէվ
լուր ղրկեց խնդրելով որ շարունակուի պատերազմը. «Թէ
գիշերս չտիրեմ, վաղը կը տիրեմ», աւելցուց։ Այս մի-
ջոցիս կեցցէներու ահեղ գոչիւն մը և օդուն մէջ պայ-
թուցիկ կրակներ իմացուցին որ Ալիազովի գունդերը
տիրեր էին նախ Քարատաղի և ապա Հաֆրզ բերդին։

---

1. «Ցանկարծ նրա ետեւում մի ինչ որ շփոթութիւն ինկաւ. շատերը իջան ձիաններից։ Լազարէվը հասկցաւ թէ ինչ բան է դա, բայց նոյն իսկ յետ էլ չդարձաւ և միայն հարցրեց. «Ո՞վ է վիրաւորվել»։ — «Պորուչիկ Լազարէվը, Ձերդ Գերազանցութիւն». պատասխանեց մէկի դողացող ձայնը։ — «Դանէ՛լ»։ կարճ ասաց գեներալը։ Նրա դէմքի վրայ մի հատ ջիլ էլ չը դողաց, թէեւ վիրաւորուածը նրա սիրելի եղբօր որդին էր։ Դա նրա մեծ եղբայր Բէջանի որդին էր, մի երիտասարդ Թնդանօթաձիգ, որ իր ընդունակութիւններով մեծ յոյսեր էր տալիս։ Նա գնում էր Էրզրում և կամաւոր էր մտնել իր հօրեղբօր սվիտայի մէջ, թէ և հօրեղբայրը արգելել էր այդ։ Միայն շտուրմից յետոյ, վերադառնալով իր վրանը, Լազարէվը ազատութիւն տուեց իր մէջ եռացող և երկար ժամանակ զսպվող վշտին։ Նա լաց էր լինում երախայի նման։ Վէրքը մահացու էր. գնդակը անցեր էր քունքից քունք և կտրել էր աչքի ներվերը։ Դժբաղդ երիտասարդը կուրացաւ. նա ուշաթափված էր. բայց քանի որ կեանք կար մէջը, նա շարունակ երգում էր ամենամաքուր, թարմ և հնչիւն ձայնով։ «Մեռնող պատանու այդ երգը, ասում է Մէղչէրսկին իր Յիշողութիւնների մէջ, — մի սոսկալի բան էր... Այս այժմ էլ լսում եմ նրան»։ Պ. Լ. Պոտտո գեներալին գրութենէն։ Մշակ 1902 թիւ 247։

Ալիազով սիւնակին Ֆէդէիէվ հազարապետը, ինչպէս առաջին անգամ, առանց ուշ դնելու Թշնամւոյն կրակին, յարձակմամբ տիրեց բլրան ոտքը եղած հրանոթից. ապա մինչ Թուրք զինուորք կը փախչէին, ինքը հինգ ջոկատով դիմեց ետեւէն և յետ արիւնահեղ մրցման տիրեց Քարատաղի, որ Կարսի բանալի համարուած է։ Ֆէդէիէվ հազարապետին նման, Քոցէլքով հազարապետը յետ քայլ առ քայլ մոլեգին կռուոյ մը, մտաւ Հաֆըզ բերդը, ուր կռուելով ինկաւ գրեթէ բոլոր Թուրք պահանորդը։ Առաւօտեան ժամը երկուքն էր, դեռ գիշերուան խորը. և Ռուսք բռներ էին Քարատաղէն մինչեւ Կարս Զայ ամրութիւնքը, որով քաղաքը բաց էր իրենց դիմաց։ Այն ատեն Ալիազով և Բիւլմէրինկ զօրավարաց գունդերը չուեցին դէպ ի քաղաք, որուն մէջ անբացատրելի սարսափ և խառնակութիւն տիրեր էր։ Բոլոր Թուրք բնակիչներ իրենց գոյքերէն կարեւորքը առած, ապաւիներ էին Հայոց տները։ Լազարէվ յետ յանձնելու Բաում զօրավարին ստանձնելու քաղաք մտնող գունդերուն հրամանատարութիւնը, ինքը դիմեց կրկին Քանլը մարտկոցին վրայ, որ տակաւին կ'ընդդիմանար։

Եւ որովհետեւ լաւ Թրքերէն կը խօսէր, մօտեցաւ ամբարտակի մը և իմացուց հրամանատարին, Տավուտ փաշայի, որ արդէն գրեթէ ամեն բերդերը առնուեր էին և ի զուր էր ընդդիմութիւնը և արիւնահեղութիւնը։ Երբ փաշայն պատասխանեց որ պիտի կռուէր մինչեւ վերջին մարդը, Լազարէվ հրամայեց բերել Թնդանօթները և սկսիլ շարունակ ռմբակոծում մը։ Այն ատեն Թուրք հրամանատարը անձնատուր եղաւ։

Կարս Զայի աջ կողմը այսպէս յաջող գործողութեանց ժամանակ, զօրավարն Քոմարոֆ որ սահմանուածէն տարբեր ճամբով չուեր էր Զիմ բերդին վրայ, հասնելով մօտ, ղրկեց զՌուչքիէվ հազարապետը, Պիատիկորսքեան գունդերով բաղխելու զայն։ Մի և նոյն միջոց Ստատէվիչ հազարապետը ցոյց մը պիտի ընէր Թահմասի վրայ։ Ռուչքիէվ քանի մը անգամ կարծեց տեսնելու Զիմի

և միշտ վանուեցաւ։ Երբ վերջին փորձ մը եւս ուզեց ընել կեցցէներու աղաղակաւ, Թշնամւոյն ռումբի մը պայթիւնէն անկենդան ինկաւ հազարապետն Բուչքիէվ և իր գունդերը նահանջեցին։

Սակայն հարկ էր տիրել Զիմի և հազարապետն Մէլիքով որ այնքան ընդերկար ի զուր սպասեր էր Քոմարով զօրավարին, երբ տեսաւ որ վերջապէս հասեր են հոն Քոմարովի գունդերը, ինքն ալ Սուվարիէն դիմեց ի Զիմ և գնդակներու զարհուրելի կռիւ մը սկսաւ երկուստեք, յորում ծանր վիրաւորուեցաւ և վահան Մէլիքով հազարապետը։

Զօրավարն Քոմարով որ շարունակ օգնութիւն ղրկեր էր, մեծագոյն աղէտքի մը զգուշութեան համար, առաւօտեան դէմ հրամայեց իր զօրացը նահանջելու։ Նոյն հրամանը տուաւ նաեւ հազարապետն Զէրէմիսսինոֆ որ ի սկզբան յաջողեր էր տիրելու Լազթէփէսիի պատնէշներուն։

Իսկ Շատիլով զօրավարը երբ լսեց Քարատաղի առնուիլը, Ռիտցէսքի զօրավարը սիւնակով մը ղրկեց Ալրաբ բերդին վրայ։ Կ'երթային առաջէն կամաւոր խումբեր որոց կը հրամայէր 19ամեայ Թորչէւսքի սպայն որ առաջին եղաւ իր կամաւորաց մէջ, մագլցելով ելլելու բերդին տափարակին վրայ և կանգնելու ռուս դրօշակը։ Թուրքերէն որոնք որ սպանուած չէին, գերի բռնուեցան և մաս մ'ալ փախան։ Ռուս գունդերը փախստականները հալածելով, բռնեցին Կարս Զայի հեղեղատին գլուխը։ Այսպէս գետին աջ կողմի բոլոր բերդերը Ռուսաց ձեռքն էին և Բաում զօրավարը բռներ էր քաղքին գլխաւոր կէտերը. և վլատիկաւկասեան գունդը մտեր էր միջնաբերդը, զոր Թշնամին Թողուցեր էր։ Հազիւ երբեմն Թնդանօթի հարուածք կ'արձկուէին, Մուխլիս, Վէլի փաշա և Զիմ բերդերէն, որոնք Թրքաց ձեռքն էին տակաւին։

Երբ օրը սկսաւ լուսանալ, Ռուսք տեսան որ Թուրք Ծնացեալ գունդերը իջնելով Զիմ և Լազթէփէսի բերդերէն կը չուէին մաս մը դէպ ի Վոզկալի և Զիֆթլիք

և մաս մը Այնալբի վրայ։ Անմիջապէս զօրավարն Իոր գունդեր ղրկեց Թուրք բանակին նահանջը կտրելու, ուրիշ գունդեր ալ ղրկեց զօրավարն Փոմարով՝ փախստականքը կողմնակի բաղխելու և զօրավարն Զէրբատով հեծելագունդ հասուց Արավարդանի ճամբան բռնելու։ Ապա հազարապետն Բաղիէվսքի և հազարապետ իշխանն Էրիստով ինկան Թուրք հեծելոց ետեւէն և ցրուեցին զանոնք յետ սպաննելու հարիւրաւոր անձինք։ Իսկ հետեւակ բանակը կը չուէր դէպ ի Վոզկալի և երբ ինքզինքը պաշարուած տեսաւ՝ անձնատուր եղաւ։ Նոյնը ըրին Զիֆթլիք և Արավարդան չուողները, երբ Ռուսք առջեւնէն ճամբանին կտրեցին։

Կարսի առումը ի Ռուսաց։

10. — Զօրավարն Զէրբաթով իմացաւ որ Կարսի հրամանատարը Հիւսէյին Ափնի փաշա և բերդորէից ուրիշ հրամանատարք 150 հոգւով փախեր էին դէպ ի Գոգկուշ, դիմեց ետեւնէն և սպաննեց շատ անձինք։ Երեսուն հոգի միայն կրցան ազատիլ, յորս էր նաեւ Հիւսէյին Ափնի փաշա։ Զէրբատովի հեծեալք ի դարձին հանդիպեցան ուրիշ խումբերու ալ որոնք կ'ինային Մուխլիսի բերդէն և Զաքմաքի բարձունքներէն. ետեւնէն դիմեցին և ամենն ալ անձնատուր եղան։ Հազիւ քանի մը հարիւր ձիաւորք կրցան փախչիլ ի Կարին։ Միւս ամենն զինուորք կամ մեռան կամ անձնատուր եղան։ Այսպէս Նոյեմբեր 15ի կէսօրին Կարս կը մնար Ռուսաց ձեռքը 303 թնդանօթովք շատ մը մթերովք և պաշարներով։ Գերի կ'ըլլային Ռուսաց 17,000 զինուոր, յորս հինգ փաշայք և 800 սպայք։ Կային դարձեալ 4500 վիրաւորք և հիւանդք, զորս Լորիս Մէլիքով նամակով մը ղրկեց ի Կարին առ Մուխթար փաշա։ Այսպէս ինքը ազատելով մեծ նեղութենէ մը և տալով թշնամւոյն տագնապ և հոգ պարէնի, թուրք հրամանատարութիւնը ինչպէս նաեւ բոլոր Թրքասէր լրագիրք կոչեցին զայն Ռուսաց յետին «անգթութիւնը»։ Յայտնի է այսպիսի ցուրտ եղանակի մը շատ հիւանդներ մեռեր էին ճամբան։

Նոյեմբեր 19ին Մեծ իշխանն Միքայէլ Նիկոլայէ-

վիչ հանդէսով մտաւ ի Կարս քոմն ունենալով զԼորիս Մէլիքով և շքեղ սպայակոյտ մը։ Իրեն ընդ առաջ ելան քաղաքական ժողովքը, քաղքին նշանաւոր անձինք, որոնք ընծայեցին բերդին բանալիները և աղ ու հաց։ Դիմաւորողաց մէջն էր նաեւ Աղուանեան Հայոց Եպիսկոպոսը։ «Բարգելի հովիւը, պատերազմի սկիզբէն չէր դադրած ցոյց տալ անձնանուիրումը և համակրանքը Ռուսաց շահերին, և մասնակից էր եղածին համար անոնց ուրախութեան և հրճուանաց[1]*»։*

Կարսի առման հետեւանքները մահմէտական ցեղերու վրայ։

11. — Կարսի առումը մեծ ազդեցութիւն ունեցաւ Հայաստանի, Կովկասի և Տաղստանի մահմէտական կէս ինքնագլուխ և կէս ապստամբ Քիւրտերու, Լէզկիներու և Չէչէններու վրայ։ Ասոնք ստէպ գուպարածներ ունեցեր էին Ռուսաց հետ, յորս յիշենք ի Լավաշ, Սեպտեմբեր 23ին, ի Քուտիշ Սեպտեմբեր 24ին, ի Քայքէնդ Սեպտեմբեր 30ին և ի Ա՛էմիքէնտ Հոկտեմբեր 2ին։ Կարսի առմամբ այդ ցեղերուն գլխաւորքը՝ Լէզկի Ալի Բէկ և Ումա–Դուլիէվ հնազանդեցան անմիջապէս։

---

1. Մշակ 1902 թիւ 248։

Իւ սակայն սա մինն էր անոնցմէ, որոց հաւատարմութեան համար առ թուրք Պետութիւնը, կ. Պոլսոյ պատրիարգը նշան խնդրեր էր։

Կարսի պէս ամուր քաղաքի մը այսպէս փութով առնուիլը, բնական է շատ կասկածներ ծնուց մտքերու մէջ՝ մասնութեան մը։ Սակայն տակաւին յետ 28 տարիներու այս կասկածները պաշտօնական հաստատութիւն մը չ'առին, ժամանակին լուրջ Պրակներու մէջ երեւցածներէն յիշենք մէկ հատի մը տողերը. «Ռուսք այնքան քիչ պարծեցան այդ յաղթութեան վրայ, որ յայտնապէս ոյժ առաւ մասնութեան մը կասկածը փաշայի մը կողմանէ, որ անհոգ թողուց պաշտպանութեանց տեղեր. որով Ռուսք բաց գտնելով անցքեր, կրցան ի յետուստ ինկնալ. յետ շահելու պաշտպանողը։ Իւ այդ մասնիչը կամ վատ, նման այն փաշային որ պատերազմին սկիզբը առանց հրացանի հարուած մը պարպելու թողուց Արտահանի բերդը, մեռաւ, կ'ըսեն քիչ որ վերջը, ի Տփղիս։ Թերեւս յաղթողը արժանի կերպով վարձատրեց զինքը, ըստ զինուորական օրինաց»։ Զիվիլրա՛ կատուրիքա։ 1878 թիւ 661։ Իրաւ Ռուսք շատ չպարծեցան Կարսի առման վրայ, պատճառն այն էր որ գկարսը, Ռուսաց տէրութեան տուողը, հայազգի զորավար մ'էր։ Ինչպէս հայազգի ուրիշ զորավարներ ինն ի տասներորդ դարուն մէջ ուրիշ շատ գաւառներ տուեր էին Ռուսաց։ Իւ փոխարէն...։ Կարսի փութով առնուելուն առթիւ ծամծմուած է նաեւ հայ ազգին անունը։ Սակայն Հայ ժողովուրդը կամ հոգեւորականութիւնը բնաւ չէր կարող գիտնալ բերդորէից ռազմագիտական և պաշտպանողական կացութիւնը և անտեղի է այդպիսի իր մը մտածելն անգամ։

Կարսի անկմամբ Հայաստանի պատերազմին վճիռը տրուած կը համարուէր։ Կարս էր Կարնոյ պարիսպը, որուն ինկնալով յայտնի էր Կարնոյ առումը եւս շուտ կամ քիչ վերջը։ Մեծ Դուքն Միքայէլ յետ միացնելու Կարսի և Զրլտրրի սանճագութիւնները Կարս գաւառ անուան ներքեւ, զՊոպքա զօրավարը կուսակալ անուանեց և ինքը մեկնեցաւ ի Տփղիս, յանձնելով Լորիս Մէլիքովի 10,000 զօրք պաշարել զԿարին. որուն առումը ուշացաւ միայն ցուրտ ձմեռուան և բարձրադէզ ձիւներուն համար։ Այսու հանդերձ Թուրք այս միջոցին ալ տիրեցին Խնուսի, Կէզի, Հինձքի, Մաղիկի և ուրիշ մօտակայ աւաններու, առանց ընդդիմութեան մը. փոքր գուպարածներ ունենալով Միւհիր Ալիի հետ, որ Քարաբաբաքներու խումբերով Կարնոյ չորս կողմերը կը պտըտէր աւելի ասպատակելու գիւղերը, քան օգնելու պաշարողաց[1]։

---

1. «Նոյեմբեր 9ին կատարված պատերազմումը Ֆորտ Ագիզիէի մօտ, Պ. Զօրաբը, Անգլիայի ներկայացուցիչը Լրզիրիմում, քիչ էր մնացել, որ սպանուի. երբ դա քաջութեամբ ընկել էր Թուրքերի մէջ, որ արդիւն դրանց ոուս վիրաւորուածների կոտորելում։ Բաղդաւորապէս այդ նրան բոլորովին յաջողվեցաւ. և այդ լուրը հասնելով գլխաւոր հրամանատար Մուխթար փաշայի (որ շատ մարդասէր և քնքոյշ մարդ է) աւելի ամրացրեց այն բարեկամութեան կապը. որ արդէն գոյութիւն ունէր այդ երկու ազնիւ անձինքների մէջ։

«Անգլիայի ներկայացուցիչը Լրզիրիմում Պ. Զօրաբը, հայ է ազգով, և յայտնի է իր խելօք և ազնիւ գործունէութեամբ»։ Մշակ. 1877 Դեկտ. 28։

Թուրք—ռուս պատերազմին քաղաքագիտական և մարդասիրական դեր կատարող անձնաւորութեանց մէջ, պարտք կը համարիմ յիշել նաեւ զՊ. Կոմիտաս Հէքիմեան. ծնեալ ի Տրապիզոն յամին 1854, յետոյ աշակերտ Մուրատեան վարժարանին (1870) ի Պարիս և Վենետիկ, թարգման երկար ատեն Անգլիոյ հիւպատոսարանին ի Տրապիզոն, և մերթ փոխանակ հիւպատոսի։ Իսկ Թուրք բանակին մէջ Անգլիոյ զինուորական կցորդին համարգ, և շատ առիթներու մէջ իր ծանօթ և անխոնջ մարդասէր և ազգասէր բնաւորութեամբ առ ամեն քաղաքական թշուառ բանտերու և հիւանդանոցներու մէջ, և ամեն տեղ։ Նոյն արագահաս եռանդուն սիրտը ունեցաւ պատերազմէն վերջն ալ առ ամեն թշուառս. մանաւանդ՝ թէ ըլլային ազգայինք։ Օգնեց իր բովանդակ կարողութեամբը անխտիր ազգային կրթական ամեն հաստատութեանց, մանաւանդ վարժարանաց։ Ինքն էր հանդիսաւոր ամեն բարեգործական և թատերական նիրկայացուցմանց. և ինչպէս իր կեանքը եղեր էր այլոց օգնելու համար, նոյնպէս քաղաքական ազգային անպարտ թշուառներու բանտէ ազատելու համար վերջին հիգը, 52 ամեայ տարաւ զինքն ի գերեզման երկու տարի առաջ, թողլով չորս մատաղահասակ զաւակունք։ Լացին անխիտիր քրիստոնեայք և մահմէտականք։*

12. — Մուխթար փաշա Դեկտեմբեր 24ին ելաւ կարնէ և գնաց ի Բարեբրդ, հաստատուն միտքը դրած, իր անխոնջ և յոյսը չկտրող բնաւորութեամբ, նոր բանակ մը հաւաքելու և գարնան պատերազմով զՌուսս վանելու համար Հայաստանէ։ Բայց հազիւ հասեր էր ի Բարեբրդ, Կ. Պոլսէն հրաման ստացաւ, անմիջապէս մայրաքաղաքը դառնալու։ Այսպէս Թուրք վարչութիւնը ի Հայաստան ոչ բանակ ունէր պատերազմելու և ոչ սպարապետ։

Մուխթար փաշա ի Կ. Պոլիս։

13. — Արդէն ի Բաթում եւս Դէրվիշ փաշայի բանակը 9000 զօրաց հասեր էր, շարունակ գունդերու Բալկանները կանչուելով. որով Դէրվիշ փաշա Նոյեմբերի վերջերը Թողուց Խոցուբանի ռազմագիտական դիրքերը և ամփոփուեցաւ Բաթումի չորս կողմերը։ Թուրք վարչութիւնը առ ժամս լքանելով ասիակողման պատերազմը, իր զօրութիւնքը կը հաւաքէր Պլէվնայի մօտ, զայն ազատելու համար։

Դէրվիշ փաշայի բանակը ի Բաթում։



ԳԼՈՒԽ ԻԲ.

ՊԼԷՎՆԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

1. Պլէվնայի դիմաց Ռուսաց մեծ բանակը. — Զօրավարն Տոտլէբէն հրամանատար պաշարման. — 2. Կորնի Դուքինքի և Տէլիշի պատերազմները. — 3. Պլէվնա պաշարուած. — 4. Մէհէմէտ Ալի դէպ ի Օրխանիէ. — 5. Սիւլէյման փաշա դէպ ի Պլէվնա. — Մէչքայի պատերազմը. — 6. Ցիշլէնայ, Սիւլէյման փաշայի յաղթութիւնը. — 7. Մէչքայի քով երկրորդ պատերազմ և պարտութիւն. — 8. Ի Պլէվնա պաշարին սպառումը. — Մեծ Դուքսն Նիկոլա կ'առաջարկէ անձնատուր ըլլալ. — Օսման փաշայի մերժելը. — 9. Օսման փաշայի ելքը. — վիրաւորուելը. — 10. Օսման փաշայի և բանակին անձնատուր ըլլալը. — 11. Ռուս բանակը ի Պլէվնա.

Պլէվնայի դիմաց Ռուսաց մեծ բանակը.

1. — Օսման փաշայի Պլէվնայի որմոց ներքեւ ելեք փայլուն յաղթութիւնք, բռնադատեր էին բնականաբար ռուս պատերազմի պաշտօնարանը իր մեծագոյն զօրութիւնները հասցնելու հոն. և բառնալու այն խոչընդոտը, որ ամիսներով արգելք կ'ըլլար իր յառաջելուն և պատերազմի յաջող կատարածին։ Ընդհանուր հրամանատարութիւնը մնաց միշտ Նիկոլա մեծ դքսին ձեռքը, ինչպէս մեծ հրամանատարութիւններ ունէին Զարէվիչը, Վլադիմիր մեծ Դուքսը, Մեծ Դուքսն Նիկոլա՝ որդի ընդհանուր հրամանատարին, երկու Օլտէնբուրկի դքսեր։ Բայց որովհետեւ բարձր և ստորին շրջանակաց մէջ ընդհանուր էր դժգոհութիւնը, և կայսերական ընտանեաց անդամք կ'ամբաստանուէին ոչ յարմարք բարձր հրամանատարութեանց, պատերազմի պաշտօնարանը այն

Զօրավարն Տոտլէբէն հրամանատար պաշարման։

ատեն յուզուեցաւ. և դիմեց առ զօրավարն Տոտլէբէն, Ռէվաստապօլի պանծալի պաշտպանողը և ռուս զինուորականութեան նեստորը, որ նախանձներու պատճառաւ մէկդի թողուած էր, փութով երթալ ի Պլէվնա. և մեծ Դուքսն Նիկոլա իրեն յանձնեց Պլէվնայի պաշարման ծրագրի կազմութիւնը և անոր գործադրութեան հսկողութիւնը։ Արդէն շարունակ նոր գունդեր կը հասնէին ամեն կողմանէ և պաշարման բանակը հասեր էր 100,000 անձանց։

Օսման փաշա կը տեսնէր այս ամեն հանդերձանքը. և իր արթուն մտքովը կը դատէր որ Պլէվնա չէր կարող երկար պաշտպանուիլ այնքան բանակներու դէմ. քանի որ հեռու էր 120 քիլոմէդր ճամբով ո՛ր և է յենարանէ մը. և առաջարկեց Պ. Պօլսոյ վարչութեան՝ քանի որ դեռ յետուստ բաց էր Օրխանիէի և Սոֆիայի ճամբան, թողուլ զՊլէվնա և քաշուիլ յՕրխանիէ. ուր կրնար հաւաքել 100,000 զօրաց բանակ մը. և կռնակ ունենալով նաեւ զՍոֆիա, կարող էր խափանել ռուս բանակին յառաջացումը։ Սակայն ի Կ. Պօլիս վարչութիւնը, հրամայեց մնալ ի Պլէվնա, խոստմամբ շարունակ հասցնելու զինուոր և պաշար։ Օսման փաշա պնդեց իր առաջարկին վրայ, ցուցընելով որ փութով կրնար կտրուիլ այդ մէկ ճամբան ալ, արդէն սպառնացեալ բազմաթիւ թշնամի բանակէն։ Սակայն Կ. Պօլսէն հակառակ հրամանին վրայ, հնազանդեցաւ. բայց մտքով չհամոզուած [1]։

Ռուս հրամանատարութիւնը Զկնոդուրկով բանակ մը կազմեց, ընդ հրամանատարութեամբ Քրիլով զօրավարին, որուն պաշտօնը պիտի ըլլար հսկել Պլէվնայի ճամբուն

1. Զայս լսած եմ և Օսման փաշայի սպայակուտի պատկանող բարձրաստիճան անձէ. որուն հետ ուղեւորելու տիպին ունեցած եմ պատերազմէն երեք տարի վերջը։ Այն վերոյասացեալ զինուորականը, որուն անուն կը լսեմ դեռ ողջ ըլլալուն, Օսման փաշայի հաւատար և յիրս յիրս աւելի կը զովէր նաեւ զԹէվֆիք փաշա, ռազմական ճարտարապետ, և գլուխ Օսման փաշայի սպայակուտին։

վրայ, և արգելուլ ո՛ր և է «գնութիւն մը առ Օսման փաշա։ Սեպտեմբեր 20ին պաշարներու հարիւրաւոր սայլեր Օրխանիէ քաղքէն ճամբայ ելեր էին դէպ ի Պլէվնա. իրենց պաշտպանող ունենալով 10,000 զինուոր. որոց կը հրամայէր Ահմէտ Հիֆզի փաշա։ Զօրավարն Քրիլով փութով դիմեց դէպ ի Դոլնի–Դուբնիք ուր հանդիպեցաւ Ահմէտ Հիֆզի փաշայի գունդերուն. երեք ժամ կռուեցաւ հետը, բայց կասկածելով ելք մը նաեւ Պլէվնայէն, որով կը բռնուէր երկու կրակի մէջ, յետս նահանջեց. այսպէս զինուորք և սայլք մտան ի Պլէվնա։ Ուրիշ պաշարներ և զինուորք՝ մտուցին դարձեալ Հոկտեմբեր 12ին Օրխանիէի ճամբով, Շէֆքէթ փաշա և Սուլթանին փեսայ՝ Քեազիմ փաշա. որոնք մտցին ի Պլէվնա Օսման փաշայի քով՝ մինչեւ Հոկտեմբեր 20, միաբան խորհրդակցելով պաշար և զինուոր մտցնելու եղանակին վրայ Սոֆիայի և Օրխանիէի ճամբով։ Շէֆքէթ փաշա այս նպատակաւ միշտ գունդերովը պատրաստ պիտի ըլլար յՕրխանիէ։

Կորնի Տուբնիքի պատերազմը։

2. — Ռուսաց շարունակ օգնութիւնք բանակը Հոկտեմբերի վերջերը հասուցեր էին 150,000ի, 558 թնդանօթովք։ Կանչուեր էր Պետերբուրկէն նաեւ կայսերական հեծելագունդը և հրամանատար անուանուեր էր անոնց զօրավարն Գուրգօ, կանչուելով Բալկաններէն, որուն յանդուգն քաջութիւնը յարմար դատուեր էր Սոֆիայի խճուղին Թրքաց ձեռքէն առնելու համար։ Առ այս պէտք էր տիրել նախ Կորնի–Դուբնիքի գիւղին, որ ընդմէջ Պլէվնայի և Օրխանիէի, զօրաւոր դիրք մը եղեր էր Թրքաց, և ուր բանակած էր Ահմէտ Հիֆզի փաշա 7000 պահանորդով։ Կորնի Դուբնիքի կռնակ էին դարձեալ Տէլիշ և Դոլնի Դուբնիք աւանները, զորս ամրացուցեր էին Թուրքերը. և Տէլիշի հարաւակողմը բանակած էր Շէֆքէթ փաշա մօտ 10,000 զինուորօք։ Զօրավարն Գուրգօ Կորնի Դուբնիքի վրայ յարձակած ժամանակ, ուրիշ գունդեր պիտի հսկէին որ օգնութիւնք չհասնին Պլէվնայէն և Դոլնի Դուբնիքէն. և պիտի ջանային կտրելու Թրքաց նահանջը։ Կորնի Դուբնիքի բաղ-

խելու սահմանուած գունդերը երեք սիւն բաժնուած անցան վիդ գետը Հոկտեմբեր 23ի գիշերը. և 24ին առաւօտը Ռուսք հինգ անգամ աւելի զօրօք և 82 թնդանօթով ահաւոր ռմբակոծում մը սկսան գիւղէն դուրս պաշտպանութեանց դէմ. մինչ Տոտլէբէնի պաշարման գունդերը կը ռմբակոծէին զՊլէվնա, Օսման փաշայի ելքի մը արգելք ըլլալու համար։ Ահմէտ Հիֆզի փաշա իր չորս թնդանօթներովը և քաջ պահանորդովը ընդդիմացաւ երկար ատեն և մանաւանդ նահանջ մը կեղծելով դէպ ի միջնաբերդը, ետեւէն ձգեց ռուս գունդերը և ապա յանկարծ դառնալով առատ կրակով մը, սպաննեց հարիւրաւոր անձինք, յորս հազարապետ մը և սպայք. վիրաւորուեցան նաեւ հրամանատար մը, երկու զօրավարք և երկու հազարապետք։ 1877

Գուրգօ զօրավարը դիմեց կուոյ տեղը նոր հրամաններ տալու. բայց լսեց որ ջախջախուեր էր նաեւ Տէլիշի վրայ ղրկուած սիւնակը։

Այդ սիւնակը որուն կը հրամայէր զօրավարն Զէլէչէվ 2000 հոգւով ժամը 9 1/2ին հասեր էր ի Տէլիշ և ժամը 10ին յանձկեր էր բերդին վրայ, և տիրեր իսկ առաջին պատնէշներուն՝ մեծ կորուստներով։ Եւ երբ կը համարէր տիրելու նոյն իսկ բերդին, յանկարծ հասան պատերազմին տեղ թուրք թարմ գունդեր, որոնք կերպարանափոխ ըրին պատերազմը։ Ռուս հրամանատարը տեսնելով որ անկարելի էր տիրել բերդին, հրամայեց սիւնակին նահանջելու, իր անձանց կէսը թողլով վիրաւոր կամ մեռեալ պատնիշաց ներքեւ։ Այն ատեն պատահեցան այն ահռելի անգթութիւնք, որոնք զզուանօք լցուցին բոլոր Եւրոպա, ընդդէմ թուրք բանակին անկանոն զինուորաց[1]։ Պատնիշաց ներքեւ բաց ի հարիւրաւոր մեռեալներու, կային 300 չափ վիրաւորք։ Տէլիշի պատերազմը։

1. Երկու անգղիացի բժիշկք որ Տէլիշի պահանորդաց մէջ էին, քիչ որ վերջը երբ գերի եղան պահանորդին հետ, վկայեցին այս անգթութեանց կատարուելուն։

թուրք զինուորք յարձակեցան վրանին և անգթաբար տանջելով կտրեցին անոնց քիթ, ականջ. զոմանս կապեցին և կուրծքերնուն վրայ կրակ վառեցին։

Զօրավարն Գուրգօ այս պարտութեան լրոյն վրայ աճապարեց ընդհանուր յարձակումը Կորնի Դուրնիքի վրայ. խիթալով որ Շէֆքէթ փաշա կրնար հասնիլ Ռադոմիրցայի ճամբով։ Ժամը 3ին կէսօրէն վերջը սկսաւ ընդհանուր յարձակումը։ Ռուսք թափով մը սկսան կռուիլ պատնէշներուն ներքեւ, որոց եզերքը եղած փոսերը կը լեցուէին իրենց դիակներով։ Կայսերական պահանորդք իրենց գալուստը ի Պետերբուրգէ յաղթութեամբ մը կ'ուզէին տօնախմբել և աննկարագրելի էր իրենց թափը և մղումը։ Մութը սկսաւ կոխել, թրքաց զինուորք սկսան պակսիլ. իրենց թնթանոդք ալ չէին ծառայեր թշնամեաց մօտենալովը և պակսեր էին հրացանի մթերք։ Գուրգօ վերջին յանձակում մ'ալ հրամայեց և կայսերական պահանորդք մոլեգին թափով մտան բերդը, ուր գերի մնաց Ահմէտ Հիֆզի փաշա 2000 զինուորօք։ Զօրավարն Գուրգօ որ գրեթէ յուսահատած կը մեկնէր պատնէշներէն, դարձաւ կրկին յաղթութեան լրոյն վրայ, ուզեց տեսնել զԱհմէտ Հիֆզի փաշա, որ շատ տխուր էր, ձեռք կարկառեց և ըսաւ. «Կը պատուեմ ի ձեզ քաջ հակառակորդ մը»։

Կորնի Դուրնիքի պատերազմին մէջ, թուրքերը կորսընցուցին 3500 զինուորէն աւելի բաց ի 2289 գերիներէ, յորս փաշա մը և 33 սպայք։ Մնացեալ զօրքը ցրուեցաւ և մաս մը ապաւինեցաւ ի Պլէվնա։ Ռուսք կորսնցուցին 3195 անձինք յորս 117 սպայք և զօրավարն Լաւրոֆ։ Վիրաւորուած էին ուրիշ երկու զօրավարք և 14 գնդապետք։ Բայց Կորնի Դուրնիքի առմամբ Պլէվնայէն կը կտրուէր Սոֆիայի ճամբան։ Այսու հանդերձ ի թիկանց թշնամի բանակ չունենալու համար, հարկ էր տիրել Ցէլիշի, ուր Շէֆքէթ փաշա հրամանատար դրած էր Ահմէտ Հիֆզի փաշայի հրամանաց ներքեւ, յանկարծ զինուորականութեան բարձր աստիճաններուն հասած՝ Հակքի փաշայն. զոր զինուորք,

անշուշտ պատճառաւ մը, Սարիոյ Հակքի փաշա կը կոչէին։ Հոկտեմբեր 28ի զօրավարն Գուրգօ հազիւ սկսեր էր ոմբակոծել զՏէլիշ, Հակքի փաշա նուիրակ մը ղրկեց և անձնատուր եղաւ[1]։ Բաշիբոզուքները ամենն ալ փախան։ Օսման փաշա Տէլիշի անպատերազմ անձնատրութեան վրայ մեծապէս զայրացաւ և տագնապեցաւ։ Յորովհետեւ Վիդի հեղեղատէն ունէր տակաւին անցք մը փախստեան դէպ ի Օրխանիէ, հեռագրեց ի Կ. Պոլիս հրաման ուզելով. բայց պատասխան ընդունեցաւ մնալու ի Պլէվնա, ուր զինքը ազատելու սլիոի գային Մէհէմէտ Ալի և Սիւլէյման փաշաներր։

Արդէն զօրավարն Գուրգօ կասկածելով յարձակում մը Բալկաններուն և Վիտինի կողմանէ, զզօրավարն Օրլոֆ գունդով մը ղրկեց Տէղէրէնի վրայ, որ առնուեցաւ գուպարածով մը Նոյեմբեր 1ին։ Զօրավարն Լէոնով որ այնքան լաւ հրամայած էր Հասանքէօյի պատերազմին, Նոյեմբեր 7ին տիրեց Վրացայի։ Կը մնար առնուլ Ռահովայի ճամբան։ Ղրկուեցան ռումանիացի գունդեր, որոց կը հրամայէր հազարապետն Սլանիչէանս, և քաջարար կռուելով միաբան ռուս ուհլաններուն Ռահովայի Թուրք պահանորդին դէմ, տիրեցին քաղքին. գոցելով և այս ճամբան։

3. - Այսպէս զօրավարն Տոտլէբէն յետ կտրելու Պլէվնայի ամեն հաղորդակցութիւնքը հեռաւորաց հետ, սաստկացուց Պլէվնայի պաշարումը։ Ամբողջ պաշարման շրջանակին երկայնութիւնը 75 քիլոմէդր էր, բաժնուած վեց մասի։ Առաջին մասը՝ Բիվորարէ մինչեւ Կրէվիցա բերդը, յանձնուած էր ռումանիացի գունդերուն, որոց կը հրամայէր զօրավարն Զէռնատ, Ռումանիոյ պատերազմի պաշտօնեայն։ Երկրորդ մասին՝ կը հրամայէր

Պլէվնա պաշարուած։

1. Հակքի փաշա, գրեթէ ուրախ ներկայացաւ ռուս բանակին. Գուրգօ մտածեց գերի բռնուած զինուորքը, որոնք քանի մը հազար կային, ղրկել առ Օսման փաշա, այսպէս քաղքին պաշարը նուազեցնելու համար։ Սակայն Օսման փաշա, կ'ըսեն, պատասխան ղրկած ըլլայ որ թէ այդ չկռուող զինուորք գան, հրացանի կը բռնէ. իսկ զՀակքի պիտի կախէ։ Գուրգօ չղրկեց։

զօրավարն Քրիւտնէր. Երրորդին զօրավարն Մոտոֆ. Չորրորդին՝ զօրավարն Փատալէյ։ Հինգերորդին զօրաւարն Կանէցքի և Վեցերորդին՝ զօրավարն Աքորէլէֆ՝ որդի։ Իւրաքանչիւր հրամանատար իր մասը կազմեր էր պատնէշներով և հողակոյտներով, որոց մէջ դրուած էին թնդանօթք։ Իումանիացիք որ Առաջին մասը կը կազմէին, վստահ երբեմն Կրէվիցայի վրայ ունեցած յաջողութեամբ մը, փառաց անուան տենչանօք, Սեպտեմբեր 11ին Պլէվնայի վրայ առանձին յարձակում մը փորձեցին. սակայն Օսման փաշայի հրացանաձիգք յանկարծ ճամբուն գլուխը երեւնալով, ահաւոր կրակով մը վանեցին զիրենք և այն եռանդուն երիտասարդք դարձան գլխիկոր իրենց դիրքերը, թողլով պարսպաց ներքեւ հազարէն աւելի մեռեալք. յորս և Գանէքօ զնդապետը և շատ սպայք։ Բայց յաջող գտնուեցաւ զօրավարն Աքորէլէֆ, որ Նոյեմբեր 11ին յարձակմամբ տիրեց Վիդ գետին բարձունքներուն, որուն մէկ հեղեղատը կրնար ճամբու տեղ ծառայել Օսման փաշայի դէպ ի Օրխանիէ։ Աքորէլէֆ յարձակման միջոց թէպէտ վիրաւորուած, շարունակեր էր հրամայելու։ Օսման փաշա որուն միակ յոյսն էր այդ անցքը, վեց անգամ դուրս ելաւ կրկին ձեռք բերելու զայն. բայց չկրցաւ վանել զԱքորէլէֆ, որ Նոյեմբեր 15ի կուոյ մը մէջ ուրիշ վերք մ'ալ առնլով, շարունակեց հրամայելու. և տեղաւորուեցաւ հրանօթներով Վիդի բարձունքներուն վրայ։ Այսպէս Պլէվնա բոլորովին պաշարուած կը մնար, առանց ո՛ր և է հաղորդակցութեան կամ լրոյ դրսէն։ Միայն զօրավարն Գուրգօ այլ և այլ միջոցներով հասցուց Օսման փաշայի ձեռքը· Թայմս և Դէյլի Նիւս լրագրաց այն թիւերը, որոնք կը խօսէին Մուխթար փաշայի պարտութեանց և կամ Սիւլէյման փաշայի անյաջողութեանց վրայ։ Հոկտեմբեր 23ին կէսօրէն վերջը սկսաւ ոմբակոծումը որ անկէ վերջը ամեն օր շարունակեց կանոնաւորապէս առաւօտ, կէսօր, երեկոյ։

Օսման փաշա կը վազէր ամեն կողմ տեսնելու եղած փնասքը և անմիջապէս դարման տանելու։ Իրեն հետ

ունէր միշտ նաեւ զԹէվֆիք փաշա։ Պլէվնայի պաշարման հինգ ամիսներուն մէջ, Օսման փաշա միայն երեք անգամ քաղաք իջաւ, և այն՝ պաշտպանութեանց խնդրով մը։ Երբ քաղքին մէջ Ռուսաց ռմբակոծումէն սկսան աւերմունքները և հրդեհները, բուլղար ժողովուրդը ձգեց իր տուները և քաշուեցաւ եկեղեցիներուն մէջ, զորս կը զանազանէր և կը յարգէր թշնամին և հոն փոխադրեց իր հիւանդները և վիրաւորները։ Պատերազմի նեղութեանց վրայ աւելցաւ նաեւ սաստիկ ձմեռ մը. բնաւ փայտ չկար. քաղքին չորս կողմը կը պտըտէին և կը փորէին հողը, արմատներ հանել, վառելու համար. պակսեցաւ քիչ քիչ նաեւ ուտելիքը և եղածին ալ գինը բարձրացաւ։ Քրիստոնեայ ժողովուրդը թէպէտ անհամբեր կը սպասէր Ռուսաց, բայց և չէր կարող չ'ըմբռնել և չյարգել Օսման փաշայի կացութիւնը. հարկ էր սպասել վերջին կէտին. և Օսման փաշա միշտ կը յուսար որ այդ կէտը չհասած, անշուշտ պիտի գային զինքը ազատելու կամ Մէհէմէտ Ալի փաշա կամ Սիւլէյման փաշա և կամ միաբան. կը համարէր որ անշուշտ ի Կ. Պոլիս կը մտածուէր և կը հոգացուէր օր մը առաջ հասցնելու այս օգնութիւնը։

Մէհէմէտ Ալի դէպ ի Օրխանիէ։

4. — Սակայն ի Կ. Պոլիս չկար կանխատես եռագութեամբ գործելու զինուորական կարողութիւն մը։ Երբ հասան ի մայրաքաղաքը Կորնի Դուբնիքի և Տէլիշի պարտութեանց լուրերը, վարչութիւնը այն ատեն միայն հրաման ղրկեր էր առ Մէհէմէտ Ալի փաշա՝ դառնալու Ռոմնիոյ և Հէրցէգի ճամբէն, և փութով չուելու Օրխանիէ, ուր ապաւիներ էր նաեւ Շէֆքէթ փաշա։ Մէհէմէտ Ալի Նոյեմբեր 5ին հասաւ ի Սոֆիա, ջանաց կազմելու մեծ բանակ մը, բայց չկրցաւ 25,000էն աւելի զինուոր ժողվելու. որոնցմով մօտեցաւ Օրխանիէի։

Ռուս ընդհանուր հրամանատարութիւնը տագնապեցաւ Պլէվնայէ 75 քիլոմէդր հեռու բազմաթիւ բանակ մը ձեւանալուն վրայ։ Անմիջապէս այլ և այլ գունդերէ նոր զօրաբաժին մը կազմեց զոր յանձնեց Գուրգօ զօրավարին և որուն նպատակը պիտի ըլլար փճացնելու

Օրխանիէի բանակը և առնուլ զՕրխանիէ։ Զօրավարն Գուրգո հասաւ Էարլոնիցա և իմացաւ որ Թուրք բանակին յառաջապահը, որուն կը հրամայէր Շաքիր փաշա, կը գտնուէր ի Պրէվէզ։ Կար ուրիշ բանակ մը 10 քիլոմէդր հեռու Էդրոպոլ. նոր, գեղեցիկ և վաճառաշահ քաղաք մը, որ Բալկաններու բանալի համարուած է, զոր շէնցուց Միտհատ փաշա իր կուսալակութեան ժամանակ։ Մօտ էր նաեւ հեծելազօր գունդ մը, որուն կը հրամայէր Մուսդաֆա փաշա։ Զօրավարն Գուրգո իր զօրաբաժինը երկու սիւն բաժնեց, որոց մին յանձնեց զօրավար կոմս Շուվալոֆի որ պիտի տիրէր Պրէվէզի և միւսը Դանդրվիլ զօրավարին որ նպատակ ունէր տիրելու Էդրոպոլի։ Միանգամայն ուրիշ գունդեր ալ Ռաւիս և Այմոնովսքի զօրավարաց առաջնորդութեամբ պիտի օգնէին այդ բաղխումներուն։ Ռուսք Նոյեմբեր 22ին հասան Պրէվէզի դիմաց, որուն տիրեցին յարձակմամբ, արդէն պահանորդը մեկնած ըլլալով։ Սակայն հեծելազօրը Սքրիվէնայի քով մեծապէս հարուածուեցաւ Թուրք գունդերէ և կորսնցուց 14 սպայք և 50էն աւելի զինուորք. ունեցած հրանօթներէն մաս մ'ալ գլորեցուց անդունդներու մէջ, թշնամեաց չձգելու համար։

Իսկ զօրավարն Դանդրվիլ Էդրոպոլի վրայ դիմած էր երկու սիւնակով, որոց միոյն կը հրամայէր Օլտէնբուրկ իշխանը և միւսոյն Ռիտցէվսքի հազարապետը։ Ասոնք Նոյեմբեր 23ին բաղխեցին քաղաքը և երկրորդ օրը Թուրքերը քաշուած ըլլալով, մտան ներս։ Հասաւ և զօրավարն Գուրգո և քրիստոնեայ ժողովուրդը խնդալից ընդունելութիւն ըրաւ Ռուսաց։

Իսկ Շաքիր փաշայի բանակը քաշուեցաւ դէպ ի Բալկանները՝ Բաբաքոնաքի կրճին մուտքը, Ռուսաց դէպ ի Սոֆիա ընթացքը խափանելու համար։ Ռուսք յառաջելով բռնեցին զՕրխանիէ, ուր գտան ամբաւ պաշար և մթերք. որոնք Օսման փաշայի պիտի ղրկուէին։

Միւէյման փաշա դէպ ի Պլէվնա։

5. — Իսկ Միւէյման փաշա որ Շումլայի բանակին հրամանատար եղած ժամանակ ձեռքին տակ ունէր

80,000 զինուոր, որոց կը հրամայէին Ասաֆ և Ֆուատ փաշաները, Պլէվնայի օգնութեան դիմելէ աւելի, զբաղեցաւ Լոմի վրայ գուպարածներով, որոց մէկուն մէջ սպաննուեցաւ 29ամեայ դուքսն Սերգէյ Լէօխտէմբէրկի, քեռորդի Ալեքսանդր Բ Զարին։ Նոյեմբերի մէջ երբ արդէն ի Պլէվնա ամենաքիչ պաշար մնացեր էր, այն ատեն Բ. Դուռը վճռեց հրամայելու Սիւլէյման փաշայի, փութով օգնութեան դիմելու Օսման փաշայի, և զինքը ազատելու որոգայթէն, որուն մէջ ինքը ձգեր էր։ Սիւլէյման փաշա յառաջեց դէպ ի Պլէվնա. բայց ոչ այն երազութեամբ որ կարեւոր էր. զբաղեցաւ դարձեալ կողմնակի կռիւներով։ Ըսուած է որ փաշաները նախանձով մը կը խորշէին մէկմէկու ձեռք տալէ, որ պատճառ եղաւ ամենուն ալ յաղթուելուն։ Նոյեմբեր 26ին Ասաֆ փաշա անցաւ Լոմը 30,000 զինուորօք, երեք սիւն բաժնած. Աջին կը հրամայէր Սէլիմ փաշա որ պիտի բաղխէր զՊիրգոս. Իբրահիմ փաշա կը հրամայէր կեդրոնին և պիտի տիրէր Մէչքայի. իսկ Զախը Օսման բէյ հազարապետին հրամանաց ներքեւ պիտի բաղխէր զՏրէստէնիք։ Պահեստի գունդերուն կը հրամայէր Հասան փաշա։ Այս գործողութիւնները կարեւոր համարած էր Սիւլէյման փաշա, ճամբայ բանալու համար։

Նախ Սէլիմ փաշա բուռն յարձակմամբ մը տիրեց Պիրգոսի. ապա յառաջեց դէպ ի Մէչքա։ Ռուս բանակը որ Մէչքայի քով կը գտնուէր ընդ հրամանատարութեամբ Զիլիատէվ զօրավարին, վանեց բաղխումը, բայց թողուց զՄէչքա, ուր մնաւ թշնամին։ Նոր օգնութիւնք հասան Ռուսաց, որոնք սուինի կռուով վանեցին զԹուրքս թէ Պիրգոսէ և թէ Մէչքայէ, և դիմեցին օգնելու ռուս գունդերուն ի Տրէստէնիք, ուր յաջողութիւն ունեցեր էր Օսման բէյ։ Ռուսք և Թուրքերը հաւասար քաջութեամբ կռուեցան. հասաւ երեկոյ և Ասաֆ փաշա անխոհեմութիւն համարելով մնալ Ռուսաց նոր հասած թարմ գունդերուն առջեւ, հրամայեց զօրաց կրկին անցնելու Լոմը։ Նոյն օրը Թուրքերը կորսնցուցեր էին 1700 հոգի. Ռուսք 700 անձինք։

Մէչքայի պատերազմը։

Այս ընդհարումները պատճառ տուին Միւլէյման փաշայի յանդուգն գաղափար մը յղանալու Պլէվնայի օգնելու համար։ Ցուսաց ջարդելու Լէլէնա քաղքին ռուս գունդերը, հանելի Տիրնովա, բռնադատել զԻսադէցքի թողուլ զՉրպգա, հոն եղած զինուորքն ալ առնուլ միարան, փոխել յանկարծ պատերազմին ճակատը. որով իր վրայ դարձնել ռուս ընդհանուր հրամանատարութեան ուշադրութիւնը. և պատեհ տալ Օսման փաշայի բուռն ելք մը Պլէվնայէն։ Լուր ղրկեց նաեւ Մէհմէտ Ալիի որ ինքն ալ բաղխէ զԳուրգօ և յառաջէ Լովացի կողմանէ։ Եթէ այս ծրագիրը ունէր յաջողութեան մը հաւանականութիւն, բայց շատ ուշ էր. որովհետեւ Պլէվնա հազիւ քանի մը օրուան ուտելիք ունէր։

Լէլէնայի քով յաղթութիւնը։

6. — Միւլէյման փաշա, իր ծրագրին համեմատ Դեկտեմբեր 3ին, 20,000 զինուորօք, 8000 չէրքէզնեերով և բաշիբոզուքներով և 20 թնդանօթովք, յանկարծ հասաւ յԱհմէտլի՝ Լէլէնայէ 17 քիլոմէդր հեռու։ Դոմբրովսքի զօրավարը, հրամանատար Լէլէնայի, փութով լուր ղրկեց առ զօրավարն Սվիատոպոլսք Միրսքի հրամանատար իններորդ զօրաբաժնին, օգնութիւնք ղրկելու։ Թուրքերը Դեկտեմբեր 4ին սկսան ոմբակոծել ռուս դիրքերը։ Դոմբրովսքի բազմաթիւ գունդերով քաղքէն ելաւ և յարձակմամբ փորձեց վանել զԹշնամին. բայց շատ անձինք կորսնցուց։ Գրէվէսալ հազարապետը հեծելոց ամբողջ ջոկատով մը պաշարուեցաւ չէրքէզ ձիաւորներէն. և հազիւ քանի մը հոգի ապրեցան վիրաւորք, յորս նոյն ինքը հազարապետը։ Ռուսք իրենց ամեն դիրքերը կորսնցուցին և Դոմբրովսքի հրամայեց նահանջել դէպ ի քաղաքը։ Այն ատեն Միւլէյման փաշա, որ այս պատերազմին մէջ ցոյց ռազմագիտական հմուտ ուսումնասիրութիւն մը, պատուիրեց իր Զախ թեւին, մօտենալու Լէլէնայի և բռնելու Լէլէնայէ Տիրնովա գացող ճամբան, և ի յետուստ պաշարելու զՌուսս. այսպէս բաղխելու զԹշնամին և տիրելու Լէլէնայի։ Մոլեգին և աննկարագրելի կռիւ մը ծագեցաւ ընդ մէջ յարձակողաց և պաշտպանողաց։ Երկու կողմանէ սրով և

սուինով իրբեւ ի սպանդանոցի, այնպէս մէկզմէկ կը մորթէին. անհամար ծաղիկ կեանքեր, յոյս բազմաթիւ ընտանիքներու, հոն դիակնացեալ կը փոուէին։ Ժամը երեքին թուրքերը մտան Յլէնա. սակայն կուիր փողոցներուն մէջ տեւեց մինչեւ ժամը ութ, յորում չմնաց ոուս մը քաղքին մէջ։ Ազատած զինուորք մեծաւ նեղութեամբ կրցան նահանջել, որովհետեւ չէրբէգ ձիաւորաց գունդ մը զիրենք կը հալածէր։ Զօրավարն Դոմբրովսքի հեծելոց վաշտ մը ղրկեց, որոնք պաշտպանեցին նահանջը և ապրողները ապաւինեցան ի Լեազովց։

Ռուսք նոյն օրը կորսնցուցին 1807 զինուոր. 87 սպայ, 200 ձի, 11 թնդանօթ և շատ մը պատերազմական մթերք։ Միւլէյման փաշայի կորուստը համարուեցաւ ընդ մեռեալ և ընդ վիրաւոր 2000 անձինք. Յլէնայի յաղթութիւնը, յետ Պլէվնայի երեք պատերազմներուն, ամբողջ թուրք–ոուս յեւրոպա պատերազմին մէջ ամենէն փայլուն և ռազմագիտական յաղթութիւնն էր։ Սակայն Միւլէյման փաշա չօգտուեցաւ։ Այս յաղթութենէն վերջը, կ'ըսեն ռազմագէտք, պէտք չէր զբաղիլ ուրիշ տեղերու ալ տիրելու համար. պէտք էր ամփոփել ամեն զօրաբաժինները, նոյն իսկ անոնք որ Զրպգա էին, և քալել դէպ ի Պլէվնա։ Ի սկզբան Տիրնովայի վրայ չուելը այդպէս կարծեցնել տուաւ. բայց յանկարծ թողուց այդ ուղղութիւնը և դարձաւ Ջանալու կտրել Զարէվիչի հաղորդակցութիւնը Դանուբէն, և բաղխելու նորէն զՄէչքա։

Մէչքայի երկրորդ պատերազմը։

7. — Այս նպատակաւ զօրաւոր բանակ մը ձեւացուց 40,000 անձանց, զԱսաֆ փաշա ղրկեց հրամանատարութենէն, Նոյեմբեր 26ի նահանջի համար. և տեղը անուանեց զՖազլը փաշա, որ Սոխումքալէի արշաւանքէն դարձեր էր։ Դեկտեմբեր 10ին, թուրք հետեւակը Լոմը անցաւ Զիֆթլիքի և Քրասնոյի վրայէն. նոր գունդեր ալ հասան Ռուսճուքէն. և Միւլէյման փաշա անձամբ առաւ հրամանատարութիւնը։ Դեկտեմբեր 12ին առաւօտ թուրք բանակը սկսաւ ոմբակոծել Մէչքայի մօտ Ռուսաց բանակը։ Պատերազմին տեղը հա-

սաւ մեծ դուքսն Վլադիմիր, ինքնին կառավարելու զորութիւնները. և Զարէվիչը մօտ բարձունքներէն կը դիտէր և կը հսկէր ամենայնի։ Վլադիմիր մեծ դուքը սահմանեց թուրք գունդերուն յարձակման ժամանակ չթողուլ. և հրամայեց որ ռուս գունդերը սկսին յարձակումը։ Սակայն թուրքերը այս բաղխման այնպիսի կրակով մը պատասխանեցին, որ Վլադիմիրի մօտն իսկ ինկան հարուածներէ՝ իր սպայիցմէ երկուքը։ Այսու հանդերձ Ռուսք չթողուցին որ թուրքերը կարենան Մէչքայի ժայռերուն վրայ ելլել. և զանոնք միշտ վանելով դէպ ի ստոր եղած հեղեղատը, նախ զարհուրելի կրակով, ապա սուինի յարձակմամբ մեծապէս կոտորեցին։ Այն ատեն թուրքերը սկսան վարանիլ. վախը տիրեց մնացողաց, որոնք սկսան փախչիլ և իրենց փախուստը՝ կը հալածէր նաեւ Նիկոպոլէն մարտանաւով մը, մեծ դուքսն Ալէքսիս, երրորդ որդի Աղեքսանդր Զարին։ Սիւլէյման փաշա այս պատերազմով բաց ի 3000 զինուորաց կորստէ ընդ մեռեալ և ընդ վիրաւոր, կը կորսնցնէր նաեւ իր շարժմանց նպատակը. անկէ վերջը անկարելի էր իրեն չուել ազատելու զՊլէվնա։

Ի Պլէվնա պաշարին սպառումը։

8. — Նոյեմբերի առաջին օրերուն մէջ մեծ դուքսն Նիկոլա գուշակելով պաշարուց գրեթէ լմննալը ի Պլէվնա, նամակ մը գրեց առ Օսման փաշա և զայն ղրկեց երեք թուրք գերիներու ձեռքով, առաջարկելով Պլէվնայի անձնատուութիւնը դիւանական բանակցութեամբ։ Օսման փաշա ծանոյց որ չէր ըլլար անձնատուր[1]։ Փիչ

1. «Խուս սպայակոյտը միշտ զարմացած էր որ Նորին Վսեմութիւն Օսման փաշա երբէք անձամբ չ'ընդունեցաւ Կրէվիցայէ դրկուած պատգամաւորներ։ Եւ յիրաւի երկու բանակաց ամեն ինդրոց մէջ թուրք սպարապետը երբէք ուղղակի չմիջամտեց։ Որ մը քիչ մնաց պիտի պատահէր այդ Պորագիմի ընդհանուր հրամանատարութիւնը հրաման ինդրեց Օսման փաշայէ թաղելու 1500 մեռեալքը, որոնք երեք շաբաթէ ի վեր ընդ մէջ Կրէվիցայի և Թրքաց առաջին բերդին, մնացեր էին. և այս առթիւ ուզեց բանակցութիւն մը։ Նորին Վսեմութիւնը Օսման փաշա իր ձիուն թամբը դնել տուաւ հագաւ ամենէն աւելի շքեղ համազգեստը. դրաւ ձեռնոցները և Կրէվիցա

որ վերջը զորավարն Դուրգօ իրեն ղրկեց Թեյմզ լրագրին կարսի առման թիւերը. ծրարին վրայ գրելով «Զօրավարն Դուրգօ առ Նորին Վսեմութիւն, Օսման փաշա»։ Արիասիրտ փաշայն պատասխան մը չտուաւ։ Նոյեմբեր 13ին Մեծ Դուքսը ուրիշ պատգամաւոր մը ղրկեց, բացատրելով որ արդէն ամեն կողմանէ պաշարուած, կը խնդրէր «յանուն մարդկութեան ետ կենալ ընդդիմութենէ և արիւնհեղութենէ»։ Օսման փաշա պատասխանեց անմիջապէս «կ՚ըմբռնեմ այո՛ որ մարդասիրական զգացմունքէ կը գրէք զայդ. բայց կը համարիմ որ իմ պաշտամանս և պարտուցս հրամայած ընդդիմութեան, դեռ ամեն միջոցք չեն սպառած»։ Անցան քանի մը օր եւս. Օսման փաշա յուսացած ոչ մի օգնութիւնը ունեցաւ Մէհէմէտ Ալի և Սիւլէյման փաշաներէ. և պաշարը կը լմնար։ Այն ատեն Նոյեմբեր 19ին, պատգամաւոր ինքը ղրկեց յանձն առնլով թողուլ զՊլէվնա, միայն թէ սպայք և զինուորք առանց զինուց քաշուին ի Սոֆիա կամ ի Վիտին։ Անմիջապէս ռուս հրամանատարութիւնը ժողովքի գումարուեցաւ. բայց չ՚ընդունուեցան Օսման փաշայի առաջարկութիւնքը. որովհետեւ գիտէր պաշարին լմնցած ըլլալը, լսած ըլլալով թուրք փախստականներէ որ օրը 50 կրամ հաց կը տրուէր զինուորի, որով անհրաժեշտ մօտալուտ էր անձնատրութիւնը։ Սակայն ի նշան յարգանաց առ դիւցազնական պաշտպանողն Պլէվնայի, պատգամաւորին հետ ղրկեցին նաեւ գումարմանը մէջ եղած պատճառաբանութիւնք։ Օսման փաշա որոշեց դիմանալ մինչեւ հացի վերջին պատառը։

Բայց որովհետեւ Օսման փաշայի արիութենէն

մեկնելու վրայ էր, յանկարծ մտքէն բան մը անցաւ։ Իջաւ ձիէն, մտաւ վրանին տակ և իրեն տեղ ղրկեց զԹէվֆիք բէյ (սպայակուտին գլուխը)։ Ն. Վ. Օսման փաշա մտածեց որ թէ յանկարծ առանձին տեսակցութիւն մը ունենար թշնամի զօրավարի մը հետ, ի Սատամպոլ պիտի կարծուէր, որ չահելու կամ կաշառակերութեան համար էր։ Զուզեց կասկածի անդամ տեղի տալ»։ Օլիվիէ Պէհ. Օրագիր պաշարուածի մը։ (Այս Օլիվիէ Պէն Գաղղիոյ 1871ի Հասարակութեան անդամներէն էր. ի Պլէվնա թղթակից Բիւէ Պիւրլիկ լրագրին։

կրնար վերջին գերագոյն փորձ մ'ալ սպասուիլ. զօրավարն Տոտլէբէն, ոչ միայն կանխաւ ամեն հրահանգներ տուած էր, այլ և պատերազմական փորձ մը կատարել տուեր էր, թէ յանկարծ Օսման փաշա ելք մը փորձէր։ Դեկտեմբեր 9ին բուլղար մը փախչելով Պլէվնայէ, իմացուց Կարոլ իշխանին որ Թուրք բանակը կը պատրաստուէր վերջին ճիգով մը դուրս ելլել քաղքէն և փորձել կտրել անցնելու ռուս բանակը։ Զօրավարն Տոտլէբէն այլ և այլ բացատրութիւններէ գուշակեց որ Օսման փաշա այս ելքը պիտի փորձէր Կանէցքի զօրավարին պատկանող մասէն. և անմիջապէս հեռագրեց պէտք եղած հրամանները։ Զօրավար Կանէցքիի ամբողջ զօրաբաժինը նոյն գիշերը անցուց յարթնութեան. և յիրաւի կը լսուէր ի Պլէվնա գունդերու և սայլերու դղորդմը։ Առաւօտեան ձմեռնային ցուրտ և թանձր մառախուղը ընդերկար ծածկեց Ռուսաց տեսութենէն Թրքաց շարժումները։ Երբ ժամը 8ին փարատեցաւ քիչ մը մռայլը, այն ատեն տեսնուեցաւ լայնատարը սեւ գիծ մը, որ Պլէվնայի պատուարներէն դուրս, կը յառաջէր դէպ ի Ռուսաց պատնէշները։

Օսման փաշա իր 40,000 զինուորքը երկու մասի բաժնած էր, 20,000 զինուոր որոց կ'առաջնորդէր ինքը, խստերախ ձիու մը վրայ, ընծայ Սուլթանին, պիտի յառաջէր ռուս պատնէշները, զայն պիտի բաղխէր, և ճեղքելով պիտի անցնէր։ Ետեւէն կուգային 500 պաշարարերձ սայլեր և ապա Պլէվնայի Թուրք բնակչաց հարիւրաւոր սայլեր, կառքեր։ Ուրիշ 20,000 զինուորք Վիտի վրայ պիտի կենային Ատիլ փաշայի հրամանին ներքեւ և պիտի յառաջէին իր ետեւէն հիշդ երկու ժամ վերջը։

Օսման փաշայի ելքը։

9. — Զօրավարն Կանէցքի Թուրք զօրաց յայտնուելուն, անմիջապէս նշան տուաւ հրանօթներուն և հրացաններուն կրակ թափելու։ Թուրք զինուորը այն ահաւոր կրակին ներքեւ որ մահ կը փռէր ամեն կողմ, յառաջեցին հրացաններին ձեռքերնին, չորս քիլոմէդր տեղ. և ապա հրաման ընդունեցան յարձակելու առաջին կարգի

պատնէշներուն վրայ, զորս կը պաշտպանէր սիբերեան գունդը. որ մեծաւ մասամբ ինկաւ հոն։ Ժամը 8 ½ էր և Թուրք զինուորը տիրեցին առաջին հողաբլուրներուն և Թնդանօթներուն. և յառաջեցին նոյնպէս անխռով դէպ ի երկրորդ կարգ պատնէշները։ Բայց Կանէցքի զօրաբաժնին ետեւէ ետեւ հասած օգնութիւնք, փոխեցին պատերազմին կերպարանքը, և նոր գունդերը յարձակելով Թուրքերուն տիրած դրից վրայ, զիրենք վանեցին. և առին նորէն սիբերեան գունդին Թնդանօթները։ Թրքայ ետ վանուելով, պատերազմը կտոր մը ժամանակ կեցաւ. երկու բանակք մէկմէկէ 300 մէղր հեռու կեցեր էին։ Օսման փաշա Թարմ գունդերուն պէտք ունէր։ Այն ատեն զգաց, ինչպէս ինքը յետոյ ըսած է, իր վրիպակ պատուէրը առ Վիտի վրայ եղած 20,000 զօրքերը. որոնք պէտք էին մեկնիլ ոչ երկու, այլ մէկ ժամ վերը։ Օսման փաշա անհամբեր կը սպասէր ժամացոյցը ձեռքը, երբ յանկարծ գնդակ մը գլորեց դիակնացեալ իր ձին և ուրիշ գնդակ մը անցաւ իր ձախ ոլորքը մէկ կողմանէ միւս կողմը։ Իր գետին ինկնալուն վրայ, անմիջապէս լուր տարածուեցաւ որ Օսման փաշա մահացու վիրաւորուեր է. Թէպէտ վէրքը ծանր չէր։ Սակայն զարհուրելի երկիւղ մը ծագեցաւ Թուրք գունդերուն մէջ, որոնք ետ քաշուեցան իրենց դիրքերէն և ամփոփուեցան։ Կանէցքիի բանակը օգտուելով այս շփոթէն, սկսաւ յարձակողականը։ Նոյն միջոցին զօրավարքն Ֆոտոֆ, բարոն Ֆրիւտնէր և Ֆատալէյ, զօրավարն Շնիտնիքով և ռումանիացի զօրավարն Զէռնատ, առանց մեծ ընդդիմութեան կը տիրէին արեւելեան, հիւսիսային և արեւմտեան ամրոցներուն։ Մեծ Դուքսն Նիկոլա որ հանդիսատես էր ամեն գործողութեանց, լուր ղրկած էր ի Կորնի Շղուտէն առ Ալեքսանդր կայսրը որ փութացեր էր գալու. և Իատիսէվոյ գիւղի մօտ լեռնէ մը կը դիտէր իր զօրաց յառաջելը և ապա անպատասխան Թողուած Պլէվնա՝ յանկարծական ստեղծուած, հոյակապ բերդաքաղաքը, որ իր անկմամբը հանդերձ, մեծ անուն կը Թողուր Զինուորական պատ-

Վիրաւորու

մութեան մէջ, մեծ պատիւ բերելով զայն ստեղծող և պաշտպանող Օսման փաշայի, իր սպայակուտին և բոլոր զինուորաց։ Բերդերուն մէջ մնացած սակաւաթիւ զինուորք, անօգուտ տեսնելով կռուիլը, ամենն ալ անձնատուր եղեր էին։

Օսման փաշայի և բանակին անձնատուր ըլլալը։

10. — Ժամը կէսօրուան մէկն էր և Թուրք բանակը չէր կրցած ճամբայ մը բանալ Թշնամին ճեղքելով. իր ետեւ առնուած էր Պլէվնա՝, առնուած էին բոլոր շրջակայ բերդերը, մղուեր էր Վիտի եզերքը, կռուելով անյարմար տեղւոյ մը վրայ. և իր սպարապետը վիրաւորուած էր։ Այն ատեն միայն Օսման փաշա, ընդդէմ մարդկութեան համարեցաւ արիւնահեղութիւնը, քանի որ չկար նպատակ մը, չկար յոյս մը. ոչ իսկ միջոց կռուելու և այն ատեն հրամայեց պարզել բանակին վրայ սպիտակ դրօշը, զոր ողջունեցին հեռուանց բիւրաւոր ռուս զօրաց կեցցէներ. և դադրեցան հրացանի հարուածք։ Թուրք պատգամաւոր սպայ մը յառաջեց դէպ ի ռուս բանակը և աչքերը կապուած տարուեցաւ առ Կանէցքի զօրավարը։ Այս Թղթով մը առ Օսման փաշա խնդրեց ղրկել այնպիսի անձ մը որ «զՁեզ ներկայացնէ. որովհետեւ, կ'ըսէր, գիտենք Ձեր վիրաւորուած ըլլալը»։ Օսման փաշա ղրկեց սպայակուտի գլուխ՝ Թէվֆիք փաշա, որ վշտացեալ կերպով ծանոյց առ Կանէցքի Օսման փաշայի վիրաւորուած ըլլալը և խնդրեց բարձրաստիճան սպայ մը, անձնատրութեան վրայ միաբան Օսման փաշայի խօսելու համար։

Զօրավարն Կանէցքի անմիջապէս ղրկեց զԱդրուքով զօրավարը, որ գտաւ զՕսման փաշա փոքր տան խեղճ սենեկի մը մէջ, ընկողմանեալ անկողնոյ վրայ, ուր զինուորական ծեր վիրաբոյժ մը՝ վէրքը կը կապէր. սենեկին շուրջը լուռ և տխուր շարուած էին Ադիլ փաշա, Թէվֆիք փաշա, Ռաֆիֆ, Հիւսէյին, Յատրգ, Լդէմ փաշայք և ուրիշ բարձրաստիճան սպայք։ Ռուս զօրավարը ի պատիւ ընդհանուր հրամանատար Օսման փաշայի, խօսեցաւ յոտնկայս։ Նախ Կանէցքի զօրավարին կողմանէ յայտնեց հիացումը այսքան արի և

փայլուն յարձակման համար, յետոյ ցաւը՝ վիրաւորուելուն պատճառաւ. միանգամայն Նիկոլա Մեծ Դրքսին հրամանը, որ անձնատրութիւնը կ՚ընդունէր միայն անպայմանաւ։ Օսման փաշա տխուր, գլխիկոր, յետ վայրկեան մը խորհելու և հառաչելու թուրք ճակատագրականութեամբ, իմացուց որ կը հպատակէր Մեծ Դքսին կամաց։ Կէս ժամ վերջը հասաւ և զօրավարն Կանէցքի։ Դեռ այս միջոցին գունդերէն ոմանք կը կռուէին, լուր մը չունենալով անձնատրութեան։ Ռուս զօրավարը յետ յայտնելու իր հիացումը փայլուն ելքին վրայ, խնդրեց որ հրաման ղրկէ զինուորաց դադրիլ կռուելէ։ Այն ատեն Օսման փաշա լուռ և տխուր ակնարկով, հասկցուց Ադիլ փաշայի, տանելու այդ հրամանը. ապա յետ նայելու վայրկեան մը իր սրոյն վրայ, հառաչանօք հանեց զայն իր գօտիէն և յանձնեց Կանէցքի զօրավարին։ Զօրավարն Սդրուքով առաջարկեց առ Օսման փաշա, լաւագոյն դարմանուելու համար, փոխադրուիլ ի Պլէվնա. և անմիջապէս երկձի գեղեցիկ կառաց մէջ ճամբայ ելաւ. քովէն հեծեալ ընկեր ունենալով զՍդրուքով զօրավարը և կառաց ետեւէն ամբողջ իր սպայակոյտը և ռուս ռազմէն սպայք[1]։

Մեծ Դուքսն Նիկոլա յետ շրջելու պատերազմին դիրքերը և ինդակցելու գունդերուն, եկաւ տեսնելու զՕսման փաշա իր խրճթին մէջ. և իմանալով որ մեկներ է դէպ ի Պլէվնա. ինքն ալ ուղեւորեցաւ հոն և ճամբան հանդիպելով, մօտեցաւ անոր կառաց և սեղմեց Օսման փաշայի ձեռքը, ինդակցելով որ Պլէվնայի պաշտպանութիւնը Պատմութեան ամենէն գեղեցիկ էջերէն մէկը պիտի ըլլար։ Զօրավարն Սքոբելէֆ՝ որդի, դիմեր էր տեսնելու զՕսման փաշա, հիացմամբ սեղմեր

---

1. Օսման փաշա երբէք չուզեց յարարերութիւն ունենալ ռումանիացի սպայից հետ, զանոնք ապտամբ նկատելով։ Երբ իշխանն կարող գնաց ձեռքը սեղմելու, Օսման փաշա ընդունեցաւ ցուրտ յարգանօք. մինչ ընտանի կերպ ունէր ռուս սպայից հետ։

էր նորա ձեռքերը, ըսելով քովիններուն որ Օսման փաշա իր յաղթութեանն հանդերձ Պատմութեան մէջ միշտ Ղազի (Յաղթող) պիտի մնար։ Օսման փաշա երկրորդ օրը գնաց առ Աղեքսադր Բ, որ եկած էր է Պլէվնա։ Կայսրը ընդունեցաւ զինքը յարգանօք, նուիրեց իրեն սուրը և հրաման տուաւ կրելու զայն նաեւ Ռուսիոյ մէջ։ Օսման փաշա հինգ օր վերջը Պլէվնայէն մեկնեցաւ ի Բոգոտ, ուսկից հեռագրեց ի Կ. Պոլիս առ քարտուղարն մեծ Վէզիրին, որ ի Պլէվնա պաշարը լմնցած ըլլալով, մտածեր էր ելքով մը փորձել ճամբայ բանալու. բայց չկարենալով յաջողիլ, իր բանակին հետ գերի ինկեր էր և մեծ հոգածութիւն գտեր էր թէ Զարէն և թէ Մեծ Դքսէն։ Սուլթան Աբդիւլ Համիտ՝ Բուգրէշտի անգղիական հիւպատին ձեռքով ղրկեց ողջոյններ և մաղթանքներ առողջութեանը համար, միանգամայն օսմանեան հազար լիրա իբրեւ ուղղոյ ծախք. դարձեալ նուէրներ ըրաւ իր զաւակաց։ Օսման փաշա գրեց առ Սուլթանը իր երախտագիտութիւնը։ Մահառք ոսկի բունով ոսկի տառերով արծաթեայ դափնի պսակ մը նուիրեցին իրեն։ Դեկտեմբեր 16ին Օսման փաշա ձգեց զԲոգոտ և կարմիր խաչի մասնաւոր երկաթուղոյ կառախմբով մը ղրկուեցաւ ի Խարքով[1]։

---

1. Օսման փաշա ի Խարքով բոլոր քաղաքացւոց յարգանաց և հետաքրքրութեան նիւթն եղաւ։ Հոնկէ նամակով մը առ Գոլոս լրագիրը, մերժեց այն ամբաստանութիւնը որ ի Պլէվնա ողջ թաղած ըլլայ 150 ռուս զինուորք։ Զինադադարը կնքուելուն ազատութիւն ստացաւ ռուս պետութենէն դառնալու ի Կ. Պոլիս. ուր շքեղ ընդունելութիւն ըրաւ իրեն Սուլթանը և ժողովուրդը։ Զինքը մինչեւ Տուլմա Բահչէի նաւամատոյցին դիմաց բերաւ ռուս Զարէվնա մարտանաւը։ Անկէ մտաւ շոգեմակոյկ մը Բէոֆ և Թէվֆիք փաշաներուն հետ։ Աբդիւլ Համիդ ընդունեցաւ Պլէվնայի պաշտպանողը մեծապէս յուզեալ և ըսաւ իրեն «Ինչ Օսմանեան զէնքերը փառաւորեցիր և մեր զինուորական պատիւը բարձրացուցիր. Ե՛կ իմ դիւցազնս, ես ուիտ ըրեր էի Աստուծոյ առջեւ, որ զքեզ տեսնելուս աչքերդ համբուրեմ». և համբուրեց Օսման փաշայի աչքերը։ Յետոյ նուիրեց իրեն Օսմանիէի մեծ ժապաւէնը ականակուռ բոլորակով և ոսկեպատեան սուր մը։ Մասխ։ Յետոյ անուանուեցաւ պաշտօնեայ պատերազմի և յանձնուեցաւ իրեն բանակը կարգի դնելը։ Ապա ունեցաւ զանազան բարձր պաշտօններ և ամենէն վերջը հազարապետ Պալատան։ Միշտ մեծ եղաւ իր ազդեցութիւնը Սուլթանին վրայ, որ իրեն փեսայացուց Օսման փաշայի որդւոյ մին։

Պլէվնայի անկմամբ Ռուսաց ձեռքը վերի կ'իյնային 10 փաշայք, 130 բարձրաստիճան սպայք, 2000/ մօտ սպայք և 30,000էն աւելի զինուորք։ Նոյն աւուր մեռելք կը համարուին մօտ 6000 և 4000 վիրաւորք։ Ռուսաց անկեալքն էին 2000է աւելի։ Պլէվնայի մէջ կային միայն գործածելի 77 թնդանօթք. մինչ պաշարող բանակն ունէր 600[1]։

11. — Հազարապետն Պանիուդին հրամանատար անուանուեցաւ Պլէվնայի որ անկէ վերջը պիտի չունենար կարեւորութիւն մը. և բոլոր գերիները Ռուսաստանի այլ և այլ քաղաքներ ցրուեցան։

Ռուս բանակն ի Պլէվնա։

Դեկտեմբեր 11ին հանդիսաւոր գոհաբանական աղօթք կատարուեցան ներկայութեամբ բոլոր բանակին։ Զարը ի տես ամենեցուն գրկուեցաւ և համբուրեց իր եղբայրը մեծ դուքսն Նիկոլա և ձեռքովը դրաւ ա նոր կուրծքին վրայ Ս. Դէորգի Առաջին Կարգի ժապաւէնը։ Նոյն Կարգին երկրորդ աստիճանը շնորհեց Աղեքսանդր Զարէվիչի և ոսկեայ սուր մը իւր միւս զաւակին, Վլադիմիր մեծ դքսին։ Ապա Զարը միաբան Մեծ Դուքս Նիկոլայի և Ռումանիոյ Կարոլ իշխանին, անցաւ ժողովրդեան մէջէն, որ կը գոչէր խնդութեամբ և ծաղիկ կը նետէր. և մտաւ յեկեղեցի ուր կատարուեցան գոհաբանական աղօթքներ։

---

1. Լրագրացմէ ոմանք մինչեւ 400 թնդանօթ գրած են ի Պլէվնա որ չէր կարելի։ Մենք յայտմ հետեւեցանք Ակադեմիական Ընկերութեան պաշտօնական տեղեկագրոյց։

ԳԼՈՒԽ ԻԳ.

ԹՈՒՐՔ ԽՕՍԱՐԱՆԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

1. Օսմանեան երեսփոխանական խօսարանը. — 2. Պաշտօնէից փոփոխութիւնք. — Պետութեան հայ պաշտօնեայք. — 3. Երեսփոխանական ընտրութիւնք երկրորդ շրջանին. — Խօսարանին բացումը Սուլթանէն. — 4. Ոչ քրիստոնեայ ազգաց զինուորագրութեան խնդիրը. — Զինուորագրութեան խնդիրը Հայոց Խառն ժողովոյ մէջ. — 5. Խօսարանին մէջ զինուորական և քաղաքային կացութեան մասին. — 6. Գաւառաց մէջ կեղեքիչ պաշտօնատէրաց նկատմամբ. — 7. Հայ երեսփոխաններուն խնդիրը որ Հայաստանէն հոդ չտրուի Խուսաստանի. — 8. Գաւառաց պաշտօնեաներու ընտրութեան և քննութեան մասին. — 9. Տպագրութեան ազատութեան վրայ. — 10. Պաշտօնարանին հրաժարիլը. — Ահմէտ Վէֆիք փաշա՝ նախագահ պաշտօնարանին. — 11. Խօսարանը ընդդէմ Զէրքէզներուն աւարառութեանց. — 12. Պատերազմին ձախողելու պատասխանատուութեան քննութիւն. — Խօսարանին փակումը։

Օսմանեան երեսփոխանական խօսարանը։

1. — Պատերազմը սկսած ժամանակ, տակաւին բաց էր օսմանեան խօսարանը, որ կը շարունակէր մերթ քանի մը երեսփոխանաց ազատախօս ատենաբանութիւններով և մերթ բռնադատ շողոքորթութիւններով առ բանակը և առ վարչութիւնը։ Պատերազմին յառաջելովը սահմանադրական ազատութիւնք սեղմուեցան, մանաւանդ Ադրտահանի առմանէն վերջը, երբ մայրաքաղաքը պատերազմական վիճակի մէջ դրուեցաւ։ Հետզհետէ աւելցան խստութիւնք։ Լրագիրներու արգիլուեցան՝ խօսարանի բեմախօսութիւնքը տպագրել, պաշ-

տոնական տեղեկագիրը չ'ելած։ Յունիս 7ի հրաման մը պատուիրեց, որ երեսփոխանաց գումարումները անկէ վերջը դռնփակ ըլլան. համարելով այսպէս գոպել և սահմանափակել երեսփոխաններէն ոմանց «համարձակախօսութիւնը» ընդդէմ վարիչներուն, ընդդէմ երկրին բարոյական և նիւթական կացութեան։

Յունիս 9ի գումարման, որ դռնփակ կատարուեցաւ, երեսփոխաններէն ոմանք հաշիւ պահանջեցին Դանձին պաշտօնեայ, Եուսուֆ փաշայէ, որ 600 միլիոն ղուրուշի ներքին փոխառութիւն մը կ'առաջարկէր, առանց խոստովանելու որ Եւրոպիոյ պետութիւնք զայն ժխտեր էին անվստահութեամբ։ Եւ սակայն այդ դրամը սմենակարեւոր էր և հարկ էր քուէարկել։ Վիճաբանութեան ժամանակ գաւառաց երեսփոխանք յաջորդեցին մէկմէկու. և Խարաճեան Դանիէլ էֆէնտի յաջողեցաւ քուէարկել տալ, որ՝ Կարնոյ և Վանայ գաւառներէն չ'ըլլըցուի փոխառութիւն. և այդ դրամին տեղ համարուին բանակին տրուած ցորենոյ և պաշարի մուրհակներ։ Գիտէր Դանիէլ էֆէնտի որ այդ առնելիքները քաշքշուելով երբէք պիտի չվճարուէին կամ առ նուազն կիսով։

Նիստերուն շրջանը աւարտելու համար, դեռ կային տասն գումարումէ աւելի, բայց Յունիս 19ին յանկարծ իմացուց նախագահը որ այն օրուան գումարումը վերջինն էր։ Ազատախօս երեսփոխանք բողոքեցին և դիմեցին առ Սուլթանը, որ դեռ տասն օր ուշացուց խօսարանին փակումը. բայց երկու գումարմունք միայն եղան։

Խօսարանը ցրուելէն առաջ սահմանեց, որ պարապութեան ժամանակ, ըլլայ ի Կ. Պոլիս մնայուն դիւան մը խօսարանական, Ալլահվէրտի Յովհաննէս էֆէնտիի տնօրէնութեան ներքեւ։ Յունիս 28ին Ահմէտ Վէֆիք փաշա ծանոյց ժողովոյն որ կը փակուէր գումարմանց առաջին շրջանը. բայց երեսփոխանք կը մնային իրենց պաշտօնով մինչեւ ցնոր ընտրութիւն՝ որոնք պիտի ըլլային երեք ամիսէն։ Նախագահը յիշեց այս քիչ ժամանակուան մէջ ժողովոյն կատարածները և յուսով յա-

պազային աւելի յառաջադէմ արդիւնքներու, լմցուց իսաքը մաղթանօք մը վասն կենաց Սուլթանին, որուն պատասխանեցին ամէնքը համաձայն. և փակուեցաւ խօսարանին առաջին շրջանը։ Գաւառացի երեսփոխանք գրեթէ ամենն ալ դարձան իրենց երկիրները, ուր մանաւանդ պատերազմը կարեւոր կ'ընէր իրենց ներկայութիւնը։

Պաշտօնէից փոփոխութիւնք։

2. — Պարապութեան միջոց եղան պաշտօնարանական փոփոխութիւնք, խօսարանին նախագահը՝ Ահմէտ Վէֆիք փաշա, Անգղիոյ դրդմամբ, կուսակալ դրկուեցաւ յԱդրիանուպոլիս, ինչպէս տեսանք ուրիշ տեղ. որով խօսարանը նոր նախագահ մը պիտի ընտրէր։ Օգոստոս 30ի պաշտօնարանական փոփոխութեանց ժամանակ Ջամիչ Յովհաննէս էֆէնտի Ճնաց դարձեալ պաշտօնեայ վաճառականութեան և առ ժամս նաեւ Հասարակաց Շինութեանց, որուն փոխան պաշտօնէի էր Գրիգոր էֆէնտի Օտեան, որ քիչ վերջը դառնալով Պարիսէն, ուզեց հրաժարիլ պաշտօնէն. սակայն Աբդիւլ Համիդ չ'ընդունեցաւ հրաժարականը, որով Ճնաց ի պաշտաման։

Պետութեան հայ պաշտօնեայք։

Այս առթիւ արդար պարտք մը կը համարիմ վկայելու որ երբէք հայ ազգը այնքան պաշտօնեայք ունեցած չէ Թուրք սուլթանաց ժամանակ, ինչպէս Աբդիւլ Ազիզի ամբողջ թագաւորութեան և Սուլթան Աբդիւլ Համիտի գակակալութեան առաջին տասնեւ հինգ տարիներուն մէջ։ Պաշտօնարանաց, դեսպանատանց, հիւպատոսարանաց, քաղաքական պաշտամանց մէջ, միշտ անհամեմատ բազմաթիւ էր հայութիւնը։ Պատմութեանս սահմանափակ ծրագրէն դուրս կ'ելլէի, թէ ուզէի յիշել նոյն իսկ ամենէն նշանաւորքը պետական և քաղաքական խորհրդոց մէջ, բայց և չեմ կրնար լռել Միհրան բէյի, Աբրահամ փաշայի, Մաքսուտ Սեպուհ բէյի, Դուլումճեան Պետրոս էֆէնտիի, Ալլահվէրտի Յովհաննէս բէյի, Թընկըր Նավէր փաշայի, Սէր Վիչէնի, Նուբեան էֆէնտիի անուանքը։ Ինչպէս Իլեմտական և մաքսային մատակարարութեանց մէջ փորթուգալ Միքայէլ էֆէնտիի, Դազէգեան Յակով էֆէն-

տիի անուանքը։ Օրինական ինդրոյ մէջ մեծ հեղինակութիւն մ'էր Գարրիէլ էֆէնտի Նորատունկեան, ուրիշներով միարան. և համալսարանական Ուսուցչութեանց մէջ Տնտեսագիտական ճիւղերով կը փայլէին Սարգիս Յովհաննէս էֆէնտի և Գարագաշեան Կարապետ էֆէնտի։ Անոնք ամենն ալ ծանօթ և յարգուած էին եթէ թուրք և եթէ օտար պետութիւններէ։ Զեմ ուզեր յիշել ճարտարապետական, փաստաբանական, երկրագործական, բժշկական ճիւղերը, Պալիանները, Ազնաւորեան մը, Մէրիէմգուլի մը, Ամասեան մը. Ստեփան փաշայ մը, Քեաթիպեան մը, Խորասանճեան մը. յետինքս բժշկութեամբ մրցեցան Եւրոպիոյ ուսուցչապետաց հետ։ Բայց եթէ կար մասնաւոր ճիւղ մը յորում Հայք մեծագոյն ծառայութիւն մը մատուցին օսմանեան պետութեան, և մանաւանդ թէ նեցուկ եղան և բռնեցին զայն պատուով Եւրոպիոյ դիւանագիտութեան առջեւ, Արտաքին Գործոց պաշտօնարանն էր. յորում շատ անգամ տիտղոսաւոր պաշտօնեայքը, անուն էին, և Թուրքիոյ նուրը և ճարտարամիտ քաղաքականութիւնը, էր միշտ Հայոց ձեռքը, թէ ընիկ մայրաքաղաքին և թէ օտար մայրաքաղաքաց մէջ։ Փոխուեցան պաշտօնեայք, բայց, չփոխուեցաւ ուղղութիւնը. որովհետեւ իրենց պաշտաման մէջ մնացին միշտ Համամճեան մը, Տատեան մը, Օտեան խաչիկ էֆէնտին, Ալէքէրեան Նշան էֆէնտի, Զայեան Իլիաս, Թոգաթլեան Գասպար էֆէնտի և դեռ բազումք, ինչպէս և Մեծ Դեսպանատանց հայ քարտուղարք և բազմաթիւ հիւպատոսք։ Եւ որոց անձնանուէր և իմացական ծառայութիւնքը գնահատեցին և յարգեցին միշտ Սուլթանները։ Զարմանք չէ որ այսօրինակ մտաւոր և նիւթական յառաջադիմութիւն մը ունենայ իր բարոյական ազդեցութիւնը, որով և հայ տարրը համեմատութեամբ փոքր, առաջին շրջանի երեսփոխանական ընտրութեանց մէջ ուրիշներու բաղդատութեամբ աւելի ներկայացուցիչք ունեցաւ։

Երեսփոխանական ընտրութիւնք Երկրորդ Շրջանին։

3. — Սեպտեմբեր 6ին Բ. Դուռը յատուկ շրջաբերականով մը իմացուց որ երեսփոխանական ընտրու-

թիւնք պէտք էին կատարուիլ Նոյեմբեր 13ին։ Գաւառները պիտի ընտրէին 107 երեսփոխանք, յորոց 60ը իսլամ և 47ը ոչ իսլամ. ըստ թուահամարոյ ժողովրդոց։ Իսկ մայրաքաղաքը պիտի ընտրէր 10 երեսփոխանք։

Ընտրութիւնք կատարուեցան ժամանակին և շատերը առաջին շրջանին երեսփոխաններն էին. այս անգամ ալ համեմատութեամբ աւելի էր հայ տարրը, քանի մը փոփոխութեամբք։ Ի Սեբաստիա փոխանակ Շիրինեանի, ընտրուեր էր Փափազեան Գէորգ էֆէնտի, Տրապիզոն ղրկեց զՅովհաննէս էֆէնտի Կիւրեղեան. Կարինէն փոխանակ Խարահեան և Պալլարեան էֆէնտիներու, ղրկուեցան Խան Խաչատուր էֆէնտի Ղերսիսեանց և Իրզնկացի Կիրակոս էֆէնտի Գազանճեան։ Կ. Պոլսոյ տասն երեսփոխաններէն վեցը թուրք էին, մէկը յոյն և երեքը հայազգիք՝ Ալլահվէրտի Յովհաննէս էֆէնտի, Սազայեան Ալեքսան էֆէնտի և Գազէգեան Յակովբ էֆէնտի։ Դանուբեան գաւառներն ալ այս անգամ հայազգի մը ղրկեցին՝ Գազանճեան Յակովբ էֆէնտի։ Ընտրուեցան կէրկին Ռուբէն էֆէնտի Ադրիանուպօլսոյ, Խարահեան էֆէնտի՝ Հալէպի, Իւավրուեան էֆէնտի Պրուսայի, Սպարթալեան Յակովբ էֆէնտի՝ Այտրնի, Աստանայի՝ Պզտիկեան էֆէնտի։

Խոսարանին բացումը Սուլթանէն։

Խոսարանը բացաւ ինքնին Սուլթանը։ Յետ յիշելու անցեալ շրջանին մէջ ելեւմտական, քաղաքային որինաց, տպագրութեան նկատմամբ բարեկարգութիւնքը, պատերազմական կացութիւնը, որ արգելք կ'ըլլար երկրին հանդարտ յառաջելուն, յետ շեշտելու որ «Կայսրութեան փրկութիւնը Սահմանադրութեան անկեղծ և անթերի գործադրութեանը մէջ կը կայանայ, վերջացուց խօսքը բարձր իմաստով մը որ «Վիճարանութեան կատարեալ ազատութեամբ է որ օրէնսդրական և քաղաքական գործոց մէջ ճշմարտութեան կրնանք հանիլ, և հանրական շահերը պաշտպանել։ Սահմանադրութիւնը պարտք կը դնէ զայս Ձեր վրայ, և ես չեմ կարծեր որ այն մասին ուրիշ հրամաններ կամ քաջալերութիւններ Ձեզ տալու պէտք ունենամ։ Բարձրեալն Աստուած, որհնէ՛ մեր ամենուս ջանքը»։

Խոսարանը յետ ընտրութիւնքը քննելու և վաւերացնելու, առաջին անգամ հաւաքուեցաւ Դեկտեմբեր 18ին, Դիւանի ընտրութեան համար. և նախագահ ընտրուեցաւ Կ. Պոլսոյ երեսփոխան՝ Հասան Ֆէհմի էֆէնտի. և երկու փոխան–նախագահք՝ Բրուսայի երեսփոխան շէյխ Պէհաէտտին և Ալլահվէրտի Յովհաննէս էֆէնտի։ Գումարումները սկսան Յունուար 3ին. և առաջին նիստին՝ խոսարանի կարեւորագոյն նիւթն եղաւ ոչ–մահմէտական ազգաց զինուորագրութեան խնդիրը։ Երեսփոխաններէն ոմանք Թագի խոսից պատասխանին առթիւ կ'ուզէին որ այդ խնդիրը շտապով քուէարկուի։ Այս ստիպող երագութեան դէմ խօսեցաւ Գազէզեան Յակովբ էֆէնտի, որուն ատենաբանութեան մէջ նշանաւոր էր այն դիտողութիւնը «որ եթէ զինուորութիւնը պարտք մ'է հպատակաց հաւասարութեան, այն ատեն պէտք է ըլլայ նաեւ իրաւանց»։ Գազէզեան Յակովբ էֆէնտի առաջարկեց չտալ մղումն խնդրոյն, այլ թողուլ զայն բնական ընթացքին և այսպէս ալ քուէարկուեցաւ առաջարկը։ Որով Թագի խոսից պատասխանին մէջ յայտարարուեցաւ միայն, որ Խորհրդարանը կը սպասէ այդ նիւթին վերաբերեալ կանոնադրութեանը։

Ոչ քրիստոնեայ ազգաց զինուորագրութեան խնդիրը։

4. — Խոսարանին մէջ զինուորագրութեան նկատմամբ այդ վիճաբանութիւնը, աղօտ արձագանգ մ'էր միայն, մայրաքաղաքին և գաւառաց մէջ եղած յուզմանը; ոչ–մահմէտական ազգաց զինուորագրութեան հրովարտակին նկատմամբ։ Նոյեմբեր 27ի պաշտօնական ծանուցում մը, քանի մը յօդուածներով կիմացնէր, որ ըստ Սահմանադրութեան, զինուորութեան ծառայութիւնը պարտաւորիչ ըլլալով բոլոր հպատակաց, «Նորին Կայսերական Վեհափառութիւնը իր բոլոր հպատակաց վայելած կատարեալ հաւասարութեան զօրութեամբ, հաճեցաւ հրամայել որ ոչ–մահմէտական հպատակները, որք յատուկ կանոնադրութեան տրամադրած տարիքն ունին, Կ. Պոլսոյ մէջ կազմուելիք քաղաքային զինուորութեան անդամակցին»։ Թէպէտ Բ. Դրան այդ տրամադրութիւնը նոր բան մը չ'էր, այլ արդէն հաս-

տատուած 1856ի խաղով։ Բայց ինչպէս այն ժամանակ քրիստոնեայք հակառակեր էին, այս անգամ եւս յուզուեցան և ընդդիմացան. մանաւանդ որ ծանր էին հանգամանքները, պատերազմին պատճառաւ։ Արդէն անցեալ տարուան առաջին խօսարանին մէջ ալ խնդիրը բացուեր էր. բայց երեսփոխանք ելից ճամբայ մը գտեր էին, պատճառաբանելով որ ոչ–մահմէտական ազգերը, արդէն նոյն տարուան զինուորութեան գլխահարկը վճարեր էին. որով խնդիրը կը թողուէր երկրորդ տարուան։

Սակայն դեռ տարին չ'աւարտած Բ. Դուռը իր քովը ոչ–մահմէտական երիտասարդ պաշտօնատէրները, քաղաքային զինուոր գրեց. և անոնց տուաւ սպայի համազգեստը։ Միանգամայն յանձնաժողով մը կազմեց յորում կային Հայոցմէ՝ Սէրվիչէն էֆէնտի, Գրիգոր Լուտեան էֆէնտի, Միքայէլ Փորթուգալ էֆէնտի, Մաքսուտ Սեպուհ բէյ և Յակոբ էֆէնտի Դազէզեան, ուսումնասիրելու գործադրութեան եղանակը. և այս յանձնաժողովոյն նախագահ էր Ղալիպ փաշա, Կ. Պոլսոյ քաղաքապետը։

Եթէ հայ ազգը տագնապեցաւ այս զինուորագրութեան համար, շատ աւելի յուզուեցաւ յոյն ազգը, մանաւանդ Ռուսիոյ դէմ պատերազմի մը ժամանակ հրատարակուած ըլլալով տրամադրութիւնը։ Խողովուրդը եկեղեցիներուն մէջ փորձեց արգիլելու հրովարտակին ընթերցումը, և մինչեւ սպառնացաւ պատրիարքին զինքը գահընկէց ընելու թէ ընդունէր հրամանը[1]։

Զինուորագրութեան խնդիրը Հայոց խառն ժողովոյ մէջ։

Իսկ Հայ հասարակութեան խառն ժողովքը Դեկտեմբեր 18ին հաւաքուեցաւ ի Փուռ Գափու. նախագահն էր Նուրեան էֆէնտի, անդամ Պետական խորհրդոյ. ներկայ էր նաեւ Ներսէս պատրիարքը։ Վիճաբա-

---

1. Թէպէտ Բ. Դուռը չէր դիմած պատրիարքարանաց։ Որովհետեւ Օսմանեան Սահմանադրութեան հրատարակուելէն վերջը, որով հաւասարութիւն պիտի ըլլար հպատակաց, Բ. Դուռը ո՛ր և է ազգի մը չէր ճանչնար պատրիարքական առանձնաշնորհութիւններ։

նութիւնը սկսուելուն աւելի եռանդուն խօսողը եկեղեցական տարրը եղաւ. նախ Խորէն Ղարբէյ, և ապա Իզմիրլեան Մատթէոս Եպիսկոպոս, որ ուզեց ցուցընել թէ Բ. Դրան զինուորագրութեան համար քարոզած օրէնքի առջեւ հաւասարութիւնը, «չկայ ոչ կրօնքի և ոչ վտանգի առջեւ», և յիշեց շէյխ Ճէլալէտտինի և ուրիշ քիւրտ բէյերու անպատիժ մնալը։ Ուրիշները խղճերնին յայտնեցին որ այս անգամ «զինուորագրութիւնը անտեղի է. քանի որ պատերազմը Ռուսիոյ դէմ է, որ ոտք ելած է քրիստոնեաները պաշտպանելու մտքով[1]»։ Յանձնաժողով մը անուանուեցաւ Բ. Դրան տեղեկագրին պատասխան մը տալու. և Յանձնաժողովոյն անդամքն էին Խրիմեան Հայրիկ, Խորէն Եպիսկոպոս Ղարբէյ և Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան։ Յանձնաժողովը կազմող անձնաւորութեան իմաստը յայտնի էր. որով և Բ. Դուռը իր ընծային խոհեմութեամբ, նկատի առնելով նաեւ ցունաց ընդդիմութիւնը, լռեց ոչ–մահմէտականաց զինուորագրութեան խնդիրը[2]։

Խօսարանին մէջ զինուորական և քաղաքական կացութեան մասին։

5. — Միանգամայն քրիստոնեայ և մանաւանդ հայ ազգին վրայ շատ տխուր տպաւորութիւն բրած էր որ Հայաստանի բոլոր յափշտակող, մարդասպան քիւրտ ցեղերու Էմիրները, պատուով Կ. Պոլիս եկեր և հիւր եղեր էին Հաֆրզ փաշայի և ուրիշ մեծամեծներու, և պատուանշաններ եւս ընդուներ էին։ Այս զրգռել էր հայ ազգը։ Արդէն նոյն իսկ թուրք երեսփոխաններ անկեղծ-

---

1. Ազգասէր վարդապետին մէկը մինչեւ համարձակեցաւ ըսել որ «Թուրքերն իրենց աչքերն յառած են մեր վանցի և մշեցի հայ երիտասարդներուն, ինչպէս նաեւ Կ. Պոլսոյ ուսեալ երիտասարդութեան վրայ»։ Մշակ 1878. թիւ 4։

2. Այս ժամանակիս լրագրութեան և մանաւանդ ռուսահայ լրագրութեան մէջ զանազան կարծիքներ յայտնուեցան ի նպաստ և կամ հակառակ զինուորագրութեան։ Զինուորագրութիւնը ունէր իր օգուտները ինքնապաշտպանութեան համար՝ ընդդէմ Հայաստանի ասպատակ ցեղերու։ Զինուորութիւնը միշտ կրթութիւն մ'է. զայս կը տեսնենք այն երկիրներու մէջ ուր զինուոր կ'առնըցուի և ի Հայոց, ինչպէս ի Ռուսահայս, ինչպէս և ի Մահմատական։ Նպաստաւոր և հակառակ կարծիքները ի կշիռ դնելով, մեզ կ'երեւայ որ աւելի բազմաթիւ էին օգուտները. բայց յայտնի է ոչ այս պարագային մէջ։

օրէն եկեր էին բողոքելու պատերազմին կերպին և գլխաւորաց ոմանց դէմ։ Հաճի Լ.մին էֆէնտի միջադէպ մը յարուցանել տուաւ խօսելով «Թուրքիոյ զինուորական ծանր կացութեան վրայ». մինչեւ Քեանի փաշա, Մաքսատան պաշտօնեայն, արգիլեց վիճաբանութիւնը, պատերազմի ժամանակ վտանգաւոր համարելով այսպիսի նիւթոյ մը վրայ վիճաբանելը։

Յունուար 12ի գումարման մէջ, գաւառաց քաղաքային իշխանութեանց դէմ բողոքն սկսաւ Եէնիշէհիրլիզատէ Ահմէտ էֆէնտի, որուն ձայնակցեցաւ Հալէպի երեսփոխան՝ Խարաճեան Մանուկ էֆէնտի։ Յետնոյս ատենաբանութիւնը ծափահարուեցաւ ամենէն. բայց այսչափ միայն. գործադրութիւնը կը մնար Պետական խորհրդոյն և պաշտօնարանին։

Պաշտօնարանը տագնապեցաւ. և քիչ օր վերջը լսուեցաւ որ Լ.տէմ փաշա՝ հրաժարեր էր վէզիրութենէն և Սուլթանը նոր պաշտօնարանին վէզիր անուաներ էր զՀամտի փաշա, որուն օգնական եղեր էր Սային փաշա Ներքին գործոց մասին և Ահմէտ Վէֆիք փաշա՝ Հանրային կրթութեան։

Գաւառաց կեղեքիչ պաշտօնատիրաց նկատմամբ։

6. — Նոր պաշտօնարանը առաջին անգամ ներկայացաւ խօսարանին Յունուար 17ին, յորում պետական խորհրդոյ անդամ՝ Իքիատէս էֆէնտի, ուզեց պաշտպանել զվարչութիւնը և զՊետական խորհուրդը, որոնք անգործ չէին կենար կատարելու իրենց օրէնադրական և գործադրական պարտքերը. «Ուստի Մանուկ էֆէնտիի և Յակովբ էֆէնտիի Պետական խորհրդոյ դէմ ուղղուած մեղադրանքներն, ըսաւ, իրաւացի չեն։ Անցեալ օրը Եէնիշէհիրլիզատէ Ահմէտ էֆէնտին իր սովորական պերճախօսութեամբ սաստկապէս պարսաւեց Տէրութեան պաշտօնատէրները առ հասարակ. ըսաւ թէ ամենն ալ գող են և կաշառակեր։ Արդարեւ գէշեր կան անոնց մէջ, կը խոստովանիմ. բայց բացառութիւններն ընդհանուր կանոն չեն։ Կառավարութիւնը մեծ խղճմտութեամբ կ'ընտրէ պաշտօնատէրները, բայց ժամանակը միայն ներկայ վիճակը կրնայ բարւոքել։ Դպրոցներ պէտք են

մեզ. ամեն տեղ կրթութիւն պէտք է տարածել. ասկէց զատ լաւ թոշակ պէտք է վճարել պաշտօնատեարց, որպէս զի ուղղութեամբ ծառայեն։ Անցեալ տարի Նիբքին գործոց Պաշտօնարանի ծախքերը մեծապէս պակսեցուցիք, և այս տարի ելեր կը գանգտիք պաշտօնատեարց դէմ»։

Իրիատէս էֆէնտիի պատասխանեց Էէնիշէհիրլիզատէ Ահմէտ էֆէնտի «Եթէ ժողովս խստութեամբ խօսեցաւ Պետական ժողովոյն նկատմամբ, յանցանքը հոս իր ներկայացուցիչներունն է։ Անցեալ օր Պետական խորհրդոյ անդամ մը ըսաւ մեզ, թէ իրենք շուտ շուտ օրէնքներ շինելու համար գործարան մը չունէին, և թէ օրինաց խմբագրութիւնը կամ մանաւանդ գործադրութիւնը ժամանակ կը պահանջէ։ Այսօր ալ կու գան մեզ կ'ըսեն թէ տասնումէկ ամսուան մէջ 33 օրէնք շինած են, այսինքն ամեն տասն օրը, օրէնք մը։ Ինչո՞ւ համար այս բանն անցեալ օր չ'ըսին մեզ. որպէս զի մենք ալ Պետական խորհրդոյ գերբնական ձիրքերուն վրայ սքանչանայինք։

«Իրիատէս էֆէնտին կառավարութեան պաշտօնատարաց դէմ ըրած խօսքերս ալ հերքելու ելաւ։ Բայց ինքն հիմա խոստովանեցաւ իմ իրաւունք ունենալս՝ երբոր հաւաստեց թէ քիչ թոշակով ուղիղ և անկաշառ պաշտօնատէրներ չեն կրնար գտնուիլ։

Արդ ես կը հաստատեմ թէ կան։ Զեմ ուզեր ուրիշ գաւառաց մէջ անցած իրողութեանց վրայ խօսիլ։ Իմ պաշտօնակիցներէս իւրաքանչիւրը կրնայ իւր գաւառին վրայ խօսիլ. բայց ես Այտընի Վիլայէթին վրայ կը խօսիմ քաջ ծանօթութեամբ։ Կ'ուզէք որ ճշմարտութիւնը զրուցեմ. իմ գաւառիս մէջ կառավարութեան պաշտօնատէրները խոշտանգանք ի գործ կը դնեն. դատարանաց մէջ յանձնուած աւանդները պաշտօնեայք կը գողնան. ոստիկանութեան զինուորք ժողովուրդը կը կողոպտեն։ Ահա այս է մեր պաշտօնատարաց վիճակը։ Ասկէ զատ՝ ժողովոյս բռնելիք ընթացքը սովրեցնելու և մեզի դաս տալու կու գան։ Ձենք կրնար ներել ադոր»։

Եէնիշէհիրլիզատէի խօսքը ողջունուեցաւ մեծաձայն հասարակաց ծափահարութեամբք։ Դաւառաց մէջ եղած անկարգութիւնք, զայրացուցեր էին հաւասարապէս թէ քրիստոնեայ և թէ Թուրք ժողովուրդները։ Զանազան երեսփոխանք բողոքեցին որ Իքիատէս էֆէնտիի խօսակցութիւնը արհամարհանք մ'էր խօսարանին. և Ռուբէն էֆէնտի գոչեց որ «Արդէն անցեալ օր ըսի Ձեզ որ Պետական խորհուրդը կը ծիծաղի միշտ երեսփոխանական խորհրդոյն վրայ»։ Պահանջուեցաւ որ Իքիատէս էֆէնտի խօսքերը ետ առնու և ինքզինքը արդարացնէ։ Ձայդ պնդեց և նախագահը և Իքիատէս էֆէնտի մեկնաբանեց իր ըսածները, թէ ընաւ դիտումն չ'ունէր արհամարհելու ժողովքը, որով փակուեցաւ միջադէպը։

Նորէն խնդիրը դարձաւ պատերազմին և անոր վերաբերեալ մատակարարութեանց վրայ, և երբ Կ. Պոլսոյ երեսփոխան Լամին էֆէնտի, քննադատեց նաեւ ծովային զօրութեան պաշտօնարանին բռնած ընթացքը, Խարահեան Մանուկ էֆէնտի գոչեց որ «Արդեօք աղոր համա՞ր էր որ Ծովային Զօրութեան պաշտօնէին ամսականը 25,000 ղուրուշի բարձրացաւ[1]»։

Ապա ժողովը զբաղեցաւ Յանձնաժողով մը կազմելու երեսփոխաններէ, մայրաքաղաքը դիմող գաղթականներուն օգնելու համար. և Հայաստանի ու Պալկաններու երեսփոխանք աւելի սաստկապէս կը զգային այս Յանձնաժողովոյն կարեւորութիւնը։ Ուլթանը մասնաւոր հաճութեամբ Պալատը հրաւիրեց Յանձնաժողովը և մինչեւ խոստացաւ ինքնին նախագահելու։ Արդէն զանազան անգամ անձնական գանձէն մեծամեծ գումարներ տուեր էր այդ նպատակին։

Խօսարանը բարեկարգութեան և գաւառաց մէջ պաշտօնատեարց գեղծումներուն դէմն առնելու եռանդով, ձեռնհաս իշխանութեանց ուշանալը անտարբերութիւն համարելով, ինքնին ուզից թեւակոխել պատժական աս-

---

1. Ֆր. 5040.

պարիզին մէջ։ Յունուար 23ի գումարման մէջ կարդացուեցաւ աղերսագիր մը բազմաթիւ ստորագրութեամբ Պուրսուրի քաղաքէն, Լոնիայի վիլայէթին մէջ, որ կը պատմէր կառավարչին անիրաւութիւններն և զօշաքաղութիւնները և կը խնդրէր պաշտօնանկութիւնը։ Երեսփոխանացմէ ոմանք յիշեցուցին որ անցեալ տարի ալ այս օրինակ բողոքներ անլուր մնացեր էին. «Միթէ անցեալ տարի, գոչեց Ռուբէն էֆէնտի, երեսփոխան Աղրիանուպօլսոյ, չորոշեցի՞նք Սելանիկի Տէֆտէրտար էֆէնտիի պաշտօնանկութիւնը, գործած գեղծումներուն և զինուորական մատակարարութեան մէջ ըրած գողութիւններուն համար. զորս հաստատեց նոյն իսկ Հասան փաշա՝ Նախագահ Տարի–Շուրայի։ Եւ սակայն մինչեւ այսօր պաշտօնին վրայ կեցած է»։ Ռուբէն էֆէնտիի բողոքին ձայնակցեցան շատ մը երեսփոխաններ, որոնք պատրաստած էին շարք մը ամբաստանութեանց և պաշտօնընկէցութեանց։

Լնկիւրիի երեսփոխան Մելգոն էֆէնտի ծանր յայտնութիւններ ըրաւ Լնկիւրիի պետական հաշիւներու խարդախման։ Նախագահը Հասան Ֆէհմի փաշա, դիտեց որ ժողովը պաշտօնատեարց պաշտօնընկէցութիւնը պահանջելով, իր սահմանէն դուրս կ՚ելլէր։ Բայց ուրիշ երեսփոխանք յորս և Դազէզեան Յակովբ էֆէնտի, յայտարարեցին որ «ձեռնհաս իշխանութեանց անհոգութեան առջեւ ուրիշ միջոց չեն գտներ»։ Յաջորդեցին ուրիշ ատենախօսք։ Բէյրութի երեսփոխան Պետրան էֆէնտի պատմեց Թուրքիոյ այդ նշանաւոր նաւահանգստին մէջ եղած գողութիւնքը 20 տարիներէ ի վեր։ Եւ դառնալով Պուրսուրի կառավարչին խնդրոյն «Մեր ժողովուրդներն, ըսաւ, երկչոտ են. դիւրաւ ձայն հանելու չեն համարձակիր իրենց կառավարչաց դէմ։ Երբոր ձայն կը հանեն, ապացոյց է որ այդ կառավարիչներուն անիրաւութիւնները և կեղեքումները չափն անցուցած են»։

Իզմիրի երեսփոխան Մինա էֆէնտի հաստատեց Եէնիշէհիրլիզատէ Ահմէտ երեսփոխանին Այտընի կուսակալութեան նկատմամբ անցեալ գումարման մէջ ըրած ծանր

ամբաստանութիւնները։ «Մեր նահանգին մէջ, ըսաւ, այն տանջանք ի գործ կը դրուին. պաշտօնատարք գողութիւն կ'ընեն, ոստիկանութեան գործակալք ժողովուրդը կը կողոպտեն»։ Իր խօսքը լմնցուց բողոքելով կառավարութեան անհոգութեան դէմ։

Ադրիանուպօլսոյ երեսփոխան Հիլմի էֆէնտի բողոքեց չէրքէզ զինուորներուն դէմ, որոնք կը կեղեքէին պատերազմէն իրենց ունեցածներով փախչող աղքատ ժողովուրդը. նոյն բողոքը ըրաւ նաեւ Իոտոսթոյի յոյն երեսփոխանը, առաջարկելով որ «Այդ վայրագ աւարառուները Ասիա ղրկուին»։ Աղաղակներ մը լսուեցան և Գազէզեան Յակովբ էֆէնտի գոչեց. «Այդ չարութիւնները Ասիա՞ ընելու համար»։ Ժողովը որոշեց որ այդ խնդիրը դիւաններուն մէջ քննուի։

Հայ երեսփոխանաց խնդիրը որ Հայաստանէն հող չտրուի Իուսաստանի։

7. — Եւ որովհետեւ սկսեր էին պատերազմի, նկատմամբ հաշտութեան մը ձայներ, խալաճեան Մանուկ էֆէնտի, յանուն 500,000 Հայոց, որոնք, ըսաւ կը գտնուին Հայաստանի մէջ, և որոց նախնիքը 500 տարիէ ի վեր այնքան հաւատարմութեամբ ծառայեր են օսմանեան պետութեան. յանուն և երեսփոխանական ժողովոյն մէջ գտնուած իր ընկերներուն, խնդրեց որ՝ «Եթէ Իուսիոյ Տէրութեան պատերազմական ծախք հարկ ըլլայ վճարել, կը խնդրենք Վեհափառ Սուլթանէն, որ Հայաստանէն երկիր չտրուի, տեղը դրամ վճարուի. և եթէ այս անհնար ըլլայ. մեր բողոքն յանուն ազգին՝ բարեկամ տէրութեանց ուշադրութեանը ներկայացուի։ Իսկ թէ Իուսաց անպատճառ հող պիտի տրուի, կը խնդրինք որ չտրուի Հայաստանէն. Տէրութեան ամեն ժամանակ տագնապ բերող կողմերէն տրուի»։ Մանուկ էֆէնտիի խօսքերը հայրենասէր քաղաքագիտութեան մը հետ կը գգուէին նաեւ թուրք անձնասիրութիւնը։ Սահմանեց ժողովը որ իր առաջարկը նկատողութեան առնուելով՝ ղրկուի կայսերական վարչութեան։

Եւ որովհետեւ այն օրերը քաղքին որմոց վրայ դաւանական յեղափոխական այլ և այլ գրգիռներ կրպցուած էին. Հալէպի երեսփոխաններէն՝ Քատրի բէյ,

բողոքեց այդ ծածուկ խոովիչներուն դէմ, որուն համաձայնեցան բոլոր երեսփոխանք և ծափահարութեամբ կնքուեցաւ այն աւուր գումարումը։

Պարձեալ գաւառաց պաշտօնեաներու բնութեան և քննութեան համար։

8. — Սակայն վարչութիւնը բնաւ խոստում մը չ'ըրաւ երեսփոխանաց ժողովոյն, նկատմամբ գաւառաց մէջ կուսակալաց և կառավարչաց գեղծումներուն և երեսփոխանք չլռեցին։ Յունուար 28ի գումարման մէջ Խարահան Մանուկ էֆէնտի առաջարկեց որ վերնայ աչարի հաւաքման դրութիւնը, որով պաշտօնատեարք այնքան կը կեղեքէին աղքատ գիւղացին. և արդար, հաստատուն տուրք մը դրուի հողերու վրայ, ըստ իրենց աստիճանին, ինչպէս քաղաքականացեալ երկիրներու մէջ։ Մեծամասնութիւնը համաձայնեցաւ և որոշեց որ առաջարկը ղրկուի դիւաններուն։ Այն առեն կարնոյ երեսփոխան Կիրակոս էֆէնտի առաւ խօսքը անցեալ անգամուան Պուլտուրի կառավարչին նկատմամբ ամբաստանութիւններուն մասին ընդհանուր կուսակալին հարցուած ըլլալուն համար. համարձակ ըսաւ որ սխալ է այդ ոճ քննութիւնը։ «Եւ որովհետեւ ժողովոյ նախագահը ուզած էր որ առաջարկս գրով տամ, ես ալ այնպէս կ'ընեմ։ Կ'ըսուի թէ պաշտօնատիրաց գեղծմանց վրայ շատ կը խօսինք. ըստ իմ կարծեաց՝ շատ քիչ կը խօսուի. որովհետեւ մեր կրած չարեաց ամենն ալ պաշտօնէից գեղծմանց հետեւանքն են։ Միայն թէ պարտիմք առաւել գեղծման պատճառներն երեւան հանել և անոնց դարման տանել»։ Յետոյ յօդուած, յօդուած շարայարեց գեղծմանց պատճառներն և դարմանները. պահանջեց որ տեղւոյն մեծին միայն հարցնելու դրութիւնը ջնջուի. «Մինչեւ այսօր մեծ կամ փոքր պաշտօնէի մը վրայ, ըսաւ, գանգատ ըլլալու պատճառաւ պաշտօնանկ ըլլալն եթէ տեսնող կայ, թո՛ղ ըսէ»։ Համարձակօրէն ըսաւ որ ոչ միայն պաշտօնանկ չէին ըլլար այդ գէշ պաշտօնատարք, այլ գուշակելով և իմանալով իրենց արարքներուն դէմ բողոքողը, կը սկսէին զանոնք հալածել և փճացնել, այսպէս լաւերը կը լմնային և կը մնային անխիղճերը։ Ապա յարեց որ երկրին վաճա-

ռականութեան, արհեստից, գիտութեանց, օգտակար գործոց եւ մեռելուն պատճառ այդ պաշտօնատեարք էին և կարգաւ շարեց այդ պաշտօնատեարց պատերազմի ժամանակ, Հայաստանի մէջ, Պետութեան մթերքներէն, թնդանօթներէն, ձիերէն և ամեն բանէ ըրած գողութիւնները և բնաւ բանի մը փոյթ չունենալը. որով այնքան անձնանուէր ժողովուրդներ ունենալով հանդերձ, պատերազմը այսօրինակ ձախող վախճան մը ունեցաւ։ «Ժողովրդեան 1000, 2000, 3000 ղուրուշի գնած և կամ պատերազմին նպաստ տուած ձիերն ու ջորիները, մանաւանդ Սեբաստիայէն, Դաղատիայէն, Ղոնիայէն, Ալբիայէն, կամ այլ կողմերէ եկած և մինչեւ 10,000 ղուրուշի արժէք ունեցող ձիերուն և ջորիներուն մէկ մասը աներեւութանալուն, մէկ մասին ալ 70ական ղուրուշի ստորին պաշտօնէից ձեռքով ծախուելուն կը հաւատա՞ք. կը հաւատա՞ք եթէ ըսեմ ձեզ թէ խիստ հեռաւոր տեղերէ կարին արմտիք փոխադրող գիւղացիք, 20–30 օր ճամբայ քալելէ ետեւ, 30–40 օր ալ կարնոյ փողոցներուն մէջ թափառելու հարկադրեցան, որպէս զի կարող ըլլան պաշտօնատերաց ձեռքէն անդորրագիր մը ստանալու, թէ սայլով բերած արմտիքնին յանձնեցին»։ Կիրակոս էֆէնտի կը խօսէր յուզեալ. և երբ առենաբանութիւնը վերջացնելով պահանջեց խիստ քննութիւն Պուրտուրի կառավարչին, և ամենայն խստութեամբ պատիժ մը, թէ ստուգուին գանգատները, բոլոր երեսփոխանք ծափահարեցին։

Կարգաւ ուրիշ երեսփոխաններ ալ պատմեցին իրենց գաւառներուն մէջ գործուած աւարառութիւնը և անօրէնութիւնը։ Բուրկազի երեսփոխանը պատմեց մահմէտական ալբանիացիներուն աւազակութիւնքը։ Քրիստոնեայ ժողովրդեան 800 հոգւոց եկեղեցի ապաւինիլը, յորոց 200 միայն ապրեցան և «600 հոգի կանայք և մանկունք, զոհ գնացին այդ հրէշներուն խժդժութեան»։ Ժողովքը յուզուեցաւ մանաւանդ լսելով ահաւոր մանրամասնութիւններ, քուէարկեց որ փութով քննուի և դարման տարուի. բայց իր ազդեցութիւնը ոչինչ էր ժողովարանի որմերէն դուրս։

Տպագրութեան ազատութեան վէճեր։

9. — Յունուար 29ի նիստը աւելի յուզեալ եղաւ։ Նախ Սագայեան Ալեքսան էֆէնտի, երեսփոխան Կ. Պոլսոյ, բողոքեց որ մինչդեռ քաղաքին մէջ հազիւ մէկ ամսուան մը ցորեն կայ, շատ մը շահադէտներ ի Վառնա, Սիլիստրի, Օսման Բազար, անբաւ ցորեն պահած էին, որոնք ապա Ռուսաց ձեռքը ինկան։ Ալեքսան էֆէնտի ժողովոյ ուշադրութիւնը հրաւիրեց այս նիւթոյն վրայ, և ժողովը որոշեց միաձայնութեամբ գրել առ Բ. Դուռը։ Ժողովը յետոյ անցաւ իր պատուոյն վերաբերեալ խնդրոյ մը. Վագրբ լրագիրը կծու քննադատութիւններ ըրեր էր երեսփոխանաց խօսարանին նկատմամբ և լրագրական դիւանին տնօրէն՝ Մահիտ բէյ, որ Պետական խորհրդին ալ անդամ էր, նամակով մը առ Վագրբ, յայտներ էր իր գոհութիւնը։ Արդ Եանեայի երեսփոխան Մէհէմէտ Ալի կը պահանջէր որ Մահիտ բէյ ամբաստանութեան տակ ձգուի։

Ալահվէրտի Յովհաննէս էֆէնտի պաշտպանեց տպագրութեան ազատութիւնը «Քանի որ գումարումները բաց են, ազատ է ամենայն ոք քննադատելու» ըսաւ։ Նոյնպէս պատճառաբանեց Դազէզեան Յակովբ էֆէնտի, աւելցնելով որ «Մամուլն է ազգաց դաստիարակը. քննադատութիւնը ազատ պէտք է ըլլայ»։ Եէնիշէհիրլիզատէ երեսփոխանը խօսեցաւ որ լրագրաց կարեւորութիւն մը պէտք չէ տալ «Ես օտար լեզու չեմ գիտեր, ըսաւ, որ օտար լրագիր կարդամ. բայց Թուրք լրագիրներէն մէկն ալ կարդալու բան չէ. անտեղութենէ զատ ուրիշ բան չեն գրեր, և սուտէն զատ ուրիշ բան չեն հրատարակեր»։ Նախագահը խնդրոյն վերջ մը տալու համար ըսաւ առ Մէհէմէտ Ալի, որ իր առաջարկը գրով պէտք էր տայ, այն ատեն կը ղրկէր դիւաններուն քննութեան։

Յետոյ խօսուեցաւ պաշտօնատեարց թոշակներուն վրայ, որոց սակաւութիւնը, ըստ ոմանց, պատճառ կ՚ըլլար կեղեքմունքներու և գողութեան։ Բայց Կարնոյ երեսփոխան Կիրակոս էֆէնտի, յայտարարեց որ 100,000 ղուրուշ թոշակ ստացող անհաւատարիմ պաշտօնեաներ տեսեր է, ինչպէս նաեւ խիստ հաւատարիմ պաշտօնեայ

որ 500 զուրուշ կը ստանար։ «Լաւագոյն միջոցն է, լաւ ընտրութիւն ընել»։ Նոյն իմաստով խօսեցաւ երկար ատենաբանութիւն մը Աբդիւլ բէյ, երեսփոխան Լաչեայի, և խնդիրը դիւաններուն զրկուեցաւ։

Պաշտօնարանին հրաժարիլը. — Ահմէտ Վէֆիք փաշա նախագահ պաշտօնարանին։

10. — Այս ամէն ազատախօս և թերեւս դիւանական սահմանէ քիչ մը անդին ատենախօսութիւնք, բոլորովին նոր՝ թէ Բ. Դրան և թէ Թուրքիոյ համար, և մանաւանդ գաւառներու պաշտօնատիրաց համար, որոց պատասխանատուն էր ինքնին պաշտօնարանը, և որ չէր զգար կարողութիւն դարման տանելու, տագնապեցուց զվարչութիւնը. մանաւանդ որ քննադատութիւնք և ամբաստանութիւնք, յայտնի հրապարակաւ էին. և գումարմանց մէջի ատենախօսութիւնք ամենայն ոք կը կարդար երկրորդ օրը լրագիրներուն մէջ։ Համտի փաշա մեծ վէզիրը, տուաւ հրաժարականը և Սուլթանը պատեհ համարեցաւ վարչութեան գլուխ կանչելու զԱհմէտ Վէֆիք փաշա, որ երբեմն նախագահ խօսարանին, կրցեր էր սանձելու երեսփոխանաց եռանդը։ Ահմէտ Վէֆիք փաշա յանձն առաւ Սուլթանի փափագը, պայմանաւ որ վերնայ մեծ վեզիրութեան անունը և անկէ վերջը այդ պաշտօն կրողը, կոչուի նախագահ Պաշտօնարանին, որ տենայ թէ հաւաքական և թէ անհատական պատասխանատուութիւն։ Աբդիւլ Համիդ յանձն առաւ. և Ահմէտ Վէֆիք փաշա կազմեց պաշտօնարանը, յորում մտաւ դարձեալ Զամիչ Յովհաննէս էֆէնտի՝ պաշտօնեայ Հասարակաց շինութեանց և Առեւտրական գործոց։ Փոքր օր վերջը մտաւ Պաշտօնարանին մէջ իբրեւ Արտաքին գործոց պաշտօնեայ՝ Սավֆէթ փաշա, հանրածանօթ իր արդարակորով և սուր դատողութեամբ, որուն համար մեծ գոհութիւն յայտնեցին բոլոր Եւրոպիոյ պաշտօնարանք [1]։

---

1. Ահմէտ փաշա վերցուց այն սովորութիւնը, զոր որում մեծ վէզիրի առաջէն համագեստով կ'երթային ոստիկանութեան պահապանք։ Ինքը կ'երթար պալատ և պաշտօնարան, փոդոցի կառքով մը։ Թէպէտ Սուլթանը լսելով զայս, իրեն նուէր զրկեց երկձի կառք մը։

Խոսարանը ընդդէմ Զէրքէզներուն ապարատութեանց։ Փետրուար 2։

11. — Խոսարանին մէջ շարունակեցին ատենախոսութիւնք երկրին թշուառութեանց նկատմամբ և մանաւանդ չէրքէզներուն և քիւրտերուն ըրած աւարառութեանց, և ատոնց ըրած գերեվաճառութեան դէմ, նոյն իսկ մայրաքաղաքին փողոցներուն մէջ։ Սերասքիրոյ երեսփոխան՝ Փափազեան Դէորգ էֆէնտի երկար ճառ մը կարդաց դատարանաց մէջ գործուած անկարգութեանց դէմ։ Խոսարանը ղրկեց ճառը դիւանական քննութեան։ Ահմէտ Վէֆիք փաշա որ նոյն օրը ներկայացեր էր Խորհրդարանին, խոսեցաւ նոր պաշտօնարանին ծրագրին վրայ և ծափահարուեցաւ։ Դանօթ էր ամենուն Ահմէտ Վէֆիք փաշայի խիստ կանոնասիրութիւնը թէ իր անձին և թէ ուրիշ պաշտօնատէրներու համար, որով և իր բացատրութիւնքը առ հասարակ ծափահարուեցան։

Փետր. 9։

Հետեւեալ գումարումները բարձրաձայն բողոք մ'էին երեսփոխանաց ընդդէմ վարչութեան, որ դեռ կը թողուր չէրքէզներուն ամեն տեսակ անօրէնութիւն։ Կ. Պոլսոյ փողոցներուն մէջ կը վաճառուէին քրիստոնեայ եկեղեցիներէ գողցուած սրբազան անօթք, զգեստեղէնք. դարձեալ յափշտակուած եզներ, ոչխարներ։ «Կ. Պոլիս քաղաքը, գոչեց Իուսմուքի երեսփոխան Պալլաքի էֆէնտի, Կ. Պոլիս քաղաքը ընդարձակ սպանդանոց մը դարձեր է։ Ամեն փողոցներու մէջ եզներ և կովեր կը մորթուին և օխան մինչեւ 2 ղուրուշի կը ծախուին։ Կամուրջէն մինչեւ այս ժողովարան՝ յիսունէն աւելի եզ տեսայ մորթուած։ Վաճառումը կը շարունակէ։ Ձեր լսածներէն ոչ մին եղած է։

«Ուրիշ աւելի կարեւոր խնդիր մ'ալ կայ, որ ժողովիս խորին ուշադրութիւնը պէտք է գրաւէ։ Այդ աւազակները, այդ բարբարոսները, այդ դաւաճան չէրքէզները, անլուր խիղճութիւններ ընելէ ետեւ, Կ. Պոլիս եկած ժամանակնին հազարաւոր մանչ և աղջիկ տղայք յափշտակած են, զորս այսօր փողոցներուն մէջ իրրեւ գերի կը վաճառեն։ Հայոց և Յունաց հասարակութիւններն իրենց պատրիարքարաններուն միջոցաւ գնեցին այդ դժբաղդ էակներէն մի քանին. բայց յափշտ-

տակողաց ձեռքը տակաւին 3000էն աւելի տղայք կան, արու և էգ։ Զինկեանէ ազգէն ալ կան որ այդ առուտուրով կը զբաղին։ Ոստիկանութիւնը եթէ անոնց թաղերուն մէջ խուզարկութիւն մ'ընէ, 500էն աւելի քրիստոնեայ տղայք կը գտնէ, զորս յափշտակիչները վաճառելու սահմանած են»։ Ապա առաջարկեց անմիջապէս գիր մը գրուելով Բ. Դրան, խնդրուի այդ թշուառներուն ազատումը և յափշտակողաց խստիւ պատժուիլը։ Պաւլաքի էֆէնտիի ըսածներն հաստատեց նաեւ Յակոբ էֆէնտի Գազէզեան և յուզուեցաւ բոլոր խօսարանը։ Երկար վիճուեցաւ ուր ղրկել բնակութեամբ այդ չէրքէզները, ի Տրիպոլիս թէ Պաղտատ։ Բայց ամեն գաւառի երեսփոխան կը բողոքէր սաստկապէս, երբ իր երկրին անունը կը լսէր, որով և ժողովը կնքուեցաւ առանց որոշողութեան մը[1]։ Վիճաբանութեան մէջ քանի մը թուրք երեսփոխանք միայն, ուզեր էին պաշտպանել զչէրքէզս, որ պատմուածները չափազանցութիւնք են և այդ պաշտպանողաց թիւէն էր նաեւ Եէնիշէհիրլիզատէ երեսփոխանը։

Ահմէտ Վէֆիք փաշա, յետ խիստ հրամաններու գերեվաճառութեան նկատմամբ, իմաստուն փափկանկատողութեամբ մը, երկրորդ օրը այց ելաւ պատրիարքարանաց և ի մասնաւորի Հայոց պատրիարքին, ուսկից իմանալով որ յիրաւի չէրքէզներուն քով կային բազմաթիւ մանչ և աղջիկ տղայք, խնդրեց որ յարմար անձ մը սահմանէ, որպէս զի Ոստիկանութեան գաղտնի խուզարկուաց հետ, գտնեն թագստեան տեղերը և առնուն զանոնք չէրքէզներուն ձեռքէն։

Պատերազմին ժամանակուն պատասխանատուութեանց քննութիւն։

12. — Այս ատենաբանութեան ժամանակ ոուս բանակը յառաջելով հասեր և տիրեր էր Իոտոսդոյի, և կը սպառնար իսկ մայրաքաղաքին։ Երեսփոխանք որ

---

1. Եւ սակայն պատերազմէն վերջը այդ բարբարոսները մեծաւ մասամբ ղրկուեցան ի Հայաստան և Փոքր Ասիա, որոնք հարիւրաւոր հայ գիւղեր կողոպտեցին և այրեցին։

արդէն կանխապէս բողոքեր էին պատերազմի պաշտօնարանին գործելու եղանակին դէմ. այս անգամ պահանջեցին որ խօսարանը քննէ և իմանայ պատերազմին ձախող ելից պատասխանատուութիւնը։ Պահանջեց որ Պատերազմի պաշտօնեայ Ռէուֆ փաշա ներկայանայ խօսարանին և բացատրութիւններ տայ շատ մը հրամանատարներու տուած հրամաններու վրայ. պահանջեց որ գիտնայ նաեւ Զինադադարման պայմանները։ Բայց Ահմէտ Վէֆիք փաշա չէր կարող ըսել հրապարակաւ, և ելաւ խօսարանէն նեղացած[1]։

Խօսարանին փակումը։

Փետրուար 28ին Ոստիկանութեան գլուխը Մէհէմէտ փաշա իր մօտ հրաւիրեց Թուրք երեսփոխաններէն տասը անձինք յորս նաեւ Իզմիրի նշանաւոր երեսփոխան Լէնիշէհիրլիզատէ և իմաց տուաւ որ խօսարանը փակուած ըլլալով, իրենց ներկայութեան պէտք չկար մայրաքաղաքին մէջ. ուստի անմիջապէս վերադառնան իրենց տեղերը։ Իսկ Ադրիանուպօլսոյ երեսփոխան Բասիմ բէյ, Բրուսա պիտի երթար։ Այսպէս կը փակուէր և կը վերջանար Թուրք խօսարանը. շատ մը ճշմարտութիւններ աներկիւղ ըսելով գաւառաց նկատմամբ, բայց զգալով միանգամայն որ իր ըսածները էին «ձայն յանապատի». ձայն մը զոր իսեղդեց Բ. Դուռը, ոչ առ չկամութեան բարեկարգութեանց, այլ իր անկարողութիւնը սահմն օր չլսելու համար։

---

1. Քէօլճիէ ցայրուճկ կոլոնիոյ լաւ տեղեակ լրագիրը հրատարակեց որ Ահմէտ Վէֆիք փաշա խօսարանէն ելլալով նեղացած, ըսած ըլլայ որ «Ասանկ ժողովով չեմ կրնար կառավարել». և Սուլթանին առաջարկեր է փակումը. նկատի առնելով պատերազմին կացութիւնը։ Բայց ընդհանուր կարծիք է որ յեղափոխական դաւ մը եւս կասկած ւեցաւ մայրաքաղաքին մէջ, որուն մասնակից եղած ըլլան և երեսփոխաններէ ոմանք։ — Ինչ ալ ըլլայ ժողովը ցրուեցաւ ազատախօսութեանը համար, յորում աւելի փայլեցան քրիստոնեայ մասնաւանդ հայ երեսփոխանք. որոնք ցոցուցին իրենց յարմարութիւնը խօսարանական վարչութեան։

ԳԼՈՒԽ ԻԴ.

ՌԱԻՍՔ Ի ՖԻԼԻՊՊԷ-ՅԱԿԻՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ

1. Պլէֆնայի անկմանէն վերջը երկու կողմի բանակները. — 2. Ի Կ. Պոլիս հաշտութեան փափագներ. — 3. Սերբիա պատերազմ կը հրատարակէ Թուրքիոյ. – Նիշի առումը Սերբերէն. — 4. Ռուսք կ'անցնին Բալկանները. – Զօրավարն Գուրզօ կը տիրէ Սոֆիայի. — 5. Զրպգայի Թուրք բանակին անձնատուր ըլլալը. — 6. Ռուսք ի Ռումելի. – Կը տիրեն Թաքար Բազարճիքի, Ֆիլիպպէի և Ադրիանուպոլսոյ. — 7. Զօրավարն Սքոբելէֆ կը չուէ ի Կէլիպոլու. — 8. Զարէվիչի և Ոիմմէրմանի բանակները. – Բազարճիքի կռիւը. — 9. 1877ի և 1878ի նաւական պատերազմներ. — 10. Մոնտէնէգրոյի պատերազմներ. — 11. Յունաստանի յուզմունքը. — 12. Ապստամբութիւնք ի Թեսալիա, Եպիրոս, Մակեդոնիա. — 13. Կրետէի ապստամբութիւնը և տեղական վարչութիւնը. – 14. Ռուսք ի Կարին. – Շէյխ-փիքով զօրավարին մահը։

Պլէֆնայի անկմանէն վերջը երկու կողմի բանակները։

1877

1. — Ադրէն Կարսի առումը և Հայաստանի Թուրք բանակին մեծաւ մասամբ անձնատուր ըլլալը, տկարացուցեր էր յայտնապէս Թուրքիոյ զինուորական կացութիւնը Ռուսիոյ բազդատմամբ։ Վրայ գալով Դեկտեմբերի մէջ Պլէֆնայի անկումը և Օսման փաշայի ընտիր բանակին անձնատուր ըլլալը, Թուրքիոյ վարչութիւնը ընդունեց որ չէր կարելի պատերազմը շարունակել թէ ոչ առաւելագոյն, և ոչ իսկ հաւասար բազդով։ Ի Կարին, Տրապիզոն և Բաթում եղած բանակները, հազիւ 35,000 զինուորաց կը հասնէին։ Եւրոպայի մէջ ընդ ամենը կային գրեթէ 200,000 զինուորք, որոց մեծ

մասը սակայն ցրուած էր քաղաքներու պահանորդութեան։ Սոֆիա ունէր 30,000 զինուոր, Զըպգայի անցքին մէջ կային ուրիշ 30,000. Վիտինի և Նիշի քով կային 35,000 զինուորք. Դանուբի բանակն էր 60,000։ Դարձեալ Շումլայի Սիլիստրիի, Ռուսճուքի և Վառնայի պահանորդք կրնային 35,000 համրուիլ, որոց վրայ աւելցնելու է 16,000 եգիպտացիները Դորրուճայի մէջ։

Իսկ Ռուսիոյ, արդէն ստուար բանակին վրայ՝ Պլէվնայի անկմամբ, կ'աւելնար 150,000 զինուորաց տրամադրելի բանակ մը եւս։

Պլէվնայի առմանէն վերջը Աղեքսանդր կայսրը և Ռումանիոյ Կարոլ իշխանը՝ բարձրագոյն հրամանատարաց հետ ժողուելով, սահմանեցին անցնիլ Բալկանները Ադրիանոպոլսոյ վրայ և Թուրքիոյ նոր բանակներ կազմելու ժամանակ չթողուլ։ Յետոյ թէ Աղեքսանդր կայսրը և թէ Կարոլ իշխանը մեկնեցան իրենց մայրաքաղաքները, յորս եռանդագին և նկարագրութենէ վեր ընդունելութիւններ գտան, իբրեւ արդէն պատերազմը յաղթական կերպով աւարտած։

2. Բարձրագոյն Դուռը Ռուսիոյ դէմ պատերազմ հրատարակած ժամանակ, միշտ լիովին յոյս մը ունէր Անգլիոյ կողմանէ օգնութեան և միջամտութեան մը. և Անգլիոյ ներկայացուցիչք այլ և այլ պարագաներու մէջ խրախուսեր էին պատերազմին շարունակութիւնը. գրեթէ յուսացնելով որ բացարձակապէս Ռուսիոյ պիտի չթողուր աշխարհակալութիւն մը. և ինքը պատրաստ էր իր նաւատորմովը խօսք հասկցնել Ռուսիոյ։ Ի Կ. Պոլիս սիր Լայարդ անգլիական դեսպանը, շատ լաւ տեսնուած բարձր շրջանակաց մէջ[1], յայտնի կերպով կը քարոզէր որ աննպատակ չէին Անգլիոյ համակրութիւնքը առ Թուր-

Ի Կ. Պոլիս հաշտութեան փափագներ։

1. Սիր Լայարտ, սիրող էր հաւասարապէս արեւելեան ամեն ազգաց. ունէր մեծ համակրութիւն նաեւ առ Հայս, ինչպէս գանազան առիթներով տեսած եմ ի վենետիկ ուր կը բնակէր տարւոյն մեծ մասը, ունենալով

քիա և Պալատան մէջ կը իրախուսէր պատերազմին շարունակութեան կողմնակիցքը։

Սակայն երբ նախ Կարսի և ապա Պլէվնայի անկումներէն վերջը, Թուրքիա չտեսաւ Անգղիոյ կողմանէ յուսացած շարժումը, այն ատեն ըմբռնեց որ միայնակ կռուեր էր և պիտի կռուէր ասկէ վերջն ալ. և իարուեր էր յոյսը Անգղիոյ վրայ դնելով։ Այն ատեն Կ. Պոլսոյ բարձր շրջանակաց մէջ ծնաւ անվստահութիւն. և մինչեւ ատելութիւն մը նկատմամբ Անգղիոյ. և հակամիտում մը հաշտութեան և բարեկամական դաշնակցութեան Ռուսիոյ հետ։ Անգղիա արթուն իր շահերուն համար, ջանաց որ գոնէ այդ հաշտութիւնը Թուրքիա ուղղակի չկատարէ Ռուսիոյ հետ, այլ պետութեանց միջոցով, որով Անգղիա կարենայ միջամտել Թուրքիոյ և Ռուսիոյ կնքելիք պայմաններուն մէջ։

Պլէվնայի անկումէն երկու օր վերջը, Թուրք վարչութեան Արտաքին Գործոց պաշտօնեայն, շրջարերական-նով մը առ իւր դեսպանս, յետ արդարացնելու Թուրքիոյ պատերազմը ընդունելուն պարագայքը. «որովհետեւ Թուրքիա ուզեր էր՝ հաւասար իր ամէն գաւառաց տալ բարեկարգութիւնը և չիտրել ազգ ազգէ». յետ ըսելու որ Կ. Պոլսոյ Դեսպանաժողովոյն մէջ խոստացուած բարեկարգութիւնք խղճիւ պիտի կատարուէին, յետ յիշելու Սահմանադրութեան տրուիլը, դարձեալ Աղեքսանդր Բ կայսեր հրատարակութիւնը պատերազմը սկսելուն՝ «որ բնաւ աշխարհակալութեան մը համար չէր». յետ երկու բանակներուն քաջաբար և փառօք պատերազմելուն, ինչո՞ւ այլ եւս շարունակել արիւնահեղութիւնը։ Եւ կը ինդրէր Եւրոպիոյ պետութեանց միջնորդութիւնը Ռուսիոյ հետ հաշտութեան մը համար։

սեպհական պալատ, ուր ցարդ կը կենայ իր ազնուական և ուսեալ Տիկինը, այցելուած Թագաւորազուններէ և իշխաններէ։ Մահուընէ վերջը տիկինը անձամբ բերաւ երկու հայ ընտիր ձեռագիրք, իր ամուսնէն յանձնարարուած Մխիթարեան Ձեռագրատան ի Վենետիկ։

Սակայն այս շրջաբերականը բնաւ արդիւնք մը չունեցաւ. ոչ ոք բաց յԱնգղիոյ յանձն առաւ միջամտելու և երաշխաւոր ըլլալու որ Թուրքիա հպատակ գաւառաց մէջ պիտի կրնար գործադրել ուզած բարեկարգութիւնքը։ Ի Կ. Պոլիս Պալատան մէջ երկու էին կարծիքները։ Մաս մը, Գերմանիոյ դեսպանին, իշխան Ռէյսի խորհրդին համեմատ, կ'ուզէր ուղղակի դիմել ռուս վարչութեան[1]։ Սակայն յաղթեց այն կարծիքը՝ չվշտացնել զԱնգղիա, որ ինքնաբերաբար այնքան յօժար էր միջամտելու. և Մուսուրուս փաշա, դեսպան ի Լոնտրա, հրաման ընդունեցաւ առաջարկելու Անգղիոյ վարչութեան, միջնորդութիւն մը Ռուսիոյ հետ հաշտութեան։ Լորդ Դէրբի անմիջապէս ծանոյց առ բրիտանական դեսպանը ի Պետերբուրգ և նա առ իշխանն Գորչաքով որ «ամենայն ազնուութեամբ» պատասխանեց թէ Ռուսիա եւս կը ցանկար հաշտութեան, բայց առ այդ հարկ էր որ Բ. Դուռը ուղղակի դիմէ Ասիոյ և Եւրոպիոյ ռուս ընդհանուր հրամանատարաց, «որոնք միայն կարող էին որոշել Զինադադարման մը պայմանքը[2]»։ Այս պատասխանին վրայ Անգղիա չուզեց բաշխիլ ինդրոյն մէջէն և յետ խորհրդակցելու Թուրքիոյ հետ, առաջարկեց զինադադար մը առ իշխանն Գորչաքով։ Սա կըրկնեց իր առաջին պատասխանը։ Այս բանակցութիւնք տեւեցին մօտ երեք եօթնեակ, յորս աւելի վատացեր էր Թուրքիոյ զինուորական կացութիւնը Սերբիոյ պատերազմ հրատարակելովը, Դուրգոյի Բալկանները անցնելով և Սոֆիայի առնուելով։ Բրիտանական վարչութիւնը Գորչաքով իշխանին երկրորդ անգամ մերժումին վրայ, ծանոյց Թուրքիոյ որ ինքը բան մը չէր կարող ընելու Թուրքիոյ համար։ Խնդրուց նաեւ առ իշխանն Գորչաքով որ Բ. Դուռը զինադադարման մը համար հրա-

---

1. Պատերազմի ժամանակ ռուսական շահերը Գերմանիոյ դեսպանին յանձնուած էին։

2. Կապոյտ գիրք 1877 Դեկտ. 29։

հանգներ ղրկեր էր իր սպարապետաց։ Սակայն ռուս բանակին յաջողութիւնք, զինքը աւելի պահանջող կացութեան մէջ ղրեր էին, ընդհակառակն աւելցեր էին Բ. Դրան տագնապները նաեւ Սերբերուն ապստամբելովը։

Սերբիա պատերազմ կը հրատարակէ Թուրքիոյ դէմ. — Նիշի առումը։

3. — Տեսանք կանխապէս որ Կ. Պոլսոյ Դեսպանաժողովէն քիչ վերջը, Սերբիա ստիպուեր էր հաշտութիւն խնդրելու և իր բանակը խաղաղութեան ժամանակի թուոյն վերածելու։ 1876ի Թուրքիոյ դէմ պատերազմներով սերբ զինուորականութիւնը ըմբոներ էր իր թերի մասունքը, և նոր պատերազմի պաշտօնեայ Սավա Կրուիչ՝ անմիջապէս զբաղեր և յաջողեր էր հիմնական բարեկարգութեամբը, սակաւաթիւ, բայց ընտիր բանակ մը ունենալ քիչ ժամանակուան մէջ։ Երբ Թուրք–ռուս պատերազմը սկսաւ, Սերբիա իր չէզոքութիւնը պաշտպանելու համար սահմանագլուխներու մօտ բանակներ ձեւացուց։ Սակայն Ռումանիոյ յաջող օրինակը և մանաւանդ սլաւական գաղտ յորդորները և իրախոյսները, նոյն իսկ ռուս ազգէն, արծարծեցին իր սրտին մէջ նախկին եռանդը, և յոյսը։ Ցունիսի վերջերը իշխանն Միլան գնաց ի Պլոյէստի տեսնելու զԱղեքսանդր կայսրը, և Յուլիս 2ին բանալով զիսօսարանը յայտնեց որ սերբ ժողովրդեան թափած արիւնը ի զուր պիտի չ՝երթար և պիտի ունենար իր արդիւնքը. «արդէն Ազատարար Զարը իր դիւցազնական բանակով շատ հեռու չէ մեր սահմաններէն»։ Այս հրատարակութեան յաջորդեցին գաղտ պատրաստութիւնք և նոր զինուորագրութիւնք։ Պաշտօնարանը նախկին ձախողութիւններէն իրատուած, Ռուսիոյ յայտնի յաղթութիւնները չտեսած, չէր համարձակեր տակաւին պատերազմ հրատարակելու Թուրքիոյ դէմ։ Այդ պատճառաւ մինչեւ Նոյեմբեր ամիս ոչ ոք կրցաւ գուշակել սերբ վարչութեան միտքը. որ ըստ իւր բացատրութեանց, կ՝աւելցնէր գունդերը «իր ապահովութեանը համար»։ Կազմեց նաեւ կամաւորաց բանակ մը, որուն մէջ մտան հին Սերբեր, Բոսնիացիք, Սլաւոնք Աւստրիոյ և Բուլղարք։

1877

Բարձրագոյն Դուռը յուզեցաւ և մանաւանդ զայրացաւ որ իրեն հարկատու երկիր մը, զոր տարի մը առաջ ջախջախեր էր, և առ որ ապա այնքան ներողամիտ գտնուեր էր հաշտութեան ժամանակ, հիմա այսպէս շուտ ամեն բան մոռնալով, պատերազմի կը պատրաստուէր. և Սէրվէր փաշա, պաշտօնեայ Արտաքին Դործոց, խիստ տեսակցութեան մը ժամանակ Պ. Քրիստիչի հետ, որ Սերբիոյ գործակատարն էր ի Կ. Պոլիս, սպառնացաւ որ եթէ Միլան իշխանը շարունակէ Բ. Դրան դէմ այսօրինակ ընթացքը, վտանգի մէջ կը դնէր Օբրէնովիչ ցեղին ապագայն. որուն դէմ արդէն դաւեր յայտնուեր էին Քարաճէորճէվիչ ցեղին կուսակիցներէն[1]։

Միլան իշխանը գիտէր որ Սերբիոյ զինուց տարի մը առաջ կրած ձախողութիւնը խախտեր էին իր գահը և յաջող պատերազմ մը միայն կրնար զայն ժողովրդական ընել. որով հազիւ լսեց Պլէվնայի անկումը և Ռուսաց լիովին յաղթութիւնը, անմիջապէս ծանոյց առ Պ. Քրիստիչ, ի Կ. Պոլիս, երթալ առ Սէրվէր փաշա և ծանուցանել, որ ըստ փետրուար 16ի դաշանց, լիովին ներուին շնորհուած էր ամեն սերբիացւոյ որ Թուրքիոյ դէմ զէնք առած էր. և ազատութեամբ իրենց տները դառնալու։ Բայց այս դարձողներուն ամեն նեղութիւնք կը տրուէին։ Դարձեալ Բ. Դուռը զաղտ կ'օգնէր արտաքին դաւաճաններու, «որոնք կ'աշխատէին վրդովելու Սերբիոյ խաղաղութիւնը»։ Այս պատճառաւ Կ. Պոլսէն կը կանչէ իր գործակատարը և ինքզինքը պատերազմական կացութեան մէջ կը հրատարակէ Թուրքիոյ դէմ։ Պ. Քրիստիչ փութով զԿ. Պոլիս թողուցած ըլլալով, առ

---

1. Միլան իշխանը 1876ի պատերազմներուն ձախող ելից համար անժողովրդական եղեր էր. և բանակին մէջ զաղտ դաւ մը պատրաստուեր էր։ Այր Դեկտեմբերի սկիզբը նոր գունդերը պիտի երդնուին ազգային դրօշի վրայ, Քարաճէորճէվիչներուն ծննդավայր՝ Տոպոլայի երկու վաշտ զինակիրք ապստամբեցան։ Սակայն անմիջապէս քանի մը սպաննութիւնք ընկճեցին դաւը։ Մահուան դատապարտուեցան ուրիշ 75 բարձրաստիճան անձինք, որոց պատիժը յետոյ փոխեց Միլան իշխանը։

Սէրվէր փաշա նուիրակութիւնը կատարեց գործակատարութեան առաջին թարգման Պ. Թերխանեան։ Սէրվէր փաշա բնաւ չ'այլայլեցաւ և «Արդէն կը գուշակէինք», ըսաւ. և անմիջապէս իմացուց առ Ուլթանը որ հրատարակութեամբ մը առ Սերբիայիս, զՄիլան իշխանը գահէն անկեալ հրատարակեց «իր անհաւատարմութեանը համար»։ Իսկ Միլան Իշխանը հրովարտակով մը առ իւր ազգը, յետ պախարակելու Թուրք վարչութեան բռնած ընթացքը նկատմամբ 16 փետրուարի դաշանց, յետ յայտնելու որ Սերբիա քիչ ժամանակուան մէջ կազմակերպուեր էր, յետ ծանուցանելու որ այս անգամ միայնակ չէին, այլ պատերազմի դաշտին վրայ պիտի գտնային «դիւցազն և փառօք պսակեալ ռուս բանակը, Մոնտէնէգրոյի իրենց անվկանդ եղբարքը և Ռումէն արի դրացին», կը հռչակէր որ չորրորդ Օբրէնովիչի դրօշը երկրորդ անգամ կը պարզուէր. որուն վրայ գրուած են ազատութիւն և անկախութիւն։ «Ուրեմն յառաջ մարտիկներ, ազատարար կայսեր յաղթական արծիւներուն քովէն, վատահ յԱմենակարողն՝ պաշտպան արդարութեան։ Յառաջ յանուն ազատութեան մեր սիրելի հայրենեաց»։

Որչափ որ Սերբիա Թուրքիոյ դէմ պատերազմ հրատարակելով կը միանար Ռուսիոյ և Ռումանիոյ, բայց իր մտացը մէջ դրած էր առանձին ծրագիր մը. այն է պատերազմական ամեն գործողութիւնքը կատարել Հին Սերբիոյ մէջ, որպէս զի տիրելով անոր, միացնէ իր երկրին։ Ունէր բանակ մը 70,000 հետեւակաց և 3000 հեծեալներու, և 250 թնդանօթ։ Այս բանակը հինգ մաս բաժնեց. Տիմոքի բանակին պիտի հրամայէր Հորվատովիչ հազարապետը. Մորավայի բանակին՝ Լէսժանին հազարապետը. Լյավորի բանակին՝ հազարապետն Նիկոլիչ. Դրինայի բանակին՝ հազարապետն Ալիմպիչ և Շումատիայի բանակին՝ հազարապետն Բէլիմարքովիչ։ Այս բանակները պատսպարելով իսկ Դուրգօ զօրավարը ի Թիկանց, երբ նա յառաջէր Ֆիլիպպէի և Ադրիանուպոլսոյ վրայ, պիտի ջանային միանգամայն տիրելու Հին Սերբիոյ մայրաքաղաքին՝ Նիշի, և ուրիշ քաղաքաց։

Կ. Պոլսոյ պատերազմի պաշտօնարանը որ փետրուարի դաշինքէն վերջը կը համարէր կասկածի տեղ մը չունենալ Սերբիայէն, սահմանագլխոյ և քաղաքներու պահանորդներէն մեծ մասը քաշեր էր, պատերազմի դաշտը ղրկելու համար. այնպէս որ Հին Սերբիոյ պաշտպանութեան համար մնացեր էին միայն 25,000 զինուորը, որոց կը հրամայէր Հաֆիզ փաշա. կային Դրինայի մօտ ուրիշ սակաւ գունդեր ալ Ֆազլը փաշայի հրամանատարութեան ներքեւ. և Ռիֆաադ փաշա նոր զինուորներ հաւաքելով Բոսսովայի վիլայէթէն՝ ամրացաւ Նովի Բազարի մօտ, ուր քիչ վերջը զինքը փակեց Եավորի սերբ բանակը։

Սերբիոյ վարչութեան նպատակն էր տիրել նախ Նիշի, և հինգ բանակներուն ամեն շարժում այդ նպատակն ունէր. արգիլելով թշնամւոյն որ և է օգնութիւն մը Հին Սերբիոյ մայրաքաղաքին։ Դեկտեմբեր 13ի պատերազմին հրատարակուելու օրը, արդէն գունդերը մտեր էին թուրք հողը. և Տիմոքի բանակը քիչ օրուան մէջ տիրեց Ս. Նիկոլայի և Բաբինա Դլավայի. յետոյ չուեց Պիրոտի վրայ. զոր կողմնակի արդէն պաշարեր էր Բէլիմարքովիչ հազարապետը, յետ տիրելու Ալ Պալանքայի ու

աւելի բաշիբոզուքներ. որոնք ամենն ալ փախան, թողլով թշնամւոյն ձեռքը, պաշար, մթերք և զէնք։ Երկու օր վերջը Լէսքովայի ժողովուրդը վանեց սակաւաթիւ թուրք զօրքը և դռները բացաւ սերբ բանակին։ Եավորի բանակը յաջողութեամբ տիրեց Բլատնիցայի և Նիկոլիչ հազարապետը ամրացուց Ռաշիայի և Եուքովոյի բարձունքը։ Սերբ բանակը ամեն կողմ զէնք բաժնեց տեղացւոց, որոնք վանեցին իրենց քաղաքներուն և աւաններուն սակաւաթիւ պահանորդները։ Ասոնք ապաւինեցան Նովի Բազարի, Սիէնիցայի և Նովավարոսի ամրոցները. և Նիշ մնաց կղզիացեալ, առանց հաղորդակցութեան մը թուրք բանակներու։ Բէլիմարքովիչ հազարապետը այն ատեն սաստկացուց Հին Սերբիոյ մայրաքաղաքին պաշարումը և Միլան իշխանը բանակը հասնելով, աւելի եռանդնաւորեց զինուորաց ոգին։ Յունուար 4ին Սերբիացիք սկսան յարձակումները Նիշի շրջակայ ամրոցներուն տիրելու համար։ Կռիւները շարունակեցին 5ին և 6ին։ Յունուար 7ին Սերբ բանակը տիրեց Մարքովոքալէի և Վլասքո Բէշտոյի և Յունուար 8ին սկսաւ ռմբակոծել Կորիցա նշանաւոր բերդը, որուն տիրեց երկրորդ օրը ինչպէս նաեւ Վլինիք և Ազդի փաշա բերդերուն։ Անկէ վերջը յայտնի էր Նիշի առումը։

Խալիլ և Ռաշիտ փաշաները երկրորդ օր նուիրակ ղրկեցին և առաջարկեցին անձնատուր ըլլալու։ Լէսժանին հազարապետին յանձնուեցաւ բանակցելու պայմանաց վրայ, և սահմանուեցաւ որ Թուրք բանակը զնիշ թողու իր ամեն պաշտպանութիւններով. զինուորք զինաթափ ըլլային, բայց ոչ գերի պատերազմի. իսկ սպայք պահէին իրենց սուրը։ Միլան իշխանը հրաման տուաւ նաեւ որ քաղքին մահմէտական երեւելի անձինքը պահեն իրենց սովորական կրած զէնքերնին։ Սերբիացիք աճապարեցին ո՛ր և է կերպով կնքելու անձնատրութեան պայմանքը, որովհետեւ գիտէին Հաֆըզ փաշայի մտենալը դէպ ի Նիշ, որ արդէն տիրեր էր Քուրշումլիէի, խորտակելով պահանորդը և կը յառաջէր փութանակի։

Այն վեց օրուան կռիւներուն մէջ Նիշի դիմաց Սերբիացիք կորսնցուցեր էին 1500 զինուոր. իսկ քաղքին մէջ գտան 200 թնդանօթք, 20,000 հրացան և շատ մթերք։ Բայց ուրախութիւնին չափ չունէր, ձեռք բերելով իրենց այնքան անձկացեալ հին մայրաքաղաքը։

Միլան իշխանը յաղթական շքեղ հանդիսով մտաւ ի Նիշ և ժողովուրդը 16,000 հոգի, մեծաւ մասամբ քրիստոնեայ, եռանդուն կեցցէներով ընդունեցաւ զինքը։ Իշխանը զինուորաց ռուսական նշաններ բաշխեց հանդերձ կեցցէներով «Ազատարար Զարին» Նիկոլա մեծ դքսին և ռուս դաշնակից բանակին։ Բոլոր Եւրոպա գովեց Սերբիոյ բանակին այսքան երագ և այսքան յաջող գործողութիւնքը և աշխարհակալութիւնքը։

Նիշի առմանէն վերջը Լէսժանինի և Շումատիայի բանակներէն մաս մը դիմեց Քուրշումլիէի վրայ, վերջապէս առաւ զայն, բռնեց նաեւ զԲոսսովոպոլիէ։ Շումատիայի բանակին միւս մասը և Հորվատովիչինէն մաս մը, նպատակ ունենալով պաշարելու Հաֆըզ փաշայի բանակը, չուեց Վրանիայի վրայ, Եովանիչ հազարապետին հրամանատարութեան ներքեւ, առաւ զայն յետ քանի մը ժամ մոլեգին կռուոյ, յորում Թուրքերէն գերի բռնուեցան 1730 զինուորք, 48 սպայք և Ռասսիմ փաշա։ Այս միջոցին Հորվատովիչ անցնելով լերանց դժուարին անցքերէն Իւսքիւբի և Պրիստինայի մէջերը, տիրեց Բազանիքի, որ Մէլանիկի երկաթուղւոյն կեդրոնական կայարան մ'է և յառաջեց դէպ ի Պրիցրէտ։ Սերբիացիք յաջող դրութեան մէջ էին և Հաֆըզ փաշայի բանակը ամեն կողմանէ պաշարուած մնալու վտանգի մէջ էր, երբ հեռագիր եկաւ առ Միլան իշխանը որ Զիմադաղարը ստորագրուեր էր և հարկ էր դադրեցնել կռիւները։ Բ. Դուռը ստիպուեր էր հաշտութիւնը աճապարեցնելու, զթշնամին յաղթական տեսնելով մայրաքաղաքին մօտ։

4. — Պլէվնայի առմանէն վերջը ռուս ընդհանուր հրամանատարութիւնը չուզեց օր մը անգամ կորսնցնել. և Նիկոլա մեծ դուքսը յետ յանձնելու Զարէվիչի, միաբան Տոտլէբէն զօրավարին պաշարելու զԻուսֆուք,

Իուսք կ'անցնին Բալկանները։ Զօրավարն Գուրգոկը տիրէ Սոֆիայի։

ինքը բանակը կարգաւորեց, անմիջապէս անցնելու Բալ-կանները և զինադադար մը չստորագրած, որչափ կարելի էր աւելի երկիրներ գրաւելու. յետոյ առաւելագոյն պա-հանջներ ունենալու համար։ Բազմաթիւ գունդեր ճամբայ ելան և հազարաւոր բուլղարք ղրկուեցան Սոֆիայի ճամբան հարթելու համար։ Կարգի դրուեցան երկաթու-ղեաց, հեռագրատանց վարչութիւնքը. մթերքները և պաշարները ամեն տեղ առատ պատրաստուեցան և փութով տրուեցան հրամանները։ Գուրգս և Խատէցքի զօրավարաց բանակները պիտի անցնէին Բալկանները և իրենց գործողութեանց կեդրոն պիտի նկատէին, ա-ռաջինը զՕրխանիէ, և երկրորդը զՏիրնովա։ Յետոյ այս երկու բանակները յաղթական չուելով, պիտի միանային Ադրիանուպոլսոյ քով. և մեծ պատերազմով մը պիտի ապառնային օսմանեան կայսրութեան նախանձելի մայ-րաքաղաքին։

Սակայն այս ամեն պատրաստութիւնք և չուեր, կատարուելով ցրտասառոյց և բքալից ձմեռուան մը մէջ, բնական է չունեցան այն երագութիւնը, զոր կը կարծէր գործադրել Նիկոլա մեծ դուքսը։ Նա մանաւանդ Դեկտեմբեր 15էն վերջը անընդհատ եօթը օր ձիւն մը, եղանակը ցրտացուց զրոյէն 21 աստիճան վար. և ճամ-բաները զոցուեցան, տեղ տեղ երկու մէջը ձիւնով։ Ահաւոր ցուրտէն և սառերէն մեռան հարիւրաւոր զի-նուորք. որոնք բաց ի չուելէ, բռնադատուած էին պա-հանորդ սպասելու բացողեայ, թշնամւոյն յանկարծական շարժմանց տեղեակ ըլլալու համար։

Այս բռնի դադարին ժամանակ, Գուրգս զօրավարը անկարելի դատելով մեծ ճամբաներէ դիմել Սոֆիայի վրայ, որովհետեւ Թուրք սպայակոյտը թէ Ալաբ Քոնաքի և թէ ուրիշ կողմեր բերդեր բարձրացուցեր էր, մտածեց իր սովորական յանդգնութեամբը, չուել կողմնակի և գաղտ ճամբաներէ։ Դրամական վարձատրութեամբ բուլղար հովիւներէ տեղեկացաւ որ կային Բալկանները անցնելու համար նեղ և այծեմանց ճամբաներ, որոնք կրնային հասցնել մինչեւ Սոֆիայի դաշտը. և նախ իր

ապահովութեանը համար այդ ճամբաները փորձել տալով Ստավրոսքի հազարապետէն, Դեկտեմբեր 25ին առաւօտ իւրաքանչիւր զինուորի վեց օրուան ապրուստ տալով, ապա իրախուսական յորդորով, զանոնք ճամբայ դրաւ. տալով նաեւ լեռնային թնդանօթներ, գոյս պիտի քաշէին իրենք։ Երկայն կ'ըլլար թէ համառօտիւ իսկ ուզէինք պատմել ռուս բանակին, ձեռնոյ կոյտերու մէջէն, սառնային եղանակով մը, հինգ օրուան չուն լերանց բարձունքներու նեղ ճամբաներէ։ Շատ մը ռուս գրիչք Բալկաններուն այս անցքը համեմատած են Աննիբաղայ Ալբեանքը անցնելու յանդգնութեանը։ Թիրաւի այս չուն ռուս զինուորական պատմութեան ամենափայլուն էջերէն մէկն է. բայց Աննիբաղայ անցքին հաւասարեցնելու համար, պէտք էր առջեւն ունենալ հռովմէական արթուն և զօրաւոր Հասարակապետութիւն մը, կարքեդոնացի բանակ մը ամիսներով և ծովով հեռու հայրենիքէ, առանց ո՛ր և է զինուորական յենարանի մը։

Թուրք հրամանատարք որ այդ եղանակին այդօրինակ կլիմայով, չէին կրնար կասկածել ո՛ր և է անցքէ մը Իուսաց կողմանէ յարձակում մը, զարհուրեցան երբ Դեկտեմբեր 27ին երեկոյ Դանտրվիլ զօրավարին յառաջապահքը, որոյ առջեւէն քանի մը հարիւր բուլղարք միակերպ ձիւնը նետելով ճամբայ կը բանային, յանկարծ սկսան ռմբակոծել Բունովայի և Միրքովոյի շրջապատող ամրոցքը։ Սակայն երկրորդ օրը բուքին սաստկութեանը մէջ պաշարուած, տեսնելով զինուորայ ոմանց սառիլը, հրամայեց զօրավարն Դանդրվիլ բարձունքներէ իջնել յԵդրոպոլ, ուր մտաւ Դեկտեմբեր 30ին։ Այս չուին միջոց եւս 13 սպայք և 810 զինուորք ցրտէն կորսնցուցեր էին իրենց անդամներէն զոմանս։ Սակայն Դանդրվիլ զօրավարին Պէտրիզէվոյէն Սոֆիա գացող ճամբուն վրայ երեւնալը, սարսափեցուցեր էր Շաքիր և Բաքիր փաշաներուն գունդերը, որոնք սկսան փախչիլ դէպ ի Սոֆիա, կողերէն զիրենք հալածող ունենալով մինչեւ Դաշքէսէնի մօտ, Փուրգոյի գունդերը, որոնք անցնելով Բալկանները Ադրաբ Քոնաքի և Շանտոռնիքի դիրքերէն, կը ջանային

միանալու Դանդրվիլի գունդերուն, Թրքաց նահանջը կտրելու համար։ Սակայն Դանդրվիլի յեղրոպալ քաշուելով, Թուրքերը կրցան ապաւինիլ ի Սոֆիա, Թողլով ձիներուն վրայ 1500էն աւելի մեռեալք և վիրաւորք, որոնք կերակուր եղան գայլերուն, անգղներուն և ագռաւներու։ Բաքիր փաշայի բանակը Պէտրիչէվոյի ճամբուն վրայ մրցեր էր յամառ քաջութեամբ. հոն գնդակի հարուածէ մը ինկաւ Փաղալէ ռուս զօրավարը և մահացու վիրաւորուեցաւ զօրավարն Ֆիլոսոփով։ Վէլիամինոֆ զօրավարը Կորնի Բուրգարովոյի մօտ բաղխեց Թուրք գունդերը, որոց օգնութեան դիմեր էր նաեւ Սոֆիայի հրամանատար Օսման փաշա, սակայն շարունակ հասնող ռուս բանակներուն առջեւ, Թուրք գունդերը բռնադատուեր էին քաշուիլ Սոֆիա։

Զօրավարն Գուրգօ, որպէս զի ժամանակ չտայ Թուրք գունդերուն ամրանալու Սոֆիայի կամ Օրխանիէի մէջ, ուր կային անբաւ մթերք և պաշարք, որոնք Պլէվնայի սահմանուած էին, Յունուար 21ին յառաջեցուց դէպ ի Սոֆիա, կայսերական պահապանաց սիւնակ մը, ուրիշ հետեւակ և հեծեալ գունդերով։ Օսման փաշա բազմաթիւ ջոկատներով բռնած էր Սոֆիայի մօտ գետին վրայէն անցնելու կամուրջը. բայց Ռուսք գտան հուն մը և սկսան անցնիլ դիմաց. այսպէս ի Թիկանց սպառնալով Թուրք գունդերուն, որոնք կրակ տալով կամրջին և աւերելով ամեն բան, ապաւինեցան ի Սոֆիա։ Ռուսք դիմեցին կրակին վրայ և զայն մարելով անցան դիմաց։ Արդէն գիշերը կոխեր էր և Ռուսք Ինացին մօտակայ Վրակոէվնա մօտաւոր գիւղը և երկրորդ օրը Գուրգօ

1878 Յունուար 3։ զօրավարը հրամայեց Վէլիամինոֆ զօրավարին, յառաջել քաղքին վրայ, կտրել անոր հաղորդակցութիւնը Ֆիլիպպէի հետ և գերելու Թուրք պահանորդը։

Սոֆիա՝ եւրոպական Թուրքիոյ վաճառականական նշանաւոր կեդրոններէն մին, ունէր յինքեան 50,000էն աւելի բնակիչ, որուն երրորդ մասը մահմէտական էր, միւս երկուքը առաւելութեամբ բուլղար։ Եւ որովհետեւ չէր կարծուէր որ Ռուսք ձմեռուան մէջ փորձեն տի-

բելու անոր, հոն բերուած էին ամեն պատերազմներէն վիրաւորք և հիւանդք, որոց թիւը 6000էն աւելի էր։ Ռուսաց մօտենալու լրոյն վրայ, կուսակալը հրամայեց այդ հիւանդները սայլերով փոխադրել. յորոց շատերը մեռան ճամբան։ Միանգամայն մահմէտական տարրը սկսաւ փախչիլ Ռադոմիրի ճամբով և քաղքին մէջ տիրեց յետին խառնակութիւն մը և անիշխանութիւն։ Եւրոպական հիւպատոսք պահանջեցին կուսակալէն որ պաշտպանէ իրենց հպատակքը և քրիստոնեայքը. և բանակցի անձնատրութեան մը համար։ Օսման փաշա ծանոյց որ մինչեւ յետին փամփուշտը պիտի կռուէր. և խորհուրդ կու տար հիւպատոսաց և քրիստոնէից իրենց կենաց ապահովութեան համար ելլել քաղքէն։ Սակայն չէին մնացեր կառք, սայլք և անասունք փոխադրութեան համար։ Երբ Յունուար 3ին լսուեցաւ ի Սոֆիա որ Ռուսք կը տիրեն Ֆիլիպպէի ճամբուն, այն ատեն ինքն ալ Օսման փաշա աճապարեց դէպ ի հարաւ Ռադոմիրի ճամբով. և Սոֆիա մնաց բաշիբոզուքներու և չէրքէզներու ձեռք, որոնք աւրեցին կողոպտեցին քաղաքը և չմնաց գազանային անօրէնութիւն որ չգործեն։ Նոյնը փոխադարձ ըրին քրիստոնեայ բուլղարները. և հիւպատոսաց իրենց հպատակներով կազմած պահապանութիւնը, անկարող եղաւ անլուր վայրենութեան դիմացն առնելու։ Երբ ռուս բանակը և Գուրգօ զօրավարը Յունուար 4ին առաւօտ մտան ի Սոֆիա, այն ատեն միայն բաշիպոզուքները և մարդասպանք փախան քաղքէն կամ պահուըտեցան։ Զօրավարն Գուրգօ անմիջապէս զՊէրնոլտի զօրավարը գինուորական կառավարիչ անուանեց Սոֆիայի. ուր ռուս բանակը գտաւ անհամար պատերազմական մթերք և պաշար։

5. — Գուրգօ զօրավարին այս յաջողութեանց ժամանակ, զօրավարն Ֆարցով կրցեր էր անցնիլ Բալկաններուն ամենարարձր կէտէն, Տրոյանի կիրճէն, և Յունուար 8ին ռոներ էր զՍոպոտ և զՓարլովօ, այսպէս Բալկաններէն հաղորդակցութիւն հաստատելով Գուրգոյի և Ռատէցքիի բանակաց մէջ։

Զրպգայի թուրք բանակին անձնատուր ելլալը։

Զօրավարն Ռատէցքի կը գտնուէր միշտ Զրպգայի դիմաց, ուր ամրացած էր Թուրք բանակ մը, որուն հրամանատարութիւնը Սիւլէյման փաշայի փոխուելէն վերջը, յանձնուած էր զօրաբաժնի զօրավար՝ Վէյսէլ փաշայի։ Ռուս բանակին համար անհրաժեշտ կարեւոր էր վանել Զրպգայէ Թուրք բանակը և տիրել ամրողջովին այդ անցքին, ի Թիկանց սպառնալիք մը չունենալու համար։ Զօրավարն Ռատէցքի Յունուար 6ին հրամայեց Սքորէլէֆ զօրավարին և Սվիատորոլսք Միրսքի իշխանին, իրենց զօրաբաժիններով ձիւներու կոյտերու մէջէն ցրտասառոյց եղանակին, շրջանով մը բռնել Թուրք բանակին կողերը և Թնդանօթներ տեղաւորել զառիվայրերուն վրայ, մինչ ինքը Ռատէցքի, պիտի բաղխէր ճակատէն Թուրք բանակը։ Այս կարգադրութիւնք հաւիւ երեք օրուան մէջ կատարուեցան։ Յունուար 9ին առաւօտ Վէյսէլ փաշա ինքզինքը շրջապատուած տեսնելով, սկսաւ շարունակ ռմբակոծում մը իշխան Սվիատորոլսք Միրսքի զօրաբաժնին վրայ. որուն պատասխանեցին ռուս հրանօթք նոյնպէս եռանդեամբ։ Կէսօրին զօրավարն Ռատէցքի բուռն բաղխում մը սկսաւ ճակատէն, որուն յաջորդեց Թուրք պատնէշներուն վրայ աղաղակաւ մոլեգին յարձակում մը։ Հոն ցրտասառոյց մառախուղի մը ներքեւ, դիւցազնական մենամարտ մը սկսաւ սուրով և սուինով և հազարաւորք տապալեցան երկու կողմանէ։ Ռուսաց միշտ նոր օգնութիւնք կը հասնէին. իսկ Վէյսէլ փաշա թշնամւոյն կացութեանը ճշգրիտ տեղեկութիւն չունենալով, իր բանակին կէսը հրանօթներով անգործ թողուցեր էր ի Ս. Նիկոլա։ Ռուս յարձակողք մէկ ժամուան մէջ արդէն տիրեր էին երկու կարգ Թուրք պատնէշներու, երբ Սքորէլէֆ զօրավարը դիտեց Թուրք գունդերուն դէպ ի Փրզանլրքի ճամբան նահանջելը։ Այն ատեն հեծելոց ջոկատ մը դրկեց բռնելու ճամբան. և Միրսքի իշխանը գունդ մը դրկեց և բռնեց զՓրզանլրք, այսպէս կտրելով Թուրք բանակին նահանջելու ամէն յոյսը։ Վէյսէլ փաշա, որուն կը պակսէր իր նախորդաց յանդգնութիւնը և իրախոյսը, ինքզինքը բոլորովին

լինցած համարելով, մինչ ունէր տակաւին 12,000էն աւելի թարմ բանակ մը իրեն հրանօթներովը, որոնցմով կարող էր կտրել անցնիլ Քըզանլըքի ճամբուն վրայի սակաւ և խոնջ ջոկատները, անմիջապէս բարձրացնել տուաւ սպիտակ դրօշը և լուր ղրկեց առ Սքորէլէֆ, զալ ստանալու իր սուրը։ Թուրք գունդերը կը կոուէին Ռատէցքիի զօրաց դէմ և մեծ բողոքներով ընդունեցան իրենց հրամանատարին զինադադարութեան հրամանը։ Նոյն աւուր Սքորէլէֆի յանդգնութիւնը և արութիւնը ձիւնապատ լերանց մէջ, հասեր էր դիւցազնութեան կէտին և սարսափեցուցեր էր զվէյսէլ փաշա որ ռազմագիտական բռնադատութենէ աւելի, անձնատուր եղեր էր շուարումէն, իր բազմաթիւ բանակովը։ Վասն զի Զրպգայի առմամբ գերի կ'ըլլային 31,500 Թուրք զինուորք, յորս 4 փաշայք և 80 բարձրաստիճան սպայք, 100էն աւելի հրանօթք, շատ մը մթերքներով և պաշարով։ Թուրք բանակին կորուստն էր ընդ մեռեալ և ընդ վիրաւոր 6000ի մօտ. իսկ Ռուսացը 5464, յորս Ֆոմբրովսքի զօրավարը։ Բայց որչափ ալ ծանրագին եղած էր Ռուսերուն համար այս յաղթութիւնը, սակայն Զրպգայի անկումը վերջին մեծ հարուածն էր Թուրք բանակին. և չկար ուրիշ ստուար բանակ մը մինչեւ Ադրիանուպոլիս, մինչեւ ի Կ. Պոլիս. չկար ռազմական ոչ և է յենարան մը և բաց էր ռուս բանակին առջեւ դիրքնթաց ճամբայ մը։ Յունուար 12ին մեծ դուքսն Նիկոլա Բոգդէն հասաւ ի Քըզանլըք, Զրպգայէն անցնելով. և հոն հաստատեց իր բանակատեղին։ Անմիջապէս կարգադրեց երագ չուս մը դէպ ի Ֆիլիպպէ և Ադրիանուպոլիս, դեռ զինադադարման խնդիրը հաստատութիւն մը չ'առած։

Զօրավարքն Գուրգո և Քարցով իրենց հետեւակ և հեծեալ գունդերով, ամենն ալ տարբեր ճամբանեբէ, պիտի չուէին դէպ ի Ֆիլիպպէ և Ադրիանուպոլիս. ուր պիտի միանային Սքորէլէֆ և Ռատէցքի զօրավարաց։

Ռուսք ի Ռուսվլի. — կը տիրեն Թաթար Բազարճիքի, Ֆիլիպպէի, Ադրիանուպոլսոյ։

6. — Սակայն այս երկու քաղաքաց ճամրան բանալու համար, հարկ էր նախ տիրել Թաթար Բազարճիքի, գլուխ Ադրիանուպոլսոյ երկաթուղոյն, ուր ամփոփուեր էր Միւլէյման փաշա Դաշքէսէնի կուէն վերջը. ամրացնելով մանաւանդ Սամաքովոյէն եկող ճամբան։ Հոն հասաւ Յունուար 8ին նաեւ Շաքիր փաշա իր քովը մնացած զինուորներով։

1878 Զօրավարն Դուրգօ իր բանակը զանազան սինակ բաժնելով, որոց կը հրամայէին զօրավարքն Վէլիամինոֆ, Շուվալոֆ, Շիլտնէր Շուլտնէր, բարոն Քրիւտնէր և Քոմարովսքի, Յունուար 10ին հրամայեց ամենուն յառաջելու այլ և այլ ուղղութիւններով. միշտ առջեւնէն հալածելով Թուրք գունդերը, որոց ամէն մէկ Թողուցած աւան կամ գիւղ հրդեհէ կը միայն բանակին ետեւէն եկող բաշիբոզուքներէն և չէրքէզներէն։ Երբ ռուս սինակները մօտեցան Թաթար Բազարճիքի, Միւլէյման փաշա արդէն լսած ըլլալով որ Քարցով զօրավարը անցեր էր Տրայան կիրճը և կը չուէր դէպ ի Ֆիլիպպէ Թողուցեր էր զԹաթար Բազարճիք և դիմեր էր պաշտպանելու զՖիլիպպէ որ իր զինուորական գործողութեանց յենարանն էր։ Յունուար 14ին կոմսն Շուվալոֆ մոտաւ ի Թաթար Բազարճիք, քաղքին հարիւրաւոր տանց հրդեհին բոցովը լուսաւորուած. որովհետեւ Ֆուատ փաշա կրակ տուեր էր նաեւ մթերքներուն և պաշարներուն, որպէս զի թշնամւոյն ձեռքը չ'ինկնան։ Կոմսն Շուվալոֆ աւերակ դարձած քաղաքին սակաւ պահանորդք դնելով, յառաջեց դէպ ի Ֆիլիպպէ, ուր կը դիմէր նաեւ Վէլիամինոֆի սինակը։ Ռուս հետեւակը որուն կը հրամայէր Քովալեւսքի զօրավարը, առաջին անգամ բաղխեցաւ չէրքէզ հեծեալներու հետ ի Զէփէրլի. և երբ հեծեալը, զօրավար բարոն Կլոտի առաջնորդութեամբ մօտեցաւ Ֆիլիպպէի կէսօրէն վերջը, Թուրք հրանօթները կրակ սկսան Թափել հեծելազնդին վրայ, որ պրտուտակ շրջանով բոլորեց քաղաքը, Ադրիանուպոլսոյ ճամբուն տիրելու համար։ Այն ատեն Միւլէյման փաշա հրամայեց Թողու նաեւ զՖիլիպպէ։ Ֆուատ փաշա տեղեկու-

թիւն մը չունենալով ինքն եւս յետ զուպարածներու ի Քատրքէոյ և յԱյրանը կը դիմէր ի Ֆիլիպպէ իր 15,000 զինուորքը միացնելու Միւլէյման փաշայի 20,000 զօրաց, որոցմով պիտի ընդդիմանային Գուրգաս զօրավարին 70,000 զինուորներուն։

Ֆիլիպպէ կամ Ֆիլիպպոպոլիս 14,000 բնակչօք, գեղեցիկ, ծառազարդ և բարձր դիրքով, Բուլղարիոյ ազգային հայրենասիրական ամենէն աւելի յատկանիշ կրող քաղաքն էր յետ Սոֆիայի. և ռազմագիտական տեսակէտով շատ աւելի կարեւոր։ Ռուսք Ֆիլիպպէի տիրելէն վերջը կրնային իրենք զիրենք համարել արդէն յԱդրիանուպոլիս և եթէ դիւանագիտական կնճիռներ չյառնէին, նաեւ Կ. Պոլսոյ դուռը։ Յունուար 15ին երբ Շուվալօֆ և Վէլիամինօֆ զօրավարաց սիւնակները հասան Ֆիլիպպէի դիմաց, չէրքէզք և բաշիբոզուքները արդէն կրակը տուեր էին Քէշիաքա արուարձանին, զոր Մարիցա գետը կը բաժնէ բուն քաղաքէն։ Քաղաքը հրդեհէն և աւարառութենէն պահպանելու համար, պետութեանց հիւպատոսները ներքին զինուորութիւն մը ձեւացուցին և զէնք տուին հազարէն աւելի կաթոլիկ բուլղարներու և կարգը պահելու տենչացող քաղաքացիներու. այնպէս որ երբ ռուս գնդապետն Բուրգաս Յունուար 15էն 16ի գիշերը հասաւ Ֆիլիպպէի երկաթուղւոյն կայարանը, ուսկից կը փախչէին բոլոր թուրք զինուորք, յորս նաեւ Միւլէյման փաշայ, բուն քաղաքը օտարազգի պաշտպանութեան ներքեւ էր. և Ռուսք մտան առանց ընդդիմութեան։ Երկրորդ օրը իր յաղթական մուտքն ըրաւ զօրավարն Գուրգաս։

Այս պահուն արդէն Վէլիամինօֆի սիւնակը յառաջեր էր ի Դէէրմէնդէրէ, Ֆուատ փաշայի նահանջը կտրելու համար։ Հոն ռուս և թուրք գունդերը զարնուեցան մէկմէկու և թուրքերը թողուցին դաշտին վրայ 600 դիակունք, և կրկին ամրացան Դէէրմէնդէրէի մէջ. և Ֆուատ փաշա իր յամառ քաջութեամբ կրցաւ երկու օր ընդդիմանալ Ռուսաց հեղեղօրէն յարձակման։

Յունուար 16ի երեկոյ Քրազնոֆ զօրավարը բուն

յարձակմամբ փաշա Մահալլէի վրայ, տիրեց Թրքաց 18 Թնդանօթներու, զորս յետոյ ձեռք բերելու համար, երկու անգամ մոլեգին բաղխմամբ յարձակեցան Թուրքերը և վանեցան լերանց մէջ։ Յունուար 16ին գիշերը Ռուսք կրցան բռնել Քարաաղաճ և փաշա Մահալլէ գիւղերը։ Այս կռիւներուն մէջ դիւցազնական արութիւն ցոյցուցեր էր Ֆուատ փաշա, մինչ անընմբռնելի երեւցեր էր Սիւլէյման փաշայի ծրագիրը, որ հոգ չ'ընելով պաշտպանելու զԹաԹար Բազարճիքը, յետոյ նահանջներուն մէջ միշտ յառաջապահներուն հետ էր, և պատերազմելու առիԹներէ խորշող։

Յունուար 17ին առաւօտ զօրավարն Դուրգօ իմանալով որ դիմացէն փախչող բանակը, ամբողջ Ռումէլիի բանակն էր, ղրկեց Սքորէլէֆ (հայր՝) և Քրազնոֆ զօրավարները, որ Սքորէլէֆ (որդի՝) զօրավարին հեծելոց հետ բռնեն Ֆիլիպպէէն ղէպ ի Ստանիմաքի և Ադրիանուպօլիս ճամբան. մինչ Շիլտնէր Շուլտնէրի, Վէլիամինոֆի և Դանդրվիլի բանակները դիմեցին Քարաաղաճի վրայ, և տիրելով Դէսպոտտաղի, հոն գետեղեցին Թնդանօթներ։ Ֆուատ փաշա ժողովեց ցրուած գունդերը և յետին ճիգը Թափեց ազատելու զՔարաաղաճ. սակայն Շուվալոֆ զօրավարին ղրկած Թարմ 30,000 զինուորքը, ահաւոր բաղխմամբ վանեցին Թուրք յոգնած գունդերը, որոնք Բէշէսնիցայի կիրճէն սկսան փախչիլ լեռներուն մէջ. իրենց ետեւէն մինչեւ մութը կոխելուն հալածող ունենալով ռուս հետեւակը. և անցքերուն վրայ Թողլով 2000էն աւելի մեռեալներու դիակունք։ Ռուսաց կողմանէ ինկեր էին 400 անձինք։ Բայց Յունուար 17ի կռիւը Ռուսաց դիմացէն կը վերցնէր վերջին պատուաւորը. և Սիւլէյման փաշա հապճեպ ընԹացքով ապաւիներ էր նախ Եումուրճուքի մէջ, ուսկից անցաւ Քավալա բոլոր Ինացած զօրքովը, մտիկ չ'ընելով Ֆուատ փաշայի Թախանձանաց՝ յետին ընդդիմութիւն մը փորձելու։ Սիւլէյման փաշա ի Քավալա պատրաստ գտաւ մարտանաւ մը, իր զօրքերով կ. Պոլիս փոխադրուելու։ Բայց երբ հասան ի Դարդանէլ, Սիւլէյման փաշա նաւուն վրայ

կալանաւորուեցաւ իբր մատնիչ, զինուորական ատենով դատուելու համար[1]։

Այս միջոցիս ռուս երեք բանակք, ընդ հրամանատարութեամբ Սքոբէլէֆ, Ռատէցքի և Կանէցքի զօրավարաց կը յառաջէին դէպ ի Ադրիանուպօլիս, որ թէպէտ ունէր զօրաւոր բերդեր, բայց Ահմէտ Էյուբ փաշա զանոնք պաշտպանելու համար, ունէր միայն 6000 զինուորք և 60 թնդանօթք։ Զօրավարն Ստրուքով, Սքոբէլէֆի զօրաբաժնէն, Յունուար 13ին հրաման ստացաւ հեծեալ գունդերով երագ հասնիլ Ադրիանուպօլիս. և Ստրուքով յանդուգն և դիւցազնական ընթացքով մը տիրեց նախ Սէյմէնլիի, յորում արիական դեր մը կատարեց Ամասով գնդապետը։ Ադրուքով անցաւ Մարիցա գետը։ Ալէքսիէվ հազարապետը յաջողեցաւ կտրել՝ Ֆիլիպպէի և Ադրիանուպօլսոյ մէջ եղած հաղորդակցութիւնը և հասնիլ ի Տիրնովօ. ուսկից անցաւ Հարմանլի, ուր հասեր էին Սէրվէր և Նամբք փաշաները, որոնք զինադադարման մը բանակցութեան նպատակաւ կ'երթային ի Քրզանլըք առ մեծ դուքսը. և որոց աչքին առջեւ Ռուսք տիրեցին Հարմանլիի, ահաւոր և արիւնահեղ կռուով մը. բռնեցին Ֆիլիպպէ և Ադրիանուպօլիս տանող երկաթուղւոյ գծերը և Յունուար 18ին հեծելոց վաշտ մը բռնեց զՄուսդաֆա փաշա։ Հոն հասաւ նաեւ Սդրուքով զօրավարը որ շարունակեց դէպ ի Ադրիանուպօլիս և մօտեցաւ քաղաքին. ընդունեցաւ նաեւ նուիրակութիւն մը քաղքին նշանաւորներէն, որ կ'աղաչէր փութով հասնիլ, և քաղաքը ազատել հրդեհէ և աւարառութենէ։ Որովհետեւ Ռուսաց բանակին մերձենալովը Ահմէտ Էյուբ փաշա իր 6000 զինուորքը և

---

1. Հարցաքննութիւնները տեւեցին չորս ամիս մինչեւ 1878ի Դեկտեմբերը։ Միւէյման փաշա անձամբ, հանդարտ կերպով պաշտպանեց իր դատը որ շատ կէտերու մէջ հմուտ և գեղեցիկ դատախօսութիւն մ'էր ռազմագիտական, և զոր հետաքրքրութեամբ կ'ընթերցուին ամեն աշխարհաց զօրավարք։ Զրկուեցաւ մարշախտութենէն և 15 տարի բերդարգելութեան դատապարտուեցաւ. և տարուեցաւ ի Բաղդատ, ուր մեռաւ քիչ տարի վերջը։

60 թնդանօթքը ճամբայ հաներ էր դէպ ի Կ. Պոլիս։ Իսկ կուսակալը Ճէմիլ փաշա պալատը կոչեց յոյն, հայ, հրեայ հասարակութեանց գլխաւորքը, և իմացուց որ մայրաքաղաքէն ստացած հրահանգին համեմատ, մինչեւ Ռուսաց մտնելու ժամանակ քաղաքին պահպանութեան յանձնաժողով մը ընտրել տուած էր, զոր կը կազմէին երկու հայ, երկու յոյն, երկու հրեայ և մէկ մահմէտական. այդ վարչութեան նախագահ դրաւ զՖասսո էֆէնտի, պետութեան թարգմանը։ Ասոնք էին որ Յունուար 18ին նուիրակութիւն ղրկած էին առ ռուս զօրավարն Սդրուքով, որ մեկնեցաւ նուիրակութեան հետ դէպ ի Աղրիանուպօլիս, ճամբան հանդիպելով բազմաթիւ բուլղար քրիստոնեայ խումբերու, որոնք ընդառաջ կը դիմէին ռուս բանակին։ Եկեր էին նաեւ Յունաց արքեպիսկոպոսը, և Աւստրիոյ հիւպատոսը։ Սդրուքով Յունուար 20ին մտաւ յԱդրիանուպօլիս, թուրքիոյ երկրորդ մայրաքաղաքը, որ ունէր 120,000 բնակիչ։ Յունուար 22ին հասաւ նաեւ Սքոբէլէֆ զօրավարը։

Սքոբէլէֆ կը չուի ի Կէլիպօլուն։

7. — Անկէ վերջը Ռուսաց բաց էր Կէլիպօլուի և Կ. Պոլսոյ ճամբան. և ապահով փութով պիտի ընթանային մինչեւ հոն, եթէ Անգղիոյ պետութիւնը ծանուցած չ'ըլլար որ դէպ ի Կ. Պոլիս ընթացք մը, պատերազմի արկած կը նկատէր։ Այսու հանդերձ տասնեւհինգ օրէ ի վեր վիճուած զինադադարը ստորագրուած չ'ըլլալով, մեծ դուքսն Նիկոլա հրամայեց Ստրուքով զօրավարին, իր հեծեալ գունդերով յառաջել դէպ ի Քրրք Քիլիսէ և Լիւլէ Բուրկաս, մինչ Շնիտնիքոր զօրավարը կը ղրկուէր Կէլիպօլուի վրայ, Դիմէտոքայի և Ուզուն Քէօփրիւի կողմէն. որոց դիւրաւ տիրեց ռուս զօրավարը։ Իսկ Ստրուքով տիրեց Բաբա Էսքիսի աւանին. ուսկից մեկնելով Քուտէյնիքով հազարապետը, տիրեց Լիւլէ Բուրկասի։ Այսպէս ռուս բանակը առանց մեծ ընդդիմութեան մը տարածուեցաւ ամեն կողմ. եղան միայն փոքր զուպարածներ։ Զոռլուի քով Դոնդուքով Գորսաքով երիտասարդ իշխանը, թէպէտ վիրաւորուած, շարունակեց կռուելու. և Զոռլու Ճնաց Ռուսաց ձեռքը, ուր Սդրուքով

զօրավարը գտաւ առատ մթերք և պաշար։ Հոն ընդունեցաւ Իոտոսդոյի քրիստոնեայ բնակչաց նուիրակութիւն մը, որ զինքը կը հրաւիրէր աճապարելու հասնելու իրենց քաղաքը, զայն հրդեհէ և յափշտակութենէն ազատելու համար։ Ստրուքով մտաւ Իոտոսդո ուսկից անցաւ Սիլիվրիի դիմաց։ Հոն լուր ստացաւ զինադադարման ստորագրուելուն, որուն մէկ յօդուածին համեմատ, Սիլիվրի եւս Ռուսաց պիտի յանձնուէր։ Թուրք հրամանատարը պատճառելով որ ինքը դեռ լուր առած չէր, դանդաղեցաւ յանձնելու քաղաքը. և Ստրուքով մտաւ բռնութեամբ ի Սիլիվրի, նոյնը ըրաւ նաեւ ի Զաթալճա։ Այսպէս ռուս բանակը կանգ առաւ կ. Պոլսէն 50 քիլոմէդր հեռու։

8. — Քանի որ Պլէվնա կանգուն կ'ընդդիմանար և Բալկաններուն անցքերը ապահովուած չէին, Ղեղեսանդր կայսրորդւոյն բանակը, ի թիկանց իբրեւ ապաւէն մը կեցած էր ռուս բանակներուն, Դանուբի ճամբուն վրայ. և Միմմէրման զօրավարին գունդերը Դոբրուճայի անցքերը կը պահպանէին. խափանելով Թրքաց դէպ ի Ռումանիա արշաւանք մը։ Պլէվնայի անկումէն վերջը, երբ Զարէվիչի բանակը ազատ էր յառաջելու, դիմեց դէպ ի Վէրբիցա և կռիւ մը երբէք չ'ունեցաւ մինչեւ զինադադարման ստորագրուիլը։ Զարէվիչի և Միմմէրմանի բանակները. — Բազարճըքի կռիւը։

Իսկ Միմմէրման զօրավարին բանակը Յունուարի մէջ յառաջեց դէպ ի Բազարճըք, ուր կային մօտ 16,000 եգիպտացի զինուորք, 4000 Թուրք հետեւակք, 1500 հեծեալք և 42 թնդանօթք։ Ընդհանուր հրամանատարն էր Ռէշիտ փաշա որ բազմաթիւ թշնամւոյն յառաջելուն վրայ, Յունուար 26ին քաղքէն ելք մը փորձեց և զօրաւոր բաղխումով մը, յորում Ռուսաց կողմանէ շատ քաջացաւ Իզմայլով հազարապետը, կրցաւ քաղքին մօտ բլրան մը վրայ զետեղել թնդանօթները։ Միմմէրման զօրավարին անհրաժեշտ էր Բազարճըքի տիրելու Դէլիինկհաւզէն զօրավարին բանակին հետ միանալու համար։ Նիլսոն հրամանատարը 10 թնդանօթով յարձակեցաւ բլրան վրայ և վանեց եգիպտացի գունդերը։ Սակայն Ռէշիտ փաշայի հասած նոր օգնութիւններ, ռուս գուն-

1878

դերը վտանգի մէջ դրին. և յետ մոլեգին կուոյ մը երկու կողմանէ Էյլէնճիք գիւղին քով, որուն տիրեցին Ռուսք, Թուրքերը սկսան ետ քաշուիլ, Թողլով պատերազմի դաշտին վրայ մոտ 600 մեռեալք։ Ռէշիտ փաշա զՌազգրադ պաշտպանելը անկարելի դատելով, բանակովը նահանջեց ի Վառնա, հոնկէ գունդերը ծովով կ. Պոլիս ղրկելու համար։ Իսկ զօրավարն Դիմիտրիան Յունուար 27ին յաղթանակաւ մտաւ ի Բազարճիք. ուսկից Թուրքերը ելլելու ժամանակ կրակ տուած էին այլ և այլ հասարակաց շէնքերու. և հոն Թողուցեր էին զինուորական հիւանդները և վիրաւորները։

Յունուար 31ին Ռուսք տիրեցին նաեւ Հէյրէճիի կայարանին. և Փետրուար 3ին Մոնսէ զօրավարը հասնելով Փոտլուրէյ գիւղը, բռնեց Շումլայէ դէպ ի Վառնա ճամբան, կտրեց Վառնայի հեռագիրը և մտաւ ի Պրավոտի. որուն ժողովուրդը ընդառաջ եկաւ իրեն ընծայելով հաց և աղ։ Զօրավարն Մոնսէ կը յառաջէր ի Դէրբէնտքէոյ, երբ լուր առաւ որ զինադադարը ստորագրուեր էր Յունուար 31ին։

1877ի և 1878 նաւական պատերազմներ։

9. — Օսմանեան նաւատորմիղին, բաղդատմամբ Ռուսիոյ ծովային զօրութեան, անհամեմատ առաւելութիւնը, մեծամեծ յոյսեր տուեր էր Թուրքիոյ յաջողութեան՝ օգնականութեամբ զրահաւորաց։ Սակայն այդ նաւերը, ինչպէս տեսանք պատերազմին սկիզբէն, բնաւ չունեցան յուսացեալ արդիւնքը։ Մի այն Բաթումի նաւահագիստն էր որ ընդերկար ընդդիմացաւ Ռուսաց յարձակմունքներուն։ 1877ի Մայիսի սկիզբները, Բարձրագոյն Դուռը շրջաբերականով մը, պաշարման վիճակի մէջ դրեր էր Սեւ Ծովուն ամբողջ ռուսական եզերքները։ Բայց այս պաշարումը ոչ ազդեցութիւն ունեցաւ և ոչ պահուեցաւ. այնպէս որ Աբքաս ռուս ծովակալին մարտանաւք ազատ կը շրջէին. և վաճառականական երթեւեկք շարունակեցին Օտեսսայի, Քերսոնի, Նիկոլայէվի և Եւպատորիոյ մէջ։ Եթէ բռնուէին օտար նաւեր, օսմանեան ծովային հրամանատարութիւնը բերել կուտար Վոսփորի բերանը։ Անկէ վերջը պետութեանց դեսպաններուն

թարգմանաց ճարպիկութենէն կախումն ունէր զանոնք երագ կամ ուշ ազատել՝ և կ'ազատէին։ Ռուս ծովակալութիւնը եւս նաւեր հանեց արշաւելու Սեւ Ծովուն վրայ. և Կոստանդին մեծ դուքս մարտանաւը բռնեց Սինոպի դիմաց առագաստաւոր նաւեր։ Բայց Փոստանցայի վրայ Բարանոֆ նաւապետին վէստա մարտանաւով յարձակումը Ֆէբհի Բուլէնտ զրահաւորին վրայ, ծովային պատերազմաց մէջ նշանաւոր տեղի մը կը բռնէ. յորում մեծ արութիւն ցրցուց Զէրնոֆ հազարապետը որ հարուածեալ գնդակէ մը, մեռնելու ժամանակ «Մնա՛ք բարեաւ, կը գոչէր, կրակը աջ կողմի թնդանօթէն ուղղեցէք»։ Իրեն տեղը անցաւ Ռոճէստվէնսքի տեղապահ նաւապետը. և Ֆէբհի Բուլէնտ հսկայական կռուով մը մեծապէս հարուածեալ վէստա նաւէն, բոլորովին ջնասուած, հազիւ ապաւինեցաւ ի Սուլինա։

Անկէ վերջը ռուս մարտանաւք ազատաբար սկսան շրջիլ Սեւ Ծովուն վրայ։ Ծովակալն Բարանոֆ ռուս մարտանաւով մը Դեկտեմբեր 23ին յարձակեցաւ Մէրսինի 1877
շոգենաւին վրայ, որ Տրապիզոնէ կու գար ի Կ. Պոլիս, բերելով մօտ 800 զինուորագրեալք և կամաւորք և զայն կալանաւորեց։ Մէրսինի բռնուիլը մեծ շառաչ ունեցաւ ի Կ. Պոլիս։ Թուրք խօսարանին մէջ Ռէուֆ փաշա, պաշտօնեայ պատերազմի, ուզեց փոքրկացնել կարեւորութիւնը։ Սակայն աւելցաւ յամենուստ Հորարդ փաշայի դէմ տժգոհութիւնը, որ լրագրաց մէջ ջանաց ինքզինքը արդարացնել ամեն յանցանք ձգելով մարտանաւերուն խեղճ վիճակներուն վրայ։ Զյիշեց սակայն որ հրամանատարութեան մէջ չկար միակ ուղղութիւն մը, և հակառակընդդէմ կը գործէին ինքը և Հասան փաշա։
Յունուար 11ին Թուրք մարտանաւք աննպատակ ռմբա- 1878
կոծեցին զԵւպաթորիա, անկէ անցան ի Թէոդոսիա[1] և յԱնապա. յետոյ քաշուեցան։

---

1. Թէոդոսիայի այս ռմբակոծմանէ փնասուած շէնքերուն մէջ էր նաեւ հռչակաւոր հայ պատկերահան, Այվազովսքիի տունը, և հայ-կաթոլիկաց եկեղեցին։

Մակարով նաւապետը Կոստանտին փոքը մարտանաւով կրցաւ մօտենալ Բաթումի և ոմբակոծել Թրքաց հոն հաւաքած եօթը մարտանաւերը։ Այսու հանդերձ Թուրք նաւերը կրցան պահպանել զԲաթում, և ծովային կռիւները, Թուրք–ռուս պատերազմ ին վրայ որոշիչ ազդեցութիւն մը չունեցան։

Մոնտէնեգրոյի պատերազմներ։

10. — Մոնտէնէգրոյ Նիկոլա իշխանը Նիքսիչի առմանէն վերջը, պատրաստուեցաւ մօտ երեք ամիս իր երկիրը ընդարձակելու դէպ ի հարաւ և ձեռք բերելու Անտիվարիի և Դուլչինիոյի նաւահանգիստները, զորս ամենակարեւոր կը համարէր իր երկրին անկախութեան և վաճառականութեան համար։ Ցետ միանգամ ազոնց տիրելու, յուսով էր որ խաղաղութեան դաշանց ժամանակ իրեն թողուին։ Հոկտեմբեր 30ին անցաւ սահմանագլուխը դէպ ի Ալբանիա, ուր Թուրքերը թուղուցած էին զԱլի Սայիբ փաշա քիչ գունդերով, և Մոնտէնէգրոցիներէն աւելի նուազ հրանօթով։ Մարկո Միլիանով վոյվոտան 12 ջոկատներով բաժնեց նախ Շքոտրայէն[1], ուր կար Թուրք բանակ մը, զՍպուշ և զՊոկկորիցա. տիրեց Անտիվարի քաղաքին և Դոլորբէտոս բերդին։ Թրքաց ձեռքը մնաց սակայն Անտիվարիի քար
1877 կոչուած միջնաբերդը և Դուլչինիո։ Նոյեմբեր 18ին Պլամէնաց վոյվոտան 600 հոգւով յարձակեցաւ Անամալիտի վրայ ուր բանակած էր քիչ պահանորդով Հակքի փաշա, որ կուոյն մէջ կորսնցնելով հարիւրի մօտ անձինք, ինքն ալ քաշուեցաւ դէպ ի Շքոտրա։ Մոնտէնէգրոցիք յետոյ պաշարեցին Անտիվարիի նշանաւոր միջնաբերդը, վենետկեցիներէն շինուած, որու կը հրամայէր Թուրք կտրիճ հազարապետն քիւրտ Իբրահիմ բէյ։ Ռոճտար Պետրովիչ վոյվոտան եւս յետ բաղխելու Հակքի փաշայի բանակը, Նոյեմբեր 26ին տիրեց Դուլչինիոյի, զոր ի զուր ջանացեր էին պաշտպանել երկու օսմանեան մարտանաւք. և միացաւ Անտիվարիի

1. Շքոտրա կամ Սկուտարի։

միջնաբերդին պաշարողաց։ Իբրահիմ բէյ տեսնելով որ անկարելի էր ընդդիմանալ և կը պակսէր պաշարը, Աստրիոյ հիւպատոսին առաջարկեց որ ընդունի միջնաբերդը. երբ նա հրաժարեցաւ, այն ատեն Յունուար 10ին անձնատուր եղաւ Նիկոլա իշխանին, որ ամենայն պատուով վարուեցաւ Թուրք պահանորդին և քաղաքացւոց հետ։ Մոնտէնէգրո իր մեծագոյն նպատակին հասնելէն վերջը, կարգաւ տիրեց Գրմոյար, Լէոսէնտրա և Վրանինա կղզիներուն բերդորէից. և մինչդեռ հետամուտ էր Սպուշ և Շարլիաք քաղաքներուն անձնատրութեան պայմանաց, լուր առաւ զինադադարման, յորում կար նաեւ Մոնտէնէգրո։

11. — Բայց Մոնտէնէգրո զէնքը վար դրած ժամանակ, Յունաստան,՝ խիստ ուշ, ապագայ օգտի մը յուսով, սկսաւ յուզուիլ և զինուորական հանդերձանքներով և գրգռութիւններով յոյն թրքահպատակ գաւառաց մէջ, յայտնապէս ցուցընել իր թշնամութիւնը օսմանեան պետութեան։ Մանաւանդ որ 1871 գաղղիա-գերման պատերազմէն վերջը, երբ Գաղղիա կորսնցուց իր ազդեցութիւնը և Ռուսիա ամենազօր դառնալով Կ. Պոլսոյ մէջ, 1872ի Ապրիլ 24ին Բուլղարաց տրուեր էր յոյն ընդհանրական պատրիարգէն անկախ նուիրապետութիւն մը, այն ատենէն յոյն ազգը յուզուեր էր մեծապէս. բայց կղզիացեալ և փոքր, չկրցաւ սպառնական պահանջ մը ընել. և չունէր իսկ յարմար առիթ մը։ Երբ լորդ Սոլզբրի կը դառնար Կ. Պոլիս դեսպանաժողովէն, յԱթէնս նուիրակութիւն մը ընդունելով, ըսեր էր անոր «Տեարք, յունական խնդիր չկայ։ Բուլղարք ապստամբեցան և ջարդուեցան»։ Ըսել ուզելով թերեւս որ եթէ դուք ալ ապստամբէիք և ջարդուէիք, այն ատեն Եւրոպա Ձեզ համար ալ հարց մը կը յարուցանէր։ Սակայն ի Յունաստան չկար վարչութիւն մը, որ ունենար ծրագիր մը և չկար համաձայնութիւն մը իսօսարանին մէջ։ Թուրքոուս պատերազմը հրատարակուելուն ժամանակ, երբ ժողովուրդը եռանդնաւորած կ'ուզէր թշնամական ընթացք մը բռնել Թուրքիայի դէմ, կը տապալէր Մայիս 7ին Դէ-

Յունաստանի յուզմունքը։

լիճորճիս պաշտօնարանը և Գէորգ Թագաւորը կը բռնադատուէր նոր պաշտօնարան մը կազմելու, որուն գլուխ կ'ըլլար ծովակալն Կոստանդին Կանարիս, Յունաստանի ազատութեան հինաւուրց դիւցազնը, և որ կ'ըլլար միանգամայն պաշտօնեայ Ծովային զօրութեան։ Իրեն ընկերքը կ'ըլլային Աղեքսանդր Կոմունդուրոս՝ պաշտօնեայ Ներքին Գործոց, Տրիքուբիս՝ Արտաքին Գործոց, Դէլիճորճիս՝ Ելեւմտից, Զայիմիս՝ Արդարութեան. Դէլիյանի՝ Հանրային Կրթութեան և Կրօնից, Խարալամբոս Զիմբրաքաքի՝ Պատերազմի։ Բաց ի երկուքէ ամենն ալ երբեմն գլուխք պաշտօնարանաց տարբեր ծրագիրներով. և հիմա վարչութեան մասնակցած ժամանակնին, չէին հրաժարած իրենց ծրագիրներէն. նա մանաւանդ որ գրեթէ ամեն երեսփոխան ինքնին առանձին կուսակցութիւն մը կը կազմէր։ Այսօրինակ վարչութեան ներքեւ կազմուեցաւ, պատերազմի մը գաղափարով, 25,000 զօրաց բանակ մը, որուն կազմութեանը դէմ բողոքեց անմիջապէս Բ. Դուռը։ Անգիա այն ատեն կէս պաշտօնապէս ազդարարեց յունական վարչութեան հանդարտ կենալու. և Ռուսաստան իմացուց Յունաստանի չյուսալ որ և է հողային յաւելուած մը թէ պատերազմին և թէ վերջնական դաշանց ժամանակ։ Յունաստանի վարչութիւնը ըմբռնեց ազդարարութիւնքը և նոյն իսկ Քորֆուի դիմաց կալանաւորած օսմանեան դրօշով նաւ մը, բռնադատուեցաւ ղրկել ի Տրեստ, համազգային խնդրէ մը ազատելու համար։

Երբ 1878ի Յունուարի մէջ լսուեցան զինադադարման ձայները, այն ատեն յոյն ժողովուրդը և լրագիրք զայրացան մեծապէս պաշտօնարանին շուարեալ և երկչոտ ընթացքին վրայ, որ բռնադատուեցաւ հրաժարիլ, և Յունուար 24ին նոր պաշտօնարան կը կազմեց Կոմունտուրոս, յորում հին պաշտօնէիցմէ կը մնար միայն Արտաքին Գործոց պաշտօնեայն Դէլիյանի։

Սակայն պատերազմէն օգտուելու ժամանակը անցեր էր. և երբ 26ին լսուեցաւ որ Յունաստան բնաւ կտոր մը հողի իսկ պէտք չէր յուսալ յունական Թրքահպա-

տակ գաւառներէն, ԱԹԷՆՔի ժողովուրդը յուզուեցաւ. վազեց բազմութեամբ փողոցները, և նախկին պաշտօնէից տներուն դռները քարկոծեց, գոչելով «կեցցէ՛ պատերազմ և կորսուին մատնիչք»։ Զինակիրք դիմեցին ամբոխին վրայ, երկու կողմանէ թոան ատրճանակի հարուածք և ինկան վիրաւորք։ Նուիրակութիւն մը ուզեց ներկայանալ առ թագաւորը որ չ'ընդունեցաւ. և գիշերը վրայ գալով, ցրուեցաւ ցոյց ընող ամբոխը։ Երկրորդ օրը նորոգուեցան նոյն տեսարանք. վարչութիւնը բռնադատուեցաւ զինուորներով բռնել փողոցները. և պատերազմի պաշտօնեայն անձամբ դիմեց ամեն կողմ անկարգութեանց դիմացն առնելու։ Ամբոխը կը գոչէր որ հրաման տրուի մեկնելու թրքահպատակ արենակցաց գաւառները պաշտպանելու. նոյն փափագը կ'արտայայտէր պաշտօնարանին նախագահը Կոմունդուրոս. և խօսարանը յետ երկու օր վիճելու, խրախոյս չ'ընելով պատերազմ հրատարակելու, Յունուար 30ին վստահութեան միայն քուէ մը տուաւ առ պաշտօնարանը, որ այսպէս չկրցաւ զէնքի դիմելու։

Ապստամբութիւնք ի Թեսաղիա, Էպիրոս, Մակեդոնիա։

12. — Բայց բազմաթիւ կամաւորք գաղտ կամ յայտնի դիմեցին թրքահպատակ եղբայրակից գաւառները, յորս ապստամբութիւնը սկսեր էր։ Ֆէրէս գաւառը հրատարակեց իր միութիւնը Յունաստանի հետ. նոյնը ըրին հետեւեալ օրերուն մէջ Պէլիոն, Արմիրօ և Վօլօ գաւառները, որոց հետեւեցան Էպիրոս և Կրետէ։ Կոմունդուրոս Փետրուար 2ին հրամայեց Սկարլատօ Սուցօ զօրավարին որ բանակած էր ի Ֆղիոդիդ, մտնելու իր գունդերով թրքահպատակ յոյն գաւառները, իբրեւ միայն «կարգ պահել տալու նպատակաւ»։ Պաշտօնարանը չէր համարձակեր Թուրքիոյ դէմ պատերազմ հրատարակելու. մանաւանդ որ սա, զինադադարման ստորագրուելովը, իր բովանդակ բանակով կրնար ինկնալ Յունաստանի վրայ. և Արտաքին Գործոց պաշտօնեայն Դէլիյանի՝ յԱԹէնս Թուրքիոյ դեսպանին, Ֆոթիատէս բէյի այցելութեան կ'երթար բացատրելու համար, որ յոյն գունդերուն թրքահպատակ գաւառաց մէջ մտնելը, Թուր-

քիոյ դէմ պատերազմ հրատարակել չէր. բնական է առանց համոզելու զԹուրք դեսպանը։

Սուլթան զօրավարը 12,000 հոգւով չուեց ի Դոմոքօ և ուրիշ սիւնակ մը մտաւ յԵպիրոս, ամեն կողմ խանդավառ ընդունելութիւն գտնելով։ Եպիրոսի և Թեսաղիոյ զանազան աւաններ ապստամբեցան, քանի մը հազար անձինք գինեալ տիրեցին Պիլաֆթէփէի և կտրեցին Վոլոյի և Լարիսսայի մէջ հաղորդակցութիւնը։ Եւրոպիոյ ամեն կողմէն փութով յոյն ուսանողք և եբիտասարդք դիմեցին ի հայրենիս, համարելով որ ստուգապէս պատերազմը կը սկսէր ընդդէմ Թուրքիոյ։ Ֆոթիատէս բէյի ազդարարութեան վրայ, Հոբարդ փաշա իր վարչութենէն հրաման ստացաւ զրահաւոր նաւերով ծեծելու յունական ծովեզերեայ քաղաքները։ Եւրոպիոյ պետութիւնք յուզուեցան և միջամտեցին առ Բ. Դուռը։ Միանգամայն յունական վարչութեան խոհեմութիւն քարոզեցին, խոստանալով որ մեծ պետութիւնք կը ստանձնէին Թրքահպատակ յունական գաւառաց խնդիրը։

Այսպէս ԱԹէնքի վարչութիւնը հրամայեց Սուլթան զօրավարին ետ դառնալու և սահմաններէն ներս մտնելու։ Ժողովուրդը ի սկզբան զայրացաւ այս լրոյն վրայ, Սուլթան զօրավարը տուաւ իր հրաժարականը. բայց կոմունդուրոսի բացատրութիւնը խօսարանին մէջ ըմբռնել տուաւ ամենուն, որ այդ խոհեմութեամբ միայն կարելի էր յուսալ օգտուելու խաղաղութեան վճռական դաշինքներուն ժամանակ։ Սակայն յունական բանակին քաշուելովը, Թրքահպատակ յոյն գաւառները չհանդարտեցան և շարունակեցին ապստամբութիւնը։ Թեսաղիոյ մէջ 80 ապստամբք Փետրուար 15ի տիրեցին Պլատանոսի։ Ուրիշները առին զկարտիցա։ Մակրինիցայի քով հաւաքուած էին 500 ապստամբք։ Թուրքերը 4000 զինուորք յետ եօթը ժամ պատերազմելու, զանոնք վանեցին լերանց մէջ։ Ուրիշ զանազան կողմեր ալ ձեւացեր էին ապստամբ խումբեր, ամենն ալ մէկմէկէ անկախ, սեպհական առաջնորդի մը հնազանդելով։ Սակայն երբ Հոբարդ փաշայ Վոլոյի ծոցին բերանը տորբիլներ դրաւ և խաքէնտէր ու

Ռէճէբ փաշաները գունդերով կտրեցին Պէլիոնի ապստամբաց յարաբերութիւնը Ցունաստանի հետ, այն ատեն ապստամբք փակուած մնացին։ Այսու հանդերձ Մարտ 15ին և 20ին փորձեցին կտրելու պաշարողաց բանակը և ձեռք բերին իսկ երկու թնդանօթք և ամրացան Հայիայի մէջ։ Հոն 10,000 զօրաց Թուրք բանակ մը եկաւ զիրենք ոմբակոծելու Մարտ 18ին՝ ծովէն ու ցամաքէն, տիրեց Մակրինիցայի, կողոպտեց ինչ որ գտաւ, այրեց բնակութիւնները և ահաւոր, անխնայ ջարդերէ վերջը մտաւ ի Վ.օլօ։ Մակրինիցայի անկումը վերջ տուաւ Պէլիոնի, այսպէս և Թեսաղիոյ ապստամբութեան։

Մակեդոնիոյ մէջի ապստամբ խումբերն ալ որոնց գլուխ կեցեր էր Դուբիստիս և տիրեր էր Լիտոխորի, Կատէրինա, Պերտո, Կոքինոպլուս և ուրիշ աւաններու, Ապրիլի սկիզբները Հորարդ փաշայի գալստեան լրոյն վրայ ցրուեցան։

Իսկ Եպիրոսի մէջ ապստամբութեան գլուխ կեցած էր Դէորգ Ստէֆանոս, որ Փետրուարի մէջ Քորֆուէն հետը բերած էր հազարաւոր զինեալ անձինք։ Սակայն Ապրիլ 28ին Ստէֆանոս պաշարուեցաւ Թուրք բազմաթիւ գունդերէ Լիկոմէսի քով, իր խումբերը ցրուեցան և ինքը 50 հոգւով ապաւինեցաւ Խիկուրոսի վանքը։ Ան ատեն բաշիպոզուքները ցրուեցան ամեն կողմ, այրեցին գիւղերը, կողոպտեցին բնակիչքը և սպաննեցին արք և կանայք, յորոց ոմանք բարբարոսաց ձեռքը չ'ինկնալու համար, իրենք զիրենք գետ նետեցին և խեղդուեցան։ Շատ քիչերը ապրեցան։

Այսպէս ապստամբութիւնը լմնցած կը համարուէր, երբ Անգղիա իր Սէլանիկի հիւպատոսին, Սըր Բլունդի միջոցաւ ստացաւ որ՝ Բ. Դուռը ընդհանուր ներումն շնորհէ ապստամբաց և երկու տարի ժողովուրդը ազատ ըլլայ տուրքերէ։ Անգղիոյ ստիպելովը նաեւ յունական վարչութիւնը հրատարակեց որ ապստամբք բնաւ յոյս մը չունենան Ցունաստանէն։ Այսպէս կը լմնար առանց արդեանց յոյն Թրքահպատակ գաւառաց ազատութեան համար ապստամբութիւնն։ Կը մնար միայն

Անգղիայէն տրուած յոյս մը, որ իրենց նկատմամբ պիտի մտածուէր հաւաքուելիք դաշնաժողովոյն մէջ։

Կրետէի ապստամբութիւնը և տեղական վարչութիւնը։

13. — Իսկ ի Կրետէ, ուր երբէք տժգոհութիւնք ընդդէմ Թուրքիոյ վերցուած չէին, ապստամբութիւնը աւելի լուրջ կերպարանք առաւ։ Երբ 1876ի հրատարակուեր էր օսմանեան Սահմանադրութիւնը, որով Թուրքիոյ պետութեան գաւառք հաւասար օրինաց և կարգաց ներքեւ կը դրուէին, և կը վերնային կղզւոյն առանձնաշնորհութիւնքը, քրիստոնեայ ժողովուրդը բողոքեց. և 1877ի Մայիսի մէջ պահանջեց ինքնիշխան վարչութիւն մը կամ տեսակ մը հասարակապետութիւն, Սուլթանին գերիշխանութեան ներքեւ։ Բարձրագոյն Դուռը ղրկեց ի Կրետէ զՖատրի բէյ, որ յունարէն լեզուին և կղզւոյն ծանօթ, համոզէ զիրենք յետս կալու այդ առաջարկութենէն։ Քրիստոնեայ երեսփոխանք չուզեցին մտիկ ընել և ուղղակի դիմեցին առ Սուլթանը, որ երբ պատասխան չտուաւ, Օգոստոս 10ին Ապոկորոնա գաւառին Քլիմա աւանին մէջ Մշտամնաց վարչական յանձնաժողով մը դրին, և ծանուցին կղզւոյն կառավարիչ Սամի փաշայի որ՝ մինչեւ Գ. Պօլսէն գոհացուցիչ պատասխան մը չ'առնուն, չեն ճանչնար Թուրք իշխանութիւնը։ Միանգամայն հրատարակութեամբ մը յորդորեցին իրենց Թուրք հայրենակիցքը, միանալու իրենց հետ. «Արդէն դուք մեր եղբայրներն էք, կ'ըսէին. ձեր պապերը քրիստոնեայ էին, և ամենիս մէկ հայրենեաց զաւակներ ենք»։ Սամի փաշա շատ անգամ նոր գունդեր խնդրեց Բ. Դռնէն, սակայն Պլէվնայի շուրջը պատերազմին պատճառաւ, իր ունեցածներէն ալ զրկուեցաւ։

Քլիմայի յանձնաժողովը ձայն տուաւ կղզւոյն ամեն կողմ։ Թուրքերը բնաւ չշարժեցան, այսու հանդերձ հաւաքուեցան մօտ 8000 զինեալ անձինք, յորս կային 1866ի ապստամբութեան գլխաւորներէն Կրիարիս, Հաճի Միխալի, Միլոնայաքի և Պլումի։ Արդէն Ցունաստանէն ալ շատ կամաւորներ և զէնքեր հասէր էին. ապստամբք դիմեցին և տիրեցին Սֆաքիա քաղաքին, որ Ապոկրոնայի գլխաւոր տեղին է։ Կրէտէի շատ աւաններ

և գիւղօրէք ինքնօրէն վարչութիւններ կազմեցին, քանի որ Թուրք բանակ մը չկար. և իրենք իրենց սկսան կառավարուիլ։ Բ. Դուռը արտասովոր նուիրակ ղրկեց զկոստաքի Ատոսիտէս, արդէն երբեմն ենթաքաղաքապետ ի Կրետէ և սիրելի կղզեցւոց, ըլլալով ազգաւ յոյն։ Սակայն գլխաւորներէն ոչ ոք մտիկ ըրաւ և ինքնագլուխ առաջնորդները Հաճի Միխալի, Կրիարիս և Կորկիտիս, Մարտ 26ին բաղխուելով Թուրք 6000 զինուորաց հետ, որոց կը հրամայէր Նուրի փաշա, Լիքիանոյի քով, մեծ յաղթութիւն մը կատարեցին։ Բ. Դուռը կը պատրաստուէր նոր գունդեր ղրկելու, երբ Անգղիա ինչպէս յունական գաւառաց, այսպէս միջամտեց նաեւ Կրէտէի համար։ Կ. Պոլսոյ դեսպանը սբր Լայարդ, Կանէայի ապստամբաց ղրկեց զսբր Սանտվիթ, անգղիացի հիւպատոսը, ընդհանուր ներուին խոստանալով, եթէ կղզեցիք զէնքերնին վար դնեն։ Փլինայի վարչական յանձնաժողովը և զինուորական գլխաւորք գրութիւն մը յանձնեցին առ Սանտվիթ, որով կը ծանուցանէին կղզւոյն մէջ Թուրք իշխանութեան անկումը, առժամանակեայ վարչութեան մը կազմուիլը, մինչեւ որ Կրետէ միանայ Ցունաստանի հետ։ Այս էր կղզւոյ վիճակը զինադադարմանէն վերջն ալ և զայս պիտի պահանջէին Կրետացիք ի Բէռլին հաւաքուելիք ժողովէն։

14. — Ցեւրոպա Թուրք գաւառները կամովին ոտք ելած էին ապագայ բարիքներ ձեռք բերելու համար։ Իսկ Ասիոյ, կամ ճշդագոյն ըսենք, Հայաստանի գաւառները, Հայաստանի բնակիչքը, կրեցին ամեն տեսակ աղէտք, առանց պատճառ ըլլալու, առանց պահանջելու և առանց յուսալու։

Ռուսք ի Կարին. — Շէյկոզնիքով զօրավարին մահը։

Մուխթար փաշայի պաշարեալ կարնէն մեկնելէ վերջը, անկարելի էր այնքան քիչ պահանորդով դիմանալ երկար պաշարման մը, և միայն ահաւոր ձմեռն էր որ կը խափանէր Ռուսաց ընդհանուր յարձակում մը։ Պատերազմին և պաշարման պատճառաւ նուազեցաւ ապրուստը. սուղ էր ամեն բան և սկսան պակասիլ կարեւորքը, մանաւանդ վաճառականաց ոմանց շահա-

1877 Դեկտ. 24.

դիտութեան պատճառաւ։ Ցուրտէն և դրսէն եկած ժողովրդեան անմաքրութենէն առաջ եկաւ և վարակեցաւ տիֆօ հիւանդութիւնը որ բազմաթիւ կեանքեր հնձեց ի Կարին և շրջակայքը։ Միայն Կարնոյ մէջ մեռան 14,000 անձինք. հիւանդութիւնը քաղաքներէն անցաւ նաեւ գիւղօրէից մէջ։ Յունուարի մէջ Տփղիսէն բժիշկ մը ղրկուելով 5000 հիւանդ գտաւ ի Կարս, 7000 ի Հասանքալէ, 12,000 Կարնոյ շրջակայ գիւղօրէից մէջ։ Շատ անձինք մեռան նաեւ սպայակուտէն և գրեթէ պատերազմին բոլոր դիւցազունքը. յորս քաջ զօրավարն Հայման. զօրավարքն Սոլովիէֆ, Գուրսքի՝ թնդանօթաձիգ զօրաց հրամանատարն, Շէլկոֆիկով[1] և զօրավարն Վահան Լորիս Մէլիքով, ազգակից ընդհանուր հրամանատարին։ Նոյն իսկ ընդհանուր հրամանատարը բռնուեցաւ հիւանդութենէն ծանր կերպով և հրամանատարութիւնը յանձնեց Հայման զօրավարին. սա եւս բռնուելով, ուսկից մեռաւ, իր տեղն անցաւ զօրավարն Լազարէվ։ Կովկասի բանակը պատերազմներուն մէջ ունեցաւ 3,909 մեռեալք, իսկ տիֆոն խլեց իրմէն 1877ի Ապրիլ 1էն մինչեւ 1878 Փետրուար, 9871 անձինք[2]։

Իսմայիլ Հակքի փաշա գիտէր որ չկար օգնութեան ո՛ր և է յոյս պաշարմանէն ազատուելու. և երբ Լորիս

---

1. Ի Հասանքալէ տիֆօ հիւանդութեան զոհերէն մին եղաւ Փետրուար 10ին երիտասարդ հայ զօրավարն Շէլկոֆիկով։ Ինած էր նա ի Նուխի յամին 1837, որով մեռած ժամանակ 41 տարեկան էր։ «Ներկայ պատերազմի մէջ Շէլկոֆիքով յայտնեց իր բոլոր զինուորական տաղանդը և ամենքը համոզուեցան որ այդ մարդը ամեն արժանաւորութիւններ ունի՝ խելք, քաջութիւն, գիտութիւն, բնաւորութեան զօրութիւն, կառավարչական ոգի։ Իր կառավարչական բոլոր ընդունակութիւնները Շէլկոֆիկով ցոյց տուեց Զաքաթալեան գաւառը կառավարելու ժամանակ։ Նա ոչ թէ միայն ծննդեամբ հայ էր, բայց և ոգւով բուն հայ էր՝ նա օտարացած չէր շատերի պէս։ Նա թողեց մի երիտասարդ կին իր երախաներով»։ Մշակ 1878 Փետր. 14. մեծամեծ գովեստներ գրեցին նաեւ եւրոպական լրագիրք։

Շէլկոֆիկով զօրավարին մարմինը Մարտ 8ին Տփղիս տարուելով, վանուց մայր եկեղեցին յատուկ տապանի մը մէջ դրուեցաւ։ Ցուղարկաւորութեանը ներկայ էին բիւրաւոր անձինք, յորս Կովկասի փոխարքային մեծ դուքսն Միքայէլ, և քաղաքական և զինուորական իշխանութիւնք։

2. Տեղեկագիր Կովկասու կայսերական բժշկական բնկերութեան։

Մէլիքով Հասանքալէ հասնելով, առաջարկեց անձնատուութիւն, ապա թէ ոչ պիտի ռմբակոծէր զկարին։ Ան ատեն Իսմայիլ Հակքի փաշա՝ Բ. Դրան հրամանին վրայ, զինադադարման յօդուածոց համեմատ, բանակցութեան մտաւ Լորիս Մէլիքովի հետ. և Փետրուար 21ին Թուրք հրամանատարը իր վաշտերով քաշուեցաւ յերզնկա։ Նոյն օրը ռուս բանակը մտաւ ի Կարին, ուր հասաւ երկրորդ օրը նաեւ Հայման զօրավարը և երրորդ օրը ընդհանուր հրամանատարն Լորիս Մէլիքով, որուն ընդառաջ գնացին քաղքին նշանաւոր անձինք և պաշտօնեայք։ Հայ զօրավարը Թրքերէն լեզուաւ ողջունեց ընդառաջ եկողը, խօսեցաւ երկար հետերնին, ապա զՓիշմիշոֆ հայազգի զօրավարը կուսակալ անուանեց Կարնոյ, որուն քիչ օր վերջը յաջորդեց Դուխովսքի զօրավարը։ Լորիս Մէլիքով պատուիրեց քրիստոնէից, մեծ սիրով վարուիլ մահմէտականաց հետ, որպէս զի Ռուսաց յետոյ քաղաքը Թողած ժամանակ տագնապներ չունենան և չստիպուին գաղթելու։

Կարնոյ առմամբ ռուս ասիական բանակին ամրողջական ծրագիրը աւարտած կը համարուէր։ Արդէն վրայ գալով զինադադարը, կը խափանուէր ո՛ր և է զինուորական գործողութիւն մը։

ԳԼՈՒԽ ԻԵ.

ՍԱՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԴԱՇԻՆՔ–ԲԵԼԻՆՈՒ ԺՈՂՈՎՔԸ

1. Թուրքիա կը դիմէ Ռուսիոյ, զինադադարման համար. — 2. Անգղիոյ նաւատորմիղը ի Դարդանէլ. — Զինադադարման յօդուածքը. — 3. Հաշտութեան բանակցութիւնք յԱդրիանուպոլիս, ի Սան Ստէֆանօ. — 4. Սան Ստէֆանոյի Դաշանց յօդուածները. — Ստորագրութիւնը. — 5. Մեծ դուքսն Նիկոլա ի Կ. Պոլիս. — Թուրք–ռուս պատերազմին վերջը. — 6. Սան Ստէֆանոյի Դաշանց տպաւորութիւնը Արեւելքի և Արեւմուտքի մէջ. — 7. Անգղիոյ և Ռուսիոյ մէջ ընդհարման երկիւղ. — 8. Անգղիոյ և Թուրքիոյ ցունիս 4ի դաշինքը Կիպրոսի նկատմամբ. — 9. Բէլինու ժողովքը. — 10. Դաշանց յօդուածները. — Բոսնիա և Հերզէգովինա կը յանձնուին Աւստրիոյ. — Պատերազմին տուգանքը. — 11. Ռուսիոյ նոր սահմանքը Հայաստանի մէջ. — Խոստացեալ բարեկարգութիւնք. — 12. Բէլինու ժողովքին արդիւնքը։

Թուրքիա կը դիմէ Ռուսիոյ զինադադարման համար։

1. — *Յետ որոյ Ռուսիոյ վարչութիւնը չ'ընդունեցաւ Անգղիոյ կողմանէ միջնորդութիւն զինադադարման մը պայմանաց համար, և ծանոյց որ Բ. Դուռը պէտք էր դիմել բանակաց ընդհանուր հրամանատարներուն. Իէուֆ փաշա՝ պաշտօնեայ պատերազմի՝ նուիրակ մը ղրկեց առ մեծ դուքսն Նիկոլա ի Լովաց, իմացնելով որ Ռումէլիի բանակին սպարապետը, Մէհէմէտ Ալի փաշա, լիազօր իշխանութիւն ունէր զինադադար մը կնքելու։ Անմիջապէս ռուս ընդհանուր հրամանատարը պատասխան ղրկեց որ Ռուսիա կ'ընդունէր զինադադար մը ստորագրելու, այն եղանակաւ միայն, որ ապագայ*

հաշտութեան պայմանները բովանդակուին գինադադարման մէջ։ Երբ Բ. Դուռը խնդրեց գիտնալ այդ պայմանները, այն ատեն մեծ դուքսն Նիկոլա իմացուց որ ղրկուին լիազօր նուիրակք ի Քրզանլրք, ուր ինքը պիտի մեկնէր, միաբան խօսելու խաղաղութեան դաշանց հիմնական պայմաններուն վրայ և այնպէս կնքել գինադադարը։ Բարձրագոյն Դուռը փութով ղրկեց իբրեւ քաղաքական նուիրակք՝ ութսունեւերկուամեայ Նամըք փաշայն, հին հայրենասէր մը և զՄէրվէր փաշա. իսկ իբր գինուորական նուիրակք՝ զՆէճիբ փաշա և զՕսման փաշա, ո՛չ Պլէվնայինը։ Ասոնց խորհրդական տրուեցան Պ. Թարէն իբրեւ թարգման, Ա՛էմիլ ըէյ և Խաչիկ էֆէնտի Օտեան։ Նուիրակները Յունուար 16ին արդէն Հարմանլի կը գտնուէին, ուր յետ աչքոփնին տեսնելու հոն եղած արիւնահեղ կռիւը, 19ին հասան ի Քրզանլրք։ Մեծ դուքսը քանի մը օր ուշացուց բանակցութիւնքը սկսելու և ապա իմացուց որ դաշնախօսութեան տեղին նշանակուած էր Ադրիանուպոլիս, ի յիշատակ նախկին ուրիշ դաշնակցութեան մը և թուրք նուիրակները հրաւիրեց միաբան մեկնելու հոն։ Բնական է թէ այս պատրուակ մ'էր ռուս բանակին ժամանակ տալու աւելի եւս տեղեր գրաւելու համար։ Այսպէս ութ օրեր սահեցան առանց որոշողութեան մը և Ռուս բանակը կը յառաջէր դէպ ի Կ. Պոլիս։

2. — Այս պատերազմական հնարքները, զայրացուցին մեծապէս Անգղիոյ ժողովուրդը և վարչութիւնը, որ արդէն կանխապէս Ռուսիոյ կողմանէ իր միջամտութեան մերժուիլը չէր կրցած անտարբեր աչքով դիտել. և երբ խօսարանին մէջ Պ. Դլադստոն հարցուց վարչութեան թէ Անգղիոյ իրաւանց համար վնաս մը չէ՞, որ հաշտութիւնը կատարուի, բրիտանական վարչութեան կանխապէս պայմանքը չծանուցուած. սրբ Ստաֆֆորտ Նորթկոտ վարչութեան կողմանէ «Այո՛» պատասխանեց. և ի հաստատութիւն խօսքին, Յունուար 24ին հրաման ղրկուեցաւ առ Ծովակալն Հորբի, հրամանատար Մի-ջերկրականի նաւատորմիղին, անցնիլ Դարդանէլը և յա-

Անգղիոյ նաւատորմիղը ի Դարդանէլ։

ռաջել դէպ ի Կ. Պոլիս։ Բովանդակ Եւրոպա պահ մը սրտի տրոփումն ունեցաւ, համարելով որ Անգղիոյ նաւատորմիղը իր դիմացը պիտի գտնէր Թուրք և ռուս նաւեր և անհրաժեշտ էր ընդհարումը։ Սակայն Ռուսիա պատերազմով մը ստացած շահերը, չէր կրնար վտանգի մէջ դնել և ռուս դիւանագիտութիւնը ի Պետերբուրգ աճապարեց հաղորդելու Անգղիոյ դեսպանին հաշտութեան պայմանաց հիմունքը և նաւատորմիղը Դարդանէլի դիմաց հասած ժամուն, հեռագիր ստացաւ դառնալ ի Բէսիքա։

Զինադադարման յօդուածքը։

Յունուար 27ին մեծ դուքսն Նիկոլա և Թուրք նուիրակները հասեր էին յԱդրիանուպոլիս, ուր վիճուեցան զինադադարման պայմաններու վրայ և Յունուար 31ին ստորագրուեցան։ Ըստ այս պայմանաց, 1. Բուլղարիա ինքնավար, բայց Բ. Դրան հարկատու երկիր մը պիտի բլլար, ունենալով ազգային քրիստոնեայ վարչութիւն մը և տեղացի պահանորդ. 2. Մոնտէնէգրո ինքնիշխան պիտի բլլար և պիտի ստանար նոր հողեր 3. Ռումանիա և Սերբիա անկախ երկիրներ պիտի բլլային, առջինը պիտի ստանար նոր գաւառներ և երկրորդին սահմանները պիտի շտկուէին. 4. Բոսնիա և Հէրծէգովինա ինքնօրէն պիտի մատակարարուէին. և բարեկարգութիւնք պիտի մտցուէին եւրոպական Թուրքիոյ ուրիշ գաւառաց մէջ. 5. Բ. Դուռը պիտի վճարէր պատերազմի ծախք, և պիտի պահուէին Ռուսիոյ իրաւունքները Վոսփորի և Դարդանէլի նկատմամբ. 6. Օսմանեան վարչութիւնը պիտի հանէր իր զինուորքը Վիտինէ, Ռուսճուքէ, Սիլիստրիէ և Կարինէն և զաղոնք պիտի յանձնէր ռուս հրամանատարութեան, մինչեւ դաշանց կնքուիլը։ Փութով պէտք էին սկսիլ և հաշտութեան բանակցութիւնք։

Զինադադարման զինուորական պայմանաց համար Թրքաց կողմանէ նուիրակ անուանուեցան Նէճիբ փաշա և Օսման փաշա, ոչ Պլէվնայինը. իսկ Ռուսաց կողմանէ Նէպոքոյիչիցքի և Լիվինսքի զօրավարները, որոնք սահմանեցին զինադադարման ժամանակ բանակներուն բոնելիք կէտերը։ Անմիջապէս Բ. Դրան Սեւ Գրովն ռուս

եզերաց վրայ դրուած պաշարման վիճակը վերցուեցաւ և ռուս բանակը բռնեց զինուորականապէս՝ նշանակեալ քաղաքները, յորս և զկարին Փետրուար 2ին։ Լորիս Մելիքով մեկնեցաւ անկէ ի Տփղիս, գլուխ թողլով Ասիոյ բանակին զզօրավարն Հայման։

Իսկ յԵւրոպա Ռուսիոյ ընդհանուր հրամանատարութիւնը անմիջապէս չծանոյց Բ. Դրան զինադադարման գործադրութիւնը. որով Ռուսաց դէպ ի Կէլիբոլու յառաջելը, Կ. Պոլսոյ վրայ դիմում մը մեկնուեցաւ յԱնգղիա. և պատերազմի պաշտօնեայն հրաման ղրկեց առ Հորնբի Ծովակալը բռնի մտնել ի Դարդանէլ և ի Կ. Պոլիս, և պաշտպանել անգղիացի հպատակը։ Փետրուար 14ին բրիտանական նաւատորմիղը մտաւ կիրճը առանց ուշ դնելու Սուլթանիէ բերդին հրամանատարին արգելքին և առանց կարեւորութիւն տալու թուրք վարչութեան բողոքին։ Ռուսիա եւս յուզուեցաւ և իշխանն Գորչաքով իմացուց Եւրոպիոյ Պետութեանց դիւաննեբուն որ՝ այն պատճառաց համար, որովք Անգղիոյ նաւատորմիղը կը մտնէր կիրճէն ներս, ինքն ալ պաշտպանելու համար բոլոր քրիստոնեայքը, հրաման ըրած էր որ իր բանակէն մաս մը մտնէ ի Կ. Պոլիս. և ռուս դեսպանատան առաջին թարգման, Պ. Ինուի յանձնուեցաւ իմացնելու Սուլթանին, որ առ ժամանակեայ կերպով ռուս զինուորք պիտի բռնէին իր մայրաքաղաքը։ Ռուսիոյ և Անգղիոյ յարաբերութիւնք սպառնական դիրք մը առին և ամենայն ոք արդէն հուկայական պատերազմ մը կը տեսնէր ընդհուպ։

Աբդիւլ Համիդ մեծապէս վշտացած և տագնապած, ժողովքի կանչեց բոլոր հին վեզիրները և զինուորական պետերը, միաբան խորհրդակցելու՝ թէ կարելի՞ էր դէմ կենալ զօրութեամբ Ռուսաց իր մայրաքաղաքը մտնելուն. որով նոյնպէս արգելուլ Անգղիոյ նաւատորմիղին։ Ժողովքին մէջ եղած զօրավարք յայտարարեցին որ անհնար էր Ռուսաց դիմաց նոր պատուար մը հանել. և սահմանուեցաւ որ Սուլթանը անձնականապէս դիմէ առ Զարը, որպէս զի գոնէ միայն արուարձաններուն մէջ

Փետր. 4։

բնակի ռուս բանակը։ Իսկ Անգղիոյ ընթացքին դէմ որ-չափ որ մեծամեծ բողոքներ լսուեցան խորհրդին մէջ, բայց անոնք բաւական չէին բրիտանական նաւատորմիղ մը կեցնելու։ Ռուսաց գալստեան ենթադրութեան մը լուրը, մեծ յուզումն պատճառեց Պալատան բարձր և ընտանեկան ամեն շրջանակաց. մինչեւ պահ մը ձայն տարածուեցաւ որ Աբդիւլ Համիդ բոլոր արքունիքով պիտի մեկնէր ի Բրուսա։ Եւ սակայն նա իր սուր քաղաքագէտ մտքովը, լաւագոյն համարեցաւ մնալ մայրաքաղաքին մէջ և ժողովրդեան վստահութիւն շնչել։ Նամբք ծերունի փաշան ղրկուեցաւ առ մեծ դուքսն Նիկոլա, խնդրելու որ ռուս բանակը չմտնէ ի Կ. Պոլիս. Ռուսիոյ դիւանագիտութիւնը խոհեմագոյն համարեցաւ և օգտակար, գոհացնելու զՍուլթանը և թուրք ժողովուրդը, քան մահացնել։ Իսկ Անգղիոյ նաւատորմիղը առանց միտ դնելու բողոքին, եկաւ խարսխեց Պրինքիպս կղզեայ մօտ. այսպէս յայտնելով իր կամքը որ կ'ուզէր գիտնալ վերջնական հաշտութեան պայմանքը թուրքաց և Ռուսաց մէջ։

Հաշտութեան բանակցութիւնք յԱդրիանուպոլիս և ի Սան Ստէֆանօ։

3. — Նոյն ոգւով ուրիշ կերպ շարժում մը ըրած էր նաեւ Աւստրիա և առաջարկած էր պետութեանց խորհրդակցութիւն մը ի Վիեննա, սակայն տեղիք չունեցաւ, որովհետեւ Ռուսիոյ դիւանագիտութիւնը ջանաց ամեն բան վերջացնել դեռ պետութիւնք չհամաձայնած։ Պաշտօնական բանակցութիւնք սկսան փետրուար 14ին։ Ռուսիոյ ներկայացուցիչքն էին զօրավարն Իգնատիէվ, դեսպան ի Կ. Պոլիս և դեսպանատան առեւնադպիրը՝ Նէլիդոֆ։ Իսկ թուրքաց ներկայացուցիչքն էին Սաֆֆէթ փաշա և Բէռլինու դեսպան Սադուլլահ բէյ։ Իրենց խորհրդական էին Համամճեան Սարգիս էֆէնտի, ընդհանուր առեւնադպիր Արտաքին Գործոց պաշտօնարանին՝ Օտեան Խաչիկ էֆէնտի, նոյն պաշտօնարանին Արտաքին յարաբերութեանց տեսուչը և Պ. Թարէն, թարգման նոյն պաշտօնէութեան։ Թուրք դիւանը որ փութկոտ երեւցեր էր զինադադարման դաշինքներուն համար, հիմա հաշտութեան նկատմամբ դանդաղ էր, յուսալով յամեց-

մամբ շահիլ ինչ։ Ռուս բանակը պիտի չմտնէր ի Կ. Պոլիս, բայց պիտի բռնէր Քիւչիւք Զէքմէճէի գիծը. և հաշտութեան դաշնախօսութիւնը փոխանակ Ադրիանու-Պոլսոյ՝ պիտի կատարուէին ի Սան Ստէֆանո, Կ. Պոլսէն հինգ քիլոմէդր հեռու, Մարմարայի ափանց վրայ։ Հոն փետրուար 26ին հասաւ մեծ դուքսն Նիկոլա. զինքը ընդունեցան Բէուֆ և Մէհէմէտ Ալի փաշաները[1]։ Բարձրագոյն Դուռը մահմէտական բուռն զգացմանց յուզուելուն դէմն առնելու համար, մայրաքաղաքին որմոց վրայ թայտարարութիւն մը կպցնել տուաւ, որով իրեն կամաց և թոյլատուութեան կը վերագրէր թէ՛ Անգղիոյ նաւատորմղին մուտքը ի Կ. Պոլիս և թէ Նիկոլա մեծ դքսին ի Սան Ստէֆանո հաստատուիլը։ Թուրք և ռուս զինուորական հրամանատարութեանց մէջ, սահմանք գծուած էին և խիստ կանոնադրութիւնք, բայց հազիւ քանի մը օր անցան, ռուս սպաներով ողողեցաւ Կ. Պոլիս. և պէտք է ըսել որ երկու կողմանէ անմիջապէս մոռցուեցան թշնամական զգացումներ. և ռուս զինուորականք հիանալով չնաշխարհիկ մայրաքաղաքին վրայ, զմայլեցան նաեւ գտնելով ամեն կողմ համակիր ընդունելութիւն մը։

Սան Ստէֆանոյի դաշանց Յողովածները. — Ստորագրուիլը։

4. — Իսկ հաշտութեան բանակցութիւնք երագապէս կը յառաջէին, որովհետեւ Ռուսք ծանուցած էին, որ կ'ուզէին հրատարակել դաշինքը Մարտ 3ին, Զարին գահակալութեան տարեդարձին. և Սավֆէթ փաշա որուն ազնուական զգացումները հանրածանօթ էին, փափուկ նկատողութեամբ մը, կ'ուզէր յայտմ գոհացնել ռուս սպայակոյտը։ Սակայն վերջին աւուր Ռուսիոյ մէկ պահանջը, քիչ մնաց վեր ի վայր տապալէր ամեն բարի կամք։ Ռուս դիւանագիտութիւնը կը պահանջէր որ Թուր-

---

1. Մեծ դուքսն Նիկոլա ի Սան Ստէֆանո, բնակեցաւ Տատեան Ռոաքել բէյի ապարանքը։

Ի Սան Ստէֆանո ռուս զօրավարաց մէջ էր հայազգի Մուրատոֆ զօրավարը։

քիա չբաժնուի Ռուսիոյ համաձայնութենէն, նկատմամբ Անգղիոյ և Աւստրիոյ, դաշանց վերջնական հաստատութեան համար թէ ժողովք մը առաջարկուի։ Իգնատիէֆ զօրավարը կը սպառնար ռուս բանակը մտցնել ի Կ. Պոլիս՝ եթէ չ'ընդունուէր իր առաջարկը։ Աբդիւլ Համիդ պատասխանեց վստահութեամբ որ ռուս բանակը կ'ընդունուի ի Կ. Պոլիս առանց ընդդիմութեան մը։ Բայց մայրաքաղաքին գրաւումը յետոյ ինչ հետեւանքներ պիտի ունենար, անոնց պատասխանատու չէր։ Ռուսք նուիրակք հրաժարեցան պնդելէ, և Մարտ 2ին երեկոյեան ժամը 5ին ստորագրուեցաւ Սան Ստէֆանոյի 29 յօդուածներէ բաղկացեալ Դաշինքը։

Առաջին յօդուածը կը գծէր Մոնտէնէգրոյի նոր սահմանքը և կը յիշէր ստացած հողերը, յորս կային Նիքսիչ, Գացքօ, Սպուշ, Պոտկորիցա, Էսբլիսք և Անտիվարի։ Երկրորդ յօդուածով կը ճանչցուէր Մոնտէնէգրոյի ինքնիշխանութիւնը և անկէ յառաջ եկած բնական համազգային հետեւանքները։ Երրորդ յօդուածը կը հաստատէր Սերբիոյ անկախութիւնը և կը գծէր իր նոր սահմանները նոր յաւելուածներով։ Հինգերորդ յօդուածով կը հրատարակուէր Ռումանիոյ անկախութիւնը, որուն պիտի վճարուէր նաեւ պատերազմի տուգանք մը, համաձայնութեամբ երկու կողմերուն։ Վեցերորդ յօդուածով Բուլղարիոյ կը տրուէր ինքնավար հարկատու իշխանութիւն մը քրիստոնեայ կառավարչով։ Կը համրուէին մի առ մի այդ իշխանութիւնը կազմող քաղաքները, աւանները և գիւղերը։ Բուլղարիոյ իշխանը պիտի ընտրուէր ի Բուլղարաց և պիտի հաստատուէր բարձրագոյն Դռնէն տէրութեանց հաւանութեամբ. պիտի չըպատկանէր յԵւրոպա թագաւորող Տանց։ Բուլղարիոյ ըլլալիք բարեկարգութեանց գործադրութեան, պիտի հրսկէր երկու տարի ռուս գործակատար մը։ Ութերորդ յօդուածին համաձայն Թուրքիա իր բանակը պիտի քաշէր Բուլղարիայէն. բայց մինչեւ որ տեղացի զինուորութիւնը կազմուէր, 50,000 ռուսաց բանակ մը պիտի մնար հոն, որ ազատ էր հաղորդակցութիւն ունենալ

Յեւ ծովով կամ Իումանիայէն, իր հայրենեացը հետ։ Ինն-ներորդ յօդուածը կը կարգադրէր հարկատուութեան կերպը, և տասներորդ յօդուածը կը հաստատէր Թուրքիոյ իրաւունքը Բուլղարիոյ ճամբաներու նկատմամբ։ Երկոտասաներորդ յօդուածով կը պատուիրուէր հիմնայատակ ընելու Դանուբի վրայ բերդերը։ Չորեքտասներորդ յօդուածով կը խոստացուէր մտցնել ի Բոսնիա և ի Հերձեգովինա տէրութեանց մէջ համաձայնուած բարեկարգութեանց ծրագիր մը։ Հնգետասներորդ յօդուածը սեպհական կազմակերպութիւններ կը խոստանար Եպիրոսի, Թեսաղիոյ. և Կրետէի մէջ 1868ի կանոնաց խղճիւ գործադրութիւնը։ Տասնուվեցերորդ յօդուածը կ'ըսէր. Որովհետեւ ռուս գունդերուն Հայաստանի մէջ բռնած երկիրները պարպելը, որոնք պիտի դարձուին Թուրքիոյ, կրնան յարուցանել ընդհարմունքներ և երկու աշխարհաց մէջ բարի յարաբերութեանց վնասաբեր կնճիռներ, Բարձրագոյն Դուռը կը խոստանայ, անյապաղ, գործադրել տալ, տեղական պիտոյից պահանջած բարւոքումները և բարեկարգութիւններն այն գաւառաց մէջ, յորս կը բնակին Հայերը. և երաշխաւորել անոնց ապահովութիւնը ընդդէմ քիւրտերուն և չէրքէզներուն[1]»։

---

1. Թէ ինչպէս այս յօդուածը մտցուեցաւ Սան Ստէֆանոյի Դաշանց մէջ, շատ տեսակ գրուած կայ լրագրաց, Պրակաց և Պատմութեանց մէջ։ «Ներսէս Վարժապետեան արժանաւոր կերպով գրուած էր Պօլսոյ պատրիարքական գահը։ Երբ տեսաւ որ խաղաղութեան պատրաստական դաշինքի մէջ Հայաստանի անունն անգամ չկայ, թէ և պատերազմի դաշն ըլլալով, Հայերը մեծապէս վնասուած էին, ամեն պատասխանատուութիւն և վտանգ յանձն առնելով, անձամբ գնաց Սան Ստէֆանօ Խուսիոյ բանակը, և ներկայանալով Նիկոլա մեծ դքսին, խնդրեց որ Հայոց համար ալ յօդուած մը գրուի։ Մեծ դուքսը պատասխանեց թէ ուշ է, արդէն դաշինքը լմնցած է և վաղը պիտի ստորագրուի։ Պատրիարքը շատ ազաչելուն և կոմս Իգնատիէֆ և բարոն Նէլլիտոֆ ալ բարեխօսելով, մեծ դուքսը՝ Իգնատիէֆին յանձնեց Հայոց համար յօդուած մը գրել։ Իգնատիէֆ ալ յօդուած մը խմբագրեց որ եղաւ Սան Ստէֆանոյի 16դ յօդուածը։

Հետեւեալ օրը Թուրքիոյ ներկայացուցիչք կը զարմանան թէ Խուսները Հայոց համար ալ յօդուած կ'ուզեն. և կը բողոքեն թէ Հայոց խնդիր չկայ։ Բայց մեծ դուքսը կը պնդէ յայտարարելով թէ այդ մասին Զարէն յատուկ հրահանգ ստացած է։ Թուրքերը կը ստիպուին գիջանիլ»։ Բրոֆ. Թումայեան, Պատ. Ազգեալ. Խճգրոյ, Գլ. ԻԶ։

Տասնըեօթներորդ յօդուածը ներում կը շնորհէր այն թրքահպատակներուն, որոնք մաս մը ունեցած են այս պատերազմին մէջ. և թէ աքսոր ղրկուած էին, անմիջապէս պիտի ազատուէին։ Տասնըութերորդ յօդուածով Բարձրագոյն Դուռը կը հաւանէր թրքա–պարսիկ սահմանագլխոյն գծուիլը։ Տասնեւիններորդ յօդուածով կը սահմանուէր պատերազմի տուգանք 1 միլիար և 410 միլիոն ռուպլը։ Բայց որովհետեւ օսմանեան Դանձը տազնապի մէջ գտնուելով չէր կարող վճարել, անոր համար փոխարէնին մաս մը պիտի տրուէր քաղաքներով, զորս կը յիշէր։ Այսպէս յԱսիա պիտի տրուէր Ռուսիոյ իրը պատերազմի տուգանք՝ Արդահան, Կարս, Բաթում, Բայազիտ՝ մինչեւ Սողանլուի գիծը։ Հողային այս փոխարինութեանց պատճառաւ, տունգանքը վերածուեցաւ 300 միլիոն ռուպլիի։ Դարձեալ 10 միլիոն ռուպլի ռուս հաստատութեանց և հպատակաց կրած վնասներուն համար։ Քսանեւմէկերորդ յօդուածը ազատութիւն կու տար Ռուսիոյ ստացած հողերուն բնակչացը՝ գաղթելու։ Քսանեւերկուերորդ յօդուածը ռուս եկեղեցականքը, կրօնաւորքը, ուխտաւորքը ի Սուրբ Երկիր կը հաւասարեցնէր ուրիշ ազգաց եկեղեցականաց. և Աթոս լեռան կրօնաւորներուն առանձնաշնորհութիւնքը կը պահէր։ Քսանեւչորրորդ յօդուածը ազատ կը բանար վաճառական նաւերու զվոսփոր և զԴարդանէլ։ Մնացեալ յօդուածները բանակաց զինուորական շարժմանց վերաբերեալք էին, նոյնպէս երկու կողման գերեաց փոփոխութեան, որոնք պիտի գործադրուէին դաշանց հրատարակուելէն անմիջապէս վերջը։

Մեծ դուքսն Նիկոլա ի Կ. Պոլիս։ Վերջ Սուրբ–ռուս պատերազմին։

5. — Սան Ստէֆանոյի Դաշինքին ստորագրողք եղան Ռուսաց կողմանէ՝ կոմսն Իգնատիէֆ և Նէլիտոֆ, Թուրքաց կողմանէ Սավֆէթ փաշա և Սաղուլլահ բէյ։ Մեծ դեր ունեցեր էր վիճաբանութեանց հաշտ ընթանալուն նաեւ Ահմէտ Վէֆիք փաշա, գլուխ Թուրք պաշտօնարանին։ Մարտ 3ին, արդէն տարեդարձ գահակալութեան Ալեքսանդր Զարին, անհամար բազմութիւն մը դիմեր էր ի Սան Ստէֆանո։ Երբ դաշինքը

ստորագրուած, Իգնատիէֆ կոմսը բերաւ զայն առ մեծ դուքսն Նիկոլա զօրահանդէսին ժամանակ, նա զրկաբառն համբուրեց զկոմսը 20,000 զօրաց խանդավառ կեցցէներուն մէջ և ապա դառնալով առ զինուորս ըսաւ. «Որդեակք, Աստուծոյ օգնութեամբ, խաղաղութիւնը կնքեցինք Կ. Պոլսոյ դիմաց»։ Յետոյ անմիջապէս գոհաբանական աղօթքներ կատարուեցան դաշտին վրայ, ուր խառն միաբան ծնրադրեցին զօրավարք և զինուորք։ Նոյն երեկոյ Սուլթան Աբդիւլ Համիդ մաղթանաց հեռագիր մը կ'ուղղէր առ Աղեքսանդր Բ. որուն փոխադարձ կ'ընդունէր սիրալիր պատասխան։ Եւ այս մաղթանքները աւելի հաստատուեցան ապագայ բարեկամական յարաբերութեամբք։

Մարտ 26ին մեծ դուքսն Նիկոլա կայսերազուն իշխաններով և շքեղ սպայակուտով մը, իր Լիվատիա շոգենաւով կը հասնէր ի Դոլմաբահչէ։ Նովափը ընդունեցան զինքը Ահմէտ Վէֆիք փաշա գլուխ պաշտօնարանին և Սավֆէթ փաշա, որոնք զինքը տարին դէպ ի Պալատ, որուն պատուոյ սանդխոց վրայ կը սպասէր Սուլթանը արքայազուն իշխաններով։ Նուագարանք հնչեցին ռուսական երգը և Աբդիւլ Համիդ ընտանի սիրով ընդունեցաւ զմեծ դուքսը, որուն հետ Ցնայ տեսակցութեամբ երեք քառորդի չափ։ Ապա մեծ դուքսը մեկնեցաւ Բէյլէրբէյի պալատը, զոր Սուլթանը անոր տրամադրութեան ներքեւ դրած էր իբր բնակութիւն. և ուր քիչ վերջը գնաց Աբդիւլ Համիդ փոխադարձ այցելութեան։

Կայսերական տեսակցութենէն վերջը մեծ դուքսն Նիկոլա այցելութեան գնաց Գերմանիոյ դեսպան Ռէյս իշխանին, որուն յանձնուած էին պատերազմին ժամանակ ռուսահպատակ անձանց և շահուց պաշտպանութիւնը, յետոյ անցաւ Ռուսիոյ դեսպանատունը։ Վանդակադռնէն Նելս մտած ժամանակ, վրայի արծիւները որոնք լաթով ծածկուած էին պատերազմի հրատարակուելու օրէն, անմիջապէս բացուեցան. պաշտօնական նշան Թուրք–ռուս պատերազմին վերջանալուն։

Նոյն երեկոյ Եբլտրզի պալատան մէջ Սուլթանը արեւելեան շքեղ խնջոյքով մը պատուեց զմեծ դուքսը, որ երկրորդ օրը նորէն մեկնեցաւ ի Սան Ստէֆանո։

Սան Ստէֆանոյի Դաշանց տպաւորութիւնը ազգաց վրայ։

6. — Սակայն եթէ ընդհանուր էր ռուս բանակին և Թուրք մայրաքաղաքին մէջ պատերազմին վերջանալուն գոհութիւնը, չէր նոյնպէս միաբան կուող և կամ հեռաւոր հպատակ ժողովրդոց համար, զանազան և հակառակընդդէմ պատճառներով։ Ռումանիացիք կը բողոքէին որ Բեսարաբիայի մաս մը ռուսը առ ինքն պիտի գրաւէր։ Սերբերը ստացածներէն շատ աւելի մեծագոյն յոյսեր ունէին։ Բոսնիացիք և Հերձէգովինացիք ինքնիշխանութիւն կ'ուզէին։ Հայք պատերազմէ մը այնքան կրելէ և աւերելէ վերջը, տխրագոյն կը նկատէին իրենց թողուած անորոշ վիճակը և դարձեալ յանձնուած Բ. Դրան պաշտօնէից քմահաճութեանը։ Ալբանիացիք գայրացած էին որ ըստ իրաւանց չնկատուեցան. Բուլղարիոյ մահմէտականք յուզուած, կը պատրաստուէին ապստամբութեան. իսկ Բաթումի լազ բէյերը, յետ նախնապէս ժողուելու ի Տրապիզոն, հաստատեցին զինուք դէմ կենալու որ Բաթում չյանձնուի ռուս տէրութեան, և պատրաստեցին 30,000էն աւելի կտրիճ զինեալ երիտասարդք, պաշտպանելու հայրենիքին քրիստոնեայ իշխանութեան դէմ։ Հեռագրեցին նաեւ առ Սրբ Լայարդ, առ լորդ Սոլզբրի և առ խոսարանն Անգղիոյ, որ վստահ բրիտանական արդարադատութեան վրայ, կը յուսային որ իրենց քաղաքը պիտի չտրուի Ռուսաց և թէ քանի որ Բաթում տուգանքի տեղ պիտի ըլլար, ժողովուրդը պատրաստ էր իր տուգանքի մասը վճարելու։ Եղաւ ժամանակ մը որ բէյերը որոշեցին անգղիական դրօշակ պարզել. և լորդ Սոլզբրի դիմեց Բաթումի ազդեցիկ անձանց, ջանալ համոզել զբէյերը հանդարտ մնալ և արգելք չ'ըլլալ համազգային որոշողութեանց, որոնք անհրաժեշտ էին։ Ռուսք արդէն յառաջեր և բռներ էին զԱրդուին և Բ. Դուռը կը բռնադատէր իր ենթակեալքը պարպելու զԲաթում ինչպէս նաեւ զՇումնա և զՎառնա։

Ամեն կողմէն եկած մահմէտական ժողովրդոց տրժ-գոհութիւնը որ այսպէս դրամի տեղ կը թողուէին քրիստոնեայ պետութեան ձեռք, շատ գայրացուց գաւառաց բոլոր մահմէտական ժողովուրդը. և պահ մը Բարձրագոյն Դուռ տագնապեցաւ ընդհանուր ապստամբութեան մը երկիւղէ։ Այս դժուարին կացութեան մէջ տեսնուեցաւ իսլամ տարրին վրայ Աբդիւլ Համիդի ազդեցիկ քաղաքականութիւնը, որով ժողովրդոց կրօնամոլ յուզմունքները չ'ունեցան աղեսալի հետեւանքներ կայսրութեան և կամ նոյն իսկ թագաւորող անձին համար, նա մանաւանդ տեսան հպատակք որ գիտցաւ նա փութով ստանալ ամեն ազգաց բարեկամութիւնը, իւրաքանչիւրին խայծ մը դնելով ի Թուրքիա վայելելիք սին ազդեցութիւն մը և կամ վաճառականական շահ մը։

Աբդէն 1856ի Պարիսու դաշնց ստորագրող պետութիւններէն Անգլիա և Աւստրիա տժգոհ էին Սան Ստէֆանոյի յօդուածներուն համար։ Իտալիա և Գաղղիա հոգ մը չցրցուցին. իսկ Գերմանիա, կամ լաւ եւս իշխանն Բիսմարք՝ կանխապէս ծանուցած էր որ Գերմանիոյ Արեւելքի մէջ ունեցած շահերը «փոմերանիացի հրացանակրի մը ոսկորներուն արժէքը չ'ունէին»։ Դեռ չէր հասած Գուլիէլմոս Բի ժամանակը, յորում երիտասարդ կայսրը, ամեն ճիգն պիտի թափէր Սուլթանին ամենամտերիմ բարեկամութեան հետ ստանալ Գերմանիոյ համար վաճառականական ամեն կապիրը և շահերը։ Բիսմարք իշխանը Փետրուար 19ի նշանաւոր բեմախօսութեամբ, սիրալիր չէզոքութիւն մը կը ցուցընէր առ Ռուսիա։ Աբդէն Ջարին ազգակցական յարաբերութիւնքը Գուլիէլմոս կայսեր և գերմանական իշխող շատ մը Տանց հետ, ապարդիւն պիտի ընէին ո՛ր և է հակառակ քաղաքականութիւն մը. որովհետեւ անկարելի էր ո՛ր և է թշնամական ընդհարումն։

Այսպէս կը մնային միայն երկու պետութիւնք, որոց համար մեծ կարեւորութիւն ունէր Սան Ստէֆանոյի դաշինքը։ Բազմաթիւ էին Աւստրիոյ շահերը նկատմամբ Բալկանեան Աղրիականի ափանց գաւառներուն. այնպէս

որ ամենուն անմոռնալի կ'երեւար ամբողջ պատերազմին ժամանակ Աւստրիոյ անհոգ և պաղարիւն չէզոքութիւնը. և որ ըմբռնելի եղաւ միայն երբ ի Բէռլին տրուեցան իրեն Բոսնիա և Հէրձէգովինա, անշուշտ տարիով առաջ սակարկուած գին իր բարեկամ չէզոքութեան։ Ֆրանկիսկոս Յովսէփ, որ իր գահակալութեան օրերուն մէջ կորսնցուցեր էր զանազան գաւառներ, բնական գոհութիւն մը պիտի զգար, եթէ առանց պատերազմի ձեռք բերէր երկու նոր գաւառներ. և այդ մտածութիւնը իրեն անհոգ չէզոքութիւն մը շնչեր էր Թուրք—ռուս պատերազմին ժամանակ։ Միայն իշխողաց գաւառները միացնելու տենչը, համապատասխան չէր իշխեցելոց զգացմանը, որոց սրտին մէջէն անհնար էր ջնջել անձնիշխանութեան բնատուր զգացումը։

Ռուսիոյ և Անգլիոյ մէջ պատերազմի երկիւղ։

7. — Իսկ Անգլիա երբէք չէր կրնար հանդուրժել որ Ռուսիա մոտենայ կ. Պոլսոյ, և ի փոքրն Ասիա բռնէ Եփրատի հովիտով Պարսից Ծոցին և Հնդկաստանի ճամբան։ Իրեն համար թուրքական խնդիր մը, բրիտանական և կենսական խնդիր մ'էր. և աներկիւղ յայտնեց իր հակառակութիւնը Սան Ստէֆանոյի դաշանց նկատմամբ. և երբ կոմսն Բայստ, ատենապետ Աւստրիոյ, շրջաբերականով մը առ պետութիւնս, հրաւիրեց զանոնք միաբան մտածելու եւրոպական մէջ տեղ եղած «ծանր խնդիրներու» վրայ, և առաջարկեց դեսպանաժողով մը ի Բէռլին, լորդ Դէրբի իր պատասխանին մէջ առ կոմսն Բայստ, ծանոյց որ կ'ընդունէր դեսպանաժողով մը այն պայմանաւ, եթէ թուրքիոյ և Ռուսիոյ մէջ կատարուած Սան Ստէֆանոյի յօդուածներն ալ վիճելու նիւթ չլլան. և առանց հաւանութեան պետութեանց չփոխուի ո՛ր և է կանխաւ եղած դաշինք մը. որուն լիովին համաձայնեցաւ Աւստրիա. մինչ Ռուսիոյ դիւանը բողոքեց որ միայն հանրազգային քաղաքականութեան վերաբերեալ յօդուածները կրնային վիճաբանութեան ենթարկուիլ։

Անգլիա կարծիքները մեծապէս յուզուեցան. ժողովուրդը երկու մաս բաժնուեցաւ, անոնք որ խաղա-

ղութիւն կ'ուզէին բացարձակապէս և անոնք որ պատերազմ կը գոչէին։ Շատ մը ժողովրդական միութիւններ կազմուեցան, յորս ծագեցան կուիներ։ Վարչութիւնը չէր ուզեր լռել մինչեւ որ Ռուսիա յանձն չ'առնու Սան Ստէֆանոյի դաշինքը Եւրոպոյ վիճաբանութեան ենթարկել։ Վուլվիչի, Ձէթէմի, Պլիմրթի և Պորսմութի նաւարանաց գործաւորք կրկնապատկեցան, և անկարծելի երագութեամբ դէպ ի պատերազմ կ'ընթայուէր։ Արդէն Հնդկաստանէն զօրարաժին մը հասեր էր ի Մալտա։ Լորդ Դէրբի՝ ոչ կողմնակից պատերազմի, հրաժարեցաւ պաշտօնարանին նախագահութենէն և իրեն յաջորդեց լորդ Բիքոնսֆիլդ. և մարգիզն Սոլզբրի, պաշտօնեայ եղաւ Արտաքին Գործոց. որ անմիջապէս հրատարակեց իր դատողութիւնքը Սան Ստէֆանոյի դաշանց նկատմամբ թէ յԵւրոպա և թէ յԱսիա։ Մարգիզն Սոլզբրի կ'ըսէր որ «Հայաստանի բերդաքաղաքաց և Փիւրդիստանի մէկ մասին Ռուսաց ձեռքն անցնելով, Ռուսաց հնազանդութեան պիտի ենթարկուէին բոլոր այն ժողովուրդքը. և Ռուսաց հրամանին ներքեւ պիտի բլլար Տրապիզոնէն մինչեւ ի Պարսկաստան վաճառականութիւնը»։ Կը վերջացնէր իր շրջաբերականը պնդելով որ Սան Ստէֆանոյի Դաշինքը պէտք է վերաժողովոյ մը վիճելու նիւթ ըլլայ։

Իշխան Գորչաքով իր հանդարտ, ընտիր ոճովը պատասխանեց մի առ մի Սոլզբրի մարգիզին դատողութեանց։ Յետ յիշելու նախ Բալկաններու մէջ եղած փոփոխութիւնք, զորս ինքը ընտիր և ամենաբնական կը գտնէր, կ'անցնէր ասիակողման գրաւուած երկիրներուն. «Բաթում, կ'ըսէր, այն ափանց վրայ միակ նաւահանգիստն է։ Ռուսաստանի ապահովութեան և վաճառականութեան համար մեծ կարեւորութիւն ունի։ Ռուսաստան զայդ միայն շահեցաւ պատերազմէ մը, զոր տարաւ միայնակ և որ այնքան սուղի նստաւ իրեն։ Ուրեմն այդ ձրի շնորհք մը չէ. նա չհամապատասխաներ իրեն պատերազմական տուգանքին։ Իսկ Հայաստանի մէջ առած տեղերնիս, միայն պաշտպանողական արժէք մը ունին։ Թերեւս

Մեծն Բրիտանիա նախադաս կը համարէր որ այդ ա-
մուր դիրքերը Թուրքիոյ ձեռքը մնային. բայց նոյն
պատճառներու համար, Ռուսիա զանոնք կ'ուզէր իր ա-
պահովութեան համար, որպէս զի ամեն պատերազմի
ժամանակ չբռնադատուի զանոնք պաշարելէ, ինչպէս
Կարսի բերդը, որ կէս դարու միջոցի մէջ երեք անգամ
բռնադատուեցան պաշարել և առնուլ»։ Գորչաքով կը
լմնցնէր իր պատասխանը հարցնելով առ մարքիզն
Սոլզբրի թէ ինչ էր Անգղիոյ ուզածը և ինչո՞ւ չէր ը-
սեր իր շրջաբերականին մէջ։

Եւ սակայն Սոլզբրիի շրջաբերականը ստացեր էր
Եւրոպիոյ մեծ պետութեանց հաւանութիւնը. և նոյն իսկ
Բիսմարք իշխանէն շնչուած լրագիրք կը քարոզէին որ
«Գերմանիա Ռուսիոյ հետ բարեկամութիւն անուցած
ժամանակ, չէր ուզեր վշտացնել բարեկամ ազգերը».
և չափազանց կը գտնէին Ռուսիոյ մերժումը վեհաժո-
ղովոյ մը ենթարկելու Սան Ստէֆանոյի դաշինքը։

Պայքարները դիւանական բարձր շրջանակներէն ի-
ջան ժողովրդական և լրագրական ասպարիզին մէջ բուռն
և ջերմ խօսքերով իրրեւ վիրաւորողք ազգային պատուոյ
1878 և շահուց. ոգիները սաստկապէս գրգռուեցան և Մայիսի
վերջերը այնքան ծանրացան կացութիւնք, որ երկու մեծ
ազգաց մէջ պատերազմը անխուսափելի կը համարուէր։
Սակայն ժամանակին երկարելովը սկսաւ հանդարտու-
թիւն մը երկու կողման վարիչներուն վրայ. նա մա-
նաւանդ որ Ռուսաստան յետ այնքան վնասներու դրա-
մով և կեանքով, չէր կրնար նետուիլ Անգղիոյ դէմ պա-
տերազմի մը մէջ. և նախ ինքը յայտնեց Անգղիոյ հետ
յարմարութեան մը գալու փափագը։

Մայիսի վերջերը հիւանդանալով Գորչաքով իշխա-
նը, Ալեքսանդր Կայսրը կրցաւ աւելի ազդեցութիւն մը
ունենալ արտաքին պետութեանց յարաբերութիւններուն
մէջ. և ի Լոնդրա դեսպան, Շուվալոֆ կոմսին միջոցաւ
ծանոյց բրիտանական պաշտօնարանին որ Ռուսիա չէր
հակառակեր Սան Ստէֆանոյի դաշանց քննութեան հա-
մար հաւաքուելիք ժողովոյն. բայց կ'ուզէր կանխապէս

գիտնալ Անգղիոյ փափագներուն սահմանը։ Դեսպանը յետ բանակցելու Անգղիոյ վարչութեան հետ, անցաւ ի Պետրբուրգ. և այսպէս երկու պետութեանց մէջ նախնապէս ծրագրուեցան կարելի փոփոխութիւնք, զորս Ռուսիոյ վարչութիւնը գաղտ ծանոյց ուրիշ մեծ պետութեանց դիւաններուն և առաւ անոնց հաւանութիւնը։ Յետոյ Ռուսիա իմացուց որ կ'ընդունէր դեսպանաժողովոյ մը գումարումը, և Բիսմարք ու Անտրաշի սահմանեցին որ գումարումը ըլլայ Յունիս 11ին ի Բէռլին։

8. — Բայց լորդ Բիքոնսֆիլտ որ յայտնապէս կը գուշակէր թէ այլ եւս չէր կարելի Ռուսաստանի ձեռքէն առնուլ Բաթում, Արտահան և Կարս, այն ատեն զթուրքիա պահելու համար ի Կ. Պոլիս և ի Փոքր Ասիա, և այսպէս Հնդկաստանի ճամբան փրկելու համար, յղացաւ յանդուգն խորհուրդ մը. այն է դնել Կ. Պոլսոյ և Փոքր Ասիոյ մօտ անգղիական զօրաւոր ամրոց մը։ Եւ մինչ ոչ ոք կրնար կասկածիլ, Յունիս 4ին գաղտ դաշինք մը կը ստորագրուէր սիր Լայարդի և Սավֆէթ փաշայի մէջ, որով Անգղիա կը յայտարարէր թէ «Յորքան Բաթում, Արտահան և Կարս մնան Ռուսիոյ ձեռքը, կամ անոնցմէ մին, կամ եթէ Ռուսաստան ո՛ր և է ժամանակ փորձէ նոր տեղեր գրաւելու՝ Սուլթանի Ասիոյ երկիրներէն, Անգղիա զինուք պիտի պաշտպանէ այդ երկիրները։ Փոխադարձաբար Սուլթանը կը խոստանար Անգղիոյ, գործադրել քրիստոնեայ հպատակաց համար սահմանեալ բարեկարգութիւնքը։ Եւ որպէս զի Անգղիա եւս կարենայ պահել իր խոստումը, Սուլթանը կը հաճի որ նա գրաւէ և կառավարէ Կիպրոս կղզին»։ Ուրիշ կից յայտարարութեամբ մը կը հաստատուէին ուրիշ պայմանք ալ, որոց համեմատ Կիպրոսի մէջ պիտի յարգուէին մահմէտական եկեղեցական դատաստանք և վաքըֆները։ Անգղիա ամեն տարի եկամուտները և մաքսը երկրին մատակարարութեան գործածելէն վերջը, աւելցածը պիտի տար Բարձրագոյն Դրան։ Եթէ օր մը Ռուսիա դարձնէր թուրքիոյ զկարս և Հայաստանի մէջ

Անգղիոյ և թուրքիոյ Յունիս 4ի դաշինքը Կիպրոսի նկատմամբ։

վերջին պատերազմով ստացած միւս երկիրները, այն ատեն Անգղիա ալ պիտի թողուր զԿիպրոս։

Յայտնի է բոլոր Եւրոպիոյ և աշխարհի վրայ այս անակնկալ ճարտար դաշանց լրոյն ըրած տպաւորութիւնը։ Ամենայն ոք կ'ուզէր եղածին մեկնութիւն մը փնտռել կամ վիճաբանել. սակայն դաշինքը կատարուած էր. և ոչ ոք կը համարձակէր ադոր համար Անգղիոյ դէմ նաւատորմիղ մը ճամբայ հանել։

Արդիւլ Համիդ եւս գոհ էր, որովհետեւ այսպէս զօրաւոր դաշնակից մը կ'ունենար իրեն մօտ. մանաւանդ որ դեռ ապագայն պայծառ չէր ռուս դիւանագիտութեան ձգտումներուն նկատմամբ, և ներքին հանդարտութիւնը պակաս էր։ Մայիս 20ին Ալի Սուավի անուամբ սոֆթա մը, ծննդեամբ բուխարացի, կէս գրագէտ, մեծապէս յանդուգն։ Սա իր Միւիրիր լրագրին մէջ հակառակ խօսելով մեծանուն Ալի փաշայի, աքսորուեր էր, և յետոյ նեղուելն ստանալով դարձեր էր. և Միդհատ փաշայէն դրուեր էր դաստիարակ Սուլթանի որդւոց։ Յետոյ տժգոհ այդ պաշտօնէն ձգուելուն. համոզելով 250 անձանց գաղթականներու կարօտ խումբ մը, յեղափոխութիւն մը ուզեր էր փորձել ի նպաստ Մուրադ արքայազրօր, որ կը բնակէր Զրաղանի պալատան մէջ[1] և հոն դիմեր էր դաւակիցներով։ Սակաւ զինուորք կրցեր էին ընկճել դաւը և սպաններ էին խռովարարներուն գլուխը և 80էն աւելի դաւակիցք, նոյն իսկ Զրաղանի դիմաց. այսու հանդերձ այդ անն՝ան շարժումը ունեցաւ իր տպաւորութիւնը Պալատան վրայ, քանի որ թշնամին ալ մայրաքաղաքին քովն էր։ Քաղաքացիք ահապարանօք խռովեալ՝ բնակութիւնին ապաւիներ էին։ Արդիւլ Համիդ կարեւոր տեսաւ յենուլ զօրաւոր դաշնակցութեան մը վրայ և Անգղիա պատրաստ գտնուեցաւ։

---

1. Կը պատմեն որ Մուրադ բացէ ի բաց մերժեր էր Ալի Սուավիի առաջարկը. և երբ յետինս կը սպառնար իշխանին, որովհետեւ չէր հնազանդեր, Մուրադ եւս սպառնացաւ ատրճանակով։ Քանի մը օր մայրաքաղաքը յուզեալ, ուրիշ նիւթ չունեցաւ խօսելու։

Բէռլինու ժողովքը։

9. — Կիպրոսի դաշինքը ստորագրուելէն օր մը առաջ Յունիս 3ին, գերմանական վարչութիւնը պաշտօնապէս կը հրաւիրէր Պարիսու դաշինքը ստորագրող պետութիւնները, դեսպանաժողովի մը ի Բէռլին։ Յունիս 13ին արդէն եօթն պետութեանց ներկայացուցիչք հասեր էին ի Բէռլին։ Գերմանիոյ երեք լիազօր դեսպանքն էին՝ իշխանն Բիսմարք, Բիւլով և իշխանն Շիլլինկսֆիւրստ, որոնք ունէին իրենց խորհրդականները և քարտուղարները։ Աւստրիա-Հունգարիա ղրկեր էր զկոմսն Անտրաշի, զկոմսն Կարոլի և զբարոն Հայմէրլէ բազմաթիւ խորհրդականներով։ Գաղղիոյ ներկայացուցիչքն էին Պ. Վատտինկդոն՝ պաշտօնեայ Արտաքին Գործոց, կոմսն Սէն Վալլիէ և Պ. Տէբրէ։ Մեծին Բրիտանիոյ լիազօրքն էին լորդ Բիքոնսֆիլդ, մարգիզն Սոլզբրի, լորդ Օդո Ռըսսըլ՝ բազմաթիւ խորհրդականներով, քարտուղարներով և զինուորական կցորդներով։ Ռուսիա ղրկեց զիշխանն Գորչաքով, հազիւ հիւանդութենէ ելած, որ պատգարակով կու գար ի ժողով, զկոմսն Շուվալոֆ և զբարոն Ուբրիլ, ուրիշ խորհրդականներով։ Իտալիա ղրկեց զկոմսն որտի, կցորդ խորհրդականներով։ Թուրքիոյ լիազօրքն էին Կարաթէոդորի փաշա, Սադուլլահ բէյ, Մէհէմէտ Ալի փաշա. որոց խորհրդական տրուեցան Փատնիկ էֆէնտի, Ֆէրիտուն բէյ, Օհան էֆէնտի Պաղտատլեան, Օտեան Խաչիկ էֆէնտի և Նաում էֆէնտի։ Եւ թէ մեծ պետութիւններէն զատ ուրիշ տէրութիւններ ալ ղրկեցին նուիրակներ, որոնք սակայն չմասնակցեցան պաշտօնական գումարմանց։ Ռումանիա ղրկեց զԲրատիանո և Գոքոլնիչէանս, Սերբիա՝ զՄիատիչ, Մոնտէնէգրո՝ զՌոյար Պետրովիչ և զՄատոնիչ, Յունաստան՝ զԴէլիյանի և զԻանգարէ։ Եւ որովհետեւ Պարսկաստանի և Թուրքիոյ մէջ կար սահմանաց խնդիր մը, և Պարսկաստան կը յուսար Սան Ստէֆանոյի դաշանց վիճաբանութեանց մէջ ի նպաստ իրեն նոր սահմանաց գիծ մը ունենալ, ղրկեց ի Բէռլին իր ամենէն ծանօթ և համոզիչ քաղաքագէտը, զհայազգին Մալգոմ խան, որ այն ատեն Պարսկաստանի դեսպան էր ի Լոնդրա և մտերմութեամբ կապուած ոչ միայն արքունական ըն-

տանեաց, այլ և լորդ Ռիքոնսֆիլդի, մարգիզ Սոլզբրիի և ուրիշ ազգաց դեսպանաց և քաղաքագէտներու հետ։ Թրքահայ էջմիածնական հասարակութիւնն եւս ուզեց խրախուսուեցաւ, և Կ. Պոլսոյ պատրիարքութեան ժողովը՝ նուիրակութիւն մը ղրկեց։ Նուիրակքն էին Խրիմեան Հայրիկ և Նարբէյ արքեպիսկոպոսները. ունենալով զՄինաս Չէրազ և զՊ. Փափազեան աշխարհիկ նուիրակք։ Այսպէս հայ ազգին մեծամասնութիւն մը առաջին անգամ եւրոպական դեսպանաժողովոյ մը կը ներկայանար ինքնավարական, Բ. Դրան հարկատու, ծրագրով մը. ունենալով գլուխ կառավարիչ մը, զոր պիտի անուանէր Բարձրագոյն Դուռը և պիտի հաստատէին պետութիւնք, բազմաթիւ տեղական օրէնքներով և իսլամաց համար սեպհական դատավարութեամբք[1]։ Դարձեալ իտալական նուիրակ կոմս Կորտիի կը յանձնուէր տանիլ միարան ի Բէրլին Հայաստանի աշխարհագրական տեղեկագիր մը, պատրաստուած Հ. Ալիշանէն մասնաւորապէս այս պարագային համար մատնանիշ բարեկարգական դարմաններով, շատ մը մաղթանքներով և յոյսերով։

---

1. «Հայրենասէր Ներսէսը իր մի քանի ազդեցիկ համախոհներով թեւ է առնում և հետեւելով դիւանագիտութեան այն սկզբունքին թէ՝ — ամեն մի. լոց ներելի է նպատակին հասնելու համար, — ծրագրում է Տաճկա—Հայաստանի ինքնավարութեան յատակագիծը՝ Բէրլինի վեհաժողովին ներկայացնելու համար։ Իսկ թէ մի կողմից պիտի վշտանան և խռովին Տաճիկները, միւս կողմից՝ զայրանան ու կատաղին Ռուսները, դրա մասին հոգ չէ անում Ներսէս Վարժապետեանը, յոյսը դնելով եւրոպական արիւպագէտի աջակցութեան վրայ։...

Պատմական այս նշանաւոր բոպէին է, որ հնչում է Կարապետ Փանոսեանի ձայնը «Մանզումէի էֆքեարի»ի և Ազգային ժողովի մէջ, ինչպէս վիրաւորուած առիւծի մը մռնչիւն. «Ի՞նչ էք անում, ո՞ւր էք տանում ազգը, սեւագլուխ և ինքնակոչ դիւանագէտներ, գոչում է նա. ո՞վ կը տայ մեզ ինքնավարութիւն, որի՞ վրայ էք դնում մեր յոյսը, — այն շահամոլ և ենթզ Եւրոպայի վրայ, որ ուզում է պահպանել Թիւրքիայի գոյութիւնը իր շահասիրական նպատակների համար։ Բէրլին պատուիրակութիւն ուղարկելով չէ՞ որ հայ ազգի կատաղի և անհաշտ թշնամի պիտի դարձնէք Թիւրքիան, որի մէջ մեր տկար տեղովը 4–5 դար լաւ թէ վատ կարողացել է պահել իր կրօնը, լեզուն և բոլոր յատկանիշները....»։

«Փանոսեան դէպքից շատ ժամանակ չ'անցած, Խրիմեան Հայրիկի և Մինաս Չէրազի հետ ուղեւորում է Բէրլին, թիչ յետոյ նաեւ Պատեփան Փա-

Լիազօրք յետ նախնապէս սահմանելու ձեւակերպութեանց մասը, միաձայն ընտրեցին ժողովոյն նախագահելու զիշխանն Բիսմարք, իբր քարտուղար զԼիատովից, Գերմանիոյ լիազօրը յԼԹէնս, և օգնական զկոմսն Մուլ, առաջին քարտուղար դեսպանատան Գաղղիոյ ի Բէռլին։ Սահմանուեցաւ վիճաբանութեան նիւթերը ընտրել ըստ կարեւորութեան և ոչ ըստ կարգաւորութեան Սան Ստէֆանոյի դաշանց։ Բիսմարք փափագելով միշտ որ վճիռք այնպիսի ըլլան, որպիսի կարելի էր ընդունելի ընել Ռուսիոյ, ամբողջ ժողովոյն ժամանակ Ռուսաստանի ի նպաստ հակիլ երեւցաւ. և սակայն երբէք չտժգոհացուց և զլորդ Բիքոնսֆիլտ։ Գումարումները ճիշտ օրին սկսան և յաջորդեցին մէկմէկու. ժողովքը կ'ընթանար երագապէս Բիսմարք իշխանին բարձր և կտրուկ ազդեցութեան ներքեւ. և ամենայն դեսպանք կը զարմանային Անգղիոյ համոզուող ընթացքին վրայ, երբ յանկարծ լրագիր մը ծանոյց Յունիս 4ի անգղիաթուրք դաշինքը Կիպրոսի նկատմամբ։ Ամեն լիազօրք ապշեցան և վշտացան. բայց արդէն իրականութիւն մ'էր դաշինքը, և չէր կարելի ոչնչացնել։

Անկէ վերջը Բէռլինու ժողովքը կը կորսնցնէր իր մեծ կարեւորութիւնը և ապագայ ազդեցութիւնը։ Ժողովականք աւելի երագել տուին վախճանը և Յուլիս 13ին,

---

փագիանը, իսկ Խորէն Ղարբէյը՝ Պետերբուրգ։ Սա ամապարում է ներկայանալ իշխան Գորչաքովին, որ խնդրէ հրահանգներ տալ՝ Ռուսաստանի ներկայացուցիչ վեհաժողովուն, կոմս Պաւէլ Շուվալովին, Հայոց դատը պաշտպանելու վերաբերմամբ։ Իր ուսուսիրութեամբ յայտնի Ղարբէյը, բնաւ չի երկրայում թէ սիրալիր ընդունելութիւն կը գտնէ Գորչաքովի կողմից. բայց մեծ է լինում հիասթափումը, երբ Գորչաքով ընդունում է խիստ թթու երեսով։ «Monsieur» Ձեր պատրիարքը դրկել է Բէռլին իր մարդիկը, թող նրանք պաշտպանեն ձեր դատը Ռուսաստանի ոխերիմ թշնամիների առեանի առաջ...»։

Հանդիպում է Բէռլին և մեր փառահեղ և պերճախօս Հայրիկ–ջանը, ներկայանում է Բիսմարքին, պատուասիրուում է նաեւ Վիլհէլմ կայսեր կողմից, բայց նրա բոլոր պերճախօսութիւնը փշրուում է Բիսմարքի պաղ դիտողութիւնին թէ՝ «ո՛ր և է քաղաքական իրաւունք պահանջելու համար պէտք է ներկայանալ դեսպանաժողովին, ոչ թէ խոնարհ աղերսագրով, այլ

յետ քսան գումարմանց ժողովքը աւարտեց իր որոշողութիւնքը, 64 յօդուածի վերածելով զանոնք։

Դաշանց յօդուածները. — Բոսնիա և Հերձէգովինա կը յանձնուին Աւստրիոյ։

10. — Առաջին յօդուածով մը ծանուցուէր որ Բուլղարիա Սուլթանի գերիշխանութեան ներքեւ ինքնավար իշխանութիւն մը կ'ըլլար, քրիստոնեայ կառավարչով և ազգային պահանորդով, կ'ըսուէր իշխանին ընտրութեան եղանակը, առ ժամս ռուս բարձր գործակատարի մը ձեռքով կառավարուիլը (ինչպէս սահմանուած էր Սան Ստէֆանոյի դաշանց մէջ) և Արեւելեան Ռումէլիէն բաժանման սահմանները։ Մեծ պետութիւնք պիտի սահմանէին թէ Բուլղարիա ո՞րչափ գումարով պիտի մասնակցէր Բարձրագոյն Դրան փոխառութեանց։ Օսմանեան բանակը պիտի ելլէր Բուլղարիայէն, բերդերը հարթայատակ պիտի ըլլային և չկար հրաման նոր բերդեր շինելու։ Բալկաններուն հարաւակողմը գաւառ մը պիտի կազմուէր Արեւելեան Ռումէլի անուամբ, Սուլթանին քաղաքական և զինուորական իշխանութեան ներքեւ, մատակարարական ինքնավարութեամբ և քրիստոնեայ կուսակալով, որ պիտի ընտրուէր Բ. Դռնէն, պետութեանց հաւանութեամբ, հինգ տարուան պաշտօնով։ Դաշնագիրը մանր կ'անուանէր այդ գաւառը կազմող տեղերը, որոց վրայ Բ. Դուռը պիտի պահէր լիովին իր վաճառականական և ելեւմտական իրաւունքները։

Կրէտէի համար նոյն խոստումը կ'ըլլուէր ինչ որ ի Սան Ստէֆանո։ Իսկ Յունաստան իր սահմանաց համար թէ չկարենար համաձայնիլ Թուրքիոյ հետ, այն ատեն մեծ պետութիւնք պիտի միջամտէին։

Աւստրիա–Հունգարիա պիտի գրաւէր Բոսնիա և Հերձէգովինա գաւառները. բաց ի Նովի Բազար սան-

---

Մոնտէնէգրոյի ներկայացուցչի պէս յաղթական սրի վրայ կրթնած...»։ Խրիմեան Հայրիկը Բիսմարքի խօսքերը հաւած իւղի տեղ ընդունելով՝ Բէրլինից գնում է Լոնդոն, Փարիզ, Հռովմ և վերադառնում է ի Պոլիս»։ Մուրճ 1907. Փետր. էջ 60։ Այս նիւթոյն վրայ բազմաթիւ են գրութիւնք, որոնք կը յայտնեն որ Ներսէս պատրիարքի արի ազգասիրութիւնը՝ հաւասար չէր Պետութեանց շահերուն նկատմամբ ունեցած տեղեկութեանցը։

ճագէն, որ է Սերբիոյ և Մոնտէնէգրոյի մէջ, որուն մատակարարութիւնն Աւստրիա պիտի թողուր Բ. Դրան։ Իսկ ճամբաներու և զանազան իրաւունքներու մասին պիտի բանակցէին Բ. Դուռը և Աւստրիա։

Եթէ Թուրքիա և եթէ պետութիւնք ճանչցան Մոնտէնէգրոյի ինքնիշխանութիւնը. որուն սահմանքը ընդարձակուեցան Սէրէյվոյի, Մոնասդիրի և Պրիցէնտի գաւառներուն այլ և այլ մասերով։

Սերբիա ինքնիշխան տէրութիւն մը ճանչցուեցաւ և իրեն սահմանքը ընդարձակուեցան. ինքն ալ պիտի ստանձնէր Բ. Դրան պարտքերէն մաս մը։ Ա՛ռ ժամս պիտի յարգուէին նախնապէս պետութեանց հետ կնքուած ամեն վաճառականական դաշինք։

Ռումանիա եւս բոլորովին ազատ պետութիւն կը ճանչցուէր։ Յամին 1856ի Բէսարաբիայէ իրեն միացուած մասը, նորէն պիտի դարձուէր Ռուսիոյ։ Իրեն պիտի տրուէր Դոբրուճայի մաս մը, Դանուբի Դելտան կազմող կղզիք, Օձից կղզիք, Դուլչայի սանճագը, յորում էին Քիլիա, Սուլինա, Մահմուտիէ, Իսաչա, Դուլչա, Մաչին, Բաբատաղ, Հիրսովօ, Քիւստէնճէ և Մէճիտիէ։ Ժողովքը հաստատեց Դանուբեան նաւարկութեանց, վաճառականութեան, ճամբաներու, յանձնաժողովներու համար կանխապէս սահմանուածները։

Ռուսիոյ նոր սահմանքը Հայաստանի մէջ. — Խոստացեալ բարեկարգութիւնք։

11. — Յիսունեւութերորդ յօդուածով Բ. Դուռը կուտար Ռուսիոյ բաց յԱրտահանէ, Կարս և Բաթում. և կը գծէր սահմանները մինչեւ Մուրատ Սու. ինչպէս էր կանխապէս Սան Ստէֆանոյի դաշանց մէջ։

Յիսունեւիններորդ յօդուածը կը ծանուցանէր որ Ռուսիոյ կայսեր մտադրութիւնն էր Բաթում վաճառականական ազատ նաւահանգիստ ընել։

Վաթսներորդ յօդուածով նորէն Թուրքիոյ կը դարձուէին Ալաշկերտի հովիտը և Բայազիտ. զորս Սան Ստէֆանոյի դաշինքը Ռուսաց տուեր էր։

Դարձեալ Բ. Դուռը անգլօ–ռուս Յանձնաժողովոյն սահմանած գծին համեմատ, Պարսկաստանի կը դարձընէր Խոտուրի գաւառը և քաղաքը։ Պարսիկ լիազօրը,

Մալգոմ խան, այն պարագային մէջ ցրցուցեր էր իր քաղաքագէտ բանակցող հանճարը, որով և Նասրէտտին շահէն ի նշան գոհութեան ստացաւ Լուսափայլ Իշխան տիտղոսը[1]։

Վաթսուն և մէկերորդ յօդուածը կ'ըսէր. «Բարձրագոն ուռը կը պարտաւորի անյապաղ իրագործելու, տեղական պէտքերէ պահանջուած բարեկարգութիւնք, այն գաւառաց մէջ, յորս կը բնակին Հայք, երաշխաւորելով անոնց ապահովութիւն Չէրքէզներու և Քիւրդերու դէմ։ Այս նպատակին համար ձեռք առած միջոցները պարբերաբար պիտի իմացնէ տէրութեանց. որոնք պիտի հսկեն անոնց գործադրութեան[2]։

Մնացեալ յօդուածները են, ինչ որ շատ անգամ ըսուած է, Թուրքիոյ հպատակ քրիստոնեայ ժողովրդոց համար. որ բնաւ կրօնական խտրութիւն պիտի չ'ըլլար պաշտամանց և իրաւունքներու մէջ, ինչպէս նաեւ ոչ-մահմէտականաց երդումը հաւասար պիտի ընդունուէր։ կը թողուէր ժողովրդոց, առանց արգելքի մը, իրենց հոգեւոր պետերուն հետ ունեցած յարաբերութեանց կազմակերպութիւնը։ կը պատուիրուէր ամեն ազգի ուխտաւորաց պաշտպանութիւնը, կը ճանչցուէր ի վա-

---

1. Մալգոմ խան հայազգի նշանաւոր քաղաքագէտը ծնած է 1831 թուականին և ուսումն առած է ի Պարիս Մուրատեան վարժարանին մէջ յամին 1845էն սկսեալ։ Իրեն պատուաբեր զգացմամբ, այս պատճառաւ, շարունակ սերտ յարաբերութիւնը և երախտագիտութիւնը ամեն առիթի մէջ յայտնած է առ Մխիթարեան Հարս Վենետկոյ։

Պարսկաստանի Վերանորոգութեան մասին առաջնակարգ դերն ինքն կատարած ըլլալով, իր վրայ պիտի խօսինք յապագային։

Միանգամայն քաջ պարսկագէտ և քերական, բազմաթիւ գրքեր և պրակներ գրած է, որոնք եւրոպական քաղաքականութիւնը ուզած է մտցնել ի Պարսկաստան. և նոյն իսկ աշխատած է դիւրընթեռնլի տառերու գիւտին։ Շատ տարիներ դեսպան Եւրոպայի մեծ արքունիքներու մօտ, ընկերած է Շահերու ուղեւորութեանց յԵւրոպա։ Մալգոմ խան ամուսնացած է ի Կ. Պոլիս Տատեան Առաքել բէյի դստերաց միոյն հետ։ Կենացը մէջ ունեցած է հակառակութիւնք և հալածանք պարսիկ հին մոլեռանդն կուսակցութենէն։

2. Ազգային պատմիչներու և լրագիրներու վիճի մեծ նիւթ եղած է թէ արդեօք Սան Ստէֆանոյի դաշինքը ընտրելագոյն էր Հայաստանի բարե-

ղուց Գաղղիոյ ունեցած իրաւասութիւնը Ս. Տեղեաց վրայ, Ալթոս լերան կրօնաւորներուն իրաւանց պահպանութիւնը, ինչ ազգէ ալ ըլլային։

Վաթսունեւերրորդ յօդուածը կը ծանուցանէր որ կը մնան անջինջ 1856ի Պարիսու և 1871ի Լոնդրայի դաշինքներուն այն մասերը, որոնք մասնաւոր կերպով վերցուած չէին։

12. — Բոլոր լիազօր դեսպանք, յօդուածները ստորագրիլէ վերջը, Բիսմարք իշխանը փակեց փութով ժողովքը։ Ամենայն ոք Ցունիս 4ի դաշանց տպաւորութեան ներքեւ էր. և որչափ որ ժողովոյն նախագահը Բիսմարք էր, սակայն բարոյապէս զայն կառավարողն Անգլիա եղաւ, որ երբ հասաւ իր նպատակին, անկէ վերջը կարեւորութիւն մը չկար ժողովքին երկարելուն։ Բէռլինու ժողովքին արդիւնքը։

Այսպէս այն ժողովքը որ պատգամ և ուղեցոյց պիտի ըլլար Եւրոպայի արեւելակողման ազգաց ապագայ կացութեանը, ցրուեցաւ առանց յայտնելու թէ ինչ սկզբան վրայ գործեր էր, և ինչ սկզբան վրայ պէտք էր շարունակել եւրոպական դիւանագիտութիւնը, խաղաղութիւնը չվրդովելու և արիւնահեղութեանց առջեւ առնելու համար։ Բէռլինու ժողովքը որ հաւաքուեցաւ փոքր ազգաց էութիւնը և կենցաղավարութիւնը պաշտպանելու և մէջերնին ընդհարումները արգիլելու նպատակաւ, ցաւալի է ըսել, որ ո՛չ միայն չկրցաւ առաջ բերել հանդարտութիւն մը, այլ նա մանաւանդ արհամարհելովը նախնապէս տուած յոյսերը, զայրացուց զգացումները. և արդէն թշուառները՝ մղեց ծայրայեղ միջոցներու, վասն զի անոնք առ ոտն կոխուած տեսան

կարգութեանց համար թէ Բէռլինու յօդուածը։ — Սան Ստէֆանոյի դաշինքով ուսս բանակը պիտի մնար Հայաստանի մէջ իր բռնած տեղերը, մինչեւ որ բարեկարգութիւնք կատարուէին։ Անգլիա ընդդիմացաւ, Բէռլինու դաշինքը հսկողութիւն մը յանձնեց պետութեանց, որով ոչ ոք մասնաւորապէս կը ստանձնէր գործադրութիւնը։ Մանաւանդ Ցունիս 4ի դաշինքէն վերջը, ամենայն ինչ կը մնար Անգլիոյ ակնարկին, որ պիտի օգտուէր ըստ իւր շահուն։

ապրելու տարրական իրաւունքները։ Ամեն պետութիւն միայն իր շահուն համար դիմեր էր ի Բէոլին, անոր համար ապագային մէջ ամեն պետութիւն միայն իր շահուն համար դիմեց անոր յօդուածներուն[1]։ Բալկանեան ազգաց ստացած ազատութիւնքը, ոչ ժողովոյն, այլ Աղեքսադր Բ կայսեր վեհանձն և մարդասէր զգացմանց արդիւնք էին, և Բէոլինու ժողովքէն առաջ, ինչպէս ժողովքէն վերջը, այն ազգերը զինքը իրաւամբ ողջունեցին՝ «Կայսր Ազատարար»։

---

1. Հանրածանօթ է Խրիմեան Հայրիկի այլաբանօրէն ճշգրիտ և ոգեւից պատմութիւնը՝ Պետութեանց կատարած դերին նկատմամբ ի Բէոլին, որոնք սեղան բաղմեր էին երկաթեայ դրգալներով. մինչ հայք երկաթ չունէլանուն, թղթեայ դրգալով եկած էին։

Ց Ա Ն Կ

ԳԼՈՒԽ Ա.

ՊՐՈՒՍԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ ՍԱԴՈՎԱՑԷ ՎԵՐՋԸ

1. Պրուսիոյ Խօսարանը Սադովայէ վերջը 1
2. Ցաղթական բանակին դարձն ի Բէռլին 4
3. Գերմանիոյ Դաշնակցական Սահմանադրութիւնը. – Բիսմարք՝ Առենադպիր Դաշնակցութեան 6
4. Կոմն Բիսմարք և Նապոլէոն Գ. – Խնդիր Լիւքսէմբուրկի . 8
5. Պրուսիա կը հակառակի Լիւքսէմբուրկի Գաղղիոյ միացման. – Զէզոքացումն Լիւքսէմբուրկի 10
6. Գերմանական Դաշնակցութիւն և Նապոլէոն Գ. – Տեսակցութիւն երկու կայսերաց ի Սալցբուրկ 13
7. Մաքսային ընդհանուր Գերմանական Դաշնակցութիւն . . 15
8. Հարաւային գաւառաց միութեան փափաքներ. – Բաւէն . . 15

ԳԼՈՒԽ Բ.

ԱԻՍՏՐԻԱ ՍԱԴՈՎԱՑԷ ՎԵՐՋԸ

1. Աւստրիա Սադովայէ վերջը 17
2. Պաշտօնեայ ֆոն Բայստ 20
3. Համաձայնութիւն Աւստրիա–Հունգարական. – Երկաւորութիւն . 22
4. Պարունակութիւն Համաձայնութեան 24
5. ՑԱւստրիա ազատական օրէնքներ. – Քաղաքական ամուսնութիւն. – Զինուորական օրէնք. – Դրամական վիճակ . . . 26
6. Աւստրիոյ և Պրուսիոյ բարեկամական առնչութիւնք. – Պրուսիոյ թագաժառանգը ի Բէռլին. 29
7. Հունգարիոյ հպատակ ժողովրդոց ոժգոհութիւնք. – Սլաւք ընդդէմ Երկաւորութեան 30
8. Բոհեմիերուն Ցայտարարութիւնը 31
9. Լեհք, Կալիցիացիք և Թուրքէնք 33
10. Խուսաք, Սերբք. – Ապստամբութիւն ի Բոկկա դի Կատտարօ. – Դաշինք Խրուսաց 34

ԳԼՈՒԽ Գ.

ԱՆԳԼԻԱ. ԴԻԶՐԱԷԼԻ ԵՒ ԳԼԱԴՍՏՈՆ

1. Պաշտօնարան Ջոն Ռիսսըլ. Գլադստոն պաշտօնեայ ելեւմտից. – Լորդ Ռոբերտ Սիսիլ (Սոլզբրի) երեսփոխանը . . . 35
2. Ընտրական նոր օրինաց առաջարկութիւն. – Անկումն պաշտօնարանին. – Երդման օրէնք. 38

3. Ֆէնէանք յիուլանդա. Ցուցմունք և ցրուումն 40
4. Պաշտօնարան Դէրբի. – Դիզրաէլի պաշտօնեայ Լեւեմտից. – Նոր ընտրական օրէնք. – Դիզրաէլիի յաղթութիւնը . . . 42
5. Դիզրաէլի պաշտօնարան 45
6. Աբիսինիա. – Թէոդոր թագաւորը և անգղիացի կալանաւորք . 45
7. Անգղիոյ Կ. Պոլսոյ Դեսպանը Հայոց Պատրիարքին միշտորդութեան կը դիմէ. – Հայ նուիրակութիւն յԱբիսինիա . . 48
8. Պատերազմ Թէոդորի դէմ, Լորդ Նաբիէրի յաղթութիւնը. – Մահ Թէոդորի 49
9. Գլադստոն կ'առաջարկէ յիուլանդա պաշտօնական Եկեղեցւոյն Ընջումը 51
10. Նախնական քուէարկութիւնք հակառակ պաշտօնարանին. – Նոր ընտրութիւնք. – Անկումն Դիզրաէլի պաշտօնարանին . . 53
11. Գլադստոն պաշտօնարան. վերջնական քուէարկութիւն յիուլանդա պաշտօնական Եկեղեցւոյ Ընջուելուն. – Մահ Լորդ Դէրբիի . 56

ԳԼՈՒԽ Դ.

ՀՌՈՎՄԱՑ ՎԻՃԱԿ ԵՒ ԳԱՐԻԲԱԼԴԻ

1. Իտալիոյ միութիւնը. Հակառակ յուզմունքներ ի Սիկիլիա. – Նուաճումն 60
2. Գարիբալդեանց և ազատականաց դիմումնքը Հռովմայ նկատմամբ . 62
3. Ռիկազոլի պաշտօնարանին հակառակութիւնը. Խստարանին լուծումը. Նոր ընտրութիւնք. – Իտատացի պաշտօնարան . 63
4. Գարիբալդի կը շրջի յուզելու զիտալիա, ընդդէմ Հռովմայ. – Կալանաւորումը. – փախուստը 65
5. Մոնտէռոտոնդոյի գուպարածը. Հռովմայ մէջ փոքր մը . . 67
6. Գաղղիոյ միջամտութիւնը 68
7 Մենտանայի պատերազմը. Գարիբալդեանց յաղթութիւնը. – Գարիբալդիի կալանաւորուիլը 70
8. Գաղղիացի զօրքը ի Զիվիտա Վէկկիա 72
9. Թագաւորազուն իշխանաց ամուսնութիւնքը 72

ԳԼՈՒԽ Ե.

ՆԱՊՈԼԵՈՆ Գ.Ի ԱԶԱՏԱԿԱՆ ԿԱՑՍԸՐՈՒԹԻՒՆԸ

1. 1867ի Օրէնսդիր ժողովքը. – Գերմանիոյ նկատմամբ խօսք . 74
2. Ցուցահանդէս համաշխարհական. – Թագաւորք և իշխանք ի Պարիս . 77
3. Դաւ ընդդէմ Ադեքսանդր Բ կայսեր 78
4. Սուլթան Աբդիւլ Ազիզ ի Պարիս. 80
5. Ցուցահանդէսի փակումը. – Կայսրութեան վիճակը 1868ին . 81
6. Օրէնսդիր՝ ժողովք 1868. – Հռովմէական և Գերմանական խնդիրք . 83
7. Դատարակութիւն երկրորդակարգ աղջկանց համար . . 85
8. Օրէնսդիր ժողովք 1869ի. – Նոր ընտրութիւնք երեսփոխանական . 86
9. Ազատական կայսրութիւն. – Էմիլ Օլիվիէ պաշտօնարան . . 87
10. Պիէր Բոնապարտի դատը 89
11. Մերակուտի Ամենավճիռը. – Ժողովրդախումբ քուէարկութեամբ կայսրութիւն 90

ԳԼՈՒԽ Զ.

ԳԱՂԴԻԱ–ԳԵՐՄԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1. Հոհենզոլլերն իշխանին Սպանիոյ գահուն թիկնածութիւնը. – Ցուզումն Գաղղիոյ վարչութեան. – Պահանջք 93
2 Բուռն վիճաբանութիւնք Գաղղիոյ Օրէնսդիր ժողովոյն մէջ. – Թիէր և ազատականք հակառակ պատերազմին . . . 97
3. Հրապարակութիւն պատերազմին 102
4. Պրուսիա 103
5. Գերմանական պետութիւնք և պատերազմը 104
6. Եւրոպիոյ պետութեանց բռնած դիրքը 106
7. Թշնամութեանց սկսիլը. – Նապոլէոն բանակին մէջ. – Սարբրուքի գաղղիական փոքր յաջողութիւնը . . . 107
8. Պատերազմունք ի Ֆորբախ և Իայխհոֆէն . . . 110

ԳԼՈՒԽ Է.

ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ. ՍԷԴԱՆ

1. Պատերազմին առաջին արժագանգները ի Պարիս . . . 119
2. Պարիս պաշարման վիճակի մէջ 121
3. Օրէնսդիր ժողովը. – Անկումն Էմիլ Օլիվիէ պաշտօնարանին. – Դը Պալիկաօ պաշտօնարան 123
4. Գերմանացի բանակը ի Լորէն. – Պատերազմունք ի Բէռնի, Ռոզէնվիլ կամ Մարգլաթուր, Գրավելոթ 126
5. Բազէնի բանակը պաշարուած Մէցի մէջ. – Պատերազմունք ի Սէն Պրիվա. – Ս. Բարբ 135
6. Պատերազմին արժագանգը ի Բէռլին և ի Գերմանիա . . 137
7. Մակ Մահոնի բանակը 140
8. Սէդան. – Մակ Մահոնի վիրաւորուիլը. – Զօրավարն Վէնֆէն հրամանատար բանակին 143
9. Ցանգուզն պաշտպանութիւն. – Անձնատուութիւն գաղղիական բանակին 145
10. Նապոլէոն Գ.ի գերութիւնը 146

ԳԼՈՒԽ Ը.

ԵՐԲՈՐԴ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ

1. Սէդանի պատերազմին լուրը ի Պարիս 152
2. Սեպտեմբեր 4 154
3. Անկումն կայսրութեան. կայսրուհւոյն փախուստը յԱնգղիա. – Գ. Հասարակապետութիւն 159
4. Պարիսի զինուորական պատրաստութիւնք 161
5. Խաղաղութեան փորձեր. Ժիւլ Ֆավրը. Թիէր 163
6. Պրուսիացիք կը յառաջեն. – Պարիս կը պաշարուի . . . 165
7. Լուառի բանակը. – Պրուսիացիք կը տիրեն Օռլէանի. – Ուրիշ պատերազմունք 167
8. Սարագրուրկի անձնատուր ըլլալը 169
9. Գամբէտտա ի Տուր. – Նոր բանակք. – Գարիբալդի ի Գաղղիա . 173
10. Մէցի անձնատուր ըլլալը 176

ԳԼՈՒԽ Թ.

ՊԱՐԻՍՈՒ ՊԱՇԱՐՈՒՄԸ

1. Պարիս պաշարման ժամանակ 179
2. Հոկտեմբեր 31 181
3. Ժողովրդական քուէարկութիւն. – Հասարակութեան յառաջաբաններ 183
4. Գաղղիական զինուց յաջողութիւնք Օռլէանի դիմաց. – Պատերազմունք ի Կուլմիէ, Շամպինի 184
5. Գաղղիոյ Արեւմտեան, Հիւսիսային և Արեւելեան բանակք. Գարիբալդեանց քաջութիւնները 187
6. Լուարի բանակին յաղթութիւնը. – Պրուսիացիք կրկին կ'առնուն զՕռլէան 189
7. Բլուայի առումը. – Տուրի Ղուիրակութեան Բորդո փոխադրուիլը. 191
8. Պարիսու վիճակը. – Ցուրտը և անօթութիւն 193

ԳԼՈՒԽ Ժ.

ԳԵՐՄԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՇԻՆՔ ՊԱՐԻՍՈՒ

1. Գուլիէլմոս թագաւորը կայսր կը հռչակուի ի Վերսայլ . . 194
2. Պարիսու ոմբակոծուիլը. – Վերջին ելք. – Բիւզէնվալ . . 198
3. Վարչական փոփոխութիւնք 201
4. Զինադադարումն. – Դաշինք Պարիսու 202
5. Ազգային պատերազմունք 204
6. Գաղղիոյ Արեւելեան բանակը. Հէրիկուր 285
7. Գաղղիացի բանակը Զուիցերի կը քաշուի 207
8. Ընտրութիւնք – Տարաձայնութիւնք Պարիսու և Բորդոյի մէջ. – Գամբէտտա կը քաշուի. 209
9. Խաղաղութեան Դաշնագրոյն ստորագրուիլը 211
10. Գերմանացւոց մուտքը ի Պարիս 213
11. Գերմանական զերիշխանութիւնը 216
12. Հասարակորդիւն 217
13. Վերսայլի վարչութիւնը. – Հասարակութեան հետ պատերազմները.
14. Պատանդներուն սպաննութիւնը. – Պարիսու հրդեհը . . . 223
15. Հասարակութեան անկումը. – Մակ Մահոն մարաջախտը կը տիրէ Պարիսու 225

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԻՏԱԼԻՈՑ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ Ի ՀՌՈՎՄ

1. Տիեզերական ժողովք Վատիկանի 226
2. Անսխալութեան վարդապետութիւնը 230
3. Իտալիա՝ Գաղղիա–գերման պատերազմի ժամանակ. – Գաղղիացի պահանորդը կը մեկնի Եկեղեցւոյ Վիճակէն . . . 231
4. Բանակցութեան փորձեր Ս. Գահուն հետ. – Իտալացւոց Եկեղեցւոյ Վիճակը մտնելը 233
5. Հռովմայ առումը. 235
6. Արքունիք և պաշտօնարանք ի Հռովմ 238

7. Խօսարանական վարչութիւնք 1872էն վերջը. – Մինգէտտի պաշտօնարան. – Մահ Մանժոնիի 240
8. Վիկտոր Իմմանուէլ ի Վիեննա, ի Բէլլին. – Փոխադարձ այցելութիւնք կայսերաց 241
9. Ալակոդմեան պաշտօնարանաց անկումը. – Զախակոդմեանք . 244
10. Մահ Վիկտոր Իմմանուէլի 245
11. Ումբէրտօ Ա 247
12. Մահ Պիոս Թի 248
13. Ընտրութիւն Լեւոն ԺԳի 250

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ի ՍԳԱՆԻԱ ԱՄԷԴԷՕ Ա. ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ

1. Իշխանն Ամէդէօ Սավոյիոյ՝ կ'ընտրուի թագաւոր Սպանիոյ . 252
2. Ամէդէօ ի Սպանիա. Սպանուցն Պրիմ մարաշախտն . . 254
3. Խորհրդարանի բացումը. – Կասդէլար. – Մորիլլա պաշտօնարան. 256
4. Մալկամպօ պաշտօնարան. – Խորհրդարանը ընդդէմ Հանրապետական Ընֆեդերատեան 258
5. Սագասդա պաշտօնարան 260
6. Դոն Կարլոս՝ Դուքս Մադրիդի և Կարլոսեան կուսակցութիւնը . . 262
7. Անկումն Սագասդա պաշտօնարանին. – Աէրրանո–Մորիլլա պաշտօնարան 265
8. Դաւ ընդդէմ Ամէդէօյի. Այցելութիւն գաւառաց . . . 265
9. Ամէդէօ կը հրաժարի Սպանիոյ գահէն 268

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԴՈՆ ԿԱՐԼՈՍ ԵՒ ՖԱՂԱՖԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

1. Դաշնակցական Հասարակապետութիւն 270
2. Դոն Կարլոս ի Սպանիա. – Ի Կուէրնիքա թագաւոր հռչակուիլը. 273
3. Մայրաքաղաքական հասարակապետականք ի Կարթագինէ. – Դոն Կարլոս կը տիրէ Իսատէլլայի և Հիւսիսային միջին գաւառաց . 274
4. Մադրիդի վարչութիւնը. Կասդէլար գլուխ՝ Գործադիր իշխանութեան 277
5. Կուբայի ապստամբութիւնը. – Միացեալ Նահանգաց սպառնալիքը. 278
6. Կասդէլար պաշտօնարանին անկումը. – Պետական հարուած. – Աէրրանոս մարաշախտը գլուխ վարչութեան. – Կարթագինէի առումը 281
7. Բիլբաոյի դիմաց Կարլոսեանց յաղթութիւնը. – Ռոնքա զօրավարին մահը 283
8. Հասարակապետութիւնը և եւրոպական պետութիւնք . . . 287
9. Աէրրանոս բանակը կը մեկնի 290
10. Զինուորական Արտայայտութիւն մը զԴոն Ալֆոնսոս բուրբոնեան թագաւոր կը հրատարակէ 291
11. Դոն Ալֆոնսոս ի Սպանիա. – Կանոնաւոր դէ Կասդիլլօ պաշտօնարան. – Ալֆոնսոս ԺԲի բանակը, Պետութեանց ընդունիլը . 292
12. Դոն Կարլոսի հրատարակութիւնը. – Յաղթութիւնքը. – Զօրավարաց ոմանց հեռանալը 294
13. Թագաւորական բանակին յաղթութիւնքը. – Ուրճէլի առումը. Յովելլար կուբա կը դրկուի. 296
14. Ընտրութիւնք. Խորհրդարանի բացումը. – Ալֆոնսոս ԺԲ բանակին գլուխ. Իսատէլլայի անձնատուր ըլլալը. Դոն Կարլոս կ'անցնի ի Ֆրանսա 299

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԱԲԴԻԻԼ ԱԶԻԶ ԵՒ ԱԼԻ ՓԱՇԱ

1. Աբդիւլ Ազիզ. – Ալի փաշա 302
2. Վաքըֆներու ժառանգութիւնը. – Օտարազգեաց կալուած ունենալու իրաւունքը 304
3. Աբդիւլ Ազիզի երթը Պարիսու Ցուցահանդիսին. – Ալի փաշա թագաւոր ի Կ. Պոլիս 306
4. Աբդիւլ Ազիզ ի Պարիս 308
5. Աբդիւլ Ազիզ յԱնգղիա և Լոնդրա 310
6. Աբդիւլ Ազիզ ի Վիեննա և Մաճառստան. – Անցք դանուբեան գաւառներէն 311
7. Դարձը ի Կ. Պոլիս և ուղեւորութենէն յուսացուած արդիւնքներ. 313
8. Պետութեան և Արդարութեան Ատեաններըը. – Կրթական հաստատութիւնք. – Ներքին գաւեր 315
9. Աղաթոն էֆէնտի և իւր մահը. – Յովհաննէս ամիրա Տատեան . 317
10 Եւժէնի կայսրուհին ի Կ. Պոլիս. – Ուրիշ թագաւորազուն այցելութիւնք 320
11. Եգիպտոսի Թուրքիոյ հետ յարաբերութեանց վատանալը . . 323
12. Ալի փաշայի մահը. – Վարչութեան ակարանալը. – Մահմուտ Նէդիմ փաշա 325
13. Աբդիւլ Ազիզ կ'ուզէ փոխել ժառանգութեան կարգը ի նպաստ իւր որդւոյն 332

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԱԶԳԱՑ ԱԳՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ Ի Կ. ՊՕԼԻՍ ՄՈՒՐԱԴ Ե. ԱԲԴԻԻԼ ՀԱՄԻԴ Բ.

1. Պալկանեան ժողովրդոց տժգոհ վիճակը. – Ինքնիշխանութեան ձգտումը. 328
2. Հէրզէգովինայի ապստամբութիւնը 330
3. Բուլղարիոյ Չարդերը 332
4. Ցեղափոխութիւն ի Կ. Պոլիս 335
5. Աբդիւլ Ազիզի գահընկէցութիւնը և մահը. 337
6. Սուլթան Մուրադ Ե, և գահընկէցութիւնը 337
7. Սուլթան Աբդիւլ Համիդ Բ. 339
8. Սերբիացիք կ'ուզեն օգնել Հէրզէգովինայի. – Միլան իշխանին հրատարակութիւնը 340
9. Մոնտէնէկրոյի բանակը. – Նիկոլա իշխանը 341
10. Աբդիւլ Գէրիմ փաշա. իր յաղթութիւնը Սերբիացւոց դէմ. – Գելզրադ չուելը 342
11. Բանակցութիւնք Մեծ պետութեանց. – Ընդհանուր մահմէտական ոգւոյն զարթումը 346
12. Ճինիսի յաղթութիւնը. – Ռուսիոյ վերջնագիրը . . . 349

ԳԼՈՒԽ ԺԶ.

Կ. ՊՕԼՍՈՅ ԴԵՍՊԱՆԱԺՈՂՈՎԸ. ԹՈՒՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

1. Կ. Պօլսոյ դեսպանաժողովը 351
2. Դաւ Աբդիւլ Համիդի դէմ. – Միդհաղ փաշա մեծ վէզիր . . 353
3. Թուրք սահմանադրութիւն 355
4. Մաճառք թուր մը կը նուիրեն Աբդիւլ Գէրիմի . . . 358
5. Դեսպանաժողովոյն բուռն վիճաբանութիւնք 359
6. Օսմանեան մեծ ժողովքը. – Պետութեանց պահանջներուն մերժումը. – Դեսպանաժողովոյն ցրուումը 360
7. Պալատան մէջ Միդհաղ փաշայի դէմ ամբաստանութիւնք. – Միդհաղ փաշայի պաշտօնընկէցութիւնը և աքսորը . . . 363
8. Իզէմ փաշա պաշտօնարան 365
9. Սերբիոյ հետ հաշտութեան դաշինք. – Բանակցութիւնք Մոնտէնէգրոյի հետ 366
10. Աբդիւլ Համիդ թուրք խորհրդարանը հանդիսաւոր կերպով կը բանայ 367
11. Լոնդրայի Դիւանագիրը 369
12. Բ. Դուռը կը մերժէ դիւանագիրը. – Ռուսիոյ և Թուրքիոյ յարաբերութեանց խզումը 370
13. Պատերազմին ժայնը օսմանեան խորհրդարանին մէջ. . . 372

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՍԻՈՅ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ ԵՒ ՑԵՒՐՈՊԱ, 1866-1878

1. Ռուսաստան և Անգղիա 376
2. Ռուսաստանի աշխարհակալութիւնք Ասիոյ կեդրոնը . . . 374
3. Զէնոյէֆ զօրավարը կը տիրէ Թուրքաստանի և Տաշկէնտի . 379
4. Ռուսք կը տիրեն Բուխարայի և Խիվայի 380
5. Ռուսաստան և Զինաստան ի Քաշկար 383
6. ԱՂՕՒԱՆԻՍՏԱՆ. Մրցումն Ռուսիոյ և Անգղիոյ. – Գատամաքի Դաշինքը. – Անգղիոյ գործակատարին սպանումը . . 383
7. Սիր Ֆրեդերիկ Ռոբերտս կը տիրէ Քապուլի. կ'ազատէ զԳանտահար 385
8. Սքոբէլէֆ զորավարը կը տիրէ Կէօք Թէպէի. – Մէրվ անձնատուր կ'ըլլայ 388
9. Ռուսաց դաշինքը Պարսից, Ճաբոնի և Միացեալ Նահանգաց հետ. 389
10. Անդրկասպեան երկաթուղւոյն գաղափարը 389
11. Ռուս քաղաքականութիւնը յԵւրոպա Թուրք-ռուս պատերազմէն առաջ. – Իշխանն Գորչաքով 391
12. Գաղղիա-ռուս դաշնակցութեան մը պատճառք 393

ԳԼՈՒԽ ԺԸ.

ՌՈՒՍ ԲԱՆԱԿԸ Կ'ԱՆՑՆԻ ԴԱՆՈՒՐ ԵՒ ԲԱԼԿԱՆՆԵՐԸ

1. Ռուս և Թուրք բանակները 396
2. Պատերազմի հրատարակումը. – Եւրոպական Պետութիւնք . 398

3. Ռուս–Ռումէն համաձայնութիւնը 400
4. Թուրք բանակին կացութիւնը և Կ. Պոլսոյ վարչութիւնը . . 401
5. Դանուբի վրայ առաջին կռիւները. – Երկու Թուրք մարտանաւք կ'ընկղմին 404
6. Ռումանիա պատերազմ կը հրատարակէ Թուրքիոյ դէմ . . 406
7. Մոնտէնէգրոյի պատերազմը 409
8. Աղեքսանդր ի Ռումանիա. – Ռուսք Դանուբը կ'անցնին . . 410
9. Սիլիստրիայի անցքը. – Ռուսք ի Բուլղարիա 412
10. Աղեքսանդր Բ. առ Բուլղարս. Բուլղարիոյ վարչական կազմակերպութիւնը 415
11. Ռուսք կը տիրեն Տիրնովայի և Նիկոպոլսոյ 416
12. Զօրավարն Գուրգօ կը տիրէ Խային Փէօյի. Քըզանլըքի և կ'անցնի Զըպգքայ կիրճը 417
13. Ի Կ. Պոլիս ազդեցութիւնը. – Աբդիւլ Քէրիմ և Լէզիֆ փաշայք պաշտօնանկ կ'ըլլան 420
14. Մէհէմէտ Ալի ընդհանուր հրամանատար. – Սիւլէյման փաշա Զըպգա կը դրկուի. 422

ԳԼՈՒԽ ԺԹ.

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԹՈՒՐՔ–ՌՈՒՍ ՊԱՏԵՐԱԶՄՐ

1. Ասիական ռուս բանակը. – զօրավարն Լորիս Մէլիքով . . 424
2. Թուրք բանակը. – Ահմէտ Մուխթար փաշա 427
3. Տէր Ղուկասով զօրավարը. – Տէր Ղուկասով կը տիրէ Բայազիտի, Իւշքիլիսէի և Աշկերտի 428
4. Աղեքսանդրուպօլի բանակը. – Հայոց սիրալիր ընդունելութիւնը. 430
5. Ախլցխայի բանակը. – Կը դիմէ դէպ յԱրտահան . . . 432
6. Արտահանի առումը 433
7. Արտահանի առման լուրը ի Կ. Պոլիս 436
8. Ռուսք կը չուեն Կարսի վրայ. – Մուխթար փաշա կը Քոզուզկարս. – Բէնքլի Ահմէտի կռիւը 438
9. Ռիոնի բանակը 439
10. Ռուսք կը տիրեն Աչքուայի եզերքներուն 441
11. Ռուսք դէպ ի Բաթում. 443
12. Թուրքաց արշաւանքը ի Սոխում Քալէ 443
13. Թուրքիոյ յաղողութիւնքը և յաղթութիւնքը 445
14. Շէյկոֆիկով հազարապետը կը վանէ Թուրքերը. – Թուրքերը կը մեկնին Սոխում Քալէէ 446
15. Հայաստանի Թուրք բանակին կացութիւնը. – Կը յաղթուի ի Տրոմ Տաղ 447
16. Թոփ Տաղըի յաղթութիւնը. – Յաղթութիւն ի Մէլլի Տիւզ . 449
17. Տէր Ղուկասովի նահանջը դէպ ի Երեւան. – Քիւրդերու անօրէնութիւնք 451
18. Բայազիտի պաշարումը ի Թուրքաց. – Տէր Ղուկասով կ'ազատէ, բայց կը Քոզու 454

ԳԼՈՒԽ Ի.

ՊԼԷՎՆԱՅԻ ԵՒ ԶԸՊԳԱՅԻ ՇՈՒՐՋԸ

1. Անգղիոյ նաւատորմիղը Կ. Պոլսոյ մօտ 459
2. Օսման փաշա և իր բանակը ի Պլէվնա. – Պլէվնայի առաջին պատերազմը 459

3. Ռումէն–Ռուս Դաշնակցութիւն. – Պլէվնայի երկրորդ պատերազմը և հետեւանքները 462
4. Գուրզօ զօրավարը. – Լչոքի Զաղրայի կոտորածը. Թուրք և քրիստոնեայ զաղթականութիւնք 468
5. Մոնտէնէգրոյի Նիկոլա իշխանին յաջողութիւնք . . . 471
6. Սիւլէյման փաշա ի Զրպգա. – Ցարձակումը, նահանջը . . 471
7. Երկու կողման բանակաց կացութիւնը Պլէվնայի դիմաց . . 475
8. Պլէվնայի երրորդ պատերազմը 472
9. Պլէվնայի պաշարումը 482
10. Մէհէմէտ Ալի ի Շումլա. – Քարահասանի յաղթութիւնը . . 483
11. Գոլտէլիէվացի պարտութիւնը. – Մէհէմէտ Ալի կը կանչուի ի Կ. Պոլիս 485
12. Սիւլէյման փաշա ընդհանուր հրամանատար. – Զրպգայի վրայ յարձակումը և անյաջողութիւնը 487

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԿԱՐՍԻ ԱՌՈՒՄԸ Ի ՌՈՒՍԱՑ

1. Տէր Ղուկասով զօրավարը և Իսմայէլ Հակքի փաշա Իգդիրի դիմաց 490
2. Լորիս Մէլիքով և Մուխթար փաշա Ախուրեանի եզերքները. – Մուխթար փաշա կը տիրէ Քըզըլ Թէփէի 493
3. Ռուսք կը սկսին յարձակումը Եշհնիլէրի վրայ . . . 496
4. Լազարէվ զօրավարը և Ալաճա Տաղի պատերազմը. – Թուրք բանակը անձնատուր կ'ըլլայ 498
5. Տէվէ Բոյնուիպատերազմը. – Ռուսաց յաղթութիւնը. . . 503
6. Կարնոյ վիճակը 506
7. Թուրք կը յաղթեն ի Թոփ Տաղը 508
8. Լազարէվ հրամանատար Կարսի բանակին. – Պաշարումն . . 509
9. Կարսի ընդհանուր յարձակումը 510
10. Կարսի առումը ի Ռուսաց 516
11. Հետեւանքը մահմէտական ցեղերու վրայ 517
12. Մուխթար փաշա ի Կարին. կը կոչուի ի Կ. Պոլիս. . . 519
13. Դէրվիշ փաշայի բանակը ի Բաթում 519

ԳԼՈՒԽ ԻԲ.

ՊԼԷՎՆԱՑԻ ԱՆԿՈՒՄԸ

1. Պլէվնայի դիմաց Ռուսաց մեծ բանակը. – Զօրավարն Տոտլէբէն հրամանատար պաշարման 520
2. Կոռնի Դուբնիքի և Տէլիշի պատերազմները 522
3. Պլէվնա պաշարուած 525
4. Մէհէմէտ Ալի դէպ ի Օրխանիէ 527
5. Սիւլէյման փաշա դէպ ի Պլէվնա. – Մէչքայի պատերազմը . 528
6. Ցիշնայ Սիւլէյման փաշայի յաղթութիւնը 530
7. Մէչքայի քով երկրորդ պատերազմ և պարտութիւն . . . 531
8. Ի Պլէվնա պաշարին սպառումը. – Մեծ Դուքսն Նիկոլա կ'առաջարկէ անձնատուր ըլլալ 532
9. Օսման փաշայի ելքը. – վիրաւորուիլը 534
10. Օսման փաշայի և բանակին անձնատուր ըլլալը . . . 536
11. Ռուս բանակը ի Պլէվնա 539

ԳԼՈՒԽ ԻԳ.

ԹՈՒՐՔ ԽՕՍԱՐԱՆԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

1. Օսմանեան երեսփոխանական խօսարանը 540
2. Պաշտօնէից փոփոխութիւնք. — Պետութեան հայ պաշտօնեայք . 542
3. Երեսփոխանական ընտրութիւնք երկրորդ շրջանին. — Խօսարանին բացումը Սուլթանէն 543
4. Ազգ-քրիստոնեայ ազգաց զինուորագրութեան խնդիրը. — Զինուորագրութեան խնդիրը Հայոց Խառն ժողովոյ մէջ . . . 545
5. Խօսարանին մէջ զինուորական և քաղաքային կացութեան մասին. 547
6. Գաւառաց մէջ կեղեքիչ պաշտօնատէրաց Ղկատմամբ . . . 548
7. Հայ երեսփոխաններուն խնդիրը որ Հայաստանէն հող չտրուի Ռուսաստանի 552
8. Գաւառաց պաշտօններու ընտրութեան և քննութեան մասին . 555
9. Տպագրութեան ազատութեան վրայ 555
10. Պաշտօնարանին հրաժարիլը. — Ահմէտ Վէֆիք փաշա՝ նախագահ պաշտօնարանին 556
11. Խօսարանը ընդդէմ Զէրքէզներուն աւարառութեանց . . . 557
12. Պատերազմին ժամանակուն պատասխանատուութեան քննութիւն. — Խօսարանին փակումը 558

ԳԼՈՒԽ ԻԴ.

ՌՈՒՍԱՍՏԱՆ Ի ՖԻԼԻՊՊԷ—ՑԱԴՐԻԱՆՈՒՊՕԼԻՍ

1. Պլէվնայի անկմանէն վերջը երկու կողմի բանակները . . 560
2. Ի Կ. Պօլիս հաշտութեան փափագներ 561
3. Սերբիա պատերազմ կը հրատարակէ Թուրքիոյ. — Նիշի առումը Սերբերէն 564
4. Ռուսք կ'անցնին Բալկանները. — Զօրավարն Գուրկօ կը տիրէ Սոֆիայի 569
5. Զըպգայի Թուրք բանակին անձնատուր ըլլալը. . . . 573
6. Ռուսք ի Ռումէլի. — Կը տիրեն Թաթար Բազարճըքի, Ֆիլիպպէի և Ադրիանուպօլսոյ 576
7. Զօրավարն Սքոբէլէֆ կը չուէ ի Կէլիպօլու 580
8. Զարէվիչի և Դիմիտրիոսի բանակները. — Բազարճըքի կռիւը . 581
9. 1877ի և 1878ի նաւական պատերազմներ 582
10. Մոնտէնէգրոյի պատերազմները 580
11. Ցունաստանի յուզմունքը 581
12. Ապստամբութիւնը ի Թեսաղիա, Եպիրոս, Մակեդոնիա . . 584
13. Կրետէի ապստամբութիւնը և տեղական վարչութիւնը. . . 595
14. Ռուսք ի Կարին. — Շէյխ-Ալիքով զօրավարին մահը . . . 597

ԳԼՈՒԽ ԻԵ.

ՍԱՆ ՍՏԷՖԱՆՈՅԻ ԴԱՇԻՆՔԸ—ԲԷՌԼԻՆՈՒ ԺՈՂՈՎՔԸ

1. Թուրքիա կը դիմէ Ռուսիոյ, զինադադարման համար. . . 594
2. Անգղիոյ նաւատորմիղը ի Դարդանէլ. — Զինադադարման յօդուածքը 595
3. Հաշտութեան բանակցութիւնք յԱդրիանուպօլիս, ի Սան Ստէֆանո. 598

4. Սան Ստէֆանոյի Դաշանց յօդուածները. – Պատրազրութիւնը . 593
5. Մեծ դուքսն Նիկոլա ի Կ. Պոլիս. – Թուրք–ռուս պատերազմին վերջանալը 602
6. Սան Ստէֆանոյ Դաշանց տպաւորութիւնը Արեւելքի, Արեւմուտքի մէջ 604
7. Անգղիոյ և Ռուսիոյ մէջ ընդհարման երկիւղ 606
8. Անգղիոյ և Թուրքիոյ Ցունիս 4ի դաշինքը Կիպրոսի նկատմամբ. 609
9. Բէոլինու ժողովը. 611
11. Ռուսիոյ նոր սահմանքը Հայաստանի մէջ 614
12. Խոստացեալ բարեկարգութիւնք. – Բէոլինու ժողովքին արդիւնքը. 617